Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Չորս գրքով

ԳԻՐՔ

I

«Հայագիտակ»
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63 3 (2Հ)
Ս 504

Սիմոնյան Հ.
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ
Ս 504 Եր.: «Հայագիտակ», 2003
816 էջ:

Աշխատության մեջ համակողմանիորեն քննության են առնված առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Առաջին գիրքը ընդգրկում է 1905թ. հունվար -1906թ. օգոստոս ժամանակահատվածը:

Ս. 0503020913 / 786(01) -2003 2003 ԳՄԴ 63.3 (2Հ)

1513 99930-870-9-2
©«Հայագիտակ»

ԱՌԱՋԱԲԱՆ

Հերոսական ու տառապալից եղավ հայ ժողովրդի անցած ուղին, ծանր՝ նրա պատմական ճակատագիրը:

Հայաստանը Հին աշխարհի հզոր տերություններից էր, որի զորագնդերը ժողովրդի վաստակի հուսալի պահապաններն էին:

Տիգրան Մեծի ժամանակ հայոց հզորությունը հասել էր իր զենիթին, Արտաշիսյան, Արշակունյաց և Բագրատունյաց հարստությունների դարերում երկիրը տնտեսական ու մշակութային անօրինակ վերելք էր ապրում, ժողովուրդը երկնում էր անփոխարինելի հոգևոր արժեքներ:

Հայաստանը մեկ անգամ չէ, որ դիմակայել է Պարսկաստանի, Ասորեստանի, Հռոմի, Բյուզանդիոնի բանակներին, հաղթել կամ պարտվել, բայց ամեն արհավիրքից հետո ժողովուրդը կարողացել է ուրքի կանգնել, պահպանել իր ինքնությունը և արժանապատիվ կյանքը:

Բայց եկան նոր, առավել դժբախտ ժամանակներ: Անհաշիվ կատաղի ու արյունարբու վայրենի ցեղեր արևելքից խուժեցին Առաջավոր Ասիա: Զորս կողմը դիակներ ափռելով նրանք, ինչպես ավազի հեղեղ, խուժեցին նաև Հայաստան: Հայ ժողովուրդն ընկավ Թուրք սելջուկների, մոնղոլների և Թուրք օսմանցիների հարվածների տակ: Նրա հայրենիքը դարձավ միմյանց դեմ անդադար կռիվներ մղող օտար ցեղերի արյունոտ խրախճանքի ասպարեզ: Հիմնահատակ ավերվում էր ժողովրդի դառն աշխատանքով ստեղծվածը, գերության էին քշվում հազարավոր խաղաղ շինականներ ու արհեստավորներ: Հոսեցին արյան գետեր, և Թափվեցին ծով արցունքներ: Հայաստանն ընկրկեց, կորցրեց իր անկախությունն ու ազատությունը:

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը խաչաձևվեց Հայաստան մտած արևելյան վաչկատուն Թուրք ցեղերից առավել բազմաքանակ ու մարտունակ օսմանյան Թուրքերի հետ: Նրան վիճակված էր դարեր շարունակ կրել Թուրք տիրակալների բարբարոս իշխանության բոլոր սարսափները:

Անկախության կորստից հետո հինգ հարյուրամյակ հայ ժողովրդի համար չէր երևում լույսի գեթ մի շող: Ստեղծագործելու և առաջադիմելու նրա ճիգերը ամբողջ դարեր բախվում էին ավազակաբարո Թուրք և քուրդ հարևանների ավերիչ ուժին, նրա տաղանդը, եռանդն ու աշխատասիրությունը ճզմվում էին բռնադատիչների կրնկի տակ: Պատմության դժբախտ հանգամանքների բերումով հայի գլխավոր հոգսը դարձել էր գոյապահպանումը:

Այդ դժնդակ պայմաններում անգամ հայությունը չտրոհվեց անգիտակից բեկորների: Օտարի լուծը չկարողացավ քայքայել նրա կենսունակության կովանները: Նա շարունակեց ապրել իր հայրենիքում փայփայելով գալիք լավ օրերի հույսը:

Վերջապես, 19-րդ դարի սկիզբը նշանավորվեց պատմական բախտորոշ իրադարձություններով, և որպես դրանց արդյունք՝ Հայաստանի արևելյան մասը ազատագրվեց մահմեդական բռնապետական տիրակալությունից և միավորվեց ռուսական տերությանը:

Ռուսական պետության կազմի մեջ արևելահայությունը բարենպաստ պայմաններ ստացավ ոչ միայն պահպանելու իր ֆիզիկական գոյությունը, այլև առաջադիմելու՝ ընդգրկվելու համառուսական տնտեսական կյանքի զարգացման մեջ, դրսևորելու իր ունակությունները առևտրի և արդյունագործության ոլորտներում, ռուս ժողովրդի հզոր մշակույթի բարերար ազդեցության ներքո զարգացնելու ազգային դպրոցը և մշակույթը:

Այս պայմաններում, բնականաբար, խոսք անգամ լինել չէր կարող ռուսահայության ազգային ազատագրության մասին: Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտել էր կամովին՝ քրիստոնեական պետության հովանավորությունը և պաշտպանությունը վայելելու դարավոր ձգտումով: Այն ժամանակ դա առավելագույնն էր, ինչ կարող էր ակնկալել հայությունը: Արևելյան բռնապետությունների անվերջանալի չարիքները տեսած հայերի համար ռուսական տիրապետությունը աստվածառաք պարգև էր թվում: Ինչպես այն ժամանակ, դրանից տասնամյակներ հետո նույնպես հայ քաղաքական միտքը առաջ չքաշեց Ռուսաստանից անջատվելու պահանջը:

Եթե հայ ժողովրդի արևելյան հատվածը ռուսական կայսրության կազմում ապրում էր տանելի կյանքով, ապա արևմտահայությունը շարունակում էր կրել անլուր հալածանքներ և տվայտել Թուրք օկուպանտների կրնկի տակ:

Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների թվում արևմտահայությունը թերևս ամենից ավելի հալածվածն էր, ամենից իրավազուրկը: Արհամարհվում ու անարգվում էր նրա ազգային արժանապատվությունը, ծաղրվում ու հեգնվում ապրելու իրավունքը, սպառնալիքի տակ էր նրա իսկ գոյությունը:

1877թ. ռուս-Թուրքական պատերազմը և 1878թ. Բեռլինի կոնգրեսում մեծ տերությունների կողմից ընդունված 61-րդ չարաբաստիկ հոդվածը խանդավառությամբ ընդունվեց Հայ ժողովրդի բոլոր հատվածներում ու խավերում: Վերջապես բարձրացվել և միջազգային դիվանագիտության սեղանին էր դրվել Հայկական հարցը՝ որպես Արևելյան հարցի մի բաղադրիչ:

Արևելյան կամ օսմանյան կայսրության («Հիվանդ մարդու») մասնատման հարցը 19-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայի առջև ցցվել էր որպես սպառնալից հետևանքներով հղի անլուծելի խնդիր: Դա մի հարց էր, որի արմատական լուծումից զարհուրանքով խուսափում էին մեծ տերությունները, երկյուղ կրելով, թե դրա փորձն իսկ կարող է առաջ բերել համընդհանուր պատերազմ, քանզի այնտեղ խաչաձևվում էին նրանց տնտեսական ու քաղաքական բազմազան շահերը: Ավելին, տերությունների սարսափն այնքան մեծ էր, որ ամեն կերպ խուսափում էին մոտենալ նույնիսկ այդ ընդհանուր հարցի մակերևնական և հայկական ենթահարցերին, չխոսելով արդեն այն մասին, որ լիովին անուշադրության էին մատնել կայսրության տառապյալ մյուս ազգերի լացն ու կոծը՝ բավարարվելով միայն մասնակի պալիատիվ միջոցներ և աննշան բարեփոխումներ առաջարկելով:

Նման պայմաններում զուր էին տանելի ապագայի մասին հայերի փայփայած հույսերը: Չէ՞ որ ինքնուրույն զարգացման իրավունքը ձեռք է բերվում ուժով: Հպատակ և ճնշված ազգերին վիճակվում է դաժան, շատ հաճախ՝ անզոր մաքառում: Նրանք ստիպված են լինում անհավասար կռիվ մղել ոչ միայն բռնություն իրականացնող կառավարության, այլև տիրող ազգի, համենայն դեպս, նրա ճնշող մեծամասնության դեմ: Դա բնական է, քանզի վերջինս պետության

մեջ օգտվում է հատուկ արտոնություններից, որ նրան տալիս է սեփական ազգային իշխանությունը:

Եվ ուժեղի՝ Կ.Պոլսի կառավարության կամքով, շատ չանցած, եվրոպական դիվանագիտական գաղտնարաններից Հայկական հարցը հայտնվեց Թուրքական բռնապետության ճիրաններում, նետվեց անլուր ու անսանձ բարբարոսությունների, անօրինակ սարսափների ոլորտը՝ վերափոխվելով Թուրքահայաստանի լինել-չլինելու հարցի:

Բայց ազատության պատրանքային մոտալուտ հեռանկարը շարունակում էր բորբոքել մեծ տերությունների քաղաքական խարդավանքներին միանգամայն անհաղորդ, դիվանագիտության մեջ դեռևս մանուկ ժողովրդի երևակայությունը: Եվ նա կատարեց ճակատագրական քայլ՝ կռվի դաշտ իջավ՝ զենքով նվաճելու Հայաստանի ազատությունը:

Երբ Թուրքահայոց անհավասար կռիվն իր առաջին քայլերն էր անում, Հայկական շրջաններում տիրում էր անխոտով լավատեսություն, Հայոց հույսերը թվում էին վարդագույն, ապագայի սրտատրոփ երազանքները՝ վառ, հաղթանակը՝ մոտ: Շատերը կարծում էին, թե բավական է մի քանի կռիվ, մի քանի ցնցող նահատակություն, և Հայոց չարատանջ խնդիրը կլուծվի:

Պայքարի ելած Հայորդիների հրացանների որոտը հազիվ էր լսելի դարձել, երբ նրանց առջև կանգնեց բռնակալության անհաղթահարելի պատը: Ամենահամեստ բողոքը ավարտվում էր արյունաներկ վերջաբանով: Ծավատանջ երկրի բոլոր կողմերում մարում էր Հայորդիների կյանքը՝ զնդանների մեջ և կախաղանների վրա:

Սուլթանական բռնապետությունը տանջարան ստեղծեց Թուրքահայ ժողովրդի համար. անլուր հալածանքներ, հարկերի անտանելի բեռ, ամենուր շարունակական խուզարկություններ, մեկ նահանգից մյուսը ճամփորդելու արգելք, հավաքական բանտարկություններ, ամենախիստ միջոցների ձեռնարկում մտավորականների նկատմամբ, քիչ թե շատ ունեցվածքի տեր ընտանիքների սիստեմատիկ կործանում, եկեղեցական, դպրոցական և դատական գործերի մեջ Հայ համայնքների տարրական իրավունքների ոչնչացում և, վերջապես, զանգվածային ու մասնակի ջարդեր - այս ամենի նպատակը նույնն էր՝ Հայ տարրը դուրս մղել Հայկական նահանգներից:

Բայց սկսված կռիվը կանգ չառավ: Հրապարակ իջած Հայ ազգային հեղափոխական կուսակցությունները գլխավորեցին ժողովրդի ազատագրական պայքարը: Նրանց առջև հրամայաբար կանգնել էին զանգվածներին դարավոր նիրհից արթնացնելու և սեփական ուժերի նկատմամբ հավատ ներշնչելու, սերունդների քաղաքական դաստիարակության, նրանց կազմակերպելու և պայքարի մղելու՝ ծանր զոհաբերություններ պահանջող խնդիրները:

Հեղափոխական երկունքը ասպարեզ բերեց օրինապահ ու քաջարի աննման շարքային հերոսներ ու անձնուրաց առաջնորդներ: Բնազդական մղումով թե իմացության ուժով Հայ հեղափոխականը մխրճվում էր մահացու վտանգների մեջ՝ միայն թե որևէ նպաստ բերեր Թուրքահայության դատին: Անսահման էր նրա հավատը նվիրական իդեալին և սուրբ գործի հաղթանակին: Իր տառապյալ կյանքով նա օրինակ էր հանդիսանում զանգվածների համար, ցեղի մեջ մտրակում էր արժանապատվության ու առնության գիտակցությունը և այն հրում պայքարի հորձանքի մեջ: Արդյունքը լինում էր այն, որ մասսայական հերոսությունները հաջորդում էին անհատական խիզախումներին:

Կռիվը գնալով դարձավ անհաշտ, անկոմպրոմիս: Որքան թշնամին անողոք, բիրտ ու դաժան էր, այնքան համառ, տոկուն ու հանդուգն էր Հայկական հեղափոխությունը: Անգամ 1895-96 թվականների ընդհանուր կոտորածները չկանգնեցրին հեղափոխության ընթացքը:

Ապստամբ Սասունը երկու անգամ կենաց ու մահու կռվի դրոշ պարզեց և իր պայքարը պսակեց դյուցազնությամբ: Հայ հեղափոխությունն ունեցավ Զեյթուն ու Խանասոր, ցույցեր Կ. Պոլսում, հերոսական կռիվներ Վասպուրականում, քաջագործությունների մի ամբողջ շարք ռուս-Թուրքական սահմանի տարբեր տեղերում:

Այդ ամենին ուղեկցում էին բռնապետության հալածանքն ու կոտորածները, իսկ Հայկական հարցի «երաշխավոր» տերությունները բավարարվում էին՝ երեսպաշտաբար ափսոսանք հայտնելով կամ Թուրքական սուլթանին «նախատելով»: Տերությունների կառավարությունները մի օր հայերին տալիս էին սին խոստումներ, մյուս օրը տեղի էին ունենում արյունալի ջարդեր: Մի օր Կ.Պոլսում հավատարմագրված եվրոպական դեսպանները խորհրդա-

ժողովի հավաքվելով «քննարկում էին» հայոց «անվտանգության» հարցը, մյուս օրը Թուրք և քուրդ փաշաների գաղտնաժողովում կազմվում էր Հայաստանը ոչնչացնելու հերթական ծրագիրը: 20-րդ դարի սկզբին այդպիսին էր արևմտահայ ժողովրդի նորագույն քաղաքական կյանքի բնորոշ պատկերը:

Ազատագրական շարժման տարբեր ուղիների ընտրությունը հայ քաղաքական ուժերին հեռացրել էր իրարից: Կուսակցությունների միջև հակասությունները և ներկուսակցական անհաշտությունները շարժման առաջին օրերից նրանց ուղեկիցները եղան: Հակոտնյա գաղափարներ կրողների միջև սկիզբ առած անհաշտ պայքարը տևական եղավ՝ ծանրացնելով առանց այն էլ բացառիկ աննպաստ պայմաններում ընթացող ազգային շարժումը:

Նպատակի իրագործումը հեռու էր, ճանապարհը՝ անասելի դժվարին՝ լի զրկանքներով ու սարսափներով: Դա էր վիճակված հայ ժողովրդին, նրա հեղափոխական զավակներին: Այդ բարդ իրադրության մեջ միշտ չէ, որ հայ ազգային-քաղաքական ուժերը հանդես էին բերում ցանկալի շրջահայեցություն, միշտ չէ, որ սթափ էին գնահատում կոնկրետ իրավիճակները: Երկար ճանապարհին սխալներ շատ եղան, բայց ազնիվ էին բոլոր հայ կուսակցությունների ու շարժումների նպատակները, եթե նույնիսկ խոտոր էին դրանց հասնելու ուղիները:

1908թ. օսմանյան հեղափոխության հաղթանակը մի պահ հույսեր արթնացրեց հայ ժողովրդի հոգում: Բայց սուլթանական կառավարմանը հաջորդած երիտթուրքական շովինիստական ռեժիմը իր բարբարոսություններով գերազանցեց համիդյան զուլումը: Արևմտահայության ողբալի կացությունը ոչ միայն չբարելավվեց, այլև ահռելի չափեր ընդունեցին հետապնդումները, հալածանքներն ու ջարդերը, որոնք, ի վերջո, հանգեցրին 1915թ. ցեղասպանությանը և հայոց հայրենիքի կորստին:

Սույն աշխատության մեջ ներկայացված է հայ ժողովրդի ազատագրական շարժման վերջին էտապի (1905թ. հունվար-1914թ. օգոստոս) պատմությունը: Ուսումնասիրված ժամանակաշրջանում հայ ժողովրդի երեք հատվածներից (Թուրքահայություն, ռուսահայություն, պարսկահայություն) յուրաքանչյուրի առջև կանգնած էին կոնկրետ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր

տարբեր մոտեցումներ ու գործելու տարբեր եղանակներ: Թուրքահայության պայքարը ազգային ազատագրական էր, որին ածանցված էին սոցիալական խնդիրները: Օսմանյան բռնապետության դեմ նա պայքար էր մղում միայնակ, առանց կայսրության ժողովուրդներից որևէ մեկի աջակցության: Տվյալ ժամանակահատվածում ռուսահայություն-կովկասահայությունը պայքար էր մղում գերազանցապես սոցիալական ազատագրության համար, իսկ ազգային հարցերի լուծումը պայմանավորված էր երկրի դեմոկրատացման ընթացքով: Սոցիալական ազատագրության համար ցարական միապետության դեմ իր կռվում ռուսահայությունը միայնակ չէր, նրա դաշնակիցները հակացարական պայքարի մյուս ուժերն էին՝ ուղղորդված թե միջնորդավորված: Պարսկահայությունը իր հիմնական զանգվածներով մասնակցում էր Իրանի հասարակական առաջադիմության համար մղվող պայքարին: Նրա դաշնակիցները երկրի հեղափոխական ուժերն էին, որոնք հանդես էին գալիս իրենց դարն ապրած ավատապետության ու միջնադարյան հետամնացության դեմ հանուն սահմանադրական կարգերի հաստատման:

Ժամանակակիցներին չի հաջողվում խորապես ըմբռնել իմաստն այն իրադարձությունների, որոնք ծավալվում են իրենց հետ և իրենց շուրջը: Հետագա սերունդներին է վիճակվում ավելի հանգամանորեն ուսումնասիրել և քաղաքական համակրանքներից ու հակակրանքներից հնարավորինս վեր կանգնելով՝ քննության առնել անցած-գնացած ժամանակներում ծավալված պատմական դեպքերը, անկողմնակալ գնահատել դրանցում իշխանությունների և հակիշխանական ուժերի, քաղաքական կազմակերպությունների ու գաղափարական հոսանքների, դրական ու բացասական գործիչների խաղացած դերը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանից անցել է ամբողջ մեկ դար, որի ընթացքում աշխարհի գլխով անցել են վիթխարի փոթորիկներ, հատկապես հայ ժողովրդի, որը տեսավ կոտորած ու մահ, հետո՝ հզոր վերածնունդ ու վերելք: Դրան հաջորդեցին խառնակ ժամանակներ՝ մի կողմից արցախյան հերոսապատում, համայն հայության հայրենասիրության աննախադեպ պոռթկում, Հայաստանի անկախության վերականգնում, մյուս կողմից՝ հասարակական խորտնցումներ ու վերիվայրումներ, ժողովրդի սեփականազրկում և

հասարակական հարստության կուտակում մարդկանց մի խմբի ձեռքում, զանգվածների ծայրահեղ աղքատացում ու համատարած անարդարություններ, ազգային ավանդույթների և բարոյական արժեքների ձևախեղում, և այդ ամենի հետևանքով հայրենիքից հարյուր-հազարավոր հայերի փախուստ դեպի անծանոթ հորիզոններ:

Պատմության երկար ճանապարհին բազում արհավիրքներ տեսած հայ ժողովուրդը, կասկած չկա, դուրս է գալու ներկա ծանր վիճակից: Դրա հաստատուն երաշխիքը նրա անկոտրում ոգին ու կամքն է, աշխատասիրությունը և տոկունությունը, բարոր ապագայի նկատմամբ առկեցուն հավատը:

Այսօրվա մեր սոցիալ-տնտեսական դրությունը, քաղաքական կյանքի ու հասարակական հարաբերությունների մակարդակը, դավանած գաղափարների իմաստն ըմբռնելու, դրանք անցյալի արժեքների հետ համեմատելու և գնահատելու, նաև հետևություններ անելու համար մեզ բավականաչափ նյութ է մատակարարում հայ ժողովրդի 1905-1914թթ. պատմությունը:

Աշխատությունը բաղկացած է չորս գրքից: Ցուրաքանչյուր գրքի վերջում զետեղված են հավելվածներ, անձնանունների և տեղանունների ցանկեր: Եզրափակիչ գրքի վերջում ներկայացված են հայ ազատագրական շարժման առավել նշանավոր ղեկավար և շարքային գործիչների համառոտ կենսագրականները, օգտագործած գրականության, աղբյուրների, մամուլի օրգանների ցուցակները և տեղեկատվական այլ նյութեր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ

ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ

1904 թվականի հունվարի 26-ին սկսված ռուս-ճապոնական պատերազմն ամբողջ ուժով ցնցեց ռուսական միապետությունը:

Կռվի առաջին օրվա գիշերը ճապոնական նավախումբը (էսկադրա) հանկարծակի գրոհել էր Պորտ-Արտուր ռազմածովային բազայում կանգնած ռուսական նավատորմիղի վրա՝ խորտակելով «Ռետվիզան», «Ցեսարևիչ», «Պալլադա» հածանավերը:

Հենց սկզբից պարզ դարձավ, որ ռուս բյուրոկրատիան երկիրը նետել է մի արյունալի ավանտյուրայի մեջ: Ցարը և նրա կամարիլիան եզրահանգել էին, որ արտաքին-քաղաքական մի փայլուն հաղթանակով կարելի կլինի կանգնեցնել ինքնակալության դեմ գնալով ծավալվող ժողովրդական շարժումը:

Պատերազմի հենց սկզբին ռուսական բանակների կրած պարտությունները տարբեր կերպ էին ընկալում Ռուսաստանի դասակարգերը, հասարակական շերտերը, քաղաքական հոսանքները: Իշխող դասակարգերի, դասերի ու խավերի համար դա մեծ **վտանգ** էր, քանի որ սկսված պարտությունները անխուսափելիորեն երկրում խորացնելու էին հեղափոխական ցնցումները, իսկ ժողովրդական զանգվածների համար մեծ **ողբերգություն** էր, քանի որ նրանց զավակներն էին զոհվում հազարավոր կիլոմետրեր հեռու՝ չիմանալով, թե ինչի և ում համար:

Պատերազմի հանդեպ տրամադրությունները տարբեր կերպ էին արտահայտվում նաև հասարակության մեջ:

Ռուսահայերի մեծ մասը, հատկապես պահպանողական և ազատական շերտերը, ռուսական բանակների պարտություններն ընկալում էր խոր ցավով: Նրանց բոլորի ցանկությունն էր՝ տեսնել Ռուսաստանի հաղթանակը Ճապոնիայի դեմ: Դա միանգամայն բնական ցանկություն էր, քանզի կովկասահայությունը, չնայած ցարիզմի՝ քսան տարուց ավելի տևող հայահալած քաղաքականությանը, շարունակում էր ամուր կապված մնալ Ռուսաստանին, կրել նրա տնտեսության և մշակույթի բարերար ազդեցությունը, մինչդեռ

Ճապոնիան, որը գտնվում էր հազարավոր կիլոմետրեր հեռու, նրա համար միանգամայն անծանոթ, միանգամայն անըմբռնելի մի երկիր էր, որից նա չուներ ոչ մի սպասելիք:

Նույնպիսի, իհարկե, ոչ միշտ բացահայտ, տրամադրություն էին դրսևորում արևմտահայ մտավորական ընտրանին և գաղութահայ հասարակական գործիչները:

Այդպես էր մտածում, օրինակ, Մարսելում (Ֆրանսիա) լույս տեսնող «Արմենիայի» հիմնադիր-խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը, որը բազմիցս թերթի էջերում արտահայտում էր իր խոր համակրանքը Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ, մաղթում էր, որ երկիրը կարողանա, որքան հնարավոր է, «պատվով դուրս գալ արյունահեղ պատերազմից»:

«Խոսք չկա,- գրում էր «Արմենիան»,- այսօրվայ ռուս կառավարությունը յետադիմական է և մեզ թշնամի, սակայն ռուս ազգը մեծ ապագա մը ունի, հսկա ձգտումներով օժտված ժողովուրդ մըն է, տիեզերական դեր մը պիտի խաղա, մեծ քանքարներ ունի թաքցուած յուր ծոցում և եվրոպական կիրթ ազգերուն մեջ սկսեր է գրավել յուր պատվավոր տեղը»[1]:

Թերթի մի ուրիշ համարում կարդում ենք. «...Ռուսիային վիճակուած է մեծ կոչում, մեծ դեր մը արդի մարդկութեան ապագա կեանքում: Հատկապես հայ ազգը և ռուսահայերը շատ բան են պարտական ռուսաց մեծ ազգին և ապագայում էլ շատ կօգտուին նրանից»[2]:

Ընդհակառակն, Հեռավոր արևելքում կրած պարտությունները մեծ գոհունակություն էին առաջ բերել սոցիալ-դեմոկրատների, սոցիալիստ-հեղափոխականների և Ռուսաստանի մյուս հեղափոխական կուսակցությունների, այդ թվում ս.-դ. Հնչակյան և Հ.Յ. դաշնակցության մեջ: Նրանք բոլորը Ռուսաստանի պարտությունը դիտում էին որպես ոչ թե ժողովրդի, այլ ցարիզմի պարտություն, և գտնում էին, որ այն Էլ ավելի կսրի ներքին հակասությունները երկրում և հեղափոխական ուժերի համար նպաստավոր պայմաններ կստեղծի ինքնակալության դեմ վճռական գրոհի համար:

Հ.Յ.Դ. ինքնապաշտպանության կ.կոմիտեն, բաց թողած թռուցիկներով ռուս-ճապոնական պատերազմը մեծ դժբախտություն համարելով աշխատավոր ժողովրդի համար, միաժամանակ գտնում էր, որ այն ցարիզմի տապալման նախագուշակ է: Ուստի կովկասահայությունը չպիտի նպաստի ռուսական զենքի հաղողությանը, և դա ամենից առաջ այն պատճառով, որ դեռ թարմ են եկեղեցական կալվածքները գրավելու ժամանակ բռնակալության կողմից հայությանը հասցրած վերքերը:

Ռուս հոգևորականությունը, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, անդադար կրոնական մաղթանքներ էր կատարում ռուսական զենքի հաղողության համար և փառաբանական հեռագրեր ուղարկում ցարին:

[1] **«Արմենիա»**, 23 ապրիլի 1904թ.:
[2] Նույն տեղում, 30 ապրիլի 1904թ.:

Ռուս հոգևորականության այդ գործելակերպը փոխանցվել էր Կովկասի ազգերի, այդ թվում՝ հայ հասարակության ունևոր խավերին ու հոգևորականությանը:

Բաքվի հայ հարուստները որոշել էին մի շքեղ մաղթանք կատարել հայոց եկեղեցում՝ ցարին հլու հպատակություն հայտնելու, կառավարության հետ «լեզու գտնելու» և հայերի դեմ հալածանքները մեղմելու նպատակով:

Պատերազմը սկսվելուց ուղիղ մեկ շաբաթ անց, 1904թ. փետրվարի 3-ին, եկեղեցուն հարակից Պարապետ կոչված հրապարակում ու փողոցներում հավաքվել էին հազարավոր հայեր: Նրանք կարծես բոլորովին մոռացել էին, որ ընդամենը մի քանի ամիս առաջ այդ նույն հրապարակում ռուս զինվորները կրակել էին հայ եկեղեցու կալվածքները բռնագրավող ցարի հրամանագրի դեմ բողոքող ցուցարարների վրա՝ սպանելով 30 երիտասարդների: Այժմ այդ նույն վայրում ստորաքարշ հայ հոգևորականները ծնկաչոք մաղթանք էին ուզում կատարել ոճրագործ ցարի կյանքի համար, որպեսզի ապացուցեն, թե հայությունը որքա՜ն նվիրված է ռուսական գահույքին: Բայց ծնկաչոք մաղթանքի ծրագիրը տապալվեց: Խոսքը տանք Ա. Գյուլխանդանյանին:

«Հայ հոգևորականությունը, առաջնորդ ունենալով հայոց զգեստավորված եպիսկոպոսին, խաչով և խաչվառներով սկսում է իր մաղթանքը: Այն բոպեին, երբ հոգևորականությունը և բազմահազար հասարակությունը պետք է ծնկի գային աղոթելու համար ռուս կայսեր արևշատության և ռուս բանակի հաղթանակի համար, հանկարծ հրապարակի կենտրոն է նետվում մի պատրույգավոր ռումբ, որ, գետնի վրա մի քանի պտույտներ անելուց հետո, պայթում է սոսկալի թնդյունով: Մոռացվում է և՛ մաղթանքը, և՛ աղոթքը ... Զգեստավորված հոգևորականությունը և ամբոխը խելակորույս սկսում են փախչել՝ ազատվելու համար ռումբի հարվածից.....»[1]: Եղան զոհեր և վիրավորներ:

Ամբողջ քաղաքը հուզմունքի մատնվեց: Ամեն ոք ուզում էր իմանալ, թե ովքեր են սպանվել, քանի՞ վիրավոր կա, ովքե՞ր են ռումբ նետողները, արդյո՞ք բռնվել են նրանք և այլն: Ընդհանուր կարծիքն այն էր, որ դա ռուս խուլիգանների գործն է:

Շուտով Բաքվի դաշնակ ղեկավարության նեղ շրջանակին հայտնի դարձավ, թե ով է եղել ռումբ նետողը: Բանից պարզվեց, որ դա Հ.Յ.Դ. Բաքվի կ. կոմիտեի և ինքնապաշտպանության կ. կոմիտեի անդամ Մարգար Ժամհարյանն էր (Մռավ), որը Հ.Յ.Դ.՝ քաղաքում եղած զինանոցի պահեստապետ դաշնակցական Խեչոյից պահանջել էր մի ռումբ բերել: Խեչոն ենթադրելով, որ Մարգարն այդ կարգադրությունն անում է իբրև կ. կոմիտեի անդամ, անմիջապես պահեստից բերել էր ռումբը և հանձնել նրան, որը և պատրույգը վառելով նետել էր հրապարակի բաց տեղը՝ «դաս տալու» համար ցարական ոճրագործ կառավարության առջև սողացող փարիսեցիներին:

Նույն օրը երեկոյան նիստի է հավաքվում կ. կոմիտեն՝ քննելու Մարգարի և

[1] **«Հայրենիք»**, N 11(167), սեպտեմբեր, 1936, էջ 87:

Խեչոյի հարցը: Կատարվածը մեծ վրդովմունք էր առաջ բերել կոմիտեի անդամների մեջ: Կոմիտեն Մարգարին մեղադրում է ինքնագլուխ արարքի, իսկ Խեչոյին՝ նրան ռումբ տրամադրելու համար: Խեչոն նիստում բացատրություն է տալիս, թե ինքը կարծել է, որ Մարգարը կ. կոմիտեի որոշմամբ է ռումբ պահանջել, այնուհետև հայտարարում է, որ պատրաստ է կրել կատարված հանցանքի իրեն հասանելիք պատիժը[1]: Մարգարը կատարածի համար չէր զղջացել՝ հայ հոգևորականների ծնկաչոք մաղթանքը բնորոշելով որպես ազգային խայտառակություն: «Ես կատարեցի իմ խղճի պարտքը, վարվեցեք ինձ հետ ինչպես կուզեք»[2],- հուզմունքով խոսքը վերջացրել էր նա:

Կոմիտեն որոշում է պահեստապետի պաշտոնից հեռացնել դաշնակցական Խեչոյին, իսկ Մարգար Ժամհարյանին զրկել Հ.Յ.Դ. ինքնապաշտպանության կ. կոմիտեի և Ոսկանապատի կ. կոմիտեի անդամ լինելու իրավունքից: Եվ եթե Մարգարն ավելի խիստ պատիժ չստացավ, ապա դրա պատճառն իր անձնուրաց կուսակցականի հանգամանքն էր:

Այս դեպքի առթիվ Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն հրատարակեց և տարածեց հետևյալ թռուցիկը.

«Փետրվարի 3-ին Բաքվում տեղի ունեցան երկու հավասարապես դատապարտելի դեպքեր:

Այդ օրը Բաքվի հայ հասարակությունը խաբվելով մասամբ միամիտ և մասամբ կեղծ քաղաքագետներից և ոտնատակ տալով մեր ազգային պատիվը՝ հայոց եկեղեցու կից հրապարակում մեծաշուք և փարիսեցիական մաղթանք կատարեց ռուս զորքերի հաղթանակի համար, այն զորքի, որ մի քանի ամիս առաջ գնդակահարում էր այդ հրապարակում գտնվող հայ եկեղեցին և այդ եկեղեցում պատսպարված հայ ժողովրդին:

Հայ հասարակության ստրկական կեղծավորությունն այն աստիճանի էր հասել այդ օրը, որ եղան հայեր, որոնք հունիսի օրենքը հրատարակող բռնակալի ծաղկազարդ պատկերները դուրս բերեցին հրապարակ, և գտնվեց մեկ հայ վարդապետ, որ նույնիսկ ճառ ասելու լրբություն ունեցավ:

Այդ ամոթալի ցույցն ունեցավ իր նույնքան նողկալի հակահարվածը: Գտնվեցավ մի անհատ, որ այդ մաղթանքին ժողովված ամբոխի մահվան դատավճիռը կարդալու հանդգնությունն ունեցավ և զոհերի մեջ ընտրություն չանող ռումբով ուզեց սրբել այն արատը, որ այդ օրվան ցույցը դնելու էր Բաքվի հայ հասարակության վրա:

Հայ հեղափոխական դաշնակցությունը, որ մարդասիրական սկզբունքները չի մոռանում նույնիսկ թուրքի հետ կռվելիս, չի կարող առանց խորին վրդովմունքի վերաբերվել դեպի փետրվարի 3-ի ոճիրը՝ ով էլ լինի այդ ոճիրը կատարող անհատը:

Հ.Յ. դաշնակցության ա[ռևելյան] բ[յուրո] 27 փետրվարի, 1904թ.»:

[1] «Հայրենիք», N 11(167), սեպտեմբեր, 1936, էջ 87:
[2] Նույն տեղում:

1905թ. մարտին ճապոնացիները խորտակեցին «Պետրոպավլովսկ» դրոշակակիր նավը: Ապրիլի վերջերից մարտեր սկսվեցին նաև ցամաքի վրա: Ցալու գետի մերձակայքում ճապոնացիներն առաջին ցամաքային ճակատամարտում ջախջախեցին ռուսական մի խոշոր միավորում: Մայիսի 26-ին ճապոնական երկրորդ բանակը, գեներալ Օկուի հրամանատարությամբ, ջախջախելով մի խոշոր զորախումբ, Պորտ-Արտուրը կտրեց ռուսական ցամաքային զորքերից: Հունիսի կեսերին ճակատամարտ տեղի ունեցավ Վաֆանգոուի մոտ, ուր ռուսները դարձյալ տանուլ տվեցին:

Մանջուրիայում մեկը մյուսի հետևից կրած ծանր պարտությունները մեծապես խաթարեցին ռուսական բանակի բարոյական ոգին: Բանակի ցաքուցրիվ զորամասերն սկսեցին նահանջել դեպի Լյաոյան և կենտրոնական այնտեղ: Գլխավոր հրամանատար գեներալ Կուրոպատկինը որոշեց հենց այստեղ տալ վճռական ճակատամարտ: Ռուսական 160 հազարանոց զորքի դեմ կանգնած էր 125 հազարի հասնող ճապոնական բանակը՝ գեներալ Կուրոկիի հրամանատարությամբ: Օգոստոսի 29-ին Լյաոյանում սկսված արյունալի կռիվները նույնպես չահեցին ճապոնացիները: Դրան հետևեց Շախե գետի մոտ տեղի ունեցած է՛լ ավելի արյունահեղ ճակատամարտը, որի ընթացքում ռուսները կորցրին 62 հազար մարդ:

Շախե գետի մոտ կրած պարտությունից հետո ռուսական զորքերը սկսեցին նահանջել դեպի Մուկդեն: Գեներալ Կուրոպատկինը հույս ուներ Մուկդենում հավաքել բոլոր ուժերը և ջախջախիչ ու վճռորոշ ճակատամարտ տալ:

Թեև պատերազմը դեռ շարունակվում էր, բայց սթափ մտածող մարդիկ քաջ գիտակցում էին, որ Ռուսաստանի պարտությունը ժամանակի հարց է, և մարտական գործողությունների հետագա ձգձգումը միայն բազմապատկելու է երկրի գլխին եկած անհամար աղետները, հսկայական նոր զոհեր է խլելու ժողովրդական զանգվածներից:

Բայց ճապոնացիների հետ հաշտություն կնքելու ձայները արձագանք չէին գտնում Պետերբուրգի պալատներում: Թեև ճապոնացիների հաղթանակները շշմեցրել էին բոլորին, բայց ոչ ոք չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ անհամեմատ փոքր մի երկիր պիտի կարողանա հաղթել վիթխարի կայսրությանը: Ռուսական մամուլը, փոքր բացառություններով, ընթերցողին հավատացնում էր, թե Ռուսաստանը, որպես մի հսկա, վերադասավորելով իր ուժերը, վերջնահաշվով խժռելու և կուլ է տալու Ճապոնին, ինչպես մի միջատ: Ցարը համոզված էր, որ իր բանակներն, ի վերջո, պիտի հաղթանակեն: Նա հրամանատարությունից զրկեց Կուրոպատկինին, նրա փոխարեն նշանակեց Լինևիչին՝ վերջինիս առջև խնդիր դնելով զորք ժողովել «վճռական հարվածի» համար:

Հակառակ «թշնամուն պատժելու» մասին ցարական վերնախավի մեծադղորդ սպառնալիքների, պատերազմը քանի գնում, ավելի ու ավելի աղետա-

բեր էր դառնում Ռուսաստանի համար: 1904թ. ամռանը ռուսական զորքերը շարունակաբար պարտվում էին թե՛ ծովի և թե՛ ցամաքի վրա:

Պատերազմն է՛լ ավելի ակնհայտ դարձրեց միապետության նեխվածությունը, պետությունը ղեկավարելու նրա անընդունակությունը:

Ռուսական բանակների կրած խայտառակ պարտությունները ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ծայրամասերի աշխատավոր զանգվածների մեջ սասանեցին ցարիզմի անպարտելիության մասին պատկերացումները՝ զուգահեռաբար ուժեղացնելով տիրող կարգերի նկատմամբ ատելությունը:

Դրա բուռն արտահայտություններից մեկը սոցիալիստ-հեղափոխական (էս-էռ) ահաբեկիչների կողմից 1904թ. հուլիսի 15-ին ներքին գործերի մինիստր Պլևեի սպանությունն էր: Վայրկյանե-վայրկյան կացությունը վտանգավոր էր դառնում միապետության համար: Ամեն ինչից երևում էր, որ մոտենում էր ժողովրդական ազատության մեծ պատերազմը:

Ստեղծված դրությունից ցարիզմը ելք էր որոնում և այդ նպատակով ակնարկներ էր անում երկրում բարեփոխումներ անցկացնելու մասին, բուրժուազիային զիջումներ անելու խոստումներ էր տալիս: Նա ցանկանում էր չնչին փոփոխությունների գնով իր կողմը գրավել բուրժուական ազատամիտ խավերին, նրանց օգնությամբ բարձրացող շարժումն ուղղել լիբերալիզմի հուն, վիժեցնել հեղափոխության մոտեցող փոթորիկը:

Ներքին գործերի սպանված մինիստր Պլևեի փոխարեն 1904թ. օգոստոսին ցարը նշանակեց կառավարական շրջաններում ազատամիտ և փափուկ բնավորություն ունեցող մարդու համբավ ձեռք բերած իշխան Սվյատոպոլկ-Միրսկուն, որը թեև ժանդարմերիայի նախկին պետն էր, բայց սկսեց խոսել քաղաքական բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության մասին, իրեն հայտարարեց «ուսանողների բարեկամ», «բարյացակամ» վերաբերմունք ազգարարեց հրեաների նկատմամբ, առաջ քաշեց զեմստվոների լիազորություններն ընդլայնելու հարցը և այլն:

Նոր նախարարի ազատամտությունն արտահայտվեց նաև այն բանով, որ հեղափոխության հովերով տարված՝ ժողովրդի զանազան խավերի սիրտը շահելու նպատակով, ամեն կարգի ժողովրդական ու ազգային համայքներին իրավունք տվեց ուղերձներով իրենց կարիքները ներկայացնել կառավարությանը՝ դրանք «քննության առնելու և բավարարություն տալու համար»:

Սվյատոպոլկ-Միրսկու՝ դեռևս ոչ մի բան չարտահայտող այս խոստումներն ու կարգադրությունները սպիտակ տեռորի տակ ապրած հասարակությանը մի չտեսնված առաջադիմական քայլ թվաց, և Ռուսաստանի մամուլը դրանք

* Գերմանացի հորից և լեհուհի մորից սերված Վյաչեսլավ ֆոն Պլևեն ցարական վարչակարգի ամենադաժան ներկայացուցիչներից էր, որի սանձազերծած բռնություններին ջերմորեն հավանություն էր տալիս Նիկոլայ II-ը: Պլևեն բացահայտ հակակրանք էր տածում հայ ժողովրդի նկատմամբ, որն առավել ցցուն արտահայտվեց կառավարության կողմից 1903թ. հայ եկեղեցու ունեցվածքի հափշտակման ժամանակ. նա ավազակային այդ գործողության գլխավոր դերակատարներից էր:

անվանեց երկրի ազատականացման գարուն :

Բուրժուական լիբերալները կառավարության խոստումներից ցնծության մեջ էին և, հույսը դրած գերագույն իշխանության ողորմածության վրա, նրանից, ուր որ է, զիջումներ էին սպասում:

Ընդարձակ երկրի բոլոր ծայրերից շտապ ուղերձներ էին հղվում կառավարությանը: Կովկասի ազգերը հետ չէին մնում մյուսներից: Վրաց ազնվականությունն իր համար պահանջում էր է՛լ ավելի լայն իրավունքներ, Թուրք բեկությունը նույնպես՝ նման մի բան: Ինչ վերաբերում է հայ հասարակության վերնախավերի ներկայացուցիչներին, ապա նրանք երկչոտաբար պահանջում էին միայն եկեղեցական-մշակութային ինքնավարություն: Պարզ է, որ դա ցարիզմի հետ հաշտ ապրելու հայ բուրժուազիայի և հայ հոգևորականության ցանկության արտահայտությունն էր:

Ինչպես նոր կերպարի մեջ մտնելու ցարիզմի սիրախաղը, այնպես էլ «Օգոստոսափայլ կայսրի» ու նրա կառավարության նկատմամբ անհուն նվիրվածության մասին ունևոր դասակարգերի ու հոգևորականության գետնատարած հավաստիացումները ցանկալի արդյունք չտվեցին: 1904թ. աշնանը երկրով մեկ սկսվեցին հեղափոխական ցույցեր ընդդեմ պատերազմի: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, սոցիալիստ-հեղափոխականները (էս-էռ), ծայրամասերի ազգային-հեղափոխական կուսակցությունները, հսկա-յական պրոպագանդիստական աշխատանք էին ծավալում կայսրությունով մեկ, լույս էին ընծայում հակապատերազմական բնույթի թռուցիկներ ու կոչեր՝ ուղղված զինվորներին ու նավաստիներին, բանվորներին ու գյուղացիներին[1]:

Հուզումների, ցույցերի, գործադուլների ալիքը գնալով ընդգրկում էր նորանոր շրջաններ և ժողովրդական նորանոր զանգվածներ: Այդ ընդհանուր պրոցեսից, բնականաբար, չէր կարող դուրս մնալ Անդրկովկասը: Ժողովրդական հուզումների թատերաբեմ էին դարձել ամենից առաջ երկրամասի արդյունաբերական խոշոր կենտրոնները: Առաջնությունը, բնականաբար, պատկանում էր Բաքվին՝ իր բազմազգ բնակչությամբ :

Երկու-երեք տարի էր, ինչ Բաքվում գործում էր Ռուսաստանի սոցիալ-

[1] **«Հայրենիք»**, N 11(167), սեպտեմբեր, 1936, էջ 87:
1905թ. Բաքու քաղաքում և նավթահանքերում մշտական ու ժամանակավոր ապրող բնակիչների ընդհանուր թիվը միասին վերցրած կազմում էր շուրջ 240 հազար: Ազգային կազմի տեսակետից այդ թիվը հետևյալ պատկերն էր ներկայացնում, մահմեդականներ (անդրկովկասյան թուրքեր, պարսիկներ և պարսկահպատակ թուրքեր, լեզգիներ, Կազանի թաթարներ և այլք) շուրջ 90 հազար, ռուսներ՝ 61, հայեր՝ 51, օսեր՝ 7, վրացիներ՝ 3, գերմանացիներ՝ 3, հրեաներ՝ 3, հույներ՝ 1, լեհեր՝ 2, ասորիներ, աբխազներ, էստոնացիներ՝ 2 հազար, կային նաև ֆրանսիացիներ, անգլիացիներ, չվեդներ և այլ ազգերի ներկայացուցիչներ (“Искра”, N24, 1 сентября 1902г., տե՛ս նաև Ա-Դ-Օ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.): Փաստագրական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Երևան, 1907, էջ 13):

դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՄԴԲԿ) կազմակերպությունը՝ մեծամասնականների (բոլշևիկներ) և փոքրամասնականների (մենշևիկներ) թևերով՝ իր շարքերում ունենալով տարբեր ազգությունների բանվորներ ու մտավորականներ:

Իրենց կազմակերպություններն ունեին էսէռները և անարխիստները, ինչպես նաև կային բունդի ներկայացուցիչներ և ուրիշներ:

Բաքվի հայ բնակչության տարբեր խավերի մեջ հատկապես մեծ ազդեցություն ունեին հայկական ազգային հեղափոխական կազմակերպությունները, որոնցից ամենաուժեղը հայ հեղափոխական դաշնակցության տեղի կազմակերպությունն էր: Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպությունն առաջվա պես շարունակում էր ձեռնպահ մնալ ցարական կառավարության դեմ անմիջական, ակտիվ ուժային պայքարից, թեև նա մեծ ազդեցություն ուներ քաղաքի մանր արտադրողների, մտավորականության, ինչպես նաև բանվորների շրջանում: Ինչ վերաբերում է նավթաշխարհի հայ և օտար խոշոր բուրժուազիային, ապա այն ուղղակի ատում էր այդ կուսակցությանը, բայց և չափազանց վախենում էր նրանից. հայ մեծահարուստները՝ ահաբեկչության սպառնալիքներից սարսափահար, խոշոր միջոցներ էին մատակարարում նրան: Այդ փողերով Թուրքահայաստանի ապստամբների համար ձեռք բերած զենքի մեծ մասը պահեստավորվում էր Բաքվում, ապա այնտեղից Պարսկաստանի վրայով մտցվում Արևմտահայաստան:

1904 թվականից սկսած՝ Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպությունն ավելի ու ավելի հաճախ էր պաշտպանում բանվորական գործադուլները, դրանով իսկ իր դեմ գրգռելով խոշոր կապիտալիստներին և նրանց թիկունքին կանգնած ցարական կառավարությանը: Բանվորական զանգվածների վրա դաշնակցության ազդեցության տարածումը զայրացնում էր սոցիալ-դեմոկրատներին, որոնք գտնում էին, որ այդ կուսակցությունը Ռուսաստանում չպետք է զբաղվի բանվորական խնդիրներով, քանի որ այն ստեղծված է տաճկահայոց ազատագրական շարժումը գլխավորելու համար: Դաշնակցականները վճռականապես մերժում էին բանվորական շարժումից իրենց մեկուսացնելու փորձերը: Աբրահամ Գյուլխանդանյանը գրել է.

«Մենք պարզ կերպով դիտում էինք, որ դաշնակցությունը Անդրկովկասում օրեցօր տարածվում էր և դառնում մի զորեղ քաղաքական կուսակցություն: Սակայն, դրա հետ միասին, մենք նկատում էինք, որ այդ զորացումը վերջ ի վերջո կարող էր ծառայել ի մնաս դաշնակցության, եթե մենք հնարավորություններ չստեղծեինք այդ կուտակված ուժերի գործադրության համար...

Մենք համոզված էինք, որ ցարական կառավարությունը, եկեղեցական կալվածների գրավումից հետո, չպիտի կանգ առնի, այլ պիտի շարունակի իր հալածանքները հայերի դեմ: Մյուս կողմից՝ զգալի կերպով ուժեղանում էին ռուսական հեղափոխական շարժումները, որոնց կարևոր, գուցէ և ամենակարևոր հնոցներից մեկը Բագուն* էր: Բնական էր, որ այդ շարժումները պիտի գրավեին հայ երիտասարդ և թարմ տարրերի ուշքն ու միտքը: Դաշնակցությունը չէր կարող չկշռել այդ հանգամանքը և պետք չգալ զբաղվելու բացի Տաճկահայաստանի գործերից նաև կովկասահայության վիճակով, ինչպես և վճռականորեն մասնակցելու Կովկասի և Ռուսաստանի հեղափոխական շարժումներին:

Այդ ժամանակները Բագվում տեղի էին ունենում մի շարք վիճաբանական ժողովներ մեր և ռուս սոցիալ-դեմոկրատների միջև: Խոսվում էր զանազան ծրագրային և տեսական խնդիրների մասին: **Մենք պաշտպանում էինք այն տեսակետը, թե դաշնակցությունը պետք է ղեկավարէ հայ աշխատավորությունը և ոչ թե նրա պատմությանը և կյանքին անծանոթ ռուսական սոցիալ-դեմոկրատիան»**[1]:

Բաքվի մյուս ազդեցիկ ու հին հայկական կազմակերպությունը հնչակյանն էր, որում այդ ժամանակ ղեկավար դեր էին խաղում Մնլքոն Ասրիբեկյանը, Գրիգոր Վարդանյանը, Սերգո Մարտիկյանը :

Թեև Արևմտահայաստանի ազատագրումն ամբողջությամբ առած սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության համար մնում էր իբրև գլխավոր խնդիր, բայց Անդրկովկասում գործող նրա կոմիտեները 1904-1905թթ. կտրուկ փոխեցին պայքարի ուղղությունն ու տակտիկան՝ առաջնությունը տալով ցարիզմի դեմ հեղափոխական պայքարին: Ավելին, իրենց կուսակցությունն ազդարարելով բանվորական՝ հնչակյանները մտադրություն հայտնեցին միավորվելու ՌՄԴԲԿ-ի հետ՝ ընդունելով վերջիններիս ծրագիրը, բայց պահպանելով ինքնավար վիճակ*: Բաքվում այդ միավորումը 1904թ. վերջերին արդեն փաստ էր: Համենայնդեպս Բաքվի հնչակյանները մասնակցում էին բոլոր գործադուլներին ու քաղաքական ցույցերին, ստորագրում էին ՌՄԴԲԿ տեղի կազմակերպության պահանջների տակ: Նրանք սոցիալ-դեմոկրատների հետ համախոհ էին համարյա բոլոր սկզբունքային հարցերում, բայց մի հարցում անզիջում էին, այն է՝ ահաբեկչությունը համարում էին իրենց պայքարի մարտավարության անբաժան մաս և շարունակում էին իրականացնել նման գործողություններ, մի բան, որ անընդունելի էր և՛ բոլշևիկների, և՛ մենշևիկների համար:

Չնայած նշված քաղաքական կազմակերպություններն անզիջում հակամարտության մեջ էին, բայց բոլորը հանդես էին գալիս Հեռավոր արևելքում պատերազմը շարունակելու քաղաքականության դեմ:

Բանակը համալրելու համար ռուսական կառավարությունը նոր զորակոչ հայտարարեց և պահեստի զինվորներին ու սպաներին կանչեց զենքի տակ: Բայց ժողովուրդը չէր ուզում իր զավակներին ուղարկել Հեռավոր արևելք՝ ան-

---

* Բագու - Բաքու:

[1] **«Հայրենիք»**, N1(167), սեպտեմբեր, 1936, էջ 85:

* Այդ մասին հանգամանորեն խոսք կգնա սույն աշխատության երկրորդ գրքում:

խուսափելի կործանման: Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունները երիտասարդությանը կոչ էին անում հրաժարվել զինվորական ծառայությունից:

Նույն կերպ էին վարվում հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները Անդրկովկասում:

Հ.Յ.Դ. ինքնապաշտպանության կ. կոմիտեի՝ «Կովկասում սպասվող պահեստի զորակոչի առթիվ» 1904թ. նոյեմբերին հայ երիտասարդներին հղած ուղերձում ասված էր.

«Այս օրերին, երբ վճռում է ռուս բռնակալութեան տակ ճնշված ժողովուրդների բախտը, երբ ամեն մի լեհ, ամեն մի ֆինլանդացի, ամեն մի հրեայ և իսկական ժողովրդի շահերը հասկացող ամեն մի խելացի ռուս սրտատրոփ սպասում է միապետութեան զորքի նորանոր պարտութիւններին, ռուս խայտառակ բռնակալութեան անկման, ամեն մեկը պարտավոր է հեռու փախչել այդ գայթակղութիւնից: Եւ ժողովուրդը սրբազան պարտք պետք է համարի այդպիսիներին պաշտպանելու, խրախուսելու, պատսպարելու ...Այս սև օրերին ո՛չ մի հայ իրավունք չունի ռուսական բռնակալութեան համար կռվելու ...Դիմադրե՛նք, քանի կարող ենք, քանի ապրում ենք»[1]:

Նույնքան վճռական էր հնչակյան կուսակցության վերաբերմունքը: Հնչակի կենտրոնը կուսակցության կովկասյան մասնաճյուղերին 1904թ. դեկտեմբերի 1-ին ուղարկած շրջաբերականով ցուցում էր տալիս.

«Ընկերնե՛ր: Կործանվող կառավարությունը զորքեր է հավաքում տանելու Հեռավոր արևելք... Ռուսաստանի ժողովուրդները չեն կարող իրենց վիզը հլու ոչխարի պես դնել միապետ-դահճապետի դանակի տակ՝ նույն այդ դահճապետի իշխանությունը փրկելու համար: Ուստի մյուս բոլոր ժողովուրդների հակացարական քաղաքական ուժերի հետ, դուք էլ պետք է հետևեք բանականության նույն հրամանին, բարձրացնեք աղաղակ՝ ուղղված զորակոչի ենթակա հայ երիտասարդությանը՝ «դիմադրե՛լ ու դիմադրե՛լ»: Պետք է խոսքով, ցույցերով, նույնիսկ զենքով մերժել զորակոչը: Կորչի՛ պատերազմը, կորչի՛ ատելի միապետությունը...»[2]:

Դեռ 1903թ. վերջերին տեղի ունեցած հուժկու գործադուլը Բաքուն առաջ էր մղել համառուսաստանյան հեղափոխական շարժման առաջին շարքերը: Է՛լ ավելի բազմամարդ ու համառ եղավ 1904թ. վերջերին նավթաշխարհում ծայր առած շարժումը:

Նավթի ու մազութի քաղաքը եփեռումի մեջ էր: Ուրքի էին ելել բոլորը, բոլորն էլ դժգոհ. մեկն իր դժվարին, տառապյալ կյանքից, մյուսը՝ ազգային հալածանքից, երրորդը՝ անպաշտպանվածության զգացումից: Փողատերերը նույնպես ապահով չէին զգում. ոմանք ցարական վարչակարգին դատապարտում էին երկչոտության, ուրիշներն՝ ընդհակառակը, ավելորդ դաժանության համար: Ոչ մեկը մյուսին չէր հասկանում. իսկական սոդոմ-գոմոր:

Բաքվի աշխատավորության դասակարգային-սոցիալական պայքարի պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում 1904թ. դեկտեմբերին ծայր առած բանվորական գործադուլը: Տնտեսական արդար պահանջները՝ միացած քաղաքական ընդհանուր դժգոհության հետ, բղոքի էին դուրս բերել հայերին ու ռուսներին, վրացիներին ու թուրքերին, բոլոր ազգերի հարստահարվածներին:

Գործադուլն սկսվեց դեկտեմբերի 13-ին և անսովոր արագությամբ տարածվեց նավթային երեք գլխավոր շրջաններում՝ Բալախանի, Բիբի-Հեյբաթ, Սև քաղաք: Օրեր անց գործադուլին միացավ նաև Սպիտակ քաղաքի բանվորությունը: Կանգ առան նավթահանքերն ու գործարանները, ձիաքարշը, դադարեց թերթերի լույսընծայումը: Գործադուլին մասնակցում էր ավելի քան 30 հազար մարդ:

Հրապարակներն ու փողոցները բռնեցին հեծյալ կազակային վաշտերն ու ոստիկանությունը:

Գործադուլի օրերին քաղաքի հեղափոխական զանազան կազմակերպություններ հանդես բերեցին միասնական կամք ու համերաշխություն: Առաջին դեպքն էր, որ նրանք համաձայնեցնում էին իրենց գործողությունները, միմյանց աջակցում տպագրելու և տարածելու պրոկլամացիաներ, կոչեր, հայտարարություններ:

Սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) Բաքվի կոմիտեն «Բաքվի բոլոր բանվորներին» ուղղված դիմումի մեջ կոչ էր անում.

«Դադարեցրեք, ընկերնե՛ր, ձեր աշխատանքը, փողոց դուրս եկեք և հայտնեցեք ձեր պահանջները՝ ժողովրդական պառլամենտ, ընդհանուր և գաղտնի ընտրություններ, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, Կովկասի, Լեհաստանի, Ֆինլանդիայի անկախություն, քաղաքական բոլոր բանտարկյալների ու աքսորյալների կատարյալ ազատություն:

Զենքը ձեռքին, ընկերնե՛ր, գրոհ տվեք ցարի սպասավորների դեմ, որոնք ձեր բերանն են փակում և ցրում ձեր ժողովները:

Դեպի առաջ, ընկերնե՛ր, դեպի համարձակ, վճռական կռիվ»[1]:

Իր հերթին, ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեն «Բոլոր քաղաքացիներին» ուղղած կոչի մեջ շեշտում էր .

«Մենք՝ բանվորներս, դուրս կգանք Բաքվի փողոցները, որպեսզի ազդարարենք, որ ինքնակալական կարգը պետք է ոչնչանա... Մենք պահանջում ենք օրենքի առաջ բոլոր ժողովուրդների հավասարություն..., մամուլի, խոսքի, ժողովների, միությունների և գործադուլների ազատություն, 8-ժամյա բանվորական օր»[2]:

Դեկտեմբերի 19-ին Հ.Յ. դաշնակցության ինքնապաշտպանության կենտ-

[1] «Դրոշակ», N 11 (152), նոյեմբեր, 1904, էջ 164:
[2] «Ապագա», N 1, 1(14) հունվարի 1905թ.:

[1] «Դրոշակ», N 1(154), հունվար, 1905, էջ 6:
[2] Նույն տեղում:

ռոնական կոմիտեն հանդես եկավ մի դիմումով՝ ուղղված ոչ թե քաղաքի բանվորությանը կամ ողջ բնակչությանը, այլ՝ «Հայ բանվորներին»:

Դիմումի մեջ չեշտելով, որ դաշնակցությունը միշտ համակրանքով է վերաբերվել ընդհանրապես բանվորների պայքարին և այժմ էլ բացահայտորեն պաշտպանում է սկսված գործադուլը, ինքնապաշտպանության կոմիտեն այնուհետև հայ բանվորներին առաջարկում էր՝ «իբրև հաջողության կարևոր պայման, լինել համերաշխ բոլոր բանվորների հետ՝ առանց ազգային ու կուսակցական խտրության»: Համաձայն լինելով մյուս կուսակցությունների կողմից առաջադրվող քաղաքական և տնտեսական պահանջներին, կոմիտեն միաժամանակ դրանց ավելացնում էր դաշնակցության ոգուն հատուկ 28 կետից բաղկացած հավելյալ պահանջներ[1]:

Բաքվի բանվորների 1904թ. դեկտեմբերյան գործադուլը վերջացավ հաղթանակով: Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ բանվորները կարողացան կոլեկտիվ պայմանագիր կնքել ձեռնարկատերերի հետ: Սոցիալիստները դա հաղթանակ էին համարում: Իշխանությունների դիրքը պարզ չէր. մեկ հավանություն էին տալիս, մեկ՝ դժգոհում: Հատկապես դժգոհ էին, որ տարբեր ազգերի բանվորները հանդես էին եկել միասնական ճակատով:

Գործադուլն արձագանք գտավ Ռուսաստանի շատ բանվորական կենտրոններում: Այն կարծես մի նախափոթորկային կայծակ էր հեղափոխական մեծ մրրիկի նախօրյակին: Հարկավոր էր ուժեղ, մի կործանարար հողմ, որը տակնուվրա աներ հսկայական ճահիճը, թարմացներ մթնոլորտը և նոր կյանքի համար հարթեր ազատ ու արգասավոր դաշտ:

Այդ ամենին նպաստում էին Հեռավոր արևելքում ռուսական բանակի կրած նոր պարտությունները:

Մինչ ռուսական հրամանատարությունը Մուկդեն քաղաքի մոտ մեծամասշտաբ ճակատամարտի էր պատրաստվում, ճապոնացիները, երկարատև պաշարումից ու արյունահեղ կռիվներից հետո, 1904թ. դեկտեմբերի 20-ին (1905թ. հունվարի 2-ին) գրավեցին Հեռավոր արևելքում ռուսների ամենախոշոր ռազմածովային հենակետը՝ Պորտ-Արտուր քաղաքն ու բերդը, որի պաշտպանները մինչ այդ հերոսական դիմադրության փայլուն էջեր էին գրել: Պորտ-Արտուրի անկումը վճռական շրջադարձային կետ էր ռուս-ճապոնական պատերազմի ամբողջ ընթացքում:

Պորտ-Արտուրում ընկածների հիշատակին Պետերբուրգի Կազանի տաճարում 1904թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած հոգեհանգստի ժամանակ Նարվայի եպիսկոպոս Անտոնինը սրտառուչ դամբանականում հետևյալն է ասել. «Մեր եղբայրների, հայրենիքի համար անտրտունջ տանջվածների արյունով հագեցավ երկիրը. և ներկվեց ծովը, իսկ երկինքը ծածկվեց մեր անպատվության խանձարուրով»[1]:

Պորտ-Արտուրի պարտությանը հաջորդեց Մուկդենի անկումը:

Ռուսական բարձր զինվորականներին աստիճանաբար սկսեց տիրել խոր վհատությունը, իսկ Մուկդենի հանձնումը նրանց հասցրեց հոգեվարքի: Ճապոնացիներն առաջ էին շարժվում անդիմադրելի մղումով, իսկ ցարի զորքերը՝ ջախջախված ու ցիրուցան, փախչում էին նրանց առջևից:

Բողոքի ու ցասումի ալիքը հիմնականում փոթորկվում էր կայսրության ծայրամասերում. «Կորչի՛ միապետությունը» սպառնական կոչը թնդում էր Լեհաստանում ու Ֆինլանդիայում, Ուկրաինայում և Կովկասում:

Եվ ահա, ռուս ժողովրդի հոգում կուտակված հուժկու զայրույթը խոլական թափով անցավ դեպի կենտրոն և ալեկոծեց մայրաքաղաքը:

[1] *«Դրոշակ», N1 (154), հունվար, 1905, էջ 6:*

1905թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ՍՊԱՆԴԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ

Դեռևս 1904թ. դեկտեմբերի կեսերին Պետերբուրգի խոշորագույն ձեռնարկության՝ Պուտիլովյան գործարանի մի արհեստանոցից հեռացվել էր չորս բանվոր: Գործարանի բանվորները ադմինիստրացիայից պահանջեցին վերականգնել աշխատանքից անիրավացի արձակված իրենց ընկերներին, բայց ստացան կոպիտ մերժում և սպառնալիքներ: Ի պատասխան այդ մերժման, գործարանի բոլոր արհեստանոցների ներկայացուցիչների ժողովը որոշեց գործադուլ հայտարարել, և 1905թ. հունվարի 3-ին գործարանում դադարեց աշխատանքը: Բանվորական կոլեկտիվը մշակեց և տնօրինությանը ներկայացրեց տնտեսական մի շարք պահանջներ՝ 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանում, արտաժամյա աշխատանքների վերացում, աշխատավարձի բարձրացում և այլն:

Պուտիլովյան բանվորների գործադուլին իրենց համերաշխությունը հայտնեցին մայրաքաղաքի մյուս գործարանների բանվորները՝ թողնելով աշխատանքը: Հունվարի 7-ին արդեն գործադուլ էր անում Պետերբուրգի ավելի քան 150 հազար բանվոր:

Զանգվածների զայրույթն ու ցասումը ափերից դուրս էր եկել նաև այն պատճառով, որ այդ օրերին, ինչպես արդեն ասվեց, ճապոնացիներին էր հանձնվել Պորտ-Արտուրը: Թեև կառավարությունը փորձում էր Պորտ-Արտուրում կրած պարտությունը ներկայացնել որպես ռուս ժողովրդի պարտություն և երկրի խայտառակություն, բայց հեղափոխականներն իրենց թռուցիկ-պրոկլամացիաներով ու թերթերով, միտինգներում ու ցույցերում ունեցած ելույթներով ցույց էին տալիս, որ դա ոչ թե ռուս ժողովրդի խայտառակությունն է, որի որդիները քաջաբար կռվում և մեռնում են Հեռավոր

[1] *Մեջբերված է՝ «Արարատ», N 2, փետրվար, 1905, էջ 140:*

արևելքում, այլ՝ խաբեբաներից ու մակաբույծներից կազմված ցարական կառավարության պարտությունը:

Պուտիլովյան գործադուլին նախորդող շրջանում, 1904 թվականի աշնանը, ցարական պրովոկատոր, տերտեր Գեորգի Գապոնի օգնությամբ ոստիկանությունը Պետերբուրգի բանվորների շրջանում ստեղծել էր «Ռուս ֆաբրիկա-գործարանային բանվորների ժողով» անունով մի կազմակերպություն, որն իր բաժանմունքներն էր ստեղծել մայրաքաղաքի բոլոր շրջաններում:

Գապոնը, ոստիկանության ցուցումով, բանվորներին սադրանքի ենթարկելու նպատակով, գործադուլավորներին կոչ էր անում կազմակերպել խաղաղ երթ դեպի Ձմեռային պալատ և իրենց կարիքների մասին ցարին հանձնել մի խնդրագիր: Իրականում Գապոնը ցանկանում էր ցարական օխրանկային ա-ջակցել՝ բանվորներին փողոց դուրս բերելու և նրանց գնդակահարելու գործում: Խնդրագիրը կազմվեց, որի մեջ մտցվեցին 8-ժամյա աշխատանքային օր սահմանելու, խոսքի, մամուլի, ժողովների ու միությունների ազատության, հողը գյուղացիներին հանձնելու, պատերազմը դադարեցնելու, սահմանադիր ժողով հրավիրելու մասին տնտեսական ու քաղաքական պահանջներ:

Դեպի Ձմեռային պալատ գնալու շարժումը հսկայական ուժով ընդգրկել էր զանգվածներին: Նրանց խնդրագրում ասվում էր.

«Մենք՝ Պետերբուրգ քաղաքի բանվորներս, մեր կանայք, երեխաներն ու անօգնական ծեր ծնողները, եկել ենք քեզ մոտ, ինքնակալ Կա՛յսր, արդարություն և պաշտպանություն հայցելու:

Մենք աղքատացել ենք: Մեզ ճնշում, ծանրաբեռնում են ուժից վեր աշխատանքով, մեզ ծաղրանքի են ենթարկում, մեզ մարդ չեն համարում...

Մենք դարձյալ համբերում ենք, բայց մեզ ավելի ու ավելի են մղում դեպի աղքատության, իրավազրկության ու տգիտության ճահիճը, մեզ խեղդում են դեսպոտիզմն ու կամայականությունը ... Համբերության վերջը հասել է:

Մեզ համար հասել է այն սարսափելի պահը, երբ ավելի լավ է մեռնել, քան շարունակել անտանելի տանջանքները:

Լսիր, Հա՛յր, մեր աղերսը ...»:

Բայց միապետությունը, իշխանության բուրգի գլխին բազմած հանցախումբը, որ ջրաղացքարի ծանրությամբ կախված էր Ռուսաստանի պարանոցից, ողջ մերկությամբ ասպարեզ բերեց իր հակամարդկային էությունը՝ ժողովրդական խաղաղ երթին հակադրելով բիրտ ուժը: Ռոմանովների ոճրագործ կամարիլիայի և հարստահարված ու ոտքի ելած ժողովրդի միջև կանգնեց պահապան զորքը: Կառավարությունը բանվորների համար արյունալի հանդիպում էր պատրաստել:

Հունվարի 9-ին՝ կիրակի օրվա վաղ առավոտյան, Պետերբուրգի բոլոր շրջաններից տասնյակ հազարավոր բազմատանջ բանվորներ՝ տղամարդ թե կին, շատերն իրենց հետ վերցրած ընտանիքի անդամներին՝ երեխաներին ու

* Պահնորդական բաժանմունք:

ծերերին, շարժվեցին դեպի բռնակալական տաճար՝ Ձմեռային պալատ: Նրանք գնում էին սրբապատկերներով ու ցարի նկարներով, գնում էին խոնարհ, որդիական հեզությամբ, ունենալով միայն մի փափագ՝ տեսնել իրենց օգոստոսափայլ ինքնակալի դեմքը, մի նպատակ՝ նրան հայտնել իրենց անհուն վշտերն ու անբավ ցավերը: Թափորին մասնակցում էր ավելի քան 140 հազար մարդ:

Դեպի քաղաքի կենտրոն շարժվող 15 հազարանոց առաջապահ շարքերին դեմհանդիման եկավ մի մեծ զորախումբ և փորձեց արգելակել երթը, իսկ կազակների մի խումբ սրերը քաշած՝ հարձակում գործեց առջևից գնացողների վրա: Ընկան առաջին զոհերը: Շարքերը մի պահ երերացին, բայց բանվորները փոքր խմբերով շարունակում էին առաջանալ դեպի կենտրոն, որտեղից տարբեր շրջաններ ձգվող փողոցներում դադարել էր երթևեկությունը: Թեև զորքը կամուրջներն ու ճանապարհներն առել էր խիստ հսկողության տակ, բայց թափորն առաջանում էր առանց կանգ առնելու:

Ձմեռային պալատի մուտքի հրապարակում թափորի առաջը փակեց զինվորների ու կազակների խիտ ու ամուր պատը: Բանվորները, չհավատալով, թե իրենց վրա կկրակեն, համառորեն աշխատում էին անցնել զորքի խիտ շղթայի միջով, միաժամանակ զինվորներին համոզում էին՝ իրենց թողնել մտնել հրապարակ՝ նրանց բացատրելով, թե գնում են ցարից ազատություն խնդրելու ոչ միայն իրենց, այլև ամբողջ ժողովրդի, այդ թվում նաև՝ բանակի համար:

Երկու հոգևորականների ուղեկցությամբ Գապոնը երևաց պալատի Սուվորովյան հրապարակի վրա, ուր ժամը 2-ին նշանակված էր միտինգ: Շարքերը գնալով ստվարանում էին: Հրաման տրվեց, և ժամը 12-ն անց 50 րոպեին զորքը սկսեց առաջանալ ու Ալեքսանդրովյան այգու մոտ կտրեց բանվորների առաջը: Իր հերթին հեծելազորը սրերով հարձակում գործեց մոտ 10 հազարանոց ամբոխի վրա: Ձնայած դրան, ուղիղ ժամը 2-ին վիթխարի բազմությունը շարժվեց դեպի Ձմեռային պալատ՝ ներս խուժելու և ուղերձը ցարին տալու իղձով: Ճայթեցին հրացանները: Սկսվեց ցարի ողորմածությունը հայցող անզեն խաղաղ ամբոխի զանգվածային գնդակահարումը:

Առաջին պահին 150 բանվոր զրկվեց կյանքից: Կարճատև ընդհարում, և կես ժամ հետո ամբոխը քաշվեց հրապարակից: Բայց զորքը շարունակում էր հալածել ու կոտորել բանվորներին: Կոտորում էին առանց խտրություն դնելու կնոջ և տղամարդու, պատանու և մանկան միջև: Ականատեսները պատմել են, որ Ամառային այգու ծառերը բարձրացած՝ հանդիսատես մանուկներին զինվորները որսում էին ճնճղուկների պես, որոնց անմեղ արյունով վարդագույն էր դարձել ձյունը[1]: Արքայանիստ քաղաքի փողոցների ու հրապարակների սալահատակը ներկվեց անմեղ մարդկանց արյունով: Սպանվեց ավելի քան

[1] «Արարատ», N 1, հունվար, 1906, էջ 13:

1000 և վիրավորվեց 2000-ից ավելի բանվոր*: Արյունն ու արտասուքը թափվեց նույնքան առատորեն, որքան առատ էր գնդակների սուլոցը և մտրակների շառաչը:

Սրտաճմլիկ էին տեսարանները. կանայք ու երեխաները ողբում էին իրենց նահատակ ամուսինների ու ծնողների մահը: Սուգը մտել էր հազարավոր ընտանիքներ**:

Արյունահեղությունը կանխելու նախընթաց օրերի անհաջող փորձերից հետո Մաքսիմ Գորկին հունվարի 9-ի ողջ օրն անցկացրել էր մայրաքաղաքի փողոցներում և սեփական աչքերով տեսել սպանդի սարսափելի տեսարաններ: Տեսածից ցնցված և, արտահայտելով Պետերբուրգի ռուս առաջադեմ մտավորականության զայրալից տրամադրությունը, նա նույն օրը գրեց «Եվրոպական պետությունների բոլոր քաղաքացիներին և հասարակական կարծիքին» ուղղված դիմում, ուր Նիկոլայ II-ին մեղադրում էր խաղաղ ժողովրդի զանգվածային սպանության մեջ և կոչ էր անում կտրել ամեն տեսակի կապերը ռուսական ինքնակալության հետ[1]:

Աղեխարշ սպանդի միջից բարձրագոչ հնչեց հեղափոխության գոռ հրավերը: Արյունացող փողոցների ու հրապարակների վրա թևածում էին «Դեպի՛ բարիկադներ», «Կորչի՛ ինքնակալությունը», «Մա՛հ նրան» կոչերը:

Բանվորները սկսեցին բարիկադներ պատրաստել, Վասիլևսկի օստրովում ցույցը վերածվեց ընդհարման զորքի հետ: Քաղաքի ոստիկանության պետը հրապարակեց փողոցային համախմբումներն արգելելու մասին շրջաբերական, կամուրջները և ստրատեգիական կետերը լցվեցին զորքերով[2]:

Բանվորների առճակատումը գնալով սպառնալից կերպարանք էր առնում: Այլևս անհնար էր կանգնեցնել ալեկոծ սրտերից ժայթքող ալիքները:

Նույն օրը բանվորների գրված տպարանում բոլշևիկները տպագրեցին ու տարածեցին մի թռուցիկ, որում ասված էր. «Ցարի զինված ուժերի դեմ մենք կարող ենք կռվել միայն զենքը ձեռքին: Ի զե՞ն, ընկերնե՛ր, քաղաքացինե՛ր»: Ամենուրեք հրազենով զինվելու կոչեր էին հնչում: Որտեղ հաջողվում էր, զինաթափ էր արվում ոստիկանությունը: Բանվորները վերցնում էին այն ամենը, ինչ պատահում էր՝ երկաթի կտորներ, սալաքարեր, սուր գործիքներ:

1905թ. հունվարի 9-ին բանվորներն արյունոտ դաս առան: Այդ օրը գնդակահարվեց ցարի հանդեպ ունեցած նրանց հավատը: Մայրաքաղաքի պրոլետարիատն ընդամենը մի քանի ժամվա ընթացքում խոնարհ ու հեզ զանգվածից վերածվեց իր շահերը գիտակցող, կռվող ու մարտնչող հզոր ուժի:

1905թ. հունվարյան դեպքերը ցույց տվեցին, որ ցարիզմն իր դաժանությամբ ու քստմնելի արարքներով հավասարվում է թուրքական սուլթանիզմին:

Անդրադառնալով Նիկոլայ II-ի և Աբդուլ Համիդի հոգեհարազատությանը՝ «Կարմիր սուլթան-կարմիր ցար» վերնագրով առաջնորդողում «Դրոշակը» գրում էր.

«Թեև տարբեր ծագումով և պատմությամբ, թեև շատ հեռու միմյանցից և հաճախ նույնիսկ «թշնամի», երկու բռնարանները-Պետերբուրգ և Կ. Պոլիսնմանության հրաշալի ապացույցներ են տալիս՝ խնկարկումն միապետության գահույքի առջև, անծայր թշնամանք ազատագրության կռվին, հալածանք հպատակ ազգերի դեմ, սուլթանական համիդիականների ձեռքով կոտորած Վանում, Էրզրումում, Ակնում, Խարբերդում, կոտորած Քիշինևում, Պետերբուրգում, Վարշավայում, Լոձում, Բաքվում ցարի կազակների ձեռքով: Մի տեղ Տրեպով, մյուս տեղ՝ Նազիմ փաշա, մի պալատում Աբդուլ Համիդ, մյուսում Նիկոլայ՝ մարդակեր և արյունռուշտ, ինչպես սուլթան»[1]:

Հուզումները բանվորներից անցան հասարակության մյուս խավերին: Կառավարությանը միաբերան հանդիմանում էր համալսարանական դասախոսների, գրողների, փաստաբանների մեծ մասը: Նույնիսկ պետական շատ պաշտոնյաներ բացարձակ տրտունջ էին հայտնում կատարվող բռնությունների դեմ, ասելով, որ խաղաղ ցույցը գնդակոծելով՝ իշխանությունները երկիրը կանգնեցրել են ապստամբության փաստի առջև:

Պետերբուրգում տեղի ունեցած արյունալի անցքերը լայն արձագանք գտան արտասահմանում զայրույթի հուժկու ալիք բարձրացնելով ամենուրեք: Զանգվածային սպանդը իսկական իրարանցում էր առաջ բերել եվրոպական հասարակության բոլոր խավերում. հատկապես ցնցված էր ռուս տարագրությունը: Մի քանի օր շարունակ բազմամարդ ժողովներ ու միտինգներ էին տեղի ունենում Փարիզում, Բեռլինում, Լոնդոնում, մայրցամաքի այլ մայրաքաղաքներում, նավահանգիստներում ու արդյունաբերական քաղաքներում, ընդունվում էին ցարական ինքնակալությանը դատապարտող բանաձևեր ու հայտարարություններ, բողոքի գրավոր դիմումներ

---

* Մի շարք հետազոտություններում սպանվածների ու վիրավորների թիվը նշված է 4600 հոգի (տե՛ս "Гениальная репетиция Великого Октября. Первая буржуазно-демократическая революция в России", изд. Политической литературы, Москва, 1985, էջ 140): Լև Տրոցկին գրել է, որ ոչ ոք չգիտի, թե հունվարի 9-ի սպանդում քանի մարդ է զոհվել, որովհետև նախ՝ ճշգրիտ հաշվառում չի եղել և, երկրորդ՝ ոստիկանությունը հունվարի լույս 10-ի գիշերը հավաքել և քաղաքից դուրս գաղտնի թաղել է բազմաթիվ դիակներ (տե՛ս Л. Троцкий, 1905, 4-ое издание, Госиздат, Москва, 1923, էջ 76):

** Առաջին պահին մարդիկ չվարած էին, և նրանց մտքով չէր անցնում, թե ցարը կարող է տեղյակ լինել կատարվածին: «Ո՞վ տվեց այդ կոտորածի հրամանը, ո՞վ էր այդ դահիճը, դեռ հայտնի չէ ...»,- նույնիսկ քստմնելի ոճրագործությունից մեկ տարի անց հարց էր տալիս «Արարատի» հոդվածագիրը («Արարատ», N 1, հունվար, 1906, էջ 13):

1 Տե՛ս А.И. Гуковский, Первая русская буржуазно-демократическая революция 1905-1907г.г., Вологда, 1957, էջ 47.

2 Այդ մասին մանրամասն տե՛ս "Революция и Р.К.П.(б) в материалах и документах". (Хрестоматия), том третий, "1905 год", Госиздат, Москва-Ленинград, 1925 г., էջ 20-37:

1 «Դրոշակ», N 2(155), փետրվար, 1905, էջ 17:

[illegible] հղում Ռուսաստանի դեսպանատներին: Բազմաթիվ հակացարական կոչերով ու հայտարարություններով հանդես եկան եվրոպական երկրների սոցիալիստական կուսակցությունները: Մամուլը ցնցող նկարագրություններով հասարակությանը ներկայացնում էր իրողությունը, իսկ սոցիալիստական մամուլը ոչ միայն մանրամասն նկարագրում էր դեպքերը, այլև եվրոպական բանվոր դասակարգին և հասարակայնությանը կոչ էր անում ամեն կերպ աջակցել Ռուսաստանում բարձրացող հեղափոխությանը:

Հունվարի 14-ին Փարիզի Տիվոլի դահլիճում հավաքվել էր 5000 մարդ: Միտինգը կազմակերպել էին ֆրանսիական սոցիալիստները, ուր ելույթներով հանդես եկան ականավոր հասարակական գործիչներ, գիտության ու մշակույթի խոշորագույն ներկայացուցիչներ՝ Ժան Ժորեսը, Պրեսանսեն, Անատոլ Ֆրանսը, տիկ. Սերին և ուրիշներ: Հեռուներից յուրաքանչյուրը վեր էր հանում ցարական բռնապետության անմարդկային էության զանազան փոփոխները, անարգանքի սյունին գամում Նիկոլայ II-ին: Իր փայլուն ճառում Անատոլ Ֆրանսը մասնավորապես ասում էր.

«Ինչ չգիտեք է պատմեմ, թե ցարը ինչպես հրամայեց կոտորել մարդկանց, որոնք մեղավոր էին միայն այն բանում, որ սովից ու թշվառությունից նյութված ու հանահատության գուռը հասած, դիմել էին նրան՝ որպես իրենց հոր: Նրանց արդարական ազերբանքներին ցարը պատասխանեց կազակների նագայիկներով և գնդակների գնդակներով: Այդ գնդակները դիպան նաև իր սեփական բանտարկյալներին: Հակառակ իր կամքի՝ ցարը ապանեց ցարին, սպանեց ցարիզմը: Այն արյունից, որով կարմրեց Նևայի սառույցը, ծնունդ կառնի միլիոնավոր նոր բոլշևիկների, որոնք Իսահակ ընկածների վրեժը: Ցարը սպանեց ցարին, ցարը հարուցեց հեղափոխություն, որը կկլանի ցարիզմը: Նիկոլայ Ալեքսանդրովիչ այլևս գոյություն չունի, և նրա հիշատակը հանգիստ մատնված է ամբողջ աշխարհի նզովքին»[1]:

Միտինգի ունկնդիրների գնահատականը հասել էր ծայր աստիճանի: Բոլորը հանգիստ էին, որ սրտաճմլորդության ալանդը Ռուսաստանի հեղափոխության ավարտն է:

Այդ օրերին բողոքի հանրահավաք ու ժողովներ տեղի ունեցան նաև Ֆրանսիայի այլ քաղաքներում: Այդ թվում Մարսելում: Այստեղ Մկրտիչ Փորթուգալյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արմենիա» թերթն իր [illegible] անդրադառնալով ժողովրդական բողոքներին և դատապարտելով հունվարի 9-ի ոճրագործությունը, գրում էր. «Բեռլերբուրգի մեջ, ցարի պալատին դրսում առնելով ծանրակշիռ սարսափելի փողոցները կարմիր [illegible] ... Ասենք ու գրենք 1905թ. հունվարի 9(22)-ի դրությամբ որը մնալու է [illegible], ամեն ու նախանշանք [illegible]»[2]:

---

[1] [illegible] 1905 [illegible]
[2] [illegible] 25 հունվար 1905թ.

Գերմանական և միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը, գնահատելով 1905թ. հունվարի 9-ի իրադարձությունները, գրում էր. «Հունվարի 9(22)-ը շրջադարձային է Ռուսաստանի պատմության մեջ... Ազատությունը, որի արշալույսը ծագում է Ռուսաստանի վրա, ազատություն է նաև Պրուսիայի, Սաքսոնիայի, Գերմանիայի համար ... Մենք բոլոր հիմքերն ունենք կանգնելու ռուսական հեղափոխության դրոշի տակ»[1]:

«Ոչ միայն Ռուսաստանի համար է սկսվել պատմական դարաշրջան, - նշում էր Կարլ Կաուցկին: - Ներկա տարվա հունվարի 9(22)-ից այդ դարաշրջանը սկսվել է ամբողջ աշխարհի համար: Մեզ սպասվում են մեծ իրադարձություններ ...»[2]:

Նևայի ափերում դեպքերն իրար էին հաջորդում արտակարգ արագությամբ: Կառավարությունն ահավոր երկյուղի մեջ՝ չտապ միջոցներ էր ձեռնարկում: Ձմեռային պալատը շրջապատվեց զորքերի ամուր շղթայով՝ կայսերական ընտանիքի անվտանգությունն ապահովելու համար: Բայց Պլևեի գործի հավատարիմ շարունակողներ Պոբեդոնոսցևը, Ալեքսեևը, Կոկովցևը, Մուրավյովը և ցարիզմի մյուս սյուները վստահ չէին, թե պալատն անվտանգ է, ուստի և որոշեցին ցարական ընտանիքը դուրս բերել Պետերբուրգից:

Արդեն հունվարի 9-ի կեսօրին Նիկոլայ II-ը փախուստ էր տվել Ցարսկոյե Սելո, իսկ երեկոյան լուր ստացվեց, թե նա անհայտ ուղղությամբ փախել է ավելի ապահով տեղ: Նաև լուրեր էին պտտվում, թե կայսրը և կայսրուհին վճռել են իրենց երեխաներով հեռանալ Ռուսաստանից:

Այդ օրվանից Նիկոլայ II-ը հեղափոխության հետագա բոլոր ամիսներին վախից այլևս չէր վերադառնում մայրաքաղաք՝ մեկ թաքնվելով Ցարսկոյե Սելոյում, մեկ՝ Պետերհոֆում: Մեծ իշխան Կոնստանտին Ռոմանովը իր օրագրում գրել է. «Ինչ օրի ենք հասել. թագավորն ու թագուհին իրենց սեփական պալատներում զգում են ինչպես բանտում: Երկյուղը նրանց ստիպում է չհեռանալ ոչ մի տեղ»[3]:

Հունվարի 27-ին Ցարսկոյե Սելոյում կայացած կայսերական տան անդամների խորհրդակցության ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան կայսեր և մի քանի մեծ իշխանների միջև: Նիկոլայ II-ի մայրը՝ Մարիա Ֆյոդորովնան, և կինը՝ Ալեքսանդրա Ֆյոդորովնան, հայտնեցին, որ ցանկանում են երեխաներին մի ապահով տեղ ուղարկել: Ցարը ավելացրեց, որ ինքը և իր ընտանիքը, նայած հանգամանքներին, կգնան Լիվադիա (Ղրիմ) կամ Դանիա: Մեծ իշխաններ Վլադիմիրը և Ալեքսանդրը դիմադրեցին այդ մտադրությանը՝ ասելով, որ կայսեր հեռանալն ուժ կտա ժողովրդական շարժմանը, որն, ի վերջո, առաջ կբերի իրենց կործանումը: Ուստի նրանք պատնեշեցին, որ այդ

---

[1] Մեջբերված է՝ "Революция 1905-1907г.г." (сборник статьей), изд. Ленинградского университета, *1956, էջ 285:*
[2] "Искра", N 85, 27 января 1905г.
[3] *Տե՛ս* А.И. Гуковский, Первая русская буржуазно-демократическая революция 1905-1907г.г., *էջ 45:*

դեպքում իրենք կդիմեն ծայրահեղ միջոցների, նույնիսկ՝ պալատական հեղաշրջման:

Ահաբեկված էր ո՛չ միայն ցարական ընտանիքը: Երկյուղը պատել էր պալատական ողջ կամարիլիային. ցարիզմի գլխավոր գաղափարախոսը՝ Պոբեդոնոսցևը, «հիվանդացել» ու անկողին էր մտել, մինիստրները «տանը չէին», մեծ իշխանները մայրաքաղաքից փախել և ապաստանել էին Ցարսկոյե Սելոյում: Սարսափի շանթը կաթվածահար էր արել պետական մեքենան:

"Церковный Вестник" թերթի 1905թ. N2-ում տպագրվել էր եպիսկոպոս Սերգիի սրտառուչ առաջնորդողը, ուր ասված էր. «Տեղի ունեցավ մի ինչ-որ այլանդակ, տխուր, զզվելի և սոսկալի բան՝ յուր ճակատագրական անխուսափելիությամբ. մի խոսքով, աստվածային պատուհաս եկավ մեր գլխին, որպեսզի արտաքին պատերազմի դժբախտությունների և անհաջողությունների վրա ավելացներ այդ արյունաներկ բիծը ...

Տե՛ր, փրկիր Արքային, փրկիր Ռուսիան, մի՛ զայրանար մեր չարեաց վրա և մի՛ հիշիր մեր անիրավությունները»:

Եպիսկոպոսը աստծուց խնդրում էր փրկել արքային, որից փրկություն էր որոնում նրա դեմ ոտքի ելած ժողովուրդը:

Սարսափի մեջ էր նաև «Արյունոտ կիրակի» անմիջական կազմակերպիչը՝ Գեորգի Գապոնը, որը, որոշ ժամանակ «թաքնված» մնալուց հետո, «ծպտված» անցել էր Եվրոպա: Դա մի նոր իրարանցում առաջ բերեց ռուս տարագիրների շրջանում: Բոլորն ուզում էին իմանալ, թե «ժողովրդի ծոցից դուրս եկած» քահանա «հեղափոխականը», որ կուսակցության մարդն է: Բուռն վեճեր առաջացան երկու ռուս հեղափոխական կուսակցությունների տարագիր անդամների՝ սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) և սոցիալ-դեմոկրատների (բոլշևիկներ ու մենշևիկներ) միջև. յուրաքանչյուրը քահանային համարում էր իր կուսակցության անդամ:

Այդ ժամանակ Փարիզում գտնվող հնչակյան խոշոր գործիչ Ռուբեն Խան-Ազատը (Խանազատ) հետագայում վերհիշել է. «Ամենազվարճալին եղավ, երբ Գապոնը Փարիզ եկավ: Այդ երկու կուսակցություններն սկսեցին միմյանց ձեռքից խլել քահանային: Պետք է ասել, որ այդ գործում սոցիալիստ-հեղափոխականներն ավելի ճարպիկ գտնվեցին. հենց որ Գապոնն իրենց ձեռքն ընկավ, այնպիսի մի տեղ թաքցրին նրան, որ հակառակ կուսակցությունն հնարավորություն չունեցավ նրա հետ հարաբերություն ունենալ: Գապոնն էլ, ինչպես տեղեկանում էինք, իրեն այնպես էր պահում, որպես թե ցանկանում էր իր հետքը կորցնել ռուս գաղտնի ոստիկաններից»[1]:

Իրականում Գապոնի վախը ոչ թե ռուս գաղտնի ոստիկաններն էին, այլ ռուս հեղափոխականները, որոնք, եթե բացահայտեին նրա սադրիչ լինելը, անհապաղ կենթարկեին դաժան դատաստանի: Ահա թե ինչու նա նամակներ էր

* Պալատական արտոնյալների խումբ:
1 «Հայրենիք», N 6 (78), ապրիլ, 1929, էջ 111:

գրում հեղափոխական կուսակցությունների, նրանց մամուլի օրգանների հասցեներով, հատկապես այն կուսակցությունների, որոնց պայքարի զինանոցի հիմնական զենքերից մեկը ահաբեկչությունն էր:

1905թ. փետրվարի 17-ին Գապոնը նամակ է ուղարկում նաև ԺՆԼ՝ «Դրոշակի» խմբագրությանը, որը տպագրվում է ամսաթերթի N2-ում: Նամակում նա Հ.Յ. դաշնակցությանը կոչ էր անում անմիջապես հարաբերության մեջ մտնել Ռուսաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների հետ և զինված ապստամբություն ձեռնարկել ցարիզմի դեմ[1] :

Բայց Գապոնը չէր կարող երկար ժամանակ քողարկել օխրանկայի պրովոկատորի իր դերը և անխուսափելիորեն պետք է պատժվեր: Երբ պարզվեց նրա ով լինելը, ռուս տարագիրների և առաջին հերթին տարագիր էսէռների և սոցիալ – դեմոկրատների գլխին սառը ջուր թափվեց:Նրանց հոգեկան խռովքը կրկին վկայել է Խան-Ազատը՝ գրելով.

«Դժվար չէ երևակայել, այս գաղտնիքը երևան գալուց հետո, ռուս հեղափոխական կուսակցությունների հիասթափությունն ու զայրույթը, երբ հիշում էին, մանավանդ, թե ինչպես իրար գլուխ էին ջարդում յուրաքանչյուրն աշխատելով իր մարդը հռչակել գործակալ-լրտեսին: Այդ խայտառակության վրեժն առան սոցիալիստ-հեղափոխականները՝ սպանելով Գապոնին»[2]:

Առաջին պահերից չանթահար կառավարությունը երկու-երեք օրից ուշքի եկավ: Մեծ իշխանների խորհրդով ցարը հունվարի 12-ին Պետերբուրգի քաղաքապետ նշանակեց գեներալ Տրեպովին, որի առջև խնդիր դրվեց բոլոր միջոցներով փրկել կայսերական տունը: Հաստատվելով Ձմեռային պալատում Տրեպովն, ըստ էության, դարձել էր մի փոքր ցար մայրաքաղաքի համար: Բացարձակ անսահմանափակ էին նրա իրավունքները. նույնիսկ ներքին գործերի մինիստր իշխան Սվյատոպոլկ-Միրսկու իրավունքների մեծ մասը փոխանցվել էր նրան:

Նշանակումից անմիջապես հետո Տրեպովը հայտարարեց, որ կանգ չի առնելու ոչ մի արգելքի առջև: Նա իր գործն սկսեց նրանով, որ մայրաքաղաքում հազարավոր ձերբակալություններ կատարեց: Ձերբակալվեցին նաև բազմաթիվ մտավորականներ՝ մի քանի տասնյակ պրոֆեսորներ, հայտնի գրողներ, այդ թվում Մաքսիմ Գորկին և Անենսկին: Մայրաքաղաքից աքսորվեց մի քանի հազար մարդ: Բանն այնտեղ հասավ, որ իշխանություններն արգելեցին հունվարի 9-ին սպանված բանվորների դիակները հանձնել հարազատներին: Հունվարի 13-ին ոստիկանների ուղեկցությամբ դիակները 26 վագոններով տարան ու խումբ-խումբ թաղեցին քաղաքից դուրս գտնվող գերեզմանատանը:

Պալատական շրջաններում այն կարծիքին էին, որ ստեղծված իրավիճակը Սվյատոպոլկ-Միրսկու ազատամիտ քաղաքականության արդյունքն է: Մեծ իշ-

1 «Դրոշակ», N 2(155), փետրվար, 1905, էջ 27-28:
2 «Հայրենիք», N 6(78), ապրիլ, 1929, էջ 112:

խանների խումբն ամեն միջոց գործ էր դնում, որպեսզի որևէ զիջում չարվի ժողովրդական պահանջներին: Նույն խումբը հապճեպորեն որոնում էր ներքին գործերի նոր մինիստր, որը լիներ Պլևեի նման: Մեծ իշխան Վլադիմիրը սպառնացել էր պալատական հեղաշրջում անել, եթե կայսրը թեքվի ազատամիտ ծրագրերի կողմը:

Ռեժիմի պահպանմանն ուղղած իր ջանքերը ռեակցիան ներկայացնում էր որպես միայն ու միայն Ռուսաստանի ապագայի համար հոգատարություն ու ցավ, ուր տեղի ունենալիք ազատամիտ փոփոխությունները, հնին դավաճանելը և հնից հեռանալը անխուսափելիորեն, նրա կարծիքով, տանելու են դեպի կորուստ և անկում:

Միաժամանակ իշխանությունները տարբեր միջոցներով փորձում էին արդարացնել իրենց գործողությունները, որպեսզի ռուս զանգվածների ուշադրությունը չեղեն ուրիշ կողմի վրա:

Հունվարի 14-ին Մոսկվայում ոստիկանությունը պատերին փակցրեց ազդեր, որոնցում ասված էր, թե ներկա խառնակություններն առաջ են բերել անգլիական գործակալները՝ ճապոնական փողերով: Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Լանդսաուն Պետերբուրգում բրիտանական դեսպանին ուղղած հեռագրով բողոքեց ռուսական իշխանությունների այդօրինակ վարմունքի դեմ: Միաժամանակ ռուսաց արտգործմինիստրությունը լուր էր տարածել, թե ռուսական հեղափոխական, ազատամիտ և սոցիալիստական կուսակցությունները ճապոնական կառավարությունից ստացել են 18 միլիոն ռուբլի՝ ներքին խառնակություններ առաջ բերելու համար, հետևապես իշխանությունների գործողությունները օրինական են, քանի որ ուղղված են պետության անվտանգության պաշտպանությանը մի երկրից, որի հետ Ռուսաստանը պատերազմի մեջ է:

Բայց ձեռնարկած պատժիչ միջոցները՝ գնդակահարությունները և բռնությունները, ի վիճակի չէին ոչ հանգստացնելու ահաբեկված ցարին ու նրա ընտանիքին և ոչ էլ թուլացնելու ժողովրդական զանգվածների պայքարի թափը:

Այս պայմաններում միապետության այուների՝ հատկապես Պոբեդոնոսցևի ու Կոկովցևի ճնշման տակ, հունվարի 18-ին ցարը ներքին գործերի մինիստրի պաշտոնից ազատեց խաղաղ վերածննդի «գարնան ավետաբեր» Սվյատոպոլկ-Միրսկուն:

1905թ. հունվարի վերջերին Նիկոլայ-մարդասպանի և նրա ոճրագործ կամարիլիայի դեմ ծավալվող վրդովմունքն ու ատելությունը դուրս եկավ ափերից: Ժողովրդական հուզումները փոթորկվում էին մի ծայրից մյուսը: Ցարի և կառավարության տագնապն էլ ավելի ուժեղացավ, երբ տարբեր տեղերից մայրաքաղաք լուրեր հասան իշխանության ներկայացուցիչների սպանությունների մասին: Ահաբեկչական գործողությունների ալիքը հասավ Մոսկվա և Պետերբուրգ: Փետրվարի 3-ին, օրը ցերեկով, Մոսկվայի կրեմլում, սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ Կալյաևի նետած ռումբով սպանվեց Ալեքսանդր II կայսեր չորրորդ որդի, Մոսկվայի գեներալ-նահանգապետ և Մոսկվայի զինվորական շրջանի հրամանատար մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչը [1] : Ինքնակալության դեմ անզիջում պայքարի հորձանուտն էր նետվել ամբողջ երկիրը: Պրոլետարիատի հետ ոտքի էր կանգնում տանջանքի ու լռության դարավոր ուղեկիցը՝ ռուս ժողովուրդը: Հեղափոխական շարժումն ընդլայնվում էր քայլ առ քայլ՝ արձագանք գտնելով Ռուսաստանի բոլոր ծայրերում, առանձնապես արդյունաբերական կենտրոններում: Գործադուլներ, ցույցեր, ընդհարումներ եղան Վարշավայում, Մոսկվայում, Կիևում, Ռիգայում, Կովնոյում, Ռևելում, Օդեսայում, Քիշինյովում: Բանվորների բազմահազարանոց երթեր եղան Սարատովում, Սմոլենսկում, Եկատերինոդարում և ուրիշ քաղաքներում: Ֆինլանդիան ապստամբական վիճակի մեջ էր, ալեկոծվում էր Լեհաստանը: Հեղափոխության հողմը սպառնում էր քանդել ու գլորել և՛ թագ, և՛ գայիսոն, և՛ գահ... Ժողովուրդը կանգնած էր մի մեծ պատմական հեղաշրջման առջև, որը, ընդգրկելով բովանդակ Ռուսաստանը, սպառնում էր, ինչպես ժամանակին ֆրանսիական հեղափոխությունը, հեղաշրջել նրա պետական ռեժիմը: Ռուսաստանում կատարվող անցքերն ընդունել էին այնպիսի կատաղի կերպարանք, որ հուզում էին ամբողջ մարդկության գիտակցությունը: Ակներև էր, որ ցարի բռնի և ոճրագործ ռեժիմը պատճառ էր դարձել ոչ միայն Ռուսաստանի կորստյան, այլև մշտական վտանգ էր բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների համար: Բայց բռնապետության գահը Ռուսաստանի մարմնից սրբելու համար անհրաժեշտ էր քաղաքական հզոր ըմբոստացման միահամուռ պայթյուն:

Ժողովրդական հուզումների ալիքը հուժկու թափով զարնվեց նաև Կովկասյան լեռներին: Անօրինակ եռուզեռի մեջ էին մտավորականությունը, բանվորական զանգվածները, կուսակցությունները, երիտասարդությունը:

Հետադիմական ուժերի զորահավաքը ոչ մի տեղ չհանգեցրեց, թերևս, այնպիսի դաժան պայքարի և այնպիսի կործանարար հետևանքների, ինչպես Կովկասում: Այս երկրամասը կարծես ռուսական հեղափոխության առաջավոր դիրքն էր: Բնակչության առանձին խմբերի տնտեսական հակասությունները՝ սրված ազգային երկպառակությունների պատճառով և քաղաքական իրավազրկության ուժեղ ճնշման տակ, վառ արտահայտված հեղափոխական ձևեր էին ընդունում: Դա հանգեցրեց այն բանին, որ ժողովրդական շարժման ղեկավարի դերը բաժին ընկավ ամենահեղափոխական, ամենածայրահեղ տարրին՝ սոցիալ-դեմոկրատիային:

Վ. Լենինը նշում էր, որ թեև կովկասյան սոցիալ-դեմոկրատները սկսել են վճռորոշ դեր խաղալ երկրամասի գյուղացիական շարժման մեջ, բայց նրանց գործունեության հիմնական դաշտը մնում է պրոլետարական շարժումը, որի կարևոր տարրը վարձու աշխատանքի հայ մարդիկ են:

---

[1] ***«Արարատ»**, N 1, հունվար, 1906, էջ 13:*

1905թ. հունվարի 17-ին գործադուլ արեցին Բաթումի գործարանների 500 բանվորներ: Հաջորդ օրը գործադուլը տարածվեց Բաթումի նավահանգիստում: Հունվարի 25-ին գործադուլ արեցին քաղաքի բոլոր գործարանների բանվորները, իսկ հունվարի 28-ին նրանց միացան հյուրանոցների և մասնավոր տների ծառայողները:

Գործադուլն էլ ավելի համառ եղավ Թիֆլիսում, որը սկսվեց հունվարի 18-ին: Այդ օրն աշխատանքի դուրս չեկան Անդրկովկասի երթուղային արհեստանոցների, մեքենաշինական գործարանների, բոլոր մասնավոր տպարանների ավելի քան 3000 բանվորներ: Հաջորդ օրը գործադուլին միացան Ադելխանովի կաշվի գործարանի և ծխախոտի «Միր» գործարանի բանվորները, ապա՝ Թամամշևի քարվանսարայի գործակատարները: Գործադուլավորների թիվը հասավ 1000-ի: Հունվարի 20-ի առավոտից դադարեց էլեկտրաքարշի և ձիաքարշի շարժումը: Գործադուլը Թիֆլիսում շարունակվեց նաև հունվարի 21-ին և 22-ին: Բացի գործադուլներից Թիֆլիսում տեղի էին ունենում ցույցեր, միտինգներ ու ժողովներ: Հունվարի 23-ին Գոլովինսկի պողոտայում տեղի ունեցած մեծ ցույցի ժամանակ ցուցարարները բարձրացրին կարմիր դրոշակ, ցրվեցին հակացարական թռուցիկներ: Ավելին, այն բանից հետո, երբ ոստիկաններն սկսեցին բռնությունների դիմել, նրանց վրա ցուցարարների շարքերից կրակ բացվեց, որին հաջորդեցին ձերբակալություններ:

Հունվարի 20-26-ը գործադուլներ ու ցույցեր եղան Քութայիսում, Փոթիում և Վրաստանի այլ բնակավայրերում, բայց պայքարը համառ բնույթ ընդունեց հատկապես Գուրիայում, որը բռնված էր գյուղացիական ապստամբության հրդեհով ուղղված թե՛ վրաց ազնվական կալվածատերերի և թե՛ կառավարության դեմ:

Հակացարական պայքարի մեջ էին մտել Հայաստանի պղնձահանքերի բանվորները և երկաթուղայինները:

Երկրամասում ծավալվող պայքարի ավանգարդում, այնուամենայնիվ, Բաքուն էր, ուր խմբված էին Կովկասի աշխատավոր ձեռքերը:

Նավթարդյունաբերության զարգացման հետ բազմաքանակ էր դարձել Բաքվի բանվորությունը: Կովկասյան բոլոր ազգերի սեփականությունից զրկված հազարավոր գյուղացիներ մի կտոր հաց վաստակելու համար աշխատանքի ասպարեզ էին փնտրում, և այդ ասպարեզը նրանք գտել էին Բաքվում թողնելով իրենց հարազատ վայրերը: Երեկվա գյուղացիներն այստեղ վարձատրվում էին ավելի լավ, քան Կովկասի մյուս քաղաքներում: Տեղի տալով նորին, ժամանակի ընթացքում նրանք կորցնում էին նահապետական սովորությունները և գեղջկական մտածողությունը:

Ռուս, հայ, վրացի բանվորներից շատերի համար պահանջ դարձավ մարդավայել կյանքը: Ծագեցին բազմակողմանի պահանջներ, որոնց, սակայն, նրանք բավարարություն տալ չէին կարողանում: Դասակարգային որոշ գիտակցության հասած Բաքվի քրիստոնյա բանվորության համար տիրող սոցիալական մթնոլորտն այլևս անտանելի էր, և նա դարձավ բողոքող հավաքականություն: Նրա մասնակի բողոքները ժամանակի ընթացքում ստացան զանգվածային բնույթ: Համախմբվելով մի դրոշի տակ՝ նա քաղաքական տեսակետից հանդես էր գալիս որպես մի ամբողջություն:

Սակայն նույնը չէր կարելի ասել մուսուլման բանվորության մասին:

Բաքվի բանվորությունը 1905-ին կազմում էր 35 000 մարդ, որոնցից մահմեդականներ՝ 40%, ռուսներ՝ 25%, հայեր՝ 20% և ուրիշ ազգությունների ներկայացուցիչներ՝ 15%: Բացի դրանից, նավթահանքերի շրջաններում աշխատում էր ևս 30 հազար բանվոր[1]:

Ինչպես տեսնում ենք, քաղաքի բանվորության ամենախոշոր տոկոսը կազմում էին մահմեդականները, որոնց մեջ պարսկահպատակ թուրքերը պատկառելի թիվ էին: Սրանք զուրկ էին դասակարգային գիտակցությունից, տգետ էին, մեծ մասը՝ անգրագետ ու սաստիկ կրոնամոլ:

Համեմատած ուրիշ քաղաքների հետ՝ բանվորական շարժումները Բաքվում շատ ուշ սկսվեցին, և դա նաև թուրք հետադիմական տարրի պատճառով, որը, չհասկանալով մյուս ազգերի բանվորների սոցիալական պայքարի իմաստը, մասնավորապես՝ գործադուլների նպատակը, մշտապես խանգարում էր ձեռնարկները, վնաս հասցնում ընդհանուր շահերին: Հարկ է նշել նաև, որ մահմեդականության տարբեր ուղղությունների հետևողները, տվյալ դեպքում սյուննիները և շիաները, միշտ չէ, որ հաշտ ու համերաշխ էին, և այդ պատճառով դժվար էր լինում նրանց կազմակերպել, բերել դասակարգային գիտակցության և համախմբել մի դրոշի տակ: Պարսկահպատակ բանվորությունը շատ ավելի հետադիմական լինելով, քան մյուս մահմեդական տարրերը՝ համարյա չէր ենթարկվում պրոպագանդայի ազդեցության:

Սակայն հեղափոխական պրոցեսի զարգացման շնորհիվ մահմեդական բանվորների գիտակցության մեջ նույնպես աստիճանաբար տեղի էին ունենում որոշ փոփոխություններ, նրանք էլ սկսել էին հետաքրքրվել հասարակական խնդիրներով: Եվ դա պատահական չէր, քանի որ քաղաքի աշխատավոր բնակչության համար տնտեսական և իրավական պայմանները մոտավորապես նույնն էին, այլ խոսքով՝ բոլորն էլ հավասարապես ենթարկվում էին զրկանքների և հալածանքների: Դժգոհությունը հող էր գտնում բոլորի մոտ՝ լիներ հայ, վրացի, ռուս, լեռնական թե թուրք, միայն մի տարբերությամբ՝ մեկն ավելի վաղ էր գիտակցել իր ծանր կացությունը և ավելի վաղ էր պայքարի մեջ մտել կյանքը թեթևացնելու համար, իսկ մյուսը՝ ուշ: Հայ, ռուս, վրացի բանվորներն ավելի վաղ էին արթնացել ու շարժվել:

Բաքվի հայ բնակչությունը նույնպես շատ դեպքերում նպաստում էր գործադուլների ձախողմանը: Դրա պատճառը հայ ազգային հեղափոխական կուսակցությունների պրոպագանդան էր, որը կասեցնել էր տալիս հայ բանվորնե-

[1] Տե՛ս՝ **Ибрагимов**, Революция 1905-1907г.г. в Азербайджане, Баку, 1955, էջ 33:

րի ակտիվ մասնակցությունը իրենց սոցիալական պահանջների բավարարման համար բազմազգ բանվորության պայքարին: «Ազատ Հայաստանի» գաղափարներով սնուցված հայ բանվորության զգալի զանգվածներ ձեռնպահ էին մնում բողոքներից ու գործադուլներից:

Ազգային գաղափարները Բաքվի հայ բանվորության մեջ հատկապես թանձրացել էին տաճկահայերի կոտորածներից և հայոց եկեղեցական կալվածքները ցարիզմի կողմից խլելուց հետո:

Չնայած այդ ամենին, ամբողջության մեջ Բաքվի պրոլետարիատը հետամուտ էր իր դասակարգային շահերին: Գնալով ավելի ու ավելի մեծ զանգվածներ էին համախմբվում սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալ, դասակարգային պայքարի դրոշի տակ:

1905թ. հունվարի 9-ի արյունահեղությունից հետո Բաքվի մի շարք նավթահանքերի և գործարանների բանվորներ նույնիսկ փորձ արեցին զինված ապստամբություն բարձրացնել: Բայց, քննելով զանգվածների քաղաքական տրամադրությունները, հաշվի առնելով ընթացիկ պահի առանձնահատկությունները և հետևելով գալիք հնարավոր դեպքերի տրամաբանությանը՝ հեղափոխական կազմակերպությունների ղեկավարները բանվորությանը համոզեցին առայժմ չդիմել ծայրահեղ քայլերի, այլ պատշաճ կերպով պատրաստվել հետագա իրադարձություններին:

Չնայած դրան, գործադուլ էին անում առանձին ձեռնարկություններ, հատկապես այնպիսիք, որոնց կոլեկտիվները չէին կարողացել մասնակցել 1904թ. դեկտեմբերյան համընդհանուր գործադուլին:

Միաժամանակ հեղափոխական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծվեց կազմակերպական կոմիտե, որը պետք է զբաղվեր միջոցների հանգանակության, զենք ձեռք բերելու և բանվորներին զինելու, մարտական ջոկատներ կազմելու հարցերով:

Եվ այսպես, ժանդարմերիայի ու լրտեսների, ոստիկանության ու զորքի բոլոր ջանքերին հակառակ, զանգվածների գիտակցականությունը և մարտունակությունը աճում էր օրեցօր, ժամ առ ժամ, աճում էր նրանց կազմակերպվածությունն ու համախմբվածությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՀՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՇԵՂՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ ՑԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռուս բյուրոկրատիան քաջ գիտակցում էր, որ իր աչքի առջև վերահաս փոթորիկ է հասունանում: Հեղափոխությունը կասեցնելու համար պետք էր զորահավաքի ենթարկել բոլոր միջոցները: Ցարը և նրա սատրապներն իրենց անելիքը լավ գիտեին, այն է՝ դիմել երիցս փորձված «Բաժանիր, որ տիրես» սադայելական միջոցին:

Այդ քաղաքականության էությունն էր՝ ազգաբնակչության ծոցում ստեղծել մեկը մյուսի դեմ մարտնչող ուժեր, նրա զանազան մասերի միջև կյանքի կոչել թաքնված ներհակություները, չարաշահել և սուր կերպարանք տալ ամեն մի թյուրիմացության, որ կարող էր ծագել այդ նույն մասերի միջև՝ ամենօրյա փոխադարձ հարաբերությունների ընթացքում: Մեծ սադրանքների դիմելու համար բարենպաստ էր պահը, քանզի իշխանությունների դիտավորությունները և կյանքի իրական պայմանները համերաշխ էին:

Ցարիզմը երկրի ներքին հանգստությանը խանգարող գլխավոր մեղավորներ էր համարում հրեաներին, կայսրության արևմտյան և հյուսիս-արևմտյան մասերում լեհերին ու ֆիններին, իսկ Կովկասում՝ հայերին:

Հրեաների դեմ իշխանությունները շարունակում էին վարել դաժան հետապնդումների վաղեմի քաղաքականությունը: Հրեականության, այսպես կոչված, «Նստակեցության սահմաններից» ներս գտնվող բնակչությունը ռուսական հեղափոխությանը «մատակարարում» էր մեծ թվով կադրեր: Այդ էր պատճառը, որ «հրեա» բառը կառավարության աչքին դարձել էր հեղափոխության խորհրդանիշ: Քանի որ սովորական ճնշամիջոցներն անզոր դուրս եկան՝ ծավալվող հրեական շարժումը ճնշելու համար, ուստի ցարիզմը դիմեց ուրիշ, ավելի բիրտ միջոցների: Քրեական տարրերի օգտագործմամբ նա կազմակերպեց հրեական նոր ջարդեր Քիշինյովում և Գոմելում, որոնց հաջորդեցին ուրիշները: Ռուս սևհարյուրակային լեգեոնները պատուհասում էին հարյուրավոր մարդկանց միայն այն բանի համար, որ հրեա են:

Վլադիմիր Լենինը նշում էր, որ, չբավարարվելով քաղաքական ճնշմամբ, կառավարությունը հրահրում է սոցիալիստական ուժերի բախում, նախապատրաստում քաղաքացիական պատերազմ: Կառավարությունն առաջինը սկսեց կռիվը: Հակահեղափոխությունը ռազմական գործողություններ ձեռնարկեց ավելի շուտ, քան հեղափոխությունը զենքի կդիմեր[1]*:*

Սոցիալ-դեմոկրատները նշում էին, որ տվյալ միջոցն իրենից ներկայացնում է «ցարիզմի վերջին խաղաթուղթը»: Եվ իրականությունը ապացուցեց այդ գնահատականի ճշմարտացիությունը: Քիշինյովյան ջարդերից հետո եկած երկուսուկես տարվա ընթացքում կառավարությունը հեղափոխության դեմ պայքարի այլ միջոց չգտավ:

Հեղափոխական շարժման աճը կասեցնելու, նրա տարածումը ամբողջ Ռուսաստանում կանխելու համար իշխանություններն ընդլայնում էին հետադիմական ուժերի գործունեության ոլորտը և դրանով հետզհետե պայքարին հաղորդում հսկայական չափեր: Վ. Լենինը նկատում էր. «Եթե քիշինյովյան ջարդը թվում էր առասպելական-հրեշավոր, արյունալի մի մղձավանջ, ապա նոր իրադարձությունների լույսի տակ դառնում էր առօրեական երևույթ: "Ans Ungeheure hast du mich gewoehnt" , Շիլլերի այս բառերը Ռուսաստանը կարող է ուղղել ցարական կառավարությանը: Այն, իսկապես, «վարժեցրեց» մեզ հրեշավոր երևույթների, մենք ընտելացանք դրանց, հաշտվեցինք դրանց հետ, դադարեցինք ըմբռնել դրանց ողջ սարսափը»*[2]*:*

Լեհերի և ֆինների նկատմամբ ցարիզմի վերաբերմունքն իր արտահայտությունն էր գտնում ինչպես միապետության գաղափարախոսության մեջ, այնպես էլ պրակտիկայում: Պատժիչ արշավախմբերը դաժանորեն ճնշում էին լեհերի և ֆինների ըմբոստությունները: Հատկապես Լեհաստանը յուրօրինակ փորձադաշտ էր, ուր ստուգվում էր հեղափոխության դեմ մղվող պայքարի մեթոդների արդյունավետությունը:

Ինչ վերաբերում է Կովկասին, ապա այդ երկրամասն իդեալական միջավայր էր բորբոքելու ազգամիջյան հակասություններ, քանի որ այստեղ բնակվող տասնյակ ազգություններ գտնվում են քաղաքակրթության զարգացման տարբեր աստիճանների վրա, ունեին տարբեր, երբեմն հակադրձ շահեր ու ձգտումներ, և այս պայմաններում անհամեմատ դյուրին էր մի ազգությանը հանել մյուսի դեմ:

Թեև բոլոր ազգերի բուրժուաների, իբրև դասակարգի, շահերը հիմնական հարցերում համընկնում են, բայց կապիտալի տերերի տարբեր խմբավորումների միջև միշտ առկա են հակասություններ: Կառավարությունը, որ տեսնում էր ծայր առած եռուն պայքարի օրեցօր խորացումը Անդրկովկասի բուրժուական համախմբումների մեջ, չէր կարող չնկատել, որ, այդ պայքարն ավելի սուր դարձնելով, կարելի պիտի լինի միմյանցից անջատել հարևան ազգությունները: Նա տեսնում էր, որ կարելի է և նպատակահարմար է տարբեր ազգերի բուրժուաների համախմբումների միջև գոյություն ունեցող հակասությունների դրսևորումներն ու արտահայտությունները հասցնել այնպիսի ձևերի, որ այդ հակասությունները տեղափոխվեն ազգամիջյան հարաբերությունների ոլորտ, և կապիտալի տարբեր խմբավորումների միջև պայքարը ստանա ավելի ընդգրկուն մասշտաբներ, որի հետևանքով ժողովուրդները ստիպված լինեն միմյանց խողխողել: Այդպիսով վերջ կտրվեր նաև Անդրկովկասի ինքնավարության կարելիությանը:

Ըստ որում, ինչպես ասվեց, պետերբուրգյան բյուրոկրատիան Կովկասում ամենահեղափոխական տարր էր համարում հայությանը[*]*: Նույնիսկ դարասկզբին այս երկրամասի նկատմամբ իրենց քաղաքականությունը վարելիս՝ ցարական իշխանություններն առաջնորդվում էին Լոբանով-Ռոստովսկու գաղափարներով՝ շարունակելով ռուսացման դաժան քաղաքականությունը: Այդ անիրավ քաղաքականության իրականացումը հանձնված էր իշխան Գոլիցինի երկաթյա գավազանին, որը հատկապես ծանր նստեց ազգայնորեն գիտակից հայության վրա՝ նրան բերելով բազում աղետներ: Կովկասի գոլիցինյան վարչակարգն ամենավատթար կերպով՝ ծեծ ու տանջանքներով հալածում էր երկրամասում ապաստանած տասնյակ հազարավոր թուրքահայ գաղթականությանը, բռնությամբ խափանում նրա համար կովկասահայության կողմից արվող ամեն հանգանակություն, ծանրակուռ սանձ էր դրել հայկական խնդրի մասին մտածող հայ գործիչների լեզվին, ավազակաբար իրականացրել հայ եկեղեցու սեփականության բռնագրավման մասին ցարական օրենքը, իր գիտությամբ ու կարգադրությամբ սահմանապահ ռուս զինվորները, տաճիկ ասկյարների հետ ձեռք ձեռքի տված, կովկասյան սահմանների վրա գնդակի էին բռնել և արյունալի սպանդի ենթարկել Սասունի ապստամբ հայերին օգնության չտապող արշավախմբերի մասնակիցներին և այլն*[1]*:*

Եվ ահա, այժմ, հունվարի 9-ից հետո, երբ Կովկասը նույնպես սկսել էր փոթորկվել, Պետերբուրգի "Новое Время" *ծայրահեղ ռեակցիոն թերթը*

---

[1] **Н. Ленин (В. Ульянов),** Собрание Сочинений, т.VI,"1905 год", Государственное издательство, Москва, 1924, стр. 482.

* *«Դու ինձ վարժեցրիր հրեշավորին»:*

[2] **Н. Ленин (В. Ульянов),** Собрание Сочинений, т.VI,"1905 год", стр. 482.

* *1905թ. Կովկասում հայերի թիվը հասնում էր 1.130 հազարի, որից 434 հազարը բնակվում էր Երևանի նահանգում, 294 հազարը՝ Գանձակի, 219 հազարը՝ Թիֆլիսի, 84 հազարը՝ Բաքվի նահանգներում, 73 հազարը՝ Կարսի շրջանում,14 հազարը՝ Բաթումի շրջանում,12 հազարը՝ մնացած նահանգներում: (Հաշվարկված է մեր կողմից՝ հետևյալ հրապարակումների և նյութերի հիման վրա*[3]*.*"Кавказский календарь на 1905 год", III отд., Тифлис, 1906г., *էջ 46-48, նաև՝* **Ա- Դ0**, *Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 43: Վ.Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, «Գիտություն» հրատ., Երևան, 2001, էջ 115: Անդրկովկասի 57 գավառների մեծ մասում առկա էր հայ բնակչությունը («Մշակ», N63, 6 ապրիլի 1905 թ.):*

[1] *Տե՛ս* **Ա. Ամուրեան,** *Հայ դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 74-75:*

կառավարությանը հիշեցնում էր, որ «անկարգությունների գլխավոր մեղավորը հայերն են», որոնց ծոցից սերվել են արմատական հեղափոխական ազգային կուսակցություններ, հայերն են Կովկասում ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժմանը տալիս ղեկավար կադրերի զգալի մասը, նրանք են, որ բացահայտ պայքարի դրոշ են պարզել իշխանությունների դեմ չհամակերպվելով իրենց եկեղեցու ունեցվածքը հարկունիս գրավելու մասին ցարի ստորագրած օրենքի հետ և այլն:

Միապետության ջերմ պաշտպաններից մեկը՝ Վ.Պոգոժևը, գրում էր. «Հայկական բնակչությունը (Կովկասի:-Հ.Ս.) նախապատրաստված էր հեղափոխության՝ «Դաշնակցություն» և այլն հեղափոխական կազմակերպությունների գործունեության պատճառով»[1] :

Հայերի «մեղքերը» ներում չունեին, ուստի պակաս չէին սահման չճանաչող հայահալած ֆանատիկոսության բռնկումները և չարակամությունը:

Ուսումնասիրելով ու վերլուծելով հայ հասարակական կյանքի զարգացման ընթացքը՝ ցարական քաղաքագետները եկել էին այն եզրակացության, որ տեսանելի ապագայում հայկական հասարակության զարգացման տրամաբանական հանգուցալուծումը լինելու է ինքնավարության պահանջի առաջադրումը՝ հայկական քաղաքական ակտիվության կարելիության սահմաններում: Նրանց մոտ համոզմունք ձևավորվեց, թե այդ ընթացքը կանգնեցնել դժվար է լինելու, եթե չուտով ձեռք չառնվեն անհրաժեշտ ճնշամիջոցներ:

Հայկական ինքնավարության պահանջը, ըստ իշխանությունների, լինելու էր Անդրկովկասի համար ինքնավարություն ձեռք բերելու պահանջի մի մասը: Հետևապես երկրամասի ժողովուրդների պառակտման պայմաններում ընդմիշտ կթաղվեր ոչ միայն հայկական ինքնավարության, այլև Անդրկովկասի ինքնավարության գաղափարը:

Հայկական ինքնավարության գոյություն չունեցող գաղափարի դեմ արշավանք էին սկսել "Московские Ведомости", "Новое Время" և բացահայտ մարդատյաց գաղափարներ սերմանող հետագեմ մամուլի այլ օրգաններ: Դրանցից հետ չէր մնում նաև Կովկասի կառավարչության պաշտոնական օրգան "Кавказ" թերթը:

Մամուլի այդ օրգանները գտնում էին, որ հայկական ինքնավարության գաղափարը հենվում է Կովկասում հայկական կապիտալի ուռճացող հզորության վրա: Երկրամասի արդյունագործական ներկան և նրա ապագան կարող էին, որոշ ժամանակ անց, դառնալ հայ կապիտալի մենաշնորհը: Դա բնական դժգոհություն էր առաջացնում Անդրկովկասում ռուս արդյունաբերողների և ընդհանրապես ռուսական կապիտալի ներկայացուցիչների մեջ: Նրանք քննադատում էին կառավարությանը, որ չի կարողանում մրցակցային պայքարը «կանոնավորել», ասել է թե՝ ապահովել ռուսական կապիտալի լիակատար գերազանցությունը:

[1] В.П.Погожев, Кавказские очерки, С. Петербург, 1910, стр. 418-419.

Ըստ որում, ռուս բյուրոկրատիան բոլորովին հաշվի չէր առնում, որ հայ բուրժուազիան իր դասակարգային ընդհանրական շահերով ավելի մոտ է իշխանություններին, քան իր ազգի շահագործվող դասակարգերին: Իսկ հայկական միջավայրում սանձազերծված հալածանքների քաղաքականությունն իր ամենաթունավոր սլաքներով ուղղված է հենց ժողովրդի շահագործվող դասակարգերի դեմ:

Հալածանքների հետևանքով հայոց մեջ ստեղծվել էր մի միջավայր, ուր զանազան գաղափարախոսներ քարոզում էին, թե կառավարությունը ճնշում է անխտիր բոլոր հայերին, հետևապես բոլոր հայերի դասակարգային շահերը նույնական են, իսկ այդ շահերի գլխավոր հատկանիշը միությունն ու համերաշխությունն է: Ավելի ձեռնտու բան հայ բուրժուազիայի համար չէր էլ կարող լինել: Դա այն պղտորված ջուրն էր, ուր ամենից ավելի դյուրությամբ կարելի էր ձուկ որսալ՝ ըստ որում ուռկանը տալով նրանց ձեռքը, որոնց վիճակված էր զոհը լինելու այդ նույն ուռկանի:

Իր ձգտումների մեջ կառավարության կողմից արգելքների հանդիպող հայ բուրժուազիան, որը գրավելու, տիրակալելու, շահագործելու, կապիտալ դիզելու նույնքան անհագ ծարավ ու ձգտում ուներ, որքան ուրիշ ազգերի բուրժուաները, ցարիզմի հակահայկական քաղաքականությունը կարողանում էր հայ հանրությանը ներկայացնել ըմբոստ ու դժգոհ տեսքով, կեղծ ազատամտության մարտիկի կեցվածքով: Այս շղարշի տակ նա երևում էր ավելի արմատական ու ավելի ռամկավար, քան հարևան ազգերի բուրժուաները: Այդ գայթակղիչ հանգամանքը հայ շահագործվող խավերի դասակարգային գիտակցության զարգացման համար երկար ժամանակ եղել է լուրջ խոչընդոտ, նպաստել դասակարգային բաժանումների միջև եղած ներքին հակասությունների մեղմացմանը:

Նշված երևույթները հատկապես տիպական էին Բաքվի հայ բուրժուազիայի համար: Իր սոցիալական դրությամբ նա հարազատ էր ռուս և մյուս ազգերի բուրժուազիային, բայց հենց հայ բուրժուազիա լինելու պատճառով, բնականաբար, համարվում էր «խռովարար» հայ ազգի մասը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Իշխանությունների և ռեակցիոն մամուլի բացահայտ հակահայ կեցվածքը, մի կողմից, հայերի հանդեպ Բաքվի ոստիկանության գրգռիչ արարքները, մյուս կողմից, ունեցան այն հետևանքը, որ թուրքերն ավելի ևս համոզվեցին, թե հայերը հայտարարված են օրենքից դուրս և նրանց հետ կարելի է վարվել անպատիժ կերպով:

Այդ իրողությունները նկատի ունենալով՝ Վ. Ի. Լենինը գրում էր.

«Թուլացել են ոստիկանական մեխանիզմների զսպանակները, բավական չեն լոկ միայն ռազմական ուժերը: Պետք է բորբոքել ազգային, ռասայական թշնամություն, պետք է «սև հարյուրներ» կազմակերպել քաղաքային (և ապա, հասկանալի է, նաև գյուղական) մանր բուրժուազիայի ամենից նվազ

զարգացած խավերից, պետք է փորձել գահի պաշտպանության համար համախմբել բուն իսկ բնակչության մեջ եղած բոլոր ռեակցիոն տարրերին, պետք է խմբակների դեմ ուտիկանության մղած պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքար ժողովրդի մյուս մասի դեմ: Հենց այդպես է այժմ վարվում կառավարությունը Բաքվում թաթարներին գրգռելով հայերի դեմ»[1]:

Եթե ռուսական բյուրոկրատիան հայությանը համարում էր Կովկասի ամենահեղափոխական ազգային տարրը, ապա կովկասյան թուրքերը՝ նրա աչքում կայունության երաշխիք էին և վստահելի ուժ: Բայց հունվարի 9-ից հետո կառավարությունը վստահ չէր, որ մուսուլմանները ևս չեն ընդգրկվի թափ առնող հակացարական պայքարի մեջ: Ինչպե՞ս կանխել այդ վտանգը, ինչպե՞ս արգելք հանդիսանալ, որպեսզի թուրք տարրը չմիանա հայերին և վրացիներին, ինչպե՞ս թույլ չտալ միացման հանգույցի ձևավորումը, - այս էր խնդիրը:

Դեռ երկու-երեք տարի առաջ միջոցը գտնվել էր Կովկասի սատրապ, կառավարչապետ Գրիգորի Սերգեևիչ Գոլիցինի դիվանում: Դիվային ծրագրի համաձայն, ամեն ինչ պետք է արվեր, մի կողմից, թուլացնելու հայության դիրքերը Կովկասում, մյուս կողմից, ուժեղացնելու թուրքերի ազդեցությունը: Եվ այդ քաղաքականությունը լիակատար հավանություն ու պաշտպանություն էր գտել Պետերբուրգում անձամբ ցարի կողմից:

Կովկասում ի դեմս հայության տեսնելով առավել ակտիվ հեղափոխական տարրի՝ Նիկոլայ II-րդը գրել է. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով, հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ, նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում:

Ամենանվիրվածները մինչև այժմ մուսուլմաններն են, աստված չտա, որ նրանք հավատը կորցնեն ռուսական հզորության նկատմամբ...

Մինչև անգամ թուրքերն են մեզ կշտամբում անկարգություններին վերջ տալու անկարողության համար, իսկ դա տհաճ գիտակցում է»[2]:

Ինչ խոսք, Գոլիցինի ծրագիրը բխում էր թուրք կալվածատերերի՝ բեկերի ու աղալարների շահերից: Սրանց էին պատկանում Գանձակի և Երևանի նահանգների, ինչպես նաև Անդրկովկասի ուրիշ շրջանների հարյուրավոր գյուղեր՝ թուրք և հայ բնակչությամբ: Այդ հարստահարիչները դաժանորեն կեղեքում էին և՛ հայերին, և՛ թուրքերին, միաժամանակ իշխանությունների օգնությամբ ամեն ինչ անում էին, որպեսզի թուրք գյուղացիությունը չըմբռնի իր շահերը, չհասկանա, թե ով է իր իսկական թշնամին: Այդ թշնամուն թուրք աշխատավորը պետք է փնտրեր թուրքական հասարակությունից դուրս:

[1] Վ.Ի. Լենին, Երկեր, հ.8, էջ 246-247:
Կովկասյան թուրքերին հայերը **Թուրք** էին կոչում, ռուսները՝ **Թաթար**, իսկ իրենք՝ թուրքերը, դեռևս ազգային գաղափար չունենալով, իրենց անվանում էին **մուսուլման**, իրենց լեզուն՝ **մուսուլմանջա: Ադրբեջանցիներ** էին համարվում Պարսկական Ադրբեջանից (Ատրպատական) եկածները:

[2] «Հերոսական պայքարի վավերագրեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1984, էջ 333:

Ինչպես ռուս բյուրոկրատիան, այնպես էլ թուրք բեկերն ու աղալարները անգիտակից ու խավար մուսուլմանական զանգվածին հավատացնում էին, թե նրան կեղեքողը, նրա աղքատության ու թշվառության պատճառը ոչ թե գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերն են, այլ հայն է: Զանգվածը հեշտությամբ ընկավ լարված որոգայթը, հուսալով, թե տերերի օգնությամբ կարող է սեփականացնել հայի ունեցվածքը և այդ միջոցով թոթափել իր թշվառությունը:

Այսպիսով, շահերի զուգորդությունը բերեց ու միացրեց երկու կեղեքիչ դասակարգերին՝ ռուս բյուրոկրատիային և թուրք կալվածատիրությանը:

Դարերով կողք կողքի ապրած երկու հարևան ժողովուրդներին իրար դեմ հանելու համար ցարական իշխանությունները և մահմեդական հոգևորականությունը գործում էին համատեղ ջանքերով: Վ. Լենինը գրում է. «Ուտիկանական պրովոկատորի տեղը բռնեց «սրբազան» կանաչ չալմայով մուսուլմանական ագիտատորը»[1]: Ցարիզմի հաշվարկը այն էր, որ, այդպիսով, իրեն կհաջողվի Կովկասը դուրս թողնել սկսված հեղափոխական փոթորիկներից: «Կառավարությունը կատարում էր ոչ միայն հանդիսատեսի, - նշում էր Լենինը, - այլև ակտիվ հրահրողի դեր, մտածելով, որ որոշ ժամանակ անց իր և համիսլամականների սարքած ոճիրը կպսակվի «պատժիչ արշավախմբերով»»[2]:

Կովկասը հեղափոխական շարժումից դուրս բերելու ամենահարմար միջոցը համարելով հայերի և կովկասյան թուրքերի միջև ընդհարումներ առաջ բերելը՝ Գոլիցինը թուրքերին թույլ էր տվել զինվել, որպեսզի հարմար պահին նրանց ուղղի հայերի դեմ, իսկ եթե հայերը դիմադրություն ցույց տային, ապա մեղավոր նրանց ճանաչել և խփել ու քայքայել զորքով: "Тифлисский Листок" լրագիրը նշում էր, որ «բոլոր թուրքերը (Բաքվում: - Հ.Ս.) զինված են բերդանկաներով, և նրանք մեծ քանակի փամփուշտներ ունեն»[3]:

Կովկասի հայ և թուրք ժողովուրդների միջև թշնամություն սերմանելու կառավարության ջանքերը սկսում էին հաջողություն գտնել: Օրինակները բազում էին:

"Новое Время" թերթը գրում էր.

«Վաղուց արդեն Բաքվում հայերի և թուրքերի միջև գաղտնի թշնամություն կար*: ... Այդ թշնամությունը առանձնապես խիստ ձևով երևան եկավ

[1] Н. Ленин (В. Ульянов), Собрание сочинений, т. VI, "1905 год", стр. 483.
[2] Նույն տեղում:
[3] "**Тифлисский листок**", 11 февраля 1905г.
* Հարկ է նշել, որ "Новое Время"-ն և ռուս չովինիստական մամուլի այլ օրգաններ թուրք-հայկական կոտորածների մեջ ցարիզմի խաղացած ստոր դերը ժխտելու նպատակով բազմաթիվ հոդվածներ էին հրապարակում երկու ազգերի «դարավոր թշնամանքի» մասին: Իրականում Կովկասում, ի տարբերություն Թուրքիայի, քրիստոնյա հայերը և մահմեդականները դարեր շարունակ ապրել են կողք կողքի, միմյանց նկատմամբ հանդուրժողականությամբ ու հարգանքով: Այդ մասին պատմաբան, եկեղեցական ու հասարակական գործիչ Եղիշե Դեղամյանի դատողությունները շատ էլ հեռու չէին

անցյալ տարի (1904թ.), երբ մի քանի թուրքեր բռնաբարեցին մի գիմնազիստուհու: Բռնաբարողը սպանվեց, բայց նրա արյան համար վրիժառուներ դուրս եկան և այդ օրվանից՝ շուտով ահա մի տարին լրանում է, շաբաթ չի անցնում, որ մի մարդ չսպանվի Շամախու թաղում կամ Բազարնի փողոցում, որ կազմում են քաղաքի հայ և թուրք թաղերի սահմանները»[1]:

1904 թ. դեկտեմբերին տեղի է ունենում նմանօրինակ մի դեպք ևս:

Բաքվի Միրզաբեկյանցի ծխախոտի գործարանում հիմնականում աշխատում էին հայ և թուրք բանվորներ: Մի քանի թուրք բանվորներ անպատվում են գործարանի հայ աղջիկներին, որի պատճառով հայ և թուրք բանվորների միջև կռիվ է ծագում: Օգտվելով այդ դեպքից՝ ոստիկանական պրիստավ Աշուրբեկովը հավաքում է թուրք բանվորներին, նրանց ատրճանակներ ու սրեր բաժանում և քշում հայերի վրա: Հայ բանվորներն անպատրաստ են

իրականությունից: Ներողամտություն հայցելով ընթերցողից՝ նրանից կատարում ենք ընդարձակ մեջբերում. «Մինչև 1903 թվականի կէսը, հայ և թուրք՝ քաղաքացին էլ, գիւղացին էլ, արհեստաւորն ու բանւորն էլ, վաճառականն ու ծառայողն էլ,- ամենքը, անխտիր ամենքը սիրով, եղբայրաբար ապրում էին Կովկասում միմիանց կողքին: Ժամանակ առ ժամանակ թրքաշատ այս ու այն գաւառում լոյս ընկած աւազակային թուրք խմբերը՝ հաւասարապէս ատելի էին ինչպէս հայ, նոյնպէս և թուրք ազգաբնակութիւնները, վասն զի երկու ազգաբնակութիւններն ևս անխտիր ենթակայ էին նրանց յարձակումներին, նրանց կողոպտումներին: Թուրք և հայ հարևանութեան, դրկեցութեան ընտիր և ազնիւ օրինակը՝ նկատելի էր Նամանաւանդ Բագու քաղաքում և նրա շրջակայ գիւղերում, ուր քաղաքի միջին դասակարգը մեծ քանակութեամբ ամարանոց էր դուրս գալիս ամեն տարի: Մաշտաղա, Բզովնա, Շիվալան, Մարդաքեան, Բիլկեա- սրանք զուտ թրքաբնակ գիւղեր են՝ Բագւայ արևելեան կողմում, որոնց մէջ ամառային ամիսներում վխտում ու վժժում էին հայ ընտանիքներ, կնանիք, աղջկերք և երեխաներ **առանց տղամարդի, առանց տան մեծի:**

Հայ տղամարդիկ իրանց ընտանիքը յիշեալ գիւղերն ուղարկելով՝ իրանք մնում էին քաղաքում, իրանց գործերի վրայ: Եւ միմիայն կիւրակիներին ընտանիքներին տեսութեան էին գնում, իսկ երկուշաբթիներին դարձեալ քաղաք վերադառնում: Եւ ո՛չ մի տարի, ոչ մի ամիս, ոչ շաբաթ և ոչ մի օր լաւած, կամ տեսնւած չէ, մի որ և է գիւղում, որ և է ամարանոցում, մի որ և է թուրք՝ որ և է հայից մի բան գողացել է, կամ թէ՝ նրան անպատւել, նեղացրել է և կամ ծուռ աչքով վրան մտիկ տւել: Ջմոռանանք, որ հայ ընտանիքների սեպհական կամ վարձովի ամարանոցների դռներն ու ցանկապատներն, գիշեր-ցերեկ, բաց են եղել և, տօթալից գիշերներում, հայ ընտանիքներ՝ միայնակ կամ խմբովին ամբողջ ժամեր էին անցկացնում,- և այդ ամենայն ազատութեամբ,- ինչպէս գիւղերի հրապարակներում, նոյնպէս և բացօդեայ ընդարձակ այգիների ճեմելիքներում: Մի և նոյն երևոյթը տիրում էր Բագու քաղաքի հայերի և թուրքերի մէջ ևս: Այնպէս որ երկու հարևաններն էլ իրաւունք ունէին միտ և հանապազ բանաստեղծի հետ երգել թէ՝

«Ես ապրում էի խաղաղ – իմ նետը
Անտառի որսի վրայ էր միայն ուղղած,
Մինչև սպանութեամբ չէր ապականւած»:

(Շիլլեր, Վիլհելմ Տէլլ):

Եւ այս խաղաղ, եղբայրական՝ վայելուչ, այս իդիլլական կեանքը Բագւայ և նրա շրջակայ հայերի և թուրքերի մէջ՝ առերևոյթս և առ ժամանակեայ չէր, այլ իսկական և տևական, որ ես վկայաբանում եմ «ոչ ի կարծ ընդոստուցեալ և ոչ ի լուր զարթուցեալ, այլ անձամբ անձին պատահեցի ի տեղոջն և տեսի», ամբողջ 17 տարի, 1886-1903» (Եղիշե Ա.Ֆ. Գեղամեանց, Ռուս բիւրոկրատիան և հայերը, Բագու, 1917, էջ 84-86):

[1] **"Новое Время"**, 10 февраля 1905г.

լինում, և թուրքերը նրանցից սպանում են երկու հոգու ու ծանր վիրավորում չորսին. թուրքերն ունենում են միայն մի քանի թեթև վիրավորներ[1]: Գործարանում և դրսում կրքերը բորբոքվում են, բայց հաջողվում է ծագող հրդեհը արագորեն մարել:

Դրանից անմիջապես հետո քաղաքում տեղի ունեցան հայերի նոր սպանություններ: Օրինակ, 1904 թ. դեկտեմբերին, օրը ցերեկով, փողոցում սպանվեց նախկին հայդուկ, նոր-բայազետցի Միսաք Ենգոյանը[2]:

Սադրիչների դիվային երևակայությունը սահմաններ չէր ճանաչում: Նրանք, «օրինակներ» բերելով, համառորեն պնդում էին, թե այնտեղ հայերը, իբր, սպանել են մի թուրքի, մի այլ տեղ՝ երեքին, այնուհետև՝ մի ամբողջ ընտանիք են մորթել...

Նոդկալի սադրանքները խավարամիտ ու մոլեռանդ մուսուլմանական զանգվածի մեջ լիակատար հավատ էին ներշնչում, և նման հնարովի լուրերը տարածվում էին արտասովոր արագությամբ: Հարուստ մուսուլմաններն սկսել էին անստորագիր նամակներ ստանալ, որոնցում անհայտ «բարյացակամ» անձինք նրանց նախազգուշացնում էին, թե հայերը ցանկանում են սպանել նրանց: Իբրև այդ ամենին «ի պատասխան», սկսեցին թուրքերեն կոչեր երևալ, որոնցում մուսուլմաններին հայերից վրեժ լուծելու և նրանց սպանելու հրավեր էր արվում:

Հայերի դեմ ուղղված ստոր պրովոկացիաների հետևում հիմնականում կանգնած էին մեծահարուստ թուրքերը: Այդ տեսակետից մեծ դեր էին խաղում խոշոր նավթատերեր Մուխտարով եղբայրները և Թաղիևը[3]: Վերջինս սուլթանի դիմակավոր գործակալներից էր, որն իր միջոցներով մարդասպանների մի ամբողջ ոհմակ էր կերակրում:

Ընդամենը մի քանի ամիս առաջ էր Բաքվի նահանգապետ նշանակվել Երևանի փոխնահանգապետ իշխան Նակաշիձեն, որը հայտնի էր իր ծայրահեղ հայատյացությամբ: Դա ակնհայտ դրսևորվել էր հայ եկեղեցու ունեցվածքի հափշտակման ժամանակ, երբ Էջմիածնի սենատի դատախազ Կանչելիի հետ նա այդ գործում ցուցաբերել էր զարմանալի եռանդ ու դաժանություն: Խորամանկ, քմահաճ բյուրոկրատ, քծնող կարիերիստ այդ վրացի իշխանիկը նոր նշանակումով ընկել էր մի այնպիսի միջավայր, ուր կարող էր իրեն դրսևորել որպես գահի ինքնամոռաց նվիրյալ[4]:

Լիակատար ազատություն տալով թուրքերի սադրանքներին՝ Նակաշիձեն մատների արանքով էր նայում գնալով թափ առնող նրանց հանդգնությանը, աչք փակում հայերի սպանությունների առաջ: Նրա հովանավորությամբ

---

[1] **«Դրոշակ»**, N 9(150), սեպտեմբեր, 1904, էջ 141:
[2] **Ա. Գյուլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, Բագուի առաջին ընդհարումները, Փարիզ, 1933, էջ 18-19:
[3] **ՀՀ ՀԲԿՓԿԳԱ**, ֆ. 1022, ց.2, գ.141, թ. 56-59:
[4] Տե՛ս "Революция и Р.К.П.(б) в материалах и документах". (Хрестоматия), том третий, "1905 год", էջ 430-435:

Բաքվի թուրք պրիստավները, նրանց օգնականները, քաղաքապահ թուրք ոստիկանները գործում էին անպատիժ:

Նահանգապետը և նրա մարդիկ իրենք էին սադրանքներ հորինում, որոնք անմիջապես տարածվում էին Բաքվում և նրա սահմաններից հեռու:

Ոստիկանության միջոցով 1904թ. նոյեմբեր-դեկտեմբերին հայ-թուրք ընդհարում էր պատրաստվում նաև Երևանում, Գանձակում, Շուշիում: Բարեբախտաբար, հայերի և թուրքերի շրջանում դիրք ունեցող խելամիտ մարդկանց ազդեցության և հայ հեղափոխական կոմիտեների աչալրջության շնորհիվ ոստիկանական այդ դավը հաջողություն չունեցավ:

Կեղծ լուրեր առաջին անգամ չէին հնարվում, առաջին անգամը չէր, որ դրանք ունենում էին վրդովեցնող և հուզող տպավորություն: Դեռ 1900թ. Գանձակ քաղաքի հայերի մեջ տագնապ էր ընկել, թե մկրտության օրը թուրքերը հարձակվելու և կոտորելու են իրենց: Ուստի ամեն մարդ նախազգուշական միջոցներ էր ձեռք առել՝ միաժամանակ կասկածելով տարածված լուրի ճշմարտացի լինելու մեջ: Ի վերջո, սադրանքը հող չգտավ, և լուրեր տարածողները չհասան իրենց նպատակին:

1902թ. Թիֆլիսում ամբոխի մեջ լայն խոսակցություն սկսվեց, թե ջրօրհնեքից հետո հայերը հարձակվելու են մյուս ազգությունների վրա և քաղաքը գրավելու նպատակով արյունալի կոտորած են սարքելու: 1903-ին Երևանի հայերը լսել էին, թե քաղաքի թուրքերը նախապատրաստվում են Բայրամի տոնի նախօրերին հարձակումներ կատարել հայկական թաղերի վրա: Բայրամի տոնը եկավ ու անցավ, բայց նման բան տեղի չունեցավ: 1904թ. սկզբներին Բաքվում լուր տարածվեց, թե «Թաթարական կոմիտե» անունով թռուցիկ է տարածվել, ուր, իբր, ասվում է, որ հայերն իրենց ֆիդայիների առաջնորդությամբ պատրաստվում են թուրքերին կոտորել մուսուլմանական սուգի օրերին: Լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքում. ամեն տեղ հայերը և թուրքերը իրար հարց էին տալիս և չէին կարողանում որևէ բացատրություն տալ կամ մատնացույց անել լուրի աղբյուրը: Էլի ոչ մի միջադեպ չպատահեց, և սգի օրերն անցան խաղաղ: Բաքվի սոցիալ-դեմոկրատները հետաքրքրվեցին, թե իրո՞ք եղել է այդպիսի թռուցիկ. պարզվեց, որ չի եղել, և որ լուրը պարզապես ադմինիստրացիայի սադրանք է:

1905թ. հունվարի վերջերից Բաքվում նոր թափով սկսեցին տարածվել տագնապալի և մռայլ լուրեր: Նահանգապետ Նակաշիձեն, որի բնակարանը գտնվում էր քաղաքի թուրքական մասում, 1905թ. հունվարի կեսերին թաղի հարուստ թուրքերին առաջարկել էր մի քանի օրվա համար պաշար կուտակել՝ ասելով, թե հայերը տեսական ցույցեր ու գործադուլներ են պատրաստում: Նկատելի էր, որ մուսուլմանների շրջանում արդեն տեղի են ունենում ինչ-որ խմորումներ, որոնք ավելի ու ավելի խորհրդավոր ձևեր էին ընդունում: Սկսեցին պատմել, թե հայերն ու թուրքերը միանալով՝ որոշել են կոտորել ռուսներին: Իսկական խուճապ սկսվեց քաղաքի ռուս բնակչության շրջանում.

շատ ռուս ընտանիքներ, թողնելով Բաքուն՝ շտապով փախչում էին Ռուսաստան: Ապա տարածվեցին թռուցիկներ, որոնցում այս անգամ նախազգուշացնում էին թուրքերին, թե հայերը պատրաստվում են կոտորել նրանց:

Վերջապես առանձին մուսուլմաններ, որպես գաղտնիք, ռուսներին հայտնում էին, թե իրենք շուտով կոտորելու են հայերին:

- Ինչի՞ համար, - հարցնում էին նրանց:

- Նրա համար, որ հայերը պատրաստվում են միաժամանակ խռովություն բարձրացնել ռուսական ցարի, թուրքական սուլթանի ու պարսկական շահի դեմ, ցանկանում են նախ կոտորել մուսուլմաններին, հետո՝ ռուսներին, և իրենց համար ցար ընտրել:

- Ինչ հիմարություն: Որտեղի՞ց իմացաք: Չէ՞ որ դա զառանցանք է:

- Ինչո՞ւ է հիմարություն: Իրենք ոստիկաններն են ասում մեզ, պրիստավն էլ ասաց: Իսկ նրանք շատ լավ գիտեն, - խորհրդավոր ու վստահ ասում էին թուրքերը:

Այսպիսով, մի դեպքում հայերը մուսուլմաններին միացած՝ իբր, ուզում էին կոտորել ռուսներին, մյուս դեպքում՝ հայերն ուզում էին կոտորել թուրքերին, վերջապես, հայերը, իբր, ուզում էին միաժամանակ կոտորել և՛ թուրքերին, և՛ ռուսներին, նրանց վրա հաստատել իրենց բռնատիրությունը և «իրենց համար ցար ընտրել»:

Միաժամանակ թուրքերեն տպագրվող ու տարածվող ոստիկանական թռուցիկներում վարչակազմը քաղաքում տեղի ունեցող բանվորական բոլոր ընդվզումները նույնպես ներկայացնում էր որպես ռուսական ցարին գահընկեց անելուն ուղղված հայկական շարժում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում սադրանքի կենտրոնում հայերն էին:

Հ.Ց.Դ. Բաքվի կազմակերպության ղեկավարներից Աբրահամ Գյուլխանդանյանը նշում էր. «Ինչ-որ անտեսանելի և մեզ համար բոլորովին անհայտ ուժեր նպատակ էին դրել վրդովելու Բաքվի կյանքը և փչացնելու հայերի ու թաթարների հարաբերությունները: Մեր հիշողությունների մեջ մեկիկ-մեկիկ գծվում էին բոլոր այն դեպքերը, որոնք կարծես տարվում էին հմուտ ղեկավարությամբ և մի վերջնական նպատակ ունեին, այն է՝ թշնամություն հարուցել Բաքվի զանազան ազգությունների միջև և ամեն գնով աշխատել գրգռել նրանց միմյանց դեմ, որպեսզի Բաքուն երբեք խաղաղություն չունենա»[1]:

Օրավուր ահագնացող կոտորածի վտանգը կանխելու համար ինչպես հայ, այնպես էլ թուրք ազդեցիկ դեմքերը միջոցներ էին փնտրում: Բաքվի հայոց առաջնորդ Անանիա եպիսկոպոսը մուսուլմանական տոնի ժամանակ այցի գընաց թուրքական մզկիթ, իսկ մուսուլման ղազին եկավ հայոց եկեղեցի, ըստ որում երկուստեք մեծ հարգանքով ընդունեցին և ուղեկցեցին միմյանց, իսկ

[1] **Ա. Գյուլխանդանյան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 17:

քարոզներում փոխադարձ խրատներ էին տալիս՝ ապրել հաշտ ու խաղաղ:

Հույս ծագեց, որ նման փոխադարձ քայլերը կարող են ցրել շատ տարակուսանքներ ու կասկածներ: Բայց ամենափոքր հույսն ի դերև էր ելնում՝ հանդիպելով իշխանությունների հակադարձությանը:

Այդ օրերին կրոնական մոլեռանդությունից դեռ չկուրացած մի խումբ մուսուլմաններ մի քանի հարյուր օրինակով թուրքերեն տպագրեցին և տարածեցին թռուցիկ, որտեղ բացահայտում էին ոստիկանության նողկալի դերը: Թռուցիկի մեջ նրանք իրենց դավանակիցներին կոչ էին անում չհավատալ ոստիկանության տարածած վայրագ լուրերին և հնարավորին չափ հակազդել դրանց: Նրանք պատրաստվում էին կոչը հրատարակել նաև ռուսերեն, բայց միջոցների սղության պատճառով չկարողացան այդ բանը գլուխ բերել:

Եվ ահա, նահանգապետն ու ոստիկանապետը հավաքեցին մոլլաներին և նրանց համոզեցին, որ, իբր, այդ թռուցիկը տպագրել են ոչ թե մուսուլմանները, այլ՝ հայերը, և որ դա ապացույց է այն բանի, որ նրանք խռովություն են նյութում մուսուլմաններին սատար կանգնած ռուսական իշխանությունների դեմ:

Բռնակալական իշխանությանը կուրորեն հնազանդվելու ընտելացած և նրան մշտապես քծնող մոլլաները, ինչ խոսք, չէին կարող չհավատալ նահանգապետին և ոստիկանապետին:

Մոտենում էր 1905 թվականի փետրվարը: Մոտենում էր ահավոր աղետը: ... Բայց, այնուամենայնիվ, մարդիկ չէին հավատում, ավելի շուտ՝ չէին ցանկանում հավատալ դրա հնարավորությանը: Դրան հատկապես թերահավատորեն էին վերաբերվում իրենք՝ հայերը: Որոշ բնակիչներ՝ հայ թե այլազգի, նույնիսկ պատրաստ էին ծիծաղելու տագնապահար մարդկանց դյուրահավատության և միամտության վրա: Ինչպե՞ս թե, մտածում էին հայերը, մենք մուսուլմանների հետ 40-50 տարի նույն քաղաքում ենք ապրում, նրանց մեջ հավատարիմ բարեկամներ ունենք: Երբեք մեր միջև ոչ միայն բախումներ, այլև որևէ թյուրիմացություն չի եղել: Ինչու՞ մուսուլմանները հանկարծ պիտի սկսեն մեզ կոտորել: Երբե՛ք:

Նույնիսկ դաշնակցականները, ըստ երևույթին, լուրջ նշանակություն չէին տալիս չարագույժ լուրերին և ոչ մի վճռական բան չէին ձեռնարկում: Հենց դա էր պատճառը, որ ահավոր իրադարձությունները նրանց անակնկալի բերեցին:

Եվ այսպես, ցարիզմն իր կրծքին էր փարել դիվային նպատակին ծառայող խավար ուժերին, միջնադարյան բորբոսնած քենն ու ոխը: Նա պատրաստվում էր սկսել մեծ ոճիրը Կովկասում և այն տարածել երկրամասի բոլոր ծայրերում: Պատրաստվում էր զորքի ու ոստիկանության պաշտպանության տակ չարագործության մղել մուսուլմանական հասարակության մութ ուժերին, քաջալերել սպանությունները, սրբագործել տանջանքը և այդ միջոցով սպառել ժողովրդական ուժերը, մարել բորբոքվող կրակը, զանգվածներին ստիպել ձեռք

քաշել հակացարական գործողություններից, նրանց զբաղեցնել ինքնապաշտպանության և անձնական ապահովության խնդիրներով, զրկել սկսված ռուսական Մեծ հեղափոխությանը մասնակցելու հնարավորությունից:

Ցարական կառավարությունը, նշում էր Լենինը, փետրվարին կայացրեց թուրքերի «հակահեղափոխական ուժերի փորձնական մոբիլիզացում կազմակերպելով Բաքվի հայտնի ջարդը»[1]:

Շուտով, շատ շուտով, ձյունապատ գագաթների ու հեքիաթային հովիտների, գեղանի ինքնատիպ ցեղերի և ազգությունների հոյակապ երկիրը ներկայանալու էր իրև արյան դաշտ, և այնտեղ թագավորելու էր քաոսը:

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՍԱՆՁԱՁԵՐՄՈՒՄԸ: ԱՌԱՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱՔՎՈՒՄ

Իշխանությունների դիվային նախապատրաստությունները մոտենում էին ավարտին: Նրանք և՛ որոգայթներ էին լարում, և՛ սրիկաներ վարձում: Այդ ստոր գործի գլուխն էին կանգնած Բաքվի վարչական սյուները՝ նահանգապետ իշխան Նակաշիձեն (վրացի), Բաքու քաղաքի և շրջանի ոստիկանապետ Դիմինսկին (ռուս), Նավթաշրջանի ոստիկանապետ Խոմիցկին (լեհ), հանրային ապահովության տնօրեն (ժանդարմերիայի պետ) իշխան Թավքերիձեն (վրացի):

Սադրանքի վարպետներն արդեն առիթ էին փնտրում, և եթե այն ուշանար, իրենք կստեղծեին: Բայց առիթն ինքը ներկայացավ:

Առիթը ներկայացավ, և պայթեց կուտակված ոխն ու քենը: Իշխանությունները հասան իրենց նպատակին՝ ատելության հրդեհը տարածվեց քաղաքով մեկ:

Սուլթանի ոսկիներով կաշառված թուրք մտավորականներ՝ մարդատյաց ծրագրերի հեղինակ, կույր թուրք զանգվածների քրտինք-աշխատանքով

---

[1] Н. Ленин (В. Ульянов), Собрание Сочинений, т. VI, “1905 год”, стр. 483.

Ինչպես տեսնում ենք, այս գործիչների թվում չկա Բաքվի քաղաքապետի անունը, որը թեև որոշ մեղսակցություն ունեցավ դեպքերին, բայց իրեն չարատավորեց այն աստիճան, ինչպես թվարկված անձինք: Պետք է նկատել, որ, փոքր բացառություններով, Բաքվի քաղաքապետերը (Իրեցկի, Ռաևսկի, Բիչ, հատկապես՝ Նովիկով) հնարավորության սահմաններում բազմազգ քաղաքում աչքի են ընկել անկողմնակալությամբ: Դրան, անշուշտ, նպաստել էր այն հանգամանքը, որ քաղաքագլխի պաշտոնն ընտրվի էր: Բաքվում թուրքերն աշխատում էին իրենց ձեռքն առնել քաղաքային իշխանությունը, սակայն, համաձայն ռուս ցարական օրենքների, քաղաքային խորհուրդների կազմում ազգաբնակչության ոչ քրիստոնյա տարրը իրավունք չուներ ձայների կեսից ավելին շահելու, իսկ քաղաքագլուխն ընտրվում էր խորհրդի կողմից: Այնպես որ, չունենալով մեծամասնություն՝ թուրքերը Բաքվում ի վիճակի չէին վարելու զուտ թուրքական քաղաքականություն: Քանի որ ոչ թուրքերը և ոչ հայերը իրենց ձայների թվի համեմատ չէին կարող իրենց քաղաքագլուխն ունենալ, ուստի Բաքվի քաղաքագլուխներ ընտրվում էին ռուսները:

հղփացած դրամատերեր, դավերի ու խառնակության սիրահար պոլիտիկաններ – այս բոլոր մութ ուժերը, դարձված ցարիզմի և համիսլամականության քուրաներում, հրապարակ եկան օրը ցերեկով, անվախ, առանց ամոթի ու խղճի և կատարեցին մարդկային ձեռքի ամենաստոր գործերից մեկը:

Զորս օր շարունակ ճայթում էին զենքերը՝ խլելով բազում մարդկային կյանքեր՝ հայերից և մուսուլմաններից:

Սկսվում էին ավելի քան մեկ ու կես տարի տևած Թուրք-հայկական արյունալի ընդհարումներն Անդրկովկասում*:

Առաջին օր, փետրվարի 6 (19), կիրակի:

---

* 1905-1906ԹԹ. Անդրկովկասում Թուրք-հայկական ընդհարումներին մանրամասն անդրադարձել է Աբրահամ Գյուլխանդանյանը՝ իր գրքերով, պատմական հուշագրություններով, դիտարկումներով, որոնք նախապես լույս են տեսել «Հայրենիք» (Բոստոն) ամսագրում որպես հոդվածներ ու հոդվածաշարեր: Դրանցից են՝ «Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ» (Բ տարի, N3-ից մինչև Գ տարվա N5), «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ» (Ժ տարի, N8-ից մինչև ԺԳ տարվա՝ N1), «Բագուի երկրորդ ընդհարումները» (ԺԳ տարի NN 4-8), «Հայ-թաթարական կռիվները Անդրկովկասում» (ԺԳ տարի, NN10-12), «Բագուի մեր գործիչները» (ԺԴ տարի, N3), «Հեղափոխական դեմքեր» (ԺԴ տարի, N5 և 6, ապա նաև՝ ԺԵ տարի՝ N1-3) և այլն: Հեղինակը, իբրև դեպքերի անմիջական մասնակից և ղեկավար դեր կատարող, հանդես է գալիս ոչ միայն որպես առարկայական պատմաբան, այլև՝ ականատեսի ու դերակատարի հանգամանքով՝ հաճախ կիրառելով նաև առաջին դեմքով պատմողի ձևը: Եվ նրա հրապարակումների ամենագնահատելի մասը հենց դա է: Սակայն Ա.Գյուլխանդանյանի հրապարակումների մեջ տեղ են գտել փաստական և այլ կարգի սխալներ, որոնց կանդրադառնանք սույն աշխատության համապատասխան էջերում:
Նախքան Ա. Գյուլխանդանյանի հրապարակումները, Թուրք-հայկական ընդհարումների պատմության ուսումնասիրության ուղղությամբ արդեն բավական գործ էր կատարվել: Հատկապես արժեքավոր է Ա-ԴՕ-յի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) 1907թ.Երևանում լույս տեսած «Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.): Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով» աշխատությունը, որ նա գրել էր կոտորածների վայրերում ճանապարհորդելիս՝ կռիվների մասնակիցների և ականատեսների հետ ունեցած զրույցների անմիջական տպավորության տակ:Նախքան առանձին գրքով տպագրվելը՝ դրա մեջ եղած նյութերի զգալի մասը հաջորդաբար լույս էր տեսել «Մշակ» թերթում: Խնդրին տարբեր ծավալներով անդրադարձել են նաև Միքայել Հովհաննիսեանը (Վարանդեան)՝ «Կովկասյան Վանդեան» (Թիֆլիս, 1907) գրվածքում և «Հ.Յ. դաշնակցութեան պատմութեան» Բ հատորի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխներում, Դավիթ Անանունը՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» աշխատության 3-րդ հատորում (Վենետիկ, 1926), Մնակ Տեր-Դանիելյանը (Արամայիս) «Ցառաջ» մատենաշարով լույս ընծայած հուշագրության մեջ և «Մի քանի գլուխ հայ-Թուրքական ընդհարումներից» (Թիֆլիս, 1907) գրքում, Վ.Մաևակին և Ս. Զավարյանը՝ ռուսերեն հրատարակած ուսումնասիրություններում: Ինչպես ընթերցողը նկատում է, Թուրք-հայկական ընդհարումների պատմությունն ուսումնասիրողներից ոմանք (Ա. Գյուլխանդանյան և ուրիշներ), ելնելով այն բանից, որ հայերն օսմանցի Թուրքերին (տաճիկներին) նույնպես Թուրք են անվանում, ընթերցողների մեջ չփոթություն չառաջացնելու նպատակով, իրենց աշխատություններում կովկասյան Թուրքերին կոչում են «Թաթար»: Ուսումնասիրողների մեծ մասը (Ա-ԴՕ և ուրիշներ) նախընտրել է «Թուրք» տերմինը: Սույն ուսումնասիրության մեջ մենք օգտագործել ենք «կովկասյան Թուրքեր» բառակապակցությունը և «Թուրք» անվանումը: Դա պատճառաբանված է նաև այն բանով, որ մեր օրերում ադրբեջանցիները (ազերիները) իրենց անվանում են Թուրք և համարում են, որ օսմանյան Թուրքերի հետ մի ընդհանուր ազգ են:

1905Թ. փետրվարի 6-ին առաջին անգամ Թնդաց երկու ազգերի միջև վիհ բացող հրացանը, և Բաքվի փողոցները ներկվեցին արյունով:

Օրեր առաջ մի Թուրք կալանավոր, որին պահակախումբը տեղափոխում էր մի տեղից մյուսը, փախչելու փորձ կատարելիս՝ սպանվել էր պահակախմբի կազմում գտնվող հայ զինվորի արձակած գնդակից: Ինքը՝ ոստիկանությունը, սկսել էր քաղաքով մեկ տարածել, Թե սպանողը հայ է: Թաթարները լցվել էին վրեժխնդրությամբ: Ուրեմն ճիշտ են ասում, որ հայերը պատրաստվում են կոտորել մուսուլմաններին, – մտածում էին նրանք:

Կիրակի էր, մայր եկեղեցում առավոտյան ժամերգություն: Դրսում եկեղեցու բակում, Պարապետ կոչված հրապարակում և շրջակա փողոցներում, ինչպես միշտ, հավաքվել էր մեծ բազմություն, այդ Թվում ռուսական բանակի մի քանի հայ զինվոր: Հանկարծ եկեղեցու մոտ հայտնվում է մի Թուրք՝ հայտնի ոճրագործ Բաբաևը, և, մոտենալով կանգնած զինվորներից մեկին, հանում է ռևոլվերը և կրակում նրա վրա: Հանկարծակիի եկած զինվորը շուրջը նայելով՝ ուզում էր իմանալ, Թե ով էր կրակողը, երբ նրան է մոտենում Թաղային ռուս հսկիչը, արագ խուզարկում, ապա սպառնալից գոչում.

– Ինչո՞ւ կրակեցիր:

– Կրակողը ես չէի. ինչ-որ մեկը կրակեց ինձ վրա, – արդարացի վրդովմունքով առարկում է զինվորը:

Նույն պահին հավաքվածները բռնում են Բաբաևին, որը փորձում էր փախչել: Սպառնալից հրմշտոցով Թաղայինը ճեղքում է ամբոխը, խլում Թուրքին, առանց զինաթափ անելու նրան նստեցնում ձիակառք և կառապանին հրամայում քշել ոստիկանական Թաղամաս: Կառքը շարժվելիս՝ Թաղայինին գոչում են, Թե արձանագրություն կազմելու համար անհրաժեշտ է վկաներ վերցնել: Բայց նա, փոխանակ ունկնդրելու այդ արդարացի պահանջը, դուրս է քաշում ռևոլվերը և սպառնում հավաքվածներին: Դա արդարացի վրդովմունքի բռնկում է առաջ բերում: Տեղաբնակները, լավ իմանալով Բաքվի ծախու ոստիկանության բարքերը, Թաղայինի գործողություններում իրավացիորեն տեսնում էին կաշառքի ուժով հարուստ Թուրքի զանցանքը կոծկելու ձգտում: Լվեցին զայրալից գոչյուններ, և մի քանի հոգի փորձեցին ուժով կառք նստել: Այդ ժամանակ նորից հանելով ռևոլվերը՝ Բաբաևը ցատկում է կառքից ու Կրիվայա փողոցով փախչում ամբոխին սպառնալով կրակել: Մի քանի մարդ նետվում է նրա հետևից, լսվում են կրակոցներ, և Թուրքը Պարապետի մայթին է փռվում: Թե ով սպանեց նրան, այնպես էլ մնաց չբացահայտված: Անմիջապես պատահարի վայր են հասնում կազակները, ապա գալիս են զինվորները և իրենց հրացաններն ուղղում հրապարակում խռնված ամբոխի վրա: Մինչդեռ մոտակա փողոցներում արդեն կրակոցներ էին լսվում. Թուրքերն էին կրակում հայերի վրա: Հրապարակը դատարկվեց: Ամեն մարդ խենթացած վազում էր տուն: Ի՞նչ պետք էր անել՝ ոչ ոք չգիտեր...

Նույն օրն իսկ ոստիկանությունը Բաքվի դիակը տվեց Թուրքերին: Զինված ամբոխը, մոլլաների գլխավորությամբ, շրջապատեց դին և տա՛ռավ մուսուլմանական թաղամասերով՝ վրեժի կոչ անելով: Իշխանությունները չարգելակեցին թափորը[1]:

Եվ ծայր առավ ճակատագրական բախումը*:

Հույս չդնելով իրենց ուժերի վրա՝ ջարդարարների պարագլուխները փետրվարի 6-ի կեսօրին ձիավորներ ուղարկեցին Ափշերոնի մուսուլմանական գյուղեր՝ կոչ անելով զինվել և գալ քաղաք: «Կուլտուրայից բացարձակապես հեռու մնացած, տգետ ու վայրենի գյուղացիների մեջ, - վկայում էր ականատեսը, - կային շատ արյունախում լեզգիներ, որոնց հարազատ տարերքը զանգվածային թալանն ու սպանություններն էին: Ռուս բռնակալները, որոնք իրենց հանցանքների դիմաց երկար տասնամյակներ շարունակ անպատիժ էին մնում շնորհիվ զանգվածների տգիտության, Ռուսաստանով մեկ վայրենի բարքեր ունեցող ամբողջ հորդաներ էին պահում «նեղ օրերի համար»[2]:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 145, թ. 3:

* 1905թ. փետրվարի 6-ին Բաքվում Թուրք-հայկական ընդհարումները սկսվելու առիթի մասին ժամանակի մամուլի և գրականության մեջ տրված են իրարից զգալիորեն տարբերվող մեկնաբանություններ: Ցարական պաշտոնական մամուլը առիթը ներկայացնում էր որպես պատճառ: Կովկասի կառավարչապետի պաշտոնական օրգան "Кавказ" լրագրի (1905թ. փետրվարի 8-ի, 9-ի, 10-ի համարներ) տեսակետով հայ բանտապահները սվինահարել էին փախուստի դիմած մի Թուրքի, որի պատճառով սկսվել էր հայերի ջարդը: Պետերբուրգի "Новое Обозрение" թերթը (տե՛ս 1905թ. փետրվարի 8-ի համարը) գրում էր, որ Բաքվի կենտրոնում հայերի ձեռքով սպանվել էր մի շատ հարուստ Թուրք, որի պատճառով նրա բարեկամները վրեժ են լուծել՝ սպանելով անցնող մի քանի անմեղ հայերի: Իրադարձությունների առաջին օրերին հայ մամուլը նույնպես (բացառությամբ սոցիալ-դեմոկրատական օրգանների) հակված էր առիթը պատճառ համարելու: «Մշակի» 1905թ. փետրվարի 9-ի համարում տպագրված «Դժբախտ թյուրիմացություն» առաջնորդողում ջարդերը որակված են որպես «վերին աստիճանի տխուր դեպքեր»: Միք. Վարանդյանը հետևյալ բացատրությունն է տվել. «1905թ. փետրվարի առաջին օրերուն Սալեանկի ռուսական գունդին պատկանող խումբ մը զինուորներ դատարանեն բանտ կուղեկցեին նշանավոր Թուրք հրոսակապետ մը՝ Աշուրբեկով: Բանտարկեալը փորձեց փախչել: Ռուս պահակախումբը, որու մեջ կը գտնվեր հայ զինուոր մը, սկսավ կրակել փախչողի վրա: Պատահաբար, հայ զինուորի գնդակն էր, որ սպանեց հանցագործը» (Միք. Վարանդեան, Հ. 8. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., Թեհրան, 1981, էջ 44): Ինչ վերաբերում է պաշտոնական հաղորդագրությանը, ապա այնտեղ ասված էր. «Հունվարի 12-ին Բաքու քաղաքում դատաստանական քննչի մոտից մարդասպանության մեջ մեղադրված Բալա-Աղա Մնշադի-Մահմեդ-Ռզա-օղլուն բանտ վերադարձնելու ժամանակ՝ 262-րդ հետևակ պահեստի գնդի զինվոր Նիկոլայոս Հարությունյանի և Կարապետ Բաբախանյանի զինված ուղեկցությամբ, հիշյալ կալանավորը փորձեց փախչել: Ուղեկցող զինվորները հասան նրա հետևից և մի քանի վերք հասցրին սվինով, որոնցից նա մեռավ բանտի ճանապարհին» («Մշակ», N18, 9 փետրվարի 1905թ.): Բաքվի հայ-Թուրքական կոտորածի սկիզբը նկարագրելիս՝ մենք հիմք ենք ընդունել ՀՀ ՀԲԿՓԿՊ արխիվի 17-րդ Փոնդի N1 ցուցակի 383 գործը:

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ.223, թ.1:

Մոլլաների կոչերով մոլեգնած լեզգիները և Թուրք գյուղացիները, փակելով Բաքու տանող երկաթգիծը, կանգնեցնում էին գնացքները և բարձրանում վագոններ: Մի քանի ժամ անց նրանք հայտնվեցին քաղաքի փողոցներում դաշույններով ու բերդանկաներով զինված: Հենց այդ արնաբերան վայրենիներն էլ կատարեցին ամենագազանային սպանությունները:

Քաղաք մտած լեզգիներին ու Թուրք գյուղացիներին ջերմորեն դիմավորեցին նրանց հավատակիցները: Առաջին քաղաքամասի պրիստավ Մամեդբեկովը* - հին ու փորձված մի մարդասպան և կողոպտիչ - իր մոտ էր հրավիրել տեղի ավազակային հրոսակախմբերի և քաղաք եկած լեզգիների ու Թուրք գյուղացիների խմբերի մի քանի պարագլուխների, նրանց հրահանգավորել, նաև տվել զենք ու փամփուշտ: Անկասկած, այդպես էր գործում ոչ միայն Մամեդբեկովը:

Այս ու այն տեղերից հանկարծակի փողոցներ էին նետվում Թուրք ղոչիբաշիներ՝ իրենց զինված խմբերով, և աջ ու ձախ սրախողխող անում հայ անցորդներին: Միաժամանակ Թուրքերի տների պատշգամբներից ու լուսամուտներից հայերի վրա տեղում էր գնդակների տարափ:

Գրվում էր հայկական անծայր ողբերգության մի նոր սև էջ: Բոլոր կողմերից կրակոցներ էին լսվում: Ահա փողոցում վայրագություն է անում ամբոխը, որ ավերել է մի քանի խանութ և այժմ թալանում է ապրանքը: Բոլորի ձեռքերին ինչ-որ բան կա. ոմանց մոտ՝ կտոր, մյուսների մոտ՝ մի քանի զույգ կոշիկ, երրորդների մոտ՝ տուփեր և այլ իրեր: Փողոցներում այստեղ - այնտեղ հանգիստ կանգնած են կարգադրիչ կազակներն ու ոստիկանները. կողոպտիչների ձեռքը ոչ ոք չի բռնում, ոչ ոք նրանց ձեռքից չէր խլում ոչ զենքը, ոչ թալանված ունեցվածքը:

Իրադարձությունների մասնակիցներից մեկը վերհիշել է. «Ամբոխը ավերելով՝ ներս խուժեց Սահակովի տան ներքևի հարկում գտնվող խանութը: Ես բնակվում էի այդ տանը: Հենց խանութի վերևի երկրորդ հարկը զբաղեցրած հայկական ընտանիքը սարսափահար վազեց մեզ մոտ: Ես նրանց առաջարկեցի գիշերել իմ բնակարանում, իսկ ինքս զանգահարեցի նահանգապետի դիվանատուն և պահանջեցի, որ պահակախումբ ուղարկեն: Իմանալով, որ պահակախումբ պահանջողը ռեալական ուսումնարանի ուսուցիչ է, խոստացան կազակներ ուղարկել: Մոտ 10 րոպե անց կազակները եկան, և ամբոխը ցրվեց: Ես փողոց դուրս եկա տեսնելու, թե արդյո՞ք մնալու է պահակախումբը: Հենց նոր էի ուզում դրել մայթին, երբ կազակներն անմիջապես շրջեցին ձիերի գլուխները և հեռացան: Իմ խնդրանքներին, որ գոնե մի փոքր պահակախումբ թողնեն, ես ոչ մի պատասխան չստացա: Կազակները գնա-

* Ոչ միայն Բաքվի, այլև Կովկասի բոլոր նահանգների ոստիկանություններում աշխատում էին բավական թվով Թուրքեր: Պատճառն այն էր, որ ռուսական կառավարության աչքում Թուրքերը, չլինելով հեղափոխական տարր, համարվում էին օժանդակիչ ուժ՝ զսպելու համար հակացարական ըմբոստությունները:

ցին»[1]:

Թիֆլիսում լույս տեսնող "Новое Обозрение" թերթը տպագրել էր մի ռուս մարդու՝ Օրեստ Սյոմինի թղթակցությունը, որում այսպիսի տողեր կան.

«Իմ տանտերը վախենում է, որ գիշերը թուրքերը կհարձակվեն իր բնակարանի վրա... Հայերը վախենում են տներից դուրս գալ, որտեղից այժմ կարելի է լսել հիստերիկ հեծեծանքներ և տեսնել անմխիթար արցունքներ՝ սպանված և վիրավոր ազգականների պատճառով: Մենք, ռուսներս, որ հանդգնում ենք քաղաք դուրս գալ, ծառայում ենք հայերին, և ով ինչով կարող է՝ թեթևացնում է նրանց ակամա բանտարկությունն իրենց բնակարաններում... Երբ ես գրում եմ այս տողերը, ականջիս հասնում են հրաձգության ձայներ և, երևակայելով, թե ինչ է լինելու գիշերը, ես պատկերացնում եմ թուրքական գազանությունների ծանոթ տեսարանները, և սարսափը տիրում է հոգուս...»[2]:

Գնալով ուժեղանում էր հրացանաձգությունը քաղաքի տարբեր մասերում: Թուրքերը, խմբերի բաժանված, ռևոլվերներով և հրացաններով զինված, ուր որ պատահում էին, խփում կոտորում էին հայերին: Թուրք կռվողների հետևից տանում էին զինամթերքի արկղեր, որպեսզի փամփուշտի պաչարը չպակասի:

Երբ ջարդարար խուժանը տեսավ, որ հայ բնակիչները փակվել են իրենց տներում և դուրս չեն գալիս փողոց, առատ նավթ ցանելով սկսեց հրդեհել տները՝ բնակիչներով հանդերձ:

Ավելի շատ էր այն տների թիվը, որոնց դարպասներն ու դռները տապալելով, ջարդարարները ներս էին խուժում, քարուքանդ անում ամեն ինչ, կոտորում այնտեղ գտնվող դժբախտներին, ապա սկսում թալանը: Կողոպուտից հետո հայերի տներն ընդհանրական պատկեր ունեին՝ դատարկ ու պղծված սենյակներ, փշրված առարկաներ, ջարդված ամանեղեն, այս ու այն կողմ շպրտած զանազան էժանագին իրեր:

Հատկապես անտանելի էր այն հայերի դրությունը, որոնք ապրում էին Բալախանսկայա փողոցից այն կողմ ընկած թուրքական թաղերում՝ Նիկոլաևսկայա փողոցի վերին հատված, Զեմբերեքենդ, Շամախու թաղ, Ղուբայի հրապարակ, և նրանց մերձակա տեղերում: Թուրք հոծ բնակչության մեջ քիչ չէին հայերը նաև Բերդ անվանված հին լաբիրինթոսում:

Նկատի ունենալով թուրքական թաղերում փետրվարի 6-ին կատարված խժդժությունները՝ "Новое Обозрение" թերթի Բաքվի թղթակիցը գրում էր. «Թե ինչ էր կատարվում այնտեղ խորքում, Բազարնի և Շամախու փողոցներում, հայտնի չէր... Հեռվից երևում էր միայն թուրքերի փափախների մի ամբողջ ծով, և լսվում էր ամբոխի վայրի ոռնոցը... Երեկոն վրա էր հասնում, և բոլորը սարսափով սպասում էին «Բարդուղիմեոսյան գիշերին»... Քիշինյովի արյունահեղության սարսափները ոչինչ են՝ համեմատելով այս բոպեին մեզանում կատարվածների հետ: Չէ՞ որ այնտեղ (Թուրքական թաղերի խորքում: - Հ.Ս.)՝ աղմկում, աղերսում է անզեն [հայ] ամբոխը, իսկ այստեղ համարյա բոլորը, առանց բացառության, զինված են հրազեններով, խենջարներով, յաթաղաններով և այլ մահաբեր զենքերով»[1]:

Ահա երեսնիվար մայթին ընկած մի դիակ, իսկ քիչ այն կողմ մահվան հոգեվարքի մեջ դաշունահար մի ուրիշը: Ահա փողոց դուրս եկող դարպասի առջև երևում է արյան մուգ-կարմիր զանգված... Ուրեմն այստեղից ոչ հեռու բակում կամ ներքնահարկում մորթել են մարդկանց... Լենկթեմուրյան արհավիրքը փոթորկի պես պայթել էր անզեն ժողովրդի գլխին՝ չորս կողմը սփռելով դիակների կույտեր, կսկիծ ու հառաչանք, նզովք ու ցասում:

Նույնքան ահավոր էր իրենց աշխատավայրերում ու հյուրանոցներում փակված հայերի վիճակը: «Արյունահեղ սպանդանոցը Բաքվում» վերնագրով իր հուշերում Բաքվի քաղաքային վարչության ֆինանսական բաժնի նախկին աշխատակից Նիկոլայ Նաջարովը գրել է. «Կիրակի օրը, փետրվարի 6-ին, ես, որպես ծառայող, գտնվում էի վարչությունում: Առավոտյան ժամը 10-ի կողմերում հանկարծ լսվեցին կրակոցներ, և մի քանի րոպե հետո Նիկոլաևյան փողոցում հայտնվեցին թաթարների զինված խմբեր: Բոլորի ձեռքին փայլում էին ռևոլվերներ: ... ոչ ոքի, բացի հայերից. ձեռք չէին տալիս: Մի ժամ հետո վարչությունում մնացել էին փակված միայն հայերը և մեկ թուրք, որը, նման լինելով հայի, վախենում էր փողոց դուրս գալ:

Քիչ հետո գալիս է քաղաքագլուխը: Մենք բոլորս շրջապատեցինք նրան և աղիողորմ խնդրեցինք օգնություն, քանի որ վախենում էինք հարձակումից: Նա սկզբում զարմացավ և ասաց, որ այդ ամենը դատարկ բան է, որ ոչ ոք ձեզ ձեռք չի տա, որ ինքն արդեն առավոտվանից անցնում է փողոցներով, և ոչ ոք իրեն ձեռք չի տալիս: Վերջապես, մեր շատ թախանձանքներից հետո նա խոստացավ մեր խնդրանքը հաղորդել նահանգապետին: Մենք խնդրեցինք նաև տալ չորս կազակներ՝ վարչության դռները պաշտպանելու համար: Քաղաքագլուխը հեռացավ, և մենք այլևս նրան չտեսանք: Դրանից հետո մենք նրան մի քանի անգամ դիմեցինք հեռախոսով, բայց՝ զուր: Վերջապես հեռախոսավարուհին կենտրոնից ասաց ինձ. «Դուք, ինչ է, չե՞ք տեսնում, որ քաղաքագլուխը չի ուզում խոսել ձեզ հետ»: Որոշ ժամանակ անց փողոցում հայտնվեցին կազակներ. մենք լուսամուտներից նրանց խնդրեցինք օգնության գալ: Կազակները ներքևից պատասխանեցին. «Մեզ հրամայված չէ կրակել, այլ մեզ թույլատրված է միայն հավաքել սպանվածներին»[2]:

«Իսլամիե» անունով հյուրանոց մտած մարդասպանները ծառայողներից պահանջեցին ցույց տալ, թե որտեղ են ապրում հայերը: Մերժում ստանալով և չկարողանալով ձեռք գցել բանալիները՝ նրանք կոտրեցին դռները, խուժեցին սենյակները և սրի քաշեցին պատահած հայի: Խուզարկելով ամբողջ շենքը՝

---

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ.383, թ.27:
[2] "Новое Обозрение", 10 февраля 1905г.

[1] "Новое Обозрение", 10 февраля 1905г.
[2] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 129, թ. 2:

նրանք որսում էին նկուղային հարկի մութ անկյուններում թաքնված դժբախտներին և տեղնուտեղը սրախողխող անում: Միայն մի քանիսին հաջողվեց թռչել պատուհաններից և ազատվել փախուստով[1]:

Նույն բախտին արժանացան փողոցներում մոլեգնող՝ կոտորածից փախած և այդ հյուրանոցում ապաստանած հայերը: Ականատեսները վկայում էին. «Մեր աչքի առջև թաթարները կոտորում էին բանից անտեղյակ հայերին, որոնք գնում էին իրենց սովորական աշխատավայրերը: Նրանցից մոտ 30 հոգի հասցրեց ապաստանել «Իսլամիե» հյուրանոցում, բայց գազանացած մարդասպանները նրանց հետևից ներխուժեցին շենքը և գլխովին սրի քաշեցին: Ազատվեց միայն չորս հոգի՝ հյուրանոցի թուրք տիրոջ ջանքերով»[2]:

Հայերին հանկարծակիի բերելով՝ թուրքերը կարողացան շատ արագ իրենց հսկողության տակ առնել Շամախինկա թաղը, որի բնակիչների 80-90 տոկոսը մուսուլմաններ էին, Արմյանսկայա և Վորոնցովսկայա փողոցների մեծ մասը, Պարապետից մինչև ծովափ ընկած հատվածը, Տելեֆոննայա փողոցը՝ Սև քաղաքի կողմից:

«Այս բոլոր կողմերից, - գրել է Աբրահամ Գյուլխանդանյանը, - նրանք անարգել ընթանում էին դեպի կենտրոն, դեպի Մալականսկայա և Տորգովայա փողոցները՝ կտրելու համար հայկական կենտրոնները միմյանցից, և ճանապարհին կոտորում էին հանդիպած հայերին»[3]:

Նահանգապետ Նակաշիձեն, ըստ երևույթին, արբեցած վայրագ սպանություններով, կազակների ջոկատի հետ կառքով շրջում էր քաղաքի փողոցներով: Սպասսկայա փողոցում նա հանդիպեց զինված մուսուլմանների մի հսկա զանգվածի. ամբոխը ակամայից ընկրկեց և պատրաստվում էր հեռանալ: Այդ ժամանակ նահանգապետն իր մոտ կանչեց մի քանի մուսուլմանների և հարցրեց նրանց, թե ինչու է ամբոխը հեռանում:

- Ձեզանից վախեցան, Ձերդ պայծառափայլություն:

Նահանգապետի գոհունակ դեմքին երևաց ներողամիտ ժպիտը, և նա ողորմածաբար ասաց.

- Ասացե՛ք նրանց, որ ոչնչից չվախենան, ես չեմ արգելում: Թող սպանեն և այրեն հայերին, հատկապես այն տները, որտեղից կրակում են:

Թաթարները շնորհակալություն հայտնեցին նահանգապետին:

Մի քանի մուսուլմաններ իրար գլխի հավաքված՝ գոհունակությամբ պատմում էին, որ նահանգապետը Բիբի-Հեյբաթ (Բիբեյբաթ, Բեյբաթ) ուղարկվող կազակների հարյուրակի գլուխ է կարգել մի թուրք հայտնի ավազակի: Վերջինս հետագայում բավականությամբ ասում էր.

- Իսկ ինձ հավատարիմ ծառայության համար նահանգապետը գնդապետի կոչում տվեց:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 129, թ. 3:
[2] Նույն տեղում, գ. 234, թ. 10:
[3] Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատոր առաջին, էջ 26:

Քաղաքացիներից մեկը, ազգությամբ հրեա, հետագայում գրել է.

«Երբ թուրք Աշուրովի տնից կրակելով սպանեցին մի հայի, ես մոտեցա ոչ հեռու փողոցում գտնվող և կատարվածին անտարբեր նայող զինվորների հրամանատարներից մեկին ու հարցրի. «Պարոններ, մի՞թե հնարավոր չէ դադարեցնել այդ խայտառակությունը. չէ՞ որ, ինչպես տեսնում եք, ոչ ոք չի համարձակվում անցնել փողոցով»: Սպաներից մեկը, որի ուսադիրներին երկու աստղ էր և 21 թիվը, ինձ հարց տվեց. «Իսկ դուք ազգությամբ ո՞վ եք»: Թեև ես հրեա եմ, բայց ներկայացա որպես գերմանացի: Այն ժամանակ նույն սպան ասաց. «Իսկ ինչո՞ւ եք անհանգստանում. ափսոսու՞մ եք այդ հայերին: Նրանք չափից ավելի են բազմացել, թող մի փոքր մաքրվեն»[1]:

Ջարդարարներից մեկը՝ նախկին պրիստավ Սալիմխանովը, հեռախոսով հայտնեց ոստիկանապետին, թե հայ և ռուս բանվորները միավորվել են և պատրաստվում են ձեռնարկել ակտիվ գործողություններ: Ահա նրանց խոսակցության բովանդակությունը, որը ժամանակին գրի է առել ռուս քաղաքացիներից մեկը.

- Բարև՛, թանկագինս, - ասում է Սալիմխանովը՝ անուն հայրանունով դիմելով ոստիկանապետին: - Իմ ձիավորներն ինձ լուր են բերել, որ Բեյբաթում հավաքվում են հայ և ռուս բանվորները և ուզում են քաղաք գնալ: Մենք պետք է միջոցներ ձեռք առնենք:

- Մի՛ հավատացեք, դատարկ բան է: Ես հեծյալ պարեկներ եմ ուղարկել Բեյբաթ: Անհանգիստ են, բայց վախենալու կարիք չկա:

- Չէ՛, հավատացեք, ինչ որ ասում եմ ճիշտ է: Նրանք հավաքվել են այնտեղ՝ հովտում, մոտ 300-400 հոգի, և արդեն շարժվում են դեպի քաղաք:

Ոստիկանապետը խստորեն ու չարությամբ ասաց.

- Է, թո՛ղ գան: Մեր զինվորների վաշտն ու կազակների հարյուրակն այնտեղ պատրաստ կանգնած են: Մենք նրանց բոլորին չանսատակ կանենք[2]:

Արդեն փետրվարի 6-ի երեկոյան անվատվել էին շատ հայերի և ռուսների հեռախոսները: Ահա թե ինչ է ասել քաղաքի ռեալական ուսումնարանի դասատուն. «Փետրվարի 6-ին, հեռախոսիս ինչ-որ բան պատահեց: Որքան փորձեցի զանգահարել կենտրոնական կայան, ոչ մի կերպ չկարողացա: Հետո իմացա, որ նման բան է պատահել շատերին, առանձնապես հայերի հեռախոսների հետ, որոնցով փորձում էին դիմել իշխանությանը»[3]:

Ջարդի հենց առաջին օրը պարզ դարձավ, որ իշխանության բոլոր մարմինները՝ քաղաքացիական թե զինվորական, գործում են որոշակի ծրագրով և նպատակամղվածությամբ: Գործողությունների բոլոր թելերը գտնվում էին նահանգապետ Նակաշիձեի ձեռքում: Հայերի օգնության բոլոր խնդրանքներին նա նույն բանն էր կրկնում «Ոչինչ անել չեմ կարող, զորք չկա»: Եվ դա

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 137, թ. 43:
[2] Նույն տեղում, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 28:
[3] Նույն տեղում:

այն դեպքում, երբ նախորդ ամիսների բանվորական ցույցերի ժամանակ քաղաքում եղած ուժերը բավական էին լինում մեկ-երկու ժամում ցրելու ցուցարարներին: Կոտորածի ժամանակ, սակայն, այդ ուժը «չքացել» էր:

Ջարդի ժամանակ իրեն արտակարգ ցինիկ էր պահում քաղաքագլուխ Նովիկովին փոխարինած Գանեցկին: Ոչինչ չձեռնարկելով կանխելու համար սպանությունները՝ նա հրաժարվեց նույնիսկ օգնել իր վարչության հայազգի ծառայողներին, որոնք ջարդի պատճառով մնացել էին դումայի շենքում: Նակաշիձեի հետ միասին իրենց ձեռքերը հայերի արյան մեջ թաթախեցին Բաքվի քաղաքի և շրջանի ոստիկանապետ Դիմինսկին և նրա օգնական Բորոդինը, Նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկին և նրա օգնական Սապլիվենկոն, տասնյակ ու հարյուրավոր ուրիշ պաշտոնյաներ: Փետրվարի 6-ին սպանվեց մինչև 50 մարդ՝ բոլորը հայեր: Ի դեպ, այդ օրվա ջարդի ողջ ընթացքում սպանվածների թիվն անհամեմատ գերազանցում էր վիրավորների թվին: Պարզ է, թե ինչու. հարձակվող թուրքերը լավ էին զինված, զոհի վրա հիմնականում դիմահար էին կրակում, չէին ափսոսում ու խնայում մարտական փամփուշտները: Այնինչ հարձակման ենթարկվող համարյա բոլոր հայերը անզեն էին: «Այդ իսկ պատճառով նրանք խրձերի նման ընկնում էին»[1], - գրել է նշանավոր էսէռական գործիչ Վ. Արարատսկին:

Թուրքերը հայտարարել էին, թե իրենք կոտորելու են միայն հայերին, բայց փողոցն անցնելիս պատահական գնդակից սպանվեց ռուս աղքատ ընտանիքի միակ զավակը՝ ռեալական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտ Լեբեդևը: Մանր վիրավորվեցին տեխնիկական ուսումնարանի աշակերտներ Իվան Վոլկովը և Էլյա Լևինը[2]:

Հոսում էր հայի արյունը միայն այն բանի համար, որ նա հայ էր ծնվել:

Այդ քաոսի մեջ, բռնությունների ու լացի այդ տարտարոսում, եթե չհաշվենք առանձին անհատների, չկային համախմբումներ, որոնք գեթ կարեկցանքի ձեռք մեկնեին հրեշային դավադրության զոհերին. շրջապատող համայնքներն, ընդհանուր առմամբ, անհոգ հանդիսատեսի դերում էին, բացառությամբ ռուսների մի մասի:

Համատարած այդ անտարբերությունն էր պատճառը, որ հայերի կողմից թուրքերին արված խաղաղության հորդորները, հաշտության կոչերն ու խրատները մնում էին արհամարհված ու ապարդյուն[3]: Մարդկային տրամաբանությունը, խիղճն ու բարոյականությունն անհարիր էին գազազած խուժա-նի հանդուգն ու անպատիժ արյունոտ խրախճանքին:

«Ե՞րբ արդեոք կը խրատվենք» վերտառությամբ առաջաբանում «Դրոշակը» գրում էր, որ ո՛չ տրամաբանությունը, ո՛չ բարոյական քարոզները և ո՛չ էլ խիղճը դարեր շարունակ անզոր են եղել հայ ժողովրդին փրկելու պարբերական ջարդերից, հալածանքներից, արհավիրքներից:

«Ջարդվա՜ծ, մի՛շտ ջարդված...

Համերաշխության ու սիրո ավետարանը քարոզեցինք դարերից ի վեր և անխնա կոտորվեցինք մեզ շրջապատողներից: Քրիստոնյա, խաղաղ ժողովուրդ հռչակվեցինք Փոքր Ասիայում և կոտորվեցինք: Նաչ ու խաչվառով դիմավորեցինք քրիստոնյա պետության դրոշակակիրներին և կոտորվեցինք: Եղբայրական մեր ձեռքը մեկնեցինք մահմեդական մեր դրկիցներին Անդրկովկասում և կոտորվեցինք: Ե՞րբ արդյոք կխրատվենք, ե՞րբ արդյոք կհասկանանք, որ այդ արյունոտ աղեխարշ պատմությունը՝ իր ողբերգական փիլիսոփայության հետ, իր ստիպողական հրահանգներն ունի, որոնց անպայման պետք է համակերպվել, եթե ձգտում ենք պատվավոր գոյության ու առաջադիմության»[1]:

Թերթը հիշեցնում էր, որ հայը երբեք դեմ չէ համերաշխության քարոզին, նա իր էությամբ խաղաղասեր է: Այդ հատկանիշները բարձրագույն առաքինություններ են, որոնք շատ վաղուց են արմատներ ձգել հայության մեջ: Բայց կործանարար է պարծենալ այդ հատկանիշներով, որոնք, կազմելով հայ ժողովրդի ուժը, միաժամանակ նրա թուլության առանձնահատկություններն են: Խաղաղասիրությունն առանց կռվելու պատրաստակամության, նույնիսկ քաղաքակիրթ կոչվող 20-րդ դարում, պետք է դիտել որպես բացասական, որպես աննորմալ և հակահասարակական երևույթ: Գոյության պահպանման տրամաբանությունը անողոք պահանջներ է առաջադրում ամեն տեղ, և ժողովուրդները գիտակցաբար կամ բնազդորեն վաղուց արդեն ըմբռնել են, որ խաղաղասիրությունն ու կրավորական համակերպությունը բավական չեն գոյության պահպանման համար, որ անվտանգ լինելու համար անհրաժեշտ է ունենալ դիմադրության և չարիքին ընդդիմանալու ոգի, իսկ դրա համար ամենից առաջ պետք է զինվել:

«Ժամանակն է, - շեշտում էր «Դրոշակը», - որ մենք ևս ըմբռնենք այդ ճշմարտությունը և ըմբռնենք ազգովին, այլ ոչ թե սահմանափակ փոքրամասնությամբ: Բաքվի հսկայական ողբերգությունը մի անգամ ևս այդ պահանջն է դնում մշտահալած ու բազմաչարչար հայության առջև»[2]:

Երեկոյան ժամը 5-ին Բաքվի տեխնիկական ընկերության դահլիճում նախապես նշանակված էր ինժեներների և նավթարդյունաբերողների ժողով, որը և տեղի ունեցավ: Ժողովում հարուստ նավթարդյունաբերող, ինժեներ Կոնստանտին Խատիսյանը հետաքրքիր զեկուցում կարդաց գործադուլների ազատության մասին: Ներկա էին նաև սոցիալ-դեմոկրատներ: Բանվորներից մեկը ճառ արտասանեց՝ նշելով, որ ինքնակալությունը ինչպես բանվորների, այն-

---

[1] В. Араратский. Подвиги царизма. Кровавые февральские дни в Баку, Издание Армянской революционной федерации и партии социалистов-революционеров, Женева, 1905, стр. 6.

[2] ՀՀ ՀԱԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 128, թ. 8:

[3] Տե՛ս Հայկ Աստարյան, Հայաստան արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 66:

[1] «Դրոշակ», N3(156), մարտ, 1905, էջ 33:

[2] Նույն տեղում:

պես էլ գործատերերի թշնամին է, և որ այդ թշնամու տապալումը կենսական անհրաժեշտություն է բոլորի համար: Դահլիճով մեկ տարածվեց «Կորչի՛ ինքնակալությունը» համերաշխ կոչը: Ինժեներներից ոմանք նույնպես արտասանեցին արմատական ճառեր: Այնուհետև փող հանգանակվեց բանվորական հանրակացարանները կարգի բերելու նպատակով: Տեխնիկական ընկերության անունից բանաձև ընդունվեց քաղաքական մի շարք ազատությունների պահանջով:

Այդ ժամանակ մոտակա փողոցներում կրկին կրակոցներ լսվեցին: Անհնար էր տուն գնալը: Որոշեցին հավաքվել հայտնի նավթարդյունաբերող և քաղաքային դումայի անդամ Ղուկասովի մոտ, որի տունը այնքան էլ հեռու չէր: Բայց այնտեղ հասնելու համար անհրաժեշտ էր պահակախումբ: Կ. Խատիսյանը հեռախոսով կապվեց նահանգապետի հետ՝ խնդրելով ուղարկել կազակներ կամ ոստիկաններ: Նահանգապետը խստորեն մերժեց՝ ասելով, որ ինքը ժողովների ապահովության համար կազակներ չունի:

– Իսկ ես որտե՞ղ դիմեմ:

– Դիմեք ոստիկանություն[1]:

Խատիսյանը դիմեց ոստիկանապետին, բայց սա նույնիսկ չմոտեցավ հեռախոսին:

Իշխանությունների հետ «բանակցելուց» հետո Խատիսյանը ժողովի մասնակիցներին տեղյակ է պահում նահանգապետի հետ իր հեռախոսային խոսակցությունը: Նրանց այն հարցին, թե հնարավոր չէ՞ արդյոք հեռագիր ուղարկել ներքին գործերի նախարարին և հենց իրեն՝ Նիկոլայ ցարին, Խատիսյանը պատասխանում է. «Այդ մասին մոռացեք»[2]:

Թուրքերի տմարդի հարձակումը հանկարծակիի էր բերել քաղաքի հայկական համայնքի ղեկավարությանը, նաև՝ Հ.Ց. դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեին:

Միքայել Վարանդյանը գրել է. «Աղետն այնքան անակնկալ էր, որ Հ.Ց. դաշնակցության կազմակերպությունը նույնպես չշմել էր և կորցրել գլուխը: Ուժերը ցիր ու ցան էին, կռվող տարրերու մեծագույն մասը կը գտնվեր շրջակա վայրերուն մեջ՝ Սև քաղաք, Բալախանի և այլն: Նրանց կենտրոնացումը խիստ դժվարին էր, քանի որ ոստիկանությունը կտրել էր ճանապարհները, արգելում էր հայերի հոսանքը շրջաններից դեպի քաղաք, կամ եթե թույլատրում էր, ապա զինաթափ էր անում քաղաք եկողներին, մինչդեռ թուրք տարրը երթևեկում էր ազատորեն և զինված»[3]:

Իհարկե, անակնկալն այնքա՜ն զարհուրելի ու այնքա՜ն կորստաբեր չէր լինի, եթե հայերը նվազ հավատ տածեին թուրք դրացու բարեկամության հանդեպ:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ.թ. 23-26:
[2] Նույն տեղում, թ.թ. 28-29:
[3] Միքայել Վարանդեան, Հ.Ց. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 45:

Փետրվարի 6-ի երեկոյան դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն նահանգապետ իշխան Նակաշիձեին ուղարկեց հետևյալ սպառնագիրը.

«Պրն. նահանգապետ.

Քաղաքում մի քանի ժամ շարունակ տեղի ունեցած արյունալի դեպքերը մեզ ներշնչեցին մի կարծիք, որը մեզ համար դառնում է համոզմունք, որ թափված ամբողջ արյան պատճառը Դուք եք և Ձեզ ենթակա ոստիկանությունը: Հարկավոր չհամարելով ապացույցներ բերել Ձեր հանցագործ վարմունքի համար, որը բազմաթիվ անմեղ մարդկանց կորստյան պատճառ եղավ, Հայ յեղ. դաշնակցության կենտրոնական կոմիտեն, նախքան իր վրա դրած սրբազան պարտականության կատարմանը ձեռնարկելը, այն է՝ պաշտպան հանդիսանալ անմեղ զոհերին, ավելորդ չի համարում հայտարարել Ձեզ, պրն. նահանգապետ, որ եթե Ձեր ձեռքում եղած բոլոր միջոցներով արյունահեղությունը չեք դադարեցնի, այդ դեպքում դուք պատասխանատու եք Ձեր և Ձեր մեղսակիցների արյունով:

Հ.Ց.Դ. Բաքվի կենտրոնական կոմիտե»[1]:

(կնիք)

Հանցավորներին պատժելը վճռված խնդիր էր կազմակերպության համար: Թուրքերի կողմից կատարվող նախճիրի պահին էր, որ ծնունդ առավ հայերի դիմադրությունը: Փետրվարի 6-ին հանկարծակիի եկած հայերը հաջորդ օրը՝ փետրվարի 7-ին, աստիճանաբար ուշքի էին գալիս: Հ.Ց. դաշնակցության կենտրոնական կոմիտեն որոշեց հակադարձել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով:

Այդ ճակատագրական պահին անգնահատելի եղավ հին հայդուկ, դաշնակցության նշանավոր ռազմական գործիչ Նիկոլ Դումանի (Նիկոլ Տեր-Հովհաննիսյան) վճռորոշ դերը:

Դուման ...տառապյալ ժողովրդի արիասիրտ ու ազնիվ զավակներից մեկն է, որի կյանքը մի դյուցազներգություն է՝ լի մրրկահույզ դրվագներով: Միշտ անվկանդ ու անշեջ հավատով էր լցված դեպի ազգային հեղափոխության հաղթանակը, հեղափոխություն, որ նրա համար դարձել էր նվիրական պաշտամունք:

Երբ ջարդն սկսվեց, Դումանը գտնվում էր Բալախանիի նավթահանքերի շրջանում, ուր նա աշխատում էր որպես Արշակ Ղուկասյանի նավթահանքերի կառավարիչ: Աբրահամ Գյուլխանդանյանը հեռախոսի մոտ է կանչում Դումանին և նրան հայտնում, որ թուրքերը քաղաքում սկսել են ջարդել հայերին, և որ քաղաքի իշխանությունները, որոնց ձեռքի տակ այդ ժամանակ 6000-ի հասնող ռուսական զորաբաժին կար, ոչ մի միջոց ձեռք չեն առնում արգելք հանդիսանալու արյունահեղությանը: Լուրն այնքան անսպասելի էր, որ Դումանը սկզբում կարծում է, թե Աբրահամը կատակ է անում և ուզում է իրեն մի կերպ քարշ տալ ժողովի:

[1] Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 14:

Աբրահամի լուրջ պնդումներից հետո Դումանը չտապեց Բաքու հասնել հանքերը քաղաքի հետ կապող երկաթուղով, բայց պարզվեց, որ երկաթգիծը կտրված է թուրքերի կողմից: Ուստի ստիպված՝ նա լծում է ձիակառքը և, հետը վերցնելով մարտիկներից մեկին, իսկույն մեկնում է թուրքական գյուղերի միջով և, 20 կիլոմետր ճանապարհ կտրելով, փետրվարի 6-ի երեկոյան հասնում է քաղաք:

Տեղ հասնելուն պես Դումանը, առանց ժամանակ կորցնելու, հապշտապ ձեռնարկում է Բաքվի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործը՝ Իսահակ Մելիքյանի «Ռեմբրանդտ» նկարչատունը, որը գտնվում էր Տորգովայա և Մարինսկայա փողոցների անկյունում, դարձնելով կենտրոնատեղի: Այդ պահին նա իր տրամադրության տակ ուներ յոթ հոգուց բաղկացած զինված խումբ միայն, բայց գիշերն իսկ կարողանում է կազմակերպել և ի մի բերել 60 կովողների, որոնք պետք է առավոտյան պաշտպանեին հայկական թաղերը: Տղաների մեծ մասն առանց զենքի էր, մնացածների ձեռքին մի քանի ատրճանակներ էին՝ հիմնականում «Բորխարդ» և «Սմիտ-վեսեն» սիստեմի*:

---

* «Հայրենիք» ամսագրի 1956թ. N10-ում «Դրո» վերտառությամբ տպագրած իր հոդվածում դաշնակցական գործիչ Թադե Պետրոսյանը, նկարագրելով Դրաստամատ Կանայանի՝ 1905թ. Բաքվի շրջանի գործունեությունը, նրան վերագրել է մի շարք չկատարած գործեր, նաև չմոռանալով դեպքերի չհիմնավորված մասնակից դարձնել իրեն: Անդրադառնալով Բաքվի կոտորածների առաջին օրվա, փետրվարի 6-ի, դեպքերին՝ նա հետևյալ հնարովի պատմությունն է արել. Մելիքյանի լուսանկարչատունը Նիկոլ Դումանը նշանակել էր իր շտաբի վայրը: «Ներսում Դումանը, Ա[բրահամ] Գյուլխանդանյանը, Հայր Աբրահամը և Դաշնակցական Խեչոն, մի սեղանի շուրջ նստած, ինքնապաշտպանության ծրագիր էին մշակում: Իսկ մուտքի մոտ, ոտքի կեցած, անհամբեր սպասում էր անվեհեր երիտասարդների մի խումբ: Այնտեղ էին՝ Մարտիրոս Զարուխյանը, Մկրտիչ Աղամալյանը, Հմ[այակ] Ջանփոլադյանը, Առյուծ Ավագը, Թադ[եոս] Ամիրյանը»: Հոդվածագիրը չի մոռանում այս խմբի մեջ հիշատակել նաև իրեն, ապա շարունակում է. «Հագիվ էինք իրարու բարև ասել, երբ ներս մտավ Դրաստամատ Կանայանը՝ զինվորական համազգեստով» («Հայրենիք» ամսագիր, N10(368), հոկտեմբեր, 1956, էջ18): Այնուհետև նկարագրելով, թե ինչպես իրենք հենց այդ օրը՝ փետրվարի 6-ին, ջախջախիչ հակահարված են տվել թշնամուն, և թե ինչպես դրանից հետո արժանացել են Դումանի գովեստի խոսքերին, Թադե Պետրոսյանը շարունակում է. «...Դումանը մոտեցավ ամեն մեկիս և համբուրեց մեր ճակատները: Երբ մոտեցավ Դրոյին, գրկեց նրան և ասաց. «Այս արյունոտ պայքարի մեջ մի նոր գյուտ արի: Այդ գյուտը Դրաստամատն է: Սա մեծ ապագա պիտի ունենա, եթե արժանավայել միջավայրի մեջ մնա: Ապրի՛ս, տղա՛ս, քեզ վրա մեծ հույս ունեմ»: Դրոն անհուն ուրախությունից լացավ: Մեծ ռազմիկի գովքն ամենամեծ վարձատրությունն էր ռազմիկի համար: «Պարոն Դուման, պիտի աշխատեմ քո հույսդ արդարացնել», - եղավ Դրոյի պատասխանը» («Հայրենիք» ամսագիր, N10 (368), 1956, էջ 19):

Այս հնարովի պատմությանը ժամանակին անդրադարձել է Վարդգես Ահարոնյանը և քննադատական հոդվածով հանդես է եկել նույն ամսագրում (տե՛ս N4 (374), ապրիլ, 1957, էջ 89-92): Նա միանգամայն ճիշտ է նկատել, որ ա) Դրոն Պյատիգորսկից Բաքու է հասել փետրվարյան կոտորածներից մի քանի օր հետո, բ) Ինքը՝ Թադեն, չի եղել Մարտիրոս Զարուխյան և Ընկ. խմբի մեջ, գ) Այդ խմբի մեջ չէին կարող լինել նաև Դաշնակցական Խեչոն և Հայր Աբրահամը (Ավետիք Սահակյան)՝ այն պարզ պատճառով, որ այդ ժամանակ նրանք Բաքվում չէին, դ) Թադեի նկարագրած Դումանը - ճառախոս,

Հրացանաձգությունը դադարեց, բայց Դումանի մտահոգությունը տվյալ պահին թուրքական թաղերում ապրող հայերի վիճակն էր, որոնցից արդեն սպանվել էր ավելի քան 20 հոգի:

Երկրորդ օր, փետրվարի 7(20), երկուշաբթի:

Գիշերն անցավ համեմատաբար հանգիստ: Ոչ ոք չէր կարծում, թե դեպքերը կարող են վերսկսվել: Բայց գիշերային խավարի մեջ ընկղմված սարսափների քաղաքը քնած չէր, ջարդարարները անգործ նստած չէին: Քաղաքի մի քանի շրջաններում անտեսանելի ձեռքեր մուսուլմանների տներին նշան էին անում «Ցա ալլահ» («Աստծո հետ»), իսկ ռուսների տների վրա «Ուրուս» («ռուս») մակագրություններով: Դա նշանակում էր, որ առանց նշանների տները հայերինն են և ենթակա են ոչնչացման[1]:

Փետրվարի 7-ի առավոտյան Բաքուն կարծես սկսեց ապրել սովորական կյանքով: Մարդիկ շտապում էին աշխատանքի, բացվեցին խանութները, արհեստանոցներն ու կրպակները: Քաղաքը վերստացավ իր սովորական կերպարանքը:

Բայց առավոտյան ժամը 10-ից նորից վիճակը փոխվեց: Հայոց եկեղեցուն հարակից Պարապետ հրապարակից սկսվող և դեպի մուսուլմանական թաղ տանող հատվածում հանկարծ հայտնվեց հրացանը ձեռքին մի թուրք ձիավոր, որն սկսեց աջ ու ձախ կրակել և վարգով սլանալ դեպի մուսուլմանական թաղում գտնվող Ղուբի հրապարակը: Անմիջապես ամեն ինչ խառնվեց, ծայր առավ խուճապը:

Հրացանաձգությունն այս անգամ արդեն սկսվեց ոչ թե կենտրոնից, այլ քաղաքի այն բոլոր կողմերից, ուր գտնվում էին թուրքերի թաղերը: Սարսափ ու տագնապ. վայրկենապես փակվեցին խանութներն ու արհեստանոցները, ամայացան փողոցները: Ով կարողացավ՝ իրեն տուն գցեց, ով չկարողացավ՝ մնաց խանութում, գրասենյակում, մի խոսքով, ուր որ գտնվել էր այդ րոպեին: Ամեն մեկը թաքնվել էր իր տեղում, ընտանիքի անդամները՝ միմյանցից բաժանված, միմյանց կացությունից անտեղյակ:

Ահա թե ինչ ցուցմունք են տվել այդ օրը Բազարնայա փողոցում տեղի ունեցած դեպքերի ականատեսներ Ա. Փարսադանյանը, Բ. Քոչարյանը և Ս. Իսահակյանը. «Մենք տեսնում էինք, թե ինչպես են ջարդում փողոցի երկու կողմերում եղած խանութները և թալանի տալիս: Ոստիկանությունը, ինչպես միշտ, անտարբեր հանդիսատեսի դերում էր»[2]:

մարտիկների ճակատը համբուրող, նրանց բոլորին «ջան»-ով դիմող - իրական ոչ մի առնչություն չունի մեծ հայդուկապետի հետ, անհարիր է նրա բնավորության գծերին: «Դրոյի կատարած գործերը բավական են՝ նրան մեր նորագույն պատմության մեջ իր արժանավայել տեղն ընդմիշտ ապահովելու համար: Իսկ Դրոյին վերագրել գործեր, որ նա չի կատարել, նշանակում է չհարգել նրա հիշատակը» (նույն տեղում, էջ 92), - այսպես է իր ասելիքն ամփոփել Վ. Ահարոնյանը:

[1] ՀՀ ՀՔԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 136, թ.թ. 40-41:

[2] Նույն տեղում, գ. 234, թ. 10:

Արյունարբու գայլերի ոհմակները ատրճանակներով ու դաշույններով վխտում էին փողոցի մի ծայրից մյուսը՝ ավելացնելով անմեղ զոհերի թիվը: Ամբողջ փողոցի վրա թափված էին դիակներ: Ոստիկաններն ու կազակները երկու բան էին անում՝ թուրքերի հետ մասնակցում էին կողոպուտներին և հաբաքում ու սայլերի մեջ էին նետում դիակները: Կազակներից մեկը, տեսնելով կողոպտած ապրանքներով սայլ քաշող թուրքին, տնտղում է նրա բեռը, ապա, փաղաքշանքով ուսին խփելով, ասում է. «Կեցցե՛ս, ապրե՛ս դու, գնա՛». մի ուրիշ կազակ թուրքից վերցնում է ատրճանակը և շուտումուտ տալուց հետո ժպտալով վերադարձնում նրան՝ չմոռանալով նաև շոայլել գովասանքներ[1]:

Ահա փողոցում կրկին երևաց նահանգապետը՝ ոստիկանապետի ուղեկցությամբ և կազակներով շրջապատված: Իջնելով կառքից՝ նա և ոստիկանապետը ձեռքով բարևում էին մոտեցող մարդասպաններին, ապա զրուցում նրանց հետ: Այդ պահին նրանց շուրջը հավաքվեց թուրքերի մի մեծ բազմություն. բոլորն էլ առանց քաշվելու կրում էին հրացաններ ու դաշույններ: 10-15 րոպե անց նահանգապետը հեռացավ, նրա հետ միասին հեռացան բոլոր կազակներն ու զինվորները[2]:

Ջարդարարները նորից գործի անցան՝ հարձակվելով մարդկանց, տների, խանութների վրա[3]: Կեսօրից հետո նրանց հարձակումներն Է՛լ ավելի սաստկացան: Հազարի հասնող թուրք ամբոխը Զեմբերեքենդից գալով՝ առաջանում է դեպի հայոց եկեղեցին՝ խուժելու համար հայկական թաղերից ներս:

Այդ ժամանակ կենտրոնատեղի դարձած Մելիքյանի «Ռեմբրանդտ» լուսանկարչատանն էին գտնվում Դումանը և նրա յոթ հոգուց կազմված զինված խումբը, որի առավել նշանավոր դեմքերն էին դաշնակցության արի մարտիկներ Մարտիրոս Զարուխյանը, Մկրտիչ Աղամալյանը, Հմայակ Ջանփոլադյանը և Ախալցխացի Մկոն, իսկ բակում խմբված էին ինքնապաշտպանության ընդունակ երիտասարդները՝ պատրաստ հրամանի:

Եվ ահա, յոթ անձնուրաց հայորդիների այդ խումբը, Դումանի գլխավորությամբ, առաջինը նետվեց Զեմբերեքենդից խուժող թուրք ամբոխին ընդառաջ՝ փրկելու համար ազգակիցների կյանքն ու պատիվը: Լուսանկարչատանը գտնվող Աբրահամ Գյուլխանդանյանը և Հ.Ց.Դ. Բաքվի կազմակերպության կենտրոնական դեմք Լևոն Թադևոսյանը (Պապաշա) փորձում են արգելք լինել այդ գերհանդուգն քայլին և Դումանին խնդրում են ընդառաջ չգնալ կատաղած ամբոխին, չվտանգել սեփական անձն ու խմբի անդամների կյանքը, բայց ստանում են կտրուկ մերժում: Դումանը գիտեր անելիքը:

Իր փոքրիկ «Սմիտ-վեսեն» ատրճանակով Դումանի խմբին միացած Վահան Մինախորյանը հետագայում այսպես է նկարագրել Նիկոլի կերպարը. Նա «Նույն խմբին էր, որից ստեղծվել էին Մադաթյանները, Լազարյանները, Լորիս

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 234, թ. 11:
[2] Նույն տեղում, գ. 136, թ. 13:
[3] Նույն տեղում, գ.234, թ.թ. 10-11:

Մելիքովները, տարբեր էին միայն ժամանակներն ու պայմանները: Հայ իրականության մեջ նրան վիճակված էր նույն բախտը՝ ինչ հարյուրավոր խմբապետերի: ... Նա ամեն գործի մեջ իր նախամտածված ծրագիրն ուներ, որ գործադրության էր դնում բոլոր այլ միջոցները սպառելուց հետո: Եթե մի բան կարող էր այլ կերպ լինել, քան կարծում էր ինքը՝ փորձում էր: Այստեղից՝ նրա անվերապահ, բնական դեմոկրատիզմը, սուր ու լարված ուշադրությունը դեպի շրջապատը, մարդիկ, կարծիքները: Միաժամանակ նա չէր պատկանում այն-պիսիների շարքին, որոնք ձգտում են դեմոկրատիզմի միջոցով պատասխանատվությունը բաժանել: Ո՛չ: Վճռական պահին ինքն էր ճշտում ամեն բան և միայն ինքն էր պատասխանատուն: Բայց նրա վճռականությունն անվարան չէր: Մի ամբողջ օր նա տատանումների մեջ էր՝ առաջին գնդակն արձակելու հրահանգ տալուց առաջ: Ընդհարումներից խուսափելու բոլոր հույսերը չէին մարել դեռ: Բայց երբ անխուսափելի դարձավ այդ, նա հետապնդեց տրված հրահանգի ամենադաժան գործադրությանը»[1]:

Եվ Դումանը նույն կերպ վարվեց այս անգամ ևս, այս վճռական րոպեին, երբ թուրք ամբոխը հոխորտալով առաջ էր գալիս: Վ. Մինախորյանն ընթերցողներին է հանձնել պահի պատկերը.

«Հանկարծ լուսանկարչատնից դուրս եկավ ջղուտ, ոսկրոտ, բարձրահասակ Նիկոլը:

- Ո՞վ կա այստեղ ... Մուկուչ*, Մարտիրոս**, Համո***, Մկո,**** դուրս ելե՛ք և ուր որ թուրք, թաթար տեսնեք, խփեցե՛ք, անխնա կոտորեցե՛ք»[2]:

Կատարելով հրամանը՝ խումբը հավաքվեց: Խմբին միացան նաև ատրճանակներ ունեցող երիտասարդներ: Մարտիկները Մկրտիչ Աղամալյանի գլխավորությամբ հազիվ էին դուրս եկել փողոց, երբ դիմացի թուրքական բարձրադիր շուկայից մի մեծ խումբ թուրքեր կրակ բացեցին նրանց ուղղությամբ, ապա հարայհրոցով վազելով՝ բռնեցին Վորոնցովսկայա փողոցի վերնամասը: Սկսվեց կռիվը, որի ընթացքում թուրքերը հասան հայաշատ շրջանի կենտրոն և բռնեցին Արմյանսկայա զուգահեռ փողոցի անկյունը, եկեղեցու մոտ: Անհնարին եղավ այդտեղ երկար դիմադրելը, քանի որ հակառակորդը զինված էր հրացաններով և հեռվից էր ծեծում տարբեր ատրճանակներով զինված հայերի դիրքերը: Պարզ էր, որ մարտիկների համար կռիվը կարող էր արդյունավետ լինել միայն կարճ տարածության վրա: Նրանք ստիպված եղան նահանջել դեպի Տատարսկայա փողոցի վերջնամասը, իսկ թուրքերը գրավեցին նրանց դիրքերը: Սկսվեց մի կատաղի կռիվ եկեղեցու թիկունքի կարճ փողոցի անկյունից անկյուն: Հայ մարտիկների դիրքերի պաշտպանությունը գնալով

[1] «Հայրենիք», N 7 (270), հուլիս, 1948, էջ 22:
*Մկրտիչ Աղամալյան:
**Մարտիրոս Զարուխյան:
***Հմայակ Ջանփոլադյան:
****Ախալցխացի Մկո:
[2] «Հայրենիք», N 7 (270), հուլիս, 1948, էջ 18:

անհնարին էր դառնում:

Ճիշտ այդ պահին էր, որ հանկարծ տղաների մոտ հայտնվեց Նիկոլ Դումանը: Կրկին խոսքը տանք այդ կռվի մասնակից Վահան Մինախորյանին. «...Հանդարտ, բանիմաց, շրջահայաց Նիկոլը վայրկյանի մեջ պարզել էր իր անելիքը: Մուկուչին, Համոյին ձեռքով ցույց տալով Տատարսկայա փողոցի մուտքը, նա հրամայեց.

- Երբ ձայն տամ, բռնեցեք այդ փողոցի անկյունը. մնացածներդ հետ քաշվեցեք»[1]:

Նույն վայրկյանին Նիկոլը, ատրճանակը ձեռքին, պոկվեց տեղից և, վազելով առաջ, իր բարձր հասակով կանգնեց փողոցի մեջտեղում, հենց թուրքերի դեմ-դիմաց, և սկսեց կրակ տեղալ նրանց վրա:

Զդիմանալով անսպասելի հանդուգն արարքին, թուրքերը խուճապահար դուրս ցատկեցին դիրքերից և փախան: «Նիկոլը հետապնդում էր, մենք ձագերի պես նրա հետևից վազում էինք»[2], - վերհիշել է Վ. Մինախորյանը: Նրան հետևեցին մարտիկները և սկսեցին հալածել թշնամուն, որը, մի քանի դիակ թողնելով, չքացավ աչքից:

Հայ մարտիկների մեկ-երկու ժամ տևած խիզախ գործողությունների շնորհիվ կեսօրին մոտ սանձվեց թուրք խուժանը: Քաղաքի կենտրոնը գրավվեց, և վերականգնվեց կապը հայկական տարբեր թաղամասերի միջև:

Մի բուռ քաջերի անվեհեր դիմադրությունը, ապա և շեշտակի գրոհը շշմեցրել էին իրենց անգթությունների մեջ մինչ այդ բոլորովին անպատիժ մնացած ջարդարարներին: Մյուս կողմից, անմիջապես բարձրացավ հայերի դիմադրական ոգին: Նրանց մեջ հույս էր արթնացրել փողոցներ դուրս եկած վրիժառուն, որի ձեռքում որոտում էր փրկարար հրացանը: Նրանք արդեն մտածում էին, որ եթե իրենք կազմակերպվեն, ապա ամենուրեք կարող են փակել մարդասպանների ճանապարհը: Այդ հոգեփոխությունը սկիզբն էր այն ուժգին հակադարձության, որ հայերը տալու էին հետագա օրերին:

Տեղեկանալով Դումանի փոքրաթիվ խմբի գործողության մասին՝ քաղաքի տարբեր տեղերում առաջացան ինքնապաշտպանական ջոկատներ, որոնց ղեկավարությունը ստանձնեց Հ.Ց. դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն: Ջոկատների մեջ մտան նաև այդ օրերին Բաքվում գտնվող արևմտահայ հայտնի հայդուկներ Մոկացի Գրիգորը և Առյուծ Ավագը, որոնք քաջաբար կռվեցին Բաքվի առաջին ընդհարումների օրերին, որից հետո անցան գավառներ:

Անդրադառնալով Բաքվի ընդհարումների օրերին Նիկոլ Դումանի կատարած գործի նշանակությանը՝ Ա.Գյուլխանդանյանը գրել է.

«Կարելի է առանց վարանումի ասել, որ եթե փետրվարի օրերին Դումանը չերևար Բաքվի մեջ, Բաքվի ինքնապաշտպանության գործը կամ չէր հաջողվի,

[1] «Հայրենիք», N7(270), հուլիս 1948, էջ 20:
[2] Նույն տեղում:

կամ կստանար պատահական բնույթ, և, հավանորեն, Բաքվի հայությունը սոսկալիորեն կտուժեր՝ առանց կարողանալու հակառակորդին տալ արժանի պատասխանը:

Շնորհիվ Դումանի սուր գիտակցության և վճռական կեցվածքի, մեր մարտիկները, որոնք մինչ այդ անվճռական դիմադրության մեջ էին, և ո՛վ գիտե, թե ինչպես պիտի փրկեին իրենց կյանքը թաթար խուժանից, Դումանի մի հրամանը ստանալուն պես դուրս եկան տատանողական հոգեկան վիճակից և բոլորովին կերպարանափոխված՝ հերոսների պես դիմադրել սկսեցին իրենցից տասնապատիկ ավելի ուժերին»[1]:

Բայց, ի տարբերություն հանդուգն հայ քաջերի, հայ բուրժուաքաղքենիական դասը շարունակում էր մնալ հոգեկան խաթար վիճակում՝ հույսը կապելով աստծո ողորմածության հետ:

Հայ բուրժուաքաղքենիներին պատած հոռետեսության ու հոգեկան ճգնաժամի և նրանց ուղղված Նիկոլ Դումանի սպառնալիքների մասին հետագայում (1919թ.) Հովհաննես Քաջազնունին պատմել է Ռուբեն Տեր-Մինասյանին: Դարասկզբին Քաջազնունին Բաքվում աշխատում էր որպես ճարտարապետ-ինժեներ: Թեև փետրվարյան կոտորածների օրերին նա դեռ դաշնակցության անդամ չէր, բայց ակտիվ մասնակից էր նրա ձեռնարկումներին:

Կոտորածների երկրորդ օրվա այս դեպքը Հովհ. Քաջազնունին այսպես է ներկայացրել.

«Աչքովս տեսածը հայ-թաթարական կռվի օրերին էր, երբ թաթար-ռուս գործակցությունը ակներև եղավ հայերի դեմ, երբ պատռվեց քողն այն առասպելին, թե «քրիստոնյա ցարական Ռուսիան գրավականն է հայության երջանկության»: Պետք էր տեսնել, թե ի՜նչ չփոթ, հուսախաբություն և հուսահատություն էր պատած հայ բուրժուա, կղերական և մտավորական դասերին: Նրանք դարձած էին նավակ առանց առագաստի և ղեկի: Ի տես թաթարական փոթորիկին, նրանք անեծք ու հայհոյանք էին կարդում ռուսական ծուռ խաչին, որ երեկ պաշտում էին: Եվ ակամա նրանք իրենց աչքերը դեպի մեզ էին ուղղում»[2]:

Նշելով, որ ձախերը նույնպես սարսափի էին մատնվել ի տես թուրք խուժանին, Քաջազնունին այնուհետև շարունակել է իր պատմությունը.

«Մերոնք ևս (նկատի ունի աջերին: - Հ.Ս.) այս պատասխանատու վայրկյանին, իրենք իրենց կորցրած՝ իրենց անելիքը չգիտէին. մէկ նալին (պայտին) էին զարնում, մեկ՝ մեխին: Բայց ժամանակը պարապ չէր անցնում: Սրտամաշ լուրեր էին գալիս յուրաքանչյուր վայրկյան, որոնք մեզ ավելի էին անդամալուծում: Ահա այդ վայրկյանին էր, որ հասկրցա, թե ո՞վ է բուն առաջնորդը,

[1] Ա.Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 62:
[2] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա, Գ հրատ., Թեհրան, 1982, էջ 308:

ճգնաժամի մարդը: Այդ՝ Նիկոլն էր, որ միշտ լուռ լսում էր: Նա վեր ելավ տեղից, հանգիստ ու դաժան, և դարձավ դեպի աջ՝ դեպի կղերական, բուրժուա և շատախոս մտավորականները և ասաց.

- Ձայներդ կտրեցէք: Հասկացէք վերջապէս, որ մինչև այժմ եղած ձեր աշխատանքները **սէլաֆը** (հեղեղը) պիտի տանի: Ձեր հաշիվները հիմքից սխալ են: Ձեզ ինչ որ ասեմ այն ալ կատարեցէք:

Ապա դարձավ դէպի ձախ.

- Դուք ևս գլխներիդ զոռ տված՝ **վերասիա, վերասիա** (ապառիկ, անհիմն) բաներ եք խօսում: Մի քանի ժամից եթէ առաջը չառնենք, բոլորիդ էլ մայրը լաց պիտի լինի: Ելեր՝ սխտորի ու սոխի քաղցրը կ'որոնէք: Նրանց քաղցրը չկայ: Իսկ եթէ յեղափոխություն կ'ուզեք, ձեր ձեռքը բռնող չկայ: Ահավասիկ ձեր գուբերնատորը (նահանգապետը), ձեր հրամանատարները իրենց շներով միացած են իսլամ թաթար խուժանին և ուզում են ձեզ կովի պես մորթել: Ելե՛ք, սպանեցեք նրանց, և ես ձեզ ափարիմ կ'ասեմ:

Դարձավ դեպի մեզ.

- Թշնամին զինված և անզէն, էրմենիքենդ է անցած և Պարապետ հասած: Դուք նստել՝ **չանկեա** (ծնոտ) եք ծեծում:

Վերջապէս, խօսքը ուղղելով բոլորին, ասաց.

- Ցրվեցե՛ք, և թո՛ղ ամէն մարդ գործի անցնի: Կնիկները՝ տունը, պոլոճիկ (երիկամունք, քաջություն) ունեցողը թող փողոց իջնե՛: Ինչ որ ես կանեմ, ինչ որ ես կասեմ, այն էլ կատարեցէք՝ եթե ձեր բուրդը բարերար չէ՛ք ուզում հանել:

Բոլորը զառ դարձան: Նիկոլը, առանց որոշման, բոլորին գլխավորն էր դարձած: Մեկ ժամ չանցած՝ լուր առին, որ Նիկոլը կովի մէջ է և, ընկած թաթարների մեջ, կոտորում է նրանց: Մենք առանց երկյուղի սպասում էինք նրա հաղթության:

Ահա այս է առաջնորդը, որ կարող է մի ժամում ամէն ինչ փոխել»[1]:

Արդեն փետրվարի 7-ի կեսօրին 300-ի չափ երիտասարդներ կովի պատրաստ ներկայացել էին Նիկոլին: Նրանց մի մասը զինված էր տարբեր տեսակի, հիմնականում որսորդական հրացաններով, իսկ մնացածները եկել էին առանց հրազենի՝ զինված միայն դաշույններով: Նրանք հույս ունեին զենք ստանալ դաշնակցության կենտրոնից, բայց այնտեղ էլ զենք չգտնվեց: Բանից պարզվեց, որ բոլորովին առասպել է այն կարծիքը, թե հայերը լավ զինված են: Բաքվի հայությունն, ըստ էության, անզեն էր:

Հայերն անհոգաբար աննպատակահարմար էին համարել զենք ձեռք բերելու համար ավելորդ դրամ ծախսելը:

Դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն զբաղված լինելով Ռուսաստանից թե՛ Կասպից ծովի վրայով (Աստրախանում վարձված «Աննա» բեռնանավով) և թե՛ ցամաքով զենք տեղափոխելու և Արևելյան Անդրկովկասի զանազան հայաբնակ վայրերում պահեստավորելու, ապա և Արևմտյան Հայաստան առաքելու գործով, դրա գոնե մի փոքր մասը չէր պահել իր մոտ, նույնիսկ այն ժամանակ, երբ սկսել էին համառորեն լուրեր պտտվել, թե քաղաքում նախապատրաստվում է հայերի ջարդ: Դաշնակցության մարտական խմբերի միայն մի քանի անդամներ էին, որ անձնական միջոցներով զենք էին ձեռք բերել և հանձնել կազմակերպությանը՝ 20-25 հրացան և երկու տասնյակ ատրճանակ: Այդ հրացանները մի քանի հազար փամփուշտների հետ պահվում էին Սիմոն Սիմոնյանի բնակարանում, որը գտնվում էր Շամախինկա թուրքական թաղամասում, և Սիսիանի Դարաբաս գյուղացի, դաշնակցական Գասպար Տեր-Մկրտչյանի՝ Մալականսկի այգու դիմաց գտնվող ցուցատախտակներ նկարելու արհեստանոցում: Դրա հարևանությամբ էր գտնվում հնչակյան ղեկավար գործիչներից Սերգո Մարտիկյանի ինքնաեռներ սպիտակեցնող արհեստանոցը, որը նույնպես Հ.Ց.Դ. կազմակերպության կողմից երբեմն օգտագործվում էր որպես զինապահեստ: Մի քանի ատրճանակներ էին պահվում Բալախանսկայա փողոցի վրա գտնվող «Ապտեկա գլազ» դեղատանը, Տատարսկայա փողոցի վրայի՝ Դավիթ Ռոստոմյանի լուսանկարչատանը, ինչպես նաև նրա եղբորը պատկանող լուսանկարչատանը, որը գտնվում էր Մարինսկայա փողոցի վրա:

Տեսնելով այդ տագնապալի վիճակը՝ հայերից ոմանք իրենց մոտ եղած հրացաններն ու ատրճանակները հրապարակ բերեցին և հանձնեցին կովի պատրաստ երիտասարդներին: Դրան գումարվեց Բաքվի զինվորական կայազորում ծառայող հայ զինվորների կողմից մեծ դժվարությամբ պետական պահեստներից հանված և Նիկոլ Դումանին հանձնած սահմանափակ թվով զենքն ու զինամթերքը: Մելիքյանի լուսանկարչատան սենյակներից մեկը վերածվեց դաշնակցության զինանոցի: Բայց պահանջի համեմատ՝ բերածը չնչին էր: Իսկ եթե կռիվը երկար տևե՞ր, եթե Բաքվի շրջակա թուրքական և լեզգիաբնակ գյուղերից քաղաք մտնեին ջարդարարների մեծաթիվ նոր զինված խմբե՞ր: Վիճակը տագնապալի էր, ուստի հայ մարտիկները հրահանգ ստացան երբեք նախահարձակ չլինել, խնայել ու կրկին խնայել փամփուշտները:

Ժամը 4-ի մոտերքը հայոց եկեղեցու դիմացի Պարապետի հրապարակ եկավ մի զինվորական վաշտ: Հայերը կարծեցին, թե իշխանությունները վերջապես զենքի են դիմում և ուզում են պաշտպանության տակ առնել իրենց: Բայց շուտով պարզվեց, որ վաշտը մտադիր չէ փրկության ձեռք մեկնել: Ավելին, ինչպես հետո պարզվեց, նրա խնդիրն էր կաշկանդել հայ պաշտպանների գործողությունները:

Այդ տեսնելով՝ թուրքերը, որոնք հայ զինվորներից ջարդ կրելուց հետո վախենում էին դուրս գալ իրենց թաղամասերից, այժմ սիրտ առան և համարձակ դարձան: Զորքի ներկայությամբ նրանք սկսեցին ջարդել Ցիցիանովսկայա, Կոլյուբիակինսկայա և Բազարնայա փողոցների վրա գտնվող հայերին պատկանող մանուֆակտուրային և պարենի խանութները ու թալանի տվեցին

[1] **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա, Գ հրատ., էջ 309:

դրանք: Մի քանի տասնյակ քայլի վրա գտնվող ռուս զինվորները անտարբեր դիտում էին այդ ամենը: Ավելին, շուտով թալանող թուրքերին միացան ռուս կանայք և քաղաքապահ ոստիկաններ[1]: Որոշ տեղերում հարբելով պահեստներից և խանութներից թալանած խմիչքներով՝ զինվորները և ոստիկաններն իրենք էին մասնակցում կողոպուտին[2]: Քաղաքապահ ոստիկանները կողոպտում էին հայերի դիակները, հագնում սպանվածներից հանած ճտքակոշիկները:

Թալանը երկար էր շարունակվելու, եթե չհայտնվեին մի խումբ հայ մարտիկներ, որոնք հրացաններից ու ատրճանակներից կողոպտիչների վրա կրակ բացեցին. թուրքերից մի քանիսն ընկան, մյուսները փախուստի դիմեցին:

Ոստիկանությունն ու զորքերը, որ մինչ այդ անտարբեր դիտում էին թալանը, այժմ, երբ տեսան հայ պաշտպանների աճող դիմադրությունը, սկսեցին հրացանազարկի բռնել նրանց: Հայը մինչ այդ մոռացել էր, որ հայերի և թուրքերի միջև ընդհարումների ժամանակ ռուս զորքը հիմնականում բռնել է վերջիններիս կողմը: Լրիվ պարզվեց այն սրտառուչ համերաշխությունը, որ կար ռուս զորքի, ոստիկանության և թուրք խուժանի միջև: Այս կացությունը չափազանց վհատեցուցիչ և հուսահատական պիտի լիներ, եթե վճռականությունն ու համարձակությունը պակասեր հայորդիներին:

Կատարվող ոճրագործությունների նկատմամբ ռուս ոստիկանության և զորքի անտարբեր վերաբերմունքին անդրադառնալով՝ անգլիացի նշանավոր հրապարակագիր Էմիլ Դիլոնը գրում էր. «Ազգը ազգի, եկեղեցին եկեղեցու, դասակարգը դասակարգի դեմ է լարում հարաժամ ռուս կառավարությունը, և երբ բանը հասնում է ընդհարումների ու արյունահեղության՝ ոստիկանությունը կանգնում ու դիտում է tertius gandens-ի (երրորդ խնդացողի) դերում»[3]:

Հայ զինյալները դիմեցին Բաքվի հայերի «պաշտոնական ներկայացուցիչ», Շամախու թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսին, որպեսզի նա անմիջապես հեռախոսով կապվի Նահանգապետ Նակաշիձեի հետ և պահանջի, որ իշխանությունները քաղաքը պաշտպանեն ոճրագործներից, իսկ եթե այդ բանն անել չեն կարող, ապա զորքն ու ոստիկանությունը դուրս բերեն Բաքվից, որպեսզի հայերն իրենք կազմակերպեն իրենց ինքնապաշտպանությունը:

Կամազուրկ և վախկոտ եպիսկոպոսը հրաժարվեց նույնիսկ մոտենալ հեռախոսին, բայց զենքի ճնշման տակ, այնուամենայնիվ, հեռախոսեց: Նահանգապետը հավաստիացրեց, որ ոստիկանապետ Դիմինսկին իր ջոկատներով շրջում է քաղաքում, և շուտով վերջ կտրվեն անկարգություններին: Ասաց նաև, որ ոստիկանապետը անպայման այցի կգա սրբազանին և, որ նա՝ ոստիկանապետը, պատրաստ է կատարելու եպիսկոպոսի «բոլոր կարգադրությունները»: Հայտնեց նաև, որ հեռագրել է Թիֆլիս, որպեսզի այնտեղից օգնական զորք հասցնեն Բաքու:

Նակաշիձեն ստորաբար խաբում էր: Քաղաքում բավարար թվով զորք կար, որը կարող էր անմիջապես ջարդերի առաջն առնել, բայց, ինչ խոսք, դա նրա ծրագրերի մեջ չէր մտնում:

Շուտով, իսկապես որ, ոստիկանապետը եկավ, կեղծ հարգանքով մոտեցավ սրբազանին, համբուրեց նրա աջը և այնպիսի տեսք ընդունեց, թե պատրաստ է ծառայելու նրան: Սրբազանը փորձեց ակնարկել, թե թուրքերը զինված են, բայց ոստիկանապետը շատ քաղաքավարի ընդհատեց նրան և սկսեց պատմել, թե ինքը ահա մի քանի ժամ է, ինչ շրջում է քաղաքում, եղել է բոլոր թաղամասերում, բայց ոչ մի տեղ չի հանդիպել գոնե մեկ զինված թուրքի, ընդհակառակը, զինվածները միայն հայերն են, ուստի ինքը կարգադրել է նրանց զինաթափ անել:

Երկուշաբթի ամբողջ օրը, փետրվարի 7-ին, կռիվը շարունակվեց անդադար: Հատկապես ուժեղ մարտ եղավ Վելիկոկնյաժսկայա փողոցում: Այդտեղ էր գտնվում Պետրոսյանի զինվաճառատունը, որ թուրքերը ձգտում էին գրավել, բայց չհաջողվեց: Երեկոյան կողմ փողոցը, ամբողջ երկայնքով մինչև ծովափ, անցավ հայերի հսկողության տակ: Գիշերվա ընթացքում վաճառատան ոչ մեծ թվով զենքերը և ռազմամթերքը փոխադրվեցին և դրվեցին ինքնապաշտպանության մարմնի տրամադրության տակ:

Այդ նույն օրվա երեկոյան Մալականսկի այգու դիմաց գտնվող Գյանջեցյանի տանը կազմակերպվեց զենք պատրաստելու և նորոգելու արհեստանոց, որի աշխատանքը ղեկավարում էր Գասպար Տեր-Մկրտչյանը: Մառայած լինելով բանակում և հմուտ լինելով զենք պատրաստելու մեջ՝ Գասպարն այդ օրերին անգնահատելի դեր խաղաց ինքնապաշտպանության գործում:

Առաջնային էր մնում Շամախինկա թուրքական թաղում գտնվող Սիմոն Սիմոնյանի բնակարանում պահեստավորված զենքի տեղափոխման խնդիրը, որի լուծմանն առաջինը ձեռնարկեց հենց ինքը՝ դաշնակցության զենքի պահեստապետը: Գիշերը վրա հասնելուն պես Ս.Սիմոնյանը, իր հետ վերցնելով Ախալցխացի Մկոյին, Պզտիկ Ցապոնին և ռուսական բանակի մի հայ զինվորի, որը դեպքերի առաջին իսկ ժամերին, զորանոցից փախչելով, իրեն տրամադրել էր «ազգին», սուզվեց գիշերային մթության մեջ: Մելիքյանի լուսանկարչատանը գտնվող ինքնապաշտպանության ղեկավարները մեծ անհամբերությամբ սպասում էին Սիմոնյանի և նրա խմբի վերադարձին: Չէ՞ որ ձեռնարկն արտակարգ վտանգավոր էր. մինչ տեղ հասնելն անհրաժեշտ էր կենտրոնից աննկատ անցնել ահագին տարածություն, թափանցել զուտ թուրքերով բնակեցված թաղերը՝ ամեն վայրկյան պատրաստ ենթարկվելու բախտորոշ անակնկալների: Բարեբախտաբար ամեն ինչ բարեհաջող անցավ, և խումբը կեսգիշերին տեղ հասցրեց պահեստից հանած 9 հրացան, նույնքան տասնոցներ, բավական փամփուշտ:

---

[1] Տե՛ս Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 28:
[2] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 129, թ.2:
[3] «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, էջ 124:

Գիշերը Նիկոլայանսկայա փողոցի մյուս ծայրում, որից այն կողմ Թուրքական Թաղերն էին, լսվում էին հայերի օգնության աղաղակներ: Նրանք հետ էին մղել Թուրքերի մի խոշոր խմբի հարձակումը, բայց երկրորդ հարձակման առաջն առնելու համար այլևս զինամթերք չունեին: Թուրք զինված ամբոխի դիրքերով անցնելով՝ լուսանկարչատուն էր հասել Շագիդանյան ազգանունով մի օրիորդ՝ այդ վտանգված շրջանի համար խնդրելու զենք, փամփուշտ և կովողներ: Նա տեղ էր հասել հենց այն պահին, երբ Ս. Սիմոնյանի խումբը նոր էր ժամանել: Իր հետ առնելով ինչ կարող էր՝ անվեհեր աղջիկը շտապ վերադարձավ դիրքերը՝ յուրայինների մոտ:

Կազմակերպված դիմադրական ուժի ստեղծումից բացի, Հ.Յ.Դ. Բաքվի կոմիտեն ձեռնարկեց արյունալի ընդհարումները դադարեցնելու նաև ուրիշ միջոցներ: Մասնավորապես որոշվեց բոլոր հանքերում ու գործարաններում շտապ հրավիրել թռուցիկ ժողովներ և բազմազգ կոլեկտիվներին հանգստության կոչել, ինչպես նաև մերկացնել իշխանությունների ստոր դերը քաղաքում ծայր առած ազգամիջյան կռվում: Դաշնակցականների այդ նախաձեռնությանն անմիջապես արձագանքեցին մյուս հեղափոխական կուսակցությունների տեղական կազմակերպությունները՝ ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեն, էսէռների և հնչակյանների ղեկավար մարմինները:

Քաղաքում ծայր առած ջարդերի ալիքը դեռ լայնորեն չէր տարածվել նավթային շրջաններում Բալախանիում, Սաբունչիում, Բիբի-Հեյբաթում (Բիբեյբաթ), Ռոմանիում և մյուս արվարձաններում: Հարաբերական հանգիստ էր հատկապես Սաբունչիում, քանի որ այնտեղ բազմաքանակ էր հայ բանվորությունը, ուժեղ էին հայկական կազմակերպությունները:

Այնուամենայնիվ, նավթային շրջաններում էլ եղան սպանություններ: Օրինակ, Ռոմանիում Պիտուևի հանքի հայ բանվորները, երբ աշխատանքից հետո հանրակացարանում հանգստանում էին, ենթարկվեցին քաղաքից եկած Թուրք ջարդարարների ուխտադրուժ հարձակմանը, որի ընթացքում զոհվեց շուրջ 30 հոգի:

Նավթային շրջաններում ամենուրեք բողոքներ էին լսվում արյունալի ջարդերի և իշխանությունների կամայականությունների դեմ:

Բիբի-Հեյբաթում հայ և ռուս բանվորներից կազմված մի խումբ փորձեց շարժվել դեպի քաղաք՝ օգնության: Բայց առանց զենքի այնտեղ գնալն անիմաստ էր, իսկ զենք քիչ կար: Ի նշան բողոքի՝ որոշ ձեռնարկություններում գործադուլ արեցին: Բանվորների այդ հուզումը խիստ անհանգստացրեց ոստիկանությանը և ընդհանրապես ջարդի կազմակերպիչներին:

Բալախանիում բողոքն այլ կերպ արտահայտվեց: Հենց որ այնտեղ հասան ջարդերի մասին լուրերը, անմիջապես գումարվեցին գործարանային ներկայացուցիչների խորհրդակցություններ, որոնցում որոշումներ ընդունվեցին՝ գնալ արդյունահանման ձեռնարկություններ ու գործարաններ և բանվորներին բացատրել Բաքվի դեպքերը: Այդ որոշումների հիման վրա հանքերում և գործարաններում տեղի էին ունենում բազմամարդ ժողովներ, ընդունվում էին ջարդերը դատապարտող բանաձևեր:

Զանգվածային ժողովներին մասնակցող բանվորները ազատվում էին աշխատելու պարտադրանքից՝ աշխատավարձի փոխհատուցումով: Բացի դրանից, որոշվեց ոչ միայն չխանգարել ջարդերի դեմ հանդես եկող կուսակցությունների ագիտատորներին, այլև ամեն կերպ աջակցել նրանց՝ իրավունք վերապահելով օրվա ցանկացած ժամին գալ ձեռնարկություն, կանգնեցնել աշխատանքը և խոսել բանվորների հետ:

Երրորդ օր, փետրվարի 8 (21), երեքշաբթի:

Ընդհարումների երկրորդ լույս երրորդ օրվա գիշերը հայերից ոչ ոք չքնեց. բոլորի նյարդերը ծայրաստիճան լարված էին:

Լուսաբացին թե՛ Թուրքերը և թե՛ հայերը ոտքի վրա էին՝ պատրաստ կռվի: Մեկը նախորդ երկու օրերին նախահարձակ էր եղել, մյուսը՝ պաշտպանվող: Իսկ իշխանությունները նորից իրենց դերի մեջ էին՝ շարունակում էին սադրանքները՝ Թուրքերին վախեցնելով «հայերի գազանություններով»:

Ահա տիպիկ մի երկխոսություն, որ երրորդ օրվա առավոտյան տեղի էր ունենում ոստիկանի և մի Թուրքի միջև.

– Մի՛ գնա, հայերը այնտեղ կսպանեն քեզ, – համոզում էր ոստիկանը:

– Իսկ ինչու պետք է սպանեն, այնտեղ մերոնք են:

– Քեզ ասում եմ մի՛ գնա, նրանք ռումբեր են նետելու[1]:

Եթե ընդհարումների առաջին երկու օրերին իշխանությունները Թուրքերին զինում էին գաղտնի, ապա փետրվարի 8-ից արդեն գործում էին բացեիբաց՝ ոչինչ չթաքցնելով: Ոստիկանությունն ու նրա գործակալները մուսուլմաններին զենք ու փամփուշտ էին բաժանում ուղղակի փողոցներում:

Զինված մուսուլմանների թիվը գնալով արագորեն ավելանում էր: Հայերը միմյանց հարց էին տալիս. «Որտեղի՞ց է նրանց այդքան զենք»:

Արխիվային փաստաթուղթը վկայում է. «Պրիստավ Մամեդբեկովը և պրիստավի օգնական Սուլթանովը, երկուսն էլ թաթարներ, զորապետերի նման շրջում էին ռևոլվերները ձեռքներին՝ զինված հրոսակախմբերի գլուխն ան-ցած: Սուլթանովի տղան, որը ռեալական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ էր, հոր տված ռևոլվերը ձեռքին մտել էր դպրոց և ուսուցիչների մոտ պարծեցել, թե ինքը կրակել է հայերի վրա: Ուսուցիչ Ռոտաչևի այն հարցին, թե նա որտեղից է վերցրել զենքը, աշակերտը պատասխանել էր.

– Քաղաքամասում են տվել. այնտեղ շատ թաթարների են զենք տվել, ես Ձեզ համար էլ ռևոլվեր կճարեմ: Որի՞ց եք ուզում մեծ սպայակա՞ն, թե՞ ութփամփուշտանի, ասե՛ք»[2]:

Մյուս կողմից, ոստիկանները, որոնք վաղ առավոտից շրջում էին փողոցներում, իսկ երեկոյան նրանց միանում էին կազակները, հանդիպելով հայերի և

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ.13:
[2] Նույն տեղում, թ.30:

ռուսների, նրանց խուզարկում էին և եթե որևէ մեկի մոտ գտնում էին զենք, անմիջապես խլում էին: Ոստիկանությունը, կազակները և զինվորները խուզարկություններ սկսեցին նաև հայերի տներում:

Ի պատասխան ոստիկանության և զորքի հակահայ գործողությունների՝ Հ.Յ. դաշնակցության Բաքվի կոմիտեն իր զինյալներին իջեցրեց կարգադրություն՝ զինաթափության ամենափոքր իսկ փորձի դեպքում դիմադրել: Զենքը իշխանություններին հանձնելը համարվեց ծանր հանցագործություն, որի հետևանքը խիստ պատիժը պիտի լիներ: Կարգադրությունը բարերար ազդեցություն ունեցավ: «Մեր մարտիկները, - գրել է Ա.Գյուլխանդանյանը, - որ մինչ այդ չգիտեին, թե ինչպես վարվեն խուզարկության պարագային, այժմ ազատ էին զգում և, իրոք, դիմադրություն էին ցույց տալիս թե՛ ոստիկաններին և թե՛ զորքին, երբ այդպիսի անակնկալի էին հանդիպում: Բայց դրա հետ միասին մեր մարտիկներին հրահանգվեցավ, որ նրանք ամեն կերպ խուսափեն միջադեպերից և բախումներից ռուս զինվորների կամ ոստիկանների հետ: Բարեբախտաբար մեր ընկերների մի քանի անգամ ցույց տված դիմադրությունից հետո զորքը կամ ոստիկանները այնքան էլ հեշտությամբ չէին համարձակվում խուզարկել մերոնց»[1]:

Ստանիսլավսկու փողոցի վերին՝ մուսուլմանական մասում կազակների մի պահնորդական խումբ սիրալիր խոսակցության էր բռնվել զինված թուրքերի հետ՝ բնավ չմտածելով նրանց զինաթափ անելու մասին: Թուրքերին ոգևորելուց հետո պահնորդները իջան նույն փողոցի ներքնամասում գտնվող հայկական թաղը: Այստեղ հանդիպելով 10-15 զինված հայերի՝ նրանք հրացաններն ուղղեցին երիտասարդների վրա, բացականչելով.

- Է՛յ, սրիկանե՛ր, հանձնեցե՛ք զենքերը, այլապես՝ կկրակենք:

Հայերը կանգ առան, բայց կանգ առան ոչ թե զենքերը հանձնելու, այլ հակադարձելու համար: Ատրճանակներն ուղղելով ոստիկանների վրա՝ նրանք պատասխանեցին.

- Կրակեցե՛ք [եթե համարձակություն ունեք]:

Դրանով էլ վերջացավ միջադեպը: Կազակները մտրակեցին ձիերը և հեռացան[2]:

Միաժամանակ հայտնի դարձավ, որ նահանգապետը ոստիկանությանը խիստ հրաման է իջեցրել՝ կոնկրետ իրադրությունից ելնելով, հարկ եղած դեպքում, կրակ բացել հայ բնակիչների վրա, եթե նրանք փորձեն նախահարձակ լինել թուրքական թաղերի վրա: Եվ դա այն դեպքում, երբ ոստիկանությունը ոչ միայն թուրքերին չէր արգելում սպանել ու թալանել, այլ նույնիսկ չէր փորձում գոնե մտրակներով ցրել հակահայկական հրոսակախմբերը, չէր ձերբակալում մարդասպաններին, չէր խլում կողոպտված ունեցվածքը: Ավելին, կազակների կողմից մուսուլմաններից խլված բերդանկաները վերադարձվեցին: Կազակները և ոստիկանները հանգիստ քայլում էին կամ ձիերով շրջում արյունոտված փողոցներով՝ գազանացած կողոպտիչների ու մարդասպանների խմբերի մեջ, լկտիաբար հրաժարվելով օգնել իրենցից փրկություն աղերսող զոհերին, արգելում էին հանգցնել հրդեհները և փրկել կրակների մեջ մեռնողներին[1]: Ավելին, հաճախ իրենք էին խրախուսում սպանությունները: Երբ ռուս քաղաքացիները զինվորներին, սպաներին և քաղաքապահ ոստիկաններին հանդիմանում էին, թե ինչու չեն միջամտում դեպքերին, սրանք անկեղծորեն պատասխանում էին, որ իրենց միջամտելու հրաման չի տրված:

Դեռ այն ժամանակ բոլորի համար պարզ էր, որ մեկ-երկու վաշտ բավական կլիներ, որպեսզի հենց ամենասկզբից դադարեր ջարդը: Զենքը գործի դնելու զինվորների ամենաչնչին փորձի դեպքում իսկ վայրագություն անող մուսուլմանները փախուստի էին դիմում: Մի տեղ հաջողվեց համոզել զինվորներին ցրել ամբոխը: Թուրքերը, սպանելով մի քանի հայերի, ծանակում էին դիակները: Ոչ հեռու կանգնած մոտ 20 զինվորներ մռայլորեն ու անտարբեր նայում էին այդ սարսափազդու տեսարանին: Բաքվեցի ռուսներից մեկը մոտ է վազում նրանց և վրդովված հանդիմանում.

- Ինչ եք նայում, ինչպե՞ս չեք ամաչում, որ օրը ցերեկով թույլ եք տալիս մարդկանց սպանել:

- Մենք ի՞նչ կարող ենք անել: Մեզ հրամայված չէ միջամտել, - շփոթված ասացին զինվորները:

- Ամաչե՛ք, եղբայրնե՛ր: Եթե ձեր պետերը գազաններ են, գոնե դուք մարդ եղեք: Դե գոնե օգում կրակեք: Շու՛տ:

Զինվորները շփոթված իրար նայեցին:

- Կպատժեն ախր, - երկչոտած ասացին նրանք:

- Ոչինչ չի լինի, եղբայրնե՛ր: Երաշխավորում եմ դրա համար:

Զինվորները օգում երկու համազարկ տվեցին: Փողոցից վայրկենապես բոլորը չքացան: Բայց հետո զինվորները վախվորած ասացին, որ հիմա իրենց դատի կտան՝ գտնելով դատարկ պարկուճները[2]:

Զինվորները կոպտորեն հրաժարվում էին ուղեկցել հայերին, իսկ երբեմն՝ նաև ռուսներին, որոնք ցանկանում էին դուրս գալ շրջապատված տներից ու թաղամասերից:Նրանք հայտարարում էին, որ իրենց արգելված է հայերին ուղեկցել:

Խատիսովի Բիբի-Հեյբաթում գտնվող գործարանի մի բանվոր պատմում էր, թե ինչպես կազակները, իբր ուղեկցելով հայերին, նրանց բերել են մարդասպան հրոսակախմբերի մոտ և լքել. վերջիններս անմիջապես հոշոտել էին դժբախտներին[3]:

---

[1] Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 40:
[2] Նույն տեղում, էջ 41:

[1] Տե՛ս "Революция и Р.К.П.(б) в материалах и документах". (Хрестоматия), том третий, "1905 год", էջ 432:
[2] ՀՀ ՀՔԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 129, թ. 4:
[3] Նույն տեղում, գ. 128, թ. 9:

Ոստիկանությունն ու զորքերը, հատկապես կազակները, հրաժարվում էին ուղեկցել նույնիսկ երեխաներին, աշակերտներին: Սայլանի գնդի սպաներից Կուզմինը հետ կանչեց ռեալական ուսումնարանի աշակերտների խմբին ուղեկցող կազակներին՝ նրանց գլխին թափելով փողոցային հայհոյանքներ: Սարսափահար երեխաները, լացակումած, հազիվ ոտքի վրա կանգնելով, վազելով վերադարձան ուսումնարան: Իմանալով այդ մասին՝ ուսումնարանի դիրեկտոր Ցենֆերը խոստացավ գանգատվել սպայի արարքի դեմ, բայց չարեց՝ վախենալով վրեժխնդրությունից:

Իսկ եթե կազակները կամ զինվորները, այնուամենայնիվ, խոստանում էին հայերին ուղեկցել, ապա միայն նախապես բարձր վարձատրություն ստանալուց հետո[1]: Կայարան ուղեկցելու համար յուրաքանչյուրից վերցնում էին 25, 50 և նույնիսկ 100 ռուբլի: Վերևում հիշատակած Նիկոլայ Նազարովը վկայում էր, որ երեք օր իրենց հիմնարկում փակված մնալուց հետո, վերջապես կազակների մի տասնյակ համաձայնություն է տալիս իրենց ուղեկցել կայարանի մոտի հայկական թաղը: Կայարանում կազակներին առաջարկում են ամեն անձի համար 35 ռուբլի, բայց նրանք պահանջում են ևս 10 ռուբլի: «Կազակներից մեկը ինձնից պահանջեց գրպանիս ժամացույցը՝ «ի հիշատակ»: Բայց ժամացույցի փոխարեն ես ստիպված էի տալ ևս 10 ռուբլի: Մյուսներից նույնպես պահանջելով որքան կարող էին՝ կազակները մեզ թողեցին կայարանում և հեռացան»[2]:

Քաղաքացիներից մեկը վկայել է. «Դիմացից մոտ 20 զինվոր էր վազում հրացանները առաջթեք բռնած: Դե, մտածում եմ, այժմ կմաքրեն փողոցը: Ամենևին ոչ: Նրանք խառնվեցին կողոպտիչներին, թափահարեցին ձեռքերը, քշելով նրանց, ինչպես աղավնիներին են քշում կերից, իսկ իրենք հափշտակեցին մանր իրերը՝ թաքցնելով գրպաններում: Ինչ-որ կերպ մենք անցանք այդ կողոպտիչների միջով՝ մեր հետևում թողնելով այդ խայտառակ տեսարանը: Ես թեքվեցի դեպի Կրասնոկրեստովսկայա փողոցը: Այդ փողոցի վերևում երևաց մի քանի հարյուր հոգուց բաղկացած թուրքերի ամբոխը: Այնտեղից կրակոցներ էին որոտում: Մոտենալով այն տանը, որտեղ գտնվում էր իմ բնակարանը, ես ականատես եղա մի սարսափելի տեսարանի. ամբոխի

[1] Տե՛ս «Արարատ», N1, հունվար, 1906, էջ 57: Տե՛ս «Մշակ», 11 փետրվարի 1905թ.: Պետք է նկատել, որ եթե հայ եկեղեցու կալվածքների գրավման ժամանակ «Մշակը» գերագույն զգուշություն էր հանդես բերում և քննադատական ոչ մի խոսք չէր ասում ցարական իշխանությունների հասցեին, ապա հայ-թուրքական ընդհարումների օրերին հանդես եկավ բազմաթիվ հոդվածներով՝ խիստ քննադատության ենթարկելով ռեժիմը: «Մշակում» լույս տեսած թղթակցություններից ու հոդվածներից բացի, թերթի խմբագրության արխիվում, որը պահպանվում է ՀՀ ՊԿՊԱ-ում (ֆ. 227, գ. 395), կան չտպագրված բազմաթիվ հետաքրքիր նյութեր: Այդ փաստաթղթերը գերազանցապես աշխատավոր մարդկանց ձեռքով գրված նամակներ են, որոնց հեղինակները զայրույթով ու ատելությամբ նշավակում էին ազգամիջյան կոտորածներ հրահրող ցարական իշխանությունների ոճրագործ քաղաքականությունը:

[2] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 129, թ. 4:

առջև ընկած էին մի քանի խոշտանգված, մերկ դիակներ, իսկ ամբոխից գոռում-գոչյունով և քրքջալով կրակում էին արդեն մեռած դժբախտ զոհերի վրա: Իմ կողքին, պահակակետում, կանգնած էր քաղաքապահ ոստիկանը՝ հարբած, իսկ գոտուց կախած ատրճանակի պատյանը դատարկ էր:

– Որտե՞ղ է ձեր ատրճանակը, – հարցրեցի ես նրան:

– Ես երբեք ատրճանակ չեմ ունեցել ...

– Բայց դուք վերջերս ունեիք ատրճանակ, սեփական աչքովս եմ տեսել:

Հասարակական կարգի հարբած պահապանը կատաղած հարձակվեց վրաս.

– Քեզ ասում եմ՝ չի եղել: Ի՞նչ ես կպել[1]:

Ինչպես հետագայում պարզվեց, ատրճանակներ չունեին քաղաքապահ շատ ոստիկաններ: Ըստ երևույթին, գուցե և ոչ առանց պետերի իմացության, ատրճանակներն իրենք տվել էին ոստիկանության կողմից հավաքագրված մարդասպաններին:

Իր տեսածն այսպես է վկայել մի ուրիշ քաղաքացի.

«Ես մոտեցա մեր տան դարպասին: Այդ ժամանակ երևաց մի մեծ ամբոխ՝ չորս զինվորի ուղեկցությամբ: Սայլերի վրա գերանների նման պառկած էին մոտ 10 սպանված հայեր: Տեսնելով փողոցում ընկած ուրիշ դիակներ՝ զինվորները ամբոխին նշան արեցին դադարեցնել կրակոցները, ապա սայլի վրա գցեցին սպանվածներին և շարունակեցին ճանապարհը: Ուժասպառ ու ճնշված, հազիվ զսպելով կոկորդս սեղմող հիստերիան, տուն հասա:

Դրանից հետո ո՛չ այդ, ո՛չ հաջորդ օրը ես չկարողացա երկար ժամանակով փողոց դուրս գալ: Թեև ես ռուս եմ, բայց դժբախտություն եմ ունեցել թխահեր ծնվելու: Հազիվ էի երևում դարպասից այն կողմ, որ վրաս ուղղվում էին ատրճանակներ՝ չնայած ուսուցչական գլխարկիս: Հավանաբար ինձ հայի տեղ էին դնում»[2]:

Ահա մի ուրիշ փողոցում թուրքերի հսկայական ամբոխը վայրենի ոռնոցով ավերում ու թալանում էր խանութները: Լվում էին անընդմեջ կրակոցներ: Թալանչի թուրքերից ոչ հեռու՝ մեջքով դարձած դեպի մոլեգնած ամբոխը, հանգիստ կանգնած էր կազակների ջոկատը, մոտ 30 մարդ՝ սպայի գլխավորությամբ: Դեպքի վկաներից մեկը հիշում է.

«Ես մոտեցա կազակներին և դիմեցի սպային.

– Ինչու՞ եք այստեղ կանգնել, չէ՞ որ այստեղ ոչ ոք չկա:

– Իսկ որտե՞ղ կանգնենք: Կանգնել ենք՝ որտեղ հրամայված է, – պատասխանում է սպան:

– Բայց չէ՞ որ մեզանից այն կողմ հանդուգն բաշիբոզուկները սպանում ու թալանում են մարդկանց: Մի՞թե դա ձեզ չի վերաբերում:

– Իսկ ի՞նչ կհրամայեիք, որ մենք անեինք:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 27:

[2] Նույն տեղում:

- Ինչպես թե՝ ինչ: Ցրե՛ք, կալանավորե՛ք ջարդարարներին:

- Նրանց ոչինչ անել չես կարող, մի տեղ ցրում ես, նորից մի այլ տեղ են հայտնվում... Եվ ընդհանրապես, դա մեզ և ձեզ չի վերաբերում, - պատկառազդու տոնով ավելացրեց նա:

- Գոնե մեզ ուղեկցեք, միևնույն է՝ այստեղ անգործ կանգնած եք:

- Ես ձեզ ուղեկցել չեմ կարող: Ես պետք է այստեղ կանգնեմ»[1]:

Ահա և մի ուրիշ խոսակցություն, որը ցույց է տալիս, որ իշխանությունների գործողություններն աճող հակազդեցության էին հանդիպում առանձին ռուս ոստիկանների և զինվորների մոտ:

«Տելեֆոննայա փողոցում մի քանի դիակ կար ընկած: Մոտենում է թաղային հսկիչը և դիմում այնտեղ կանգնած ոստիկանին.

- Ինչ ես կանգնել: Պահակակետումդ տես ինչ անկարգություն է. դիակներ են թափված:

- Դիակներ են թափված ոչ միայն իմ պահակակետում, այլև ամբողջ քաղաքով մեկ: Արյունախում ավազակներ: Ինքներդ եք սարքել կոտորածը, հիմա էլ պետք է քաղաքապահ ոստիկաններին մեղադրեք: Դուք եք մեղավոր ամեն ինչում, այս ամենը դուք եք կազմակերպել: Ես ամեն տեղ կգոռամ այդ մասին:

- Կեցցե՛ս, ապրե՛ս: Ես կկարգադրեմ, որ քեզ անմիջապես ձերբակալեն, - գոռում է թաղայինը:

- Ոնց կուզեք: Երևում է՝ դեռ քիչ եք մարդկային արյուն թափել: Ձե՛զ վերցրեք ոստիկանական այդ անիծյալ մորթին:

Քաղաքապահ ոստիկանը վրայից հանում է ոստիկանական ասպազենն ու տարազաբաճկոնը և նետում չփոթված թաղայինի կողմը: Նրան ձերբակալեցին»[2]:

Իրենց թիկունքում ունենալով իշխանությունների ոչ միայն համակրանքը, այլև խրախուսանքն ու աջակցությունը՝ Թուրք ջարդարարները լիովին սանձազերծվեցին:

Ա. Գյուլխանդանյանը գրում է, որ Թուրքերի հանդգնությունը հասել էր այնտեղ, որ ոստիկանների և շատ անգամ զորքի ու կազակների ներկայությամբ անվրդով քարյուղ էին լցնում հայերի տների փողոցի կողմի դռների ու պատուհանների վրա և հանգիստ դիտում, թե ինչպես են սկսում այրվել տները, ինչպես են երկնքում թրթռում հրդեհի ցոլքերը: Եթե տների մեջ պատսպարվածները քաջություն էին ունենում դիմադրելով փրկվել կրակից, Թուրքերը հրացանի համազարկերով դիմադրողներին ստիպում էին հեռանալ պատուհաններից: Նրանք կրակում էին այնքան ժամանակ, մինչև որ ներսի կողմից դիմադրությունը դադարում էր, և տունը այրվում էր ամբողջապես: Տների մեջ այրվողների խելագար կանչերը, մեռնողների վերջին հեծկլտանքը բնավ չէին ազդում կազակների և մանավանդ շրջապատող Թուրք խուժանի

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 27:
[2] Նույն տեղում, թ. 30:

վրա, որը մեծ գվարճությամբ և զզվելի ու անամոթ սրախոսություններով արձագանք էր տալիս մեռնողների ամեն մի կանչին[1]:

Բաքվում ամենքը սովոր էին կարծել, թե հարստությունը ամենազոր է, ամենակարող, որով կարելի է ապրել ոչ միայն հանգիստ, այլև՝ ապահով: Բայց արհավիրքը չէր խնայում նաև հարուստներին:

Թուրքերը երեքշաբթի կեսօրին հրդեհեցին հայ մեծահարուստ Ասլանովի մեծ ու շքեղ ապարանքը: Բնակիչներին նախօրոք հաղորդվել էր դուրս պրծնել տնից, որը խուժանի կողմից թալանի ենթարկվելուց հետո մատնվեց կրակի: Տեսարանը շշմեցուցիչ էր. անհաշիվ Թուրքեր դառնում էին դես ու դեն, ցատկոտում հրդեհի շուրջը, մուշտակների մեջ պարուրված՝ քաշքշում կապոցներ, զանազան իրեր: Աղմուկը խառնվել էր հրդեհի ճարճատումների հետ:

Նույն օրը հրդեհվեց Ցերկովնայա փողոցի N93 տունը, որը մեծահարուստ Բաբաջանովինն էր: Նախապես տունը շրջապատվեց, սկսվեց կատաղի գնդակոծություն: Տան մեջ պաշարվածները երրորդ հարկի պատուհաններից նույնպես կրակում էին, բայց նրանց գնդակները վնաս չէին պատճառում Թուրքերին, քանի որ չէին կարողանում գլուխները բարձրացնել և նշան բռնել: Ի վերջո Թուրքերը կրակի մատնեցին տունը՝ բնակիչների հետ[2]:

Ահա թե ինչ է պատմում այդ տան հրդեհի մասին ականատեսը. «Երեկոյան ժամը 9-ին, երբ ամեն ինչ այրված էր բացի ներքնահարկից, Թուրքերը ներս են մտնում և արկղերի մեջ գտնում 9 թաքնված հայի: Ես չեմ կարող նկարագրել այն սարսափը, որ երևում էր այդ դժբախտների դեմքին: Նրանց մեկ-մեկ դուրս էին բերում և ամենքի աչքի առաջ կոտորում... Երբ գնդակով ծակեցին Նրանցից մեկի գլուխը, արյան զորեղ շիթը ողողեց գետինը: Երևաց մութ մարդկային պատկեր, որը, բարձրացնելով վերարկուի փեշերը և նրանով ծածկելով գլուխը, գալիս էր այրվող տան բակից: Պառավ մայրը տեսնելով Նրան՝ ճչաց և ընկավ: Նա ճանաչեց, որ մոտեցողը որդին է: Այս դժբախտը չէր կարողացել մնալ այրվող տան գաղտնի անկյունում և ողջ-ողջ չայրվելու համար վճռել էր դուրս գալ՝ հույս դնելով պաշարողների գթասրտության վրա... Բայց ամբոխը, ուրախանալով, որ մի նոր զոհ է գտել, վրա պրծավ և մի ակնթարթում կտոր-կտոր արեց Նրան: Դժբախտ մայրը, որի վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, ընկավ ծխացող գերանների մոտ և ուշաթափվեց: Կրակը դանդաղ մոտեցավ Նրան, և հագուստը սկսեց այրվել: Ուշքի չգալով՝ նա այրվեց գազազած ամբոխի աչքի առաջ»[3]:

Միայն ուշ երեկոյան մարտիկները լուր ստացան, որ այրվում է Բաբաջանովի տունը: Եվ երբ տեղ հասան, արդեն ամեն ինչ վերջացած էր: Նրանք ականատես եղան, թե ինչպես Թուրք ամբոխը շրջապատել էր մխացող տունը և հրճվում էր իր «սխրագործության» վրա:

[1] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 41:
[2] «Մշակ», N 25, 17 փետրվարի 1905թ.:
[3] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 34:

Հրդեհի բոցերում էին նաև հարևան տները՝ շրջապատված գազազած խուժանով, որը պատրաստ սպասում էր հոշոտելու կրակներից դուրս պրծնող զոհերին: Բազմաթիվ ընտանիքներ, մեկտեղ հավաքված մի տան կտուրի վրա, բոպե առ բոպե սպասում էին սոսկալի վախճանի:

Հայ մարտիկները արագորեն դիմեցին դեպի վառվող տները և մոսինի հարվածներով տապալեցին մի քանի թուրքի: Տեսնելով այդ՝ ամբոխը սարսափածներով տապալեցին մի քանի թուրքի: Տեսնելով այդ՝ ամբոխը սարսափածներով տապալեցին մի քանի թուրքի: Տեսնելով այդ՝ ամբոխը սարսափածներով տապալեցին մի քանի թուրքի: Ապա մարտիկները նետվեցին վառվող տների մեջ և, հար փախուստի դիմեց: Ապա մարտիկները նետվեցին վառվող տների մեջ և, հար փախուստի դիմեց: Ապա մարտիկները նետվեցին վառվող տների մեջ և, փրկելով շուրջ 100 մարդու, նրանց առաջնորդեցին հայոց եկեղեցու կողմերը[1]:

Ավելի սոսկալի էր մեծահարուստ Ալեքսանդր Ադամովի տան հրդեհը, որի բոցերից կրակի էին մատնվել նաև հարևան քարաշեն տները[2]:

Երբ կատաղի թուրք խուժանը շրջապատեց Ադամովի տունը, սա իր երկու պատանի որդիների հետ միասին հրացաններով դիմադրություն էր ցույց տալիս, կրակում պատուհաններից ու փողոցին նայող պատշգամբից: Այդ նույն պահին Ադամովի կինը հեռախոսով օգնություն էր խնդրում իշխանությունների ներկայացուցիչներից, ազգականներից ու ծանոթներից, սակայն բոլոր աղիողորմ կանչերը անօգուտ էին, ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց: Տունը այրվեց, իր մեջ ունենալով Ադամովի ամբողջ ընտանիքը, ծառաները, այնտեղ ապաստանած հայ հարևանները[3]: Ադամովների ամբողջ ընտանիքից ազատվել էր միայն մի պատանի՝ Արամայիսը, որն այդ օրը պատահաբար գտնվում էր ազգականի տանը:

Կեսօրի կողմ մահացու վտանգ կախվեց Մալականսկայա փողոցի վերջնամասում գտնվող այն տան վրա, որտեղ ապրում էր Բեկզադյանների հայտնի ընտանիքը*: Թուրքերի մի հսկա զինված բազմություն արդեն մոտենում էր

---

[1] «Դրոշակ», N4(157), ապրիլ, 1905, էջ 60:
[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237*, վավ. 57, թ.4:
[3] ՀՀ ՀԱԿԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ. 5:
* Բեկզադյանները մի զարմանալի ընտանիք էր: Շուչիում ցարական չինովնիկ Հարություն Բեկզադյանի ընտանիքում ծնվել էր տասնվեց երեխա, որոնցից յոթ տղաներն ու երկու դուստրերն ապրեցին մինչև չափահաս տարիքը: Ընտանիքը Բաքու էր տեղափոխվել 1901-ին: Բոլոր եղբայրները ստացել էին բարձրագույն կրթություն: Ավագը Տիգրանն էր, որը կրթությամբ ինժեներ էր և իր մասնագիտությամբ աշխատում էր Բաքվի նավթային տարբեր ընկերություններում, նաև հայտնի էր որպես աչքառու հասարակական գործիչ: Նա դաշնակցության համակիր էր, որին սատարում էր նյութապես ու բարոյապես: Հայաստանի անկախության ժամանակ Տիգրանը հանրապետության դեսպանն էր Վրաստանում: Նրանից փոքրը՝ Հովսեփ Բեկզադյանը, մասնագիտությամբ բժիշկ էր, ռուս էսէական կուսակցության ակտիվ գործիչներից էր և պատասխանատու կուսակցական դերակատարություն ուներ Բաքվում: Երրորդը՝ Ալեքսանդրը (Սաշա), թունդ բոլշևիկ էր՝ անսահման նվիրված մարքսիստական-լենինյան գաղափարներին:Նրա ազդեցությամբ բոլշևիկներ դարձան նաև երկու քույրերը՝ Մարիամը և Ելենան: Խորհրդային իշխանության տարիներին նա ականավոր կուսակցական ու պետական գործիչ էր, եղել է Խորհրդային Հայաստանի ռազմհեղկոմի անդամ, հանրապետության առաջին արտգործժողկոմ, վարել է տարբեր պաշտոններ Անդրֆեդերացիայում, ապա անցել է դիվանագիտական աշխատանքի ԽՍՀՄ արտգործժողկոմատի համակարգում, եղել է Խորհրդային Միության դեսպան Հունգարիայում, դարձել է անհատի պաշտամունքի զոհ: Չորրորդ եղբայրը՝ Ռուբենը, եղել է մոլի միապետական, սպիտակ բանակի շարքերում մինչև վերջ

տանը: Ներսում բազմանդամ ընտանիքի անդամներից այդ պահին Հովսեփ Բեկզադյանն էր, նրա քույրերը՝ Մարիամը և Ելենան: Ուր որ է՝ պատահելու էր այն, ինչ արդեն կատարվել էր հայկական այլ տների հետ: Բարբարոսաբար բանը չհասավ ողբերգության. մոտերքում գտնվող հայ երիտասարդների մի խումբ, տեսնելով առաջացող թուրքերին, ընդառաջ գնաց և, հրացանազարկեր տալով, փախուստի մատնեց նրանց:

Հայերի տները հրդեհվում էին, բայց չէին երևում ո՛չ հրշեջներ և ո՛չ էլ զինվորներ ու կազակներ, և եթե երևում էին, ապա՝ «ուշացած»:

Փետրվարի 8-ի կեսօրին, դաշնակցության Բաքվի կոմիտեն հեռագիր ուղարկեց Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսին, ուր ասված էր, որ Բաքվում «տեղի է ունենում հայերի կազմակերպված կոտորած: Նահանգապետը հենց առաջին օրերից հայտարարեց, որ ինքն ի վիճակի չէ սպանությունները դադարեցնել: Զորքը անցուդարձ է անում փողոցներով՝ իբրև սովորական դիտող: Շատ հայերից խլել են ատրճանակները, իսկ թուրքերն անարգել սպանում են հայերին քաղաքի զանազան վայրերում: Գիշերը շրջակա գյուղերից քաղաք մտան զինված թուրքեր: Լուսաբացից խանութների թալանը և սպանությունները վերսկսվեցին: Կացությունը չափազանց տագնապալից է»[1]:

Իշխանությունները շարունակում էին գործել մանրամասն մշակված ծրագրով: Զինվորների բիրտ վարմունքը, ոստիկանապետի լկտի բացատրությունները, հայերին զինաթափ անելու մասին հայտարարությունները վերջնականապես սրանց բերին այն համոզման, որ կառավարությունը ոչ միայն չի կամենում միջամտել և դադարեցնել արյունահեղությունը, այլև ամեն կերպ աշխատում է վնասել հայերին:

Արյունալի իրադարձություններին «չմիջամտելու» իրենց հանցավոր տակտիկան իշխանություններն արդարացնում էին նրանով, թե անզոր են «կանգնեցնել անկարգությունները», պատճառաբանում էին, թե զորքերը քիչ են և թե զորային ստորաբաժանումները շատ հեռու են քաղաքից: Նրանք հայտարարում էին նաև, որ զորքերի միջամտությունը կտանապատկի զոհերի թիվը խաղաղ բնակչության շրջանում, ուստի ձեռնպահ են մնում:

կռվել է բոլշևիկների դեմ, իսկ քաղաքացիական պատերազմում սպիտակների պարտությունից հետո անցել է Հունաստան և ծառայության մտել հունական բանակում: Մահկանացուն կնքել է 1956թ.՝ հասած գնդապետի աստիճանի: Հինգերորդ եղբայրը՝ Պետրոսը, էսէական կուսակցության աչքի ընկած գործիչներից էր Անդրկովկասում: Մյուս եղբայրները՝ Արամը և Գուրգենը, անհայտ մնացին քաղաքական կյանքում: Յոթ եղբայրները, հակոտնյա գաղափարաբանություն ունեցող չորս տարբեր կուսակցությունների պատկանելով հանդերձ՝ միմյանց հանդեպ ունեին եղբայրական գորով ու անսահման սեր: Ալեքսանդրը մտերմիկ շրջանակում միշտ հիացմունքով էր խոսում իր եղբայրների մասին և, երբ ինքը բարձր պաշտոններում էր, նրանց չէր խնայում ձեռքից եկած նյութական օգնությունը, մանավանդ մեծ եղբորը՝ Տիգրանին, որը Հայաստանի հանրապետության անկումից հետո, որպես փախստական, ապրում էր Փարիզում: Ինչ վերաբերում է քույրերին, ապա նրանք իրենց սերը հավասարաչափ բաժանում էին եղբայրներին, նաև անսահման նվիրված էին միմյանց:

[1] ՀՀ ՀԱԿԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 382, թ.թ. 20-21:

Եզրակացությունը մեկն էր՝ բողոքները զուր են, հայ բնակչությունն իր փրկության հույսը պետք է դնի միայն ու միայն իր վրա:

Չնայած այդ ամենին, փետրվարի 8-ի առավոտից հայ մարտիկները քաղաքի զանազան մասերում նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը: Եթե ընդհարումների առաջին երկու օրերին հայերի ստեղծած դիմադրական ուժն արդեն իրեն ցույց էր տվել, ապա երրորդ օրվա սկզբից Թելադրողը հայերն էին, նրանք էին նախահարձակը: Հայկական կենտրոններ թափանցելու թուրքերի բոլոր փորձերը ձախողվեցին: Ամեն տեղ հայ տղաները համարձակ գործողություններով ցրում էին նրանց զինված խմբերը: Արհավիրքից փրկված թշվառ հայերը լալիս էին ուրախությունից, գրկում ու համբուրում փրկարարներին:

Աբրահամ Գյուլխանդանյանը գրել է. «Երրորդ օրն արդեն հարյուրավոր երիտասարդներ համախմբված էին մեր կենտրոնը: Բայց զենք չունենալու պատճառով նրանք անկարող էին մասնակցել կռիվներին, թեև նրանց ներկայությունը մի առանձին քաջություն էր ներշնչում զենք ունեցողներին, որոնք զգում էին իրենց առավելությունը այս անզեն նների մոտ և որոշ հպարտությամբ հրացանը կամ ատրճանակը ձեռքերին՝ խոյանում էին թշնամու վրա, արհամարհելով ամեն մի վտանգ: Զինվածների հետ շատ անգամ հարձակվում էին բավականաչափ անզեն երիտասարդներ այն հույսով, որ կռվի ժամանակ իրենց ձեռքը մի զենք կ՚ընկնի: Ստեղծված էր մի այնպիսի դրություն, որ ամեն մեկը ուզում էր մի բան արած լինել, և անզեններն էլ այդ ձևով էին օժանդակում մեր կռվի հաջողությանը»[1]:

Կեսօրից հետո թուրքերի դիմադրությունը քաղաքի մեծ մասում կոտրվել էր, հայ մարտիկները շարունակում էին անընդհատ ընդլայնել իրենց գործողությունների շրջանակը: Դաշնակցականների ջոկատը, բաղկացած 40 երիտասարդներից՝ զինված ատրճանակով և մի տասնյակ բերդանկաներով, ջարդարարներից արագորեն մաքրեց քաղաքի ամբողջ ստորին մասը և մի քանի հարյուր մարդուց բաղկացած զինված մուսուլմանների ամբոխին Մալականկի այգուց քշեց մինչև գրեթե քաղաքի ծայրը, այսինքն՝ ամբողջ քաղաքի միջով: Հարյուրավոր հայեր իրենց փրկությամբ պարտական էին այդ ջոկատի անձնուրաց կռվին: Նիկոլաևակայա փողոցում սպանություններ և թալան կատարող խմբերին հայ մարտիկների մի այլ ջոկատ քշեց մինչև Ղուբայի հրապարակ, որից այն կողմ ընկած էին թուրքական հոծ շրջանները:

Թուրքերի պարագլուխները, որոնք նախորդ երկու օրերին հայերի կողմից արվող խաղաղության բոլոր առաջարկները մերժում էին, տեսնելով, որ տանուլ են տալիս, երեկոյան շտապ գնացին նահանգապետի մոտ և նրան խնդրեցին հանդիպում կազմակերպել հայերի ղեկավարների հետ՝ «բարըշլըգ» (հաշտություն) կայացնելու համար:

[1] Ա. Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 59:

Թուրքերի անհաջողություններն ու նրանց լիակատար պարտության հեռանկարը խիստ անհանգստացրին իշխանություններին, ուստի շտապ միջոցների դիմեցին դրությունը փրկելու համար:

Նահանգապետ Նակաշիձեն իջավ Անանիա եպիսկոպոսի մոտ և նրան առաջարկեց հաշտության հորդորներով դիմել հայերին: Նա ասում էր՝ թուրքերը երդվել են զազիի մոտ, որ կդադարեցնեն կռիվը, եթե հայերը ևս նույնն անեն: Միաժամանակ նահանգապետը դիմում է ուրիշ նշանավոր հայերի՝ նրանց հրավիրելով հաշտության:

Բոլորը լավ էին հասկանում, որ այդ հանկարծակի փոփոխության պատճառը դաշնակցության Բաքվի կազմակերպության գործողություններն են: Անանիա եպիսկոպոսը դիմեց Հ.Ց.Դ. կոմիտեին՝ խնդրելով նախահարձակ չլինել և ամեն ինչ անել կռիվը մարելու համար: Կոմիտեն անմիջապես պատասխան նամակ ուղարկեց եպիսկոպոսին, ուր ասված էր, թե նախահարձակը հայերը չեն եղել, որ նրանք ամբողջ երկու օր միայն պաշտպանվել են և որ՝ եթե թուրքերը ցած դնեն զենքերը, ապա նույնը կանեն նաև հայերը: Միաժամանակ ասվում էր, որ եթե թուրքերը շարունակեն հարձակումները, ապա ավելի ուժգին հակահարված կստանան:

Թուրքերը, սակայն, դրժեցին իրենց խոստումը՝ Բազարնայա փողոցի վրա ավերելով ու թալանելով խանութները: Նրանք մրջյունների պես ներս էին խուժում, հափշտակում, տանում ու տեղավորում ապրանքը և նորից հետ վազում թալանի: Կողոպտիչները կարծես մրցում էին իրար հետ, միմյանցից խլում ապրանքը, շատ հաճախ իրար գլուխ ջարդում:

Հայ մարտիկներն անմիջապես դուրս նետվեցին իրենց դիրքերից և քշեցին խուժանին: Զորքը, որ մինչ այդ լուռ հանդիսատեսի դերում էր, այժմ կրակ բացեց, բայց... հայ մարտիկների վրա, որոնք կարողացան խույս տալ և անհետանալ:

Կռիվների բովում ամեն ժամ ծնվում էին նորանոր խոնարհ հերոսներ, որոնցից շատերը լուռ ու անխոս կատարում էին հիացմունքի արժանի գործեր:

Երեկոյան հաջողվեց թաքստոցից դուրս հանել դաշնակցության պահեստում դեռևս մնացած բոլոր հրացանները: Զինապահեստը, ինչպես ասվեց, գտնվում էր թուրքական թաղում, բավական հեռու: Անհուն նվիրվածություն ու մահաբեր համարձակություն էր պետք այնտեղից զենքերը բերելու համար: Այդ վտանգավոր ձեռնարկի մասնակիցներից մեկի մասին ականատեսը պատմում է հետևյալը.

«Այդ նեղ ժամին մեր առջև հայտնվեց մի հայ զինվոր, մի խեղճ ու կրակ մարդ, որ իր մտքերը հազիվ էր կարողանում արտահայտել: Փորձի համար առաջարկեցինք նրան գնալ մեր պահեստը և բերել մեկ հրացան: Գնաց և հաջողությամբ բերեց մեկը: Նորից գնաց և բերեց էլի մի քանիսը: Ոգևորված՝ մեր բուռն երախտագիտությունն էինք հայտնում նրան, բայց նա կարծես չէր լսում և առանց մի խոսք արտասանելու հեռացավ...: Մի անգամ ևս ինձ

վիճակվեց տեսնել պարտքի այդ անխոս զինվորին. մի խեղճ հայ մարդ նրան պատում էր, որ կրակը լափում է իր տունը, և եթե շուտ օգնություն չհասնի, ապա երեխաները, որոնք բարձրացել են կտուրը, պիտի այրվեն: Զինվորի աչքերը լցվեցին արտասուքով, և նա գնաց այդ մարդու հետ: Երեխաները փրկվեցին: Չգիտեմ, էլ ի՞նչ եղավ, ու՞ր գնաց զինվորը...»[1]:

Բերված հրացանները հանձնվեցին վստահելի կովողների: Էրմենիքենդից (Հայոց գյուղ), Մկրտիչ Մելիք-Աղամալյանի գլխավորությամբ, այդ հրացան-ներով զինված հայ երիտասարդների մի խումբ ուղղվեց դեպի Ղուբի Մեյդան՝ Բաքվի թուրքական միջնաբերդը, և կատաղի հարված հասցրեց ջարդարար-ներին:

Հայ երիտասարդների հարձակումը շարունակվում էր: Գիշերվա մոտա-վորապես ժամը 12-ին մարտական խմբերը մտան թուրքական մյուս թաղերը՝ փրկելու այնտեղի հայերի կյանքը: Այդ պահին հայի փրկությունը միայն հայից պիտի գար:

«Հրացանային կեսգիշերային այդ համազարկերը, - գրել է Ա. Գյուլխան-դանյանը, - մեր ընկերների խրոխտ, հաղթական բացականչությունները՝ «Հայե՛ր, գալիս ենք ձեզ ազատելու, մի՛ հուսահատվեք», տարածվում էին հայոց փողոցից շատ հեռուները՝ հույս և կենդանություն ներշնչելով երեք օր սոսկումի ժամեր անցկացրած հազարավոր հայերին»[2]:

Այնպես որ, փետրվարի 8-ի լույս 9-ի գիշերը քաղաքի 4/5 մասը մաքրված էր զինված խուժանից, համարյա բոլոր կարևոր դիրքերն անցել էին հայերի ձեռքը, վերջ էին գտել թալանն ու ջարդերը: Այդ նույն գիշերը զանազան դիրքեր փոխադրվեց զգալի քանակի ռազմամթերք, ջոկատները համալրվեցին նոր մարտիկներով:

Բայց թուրքական հարձակումները դեռ շարունակվում էին Նիկոլաևսկայա փողոցի վերնամասերում և դրանց հարակից Շամախինկա թաղում ու Բերդա-քաղաքում: Տեսնելով, որ հայկական կենտրոններ թափանցելու բոլոր փորձերը ձախողվում են, թուրքերը շարունակում էին բարբարոսություններն իրենց թաղերում ապրող հայերի նկատմամբ:

Քաղաքացիներից մեկը հետագայում իր ցուցմունքում գրել է, թե ինքն այդ գիշեր մի սպայից լսել է թալանով զբաղված թուրքերին ուղղված հետևյալ խոսքերը. «Պարոննե՛ր, մենք ձեզ ընդամենը երեք օր ենք տվել չփանալու և չարաճճիություններ անելու համար: Հերիք է արդեն»[3]:

Չորրորդ օր, փետրվարի 9(22), չորեքշաբթի:

Արդեն չորեքշաբթի առավոտյան բոլորին պարզ էր, որ հայերը ոչ միայն խիզախաբար պաշտպանվում են, այլև ուժգին հակահարվածներ են հասցնում, ջարդում ու փախուստի մատնում մարդասպաններին:

[1] «Դրոշակ», N4 (157), ապրիլ, 1905, էջ 59:
[2] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 43:
[3] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.2, գ. 137, թ. 43:

Հենց դա էր, որ չէր մտնում իշխանությունների հաշիվների մեջ, ուստի բարձր պաշտոնյաներից շատերը ուժեղացրին իրենց սադրանքները չարիքը պատժող հայ մարտիկների նկատմամբ:

Հարկ է նշել, որ այդ օրերին հատկապես շատ վատ դեր էին ստանձնել վարչական մարմիններում և ոստիկանության մեջ մեծ թիվ կազմող վրացի պաշտոնյաները: Նրանք, համարյա առանց բացառության, հովանավորում էին թուրքերին և մնասում հայերին, ամեն կերպ աշխատում դեպքերի մեղքը գցել վերջիններիս վրա:

Այսպես, Բաքվի ժանդարմական ռոտմիստր իշխան Թավքերիձեն Թիֆլիս իր վերադարձին՝ Անդրկովկասյան երկաթգծի ժանդարմական ոստիկանական վարչության պետ գնդապետ Սոլովյովին էր ուղարկել մի պրովոկացիոն հեռագիր այն մասին, թե հայերն ամսի 9-ին հարձակվել են քաղաքի ռուսների վրա և նրանց սրի քաշել: Անշուշտ, հեռագիրը հղվել էր Նակաշիձեի գիտությամբ, գուցե և՝ պատվերով: Այնտեղ ասված էր.

«Փողոցներում ուժգին հրաձգություն է, կրակում են ավելի շատ հայերը, որոնք այս պահին հարձակվել են ռուսների վրա և սպանել հինգ հոգու: Բնակելի շենքերի չորսկողմն ընկած են դիակներ, զինված հայերը սպանում են բոլորին, կողոպտում են դիակները, ավերում կրպակները, կոչեր են տարածում գլխովին ոչնչացնելու ռուսներին: Մի հայուհի պատշգամբից նետել է իր ռուս ծառայողուհուն: Կայարանի շրջանը միանգամայն անպաշտպան է: Նահանգապետը և կայազորի պետը հրաժարվել են ուղարկել վաշտ, խնդրում եմ հանձնարարական: Ծառայողները խնդրում են իրենց զինել ինքնապաշտպանության համար: Ուղևորների մի մեծ խումբ չի համար-ձակվում կայարանից քաղաք մտնել, խնդրում է ուղեկցող պահակախումբ, որ չունեմ:

Ռոտմիստր՝ իշխան Թավքերիձե»[1]:

Գնդապետ Սոլովյովը Թավքերիձեի հեռագիրը ներկայացրել էր Կովկասի կառավարչապետի պաշտոնակատար, զորքերի ժամանակավոր գլխավոր հրա-մանատար, գեներալ-լեյտենանտ Մալամային:

Ստանալով Թավքերիձեի հեռագիրը՝ Մալաման պատրաստվում էր ձեռ-նարկել համապատասխան միջոցներ Բաքվի «ռուս բնակիչներին հայերից պաշտպանելու» համար: Փետրվարի 11-ին Թավքերիձեի հեռագրի պատճենը նա վերահասցեագրում է նահանգապետ Նակաշիձեին և պատվիրում է շտապ հաղորդել նոր, լրացուցիչ տեղեկություններ:

Բաքվի նահանգապետը շուտով N998 զեկուցագրով Թիֆլիս է ուղարկում մեծաքանակ «լրացուցիչ» սադրիչ «տվյալներ», որ դարձյալ ներկայացրել էր Թավքերիձեն[2]:

Հայերի կողմից «ռուսներին ծեծելու և սպանելու» մասին Նակաշիձեն

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237ա, վավ. 48, թ. 37:
[2] Նույն տեղում, վավ. 56, թթ. 43-46:

միաժամանակ պաշտոնական գրություն ուղարկեց Շամախու (Բաքվի) թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսին՝ կցելով գնդապետ Սոլովյովին հղած Թավքերիձեի հեռագրի և գեներալ Մալամային իր կողմից ուղարկած «լրացուցիչ տվյալներ» պարունակող զեկուցագրի պատճենները[1]:

Հետևում է ահաբեկված թեմակալ առաջնորդի աղիողորմ պատասխանը Նակաշիձեին, ուր նաև ասված էր.

«... Պատիվ ունեմ հարգալից խնդրել Ձեր պայծառափայլությանը, որպես այս նահանգի ղեկավարի, որտեղ տեղի են ունեցել վերջին ժամանակների իրադարձությունները, հերքել Թավքերիձեի հեռագրում նշված փաստերը, այն է՝ որ, իբր, հայերը հարձակվել են ռուսների վրա և սպանել նրանց, որ, իբր, հայերը տարածում են ռուսներին ջարդելու կոչեր, որ, իբր, տեղի է ունեցել մի դեպք, որ ինչ-որ հայուհի պատշգամբից գցել է իր ռուս ծառայողուհուն և, վերջապես, որ հայերը զբաղվում են դիակապտությամբ: Հնարված են այնպիսի բաներ, որոնք տեղի չեն ունեցել իրականում:

Ես իմ հոտի և անձամբ իմ անունից աղաչում եմ Ձեր պայծառափայլությանը՝ վկայակոչել Նորին գերազանցության (Կովկասի կառավարչապետի պաշտոնակատար Մալամայի: - Հ.Ս.) առջև, որ ռոտմիստր իշխան Թավքերիձեի հեռագիրը սուտ է, և որ իմ հոտը անմեղ է իր վրա բարդած հանցանքներում և չմերժել ինձ տալու հեռագրի սուտ լինելը հաստատող Ձեր գրելիք գրության պատճենը, որպեսզի ես կարողանամ այն ուղարկել Նորին սրբությանը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին, որի հայրական սիրտը չի կարող չցվել արյունով, երբ լսում է իր հոգևոր սաներին հանցագործության մեջ մեղադրող լուրերը»[2]:

Միաժամանակ Անանիա եպիսկոպոսը զեկույց ուղարկեց Թիֆլիս՝ Կովկասի կառավարչապետություն, որով ժխտում էր հայերի հասցեին կատարված սադրիչ մեղադրանքները և թախանձագին խնդրում էր «նշանակել ռոտմիստր Թավքերիձեի տված տեղեկության խիստ օրինական հետաքննություն՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով, քանի որ նման անարդար տեղեկությունները հուզումներ են առաջացնում և խոչընդոտում հասարակության հանգստությանը և խաղաղեցմանը»[3]:

Զորեքշաբթի առավոտյան, բացի Ջեմբերեքենդ և Շամախու-ճամփա թաղերից, թուրքերի հարձակումները համարյա դադարեցին: Երեք օր ուշացումով սկսեցին քաղաք գալ զորքեր, որոնք իրենց հետ ունեին նույնիսկ թնդանոթներ: Լույս տեսավ նահանգապետի՝ բնակչությանն ուղղված նողկալի դիմումը, որով կոչ էր արվում հանդարտվել: Ըստ որում Նակաշիձեն կատարվածի մեղքը գցում էր «չարամիտ անձանց» վրա, որոնք «անհանգստացրին ժողովրդին»: Հրահանգվեց, որ երեկոյան ժամը 8-ից մինչև առավոտյան

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237՞, վավ. 47, թ. 55:
[2] Նույն տեղում, վավ. 52, թ.թ. 32-33:
[3] Նույն տեղում, վավ. 50, թ.1:

ժամը 6-ը առանց իշխանությունների թույլտվության արգելվում է քաղաք դուրս գալը: Փողոցներում երևացին պարեկներ:

Փետրվարի 9-ի առավոտյան ժամը 10-ի կողմերը զինվորների ոչ մեծ խմբեր գործի դրեցին հրացանները: Փողոցներն արագորեն մաքրվեցին ջարդարարներից: Քաղաքացիներից մեկը հարց տվեց զինվորներին.

- Ինչո՞ւ ավելի շուտ չէիք միջամտում: Քի՞չ էիք, ինչ է, թե՞ վախենում էիք:

- Ո՛չ, - պատասխանում էին նրանք: - Մենք անմիջապես նրանց կհնազանդեցնեինք, չէ՞ որ նրանք վախկոտ են: Հրաման չկար միջամտելու: Միայն երեկ գիշերվա 12-ին հրաման արձակվեց՝ կրակել:

- Իսկ ո՞ւմ վրա էիք կրակում:

- Բոլորի: Ում վրա որ հրամայեն, նրա վրա էլ կկրակենք: Մեզ համար միևնույնն է»[1]:

Ժամը 11-ի կողմերը զինվորներն արդեն սկսեցին դատաստան տեսնել մուսուլմանների հետ՝ դարաններ սարքելով և անգթորեն գնդակահարելով նրանց:

- Թող հայերը մեզ թեյափող տան, մենք կկոտորենք բոլոր թուրքերին, - ասում էին զինվորներից ոմանք[2]:

Հենց նույն ժամին փողոցով անցնում էր պաշտոնաթող պրիստավ, թուրք Սալիմխանովը՝ շրջապատված մոտ 30 հոգուց բաղկացած մուսուլմաններով, որոնք զինված էին բերդանկաներով:

- Չկրակե՛լ, չկրակե՛լ: Մենք գնում ենք նահանգապետի մոտ, - գոչում էր նա զինվորներին:

Նույնպիսի բացականչություններ էր անում նաև պրիստավ Մամեդբեկովը: Հավանաբար ջարդերի կազմակերպիչները լրջորեն ահաբեկված էին գործի ընթացքի փոփոխությունից և գլուխները կորցրել էին զորքի միջամտությունից:

«Ես անձամբ համոզվեցի, - ասում էր ականատեսը, - թե ինչ հեշտ էր ջարդարարներին զսպելը: Բավական էր երեք-չորս զինվոր հրացանները վեր բարձրացնեին նշանառության համար, որ թուրքերի խառնախմբերը վայրկենապես անհետանային և այլևս չերևային»[3]:

Առավոտից մինչև կեսօր հայ մարտիկները հրդեհներից փրկեցին մի քանի տասնյակ նոր ընտանիքներ: Բայց ազատարար խմբերը ամեն տեղ չէ, որ հասնում էին, քանի որ չգիտեին վառվող բոլոր տների տեղը:Նույն ժամերին թուրքերն այլևս չէին երևում հայոց փողոցներում և հիմնականում զբաղված էին իրենց դիակները հավաքելով: Այժմ հայ մարտիկների հիմնական մտահոգությունը Շամախինկա թաղամասի հայերի ճակատագիրն էր:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 17, ց.1, գ. 383, թ. 29:
[2] Նույն տեղում, թ.թ. 31-32:
[3] Նույն տեղում, թ. 32:

Թուրքերը գործի էին անցել, որպեսզի կրակի տան Շամախինկայի բոլոր հայկական օջախները, սրի քաշեն բոլոր հայերին: Անհրաժեշտ էր փրկել դժբախտության մեջ հայտնված մարդկանց:

Այդ դժվարին խնդրի իրականացումը հանձնարարվեց խիզախ դաշնակցական գործիչ Մկրտիչ Աղամալյանին: Շամախինկայում պաշարված հայերին հեռախոսով մի կերպ հայտնեցին, որ շուտով իրենց օգնության են գալու, միայն թե որոշ ժամանակ կարողանան դիմադրել ձեռքն ընկած ամեն ինչով՝ եռացրած ջրով, երկաթի ձողերով, խոհանոցային դանակներով, փորձեն պահպանել իրենց տները հրդեհից ու ամբոխի ներխուժումից, զբաղեցնեն ջարդարարներին, մինչև որ վրա կհասնեն մարտիկները:

Այս թաղամասում Ինաչատրյան ազգանունով մեկի տանը հավաքվել էին 40-ի չափ անզեն հայեր՝ սպասելով իրենց վախճանին: Որտեղից որտեղ մի պահ երևաց ոստիկանապետ Դիմինսկին՝ մեկ հարյուրակ կազակներով: Այդ տեսնելով՝ կանայք դուրս եկան տնից և ընկնելով ձիերի ոտքերի տակ, խնդրում և աղերսում էին օգնություն: «Ի սե՛ր աստծո, օգնեցե՛ք մեզ, ի սե՛ր փոքրիկ մանուկների, որոնց կոտորելու են, ի սե՛ր կանանց և օրիորդների, որոնց առևանգելու կամ այրելու են»: Կազակները, շուռ տալով ձիերի գլուխները, ինչ արագությամբ եկել էին, նույն արագությամբ էլ անհետացան:

Շամախինկա թաղում Ղուբայի հրապարակից 100-150 քայլի վրա էր բնակվում դաշնակցական Թադևոս Ամիրյանը*, որին նաև «գիժ Թաթոս», «գլխից ձեռք քաշած Թաթոս» էին անվանում արտակարգ հանդուգն բնավորության ու անվախության համար: Եվ ահա նրա տունը շրջապատել էին հարյուրավոր թաթարներ, որոնք, սակայն, սիրտ չէին անում գրոհել: Թադևոսի տանը պատսպարվել էին նաև հարևանները: Բարձրանալով կտուրը՝ նա այնտեղից հրացանային կրակով պաշտպանում էր ոչ միայն իր տունը, այլև հարևան հայերի տները: Նա գնդակների տարափի տակ էր առել խուժանին, որը չափչփում էր չորսբոլորը և մնգստալով կրճտացնում ատամները: Ջարդարարները վախից մեկ հեռանում էին, մեկ նորից հայտնվում: Այնպես էլ չհամարձակվելով մոտենալ տանը՝ փետրվարի 9-ի կեսօրին նրանք, վերջապես, թողեցին ու հեռացան:

Թաղամասի բոլոր հայերի տների լուսամուտների և դռների վրա հրաձգություն էր կատարվում: Ներսից լսվում էին կանանց և երեխաների հոգեցունց ճիչեր: Ռուս ականատեսներից մեկը վկայել է. «Մեր բնակարանում բոլորը դողում ու հառաչում էին սարսափից: Ես նեռվեցի դեպի լուսամուտը: Թաթարների ամբոխը մեծ ուռալվերներով և բերդանկաներով կրակում էր հանդիպակաց տան լուսամուտներին, և այնտեղից ջարդվող ապակիների

* Թադևոս Ամիրյանը հետագայում հայտնի բոլշևիկ Արսեն Ամիրյանի եղբայրն էր: Երկու եղբայրները Բաքվի 26 կոմիսարների թվում 1918թ. սեպտեմբերին գնդակահարվեցին Թուրքմենստանի ավազուտներում:

զրնգոցի տակ լսվում էին մահվան սարսափով լեցուն հառաչանքներ: Կարելի՞ է արդյոք երբևիցե մոռանալ այդ պատկերները...»[1]:

Բայց փետրվարի 9-ի ամենամեծ ողբերգությունը ծավալվել էր Շամախինկայի Ղուբա հրապարակի շրջանում: Այստեղ էր գտնվում հարուստ հայ վաճառական Բալաբեկ Լալաևի բազմահարկ հսկա ապարանքը՝ բազմաթիվ խանութներով: Հրապարակի վրա իշխող այդ հոյակապ տունը վաղուց էր շարժում թուրք միլիոնատերերի նախանձը՝ չխոսելով արդեն փողոցի թալանչիների մասին:

Դեռ խժդժությունների երկրորդ օրը՝ փետրվարի 7-ին, թուրքերը հրացանային կրակի տակ էին առել Լալաևի տունը, որ շարունակվեց նաև փետրվարի 8-ին: Այդ երկու օրերին, ամբողջ 15 ժամ, Լալաևը անդադար հեռախոսով խոսում էր քաղաքի մի այլ շրջանում ապրող իր ազգական Կարապետ Լալաևի, ուրիշ հարազատների, ծանոթների, երկրորդ թաղի ոստիկանապետի, նաև նահանգապետի հետ և օգնություն աղերսում: Բայց ոչ ոք օգնության չեկավ, իսկ ճիվաղ նահանգապետը պատասխանեց, թե տան մեջ շրջափակվածները ուղղակի չափազանցնում են դրությունը: Երբ փետրվարի 8-ի երեկոյան կտրեցին Լալաևի տան հեռախոսագիծը, փրկության աղաղակները մնացին օդից կախված[2]:

Վերջապես փետրվարի 9-ի առավոտյան ժամը 10-ի կողմերը Լալաևի տան մոտերքում հայտնվեց ինքը՝ նահանգապետը: Տան ներսում փակված դժբախտների հոգում մի պահ փրկության հույս առկայծեց: Բայց իզուր: Նահանգապետը սկսեց մեղադրել ... Լալաևին, ասելով, թե նա, իբր, տնից կրակում է անմեղ ու անզեն թուրքերի վրա, որոնք իրեն տեղեկացրել են, թե տան նկուղում ցեմենտի 10 տակառների մեջ պահվում են փամփուշտներ և ռումբեր: Լալաևը նահանգապետին պատասխանեց, որ իր տանը ոչ մեկը զենք չունի, և դրանում համոզվելու համար լավ կլիներ խուզարկում կատարել: Բայց դա նահանգապետի հաշիվների մեջ չէր մտնում, ուստի նա թողեց ու հեռացավ: Թուրք-խուլիգանների սանձարձակ ամբոխը, գոտեպնդված նահանգապետի այդ վարմունքից, վճռական գործողությունների անցավ: Մարդասպանները գրոհեցին տուն և ներխուժելով կոտորեցին այնտեղ պատսպարված սարսափահար բոլոր հայերին, այդ թվում Լալաևի եղբորը՝ ընտանիքով հանդերձ: Իսկ տանտիրոջն ու նրա տիկնոջը քարշ տալով փողոց՝ գնդակահարեցին[3]:

Ռուս Օրեստ Սյոմինն այսպես է նկարագրել այդ եղեռնագործությունը: «Լալաևը գնում էր առջևից: Հանկարծ որոտացին գնդակները: Նա վիրավորված վայր ընկավ, բայց շարունակում էր սողալ չորեքթաթ: Կինը վազեց դեպի ամուսինը և իր մարմնով ուզում էր նրան պաշտպանել

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց.1, գ. 383, թ. 29:
[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց.1, գ. 137, թ.թ. 42,43 :
[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237՞, վավ. 57, թ.թ. 5,6:

ոճրագործների գնդակներից: Քսանից ավելի գնդակներ տեղացին կնոջ մեջքին: Երկու ձեռքերը շարժելով օդի մեջ՝ կինը վայր ընկավ երեսի վրա»[1]:

Լալաև ամուսիններին սպանելուց հետո թաթարները նրանց դիակները շպրտեցին շքամուտքից ներս, ապա հրդեհեցին տունը:

Երբ այրվող տանը մոտեցան մոտ 30 կազակներ, նկուղային հարկից դուրս ցատկեց մի հայ, շորերից դատելով՝ գյուղացի և նետվեց դեպի կազակները՝ հույս ունենալով, որ նրանք կպաշտպանեն իրեն, բայց կազակներից մեկը մի մուրճաձև երկաթի հարվածով նրան գետին տապալեց: Սարսափից խենթացած դժբախտ գյուղացին նետվեց փողոցի հանդիպակաց կողմը, դեպի Զուևի տան մուտքը, որի մոտ կանգնած էին մի քանի զինվորներ՝ Սայանի գնդի սպա, փոխկապիտան Նևրոցկու գլխավորությամբ: Զինվորները սվինները դեմ տվեցին գյուղացուն: Այնուամենայնիվ, նա խցկվեց մուտքը, բայց շուտով դռները բացվեցին, և զինվորները նրա վզակոթին հասցնելով՝ դուրս նետեցին: Գյուղացու վրա տեղացին կրակոցներ: Նա նորից վազելով մտավ մուտք, բայց դարձյալ դուրս հրեցին: Արդեն դաշունահար՝ նա երրորդ անգամ նետվեց դեպի դուռը, բայց այդ պահին թուրք ամբոխը հափշտակեց նրան և տառացիորեն հոշոտեց՝ երկու քաղաքապահ ոստիկանների խրախուսիչ գոչյունների ներքո.

- Խփի՛ր էդ հայ շանը»[2]:

Լալաևի տան հրդեհի ժամերին կրակի տրվեց նաև նույն հրապարակի վրա գտնվող հայտնի վաճառական Թաթոսյանի տունը՝ ընտանիքով հանդերձ: Ականատեսը պատմում էր, թե ինչպես քաղաքապահ ոստիկանը դույլերով մազութ էր մոտեցնում թուրքերին՝ շենքը հրդեհելու համար[3]:

Տարաբախտ Լալաևների և Թաթոսյանների տների հետ կապված ողբերգությունը Բաքվում 1905թ. փետրվարին տեղի ունեցած չորսօրյա արյունալի ջարդերի վերջին արարն էր:

Մուսուլման խաղաղ բնակչության մեծամասնությունը ջարդերին վերաբերվեց նույնպիսի սարսափով, ինչպես և քրիստոնյաները:

Չորսօրյա ընդհարումները մնացել էին հետևում, և հիմա կռվող կողմերից յուրաքանչյուրը հաշվում էր իր մարդկային կորուստները, իսկ բոլորը միասին ի մի էին բերում քաղաքին հասցրած հսկայական նյութական մնասը:

Հայերը տվել էին 205 սպանված և 121 վիրավոր: Սպանվածներից 30 հոգի ողջ-ողջ այրվել էին հրդեհված տների մեջ: Զոհված հայերի թվում շատ էին կանայք, երեխաները, ծերերը: Թուրքերի մարդկային կորուստները կազմել էին 111 սպանված և 128 վիրավոր: Նրանցից սպանվել էր երկու կին՝ այն էլ

[1] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 52-58:
[2] ՀՀ ՀՔԿԿՊԱ, ֆ. 17, ց.1, գ.383, թ. 30:
[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237*, վավ. 57, թ.4:

պատահական գնդակներից, իսկ երեխաներ չէին սպանվել*:

Այլազգիներից սպանվել էր չորս հոգի: Բոլշևիկ գործիչ Պյոտր Մոնտինը, որը կուսակցական հանձնարարությամբ Թիֆլիսից եկել էր Բաքու և ականատես եղել փետրվարի 6-ին և 7-ին քաղաքում ծայր առած սարսափներին, վերադառնալով Թիֆլիս, քաղաքային վարչության նիստում հանդես էր եկել կոտորածների մասին հաղորդումով, շեշտելով, որ ո՛չ ռուսներին և ո՛չ էլ մյուս ազգերի ներկայացուցիչներին թուրքերը ձեռք չէին տալիս, որի շնորհիվ ինքը՝ Մոնտինը, կարողացել է ազատ անցնել քաղաքի փողոցներով և թուրքական թաղերով: Նա նշել էր, որ ռուսների և այլազգիների վրա թուրքերի հարձակումների դեպքեր խիստ հազվադեպ են եղել, միաժամանակ շեշտել էր, որ դրանք էլ չէին լինի, եթե հարձակվողները նրանց արտաքինը չշփոթեին հայերի հետ[1]:

Զոհված հայերը Անդրկովկասի ամենատարբեր հայաբնակ քաղաքներից ու գյուղերից էին, նաև՝ Արևմտյան Հայաստանից:

Ժողովրդական բոլոր դժբախտությունների ժամանակ, ինչպես հայտնի է, ամենամեծ զոհեր տվողը լինում է աղքատ դասակարգը: Այս իրողությունն անփոփոխ մնաց և Բաքվի կոտորածների ժամանակ: Սպանվածների ցուցակում չորս-հինգ հարուստի անուն էր, իսկ մնացածները - մի ահագին երկար շարք - Շուշիի, Զանգեզուրի, Շամախու գյուղերի բնակիչներ, որոնք Բաքու էին գնացել մի կտոր հաց վաստակելու համար: Հենց ամենաշատ զոհերն էլ տվել էին նրանք: Այդ դժբախտներից էին Սամսոն Գևորգյանը, Գրիգոր Նասիբյանը և Սահակ Գրիգորյանը՝ Զանգեզուրի Քարահունջ գյուղից, Միքայել Մատինյանը և Քերովբե Ազգապետյանը՝ Թիֆլիսից, Լևոն

* Երկու կողմերի մարդկային կորուստների վերաբերյալ բերված այս տվյալները մոտավոր են: Բանն այն է, որ գրականության մեջ տրված են տարբեր, շատ հաճախ իրար խիստ հակասող թվեր: Բոլշևիկ Ֆիլիպ Մախարաձեն գրել է, թե 1905-ի փետրվարյան չորս օրերին սպանվածների և վիրավորների թիվը Բաքվում անցել էր 1000-ից (տե՛ս Филипп Махарадзе, Очерки революционного движения в Закавказье, Госиздат Грузии, Тбилиси, 1927, էջ 300): Գրական մի ուրիշ աղբյուր վկայում է, որ այդ օրերին սպանվել է 750 և վիրավորվել 830 մարդ (տե՛ս "Революция и Р.К.П.(б) в материалах и документах, том третий, "1905 год", էջ 435): Դ.Անանունն իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության 3-րդ հատորում (էջ 168-169) զետեղել է սենատոր Կուզմինսկու և Բոգդան Դոլուխանյանի հաղորդած՝ միմյանցից տարբեր թվերը. ըստ Կուզմինսկու տվյալների, չորս օրում Բաքվում սպանվել է 234 հայ և 41 թուրք, վիրավորվել է 104 հայ և 87 թուրք: Ըստ Բ.Դոլուխանյանի՝ այդ նույն ժամանակ սպանվել է 205 հայ և 111 թուրք, վիրավորվել է 121 հայ և 128 թուրք: Չգիտես ինչու մի կողմ դնելով սենատոր Կուզմինսկու բերած ավելի հավատ ներշնչող տվյալները (որոնք Պետերբուրգից Բաքու եկած սենատորի կողմից տեղում կազմված բազմանդամ հանձնաժողովի մի քանի ամիս տևած ուսումնասիրությունների արդյունք էին), հետագա բոլոր հետազոտողները հիմք են ընդունել Բ.Դոլուխանյանի հրապարակածը: Ա-ԴՕ-ն Դոլուխանյանի բերած այդ թվերը քաղել է Դ.Անանունու գրքից, Ա-ԴՕ-յի գրքից այդ թվերը հանգրվանել են Հովակ Ստեփանյանի «Նիկոլ Դուման» ուսումնասիրության մեջ («Հայրենիք» ամսագիր, N7 (91), մայիս, 1930, էջ 151) և Ա.Գյուլխանդանյանի «Հայ-թաթարական ընդհարումները» գրքում (հատ. առաջին, էջ 55):
[1] ՀՀ ՀՔԿԿՊԱ, ֆ. 1022, ց.2, գ. 130, թ. 17:

Թարազդարյանը և Խաչանես Թևոսյանը՝ Շամախուց: Ամենաշատ զոհեր տվել էին զանգեզուրցիները (չուրջ 40 հոգի) և Շուշի քաղաքից եկածները (20 հոգի)[1]:

Նշենք, որ Անդրկովկասի հայկական գավառներից տարիներ շարունակ տոկոսային հարաբերությամբ ամենից շատ Զանգեզուրի հայերն էին մեկնում արտագնա աշխատանքի: Դա է պատճառը, որ զանգեզուրցիները Բաքու քաղաքի և նավթահանքերի հայ բանվորների թվում համեմատաբար մեծ տոկոս էին կազմում: Այսպես, 1884թ. միայն Զանգեզուրի գավառից պանդխտության էր դիմել 3000 գյուղացի[2], որոնց զգալի մասը գնացել էր Բաքու: 1902թ. նույն գավառի միայն Խնձորեսկ գյուղից Բաքվում էր գտնվում ավելի քան 1300 հոգի[3]: Ինչպես Բաքվի հայ բանվորության մյուս հատվածների, այնպես էլ զանգեզուրցի բանվորների մեծամասնությունն ապրում էր տառապալից կյանքով:

Աղքատներին ավելի հեշտ էր պատուհասել, քանի որ նրանք հազիվ պատրաստարված էին կեղտոտ ու էժանագին, ամուր փականքներ չունեցող բարաքներում: Դրանք՝ այդ խեղճերը, իրենց արյունով ապահովեցին կյանքն այն մարդկանց, որոնք հնարավորություն ունեին թաքնվելու քաղաքի ավելի անվտանգ մասերում, բարեկարգ բնակարաններում[4]: Դրանք հայ մեծահարուստներն էին, բուրժուական մտավորականներ, բարձր վարձատրվող պաշտոնյաներ, որոնք մեծ մասամբ ապրում էին քաղաքի կենտրոնում կամ կենտրոնին մոտ վայրերում[5]: Ջարդի օրերին սրանք «դողահար կուչ էին եկել իրենց տներում՝ ամուր կողպելով դռներն ու լուսամուտները և անիծելով բախտը, որ հայ էր լույս աշխարհ բերել իրենց: ... Բոլոր ժամանակ խխունջի պես կծկված մնացին իրենց պատյանի մեջ, մինչև որ մի հրաշքով խաղաղությունը վերականգնվեց, և նրանք դուրս եկան իրենց թաքստոցից»[6]:

Հայերի կորուստների շատ լինելը բացատրվում է երկու հանգամանքով. ա) ամբողջ մեկ ու կես օր՝ փետրվարի 6-ին և հաջորդ օրվա մինչև կեսօրը, Թուրքերը հայերի արյունը հեղում էին, կարելի է ասել, անպատիժ, բ) ջարդի բոլոր չորս օրերին Թուրքերը հաշվի չէին առնում, թե իրենց ձեռքն ընկած տարաբախտ հայերը կանա՞յք են, երեխանե՞ր, թե՞ ծերեր: Ի տարբերություն նրանց՝ հայ մարտիկները միայն բաց կռվում էին հակադարձում ջարդարարներին*:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022 ց. 2, գ. 133, թ. 14:
[2] Տե՛ս "Материалы по изучению быта государственных крестьян Закавказского Края", т.4, ч.1, Тифлис, 1886, էջ 103:
[3] Տե՛ս Վ.Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 41:
[4] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց.2, գ. 130, թ. 17:
[5] «Մշակ», N 28, 20 փետրվարի 1905թ.:
[6] Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 114:

* Փետրվարյան ջարդերի օրերին հայերի սպանությունների, նրանց տների հրդեհումների, սոսկալի տեսարանների մի մասը արժեքավոր փոտովավերագրերի տեսքով հասել է մեզ,

Մեծ էին նյութական կորուստները՝ մոտ 3 միլիոն ռուբլի ոսկով*, որի մեծագույն մասը հայերինն էր: Թալանի մատնված 138 խանութներից և արհեստանոցներից 97-ը պատկանում էր հայերին[1]: Թուրքական շրջանների բոլոր հայկական խանութները թալանվել էին, մինչդեռ հայկական շրջանների մուսուլմանների խանութները և արհեստանոցները համարյա չէին տուժել: Հայերն իրենց թաղերում արգելել էին Թուրքերի խանութների թալանը և հրդեհը: Թուրք խանութպանները ապշած նայում էին իրենց խանութներին՝ ամեն բան տեղն էր, ոչինչ չէր տարված և չէր ավերված: Ասում էին, որ նույն օրերին մի քանի խանութպան Թուրքեր, խիստ զզացված, ցանկություն էին հայտնել դաշնակցության կոմիտեին տուրք տալ, բայց դա, անշուշտ, վայրկենական ցանկություն էր եղել:

Հայերի կորուստները շատ ավելին կլինեին, եթե նրանք արագ չկազմակերպվեին և արժանի հակահարված չտային զինված խուժանին: Այդ հանգամանքը բազմիցս ընդգծել են հայ ժողովրդի եվրոպացի բարեկամները: Հայ ժողովրդի ազնիվ բարեկամ, «Պրո-Արմենիա» թերթի խմբագիր Պիեռ Քիյառը Փարիզից «Դրոշակին» գրում էր, որ առաջին օրերի կոտորածների լուրն իրենք ընդունել են տխրությամբ, բայց բերկրանք են ապրել, երբ «լուր եկավ այն հաղթական դիմադրության մասին, որ ասիական բարբարոսությանը ցույց տվեցին ձեր ժողովրդի քաջարի ու գիտակից ներկայացուցիչները»[2]:

Դիմադրության կազմակերպման գործում անգնահատելի եղավ դաշնակցության Բաքվի կազմակերպության դերը: Եթե դաշնակցականները ժամանա-

որի համար պարտական ենք դարակզբի Բաքվի հայտնի լուսանկարիչներից մեկին՝ Աղաջան Ալավերդյանին:Նա Գորիսի Քարահունջ գյուղից էր, որը ջարդերից հետո վերադարձել էր հայրենի գյուղ, բայց շատ չանցած՝ ընտանիքով տեղափոխվել էր Թիֆլիս, այնտեղ ապրել երկար տարիներ, այնտեղ էլ վախճանվել: Լուսանկարչի դուստրը՝ Նվարդը, Թիֆլիսում պահում-պահպանում էր հոր հիշատակի հետ կապված իրեր, թղթեր, լուսանկարներ: Բաքվի հայերի ջարդերի հետևանքները պատկերող լուսանկարները, բնականաբար, հայ-ադրբեջանական ժողովուրդների «եղբայրական բարեկամության» խորհրդային ժամանակներում չէին կարող հրապարակ հանվել: Ա.Ալավերդյանի համագյուղացի Փառանձեմ Տոտոզյանից պատահաբար իմանալով այդ լուսանկարների մասին՝ Թիֆլիսում եղած ժամանակ, 1989թ. այցելեցինք 80-ամյա Նվարդին, որին այսօր էլ, շատ տարիներ անց, հիշում ենք երախտագիտությամբ:Նա մեզ տրամադրեց փետրվարյան ջարդերը պատկերող 34 անտիպ լուսանկարներ, որոնք առ այսօր չեն հրապարակվել և պահվում են մեր անձնական արխիվում:

* Այս թիվը նույնպես ճշտված չէ: Դ. Անանունը, հենվելով «Մշակի» հրատարակած տվյալների վրա՝ ընդհանուր վնասը ցույց է տվել 3 միլիոն ռուբլի՝ որոշ վերապահումով, թեև նշել է աղբյուրները: Ա.Գյուլխանդանյանը կրկնել է այդ թիվը՝ 3 միլիոն, միաժամանակ ավելացնելով, որ դրա «մեծագույն մասը հայկական էր»: Այդ կապակցությամբ նրա «Հայ-թաթարական ընդհարումները» (հատ. Ա., «Բաքվի առաջին ընդհարումները») գրքի մասին գրած իր գրախոսականում Սիմոն Վրացյանը նշել է, որ աշխատության հեղինակը այդ թվերը ներկայացրել է որպես հաստատված փաստ և, աղբյուրները ցույց տալու փոխարեն, ասում է՝ «ինչպես ցույց տվեց վիճակագրությունը» (էջ 55): Ո՞ր վիճակագրությունը – մնում է անհայտ («Վեմ» հանդես, N 2, մարտ-ապրիլ, 1934, էջ 139):

[1] Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 55:
[2] «Դրոշակ», N 9 (175), սեպտեմբեր, 1906, էջ 131:

կին թերահավատությամբ չվերաբերվեին ոստիկանության հանցավոր պրոպագանդային և այդ առիթով տրված նախազգուշացումներին, ինչ խոսք, ջարդարարները Հայերի ուժերով կհնչվեին հենց առաջին օրը: Բայց, ի պատիվ կազմակերպության, կարողացավ աներևակայելի կարճ ժամանակում, ուղղակի ժամերի ընթացքում, սթափվել և համարձակորեն իր ձեռքը վերցնել քաղաքի Հայության պաշտպանության դժվարին ու պատասխանատու գործը:

Հայերի ինքնապաշտպանության գործի գլխավոր կազմակերպիչը, ինչպես ասվեց, հին Հայդուկ, ուժեղ կամքի և բնական խելքի տեր, ղարաբաղցի Նիկոլ Դումանն էր (Նիկոլայ Տեր-Հովհաննիսյան): Դժվարությունները նրա հետ կիսում էին Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ), Աբրահամ Գյուլխանդանյանը, Մարտիրոս Ջարուխյանը:

Ընդհարումների օրերին թրծվեցին տասնյակ խիզախ մարտիկներ՝ Հմայակ Ջանփոլադյանը, Համբարձում (Համբի) Բալայանը, Հովհաննես Քոչարյանը (Շամախեցի Իվան), Ղաչաղ Ասլանը, Գասպար Տեր-Մկրտչյանը, Վահան Մինախորյանը, Թադևոս Ամիրյանը, օրիորդ Շագիդանյանցը, տիկ. Շեկ-Հովսեփյանը, տիկ. Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը, տիկ. Աննան, Փոքրիկ Ղազարը (Ղազո), Քուրդ Արսենը, Մոկացի Գրիգորը, Առյուծ Ավագը, Գասոն, Փոքրիկ Սերգեյը (Աղասի), Շամիրը և շատ ուրիշներ:

Չի կարելի մոռացության տալ այն ջանքերը, որ ընդհարումների օրերին և դրանից հետո ցուցաբերեցին Բաքվի մի քանի մեծահարուստ, անվանի հայեր: Այդ օրերին իրենց հատկապես արիաբար պահեցին քաղաքի աչքի ընկնող փաստաբաններից և նավթարդյունաբերողներից Բոգդան Դոլուխանյանը, նավթային ընկերության վարիչ, բորսայի նախագահ, ինժեներ Ստեփան Թարվանդյանը, քաղաքի բուրժուական մտավորականության խոշոր ներկայացուցիչներից, Բաքվի տեխնիկական ընկերության նախագահ, Բաքվի Հայոց կուլտուրական ընկերության հիմնադիր Կոնստանդին Խատիսյանը, նավթային ընկերություններից մեկի վարիչ Հայկ Տեր-Միքայելյանը:Նրանք ամեն բան անում էին աշխատելու դժբախտության մեջ Հայտնված իրենց ազգակիցներին, նաև մեծ դեր խաղացին քաղաքում խաղաղությունը վերահաստատելու, Հայերի և մահմեդականների միջև տանելի հարաբերություններ մշակելու գործում:

Բայց Բաքվի Հայ բուրժուազիան ու նրա մտավորականությունը բնավ չէին մոռացել, թե կատաստրոֆները կարելի է կանխել հակադարձությամբ, ուժի միջոցով: Նրանք հասկացված էին, որ եթե վերին իշխանությունները ուզում քննել Բաքվում կատարվող դեպքերին, ապա անմիջապես կկանգնեցնեին կատաստրոֆները: Քանի որ նրանց համոզմունքն այդ էր, ուստի նրանց գործելու գլխավոր միջոցը բողոքներ ուղարկելն էր Պետերբուրգ՝ կառավարությանը, և Թիֆլիս՝ կովկասյան կառավարչությանը:

Դեռևս Դեկ օրվա վերջում Բաքվի Հայ Համայնքի ներկայացուցիչների անունից շտապ հեռագիր ուղարկվեց Պետերբուրգ՝ պրեմիեր-մինիստր կոմս

Վիտտեին, որտեղ խնդրվում էր ակտիվ միջամտել՝ քաղաքում ծայր առած արյունալի դեպքերը կանխելու համար[1]: Նույն օրը Թիֆլիսի քաղաքագլուխ Վերմիշևը Կովկասի կառավարչապետի պաշտոնակատար Մայամային ներկայացրեց գրություն, որում ասվում էր, որ Բաքվի դեպքերը սաստիկ ցնցել են Թիֆլիսի ազգաբնակչությանը: «Մարդու սիրտը ուղղակի արյունոտվում է՝ լսելով խմբային սպանությունների, խաղաղ ժողովրդի կոտորածի մասին, այն ժողովրդի, որ իրեն պատսպարված էր կարծում ռուսաց օրենքների հովանու տակ: Կատարված սոսկալի գազանություններ նախատինք են մեր ժամանակի համար»[2]:

Բաքուն ամբողջ կայսրության մեջ սկիզբ դրեց նորանոր ջարդերի վակխանալիայի: «Փետրվարյան ջարդերի հայ նահատակները համառուսական հեղափոխության անդրանիկ և բազմաքանակ զոհերն էին, - գրում էր դաշնակցության «Ցառաջ» թերթը,- դա մի չարագուշակ ազդանշան էր այն վարչական պրովոկացիայի և խուլիգանական վանդալիզմի, որ արյան գետերով պիտի ողողեր ամբողջ Ռուսաստանը և հյուծեր նրա տնտեսության բոլոր կենսական հյութերը: Ռուսաստանի հեղափոխության պատմության տեսակետից փետրվարյան Բաքուն այն առաջին օղակն էր, որից հետո պիտի հյուսվեր Իրկուտսկից, Օդեսայից, Կիևից և այլ քաղաքներից ու վայրերից կազմված շղթան»[3]:

Մինչ չարաբաստիկ 1905թ. փետրվարի 6-9-ը հայ ազգը, որքան էլ ենթակա Գոլիցինի և Պլևեի նվիրագործած ռեժիմի անագորույն հալածանքների, բայց, այնուամենայնիվ, մի խոր հավատ ուներ, թե ինքն ունի իր գոյությանը սպառնացող միայն մի թշնամի՝ համիդյան բռնակալությունը: Բաքվի փետրվարյան օրերը ցույց տվեցին, որ ցարական բռնակալությունը հակված էր հայության հանդեպ որդեգրելու համիդականության արյունալի մեթոդները*:

Ցարիզմի կազմակերպած կոտորածի մեջ չէին կարող լինել հաղթողներ:

---

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց.2, գ. 147, թ. 65:
[2] «Մշակ», N 20, 11 փետրվարի 1905թ.:
[3] «Ցառաջ» (Թիֆլիս), N 30, 22 փետրվարի 1906թ.:
* Հայ պատմաբանները տարբեր ժամանակներում հրապարակել են թե՛ Հայաստանի և թե՛ այլ երկրների արխիվներում պահպանվող բազմաթիվ վավերագրեր ու նյութեր, որոնք անառարկելիորեն հաստատում են, որ Բաքվի փետրվարյան կոտորածները նախապես կազմակերպված են եղել և իրագործվել են ծրագրված ու հետևողականորեն: Այդպիսի մի շարք արժեքավոր փաստաթղթեր առաջին անգամ հրատարակել է ակադեմիկոս Գալուստ Գալոյանը Անդրկովկասում բանվորական շարժմանը և ազգային հարցին նվիրված իր աշխատության մեջ (տե՛ս Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье. 1900-1922, Ереван, 1969, էջ 70-89): Հեղինակը միանգամայն իրավացիորեն իր մեկ այլ աշխատության մեջ փաստերի անաչառ քննությունից եզրահանգում է, որ այն, ինչ կատարվել է այդ քաղաքում, հրահրված է եղել ցարական իշխանությունների և անձամբ Նիկոլայ II-ի կողմից (տե՛ս Գ. Ա. Գալոյան, Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, «Հայաստան» հրատ., Երևան, 1982, էջ 138-139):

Արյան բաղնիքում «հաղթողը» նույնպես պարտված էր, պարտված էին բոլորը:

«Սոսկալի իրականությունը» առաջնորդող հոդվածում «Մշակը» գրում էր.

«Դրանք (փետրվարյան կոտորածները: - Հ.Ս.) բոլորովին անսպասելի դեպքեր էին: Ո՞վ մեզանից մի քանի օր սրանից առաջ կարող էր կարծել, թե մենք դժբախտ ականատեսներ կլինենք այն վայրենի տեսարաններին ու գազանային կրքերի այն անզուսպ բռնկման, որոնք սև էջ բացեցին մեր երկրի ազգաբնակչության հարաբերությունների պատմության մեջ»[1]:

Բաքվի փետրվարյան կոտորածները մի անծայր ամոթ էր Անդրկովկասի համար: Դարավոր հարևանների դրացիական կապը մահացու հարված էր ստացել: Բացվել էր մի սև դարագլուխ՝ սկիզբ դնելով անվերջ դավադիր ոճիրների:

ԱՆԿԱՑՈՒՆ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Շամախինկայում թուրք մարդասպանները վերջին գնդակներն էին արձակում, և երբ իրադարձություններին սկսել էին միջամտել զորքերը, այդ նույն ժամանակ մերթ այստեղ, մերթ այնտեղ լսվում էին «Հաշտությու՜ն, հաշտությու՜ն» բացականչություններ: Բացականչողները թուրքերն էին: Նրանք էին հաշտություն փնտրում: Բազմահազար ամբոխը դուրս էր եկել փողոցներ և ամբողջ ձայնով գոչում էր. «Նահլաթ չեյթանա՜, նահլաթ չեյթանա՜» («Անե՜ծք սատանային»)[2]: Փետրվարի 9-ի ժամը 12-ի մոտերքը նահանգապետի հրավերով նրա մոտ հավաքվեցին հայ և թուրք համայնքների ներկայացուցիչները: Վերջիններս լավ էին հասկանում, որ եթե անակնկալ դրության մեջ լինելով՝ հայերը կարողացել են ջախջախել իրենց բանդաներին, ապա դեպքերը կրկնվելու դեպքում իրենք ավելի զորավոր հարվածներ կստանան: Թուրք ներկայացուցիչները բոլորովին կերպարանափոխվել էին և անմեղ կերպարանք ընդունել: Կարճատև բանակցությունից հետո հայերը համաձայնեցին թուրքերի արած հաշտության առաջարկին:

Հաշտության լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքով մեկ: Ժամը 2-ից կենտրոնական փողոցներով սկսեց անցնել մուսուլման և հայ հոգևորականության խաղաղ երթը՝ սրիկա Նակաշիձեի գլխավորությամբ: Հանկարծ հնարավոր դարձավ այն, ինչը խաղաղ բնակիչները աղաչում էին նահանգապետին կոտորածների հենց ամենասկզբում: Այժմ դա նողկալի կատակերգություն էր: Կոտորածը դադարեց հենց այնպես, ինչպես և սկսվել էր՝ կարծես ձեռքի մի շարժումով, մի հրամանով:

Չորս օր շարունակ սարսափելի ապրումների մեջ ընկած բոլոր ազգությունների մարդիկ դուրս թափվեցին փողոցներն ու հրապարակները՝ իրենց ուրախությունն արտահայտելով լացով ու գրկախառնումներով, թեև միաժամանակ վախվորած չորս կողմն էին նայում և ամենաաննշան կասկածելի աղմուկի դեպքում իսկ ձեռքերն անմիջապես դեպի գոտիներն ու գրպաններն էին տանում: Պատահական կրակոց էր լսվում թե չէ, մարդիկ անմիջապես աղաղակով այս ու այն կողմ էին նետվում, և սկսվում էր հրաձգություն: Բայց բնակիչները, թեև անվստահությամբ լեցուն, մեծ խմբերով խռնվում էին փողոցներում՝ գրեթե եռօրյա տնային բանտարկությունից հետո ազահորեն ըմբոշխնելով մոտեցող խաղաղությունը:

«Ուռա՜» բացականչություններով և զգուշության համար զինվորներով ուղեկցվող խաղաղ երթերն ընթանում էին բոլոր փողոցներով: Երթերի մասնակիցները ականատես էին լինում սարսափելի տեսարանների: Առավել տուժած թաղամասերի փողոցներում շարքերով ընկած էին դեռ չհավաքած, անճանաչելիորեն խոշտանգված դիակներ, ծխում էին այրված տների մոխրացած կույտերը: Ահա պատի տակ նստել է մի ծեր հայ, գլուխը քարին է խփում և ահավոր ոռնում, ոռնում անմարդկային ձայնով՝ ժամանակ առ ժամանակ բացականչելով ոչ այն է դառնակսկիծ գանգատներ, ոչ այն է սարսափելի անեծքներ: Նրա առջև ընկած էր անգթորեն խոշտանգված մի տղա, որի ճեղքված որովայնից դուրս էր թափվել փորոտիքը, ձեռքերի դաստակները և ականջները կտրված էին, աչքերը՝ հանած, բերանը՝ գրեթե մինչև ականջները պատռած: Դժբախտ հայրը գտել էր որդու դիակը...[1]:

Ահա մի կին էր ընկած նույնպես ճեղքված որովայնով և ջարդված գանգով, որտեղից դուրս էին թափվել արյունոտված ուղեղի կտորները: Եվ հետո շարունակ դիակնե՛ր ու դիակնե՛ր՝ քարացած, այլանդակված, սարսափելի դեմքերով: Ամենուրեք թափված ջարդոտված իրեր, թղթեր և տուփեր՝ կողոպտված խանութներից[2]:

«Կոկորդս սեղմում է հեկեկոցը, - ասում էր ականատեսը: - Ահավոր դժբախտությունների ստոր մեղավորների նկատմամբ անսահման ատելությունն ու վրեժի ծարավը համակել են կուրծքս»[3]:

Մնացող փլատակներից հանում էին տասնյակ այրված դիակներ. կարծես դրան վերջ չէր լինելու: Առանձնապես շատ էին երեխաների դիակները... Ահա, օրինակ, պարկի մեջ մտցրած ածխացած ծծկեր երեխայի շուրջը կանգնած էին սարսափից գունատված մարդիկ. լսվում էին թե՛ լացի, թե՛ զսպված հառաչանքի և թե՛ անեծքի ձայներ: Միմյանց պատմում էին ավելի ահավոր սարսափների մասին. այնտեղ գլխովին մորթոտել են մի քանի ընտանիք, այնտեղ սպանել են մորը և որբացրել երեխաներին, այնտեղ մոր աչքի առջև մորթել են հինգ երեխաներին և ամուսնուն: Այդ պատմությունները լսելիս արյունը

---

[1] «Մշակ», N 20, 11 փետրվարի 1905թ.:
[2] Տե՛ս «Հայրենիք», N 10 (214), օգոստոս, 1940, էջ 145-146:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 31:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

սառչում էր մարդկանց երակներում:

Այդ ահավոր տեսարանների մոտից երաժշտությամբ ու բացականչություններով անցնում էր «խաղաղ» երթը: Առջևից, հռոմեական հաղթահերոսի նման, կառքով ընթանում էր նահանգապետը՝ իշխան Նակաշիձեն՝ շրջապատված կասկածելի անձնավորություններով, ողորմածաբար ժպտալով և անտարբեր հայացքը սահեցնելով մահվան ու ավերածությունների ահավոր տեսարանների վրայով:

Կռիվը դադար առնելուց հետո Նիկոլ Դումանը հայ մարտիկներին կարգադրեց դեռ չհեռանալ գրված դիրքերից, մինչև որ քաղաքի հայ բնակիչները վստահ լինեն, որ արյունալի դեպքերը չեն կրկնվելու:

Դումանի մտավախությունը զուր չէր: Թեև փետրվարի 6-8-ը, քաղաքի համեմատությամբ, բանվորական շրջաններում ջարդարարները նվազ ակտիվ էին, բայց փետրվարի 9-ին և 10-ին, երբ քաղաքում հաշտության աղաղակներ էին, Բիբի-Հեյբաթում, Զաբրաթում և Սաբունչիում եղան հայերի և ռուսների սպանություններ, որոնց հեղինակները քաղաքից եկած մուսուլման ղոչիներն էին: Երկու օրում նրանք Բիբի-Հեյբաթում սպանեցին 10, Զաբրաթում և Սաբունչիում՝ 15 մարդ:

Փետրվարի 10-ին և 11-ին փողոցներում շարունակում էին դիակներ հավաքել, ձգվում էին անվերջանալի թաղման թափորներ: Ջորսօրյա վայրագությունից հետո շարունակվում էին նաև հաշտության երթերը: Այս ու այնտեղ հավաքված տարբեր ազգությունների ականավոր անձինք, բարձրագույն հոգևորականությունը եկեղեցիներում ու մզկիթներում արտասանում էին մերկացուցիչ ճառեր և լիակատար ներման կոչեր էին անում: Բայց այդ ամենը ուշացած էր, երկու կողմից խլվել էին հարյուրավոր կյանքեր:

Հնչակյան կուսակցության Բաքվի մասնաճյուղը փետրվարի 11-ին քաղաքի հայ և թուրք հասարակությանը դիմում հղեց, ուր ասված էր. «Ինչ շահեցինք – հարյուրավոր դիակներ և ընդհանուր թշնամու հրճվանք... Բավակա՞ն է, հայ և թուրք հասարակություն... մենք ունենք կռիվ՝ մեծ գաղափարական կռիվ. այդ կռիվը ցարի կառավարության դեմ է...»[1]:

Իր հերթին Էջմիածնի պաշտոնական ամսագիր «Արարատը» գրում էր.

«Իսկ առա՞ջ, ու՞ր էր առաջ այդ ոգով աշխատանքը. ու՞ր էր նա, հակակշռելու այն եսական և ատելության քարոզը, որը լավեց մեր երկրում անսովոր ուժով, որը փորձեց մեր լեռնային երկրի ձորերի և անդունդների չափ անդունդներ բանալ խաղաղ աշխատանքի դարձած բազմալեզու ժողովուրդների միջև»[2]:

Բայց իսկական հաշտեցում չկար*: Ինչ-որ մռայլ, նյարդային լարվածություն էր տիրում, վրդովված հասարակական խիղճը ծարավի էր արդարացի հատուցման, բոլորը ցանկանում էին գտնել «մութ ուժերը», որոնց մասին խոսում էին որպես ընդհանուր դժբախտությունների իսկական մեղավորների:

Բաքվի մզկիթներում ու եկեղեցիներում հաշտություն կայացնելը անմեղ, միաժամանակ անարդյունավետ միջոցներ էին: Անհրաժեշտ էին ավելի գործուն, խորքային միջոցներ: «Հաշտություն կարելի է կայացնել միայն այն ժամանակ, – գրում էր «սպեցիֆիկյան» «Սոցիալիստ» թերթը, – երբ հնարավոր միջոցներով քաղաքական գիտակցություն կմտցվի թաթար բանվորության մեջ: Բաքվի ոստիկանների համար, որոնց ղեկավարում է կառավարությունը, որոնց համար թալանը քաղցր երազ է, ոչ մի արժեք չունեն խոսքը, հաշտության երդումները և այլն»[1]:

Մտավորական քաղաքաբնակների մեծ խմբերն ավելի ու ավելի համարձակորեն էին սկսում խոսել ցարական կառավարության քիշինյովյան-գոմելյան հրեական ջարդերի քաղաքականությունը Բաքվում կիրառելու և տեղական իշխանությունների կողմից ջարդերը ղեկավարելու մասին:

Բայց ոստիկանությունն էլ քնած չէր: Ականատեսը գրում է, որ նա փութաջանորեն ճգնում էր մեղքը բարդել հայերի վրա, նոր անհեթեթ լուրեր էր տարածում և սաստիկ չափազանցնում հայերի կատարած ավերածություններն ու սպանությունները: Այժմ ջանում էին նրանց դեմ հանել խաղաղ ռուս մարդկանց: Շուկայում ռուս վաճառողներին ցույց էին տալիս մի գեղանկար, որի վրա պատկերված էր, որ, իբր, մի հայ սպանում է ռուսական ցարին: Տարածվում էին լուրեր, թե հայերը հատուկ ռումբեր են սարքել ռուսների բնակարաններ նետելու համար[2]:

Հուզմունքը, այսպիսով, չէր նվազում, և ամեն վայրկյան կարող էր նոր աղետ պայթել: Օրինակ, փետրվարի 11-ին քաղաքում հանկարծ իրարանցում սկսվեց, դարպասները շրխկոցով փակվեցին: Տագնապի պատճառ էր դարձել քաղաքացիների խաղաղ երթը, որին գրգռված բնակիչները դրել էին ջարդարարների հրոսակախմբի տեղ: Կրակոցներ լսվեցին. կրակում էին տեղերում պատրաստ սպասող մուսուլմանները, որպեսզի, ինչպես իրենք էին ասում, հայերն իմանային, որ իրենք քնած չեն:

Բնակչությունը այնպիսի լարված դրության մեջ էր, որ մի ամենաչնչին երևույթ՝ մի անհատի պատահական վազք, մի ճիչ, մի աղաղակ, անմիջապես ահաբեկում էր՝ խանութներն իսկույն փակվում էին, փախչող փախչողի էր լինում:

Ստանալով առաջին տեղեկությունները Բաքվի սարսափելի դեպքերի մասին՝ ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը փետրվարի 11-ի կոնդա-

---

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4041, ց.1, գ. 66, թ.1:
[2] «Արարատ», N 2, փետրվար, 1905, էջ 130:
* Այդ մասին է վկայում նաև Մատենադարանում պահպանվող Շամախու թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոս Համազասպյանի կողմից Խրիմյան կաթողիկոսին ուղարկած

«Փետրվարի 12» թվակիր 11 էջից բաղկացած «Հայտարարությունը» (տե՛ս Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237*, վավ. 56, թ.թ.1-11):
[1] «Սոցիալիստ» (Ժընև), N 9, 9(22) օգոստոսի 1905թ.:
[2] Տե՛ս ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 31:

կով մխիթարեց կոտորածից մնացածներին: Եղելությունից ցնցված՝ ծերունի վեհափառը խորին վշտով գրում էր.

«Գալարեցան աղիք իմ, և սառեցաւ արիւն իմ յիս ընդ այդ լուր աղէխարշ, սիրեցեալ զաւակք իմ, և ես տառապեալս և ցամաքեալս որպե՞ս մխիթարեցից զքեզ»:

Այնուամենայնիվ, Հայրիկը ճիգ էր անում սփոփանքի խոսք ասել դժբախտության մեջ հայտնվածներին.

«Աստուած ամենակարող, որ Տերն է նեղելոց և վշտացելոց և սփոփիչ յուսահատից, մխիթարեսցէ զվշտացեալ սիրտս Ձեր և իմն, որ առաւել կամ վշտահար, կարողացուսցէ զՁեզ ի տկարութեան Ձերում, պարգևելով ամենեցունցդ սեր, միութիւն, նոր եռանդ և յաջողութիւն հանդերձ առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ ննջեցելոց Ձերոց և նահատակաց – հանգիստ և երկնային արքայութիւն»[1]:

Փետրվարի 11-ի երեկոյան կաթողիկոսը մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Բաքու գնալու և տեղում խաղաղ կացության համար միջոցներ խորհելու: Նրան ուղեկցում էին Հուսիկ եպիսկոպոսը, Մխիթար, Հուսիկ և Կորյուն վարդապետները: Հիվանդ Խրիմյանին Թիֆլիսում խորհուրդ տվեցին չմեկնել Բաքու, ուստի նա մնաց Կովկասի մայրաքաղաքում, իսկ Բաքու գնացին Հուսիկ եպիսկոպոսն ու Մխիթար վարդապետը՝ իշխան Ամիլախվարիի հետ[2]:

Բաքվի աղետից մնացածներին օգնություն ցույց տալու համար Թիֆլիսում կաթողիկոսը փետրվարի 14-ին կոնդակ է ստորագրում հանգանակիչ հանձնաժողով ստեղծելու մասին: Հաստատվել էր հետևյալ կազմը. Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակի թեմական առաջնորդ Գարեգին եպիսկոպոս, Ավետիս Ահարոնյան, Համբարձում Առաքելյան, իշխան Ալեքսանդր Միքայելյան-Արղության, Արշակ Բաբյան, բժ. Ալեքսանդր Խատիսյան, Ալեքսանդր Մելիք-Ազարյան, Սոկրատ Մելիք-Ադամյան, Տիգրան Հովհաննիսյան, Ավետիք Սահակյան, բժ. Կարապետ Ստեփանյան, Լևոն Սարգսյան, Ալեքսանդր Քալանթար: Հանձնաժողովի օժանդակ անդամներ էին հաստատվել Հովհաննես Սպենդիարյանը, Վահան Արծրունին, Եղիշե Թոփչյանը և Ավետիք Արասխանյանը:

Կոնդակում վեհափառ հայրապետը վստահություն էր հայտնում, որ հանձնաժողովը պատվով կկատարի իր առջև դրված ծանր պարտականությունը: «... Ես լիայոյս եմ, զի և ազգայինք մեր բարեպաշտոնք և մարդասէրք յամենայն կողմանց և ի քաղաքացն Ռուսաստանի յօժարութեամբ սրտի տան զլումայն իւրեանց և արկանեն զբաժին նպաստից ի գանձանակն Ձեր յանուն թշուառ և կարօտաւոր արկածելոց Բաքուայ, քանզի քան զամենայն քաղաքս Բաքուն յամենայն դժբաղդութիւնս մեր առաջինն հանդիսանայր յաւուր նուիրաբերութեան առ թշուառս և կարօտեալս, իսկ այսօր ինքն կարօտի այլոց

[1] «Արարատ», N 4, ապրիլ, 1905, էջ 300-301:
[2] Նույն տեղում, N 2, փետրվար, 1905, էջ 127:

օժանդակութեան»[1]:

Փետրվարի 14-ին Բաքվի նահատակների համար հոգեհանգիստ կատարվեց Էջմիածնի տաճարում՝ ամբողջ միաբանության, ճեմարանի ուսուցիչների և ուսանողների, նաև վշտահար հոծ հասարակության ներկայությամբ, որից հետո հանգանակություն բացվեց դժբախտ որբացածների համար՝ առանց կրոնի և ազգային խտրության[2]:

Առանց սպասելու կաթողիկոսի կողմից Թիֆլիսում ստեղծված հանգանակիչ հանձնաժողովի ցուցումներին՝ արդեն փետրվարի կեսերին կամավոր հանգանակություններ սկսվեցին ամենուր:

Իսկ երբ Բաքվի փողոցներ դուրս եկած թուրքերը և հայերն սկսեցին հաշտության հրավեր անել միմյանց, Բաքվի ջարդերի մեղավորներից ամեն մեկը հատուցումից փրկվելու միջոց էր փնտրում:

Հավատարիմ մարդկանցից մեկի մոտ որոշ ժամանակ թաքնվելուց հետո քաղաքի ոստիկանապետ Դիմինսկին իր օգնական Բորոդինի հետ անհետացավ Բաքվից: Դիմինսկուց առաջ անհետացավ Նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկին, նրան հետևեց իր օգնականը՝ Սապլիվենկոն: Բայց իրենց պաշտոններում շարունակեցին մնալ ժանդարմերիայի չեֆ Թավքերիձեն, ոստիկանական թաղային լիազորներ Մամեդբեկովը, Շահթախտինսկին և ուրիշներ:

Առավել մեծ վտանգ էր կախված նահանգապետ Նակաշիձեի վրա, քանի որ Հ.Յ. դաշնակցությունը նրան էր համարել կոտորածների հիմնական պատասխանատուն: Ուստի ոճրագործն ավելացրեց իր թիկնապահների թիվը, ձեռք առավ անվտանգության ուրիշ միջոցներ ևս, բայց մնաց Բաքվում: Վերին իշխանությունները չէին էլ մտածում նրան պաշտոնաթող անելու կամ մի ուրիշ վայր տեղափոխելու մասին: Նա մարդիկ էր ընդունում, խորհրդակցություններ հրավիրում, կարգադրություններ անում: Ավելին, նրա հանձնարարությամբ նահանգապետությունը պրոպագանդիստական ակտիվ աշխատանք ձեռնարկեց՝ դեպքերին պաշտոնական բացատրություն տալու և այդ միջոցով հասարակությանը թյուրիմացության մեջ գցելու համար: Այդ նպատակով շարունակում էր մեծ ջանքեր գործադրել նաև Կովկասի կառավարչությունը և նրա պաշտոնական օրգանը:

Բայց անհնարին էր սքողել իրականությունը. հասարակությունը քաջ գիտեր արյունահեղության իսկական մեղավորներին, և դիմումների ու բողոքների հոսքը չէր դադարում դեպի Պետերբուրգ և Թիֆլիս, մամուլի օրգանները պաշտոնական տեսակետին չհամապատասխանող բազմաթիվ հոդվածներ էին լույս ընծայում ինչպես Կովկասում, այնպես էլ Ռուսաստանում և արտասահմանում:

Ոստիկանապետ Խամիցկու տեղակալ Սապլիվենկոն Բաքվից հեռանալուց առաջ կասպիական ընկերության նավթանցքի կառավարիչ Ցակուլովին պատ-

[1] «Արարատ», N 4, ապրիլ, 1905, էջ 304:
[2] Տե՛ս նույն տեղում, N 2, փետրվար, 1905, էջ 127-128:

մել էր իր շեֆի՝ Խամիցկու կատարած չարագործությունների մասին, միաժամանակ Նրան իրավունք էր տվել իր պատմածների մասին տեղյակ պահել հանրությանը:

Կատարելով իր քաղաքացիական պարտքը՝ Յակուլովը հրապարակեց Սապլիվենկոյի պատմածները: Հասարակությունն իմացավ, որ Նահանգապետի կարգադրությամբ Խամիցկին նավթահանքերի շրջաններից զինված թուրք բանդաներ էր հասցրել քաղաք՝ հայերին կոտորելու համար: Երբ թուրք ավազակ Կուլամն իր խմբով օրը ցերեկով մտել էր Փիթոևի նավթահանքը և հանրակացարանում սպանել այնտեղ քնած 27 բանվորի, Խամիցկին կազմակերպել էր ավազակախմբի անվտանգ անցումը քաղաք՝ նոր ոճրագործություններ կատարելու համար: Եվ այսպիսի տասնյակ օրինակներ:

Յակուլովի հրապարակումը մեծ տպավորություն թողեց ընթերցողների վրա, միաժամանակ առաջ բերեց իշխանությունների զայրույթը: Թեև Նակաշիձեի մարդիկ Բաքվից հեռու սպանեցին Սապլիվենկոյին, բայց Յակուլովի հրապարակումը մեծ նշանակություն ունեցավ ապակողմնորոշող հոդվածները չեզոքացնելու և ճշմարտությունը հասարակությանը ներկայացնելու համար:

Հասարակական մեծ հնչողություն ունեցավ հատկապես Բաքվի նախկին քաղաքագլուխ Ալեքսանդր Նովիկովի բաց նամակը՝ ուղղված Նակաշիձեին, որը տասնյակ հազարավոր օրինակներով տպագրվեց ու ցրվեց Ռուսաստանում:

Նովիկովը տեղի ունեցածի գլխավոր հանցավոր էր համարում Նահանգապետին: «Կոտորածի հեղինակը դուք եք», - գրում էր նա և կոնկրետ փաստերով մերկացնում նրա արարքները: «Դուք թաթախեցիք ձեր ձեռքերը հարյուրավոր անմեղ եղբայրների արյան մեջ, ... դեպի ոճիր մղեցիք շատ թշվառականների, ...ջանացիք բազմաթիվ սերունդների վրա ցանել թշնամության սերմեր, ... և բոլոր այդ արարքներից հետո էլ հնարավոր եք համարում ապրել»: Իր բաց նամակը ռուս ազնիվ մարդասերը վերջացնում էր հետևյալ խոսքերով. «Դուք անպատվեցիք հրաշագեղ Վրաստանին, որ ձեզ իր զավակն էր համարում: Դուք անպատվեցիք Ռուսաստանին, որի դեմ կարող են տրտնջալ աղետի զոհերը և անգիտակից ոճրագործները՝ կարծելով թե ձեր և Ռուսաստանի միջև կա որևէ ընդհանրություն: Թող ձեր անունը հավիտենապես անիծված լինի»[1]:

Ժողովրդական բողոքի գործողություններին տոն էին տալիս կուսակցությունների Բաքվի կազմակերպությունները, որոնք ի մի էին բերում ջարդերի օրերին իրենց կատարածը, մշակում կոտորածների նոր բռնկման դեպքում հետագա անելիքների ծրագրեր:

Բոլոր քաղաքական կազմակերպությունները, այդ թվում նույնիսկ դաշնակցականների ավանդական հակառակորդ հնչակյանները, ընդունում էին

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 66, թ. 7 և հակառակ երեսը:

Հ.Յ. դաշնակցության խաղացած վճռորոշ դերը փետրվարյան ջարդերը կասեցնելու գործում:

Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպությունը ոչ միայն կարողացավ կազմակերպել քաղաքի հայության ինքնապաշտպանությունը, այլև փրկել Նրան ամեն տեսակ բարբարոսություններից, «որոնց ընդունակ էր թաթար անասնամբոխն իր մոլեգնության շրջանին»[1]:

Փետրվարյան ընդհարումների ավարտից հինգ օր անց Հ.Յ. դաշնակցության Ոսկանապատի (Բաքվի) կոմիտեն հայերեն և ռուսերեն բաց թողեց հետևյալ կոչը՝ ուղղված Բաքվի թուրքերին, ուր ասված էր.

«Ամբողջ սրտով ողջունում ենք վերականգնված խաղաղությունը և ցանկանում, որ դա լինի ամուր և ընդմիշտ , որովհետև գիտենք և լավ ենք հիշում, որ ոչինչ բաժանելիք չունենք թաթարների հետ: Մենք չունենք միմյանց հակասող շահեր: Եթե մենք զենքի դիմեցինք, ապա միայն նրա համար, որ ստիպված էինք պաշտպանել մեր պատիվը, մեր կյանքը, մեր ունեցվածքը:

Բայց հենց որ հնչեց խաղաղության հրավերի առաջին կոչը, մենք թեթևացած սրտով ցած դրեցինք **հարևանների արյունով ներկված մեր զենքերը:**

Այդ արյունին մենք ծարավ չէինք և չենք էլ ծարավելու երբեք:

Մեծ զզվանքով հիշում ենք անցած օրերը և գործ կը դնենք մեր բոլոր ուժերը, որ դրանք այլևս չկրկնվեն:

Հենց այդ նույն հաշտության ենք հրավիրում ձեզ, մահմեդականնե՛ր: Մի՛ փնտրեք թշնամուն այնտեղ, ուր նա չկա, և մի՛ գործածեք ձեր զենքերն այնպիսի մի գործում, որ կը ծածկե ձեզ ոչ թե փառքով, այլ ամոթով:

Բաքու, 14 փետր.1905թ.:

Բաքվի Կ. կոմիտե»[2]:

Սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կազմակերպությունը թեև Բաքվում փոքրաթիվ էր և այդ իսկ պատճառով չէր կարող ակտիվ միջամտություն ունենալ կռիվներին, բայց ընդհարումներից հետո զգալի աշխատանք ծավալեց՝ ռուս հասարակայնությանը դեպքերը ճշմարտացի ներկայացնելու գործում: Սոցիալիստ-հեղափոխականների ստորագրություններով մեծ թվով հոդվածներ լույս տեսան ռուսական մամուլի էջերում, որոնք ռուս ընթերցողին հնարավորություն տվեցին ճիշտ կողմնորոշվելու արյունալի դեպքերին տված իրենց գնահատականներում: Ավելին, սոցիալիստ-հեղափոխականների Բաքվի կազմակերպությունն գործնական աջակցություն էր ցույց տալիս Հ.Յ. դաշնակցությանը՝ հատկապես սկզբնական շրջանում Ռուսաստանից զենք գնելու, պահեստավորելու և փոխադրելու գործում: «Եթե մենք կարողացանք կարճ ժամանակի ընթացքում հայ ժողովրդին զինել և դիմադրել թաթարական հրոսակներին, - գրել է Ա.Գյուլխանդանյանը, - այդտեղ իրենց համեստ դերն ունեն և՛ սոց.-հեղ. Ռուսաստանի որոշ կազմակերպություններ,

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 49, թ.6:
[2] **«Դրոշակ»**, N3(156), մարտ, 1905, էջ 43:

և՛ բավականաչափ սոց.-հեղ. ռուս ընկերներ»[1]:

Փետրվարյան օրերին Բաքվի բոլշևիկները աշխատանք ծավալեցին ջարդերի դեմ՝ ստեղծելով ինտերնացիոնալ բանվորական ջոկատներ, իսկ կոտորածներից հետո կազմակերպեցին բողոքի զանգվածային միտինգներ՝ մերկացնելով ցարիզմի ջարդարարական քաղաքականությունը[2]: Բայց ՌՄԴԲԿ Բաքվի կազմակերպությունը կարող էր ավելի ակտիվ գործել, եթե չլինեին Հ.Յ. դաշնակցության հետ նրա ունեցած հակասությունները: Սոցիալ-դեմոկրատներն առաջնորդվում էին բոլոր ազգերի աշխատավորների շահերի նույնության մարդասիրական գաղափարներով, բայց այդ գաղափարները տվյալ արյունալի իրադրության մեջ չէին գործում կամ գործում էին խիստ ցածր արդյունավետությամբ: Թուրք-հայկական կոտորածներում նրանց համար կամ չկային երկու կողմից մեղավորներ, կամ մեղավոր էին երկու կողմերը հավասարապես: Գլխավոր մեղավորը համարվում էր ցարիզմը:

Ա.Գյուլխանդանյանը պատմում է, որ կռվի երկրորդ օրը, փետրվարի 7-ին, Բաքվի բոլշևիկների ղեկավարներից Ալյոշա Ջափարիձեն իր անձնական նախաձեռնությամբ եկել էր Հ.Յ.Դ. կոմիտեի ղեկավարության մոտ և առաջարկել հաշտություն կայացնել թուրքերի հետ: Նա տեղեկացրել էր, որ ինքը եկել է թուրքերի ղեկավարների անունից ասելու, որ եթե հայերը դադարեցնեն կռիվը, ապա իրենք նույնպես անմիջապես կդադարեցնեն, միայն սպասում են դաշնակների ղեկավարների պատասխանին: Հ.Յ. դաշնակցության ղեկավարությունը խոստանում է կռիվը դադարեցնել, եթե դրան հետևեր թուրքերի դադարեցնելը: Ջափարիձեն գնում է և այլևս չի վերադառնում. հավանաբար թուրքերը չէին համաձայնել նրա խորհրդին և ավելի կատաղաբար էին շարունակել ջարդերը:

Կոտորածներից հետո Բաքվի բոլշևիկները բազմամարդ ժողովներում և միտինգներում ուժգին մերկացնում էին ցարիզմի հակաժողովրդական քաղաքականությունը, պահանջում ժողովրդական դատ կազմակերպել Նիկոլայ II-ի դեմ, կոտորածների սոսկալի տեսարանների նկարագրություններով հոդվածներ էին տպագրում իրենց արտասահմանյան թերթերում, ամփոփ տեղեկագրեր էին կազմում և ներկայացնում կուսակցության վերադաս մարմիններին*:

Արյունալի իրադարձությունների կապակցությամբ ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեն 1905թ. փետրվարի 13-ին հանդես եկավ մի կոչով*, որտեղ մասնավորապես ասվում էր. «Մենք ոչ մի կերպ չենք հասնի արդարացի և խիստ դատի՝ Բաքվի ահավոր դժբախտությունների իսկական մեղավորների նկատմամբ: Ահա թե ինչու մենք դիմում ենք ոչ թե կառավարության դատին, այլ համայն Ռուսաստանի ազնիվ քաղաքացիների, ամբողջ ժողովրդի, ողջ քաղաքակիրթ աշխարհի ահեղ դատին...

... Դուք, քաղաքացի մուսուլմաններ, որ ամենից շատ եք խաբվել ցարական կառավարության կողմից, պետք է անմիջապես երես դարձնեք նրանից: Նա ձեզ դարձրել է իր հանցավոր ծրագրերի իրականացման գործիքը, իսկ այժմ ամբողջ մեղքը կբարդի ձեզ վրա, ձեզնից ոմանց դատի կտա, կաքսորի Սիբիր՝ տաժանակրության:

Քաղաքացի հայե՛ր: Ձեզ համար նույնպես պետք է ակնհայտ լինի, որ Բաքվում տեղի ունեցած կոտորածի մեղավորը ոչ թե խավարամիտ մուսուլմանական զանգվածներն են, այլ բոլոր ազգությունների ընդհանուր թշնամին...

Եվ դո՛ւք, ռուս քաղաքացիներ: Դուք, որպես հենց նոր Բաքվի փողոցներում կատարված գազանությունների վկաներ, պետք է կրկնակի ուժով հարձակվեք նույն դահճի՝ ցարական կառավարության դեմ, որը ժողովրդի գլխին թափեց Ճապոնիայի հետ խայտառակ պատերազմի ամբողջ սարսափելի պատուհասները, որը Պետերբուրգում գնդակահարեց հազարավոր բանվորների՝ նրանց ընտանիքներով հանդերձ: Այժմ ձեր շրջանում իշխանությունները տարածում են զանազան ստահոդ լուրեր՝ մյուս ազգերի նկատմամբ ձեր մեջ թշնամություն սերմանելու նպատակով: Բոլոր փողոցներում ու հրապարակներում դուք պետք է գոչեք.

– Կորչե՛ն նողկալի մարդասպանները: Կորչե՛ն զրպարտիչները: Կորչի՛ ցարական կառավարությունը: Կորչե՛ն նրա կամակատարները՝ նահանգապետերն ու ոստիկանությունը»[1]:

ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի հայտարարությունը հազարավոր օրինակներով տարածվեց քաղաքով և նավթահանման շրջաններով մեկ, ինչպես նաև ուղարկվեց Կովկասի բոլոր քաղաքները, Ռուսաստան և Եվրոպա:

Թեև ջարդերի օրերին ռուսական սոցիալ-դեմոկրատները միշտ չէ, որ իրենց զգացել էին տալիս, բայց քանի որ դրանից հետո իրենց ընդունած բանաձևերով, գրած հոդվածներով ու բանավոր ելույթներով նողկանք էին հայտնում ջարդերը կազմակերպող հիմնական ուժի՝ ցարիզմի նկատմամբ, ուստի այդ հողի վրա կոտորածներից հետո ժամանակավորապես համատեղ գործելու հարաբերություններ էին հաստատվել նրանց և դաշնակցականների

---

[1] **Ա. Գյուլխանդանյան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 111:
[2] **«Կայծ»**, N 24, 7 հուլիսի 1906թ.:

* Հայաստանի արխիվներում պահպանվում են Բաքվի բոլշևիկների կողմից այդ օրերին գրված ոչ քիչ թվով տեղեկագրեր, որոնցից հատկապես արժեքավոր են ՀՀ ՀԲԿՓԿՊ արխիվի 1022 ֆոնդի 129 գործում պահպանվող նյութերը:

* Կոչի տեքստը գրել էր Բաքվի բոլշևիկ գործիչներից Մ. Վասիլև-Ցուժինը՝ ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ: Փաստաթուղթը ներկայացնում ենք որոշ կրճատումներով:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 17, ց.1, գ. 383, թ. 34: Նաև՝ «Вперед», N 11, выпуск 2, էջ 23-24, նաև՝ **М. Васильев-Южин**, В огне Первой революции, изд. «Старый большевик», Москва, 1934, էջ 295-300:

միջև:

Ընդհարումների օրերին Բաքվում գործում էր նաև սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, որը ուներ անդամների խիստ սահմանափակ շրջանակ, ուստի անուժ էր որևէ ազդեցություն գործելու իրադարձությունների վրա:

Կուսակցությունների կոչերն ու հայտարարությունները, դեպքերի ականատեսների հրապարակումները ուժեղացնում էին ժողովրդի զայրույթն ու ցասումը, որոնք արտահայտվում էին բողոքի ամենատարբեր ձևերով:

Բաքվում ծայր առած երթերին, ցույցերին, ժողովներին մասնակցում էին հազարավոր մարդիկ, բոլոր դասակարգերի ներկայացուցիչներ՝ առանց սեռի և ազգային խտրության՝ հայեր, ռուսներ, հրեաներ, թուրքեր, այլազգիներ: Նրանք անդրադառնում էին անցած օրերի սարսափելի դեպքերին, խստորեն քննադատում կառավարությանը[1]: Ժողովներում ու միտինգներում ընդունվում էին ցարիզմի հանցագործությունները դատապարտող որոշումներ և բողոքի բանաձևեր:

Փետրվարի 13-ի կիրակի օրը, ժամը 12-ի կողմերը, դումայի շենքում բացվեց նավթարդյունաբերողների արտակարգ համագումարը, բայց աստիճանաբար այնքան մարդ հավաքվեց համեմատաբար փոքր դահլիճում, որ ստիպված եղան նիստերը տեղափոխել հասարակական ակումբի ընդարձակ դահլիճ: Ամբոխված ժողովուրդը դումայից խուժեց հասարակական ակումբ: Ոստիկանությունը չմիջամտեց:

Շտապ կազմելով որոշման տեքստ, որտեղ իշխանությունները մեղադրվում էին «անգործության» և «թողտվության» մեջ, և որպես օգնություն՝ 100 000 ռուբլի հատկացնելով ջարդերի ժամանակ տուժածներին՝ առանց ազգային խտրականության, նավթարդյունաբերողները համագումարը հայտարարեցին փակված[2]:

Փետրվարի 13-ին Բիբի-Հեյբաթում կազմակերպված ժողովին էր եկել ավելի քան երկու հազար մարդ: Ընդունված բանաձևը պահանջում էր բոլոր քաղաքացիներին տալ ամենալայն ազատություն և գումարել սահմանադիր ժողով:

Փետրվարի 14-ին հասարակական ակումբի դահլիճում կայացավ Բաքվի փաստաբանների ներկայացուցիչների խորհրդակցություն: Դահլիճում և նրա շուրջը հավաքվել էր ավելի քան 3000 մարդ:

Հավաստելով ջարդերի ժամանակ իշխանությունների զայրացուցիչ անգործությունը՝ փաստաբանները որոշեցին նրանցից պահանջել ցավալի իրադարձությունների լայն, հրապարակային հետաքննություն՝ տեղի փաստաբանների, հասարակության և մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ: Իրադարձություններին վերաբերող փաստերի հավաքման համար որոշվեց

[1] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 117:
[2] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 4:

ստեղծել հատուկ լիազորություններով օժտված բյուրո և խնդրել ներքին գործերի մինիստրին՝ տեղական թերթերն ազատել եռակի գրաքննությունից, լրագրողներին թույլ տալ հրապարակել իրենց հայթայթած փաստերը:

Ժողովների ընթացքում տարբեր ազգությունների ներկայացուցիչներից կազմվում էին հատուկ խմբեր, որոնց խնդիրն էր Բաքվի լայն զանգվածներին տեղեկացնել ժողովներում ընդունված հակակառավարական բանաձևերի մասին:

Աննախադեպ երևույթ էր այն, որ իրենք՝ ձեռնարկատերերը, բանվորների հետ համատեղ ստորագրում էին քաղաքական փաստաթղթեր, որոնցով կոչ էր արվում սկսել բողոքի ընդհանուր գործադուլ: Նավթահանքերի և գործարանների ադմինիստրացիան ամենուրեք եռանդագին աջակցություն էր ցույց տալիս բանվորական խմբերին, վերջիններիս պահանջով կարգադրում էր անմիջապես ընդհատել աշխատանքը: Տեղի էր ունենում նախադեպը չունեցող մի բան. ընդհանուր դժբախտությունը և ցարական ինքնակալության ահավոր ստոր գործողությունները միավորել էին ոչ միայն տարբեր ազգությունների ներկայացուցիչներին, այլև բանվորներին ու գործատերերին, ժամանակավոր դաշնակիցներ էին դարձրել երեկվա դասակարգային հակառակորդներին, որոնք ընդամենը երկու ամիս առաջ՝ 1904թ. դեկտեմբերյան գործադուլի օրերին, ամեն տեսակ հանդիմանություններով հանդես էին գալիս մեկը մյուսի դեմ: Ժողովների մասնակից բանվորներին աշխատավարձի պահպանմամբ ազատելով առօրյա աշխատանքներից՝ ձեռնարկատերերը միաժամանակ հայտարարում էին, որ խոսք անգամ լինել չի կարող հեռացումների կամ ձեռնարկությունների վարչակազմի կողմից այլ կարգի տույժեր տալու մասին:

Ցարական իշխանությունների անմարդկային պահվածքը զայրույթի փոթորիկ էր առաջ բերել ուսումնական հաստատություններում: Դասադուլների ալիքը տարածվեց Բաքվի դպրոցների բարձր դասարաններում: Դասադուլ էին անում նույնիսկ գիշերօթիկ դպրոցների աշակերտները: Մոտ 15 հազարի հասնող աշակերտությունը մի քանի օր շարունակ միտինգներ էր անում, որոնցում ընդունվում էին բողոքի բանաձևեր, հեղափոխական ցույցեր էր կատարում փողոցներում և հրապարակներում՝ բողոքելով նահանգապետի և ամբողջ վարչակազմի դեմ:

Ի տարբերություն աշակերտների՝ ուսումնական շատ հաստատություններում ուսուցիչներն իրենց անվայել էին պահում: Քաղաքի ռեալական ուսումնարանում, օրինակ, մանկավարժների մեծամասնությունը պահանջեց անհապաղ սկսել պարապմունքները: Նրանք չէին ժխտում ոստիկանության մեղքը կոտորածներում, բայց երբ հարց էր ծագում կառավարության գործողությունների դատապարտման մասին, հրաժարվում էին ստորագրել փաստաթղթերի տակ[1]:

Կուսակցություններն առանձնակի ուշադրություն էին դարձնում տեղացի

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 15:

Թուրք մտավորականությանը խաղաղարար աշխատանքների մեջ ներգրավելուն՝ նրան կոչում էին եռանդուն մասնակցություն ունենալ մուսուլման բնակչության շրջանում տարվող ագիտացիոն աշխատանքներին, ճշմարտացի ներկայացնել արյունալի իրադարձությունների պատճառներն ու իսկական մեղավորներին:

Փետրվարի 14-ին, ելույթ ունենալով ժողովներից մեկում, «Շարկի ռուս» թերթի խմբագիր Շահթախտինսկին ասաց մոտավորապես հետևյալը.

«Հայ եղբայրնե՛ր: Մենք և դուք տուժել ենք բոլորից շատ: Մեզ խաբել են, մեզ հրահրել են միմյանց դեմ: Մենք պետք է մեկ անգամ ևս հավաքվենք այստեղ և հնարավորին չափ շատ հավաքենք բոլոր դասերի մեր ազգակիցներին: Այստեղ մենք խոսեցինք մեր ընդհանուր վշտերի մասին և կնքեցինք կայուն հաշտություն ու դաշինք ... Մտադիր ենք կազմակերպել հայ-մուսուլմանական միտինգ, որին հրավիրում ենք մասնակցել նաև մյուս ազգերի ներկայացուցիչներին»[1]:

Փետրվարի 15-ին գումարվեց քաղաքային դումայի նոր նիստ: Կրքերը շիկացած էին, ներկաներից շատերը պահանջում էին քաղաքական գնահատական տալ իշխանությունների գործելակերպին:

Ելույթ ունեցողներից մեկը հիշեցրեց, որ Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն ծննդյան տոներին և ջրօրհնեքին եղել է Պետերբուրգում, ստացել շքանշան և վերադարձել Բաքու՝ ջարդեր կազմակերպելու հրահանգով: Պետերբուրգից գալուց շատ չանցած՝ սկսվել էր ուժգին պրոպագանդա մուսուլմանների շրջանում, որից հետո բռնկվել էր սոսկալի աղետը:

Փետրվարի 16-ին, երբ շարունակվում էին բանվորական ժողովները, քաղաքում տեղի ունեցավ մուսուլմանների և հայերի հանրահավաք*: Հավաքվել էր շուրջ 5000 մարդ: Հասարակական ակումբի մեծ դահլիճը չկարողացավ տեղավորել բոլորին, չնայած աթոռները հանվել էին, և մարդիկ կանգնած էին: Հարևան սենյակները նույնպես լեփլեցուն էին: Հավաքին եկել էին մեծ թվով մուսուլմաններ:

Ձայն ստացավ մուսուլման հրապարակախոս Ահմեդ (Ահմադբեկ) Աղաևը: Այս մուսուլման գործիչը ընդհանրապես Բաքվում համակրանք և վստահություն չէր վայելում, բայց այս անգամ նրա ճառը ուղղակի հրաշալի էր և բազմիցս ընդհատվում էր ներկաների հաստերաշխ ծափերով:

Հիշեցնելով, որ միայն կառավարման հանրապետական ձևը կարող է երկրում կարգ ու հանգստություն ստեղծել, Աղաևը դիմեց պատմական զուգահեռների, ասելով, որ առաջին ցարերի ժամանակներից սկսած՝ Ռուսաստանի հասարակական կյանքը բռնադատվում է բյուրոկրատական կամայականությամբ: Ռուս բռնակալները, ասում էր նա, միշտ տգիտության մեջ են պահել զանգվածներին, որպեսզի նրանց վրա չկորցնեն իրենց իշխանությունը: Նա շեշտում էր, որ Ռուսաստանում կան շատ ժողովուրդներ, որոնք ցայժմ խարխափում են տգիտության մեջ: Դա կարելի է ասել նաև թուրքերի մասին, որոնց լուսավորման ճանապարհին կառավարությունն ամեն կարգի խոչընդոտներ է հարուցում: Աղաևը նշեց, որ մուսուլմանների միջավայրում դպրոցներ գրեթե չկան, չի թույլատրվում ոչ միայն լուսավորական, այլև բարեգործական ընկերությունների գործունեությունը: Ամբողջ երկրում միայն երկու թուրքերեն օրաթերթ էր հրատարակվում, մեկը՝ Սիմֆերոպոլում, իսկ մյուսը՝ Բաքվում (որը ոչ շատ առաջ փոխադրվել էր Թիֆլիսից): Ընդորում, Սիմֆերոպոլի թերթը գրաքննության էր ուղարկվում Օդեսա, իսկ Բաքվինը՝ Թիֆլիս: Ուստի զարմանալի ոչինչ չկա, եզրակացնում էր Աղաևը, որ ոստիկանությանն առանց դժվարության հաջողվեց մուսուլմաններին հանել հայերի դեմ, հրահրել խավարամիտ զանգվածներին: «Հայերը,- ասում էր նա, - պետք է ներեն այդ ակամա մարդասպաններին, ինչպես արդեն ներել է այն մեծ հայուհի մայրը, որը, օրերս թաղելով ջարդի ժամանակ մորթուված իր հինգ երեխաներին, ասել է. «Ես ներում եմ մուսուլմաններին, նրանք չեն մեղավորը իմ երեխաների մահվան մեջ»[1]: Այնուհետև նշելով, որ մուսուլմաններն ու հայերը երբեք չեն ունեցել և չունեն փոխադարձ թշնամության լուրջ պատճառներ, Աղաևը Կովկասում ապրող բոլոր ազգերին կոչ արեց միավորել ջանքերն ամբողջ Ռուսաստանում արդեն սկսված ազատագրական պայքարն առաջ մղելու համար*:

Ահմեդ Աղաևից հետո խոսք խնդրեց "Каспий" թերթի տնօրեն Թուփչիբաշևը: Նա նշեց, որ ցարական կառավարությունը վերջին ժամանակներս փութաջանորեն մի ազգին հրահրում է մյուսի դեմ: Նույնիսկ կրոնական տեսակետից պատճառ չկա, որ միասին չլինեն մուսուլմանները, քրիստոնյաները և հրեաները: Նրանք բոլորը պետք է համախմբվեն և այլևս չենթարկվեն ոստիկանական կեղտոտ հրահրումների[2]:

Այնուհետև ձայն վերցրեց մի մուսուլման սոցիալ-դեմոկրատ, որը խոսում էր թուրքերեն: Երկար և հրաշալի ճառում նա պատմեց, թե ինչպես է ոստիկանությունը աստիճանաբար նախապատրաստել ջարդը, թե ինչպես է ինքն իր կազմակերպության հանձնարարությամբ գրել և տարածել դիմումներ, որոնցով մուսուլմաններին կոչ է արվել չհավատալ ոստիկանության

---

[1] ՀՀ ՀՊԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 15:
Ա. Գյուլխանդանյանը, անդրադառնալով փետրվարի 16-ին քաղաքային հասարակական ակումբի ընդարձակ դահլիճում տեղի ունեցած հանրահավաքին, սխալմամբ գրել է, թե այն տեղի է ունեցել փետրվարի 11-ին (Ա. Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 118):

[1] ՀՀ ՀՊԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 16:
* Այս մարդասիրական ելույթ ունեցողն այն Ահմեդ Աղաևն էր, որը շատ չանցած դառնալու էր թուրքական մարտնչող նացիոնալիզմի նշանավոր դրոշակակիրներից և պանթուրքիզմի խոշոր գաղափարախոսներից ու քարոզիչներից մեկը: Նա «Մուսավաթ» կուսակցության հիմնադիրներից և նրա ղեկավարներից էր, հետագայում 1918-1920թթ., Ադրբեջանական հանրապետության սյուներից մեկը: Աղաևը դիվային դեր է խաղացել հայոց 1915թ. ցեղասպանության և հետագա տարիներին՝ Հայաստանի հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից ձեռնարկված ագրեսիվ գործողությունների մեջ:
[2] ՀՀ ՀՊԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 18:

մեքենայություններին, և թե ինչպես, ի վերջո, ոստիկանությանը հաջողվել է սադրանքներով առաջ բերել ջարդեր և բացահայտորեն ղեկավարել դրանք:

Այդ ճառը մեծ տպավորություն գործեց բոլոր նրանց վրա, ովքեր հասկանում էին թուրքերեն: Մուսուլմաններից շատերը լաց էին լինում: Իսկ երբ ելույթ ունեցողը հայտարարեց, թե ինքը սոցիալ-դեմոկրատ է, անմիջապես ծայր առան երկարատև ծափահարություններ, որովհետև մուսուլման սոցիալ-դեմոկրատը, իրոք, ինչ-որ նոր բան էր: Մտավորական մուսուլմաններն իրենց ազգակցին նայում էին չթաքցրած զարմանքով[1]:

Ճառերը հաջորդում էին մեկը մյուսին, խոսում էին տարբեր ազգությունների, դասերի և մասնագիտությունների մարդիկ: Վերջում ընդունվեց մի բանաձև, ուր ասվում էր, որ ոչ մի ազգային թշնամություն չի եղել և չկա երկու ազգերի միջև, այլ կա թշնամություն բնակչության լայն խավերի և իշխանությունների միջև: Որոշվեց նաև շնորհակալական հեռագիր հղել Թիֆլիսի քաղաքագլուխ Վերմիշևին, որը եռանդագին ջանքեր էր թափել Բաքվի կոտորածը դադարեցնելու համար, ինչպես նաև՝ Բաքվի նախկին քաղաքագլուխ Ալեքսանդր Նովիկովին, ափսոսանք հայտնելով, որ իշխանությունները նրան ուղղակի հեռացրել են Բաքվից, երբ նրա կարիքն այնքան շատ էր զգացվում արյունահեղության սև օրերին: Շեշտվեց, որ Նովիկովին փոխարինած Իրեցկին սպանությունների ու ջարդերի ակտիվ կազմակերպիչներից մեկն է:

Ոստիկանությունը մի երկչոտ փորձ արեց փոխելու հանրահավաքի ոգին: Նոր նշանակված ոստիկանապետը դժվարությամբ հասավ բեմահարթակ, բայց նրան այնպիսի սուլոցներով ու հիշոցներով դիմավորեցին, որ, ոչինչ չասելով, շտապեց անհետանալ՝ «Կորչի՛ ոստիկանությունը» բացականչությունների ներքո: Դրանից հետո ներկաներից մի քանիսը դահլիճում բռնեցին ու ծեծի ենթարկեցին ոստիկանական մի գաղտնի գործակալի՝ նրանից խլելով ելույթ ունեցածների ազգանուններով լրացրած ծոցատետրը:

Փետրվարի 17-ին Բալախանիում կազմավորվել է ինքնակառավարվող մի մարմին, «հանրապետության» նման մի ինչ-որ բան՝ մշտական պառլամենտով, որտեղ իրենց պատվիրակներն էին ուղարկել նավթահանքերի բանվորները: Հատկանշական է, որ իշխանությունները, հատկապես ոստիկանությունը, ոչ միայն չէին համարձակվում ցրել այդ «հանրապետությունը», այլև չէին երևում բանվորների աչքին:

Տվյալ պահին կարևոր էր նաև հնարավորին չափ շատ փաստերի հավաքումն ու արձանագրումը:

Բաքվի իրավաբանական կոլեգիան փետրվարյան դեպքերից անմիջապես հետո փաստաբաններից կազմեց մի քննիչ հանձնախումբ, որը գլխավորապես բաղկացած էր օտար փաստաբաններից:

Հետաքննություն սկսելով, այդ քննիչ հանձնախումբը հայ, թուրք, ռուս և

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ.20:

օտարազգի քաղաքացիներին կոչ արեց գրավոր կամ բանավոր ներկայացնել իրենց ցուցմունքները: Այդ կոչին արձագանքեց երկու հարյուրից ավելի վկա: Մի քանի հարյուր ցուցմունք հավաքեց Թիֆլիսի նահանգային իրավաբանական կոլեգիան՝ այնտեղ ներկայացած բաքվեցի ականատեսներից[1]:

Մեծ թիվ էին կազմում ցուցմունք տված հայերը: Ոստիկանության դեմ թուրքերից ցուցմունք տվեց մի քանի հոգի միայն, իսկ իրենց ցեղակիցների գործած հանցանքների մասին՝ ոչ մի խոսք: Այդ սակավաթիվ թուրքերից մեկը ուսուցիչ Մասումովն էր, որը առաջին բազմամարդ միտինգում ծանրակշիռ մերկացումներ էր կատարել, և մի օր հետո փախել Բաքվից՝ երկյուղ կրելով իր ազգակից թուրքերի վրեժխնդրությունից:

Հանձնախումբը չկարողացավ իր աշխատանքները մամուլին հանձնել. փաստերն այնքան վրդովեցուցիչ էին, որ կառավարության կողմից արգելվեց դրանց տպագրությունը:

Միայն շատ տասնամյակներ անց հնարավոր եղավ արխիվներում ծանոթանալ ականատեսների գրավոր ցուցմունքներին, որոնք պարունակում են շատ մանրամասներ և հետաքրքիր դիտարկումներ:

Բաքվի թուրք քաղաքացիների զգալի մասը կոտորածն անասելի դժբախտություն էր համարում:

Զուր չէ, որ "Бакинские Известия" թերթը կոտորածների հաջորդ օրը գրում էր. «Մինչդեռ քաղաքի մի քանի մասերում կատարվում էին հոգի սառեցնող տեսարաններ, մյուս մասերում մահմեդականները խաղաղ օթևան էին տալիս հայերին և պաշտպանում նրանց»[2]:

Բազմաթիվ հայեր մահից ազատվել էին թուրքերի օգնությամբ: Շնորհապարտ էին մանավանդ այն հայերը, որոնք ապրում էին թուրքերի տներում: Թուրք տնատերերի մեծամասնությունը թույլ չէր տվել , որ կոտորողները մտնեն իրենց վարձակալ հայերի բնակարանները: Ականատեսները պատմում էին, որ նրանք կանգնում էին իրենց տների մուտքի առջև և հարձակվողներին հայտնում, թե իրենց դիակների վրայով միայն կարող են մտնել հայերին: Ավելին, նրանք հաց ու ջուր էին հասցնում տների մեջ փակվածներին:

Ցիցիանովսկայա փողոցի N35 տանը բնակվում էին մեծ թվով տնվորներ, նրանք բոլորն էլ փրկվեցին տանտիրոջ՝ Զաֆար Զեյնալովի ջանքերով[3]:

Արխիվային մի փաստաթուղթ ահա ինչի մասին է պատմում:

Թուրք մսավաճառ Քեալբալահ Ցաղուբ օղլու մոտ մեկ տարի էր, ինչ ծառայում էր մի չքավոր հայ ընտանիքի տեր, չորս մանկահասակ երեխաների հայր: Ջարդի երկրորդ օրը կեղծ լուր էր տարածվել, թե խանութպանի եղբայրներին ոստիկանությունը ձերբակալել է հայ ծառայողի մատնությամբ:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 144, թ. 60:
[2] "Бакинские Известия", 10 февраля 1905г.
[3] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 37, թ. 42:

Վերջինս ստիպված թողնում է աշխատանքը և հոգեկան դառը տառապանքների մեջ ընկնում անկողին: Ընտանիքը կանգնում է սովի առջև: Ջարդերից մի քանի օր անց հայտնվում է Քեալբալահ Ցաղուբ օղլին, նստում Հիվանդի անկողնու մոտ, սիրտ տալիս նրան, ապա առաջարկում վերադառնալ աշխատանքի: Հիվանդը մերժում է՝ ասելով. «Ես ծառայել չեմ կարող, քանի որ հիվանդ եմ, և, բացի այդ, ձեր ազգականները սպառնում են սպանել ինձ»: Էանութպանը նորից է խնդրում և նորից մերժում է ստանում: Ոտքի կանգնելով՝ նա գրպանից հանում է մի ծրար, մեկնում հիվանդին՝ «Վերցրո՛ւ, Մրքայե լ, դու նամակ ունես՝ վերցրո՛ւ» ասելով, ապա բարի գիշեր մաղթելով արագ հեռանում է: Քիչ անց հիվանդը բացում է ծրարը..., որտեղ 20 ռուբլի թղթադրամներ էին»[1]:

Շատ թուրքեր էլ, որոնք ակտիվ մասնակցություն էին ունեցել հայերի կոտորածին, խորապես զղջում էին:

Թուրքերից մեկը այսպես է նկարագրել ջարդերի օրերին իր արարքները և հոգեփոխությունն ու զղջումը:

«Մեզ գերել էր մի սոսկալի հրեշ, որ ծարավ էր արյան, արյան և արյան...: Բայց մենք կարող էինք նույն կերպ կոտորել և մեզ՝ թուրքերիս: Եվ եթե այդ կոտորածը չվերջանար, այդ բանն անպատճառ տեղի կունենար... Կոտորածի չորրորդ օրը հինգ դեպք եղավ, երբ մահմեդականները սպանեցին մահմեդականներին, սպանություններ դատարկ բաների համար, լոկ այն պատճառով, որ մեկը չէր հասկանում, թե ինչ է ուզում մյուսը: Ես վազում էի շշմածի պես, զգալով ոչնչացնելու ծարավ, զենքից կրակ էի բացում, որովհետև այդ ձայնը ինձ բավականություն էր պատճառում: Ես սիրեցի նույնիսկ գնդակների սուլոցը: Ես բերկրանք էի զգում նայելով զոհերի տանջանքներին, և որքան զոհն անօգնական էր ու թույլ, այնքան մեծ էր բերկրանքը: Ես այժմ չեմ հավատում դա երա՞զ էր, թե՞ իրականություն: Հաշտության մյուս օրը ես լաց էի լինում: Ես տեսնում էի սպանողներին, որոնք հեկեկում էին կոտորված երեխաների դիակների վրա... Ինչո՞ւ մենք կոտորեցինք նրանց: Ո՞վ է մեղավոր: Մենք այնքան դարեր ապրել ենք հայերի հետ միասին, միևնույն հողն է մեզ կերակրել և մեր մեջ ոչինչ տեղի չի ունեցել: Մենք ամենքս տանջվում ենք, մեզանից շատերը հիվանդ պառկած են, երեկվա սպանողներից շատերը զառանցանքի մեջ հարցնում են. «Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչի՞ համար ...»[2]:

Այդ օրերին հայերը շնորհակալական բազմաթիվ նամակներ գրեցին իրենց մուսուլման փրկարարներին: «Այդ առումով, - գրում էր գիմնազիայի մի ռուս ուսուցիչ, - մուսուլմաններն անհամեմատ բարձր են կանգնած մյուս քրիստոնյաներից, որոնք հրաժարվում էին հայերին ապաստան տալուց, վախենալով, որ իրենք էլ ջարդի կենթարկվեն: Նման դեպքեր, դժբախտաբար, եղել են: Ինձ հայտնի է, օրինակ, որ քաղաքային վարչության անդամ, քաղաքագլխի

[1] ՀՀ ԳԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 395, թ. 43-44:
[2] ՀՀ ՀՊԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 137, թ. 42:

նախկին թեկնածու և նույնիսկ որոշ ժամանակով քաղաքագլխին փոխարինած Բելյավսկին հրաժարվել էր իր բնակարանում ապաստան տալ մի քանի հայերի, որոնք աղաչել են փրկել իրենց»[1]:

Զուր չէ, որ Ալեքսանդր Ամֆիտեատրովը ցավով գրում էր, թե շատ մահմեդականների «անկեղծ, խելացի և զգայուն մարդասիրությանը կարող են նախանձել իրենց քրիստոնյա անվանողներից շատերը»[2]:

Այնուամենայնիվ, մի շարք ռուսներ նույնպես իրենց մոտ ապաստանել էին հալածական հայերի: Իր մարդկային և քաղաքացիական պարտքը հերոսաբար կատարեց Սիմենսկի գնդի սպա Ցակով Աֆանասևիչ Զուևը, որը փետրվարի 9-ին գնդակների տարափի տակ իր զինվորներին տարավ ճնշելու թուրքերի լկտիացած մի մեծաթիվ բանդայի, ապա իր իսկ տանը ապաստանեց տասնյակ հայերի[3]:

Երբ դեռ նոր էին սկսվել բազմահազարանոց հանրահավաքներն ու ժողովները, արդեն փետրվարի 12-ին Գանձակից, Նուխիից և Նախիջևանից լուրեր էին գալիս Բաքու, թե իրենց մոտ մարդկանց մտքերը հուզվել են, և առաջացել է հայ-թուրքական ընդհարումների վտանգ:

Նոր արհավիրքները կանխելու համար փետրվարի կեսերին Բաքվում ստեղծվեց հայ, թուրք և ռուս ներկայացուցիչներից կազմված մի խաղաղարար խառը հանձնախումբ: Հայերից հանձնախմբին մասնակցում էին՝ իրավաբան, նավթարդյունաբերող Բոգդան Դոլուխանյանը, ինժեներ, Բաքվի բորսային կոմիտեի նախագահ Ստեփան Թաղիանոսյանը, Բաքվի տեխնիկական ընկերության նախագահ Կոնստանտին Խատիսյանը, տեխնիկական ընկերություններից մեկի վարիչ Հայկ Տեր-Միքայելյանը, բժ. Թադևոս Զաքարյանը, նավթարդյունաբերող և ինժեներ Աստվածատուր Վաչյանը, փաստաբան Սամսոն Հարությունյանը, նավթարդյունաբերողների խորհրդի նավթաշրջանի մասի գլխավոր վարիչ, ինժեներ Հովհաննես Քաջազնունին: Հանձնախմբին թուրքերի կողմից մասնակցում էին՝ իրավաբան, "Каспий" թերթի մնայուն տնօրեն, թուրքական հասարակական մտքի ղեկավար Ալի Մարդան Թոփչիբաշևը, նույն թերթի խմբագիր Ահմեդ Աղաևը, Բաքվի քաղաքապետարանի անդամ Իսրաֆիլ Հաջիևը, մեծահարուստ Հաջի Ասլան Աշուրովը, քաղաքային վարչության անդամ, ինժեներ Հասան Մահմեդ Հաջինսկին, Մուխտարովի նավթահանքերի գլխավոր կառավարիչ, ինժեներ Բախշի բեկ Թալիշինսկին և մի քանի ուրիշներ[4]:

Բայց հանձնախումբը չկարողացավ կատարել իր դերը, քանի որ հենց սկզբից, տարբեր հայացքների հողի վրա, նրա հայ և թուրք անդամները պառակտվեցին: Խաղաղարար հանձնախումբն անկարող եղավ ամենափոքր չա-

[1] «Արարատ», N 1, հունվար, 1906, էջ 56:
[2] ՀՀ ՀՊԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 137, թ. 43:
[3] Նույն տեղում:
[4] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 162-174:

փով իսկ փոխելու այն ծանրագույն վիճակը, որի մեջ հայտնվել էր Բաքուն:

Հակառակ խաղաղություն պահանջելու մասին հայ և թուրք կրոնական ու աշխարհիկ գործիչների հավաստիացումներին ու խոստումներին, հակառակ եկեղեցիներում և մզկիթներում հոգեհանգստյան արարողությունների ժամանակ հնչած երդումներին, Բաքվի բնակչության ալեկոծ կյանքը չէր հանգըստանում և չէր մտնում նորմալ հունի մեջ:

Քանի որ արյունահեղության գլխավոր զոհը հայերն էին, ուստի հենց նրանց մոտ էր ամենից ուժգին արտահայտվում հուսալքությունն ու վախը:

Հաշտության հենց առաջին օրից սկսած՝ քաղաքի թուրքական թաղերում ապրող հայերն սկսեցին զանգվածաբար լքել իրենց բնակարանները՝ երեսն ի վար ձգելով ամեն ինչ: Դա հասկանալի է, քանի որ ջարդի օրերին նրանք, շրջապատված թուրք բնակիչներով, ամբողջ չորս օր ապրել էին սարսափով լի վայրկյաններ: Եվ ահա այժմ, երբ նրանք կենդանի էին մնացել, համարում էին, որ դա նախախնամության պարգևն է, որից պետք է օգտվել և գեհենից փախուստ տալ օր առաջ: Եվ նրանք հարյուրներով ու հազարներով թուրքական թաղերից փախչում էին քաղաքի կենտրոն, հայկական թաղեր: Շատ հայեր ուղղակի իրենց նետում էին երկաթուղային կայարան կամ նավամատույցներ:

Ընդամենը մի քանի օրում խառը բնակչություն ունեցող Բաքվում ստեղծվեցին զուտ հայկական և զուտ թուրքական թաղեր: Քաղաքը բաժանվեց երկու անջատ մասերի: Հայերը հիմնականում կենտրոնացան Պարապետի հյուսիս-արևելյան մասերում՝ Տորգովայա, Տելեֆոնայա, Ստանիսլավսկայա, Բալախանսկայա և հարակից փողոցներում ու վայրերում[1]:

Սոսկալի մղձավանջից դուրս պրծնելու հայերի զանգվածային տենչը վարակիչ ազդեցություն ունեցավ քաղաքի ռուս բնակչության վրա: Ռուսները ևս թուրքական թաղերից զանգվածաբար հեռանում էին քաղաքի կենտրոն կամ կուտակվում հայկական թաղամասերում:

Նկատենք, որ ջարդերի օրերին ռուսները ո՛չ նյութական վնաս էին կրել և ո՛չ էլ զոհ տվել, եթե չհաշվենք երկու-երեք պատահական դեպքերը: Բայց, ականատես լինելով անլուր բարբարոսությունների, նրանք այլևս հավատ չէին տածում թուրքերի բարի հարևանությանը, վստահ չէին, թե մի օր էլ իրենց չեն ենթարկի նույնպիսի արհավիրքի: Թուրքական թաղամասերից հեռացավ ռուսների մեծ մասը:

Քաղաքից հեռացող հայերը գլխավորապես փախչում էին Թիֆլիս, մի մասն էլ՝ Հյուսիսային Կովկաս, իսկ ռուսները՝ Ռուսաստան: Միայն հինգ օրվա ընթացքում, փետրվարի 7-12-ը, Բաքվից հեռացավ 10000 հոգի[2], իսկ փետրվարի 13-ից հետո՝ մինչև նույն ամսի 23-ը, Վլադիկավկազի և Անդրկովկասի երկաթուղիներով Բաքվից փախավ 7500 բանվոր[1]:

Բաքվից բնակչության մի մասի փախուստի և քաղաքում մնացածների խուճապային տրամադրությունների հետևանքով և՛ քաղաքում, և՛ նամանավանդ նավթային շրջաններում արդյունաբերական կյանքը ամբողջովին կանգ առավ:

Բաքվի երկու մասի բաժանումը հանգստություն չբերեց: Ապագա սարսափների երկյուղը լարել էր բոլորի նյարդերը: Նույնիսկ երկու-երեք ամիս հետո տիրող հոգեբանական այդ վիճակն այսպես է նկարագրել Աբրահամ Գյուլխանդանյանը.

«Քաղաքի մի որևէ մասի մեջ տեղի ունեցած հրացանի կամ ատրճանակի մի պայթյուն, խաղաղությունը վրդովող մի անակնկալ ձայն սոսկալի իրարանցում էր առաջ բերում ամբողջ ազգաբնակչության մեջ. կանայք և երեխաները խելագար փախչում էին, բոլոր խանութներն անակնկալորեն կողպվում էին, և մարդիկ սարսափած հրհրելով միմյանց՝ ոտնատակ էին տալիս ինչ պատահեր: Հայերը վազում էին դեպի հայկական մասը, իսկ թաթարները՝ դեպի թաթարականը: «Սկսվե՛ց, սկսվե՛ց» աղաղակներով մի քանի վայրկյանից բոլոր փողոցները կատարելապես ամայանում էին...»[2]:

Փետրվարի 18-ին ռուսական ցարը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով սպառնալիքներ էր տեղում իշխանություններին մերկացնող հեղափոխական կազմակերպությունների հասցեին: Այդ հայտարարության հիման վրա Բաքվում նույն օրը ռազմական դրություն հայտարարվեց: Հասարակական ակումբի շենքը շրջապատվեց կազակներով, միտինգների մասնակիցների անունները գրանցվում էին հատուկ մատյաններում: Սկսվեցին խուզարկությունն ու կալանքները. մտնում էին մահճակալների տակ, քրքրում պահարանները՝ փնտրելով զենք, հեղափոխական գրականություն, թերթեր:

Երեկոյան ժամը 8-ից ամեն տեսակ երթևեկությունը Բաքվում արգելվում էր: Մարդիկ քաղաքի մի մասից մյուսն էին անցնում միայն ցերեկով:

Կայարանում և նավահանգստում ուժեղացված խուզարկումներ էին:

Այնուամենայնիվ, տարբեր ազգությունների քաղաքացիների օգնությամբ հեղափոխական ագիտատորների մի մասը բարեհաջող հեռացավ քաղաքից:

Շուտով Բաքու լուր հասավ, որ կայսրության ուրիշ վայրերում նույնպես, որտեղ բնակվում էին տարբեր ազգությունների մարդիկ, ոստիկանությունը ջանում է բնակչության մի մասին հրահրել մյուսի դեմ: Մտավորականության դեմ պայքարելու համար այս ու այնտեղ կազմակերպվում էին «սև հարյուրակներ»: Ազգամիջյան անկարգությունների հողի վրա տեղի էին ունենում սպանություններ:

Տագնապալի այդ երևույթը մարդկանց ստիպում էր մտածել, որ բնավ չի վերացել նոր կոտորածների վտանգը: Ուստի Հ.Ց. դաշնակցությունը ոչ միայն

---

[1] Տե՛ս «Հայրենիք», N 7(91), մայիս, 1930, էջ 153:
[2] Տե՛ս «Մշակ», N31, 24 փետրվարի 1905թ:

[1] Տե՛ս «Մշակ», N34, 1 մարտի 1905թ:
[2] Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 142:

վաղաժամ էր համարում փափուկ բարձերին ննջելը, այլև գտնում էր, որ հրամայական անհրաժեշտություն է կազմ ու պատրաստ դիմավորել անապասելի նոր շրջադարձերին:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Բաքվի զանգվածային ոճրագործությունը, որ հղացել էր իշխանությունների ուղեղում և գործադրվել Թուրքերի ձեռքով, լայն արձագանք գտավ Անդրկովկասում, Ռուսաստանում և նրա սահմաններից հեռու:

Մարդիկ հավատում էին, որ արդեն ապրում են լուսավոր դարում, ոգևորվում էին այն հույսով, որ միջնադարյան խավար գաղափարներն ու մտքերը մեկընդմիշտ և անդառնալի թաղված են, որ համամարդկային քաղաքակրթությունը, վերջապես, պետք է տիրի և ոչնչացնի բոլոր գազանային կրքերն ու ցանքերը:

Բայց տխու՜ր, սևաթույր իրականությունը գալիս էր իր ահռելի փաստերով՝ խեղդելու վարդագույն հավատն ու հույսերը: Անհրաժեշտ էր իրականությունն աչխարհին ներկայացնել այնպես, ինչպես որ կար: Մարդիկ ուզում էին տեղյակ լինել սև եղելությունների մանրամասներին, մի խոսքով՝ ճշմարտությունն առանց վարագույրի: Հասարակական կարծիքն այնքան դյուրազգաց էր դարձել, որ ուղղակի անհնար էր նրան բավարարություն չտալ: Իսկ դա կարող էր անել միայն մամուլը:

Կովկասյան մամուլի բոլոր թղթակիցներն սկզբում իրենց անզոր հայտարարեցին նկարագրելու այն, ինչ տեղի էր ունեցել չեն ու հարուստ քաղաքում: Կատարված արյունալի դեպքերը համեմատում էին «Բարդուղիմեոսյան գիշերվա» հետ և գտնում, որ Բաքուն մոռացնել տվեց հին և նորագույն պատմության շատ ու շատ արյունոտ էջեր:

Սակայն օրերի հետ՝ մամուլը մտավ իր առօրյա հունի մեջ:

Տպագիր խոսքը երբևիցե այնքան խոշոր հասարակական ուժ չէր եղել, ինչպես հեղափոխության օրերին, երբ կյանքն այնքան հարստացել էր զանգվածային շարժումներով, պահանջներով, գաղափարներով: Հասարակությունն ամենից շատ մամուլի մեջ էր ստանում իրեն հուզող հարցերի պատասխանը: Թուրք-հայ արյունահեղ դրամայի առաջին իսկ պահից ամենքը դեպի մամուլը դարձրին հայացքները: Մարդիկ ոչ մի բանի այնպես չէին հավատում, ինչպես տպագրական խոսքին:

Իր մեծ դերը հաջողությամբ կատարելու համար մամուլը պետք է ազատ ու անկախ լիներ, պետք է կարողություն ունենար անարգել լույս սփռել հասարակական գործերի վրա՝ ոչինչ չթողնելով անհայտության մեջ: Այն դեպքում, երբ տպագրական խոսքն ի վիճակի չէր լինում ճշմարտությունն ամբողջությամբ հրապարակ հանել, այնժամ տեղի էր ունենում հասարակական կարծիքի խմորում: Ճշմարտություն որոնող հասարակությունը, կորցնելով հավատը դեպի հրապարակային խոսքը, սկսում էր պատեպատ ընկնել, ասեկոսեներից առասպելներ ստեղծել և դրանցով բավարարություն տալ իր հարցասիրությանը:

Կոտորածները լայն լուսաբանություն գտան բոլոր ուղղությունների հայկական թերթերում ու հանդեսներում, որոնց խմբագրությունները հանդես էին գալիս լուրջ մեկնաբանություններով: Մամուլի էջերում եղելությունների բազմակողմանի վերլուծություններ էին կատարում հասարակական, քաղաքական, կրոնական գործիչներ, իրավաբաններ, տնտեսագետներ, պատմաբաններ:

Հատկապես մեծ պաթոսով և անզիջում կրքով էին հանդես գալիս սոցիալիստական հեղափոխական մամուլի օրգանները:

Դաշնակցության մամուլի օրգաններն ամբողջովին կամ հատվածաբար տպագրել էին 1905թ. փետրվարի 9-ին Հ.Յ.Դ. Պետերբուրգի կոմիտեի ընդունած ընդարձակ դիմումը՝ ուղղված ռուս քաղաքացիներին, որտեղ բացահայտված էին Բաքվի արյունալի դեպքերի պատճառները և մատնացույց էին արված մեղավորները: Դիմումի մեջ ցարական կառավարությունը ներկայացված էր որպես կոտորածների կազմակերպիչ: Շեշտվում էր, որ տեղի ունեցածը ուղղված է ոչ միայն հայ, այլև ռուս ժողովրդի դեմ, քանի որ նպատակ ունի Ռուսաստանին հավատարիմ հայությանը դուրս մղել Կովկասից, որի անխուսափելի հետևանքը լինելու է այնտեղ օսմանյան Թուրքիայի տիրապետության հաստատումը[1]:

Շաբաթներ շարունակ սոցիալ-դեմոկրատական, հնչակյան և դաշնակցական թերթերը հոդվածներ էին տպագրում Կովկասի հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչների հանդիպման արդյունքում հրապարակված փաստաթղթերի ոգով: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կովկասյան միացյալ կոմիտեն*, սոցիալ-դեմոկրատական հընչակյան կուսակցության Թիֆլիսի կոմիտեն, «Մաքարթվելո» սոցիալ-ֆեդերալիստական Թիֆլիսի կոմիտեն, սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) Թիֆլիսի կոմիտեն և Հ.Յ. դաշնակցության կովկասյան պատասխանատու մարմինը 1905թ. փետրվարի 12-ին հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով հանդես էին եկել «Կովկասի բոլոր ազգություններին» ուղղված համատեղ կոչով, ուր տրված էր Բաքվի փետրվարի 6-9 դեպքերի և դրանցում ցարիզմի խաղացած ստոր դերի գնահատականը: Ջարդերի գլխավոր պատասխանատուն համարվում էր ցարը: Նրանում ասված էր, որ Քիշինյովի սարսափները ոչինչ են հանցագործ ինքնակալության կողմից Բաքվում կազմակերպված զարհուրելի եղեռնագործության համեմատ: «Քաղաքացինե՜ր, – նշված էր կոչում, – այս բոլորը մեռնող ռեժիմի վերջին ջղաձգություններն են: Ինքնա-

[1] ՀՀ ՀՔԿԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 21, թ.թ. 1-2:

* Կովկասում ՌՍԴԲԿ երկու ֆրակցիաները գործում էին միասնական կազմակերպության մեջ:

կալությունը զգում է, որ իր օրերը հաշված են, և դիմում է վերջին միջոցին: Այսօր նա մահմեդականներին է զինում հայերի դեմ, վաղը վրացիներին կը զինե հայերի և մահմեդականների դեմ, և այսպես շարունակ»[1]:

Հեղափոխական կուսակցությունները Կովկասի բոլոր ազգություններին կոչ էին անում ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում միավորել ուժերը[2]:

Ի տարբերություն հայկական մամուլի՝ կովկասյան թուրքերի մամուլը, որը ներկայացված էր "Каспий" ու «Շարքի ռուս» հասարակական-քաղաքական թերթերով և «Մոլլա Նասրեդդին» երգիծաթերթով, ակնարկ անգամ չէր արել Կովկասի հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչների ժողովի և նրա ընդունած կոչի մասին:

Բաքվի "Каспий" լրագիրը սկզբից ևեթ այն տեսակետը հայտնեց, որ մամուլը չպետք է արձանագրի կոտորածների մանրամասները, որպեսզի ցավալի դեպքերը մոռացվեն, որպեսզի հայ և թուրք համայնքների հաշտությունը հնարավոր դառնա: Թերթի խմբագրությունը նույնիսկ պահանջում էր, որ մամուլն ինքնակամ զոհի իր ունեցած ազատությունը և կամավոր լռության ենթարկի ինքն իրեն:

Այդ տեսակետը վճռականապես մերժում էր հայկական մամուլը՝ գտնելով, որ ազգերի միջև համերաշխությունը հնարավոր է, եթե այն հիմնված է արդարության վրա, երբ մեկի իրավունքները նվիրական են նաև մյուսի համար:

«Մշակը» 1905թ. N 31-ում տպագրել էր նշանավոր դաշնակցական գործիչ Եղիշե Թոփչյանի «Ո՞վ է մեղավոր» վերնագրով հոդվածը, որտեղ նա անընդունելի էր համարում «աղբը տնից չհանելու» տեսակետը: «Բայց մենք, - գրում էր նա, - մինչև վերջ, ամեն տեղ և ամեն կերպ պետք է քարոզենք համերաշխության, եղբայրության վեհ գաղափարները և դրա հետ միասին պետք է անկեղծորեն բաց անենք կատարված փաստերը, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ո՞վ է մեղավորը, թե որտե՞ղ է չարիքի բուն պատճառը»:

Ազգերը հրեշտակներից չեն բաղկացած. ամեն տեղ, ամեն ազգի մեջ կան վատ, ստոր, վայրենի կրքեր, կան ամբողջ հանցագործ խմբեր: Եվ ահա, երբ երևան են գալիս այդ բացասական հատկությունները, երբ դրանք այս կամ այն չափով մի աղետ են ծնում, չի կարելի լռել, չի կարելի աչքաթող անել հասարակական ախտերը: Հակառակ վարմունքը արդարության նահատակություն կլիներ: «Մշակը» գրում էր.

«Մենք միշտ մոռանում ենք մի անմահ սկզբունք, այն, որ մի ազգի պակասությունների մերկացումը երբեք անպատվություն չէ, այլ, ընդհակառակը, մի վեհ նշան, որ վկայում է, թե այդ ազգը ուզում է ինքն իրեն կրթել, ինքն իրեն քննելով գտնել առաջադիմության ճանապարհը»[3]:

[1] «Դրոշակ», N 3(156), մարտ, 1905, էջ 43-44:
[2] Նույն տեղում:
[3] «Մշակ», N 32, 26 փետրվարի 1905թ.:

Չնայած կոտորածների մասին թուրք մամուլի լռությանը, այնուամենայնիվ, ոչ միայն Բաքվում, այլև Անդրկովկասի ուրիշ վայրերում հասարակ թուրք մարդիկ դատապարտում էին կատարվածը, պահանջում Բաքվում վերահսկել իրավիճակը և թույլ չտալ կոտորածների, ջարդերի տարածումը երկրամասով մեկ:

Դեպքերից անմիջապես հետո Անդրկովկասի տարբեր վայրերում տեղի ունեցան հայ-թուրքական հաշտությանն ուղղված բազմաթիվ միջոցառումներ: Հայ և թուրք խառը բնակչություն ունեցող վայրերի մզկիթներում և եկեղեցիներում տեղի էին ունենում հոգեհանգստյան համատեղ արարողություններ, ընդունվում էին բանաձևեր, որոնք ուղարկվում էին հայ, թուրք և օտար մամուլին, փոխարքային և այլ հասցեներով:

Փետրվարյան աղետի զոհերի հիշատակին փետրվարի 14-ին հանդիսավոր հոգեհանգիստ կատարեց Թիֆլիսի մահմեդական հոգևորականությունը: Հավաքվել էր 10 հազարանոց մի բազմություն: Հոգեհանգստին, բացի մահմեդականներից, ներկա էին հայեր, վրացիներ, ռուսներ, ուրիշ ազգությունների անձինք:

Հոգևորականների քարոզներից հետո Նադիր բեգ Եդիգարով անունով թուրքը երկու ազգերի համերաշխությունը իրականացված փափագ տեսնելու մասին ճառ ասաց՝ արտաբերելով նաև հետևյալ խոսքերը.

«Եղբայրնե՛ր հայեր, վրացիներ և ռուսներ. ներեցե՛ք այն բոլորի համար, որ տեղի ունեցավ Բաքվում: Երդվում եմ մեր ամենի համար միակ Աստծով, որ այդ բանի մեջ մենք մեղավոր չենք: Ներեցե՛ք մեր ակամա սխալմունքի համար: Ներեցե՛ք, եթե մեր եղբայրներից մի քանիսն ընկան չարամիտ մարդկանց ազդեցության տակ և պատճառ դարձան սարսափելի աղետի, որ այնքան վիշտ ու ցավ է պատճառել մեզ բոլորիս»[1]:

Եդիգարովի խոսքերը խոր տպավորություն թողեցին ներկաների վրա. մարդիկ արտասվում էին և միմյանց ձեռք սեղմում, համբուրվում՝ ուխտելով հավատարիմ մնալ ազգամիջյան համերաշխության գաղափարին:

1905թ. փետրվարի 18-ին ու 19-ին Կարս քաղաքի հայ և մուսուլման հոգևորականությունը համատեղ անցկացրեց հոգեհանգստի արարողություն՝ նվիրված Բաքվի անկարգությունների զոհերին: Հայերի և մուսուլմանների կողմից արտասանվեցին ճառեր, որոնցում նրանք մանրամասն հաղորդում էին Բաքվի կոտորածների մասին, տալիս էին խորհուրդներ, հիշեցնում, որ հայերն ու մուսուլմանները միշտ կողք կողքի ապրել են եղբայրաբար, ուստի պետք է համատեղ կանխել պրովոկացիայի ամեն մի փորձ, պատժել տագնապալի լուրեր տարածողներին[2]:

Բաքվի դեպքերը չէին կարող անտարբեր թողնել վրացիներին:

Վրաց հեղափոխական շրջանները, որոնք ներշնչված էին հակացարական

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց.2, գ. 140, թ. 1:
[2] Նույն տեղում, թ.թ. 1-2:

ոգով և անկեղծ կողմնակից էին կովկասյան ազգերի համերաշխությանն ու բազմակողմանի գործակցությանը, Բաքվում թափած արյան դիմաց ցասման ճիչ արձակեցին: Վրաց լուսավորյալ երիտասարդությունը թե՛ Վրաստանում և թե՛ նրանք, ովքեր կրթություն էին ստանում արտասահմանում, ափիթը բաց չէր թողնում շեշտելու իր վերաբերմունքը և համակրության ձեռք էր կարկառում վշտակիր հայությանը: Հայ հասարակական միտքը, հատկապես մամուլը, բարձր էր գնահատում վրաց առաջադեմ շերտերի այդ վերաբերմունքը:

Թիֆլիսի բոլոր հեղափոխական կուսակցություններն առանձին-առանձին և համատեղ ժողովներ էին գումարում, ընդունում բանաձևեր ու կոչեր:

Բայց եթե վրաց հեղափոխական շերտերը փետրվարյան կոտորածների կապակցությամբ իրենց վերաբերմունքն արտահայտում էին անմիջականորեն, և այդ իսկ պատճառով հայ հասարակության մեջ այն ստանում էր ճշմարիտ անդրադարձ, ապա վրաց ոչհեղափոխական շերտերը, վրաց ղեկավար շրջանները, որպես կանոն, չէին շտապում հստակ ձևակերպել իրենց վերաբերմունքը արյունալի դեպքերի նկատմամբ: Ուստի նույն հայ հասարակության համար նրանց մտածումները մնում էին անծանոթ ու անորոշ:

Իհարկե, ոչ հեղափոխական շերտերում կային բացառություններ: Դրանցից էր Թիֆլիսի նահանգի վրաց ազնվականության պարագլուխ իշխան Դավիթ Մելիքովը, որը կոտորածների երկրորդ օրն իսկ դատապարտեց դրանց կազմակերպիչներին ու իրականացնողներին և մեծ եռանդ դրսևորեց աղետի առաջն առնելու գործում: Պատահական չէ, որ Խրիմյան կաթողիկոսը բարձր գնահատելով իշխան Մելիքովի կատարածը, փետրվարի 24-ին Թիֆլիսում նրան շնորհել էր օրհնության կոնդակ[1]:

Բաքվի կոտորածները դատապարտեց նաև վրաց հոգևորականության մեծ մասը: Վրացական եկեղեցիներում, հայ եկեղեցիների օրինակով, հոգեհանգիստ կատարվեց անմեղ նահատակների համար: Ներկա էին նաև Թիֆլիսի մահմեդական հոգևորականության ներկայացուցիչները և քաղաքի հայտնի անձինք, որոնք ցավակցություն էին հայտնում կատարվածի համար ու հրապարակավ հայտարարում էին, որ ցավալի դեպքերն արդյունք չեն ո՛չ ազգային ատելության, ո՛չ տնտեսական կացության և ո՛չ էլ ֆանատիկոսության, այլ «ծագել են արտաքին պատահական պատճառներից և գաղտնի՝ ինչ-որ դժոխային ուժից»[2]:

Հայության հետ իր համերաշխությունն էր հայտնում անդրկովկասյան ռուս համայնքը: "Новое Обозрение" (Թիֆլիս) թերթը 1905թ. N25-ում տպագրել էր Ա.Կուրչինսկու հետևյալ նամակը.

«Կարդալով հոդվածը Բաքվի դեպքերի առիթով՝ ես ուղարկում եմ 10ռ.՝ հիմնելու օգնության ֆոնդ Բաքվի փողոցներում կոտորված հայերի ընտանիքների համար, որոնց թշվառության համար ես զգում եմ մեղքս, իբրև ռուս մարդու: Իմանալով, թե ինչ նախատինքով դրոշմեց եվրոպական հասարակական կարծիքը նմանօրինակ դեպքերը Թուրքիայում, ես հոգով ցանկանում եմ, որ Բաքվի ոստիկանությունը միանգամայն ճիշտ, անհերքելի ապացույցներով մամուլի մեջ կարողանա տալ փաստեր, որոնցից իմացվեր, թե ծագելիք գազանությունների նախազգուշացման համար արդյո՞ք բոլոր միջոցները նախապես ձեռնարկվել էին: Ոստիկանությունը պետք է նաև ապացուցի, որ դժբախտությունը տեղի է ունեցել վարչությունից անկախ պատճառներով, որպեսզի մենք, բոլոր իսկական ռուսներս, կարողանանք ասել, թե մեղավոր չենք այն բարբարոսությունների մեջ, որոնք կատարվեցին Ռուսաստանի սահմաններում, Բաքու քաղաքում»[1]:

Բաքվում պատահած արյունալի դեպքերի լուրը փետրվարի 10-ից արագորեն տարածվեց Պարսկաստանում: Դա պատահական չէր. Բաքվում բանվորություն էին անում հազարավոր պարսիկներ և հատկապես Հյուսիսային Պարսկաստանի Ատրպատական նահանգից եկած թուրքեր: Իրենց երկրում չունենալով ապրուստի նվազագույն միջոցներ և ռուսական կայսրությանը նայելով իբրև բարեկեցության երկրի՝ նրանք Բաքու էին գալիս ժամանակավոր աշխատանքի: Շատ ցածր սպառողական մակարդակն այստեղ նրանց դարձրել էր քրիստոնյա բանվորների վտանգավոր մրցակիցներ, ավելին՝ փոխադարձ անվստահության և փոխադարձ թշնամանքի մշտական աղբյուր[2]: Սրանք փետրվարյան կոտորածների ականատեսներն էին, իսկ նրանց զգալի մասը Բաքվի թուրքերի կողքին մասնակից էր եղել իրադարձություններին:

Պարսկաստանի հայերի շրջանում սարսափ տիրեց. նրանք ամեն րոպե սպասում էին, որ նույնը կարող է տեղի ունենալ իրենց հետ: Պարսիկներից նրանք քիչ վախ ունեին, բայց չէին թաքցնում իրենց երկյուղը Պարսկաստանի, հատկապես երկրի հյուսիսային շրջաններում բնակվող, հոծ թուրքությունից: Ավելին, հայերը վախ ունեին, որ պարսկահպատակ թուրքերին կհաջողվի շիիզմի հողի վրա պարսիկներին ևս տրամադրել հայերի դեմ*:

---

[1] «Արարատ» ամսագիր, N 4, ապրիլ, 1905, էջ 305-306:
[2] Նույն տեղում, N 2, փետրվար, 1905, էջ 127-128:

[1] "Новое Обозрение" N 25, 1905г.
[2] "Искра" N 24, 1 сентября 1902г.

* Մահմեդականների ընդհանուր թիվն աշխարհում 1905 թվականին հաշվվում էր 170 միլիոն, որից 159 միլիոնը սյունիներ էին, 11 միլիոնը՝ շիա: Միայն Իրանի պետությունն էր, որ ներկայացնում էր շիա խմբի հոծ քանակություն. երկրի 7 միլիոն բնակչությունից շիա էր 6 միլիոնը (պարսիկներ, Ատրպատականի թուրքեր) և սյունի՝ մեկ միլիոնը (աֆղաններ, եկվոր քրդեր): Սյունիների մոտ կրոնն ու իշխանությունը միացված էր օսմանյան սուլթանի անձնավորության մեջ: Ստամբուլում նստող թուրքական սուլթանը ոչ միայն կայսրության բարձրագույն իշխանավորն էր, այլև ամբողջ աշխարհի սյունիների մահմեդականների հոգևոր պետը՝ խալիֆը (սուլթան-խալիֆ): Ընդհակառակը, շիաների մոտ կրոնն ու իշխանությունը բաժանված էին: Նեջեֆում նստող մուջտեհիդը շիաների խալիֆն էր, իսկ Թեհրանում նստող շահը՝ Իրանի արքայից արքան: Կրոնի և իշխանության բաժանումը Իրանում արմատական էր և սրբագործված դարավոր ավանդույթներով: Այս հանգամանքն էր պատճառը, որ համիսլամական հայտնի սկզբունքների հարցում սյունիների և շիաների միջև չէր կարող համաձայնություն կայացվել:

Իրենց պարսկահայ եղբայրների ճակատագրով խոր մտահոգություն էին ապրում կովկասահայերը: Հայկական թերթերը պարբերաբար լուսաբանում էին պարսկահայերի վիճակը, երկրում տեղի ունեցող զարգացումները, հայ հասարակական-քաղաքական գործիչները սերտ կապեր էին պահպանում կովկասյան հյուպատոսարանների հետ:

Տագնապ ու ահազանգ էր հնչեցնում Էջմիածինը:

Կոտորածից անմիջապես հետո ամենայն հայոց կաթողիկոսը հետևյալ հեռագիրն ուղարկեց Իրանի շահին:

«Նորին Արքայական Մեծութեան Մուզաֆֆեր էդ Դին շահնշահին Իրանի.

Ցաւ ի սիրտ լուայ, եթե բազմաղարեան համադրացիք՝ Բաքուայ հայ և մուսուլման ազգաբնակությունն ընդհարուել է և երեք օրուայ ընթացքում տուել է անմեղ մարդկանց բազմաթիվ կորուստ, որից սարսում է մարդկային սիրտն ու զգացմունքը: Այս մասին յայտնելով Ձերդ Արքայական Մեծութեան, աղաչեմ սփոփել և խնամել Ձեր Արքայական հզոր գայիսոնի հովանու ներքև գտնուած խոնարհ հոտս:

Մկրտիչ Կաթողիկոս ամենայն հայոց»[1]:

Կաթողիկոսի հեռագրին հետևեց Իրանի շահի հետևյալ պատասխանը.

«Նորին սրբութեան Կաթողիկոսին» Ամենայն Հայոց.

Ես ինքս շատ վշտացած Բաքուի դեպքերից, երջանիկ եմ հավաստիացնելու, որ պարսկահայերը օրինապահ հպատակներ են, որոնց համար կարող եմ վստահեցնել Ձեզ և պնդել իմ բարեացակամությունը և իմ բարձր հովանավորությունը:

Մուզզաֆֆեր էդ Դին»[2]:

Փետրվարի 11-ին Թիֆլիսի պարսից ընդհանուր հյուպատոսն իր մոտ էր հրավիրել պարսկահպատակ հայ և պարսիկ վաճառականներին՝ թվով մոտ 50 հոգու՝ խորհրդակցելու օրվա կարևոր խնդրի մասին: Հյուպատոսը հայտնեց իր խորին վիշտն այն արյունահեղ և տխուր դեպքերի առթիվ, որոնք տեղի էին ունեցել Բաքվում: «Մենք՝ պարսիկներս և հայերս, - ասաց նա, - դարեր ապրել ենք իբրև հարևաններ: Եվ մեզ վրա մեծ պարտավորություն կա, որ մեր դրացիական հարաբերությունները մնան մաքուր ու հարազատ: Ես խնդրում եմ ձեր բոլորից, որ դուք այն շրջաններում, որտեղ կարող եք խաղաղեցնել մտքերը և համոզել բոլորին, արեք բարին: Մեր ամենի երջանկությունը և բախտավորությունը մեր փոխադարձ օգնության մեջ է: Պարսից կառավարությունը խտրություն չի դնում հայերի և պարսիկների միջև, և հայը նրա համար նույնպիսի սիրելի հպատակ է, ինչպես բուն պարսիկը»[3]:

Ամենայն հայոց կաթողիկոսը 1905թ. փետրվարի 28-ին Էջմիածնից հետևյալ հեռագիրն ուղարկեց Թավրիզ՝ պարսից գահաժառանգին.

[1] «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 211-212:
[2] Նույն տեղում, էջ 211:
[3] «Մշակ», N 22, 13 փետրվարի 1905թ.:

«Նորին Կայսերական Բարձրություն Վալիահդին*:

Վշտալի և արյունահեղ դեպքերից հետո, որոնք տեղի ունեցան Բաքվում հայ և մուսուլման դարավոր բարեկամ դրացիների միջև, համաձայնությունը և խաղաղությունը հաստատված են շնորհիվ երկու ժողովուրդների կրոնավորների բարեացակամ միջամտության: Խնդրում եմ Ձեր Կայսերական Բարձրությանը Ձեր Բարձր հովանավորության ներքո առնել Ձեր հավատարիմ հայ հպատակներին, որոնք միշտ վայելել են Իրանի վեհապետների հայրական բարեացակամությունը»[1]:

Բարեբախտաբար հենց սկզբից պարսից կառավարության ընթացքը ցույց էր տվել, որ առանց իր գիտության երկրում այդպիսի բան տեղի ունենալ չի կարող: Պարսիկ ղեկավարները համոզված էին, որ Բաքվի դեպքերը եղել են երկու ժողովուրդների դեմ նյութած դավադրության հետևանք: Ուստի պատահական չէր, որ կաթողիկոսի հեռագրին թագաժառանգը պատասխանել էր անմիջապես:

«Էջմիածին, Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ I-ին.

Ցավում եմ անակնկալ դեպքերի համար, բայց և հրճվում եմ երկու կողմերի հաշտության համար: Ինչ վերաբերում է մեր հայ հպատակներին, նրանք բարի հարաբերություններ ունեն մուսուլմանների հետ և միշտ բարեբախտ են մեր պաշտպանության ներքո»[2]:

Կաթողիկոսն ամեն առիթ օգտագործում էր՝ այդ ծանր օրերին մշտական կապի մեջ լինելու պարսից արքունիքի հետ, կրկին ու կրկին հավաստելու շահնշահի և նրա երկրի նկատմամբ Իրանի հայության հավատարմությունը:

Մուսուլմանական Նովրուզի տոնի առթիվ վեհափառ հայրապետը մարտի 7-ին հետևյալ շնորհավորական հեռագիրն ուղարկեց Թեհրան.

«Նորին Արքայական Մեծութեան Իրանի Շահնշահ Մուզզաֆֆեր էդ Դինին.

Տե՛ր Արքայ, ինձ երջանիկ եմ համարում շնորհավորել Ձեզ Ս. Էջմիածնի և համայն հոտիս հետ Նովրուզի տոնը, մաղթել Ամենաբարձրյալից՝ շնորհել Ձեզ երկար և բարեբաստիկ կեանք Արքայական ամբողջ գերդաստանի հետ ի փառս Իրանի և Ձեր հպատակների երջանկութեան:

Մկրտիչ Կաթողիկոս
Ամենայն Հայոց»[3]:

Ստացվեց շահի հետևյալ պատասխանը.

«Էջմիածին
Նորին Սրբութեան Մկրտիչ Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Հայ միաբանութեան ցանկությունները ինձ մեծ բավականություն պատճառեցին. սրտանց շնորհակալ եմ Ձեր սիրալիր զգացմունքների համար»[4]:

* Վալիահդին՝ veliakt բառից - թագաժառանգ, գահաժառանգ:
[1] «Մշակ», N 35, 2 մարտի 1905թ., «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 213:
[2] «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 213:
[3] Նույն տեղում, էջ 214:
[4] Նույն տեղում:

Չնայած պարսկական իշխանությունների ձեռնարկած միջոցներին, այնուամենայնիվ, երկրի թուրքաբնակ մի քանի վայրերում տեղի ունեցան հակահայկական ելույթներ: Առավել վտանգավորը Խորասանի Նահանգի Մեշհեդ քաղաքում Բաքվի ցավալի դեպքերի արձագանքն էր: Քաղաքի թուրքերն ամեն ինչ անում էին տեղի պարսիկ բնակչությանը հայերի դեմ գրգռելու համար: Չնայած իշխանությունների արած նախազգուշացումներին, թուրքերը չէին հանգստանում և ֆանատիկ ամբոխին հայերի դեմ տրամադրելու համար պատրվակներ էին փնտրում:

Եվ ահա, օրերից մի օր քաղաքում հնարովի լուր տարածվեց, թե նկատվել է, որ մի պարսիկ կին դուրս է եկել այսինչ հայի տնից: Մարտի 9-ի առավոտյան ամբոխը խռնվում է մզկիթում, ապա դիմում տեղական մուշտեհիդին և խնդրում տալ հայերին ջարդելու ու նրանց ունեցվածքը գրավելու հրաման: Մուշտեհիդը վճռականապես արգելում է և փորձում զսպել հուզված մտքերը: Բայց կույր ամբոխը բանի տեղ չդնելով արած հորդորները՝ դիմում է դեպի հանցավոր կարծված հայի տունն ու խանութը, թալանում, ապա՝ մատնում հրդեհի: Դրան հետևում է քաղաքի ուրիշ հայերի տների, խանութների և պահեստների կողոպուտը: Հայերը կրում են 150000 ռուբլու նյութական վնաս: Սակայն Խորասանի նահանգապետն անմիջապես ձեռնարկում է կտրուկ միջոցներ, սաստում ամբոխին, կանխում խռովության հետագա ծավալումը, վերականգնում կարգն ու հանգստությունը[1]:

Մեշհեդի դեպքերի առթիվ ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանը Էջմիածնից 1905թ. մարտի 10-ին հետևյալ հեռագիրն է ուղարկում Թեհրան՝ պարսից Մուզաֆֆեր էդ Դին շահին.

«Նորին Կայսերական մեծություն Իրանի Շահնշահին:

Ինձ հեռագրում են Թիֆլիսից, որ Մեշհեդում տեղի է ունեցել կոտորած, ավարառություն հայերի և քրիստոնյաների նկատմամբ: Ապահով եմ, որ կարգը կ՛վերականգնվի անմիջապես և Ձեր հավատարիմ հայ հպատակները կը վայելեն Ձեր կայսերական մեծության հայրական բարձր հովանավորությունը: Եվ ես իմ զառամյալ օրերում աղոթում եմ Աստծուն Իրանի մեծ վեհապետի առողջության և երկար կյանքի համար»[2]:

Շահը հետևյալ պատասխանը ուղարկեց Էջմիածին.

«Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Մեր բարձր հովանավորությունը չի դադարել գործադրվելուց Մեր կայսրության մեջ ապրող հայերի և քրիստոնյաների նկատմամբ. նրանք այնտեղ վայելում են և կվայելեն կատարյալ ապահովություն: Ես հավատացած եմ, որ Ձեր Սրբությունը կը շարունակե բաշխել նրանց իր իմաստուն խորհուրդները:

Մուզաֆֆեր էդ Դին:

[1] Տե՛ս «Մշակ», N 45, 15 մարտի, N 49, 19 մարտի 1905թ.:
[2] Նույն տեղում, N 48, 18 մարտի 1905թ.:

12. III. 1905թ., Թեհրան»[1]:

Բաքվի կոտորածը մեծ իրարանցում առաջ բերեց նաև Արդաբիլի մահմեդականների շրջանում: Ընդհանուրին տիրել էր վրեժխնդրության ոգին, ամեն տեղ տարածվում էր ջուկ ու աղմուկ, գաղտնի խորհրդակցություններ էին տեղի ունենում քաղաքի մի բուռ (25 տնից բաղկացած) հայերին բնաջինջ անելու, նրանց ինչքը կողոպտելու համար:

Արդաբիլի հայերին նույնպես տիրել էր մահառիթ սարսափ: Բարեբախտաբար այստեղ նույնպես վրա հասավ իշխանությունը: Պատժամիջոցների գործադրության սպառնալիքով հանգստացան կրքերը[2]:

Խլրտումների որոշ նշաններ երևացին նաև Ռեշտի ռուսահպատակ մուսուլմանների մոտ, բայց տեղի իշխանությունը կարողացավ բնում խեղդել վտանգը[3]:

Պետք է հավաստել, որ ոչ միայն Պարսկաստանի, այլև մուսուլմանական մյուս բոլոր երկրների (բացառությամբ Թուրքիայի) հասարակությունը ճիշտ էր ըմբռնում տեղի ունեցածը: Մուսուլմանները, որտեղ էլ լինեին, հավանություն չէին տալիս Բաքվի իրենց հավատակիցների սկսած կոտորածին: Կատարվածը միանգամայն ճիշտ էին ընկալում նաև այն մուսուլմանները, որոնք ապրում էին իրենց երկրների սահմաններից դուրս:

Երբ Բաքվի աղետալի դեպքերի նկարագրությունը տպվեց Անգլիայի լրագրում, Բրիտանիայում ապրող հնդկաստանցի մուսուլմանները չտապեցին իրենց զայրույթը և ցավակցությունը հայտնել: Մի խումբ ականավոր մուսուլմաններ փետրվարի 18-ին Էդինբուրգից հետևյալ հեռագիրն ուղարկեցին Լոնդոն՝ իրենց հայ բարեկամին, լրագրող Շիրազին.

«Մենք չտապում ենք ուղարկելու մեր անկեղծ ափսոսանքը և հակակրանքը Բաքվի այն վայրենի ու սարսափելի կոտորածներին, որոնք կ՛մնան միշտ մի արյունալի արատ Կովկասի ապագա պատմության մեջ: Մենք՝ Հնդկաստանի մուսուլմաններս, միանում ենք բոլոր քաղաքակիրթ ազգերին՝ դատապարտելու համար քսաներորդ դարում այդ անօրինակ նախճիրի հեղինակներին: Բայց մենք հույս ունենք, որ դա պետք է այսուհետև ավելի ևս ամրացնի այն բարեկամական հարաբերությունները, որոնք մինչև այժմ գոյություն ունեն մեր և մեր եղբայր հայերի միջև» (ստորագրություններ)[4]:

Բաքվի փետրվարյան կոտորածների մասին լուրերն ու տեղեկությունները միանշանակ չընդունվեցին Ռուսաստանում:

Ռուսական դեմոկրատական շրջանները զայրույթով ընդունեցին Բաքվի դեպքերը, որոնք ճիշտ մեկնաբանություններ էին գտնում "Слово", "Речь", "Свет", "XX век", "Наша жизнь" և այլ պարբերականներում:

[1] «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 215:
[2] «Մշակ», N 45, 15 մարտի 1905թ., «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 215:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, N 45, 15 մարտի 1905թ.:

Բաքվի կոտորածները համեմատելով ռուս սահմանակալների կողմից կատարած հրեական ջարդերի հետ՝ դեմոկրատական մամուլը գալիս էր այն եզրակացության, որ Թուրք-հայկական արյունահեղությունը շատ ավելի վտանգավոր է Ռուսաստանի համար, որպես պետության, քան հրեական ջարդերն են: Հրեաների վիճակը նախընտրելի էր այն իմաստով, որ ռուս հասարակությունն իրեն կտրուկ սահմանազատել էր ռուս ջարդարարներից: Ռուս ժողովրդի լավագույն զավակներն ամեն անգամ իրենց բողոքի ձայրալից ձայնն էին բարձրացնում հակահրեական գործողությունների դեմ: Ավելին, ռուսական դեմոկրատական շրջանների բարոյական ճնշման տակ կառավարությունը նույնպես ստիպված էր իրեն հեռու պահել հրեական ջարդերի կազմակերպիչներից և նույնիսկ պատիժների ենթարկել նրանցից ոմանց:

Ուրիշ էին Բաքվի ջարդերը, որի ընթացքում ոչ թե ռուս ժողովրդի տականքներն էին հարձակումներ կատարում մի ուրիշ, ոչ ռուս, ժողովրդի մարդկանց վրա, այլ ոչ ռուս մի ժողովուրդ ներկայացնող մարդիկ, տվյալ դեպքում Թուրքերը, սպանություններ և ավեր էին սանձազերծել նույն պետության մեջ ապրող մի ուրիշ ոչ ռուս ժողովրդի՝ հայության դեմ: Ըստ որում, եթե հակահրեական էքսցեսների ժամանակ կառավարությունը գոնե արտաքնապես չեզոք էր մնում, ապա Բաքվի դեպքում հենց նա էր կոտորածներին տոն տվող[1]:

Որ հերթին ռուսական հասարակության ձախ՝ հեղափոխական թևը հենց սկզբից Բաքվի կոտորածներն ընկալեց որպես պետերբուրգյան պալատներում մշակված և իշխանությունների կողմից սառնասրտորեն գործողության մեջ դրված ջարդելի ծրագրություն:

Ռուսական կայսրության պատմության մեջ Բաքվի կոտորածները լինելով եզակի դեպք՝ հրի էին մեծ վտանգներով նաև պետության ուրիշ ազգերի համար: Ահա թե ինչու հեղափոխական ուժերը ոչ առանց հիմքի երկյուղ էին կրում, որ ցարը ունակ է բայնածավալ ընդհարումներ հրահրելու կայսրության տարբեր ժողովուրդների միջև՝ իր գահն անսասան պահելու համար:

Ի տարբերություն դեմոկրատական և ձախակողմյան մամուլի՝ ռուսական պահպանողական մամուլը հեռու էր այն մտքից, թե իշխանությունները մասնակից են Բաքվի կոտորածներին: Պահպանողական թերթերի ու հանդեսների էջերը լի էին դեպքերի ճշմարտացի նկարագրություններով, Թուրքերի կողմից կատարված դաժանությունների փաստերով, բայց խմբագրությունների կողմից արված մեկնաբանությունները չէին բխում այդ նկարագրություններից, այլ կատարվում էին՝ միշտ աչքի առաջ ունենալով միապետության շահերը:

Այդ երկչոտությունը, սակայն, երկար չէր տևելու: Ջարդերի ալիքը տարածվելուն և Անդրկովկասում նոր իրադրություն ստեղծվելուն զուգընթաց, պահպանողական մամուլն ամբողջովին պիտի անցներ Թուրք ջարդարարների կողմը:

[1] Տե՛ս Ա. Գրիգորյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 133:

Ինչ վերաբերում է ռուսական հասարակության ծայրահեղ հետադեմ ուժերին՝ միապետության սյուներին, գահի ամեն կարգի կատաղի պահապաններին, ապա նրանք հենց սկզբից դիվային բավականություն ապրեցին կատարվածի համար և այն դիտեցին որպես Կովկասում «հեղափոխական» ու «անիշխանական» հայերի նկատմամբ իրականացրած արդարացի հաշվեհարդար:

Փոխարքայության "Кавказ" պաշտոնաթերթը, հավատարիմ հակահայ զրպարտությունների ասպետ Վելիչկոյի թողած ավանդներին, ռուսական ուլտրառեակցիոն մամուլին պարբերաբար մատակարարում էր խեղաթյուրված ու կեղծ լուրեր՝ բացառապես ուղղված հայերի, նրանց քաղաքական կազմակերպությունների դեմ[1]:

Ծայրահեղ հետադիմության ձայնափողերը՝ Պետերբուրգում լույս տեսնող "Новое Время", "Возрождение", "Биржевые Ведомости", "Правительственный Вестник","Русская Старина", "Русь", "Русское Богадство", "Вестник Казачьих Войск", "Петербургский Листок", "Наша Жизнь", "Петербургская Газета", "Военный Голос", Մոսկվայում լույս տեսնող "Московские Ведомости", "Новости", "Московский Листок", "Русская Мысль", "Русское Обозрение", "Новости Дня" և ուրիշ թերթեր ու հանդեսներ, Ռուսաստանի երկու հիմնական՝ "Российская" և "Петербургская" հեռագրական գործակալությունները Բաքվի կոտորածներն օգտագործում էին բորբոքելու համար ռուս հասարակության հետադիմական մասի շովինիստական կրքերը, ազգամիջյան թշնամության որոմ էին ցանում ամենուր՝ երկրում գնալով աճող հեղափոխական շարժման առջև թումբ կանգնեցնելու համար:

Հակահայ քարոզչության մեջ հատկապես անզուսպ էին ուլտրառեակցիոն թերթերի խմբագիրներ Կոմարովը, Գրինգմուտը, Սուվորինը և այլոք: Հատկապես վերջինը, որը "Новое Время" օրաթերթի տնօրենն ու խմբագիրն էր, թերթի համարյա յուրաքանչյուր համար լցնում էր ամենատարբեր հայավնաս նյութերով ու «հավաստի տեղեկություններով»:

Այսպես, իր հոդվածներից մեկում Սուվորինը Բաքվի փողոցներն արյունով ներկած Թուրք բաշիբոզուկներին ներկայացրել էր որպես մաքրափայլ գառնուկներ: Նա գրում էր. «Հայերը, որ կոտորում են խեղճ Թուրքերին, նրանք են, որ համբերությունից հանեցին այդ բարի ժողովրդին»[2]:

Ռեակցիոն մամուլի հակահայկական շովինիստական ագիտացիան այն մասին, որ ռուսների դժբախտությունների գլխավոր պատճառը հայերը, լեհերը և հրեաներն են, շուտով տվեց իր դառը պտուղները: Ռուսաստանի հայկական համայնքները ոչ առանց հիմքի երկյուղ էին կրում, որ եթե ցարական իշխանություններին հաջողվել է Բաքվում հայերի կոտորած սարքել, ապա բացառված չէ, որ այն կարող է կրկնվել իրենց մոտ: Դավադիր ջարդը Բաքվում ցարական ոստիկանությանը նոր հույսեր էր տալիս նույնպիսի

[1] Տե՛ս "Кавказ", 12 февраля 1905г.:
[2] **«Новое Время»**, 9 марта 1905г.

փորձեր անելու կայսրության այն վայրերում, ուր կար հայ բնակչություն՝ փոքրաթիվ և անպատասխ:

Օրինակ, փետրվարի կեսերից Նոր Նախիջևանի և Ռոստովի հայերը գտնվում էին տագնապալի սպասողական վիճակի մեջ, և դա այն աստիճան, որ շատերը թողնում էին իրենց տները և հեռանում ավելի ապահով տեղեր, ոմանք ունեցած գումարները տեղավորեցին բանկերում, իսկ բոլորը մի քանի օրվա պաշար պատրաստելով՝ ահ ու դողի մեջ դուրս չէին գալիս տներից[1]:

Բաքվի դեպքերը լայն արձագանք ունեցան Եվրոպայում:

Եվրոպական հասարակական կարծիքը Բաքվի կոտորածները դատապարտում էր որպես Ռուսաստանի այլազգի ժողովուրդների նկատմամբ ցարիզմի հանցագործ քաղաքականության մի նոր դրսևորում:

Բաքվի դեպքերի մասին ճշմարտությունը Եվրոպա հասցնելու և տարածելու համար լայնածավալ աշխատանք էին տանում Հ.Յ. դաշնակցության արտասահմանյան կազմակերպությունները, «Դրոշակի» խմբագրությունը, տարբեր երկրների հայասիրական միություններ ու ընկերություններ: Դա խիստ կարևոր գործ էր, քանզի սկզբնական շրջանում մամուլի առանձին օրգաններ ոչ հայանպաստ, սխալ, թուլցիկ տեղեկություններ քաղելով արյունահեղության վայրից, առանց խորանալու կատարվածի էության մեջ, նույնությամբ այդ տեղեկությունները փոխանցում էին եվրոպացի ընթերցողին և նրա մոտ ձևավորում սխալ պատկերացում Բաքվի դեպքերի մասին:

Օրինակ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրգան "Vorwärts"-ում մի տարօրինակ հոդված էր լույս տեսել, որի հեղինակը առավել կծու խոսքեր էր ուղղել հայերին՝ նրանց ներկայացնելով նույն վայրենի բնազդներով, ինչպես թուրքերին: Ընթերցողն այն տպավորությունն էր ստացել, որ հայերը թուրքերին կոտորելուց հետո նույնպիսի խրախճանք են սարքել, ինչպես թուրքերն են սարքել հայ զոհերի դիակների շուրջ: Հոդվածագիրը գրում էր.

«Արյունով արբած, մթագնած վրեժխնդրությամբ, կուրացած տգիտությամբ, թշվառությունից հուսահատ երկու ժողովուրդները պատառոտում էին իրար, երկուսն էլ բռնությամբ հեռու պահված կրթությունից ու առաջադիմությունից»[2]:

Բաքվում տեղի ունեցած դեպքերը պարզաբանելու նպատակով «Դրոշակի» խմբագրությունը 1905թ. մարտի 10-ին մի բացատրական նամակով դիմեց Սոցիալիստական երկրորդ ինտերնացիոնալի Բրյուսելի Միջազգային սոցիալիստական բյուրոյին, Փարիզի մարդկային իրավունքների պաշտպանության կոմիտեին և Ռուսաստանի ժողովուրդների բարեկամների դաշնությանը: Նամակում կոնկրետ փաստերով ցույց էր տրվում ցարական իշխանությունների, ոստիկանության ու զորքի խաղացած դերը Բաքվի ջարդերի մեջ, տագնապ էր բարձրացվում, որ ցարիզմի վարած քաղաքականության

[1] «Մշակ», N 34, 1 մարտի 1905թ.:
[2] Մեջբերված է «Դրոշակից», N 3(156), մարտ, 1905թ., էջ 47:

հետևանքով ջարդերը սպառնում են կրկնվել Անդրկովկասի հայ-մահմեդական խառը բնակչություն ունեցող Երևան, Շուշի, Գանձակ քաղաքներում և այլուր:

Վերոհիշյալ բոլոր երեք կազմակերպություններն առանց հետաձգելու արձագանքեցին «Դրոշակի» խմբագրության դիմումին:

Բրյուսելի միջազգային սոցիալիստական բյուրոն անմիջապես կոչ ուղղեց աշխարհի բոլոր սոցիալիստական կուսակցություններին և նրանց մամուլի օրգաններին: Տալով Բաքվի ջարդերի համառոտ նկարագրությունը՝ բյուրոն այնուհետև համոզմունք էր հայտնում, որ համաշխարհային սոցիալիստական շարժումը, Երկրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն սատար կկանգնեն պարբերաբար ջարդերի ենթակա հայ ժողովրդին: «Գործադիր կոմիտեն կարծում է, - ասված էր կոչի մեջ, - որ ինքը բոլոր սոցիալիստների խոհերի թարգմանը կլինի և վերստին կբողոքի այն նախամտածված ջարդերի դեմ, որոնց զոհն է դժբախտ հայ ժողովուրդը: Մենք համոզված ենք, որ դուք կը միանաք մեր բողոքին՝ առնելով այն բոլոր նախաձեռնությունները, որոնք բխում են 1900-ի Փարիզի միջազգային սոցիալիստական կոնգրեսի որոշումից» :

Եվրոպայի ամբողջ սոցիալիստական մամուլը տպագրեց թե՛ սոցիալիստական բյուրոյի այս նամակը և թե՛ «Դրոշակի» խմբագրության բացատրական նամակը:

«Դրոշակի» նամակին անմիջապես արձագանքեց մարդկային իրավունքների դաշնության կենտրոնական կոմիտեն: Այս մարմինը քննարկեց նամակը և ընդունեց մի բանաձև, որն այդ նամակի հետ ուղարկեց Փարիզի և Ֆրանսիայի բոլոր թերթերին: Ահա բանաձևի տեքստը.

«Մ[արդկային] ի[րավունքների] դաշնության կենտրոնական կոմիտեն ծանոթանալով իրեն ուղղված հայ յեղափոխական դաշնակցության նամակին, հաստատելով, որ Բաքվում թուրքերի ձեռքով առաջ բերելով հայերի կոտորած՝ ցարը նման և հավասար դարձավ Կարմիր Սուլթանին, նկատելով, որ Կովկասում կիրառած մեթոդը բնավ չի տարբերվում այն մեթոդից, որը կիրառվում է Լեհաստանում, Ֆինլանդիայում, Քիշինյովում և նույնիսկ Պետերբուրգում - նորոգում է իր պարսավանքի արտահայտությունը մի քաղաքակիրթ կառավարության այդ անարժան ընթացքի դեմ»[1]:

«Դրոշակի» բացատրական նամակն առանց ուշացնելու քննարկեց Փարի-

Փարիզի միջազգային սոցիալիստական կոնգրեսը 1900թ. ընդունել էր հետևյալ որոշումը.«Փարիզի միջազգային համագումարը մեկ անգամ ևս հաստատում է եղբայրական համակրանքի զգացումները, որ պետք է համախմբի բոլոր ժողովուրդներին և բողոքի ձայն բարձրացնի ընդդեմ այն վայրագությունների, անիրավությունների և կոտորածների, որոնք կատարվեցին Հայաստանի մեջ, հայտարարում է զանազան կապիտալիստական կառավարությունների մեղապարտ մասնակցությունը, սոցիալիստական պառլամենտների հատվածներին թելադրում է ամեն առթիվ միջամտել ի նպաստ հայ ժողովրդի, որը զզվելիորեն չարչարված է և որին է ուղղում համագումարը իր ջերմ և սիրալիր զգացումների հավաստիքը» (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 17, ց.1, գ. 383, թ. 7):
[1] «Դրոշակ», N 3(156), մարտ, 1905, էջ 46:

զում գործող Ռուսաստանի ժողովուրդների բարեկամների դաշնությունը: Անատոլ Ֆրանսի նախագահությամբ Դաշնությունը 1905թ. մայիսի 20-ին Փարիզում կազմակերպեց բազմամարդ հանրահավաք: Ելույթներով հանդես եկան հասարակական ու քաղաքական գործիչներ, անվանի գրողներ ու գիտնականներ, որոնք անարգանքի սյունին գամեցին ռուսական իշխանություններին՝ Բաքվում կատարած ամոթաբեր ոճիրի համար[1]:

Իրենց հերթին, ռուսական տեղեկատվական աղբյուրները Եվրոպայում և այլուր տարածում էին պաշտոնական նյութեր, որոնցում խեղաթյուրված էին ներկայացնում Բաքվի դեպքերը, և աղետի պատասխանատվությունը դնում էին հայկական հեղափոխական կոմիտեների վրա: Ահա թե ինչու «Դրոշակի» խմբագրությունը մի հատուկ շրջաբերականով դիմեց եվրոպական մամուլի բոլոր կարևոր օրգաններին և խնդրեց այն տպագրել: Այնտեղ ասված էր.

«Պարոն.

Ձեր վեհանձն աջակցությունն ենք խնդրում քաղաքակրթությանը մատուցելու համար այն հակամարդկային ոճիրները, որ գործված են հայ ժողովրդի դեմ, այս անգամ Կովկասում քրիստոնյա Նիկոլայ II-ի կայսրության մեջ»:

Հիշեցնելով, որ ցարիզմը 1895-96թթ. բացահայտորեն սատար էր կանգնել Թուրքաց Հայաստանում հայերի կոտորածներն իրականացնող օսմանյան իշխանություններին, շրջաբերականը շեշտում էր, որ «այդ նույն ցարիզմը ներկայումս ձգտում է հայ տարրը ջախջախել ու ոչնչացնել՝ նրան համարելով ամենաանբարեհույսը և ամենավտանգավորը Կովկասում իր տիրապետության համար»:

Այնուհետև «Դրոշակի» խմբագրությունը գրում էր.

«Պարոն.

...Մենք Ձեզ խնդրում ենք, հանուն հազարավոր զոհերի, հրապարակ հանել իրողությունները և մի անգամ ևս նշավակել այն ամբարտավան բռնապետությունը, որ իր բովանդակ տարածության վրա սերմանում է միայն ատելություն և արյուն...»[2]:

Եվրոպական մամուլի շատ օրգաններ չհապաղեցին տպագրել շրջաբերականը՝ մատնացույց անելով Բաքվի կոտորածների իսկական կազմակերպչին ու հեղինակին:

Այդ ամենից բացի, «Դրոշակի» խմբագրությունը որոշեց Հ.Ց.Դ. Բաքվի կ. կոմիտեից ստացված տեղեկությունների հիման վրա տպագրել երկու գրքույկ՝ ռուսերեն և ֆրանսերեն: Խմբագրության հանձնարարությամբ այդ խնդիրը սեղմ ժամկետում կատարեցին սոցիալիստ-հեղափոխական կուսակցության նշանավոր գործիչներից Վալերի Լունկևիչը (Արարատսկի) և դաշնակցական մտավորականներից Արազը: Լունկևիչի ռուսերեն գրքույկը կոչվում էր

[1] «Դրոշակ», N 3 (156), մարտ, 1905, էջ 46:
[2] Նույն տեղում:

«Ցարիզմի քաջագործությունները»[1], իսկ Արազի ֆրանսերեն գրքույկը՝ «Բաքվի կոտորածները: Մի էջ ցարիզմի բռնաճնշումներից»[2]:

Խմբագրությունը գրքույկները հրատարակեց մեծ տպաքանակով, որոնք տարածվեցին Ռուսաստանում և Եվրոպայում:

ԻՇԽԱՆ ԱՄԻԼԱԽՎԱՐԻԻ «ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ»

Մի կողմից՝ ցարիզմի ոճրագործության դատապարտումն ամենուրեք, մյուս կողմից՝ նոր ջարդերի վտանգի հեռանկարի նկատմամբ հայ և թուրք բնակչության ունեցած վախը, Բաքվի մի շարք հայտնի անձնավորությունների, հիմնականում ռուսների և հայերի, ստիպեցին դիմել Պետերբուրգ՝ կառավարությունից պահանջելով ուղարկել բարձրաստիճան և հեղինակավոր անձնավորություններ, որպեսզի անաչառ քննության ենթարկեն կատարվածը, բացահայտեն խժդժությունների հեղինակներին, պատժեն բոլոր հանցագործներին՝ անկախ նրանց ազգությունից, գրված պաշտոնից և հասարակության մեջ ունեցած դիրքից:

Կառավարությունը չէր ուզում որևէ քննություն կատարել, բայց հասարակայնության ճնշման տակ ստիպված էր տպավորություն ստեղծել, թե ինքն էլ է շահագրգռված ճշմարտության բացահայտմամբ:

Ինչ-որ տեղ իշխանություններին, այնուամենայնիվ, հաջողվում էր ստեղծել այդպիսի տպավորություն: «Արարատ» հանդեսը կասկած չուներ, որ եթե վայրագություն իրականացնողը կույր ամբոխն էր, ապա նրան ուղղություն տվողը մի մթին ուժ էր, որը «եթե ց'այսօր երևան չի եկել կամ կասկածանքի առարկա է դեռ, շուտով կը պարզվի...»[3]:

Շուտով Բաքու եկավ վրացի իշխան Ամիլախվարին, որին հանձնարարված էր պարզել իրողությունը:

Ժամանելով քաղաք՝ նա ամպագոռգոռ հայտարարություններ արեց իր և իր մարդկանց ազնվության մասին, բայց շատ շուտով պարզվեց, որ նա եկել է ոչ թե անկողմնակալ քննություն կատարելու, այլ Նակաշիձեի ոճիրները ծածկելու համար:

Ամիլախվարին նշանակվեց ամբողջ նահանգի զինվորական նահանգապետ. նրան պիտի ենթարկվեին Բաքու քաղաքի և նահանգի բոլոր զինվորական մասերը, իսկ Նակաշիձեին մնում էին նահանգի քաղաքացիական գործերը:

Բաքվի հայության ղեկավարներից շատերը հենց սկզբից կասկած ունեին, որ Ամիլախվարին հազիվ թե ճշմարտությունը մինչև վերջ բացահայտելու ցանկություն ունենա: Բայց նրանք չէին կարծում, թե վրացի իշխանի հոգում այդքան թույն կա հայերի նկատմամբ: Նա իրեն շրջապատեց Նակաշիձեի

[1] В. Араратский (Лункевич), Подвиги царизма, Кровавые февральские дни в Баку,
[2] A. Arazu, Les tueries de Bakou. Une pade sur les exploits Tzariens, .
[3] «Արարատ» ամսագիր, N 2, փետրվար, 1905, էջ 129:

մարդկանցով, ռուս սահմանապահներով, թուրք նավթարդյունաբերողներով ու գործիչներով:

Սահմանափակ ուղեղով և տգետ այդ մարդը զորքի խիստ հսկողության տակ առավ Բաքվի միայն հայկական թաղերը, սկսեց հայերի խուզարկությունն ու զինաթափումը: Այստեղ տեր ու տնօրենը զորքը և իրենց բարբարոսությամբ ու դաժանությամբ հայտնի «պլաստուն» կոչվող կազակներն էին, որոնք ամեն վայրկյան առիթ էին փնտրում անխնա ծեծ ու ջարդ տալ հայերին, լկտի հայհոյանքներով վիրավորել նրանց ազգային արժանապատվությունը:

Որքան էլ Ամիլախվարին ատելություն էր տածում հայերի նկատմամբ, այնուամենայնիվ, ստիպված էր հանդիպելու նաև նրանց ներկայացուցիչների հետ: Առաջին հանդիպման ժամանակ նա հայտարարեց, թե իր նախնական քննությունը ցույց է տալիս, որ ո՛չ ոստիկանությունը և ո՛չ էլ թուրքերը որևէ մեղք չունեն կոտորածների մեջ, և որ մեղքն ամբողջովին ընկնում է հայերի, հատկապես նրանց հեղափոխական կոմիտեների և առաջին հերթին Հ.Ց. դաշնակցության Բաքվի կոմիտեի վրա: Այլ խոսքով, զոհը ներկայացվում էր որպես ամբաստանյալ, իսկ դահիճը՝ զոհ: Հայ ներկայացուցիչների համար պարզ էր, որ վրացի իշխանը կրկնում է այն, ինչ նրան փոխանցել էին Նակաշիձեն, նրա մարդիկ և թուրքերի ղեկավարները:

Ամիլախվարին և Նակաշիձեն հերթական նենգ քայլն արեցին: Հայերի մեղավորության և թուրքերի ու իշխանությունների անմեղության մասին տեսակետը նրանք ակտիվորեն հակադրեցին ջարդերի մասին լույս տեսած անկողմնակալ հոդվածներին և ականատեսների մերկացումներին՝ նպատակ ունենալով իրենց կեղծիքը հիմնավորել ու տարածել Անդրկովկասում և երկրում:

Ի վերջո նրանք հրապարակ բերեցին մի խորամանկ ծրագիր, այն է՝ հրավիրել հայ. թուրք և ռուս ներկայացուցիչների համատեղ ժողով և այն կազմակերպել այնպես, որպեսզի ելույթ ունեցողները, այդ թվում հայերից, դատապարտեին հայկական կոմիտեների, որպես կոտորածների հիմնական մեղավորների, գործունեությունը: Դրանից հետո ելույթներում շոշափած հակակոմիտեական մտքերն անմիջապես պետք է հանձնվեին մամուլին: Այդ միջոցով հնարավոր կլիներ շեղել հասարակական կարծիքը և այն տանել միանգամայն ուրիշ ուղղությամբ, բոլորովին վերացնել Բաքվի և ընդհանրապես Անդրկովկասի պաշտոնեության վրա ծանրացած մեղադրանքները:

Ամիլախվարին ու Նակաշիձեն կարողացան իրականացնել այն, ինչը ծրագրել էին:

Ժողովի գլխավոր դերակատարը դարձավ Թիֆլիսի նախկին նահանգապետ, Հայոնի սահմանապահային Բիկովը, որն այդ ժամանակ փաստաբանություն էր անում Բաքվի շրջանում: Հենց առաջինը հանդես գալով ելույթով՝ նա հայկական կազմակերպություններին ուղղեց լկտի սպառնալիքներ: Խոսելով քաղաքում հանգստության վերականգնման անհրաժեշտության մասին՝ նա հայտարարեց, որ դա հնարավոր է միայն ու միայն հայկական հեղափոխական կուսակցությունների գործունեությունն ընդմիշտ արգելելու դեպքում:

Ինչպես և պետք էր սպասել, ժողովն անցավ կեղծ հաստատումների կարգախոսով: Հանդես էին գալիս թուրքեր և ռուսներ: Ինչ վերաբերում էր ժողովին մասնակից հայ ներկայացուցիչներին, ապա նրանք, լինելով մեծահարուստների և քաղքենիական դասի տեսակետների արտահայտիչներ ու հեղափոխական կուսակցությունների հակառակորդներ, բնականաբար, որևէ խոսք չէին ասում ի պաշտպանություն այդ կուսակցությունների՝ մտածելով միայն իրենց անվտանգության մասին:

Ժողովի նյութերը տպագրվեցին Պետերբուրգի, Մոսկվայի և Ռուսաստանի բազմաթիվ նահանգների պահպանողական թերթերում, իսկ կիսապաշտոնական "Новое Время"-ն այդ նյութերի հիման վրա լույս ընծայեց կատաղի հակահայ բովանդակության մի շարք խմբագրականներ:

Հայկական մամուլը, բնականաբար, միջավայրի սահմանափակության և լեզվական արգելքի պատճառով, որքան էլ լարում էր ջանքերը, ի վիճակի չէր չեզոքացնելու իշխան Ամիլախվարիի և նրա «հանձնաժողովի» կողմից կատարվող փետրվարյան դեպքերի խեղաթյուրումները, հետագեմ մամուլի հակահայ հարձակումները: Ահա թե ինչու մեծապես կարևորվեց ռուսական ազատական, սոցիալիստ-հեղափոխական և հատկապես սոցիալ-դեմոկրատական մամուլի դերը: Արտահայտելով ռուս հասարակության դեմոկրատական շրջանների հայացքը Բաքվի կոտորածների նկատմամբ՝ ազատական և սոցիալիստական թերթերն ու հանդեսներն անարգանքի սյունին էին գամում ցարական կառավարությանը և Կովկասում նրա ներկայացուցիչներին, հակահարված էին տալիս հայերի վրա կատարվող անարդար հարձակումներին, ընթերցողներին բացատրում էին, որ հայ հեղափոխական կազմակերպություններն ակամայից են ընդգրկվել կռիվների մեջ, այն էլ միայն մեկ նպատակով՝ թուրք ջարդարարներից և Բաքվի իշխանությունների սադրանքներից պաշտպանել խաղաղ հայ բնակչությանը:

Մի քանի հայանպաստ, անկողմնակալ հոդվածներ և նյութեր տպագրեց Բաքվի ազատական "Бакинские Известия" թերթը, որը դիմելով Ամիլախվարուն, նրան հրավիրում էր լրջախոհության, իսկ թուրքերին՝ զգաստության և հայերի հետ համերաշխության:

Իշխան Ամիլախվարիի գործունեությունը քննադատում էին նաև վրացական մամուլի առանձին օրգաններ: Մի խումբ վրացի հասարակական գործիչներ հանդես գալով Թիֆլիսում լույս տեսնող «Ծնոբիս փուրցելի» ազատական թերթում, անընդունելի էին համարում փաստերի լայնատարած կեղծումները, որ կատարվում էին Բաքվում:

Վրացի հասարակական գործիչ Մելիկովը Պետերբուրգի "Русь" թերթում տպագրած հոդվածում, անդրադառնալով Ամիլախվարիի և Նակաշիձեի կազ-

մակերված ժողովին, խմբագրությանը կոչ էր անում դեպքերը լուսաբանելիս լինել ազնիվ ու բարոյական:

Ամիլախվարիի և Նակաշիձեի նենգ ու սադրիչ խաղերը ոչ միայն թյուրիմացության մեջ էին գցում ռուս ընթերցողներին, այլև ազդում էին եվրոպական հասարակական կարծիքի վրա: Ահա թե ինչու Հ.Յ. դաշնակցության արևմտյան բյուրոն բողոքի մի շարք հեռագրեր ուղարկեց Փարիզի, Վիեննայի, Բեռլինի, Ֆրանկֆուրտի, Լոնդոնի թերթերին: Այդ հեռագրերից մեկում, որն ուղարկված էր "Frankfurter Zeitung" թերթին, ասված էր. «Իշխան Ամիլախվարին, որ հատուկ միսիայով ուղարկվում է Բաքու՝ քննելու վերջին կոտորածների պատճառները, ձգտում է բռնությամբ խեղդել հասարակական կարծիքը, հայերին սպառնում է նորանոր ճնշումներով, փակում է աչքերը ամենահայտնի փաստերի առաջ, որոնք անվիճելիորեն ապացուցում են ռուս կառավարության մեղսակցությունը»[1]:

Իշխան Ամիլախվարիի «հետաքննության» սադրիչ նպատակների մերկացմանն էին ուղղված Եվրոպայում լույս տեսնող «Դրոշակ», «Հնչակ», «Ապագա», «Արմենիա» թերթերի մի շարք հրապարակումները:

Մարսելում (Ֆրանսիա) հրատարակվող «Արմենիա» թերթում նրա խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը, մերժելով ռուս պաշտոնական այն տեսակետը, որ, իբր, Բաքվում թուրք-հայկական կոտորածների գլխավոր մեղավորները հայ հեղափոխականներն են, որպես իսկական հանցագործների մատնացույց էր անում ցարական չովինիստական կառավարությանը և համիսլամականությանը ոգեշնչող սուլթան Համիդին: Նա հերքում էր այն անհեթեթ տեսակետը, թե մահմեդականները հայերին կոտորում են այն պատճառով, որ վերջիններս հեղափոխության միջոցով ուզում են Կովկասում տապալել ռուսական վարչակարգը: Այստեղից հետևում էր, որ ռուսական տիրապետության միակ պաշտպանները Կովկասում մուսուլմաններն են: Եթե հետևելու լինենք այդ տրամաբանությանը, գրում էր հրապարակախոսը, ապա մուսուլմաններն առաջին հերթին պետք է կոտորեին ռուս հեղափոխականներին, որոնք հակացարական շարժումների հիմնական կազմակերպիչներն են, իսկ հայ հեղափոխականները նրանց համեմատ փոքր տոկոս են կազմում: Հետևապես հայկական կոմիտեներին ուղղված մեղադրանքը, որ եռանդով առաջադրում էին Բաքվի թուրքերի ղեկավարները, մի գլխավոր նպատակ էր հետապնդում՝ համիսլամականության դրոշով բնաջնջել կովկասահայությանը[2]:

Հայկական կոմիտեներին որպես Բաքվի փետրվարյան կոտորածների հիմնական մեղավորներ ներկայացնելու ճիգերը չտվեցին սպասված արդյունքը: Դրա հիմնական պատճառը ռուս ազատական և սոցիալիստական մամուլի հասցրած ուժգին հակահարվածն էր: Առաջադեմ մամուլը շարունակում էր

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 236, վավ. 56, թ.10 (թերթի կտրոն):
[2] Տե՛ս **«Արմենիա»**, 15 նոյեմբերի 1905թ.:

անխնա մերկացումները, որոնց շնորհիվ, ի վերջո, ճշմարիտ պատկերացում և ճիշտ կարծիք էր ստեղծվում Ռուսաստանի հասարակական լայն շրջաններում:

Միանգամայն իրավացի էր Վլադիմիր Լենինը, երբ գրում էր.

«Բաքվի նահանգապետի և ոստիկանության (որոնց մեջ չափազանց շատ էին թաթարները) դերը ժամանակին մերկացվեց և ջրի երես հանվեց...»[1]:

Իշխան Ամիլախվարիի արարքների դեմ բարձրացած զանգվածային բողոքների արդյունքն այն եղավ, որ կառավարության որոշմամբ նա հետ կանչվեց Բաքվից:

Չնայած դրան,Նակաշիձեի աջակցությամբ իշխան Ամիլախվարիի առաքելությունը տխուր հետք թողեց Բաքվում: Ա.Գյուլխանդանյանը նշել է, որ հայկական կոմիտեների մասին նրա և Բիկովի հարուցած հայցը «ոչ միայն փրկության խարիսխ դարձավ ոճրագործ թուրք ղեկավարների համար, այլև մի նոր ելակետ՝ թաթար ժողովրդի մեջ ատելություն սերմանելու դեպի հայերը և ամրապնդելու իրենց դիրքերը ռուս միապետական ճամբարում, ներկայացնելով իրենց իբր գլխավոր պաշտպան միապետական շահերի ամբողջ Անդրկովկասի մեջ»[2]:

Այսպիսին էր փետրվարյան դեպքերի պատճառները պարզելու համար Բաքու եկած Ամիլախվարիի առաքելության հանրագումարը:

ՍԵՆԱՏՈՐ Ա.Մ. ԿՈՒԶՄԻՆՍԿՈՒ «ԽՈՆԱՐՀԱԳՈՒՅՆ ԶԵԿՈՒՑՑԸ»

Բաքվից մեկնելուց հետո Ամիլախվարիի հետևից բազմաթիվ բողոքներ գնացին Պետերբուրգ: Հիմնականում բողոքում էին հայերը, նաև՝ մեծ թվով ռուսներ: Հասարակայնությունը պահանջում էր դեպքերը քննելու համար ուղարկել ուրիշ հանձնաժողով, գոնե այս անգամ անկողմնակալ:

Ի վերջո կառավարությունը տեղի տվեց: 1905թ. մարտի 2-ին Նիկոլայ II-ը կառավարական սենատի N245 հրամանի համաձայն սենատոր Կուզմինսկու վրա դրեց Բաքու քաղաքի և Բաքվի նահանգի փետրվարյան դեպքերի քննությունը: 1905թ. ապրիլի 3-ին Կուզմինսկու գլխավորած հանձնաժողովը ժամանեց Բաքու[3]: Հանձնաժողովը եկել էր «բոլոր ոճիրները վեր հանելու և հանցագործներին պատժելու» նպատակով:

Կուզմինսկու գալն ընդունվեց ինչպես հայ բուրժուա մտավորականության, այնպես էլ օտարների կողմից: Գալով Բաքու՝ սենատորը հայտարարեց, թե իրեն տրված հանձնարարությունը չի կարելի համարել մի սովորական սենատորական վերաքննություն, որ ինքը նպատակ ունի անձամբ ու մոտիկից

[1] Н. Ленин (В. Ульянов), Собрание Сочинений, т, VI, "1905 год", стр. 483.
[2] **Ա. Գյուլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 215:
[3] Տե՛ս "Кавказский календарь на 1906 год", էջ 238:

ծանոթանալ պետական հիմնարկությունների վիճակին, պետական չինովնիկների գործունեությանը կամ անգործությանը: «Իմ առջև դրված խնդիրն ավելի բարձր է, - ասաց նա, - իմ ծրագիրն ավելի ընդարձակ է: Եթե կամենում եք, դա իսկապես վերաքննություն չէ, այլ ավելի շուտ՝ գիտական - հասարակական ուսումնասիրություն և գնահատում այն պայմանների, որոնց ազդեցության տակ բորբոքվեցին փետրվարյան արյունոտ դեպքերը՝ հուզմունք պատճառելով ամբողջ աշխարհին»[1]:

Դա նշանակում էր, որ սոսկալի դեպքերի պատասխանը գտնելու համար բավական չէր սահմանափակվել գործի զուտ փաստական շրջանակի մեջ, այն է՝ ցույց տալ մակերեսին գտնվող պատճառները, մերկացնել իսկական մեղավորներին, քննել ադմինիստրացիայի գործողությունները՝ նահանգապետից սկսած մինչև վերջին գորոդովոյը: Այդ բոլորից բացի, սենատորը նպատակ էր դրել ուսումնասիրել տեղական կյանքի առանձնահատկությունները, ազգամիջյան հարաբերությունները, ազգաբնակչության տնտեսական, իրավական դրությունը, երկրամասում գոյություն ունեցող քաղաքական շարժումները:

Այդ բոլորը ձեռքի տակ ունենալուց հետո միայն, ասում էր Կուզմինսկին, կարելի կլինի ըմբռնել, թե ինչ ընդհանուր պատճառներ էին, որ առաջ բերեցին Բաքվի կոտորածը՝ ադմինիստրացիայի և ոստիկանության գործողությունն՞երը, տնտեսական մեծ տարբերությունն՞երը, ազգային և ցեղային թշնամա՞նքը, քաղաքական պրոպագանդա՞ն, թե՞ այդ բոլորը միասին վերցրած:

Այնուհետև սենատորը հայտարարում էր, որ դեպքերը քննելու համար ինքը մտադիր չէ օգտվել միայն վարչական մարմինների ծառայություններից, այլ առաջին իսկ պահերից հասարակական տարրերին նույնպես հնարավորություն կտա մասնակցելու ճշմարտության բացահայտմանը: Ամեն օր, ասում էր նա, ես կընդունեմ և կլսեմ տասնյակ մարդկանց, բացի այդ՝ աշխատանքի ընթացքում կօգտագործեմ այն գրավոր պաշտոնական հայտարարությունները, հանրագրերն ու ամենաբազմազան նյութերը, որոնք կներկայացվեն ինչպես առանձին անձերի, նույնպես և հիմնարկությունների ու կազմակերպությունների կողմից[2]:

Այդ առատ խոստումներից ու հայտարարություններից հետո հայերը խորապես համոզվել էին, որ Պետերբուրգից եկած բարձր պաշտոնյան անկողմնակալ կքննի փետրվարյան դեպքերի պատճառները և վեր կհանի արյունահեղության հանցավորներին:

Քննությունն անաչառ կատարելու համար հայ և ռուս արդյունաբերողները պատրաստակամություն հայտնեցին ամեն տեսակ աջակցություն ցույց տալ Կուզմինսկուն: Այդ նպատակով նրանք առաջարկեցին նավթարդյունաբերողների խորհրդի աջակցությունը, միաժամանակ սենատորին խորհուրդ տվեցին մինչև քննության ավարտը նահանգապետ Նակաշիձեին և նրա բոլոր կարևոր պաշտոնակիցներին ժամանակավորապես մեկուսացնել գործից:

Հայ և ռուս արդյունաբերողները թուրք արդյունաբերողներին և գործիչներին առաջարկեցին միանալ իրենց, բայց վերջիններս մերժեցին և հայտարարեցին, թե փետրվարյան դեպքերի մեջ ոստիկանությունը և ընդհանրապես իշխանությունները պատասխանատվություն չունեն, և որ հիմնական պատասխանատուն հայերն են:

Սկսելով քննությունը՝ սենատոր Կուզմինսկին շատ շուտով հրաժարվեց հրապարակավ արած իր հայտարարություններից ու խոստումներից, փակվեց գրասենյակում, մերժեց լսել հայերի և ռուսների խորհուրդները, բայց դրա փոխարեն իրեն շրջապատեց կասկածելի տարրերով: Տրամաբանության բոլոր կանոններին հակառակ, սենատորը ձեռք չտվեց ոչ մի պաշտոնյայի. բոլորը մնացին իրենց տեղերում: Ինչպես գրել է Ա. Գյուլխանդանյանը, «աստիճանաբար այն տպավորությունն էր ստեղծվում, որ կարծես թե՝ ինչպես իշխան Ամիլախվարին, այնպես էլ սենատոր Կուզմինսկին եկել են Բաքու այն նպատակով, որ փետրվարի դեպքերը մոռացության տրվեն[1]:

Սենատոր Կուզմինսկու առաքելությունը ավելի դիպուկ է բնորոշել Վ. Արարատսկին՝ գրելով. «Առնվազն միամտություն է հավատալ բոլոր ուղղություններով վարկաբեկված, մինչև nec plus ultra ստող, ողջ աշխարհով մեկ խայտառակված և Կայենի կնիքով կնքված բյուրոկրատիայի «բարի մտադրություններին», հույս դնել խոյի եղջյուրի և բոի մեջ պահած քաղաքականության հավատավոր հետևորդների արդարության վրա, մտածել, որ սաները այն ավազակային բնի, որը ապաստան է գտել մայրաքաղաքում և կրում է սենատ անվանումը, կցանկանան պարզել ճշմարտությունը»[2]:

Սենատոր Կուզմինսկու հանձնաժողովի աշխատանքը տևեց շուրջ 5 ամիս: 1905թ. հոկտեմբերին Բաքվում տեղի ունեցած անցքերի մասին ուսումնասիրության արդյունքները նա ներկայացրեց Պետերբուրգ:

Այդ ուսումնասիրությունը, 680 տպագրական էջ ծավալով, որը որպես տեղեկագիր ներկայացվեց սենատին, լույս տեսավ 1905թ. վերջին: Նույն ժամանակ լույս տեսավ նաև սենատոր Կուզմինսկու ստորագրությամբ Նիկոլայ II-ին ներկայացրած համառոտ զեկույցը՝ «Բարձրագույնի հրամանով սենատոր Կուզմինսկու կողմից 1905 թվականին Բաքու քաղաքի և Բաքվի նահանգի վերստուգման հաշվետվության կարևորագույն եզրակացությունները պարունակող խոնարհագույն զեկույց» վերնագրով* և 70 տպագիր

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց.3, գ. 84, թ. 2:
[2] Ա. Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 218:

[1] Ա. Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 218:
[2] В. Араратский, Подвиги царизма. Кровавые февральские дни в Баку, стр. 3:
* "Всеподданнейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии", СПб, 1905: Թեև սենատոր Կուզմինսկու տեղեկագիրը և հաշվետվությունը լույս են տեսել 1905 թ. վերջերին, բայց քանի որ դրանք հիմնականում

էջ ծավալով*: Մենք չենք անդրադառնա հիշյալ մեծածավալ գրքին, այլ կբավարարվենք՝ ներկայացնելով միայն ցարին ուղղված զեկույցի բովանդակությունը:

Համառոտ զեկույցը բաղկացած է 10 գլխից: Առաջին գլխում սենատորը տվել է 1905թ. փետրվարի 6-10-ը տեղի ունեցած արյունալի դեպքերի նկարագրությունը և կատարել հետևություններ: Երկրորդ գլխում խոսք է գնում Կովկասում, և հատկապես Բաքվում, ծավալված հեղափոխական շարժման մասին, ցույց է տրված, թե տեղի ազգություններն ինչպիսի ակտիվությամբ են մասնակցել հակակառավարական ելույթներին: Երրորդ գլուխը, որ կրում է «Տնտեսական դրությունը» վերնագիրը, բաղկացած է վեց բաժնից, որոնցում քննության են առնված հետևյալ հարցերը՝ ժողովուրդների տնտեսական փոխադարձ հարաբերություններ, բանվորական խնդիր, նավթային արդյունաբերություն, հանքային հսկողություն (горный надзор), հարկադրություն (обложение), ձկնորսություն: Չորրորդ գլուխը նվիրված է Բաքվի քաղաքային տնտեսության խնդիրների քննությանը, հինգերորդը՝ կրթական գործին, վեցերորդը՝ Բաքվի նահանգի գյուղացիների սոցիալական և տնտեսական դրությանը, Ռուսաստանից Կովկասում բնակություն հաստատած գաղթականության խնդիրը լուսաբանված է յոթերորդ գլխում: Ութերորդ գլուխը նվիրված է ոստիկանության աշխատանքին, իններորդը՝ նահանգային վարչակազմին, տասներորդը՝ դատաստանական մարմիններին:

Հաշվետվության գլուխներից ու բաժիններից շատերը հայ ընթերցողի համար հետաքրքրական չեն, ուստի կանգ կառնենք միայն դրանցից մի քանիսի և հատկապես այն բաժինների վրա, որոնցում տրված են Բաքվի առաջին կոտորածների ժամանակ քաղաքի հայերի վիճակը, կրած կորուստները, նշված են ընդհարումների պատճառները և այլն:

Առանձնապես հետաքրքրաշարժ է հաշվետվության առաջին գլուխը: Անհամեմատ անկողմնակալ են շարադրված այս գլխի այն էջերը, որոնցում ցույց է տրված փետրվարյան չորսօրյա կոտորածների ժամանակ Բաքվի նահանգապետի, տեղական ոստիկանության, զինվորական իշխանությունների «հանցավոր անգործությունը»:

Սենատորը դառը խոսքեր է արձանագրել Բաքու քաղաքի ոստիկանության մասին: Նա նշել է, որ ոստիկանությունը բացարձակապես չէր կատարում իր դերը, այն է՝ պահպանել հասարակական ապահովությունն ու կարգը, անձերի և նրանց ունեցվածքի անձեռնմխելիությունը, նախազգուշացնել և պատժել հանցագործներին, որոնք չեն հարգում ուրիշների իրավունքները, բնակչության մեջ զարգացնում են հանցավոր հակումներ, նրա մեջ սպանում օրինականության գիտակցությունը և, դրանով իսկ, խախտում իշխանությունների նկատմամբ բնակչության հավատն ու հարգանքը[1]:

Այլ կերպ էլ չէր կարող լինել, գրում էր Ա. Կուզմինսկին, քանի որ Բաքու քաղաքի (չխոսելով արդեն Բաքվի նահանգի մասին) ժանդարմերիան և ոստիկանությունը կազմված են պատահական, ցածր կրթություն ունեցող և անհուսալի տարրերից:

Գալով Բաքու քաղաքի ոստիկանության և վարչության նկատմամբ հասարակության զանազան շրջանների կողմից արվող քննադատություններին ու մերկացումներին, ըստ որոնց հենց նրանք էին կազմակերպում կոտորածները, սենատորն այն կարծիքն էր հայտնում, թե պետական իշխանությունները չէին կարող նման վիթխարի ծրագիր գլուխ բերել, քանի որ նրանք թույլ ու անճար են, կատարելապես անգործունյա և կարճատես, դրա փոխարեն՝ ամբողջովին խորասուզված հարստանալու տենչանքի մեջ: Կուզմինսկու ասելով, Բաքվի պաշտոնյաներն, անմեղ ապուշներ լինելով, չկարողացան հենց սկզբից նախատեսել չարիքը, այն դեպքում, երբ «շատ նշաններ ակնհայտ ցույց էին տալիս, որ սպասելի են անկարգություններ»: Սենատորը հաստատում էր, որ փետրվարից դեռ շատ առաջ ակնհայտ նշաններ կային, որ Բաքվում հասունանում է ընդհարում թուրքերի և հայերի միջև: Զեկույցի մեջ ասված է, թե հայոց եպիսկոպոսը և տեղական ղազին դեռ մինչև փետրվարի 6-ը գիտեին, որ չարիքը շուտով գալու է, և մտածում էին դրա առաջն առնելու մասին:

Բայց հարց է առաջանում. ինչո՞ւ սենատորն այդ հարցը խիստ քննության չի ենթարկել՝ պարզելու համար, թե որտեղից եպիսկոպոսը և ղազին գիտեին սպասվող չարիքի մասին, ովքեր էին առաջին լուրերը տարածել, թե կոտորած է լինելու: Այս հարցերին հաշվետվության մեջ որևէ պատասխան չկա, մինչդեռ սա շատ կարևոր հանգամանք էր, որի խիստ քննությունը կարող էր երևան հանել գործի թելերը: Գոնե դրական էր, որ սենատորը պարզ գրում էր, թե ադմինիստրացիան, որը տեղյակ էր դրան, ոչ մի միջոց ձեռք չառավ: Ոստիկանությունը կարիք ուներ լրացուցիչ զինվելու, բայց այդ ուղղությամբ նույնպես ոչինչ չարվեց[2]: Փետրվարի 7-ին, երբ արդեն կոտորածները լայն ծավալ էին ստացել, երկու կողմերի հոգևորականության ներկայացուցիչները նահանգապետի ներկայությամբ պատրաստակամություն հայտնեցին անհապաղ հաշտության դիմել և այդ նպատակով կազմակերպել խաղաղության թափոր: Նահանգապետը սկզբում հավանություն տվեց այդ քայլին, բայց հանդիպումից հետո անհայտ պատճառով արգելք դրեց թափորի վրա: Նա կտրականապես մերժեց նաև մասսայական անկարգությունները զենքի ուժով ճնշելու մասին Բաքվի կայազորի պետի արած առաջարկը: Վերջապես,

---

վերաբերում են Բաքվի փետրվարյան դեպքերին, ուստի նպատակահարմար ենք համարել սույն գրքում հաշվետվության բովանդակությանն անդրադառնալ այդ դեպքերի նկարագրությունից անմիջապես հետո:

* ցարին ներկայացրած և արխիվում պահպանվող զեկույցի օրինակը (Российский государственный исторический архив в Санкт-Петербурге -РГИА СПб, ф.22 գ. 109) 92 տպագիր էջ է, իսկ նույն ծավալով հրատարակված տեքստը կազմել է 70 էջ:

[1] "Всеподданнейшая записка ... ", стр. 2.

[2] Նույն տեղում, էջ 3.

կոտորածների ամենաեռուն պահին, երբ նահանգապետն իր թիկնապահների և ոստիկանական պաշտոնյաների հետ քաղաքում պտույտներ էր կատարում, ամեն տեղ ակներև խրախուսում էր թուրքերին, նրբության հասցրած մեղմ խոսքերով և բարեկամական բարեսրտությամբ նրանց «հորդորում» էր դադարեցնել կոտորածը: Դրան հակառակ, նա չափազանց խիստ վերաբերմունք էր հանդես բերում հայերի նկատմամբ: Երբ պաշարված և պաշտպանվող հայերը նահանգապետին աղերսում էին փրկել իրենց կյանքը, նա սառնարյունությամբ պատասխանում էր. «Ինքներդ մի կրակեք, և ձեզ վրա կրակող չի լինի»: Ավելին, մի քանի դեպքերում նահանգապետը հրամայել էր վերադարձնել թուրք ջարդարարներից խլած հրացանները՝ պատճառաբանելով, թե նրանք զենք կրելու իրավունք ունեն: Ապաշնորհ ադմինիստրացիայի գլխավոր մեղքերից մեկը, ըստ հաշվետվության - տեղեկագրի, եղել է ջարդարարների նկատմամբ ցույց տրված ավելորդ մեղմությունը, մի հանգամանք, որ հնարավորություն է ստեղծել, որպեսզի կոտորածները հասնեն սարսափելի չափերի:

Հաշվետվության մեջ շեշտված էր զինվորական և ոստիկանական ուժերի գործողությունների անհամաձայնեցված լինելը: Նահանգապետ Նակաշիձեի մասին գրված է, թե նա, ինքնավստահ լինելով, որ կարգը վերականգնելու համար իր ձեռքի տակ եղած ուժերը բավական են, չէր դիմել զինվորական իշխանության օգնությանը, իսկ տեղական զորքի հրամանատարը, որ փետրվարի այդ օրերին ուներ 1013 զինվոր և 210 կազակ, նույնպես միջոցներ չէր ձեռնարկել զինուժով դադարեցնելու անկարգությունները՝ հակառակ կայազորային ծառայության մասին կանոնագրքի 12-րդ և 18-րդ հոդվածների[1]:

Քննադատելով Բաքվի ադմինիստրացիային՝ սենատորը միաժամանակ կտրականապես մերժում էր իշխանությունների նկատմամբ հասարակայնության կողմից հարուցվող մեղադրանքները: Զեկույցում ասված էր.

«Իշխանությունների անզորությունը և հնգօրյա սպանդը կանխելու բացահայտ անկարողությունը ինքնըստինքյան ակնհայտորեն ցույց է տալիս նրան վերագրվող՝ փետրվարյան իրադարձությունների կազմակերպմանը մասնակից լինելու (թաթարներին սադրելու, որ կոտորեն հայերին) անհիմն լինելը, իբրև թե, ինչպես պնդում են հասարակության հայտնի խավերը, որպեսզի կասեցնեն փետրվարի 19-ին սպասվող խոշոր քաղաքական ցույցը: Զխոսելով սույն մտահղացման հրեշավորության մասին՝ ընդամին կատարելապես չապացուցված, այն կազմակերպելը և իրագործելը, անհրաժեշտաբար, ենթադրում են այնպիսի կանխատեսություն, որը, ինչպես երևում է հաշվետվությունից, ընդհանրապես հատուկ չէ Բաքվի վարչակազմին»[2]:

Թեև Կուզմինսկին ամեն կերպ փորձում էր ժխտել կոտորածների մեջ իշխանությունների մեղքը, բայց հաշվետվության առանձին էջերում որոշ

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.2.
[2] Նույն տեղում, էջ 3:

զորեղ փաստերի արձանագրումը ընթերցողին բերում էր հակառակ եզրակացության:

Կրկին ու կրկին կտրականապես հերքելով այն կարծիքը, թե կոտորածը կազմակերպել են իշխանությունները, սենատորը գտնում էր, որ դրա գլխավոր պատճառը պետք է փնտրել երկու ժողովուրդների պատմական անցյալի և նախափետրվարյան շրջանի նրանց բարդ փոխհարաբերությունների մեջ:

Զեկույցի մեջ կարդում ենք.

«Ցուրաքանչյուրին, ով ծանոթ է Անդրկովկասի երկրամասի մուսուլմանական նահանգների կենցաղային պայմաններին, լավ հայտնի է, որ հայերն ու թաթարները երբեք չեն եղել բարյացակամ հարաբերությունների մեջ իրենց կրոնական և ցեղական զանազանությամբ: Այս երկու ազգությունները համատեղ ապրելով անդրկովկասյան քաղաքներում և գյուղերում և կապված լինելով պատմականորեն դրսևորված հանգամանքներով՝ միայն անհրաժեշտությունից դրդված, բացեիրաց չեն արտահայտում թշնամությունը միմյանց նկատմամբ, առաջին հայացքից ապրում են համերաշխ և նույնիսկ կատարում են դրամական և ապրանքային գործարքներ: Բայց ինչքան էլ կողքից թվա նրանց միմյանց հետ համերաշխ լինելը, միևնույն է, մուսուլմաններին հատուկ կրոնական ֆանատիզմը և նրանց մշտական կախվածությունը հայերից առևտրական և փողային ոլորտներում միշտ արթնացնում են անվստահություն միմյանց նկատմամբ և թաքնված չարություն, որոնց արտահայտման համար հաճախ բավական է ամենաչնչին պատճառը՝ հայերի և թաթարների մեջ լուրջ բախումներ բռնկվելու համար: Այդպես է ցույց տալիս Անդրկովկասի քրեական քրոնիկան: Այսպիսով, այս ժողովուրդների հարաբերությունները միանգամայն պատրաստի հիմք են հանդիսանում այս կամ այն մղումներով ամեն տեսակի բախումների համար»[1]: Եվ այստեղ իշխանությունները ոչ մի մեղք չունեն, - եզրահանգում էր զեկույցը:

Անդրադառնալով այն իրողությանը, որ սենատոր Կուզմինսկին ամեն կերպ աշխատել է ցարական ադմինիստրացիայի վրայից հանել նրա մեղքի բաժինը, «Մուրճի» խմբագիր Լևոն Սարգսյանը գրում է.

«Գլխավոր հանցավորը ադմինիստրացիան է, որից կախում ունեն մեր չինովնիկ դատավորները և քննիչները. այդ պայմաններում երբեք հայ ժողովուրդը արդարադատություն չի գտնի: Իսկ անպատիժ թողնել մի ամբողջ ժողովրդի գլխին կատարված անլուր ոճրագործությունները - նշանակում է չունենալ արդարամտության նշույլ անգամ»[2]:

Հաշվետվության մեջ հատկապես ամենամռայլ գույներով է ներկայացված Բաքվի նավթային շրջանների ոստիկանության գործունեությունը: Իրենց պարտականությունները չկատարած ստորաբաժանումներից սենատորը հատկապես առանձնացրել էր Բալախանու և Սաբունչիի ոստիկանական ծառայու-

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.5.
[2] «Մուրճ», N 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 261:

թյունները: Դժվար թե կարելի լինի երևակայել այնքան ավելի ստոր միջավայր, գրում էր նա, քան նավթային շրջանների ոստիկանության պաշտոնյաներինն է, որտեղ ահռելի չափերի են հասնում կաշառակերությունն ու անօրինական տուրքերը: Այդ արատից հազիվ թե զերծ լինի գոնե մեկ ոստիկան: Զանազանությունը թերևս կայանում է հանցավոր գործունեության ուղիների և միջոցների ընտրության ճարպկության և վարպետության մեջ:

Ե՛վ Բաքու քաղաքում, և՛ նավթային շրջաններում, գրում էր սենատորը, անամոթությունը հասցված է այն աստիճանի, որ պրիստավների միջև կռիվ է գնում արդյունաբեր քաղաքամաս ձեռք բերելու համար, որի շահավետ լինելը որոշվում է տվյալ քաղաքամասի արդյունաբերական և առևտրական հիմնարկությունների թվով, քաղաքամասում կատարվող սպանությունների, ավազակությունների ու գողությունների ծավալով: Եվ որքան շուտ ու որքան շատ լինեն այդ հանցագործությունները, այնքան լավ նրանց համար:

Չկա մի գործ, այնուհետև շարունակում էր Կուզմինսկին, որին չխառնվի ոստիկանությունը և կաշառք չստանա: Ոստիկանական պաշտոնյաներն անպայման որոշակի գումար են շորթում իրենց պարտականությունը հանդիսացող ծառայությունների փոխարեն: Օրինակ՝ առևտրական հիմնարկություն բացելու թույլտվություն ստանալու, նահանգապետին ուղարկվելիք դիմումը ձևակերպելու, հրեաներին բնակության իրավունք տալու և այլնի համար: Արդյունաբերական գրասենյակները, որպես կանոն, տարեկան երկու անգամ ոստիկանապետերին, պրիստավներին և մյուս պաշտոնյաներին փողեր են տալիս՝ որպես տոնական սովորական նվիրատվություն:

Սակայն, նշում էր սենատոր Կուզմինսկին, դրանով չի սահմանափակվում նրանց շահասիրական ստորաքարշությունը: Երբեք չի պատահում, որ որևէ մեկի կողմից հանցանք կատարելիս ոստիկանությունը դրանից նյութական օգուտ չստանա՝ մեղավորի մեղքը ծածկելու և նրանց ձերբակալումից ու պատասխանատվությունից ազատ թողնելու համար: Այդ նպատակով կազմվում են մտացածին հանգամանքներով արձանագրություններ, ներկայացվում են կեղծ վկաներ և այլն: Մյուս դեպքում անօրինաբար, առանց մեղադրական հիմքի, ձերբակալվում և սպառնալիքներով ու ծեծով քննության են ենթարկվում միանգամայն անմեղ մարդիկ, ներկայացվում սուտ մեղադրանքներ և ազատվում միայն խոշոր կաշառք տալուց հետո:

Սովորաբար երբ կատարվում է որևէ գողություն, կողոպուտ կամ սպանություն – իսկ այդպիսիք կատարվում են ամբողջ տարվա ընթացքում հազարներով – ապա ոստիկանությունը շատ անգամ առանց որևէ հիմքի, միաժամանակ կամ հաջորդաբար ձերբակալում է նաև «կասկածելի» մարդկանց, որոնք, լավ իմանալով, թե ինչքան հեշտ է Բաքվում կեղծ վկաների ցուցմունքով որևէ «հանցանքի» տեր դառնալ, գերադասում են վճարել պահանջված կաշառքը և ազատվել:

Սովորական դեպքում նման փրկագինը կազմում է 30-50 ռուբլի, իսկ եթե

թակարդ է ընկնում հարուստ մարդ, ապա նա կարող է ազատվել միայն մի քանի հարյուր ռուբլի կաշառք տալու դեպքում:

Հաճախ է պատահում, նշում էր սենատորը, որ երկու քաղաքամասերի սահմանում տեղի ունեցած հանցագործությունը սուր վիճաբանություններ տեղիք է տալիս պրիստավների միջև, որոնցից ամեն մեկը փորձում է ապացուցել, թե այն կատարվել է իրեն ենթակա քաղաքամասում:

Նահանգական իշխանությունները միանգամայն անտարբեր են ոստիկանության պաշտոնյաների կողմից կատարվող զեղծումների ու կաշառակերության նկատմամբ: Մի քանի դեպքերում նկատված է, որ նրանցից ոմանց «պատժելու» համար փոխադրել են «քիչ շահութաբեր» քաղաքամաս, իսկ նրանց, ում հարկ է եղել խրախուսել, տվել են «ավելի» արդյունավետ տարածք[1]:

Անդրադառնալով ոստիկանական պաշտոնյաներին՝ օկոլոտոչնիներին և գորոդովոյներին, սենատորը գրում էր, որ ոստիկանատուն տարած միանգամայն անմեղ մարդկանց շատ դեպքերում նրանք խուզարկում են և սեփականացնում նրանց մոտ եղած իրերն ու փողերը, լավ իմանալով, որ տուժածների գանգատները ոչ մի արդյունք չեն տալու: Այդ է պատճառը, որ ոստիկանական մասերում հերթապահություն անող օկոլոտոչնին հաճախ իր հերթապահությունը, հատկապես տոն օրերին, վաճառում է մյուս օկոլոտոչնուն՝ 10-12 ռուբլով:

Սենատորը գրում էր, որ ինքը պատրաստ էր դատ բացելու բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների դեմ, բայց դա չի արել այն պատճառով, որ վեր էր իր իրավասությունից: Դեպքերի կապակցությամբ դատի էին ենթարկվել միայն երկու ոստիկանապետ, չորս պրիստավ, պրիստավի մեկ օգնական և մի թաղային ոստիկան, որոնց աչքի առաջ կատարվել էին բազմաթիվ սպանություններ և կողոպուտներ:

Խիստ քննադատության ենթարկելով Բաքու քաղաքի և նավթային շրջանների ոստիկանների ու ժանդարմների գործունեությունը՝ Ա.Կուզմինսկին գրում էր, որ ինչ վերաբերում է Բաքվի նահանգի գավառներին, ապա այնտեղի ոստիկանները նույնիսկ չգիտեն իրենց անելիքները: Նա նշում էր, որ գավառներում ոստիկանների մի զգալի մասը, առաջացած տարիքի պատճառով, ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում դեպի իր պաշտոնական պարտականությունների կատարումը, իսկ մյուս մասը, որ երիտասարդ է, պահանջածից շատ ակտիվ է, բայց այդ ակտիվությունն ուղղված է ոչ թե կարգի պահպանման ուժեղացմանը, այլ հանցագործներից որքան կարելի է շատ «փրկագին» (կաշառք) ստանալուն[2]:

Նկատենք, որ Ա. Կուզմինսկու հանձնաժողովի անդամները չէին եղել գա-

---

[1] **"Всеподданнейшая записка** ... ", стр. 55.
[2] Նույն տեղում, էջ 56:

վառներում, այլ ուսումնասիրությունները կատարել էին միայն Բաքու քաղաքում և նրա նավթային շրջաններում, իսկ եթե նրանք լինեին նաև ուրիշ տեղերում, ապա կհանդիպեին այնպիսի եղելությունների, որոնք ստվերի տակ կթողնեին Բաքվի սև իրականությունը՝ նրանց առջև բացելով զազիր գործերի, ծախու խղճի և դժոխային դավերի ամբողջ տեսարաններ:

Փորձելով բացահայտել Բաքվի փետրվարյան անցքերի պատճառները՝ սենատորը կրկնել է այդ պատճառների մասին կովկասյան վարչության տեսակետները, ավելին՝ հայերի «ագրեսիվության» մասին թուրքերի զրպարտությունները: Ըստ որում, կոտորածների առաջին օրերին հայերի մեղսակցության մասին նա կարծիք էր հայտնել առանց արձանագրելու լուրջ ապացույցներ՝ հավատ ներշնչող փաստեր ու վկայություններ:

Գալով Անդրկովկասի հայերի տնտեսական դրությանը՝ սենատորը շեշտում էր, թե դարեր շարունակ նրանք գտնվել են թուրք խաների տիրապետության տակ, սպասարկում էին նրանց ամեն տեսակ կարիքները՝ զուրկ անձնական և տնտեսական իրավունքներից: Միայն ռուսների Կովկաս գալուց հետո էր, որ հայերի դրությունը փոխվեց դեպի լավը: Գրավելով նոր իշխանությունների վստահությունը՝ նրանք դարձան «ոչ միայն փոդրատչիներ», այլև ծառայության անցան պետական մարմիններում, ավելին, հիմա էլ սկսել են իրենք շահագործել Անդրկովկասի թուրքերին[1]:

Սենատորը, սակայն, ոչ մի խոսք չէր ասում, թե հայերն ինչպիսի մեծ ծառայություններ են մատուցել Ռուսաստանին՝ Կովկասում նրա տիրապետության հաստատման ժամանակաշրջանում:

Ա.Մ. Կուզմինսկու կարծիքով, փետրվարյան օրերին մուսուլմանների գործադրած դաժանությունների հիմնական պատճառներից մեկը նրանց հանդեպ հայերի մեծամոլ, արհամարհական վերաբերմունքն է: Նա գրում էր.

«Բաքվի մտավորականության և ունևոր դասին պատկանող 12 անվանի քաղաքացիներից բաղկացած մուսուլմանական պատգամավորությունը, այցելելով ինձ, չէր թաքցնում իր թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ, բացատրելով նրանց գիշատիչ և նենգ հատկությունները, որոնց շնորհիվ, պետական հովանու ներքո, հայերը կարողացան ոչ միայն բարձր նյութական բարեկեցության հասնել, այլև բարձրացրին իրենց մշակույթը՝ անարգել տարածելով լուսավորչական և բարեգործական ձեռնարկություններ, և ամենագլխավորը, սասանեցին պետության վստահությունը մուսուլման ժողովրդի նկատմամբ՝ ներկայացնելով նրան վայրի, ֆանատիկոս, ընդհանրապես անվստահելի, որի հետևանքով զանգվածների հոգևոր աճը կազմակերպելու մուսուլմանների բոլոր ճիգերը մերժվում էին, և մինչ մուսուլմանները բարոյական և սոցիալ-տնտեսական ոլորտներում զրկված էին ամեն ինչից՝ հայերն այդ ամենից օգտվում են լիուլի և առիթը բաց չեն թողնում բացեիբաց ցույց տալ մուսուլմաններին իրենց նվաճած առավելությունները և նրանց ճնշել ամենուրեք, ուր որ հնարավոր էր ազատ մրցակցությունը: Մուսուլմաններն ուղղակիորեն պնդում են, որ փետրվարյան իրադարձությունների պատճառը նրանց և հայերի միջև գոյություն ունեցող հարաբերություններն են: Մենք, - ասում են, - չենք նախանձում հայերին և չենք ուզում խանգարել նրանց զարգացմանը՝ թող զարգացնեն իրենց ուժերը բոլոր ուղղություններով, բայց չարգելակեն զարգանալ և մուսուլմաններին և չձգտեն բացարձակ տիրանալ երկրամասի բարիքներին և ստրկացնել մուսուլմաններին հոգեպես և նյութապես: Նրանք ցանկություն են հայտնում, որպեսզի պետության կարծիքը մուսուլմանների մասին փոխվի, և որ նրանց տրվեն նույն քաղաքական, քաղաքացիական և կրոնական իրավունքները, որոնք ունեն Կայսրությունը բնակեցնող մյուս ժողովուրդները»[1]:

Առհասարակ հաշվետվության շատ էջերից է երևում սենատորի համակրանքը դեպի թուրքերը: Բայց մի երկու հանգամանք, որ շեշտված են այնտեղ, բոլորովին համոզում են, որ եթե ոչ ինքն անձամբ, ապա, ուրեմն, նրա հանձնաժողովի անդամներից շատերը եղել են թուրքերի ազդեցության տակ:

Դեպի թուրքերը սենատորի համակրության առավել ցայտուն վկայություններից էր նաև այն, որ նա Կովկասի նահանգներին տալիս էր նոր անուններ, որոնք ո՛չ քարտեզների վրա և ո՛չ էլ որևէ պաշտոնական փաստաթղթում չկային: Այսպես, նա գործածում էր «Անդրկովկասյան մուսուլմանական մարզեր» ("Закавказские мусульманские области") հասկացությունը՝ դրանով ընդգծելով այդ մարզերի պատկանելությունը թուրքերին: Իսկ որո՞նք էին հայերի մարզերը (նահանգները) կամ գավառները - այդ մասին ոչ մի խոսք չկար հաշվետվության մեջ:

Բայց չէ՞ որ ինչպես այդ ժամանակ, այնպես էլ դրանից առաջ և դրանից հետո, մինչև 1917 թվականը, Ռուսաց կայսեր տիտղոսի մեջ էր մտնում նաև «Կայսր Հայկական երկրի» ("Государь земли Армянской") հաստատումը: Մինչև անցյալ դարի 60-ական թվականները ռուսաստանյան օրենքների մեջ Երևանի նահանգը կոչվում էր «Հայկական շրջան» կամ «Հայկական մարզ» ("Область Армянская"): Հայտնի է, որ կայսր Նիկոլայ I-ի պատվերով 1827-1828 թթ. Շոպենը գրել է այդ մարզի մասին իր նշանավոր հետազոտությունը[2]:

Եվ ահա՝ "Мусульманские области" բառակապակցությունն առաջին անգամ պաշտոնական փաստաթղթի մեջ էր մտցվում սենատոր Կուզմինսկու կողմից:

Ա.Կուզմինսկին հանգամանորեն ուսումնասիրել և հաշվետվության երկրորդ գլխում լուսաբանել է հատկապես այն հարցը, թե Բաքու քաղաքում և

[1] "Всеподданнейшая записка ... ", стр. 4-5.

[1] "Всеподданнейшая записка...", стр. 5.

[2] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской Империи, С. Пб., 1852.

նավթային շրջաններում ինչու շատ կարճ ժամանակում տարածվել ու արմատավորվել են սոցիալիստական զանազան գաղափարներ, առաջացել են հակացարական նպատակներ հետապնդող կազմակերպություններ ու խմբեր, թափ են առել հեղափոխական շարժումները: Նա անդրադարձել է Բաքվում և նահանգում գործող կուսակցություններին, տվել նրանց ծագման թուցիկ պատմությունը, ընդհանուր գծերով ներկայացրել դրանց ծրագրերն ու գործունեության ուղղությունները:

Սենատորն առաջին հերթին ներկայացնում էր հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, բացահայտում նրա նպատակները[1]: Նա նշում էր, որ թեև այդ կուսակցությունն իր վերջնական իդեալը համարում է Հայաստանում սոցիալիստական կարգերի ստեղծումը, բայց դրան հասնելու ճանապարհին առաջադրել է մերձավոր գործունեության ծրագիր, որը նախատեսում է ոչնչացնել միապետական կարգերը և՛ Թուրքիայում, և՛ Ռուսաստանում, ժողովրդի համար հնարավորություն ստեղծել մասնակցելու քաղաքական գործերին, վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելակում են երկրի տնտեսական զարգացումը: Իսկ դա, հնչակյանների տեսակետով, հնարավոր է միայն դեմոկրատական-սահմանադրական կարգերի պայմաններում:

Անցնելով Հ.Յ. դաշնակցության գործունեության բնութագրմանը՝ սենատորը նշում էր, որ, ի տարբերություն հնչակյանների, այդ կուսակցությունն ունի և՛ ազգային-ազատագրական, և՛ սոցիալ-դեմոկրատական նպատակներ, սակայն առաջնային տեղը հատկացրել է ազգային խնդիրների լուծմանը:

Բաքվում հեղափոխական շարժման սաստկացումը սենատոր Կուզմինսկին չէր բացատրում միայն հայ հեղափոխական կուսակցությունների ակտիվ գործունեությամբ: Նա գտնում էր, որ դրա պատճառների թվում չի կարելի անտեսել ադմինիստրացիայի թույլ տված կոպիտ սխալները: Սենատորը հաստատում էր, որ Բաքվում և Կովկասում հակակառավարական հեղափոխական շարժման զարգացմանը մեծապես նպաստել է հայ եկեղեցու գույքի և կալվածքների հարկումից գրավման մասին 1903թ. հունիսի 12-ի օրենքը, որը շատ քաղաքներում առաջ բերեց խոշոր անկարգություններ, որոնց ճնշման համար օգտագործվեց զինվորական ուժ, իսկ դա, իր հերթին, ավելի շիկացրեց մթնոլորտը և հայության լայն զանգվածներին մղեց հակակառավարական ճամբար: Հ.Յ. դաշնակցությունը, գրում էր Կուզմինսկին, որի գործունեության դաշտը մինչ այդ միայն Թուրքաց Հայաստանն էր, հունիսի 12-ի օրենքից հետո իր պայքարը տեղափոխեց նաև Անդրկովկաս: Այդ կուսակցությունը լայն պրոպագանդա սկսեց երկրամասի հայ բնակչության մեջ, նրան գրգռեց ռեժիմի դեմ, ավելին՝ իրականացրեց տեռորիստական մի շարք ակտեր, այդ թվում Բաքվում, որոնք ուղղված էին պետական և զինվորական պաշտոնյաների դեմ:

Ինչ վերաբերում է ռուսական հեղափոխական կուսակցություններին, գրում էր Ա.Կուզմինսկին, ապա դրանք Բաքվում հայտնվել են 1901թվականից սկսած: Այդ տարվա վերջին նավթահանքերում կազմակերպել էին սոցիալ-դեմոկրատական բջիջներ, որոնք հիմնականում զբաղված էին տեսական հարցերով: Բջիջների անդամ-բանվորները կարդում էին "Искра" լրագիրը, վերլուծում բանվորների դրության մասին "Южный Рабочий" հրատարակչության լույս ընծայած գրքույկները: Միայն որոշ ժամանակից հետո այդ բջիջների մեջ մտան մտավորականներ, որոնք արագացրին մի ընդհանուր կազմակերպության մեջ դրանց միավորման ընթացքը: 1903թ. վերջին կազմակերպվել է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն, որը և սկսել է գլխավորել բանվորների մի զգալի մասի պայքարը ինքնակալության և կապիտալիստների դեմ:

Ավելի ուշ, 1903թ. նոյեմբերին, Բաքվում արմատներ է նետել սոցիալ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցությունը, որի երևալը նշանավորվել էր հեկտոգրաֆիական մեթոդով հակացարական պրոկլամացիաների տպագրումով և տարածումով:

Սենատորը շեշտում էր, որ, ունենալով տարբեր գաղափարախոսություններ, Բաքվում գործող հեղափոխական կազմակերպությունները շատ հաճախ գործում են համատեղ, և դա մեծ ուժ է հաղորդում նրանց: Գործադուլավորների պահանջը, որ սովորաբար սկզբում կրում էր տնտեսական բնույթ, բավական շուտ ընդունում է հեղափոխական երանգ: Ամեն օր ի հայտ են գալիս ոչ միայն մեկ, այլ երկու և ավելի թվով թուցիկներ տնտեսական և հեղափոխական բնույթով, արդյունահանության ոլորտում նույնիսկ բացահայտ բաժանվում էին անցորդներին: Հազվադեպ չաբաթն անցնում էր առանց մեկ կամ երկու հեղափոխական գործողության, պաշտոնատար անձանց սպանության, պահեստային ռումբերի և զենքի հայտնաբերման, ռումբերի նետման, հակակառավարական ցույցերի և այլն: Ավելին, հակացարական պայքարը թափանցել է քաղաքի հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտները: «Հեղափոխական թույնը, - նշված էր զեկույցում, - որն ունակ է քայքայել հասարակական ու կառավարական խարիսխը, ներթափանցել է ամենուր. ոչ միայն ազատ մասնագիտությունների ներկայացուցիչները, այլև բանվորական և մասամբ արդյունաբերական դասակարգերը ենթարկվեցին նրա ազդեցությանը: Հեղափոխական շարժման քայքայիչ ազդեցությունը հետք թողեց նաև աճող սերնդի վրա, ներթափանցեց միջնակարգ դպրոց, ուր գտավ վառ արտահայտում և նրա միջոցով թափանցեց ընտանիք: Բաքվի քաղաքացիական հասարակական վարչությունը բացեց դումայի դռները բազմամարդ հակակառավարական ժողովների համար, որտեղ կտրուկ քննադատվում էր գոյություն ունեցող պետական կարգը և ներկայացվում էր հիմնադիր ժողով հրավիրելու պահանջ: Կառավարական իշխանությունը, ի դեմս վարչակազմի անձանց և հատուկ հսկողության մարմինների, որոնք կոչված էին պայքարելու այդ երևույթների դեմ, բացահայտեց դրանց չփոթվա-

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.10.

ծություն և ամենախոովահույզ բնույթ ունեցող արագ փոփոխվող դեպքերին հակազդելու անկարողությունը: Կառավարական ուժի նկատմամբ ունեցած հավատը ամբողջությամբ խախտվել էր իր հիմքում, և հեղինակությունը կորել: Հույս չդնելով նրա պաշտպանության վրա՝ բնակչությունը գտնվում էր բավականին հուզիչ վիճակում, և յուրաքանչյուր գործողություն, որը կյանքի նորմալ ընթացքում սովորական վերաբերմունքի կարժանանար, ձեռք էր բերում չափազանցված նշանակություն»[1]:

Սենատորական տեղեկագրի մեջ հետաքրքիր փաստեր են բերված Բաքվի հեղափոխական կազմակերպությունների ազգային կազմի վերաբերյալ: Նա նշում էր, որ հայ հեղափոխական կուսակցությունների շարքերում բացառապես հայեր են, այն դեպքում, երբ ռուս սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն իրենց կազմով բազմազգ են: Իր այդ միտքը նա լուսաբանում էր մի շարք փաստերով՝ գրելով, օրինակ, որ հեղափոխական գործունեության համար 1902-1905 թթ. Բաքվում սոցիալ-դեմոկրատներից պատասխանատվության են ենթարկվել 102 ռուս, 40 հայ, 20 հրեա, 7 վրացի, 5 լեհ, 3 լատիշ, 2 գերմանացի, 1 լիտվացի և 1 թուրք: Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատների՝ սոցիալիստ հեղափոխականների կազմակերպությունը նույնպես բազմազգ չէ: Նշված ժամանակամիջոցում սոցիալիստ-հեղափոխականներից քաղաքում պատասխանատվության են ենթարկվել բացառապես ռուսներ:

Սենատոր Կուզմինսկին թագավոր կայսրին գրում էր, թե հայ հեղափոխականները 1903թ. սկսած՝ շատ փորձեր են արել գրգռելու թուրքերին և նրանց նույնպես ներգրավելու հակացարական պայքարի մեջ: Այդ նպատակով նրանք թուրքերեն տպագրել ու տարածել են հակակառավարական և հակառուսական բնույթի բազմաթիվ պրոկլամացիաներ, որոնցով թուրքերին ուղղված կոչեր են արել միանալ մյուս ազգերին և կռիվ մղել ինքնակալ կարգերի դեմ: Բայց նրանք, ընդգծում էր սենատորը, մերժել են ենթարկվել հայերի ագիտացիային և միշտ հայտարարել են, թե չեն ցանկանում խախտել կայսրին իրենց ազգի տված հավատարիմ հպատակության ուխտը[2]: Կուզմինսկին կայսրին էր հաղորդում թուրքերի ղեկավարներից լսած, բայց չստուգված լուրը, թե 1904թ. ապրիլին Բաքվում թուրքերեն և ռուսերեն երևացել են հակապրոկլամացիաներ, որոնցում «մահմեդականները հայտարարել են», թե ոչ միայն որևէ ցանկություն չունեն մասնակցելու հակակառավարական ելույթների, այլև եթե քաղաքական որևէ ուժ փորձի իրենց դրդել այդ քայլին, ապա իրենք առանց երկմտելու կկանգնեն իշխանությունների կողքին: Իբր թե այդ պրոկլամացիայում նաև նշված է եղել, թե մահմեդականներն այդպիսի դիրք են բռնում գերազանցապես այն պատճառով, որ «չեն կրում ոչ մի ճնշում ռուսական կառավարությունից»: Այդ անմիտ

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.7-8.
[2] Նույն տեղում, էջ 6-7:

հաղորդմանը սենատորն ավելացնում էր, թե հայ հեղափոխականների հակառուսական բնույթի պրոկլամացիաների դեմ թուրքերը պատասխան են գրել... Եգիպտոսում պարսկերեն լույս տեսնող «Զահրանումա» թերթի 1905թ. մարտի 25-ի համարում (N18)[1]: Սենատորը, սակայն, չէր ասում, թե ով է իրեն տվել այդ թերթը, նա անգամ տեղական ժանդարմերիայի կամ ռուս մարդկանց միջոցով չէր հետաքրքրվել, թե երբևիցե հայերի կողմից հրատարակված այդպիսի պրոկլամացիա Կովկասում երևացե՞լ է, թե՞ ոչ: Եթե այդպիսի պրոկլամացիա եղած լիներ, բնականաբար, կլիներ հարյուրավոր օրինակներով, և երևի ոչ միայն տեղական իշխանությունը, այլև շատ ռուս մարդիկ այդ մասին անպայման տեղեկություն կունենային: Ինչո՞ւ սենատորը չէր ենթադրում, որ փետրվարյան կոտորածներից առաջ թուրքերն արդեն մտածել են նաև այն միջոցների մասին, որոնցով կարող էին հիմարացնել տեղական իշխանությանը: Չէ՞ որ փետրվարի 6-ից հետո կարելի էր ամեն տեսակ պրոկլամացիա գրել, ապա դրան հակադրվող պատասխան հնարել և տպելու ուղարկել ոչ միայն Եգիպտոս:

Ցարին գրելով, թե մահմեդականները, ի տարբերություն հայերի, խուսափում են մասնակցել հեղափոխական ելույթներին, որովհետև գահի հավատարիմ հպատակներ են, սենատոր Կուզմինսկին միաժամանակ կասկած էր հայտնում, որ ապագայում բացառված չէ մահմեդականների հարումը հեղափոխությանը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանցից շատերը մասնակցել են 1904թ. դեկտեմբերին Բաքվում տեղի ունեցած զանգվածային գործադուլին:

Զեկույցում քննադատության էր ենթարկված նաև վարչակազմի դատավարական մասը (գլուխ X), թեև ոչ այնքան խիստ, ինչպես ոստիկանությունը:

Բաքվի հաշտարար դատական մարմինների ստուգումները բերել էին այն եզրահանգման, որ նահանգի այս հաստատությունները անբարեհաջող վիճակում են: Դրանից 40 տարի առաջ ձեռնարկված միջոցները, որոնց նպատակն էր նվաճված Կովկասն օժտել դատական կատարելագործված հաստատություններով, հաջողություն չէին ունեցել, տեղի բնակչությունը չէր ստացել ճիշտ կազմակերպված դատարան, այնպիսին, որի գլուխ կանգնած լիներին իրենց խնդիրները սրբորեն կատարող մարդիկ: Սենատորական ստուգումների տվյալների համաձայն, Բաքվի նահանգի 35 տարվա պատմություն ունեցող դատական մարմինները չէին հասցրել վաստակել տեղի բնակչության վստահությունն ու լավ վերաբերմունքը: Դրա պատճառը պետք է փնտրել արդարադատության իրականացնողների անբավարար գործունեության մեջ,- ասված էր զեկույցում: Այնուհետև նշված էր, որ «Բաքվի նահանգում հաշտարար արդարադատության նման վիճակի համար պատասխանատվությունը պետք է ընկնի այն հաստատությունների ու անձանց վրա, որոնք, ըստ օրենքի, կոչված են տեղերում հսկողություն իրականացնել. նրանց ցուցում-

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.9-10.

ներն ու ձեռնարկած միջոցները զգալի չափով կարող են կանխել արդարադատության մարմինների անկումը, որոնք ըստ կոչման առավել լավ վիճակի են արժանի: Պարբերաբար կատարվող ստուգումները, որոնց իրավունքը ոչ ճիշտ է ըմբռնվել տեղական տարածքային դատարանների կողմից, կարող են գործոն միջոց հանդիսանալ զգաստացնելու համար անփույթ դատավորներին, կամ հեռացնելու նրանց այն պաշտոններից, որոնց վարկը նրանք գցում են վստահված գործի հանդեպ նմանօրինակ վերաբերմունքով»[1]:

Ինչպես տեսնում ենք, սենատորական զեկույցը թեև քննադատում էր Բաքու քաղաքի և նահանգի արդարադատության մարմինների աշխատանքը, բայց ակնհայտորեն պաշտպանության տակ էր առնում համակարգը:

Իր հանձնաժողովի քննության արդյունքներից ելնելով՝ Կուզմինսկին զեկույցի վերջում անում էր հետևյալ եզրահանգումը.

«Վերոհիշյալ բոլոր հանգամանքների և դատողությունների ամբողջությունը ինձ հիմք է տալիս գալ եզրակացության, որ փետրվարյան դեպքերն ունեին ազգային-կրոնական և տնտեսական բնույթի դրդապատճառներ. հեղափոխական շարժումը նրանց համար ստեղծեց բավականին բարենպաստ հող, իսկ իշխանության անգործությունը թույլ տվեց նրանց սահմանները հասցնել սարսափելի չափերի»[2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սենատոր Ա. Կուզմինսկու գլխավորած հանձնաժողովի գլխավոր նպատակն է եղել 1905 թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցած անցքերի հետազոտությունը և լուսաբանումը: Սակայն Նիկոլայ II ցարին ներկայացրած զեկույցում այդ խնդրին անդրադարձ էր արվել հարևանցիորեն ու միակողմանի և հատկապես շատ պակասավոր՝ պատմական, փաստագրական, և թե արդարության տեսակետից: Աչքի է զարնում այն, որ արված եզրակացությունները միշտ չէ, որ համապատասխանել են սենատորի ձեռքի տակ եղած նյութերին:

Անդրադառնալով սենատորական հանձնաժողովի քննության մեթոդներին և նրա կողմնակալ զեկույցի թուրքամետ բանաձևումներին՝ «Մուրճը» գրում էր.

«... Զանազան Կուզմինսկիների... մրոտած թղթերը գրոշի նշանակություն չունեն: Հասարակությունը ինքը պետք է ընտրի քննիչներ և դատավորներ... Հազարավոր թշվառացած այրիների և որբերի արտասվաթոր աչքերը, հազարավոր զոհերի արյունը արդարություն են պահանջում, և մինչև չգոհացվի այդ պահանջը՝ Նեմեզիդան հանգիստ չի թողնի մեր ավերված, հրկիզված, արյունաներկ երկիրը ...»[3]:

Չնայած այդ ամենին, ինչպես սենատորական տեղեկագիրը, այնպես էլ հաշվետվությունը, որոշ դրական նշանակություն են ունեցել այն իմաստով, որ դրանցում հավաքվել է ինչպես Բաքու քաղաքին, այնպես էլ նահանգին վերաբերող հսկայածավալ նյութ:

Հատկապես կարևոր է այն աշխատանքը, որ կատարվել է բանվորների տնտեսական դրությունն ուսումնասիրելու ուղղությամբ: Այդ ժամանակ հավաքված մեծաքանակ տվյալներն այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը հետազոտողների համար:

Ավելին, կարելի է արձանագրել, որ հանձնաժողովն ընդհանուր առմամբ կատարել է բարեխիղճ ուսումնասիրություն այն առումով, որ, իր նպատակադրմանը հակառակ, բացահայտել է կովկասյան վարչության և, առաջին հերթին, Բաքվի իշխանությունների գործունեության բազմաթիվ արատավոր կողմերը: Այնուհետև, ուսումնասիրելով Բաքու քաղաքում և նահանգում փետրվարի 6-9-ը տեղի ունեցած արյունալի դեպքերի ընթացքը և պատճառները, արձանագրելով առկա փաստերը, համենայն դեպս՝ գոնե դրանց մի մասը, հանձնաժողովն ակամայից արել է եզրակացություններ, որոնք իրենց իսկությամբ հնարավորություն էին տալիս ընդհանուր պատկերացում կազմելու կատարվածի ծավալների և սարսափների մասին:

Եվ, որ գլխավորն է, քառորդ դարե ի վեր, առաջին անգամ լինելով, ռուսական ռեժիմի հետևողական պաշտպան մի բարձրաղիրք պաշտոնյա կատարվածի ամբողջ մեղքը չէր գցել հայերի վրա, այլ դրանից գոնե մի փոքր բաժին էլ հանել էր թուրքերին և հատկապես կովկասյան կառավարչությանը: Դա ցարիզմի՝ երկար ու ձիգ տարիներ տևած հայահալած քաղաքականությունից կատարած հազիվ նկատելի նահանջ էր:

[1] "Всеподданнейшая записка ... ", стр.69-70.
[2] Նույն տեղում, էջ 9:
[3] «Մուրճ», N11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 261:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կովկասում Թուրք-Հայկական ընդհարումների ամբողջ ընթացքում ակնհայտորեն դրսևորվում էր մի պարզ օրինաչափություն. որքան ուժեղանում էր ժողովրդական զանգվածների հեղափոխական ճնշումը ցարիզմի վրա, այնքան սաստկանում էին Թուրք-Հայկական կռիվները՝ իշխանությունների սադրիչ գործողությունների հետևանքով: Եվ ընդհակառակը՝ հեղափոխական շարժման վայրէջքների ժամանակ թուլանում էր այդ կռիվների թափը՝ դարձյալ իշխանությունների ցանկությամբ:

ԲԱՔՎԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՆԱԽԱՆՇԱՆԸ: ԱՌԱՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայությունը Կովկասում շարունակում էր համարվել ամենահեղափոխական տարրը: Ուստի հեղափոխությունից նրան դուրս բերելն ու չեզոքացնելը իշխանություններն առաջվա պես համարում էին տվյալ փուլում իրենց ամենակարևոր խնդիրներից մեկն Անդրկովկասում:

Միջոցը հայտնի էր՝ փորձված ու արդյունավետ: Փետրվարին Բաքվում տեղի ունեցած Թուրք-Հայկական ազգամիջյան կոտորածների ալիքը պետք էր տարածել երկրամասով մեկ: Զենքը ցարիզմի դեմ ուղղելու փոխարեն Թուրքերն ու հայերը պետք է շարունակեին այդ զենքով միմյանց կոտորել: Առատորեն թափված արյան մեջ կարելի կլիներ խեղդել հակակառավարական նոր ըմբոստացումները:

Դեռ փետրվարի 9-ին Թիֆլիսի քաղաքագլուխ Ռ. Վերմիշևը Բաքվի դեպքերի կապակցությամբ, վախ հայտնելով ջարդերի ալիքի հնարավոր տարածման մասին, Կովկասի փոխկառավարչի պաշտոնակատար Մալամային գրում էր. «Աստված չանի, որ Բաքվում վառված հրդեհի բոցը իր արյունազանգ

չողը գցե մեր երկրի ուրիշ մասերի վրա, գուցե նաև՝ Թիֆլիսի վրա»[1]*: Իսկ տագնապ արտահայտելով՝ «Մշակը» իր հերթին գրում էր. «Մենք չենք հավատում, որ Բաքվի դեպքերը կրկնվեն ուրիշ տեղերում: Բայց մի՞թե մենք գիտենք, թե ինչ որոգայթներ և խարդավանքներ են լարվում իրականության մեջ: ... Ուստի պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնել, որ սարսափելի դեպքերը չկրկնվեն և ուրիշ տեղերում: ...Չպետք է ուշանալ և չպետք է հետաձգել, որովհետև հրդեհը կարող է ճարակել ավելի արագ, քան մենք ենթադրում ենք:*

Պատասխանատու է բոպեն, և մենք չպետք է դանդաղենք գործելու»[2]*:*

Բայց նման տագնապներն անօգուտ էին, քանզի իշխանությունները գերազանց գիտեին իրենց անելիքը: Նրանք ձեռք չէին առնում միջոցներ և եթե առնում էին, ապա միայն ուղղված հայերի դեմ: Ինչ վերաբերում է Թուրքերին, ապա նրանց հոգում կուտակված մաղձը մոլեգնաբար նոր ելքեր էր որոնում:

Ինչպես պետք էր սպասել, Բաքու քաղաքի փետրվարյան կոտորածները առաջին հերթին շարունակություն ստացան Բաքվի նահանգում, որտեղ հայ բնակչության թիվը փոքր էր, մանավանդ՝ բնիկ հայերի[*]*:*

Փետրվարյան դեպքերից հետո Անդրկովկասում հայերի և Թուրքերի միջև առաջին լուրջ բարդությունը տեղի ունեցավ Նուխի քաղաքում, փետրվարի 17-ին և 18-ին: Դրանք դժոխային օրեր էին քաղաքի հայ բնակիչների համար: Թուրք հրոսակները ավերեցին նրանց խանութներն ու արհեստանոցները, հրդեհեցին մի քանի տուն: Տներում փակված հայերը ժամ առ ժամ սպասում էին կոտորածի: «Նուխիում վերացել է կյանքը և փոխարինվել ստվերների աշխարհի»[3]*, - Թիֆլիս ուղարկած իր նամակում գրում էր տեղի բնակիչներից Գալուստ Մարտիրոսյանցը:*

Եվ եթե Նուխիում կոտորած տեղի չունեցավ, ապա այն պատճառով, որ այնտեղի սյունի Թուրքերը ինչ-ինչ նկատառումներով չիա Թուրքերին հորդորում էին առայժմ ձեռնպահ մնալ: Այս անորոշ պայմաններում տեղի հայերին հայտնի դարձավ, որ չիաները որոշել են սպանել մի սյունի Թուրք, դիակը գցել հայի տան առաջ՝ սյուններին իրենց միացնելու և համատեղ հայերի կո-

---

[1] **«Մշակ»**, *N 20, 11 փետրվարի 1905թ.:*

[2] *Նույն տեղում:*

[*] *Այդ ժամանակ Բաքվի նահանգի հայերի թիվը 84000 էր, որից բնիկներ էին շուրջ 40 հազարը: Մինչև փետրվարյան դեպքերը նահանգի հայերից 51 հազարը բնակվում էր Բաքվում և նավթահանքերում: Նահանգի մյուս տեղերում հաշվվում էր 33 հազար հայ, որից 17 հազարը ապրում էր Շամախու, իսկ 15 հազարը՝ Գոկչայի գավառներում: Մի քանի հարյուր հայ ապրում էր Լենքորանի կողմերում: (Հաշվարկը կատարված է մեր կողմից՝ 1897թ. ընդհանուր մարդահամարի և 1905թ. «Կովկասյան օրացույցի» տվյալների հիման վրա - տե՛ս* "Кавказский календарь на 1905 год",III отд., *էջ 49):*

[3] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 395, թ. 6:*

տորած սկսելու համար: Նրանց հայտնի դարձավ նաև, որ թե՛ չիաներին և թե՛ սյուններին քաջալերում և հայերի դեմ գրգռում են մի քանի ռուս չինովնիկներ՝ ինժեներ Պելցովը, կազնաչեյ Դրուժինինը և ուրիշներ, վրացի ուսուցիչ Ուտուրկաուրին և այլք: Սրանց արարքները լավ հայտնի էին գավառապետին, որը, սակայն, տրամադիր չէր որևէ քայլ անել նրանց զսպելու համար[1]:

Այնուամենայնիվ, սև ուժերին չհաջողվեց իրականացնել իրենց մտադրությունը:

Թուրք և հայ հասարակությունների ներկայացուցիչները, նախօրոք պայմանավորվելով, փետրվարի 19-ին աղոթատներում կատարեցին հոգեհանգիստ: Ժամը 10-ին մուսուլման թե հայ հավաքվեցին Ջումա մեչիդում, ուր թուրք ու պարսիկ զաքիները, ավագ էֆենդին և քաղաքագլուխ Շիրալի բեկ Ամիրջանովը մուսուլմաններին հորդորեցին հայերի հետ ապրել հաշտ ու խաղաղ: Մեչիդից բոլորը ուղևորվեցին հայոց ս. Մինաս եկեղեցին, ուր ժամը 12-ին սկսվեց հոգեհանգստյան ծեսը: Եկեղեցու քահանա Արշակ Փալչյանցը, թուրքերեն դիմելով թուրք և հայ հասարակությանը, ասաց. «Երկուստեք թույլ են տրվել չար ու վայրենի, գազանաբարո ու քստմնելի արարքներ, բայց ուրախ ենք, որ խաբված մարդիկ բարեկամության ձեռք են մեկնում միմյանց և երդվում են ապրել հաշտ ու խաղաղ: Երկու դրացիներիս շահը պահանջում է ապրել համերաշխ ու սիրով»[2]:

Հ.Ց.Դ. արևելյան բյուրոն պահանջել էր կոմիտեների առիթ չտալ, ինքնապաշտպանության դիմել միայն թուրքերի հարձակման դեպքում: Սակայն իրադարձությունները զարգացան դաշնակցության ցանկության հակառակ:

Թեև Բաքվի փետրվարյան կոտորածների՝ դեպի գավառներ տարածվող առաջին ալիքը հնարավոր եղավ վնասազերծել, բայց այն Նուխիում կանգ չառավ, այլ, թեքվելով, մտավ Արարատյան աշխարհ:

Բաքվի կոտորածներն անմիջական արձագանք ունեցան Երևանի նահանգային կենտրոնում՝ Երևան քաղաքում:

Անդրկովկասի հարավային մասում ընկած Երևանի նահանգը հարավարևմտյան ամբողջ երկարությամբ սահման ուներ Պարսկաստանի հետ, որոնց բաժանման գիծն Արաքս գետն էր: Մյուս կողմերից նահանգին սահմանակից էին Կարսի մարզը և Թիֆլիսի ու Գանձակի նահանգները:

Երևանի նահանգը բռնում էր 23,5 հազար քառ. վերստ տարածություն, որտեղ, 1897թ. միօրյա վիճակագրության համաձայն, բնակվում էր 829 հազար մարդ[3], որից հայերը կազմում էին 434 հազար, թուրքերը՝ 352

[1] «Դրոշակ», N5(158), մայիս, 1905, էջ 79:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 395, թ.թ. 8-9:
[3] Վ.Ե. Խաչաթրյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը ..., էջ 58:

հազար[1]:

Նույն ժամանակ ամբողջ նահանգում հաշվվում էր 1.301 գյուղ, որից հայաբնակ էր 342-ը, բայց հայ գյուղացիների թիվը գերազանցում էր թուրք գյուղացիների թվին, որովհետև հայկական գյուղերը բազմամարդ էին[2]:

Երևանի նահանգը բաժանված էր 7 գավառի, որոնց բնակիչների թիվը և ազգային կազմը, նույն 1897թ. մարդահամարի համաձայն, հետևյալ պատկերն ուներ (հազարներով)[3].

Գավառներ	Բնակչության ընդհանուր թիվը	Հայեր	Թուրքեր	Այլք
Ալեքսանդրապոլի	165	137	7	21
Նոր Բայազետի	122	81	38	3
Էջմիածնի	124	76	45	3
Սուրմալուի	89	27	55	7
Երևանի	152	58	87	7
Շարուր-Դարալագյազի	76	21	55	-
Նախիջևանի	101	34	65	2
Ընդամենը	829	434	352	43

Նահանգում առաջին կոտորածը տեղի ունեցավ նահանգային կենտրոն Երևան քաղաքում:

Բնակչության ընդհանուր թիվը Երևանում 29 հազար էր, որից 13,5 հազարը հայեր էին, 13 հազարը՝ թուրքեր, 2,5 հազարը՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներ[4]:

Երևանի գլխավոր փողոցը, որ Աստաֆյան անունն էր կրում, քաղաքը բաժանում էր երկու մասի: Փողոցի հարավային և արևելյան մասերում ապրում էին թուրքեր, իսկ հակառակ մասը, որն ուներ կանոնավոր փողոցներ ու շինություններ, զուտ հայաբնակ էր: Մյուս մի քանի թաղերում՝ Շահարում, Շենթաղում, Կոնդում և Ջորագյուղում, հայերն ու մուսուլմաններն ապրում էին խառը: Քաղաքի ներքևի մասում գտնվող շուկան (մեյդանը) ընդհանուր էր:

Երևանի բնակիչների հիմնական զբաղմունքն այգեգործությունը և առևտուրն էր: Հիմնականում վաճառվում էին տեղում պատրաստած գինիներ, կոնյակ, զանազան գյուղատնտեսական մթերքներ: Մեծածախ առևտուրը գտնվում էր հայերի, իսկ մանր առևտուրը՝ թուրքերի ու պարսիկների ձեռքում:

Բաքվից Երևան հասած լուրերն անմիջապես բարդացրին քաղաքի հայ և

[1] Տե՛ս "Кавказский календарь на 1905 год", III отд., էջ 48-49:
[2] Ա-ԴՕ, Հայ - թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 43:
[3] Տե՛ս "Кавказский календарь на 1905 год", III отд., էջ 48-49:
[4] Տե՛ս նույն տեղում:

մուսուլման բնակչության փոխհարաբերությունները: Հրդեհի համար բավական էր մի կայծ:

1905թ. փետրվարի 20-ը հայերի համար հանգստյան օր էր: Մարդիկ առավոտյան շուկա էին շտապում կիրակնօրյա գնումներ կատարելու: Ժամը մոտ 10-ին, գլխավոր շուկայից (մեյդանից) ոչ հեռու գտնվող Ցախի մեյդան կոչված տեղում, որտեղ թուրքերի շուկան էր, դրամական հաշիվների հողի վրա հինգ թուրքերի միջև տեղի էր ունեցել աղմկալի վեճ, որը փոխվել էր կռվի: Թուրքերից մեկը քաշքշոցի ժամանակ ատրճանակով վիրավորել էր մի ուրիշ թուրքի:

Աղմուկ-աղաղակի վրա դեպքի վայր են շտապում շուկայում գտնվող մի քանի հայեր՝ վիրավորին օգնելու նպատակով: Այդ պահին մոտակա թեյարանում գտնվող թուրքերը, կարծելով թե կրակողը հայ է, իսկ տուժածը՝ թուրք, ատրճանակները հանելով հարձակվում են վիրավորի շուրջը համախմբված հայերի վրա: Նույն վայրկյանին ուրիշ թեյատներից ու կրպակներից նույնպես թուրքեր են դուրս գալիս և սկսում կրակել պատահած հայի վրա: Հետևանքն այն է լինում, որ սպանվում է հայերից մեկը և վիրավորվում 10 հոգի[1]:

Հայերը, այդ դեպքից զայրացած, նետվում են տները և, վերցնելով հրազեն ու դաշույն, դուրս են գալիս փողոցներն ու հարձակվում թուրքերի վրա:

Բաքվի գազանությունների մասին լսած լուրերի ազդեցության տակ քաղաքի բնակչությունը սարսափահար է լինում: Անմիջապես փակվում են խանութները, կանայք թաքնվում են տներում, իսկ տղամարդիկ սկսում են խմբվել ըստ ազգությունների՝ հայերը քաղաքի կենտրոնում, մուսուլմանները՝ արվարձաններում: Շուտով սկսվում է ուժգին փոխհրաձգություն ամբողջ քաղաքում, որի ընթացքում այդ օրը սպանվում է երկու հայ և վիրավորվում է ութը, իսկ թուրքերի կորուստը կազմում է մեկ սպանված և մեկ վիրավոր:

Հայերը շահագրգռված չէին խորացնելու կոնֆլիկտը, ուստի չդիմեցին վրեժխնդրական գործողությունների, մանավանդ որ թուրք երևելիներից մի քանիսը հայերին հաշտություն առաջարկեցին: Երկու կողմերի ներկայացուցիչներից ստեղծվեց մի խառը հանձնաժողով, որը, շրջելով քաղաքում, բնակչությանը զսպվածության հորդոր էր անում: Մարդիկ կարծում էին, թե վտանգն արդեն անցել է, բայց նրանց տպավորությունը խաբուսիկ էր: Հաջորդ օրը՝ փետրվարի 21-ին, առավոտյան ժամը 9-ից քաղաքը կրկին ալեկոծվեց: Ամեն ինչ նորից սկսվեց շուկայից, որտեղ զինված թուրքերը հարձակվեցին հայ վաճառականների ու գնորդների վրա: Անմիջապես խանութները փակվեցին, շուկան դատարկվեց, գետնին մնաց երկու հայի դիակ:

Մեծ թվով զինված թուրքեր էին հավաքվել Նազարյան փողոցի ծայրամասում, այսպես կոչված, Խանլըղ բաղում (Խանների այգեստան), և դրան

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ. 40:

հաջորդող ամբողջովին թուրքերով բնակեցված Քարոտ քյուչայում (Քարոտ փողոց): Այս երկրորդ փողոցը բարձրանում էր դեպի Կոնդ թաղամասը, որը զուտ հայաբնակ էր, չհաշված թաղամասի Հրազդան գետին նայող հատվածը, որն իջնում էր դեպի Ջորագյուղ թաղը և Գեոյ մեչեդի (Կապույտ մզկիթ) շրջակայքը: Հենց այս տեղերից թուրքերը հրացանային կրակի տակ առան շրջակայքի հայկական թաղերը:

Երևանի հայությունը դարձյալ փոթորկվեց: Բայց այս անգամ նա հանկարծակիի չեկավ: Բարեբախտաբար այդ օրերին քաղաքում էին Հ.Ց.Դ. Երևանի (Մրգաստանի) կ. կոմիտեի բոլոր անդամները՝ Գալուստ Այոյանը (Դարվիշ), Սահակ Հովնանյանը (Աշուղ), Ռուբեն Մելիք-Մուսյանը, Գեղեոն Ահարոնյանը, Սմբատ Խաչատրյանը (Բորիս), Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատ), Արշակ Ջիլինգարյանը և Սարգիս Շելկովնիկյանը: Կ.կոմիտեն իր ձեռքը վերցրեց քաղաքի հայության պաշտպանության գործը:

Կոմիտեի կարգադրությամբ Հ.Ց.Դ. զինանոցի զինապահ Հայկ Ջանիբեկյանը մի խումբ վստահելի երիտասարդների գիշերը տրամադրել էր 10 հրացան ու 20-ի չափ ատրճանակ: Եվ երբ առավոտյան քաղաքը նորից դարձավ կռվի ասպարեզ, զինված երիտասարդները և ուրիշ հայ քաղաքացիներ փողոցներ դուրս եկան և կրակ բացեցին անցնող-դարձող թուրքերի վրա: Կատաղի փոխհրաձգություն սկսվեց հատկապես քաղաքային այգու մոտ, Աստաֆյան փողոցում, ինչպես նաև խառը բնակչություն ունեցող թաղերում:

Հրացանաձգությունը կարճ տևեց՝ մոտ մեկ ժամ: Հայերի կորուստները կազմեցին մեկ սպանված և 6 վիրավոր, թուրքերից սպանվեց 7 և վիրավորվեց 12 մարդ[1]:

Ծայրահեղորեն լարված մթնոլորտում քաղաքը բաժանվեց միմյանց կործանելու պատրաստ երկու թշնամական լագերի:

Քաղաքային իշխանությունը լրացուցիչ զորք բերեց: Երևանի երկաթուղային կայարանը պաշտպանելու համար Ալեքսանդրապոլից եկավ Պոլտավյան կազակական գնդի մի ջոկատ:

Փետրվարի 21-ի լույս 22-ի գիշերն անցավ հանգիստ: Լույսը բացվելուն պես հաշտության կոչերով փողոցներ դուրս եկան թուրք հոգևորականներ և երևելիներ: Հայերն արձագանքեցին, և փետրվարի 22-ին Երևանի հայկական եկեղեցիներում ու Խանի մեչետում երկու կողմերի հոգևորականների մասնակցությամբ կատարվեցին հոգեհանգստյան արարողություններ: Այնուհետև հայ և թուրք հոգևորականները հաշտության թափորի գլուխն անցած՝ սկսեցին պտտվել քաղաքի փողոցներով՝ բնակչությանը հորդորելով հաշտվել և վերադառնալ սովորական աշխատանքի:

[1] Ա-ԴՕ, Հայ - թուրքական ընդհարումը Կովկասում (1905 - 1906թ.), էջ 51:

Նույնիսկ այդքանից հետո, օրվա երկրորդ կեսին, քաղաքի տարբեր մասերում ճայթեցին հրացաններ, որի հետևանքով սպանվեց 3 հայ և 3 թուրք[1]:

Հանգստությունը վերականգնելու համար այդ օրերին եռանդուն գործունեություն էր ծավալել Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը՝ նրա հիմնադիր և ղեկավար Գեորգի Սոկոլովսկու գլխավորությամբ: Շուտափույթ խաղաղության հասնելու նպատակով սոցիալ-դեմոկրատիային համակրող մտավորականներից և բարձր դասարանների աշակերտներից Սոկոլովսկին կազմակերպում է 2-3 խումբ, իսկ դրանց ղեկավարելու համար մի կենտրոն՝ հայ և թուրք բնակչության շրջանում ագիտացիա մղելու համար:

Շատ տարիներ հետո Սոկոլովսկին վերհիշել է. «Ոստիկանության վրա կատարված եռանդուն ներգործության (ժող. դպրոցների դիրեկտոր ու տեսուչ Ճիճինաձեի և Վորոբյովի միջոցով) հետևանքով հաջողվեց թույլտվություն ստանալ «թշնամի» կողմերի ներկայացուցիչների ժողով հրավիրելու քաղաքային դումայի և վարչության շենքում: Ժողովը, որին ներկա էին, մի կողմից, խաներ, բեկեր և, մյուս կողմից, հայ վաճառականությունը՝ տեղական դաշնակցության վերնախավի հետ միասին, անցավ չափազանց բուռն կերպով, անվերջ փոխադարձ կշտամբանքներով: Սակայն մեզ հաջողվեց կայացնել մի որոշում, որով երկու կողմերը պատասխանատվություն էին ստանձնում անհապաղ միջոցներ ձեռք առնելու կոտորածը լիկվիդացնելու համար»[2]:

Փետրվարի 23-ի ամբողջ օրն անցավ հանգիստ, բացվեցին խանութներն ու արհեստանոցները: Երկու կողմերից նորից ու նորից երդումներ էին արվում խաղաղությունն այլևս չխախտելու մասին, բայց ամեն ինչից երևում էր, որ երդվողները համոզված չեն, թե նորից արյուն չի հոսելու: Պատահական չէ, որ քաղաքի զանազան մասերում մի քանի օր դեռ շարունակվում էին անհատական սպանությունները:

Երևան քաղաքի առաջին ընդհարումների ժամանակ երկու կողմերից սպանվածների և վիրավորների թիվը հասավ մոտ 80-ի[3]: Տնտեսական վնասը քիչ էր՝ կողոպտվել էին հայերի մի քանի խանութներ և կաշվի արհեստանոցներ:

Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետ, գնդապետ Ցակովլևը 1905թ. փետրվարի 27-ի N264 գաղտնի գրությամբ Պետերբուրգ հաղորդեց հետևյալը. «Փետրվարի 23-ից քաղաքում հանգիստ է, թեև հայերն ու թաթարներն իրենց պահում են միմյանցից մեկուսացած: Չնայած հույս կա, որ հետագայում անկարգություններ չեն լինելու, բայց, այնուամենայնիվ,

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ. 40:
[2] Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 101:
[3] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ. 40:

որոշված է զորքը քաղաքից դուրս չբերել մինչև մարտի 4-ը»[1], այսինքն՝ մինչև մուսուլմանների տոնական օրերի ավարտը:

"Петербургские Ведомости" թերթի 1905թ. N56-ում (մարտ) լույս տեսած «Էխո» ստորագրությամբ Երևանից ուղարկած թղթակցության հեղինակը թուրքերի եղեռնագործությունները Երևանում անվանում էր «թաթարական անկարգություններ», իսկ հայերի դիմադրությունը՝ «ավազակային հարձակումներ»: Նա նշում էր, որ քաղաքի հայերի և թուրքերի մոտ միմյանց նկատմամբ կուտակված ատելությունն այնքան ուժեղ է, որ առաջիկայում այնտեղ կարող է տեղի ունենալ մի այնպիսի ընդհարում, որի համեմատ փետրվարյան դեպքերը մանկական խաղեր կթվան: Ըստ որում Երևանում կուտակված ազգամիջյան ատելության հնարավոր հետևանքների մասին թերթը գրում էր ոչ թե տագնապով, այլ սառնասիրտ շեշտադրումներով, նոր, էլ ավելի մեծ արյունահեղության սպասումներով:

Ինչպես հետո պարզվեց, Երևանում թուրք-հայկական առաջին կոտորածի հրահրողներից մեկը եղել էր բժիշկ Ուվարովը: Զարաղետ դեր էր խաղացել նաև թուրքամոլ ոստիկանապետ Բալուևը:

Հիրավի, փետրվարին Երևան քաղաքում տեղի ունեցած այս առաջին կոտորածը նախերգանքն էր այն ավելի լայնամասշտաբ կոտորածի, որ դրանից ուղիղ երկու ամիս հետո դարձյալ տեղի էր ունենալու այդ քաղաքում և արագորեն տարածվելու էր նահանգով մեկ:

Հենց այդ հեռանկարը հաշվի առնելով և Երևանի նահանգի հայության անվտանգությունն ապահովելը տվյալ ժամանակահատվածում առաջնային համարելով՝ Հ.Յ.Դ. դաշնակցության արևելյան բյուրոն որոշեց նահանգի ինքնապաշտպանության գործն արմատապես բարելավելու նպատակով այնտեղ ուղարկել Նիկոլ Դումանին:

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ: ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Հայաբնակ վայրերից շարունակ Թիֆլիս, Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին էին հասնում հուզիչ, անմխիթար տեղեկություններ: Մոլեգնած թուրք ամբոխը, անձնատուր իր բարբարոսական բնազդներին, նորանոր զոհեր էր պահանջում,

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ. 41:
1905-1906 թթ. Երևանում տեղի ունեցած կոտորածներն իրենց հաճախականությամբ աննախադեպ էին: Առաջինը տեղի է ունեցել, ինչպես տեսանք, 1905-ի փետրվարի 20-22-ին, երկրորդը՝ մայիսի 23-26-ին, երրորդը՝ սեպտեմբերի 18-ին, չորրորդը՝ 1906-ի մայիսի 27-ին, հինգերորդը՝ նույն թվականի հունիսի 8-9-ին:

տենչում արյուն ու կրակ: Գավառներում բոպե առ բոպե հայերը սպասում էին հարձակումների:

Թուրք ոճրագործների հարաճուն գազանությունների դիմաց հայածական հայությանը միայն մի եղք էր մնում ապավինել ոչ թե հանրային կարծիքի պլատոնական համակրությանը, այլ սեփական ուժին և զինված դիմադրության ճանապարհով ապահովել իր գոյությունը: Ոչ թե խուժանի վայրագ ձեռքերում հոգին անպատիվ ավանդել, ոչ թե աղաչանք-պաղատանքով և օգնության կանչերով դիմել եվրոպական ու ռուսաստանյան հանրային կարծիքին, այլ հենվել սեփական քաղաքացիական արիության վրա և զենք գործածել ձեռքերն անմեղ արյան մեջ թաթախող հայասպանների դեմ:

Ինքնապաշտպանության կազմակերպման հարցերը բազմիցս հանգամանորեն քննարկվեցին Հ.Յ. դաշնակցության բարձր մարմիններում, Ոսկանապատի (Բաքու), Ապառաժի (Շուշի), Մրգաստանի (Երևան), Մեծ Քաղաքի (Թիֆլիս) կենտրոնական կոմիտեներում: Եզրակացությունը մեկն էր՝ շտապ օգնության հասնել մուսուլմանական հոծ բնակչությամբ շրջապատված հայկական գյուղերին: Եվ դաշնակցությունն իր ուժերն ուղարկեց ամենավտանգավոր վայրերը:

Եթե չհաշվենք Թիֆլիսի նահանգի մեջ մտնող հայոց Ջավախքն ու Լոռին, ապա Անդրկովկասի մյուս հայկական գավառները գտնվում էին Ելիզավետպոլի և Երևանի նահանգներում: Ուստի որոշվեց այդ երկու նահանգների հայերի ինքնապաշտպանության գործի կազմակերպումը հանձնարարել հայ ժողովրդի ազատագրական շարժման երկու խոշոր գործիչներին՝ Նիկոլ Դումանին (Նիկոլ Տեր-Հովհաննիսյան) և Խանասորի Վարդանին (Սարգիս Մեհրաբյան): Ելիզավետպոլի նահանգի հայկական ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց Վարդանը, որը ռազմական գործողությունները վարելու էր Շուշի քաղաքից, իսկ Դումանը նշանակվեց Երևանի նահանգի ինքնապաշտպանության ղեկավար՝ կենտրոն ունենալով Երևան քաղաքը:

Ե՛վ Վարդանը, և՛ Դումանը մասնակցել էին Խանասորի արշավանքին, մեծ հարգանք ու ժողովրդականություն էին վայելում Անդրկովկասի հայության մեջ: Երկուսն էլ ղարաբաղցիներ էին, երկուսն էլ խելացի ու անսահմանորեն քաջ, երկուսն էլ օժտված կազմակերպչական մեծ ունակություններով ու ձիրքով:

Բաքվի փետրվարյան դեպքերի ժամանակ դրսևորած արտակարգ եռանդի ու հնարամտության, բացառիկ պաղարյունության, խստապահանջության և ծայրահեղ կարգապահության, միաժամանակ անվեհերության շնորհիվ Դումանը բոլորի ուշադրության կենտրոնում էր: Անձնուրաց այդ մարդու անունը հայերն արտասանում էին խորին երախտագիտությամբ, հպարտանում նրանով, նրա հետ կապում ազգամիջյան արյունահեղությունից դուրս գալու մեծ հույսեր: Այնպես որ Դումանին Արարատյան աշխարհի զինական ուժերի

գլխավոր հրամանատար նշանակելը բխում էր նահանգի ժողովրդական լայն զանգվածների սրտից:

Բաքվում գործն ավարտած համարելով և տեղեկանալով Երևան քաղաքի դեպքերին՝ Դումանը, Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի հրահանգով փետրվարի վերջին մեկնեց Թիֆլիս: Այնտեղ իրեն տված հանձնարարականը նա ընդունեց մեծ պատասխանատվությամբ և անմիջապես սկսեց կազմել նահանգի ինքնապաշտպանության ծրագիրը: Թիֆլիսից Դումանը մեկնեց Երևան և տեղ հասնելուն պես անցավ պարտականությունների կատարմանը: Առաջին գործը եղավ ինքնապաշտպանության իր ծրագիրը Հ.Յ. դաշնակցության Մրգաստանի (Երևանի) շրջանային ժողովում վավերացնել տալը, ծրագիր, որտեղ արտացոլված էին նաև նահանգի հայկական ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարի լիազորությունները:

Երևանի հայերը ուրախ էին և շոյված՝ իրենց առաջնորդ տեսնելով երկաթե կամքի տեր, վճռական ու քաջարի, իր ժողովրդի ապահովության համար մեռնելու պատրաստ անզուգական մարտիկին ու հրամանատարին:

Նույն ժամանակ Թիֆլիսից Շուշի մեկնեց Վարդանը: Հպարտ էին ղարաբաղցի հայերը, որոնց զավակներից մեկը՝ Դումանը, իր ձեռքն էր վերցրել Անդրկովկասի ամենահայաշատ ու վտանգված շրջանի՝ արարատյան հայության փրկության գործը, իսկ մյուսը՝ Վարդանը, եկել էր պաշտպանելու հարազատ լեռնաշխարհը:

Բաքվից ու Թիֆլիսից հայաբնակ վայրեր ուղարկվեցին զգալի թվով գործիչներ և մարտիկներ, որոնք Դումանի և Վարդանի ղեկավարությամբ պետք է գլխավորեին ինքնապաշտպանության գործը գավառներում, շրջաններում, գյուղերում:

Այսպես, Բաքվի փետրվարյան դեպքերից հետո, այնտեղից Երևան անցավ Թադևոս Ամիրյանը («Գիժ Թաթոս», «Դալի Թաթոս») և մասնակցեց Երևանյան նահանգի կռիվներին: Թիֆլիսից եկավ Արշալույս Աստվածատրյանը, Ղարաբաղից՝ Զոփուռ Արսենը, Բաքվից՝ խիզախ ու անձնազոհ Դաշնակցական Խեչոն, որը շուտով դառնալու էր արարատյան հայության ամենասիրելի ղեկավարներից մեկը և ընդհանուր հրամանատարի աջ թևը: Թիֆլիսից եկան Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովանյան) և Ռաշիդը, հին ու նոր ուրիշ խմբապետեր:

Բաքվից Շուշի՝ Վարդանի տրամադրության տակ ուղարկվեցին Քուրդ Արսենը, որը Ղարաբաղում մասնակցեց բազմաթիվ կռիվների և հայտնի դարձավ իր անձնվեր քաջություններով, ազգային գործիչ Արամայիսը (Միսակ Տեր-Դանիելյան), որը դաշնակցության մտավորական կարևոր դեմքերից մեկն էր և մնայուն հետք է թողել Ղարաբաղի ինքնապաշտպանության պատմության մեջ: Բաքվից Գանձակ անցավ Ղաչաղ Ասլանը, որը դարձավ Վարդանի

ալ թևը և շատ կռիվների մասնակցելուց հետո նահատակվեց Թուրքերի մի մեծ խմբի հետ ընդհարման ժամանակ:

Գանձակ անցավ նաև Աբրահամ Գյուլխանդանյանը՝ Բաքվի հայության փետրվարյան ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը, որը Վարդանի փաստացի օգնականն էր. Նրան հանձնարարվեց Գանձակ քաղաքի և գավառի հայության պաշտպանության կազմակերպումը:

Դաշնակցությունը Բաքվից գավառներ գործուղեց նաև ուրիշ ղեկավար գործիչներ ու շարքային անդամներ:

Գավառներ գործիչներ ու ռազմիկներ ուղարկելը դեռ բավական չէր: Առանց ժամանակ կորցնելու անհրաժեշտ էր ստեղծել ինքնապաշտպանական խմբեր, մարզել մարտիկներին և, որքան կարելի է, շուտ մտցնել կռիվների մեջ: Կարևորագույն խնդիր էր մարտիկների շարքերում և ազգային մարմինների գործունեության մեջ ամուր կարգապահության հաստատումը: Դրա կատարման համար ջանք չէին խնայում Դումանն ու Վարդանը: Երկուսից որևէ մեկի, տվյալ դեպքում Դումանի, օրինակով կարելի է ցույց տալ նրանց լարված գործունեության մի քանի կողմեր:

Դումանը ենթակաների նկատմամբ խիստ ու պահանջկոտ էր, անողոք՝ զինվորական կարգապահությունը խախտողների հանդեպ, բայց ըստ արժանվույն գնահատում էր խիզախ ու անձնազոհ մարտիկներին, նրանց պարտաճանաչությունն ու ազնվությունը: Թուլամորթներն ու վախկոտները նրա աչքին չէին երևում, իսկ դավաճանների վերջը մահապատիժ էր: Զուր չէ, որ Երևան գալու առաջին իսկ շաբաթներից Դումանը դարձավ նահանգի հայոց դիկտատորը:

Նիկոլ Դումանը Երևան քաղաքը բաժանեց մի քանի շրջանների և յուրաքանչյուրում նշանակեց շրջանապետ, որի գլխավոր պարտականությունը զինման գործը հսկելն էր և իրեն հանձնված տարածքի պաշտպանության կազմակերպումը:

Նահանգը նույնպես բաժանվեց շրջանների: Ամեն մի շրջանի գլուխ կանգնեց խմբապետը (զինվորական հրամանատարը)՝ նշանակված նահանգի հայկական ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի կողմից: Շրջանային զինվորական հրամանատարի կողքին գործում էր Հ.Ց.Դ. արևելյան բյուրոյի կամ Հ.Ց.Դ. համապատասխան կ.կոմիտեի կողմից նշանակված ինքնապաշտպանության լիազորը (շրջիկը), որն ուղղակի ենթակա էր բյուրոյին: Օրինակ՝ Շիրակի շրջանի ինքնապաշտպանության լիազոր էր նշանակվել Խանասորի արշավանքի մասնակից, դաշնակցական հայտնի գործիչ Արամայիս Ազնավուրյանը[1], որը մշտական կապի մեջ էր շրջանի զինվորական պետի հետ: Վերջինս, հաշվետու չլինելով նրան, կարևորագույն հարցերում խորհրդակցում էր նրա

[1] «Հայրենիք», N 2 (194), դեկտեմբեր, 1938, էջ 118:

հետ: Լիազորի պարտականությունների մեջ էին մտնում՝ կոմիտեների և ենթակոմիտեների հետ տեղական վարչական ու դատական խնդիրների լուծումը, զինվորական մարմիններին աջակցելը, կուսակցական և ինքնապաշտպանական տուրքերի հավաքմանը նպաստելը, զինվորական մարմնի կարգադրությունների, հատկապես զենք գնելու նպատակով ունևոր գյուղացիների վրա դրված պարտավորությունների անշեղ կատարումը հսկելը[1] և այլն:

Զինվորական շրջանն իր հերթին բաժանվում էր շրջանակների (ենթաշրջանների), որոնք կազմվում էին գյուղերի դասավորության և տեղի ռելիեֆի համեմատ: Շրջանակում զինվորականներից ընտրում էին երկու հոգի, որոնցից մեկը նշանակվում էր շրջանակի խմբապետ, իսկ մյուսը՝ նրա օգնական: Շրջանակի համար իբրև կենտրոն ընտրվում էր գյուղերից մեկը, ըստ որում գերադասվում էր այն գյուղը, որը գտնվում էր շրջանակի աշխարհագրական կենտրոնում:

Շրջանների և ենթաշրջանների զինվորական պետերի հիմնական պարտականությունը զինված ուժերի ստեղծումն էր: Դումանի և նրա մերձավոր զինակիցների գերմարդկային ջանքերով ամենակարճ ժամանակում Երևանի նահանգի հայկական մեծ ու փոքր բոլոր բնակավայրերում կազմակերպվեցին ինքնապաշտպանական խմբեր:

Տվյալ քաղաքի կամ գյուղի 18-55 տարեկան բոլոր հայ տղամարդիկ նախապես ցուցակագրվում էին, ըստ որում, հատուկ ուշադրության էին առնվում նրանք, ովքեր ծառայել էին ռուսական բանակում: Տեղական խմբերը երկու տեսակ էին՝ հետևակ ու ձիավոր: Դրանք ըստ նշանակության նույնպես բաժանվում էին երկու մասի՝ թռուցիկ (շարժական) ընդհանուր և մնայուն խմբերի: Դումանի հատուկ կարգադրության համաձայն, թռուցիկ խմբերը կազմվում էին 18-35 տարեկան երիտասարդներից[2]: Թռուցիկ խումբն ամեն րոպե պատրաստ պետք է լիներ վտանգի դեպքում մի գյուղից մյուսը կամ մի շրջանից մյուսն անցնելու: Այդ զինված խմբերի մեջ ընդգրկվում էին 35-55 տարեկանները: Այդ խումբը մնալով գյուղում տանում էր ինքնապաշտպանության գործը:

Գյուղերի զինված ուժերը բաժանվում էին տասնյակների, հիսնյակների և հարյուրակների, որոնք ունեին իրենց տասնապետերը, հիսունապետերը և հարյուրապետերը: Թռուցիկ խմբերը և խոշոր գյուղերի տեղական խմբերը բազմամարդ էին, իսկ փոքր բնակավայրերի պաշտպանության մնայուն ուժը հիմնականում տասնյակն էր՝ տասնապետով կամ քսանյակը՝ բաղկացած 20-30 հոգուց՝ քսանապետով[3]:

[1] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 46:
[2] Նույն տեղում:
[3] «Հայրենիք», N 2(194), դեկտեմբեր, 1938, էջ 118:

Խմբերի մարտիկները տեղացիներ էին, իսկ հրամանատար-խմբապետերի պատասխանատու պաշտոնները վարում էին ռուսական բանակում ծառայած առավել փորձված զինվորական գործիչներ՝ համաձայն իրենց ունեցած զինվորական աստիճանների: Դրանք հիմնականում դրսից եկածներ էին, որոնք նշանակվում էին միայն Դումանի երաշխավորությամբ կամ գիտությամբ: Դա արվում էր գիտակցաբար՝ հաշվի առնելով հայերի հոգեբանությունը, որոնք ավելի պատկառանքով են վերաբերվում և ավելի մեծ արժեք են տալիս դրսից եկածներին, քան իրենց տեղական գործիչներին, նույնիսկ եթե վերջիններս լինեն ավելի կարող ու գործունյա: Բայց խմբապետերը դուրս չէին հսկողությունից. Դումանը Երևանի ուսուցչական սեմինարիայից, թեմական դպրոցից, Էջմիածնի Գևորգյան ճեմարանից մի քանի տասնյակ ուսանողներ ուղարկեց շրջաններ՝ որպես կոմիսարներ, որոնք պիտի հսկեին խմբապետերի վրա, որպեսզի նրանք չխախտեին իրենց լիազորությունները:

Թե՛ թուրքիկ և թե՛ մնայուն տեղական խմբերը, քիչ բացառություններով, գործում էին ռուսական բանակի զինվորական կանոններով:

Զինյալ խմբերի մեջ ընդգրկված զինավարժ տղաներին տրվում էին տեղական սեփականություն հանդիսացող զենքեր: Դաշնակցական կազմակերպություններից ստացած փամփուշտները («կուսակցական փամփուշտներ») տրվում էին միայն թուրքիկ խմբերին, որոնք նորը ստանալու համար պարտավոր էին ներկայացնել կրակած փամփուշտների դատարկ պարկուճները:

Ոչ մեծ կռիվների ժամանակ առաջին հերթին գործի էին հանվում թուրքիկ ձիավոր և հետևակ խմբերը, իսկ պահանջված դեպքում շարժման մեջ էին դրվում զինվորական բոլոր ստորաբաժանումները:

Թշնամուն հարված տալուց հետո զինված ուժերը վերադառնում էին իրենց տեղերը և սպասում նոր հրահանգի:

Զինված խմբերի կազմակերպումը Դումանը համարում էր խնդրի միայն մի կողմը: Նա ավելի շատ ուշադրություն էր դարձնում մարտիկների բարոյահոգեբանական կոփվածքին, պահանջում էր վճռականապես վանել վախը հայերի հոգուց, հաղթահարել ազգը ստորացնող դարավոր նվնվոցը, մշտապես տրամադրվել հաղթանակի հավատով: Հրամանատարը գտնում էր, որ ամեն մի հայ մարդու մեջ պետք է ներարկել այն միտքը, որ ինքը խելքով, հնարամտությամբ, քաջությամբ ոչ միայն չի զիջում թուրքին, այլև այդ բոլոր հատկանիշներով բարձր է նրանից:

Դումանն անձամբ պարբերաբար ստուգայցի էր գնում զինված խմբերին, մարտիկների առջև դասախոսություններով հանդես էր գալիս ռազմագիտական թեմաներով, հատկապես բացատրում էր բնակավայրերում տեղի ունեցող ընդհարումների ընթացքում առավել արդյունավետությամբ կռվելու մեթոդները: Նա մարտիկներին մշտապես փոխանցում էր «թշնամու նկատմամբ անհապաղ փոխվրեժի դիմելու» և «մեկին տասով պատասխանելու» սկզբունքը:

Հայտնի դաշնակցական, զարաբաղցի զինվորական գործիչ Հովակ Ստեփանյանն իր «Նիկոլ Դուման» ուսումնասիրության մեջ նկարագրում է մի բնորոշ դեպք:

Դումանի կողմից Երևան քաղաքի պարետ նշանակված Մկոն օրերից մի օր Դումանին զեկուցում է, որ թուրքերը առևանգել են երեք ձկնորս հայերի: Դումանն անմիջապես հրահանգում է անհապաղ դիմել փոխվրեժի: «Մինչև միւս օրուան առաւօտ Դումանին զեկուցում են, որ արդէն 14 թուրք է առեւանգուած»[1]:

Գլխավոր հրամանատարը նահանգի մեծ թե փոքր ռուս պաշտոնյաների հետ խոսում էր ոչ թե համոզողի, այլ կարգադրողի լեզվով: Նույն հեղինակը պատմում է մի ուրիշ դեպքի մասին:

Եղել էր մի պահ, երբ Երևան քաղաքում թուրքերը նորից մտադրվել էին դիմել զենքի: Իմանալով այդ մասին՝ Դումանն իր ուժերին կարգադրել էր ցուցադրաբար զինված դուրս գալ քաղաքի փողոցները՝ հակառակորդին վախ ներշնչելու համար: Նահանգապետ Տիզենհաուզենը կարգադրել էր Քանաքեռից զորք փոխադրել Երևան՝ հայերին զինաթափելու նպատակով: Նիկոլ Դումանն իր ստորագրությամբ և դաշնակցության կնիքով դրոշմած նամակ է ուղարկում նահանգապետին և պահանջում փոխել արված կարգադրությունը՝ սպառնալով հակառակ դեպքում քաղաք մտնող զորամասին կոտորելու հրաման տալ իր ուժերին: Խելամտություն հանդես բերելով, Տիզենհաուզենը փոխում է իր կարգադրությունը: Նա քաջ գիտեր, որ դաշնակցությունը և նրա լրջմիտ հրամանատարը չեն կատակում և գիտեն կատարել իրենց խոսքը[2]:

Երևանյան նահանգում տեղի ունեցող իրադարձությունների օրերին Ալեքսանդրապոլում գտնվող Ավետիք Իսահակյանը ծանր մտորումների ազդեցության տակ սրտի մրմունջով գրում էր.

«Հազար տարինե՛ր և մինչև այսօր թաթարն է նստել մղձավանջի պես մեր կրծքի վրա, մեր շունչն է խլել: Հազար տարինե՛ր և մինչև այսօր լույսի, գեղեցկի և ճշմարտի համար արյուն ենք թափել, ներկել սա՛ր ու ձո՛ր: Հազար տարինե՛ր և մինչև այսօր մենք կոչ ենք արել մարդկության խղճին, բայց խիղճն է եղել քարի մի կտո՛ր: Եվ հոշոտվել ենք, այրվել ու մորթվել, բայց մեր հավիտյան նահատակությանը դեռ վախճան չկա՛... Անցե՛լ են դժվար ու դառն դարեր ազգերի գլխից, և օ՛րն է հասել բարվո, արդարի ու ազատության, բայց մեր երկնքում գիշեր է խավար, մեր հայրենիքում արյուն ու ավե՛ր: Եվ մենք կմեռնենք մեր տանջանքի հետ – ծանր տնքոցով մեր դարն էլ

---

[1] «Հայրենիք», N 7(91), մայիս, 1930, էջ 155:
[2] Նույն տեղում:

կանցնի. բայց վաղվա օրը – սերունդը գալիք՝ նորից պիտի տանջվի – մեզ նույնանման... Ա՛խ, մեր նահատակության վերջ-վախճան չկա՛»[1]:

Դումանը զայրույթով մերժում էր նման ամեն մի հոռետեսություն և շրջապատին կոչ էր անում վրա հասած այս պայքարում վերածնվել: Նա խմբերի հրամանատարներին և մարտիկներին մշտապես հիշեցնում էր, որ ինքնապաշտպանվելը միայն չի նշանակում կարողանալ արյունռուշտ ոհմակներին դիմադրել և պաշտպանվել: Ելնելով կոնկրետ իրադրությունից՝ խմբերը պետք դիմադրել և պաշտպանվել: Ելնելով կոնկրետ իրադրությունից՝ խմբերը պետք է նաև հարձակվեն, թուրքին ցույց տան, որ նրա հրոսակային ոչ մի հարձակում անպատասխան չի մնալու: Ընդհանուր հրամանատարը առիթը բաց չէր թողնում ասելու, որ Բաքվի համիսլամականների թշվառ խմբակին պետք է ցույց տալ, որ դյուրին բան չէ Կովկաս փոխադրել Էրզրումի կամ Ուրֆայի համիդավայել տեսարանները: Կատաղի ալիքներով եկող համիսլամական բարբարոսությունը պետք է ջախջախվի՝ բախվելով հայության կրծքին:

Երևանի նահանգում հայկական զինված ուժերի կազմավորումը Նիկոլ Դումանի՝ երկաթյա կամքի ու արտակարգ խելքի տեր այդ գործչի մեծագույն ծառայություններից մեկն էր: Իսկ ինչպիսի՜ ճշտությամբ էին կատարում նրա հրամանները հայոց անձնազոհ մարտիկները: Դումանից ակնածում և պատկառում էին ոչ միայն հայերը, այլև օտարազգիները: Նա Երևանի փողոցներում շրջում էր մաուզերը կողքից կախած, ազատ-համարձակ, և ռուս պաշտոնյաները, մեծից փոքրը, նրան անվանում էին հայոց զորահրամանատար:

ԱՐԵՎՄՏԱՀԱՑ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասահայության համար ծանր օրերին նրան եղբայրական օգնության ձեռք մեկնեցին արևմտահայ ազատագրական շարժման բազմաթիվ նշանավոր գործիչներ, նաև՝ քիչ հայտնի կամ մինչ այդ անհայտ զինյալներ:

Բաքվի փետրվարյան կոտորածների լուրը ցնցել և անհուն վիշտ էր պատճառել արևմտահայությանը: Ուրիշ կերպ չէր կարող լինել: Անկախ այն հանգամանքից, որ զուտ արյունակցական, ցեղային համերաշխության հզոր, անշրջելի կապերի պատճառով հայության մի մասի աղետը չէր կարող ընդհանուր հայության կսկիծ չդառնալ, նաև կար մի ուրիշ կարևոր իրողություն: Դա այն դերն էր, որ Կովկասի հայերը կատարում էին համայն հայության կյանքում:

Ինչ թուրքահայը այդ պահին զգում էր ռուսահայ եղբայրների ու քույրերի արյանն ու արցունքին ի տես՝ ազգակցի սովորական ու բնական կսկիծ չէր միայն, այլ շատ ավելի հոգեբուխ, շատ ավելի խոր ու հորդ վշտակցություն:

Ավելի քան մեկուկես տասնամյակ էր, որ կովկասահայությունն իր սրտի ալեբախումներով օգնության էր գնում արևմտահայությանը, նրան աջակցում ինչով կարողանում էր՝ դրամով, զենքով, մարդկային ուժով: Որքա՜ն կովկասահայ երիտասարդներ իրենց կյանքը կամավոր զոհաբերեցին արևմտահայ ազգակիցների փրկության ճանապարհին:

1889 թվականին Վան քաղաքի մերձակայքի Զոհուր Գյադուկ կոչվող ձորակում տեղի ունեցավ մի դեպք, որն ընդունված է համարել արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարի սկիզբ: Երեք զինված հայ երիտասարդներ՝ Թիֆլիսեցի Վարդան Գոլոշյանը, վանեցի Ագրիպասյանը և Կարապետ Գուլաքսզյանն այդ վայրում կռվի մեջ մտան թուրքական ոստիկանության հետ: Առաջին երկուսը սպանվեցին, վերջինը՝ փախուստով փրկվեց: Գոլոշյանը կովկասահայ առաջին երիտասարդն էր, որ իր մատաղ կյանքը զոհաբերեց թուրքահայ ժողովրդի ազատագրության գործին:

Այդ դեպքից շատ չանցած, 1890 թվականին, Սարգիս Կուկունյանի գլխավորությամբ տեղի ունեցավ կովկասահայ երիտասարդներից կազմված առաջին արշավախմբի անցումը ռուս-թուրքական սահմանը, որի նպատակն էր մտնել Երկիր և պաշտպան կանգնել հալածական հայ բնակչությանը: Թեև արշավախումբը հաջողություն չունեցավ, բայց Կովկասի հայ երիտասարդության շրջանում սկիզբ դրեց «դեպի Երկիր» շարժմանը:

Ռուսապատկան Երևանի ու Կարսի շրջաններում, ինչպես և դրկից պարսկական Ատրպատականում էին կազմակերպվել այն հայդուկային խմբերը, որոնք գնում էին Արևմտահայաստան՝ Բասեն, Ալաշկերտ, Վան ու Սասուն: Խմբերից ժամանակագրորեն առաջինը, որ 1894թ. հոկտեմբերի 27-ին Սալմաստից մեկնեց Վան, իր 12 հոգանոց կազմի մեջ կես առ կես ուներ թուրքահայ և ռուսահայ ուխտյալ մարտիկներ: 1897-ի հուլիսին խանասորյան արշավանքի գնացած զինախմբի շուրջ 220 երիտասարդների կեսից ավելին ռուսահայեր էին:

Խանասորի արշավանքի հետևանքով դեպի թուրքահայ հեղափոխություն եկավ գաղափարական և ռազմական զինվորների մի ստվար բազմություն: Ինչ վերաբերում է խանասորյան մարտիկներին, ապա նրանք արշավանքից հետո շարունակեցին մնալ քաղաքական ոլորտում, գործուն մասնակցություն ունեցան հեղափոխական և այլ ձեռնարկների՝ իբրև կռվող կամ ահաբեկիչ: Արշավանքից հետո եկած ավելի քան մեկ տասնամյակում գրեթե չի եղել մի հայդուկային կռիվ, ուր կարևոր չափով մասնակցած չլիներ Խանասորի մարզարանից ելած այս կամ այն մարտիկը: Այդ ամենի հետևանքով ստեղծվեց խանասորյան սերունդ, որն ունեցավ իր ուրույն հոգեբանությունը և իր նկարագիրը, արժեքներ, որոնք կերտվում էին կենդանի գործերով:

[1] «Վերածնված Հայաստան» հանդես, N 4, 1990, էջ 15:

Եկավ մի նոր շրջափուլ, և հայոց ազատագրական շարժումը հրապարակ բերեց հեղափոխական մի նոր սերունդ՝ Սասնո սերունդը:

Սասունը 1904 թ. կրակների մեջ էր: Ապստամբ սասունցիներին օգնության էին գնացել երևանցի, ալեքսանդրապոլցի, ղազախեցի, շուշեցի, նորբայազետցի և Ռուսահայաստանի այլ գավառների երիտասարդներ, որոնք թշնամու դեմ կռվում էին մշեցի, վանեցի, խնուսցի, էրզրումցի հայդուկների հետ կողք կողքի: Ուրիշ հարյուրավոր զինյալ երիտասարդներ, Սասունին օգնելու նպատակով ռուս-թուրքական սահմանն անցնելիս, ենթարկվել էին երկու երկրների սահմանապահ զորամասերի հարձակումներին և, մեծ կորուստներ տալով, նահանջել: Ի վերջո, ապստամբ Սասունի կռիվները վերջացել էին հայերի պարտությամբ: Այլ կերպ էլ չէր կարող լինել. մի բուռ քաջեր, պարզած ըմբոստության դրոշ, բայց կտրված և լքված դրսի աշխարհից, ծայրաստիճան նեղված ռազմամթերքի պակասից, ստիպված էին ճակատել թնդանոթներով զինված թուրքական կանոնավոր բանակների ու բազմահազար քրդերի դեմ:

Պարտությունից հետո կենդանի մնացած թուրքահայ ու կովկասահայ մարտիկները Սասունից նահանջել էին Աղթամար ու Վան, ապա նորից բարձրացել Դուրան-Բարձրավանդակի լեռները՝ շարունակելով դաժան ու անհավասար կռիվը ոխերիմ թշնամու դեմ: Մյուսները Վասպուրական-Սալմաստ գծով մաս-մաս անցել էին Կովկաս: Ճի՛շտ Կովկասում թուրք-հայկական բախումների նախօրյակին նրանց շարքերը գնալով խտացել էին Սասուն-Տարոնից եկած նորանոր մարտիկների հաշվին:

Այդ ամենը տարիների ընթացքում արևմտահայ մարտիկների ու բնակչության լայն խավերի մեջ առաջ էր բերել երախտագիտության խոր զգացում կովկասահայության նկատմամբ: Այդ զգայացունց երևույթի լուսաբանմանն էր նվիրված «Ռազմիկ» (Բուլղարիա) թերթի առաջնորդող հոդվածը, որը պատկանում էր թերթի խմբագիր, դաշնակցական նշանավոր գործիչ Ռուբեն Զարդարյանի գրչին: Հոդվածագիրը գրում էր.

«Կովկասահայը» դեռ շատ կանուխ, մեր մտավորական զարթնումին գրգիռավոր դրդիչն ու բարոյական, նյութական քաջալերն եղավ: Միացեալ ընկերութեան հազարավոր ռուբլիները ինքը տուավ, Հայաստանի սովին ատեն ինքը խրկեց մեր հացը, Սանասարեան վարժարանը իրմով բացուեցավ Կարնոյ մեջ, ինք ճամփեց մեզի տիկին Մատակեանը, որ մանկավարժական սկզբունքներն ընդհանրացնողն եղավ Պոլիս ու գավառները, Բաֆֆին ու Քամառ-Քաթիպան էին, որ թրքահայ երիտասարդութեան աչքերուն առջև նշուլեցին ազատութեան առաջին առավոտը, վերջապես մեր մտավոր ու բարոյական աստիճանական վերածնութեան բոլոր այլազան ու բազմաձև շարժումներուն մեջ ռուսահային եղբայրական բարերար ձեռքը երևեցավ միշտ: Հասան կռվի ու արյունի օրերը. նույն ձեռքին հետ ահա կուրծքն ալ, որ շիտակ կանգնեցավ թշնամիին սուրին ու գնդակին առջև: Մեզի հետ կուշտ կուշտի պայքարեցավ, մեզի հետ վիրավորուեցավ ու մեզի հետ մեռավ կռվի դաշտին վրա՝ երբ մեռնիլ հարկ էր»[1]:

Միասնական պատմական բախտի և ազգի երկու՝ միևնույն դատի տեր հատվածները կովկասյան դեպքերն ընկալում էին նույն զգացումներով: Ահա թե ինչու Սասնո սերունդը չէր կարող անտարբեր դիտողի դերում լինել թուրք-հայկական կոտորածների մեջ ներքաշված կովկասահայության ճակատագրի հանդեպ, չէր կարող հանգիստ դիտել, թե ինչպես են իրենց արյունակից եղբայրներին ու քույրերին կողոպուտի և սպանությունների ենթարկում թուրքական ցեղերից մեկի հորդաները: «Հայությունը մե՛կ է, - ասում էր Անդրանիկը, - ըլլայ Կովկաս թե Տաճկահայաստան, և, հետևապես, ազգային շահերնիս ալ մեկ: Ազգային վտանգն ուր որ ծայր տա՝ ամեն հայու պարտականությունն է փութալ դեպի վտանգը, ինչով, ինչ միջոցով որ կարող է»[2]:

Սասնո սերնդի ներկայացուցիչները նաև քաջ գիտակցում էին, որ եթե Կովկասում ծայր առած թուրք-հայկական առճակատման ընթացքում հայերը պարտություն կրեն, ապա դա կարող է կործանարար լինել արևմտահայ ազատագրական պայքարի համար:

Ռուբեն Զարդարյանի վերոհիշյալ հոդվածում կարդում ենք. «Մեր, թուրքահայերուս, վիշտն ու տրտմությունը կրկնապես դառն է, անոր համար, որ կովկասեան այս արյունահեղություններուն վրա երբ կը ծռինք՝ մե՛ր իսկ ճակատագրին սևությունը կը տեսնինք հոն նորեն»:Նա համոզված էր, որ Թուրքիան ցարական միապետությունից ոչ պակաս շահագրգռություն է հանդես բերում Կովկասի հայ-թուրքական ջարդերում: «Սուլթանը համիսլամական գաղափարի պատրվակին տակ՝ բաղդատաբար ավելի բարգավաճ ռուսահայը հարուածելով, զայն տնտեսական տագնապի, անհանգստութեան, թշուառութեան ենթարկելով, ռուսահային շուրջ կարմիր արհավիրք ցանելով՝ կուզե ստիպել զայն, որ իր տունը հրդեհը մարելու զբաղի, մնա ծուխի մեջ և մոռանայ թուրքահայուն ազատագրական գործը: Խանձողը՝ որ Սուլթանը հեռուեն կերկնցնե Կովկասի ու կրակ կուտայ անոր՝ միայն մեր եղբայրներուն տունն ու տեղը չէ որ կվառե, այլ ամենեն ավելի մերը, թուրքահայերունը:

Ավելին կայ. դիվային քաղաքագիտութեան ծրագիր մը չէ գործադրուածը լոկ, այլ վրեժխնդրութեան, հաշուեյարդարություն մըն ալ»[3]:

Եվ տաճկահայ մարտիկները օգնության փութացին իրենց ռուսահայ եղբայրներին:

---

[1] Մեջբերված է «Մշակից», N 227, 15 նոյեմբերի 1905թ.:
[2] «Ռազմիկ» (Ֆիլիպե), N 93, 20 սեպտեմբերի 1906թ.:
[3] «Մշակ», N 227, 15 նոյեմբերի 1905թ.:

Նրանցից մեկը Մշո Ալվառինջ գյուղացի, Անդրանիկի քաջ ֆիդայիներից Սեյդո Պողոսն էր: Վահան Փափազյանը (Կոմս) մեզ է փոխանցել կովկասահայ եղբայրներին սատար կանգնելու բուռն ցանկությամբ համակված այդ խոնարհ հերոսի հոգեկան խռովքները.

«Սեյտոն անհանգիստ, կարծես փուշերու վրայ նստած ըլլար: Կովկասեան կռիվներու լուրերը Վան հասան: «Հա՛յտա, ճամբեք ընծի տղեքներու խեչ, ինոնք խայ քրիստոնեայ ուղուրին կը կռուին, արին թափեն, էս լե խանգիստ նստիմ Վանա ջեօջ աղաներու խեչ ... Աստոծ կապուլ կենէ՞ ...»:

Եկաւ շատ պնդեց. հանգիստ չթողուց. հարկադրուած ճամբեցինք Կովկաս»[1]:

Ընդհանուր առմամբ Երևանի նահանգ թափանցեցին արևմտահայ զինյալների 17 խմբեր, որոնց մեջ էին ինչպես թուրքահայ մեծանուն ռազմիկներից շատերը, այնպես էլ առաջին անգամ զենք վերցրած երիտասարդներ: Արևելահայերի համար մի բարեբաստիկ զուգադիպություն էր, որ սասունցիները, խնուսցիները, վանեցիները, խլաթցիները Կովկաս հասան այստեղ թուրքահայկական կոտորածների բռնկման պահին: Անվանի ռազմիկներն իրենց հետ Կովկաս բերեցին, անհատական քաջությունից ու փորձառությունից բացի, մի չքեղ նկարագիր, որ նրանք վաստակել էին նախորդ տարիների դյուցազնական սխրանքներով: Վահագնատիպ այդ այրերի անունների հիշատակումն անգամ պատկերացում էր ստեղծում, թե Կովկասում ովքեր էին ներկայացնում Սասնո հերոսական սերունդը. Սեբաստացի Մուրադ, Արշակ Գաֆավյան (Քեռի, Էրզրումցի Արշակ, Քավթառ Արշակ), Տիգրան Աբաջյան (Կայծակ Առաքել),Գյումիշխանեցի Ավետիս, Գոմսա Իսո (Կորյուն), Արշակ Ներսիսյան (Բաբերդցի Սեպուհ), Կոփեցի Մուշեղ, Սեյդո Պողոս, խլաթցի Առյուծ Ավագ, Հակոբ Կոտոյան (Կոտոյի Հաջի), Բերդակցի Օսկան, Կոփեցի Կնեազ, Մոկացի Խեչո, Խլաթցի Գալո, Սորփեցի Գուրգեն, մշեցիներ Ավո, Միսաք, Հարութ, Բուլղարացի Պետո, Վարժապետ, Ղասաբ Արամ և շատ ուրիշներ:

Գալով Երևան՝ նրանք ներկայանում էին Նիկոլ Դումանին և ստանում իրենց անելիքների հանձնարարականը: Արևմտահայ մեծանուն ռազմիկներից շատերին Նիկոլն անձամբ գիտեր, քաջածանոթ էր նրանց կռիվների դրվագներին: Նա գտնում էր, որ արևմտահայ զինյալները չպետք է գործեն արևելահայ ինքնապաշտպանական խմբերից զատ, այլ պետք է ձուլվեն վերջիններիս: Դա թելադրված էր ոչ միայն նույն ազգի զավակներ լինելու հանգամանքով, այլև նրանով, որ արևմտահայ հայդուկները թրծված էին բազում կռիվներում, հերոսության և անձնազոհության մարմնացում էին, և նրանց անձնական հատկանիշների ու փորձի փոխանցումը անգնահատելի նշանակություն կունենար արևելահայ մարտիկների հոգեբանական վերափոխման համար: Մյուս կողմից,

[1] Կոմս, Խոնարհ հերոսներ, գիրք Դ, տպ. Մշակ, Պեյրութ, 1966, էջ 63:

գործի շահերը պահանջում էին, որ ազատասեր ու ինքնագլուխ հայդուկներն անառարկելիորեն ենթարկվեին հրամանատարների կարգադրություններին, համակերպվեին ռուսական բանակում ընդունված ռազմական կարգապահական նորմերին, քանի որ կովկասահայ կռվող երիտասարդների զգալի մասն անցել էր ռուսական ռազմական արվեստի դպրոցը: Արևմտահայ ռազմիկների համար ամենադժվարը հենց ռազմական ամուր կարգապահությանը ենթարկվելն էր: Նրանք, որ երկրում զենք էին վերցրել և օսմանյան բանակներին կուրծք էին տվել հոգու կանչով, այժմ ակամայից ստիպված էին ենթարկվել Նիկոլ Դումանի պահանջին, թեև այնպես էլ մինչև վերջ չհարմարվեցին իրենց համար խորթ կարգապահական կանոններին. նրանց մեծ մասի դժգոհությունը հենց դրանից էր:

Դրոն իր հուշերից մեկում գրել է. «Հետաքրքրական էր լսել մեր աչքառու հայդուկների կարծիքը Դումանի կարգադրությունների մասին: Օրինակ, Բերդակցի Օսկանը, Կոփեցի Կնեազը, Մոկացի Խեչոն, Խլաթցի Գալոն անսահման արհամարհանքով էին նայում ռուսական ծառայությունն անցած զինվորների վրա և հաճախ կես-լուրջ, կես-կատակ զանգատվում էին. «Տո՛, պարոն Դերո*, էդա մըր պարոն Դուման ի՞նչ ի մոգոնի. սալդա՞թ պտի կազմակերպես, զոռով շարք մտցնես – կռի՞վ պտի քշես: Էնոր էրած կռիվ ի՞նչ կեղնի: Դաշնակցութեան զինուոր իր խեր, մեր մոռցած մարդ ի՝ ազգի սիրուն մեկ ուտ հոս, մեկ ուտ հոն, գիշեր-ցերեկ սար ու ձոր մացած՝ ինոր բան ուրիշ ի. էդա զինուորներ իրենց օլուխ-չոլուխի կշտին՝ էտոնք ի՞նչ պտի կռվին: Տո, վալլահ, մեր պարոն Դումանի բաներ օյին ի, օյին...»:

Տղաներն այսպես հաճախ քննադատում էին ու հեգնում դրանով, մի տեսակ, բավարարելով իրենց՝ հայդուկի վիրավորված ինքնասիրությունը: Անխառն հաճույք էր լսել մեր այս լեռնական, պարզ ու անգրագետ մարտիկների անսեթևեթ խոսքերով արտահայտված հուզմունքն ու զարմանքը...»[1]:

Մշտապես ռազմական կարգապահությունից խուսափելու ձգտում ունենալով՝ հայդուկները, սակայն, այդ բացը տասնապատիկ փոխհատուցում էին կռիվներում ցուցաբերած անձնազոհ խիզախությամբ և աներևակայելի հանդգնությամբ:

Որոշ ժամանակ Երևանում մնալուց հետո Կովկաս եկած արևմտահայ ռազմիկներն իրենց իսկ պահանջով ցրվեցին Երևանի և Գանձակի նահանգներում նետվելով ամենավտանգավոր տեղերը: Թուրք հրոսակների դեմ նրանց մղած կռիվներին մենք դեռ կանդրադառնանք աշխատության համապատասխան էջերում, իսկ այժմ համառոտ թվարկենք առավել մեծանուն ռազմիկների գործերը:

* «Դերո» - անձնանվան արևմտահայերեն տառադարձությունը:
[1] «Վէմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 45- 46:

Նուշիում հաստատված մինչ այդ անհայտ վանեցի ոսկերիչ Համազասպ Սրվանձտյանն իր կտրիճներով կուրծք էր տալիս դաշտաբնակ Թուրքերի հազարավոր ամբոխի դեմ արգելելով նրա մուտքը Լեռնային Ղարաբաղ: Զուր չէ, որ Ղարաբաղը երգեր հյուսեց Ասկերանի պատմական կռվի այդ քաջազուն հերոսին, հպարտացավ, որ իր կողքին է «Համազասպը պանծալի»: Թիֆլիսի հայության ինքնապաշտպանության գլուխ կանգնեց Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), աննման Քեռին պաշտպան կանգնեց Սիսիանին, Սեբաստացի Մուրադը ցաքուցրիվ արեց Թուրք և քուրդ ավազակախմբերը Զանգեզուրում և նույնպես արժանացավ ժողովրդի կողմից իրեն ձոնած դյուցազներգական երգերի: Շարուրի շրջան անցած Սեյդոն, այդ անօրինակ կռվողը, տեղական ուժերով օրհասական մարտեր վարեց Թուրք հորդաների դեմ, Ասլանը Թշնամու դեմ կռիվներ մղեց Նախիջևանում և այստեղ էլ հերոսաբար նահատակվեց. Դարալագյազում ինքնապաշտպանության ղեկը ստանձնեցին տարոնցի Հաջի Հակոբ Կոտոյանը (Հաջի Կոտո) և Առյուծ Ավագը, Խլաթցի Գալոն կռվում էր Լեռնային Նախիջևանի շրջանում և այլն: Տարբեր գավառներ մեկնեցին նաև հայդուկային կռիվների հին փորձառուներ Կայծակ Առաքելը, Կորյունը, Ավոն, Սեպուհը, Ղասաբ Արամը, Սորփեցի Գուրգենը, Հաջի Գևոն, Վարժապետը, Կոփեցի Մուշեղը և ուրիշներ: Նրանց մի մասը երկար ժամանակ մնում էր նույն տեղում (Մուրադ, Համազասպ, Քեռի, Սեյտո և այլոք), մյուսները մի գավառում կռվելուց հետո տեղափոխվում էին մի ուրիշ տեղ (Առյուծ Ավագ, Ավո, Կայծակ Առաքել և այլոք):

Կովկաս եկած Թուրքահայերից շատերը, ձուլվելով տեղի զինված խմբերի մեջ, ստանձնում էին միացյալ խմբերի հրամանատարությունը: Այսպես, Նիկոլ Դումանի հրամանով Սեբաստացի Մուրադը Զանգեզուրում իր մարտիկներով միացավ Ռաշիդի խմբին և ստանձնեց ընդհանուր խմբապետությունը: Դումանը նրան օգնության ուղարկեց Դաշնակցական խեչոյին՝ զինված հայգուկներով: Երևան քաղաքից խմբին միացան նաև սեփական զենքերով զինված Չինգ մարտիկ:

Նույնպիսի վերադասավորումներ էին կատարվում նաև մարտական ուրիշ խմբերում:

Կովկասյան Թուրք հրոսակների դեմ կռիվներին արևմտահայ զինյալների մասնակցությունը հպարտության զգացում էր առաջ բերում Թուրքիայի և գաղութների հայերի սրտում, նրանց օգնելու պատրաստակամություն էր հայտնվում ամենուրեք: Գաղութահայ թերթերն օրն օրին լուրեր էին տպագրում հայ մարտիկների տարած հաղթանակների մասին, բարձրացնում ընթերցողների տրամադրությունը, պարբերաբար հրավիրվող ժողովներում հաղորդումներ էին լսվում կովկասյան դեպքերի մասին, կազմակերպվում էին գրամահավաքներ և այլն:

Այսպես, Նյու Յորքի հայ եկեղեցու հոգաբարձության հրավերով քաղաքի հեղափոխական և կրթական մարմինները կազմակերպել էին միացյալ հրապարակային ժողով, որից հետո Կովկասում կռվող արևմտահայ մարտիկներին օգնելու նպատակով հանգանակվել էր այն օրերի համար մի բավական մեծ գումար՝ 525 դոլար[1]:

Հ.Յ.Դ. Ամերիկայի կենտրոնական կոմիտեն, ընդառաջ գնալով ժողովրդական և հեղափոխական շարքերի տրամադրություններին, մի ուրիշ բազմամարդ ժողով էր հրավիրել, որտեղ ընդունվել էր ազգային մյուս կուսակցություններին ուղղված դիմում, ուր կոչ էր արվում հավաքական ներդաշնակ շարժումով շոշափելի օգնություն հասցնել Կովկասում կռվողներին[2]:

«Այդ օրերին աւելի քան երբ և իցե ռուսահայ ժողովուրդը զգաց, որ հայութիւնը՝ իբրև օրգանական ամբողջություն՝ մի սիրտ եւ մի հոգի ունի»[3], - գրում էր Արշակ Զամայյանը (Խահակյան):

ՆՈՐ ՎՏԱՆԳԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԲԱՔՎՈՒՄ

Իսկ Բաքվում շարունակվում էր Թուրքերի անհանգստությունը, շարունակվում էին դուրս հորդալ քաղաքում եռացող թշնամական կրքերը, որոնք 1905թ. մարտի 22-ին հանգեցրին վտանգավոր բռնկման:

Հայերը բոլորովին շվարած էին, երբ թերթերից իմացան, որ Բաքվում նորից են սպանում, բայց մտածում էին, թե միգուցե պատահածը թյուրիմացության արդյունք է, որ մարդասպանները նորից մոլորության մեջ են ընկել և չեն գիտակցել իրենց արածների եղկելիությունը և որ, զգալով գործած նոր ոճրի ողջ ծանրությունը, վերջնականապես հետ կքաշվեն զազիր գործերից: Կային նաև միամիտներ, որոնք կարծում էին, թե Բաքվի մարտյան դեպքը, իր չափազանց անմիտ և անհեթեթ էությամբ, կարող է նույնիսկ մի խրատական դաս լինել հայերի և Թուրքերի համար, որ այն կօգնի հեռացնելու գժտությունը հարևանների միջավայրից: Շատերը նույնիսկ տրամադիր էին ներել Թուրք ելուզակներին: Բայց լավատեսական ամեն տրամադրություն խարսխված էր ավազի վրա: Հայերին վիճակված էր ապրելու ծանր ու աղեկտուր խոր հիասթափություն: Խաղաղությունը քաղաքում, տարաբախտաբար, դեռ շատ հեռու էր: Հայերի Հաշտության ձգտումը կրկին դրվել էր ուղի տակ, ավերվել էին երեկվա հարևաններին միացնող նոր կամուրջները, և դա պատահական չէր: Թեև փետրվարյան կոտորածներից հետո խաղաղության մասին բազում հավաստիացումներ և երդումներ էին եղել, բայց Բաքվում այնպես էլ չէր ստեղծվել ամենափոքր իսկ վստահություն միմյանց

[1] «Հայրենիք», N 7, մայիս, 1923, էջ 12:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, N 12(108), հոկտեմբեր, 1931, էջ 105:

նկատմամբ՝ ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի մոտ: Երկու կողմերից չկար վստահություն նաև «կարգի պահպանների» նկատմամբ: Այդ պայմաններում ամենափոքր իսկ դեպքը կարող էր առաջ բերել նոր պայթյուն:

Վերջապես, ի՞նչ էր պատահել 1905թ. մարտի 22-ին:

Այդ օրը երկու հայ երիտասարդներ հանգստանում էին քաղաքային այգում: Ժամը 2-ին հանկարծ հայտնվում է պրիստավ Մամեդբեկովը՝ իր հետ ունենալով մի քանի ոստիկան և 10-15 թուրք երիտասարդ: Նա հայ տղաներին հրամայում է հետևել իրեն՝ գնալու ոստիկանատուն: Տղաներն առանց դիմադրության հետևում են նրան՝ շրջապատված հանկարծ հայտնված գազազած թուրք ամբոխով: Նույն միջոցին այգու մյուս ծայրում ուրիշ ոստիկաններ և թուրքերի մի ուրիշ խումբ բռնում են ևս երկու հայի և դարձյալ առաջնորդում ոստիկանատուն: Երբ բռնված և ոստիկաններով շրջապատված չորս հայ երիտասարդները մոտենում են ոստիկանատանը, հետևից եկող թուրքերը սկսում են կրակել նրանց վրա՝ վիրավորելով երեքին: Ջորրորդը փախչում է, և ոստիկաններն ու թուրք ամբոխը գոռում-գոչյունով ու ատրճանակներից կրակելով ընկնում են փախչողի հետևից, որը, պաշտպանվելով, ատրճանակով ընթացքից վիրավորում է ոստիկաններից մեկին: Վերջապես հետապնդողները հասնում են երիտասարդին և նրան սպանում ծովեզերքին:

Հաջորդ վայրկյանին նույն թուրք ամբոխը ցրվում է քաղաքի զանազան մասերը և սադրիչ լուր տարածում, թե չորս հայ փորձ են արել սպանել պրիստավ Մամեդբեկովին, թե նա ծանր վիրավորված է, որ հայերից մեկը սպանված է, իսկ մնացած երեքը՝ վիրավորված: Սադրիչ թուրքերը խումբ առ խումբ վազվզում էին քաղաքի զանազան մասերում և իրենց հավատակիցներին ստիպում փակել խանութները: Ամեն մարդ դեպի տուն էր փախչում: Այնպես որ՝ կեսօրից հետո, ժամը 3-ից սկսած, Բաքուն նորից կանգնեց պատերազմական ընդհարման եզրին: Միայն վրա հասած գիշերային խավարը փրկեց դրությունը՝ մեռելային լռության տակ ծածկելով սարսափահար քաղաքը[1]:

Հաջորդ օրը ոստիկանությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով ոչ թե հանգստության էր կոչում բնակչությանը, այլ հերթական անգամ մեղադրում էր հայերին: Իրենց հերթին թուրքերը ողջունեցին ոստիկանության այդ հայտարարությունը և երդվեցին մինչև վերջ մնալ գահի հավատարիմ հպատակներ:

Երկու օր հետո թուրքերի անունից քաղաքում տարածվեց հայերին ուղղված մի թռուցիկ, որն, անշուշտ, գրվել էր ոստիկանության կողմից՝ թուրք ղեկավարների գիտությամբ և համաձայնությամբ: Ահա թռուցիկի տեքստը .

«Հայե՛ր, մեր թանկագին հայրենիքի քաղաքացինե՛ր:

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 17, ց. 1, գ. 383, թ. 5:

Դիմում ենք ձեզ և խնդրում, ի սեր Քրիստոսի, հանգստացեք, ուշքի եկեք, հեռատես եղեք, հիշեցեք ապագա դժբախտությունները՝ այն դեպքում, եթե շարունակվեն ձեր անցյալի արարքները: Հարձակում մի՛ գործեք ոստիկանների և մեր թուրքերի պարագլուխների վրա: Խղճացե՛ք անպաշտպան ծերերին, կանանց և երեխաներին, որոնք ձեր ստոր ձգտումների զոհ պիտի դառնան: Եթե դուք հարձակվեք մեր թուրքերից որևէ մեկի վրա, ինչպես դուք այդ արեցիք այս օրերս, այն ժամանակ երդվում ենք Աստծով, բոլոր հայերը կոտորածի կենթարկվեն: Վերջ տվեք ձեր սոցիալ-դեմոկրատական շարժումներին, հանգիստ թողեք և՛ ոստիկանությանը, և՛ մեզ՝ թուրքերիս: Այնուամենայնիվ, մենք հավատացած ենք, որ ձեր մեջ կը գտնվեն բարեմիտներ, որոնք գիտակցում են այն, ինչ մեզանից պահանջում է, այսօրինակ պարագաներում, մեր սրբազան կրոնը:

Բաքվի մահմեդականներ:

1905, մարտի 25

Բաքու»[1]:

Մեկնաբանությունների կարիք չկա:

Մարտի 22-ի դեպքը բարեբախտաբար շարունակություն չունեցավ, թեև երկու կողմերում մոխրի տակ անթեղված վրեժխնդրության կրակը վաղ թե ուշ նորից պիտի ժայթքեր: Եվ կժայթքեր նրանց գլխին, ովքեր անզեն էին:

Հենց 1903թ. մարտ ամիսն էր, որ թուրք-հայկական կոտորածների հարցում հնչակյան կուսակցության շարքերում առաջ եկավ արմատական բեկում:

Եթե փետրվարին հնչակյաններն ազդարարել էին, թե իրենք երբեք չեն մասնակցելու «եղբայրասպան կռվին», ապա մարտի 7-ին կուսակցության Բաքվի հնչակյան մասնաճյուղի կենտրոնական վարչությունը կուսակցության ռուսական և կովկասյան գործադիր կոմիտեին ուղարկած N1 շրջաբերականում առաջ էր քաշում Բաքվի և Անդրկովկասի հայ բնակչությանը զինելու պահանջը և այդ ուղղությամբ Հ.Յ. դաշնակցության հետ համագործակցելու գաղափարը: Շրջաբերականում ասված էր.

«Քանի որ ստիպված ենք զենքի դիմել՝ թե՛ ինքնապաշտպանության և թե՛ ընդհանուր ապստամբության համար, նորից չեշտում ենք **ընկերների զինումը**՝ եթե կարելի է այդ անել իրենց սեփական միջոցներով: Միևնույն ժամանակ նրանք պետք է ամեն կերպ աշխատեն լավ հրացաններ և ամեն տեսակի ռազմամթերք ձեռք բերել ու մասնավոր պահեստներում ամբարել, որպեսզի կռվի ժամանակ հնարավոր լինի անզեն ընկերներին զինել և կռվի դաշտ հանել: Կռվի կանոնավոր ընթացքի համար ստեղծել զուտ **զինվորական կազմակերպություն** և նշանակել կարող ու փորձառու ընկերներից ընդհանուր հրա-

[1] «Դրոշակ», N 5(158), մայիս, 1905, էջ 79:

մանատար՝ յուր օգնականներով: Ուսումնասիրել կարևոր դիրքերը և մշակել պլանը, որ յուրաքանչյուր կարող ի՛ հարկին յուր դիրքը բռնի»[1]:

Գնալով հնչակի դիրքորոշումը ավելի հաստատուն էր դառնում: Կուսակցության նոր օրգան «Ապագան», որը սոցիալիստական գաղափարների ակտիվ պրոպագանդիստ էր, Թուրք-հայկական կոտորածների հարցում ակնհայտորեն դրսևորում էր ազգայնական մոտեցում: «Զգույշ եղեք: Ոսպեն վերին աստիճանի հոգեբանական է» խմբագրականում Թերթը գրում էր, որ հայերի դեմ ցարիզմն է գաղտնի գրգռում մուսուլմաններին: «Մարդասպա՜ն այդ մուսուլմանն՝ը ... Ողորմելի և վայրենի տգետներ, որոնք այսօր մահաբեր գործիք են ցարիզմի ձեռքին ...»[2]:

Փափագելի էր, իհարկե, որ Թուրք ամբոխի գիտակցության խավարումը լիներ ժամանակավոր ու վաղանցիկ, բայց դեպքերը ցույց էին տալիս, որ այդ գիտակցությունը պարզվելու նշաններ չունի: Միակ ելքը Թուրք ամբոխին ուժով գիտակցության բերելն էր: Եվ դաշնակցությունը ստիպված էր ժողովրդին կոչ հղել՝ զենքին պատասխանել զենքով, կռվին՝ կռվով:

ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ամեն ինչից երևում էր, որ ուր որ է Անդրկովկասի մի տարածքում նոր արյունահեղություն է լինելու՝ գուցե ավելի ծավալուն և ավելի սարսափազդու: Նման խոր մտահոգությամբ էր տոգորված նաև կովկասահայության առաջին համագումարը:

Պայքարի ելած ժողովրդական զանգվածների սիրտը շահելու և ոչ ռուս ժողովուրդներին բարձրացող հեղափոխությունից հեռու պահելու համար դեռևս 1905թ. փետրվարի 18-ին Նիկոլայ II-ը ստորագրել էր Բարձրագույն հրովարտակ, որով համայնքներին և ազգություններին իրավունք էր տրվում ժողովրդի «ընտրյալ ներկայացուցիչների» միջոցով խորհրդակցական ձայների իրավունքով մասնակցելու պետական օրենսդրական գործունեությանը, այսինքն՝ առանձին ուղերձներով Պետական խորհրդին ներկայացնել իրենց կարծիքները[3]: Գործն «ավարտին հասցնելու», այսինքն՝ ընտրությունների եղանակի ու ձայնի իրավունքի, ընտրելիների թվի և առհասարակ Պետական խորհրդի վերաբերյալ խնդիրները մշակելու համար ներքին գործերի նախարար Բուլիգինի նախագահությամբ կազմվել էր մի մասնաժողով, որն,ըստ էության,մատը-մատին չխփեց՝ գոնե հրովարտակով «ժողովրդին տված» սահմանափակ «իրավունքները» կյանքի կոչելու համար:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ.4041, ց. 1, գ. 69, թ.2:
[2] «Ապագա», N 5, մարտ, 1905թ.:
[3] Տե՛ս «Արարատ», N 1, հունվար, 1906թ.:

Կովկասում այդ հրովարտակից ամենից առաջ փորձեցին օգտվել վրաց ազնվականները: Նրանց ներկայացուցիչները հավաքվեցին Թիֆլիսում ու երկար քննարկեցին ցարական հրովարտակը և արդյունքում Նիկոլայ II-ին հղեցին երկու ուղերձ, որոնցով կայսրից խնդրում էին Վրաստանին տալ ինքնավարություն և այնտեղ հաստատել դեմոկրատական կարգեր (իհարկե, միայն իրենց համար):

Արքունիքի համար դա միանգամայն անսպասելի էր, քանի որ վրաց ազնվականությունը դուրս էր եկել հրովարտակով գծված իրավունքների սահմաններից: Անսպասելի էր նաև այն պատճառով, որ երբ դրանից 3-4 տարի առաջ այդ նույն ազնվականությունը չքեղ հանդեսներով տոնում էր Ռուսաստանին Վրաստանի միացման հոբելյանը, պանծեցնում էր հարյուր տարի առաջ տեղի ունեցած այդ «երջանիկ պահը», փառաբանում «մեծագույն բարիքը»: Անվերջ տոնախմբություններից և ցարական ընտանիքին առաքած հավատարիմ հպատակության խոստումներից խորապես ազդված կայսրի կամքով կառավարությունը որոշել էր ազնվականությանը տարեկան հատկացնել մոտ 80 հազար ռուբլու նպաստ: Եվ ահա այժմ արքունիքը զարմանքով ու ցավով դիտում էր, թե վրաց ազնվականությունն ինչպես է բռնել «դավաճանության ուղին», այն ազնվականությունը, որին նա մինչ այդ համարում էր իր գլխավոր հենարանը Կովկասում: Բայց զուր էր արքունիքը տագնապում, քանի որ վրաց ազնվական դասակարգը շարունակում էր հավատարիմ մնալ գահին: Սա Վրաստանի ինքնավարության և վրացական կյանքի դեմոկրատացման մասին հարց էր բարձրացրել ուղղակի ժամանակի նեղ հանգամանքներից դրդված՝ գյուղացիական ապստամբական ելույթների և վրացիների մեջ հետզհետե աճող սոցիալ-դեմոկրատական շարժման ճնշման տակ:

Իրենց պահանջները ցարին ներկայացրեց նաև Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչների ժողովը: Ուխտյալ միապետականների և ցարապաշտ բազմությունների անունից կայսրին հղած ուղերձում ժողովն արտահայտել էր դժգոհություններ և պահանջել էր լուծել մուսուլմանների կրթության, լեզվի զարգացման, մամուլի, կրոնական ազատության հետ կապված կոնկրետ հարցեր:

Օգտվելով փետրվարի 18-ի ցարական հրովարտակով տրված իրավունքից՝ ռուսահայոց հասարակական կազմակերպությունները ձեռնարկեցին և ապրիլին Թիֆլիսում հրավիրեցին Կովկասի հայ ժողովրդի ներկայացուցիչների առաջին համագումարը՝ հայության կարիքներն ու ցանկությունները քննելու նպատակով: Համագումարին մասնակցում էր 82 պատգամավոր՝ քաղաքային ու գյուղական 24 հասարակություններից և զանազան ազգային հաստատու-

թյուններից[1]:

Պատգամավորներն իրենց հետ բերել էին խոր տագնապներ: Նրանց ելույթներից երևում էր, որ ամեն տեղ, որտեղ թուրքերն ու հայերն ապրում են խառը, վիճակը պայթյունավտանգ է, և եթե կառավարությունը արտակարգ միջոցներ չձեռնարկի, ապա երկրամասը մատնվելու է քաոսի: Հայ լիբերալ մտավորականության ներկայացուցիչները, որոնք համագումարում բացարձակ մեծամասնություն էին, դեռ հույսը չէին կտրել կառավարությունից և չէին կարողանում ըմբռնել, թե ինչու այդ կառավարությունը հանդես չի բերում հատուկ շահագրգռություն թուրք-հայ բախումը բնում խեղդելու համար:

Համագումարի մասնակիցներն ընդունեցին ցարին ուղղված ուղերձ: Իրենց ուղերձում նրանք, ի տարբերություն վրացիների և մահմեդականների, որևէ դժգոհություն չէին հայտնում ռեժիմից, չէին պահանջում ազգային ինքնավարություն և ոչ էլ առաջ էին քաշում որևէ ազգային խնդիր, բացի հայ եկեղեցու ինքնավարության սահմանների ընդլայնման խնդրից[2]: Նրանց «հիմնական հոգը» համակովկասյան և համառուսաստանյան չափանիշերով «ժողովրդի համար» որոշ ազատություններ տալն էր:

Վերջում ընտրվեց 16 հոգուց բաղկացած բյուրո, որի նստավայրը համարվեց Թիֆլիսը: Բյուրոյի անդամներն էին՝ Ղազարոս Աղայանը, Հովսեփ Ամիրխանյանը, Ավետիք Արասխանյանը, Հովսեփ Արղությանը, Եղիշե Թոփչյանը, Հովհաննես Թումանյանը, Ստեփան Լիսիցյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Սոկրատ Մելիք-Աղամյանը, Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Ավետիք Սահակյանը, Լևոն Սարգսյանը, Հովհաննես Սպենդիարյանը, բժ. Կարապետ Ստեփանյանը, Ալեքսանդր Քալանթարը: Բյուրոյի գործակից անդամներն էին Համբարձում Առաքելյանը և Սամսոն Հարությունյանը[3]:

Համագումարը բյուրոյին հանձնարարություն տվեց բոլոր միջոցներով մոբիլիզացնել հասարակական կարծիքը՝ թուրք-հայ նախկին բարիդրացիական հարաբերությունները վերականգնելու համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՑՈՒՆԸ

Մոտավորապես նույն ժամանակաշրջանում Ռուսաստանի յոթ հեղափոխական կուսակցությունների՝ սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցության, լեհական սոցիալիստական կուսակցության, հայ հեղափոխական դաշնակցության, ֆինլանդական ընդդիմադիր կուսակցության, վրացական

[1] «Մշակ», N 232, 20 նոյեմբերի 1905թ.:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 93, թ. 17:
[3] «Մշակ», N 232, 20 նոյեմբերի 1905թ.:

սոցիալֆեդերալիստական հեղափոխական կուսակցության, լատիշական սոցիալդեմոկրատական միության և բելոռուսական սոցիալիստական գրամադայի ներկայացուցիչները հայտնի Գապոնի նախաձեռնությամբ հավաքվեցին ժնևում խորհրդաժողովի՝ քննարկելու համար ցարիզմի դեմ մղվող հեղափոխական պայքարում իրենց ուժերը համադրելու և միավորելու հետ կապված հարցերը:

Այդ խորհրդաժողովը ցարիզմի դեմ կռվող ուժերի համախմբման երկրորդ փորձն էր: Առաջինը տեղի էր ունեցել 1904-ին, դարձյալ Փարիզում, ֆինլանդական ընդդիմադիր կուսակցության նախաձեռնությամբ, որն ունեցել էր դրական նշանակություն այն տեսակետից, որ միևնույն թշնամու՝ ռուսական ցարիզմի դեմ պայքարի մեջ գտնվող կուսակցություններն առիթ էին ունեցել մոտիկից ծանոթանալու յուրաքանչյուրի իրական ձգտումներին, գործունեության ներքին ձևերին, ուժին և կարողությանը:

Եվ ահա այժմ հեղափոխական նույն կուսակցությունները հավաքվել էին երկրորդ անգամ[1]:

Գապոնը ջանքեր էր գործադրել, որպեսզի այս խորհրդաժողովին մասնակից լիներ նաև ՌՍԴԲԿ-ն, որը հրաժարվել էր ներկայացուցիչ ուղարկել նախորդ խորհրդաժողովին: Այս անգամ էլ ՌՍԴԲԿ-ն բացասական դիրք էր բռնել: Բոլշևիկներն «Իսկրա» թերթի միջոցով պատճառաբանված մերժում էին տվել ուղարկած հրավերին, իսկ մենշևիկները, թեև իրենց ներկայացուցիչներն ուղարկել էին խորհրդաժողով, բայց շուտով հեռացել էին՝ պատճառ բռնելով այնտեղ լատիշական սոցիալ-դեմոկրատական միության ներկայությունը, հայտարարելով, որ իսկական սոցիալիստական շարժումը Լատվիայում ներկայացնում է միայն լատիշական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որը բացակա է: Մենշևիկների հեռանալուց հետո խորհրդաժողովն սկսեց իր աշխատանքները:

Խորհրդաժողովը քննարկեց ներկա պահի խնդիրները: Նշվեց, որ ցարական կառավարությունն, ըստ էության, պատերազմ է հայտարարել ժողովրդին՝ մի կողմից՝ հեղափոխության ելած միլիոնավոր աշխատավոր զանգվածներին, մյուս կողմից՝ ազգություններին՝ նրանց միջև առաջ բերելով արյունալի բախումներ:

Անդրադառնալով Անդրկովկասում հայ-թուրքական կռիվներին՝ խորհրդաժողովը դրանց գլխավոր պատասխանատուն համարեց ցարիզմը, անձամբ Նիկոլայ II-ին:

Երբ երկրում պատերազմ է գնում, ասված էր խորհրդաժողովի ծանուցումներից մեկում, կռվող կողմերից մեկը պետք է ոչնչանա՝ երկիրը կամ բռնակալությունը: «Երկրորդ ճանապարհ չկա և չի կարող լինել: Կոմպրոմիսներն

[1] Տե՛ս «Դրոշակ», N 5(158), մայիս, 1905, էջ 65-69:

անհնարին են, բանակցությունները՝ ուշացած, հարդարումները՝ հանցավոր: ... Կառավարությանը մնում է երկուսից մեկը՝ կատարելապես անձնատուր լինել հեղափոխության առաջ կամ խորտակվել հեղափոխական հուժկու փոթորկից»[1]:

Խորհրդաժողովի մասնակիցները գտնում էին, որ անխուսափելիորեն մոտենում է ընդհանուր զինված ապստամբության պահը, ապստամբություն, որը պիտի տապալի արքայական տունը և երկրի ճակատագիրը հանձնի ժողովրդին, զինված քաղաքացիների և նրանց կողմից ազատորեն ընտրված հիմնադիր ժողովներին, որոնք պիտի իրագործեն ազգերի ինքնորոշման մեծ սկզբունքը՝ բացառելով նրանց նկատմամբ արտաքին ամեն մի ճնշում: Դա այն ուղին է, որ ազգերին հնարավորություն կտա ազատ ու հոժարակամ համաձայնությամբ լուծել բոլոր խնդիրները, կանոնավորել ցարական բռնակալության ձեռքով խառնակված հարաբերությունները:

Նվաճման, բռնության, թալանի ու հափշտակության քաղաքականության վրա հիմնված ռուսական ինքնակալական ռեժիմի անկումը, ասված էր խորհրդաժողովի ընդունած փաստաթղթերից մեկում, ո՛չ միայն կփրկի ռուս ժողովրդին և կայսրության մյուս ազգերին: Ավելին, բռնապետության անկումով «կոչնչանա ամբողջ Եվրոպայում և ամբողջ քաղաքակիրթ աշխարհում ռեակցիայի ամենագլխավոր միջնաբերդը, նրա ամենաուժեղ պատնեշը և դրանով համամարդկային առաջադիմությանը կտա մի հզոր ազդակ»[2]:

Ռուսաստանում կառավարման ձևը կենտրոնացումն էր, ցենտրալիզմը: Բարձրից հրաման էր տրվում, և հսկայական երկրի մի ծայրից մյուսը ցարական բյուրոկրատիան մեքենայի ճշտությամբ գործադրում էր այդ հրամանը: Ահեղ բյուրոկրատիան վամպիրի նման իր ճիրանները թաղել էր ժողովրդի սրտի մեջ՝ Պետերբուրգից մինչև կայսրության ամենահեռավոր անկյունները:

Ռուսական հեղափոխության հզոր ալիքներն առաջ էին բերել երկրի պետական կարգ ու սարքի, տերիտորիալ-ադմինիստրատիվ կառուցվածքի վերաբերյալ դեմոկրատական լայն սկզբունքների վրա հիմնված ծրագրեր: Դրանք հիմնականում երեքն էին՝ սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատների և դեմոկրատական սահմանադրականների: Գալով Կովկասին, հիմնականում առաջադրվում էր հետևյալ ծրագիրը. ընդունելով, որ Կովկասում հիմնական ժողովուրդները երեքն են՝ վրացի, հայ և թուրք, պահանջ էր առաջադրվում Վրաստանին, Անդրկովկասի հայաբնակ և թուրքաբնակ նահանգներին տալ ինքնավարություն: Ըստ այդ ծրագրի՝ երեք ինքնավարությունները մտնելու էին կովկասյան ֆեդերացիայի մեջ, իսկ վերջինս՝ ֆեդերատիվ Ռուսաստանի կազմի մեջ:

[1] «Դրոշակ», N 5(158), մայիս, 1905, էջ 66:
[2] Նույն տեղում:

Այս ծրագիրը հայ իրականության մեջ ընդունում էին և՛ դաշնակցականները, և՛ հնչակը: «Մշակի» շուրջ համախմբված հայ կադետները, լիբերալ-բուրժուական գործիչները դրա փոխարեն առաջարկում էին ընդլայնել զեմստվոների իրավունքները: Ինչ վերաբերում է բոլշևիկներին, ապա նրանք վճռականապես դեմ էին ազգային-տերիտորիալ ինքնավարությունների գաղափարին, գտնելով, որ այդ պայմաններում կջլատվեն աշխատավորների ուժերը, յուրաքանչյուրը կքաշվի իր ազգային բնակարանը, հետևապես հարված կհասցվի հեղափոխության գործին: Նրանք գտնում էին նաև, որ տերիտորիալ ինքնավարության պահանջը ոչ թե սկզբունքի հարց է, այլ՝ պրակտիկայի, այսինքն՝ եթե դրա պահանջը զգացվի, ապա կյանքն ինքը կառաջադրի դա: Նրանք հանդես էին գալիս նաև զեմստվոների իրավունքների ընդլայնման դեմ, գտնելով, որ դա կարող է պրոլետարիատի և ընդհանրապես աշխատավորության մեջ պատրանքներ ստեղծել զեմստվոյի միջոցով իրենց վիճակը բարվոքելու հնարավորության մասին:

Ապագա դեմոկրատական Ռուսաստանի տերիտորիալ-ադմինիստրատիվ կառուցվածքի հարցերը նույնպես քննության առնվեցին Ռուսաստանի յոթ հեղափոխական կուսակցությունների Փարիզի խորհրդաժողովում:

Խորհրդաժողովի ավարտին ընդունվեց մի հայտարարություն, որով ազդարարվում էին մի քանի հիմնական նպատակներ. 1) Ռուսաստանում դեմոկրատական-հանրապետական սկզբունքների վրա հիմնված պետության ստեղծում, 2) Հիմնադիր ժողովի գումարում, որը պետք է ներկայացնի Ռուսաստանի բոլոր վայրերի շահերը՝ բացառությամբ Լեհաստանի և Ֆինլանդիայի, 3) Ամեն տեսակ աջակցություն Ֆինն ժողովրդին և ամենից առաջ Ֆիննական պրոլետարիատի ձգտմանը՝ գումարելու սեփական հիմնադիր ժողով, 4) Լեհաստանի սեյմին ընձեռել հնարավորություն՝ ստանձնելու երկրի հիմնադիր ժողովի ֆունկցիաները, 5) Հրավիրել հիմնադիր ժողով նաև Կովկասի համար, որը երկրամասում պետք է ստեղծի ֆեդերացիա՝ հիմնված ամենալայն ապակենտրոնացման սկզբունքի վրա:

Այս վերջին պահանջը առաջադրվել էր Հ.Յ. դաշնակցության և վրացական սոցիալ-ֆեդերալիստական հեղափոխական կուսակցության կողմից:

Խորհրդաժողովից հետո նրա ընդունած փաստաթղթերը տպագրվեցին տարբեր լեզուներով: Դրանք հայերեն լույս տեսան «Դրոշակում»՝ N5 (158), 1905, էջ 63-69, ապա՝ առանձին գրքույկով՝ «Հ.Յ. Դաշնակցություն. Յեղափոխական դաշն», Ժընև, 1905:

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ՑԱՐԻԶՄԻ ՊԱՏԺԻՋ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռավոր արևելքում շարունակվում էին ռուսական զորքերի ծանր պարտությունները: 1905թ. փետրվարի 10-ին Մուկդենի մոտ սկսվեց մի խոշոր ճակատամարտ, որին երկու կողմից մասնակցում էր 600 հազար մարդ, գործում էին 2000 թնդանոթ և հազարավոր գնդացիրներ: Փետրվարի 26-ին ճակատամարտը վերջացավ ճապոնական զորքերի փայլուն հաղթանակով: Խուճապով ու խառնիխուռն նահանջելով՝ ռուսները ճապոնացիներին թողեցին հսկայական քանակի զենք, ռազմամթերք և պատերազմական այլ ավար:

Մուկդենի ճակատամարտում ռուսական զորքերի ջախջախումը նշանակում էր, որ Մանջուրիայի դաշտերում ցարական Ռուսաստանը դաժան պարտություն է կրել:

"Церковный Вестник" *թերթի 1905թ. N10-ում տպագրվել էր Պետերբուրգի մետրոպոլիտ Անտոնի նամակը՝ «Ռուսաստանի իսկական վիշտը» վերտառությամբ: Սրտի խոր ցավով նա գրում էր. «Մանր վշտի մեջ է այժմս Ռուսաստանը: Դժբախտ պատերազմի սկզբից անցավ արդեն մի տարի: Նավատորմը ոչնչացված է: Մեր քաջ զինվորները թշնամու գնդակներից մեռնում են տասնյակ հազարներով: Զորաբանակը կրում է պարտություն պարտության հետևից: Մեր սրտերում կատարյալ հուսահատություն է»*[1]:

Ռուս-ճապոնական պատերազմի վերջին արարը Ցուսիմայի նեղուցում տեղի ունեցած ճակատամարտն էր: Ցարի հրամանով դեռևս 1904թ. աշնանը Բալթիական նավատորմը օգնության էր ուղարկվել Հեռավորարևելյան նավատորմիղին: Հսկա արմադան, բաղկացած 20 ռազմանավերից և 15 հազարանոց անձնակազմից, կտրելով Ատլանտյան և Հնդկական օվկիանոսները՝ 1905թ. մայիսին հասավ ճապոնական ջրեր: Մայիսի 14-ին Ցուսիմայի նեղուցում ճապոնական նավատորմը անողոք ջախջախեց ռուսական արմադան: Ջրասույզ արվեց 13 և գերվեց 4 նավ, փրկվեց և հազիվ Վլադիվոստոկ հասավ միայն մեկ ռազմանավ: Էսկադրայի անձնակազմի մեծ մասը մնացել էր խորտակված նավերում:

Ռուսական ռազմական նավատորմիղի ոչնչացումը նշանակում էր, որ այժմ Հեռավորարևելյան ծովերի միակ տիրակալը Ճապոնիան է:

Պատերազմը տանուլ էր տրված անդառնալիորեն: Ռուսական զորքերի լիակատար արտաքսումը Մանջուրիայից, Սախալինը և Վլադիվոստոկը Ռուսաստանից խլելը ժամանակի հարց էր: Ինքնակալության ռազմական կրքը լիակատար էր:

Հեռավոր արևելքում ցարիզմի կրած նորանոր պարտությունները, Ռուսաստանի համար խայտառակություն լինելով, միաժամանակ երկրի ներսում վրդովմունքի նոր ալիք առաջ բերեցին: Ժողովրդական մասսաների հակացարական պայքարը ալեկոծվում էր կայսրության ողջ տարածքում: Գլուխը կորցրած կառավարությունը 1905թ. մարտ և ապրիլ ամիսներին աշխատում էր զիջումների փշրանքներով դրությունը փրկել. խոստանում էր գումարել «ընտիր մարդկանց» մի խորհրդակցական ժողով, որը պետք է նախնական քննության ենթարկեր օրենքները: Բայց ինքնակալության ատելը թեքվել էր. սահմանադրություն էին պահանջում անգամ Կաուֆմանի, Մանուիլովի, Հերցեյնշտեյնի, Դոլգուրովի, Կոկոշկինի, Մուրոմցևի, Շչեպկինի նման չափավոր հասարակական գործիչներ:

Համառուսաստանյան մասշտաբով ցարիզմի դեմ սկսված կռվի գլուխ էին կանգնած Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունները:

Միապետությունն իր հիմնական հարվածն ուղղել էր սոցիալ-դեմոկրատիայի՝ որպես, երկրի մասշտաբով, իր գլխավոր թշնամու դեմ:

Մարտի կեսերին սոցիալ-դեմոկրատների ջանքերով սկսվել էր Իվանովո-Վոզնեսենսկու մանածագործարանների ջուլհակների գործադուլը, որը տևեց մեկուկես ամիս: Գործադուլավորները պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում, խոսքի ու մամուլի ազատություն, գործարաններին կից բանտերի ու մենախցերի վերացում և այլն[1]:

Արդեն ապրիլի վերջերից բանվորները տնտեսական գործադուլներից աստիճանաբար անցնում էին քաղաքական գործադուլների և ցույցերի:

Մայիսմեկյան տոնակատարությունն ամենուրեք վերաճեց պրոլետարական համերաշխության հզոր ցույցի, որն ընդգրկեց ռուսական կայսրության համարյա ողջ տարածքը: Վարշավայում, Օդեսայում, Ռիգայում, Բաքվում ցույցերն ավարտվեցին ոստիկանության ու զորքի հետ բնակչության զանգվածների բախումներով:

Ավելին, Լեհաստանի Լոձ քաղաքի բանվորների գործադուլը վերածվեց զինված ապստամբության: Լեհ բանվորները զինված կռվի մեջ մտան ցարական զորքերի դեմ, որն արժանացավ Ռուսաստանի պրոլետարիատի ջերմ համակրանքին ու պաշտպանությանը:

Մայիսի 1-ն աննկատ չանցավ Անդրկովկասում: Հեղափոխական բոլոր կուսակցությունները հանդես եկան հայտարարություններով ու կոչերով, ցրեցին հազարավոր թռուցիկներ ու պրոկլամացիաներ:

ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի մայիսմեկյան կոչում հիշատակված էր, որ քաղաքի աշխատավորությունը, որն արդեն յոթերորդ անգամ է նշում համաշխարհային պրոլետարիատի համերաշխության օրը, վճռականությամբ լի է

[1] **«Արարատ»**, *N 4, ապրիլ, 1905, էջ 325:*

[1] **«Կայծ»**, *N 24, 7 հունիսի 1906թ.:*

զանգվածաբար մասնակցելու ատելի միապետության տապալմանն ուղղված համառուսաստանյան պրոլետարիատի ազատագրական պայքարին: Կոմիտեն բոլոր ճնշվածներին կոչ էր անում զինվել[1]:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության Բաքվի կոմիտեն իր մայիսմեկյան դիմումով քաղաքի բանվորությանը կոչ էր անում պատրաստվել արագացնելու ազատարար հեղափոխությունը: Այս բախտորոշ պահին, ասված էր դիմումի մեջ, պետք է հանդես բերենք գերագույն կազմակերպվածություն՝ «ավելի մեծ եռանդով թափահարելու միապետության խարխուլ շենքը ... այս արյունաներկ երկրում»[2]:

Ութժամյա աշխատանքային օրվա, դեմոկրատական հանրապետության և սոցիալիզմի հաստատման ՌՄԴԲԿ և սոց.-դեմ. հնչակյան կուսակցության միացյալ կոմիտեն կոչով դիմել էր աշխատավորությանը: Մեծ տագնապ արտահայտելով Անդրկովկասում գնալով ծավալվող թուրք-հայկական թշնամության առնչությամբ՝ կոմիտեն շեշտում էր. «Ցարի կառավարությունը, ժողովրդի արյան ծարավի այդ բորենին, իրար դեմ զինեց նաև խաղաղ ազգաբնակչությանը. թուրքերին հայերի դեմ, ռուսներին՝ հրեաների և լեհերի, եղբայրասպան ձեռքերով թափվեց բյուրավոր անմեղ մարդկանց արյունը՝ կարմիր գույնով ներկելով մայրաքաղաքի, Գոմելի, Բիչինյովի, Բաքվի, Երևանի փողոցներն ու սալահատակները: ...Եկե՛ք, ուրեմն, քաղաքացի և գյուղացի բանվոր ընկերնե՛ր, տոնելով մայիսի 1-ը, ... երդվենք զենքերը ձեռքներիս ուղի կանգնել և տապալել ... մեր արյան ծարավի միապետությունը....»[3]:

Ռուս-ճապոնական արյունալի պատերազմն անհապաղ դադարեցնելու պահանջով էր հանդես գալիս սոց.-դեմ. հնչակյան կուսակցության Ռուսաստանի և Կովկասի գործադիր հանձնախումբը[4]:

Հեղափոխական կոչերն ու հայտարարությունները փողոցներ ու հրապարակներ էին հանում հազարավոր մարդկանց: Մայիսմեկյան ցույցերը բուռն բնույթ ստացան հատկապես Բաքվում: Այդ օրը տասնյակ հազարավոր բանվորներ էին հավաքվել քաղաքից դուրս՝ «Գայլի դրունք» կոչվող վայրում, և լսում էին մեկը մյուսին հաջորդող ճառերը: Ահա Դաշնակցական խնեչոյի եղբայր, Ռուս. սոց.-դեմ. կուսակցության հավատավոր անդամ Հմայակը, որը կոչ էր անում երազած ազատությունը ձեռք բերել ցարիզմի դեմ աննահանջ պայքարով: Նրան հաջորդած մի ռուս խոսում էր մեծ ավյունով և մերթ ընդ մերթ բռունցք ցույց տալիս ինքնակալությանը՝ արժանանալով հազարավոր միտինգավորների բուռն հավանությանը և փոթորկալի ծափերին: Այնուհետև

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, 1989, էջ 23-25:
[2] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 12, թ. 1:
[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, 1989, էջ 29:
[4] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 75, թ. 1:

ելույթ են ունենում ուրիշներ: Արդեն անցել էր մեկ ժամից ավելի, երբ հանկարծ հայտնվեց կազակների մի մեծ զորամաս և կատաղորեն հարձակվեց ամբոխի վրա: Միտինգավորները ցրվեցին: Մարդիկ ընկնում էին ձիերի ոտքերի տակ, չոքում, վեր կենում, վազում հետ, փախչում մտրակների այրող շաչյունից: Նույն օրը ձերբակալվեցին հարյուրավոր մարդիկ:

Բայց քաղաքում կրքերը չէին հանդարտվում. հետագա օրերին նույնպես տեղի ունեցան բացօթյա հավաքներ, երթեր, բազմամարդ ժողովներ:

Մայիսի 28-ին Բաքվի քաղաքացիների ընդարձակ դահլիճում հավաքվել էր մոտ 2000 մարդ՝ հայեր, թուրքեր, ռուսներ, լեզգիներ, հրեաներ: Այնտեղ էին թուրք երևելիներ՝ "Каспий" ռուսատառ թերթի աշխատակից և խմբագրության վարիչ Ահմեդ բեգ Աղաևը, նույն թերթի խմբագիր Ալի-Մերդան բեգ Թոփչի-բաշևը, Իսրաֆիլ Հաջիևը, Հաջի-Ասլան Աշուրովը, Մահմեդ-Հասան Հաջինսկին, Կարաբեյ Կարաբեկովը: Հայ երևելիներից դահլիճում էին՝ Բոգդան Դոլուխանյանը, Ստեփան Թաղիանոսյանը, Կոնստանտին Խատիսյանը, Հովհաննես Քաջազնունին, Հայկ Տեր-Միքայելյանը, Աստվածատուր Վաչյանը, Գյանջեցյանը, դաշնակցական ղեկավարությունից՝ Արտեմ Թայիրյանը, հնչակյաններից՝ Գրիգոր Վարդանյանը և օրիորդ Աղավնին, սոցիալ-դեմոկրատներից՝ Այոլան, Սերգեյ Վարդանյանը, Տրդատ Տրդատյանը, Բախչի Իշխանյանը, Իսախանյանը, Նարիման Տեր-Ղազարյանը, Առուշանյանը, Ղահրամանյանը: Ներկա էին նաև սոցիալիստ-հեղափոխականներ Սունդուկյանը, Գիժիցկին, Լևոն և Ռոզա Ռոստոմյանները, Օրլովը, Ժարիկովը:

Սկսվում է ժողովը, որը նախագահում էր Բաքվի նախկին քաղաքագլուխ Նովիկովը, արդարամիտ ու ներկայանալի մի մարդ, որն իր բազմաթիվ ելույթներով մեղադրել էր փետրվարյան ջարդերի կազմակերպիչներին:

Այստեղ էլ, ժողովում, իր բացման խոսքում Նովիկովը կրկին անդրադարձավ Բաքվի փետրվարյան դեպքերին և իր ելույթը վերջացրեց «Կորչի՛ միապետությունը» խոսքերով: Այնուհետև ելույթ ունեցան Այոլան, բժ. Կարաբեկովը, Գիժիցկին և ուրիշներ, որոնք քննադատում էին կառավարությանը ու եղբայրության կոչեր ուղղում երկրամասի բոլոր ազգություններին[1]:

Պրոլետարիատի և ընդհանրապես քաղաքային բնակչության պայքարը հզոր ազդեցություն գործեց գյուղացիների վրա: Բազմատանջ ռուս մուժիկը, մեջքը ծռած հարկերի ու տուրքերի ծանրության տակ, խավարի ու տգիտության մեջ քարշ էր տալիս իր գոյությունը՝ ենթարկվելով արհամարհանքի, ծեծի, հարստահարման: Կիսաքաղց, պարբերաբար սովի ենթակա, լուռ ու մունջ այդ ռամիկն էր համարվում ցարական ռեժիմի հուսալի պատվարը: Բայց ամեն ինչ արագորեն փոխվում էր: 1905թ. գարնանն ու ամառը երկրում մեծ ծավալ ստացավ ագրարային շարժումը: Զքավոր գյուղացի-

[1] «Հայրենիք», N 8 (271), օգոստոս, 1948, էջ 26-29:

ները և գյուղատնտեսական բանվորները հարձակվում էին կալվածատիրական ագարակների վրա, այրում չինությունները: Մարտ ամսից կրակի բոցերը լիզում էին գյուղական դաստակերտները, մուժիկը տարերային ուժով ավերում էր ամեն ինչ: Նա հրաժարվում էր հարկեր վճարելուց: Մասսայական դարձավ խոտհարքների, անտառների, մարգագետինների գրավումը, վարձակալական պայմանագրերի ոչնչացումը: Այժմ նա իշխանությունների հետ խոսում էր հրդեհների և սպառնալիքների ահարկու լեզվով: Բանվորների օրինակով գյուղացիներն առանձին տեղերում զինված դիմադրություն էին ցույց տալիս ոստիկանությանն ու զորքին:

Ահաբեկված կառավարությունը զորահավաքի էր ենթարկել բոլոր հնարավորությունները՝ օրեցօր թափ առնող հեղափոխության առաջն առնելու համար: Զորքը կրակի էր բռնում ցուցարար բանվորներին, գյուղերն էին ուղարկվում պատժիչ արշավախմբեր, որոնք գազանաբար դատաստան էին տեսնում գյուղացիների նկատմամբ: Արյունալից եղան դեպքերը Իվանովո-Վոզնեսենսկի մանածագործարաններում, ուր տեղի ունեցան մասսայական գնդակահարություններ և ջարդեր: Զանգվածային սպանություններ եղան նաև ուրիշ արդյունաբերական կենտրոններում:

Բայց ցարիզմն առայժմ ուժ չուներ հանգցնելու բորբոքված կրակը: Դաշնակցության նշանավոր գործիչ Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի) գրում էր.

«Կռիվը կլինի անդադրում և համառ: Փոքրիկ զիջումներն ու քաղաքական կարկատանները երբեք չեն կարող մարել բորբոքված հրդեհը: Հեղափոխական շունչը կը կայծե նրան մինչև այն օրը, երբ գայիսոնն ու թագը կը դառնան թանգարանների զարդ, Պետրո-Պավլովսկիի տեղը կը բարձրանա Ազատության արձանը, կայսերական ու փոխարքայական պալատները Պետերբուրգում, Վարշավայում և Թիֆլիսում կը վերածվեն ժողովրդական պառլամենտների»[1]:

ԱՐՑՈՒՆԱԼԻ ԴԵՊՔԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՎՐԱ

Արյան ալիքը Բաքվից տարածվելով և հասնելով Երևան՝ այստեղից անցավ Հին Նախիջևան՝ իր շրջակա գյուղերով: Գավառը դարձավ քաղաքական ընդհարման բեմ ներկված հարևանների արյունով և բռնկված մոլեռանդության կրակով: Հոռի ու չարանյութ մղումներով գրվեց «կովկասյան Վանդեայի» ամենաեղկելի պատմություններից մեկը:

Թեև Նախիջևանյան երկիրը վաղուց ի վեր ոտքի կոխան էր դարձել այնտեղ

[1] «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 89:

բնավորված թուրքերի համար, բայց նրա բնիկ ժողովուրդը առաջադիմության մշտավառ ջահը դարերից ի վեր անվկանդ տոկունությամբ կրում էր ասիական խավարի մեջ:

Նախիջևան գավառն ընկած էր Երևանի նահանգի հարավային ծայրում, որի սահմաններն էին՝ հյուսիսային կողմից Շարուր-Դարալագյազի գավառը, արևմտյան և հարավային կողմից Արաքսը, որը միաժամանակ կազմում էր Պարսկաստանի սահմանագիծը: Հյուսիս-արևելքում գավառը շփման գիծ էր դուրս գալիս Զանգեզուրի հետ:

Նախիջևանի գավառը Երևանի նահանգի այն գավառներից էր, ուր թուրք տարրը մեծամասնություն էր կազմում: Գավառի բնակչության ընդհանուր թիվը 101 հազար էր, որից հայերը՝ 34 հազար, թուրքերը՝ 64 հազար, ուրիշ ազգությունները՝ 2000 հոգի[1]:

Նախիջևանի գավառը կազմված էր երկու գավառամասից՝ բուն Նախիջևանի և Գողթանի: Ամբողջ գավառում կար 170 գյուղ, որից հայաբնակ էին 60-ը: Դրանցից 40-ը գտնվում էր բուն Նախիջևանի գավառամասում, 20-ը՝ Գողթանում: Բացի այդ, հայերը ապրում էին նաև Նախիջևան և Օրդուբաղ քաղաքներում, ինչպես նաև՝ Ջուլֆա ավանում[2]:

Բաքվից հետո երկրորդ մեծ արհավրալից կոտորածը Նախիջևանում սկսվելը պատահական չէր: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայերը մեծապես տուժում էին այնտեղ, որտեղ փոքրամասնություն էին:

Նախիջևանյան կոտորածը Կովկասում թուրք-հայկական կռվի ամենադժխեմ ուքստմնելի էջերից էր: Խորապես հիասթափված Բաքվում սանձազերծած կոտորածի և Երևանի դեպքերի իրենց համար անբավարար արդյունքից՝ ցարական իշխանությունները և համիսլամական ուժերը հայացքներն ուղղեցին դեպի Նախիջևանի գավառ, ուր թվապես զորեղ մահմեդականները, Պարսկաստանի իրենց հավատակիցների հարևանությամբ, կարող էին «հրաշքներ» գործել և անպատիժ կերպով արյուն ու կրակ տարածել հայ ազգաբնակչության այն հատվածներում, որտեղ թույլ էր ինքնապաշտպանությունը:

Բաքվի փետրվարյան կոտորածների օրերին, ինչպես տեսանք, քաղաքի թուրք բնակչության մի ստվար մասը ոչ միայն չէր մասնակցում թալանին ու սպանություններին, այլև եռանդով բողոքում էր խուժանի ոճրագործությունների դեմ: Բայց օր ավուր արյան ալիքը ծավալվելուն զուգընթաց, գավառներում ու քաղաքներում թուրքության լայն զանգվածները բնազդաբար մղվեցին նոր ոճիրների գիրկը, այն էլ՝ իբրև հարձակողական ուժ: Բացառություններ, անշուշտ, դարձյալ մնացին թուրք տարրի մեջ, բայց այդ բացառությունները միայն հաստատում էին ընդհանուր կանոնը:

[1] Տե՛ս "Кавказский календарь на 1905 год", III отд., էջ 48-49:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 64:

Թուրք ժողովուրդն իր բեկերով ու մոլլաներով, իր կրթված ու անկիրթ ներկայացուցիչներով, երեկվա խաղաղ, հաշտ դրացիությանը հրաժեշտ տվող Թուրք մասսան - այդ ամենը գահավիժում էր կովկասահայ ժողովրդի վրա՝ կյանքի ու մահվան խնդիր դնելով նրա առաջ:

Նախիջևանի կոտորածը նախապատրաստվել էր նենգամիտ սառնասրտությամբ: Իշխանություններն օրեր շարունակ գրգռում էին նախապատմական թանձրամած ու թևատարած տգիտության մեջ դեգերող դյուրահավատ ու քաղաքականապես անհասուն Թուրք տարրի հակահայկական կրքերը, միաժամանակ կեղծ բարեպաշտությամբ և մուսուլմանների նկատմամբ ցարի հայրական վերաբերմունքի մասին առասպելներով շոյում նրա ինքնասիրությունը: Միապետական սադրանքի թակարդն ընկան նույնիսկ այն Թուրքերը, որոնք ենթագիտակցաբար Թուրք-հայկական ընդհարումների գլխավոր պատասխանատուն համարում էին շեյթանին՝ ցարական միապետությանը: Այժմ նրանք իրենց շուրթերին փականք էին դնում, ձևանում խուլ ու համր: Սրանք թեև չմասնակցեցին կոտորածին, բայց արգելք էլ չհանդիսացան:

Ինչ վերաբերում է Թուրք ազդեցիկներին՝ խաներին, բեկերին (Ջաֆար Ղուլի-խան, Միրզա Սաղիխ Ռահիմ խան, Խպուզի-Իսմայիլ բեկ, Ասադ աղա, Շեյխ Քյարիմ-Ասազ աղա, Խուցուսի-Հուսեին Ալի բեկ, Շահաբաս աղա և ուրիշներ)[1], ապա նրանք Նախիջևանի գավառում խաղացին այն նույն դերը, ինչ Բաքվում Թուրք կապիտալիստները: Ո՞ւմ հայտնի չէր «Նախիջևանի խաներ» արտահայտությունը: Նրանց էր ենթարկվում ամբողջ գավառը: Այդ ֆեոդալներից էին կախված Թուրք զանգվածները, նրանց խոսքը օրենք էր: Խաներն իրենց դիրքով զորեղ ազդեցություն ունեին նաև կառավարական շրջանների վրա: Միապետությունն այն իդեալական ռեժիմն էր, որի հովանու տակ խաներն ու բեկերը կարող էին պահպանել ունեցած դիրքերը և անարգել առաջ տանել իրենց ավազակային «սխրագործությունները»: Բնական է, որ նրանք ամեն քայլափոխում պիտի շողոքորթեին կառավարությանը և ստանային նրա բարեհաճությունը: Քանի որ ամուր էր թիկունքը, նրանց մնում էր իրենց ենթակա վայրենի ու տգետ ամբոխը քշել հայերի վրա և անպատիժ կողոպտել ու սպանել նրանց:

Աղեխարշ դեպքերն սկսվեցին Հին Նախիջևան քաղաքից:

Հին Նախիջևանը Կովկասի քաղաքների մեջ մի առանձին տեղ էր բռնում: Հայոց պատմական այդ ոստանում Թուրք տարրը վաղուց մեծամասնություն էր: Քաղաքում բնակչության ընդհանուր թիվը 9 հազար էր, որից 2.5 հազարը հայեր էին: Հայ ծխերի թիվը հասնում էր 500-ի, որոնք ցրված էին քաղաքի զանազան մասերում շրջապատված Թուրքերով: 300 ընտանիք ապրում էր

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց.3, գ.92, թ.1:

ս. Գևորգ եկեղեցու թաղում, ուր գտնվում էին նաև առաջնորդարանը և ծխական դպրոցը, 100 ծուխ՝ Ամբարի թաղում, 60-ը՝ Երեք Խորանի թաղում, իսկ մնացյալ 40 ընտանիքը՝ քաղաքից դուրս մի առանձին թաղում, որը կոչվում էր Թազաքենդ[1]:

Քաղաքը Նախիջևանի խաների մշտական բնակության վայրն էր, թեև նրանք ունեին ապարանքներ նաև գավառի տարբեր բնակավայրերում, ինչպես նաև հարևան Պարսկաստանի Մակուի խանությունում:

Հին Նախիջևանի առևտուրը գլխավորապես կենտրոնացած էր հայերի ձեռքում: Նրանց ավելի քան 190 մանր ու մեծ խանութները գտնվում էին շուկայում և Խանի քարվանսարայում շրջապատված Թուրքերի բազմաթիվ խանութներով:

Առևտրից բացի, քաղաքի կենսագործունեության մյուս բոլոր բնագավառներում մխիթարական բան չկար: Բացի կառավարչական և դատաստանական ատյաններից, փոստից, ակումբից և չորս դպրոցից, քաղաքը ոչինչ չուներ: Իսկ դպրոցներում ուսման մակարդակն աներևակայելի ցածր էր: Չորս դպրոցներից մեկը միայն 7 տարվա դասընթաց ուներ, ուստի այդ «օրինակելի» դպրոցն ավարտած աշակերտներից քչերի գիտելիքներն էին հնարավորություն ընձեռում ուսումը շարունակել այլ քաղաքներում:

Բաքվի փետրվարյան կոտորածներից հետո Նախիջևան քաղաքում և շրջակա գյուղերում բավական երկար ժամանակ լուրեր էին պտտվում, թե Թուրքերը պատրաստվում են կոտորել հայերին և կողոպտել նրանց ունեցվածքը: Վախն ու սարսափը աստիճանաբար տիրեցին թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում, իսկ մայիսի 6-ին քաղաքի հայերն այնպես էին ահաբեկվել տեղի ունեցած մի դեպքից, որ, կողպելով կրպակներն ու խանութները, փակվել էին տներում:

Այդ օրվա՝ մայիսի 6-ի առավոտյան Այլաբադ գյուղի ճանապարհին, տեղի զորանոցներից ոչ հեռու, «Ղզդրմա» կոչված աղբյուրի մոտ գտնվել էր ազդեցիկ հարուստ Ասադ աղայի ազգականներից Ֆաթուլլա Հաջի Բայրամ Ալի անունով Նախիջևանցի մի Թուրքի դիակ, որը սպանվել էր հրազենով: Սպանվածի ճակատին դրել էին մի քար, որի վրա ամրացրել էին ստվարաթուղթ՝ «Նամազ-դեմսի» մակագրությամբ[2]:

Թուրքերը լուր տարածեցին, թե սպանությունը կատարել են Այլաբադ գյուղի հայերն այն պահին, երբ հանգուցյալը աղոթելիս է եղել մահմեդական ծեսով: Սպանվածի ազգականները պատրաստվեցին վրեժ լուծել: Իր աղաղակներով ամբոխին գրգռում էր հանգուցյալի հայրը:

Թուրքի սպանությունը իշխանությունների և խաների համար երջանիկ

[1] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 68:
Այսինքն՝ քար, որի վրա մուսուլմաններն իրենց աղոթքն են անում:
[2] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 171, թ. 1:

առիթ էր սանձազերծելու հայերի ջարդը:

Կոտորածի նախօրյակին չէին դադարում նահանգի չինովնիկների սադրանքները: Երևանի ժանդարմական վարչության պետ, գնդապետ Յակովլևը այդ դեպքի մասին հեռագրով հաղորդել էր Պետերբուրգ ոստիկանական դեպարտամենտին՝ բացահայտորեն խեղաթյուրելով փաստերը և կատարվածի պատասխանատվությունը ամբողջովին բարդելով հայերի վրա: Նա գրում էր.

«Զեկուցում եմ, որ սույն ամսի 6-ին, երեկոյան ժամը 8-ին, Նախիջևան քաղաքի բնակիչներ Ֆաթուլլա Հաջի Բայրամ Ալի օղլին իր եղբոր՝ Աբեշի հետ, վերջացնելով քաղաքից մեկ վերստ հեռավորության վրա գտնվող իրենց հողամասի ջրումը, սկսել էին օրվա հերթական աղոթքը: Տեսնելով դա՝ հինգ հայեր՝ Այլաբադ գյուղի բնակիչներ Գրիգոր և Գաբո Տեր-Աբրամովները, Գալուստ Կարապետովը, Բագրատ Բաղդասարովը և Ուսուպ Ավանեսովը ռևոլվերով սպանում են եղբայրներից մեկին՝ Ֆաթուլլային: Հաջորդ օրը առավոտյան ժամը 5-ին մուսուլմանները հավաքվում են հանգուցյալի տանը, որպեսզի ընտանիքին արտահայտեն ցավակցություն: Նկատելով, որ իրենց մոտով անցնում է Այլաբադի գյուղացի Մինակ Բաբախանովը չորս համագյուղացիների հետ, մուսուլմաններից մեկը հարձակվում է Բաբախանովի վրա և դաշույնի հարված է հասցնում որովայնին: Բաբախանովը քառորդ ժամից մահանում է՝ հասցնելով հայտնել, որ իրեն հարվածել է Ֆաթուլլայի եղբայր Աբիշը»[1]:

Այդ օրերին Երևանից, կասկածելի աղբյուրից բխած, Պետերբուրգ ուղարկած մի ուրիշ հեռագրով այսպես էր ներկայացվում իրերի վիճակը Նախիջևանի կողմերում. «Բաքվի դեպքերից հետո Նախիջևանի Թուրքերն ամեն ջանք գործ են դնում լավ հարաբերություններ պահպանելու հայերի հետ: Ազգայնական հողի վրա մահմեդականների կողմից ոչ մի առիթ չի տրվել, մինչդեռ մայիսի 6-ին հինգ հայեր ատրճանակի հարվածներով մի Թուրք սպանեցին խճուղու վրա: Թմբուլ գյուղում սպանվեց մի մահմեդական: Երևանի մոտ Թուրքահպատակ հայերը մահացու վերք հասցրին մի մահմեդականի, որը քիչ հետո մեռավ: Գրգռումը Նախիջևանում ահագին է. ազդեցիկ Թուրքերը հազիվ են կարողանում զսպել ժողովրդական ցասման բռնկումը: Տրամադրությունը աղմկահույզ է: Եթե հայերը չդադարեցնեն իրենց հարձակումները Թուրքերի վրա, մասսայական կոտորածներն ամբողջ նահանգում շատ հավանական են: Եվ [այդ դեպքում] կարգը վերահաստատելու համար՝ ոստիկանական ու զինվորական եղած ուժերը բավական չեն լինի»[2]:

Ինչպես տեսնում ենք, հեռագրի հեղինակը «մարգարեաբար» «կանխատեսում» էր գալիքը: Նա դեռ մայիսի սկզբին քաջ գիտեր, որ շուտով Նախիջևանում տեղի է ունենալու զանգվածային ջարդ, և որ «ոստիկանական ու զինվորական ուժերը բավական չեն լինի» կարգը վերահաստատելու համար:

Ամիսներ հետո պարզվել էր, որ Ֆաթուլլայի սպանությունը կատարել էր Ալի անունով մեկը. զայրացած այն բանից, որ իր զոհը, ղուրանի արգելքին հակառակ, գյավուրների պես խմում է գինի և հարբում, որոշում է սպանել նրան[1]:

Նախքան ընդհանուր կոտորածն սկսելը, սպանված Թուրքի եղբայրը մայիսի 7-ին Այլաբադ գյուղից Նախիջևան եկող ճանապարհին երկու հայերի հանդիպելով, նրանցից մեկին սպանում է, իսկ Գրիգոր անունով մյուսին հաջողվում է փրկվել փախուստով: Սրան քաղաքի մոտերքում Թուրքերը բռնում են որպես Ֆաթուլլա Ալիի սպանողի: Հուզված ու զայրացած Թուրքերը հաջորդ օրվանից այս ու այնտեղ կատարում էին հայերի անհատական սպանություններ: Մայիսի 6-ից սկսած՝ հայերը դուրս չէին գալիս տներից, թեև սպանության հետ ոչ մի առնչություն չունեին:

Այդ օրերին Թուրքերի և կազակ սպաների միջև մի զարմանալի մտերմություն էր սկսվել: Վերջիններս հաճախ էին գնում Թուրքական գյուղերը՝ իբրև «հյուր»: Բայց «հյուրերը» գնում էին ցանկացողներին հրացանաձգություն սովորեցնելու:

Պարսկաստանից գործով Թիֆլիս գնացող ուղևորներից մեկը, որը կանգ էր առել Նախիջևան քաղաքում, փողոցում լսել էր հետևյալ խոսակցությունը մի ազդեցիկ Թուրքի և նրա հավատակիցների միջև. «Ա՛յ, հիմարներ,- ասել էր նա,- ինչո՞ւ զենքով չեք մտնում գալիս»: «Բայց ո՞ւր է զենքը կամ փողը», - հարցրել էին նրան: «Մի՞թե Նախիջևանի խաները փող քիչ ունեն, դիմեցե՛ք նրանց»: Հետևյալ օրը այդ խոսակցությանը ներկա բոլոր Թուրքերը զինված էին[2]:

Նախքան կոտորած սկսելը, Թուրք ղեկավարները, մեծ զգուշավորություն հանդես բերելով, զինված մարդիկ էին դրել քաղաք եկող բոլոր ճանապարհներին, որպեսզի մերձակա գյուղերի հայերը չկարողանան օգնության գալ իրենց ազգակիցներին:

Արդեն ուր որ է՝ պիտի սկսվեր կոտորածը, երբ մայիսի 11-ին Երևանից Նախիջևան եկավ փոխնահանգապետ՝ իշխան Գոլիցինի նախկին ադյուտանտ, գնդապետ Տարանովսկին,որի հետ վերադարձել էր նաև Երևան գնացած Նախիջևանի քաղաքագլուխ Ջաֆար Ղուլի խան Նախիջևանսկին: Նրանց հետ Նախիջևան էին եկել նաև Երևանի քաղաքագլուխ Հ. Մելիք-Աղամալյանը և Երևանի առաջնորդական փոխանորդ Կարապետ վարդապետը: Նահանգապետի հանձնարարությամբ այս չորսը Նախիջևան էին եկել «խաղաղեցնելու

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ.44:
[2] «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 81:

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 178, թ.1:
[2] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 105:

մտքերը», «հանգստացնելու հայերին» և «փարատելու տագնապը»[1]: Տարանովսկին իջևանել էր Ջաֆար Ղուլի խանի եղբոր՝ Ռահիմ խան Նախիջևանսկու ապարանքում և երկու շաբաթի չափ վայելում էր նրա առատաձեռն հյուրընկալությունը:

Հայ վաճառականները, վտանգը դեռևս անցած չհամարելով, տներից դուրս չէին գալիս, և նրանց խանութները շարունակում էին փակ մնալ:

Մայիսի 12-ի առավոտյան Տարանովսկին նախաճաշում էր Ռահիմ խանի ապարանքում: Այնտեղ էր նաև Ռահիմի եղբայրը՝ Ջաֆար Ղուլի խանը: Նախաճաշից հետո նրանք երեքով դուրս են գալիս շուկա, որտեղ իրենց մոտ են կանչում հայ վաճառականներին ու առևտրականներին և նրանց համոզում բացել խանութներն ու կրպակները՝ երաշխավորելով բոլորի կյանքի և գույքի անվտանգությունը: Հայերը դրանից հետո էլ, համոզված չլինելով, թե այլևս վտանգ չկա, չեն համաձայնում բացել խանութները: Բայց Ջաֆար ու Ռահիմ խաները համառում են և պահանջում կատարել իրենց հանձնարարությունը, խոստանալով, որ եթե որևէ բան պատահի, ապա ողջ պատասխանատվությունը վերցնելու են իրենց վրա: Իր հերթին, ինչպես նշում էր "Наша Жизнь" թերթը 1905թ. N111-ում, փոխնահանգապետը, դիմելով հայ խանութպաններին, ասում է. «Եթե դուք չբացեք կրպակները, ես բոլորիդ Սիբիր կքշեմ»:

Հայերը, տեղի տալով, սկսում են շուկայի մի ծայրից բացել իրենց խանութներն ու արհեստանոցները: Խանութների, կրպակների և արհեստանոցների բացումը դեռ չէր հասել շուկայի մյուս ծայրը, երբ փոթորիկը պայթեց: Հանկարծ թուրքերի զինված ամբոխը վայրենի աղաղակներով նետվում է հայերի վրա, որոնք, համարյա բոլորը, սրի են քաշվում կամ գնդակահար լինում: Շուկայից կարողանում է դուրս փախչել միայն մի քանի հայ:

Գազանացած թուրք խուժանի սրերից սպանված մի քանի տասնյակ անմեղ հայ տղամարդկանց ու կանանց դիակները մնացել էին իրենց լճացած արյան մեջ:

Միաժամանակ սկսվում է շուկայի հայկական կրպակների և խանութների կողոպուտն ու ավերումը:

Նախիջևան քաղաքից չորս կիլոմետրի վրա գտնվող Ցամխանա հայկական գյուղի բնակիչ Խաչատուր Դանուղյանցը, որն այդ պահին գտնվում էր շուկայում, կոտորածից հետո անցնելով Թիֆլիս, այնտեղ իր տված ցուցմունքի մեջ վկայում էր. «Ռահիմ խան Նախիջևանսկին, խրախուսելով մարդասպաններին և ջարդարարներին, ցուցում էր տալիս. «Կոտորեցե՛ք քաղաքի անվանի ու հարուստ բոլոր հայերին»[2]: Եվ, իսկապես, սպանվում են Նախիջևան քաղաքի

[1] ՀՀ ԿԳԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.2:
[2] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 173, թ.2:

համարյա բոլոր անվանի հայերը: Սրի հարվածից ընկնում է մեծահարուստ Պողոսովը, իրենց խանութների բոցերի մեջ այրվում են խոշոր վաճառականներ Խալաթյան եղբայրները, Կարապետ Ադամյանը, թալանի է տրվում նրանց ողջ ունեցվածքը:

Կոտորածի և թալանի մասնակիցները բաժանված էին խմբերի: Ցուրաքանչյուր խմբի առջև դրված էր որոշակի խնդիր. մի խումբը սպանում էր, մյուս խումբը զբաղված էր կողոպուտով. այս խմբի հետ էին երկաթուղային փականագործները, որոնց թուրքերը ստիպողաբար քաղաք էին բերել հայերի երկաթյա դրամարկղերը բացելու կամ կոտրելու համար: Երրորդ խումբը հրդեհում էր խանութները, կրպակներն ու արհեստանոցները, ինչպես և սպանված ու վիրավոր հայերի վրա նավթ լցնելով՝ կրակի էր տալիս: Վերջապես, չորրորդ խմբի անդամները կրում էին ֆես և ամբոխին գրգռում ու ջարդերի մղում ոգեշունչ կանչերով:

Երբ Նախիջևանի շուկայում սկսվեց կոտորածն ու թալանը, տեղական զորքը գտնվում էր դաշտում, մոտ երեք վերստ հեռավորության վրա, և զբաղված էր զինավարժությամբ: Միայն երեկոյան կողմ զորքը վերադարձավ քաղաք, բայց սպաները զինվորներին տարան ոչ թե աղետի վայրը, այլ՝ ուղիղ զորանոց: Այնտեղ զինվորները նախ ճաշեցին, հետո նրանց զբաղեցրին փամփուշտներ բաժանելով և այլ ձևականություններով, որը տևեց ամբողջ երեք ժամ: Միայն դրանից հետո զինվորները մեկնեցին շուկա, բայց, ի զարմանս հայերի, նրանք կանգ առան պետական գանձարանի շինության առջև, հրացանները ցցեցին գետնի վրա և վարչական մարմինների կարգադրությամբ գնացին հանգցնելու շուկայի հրդեհը, որպեսզի կրակը չանցնի թուրքերի խանութների վրա[1]:

Այս ընթացքում, երբ զինվորները հանգցնում էին հրդեհը, խուժանը շարունակում էր իր ավերները, կոտորում մարդկանց, սայլերով և գրաստներով անարգել տանում թալանած ապրանքը: Ովքեր սայլ կամ գրաստ չունեին, հանգիստ ու անվախ իրեղեններ էին կրում դես ու դեն: Իրենց հերթին թուրք խանութպանները դատարկում էին իրենց խանութները, որպեսզի հետո հափշտակության հանցանք բարդեն հայերի վրա: Այդ ամենը կատարվում էր զինվորների ու սպաների աչքի առջև, որոնք սառնասիրտ հանդիսատես էին: Նույն դերի մեջ էին նաև ոստիկանապետն ու ոստիկանները: Այս սարսափների ժամանակ շուկայում էր գտնվում ոստիկանական պրիստավ Թուրք Մեխտի բեկը, որը ոչ միայն արգելք չէր հանդիսանում ջարդարարների ոճիրներին, նրանցից չէր խլում զենքը, այլ, ընդհակառակը, որոշ ուշացումով շուկա թափված թուրք խաժամուժին ցուցում էր տալիս, թե ում դեմ և դեպի ուր ուղղել զենքը: Պրիստավ Պավլովը և ոստիկաններից շատերն իրենք էին

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 173, թ.2:

ատրճանակներից գնդակ արձակում փախչող ու փրկություն որոնող հայերի հետևից: Գավառապետի օգնական Գոգոբերիձեն և մի քանի ոստիկանական աստիճանավորներ ծխախոտները բերանին անհոգ դիտում էին, թե ինչ է կատարվում շուրջը: Փոխնահանգապետ Տարանովսկին վերջին խոսքերով հայհոյում էր իրեն դիմող և օգնություն հայցող հայերին, նրանց համարում այդ ամենի մեղսակիցներ և արժանի ամեն տեսակ պատժի: Իր տարերքի մեջ էր մոլի թուրքասեր, իրավաբան Կենգերլինսկին, որը մինչ այդ էլ հայտնի էր Նախիջևանի հայերի նկատմամբ գործած իր բազմաթիվ ոճիրներով*: Ջաֆար Ղուլի խանն էլ մոտ եկած հայերին փորձում էր հավատացնել, թե ինքն անզոր է զսպելու կատաղած խուժանին: Նա, որ մի քանի ժամ առաջ երաշխավորում էր, թե հայ վաճառականներին ոչինչ չի պատահի, այժմ չտեսնելու էր տալիս, թե ինչպես են գազանաբար կոտորում իր խոսքերին միամտորեն հավատացած հայ վաճառականներին, որոնցից շատերին նա մինչ այդ համարում էր «բարեկամներ»:

Իսկ խուժանն ամբողջ երեք օր անդադար ազատ ու համարձակ շուկայից կրում էր հայերի ապրանքը: Կողոպտող խմբերից մեկի ղեկավարն էր ոստիկանական գրասենյակի գործավար Միրզա Քյազիմ Կուլիբեկովը, որը թալանած ապրանքը ուղիղ տանում էր իր տունը: Նրա նման, նրանից մեծ ու փոքր թալանչիներ վխտում էին չորս բոլորը: Տանում էին սայլերով, ուղտերով, ձիերով, շալակով: Ամեն մետրի վրա գզվռտոց էր: Երբ խանութները դատարկվելու վրա էին, թալանչիներն սկսեցին միմյանցից խլխլել կողոպտած ապրանքները[1]:

Պարսկաստանի Ուրմիայի շրջանից Նախիջևանի և Արարատյան դաշտի վրայով դեպի Թիֆլիս գնացող 67 ասորիներից բաղկացած մի խումբ մայիսի 12-ին Նախիջևան քաղաքում ականատես է լինում հայերի կոտորածին: Նրանցից մեկը՝ Նազար Քյալ Այվազովն իր ցուցմունքում, որ տվել էր մայիսի 22-ին Թիֆլիսում, նշել էր.

«Երբ մենք հասանք Նախիջևան քաղաք, շուկան արդեն ավերված էր, և այնտեղ գտնվող համարյա բոլոր հայերը՝ սպանված: ...Թաթարները բացահայտ շարունակում էին տանել այն ամենը, ինչ դեռ մնացել էր հայերի խանութներում ու կրպակներում: ... Ես ականատես եղա նաև այսպիսի մի դեպքի. երեք թաթար, դուրս գալով հայ դերձակի արհեստանոցից, գետնի վրայով քարշ էին տալիս բավականին մեծ մի կարի մեքենա: Ոստիկան պրիստավը, դիմելով նրանց, ասում էր. «Չի կարելի այդպես քարշ տալ մեքենան, չէ՞ որ այդպես այն կփչանա: Վերցրեք ուսերի վրա և տարեք»: Ըստ որում, պրիստավը, ձեռքը դնելով թաթարներից մեկի ուսին, ցույց էր տալիս,

* Գավառապետ Էնգելը պաշտոնյաներից միակն էր, որն այդ օրերին փորձում էր ինչ-որ բան անել՝ դադարեցնելու կռիվը (տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ.92, թ.8):

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 8, 9:

թե ինչպես ուսին վերցնել մեքենան»[1]:

Նույն ասորիների խմբից Աբել Իվանով անունով մեկը պատմել է.

«Մայիսի 12-ի կեսօրին ժամը 3-ի կողմերը մենք մոտեցանք Նախիջևան քաղաքին: Հանկարծ մեզ շրջապատեց մի քանի հարյուր թաթարներից բաղկացած ամբոխը: Բոլոր թաթարները զինված էին զենքով և հրազենով: Նրանց մեջ կային այնպիսիք, որոնք իրենց ձեռքին ունեին մերկացած դաշույններ և սրեր: Ամբոխը գտնվում էր գրգռված վիճակում, աղմկում էր, գոռգոռում: Նրանց մեջ չկար մեկը, որի կռնակին կամ ուսին մանուֆակտուրա կամ այլ ապրանք չլիներ: ... Մոտենալով մեզ, նրանք թալանեցին մեր բոլոր սայլերը, խլեցին այն ամենը, ինչն ընկավ իրենց ձեռքը: Լրիվ կողոպտելուց հետո թաթարները մեզ ուզում էին սպանել՝ դնելով հայերի տեղ: Արցունքն աչքերիս մենք աղաչում-պաղատում էինք չզրկել մեզ կյանքից, համոզելով, որ մեր մեջ չկան հայեր: Թաթարները սկզբում չէին հավատում, ուստի ստիպեցին հայհոյել հայի կրոնը, որը և արեցինք»[2]:

Նախիջևանի հայերի արյան հոտը և նրանց անբավ հարստության թալանի լուրը կայծակի արագությամբ հասել էր Արաքսի պարսկական ափը, որտեղ հավաքվել էին հարյուրավոր քրդեր՝ գետն անցնելու և Նախիջևանում ծայր առած կողոպուտին մասնակցելու համար[3]:

Վերևում հիշատակված ասորի Նազար Քյալ Այվազովը անդրադառնալով այդ փաստին, վկայել է.

«Հիշում եմ այսպիսի մի դեպք. թաթար ամբոխը ներկայացել էր Ռահիմ խանին: Վերջինս դիմելով ամբոխին՝ ասում էր. «Արաքսի պարսկական ափին հավաքվել են մոտ 500 քրդեր, որոնք ուզում են անցնել սահմանը և գալ ձեզ օգնության: Ձեզ պե՞տք է նրանց օգնությունը»: Թաթարները միաբերան աղաղակում են. «Ո՛չ, ո՛չ, մեզ պետք չէ պարսկական քրդերի օգնությունը: Մենք ինքներս հաշիվ կմաքրենք հայերի հետ: Իսկ եթե քրդերը գան, ապա կարող է այնպես լինել, որ նրանք կողոպտեն նաև մեզ»: Ռահիմ խանը մարդիկ է ուղարկում Արաքսի ափը և հետ ուղարկում քրդերին»[4]:

Կողոպտած ապրանքի զգալի մասը ընկել էր քաղաքաբնակ և շրջակա գյուղերի թուրքերի ձեռքը, բայց թալանի հիմնական զանգվածը գնում էր երկու ճանապարհով. մեկը դեպի քաղաքի կենտրոնում գտնվող Ռահիմ խանի ապարանքը, երկրորդը՝ Ջաֆար Ղուլի խանի պահեստները:

Ահա թե ինչ ցուցմունք էր տվել մի ռուս աստիճանավորի կինը՝ Անտոնինա Կուլիկովան, որը կոտորածի օրը վախից փախել ու ապաստանել էր Ռահիմ խանի տանը. «Անդադար խանի պալատն էին գալիս թուրքեր և նրանից

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ.17:
[2] Նույն տեղում, թ.3:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 17,18,19:
[4] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ.18:

խնդրում թույլատրել սպանելու տեղացի հայտնի վաճառականներ Դարչինյանին, Սիմոնյանին և ուրիշ նշանավոր անձնավորությունների: Թուրքերը աշտարակի տակի դռնով Ռահիմ խանի ապարանքն էին տանում հսկա արկղերով թալանված թանկ խմիչքներ, դրսի պատի կողմից ապարանքի գավիթն էին շպրտում հակերով կաշիներ, որոնք հետո տանում և դասավորում էին նկուղում: Իսկ տան վերին հարկում խանի ծառաները սնդուկների մեջ դասավորում էին բերած գորգերը, կերպասեղենը և արբեշումի կտորեղենը»[1]:

Դա պատահական չէր. չէ՞ որ Նախիջևանի ջարդերի հեղինակը Ռահիմ խանն էր:

Արյան հոտից հարբած խուժանը երեկոյան կողմ հարձակումներ սկսեց հայերի տների վրա:

Եթե շուկա խուժած ամբոխին հայերն ի վիճակի չեղան դիմադրություն ցույց տալ, որովհետև հանկարծակիի էին եկել և, բացի այդ, ինքնապաշտպանության շատ քիչ միջոցներ ունեին, ապա քաղաքում իրենց փոքրաթիվ հրացաններով նրանք մի կերպ պաշտպանում էին թաղերը: Այդ ընթացքում նրանք զգալի զոհեր տվեցին, բայց մի քանի զոհ ունեցան նաև թուրքերը:

Քաղաքը ներկայացնում էր մի անօրինակ տեսարան. հրացանների որոտ, ծխացող տներ, փշրված կահկարասիք, փողոցների մեջ ցիրուցան դիակներ, անդամահատված կանայք, ածխացած երեխաներ: Շատ կանայք բռնաբարված էին, երեխաները՝ շպրտված գետը: Սիրտ կտրատող լաց ու կոծը, «Եա՛ Ալի» աղաղակները լցրել էին օդը: Իրենց ջարդարարական եռանդով հատկապես աչքի էին ընկնում ջաղարացի թուրքերը: Գերմարդկային ուժ էր պետք տանելու այդ բոլորը:

Այդ օրը շուկայում և քաղաքում սպանված հայերի թիվն անցնում էր 100-ից: Դրանց զգալի մասն այրված էր: Օրվա ընթացքում թուրքերի կորուստները կազմել էին 6 սպանված և մի քանի վիրավոր:

Մայիսի 12-ի օրվա վերջին Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետ, գնդապետ Ցակովլևը N1233 հեռագրով հաղորդում էր Պետերբուրգ՝ ոստիկանական դեպարտամենտին և ժանդարմական կորպուսի շտաբին.

«Նախիջևանում հայերի և թաթարների միջև ծագած ընդհարումների հետևանքով ամենուր սպանություններ, հրդեհներ, կողոպուտներ են: Վաղը առավոտյան Երևանից այնտեղ է մեկնում զորք: Առիթը տվել են հայերը՝ սպանելով վեց թաթար»[2]: Գրության մեջ, ինչպես տեսնում ենք, ոչինչ չէր ասված սպանված հայերի մասին: Ցակովլևը շարունակում էր. «Մուսուլմանները բացատրում են, որ սպանություններ կատարող հայերը հույս ունեն դրանով իսկ առաջ բերել թաթարների և պարսիկների կատաղությունը, որոնց օգնելու

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 178, թ.20:
[2] Նույն տեղում, գ. 140, թ.42:

համար Թուրքիայից անխուսափելիորեն Նախիջևան կներխուժեն քրդական ուժեր, իսկ սրանց կողմից սահմանի խախտումը առիթ կտա Թուրքիայի և Ռուսաստանի ընդհարմանը»[1]:

Հաջորդ օրը՝ մայիսի 13-ին, Ցակովլևը հետևյալ հեռագիրն է հղում Պետերբուրգ, ժանդարմերիայի շեֆին. «Ի լրացումն երեկվա հեռագրի՝ զեկուցում եմ. Նախիջևանում անկարգությունները դադարել են: Հայկական բոլոր կրպակները կողոպտված են, դրանցից 8-ը՝ հրդեհված: Սպանված է 29 հայ և 7 մուսուլման: Վիրավոր հայերը 7 հոգի են, թաթարները՝ 4»[2]:

Իր հեռագրում գնդապետը ավելի քան երեք անգամ նվազեցրել էր սպանված և առնվազն 10 անգամ վիրավոր հայերի թիվը:

Մայիսի 12-ի լույս 13-ի գիշերը Նախիջևան քաղաքի հայերի աչքին քուն չեկավ: Նրանք բոլորը սպասում էին վաղվա նոր արհավիրքների: Լույսը բացվեց, և ծխացող քաղաքի այս կամ այն փողոցից նրանք սկսեցին հավաքել իրենց հարազատների ու ազգակիցների դիակները:

Թիֆլիսից Փարիզի մամուլին ուղարկած հեռագրերից մեկում ասված էր. «Նախիջևանի կոտորածը Բաքվի ջարդից Է՛լ ավելի ահավոր է: Հայերի բոլոր խանութները թալանված և այրված են: ... Քաղաքը պաշարման վիճակի մեջ է, ոստիկանությունը զոհերին ոչ մի աջակցություն ցույց չի տալիս: Հայերի վիճակը սոսկալի է ...»[3]:

Բայց որքան էլ չինովնիկները պաշտոնապես կեղծում էին փաստերը և Նախիջևան քաղաքի կոտորածների մեղքը փորձում բարդել հայերի վրա, հասարակայնությունը, այնուամենայնիվ, հասու էր լինում ճշմարտությանը, և այդ գործում մեծ էր մամուլի դերը:

Մայիսի 14-ին Թիֆլիսից փոխարքայի օգնական Մալաման հեռագրով Նախիջևանի գավառապետին կարգադրել էր միջոցներ ձեռնարկել կողոպտված ապրանքները տերերին վերադարձնելու համար, լավ իմանալով, որ դա անհնարին բան է: Երբ հեռագրի բովանդակությանը տեղյակ պահեցին թուրքերին, սրանք զարմացած ու վրդովմունքով բացականչում էին. «Սա ի՞նչ օյինբազություն է. մեկն ասում է թալանեցե՛ք, մյուսը հրամայում է, թե թալանածներդ հետ վերադարձրեք»[4]:

Մայիսի 13-ին, իրերի բերումով, Նախիջևան քաղաքում էր գտնվել "Наша Жизнь" թերթի աշխատակիցը, որը թերթի 1905թ. N111-ում լույս ընծայած հոդվածում վկայում էր, որ երբ փոխնահանգապետ Տարանովսկու հետ զրույցի ժամանակ ինքը ցավ էր հայտնել հայերի զանգվածային կոտորածի առթիվ, վերջինս ասել էր. «Այդ փոքր արյունաթողությունը (кровопускание) օգտա-

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 140, թ.44:
[2] Նույն տեղում, թ.45:
[3] «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 81:
[4] Նույն տեղում, N 7(160), հուլիս, 1905, էջ 106:

կար է հայուվներին (для армянек)»:

Նախիջևան քաղաքի կոտորածներին այդ օրերին անդրադարձան ռուսական մամուլի բազմաթիվ օրգաններ ևս: "Сын Отечества"թերթը (N 551) շեշտում էր, թե ինչպիսի անկասելի ֆանատիզմով էին մուսուլմանները կոտորում քրիստոնյա հայերին: "Русское Слово" թերթում (N154) տպագրած թղթակցության մեջ Ն.Ա. Նեմիրովիչ-Դանչենկոն նշում էր, որ կոտորածը ծրագրավորված է եղել նախօրոք: Անողոք մերկացումներով հանդես էին գալիս հատկապես սոցիալիստական մամուլը, մամուլի դաշնակցական և հնչակյան օրգանները:

*

* *

Նախիջևան քաղաքի կոտորածից հետո սկսվեց գավառի հայկական գյուղերի ջարդը, որը տևեց մեկուկես շաբաթ:

Գյուղերի ջարդը նախապատրաստվել էր խնամքով: Մի շարք գյուղերում մուսուլմաններն ու հայերն ապրում էին միասին: Մոտավորապես մեկ շաբաթ առաջ, դեռ մինչև Նախիջևան քաղաքի կոտորածը, այդպիսի խառը գյուղերից մուսուլմանները սկսել էին հեռանալ թուրքական գյուղերը՝ իրենց հետ տանելով ողջ ունեցվածքը և անասունները:

Քաղաքում կատարած արյունահեղության օրը՝ մայիսի 12-ին, թուրք ղեկավարները գավառի մուսուլման ողջ բնակչությանը «ջիհադի» կամ «սանջաղ շարիֆի» կոչ արեցին: Ամբոխը, բարձրացնելով կանաչ դրոշներ, անցնում էր թուրքաբնակ գյուղերով և հավատացյալներին, փոքրից մեծ, կոչ անում զենք վերցնել և կոտորել «այլադավան թշնամի հայերին»[1]:

Նախիջևան քաղաքից դուրս ընդհարումներն սկսվեցին ամբողջ գավառի տարածքով մեկ՝ ոչ թե հաջորդաբար, այլ միաժամանակ:

Նախիջևանի գավառի բնակլիմայական պայմանի թելադրանքով ինչպես հայ, այնպես էլ թուրք գյուղերը հիմնականում գտնվում էին գավառի տարածքով անցնող և Արաքս թափվող գետերին և դրանց բազուկներին հարող մեծ ու փոքր հովիտներում: Այդ գետերն էին՝ Նախիջևանը, Ջահրին (Ջահուկ), Երնջակը (Ալիջան), Շուռութը, Գիլանը: Մի շարք գյուղեր գտնվում էին Կոնգուրտ-Ալանգյազ լեռնաշղթայից սկիզբ առնող փոքրիկ գետերի վրա:

Նախիջևան գետի և նրա ճյուղավորումների վրա ընկած էր 24 հայկական գյուղ, որոնցից 15-ը գտնվում էին գետի ստորին հովտում Հաջիվար, Թազաքենդ, Ուզուն-Օբա, Մամարզա-դիզա, Քյուլթափա, Քյարիմ-բեկդիզա, Կուլի բեկ-դիզա, Ղարախանբեկլու, Ցարըմջա, Շխմամուտ, Թմբուլ, Խալիլու, Ցամ-

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 3, թ.13:

խանա, Կարմիր Վանք, Այլաբադ, իսկ 9-ը՝ գետի վերին հովտի և նրա ճյուղերի վրա՝ Ալագյոզ-Մազրա, Խալխալ, Բաղամլու, Շահապունյաց ձորի լանջերի վրա գտնվող Ղարաբաբա, Առինջ, Նորս, Նորս-Մազրա, Գժաձոր և ամենահեռավոր Գյոմուրը (Գյումրին)՝ ընկած բարձր Սալվարդ սարի վրա:

Նախիջևան գետի ստորին հովտում իրենց աղմկահույզ և ավազակային բարքերով աչքի էին ընկնում Նեհրամ, Ղահաբ, Բաղաշխա, Բուլգան, Կարաչուգ, Ղոշա-դիզա, իսկ գետի վերին հովտում Շահբուզ և Քյուլուզի թուրք գյուղերը:

Ջահրի (Ջահուկ) գետի հովտում ընկած Նախիջևան գավառամասի 10 հայաբնակ գյուղեր՝ Օղբի, Հորադիզ, Աղխաչ, Ալմալու, Սես, Սուլթան-բեկ, Ջնաբերդ, Ջահրի (Ջահուկ), Նազարաբադ, Դիդուվար, ցրված էին գավառի հյուսիսային լեռներում և ձորերում շրջապատված բազմաթիվ մանր ու մեծ թուրք գյուղերով, որոնց մեջ իրենց արյունալի բարքերով հատկապես հայտնի էին Խոկը և Իթղռանը:

Երնջակ (Ալիջան) գետի հովտում էին 6 հայաբնակ գյուղերը՝ Ղազանչին, Նորաշենը, Աբրակունիսը, Արազինը, Կզնութը և Ջուլֆին:

Երնջակ գետից դեպի արևելք, Գողթան գավառամասի արևմտյան սահմանի վրա, իր բազմաթիվ ճյուղերով տարածված Շուռութ և Գիլան գետերի հովտում ընկած էին Գողթանի 10 հայկական գյուղերը՝ Փորադաշտը, Շուռութը, Գյազը, Մսրվանը, Ալահին, Բիստը, Փառական, Վերին Ազան, Ներքին Ազան և Դերը:

Ինչպես Երնջակ, այնպես էլ Շուռութ և Գիլան գետերի հովիտների հայկական գյուղերը գտնվում էին թուրք գյուղերի հարևանությամբ՝ մեջընդմեջ:

Գիլան գետից դեպի արևելք, Կոնգուրտ-Ալանգյազի լեռնաշղթայից սկիզբ առնելով, գալիս թափվում են Արաքսը հինգ՝ Ցղնա, Վանանդ, Ագուլիս, Օրդուբադ, Կարճևան փոքրիկ գետակները, որոնց վրա էին Գողթանի մյուս 10 հայաբնակ գյուղերը և Օրդուբադը: Ցղնա գետի վրա ընկած էին Ռամիսը և Ցղնան, Վանանդ գետի վրա՝ Քաղաքիկը, Տանակերտը և Դիասարը, Ագուլիս գետի վրա՝ Վահրակերտը, Վերին Ագուլիսը և Ներքին Ագուլիսը, Օրդուբադ գետի վրա՝ Հանդամեջը և Օրդուբադը, Կարճևան գետի վրա՝ Կարճևանը:

Այսպիսով, 1905թ. մայիսին Երևանի նահանգի Նախիջևան գավառի հայաբնակ գյուղերի թիվը հասնում էր 60-ի*:

Հայկական գյուղերից առաջինը հարձակման թիրախ դարձան Նախիջևան գետի ստորին հովտի Ուզուն-Օբա և Մամարզա-դիզա հայ-թուրք խառը բնակչություն ունեցող և զուտ հայաբնակ Թազաքենդ գյուղերը: Ուզուն-Օբայի և Մամարզա-դիզայի հայերը չդիմացան համագյուղացի թուրքերի հարձակում-

* Նախիջևան գավառում 1905թ. հայկական գյուղերի տեղաբաշխման մասին տվյալները և անվանումները վերցված են Ա-Դ0-ի վերոհիշյալ աշխատությունից, էջ 73-97:

ներին, քանի որ վերջիններս զինված էին, իսկ հայերի ձեռքին չկար անգամ մի հրացան: Անհոգության հետևանքն այն եղավ, որ այդ երկու գյուղերի հայերը, թողնելով ամեն ինչ, փախան և ապաստանեցին Հարևան Շխամամուտ գյուղում:

Ի տարբերություն Ուզուն-Օբայի և Մամարզա-դիզայի՝ Թազաքենդի հայ բնակիչները կարողացան համառ դիմադրություն ցույց տալ, հետ մղել թուրք ամբոխի բոլոր գրոհները և պաշտպանել գյուղը:

Մայիսի 13-ին հարձակումների ենթարկվեցին Նախիջևան գետի ստորին հովտի Հաջիվար, Քյուլթափա, Քյարիմ բեկ-դիզա, Կուլի բեկ-դիզա և Ղարախանբեկլու հայկական գյուղերը: Հաջիվարցիները չկարողացան դիմադրություն ցույց տալ, քանի որ նրանց ձեռքին եղած հին սիստեմի 2-3 հրացանները չէին կարող փրկել դրությունը: Ստեղծված անելանելի վիճակում նրանք ստիպված փախան քաղաք՝ թուրքերին թողնելով իրենց ողջ ունեցվածքը: Մտնելով գյուղ՝ սրանք թալանեցին ամեն ինչ, պղծեցին եկեղեցին, սպանեցին քահանային, ջարդուփշուր արեցին բեմի վրայի սեղանը, հափշտակած նշխարները նետեցին գոմաղբի մեջ:

Հաջիվար գյուղից բացի, Նախիջևան գետի ստորին հովտի՝ վերը հիշատակված բոլոր հայկական գյուղերը կարողացան պաշտպանվել, որովհետև դրանց երիտասարդների զգալի մասը ոչ միայն զինված էր, այլև գիտակցում էր իր հասարակական պարտքը:

Մայիսի 14-ը ողբերգական եղավ Թմբուլ գյուղի հայերի համար[1]: Այս գյուղը Նախիջևան գետի ստորին հարթավայրի գյուղերից ամենահարուստն էր: Այն իր բնակչությամբ միատարր չէր: 180 ծխից բաղկացած Թմբուլում մոտ 50-ը թուրք ընտանիքներ էին, որոնց ձեռքին էր գյուղի մշակելի հողերի մեծ մասը: Գյուղի հայ բնակիչները կապված էին Երևանի և Բաքվի հետ, զգալի թվով երիտասարդներ աշխատանքի էին գնում Բաքվի նավթահանքերը և, վերադառնալով հայրենի գյուղ, իրենց հետ բերում էին նավթաշխարհում սովորած զանազան արհեստներ: Մայիսի 12-ին Նախիջևան քաղաքի կոտորածի ժամանակ զոհվել էին մի քանի Թմբուլցիներ, որոնք շուկայում ունեին արհեստանոցներ: Թմբուլի հայերի վիճակը ծանր էր ոչ միայն այն պատճառով, որ գյուղի ծխերի զգալի մասը թուրքերինն էր, այլև նրանով, որ գյուղը հարևան էր ավազակաբարո բարքերով հայտնի բնակիչներ ունեցող Բուլգան, Կարաչուգ և Ղոչա-դիզա թուրքական գյուղերին, որոնք մշտական թշնամական հարաբերությունների մեջ էին Թմբուլցի հայերի հետ:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Թմբուլի հայերը մշտապես ձգտում էին չբարդացնել իրենց հարաբերությունները համագյուղացի թուրքերի հետ, ուստի միշտ զիջող էին, միշտ ընդառաջ գնացող՝ հանուն երկու համայնքների

[1] ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ.13-14:

խաղաղ համակեցության:

«Մշակ» թերթը Թմբուլից 1905թ. մարտի 3-ի թվով ստացել էր մի նամակ՝ Մ.Ստեփանյանց ստորագրությամբ, որը, սակայն, չէր տպագրվել և մնացել էր խմբագրության արխիվում: Նամակագիրը պատմում էր, թե Թմբուլ գյուղում որքան շատ ջանք է գործադրվում ազգամիջյան բորբոքված կրքերը մարելու համար: Իր քարոզներով հատկապես խաղաղարար մեծ աշխատանք էր կատարում գյուղի ավագ քահանա Սիմոն Տեր-Ստեփանոսյանցը[1]:

Հիշատակված երեք թուրք գյուղերի բնակիչներն էին, որ խմբերով հարձակում գործեցին Թմբուլի վրա: Հարմար դիրքեր գրավելով գյուղի մատույցներում մի քանի տասնյակ մարդ մտավ թուրքական թաղը: Ելուզակները, ինչպես չար ոգիներ, նավթոտ ցախավելներով և բոցավառված հարդե խրձերով ու լաթերով մի տնից մյուսն էին վազում, դրանք նետում հայերի տների ներքնահարկերը, սենյակների պատուհաններից ներս: Հրեղեն բոցերը կուլ էին տալիս ջինությունները, մարդկանց, կենդանիներին:

Հայերը քաշվեցին գյուղի կենտրոնի մեծ տները և սկսեցին պաշտպանվել ձեռքի տակ եղած զենքերով: Թուրքերը լքված տները խուժելով, թալանելուց հետո կրակի տվին: Հայերից նրանք, որոնք չէին հասցրել մտնել հիշյալ մեծ տները՝ զոհ դարձան դաշույնների ու կացինների: Հատկապես անլուր խժդժություններ էին կատարում համագյուղացի թուրքերը: Թմբուլում սպանվեց 40 հայ՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, որոնցից շատերն այրվել էին ողջ-ողջ: Մարդասպանները կատարել էին նաև ուրիշ անգթություններ՝ կտրել էին կանանց ստինքները, պատռել արգանդը և երեխան դուրս նետել, մերկացրել, բռնաբարել էին դեռահաս պարմանուհիներին:

Ճանապարհները բռնված էին մահմեդականների հոծ խմբերով, որոնք անհնար էին դարձնում ուրիշ գյուղերից օգնությունը: Այնուամենայնիվ, այդ օրհասական պահին Թմբուլից 2-3 վերստի վրա գտնվող Ցամխանա գյուղից եկան զինված հայեր: Քիչ անց քաղաքից Թմբուլ հասավ մի վաշտ՝ 50 զինվորներով: Բայց արդեն ուշ էր. իրենց սև գործը վերջացնելով՝ թուրքերը պատրաստվում էին հեռանալ: Նրանք թալանած ունեցվածքը տանում էին, բայց զինվորները ոչ մի փորձ չէին անում կանգնեցնելու և վերադարձնելու կողոպտածը: Իսկ երբ օգնության եկած յամխանացի հայերը փորձեցին այդ բանն իրենք անել, վաշտի հրամանատարը կրակ բացելու սպառնալիքով արգելք եղավ, պատճառաբանելով, թե դա ավելորդ հուզում առաջ կբերի թուրքերի մեջ: Գյուղացիների այն հարցին, թե ինչու արգելք չեն լինում սպանություններին ու թալանին, զինվորները պատասխանում էին, թե դա արգելված է պետերի կողմից:

[1] ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 11, թ. 5:

Այնուամենայնիվ, յամխանացի հայերի և ռուսական վաշտի մուտքը Թրմբուլ վճռական նշանակություն ունեցավ. համատեղ գործողություններով հնարավոր եղավ վերացնել կենտրոնի տների պաշարումը և գյուղի հայերին փրկել ստույգ մահից:

Թմբուլցիներին յամխանացի հայերի ցույց տված օգնությունը թուրքերը դիտեցին որպես մարտահրավեր և նույն օրն իսկ հարձակում գործեցին Ցամխանա գյուղի վրա, բայց հաջողություն չունեցան: Ամբոխը դեռ ճանապարհին էր, երբ Ցամխանայի երիտասարդներից մի խումբ, գյուղից դուրս գալով, ընդառաջ գնաց նրան: Բավական եղավ ընդամենը մի քանի գնդակ արձակել, և թալանի ու արյան կարոտ խուժանը, թիկունքը ցույց տալով, գյուղից հեռացավ:

Նույն օրը, մայիսի 14-ին, թուրքերը հարձակում գործեցին նաև Նախիջևանի գետի ստորին հովտի Ցարըմջա գյուղի վրա: Գյուղի երիտասարդները, որոնք ունեին ընդամենը 5-6 հրացան, համարձակ դուրս եկան ջարդարարների դեմ: Մի ամբողջ ժամ ցույց տալով համառ դիմադրություն՝ նրանք թուրքերին թույլ չտվեցին մտնել գյուղ: Բայց փամփուշտները հատնելուց հետո դիմադրությունը դադարեց, հայերը ստիպված թողեցին գյուղը և փախան Շխմամուտ: Մտնելով Ցարըմջա՝ թուրքերը մի քանի ժամում թալանեցին ամեն ինչ:

Մայիսի 15-ին հարձակման ենթարկվեցին նույն տարածքում գտնվող Խալիլու, Ցամխանա և Շխմամուտ գյուղերը: Բարեբախտաբար այս գյուղերի ղեկավարները ժամանակին հոգ էին տարել զենք ձեռք բերելու մասին: Թուրքերը գրոհեցին գյուղերը, բայց կորուստներ տալով նահանջեցին:

Այդ օրերին իր խիզախ գործերով աչքի ընկավ Շխմամուտ գյուղը: Շխմամուտցիների ամբարները, հորերն ու մառանները միշտ լիքն էին, սեղանները՝ լի, դռները՝ միշտ բաց թե՛ հայ և թե՛ թուրք հյուրերի առջև: Բոլոր շրջակա գյուղերի մեջ Շխմամուտն էր, որ ոչ միայն կարողացավ դիմադրել, այլև դարձավ մի կենտրոն, որտեղ ասպատակված, թալանված ու ավերված շրջակա հայկական 10 գյուղերի ժողովուրդը ապաստան էր գտել: Շխմամուտի տղերքը նույնիսկ օգնության էին գնում հայ գյուղերին՝ կռվելու թուրքերի դեմ: Նրանց ջանքերով փրկվեցին Մամարզա-դիզայի և Մազրայի հայերը:

Մայիսի վերջերին Շխմամուտում հավաքված էին հետևյալ հայ գյուղերի փախստականները. Ջահրիից (Ջահուկ) 930 հոգի, Նազարաբադից՝ 500, Խալխալից՝ 450, Մազրայից՝ 360, Վերին Ուզուն-Օբայից՝ 250, Մամարզա-դիզայից՝ 60, Դիդուվարից՝ 48 հոգի: Շխմամուտցիները ոչ միայն պատսպարան էին տվել նրանց, այլև իրենց պաշտպանության տակ առած ազգակիցների հետ կիսում էին հացի վերջին պատառը: Չնայած թուրքերի բոլոր ջանքերին,

Շխմամուտը մնաց անառիկ[1]:

Եվ այսպես, ահավոր խորշակը ավերներ գործեց Նախիջևան գետի ստորին հոսանքի շուրջ գտնվող հայկական գյուղերում: Կյանքից զրկվեցին անմեղ մարդիկ, թուրքերը տեր դարձան հարուստ ավարի: Գետի այդ մասի 15 գյուղերից հարձակումներից, թալանից ու ավերումներից զերծ մնաց միայն երկու գյուղ՝ Արաքսի ափին ընկած, սահմանապահ պոստերին մոտ գտնվող Կարմիր Վանք գյուղը և քաջ տղաներով հայտնի Այլաբադը:

Ավելի մեծ արհավիրք ապրեցին Նախիջևան գետի վերին հոսանքի հայկական գյուղերը, թվով 9-ը, որոնք գտնվում էին թուրքական ավելի քան 20 գյուղերի հարևանությամբ:

Մայիսի 13-ի առավոտյան թուրքական գյուղերը նման էին բանակատեղիի: Այն թուրքերը, որոնք զենք ունեին, միավորված էին խմբերի մեջ: Ցուրաքանչյուր խմբի հետևից գնում էին հարյուրավոր թալանչիներ, նույնպես զինված, բայց՝ սրերով, բրիչներով, երկաթե ձողերով: Գրոհողներն իրենց հետ տանում էին ուղտեր ու ձիեր, սայլեր ու ֆուրգոններ: Նրանք նախապես ըմբոշխնում էին առաջիկա թալանի հաճույքը և չէին սխալվում: Հայերը պատրաստ չէին դիմադրության, ուստի թուրքերի առաջին իսկ կրակոցներից խուճապի մատնվեցին: Զկար կազմակերպող ձեռք, իսկ զենք ունեցողներին կարելի էր հաշվել մատների վրա: Եվ կատարվեց այն, ինչ դժվար էր սպասել: Այդ 9 գյուղերից 7-ը՝ Ալագյոզ-Մազրան, Խալխալը, Ղարաբաբան, Առինջը, Նորսը, Նորս-Մազրան և Գժաձորը, ոչ մի դիմադրություն ցույց չտվեցին. գյուղացիները թողնելով տուն-տեղ՝ փախան տարբեր ուղղություններով՝ հիմնականում հարևան Գյոմուր գյուղը, ինչպես նաև դեպի Սիսիան, Արարատյան դաշտ և այլուր՝ ճանապարհին տալով մեծ զոհեր:

Թե թուրքերի ձեռքն ինչ հարստություն անցավ, կարելի է ցույց տալ միայն մեկ գյուղի՝ Նորսի օրինակով:

Մեծ ու բարգավաճ էր Նորսը, անբավ հարստության տեր: Միայն վար ու ցանքի համար գյուղացիները պահում էին շուրջ 1000 քաշող անասուն, ունեին ավելի քան 80 գութան[2]: Նորսեցիները թալանչիներին թողեցին ոչ միայն քաշող ուժն ու գութանները, այլև ավելի քան 2000 գլուխ խոշոր և 6000 գլուխ մանր եղջերավոր անասուն, շուրջ 800 ձի ու ջորի, 1000 փեթակ[3] և այլն:

Այդ հատվածի 9 գյուղերից միայն մեկը՝ Գյոմուրը, իր 1200 բնակիչներով կուրծք դեմ տվեց թշնամուն:

Գյոմուրը Հյուսիսային Նախիջևանի վերին հատվածի հարուստ գյուղերից էր: Գյուղի վերևում գտնվում էր Աղոթարան լեռը, որի հետևի լանջն արդեն

[1] ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 11,12:
[2] ՀՀ ՀՔԿԳԱ, ֆ. 1022, ց.2, գ. 5, թ. 7:
[3] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 87:

Զանգեզուրն էր: Լեռան գագաթից բացվում էր մի հրաշալի տեսարան՝ մինչև Տաթև ամբողջ Զանգեզուրն, ասես, ափիդ մեջ էր:

Գյոմուրում դեռ 1903 թվականից գործում էր դաշնակցական կազմակերպություն, որը և իր ձեռքը վերցրեց գյուղի պաշտպանության կազմակերպումը: Արագ հաշվառման ենթարկվեցին եղած զենքերն ու փամփուշտները, և ստեղծվեց զինական ընդհանուր ֆոնդ: Զինված երիտասարդներից կազմվեց չորս վաշտ՝ փորձված մարտիկների գլխավորությամբ: Վաշտերը մարզվում էին Թթու ջուր կոչվող աղբյուրի մերձակա հրապարակում: Գյոմուրի բնակչությունն իր պաշտպանության տակ առավ այնտեղ ապաստանած հայկական 5 գյուղերից փախած բնակիչներին՝ թվով 3400 հոգու:

Թուրք զինված բանդաները և խուժանը սեղմ օղակի մեջ առան Գյոմուրը, որոնց օգնության եկան սարերը բարձրացող ցեղերը: Սրանք անհամբեր սպասում էին գյուղի անկմանը, որպեսզի իրենց բաժին թալանն ունենան:

Գյուղում պարենային ծանր ճգնաժամ սկսվեց: Պետք էր կերակրել 4600-ից ավելի մարդկանց, մի բան, որ մի գյուղի ուժից վեր էր: Բայց Գյոմուրը դիմադրում էր հերոսաբար, դիմադրում էր մի քանի հազար զինված թուրքերի: Գրոհները հաջորդում էին մեկը մյուսին, հարձակվողների աղմուկաղաղակը բռնել էր չորսբոլորը, բայց գյուղը կանգուն էր ինչպես ժայռ: Անվեհեր Գյոմուրը իր խոյանքներով վրեժխնդիր էր լինում այդ հատվածի մյուս հայկական գյուղերի կործանման համար: Իսկ կործանված գյուղերի՝ Գյոմուրում ապաստանած բնակիչները ուշացած դիմադրությամբ փորձում էին փրկել իրենց պատիվը. նրանցից մի քանի հարյուր հոգի մասնակցում էր գյուղի պաշտպանությանը՝ ով ինչով կարող էր:

Գյոմուրը դիմադրեց 7 օր, մինչև որ մայիսի 19-ին Գորիսից օգնության եկավ մի հարյուրակ և, համագործակցած գյուղի պաշտպանների հետ, վերացրեց օղակումը, ցրեց հազարների հասնող թուրք արյունռուշտ բազմությանը:

Նշված հատվածի 9 գյուղերից միայն մեկը զերծ մնաց կողոպուտից ու ավերմունքից, բայց կրեց թուրքական բռնությունների բոլոր արհավիրքները: Այդ դժբախտ գյուղը Բաղամլուն էր:

Բաղամլուն թուրքախառն գյուղ էր, որն ուներ 120 ծուխ, որոնցից 80-ը հայ և 40-ը թուրք:

Հարևան գյուղերի թուրքերը Բաղամլուի վրա հարձակում սկսեցին մայիսի 14-ին և չորս կողմից շրջապատեցին այն: Հայերն ունեին ընդամենը 4 բերդան հրացան և մի քանի ատրճանակ, ուստի դիմադրություն չեղավ: Մտնելով գյուղ՝ թուրքերը բնակիչներին առաջարկեցին իսլամություն ընդունել: Մյուս օրվա առավոտյան նրանք եկան ավելի մեծ ամբոխով և, շրջապատելով գյուղացիներին, կրկին նույն պահանջը դրեցին: Թրքեշչի Հաջի Նաջաֆ Կուլին սուրը ձեռքին, գազազած ամբոխի գլուխն անցած՝ գոռում-գոչյունով հայ գյուղացիներին վերջին նախազգուշացումն էր անում:

Կոտորածի սարսափի և թուրքասեր երկու հայ ազդեցիկ ընտանիքների ճնշման տակ բնակիչները ճարահատյալ տվեցին իրենց համաձայնությունը, որից հետո տեղի ունեցավ կրոնափոխության ծիսակատարություն: Եկան երկու սափրիչներ և սկսեցին անհապաղ ածիլել բոլոր տղամարդկանց գլուխները, այդ թվում գյուղի քահանա Տեր-Թադևոսի գլուխը: Ամեն մի ածիլվող տղամարդու մոտ մի հրացանավոր էր կանգնած՝ սպառնալով հակառակվելու դեպքում տեղնուտեղը գնդակահարել: Այնուհետև կատարվեցին մյուս գործողությունները՝ հինայով ներկում էին «դավանափոխների» ձեռքերի մատները, թլփատում երեխաներին և անունները փոխում թուրքականի, կանանց հրամայում էին գլխին չադրա գցել: Եկեղեցին վերածվեց մզկիթի, պղծվեցին կրոնական անոթները:Նաջաֆ Կուլին բերդան հրացանը Թադևոս քահանայի կրծքին դեմ տված՝ ստիպում էր ուրանալ նախնիների հավատը: Քահանային մոլլա կարգելով անվանափոխեցին՝ կոչելով Աշրաֆ Աղա: «Դավանափոխ հավատակիցներին» թուրքերը սովորեցրին արտասանել «Աստծո կամքով մաքրվեցինք և հավատի եկանք» աղոթքը[1]:

Բաղամլու հայկական գյուղի իսլամացումը լայն արձագանք գտավ ռուսական և հայկական մամուլում:

Արդեն նշվել է, որ "Русское Слово" թերթը 1905թ. N154-ում տպագրել էր Ն.Ա.Նեմիրովիչ-Դանչենկոյի թղթակցությունը կովկասյան ընդհարումների մասին, որտեղ հեղինակն անդրադարձել էր նաև Բաղամլու գյուղում տեղի ունեցած անմարդկային գործողություններին: Հաղորդելով, որ գյուղի բոլոր հայերը քահանայի գլխավորությամբ մահմեդականացվել են, հոդվածագիրը նշում էր, որ հայերի ազգային ինքնասիրության ոտնահարման այդ ցնցող օրինակը ցույց է տալիս, թե որքան խորն է ֆանատիկոս թուրքության բարոյական անկումը:

"Рассвет" թերթը 1905թ. հունիսի 25-ին (N104) գրում էր. «Ռուսաստանը Կովկասի և նրա ժողովուրդների համար ամենից առաջ քրիստոնեական տերություն է: Այժմ նրա առաջին խնդիրն է՝ ցնցվել, երբ ականատես ենք քրիստոնեական սրբությունների և քրիստոնեական հովիվների նկատմամբ պղծման դեպքերի, քրիստոնեական ամբողջ բնակավայրերի իսլամացմանը»[2]:

Դեռ Բաքվի փետրվարյան կոտորածների հաջորդ օրը "Бакинские Известия" թերթը կտրականապես մերժում էր թուրքերի կողմից հայերին բռնի կրոնափոխության հնարավորությունը, գրելով. «Մենք չենք կարող հնարավոր համարել նաև այն կարծիքը, թե ներկա դեպքերի աստառը պետք է որոնել մահմեդականների և քրիստոնյաների կրոնական ֆանատիկոսության մեջ, որովհետև ներկայումս իսլամականությունը չունի այն պատերազմական

[1] **«Մշակ»**, N 230, 18 նոյեմբերի 1905թ.:
[2] **"Рассвет"**, N104, 25 **июня** 1905г.

ոգին, որ նա ունեցել է պատմական անցյալում: Այժմ ո՛չ քրիստոնյա հայերը, ո՛չ մահմեդականը բոլորովին չեն մտածում մեկը մյուսին դարձնել իր հավատին»[1]: Զորս-հինգ ամիս հետո, երբ ընդհարումներն ընդգրկել էին Անդրկովկասի մեծ տարածքներ, երբ տեղի էր ունեցել Բաղամլուի դեպքը, նույն թերթը ակամայից ընդունում էր իսլամական ֆանատիկոսության խաղացած չարաղետ դերը քրիստոնյա հայերին բռնի իսլամացնելու գործում:

Հունիսի վերջերին Գյոմուրում խմբված փախստական ժողովուրդը վերադարձավ թալանված ու հրդեհված գյուղերը և անհուն տառապանքով սկսեց քանդված օջախների վերականգնումը: Այն, ինչ քանդվել էր մի քանի օրում, վերականգնելու համար պահանջվելու էին երկար տարիներ:

Ինչ վերաբերում է Բաղամլուին, ապա Նախիջևանի գավառում ջարդերի ավարտից մեկ շաբաթ անց այնտեղի բռնի իսլամացած բոլոր հայերը, բացի թուրքասեր երկու ընտանիքներից, կրկին վերադարձան իրենց հավատին:

Խորշակն անցավ Ջահրի (Ջահուկ) գետի հովտով, և մի նոր էջ ավելացավ Նախիջևանի գավառի ողբերգության մեջ:

Ջահրի գետի 10 հայկական գյուղերից առաջինը հարձակման ենթարկվեց գետի ձախ ափին ընկած, քաղաքից 14 վերստի վրա գտնվող մեծ ու հարուստ Ջահրի (Ջահուկ) գյուղը, որն ուներ ընդարձակ հողեր ու այգիներ: Գյուղում կար շուրջ 700 թուրք և 240 հայ ընտանիք: Հայերի կեսը, այն էլ երիտասարդ ուժերը, գտնվում էր պանդխտության մեջ[2]: Ուստի թվական մեծ գերակշռության պատճառով թուրքերն ամեն անգամ շեշտում էին իրենց գերազանցությունը և ուժը: Հայերը միշտ խուսափում էին թուրք համագյուղացիների հետ բարդություններ ստեղծելուց, նրանք բնակվում էին առանձին թաղում, համախումբ: Ունեին հիմնականում երկհարկանի բարեկարգ տներ ու բակեր, ապրում էին մաքուր կենցաղով և իրենց վարք ու բարքով օրինակ էին հանդիսանում համագյուղացի թուրքերին, որոնք նույնպես, հետևելով հայերին, կառուցել էին բարեկարգ տներ, հետևում էին իրենց թաղի մաքրությանը, ունեին վարսավիրներ ու կոշկակարներ: Ջահրին ուներ նաև իր շուկան, ուր տեղավորված 50-ի չափ խանութներից և թեյատներից թուրքերին էր պատկանում 45-ը:

Ջահրիի հայերը տմարդի հարձակման ենթարկվեցին մայիսի 12-ին, երբ Նախիջևան քաղաքի շուկայում դեռ շարունակվում էր կոտորածը:

Քաղաքում հայերի կոտորածի մասին լուրն արագ հասել էր գյուղ: Հայերը որոշեցին գնալ և հանդիպել մի օր առաջ Նախիջևան եկած փոխնահանգապետին, որպեսզի սա խաղաղեցնի համագյուղացի թուրքերի հուզված մտքերը և կանխի իրենց գլխին կախված սպառնալիքը:

[1] **"Бакинские Известия"**, 10 февраля 1905г.
[2] Տե՛ս **«Վտակ»**, N 55, 11 մայիսի 1908թ.:

Լսելով այդ մասին՝ գյուղի տանուտեր Ասադ Հաջի-Աբիլ-Կասըմ օղլին, դիմելով հայերին, ասել էր. «Ամոթ է մեզ համար, պետք չէ ոչ ոքի դիմել, գնացեք խանութներդ բաց արեք, մենք հո մեռած չենք, որ խռովություն ծագի հայերի և թուրքերի միջև: Մեր գյուղում նման բան չի լինի, քանի որ մենք իրար հետ ոչ մի վեճ չունենք, դարավոր եղբայրներ ենք, սիրով ապրել ենք, սիրով էլ կապրենք մինչև վերջ: Եթե ձեր մի մազը ընկնի, մենք պատասխանատու ենք»[1]:

Այդ խոստումից դեռ չէր անցել մեկ ժամ, երբ թուրքերի թաղից մեծաթիվ զինված ամբոխը գոռում-գոչյունով վրա ընկավ հայկական թաղի վրա. հրացանների պայթյուններ, լաց ու կոծ, աղմուկ-աղաղակ: Հենց այդ պահին տանուտերը մտնում է հայերի բակերը և, բարձրաձայն գոչելով, բնակիչներին հայտարարում, թե վիճակը գյուղում բարդացել է, ուստի լավ կլինի, որ բոլոր հայերը հավաքվեն իր տանը՝ պատսպարվելու՝ խոստանալով ու երաշխավորելով, որ այնտեղ իրենց հետ ոչինչ չի պատահի: Հայերի մի մասը, մոտ 100 մարդ, միամտորեն հավատալով «բարի» տանտիրոջ խոսքերին, ընտանիքներով հավաքվում է այնտեղ:

Սակայն գյուղի հայերի մեծ մասը այլ կերպ է վարվում: Նրանք հավաքվում և խմբվում են հայոց թաղի մի քանի մեծ տներում և սկսում դիմադրել սակավաթիվ հրացաններով: Այնուամենայնիվ, թաղի տներում դեռ մնում են 20-ի չափ հայեր, հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ: Համագյուղացի թուրքերը, մտնելով տները, հոշոտում են այնտեղ մնացած ծերերին ու երեխաներին, ապա կողոպտելուց հետո հրդեհում:

Տանուտերի մոտ «ապաստանած» հայերին սպասվում էր վատթարագույնը: Նրանցից մեկը, որ հրաշքով ազատվել էր, պատմել է.

«Մեզ բոլորիս տեղավորեցին մի մեծ շինության մեջ, ուր շատ թուրք կանայք կային: Ես թուրքերի շշուկներից հասկացա, որ մեզ սպանելու են: Այդ իմանալով՝ ճարպկորեն ձեռք գցեցի թուրք կանանցից մեկի՝ գետին ընկած չարսավը, ծածկվեցի դրա մեջ և սպասում էի հարմար րոպեի՝ դուրս փախչելու: Մեզ մոտ եկան թուրք մոլլաներ՝ մոլլա Մուսան, նրա որդի մոլլա Մամեդ-Թաղին, մոլլա Ալլաֆար-օղլին, Մաշադի-Մամեդ Հաջի-Քերիմ-օղլին, որոնք մեզ համոզում էին կրոնափոխ լինել, ասելով. «Միևնույն է, մենք ոչ մի հայի կենդանի չենք թողնելու, բոլորին էլ սրի ենք անցկացնելու. կառավարությունը մեզ ոչինչ չի անի, զորքը և ուրիշ բաները միայն ձևի համար են»[2]:

Գերյալները գիշերն անցկացրին սարսափի ու մահվան տագնապի մեջ: Լույսը բացվեց, և քիչ հետո լուր եկավ, թե Կարապետ վարդապետը և Նախի-

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[1], վավ. 322, թ.2:
[2] Նույն տեղում, թ.3:

ջևանի քաղաքագլուխ Ջաֆար-Կուլի խանը եկել են գերիներին ազատելու և հաշտություն կնքելու հայերի ու թուրքերի միջև: Աննկարագրելի էր ցնծությունը: Շուտով եկավ նաև տանուտերը՝ գյուղի մի քանի պատվավոր թուրքերի և ստրաժնիկների հետ ու հայտնեց, որ եկել է գերիներին ազատելու: Նա դեռ չէր վերջացրել իր խոսքը, մի թուրք ստրաժնիկ տանտիրոջն ասաց, թե ճիշտ չի լինի տղամարդկանց ազատելը, որոնք հազիվ են ձեռք ընկել, որ նրանց հարկավոր է սպանել: Ներկա գտնվող բոլոր թուրքերը հավանություն տվեցին իրենց ցեղակից ստրաժնիկին:

Ջանցած քառորդ ժամ, տանուտեր Ասադը, Մաշադի Մամեդ Բայրամովը, Նաջաֆկուլի Հաջի Բայրամ-օղլին, Մաշադի-Ալի մոլլա Ահմեդ օղլին, Աբաս Ջալ-օղլին արյունոտ սրերով և հրացաններով զինված՝ ներս մտան և տղամարդկանց զույգ-զույգ դուրս բերեցին տնից: Թշվառ գերիները հասկանում էին, որ իրենց կյանքի վերջալույսն է: Դրսում շողացին արյունոտ սրերը: Լացն ու աղաչանքը չօգնեցին: Առաջինը տանուտերը սուրը խրեց Միսակ Տեր-Ավագյանի կողը, մյուսները նույնպես մորթեցին դաշույններով ու սրերով կամ հրացանազարկ եղան, որից հետո ոտքերից քարշ տալով դիակները նետեցին մոտիկ փոսը[1]:

Ինչ տարբերություն կար 20-րդ դարասկզբի այդ ոճիրների և հորդային այն ժամանակների սարսափների միջև, երբ Ջինգիզխաններն ու Լենգթեմուրներն իրենց նախորդային լեգեոնները Ասիայի խորքերից քշում էին դեպի արյունալի նվաճումներ և խրախճանքներ սարքում զոհերի դիակների շուրջը:

Կոտորածի հենց առաջին օրը հայերի տներից թալանած ապրանքների մեծ մասը տարան գյուղի տանուտերի տուն: Նրա բազմաթիվ կանանց ուրախությանն ու հռհռոցին չափ չկար. օրհնում էին խաներին ու բեկերին, նրանց մաղթում էին արևշատություն, որ պատճառ դարձան իրենց հարստանալուն: Եվ այդ բոլորը ոստիկանության քթի տակ:

Այլ ճակատագիր ունեցան հայկական թաղի մեծ տներում խմբված և զենքով իրենց պաշտպանող հայերը: Նրանք հուսահատ կռվում են ամբողջ երկու օր, որից հետո, թողնելով սպանվածներ ու վիրավորներ, փախչում և ապաստանում են Շխմամուտ գյուղում:

Ջահրիից չկարողանալով հեռանալ՝ թուրքերին գերի ընկավ շուրջ 50 հայ, որոնք ենթարկվեցին անմարդկային տանջանքների, իսկ կանայք բռնաբարության՝ ամուսինների և զավակների աչքի առջև:

Երբ ամեն ինչ վերջացած էր, քաղաքից Ջահրի եկավ մի զորամաս: Մայիսի 25-ին ջահրեցի հայերը վերադարձան գյուղի իրենց թաղը, որի փողոցներում դեռ ընկած էին անթաղ դիակներ: Նրանց դիմավորեցին հրդեհված տների ածխացած այուները և շրջապատող ավերակների գերեզմանային լռությունը:

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 9,10:

Ջահրի գյուղի հայերի հաշվեհարդարից հետո, մայիսի 13-ին, 14-ին և 15-ին, թուրքերը հարձակումներ սկսեցին Ջահրի գետի հովտի մյուս հայկական գյուղերի վրա, որոնք կարճատև դիմադրությունից հետո հեռացան տարբեր ուղղություններով. Նազարաբադի և Դիդուվարի ժողովուրդը ապաստանեց Շխմամուտում, Սեսի և Սուլթանբեկի բնակիչները փախան Դարալագյազ և պատսպարվեցին Մարտիրոս գյուղում, Աղխաչի և Օղբիի բնակիչները հավաքվեցին Հորադիզ գյուղում:

Երբ Նազարաբադի, Դիդուվարի, Սեսի, Աղխաչի, Սուլթանբեկի և Օղբիի բնակիչները մի քանի օր հետո վերադարձան իրենց գյուղերը, այնտեղ տեսան համատարած ավերմունք: Բոլոր հինգ գյուղերում հիմնահատակ ավերված էին դպրոցներն ու եկեղեցիները, սրբապատկերները՝ պատառոտված, բեմերը՝ ավերված, տներն ու մարագները՝ հրդեհված:

Ջահրի գետի հովտում ավերումներից զերծ մնաց միայն երեք հայկական գյուղ՝ Հորադիզը, Ալմալուն և Ջնաբերդը: Հորադիզցիները վճռել էին կործանվել, բայց չհանձնվել, և իրենց պայքարով հասան նպատակին: Քաջաբար պաշտպանվեց նաև Ալմալուն՝ մնալով անսասան: Մի քանի օր տևած անընդհատ հարձակումներից հետո թուրքերը ձեռք քաշեցին Հորադիզը և Ալմալուն գրավելու մտքից:

Թուրք ելուզակներին հատկապես բուռն դիմադրություն ցույց տվեցին զնաբերդցիները: Գյուղի անվեհեր զավակներն անվախ հակագրոհների էին դիմում, ավարառուներին պատճառում մեծ կորուստներ: Համոզվելով, որ անհնարին է կոտրել զնաբերդցիների ոգին, թուրքերը, մի քանի օր տևած մեկը մյուսին հաջորդած գրոհներից հետո, վերացրին գյուղի պաշարումը և հեռացան: Ջնաբերդը մնաց անընկճելի և հաղթական:

Երնջակ (Ալիջան) գետի հովտի 6 հայաբնակ գյուղերի վրա թուրքերը հարձակումներ կատարեցին մայիսի 12-ին, 13-ին և 14-ին: Խոշոր վնասներ կրեցին Աբրակունիսը և Արազինը, որոնք ենթարկվեցին անխնա կողոպուտի: Անշուշտ, այս գյուղերը, հատկապես Աբրակունիսը, բազմամարդ էին, ունեին քաջ երիտասարդներ և ի վիճակի էին պաշտպանվելու, բայց համարյա անզեն լինելով, չկարողացան դիմադրել: Պաշտպանվել չկարողացավ նաև Նորաշենը, որը հիմնովին թալանվեց: Հովտի մյուս երեք հայկական գյուղերը՝ Ջուլֆին, Կզնութը և Ղազանչին, մարդկային և նյութական քիչ կորուստներ ունեցան, որովհետև կարողացան ամուր կանգնել, պաշտպանվել և հետ մղել ավարառուների բազմաթիվ հարձակումները: Հատկապես հերոսաբար պաշտպանվեց Երնջակ գետի վերին հոսանքի վրա ընկած Ղազանչի գյուղը: 10 օր շարունակ թուրքերն իրար հաջորդող գրոհներ էին կատարում, բայց Ղազանչին մնում էր անառիկ[1]: Այդ ամբողջ օրերի ընթացքում հայ գյուղացիներից սպանվեց երկու հոգի, բայց թշնամու կորուստը տասնապատիկ ավելի էր: Զուր չէ, որ Ղազանչիի հերոսների մասին երկար ժամանակ գավառում լեգենդներ էին

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 10, 11:

պտտվում:

Տուժեցին նաև Շուռութ և Գիլան գետերի հովտի 10 հայաբնակ գյուղերից երկուսը՝ Գյազը և Ալահին: Գյազի բնակչությունը չկարողացավ երկար դիմադրել և, երեք զոհ տալուց հետո, քաշվեց հարևան հայկական գյուղերը: Թուրքերը մտնելով Գյազ՝ սոսկալի կողոպուտի ենթարկեցին:

Ավելի ուժգին եղավ Ալահի գյուղի դիմադրությունը: Թուրք խուժանը հազարներով շրջապատեց գյուղը, որի բնակիչները երեք օր շարունակ կատաղի դիմադրություն ցույց տվեցին և , 12 զոհ տալով, քաշվեցին Շուռութ ու Բիստ:

Գողթանից Թիֆլիս ուղարկած հեռագրերից մեկում, ուր օգնության աղերսանքներ էին, ասված էր. «Դրությունը կրիտիկական է, շատ գյուղեր ոչնչացված են: Թուրքերը գազանաբար տանջում են և ստիպում ընդունել մահմեդականություն: Գործում են ամեն տեսակ բռնություններ: Եթե անմիջական օգնություն չլինի, մյուս գյուղերն էլ կոչնչանան: Օգնեցե՛ք»[1]:

Գողթանի այս երկու գյուղերից բացի, մնացած 8-ը՝ Փորադաշտը, Շուռութը, Մսրվանը, Բիստը, Փառական, Վերին Ազան, Ներքին Ազան և Դերը կարողացան դիմագրավել թուրքերի հարձակումները և մեծ փորձությունից դուրս եկան նվազագույն կորուստներով:

Բարեբախտաբար Կոնգուրո-Ալանգյազի լեռնաշղթայից սկիզբ առնող հինգ փոքր գետակների վրա ընկած Գողթանի 10 հայաբնակ գյուղերը՝ Ռամիսը, Ցղնան, Քաղաքիկը, Տանակերտը, Դիասարը, Վահրակերտը, Վերին Ագուլիսը, Ներքին Ագուլիսը, Հանդամեջը և Կարճևանը, ինչպես նաև Թուրք-Հայ խառը բնակչություն ունեցող Օրդուբադը զերծ մնացին հարձակումներից ու կողոպուտներից և չտուժեցին: Եղան առանձին անհատական սպանություններ, բայց գործը չհասավ կոտորածների:

Նախիջևանյան կոտորածների եռուն օրերին Կովկասի փոխարքայի օգնական Մալամայի հրամանով, որպես «գլխավոր կարգադրող», Թիֆլիսից Նախիջևան ուղարկվեց գեներալ Ալիխանով-Ավարսկին՝ «Երևանի նահանգի իշխանություններին աջակցելու» և «կարգ ու կանոնը վերականգնելու» համար[2]:

Մայիսի 18-ին Ալիխանով-Ավարսկին հասավ Նախիջևան: Բայց նա եկել էր ոչ որպես խաղաղարար: Նրան Նախիջևան ուղարկելը եղավ մի մեծ չարիք:

Ալիխանով-Ավարսկին իջևանեց և հյուրընկալվեց Նախիջևանի խաների մոտ ու Տարանովսկու հետ բնակվում էր խանական պալատում: Գեներալը Նախիջևանսկիների փեսան էր: Որոշ ժամանակից հայտնի դարձավ նաև, որ նա կատաղի համիսլամական է, անուղղելի հայատյաց: Պատահական չէր, որ գեներալը խրախուսեց թուրք խուժանին, քաջալերեց վայրագությունները,

[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 105:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.8:

սիրտ տվեց ոճրագործ խաներին[1]:

"Русские Ведомости" թերթի 1905թ. 157-րդ համարի խմբագրականում կարդում ենք. «Նախիջևանի գավառում հայկական ջարդերը վերածվել են թաթարների բացահայտ խռովության, որին բացահայտորեն հովանավորում է գավառը խաղաղեցնելու միսիայով այնտեղ գնացած գեներալ Ալիխանովը: Նա մուսուլման է և Նախիջևանյան խաների ազգականը: Զորային ջոկատի գլուխ անցած Ալիխանովի գալը միայն ոգեշնչել է խաներին ու թաթարներին: Ուստի նրա նշանակումը պիտի համարել ծայրահեղ անհաջող քայլ: Ալիխանովի գնալուց հետո նոր ուժով են բռնկվել ու լայնորեն տարածվել ջարդերը: Նա ոչ մի ցանկություն չունի իր հավատակիցների և բարեկամ խաների նկատմամբ որևէ պատժամիջոց ձեռնարկելու: Ինչպես երևում է հեռագրերից, եթե զորքն օգնության է գնում հայերին, դա անում է միայն սեփական նախաձեռնությամբ»:

Ալիխանով-Ավարսկու Նախիջևան գալուց հետո Ռահիմ խանի ապարանքում հյուրընկալված փոխնահանգապետ Տարանովսկին այլևս ոչ մի խնդրով չէր զբաղվում և ամեն ինչ թողել էր գեներալի կամքին: Նրա «զբաղմունքը» միայն մեկն էր՝ վայելել հանգիստը: Զորս կողմը արյուն էր ու հառաչանք, բայց նա հայերից ոչ մեկին չէր ընդունում, չէր լսում նրանց բողոքները: Վերևում հիշատակված Նազար Այվազովը գրել է. «Փոխնահանգապետը արթնանում էր ցերեկվա ժամը 12-ի կողմերը, ճաշում էր ժամը 2-ին, որից հետո հանգստանում էր: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ ճաշից հետո բողոքով նրա մոտ էին գալիս հայերը: Այդ ժամանակ ծառայողները խնդրատու բողոքարկողներին միշտ ասում էին նույն բանը. «Փոխնահանգապետը հանգստանում է» կամ «Փոխնահանգապետը քնած է»»[2]: Մեկ շաբաթ հետո Տարանովսկին, իր գործը կատարած համարելով, ջերմ հրաժեշտ տվեց խաներին և հեռացավ Երևան: Նրա հետևից ճամփա ընկավ ընտիր ապրանքներով լի մի ֆուրգոն՝ որպես ընծա խաների կողմից:

1905թ. հունիսին երկու ազգերից բարձրաստիճան հոգևորականներ, մի քանի պատվավոր աշխարհական անձերի ընկերակցությամբ, սկսեցին շրջագայել գավառում կողմերին խաղաղեցնելու, բորբոքված կրքերը հանգստացնելու համար:

Հայերի կողմից Նախիջևան էին եկել Երևանի թեմական առաջնորդ Կարապետ վարդապետը՝ Մեսրոպ վարդապետի հետ, թուրքերի կողմից Բաքվից եկել էր շեյխ ուլ իսլամը: Նրա հետ շրջագայում էր նաև «խաղաղարար» Ռահիմ խան Նախիջևանսկին:

Կառավարությունը նույնպես հանձնաժողով ուղարկեց՝ հիմնականում պարզելու երկու կողմերի կրած նյութական կորուստները:

Կարապետ և Մեսրոպ վարդապետները մանրամասն ուսումնասիրեցին գա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 92, թ.թ. 14,15,16:
[2] ՀՀ ՀՊԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ. 19:

վառում տեղի ունեցած կոտորածների հետևանքները: Այդ հիման վրա Կարապետ վարդապետը փոխարքա Վորոնցով-Դաշկովի անունով ներկայացրեց ընդարձակ զեկուցագիր, որտեղ նկարագրված էին Նախիջևանի սարսափները, բացահայտված՝ կատարված սպանությունների և ավերների պատճառները :

Իր հերթին Մեսրոպ վարդապետը Երևանի գեներալ-նահանգապետ, իշխան Լուի Նապոլեոնին ներկայացրեց փաստաթղթից տեղեկագիր, ուր մանրամասնորեն տրված էր ողբերգության պատկերը:

Ուսումնասիրությունները ցույց էին տվել հետևյալը.

Նախիջևան քաղաքում և գավառում սպանված հայերի թիվը հասնում էր մոտ 410-ի[1]: Վիրավորներն ավելի շատ էին: Ուշագրավ էր այն, որ հայ-թուրք խառը բնակչություն ունեցող ոչ մի գյուղում, եթե նույնիսկ դրանցում ճնշող մեծամասնությունը հայեր էին, ոչ մի հայ իր հարևանին սպանելու նպատակով նախահարձակ չէր եղել, մինչդեռ շատ հայեր դավադրաբար և ուխտադրժորեն սպանվել էին իրենց «բարեկամ» հարևանների ձեռքով:

Նախիջևանի գավառը ողբալի պատկեր էր ներկայացնում. շեն ու հարուստ գյուղերը վերածվել էին մոխրակույտերի, ամենուրեք ցորենի այրված ամբարներ էին, խոտի հրկիզված դեզեր, գարու տրորված արտեր: Տարիների ընթացքում քրտինքի գնով ստեղծված ինքնաբավ տնտեսություններն ավերվել էին ու ոչնչացվել:

1905թ. օգոստոսի 1-ի տվյալներով, Նախիջևան քաղաքից և նրա թաղաքենդ թաղամասից բացի, գավառի 60 հայաբնակ գյուղերից 47-ը ենթարկվել էին հարձակումների, թալանի ու սպանությունների, որոնցից 20-ը ավերվել էին հիմնովին և զրկվել բնակիչներից: Կիսավեր, բայց ամբողջովին թալանված էր 10, մասնակիորեն՝ 17 գյուղ: Ավերված 20 հայկական գյուղերի դիմաց ավերվեց միայն մեկ թուրքի գյուղ՝ Ջահրի գետի վերին հոսանքում գտնվող Իթդանը:

Նախիջևան գավառում ավերված գյուղերը, բացառությամբ 2-3-ի, 1905թ. երկրորդ կեսին և 1906-1907թթ. նորից բնակեցվեցին:

Ահագին էր կողոպտածն ու թալանածը: Նախիջևան քաղաքի հայերին պատկանող 182 խանութներից անվնաս էին մնացել 4-ը[2]: Քաղաքում և գյուղերում հայերից թալանված գույքի ընդհանուր արժեքը կազմել էր շուրջ 3 միլիոն ռուբլի, թուրքերի նյութական կորուստները՝ 200 հազար ռուբլի: Այդ հիման վրա կառավարությունը որոշել էր տալ ընդամենը 150 հազար ռուբլի՝ երկու կողմերի քայքայված տնտեսությունները վերականգնելու համար[3], թեև

---

* Նախիջևանի արյունալի դեպքերի մասին Կարապետ վարդապետի զեկուցագիրը (20 թերթի երկու երեսի վրա - 40 էջ), պահպանվում է ՀՀ ՊԿՊ արխիվում (ֆ. 113, ց. 3, գ. 92):

1 «Դրոշակ», N 8 (161), օգոստոս, 1905, էջ 121:

2 Նույն տեղում:

3 «Նյութեր Հ.Յ. Դաշնակցութեան համար», հատ. Բ, Բ տպագրություն (յավելուածով), Պեյրութ,1985, էջ 268, «Դրոշակ», N 10(163), 1905, էջ 151:

մոտ 10000 հայ կարոտ էր նյութական շտապ օգնության:

Հայերի տնտեսական քայքայումը, որ Նախիջևանյան ջարդերի գլխավոր նպատակներից մեկն էր, լիովին իրագործված էր:

Ինչ վերաբերում էր գավառը հայերից դատարկելու և նրանց հողերին տեր դառնալու նպատակին, ապա թուրքերն այն իրագործեցին մասնակիորեն: Սկսվեց հայ գաղթականության հոսանքը: Նախիջևանի և Շարուրի կողմերից ամեն օր Երևան էին մտնում կողոպտված ընտանիքներ: Շատերը փախչում էին Թիֆլիս: Հունիսի 12-ին 100 ընտանիքից բաղկացած մի խումբ հասավ այնտեղ: Դրան հետևեցին փախստականների նորանոր խմբեր: Գնում էին առանց որևէ միջոցի, մի կտոր չոր հացի կարոտ, ձեռք մեկնելով ուրիշի ողորմածությանը: Գնում էին նրանք, որոնք մի քանի օր առաջ իրենց սեփական հարկի տակ ապրում էին ապահով ու պատով: Այդ դժբախտների հաղորդած ցնցող լուրերին մարդիկ չէին կարողանում հանգիստ ունկնդիր լինել՝ այնքա՜ն հուզիչ էին դրանք, այնքա՜ն աղեխարշ:

Եթե հնարավոր չլիներ գաղթի հոսանքի առաջն առնել, ապա դեռ 1905-ին Նախիջևանի գավառը դատարկված կլիներ հայերից:

Նախիջևանի կոտորածները կասկած չէին թողնում, որ կատարվածը պատահական բան չէ: Թիֆլիսից, Երևանից և ուրիշ վայրերից կարելի էր մի օրում զորք հասցնել ընդհարման վայրը, բայց զորքն այդպես էլ չերևաց այնտեղ: Փոխարքային և նրա օգնականին բազմաթիվ դիմումներ արեցին հայոց կաթողիկոսը Էջմիածնից, Երևանից՝ երևելի անհատներ, հայոց Վրաց-Իմերեթյան թեմի առաջնորդը և Թիֆլիսի հայ հոգևորականության գլխավորը, Թիֆլիսի քաղաքագլուխը, հայ հասարակության զանազան խավերի ներկայացուցիչներ: Դիմումներին ու խնդրանքներին Վորոնցով-Դաշկովը պատասխանում էր անորոշ խոսքերով՝ «Ինչ հարկավոր է, կարվի»: Բայց դրանք մնում էին լոկ խոսքեր:

Ռուս կառավարության կատարյալ անտարբերությունը սիրտ էր տալիս կողոպտիչներին ու մարդատյացներին: Իշխանությունների մեղսակցությունը Նախիջևանում նույնպես հավելումով ապացուցված էր: Նոր Թիֆլիս եկած փոխարքա Վորոնցով-Դաշկովի և նրա վարչության կրավորական վերաբերմունքն առաջ էր բերել ընդհանուր ցասում:

Թեև հունիսի առաջին տասնօրյակում Նախիջևանի տարածքում կոտորածները հիմնականում դադարել էին, բայց անհատական սպանությունները շարունակվում էին ամեն տեղ, մարդրսությունը չէր դադարում: Խաներն ու Ալիխանով-Ավարսկին ջանք չէին խնայում, որպեսզի ուժեղանա հայերի գաղթը Նախիջևանից, և այդ նպատակով ամեն կերպ խոչընդոտում էին թալանված ապրանքների ու տասնյակ հազարավոր քշված անասունների գոնե մի մասի վերադարձնելը, խանգարում հարձակումներից կանգուն մնացած հայկական գյուղերի դաշտերի ու այգիների բերքահավաքը: Ճանապարհները բաց էին Նախիջևանից փախչող հայերի, բայց փակ էին գավառ եկողների

համար: Թիֆլիսից հայկական կազմակերպությունները կամավոր սանիտարական խումբ էին ուղարկել Նախիջևան՝ վնասվածներին օգնելու համար, բայց այն չկարողացավ տեղ հասնել, որովհետև խաների կարգադրությամբ ճանապարհները բռնված էին զինված թուրքերով:

Այդ ամենի և, մասնավորապես, Ալիխանով-Ավարսկու դեմ ծայր էին առել բուռն բողոքներ: Նախիջևանի հայ բնակչությունը մասսայաբար պահանջում էր նրան հեռացնել գավառից: Նման պահանջով փոխարքայի հասցեով ամեն օր Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Կովկասի տարբեր վայրերի հայկական կազմակերպությունների և հայ ճանաչված անձերի կողմից բողոքի հեռագրեր ու նամակներ էին հղվում փոխարքային[1]: Ի վերջո Վորոնցով-Դաշկովը ստիպված էր որոշ միջոցներ ձեռնարկել:

Երևանի նահանգում, որի նահանգապետն էր Տիզենհաուզենը, նշանակվեց նաև լայն լիազորություններով օժտված ժամանակավոր գեներալ-նահանգապետ: Դա պրինց Նապոլեոնն էր՝ մի կրթված, զարգացած ու շրջահայաց մարդ, կովկասյան պայմաններին լավ ծանոթ զինվորական, որը հանձնարարություն էր ստացել նաև վերահսկել Ալիխանով-Ավարսկու գործունեությունը:

Նախիջևանի հայ բնակչությունը հույս ուներ, որ Լուի Բոնապարտը չի գնա Ալիխանով-Ավարսկու ուղիով, որ նրա վերաբերմունքը կլինի անկողմնակալ ու արդարացի: Իրոք, գեներալ-նահանգապետն ուրիշ դիրք բռնեց: Երբ նա Նախիջևան եկավ, հայերը մի փոքր շունչ քաշեցին:

Լուի Բոնապարտը առաջին իսկ օրերին բանտարկել տվեց մի քանի առավել հայտնի թուրք չարագործների, առաջարկեց հայերի կրած վնասները փոխհատուցել թուրքերի հաշվին, Նախիջևանի խաներից ու թուրք համայնքից պահանջեց զսպել կրքերը, հայերին խոստացավ միջնորդել փոխարքայի առջև, որպեսզի ինքնապաշտպանության ժամանակ տուժածները զենք ստանան և այլն:

Հունիսի 30-ին Ալիխանով-Ավարսկու և Մեսրոպ վարդապետի ուղեկցությամբ պրինցը սկսեց շրջել գավառով: Նա եղավ մի քանի հայ գյուղերում, այցելեց քանդված եկեղեցիներ, բնակիչների թողած տներ: Նա ամեն տեղ ժողովրդի ներկայությամբ զինվորներին հրամայում էր անխնա զենք գործածել հարձակվողների դեմ՝ լինեն դրանք թուրքեր, թե հայեր: Պրինցը հսկողություն հաստատեց Ալիխանով-Ավարսկու գործողությունների վրա և նրանից պահանջեց հավասար մոտեցում ունենալ թե՛ թուրքերի և թե՛ հայերի նկատմամբ: Վերջինս, սակայն, առիթը ներկայանալիս անտեսում էր գեներալ-նահանգապետի պահանջները և շարունակում էր իր սև գործն այնտեղ, որտեղ դա հնարավոր էր:

Որոշ ժամանակ Նախիջևանում մնալուց հետո Լուի Բոնապարտը մեկնեց Թիֆլիս՝ փոխարքային զեկուցելու Նախիջևանի վիճակի մասին: Նրան ներկայացրած 19 կետից բաղկացած զեկուցագրի մեջ պրինցը հաստատել էր կարևոր

[1] ԳԿՊԱ, ֆ. 113, ց.3, գ. 93, թ.թ. 15,16:

իրողություններ. 1) Նախահարձակը եղել են թուրքերը, այլ ոչ թե հայերը, ինչպես ամեն կերպ փորձել էր ցույց տալ Ալիխանով-Ավարսկին Թիֆլիս ուղարկած իր գրավոր հաղորդումներում, 2) հայերի վրա հարձակումներ կատարվել են նաև դրսից՝ ամենից առաջ օսմանյան իշխանությունների դրդմամբ, 3)Նախիջևանի խաները ոգևորված են եղել այն մտքով, թե կարող են Ռուսաստանից անջատել իրենց խանությունը, 4) թուրքերի շարժումը քաղաքական բնույթ ունի. թուրք ղեկավարները ծրագրել էին ջնջել բոլոր հայերին Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներում, որպեսզի Պարսկաստանի և Թուրքիայի սահմանագլխին մի ահագին տարածության վրա ունենան մահմեդական հոծ բնակչություն:

Զեկուցագրի կարևոր կետերից մեկն այն էր, որ առաջարկվում էր Նախիջևանից հետ կանչել Ալիխանով-Ավարսկուն[1]:

Զեկուցագիրը դրական ազդեցություն ունեցավ Վորոնցով-Դաշկովի վրա, և սա որոշ չափով վերանայեց Նախիջևանի դեպքերի վերաբերյալ իր մոտ հաստատագրված կարծիքը: Որոշ ժամանակ անց միջոցներ ձեռնարկվեցին Նախիջևանի փախստականներին իրենց տեղերը վերադարձնելու համար, տուժածներին հատկացվեցին երկրագործական գործիքներ ու կենդանիներ, տրվեց նյութական օգնություն: Քայլեր կատարվեցին, որպեսզի գավառի խառը բնակչություն ունեցող գյուղերում բնակվող հայերին բաժանեն թուրքերից՝ այդ երկու զանգվածներին իրարից բոլորովին առանձնացված տեսնելու ցանկությամբ: Ելնելով պանիսլամիզմի բարձրացող վտանգից՝ իշխանությունները շահագրգռություն հանդես բերեցին, որպեսզի թուրքիայի և Պարսկաստանի սահմանի վրա ամրապնդվի քրիստոնյա հայ տարրը:

Նախիջևանի հայերի համար հատկապես ողջունելի էր փոխարքայի այն որոշումը, որի համաձայն գեներալ Ալիխանով-Ավարսկին հետ էր կանչվում Նախիջևանից, ուր մնացել էր մոտ երկու ամիս: Նա հեռացավ՝ իր հետևում թողնելով երեխաների, ծերերի, լկած աղջիկների ողբն ու կոծը, իր հետ տանելով գավառի հայերի զզվանքն ու նզովքը:

Սակայն Նախիջևանի հայերի գլխին այնքան արհավիրքներ բերած Ալիխանով-Ավարսկին ոչ միայն որևէ պատիժ կամ նույնիսկ դիտողություն չստացավ, այլև խրախուսվեց և փոխարքայի հրամանով նոր նշանակում ստացավ: Այդ նշանակումը խիստ քննադատության ենթարկվեց առաջադիմական մամուլի կողմից[2]:

Նախիջևանից Ալիխանով-Ավարսկու հեռանալուց երկու ամիս հետո, 1905թ. սեպտեմբերի 24-ին, Լուի Նապոլեոնը թողեց Երևանի գեներալ-նահանգապետի պաշտոնը և մեկնեց Թիֆլիս:

Նախիջևանում «խաղաղություն» էր՝ տագնապներով լի: Թուրքերի և հայերի կյանքը այսուհետ ընթանալու էր փոխադարձ անվստահության ու ան-

[1] «Դրոշակ», N10(163), հոկտեմբեր, 1905, էջ 151:
[2] Տե՛ս "Русские Ведомости" թերթի 1905թ. N 157-ի խմբագրականը:

բարյացակամության, քողարկված ատելության մթնոլորտում: Գավառի հայությունը դաս էր առել: Նա պարտավոր էր միշտ լինել զգոն և պատրաստ պատմության նոր շրջադարձերի:

*
* *

Արդեն խոսք է գնացել այն մասին, որ երբ 1905թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցած կոտորածներով թուրք-հայկական ընդհարումները Կովկասում նոր էին սկսվել, համիսլամականության գաղափարների տխրահռչակ հերոսները դեռ այն ժամանակ աշխատում էին արհեստական կերպով այդպիսի ընդհարումներ առաջ բերել նաև Պարսկաստանի հայաբնակ քաղաքներում ու գավառներում: Բայց դա նրանց չհաջողվեց, որովհետև, ի տարբերություն ռուսական կայսրությանը սահմանակից Ատրպատականի նահանգի բնակչության մեծամասնություն կազմող թուրքերի, պարսիկները հանդես չէին բերում առանձին հետաքրքրություն Կովկասում տեղի ունեցող դեպքերի հանդեպ: Դա, անշուշտ, իր դրական ազդեցությունն էր ունենում տեղի թուրքության վրա:

Չնայած դրան, ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, անհանգստացած առաջիկայում պարսկահայերի նկատմամբ բռնարարքների հնարավոր սանձազերծումով, նամակ էր գրել Իրանի վեհապետ Մուզաֆֆեր էդ Դինին և մանրամասն պարզաբանել Կովկասի թուրք-հայկական ընդհարումների իսկական շարժառիթները: Շահը խորին ուշադրությամբ լսել էր նամակի ընթերցումը և արտաքին գործերի նախարարին պատվիրել իր անունից սիրալիր նամակ պատրաստել Էջմիածին ուղարկելու համար[1]:

Կարծես թե մտահոգությունները փարատվում էին, և նոր արյունահեղությունների վտանգը մնացել էր հետևում: Բայց նման լավատեսությունը դեռ վաղ էր: Երբ Նախիջևանի թուրքերի և հայերի միջև տեղի ունեցող չարաղետ դեպքերի մասին լուրերը հասան Ատրպատականի կենտրոն Թավրիզ, այլևս անկարելի եղավ հուզմունքների առաջն առնել: Ե՛վ թուրքերը, և՛ հայերը սկսեցին տենդագին արագությամբ զինվել ու պատրաստվել, քանզի երկյուղն ու կասկածը սողոսկել էին երկու կողմերի սիրտը: Շատ-շատերը գուշակում էին ծանր հետևանքներ:

Այդ վտանգավոր պահին Ատրպատականի պարսիկների մեծ տոկոսը, մանավանդ միղացիները, պարսիկ հոգևորականությունը և հատկապես կառավարությունը ամենաեռանդուն միջոցների դիմեցին, որպեսզի կովկասյան քրիստոնելի դեպքերը չկրկնվեն Պարսկաստանում: Կառավարությունը հանձնարարեց Ատրպատականի նահանգի մեծ ու փոքր պաշտոնյաներին լայն պրոպագանդա մղել թուրք ազգաբնակչության մեջ: Միաժամանակ խնդիր դրվեց

[1] Տե՛ս «Մշակ», N 84, 21 ապրիլի 1906թ.:

զգուշացնել և հորդորել հայերին՝ ամեն կերպ խուսափել հայ-թուրք թշնամություն ստեղծելու պատահական ադիթներից[1]:

Չնայած ձեռնարկած արտակարգ միջոցներին, հատկապես Նախիջևանից և Բաքվից շարունակում էին Ատրպատական գալ կովկասյան թուրքերի նորանոր խմբեր և իրենց հակահայ ագիտացիայով պղտորել տեղի թուրքերի մտքերը:

Կարելի է երևակայել, թե Ատրպատականի նման նահանգում, որտեղ թուրքերը մեծամասնություն էին կազմում և հայտնի էին իրենց հետամնացությամբ ու մոլեռանդությամբ, ինչ հետևանք կարող էին ունենալ ամբոխը թունավորող ագիտացիան և հուզիչ լուրերը: Նախիջևանից չարամիտ մարդիկ նամակներով ու հեռագրերով շարունակ զրդռում էին Ատրպատականի իրենց ազգակիցներին, բարեկամ ու ծանոթ հայրենակիցներին՝ եղածին ավելացնելով հազար ու մի սուտ և, իհարկե, մեղքը միշտ բարդելով կովկասահայերի վրա: Ցանատիկոս ամբոխին զսպելը կառավարության և պարսից հոգևորականության համար գնալով դժվարանում էր:

Պարսկաստանից գործով Թիֆլիս եկած պարսիկ խան Մայի-Սալթանեն «Արշալույս» թերթի աշխատակցին տված հարցազրույցի ժամանակ ասել էր.

«Պարսից վարչական մարմիններն ու ազնվականները բնավ շահագրգռված չեն խռովություններ առաջացնելու: Ընդհակառակը, նրանք աշխատում են, որ հայերն ու թուրքերը շարունակեն հաշտ ու խաղաղ ապրել: Առանձին ուշադրություն է դարձվում Կովկասից Պարսկաստան գնացած թուրքերի վարմունքին, քանի որ սրանք ոչնչից չեն խորշում խռովություններ առաջ բերելու համար, իրենց ցեղակիցների մեջ տարածում են նրանց վրդովեցնող լուրեր, ցույց են տալիս զանազան արյունոտ շապիկներ և այլն»[2]:

Ատրպատականի հայերը խորին անհանգստությամբ օրեցօր սպասում էին, թե երբ են վրա հասնելու ողբերգական դեպքերը: Ջուլֆայից փոստը չէր գալիս, և այդ հանգամանքն ավելի էր թանձրացնում տագնապը: Վերջապես մայիսի 25-ի առավոտյան Ջուլֆայից Թավրիզում ստացվեց մի չարագուշակ հեռագիր, որով հաղորդվում էր, որ Երևանում վերսկսվել են թուրք-հայկական ընդհարումները, այս անգամ ավելի մեծ չափերով: Անմիջապես լուրը տարածվեց քաղաքում բյուրավոր հավելվածներով: Թուրք ամբոխը հետզհետե ուռքի էր կանգնում[3]:

Մայիսի 27-ին հաջորդեց երկրորդ հեռագիրը, որն այս անգամ երևանցի մի խումբ չարամիտ թուրքերի կողմից հասցեագրված էր Թավրիզի մուսուլմանական կրոնապետին: Հայտնվում էր, որ Երևանի և շրջակայքի բոլոր մահմեդականները հայերի կողմից պաշարված են: Կրոնապետին խնդրանք կար՝ դիմել Թավրիզի հայերին, որպեսզի նրանք հեռագրեն Էջմիածին, ամենայն հայոց

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[Ա], վավ. 323, թ.1:
[2] «Արշալույս» (Թիֆլիս), N 4, 7 հունվարի 1905թ.:
[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237[Ա], վավ. 323, թ.2:

կաթողիկոսին, որպեսզի նա գա Երևան, անձամբ ազդի տեղի հայերի վրա և նրանց ստիպի հաշտություն կայացնել քաղաքի Թուրքերի հետ: Կրոնապետը Երևանից ստացած հեռագրի պատճենն ուղարկում է հայ եկեղեցու Ատրպատականի թեմական խորհրդին և իր կողմից խնդրում, որքան կարելի է շուտ հեռագիր ուղարկել կաթողիկոսին, ավելացնելով, որ Երևանից ստացած լուրը ծայրահեղ զրգռման է հասցրել Թավրիզի մուսուլմաններին, ուստի աղետի առաջը շտապ պետք է առնել:

Հայերը, որ բոպե առ բոպե սպասում էին հարձակման, նույն օրն իսկ արագ փակում են շուկայի իրենց խանութները և ահուդողով մտնում տները՝ պատրաստվելով ինքնապաշտպանության: Միաժամանակ Թավրիզի մի քանի նշանավոր հայեր լուր են տալիս Թեհրան և կառավարությանը խնդրում հրահանգ տալ Ատրպատականի իշխանություններին, որպեսզի նրանք պաշտպանության տակ առնեն քաղաքի հայությանը: Պատասխանը չի ուշանում. Թեհրանից եկած կառավարական հեռագիրը հայտնում էր, որ որևէ Թուրք կամ պարսիկ որևէ հայի նկատմամբ կատարած բռնության համար կպատժվի ամենախիստ կերպով:

Այդ ժամանակ Թավրիզում կար երկու կուսակցություն: Դրանցից մեկը գլխավորում էր Իմամ Ջուման, խիստ հետադեմ հայացքներով մի մարդ: Սրա կուսակցության անդամների թիվը սահմանափակ էր, հետևապես աննշան էր նրա ազդեցությունը քաղաքի բնակչության վրա: Մյուսը՝ «Ազգային կուսակցությունը», բազմամարդ էր, որի ղեկավարն էր քաղաքում ժողովրդականություն վայելող Հաջի Միրզա Աբդուլ Քերիմ աղա մուշտեիդը: Սա ողջունեց հայերի նկատմամբ Թեհրանի բռնած դիրքը և ամեն կերպ նպաստեց քաղաքում հանդարտության պահպանմանը:

Երկու օր քաղաքում հանգիստ էր, բայց մայիսի 29-ին, երեկոյան կողմ, մի խումբ թալաբաներ (պարսիկ մոլա-ուսանողներ) Երևանից ստացված հեռագրի ազդեցության տակ հավաքվում են մզկիթում և խորհրդակցելուց հետո խմբովին մտնում են շուկա ու հայերին կոտորելու բարձրաձայն կոչեր անում: Սկսվում է իրարանցում. Թուրք և պարսիկ խանութպանները հարձակվում են հարևան հայ խանութպանների վրա և ծեծ ու ջարդ տալիս: Սրանցից մի քանիսը խանութները բաց ձգած՝ փախչում են հայոց թաղերը, ուր տիրում էր ընդհանուր սարսափ: Հուզմունքը քանի գնում մեծանում էր, դրությունը դառնում սպառնալից:

Բարեբախտաբար, իշխանությունը շատ արագ զորք է ցրում հայոց թաղերի բոլոր փողոցների մոտերքում, իսկ երեսուն ձիավորի ուղարկում է Ղալա թաղը: Դատավորն անձամբ դուրս է գալիս շուկա և հորդորներով ու կոչերով հանգստացնում հավաքված մուսուլմաններին, ապա կրոնապետին պատվիրում է քարոզներով զսպել ամբոխին:

Հաջորդ օրվա առավոտից հայոց թաղերի բոլոր փողոցներում կանգնած էին զինվորներ, շրջում էին ոստիկաններ: Ոչ մի հայ շուկա չէր մտնում,

փոստը առաջվա պես Ջուլֆայից չէր ստացվում, և ժողովուրդը խարխափում էր անստուգության մեջ: Շատերը թաքցրել էին տնային իրերը՝ մտածելով ժամանակավորապես փախչել քաղաքից և այնտեղ վերադառնալ հանգստություն հաստատելուց հետո:

Հունվարի 1-ին հայոց թեմական խորհուրդը հեռագիր է հղում էջմիածին և կաթողիկոսին հայտնում Թավրիզահայության անապահով վիճակի մասին: Նույն օրը Ատրպատականի կառավարությունը նոր կարգադրություն է ստանում շահից՝ խռովության առաջն առնելու համար դիմել ամենախիստ միջոցների[1]:

Հաջորդ օրը հայերը դուրս են գալիս տներից, խանութպանները գնում են շուկա՝ բացելու խանութները: Ամեն ինչ քաղաքում խաղաղ էր, և մարդիկ զբաղված էին իրենց գործերով, թեև շարունակում էին քննախույզ աչքերով նայել միմյանց: Պարսիկները մոտենում էին հայերին, նրանց հանգստացնում, ասելով, որ երկյուղելու պատճառ չկա, միաժամանակ հավաստիացումներ էին անում, որ եթե հարձակման ենթարկվեն Թուրքերի կողմից, ապա իրենք անպայման կկանգնեն հայերի կողքին: Համոզված, որ արդեն մտքերը խաղաղվել են, իշխանությունը փողոցներից հետ կանչեց զինվորներին: Դրան նպաստեց այն լուրը, թե Խրիմյան Հայրիկը էջմիածնից գնացել է Երևան և հայ ու Թուրք բնակչությանը հորդորել է հաշտություն կապել ու ապրել խաղաղությամբ: Լուրը հանգստություն էր բերել շատերին, բայց տպավորությունը խաբուսիկ էր:

Հունիսի 3-ի առավոտյան Թավրիզից վեց մղոն հեռավորության վրա գտնվող Մուժամբար հայկական գյուղից մի քանի հոգի քաղաք գալով՝ լեղապատառ պատմում են, թե շրջակա Թուրք գյուղերի ներկայացուցիչները եկել են իրենց գյուղը և բնակչությանն առաջարկել ողջ ունեցվածքը հանձնել իրենց՝ ասելով. «Միևնույն է, վաղը ձեզ պարսիկները կոտորելու են ու թալանելու ձեր եղած-չեղածը: Մի՞թե ավելի լավ չէր լինի ձեր կամքով ձեր ունեցվածքը հիմա տայիք մեզ: Կտանենք, կպահենք, եթե ողջ մնացիք, ապրանքը ձեզ կվերադարձնենք: Մի՞թե ավելի լավ կլինի, եթե ձեր ունեցվածքն ընկնի պարսիկների ձեռքը»[2]: Մուժամբարցիները մտնում են հայոց առաջնորդարան և խնդրում օգնություն ու ապահովություն: Առաջնորդարանի դիմումի համաձայն մուսուլմանական կրոնապետը գրավոր հորդորաթուղթ է ուղարկում Մուժամբարի հարևան Թուրք գյուղերի բնակիչներին և նրանց զսպվածության կոչում:

Արդեն 1905թ. հունիսի կեսերին խաղաղ էին ինչպես Թավրիզը, այնպես էլ շրջակա Թուրք, պարսիկ և հայ գյուղերը:

Այսպիսով, երկու շաբաթ տևած դառը տագնապները մնացին հետևում: Այդ օրերի ընթացքում հատ ու կենտ վրեժխնդրական արարքներից բացի, հա-

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. N 237*, վավ. 323, թ. 8:
[2] Նույն տեղում, թ. 9:

յերի դեմ մասսայական ոչ մի շարժում չեղավ, չեղավ ոչ մի զոհ: Սադրանքների աննախանձելի թուրք «հերոսների» թափած ջանքերը բոլորովին ապարդյուն անցան: Դա հետևանք էր պարսկական իշխանությունների խելամիտ ու վճռական գործողությունների: Պարսից կառավարությունը մի այնպիսի համակրելի ուղղություն բռնեց իր հավատարիմ ու խաղաղասեր հայ հպատակների նկատմամբ, որ օրինակ կարող էր ծառայել ռուս բյուրոկրատական կառավարության համար:

Շատ կարևոր էր նաև այն, որ թեև բուն Պարսկաստանի մամուլը՝ որպես կանոն, այդ ժամանակ շատ հազվադեպ էր անդրադառնում արտաքին քաղաքականության հարցերին, ինչպես նաև Կովկասում երկու ազգերի կռիվներին, բայց երբ, այնուամենայնիվ, առիթ էր լինում ընթերցողներին որոշ տեղեկություններ հաղորդել այդ կռիվների ընթացքից, ապա դա հիմնականում կատարվում էր անկողմնակալ և նույնիսկ համակրանքով դեպի հայերը: Ինչ վերաբերում է պարսկահայերի նկատմամբ նույն մամուլի վերաբերմունքին, ապա այն հիմնականում արտահայտում էր պարսից կառավարության բարեհաճ ու բարեկամական տրամադրությունը Իրանի վեհապետի հայ հպատակների հանդեպ:

Թուրք-հայկական ընդհարումների մասին բուն Պարսկաստանի թերթերից միայն «Թարբիաթն» էր, որ քիչ թե շատ բավարար տեղեկություններ էր տալիս: Համարներից մեկում նշելով, թե Կովկասի ընդհարումների պատճառը հայերին վերագրելը ոչ մի հիմք չունի, թերթը գրում էր. «Մի բոպե ենթադրենք, թե Կովկասի ընդհարումների պարագլուխները հայերն են եղել, բայց դա դեռևս մեզ իրավունք չի տալիս դրա համար Պարսկաստանի հայերից վրեժ առնել, երբ մինչև այսօր նրանցից ոչ մի հանցանք չենք տեսել»[1]:

Ի տարբերություն բուն Պարսկաստանի մամուլի, արտասահմանում պարսկերեն լույս տեսնող մի քանի թերթեր, որոնք պարսկախոս մահմեդականների շրջանում համիսլամիզմի նշանավոր պրոպագանդիստներ էին, ընդունել էին բացահայտ հակահայ դիրք: Դրանց թվում հատկապես առանձնանում էր Կ. Ժոլսի կողմից ֆինանսավորվող երկու թերթ[2] Կալկաթայում (Հնդկաստան) հրատարակվող «Հաբլուլ-Մաթինը» և Ալեքսանդրիայի (Եգիպտոս) «Զահրանուման»[3]: Հաշվի չառնելով զրավոր խոսքի էթիկայի ամենատարրական սկզբունքները՝ այդ թերթերը կատաղի արշավանք էին սկսել հայերի դեմ և միջոցների առջև խտրություն չէին դնում առաջ բերելու նրանց կոտորածը Պարսկաստանում: «Հաբլուլ-Մաթինի» զրպարտություններին վերջ չկար: Դրանցից մեկն այն էր, թե հայերը նպատակ ունեն Պարսկաստանից պոկել Ատրպատականը և միացնել իրենց ապագա անկախ պետությանը: Ելնելով իր իսկ հնարած այդ հրեշավոր ստի վրա՝ թերթը պարսից կառավարությանը փորձում

[1] Մեջբերված է «Մշակ» թերթից, N 84, 21 ապրիլի 1906թ.:
[2] Տե՛ս «Արշալույս», N 44, 28 փետրվարի 1906թ.:
[3] Զահրանումա - թարգմանաբար՝ ճշմարտության չափանիշ:

էր համոզել, թե հայրենիքի տարածքային ամբողջականության պահպանման միակ հնարավոր միջոցը հայերի կոտորած սարքելն է և նրանց հեռացնելը երկրից[1]:

Սակայն հակահայկական այս դրսևորումները եղանակ չէին ստեղծում ո՛չ պարսից կառավարության և ո՛չ էլ պարսիկ ժողովրդի մոտ:

Պարսից կառավարությունը և հոգևորականությունը ճիշտ էին ըմբռնել այդ թերթերի նպատակները և համոզվել էին, որ դրանք գործում են ի վնաս Պարսկաստանի[2]:

Այսպիսով, կովկասյան թուրք-հայկական ընդհարումները Պարսկաստանում արձագանք չգտան, և դրա պատճառներն էին՝ պարսիկ կառավարության աչալրջությունը, ոստիկանական խստությունները, մամուլի ճիշտ կեցվածքը: Կային ուրիշ պատճառներ ևս:

Ամենից առաջ նշենք, որ վերջիններիս թվում առանձնանում են այն խիստ տարբերությունները, որ կային Պարսկաստանի և Կովկասի դասակարգային կազմի ու հասարակական հարաբերությունների միջև:

Պարսկաստանում տիրապետող հասարակական կարգը ավատապետականն էր, որի ներկայացուցիչներն էին կղերը և խոշոր կալվածատերերը: Սրանց, հատկապես հողատերերի, ձեռքում էր գտնվում երկրի ղեկավարությունը: Հայերը Պարսկաստանում չունեին կալվածատերերի խավ այն իմաստով, ինչպիսին կար Կովկասում. հետևաբար չկար շահերի ոչ մի ներհակություն, մի կողմից, պարսիկ և թուրք կալվածատերերի, մյուս կողմից՝ հայերի միջև:

Հողատերերից ու կղերից հետո գալիս էր պարսիկ ու թուրք նորածագ բուրժուազիան: Սա Պարսկաստանի երիտասարդ, բայց դեռ համր քայլերով ընթացող դասակարգն էր, որի ձեռքում արդեն գտնվում էր երկրի հնչուն դրամի մեծ մասը[3]: Հայերը Պարսկաստանում չունեին նշանավոր կապիտալիստներ, հետևապես այս ոլորտում նույնպես չկար նկատելի անտագոնիզմ հայերի և պարսիկ ու թուրք կապիտալիստների միջև:

Պարսկահայերի հիմնական զբաղմունքը վաճառականությունը և արհեստներն էին: Հայ վաճառականը Պարսկաստանի կոմիսիոներ-վաճառականն էր, որը չուներ սեփական կապիտալ, գործում էր պարսիկ և թուրք կապիտալիստների ֆինանսական միջոցներով, հետևաբար վաճառականությունից ստացած շահի մեծ մասը տալիս էր նրանց: Այնպես էր ստացվել, որ, օրինակ, Ատրպատականից ապրանքներ արտահանողները բացառապես հայեր էին: Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ նրանք, ծանոթ լինելով արտաքին շուկայի պայմաններին, իմանալով արտասահմանյան լեզուներ, կարողանում էին հեշտությամբ հարաբերություններ մշակել դրսի աշխարհի հետ: Մի խոսքով, հայ վաճառականը հանդես էր գալիս որպես պարսիկ և թուրք կապիտա-

[1] Մեջբերված է «Մշակից», N 84, 21 ապրիլի 1906թ.:
[2] Տե՛ս «Մշակ», N 18, 26 հունվարի 1906թ.:
[3] Տե՛ս «Հոսանք» (Թիֆլիս), N 51, 17 փետրվարի 1907թ.:

լիստների գործակատար: Նրանք հայ վաճառականին հոժարությամբ էին տրամադրում իրենց ունեցած գումարները՝ կրկնակի դիտումով՝ արդյունաբերության առաջընթացին զարկ տալու և կապիտալից ավելի շատ տոկոս ստանալու նպատակով: Քանի դեռ պարսիկ և հատկապես Թուրք կապիտալիստներն անկարող էին անձամբ կատարելու ապրանքների և հումքի արտահանությունը, պետք ունեին հայ վաճառականի: Նույնիսկ այս պայմաններում հայ վաճառականների շարքերից դուրս էին գալիս խոշոր կապիտալի տերեր: Դրանց թվում էին, օրինակ, Արզումանով եղբայրները, որոնց ֆիրման իր ձեռքն էր վերցրել Համադանից և Քերմանշահից Ռուսաստան կատարվող համարյա ողջ արտահանումը[1]:

Ինչ վերաբերում է պարսիկ և Թուրք արհեստավորներին, ապա սրանք ևս ոչ մի շահ չունեին ընդհարվելու հայ արհեստավորների հետ, քանի որ տարբեր էին սրանց արտադրանքի գնորդները: Հատկապես Ատրպատականի Թուրքերի կենցաղը խիստ տարբերվում էր հայերի կենցաղից. տարբեր էին հայերի և Թուրքերի զգեստները, կոշիկները, գլխարկները և այլն: Փոքրաթիվ հայ արհեստավորներ ձևում ու կարում էին հայերի, երբեմն նաև՝ եվրոպացիների համար, իսկ Թուրք արհեստավորները՝ Թուրքի: Այլ խոսքով, պայմաններ չկային հայ և Թուրք արհեստավորների անտագոնիզմի համար:

Ահա Թե ինչու Կովկասի Թուրք գաղափարախոսները, պրոպագանդիստներն ու ագիտատորները գործելու հող չգտան Պարսկաստանում: Ահա Թե ինչու կովկասյան դեպքերը, ցավ պատճառելուց բացի, արձագանք չունեցան այստեղ:

ԱՌԱՋԻՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ԳԱՎԱՌՈՒՄ

Նախիջևանի կոտորածները դետոնատորի դեր խաղացին՝ սկսեցին տարածվել Շարուր-Դարալագյազի, Զանգեզուրի և Ջիվանշիրի գավառներում, Արարատյան դաշտում: Համիսլամական շարժումն ընդունում էր սպառնալի չափեր:

Շարուր-Դարալագյազի գավառը Երևանի նահանգի 7 գավառներից ամենափոքրն էր: Նրան սահմանակից էին. հյուսիսից՝ Երևանի և Նոր Բայազետի գավառները, հարավից՝ Նախիջևանը, արևելքից՝ Գանձակի նահանգի Զանգեզուր գավառը, իսկ արևմուտքից՝ Արաքսը, որը կազմում էր Մակուի խանության սահմանագիծը:

Շարուր-Դարալագյազի գավառը բաղկացած էր երկու գավառամասից՝ միապետական վարչական բաժանումով՝ Լեռնային Դարալագյազից (Վայոց ձոր), որը բռնում էր գավառի երեք քառորդ մասը, և Շարուրից, որը բռնում էր դաշտային տափարակ մասը՝ ձգվելով մինչև Սադարակի և Նախիջևանի հարթությունները:

[1] "Отчет о поездке по Перьме С.-П.Б. Императорского университета ф. Восточн. языков студента Дмитрия Беляева в 1903 и 1905г.г.",Тифлис, 1906, стр. 71, 81.

Ամբողջ գավառով՝ հյուսիսից հարավ հոսում էր Արփաչայ գետը և, դուրս գալով Շարուրի հարթավայրը, կյանք էր տալիս այդ արգավանդ դաշտին:

Շարուր-Դարալագյազում կար 163 գյուղ, որից 109-ը գտնվում էր Դարալագյազի գավառամասում, իսկ 54-ը՝ Շարուրում: Ամբողջ գավառում հայաբնակ էր 33 գյուղ: Դրանցից 8-ը գտնվում էին Շարուրի գավառամասում Ուլիանորաշենը, Դաշարխը, Թազաքենդը, Խանլուխլարը, Ալաքլուն, Վարմազյարը, Փարչին, Քեչտազը (վերջին երկուսում բնակվում էին նաև Թուրք ընտանիքներ՝ առաջինում 50 տուն, երկրորդում 30)[1]: Դարալագյազի գավառամասի հայկական գյուղերից էին՝ Ղուչչիլարը (Ղուչչի բելակ), Գնդեվազը, Արփան, Հերհերը, Մալիչկան, Քեչիչքենդը, Ղոյթուրը (Ղոթուր), Ելփինը (Էրդափին), Մարտիրոսը, Խաչիկը, Ռինդը, Այնազուրը, Հասանքենդը, Օրթքենդը, Բաշքենդը, Այարը, Փաշալուն, Փոռը, Ազաղակը, Կնիչիկը և ուրիշ 5 ոչ մեծ գյուղեր:

Շարուրի գավառամասի վարչական կենտրոնը Բաշնորաշեն Թուրքաբնակ գյուղն էր, իսկ Դարալագյազի գավառամասի վարչական կենտրոնը՝ Քեչիչքենդը:

Բնակչության ընդհանուր Թիվը Շարուր-Դարալագյազի գավառում 76 հազար էր, որից Թուրքեր՝ 55 հազար, հայեր՝ 21 հազար: Ամբողջ Երևանյան նահանգի գավառների Թվում Թուրքերի և հայերի Թվակազմի հարաբերության տեսակետից, այս գավառում էր, որ հայերը փոքր մաս էին կազմում[2]:

Շարուրի հայկական 8 գյուղերից ամենահարուստը և ամենամարդաշատը Ուլիանորաշենն էր՝ 220 տուն բնակիչներով: Գյուղը նաև երկաթուղային կայարան էր:

"Русские Ведомости" թերթը 1905թ. N153-ում տպագրված թղթակցության մեջ հաղորդում էր, որ մայիսի 30-ին շրջակա Թուրքական գյուղերից հավաքված 37 հազարի չափ ամբոխը, որին գլխավորում էին Բաշնորաշենից եկած մի քանի հայտնի Թուրքեր, երեք կողմից պաշարել է Ուլիանորաշենը և մայիսի լույս 31-ի գիշերը հարձակման անցել: Հայերը ցույց են տվել համառ դիմադրություն, բայց ճնշումը գնալով ուժեղացել է, ուստի ժողովուրդը, երիտասարդների հրացանային կրակի պաշտպանության տակ, ստիպված քաշվել է բնակավայրի Թիկունքին կպած Օղլան-ղալա բարձրանիստ լեռը:

Հազարավոր Թուրքեր Թափվելով գյուղ՝ երեք օր շարունակ, մեծ Թե փոքր, տղամարդ Թե կին, գրաստներով Թե շալակով, կրում էին այնտեղ եղածը: Բլրի վրա կուտակված սոված ու ծարավ ուլիանորաշենցիներն անզոր դիտում էին, Թե Թուրքը ինչպես է տանում իրենց քրտինքով ստեղծված հարստությունները:

Դոնի Նոր Նախիջևանի մշտական բնակիչներ Ելենա Մնձբոյանը, Միքայել

[1] **Ա-Դ0**, *Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 107:*
[2] *Տե՛ս* **"Кавказский календарь на 1905 год"**, III отд., *էջ 48-49, նաև՝* **Ա-Դ0**, *Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 107:*

Զարաֆյանը և Արշակ Հովհաննիսյանը, որոնք աշխատում էին Թավրիզի հայկական ուսումնարանում, ուսումնական տարվա վերջին Թավրիզից մեկնում էին Դոնի իրենց ծննդավայրը: Շարուրով անցնելիս ականատես լինելով Ուլիանորաշեն գյուղի իրադարձություններին, նրանք ցուցմունք էին տվել, թե ինչպես երկաթուղային կայարանի մոտ թուրքերն ուղևորներին առաջարկում էին գնել կողոպտածը՝ գորգեր, տեղաշորեր, ամանեղեն, կահույք[1]: Մինչև վերջին թելը կողոպտելուց հետո թուրքերը հրդեհի ճարակի տվեցին տներն ու խանութները: Գյուղը մոխրացավ:

Ջնայած սովն ու հիվանդությունները բազմաթիվ զոհեր խլեցին, բայց Օղլան-զալայի կրծքին կպած ուլիանորաշենցիներն ամբողջ երկու ամիս պաշտպանվում էին և այդպես էլ չենթարկվեցին թշնամուն:

Մայիսի 31-ին ռուսական Կովկասի պատմության մեջ տեղի է ունենում եզակի դեպք՝ 5000 քուրդ ձիավորներ Պարսկաստանից անցնում են սահմանը և, միանալով տեղի մի քանի հազար թուրքերին, հարձակում են գործում Շարուրի շրջանի հայկական գյուղերի վրա՝ կրակի ու սրի մատնելով դրանք:

Չկարողանալով դիմադրություն ցույց տալ՝ հայկական 6 գյուղերի բնակիչները, թվով մոտ 4000 հոգի, փախչում և կենտրոնանում են Խանլուխլար մեծ գյուղում, որը շուտով հարձակվողների կողմից առնվում է սեղմ օղակի մեջ: Խանլուխլարցի և հայկական մյուս 6 գյուղերից եկած երիտասարդներից կազմվում է պաշտպանական մի ուժեղ խումբ: Զինված հայերին միանում է գյուղում եղած 5-րդ հրաձգային գնդի 120 զինվոր ունեցող վաշտը՝ Գորդապխաձեի հրամանատարությամբ, որոնք համատեղ սկսում են պաշտպանել Խանլուխլարը[2]:

Սկսվում է ուժգին հրաձգություն: Տալով 17 զոհ՝ վաշտը թողնում է դիրքերը և հեռանում գյուղի կենտրոն[3]: Հայ երիտասարդները շարունակում են կռվել դիրքերում ուժերի գերազույն լարումով[4]: Լրացնելով զինապաշարը՝ Գորդապխաձեն իր վաշտով գալիս և նորից մտնում է դիրքերը: Մայիսի 31-ի լույս հունիսի 1-ի գիշերը Խանլուխլարին օգնության է գալիս պոլտավյան կազակական գնդի մի հարյուրակ՝ Զերնիի հրամանատարությամբ[5]: "Русские Ведомости" 1905թ. N153-ում մանրամասն նկարագրված է հարյուրակի մարտը թուրք-քրդական ուժերի դեմ: Թերթը նշում էր, որ, դիրքեր գրավելով ցանկապատերի հետևում, հարյուրակն ամբողջ 7 ժամ հետ էր մղում խռովարարների գրոհները՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ, սպանելով նաև կանաչ չալմայով պարագլխին: Հունիսի 1-ի կեսօրին հարյուրակը նահանջում է՝ հոգնած և ուժասպառ: Երեք-չորս ժամ հետո հասնում է համալրում, և հարյուրակը հայ մարտիկների հետ միասնաբար վերացնում են շրջապատումը: Հետապնդելով նահանջողներին, գրում էր թերթը, կազակները նագայկաներով դաժանորեն ծեծում են փախչողներին, վերցնում 80 գերի, գրավում մարգարեի ձեռքի պատկերով սև դրոշակը, շատ զենք: Գրավվում են նաև մեծ թվով պրոկլամացիաներ, որոնցում սյուններիներին և չիաներին կոչեր էին արվում միավորվել հայերի դեմ մղվող ընդհանուր պայքարում: Այդ ամենը, այնուհետև նշում էր "Русские Ведомости"-ն, ճնշող տպավորություն են թողել գեներալ Ալիխանով -Ավարսկու և Նախիջևանի խաների վրա: Թերթը հաղորդում էր նաև, որ հաստատված են սահմանից այն կողմ թուրքերի, քրդերի, պարսիկների և Նախիջևանի ու Շարուրի թուրքերի համատեղ ապստամբություն բարձրացնելու լուրերը: Թողնելով Խանլուխլարը՝ քրդերը շարժվեցին Երևանի ուղղությամբ: Ենթադրվում էր, որ դրանք համիդիե էին:

Պետք է նկատել, որ Բաքվի փետրվարյան կոտորածներից ի վեր սա առաջին դեպքն էր, որ ռուսական զորքը բացահայտորեն կռվում էր հայերի կողքին՝ ընդդեմ թուրք խուժանի: Դա, իհարկե, ամենևին հայերի նկատմամբ իշխանությունների քաղաքականության փոփոխման վկայություն չէր, այլ, ինչպես նշված է "Русские Ведомости"-ի վերոհիշյալ հոդվածում, «զորքը գործել էր սեփական նախաձեռնությամբ»:

Այսպիսով, Շարուրի բոլոր հայկական գյուղերը, բացի Խանլուխլարից, դարձան ավերակ ու անմարդաբնակ:

Բայց բանը դրանով չվերջացավ: Անկարող լինելով դուրս գալ Խանլուխլարից, այնտեղ կուտակված 4000-ից ավելի մարդիկ երեք ամիս շարունակ կրում էին անասելի զրկանքներ: Սովից ու հիվանդություններից եղան բազմաթիվ զոհեր. մեռածների թվում հատկապես շատ էին մանուկները:

Ավելի վատթար վիճակում էին Օղլան-զալայի վրա կուտակված ուլիանորաշենցիները:

Մանր օրեր էին ապրում նաև Շարուր-Դարալագյազի Դարալագյազ (պատմական Վայոց ձոր) գավառամասի հայերը: Գավառը Արփաչայ գետով գրեթե հյուսիսից հարավ բաժանվում էր երկու մասի: Հայկական գյուղերից 8-ը ընկած էին գետի ձախ ափին, մնացածները՝ աջ: Թեև Արփաչայի աջ և ձախ կողմերում ընկած գյուղերն իրար հետ կապ էին պահպանում միմյանցից բավականին հեռու գտնվող միայն երկու կամուրջների միջոցով, բայց տարվա բոլոր եղանակներին գետը որոշ տեղերում կարելի էր անցնել նաև ձիով: Հայերի գյուղերը, փոքր բացառությամբ, ընկած էին միմյանցից բավական հեռու և շրջապատված բազմաթիվ թուրք գյուղերով[1]: Թուրքական գյուղերի մեջ ամենամեծը Ջուլն էր, որ գտնվում էր Փաշալուի շրջանում[2]:

Թե՛ տնտեսական և թե՛ մշակութային տեսակետից Դարալագյազի գավառամասը Երևանի նահանգի ամենահետամնաց շրջաններից էր:

Մինչև թուրք-հայկական ընդհարումները, այսինքն՝ մինչև 1905թ. գարու-

---

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ.1022, ց.2, գ. 175, թ. 7:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, էջ 118:
[5] Տե՛ս նույն տեղում:

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 114:
[2] «Հայրենիք», N 8 (188), հունիս, 1938, էջ 120:

նը, գավառամասի հայերի ու թուրքերի հարաբերությունները բավականին լավ էին, ապրում էին հաշտ ու խաղաղ: Թուրքերը հայերից չքավոր էին: Գավառամասում միայն մի գյուղ կար՝ Ջուլը, որի բնակիչներն ավազակաբարո բարքեր ունեին: Սրանց թալաններն ընդհանուր դժգոհություն էին առաջ բերում թե՛ հայերի և թե՛ հատկապես թուրքերի շրջանում, թեև ջուլեցիներից տուժողն առավելապես, եթե ոչ բացառապես, թուրքերն էին:

Բաքվի կոտորածների մասին տեղեկություն ստանալուց անմիջապես հետո Հ.Յ. դաշնակցության Վայոց ձորի շրջանային կոմիտեն, քննության առնելով ստացված լուրերն ու հավանական համարելով դեպքերի ծավալումը Նախիջևանում, Շարուրում, նաև՝ Դարալագյազում, որոշեց միջոցներ ձեռք առնել բնակիչների անվտանգությունն ապահովելու համար:

Գավառամասում նորից ամբողջ հրատապությամբ կանգնեց զենքի հարցը: Կոմիտեն ամենից առաջ ձեռնարկեց շրջանում եղած զենքերի հաշվառման գործը, որի արդյունքում պարզվեց, որ Դարալագյազի ամբողջ հայությունն ունի քիչ թե շատ պիտանի ընդամենը 5 պետական հրացան, այսինքն՝ ըստ էության անզեն էր: Մինչդեռ յուրաքանչյուր թուրքական գյուղ ուներ, հավանաբար, դրա կրկնակին, եթե ոչ ավելին: Կացությունը պահանջում էր ամեն ջանք գործ դնել բնակչությանը զինելու համար:

Սակայն, հակառակ բոլոր ջանքերին, գյուղացիները խուսափում էին զենք գնելուն փող տրամադրել, պատճառաբանելով, որ իրենք չեն հավատում իրենց թուրք հարևանների հետ ընդհարման հավանականությանը:

Երևանում տեղի ունեցած առաջին կոտորածը սթափեցրեց Դարալագյազի գյուղացիներին և նրանց խորհելու առիթ տվեց, բայց նույնիսկ դրանից հետո հրաժարվում էին փող տալ: Կոմիտեն միայն մի ելք էր տեսնում դիմել Երևանի օգնությանը:

Այդ ժամանակ Դարալագյազում Հ.Յ.Դ. Մրգաստանի (Երևանի) կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ էր Արշալույս Աստվածատրյանը, որը, Նոր Բայազետի վրայով անցնելով Երևան, այնտեղ ներկայացնում է շրջանի վիճակը: Արդյունքում կենտրոնական կոմիտեն որոշում է Դարալագյազին զենք տրամադրել, նաև զինված մի խումբ ուղարկել, որի առջև խնդիր է դրվում տեղ հասնելուն պես տեղական ուժերի հետ հարձակումներից պաշտպանել ոչ միայն Դարալագյազի հայերին, այլև օգնության հասնել Շարուրի և Նախիջևանի շրջանների վտանգված հայկական գյուղերին:

Մինչև Երևանից զենքի ստացումը և մարտական խմբի ժամանումը, Դարալագյազում անհրաժեշտ էր ժամանակ շահել, թուրքերին ցույց տալ, թե հայերը զինավառ են և պատրաստ են առաջինը հարձակվելու: Արշալույս Աստվածատրյանը տարիներ անց վերհիշել է. «Տեղական ընկերների հետ պարզապես դերասանութիւն էինք անում հարևան թուրքերի վրայ տպաւորութիւն ձգելու համար, թէ հայոց գյուղերում զինուած ֆիդայական խմբեր կան: Այսպէս օրինակ, կազմել էինք մի ձիաւոր խումբ՝ յափունջիներով, ծոպավոր փափախներով, որի մի մասին զինել էինք ձեռքի տակ ունեցած հրացաններով: Խումբը ուշ երեկոները սրարշավ քշում-անցնում էր թրքական գիւղերի մօտով ու անհետանում խավարում վրդովելով թուրքերի հանգիստը եւ երկչոտ ներշնչելով նրանց: Հետեւեալ օրն այդ գիւղերից մարդիկ էին գալիս հարևան հայոց գիւղերը՝ հավատացնելու իրենց բարի դրացիական տրամադրությունների մեջ»[1]:

Նախիջևանում թուրքերի կատարած խժդժությունների, վայրագ բարբարոսությունների մասին զարհուրելի լուրերը Դարալագյազ հասնելուց հետո հայ գյուղացիները, վերջապես, համոզվեցին, որ փրկության միակ միջոցը զենքն է: Այժմ նրանց բոլոր մտքերը պտտվում էին զինվելու շուրջ: Ո՛չ տուն, ո՛չ տեղ, ո՛չ անասուն, ո՛չ ապրանք, միա՛յն զենք: Բայց այդ սթափումն արդեն ուշ էր. անհատական միջոցներով այլևս զենք գտնելը գրեթե անհնարին էր:

Շուտով Դարալագյազ հասավ Երևանից ուղարկած զենքի մի նշանակալի խմբաքանակ: Երևանից եկավ նաև զինված մարտիկների մի խումբ՝ դաշնակցական հայտնի խմբապետ Առյուծ Ավագի գլխավորությամբ: «Առյուծ Ավագը, - գրել է Դրոն, - բնության բիրտ ու անտաշ զավակ էր, խիստ հախուռն, կրքոտ ու զուսպ և միաժամանակ պարզ, մանկան պես վճիտ հոգով»[2]: Խմբի հետ եկել էր նաև դաշնակցական մտավորական Սարկավագը՝ որպես Առյուծ Ավագի խորհրդատու:

Դարալագյազ գալով՝ նրանք անմիջապես ձեռնարկեցին գավառամասի պաշտպանության ամրապնդում. ամենից առաջ ծանոթացան գյուղերի դիրքին, դրանց բնական պաշտպանական հնարավորություններին, ճանապարհներին ու կածաններին, պատրաստված դիրքերին և, որ ամենակարևորն է, տեղի մարտական խմբերի ու դրանց պետերի հետ:

Հենց առաջին օրերից Առյուծ Ավագը գավառամասում դարձավ դրության տերը: Ահա թե նրան ինչպես է նկարագրել Արշալույս Աստվածատրյանը «Մի էջ հայ-թուրքական ընդհարումների պատմությունից» իր հուշագրության մեջ.

«Առյուծ Ավագին առաջին անգամ պատահել էի Երևանում: Խմբապետեր շատ էի տեսել: Իսկ այն օրերին ամեն մի գործոն դաշնակցական որոշ չափով խմբապետ էր: Առյուծ Ավագի պարագան տարբեր էր. թվում էր թե նա դաշնակցական բացառիկ խմբապետերից է: Նախ՝ արտաքինով: Գլխին ուներ աներևակայելի մեծության մի սպիտակ փափախ, որի ծոպերն այնքան երկար էին, որ աչքերը չէին երևում: Երբեմն, զայրացած պահերին, բարկացկոտ շարժումով փափախը բարձրացնում էր ճակատն ի վեր ու ցուցահանում կրակոտ աչքերը: Այդ պահերը բռնողը չէր կարող չմտածել՝ «իրոք որ՝ Առյուծ»: Իր կազմվածքով՝ ժայռի կտոր էր. նրանից ճառագայթում էին առողջություն, ուժ և հանդգնություն: Սիրում էր զենքն ու ձին՝ ինչ որ

[1] «Հայրենիք», N10 (285), հոկտեմբեր, 1949, էջ 85:
[2] «Վեմ», N6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 3:

տարերային ուժով: Ես միշտ երևակայում եմ Նրան՝ նստած նժույգի վրա, մոսինով ու ամբողջովին կորած փամփուշտների մեջ: Երբեք զենքից չէր բաժանվել – գիշեր թե ցերեկ, քնած թե արթուն: Իր կյանքում մի պաշտամունք ուներ՝ Սերոբ Փաշան: Նրա մասին խոսելիս, հիշեցնում էր տաճարում աղոթող հավատացյալի: Մնացածին արհամարհանք էր բաժին հանում: Կռիվն իր տարերքն էր: Թուրքերի հետ ունեցած ընդհարումները ոչինչ բան էր համարում խաղ ու պար: ... Առյուծ Ավագի անունը թուրքերի համար սոսկում-սարսափի հոմանիշ մի բան դարձավ, իսկ հայերը այլևս չէին մտածում վտանգի մասին»[1]:

Հիրավի, հերոսներից հերոսն էր արտակարգ խիզախության և անձնազոհության տեր այդ հայորդին:

Մայիսի կեսերին Դարալագյազի համարյա բոլոր մասերում սկսվեցին խռովություններ ու ընդհարումներ: Հայաբնակ գյուղերի վրա հարձակումներ էին գործում ոչ միայն տեղի թուրքերը, այլև Դարալագյազի ամառային արոտավայրերը բարձրացող թուրք և քուրդ թափառական ցեղերը:

Բուն Դարալագյազի թուրքերը գնալով ավելի ու ավելի համարձակ էին դառնում, և դրությունը գավառում լարվում էր օրեցօր: Բանը հասավ նրան, որ հունիսի 8-ին 2000-ից ավելի հրոսակ շրջապատեց Մարտիրոսը: Գյուղի ողջ բնակչությունը, մեծից փոքրը, դուրս եկավ կռվի: Հայերին միացավ այդ պահին գյուղում գտնվող գավառամասի պրիստավը՝ 50 կազակներով: Մոտավորապես 1500 թուրք շրջափակած էր պահում Փաշալուն: Երկու գյուղերում կռիվները տևեցին մինչև հունիսի կեսերը, որի ընթացքում թուրքերը տվեցին մեծ թվով զոհեր և, ի վերջո, փախուստի դիմեցին: Առյուծ Ավագն ամեն տեղ էր, կռիվների ամենաթեժ կետերում: Արշալույս Աստվածատրյանը գրել է.

«Երբ թուրքական խուժանը Մարտիրոսի և Փաշալուի բարձունքներում սարսափահար փախչում էր Նրա (Առյուծ Ավագի: – Հ.Ս.) առաջից՝ իրեն նետելով ժայռերից ու քոչերից, զայրացած Առյուծը մռնչում էր. «Աննամուսնե՛ր, անհավատներ, գոնե մի քիչ դիմադրեցեք», ու անլուր նախատինքների հետ միասին իր մոսինի ծայրից (մոսինի, որի կոթը երբեք կրծքին չէր տա, այլ միշտ կը պահեր թևի տակ) գրեթե անընդհատ կրակ էր թափում փախչողների գլխին: Ու միշտ նստած նժույգի վրա, կարծես հարսանիք էր գնում, այնքան արհամարհում էր թշնամուն»[2]:

Դարալագյազի ներսի թուրքերը թեև զսպվել էին, բայց վտանգը դեռ չէր անցել: Այժմ վտանգը սպասվում էր Նախիջևան գավառի լեռնային մասում գտնվող և անմիջապես Դարալագյազին հարող Իթղռան գյուղի բնակչությունից, որը Դարալագյազի թուրքերին գրգռողը և նրանց ակտիվ աջակցողն էր:

Իթղռանն ընկած էր մի մեծ ձորով Դարալագյազից Նախիջևան տանող ճանապարհի սկզբին: Այդ ձորը, որի երկու կողմերին թուրքական գյուղեր էին, աստիճանաբար իջնում էր դեպի Նախիջևանի դաշտը և բացվում Ջահուկ հայ-թուրքական գյուղի վրա, որի հայկական մասն արդեն վերածվել էր մոխրակույտի:

Ջանազան տեղերից Իթղռան էին հավաքվել հազարավոր թուրք ավարառուներ, որոնք, հարձակումներ գործելով Նախիջևանի հարևան հայկական գյուղերի, այդ թվում Ջահուկի վրա, հայերի հարստությունները թալանել և բերել կուտակել էին այդ ավազակարոցում: Բայց կատարած ալան-թալանից չբավարարվելով՝ նրանք սկսել էին նախապատրաստվել հարձակվելու Վայոց ձորի հայկական գյուղերի վրա՝ բացահայտորեն սպառնալիքներ հղելով, թե՝ «Սպասեցե՛ք, շուտով հերթը ձեզ է հասնելու»:

Իթղռանի սպառնալիքն անմիջականորեն կախվել էր հարևան Սուլթանբեկ, Սորս և մանավանդ Ալմալու հայկական գյուղերի վրա: Այդ գյուղերը վարչական տեսակետից մտնում էին Նախիջևանի գավառի մեջ և անպաշտպան էին այնտեղի թուրքերի հարձակումների դիմաց: Մյուս կողմից, չէին ստանում Դարալագյազի մարտական խմբերի աջակցությունը, այլ խոսքով՝ մի տեսակ թողնված էին իրենց բախտին: Պարզ էր, որ եթե այս պայմաններում Իթղռանը հարձակում սկսեր, ապա հայկական նշված գյուղերի բնակիչներն ի վիճակի չէին լինելու դիմադրել, նախ՝ անհրաժեշտ թվով զենք չունենալու, ապա և փոքրաթիվ լինելու պատճառով. Սուլթանբեկն ուներ 90 տուն,Սորսը՝ 50, Ալմալուն՝ 38:

Հայկական երեք գյուղերի գլխին կախված վտանգը կանխելու համար Հ.Յ.Դ. Վայոց ձորի շրջանային կոմիտեն որոշեց նախահարձակ լինել՝ Իթղռանում կուտակված ավազակախմբերի հետագա գործողությունները կանխելու համար:

Շրջանային կոմիտեի որոշումը Սարկավագը և Առյուծ Ավագը ճիշտ համարեցին: Սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ: Նախ կարգի բերվեցին մարտական ուժերը, ապա Առյուծ Ավագն անձամբ ծանոթացավ առաջիկա կռիվների ծավալման վայրերին, եղավ Ալմալու գյուղում, որն Իթղռանից ամենամոտն էր: Այնուհետև, իր հետ առնելով Իթղռանին և շրջակայքին լավ ծանոթ մի ալմալվեցու, նա ընդհուպ մոտեցավ թուրքական գյուղին և զննեց տեղանքի բնական ամրությունները:

Հետազոտումից հետո վերադառնալով Ալմալու՝ Առյուծ Ավագն այստեղ խորհրդակցելու հրավիրեց Սարկավագին, Հ.Յ.Դ. շրջանային կոմիտեի երկու ներկայացուցիչների, որոնցից մեկն Արշալույս Աստվածատրյանն էր, նաև՝ մի քանի զինվոր-տասնապետերի: Նա հայտնեց, որ Իթղռանին պատժելը մեկ-երկու ժամվա խնդիր է, բայց դժվարությունն այն է, որ պետք է կարողանալ հայերից թալանված և այդ գյուղում կուտակված հարստությունը, հատկապես մեծ թվով անասունները, դուրս բերել կազմակերպված և այնպես անել, որ դրանք հանձնվեն իրենց տերերին:

[1] «Հայրենիք», N 8 (188), հունիս, 1938, էջ 133, 134:
[2] Նույն տեղում:

Եղան նաև ուրիշ կարծիքներ: Տասնապետերից մեկն ասում էր, որ «Իթղռանի վրա հարձակվելով՝ մենք օրինակ կտանք Թուրքերին, որոնք անպատասխան չեն թողնի մեր հարձակումը, և անխուսափելիորեն կծավալվեն երկարատև կռիվներ, իսկ թե երբ կվերջանան դրանք՝ ոչ ոք չի կարող կանխատեսել»:

Մեծամասնությունը, սակայն, պաշտպանեց նախահարձակ լինելու գաղափարը, գտնելով, որ հակառակ դեպքում ժամանակը խոսելու է Թուրքերի օգտին, որոնք հայերի հապաղումը կդիտեն որպես երկչոտության նշան և իրենք նախահարձակ կլինեն: Այս տեսակետի պաշտպանները նաև շեշտում էին, որ Իթղռանին խփելը և ավազակորջը քանդելը վախ կներշնչի Դարալագյազի Թուրքերին, որոնք կհամոզվեն, որ իրենց ասպատակություններն ու չարագործություններն այլևս անպատիժ չեն մնալու:

Խնդիրը բազմակողմանի քննելուց հետո որոշում ընդունվեց՝ նախահարձակ լինել և տակնուվրա անել Իթղռանը: Բայց անմիջապես հարց առաջացավ՝ ինչպե՞ս պետք է անել, որ կանայք և երեխաները չտուժեն: Այս հարցի շուրջ տաք վիճաբանություններ ծավալվեցին: Զինվորականներն ու Սարկավագն այն կարծիքին էին, որ բնակիչներից ոչ ոքի չպետք է խնայել: Կոմիտեի երկու անդամները մերժեցին այդ տեսակետը և առաջարկեցին անխնա լինել կռվողների, դիմադրողների նկատմամբ, բայց երեխաների ու կանանց համար միջանցք թողնել, որպեսզի նրանք կարողանան գյուղից ապահով դուրս գալ:

Ժողովից հետո Սարկավագն ու Առյուծ Ավագը վերադարձան Դարալագյազի կենտրոն՝ Քեշիշքենդ: Այստեղ հարց առաջացավ՝ իշխանություններին տեղյակ պահե՞լ Իթղռանի վրա կատարվելիք արշավանքի մասին, թե՞ ոչ: Որոշվեց տեղեկացնել Դարալագյազի ոստիկանապետին: Նախկին ոստիկանապետը՝ Դումբաձեն*, հայ բնակչության համար անախորժություններ չէր ստեղծում և լավ հարաբերություններ ուներ տեղի գործիչների հետ: Բայց նախօրյակին նա ազատվել էր աշխատանքից, և նրա փոխարեն նշանակվել էր մի ուրիշ վրացի՝ Իսադորաշվիլին: Ոչ ոք չգիտեր, թե սա ինչպես կվերաբերվի Իթղռանի վրա հարձակվելու ծրագրին, ուստի կոմիտեն շուտով փոխեց իր որոշումը, և մարտական գործողության նախապատրաստումն ընթացավ գաղտնի:

Բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Բզոով, Գյարմչաթաղ, Լուիս, Ջաթմա և այլ Թուրք գյուղերից մի խուժան, իրեն առաջնորդ ունենալով Իթղռանի Թուրքերին, հարձակվում է Սուլթանբեկ գյուղի վրա և թալանելուց հետո՝ հրդեհում: Անսպասելի հարձակման պատճառով գյուղի բնակիչները չեն կարողանում դիմադրություն ցույց տալ. նրանց մի մասը կոտորվում է, մյուսները փախչում են Մարտիրոս գյուղ:

Սուլթանբեկը գրավելուց և հրդեհելուց հետո նույն խուժանը հարձակվում

* Դարալագյազի ոստիկանապետ Դումբաձեի՝ հայերի բարեկամի մասին տե՛ս «Հայրենիք», N1(181), նոյեմբեր, 1937:

է Սեսս գյուղի վրա, գրավում է և թալանում: Սեսի ժողովուրդը նույնպես քաշվում է Մարտիրոս:

Թուրքերը շարունակում են առաջ գնալ, և հասնելով Մարտիրոս գյուղի սահմաններին, չեն մտնում գյուղ, սակայն քշում-տանում են ոչխարի մի մեծ հոտ, ապա, ավելի առաջ գնալով, պաշարում են Ալմալու գյուղը: Ալմալուի փոքրաթիվ բնակչությունը, որը հասցրել էր զենք ստանալ Դարալագյազից, 18 օր շարունակ դիմադրում է իրեն շրջապատած թշնամուն, իսկ 19-րդ օրը անցնում է ուժգին հակահարձակման և, Թուրքերից սպանելով 20 հոգու, նրանց մատնում է փախուստի:

Ալմալուի փոքրաթիվ բնակչությունից ուժգին հարված ստանալուց հետո Իթղռանի ջարդարարները սթափվում են: Շուտով օգնության են գալիս ասպատակիչների նոր խմբեր, այս անգամ Դարալագյազի ներսի Գեմրլու, Ջուլ և Ախտա, ինչպես և գավառի հյուսիսային կողմի Թուրքական գյուղերից: Մանր վիճակ է ստեղծվում Փոռ, Էրդաիին, Քարագլուխ, Թառաթումբ գյուղերի համար, որոնք երկար ժամանակ մնում են պաշարված հրոսակախմբերի կողմից: Այս գյուղերի տոկուն և քաջ գյուղացիներն ամեն անգամ հետ էին մղում Թուրքերի պարբերական հարձակումները՝ նրանց համար ծանր կորուստներով:

Նոր ուժերով համալրված ջարդարարների խառնամբոխը մայիսի 30-ին հարձակում է գործում Մարտիրոս գյուղի վրա, բայց, հանդիպելով ուժգին դիմադրության, թեքվելով խուժում է Փաշալու գյուղը: Գյուղացիները կարողանում են արագ ի մի բերել իրենց զինական ուժերը և ուժգին դիմադրություն ցույց տալ:

Մինչ Փաշալուում կռիվը շարունակվում էր, Զիվա գյուղի Թուրքերը հունիսի 2-ին թալանի մատնեցին Ելփինը և սպանեցին մի քանի հոգու: Միաժամանակ հայկական Գնդեվազ և Հերհեր գյուղերում ապրող Թուրքերը թալանի մատնեցին համագյուղացի հայերի տները:

Նույն օրերին Թուրքերը հարձակվում են Այար և Քեշիշքենդ գյուղերի վրա, հայերը ցույց են տալիս դիմադրություն, բայց հրացանների խիստ պակասի պատճառով այդ երկու գյուղերի բնակիչները ստիպված են լինում քաշվել ու խմբվել շուրջ 170 տուն ունեցող Մալիշկա գյուղում: Այս գյուղից այն կողմ Թուրքերն այլևս չեն կարողանում առաջ գնալ:

Իրենց գյուղերից փախած և Մարտիրոս ու Մալիշկա գյուղերում հավաքված ժողովրդից Առյուծ Ավագը և Մկրտիչ անունով մի երիտասարդ կազմում են մեծ զինված խումբ, որը կանգնում է ինքնապաշտպանական մյուս ջոկատների կողքին:

Հավաքելով ուժերը՝ հայկական զինված խմբերն անցնում են հակահարձակման: Մավալվում են թեժ կռիվներ, և հայերը աստիճանաբար, մինչև հունիսի 15-ը, Թուրքերին դուրս են մղում Դարալագյազի իրենց գրված բոլոր գյուղերից:

Այդ օրերին Վայոց ձորը տվեց աննման հերոսներ: Դրանցից էին անպարտ դյուցազունի համբավ վաստակած Ռինդ գյուղացի Մհերը՝ պարծանքն ամբողջ Վայոց ձորի: Քաջության զարմանալի օրինակներ տվեցին էրդափինցի երկու Ալեքսանյանները: Իր անվեհեր գործերով նորից փայլեց մալիշկացի Սարբազ Խեչոն:

Խեչոն համբավավոր ռազմիկ էր, մորեղբոր՝ հայ ժողովրդի ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ռազմիկ-քահանա Տեր Գրիգոր Տեր-Ավագյանի (Բիձա) հետ 1897թ. հուլիսին մասնակցել էր Խանասորի արշավանքին, ապա, թաքնվելով Պարսկաստանի Սալմաստ գավառում, դաշնակցության տեղի կազմակերպության հանձնարարականներով կատարել էր բազմաթիվ դժվարին գործեր, հատկապես մեծ աշխատանք էր կատարել այդտեղից Երկիր զենք մտցնելու ուղղությամբ:

Ստանալով Երևանի Թուրք-հայկական առաջին ընդհարման լուրը՝ Սարբազ Խեչոն շտապում է ծննդավայր և ամենաակտիվ ղեկավար մասնակցություն ունենում Դարալագյազի և Հյուսիսային Նախիջևանի ինքնապաշտպանությանը: Իբրև տեղացի, քաջ ծանոթ էր գյուղերին ու լեռներին և միշտ կռվողների առաջին շարքերում էր: Նա իր հայրենի Դարալագյազում մնաց մինչև Թուրք-հայկական ընդհարումների ավարտը՝ արթուն պահակ մնալով հարազատ ժողովրդի անվտանգությանը:

Ժամանակակիցները ջերմորեն են արտահայտվել այդ անձնուրաց մարտիկի մասին: Ավ. Ահարոնյանը «Սարբազ Խեչոն» վերնագրով հուշերում հիացմունքով է ներկայացրել հերոսի կերպարը[1]:

Վայոց ձորում Թուրք ելուզակներին պատժելուց հետո հերթը հասավ Իթզոռանին: Առյուծ Ավագի և մյուս խմբապետերի գլխավորությամբ հայկական ուժերը շարժվեցին թալանի և սպանությունների այդ որջի վրա և շրջապատեցին այն: Թուրքերը երեք ժամ համառ դիմադրություն ցույց տալուց հետո բռնեցին փախուստի ճանապարհը: Հայերը, հետապնդելով, սոսկալի ջարդ տվեցին նրանց: Գյուղում և շրջակայքում տալով 150-ի չափ սպանված՝ խուժանը ցրվում է տարբեր կողմերի վրա: Իթզոռանը բոլորովին դատարկվում է, հայերն այնտեղ գտնում են իրենցից թալանած շատ ապրանքներ: Հեռանալուց առաջ հայերի զինված խումբը նախապես հիմնահատակ ավերում ու հրդեհում է գյուղը:

Բայց վտանգը դեռ չէր վերացել, և ամեն վայրկյան սպասելի էին նոր շրջադարձեր: Իրադրությունը թելադրում էր միշտ լինել զգոն, պատրաստ՝ հարվածին պատասխանելու ուժգին հարվածով:

[1] Տե՛ս Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, հատ. յոթներորդ, Վենետիկ – ս. Ղազար, 1948, էջ 344-355:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Նախիջևանի աղետը ցնցում առաջ բերեց Երևան քաղաքում: Բոլորը խոր հուզմունքի մեջ էին, ծայրահեղորեն գրգռված էին և՛ հայերը, և՛ Թուրքերը: Նրանք քաջ գիտակցում էին, որ ուր որ է Նախիջևանյան ջարդերի ալիքը հասնելու է իրենց, ուստի բոլորը պատրաստվում էին դիմավորելու արհավիրքը: Հայերն իրենց խիստ զսպված էին պահում, ամեն կերպ փորձում էին խույս տալ Թուրքերի հետ որևէ ընդհարումից, որը կարող էր պատճառ դառնալ մեծ կռվի և հիմնահատակ անել ամբողջ Երևանը:

Կոտորածից դեռ մի քանի օր առաջ քաղաքում սկսեցին երևալ Թուրք անծանոթ դեմքեր: Մի քանի Թուրքեր երեկոներն անցնում էին գլխավոր փողոցներով և ուշադրությամբ զննում ամեն ինչ:

Դեպքերի նախորդ օրն իսկ քաղաքի անվանի մահմեդականները հայերին հավաստիացնում էին, թե իրենց կողմից ընդհարման որևէ ռիսկ չի լինելու:

Եվ որպեսզի հայերը հավատային այդ խոսքերին, նրանք երդվում էին ղուրանով ու իրենց բոլոր սրբություններով, միաժամանակ հայության ղեկավարությանը խնդրում ձեռք առնել բոլոր միջոցները՝ խաղաղեցնելու ազգակիցներին:

Բայց Թուրքերի հավաստիացումները սուտ դուրս եկան՝ ինչպես միշտ:

Թեև իշխանություններն իրենց ձեռքին պերճախոս փաստեր ունեին պանիսլամական գաղտնի պատրաստությունների մասին, բայց շարունակում էին կույր ձևանալ: Ավելին, պարզվեց, որ Երևանի ոստիկանապետ Կովալյովը գաղտնի զինում է քաղաքի Թուրք ու ռուս խուժանին: Գիշերները մութ խորշերում պրիստավները ժողովներ էին անում: Նորանոր անհավատալի փաստեր էին բացվում, որոնցից մեկն այն էր, որ մի քանի ռուս սպաներ գաղտնաբար Թուրքերին զինավարժություն են սովորեցնում:

Մայիսի 10(23)-ին երկուշաբթի էր: Ցերեկվա ժամը 2-ի կողմ մարդիկ սովորականի պես առևտուր էին անում շուկայում, և ոչ ոք չէր կարծում, որ ընդամենը մի քանի րոպե հետո քաղաքը նմանվելու է պատերազմի դաշտի:

Ուղիղ ժամը 2-ին շուկայում գտնվող Թուրքերի մի մեծ խումբ, հանելով ատրճանակներն ու դաշույնները, հարձակվում են հայերի վրա[1]: Հանկարծակիի եկած հայերը չկարողացան զենքի դիմել և տվեցին զոհեր. Թուրքերը սպանեցին 8 և վիրավորեցին 18 հոգու: Թուրքերից վիրավորվեց 2 հոգի, որոնք, հավանաբար, վերք էին ստացել իրենց ցեղակիցների ձեռքով, պատահաբար[2]: Վիրավորվել էին նաև մեկ երեխա և մեկ ասորի[3]:

Մի քանի ժամ հետո Մոսկվայի բիրժային կոմիտեն Երևանի առևտրականներից ստացավ հետևյալ հեռագիրը.

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ. 5:
[2] Նույն տեղում:
[3] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 54:

«Վաղուց թաթարներն իրենց խիստ հանդուգն են պահում: Հայերն ամեն կերպ խուսափում են նույնիսկ ամենափոքր իսկ առիթից՝ ընդհարումներ թույլ չտալու համար: Այսօր շուկայի տարբեր մասերում կրակել են հայերի վրա: Սպանվել և վիրավորվել է 20 հոգուց ավելի, թալանվել են հայերին պատկանող կրպակները: Եթե շուկան անվնաս է մնացել հրդեհումից՝ շնորհիվ հայ կրպակավորների, որոնք մինչև զորքի գալը պաշտպանության տակ են առել այնտեղ առևտուր անող մարդկանց: Տրամադրությունները խիստ տագնապալի են»[1]:

Մոսկվայի բիրժային կոմիտեի նախագահ Նայդենովը Երևանից ստացած այս հեռագիրը շտապ հաղորդում է Պետերբուրգ՝ ներքին գործերի մինիստրին:

Շուկայում արյունահեղություն կատարելուց հետո թուրքերն սկսեցին շտապով փախչել և պահապանների հսկողությամբ ժողովվել իրենց թաղերում: Վախենալով վրեժխնդրությունից՝ նրանք հեռագրեցին Բաքու, թե հայերն իրենց կոտորում են: Լավ իմանալով, որ այնտեղ են գտնվում համիսլամական գլխավոր գործակալները, նրանք պահանջեցին շտապ օգնություն:

Երբ շուկայից քաղաքի փողոցներով տներն էին տանում անմեղ զոհերին, ամենուրեք դիակների շուրջն էին խմբվում հայերը և երդվում վրեժխնդիր լինել:

Թեև հայերը զայրույթից ու վշտից ծայրահեղ գրգռման մեջ էին, բայց բոլորն էլ իրենց զսպում էին, սպասելով, թե կառավարական պաշտոնյաներն ինչպես կվերաբերվեն սպանությունների հեղինակներին: Ամեն ինչից երևում էր, որ պաշտոնյաները ոչինչ չեն ձեռնարկելու, բայց դրա փոխարեն զինվորներով շրջապատված, Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզենը, քաղաք դուրս գալով, սկսեց հայերին համոզել չդիմել պատասխան գործողությունների:

Մյուս օրը՝ մայիսի 24-ին, առավոտվանից հայերը դուրս եկան փողոցներ և իշխանություններից պահանջեցին իրենց հանձնել չարագործներին: Ժամը 11-ին նահանգապետի մոտ հավաքվեցին թուրք խաները և պաշտոնապես հայտարարեցին, որ, այո՛, կոտորածը սարքել են թուրքերը, և տվեցին երեք թուրքի անուն՝ պահանջելով նրանց ենթարկել ամենախիստ պատժի: Թուրք ղեկավարները հավատարիմ էին իրենց նկարագրին. փոխանակ տալու գլխավոր ոճրագործների անունները, նրանք իբրև հանցավորներ ներկայացրին խեղճ ու կրակ համալների: Այդպիսի «զիջումը» հայերին չէր կարող հանգըստացնել:

Ժամը 12-ին ոստիկանատնից, որի մոտ կանգնած էին մի քանի մարդիկ, հրացանային կրակ բացեցին: Ո՞ւմ դեմ էր և ինչո՞ւ: Բայց արդեն կատարված էր. քաղաքի հայերը կարծեցին, թե կրակ են բացել թուրքերը, իսկ սրանք էլ հայերից էին սպասում այդ բանը: Անմիջապես քաղաքի զանազան կողմերից

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 3, թ. 10:

լսվեցին հրացանաձգության արձագանքներ: Հայերն արդեն ի վիճակի չէին իրենց զսպել: Սկսվեց արյունահեղ ընդհարումը, և քաղաքը տակնուվրա եղավ: Հրացանաձգությունը գլխավորապես կատարվում էր պատուհաններից և տների տանիքներից: Շուկան անմիջապես դատարկվեց, կանայք ու երեխաները փակվեցին տներում, իսկ տղամարդիկ, մեծից փոքրը, զինված դուրս եկան փողոց: Ամբողջ ցերեկն անընդհատ հրացանաձգություն էր, որը շարունակվեց նաև գիշերը:

Երևանի այդ օրվա ընդհարումը շատ ծանր էր: Մայիսի 25-ին N3448 գրությամբ շտաբս-ռոտմիստր Զայցևը Երևանից երեք հասցեով (Պետերբուրգ՝ ժանդարմների չեֆին, ժանդարմական շտաբին և ոստիկանական դեպարտամենտին) տալիս է այս հեռագիրը. «Անկարգությունները շարունակվում են, կրակոցներն անընդհատ են՝ ցերեկը և գիշերը: Մեռածների թիվը դեռ ճշտված չէ»[1]:

Զորքը և ոստիկանությունը չէին միջամտում, հանդիսատեսի դերում էին: Թուրքերը կորցրել էին նախաձեռնությունը: Թեև նրանք մի քանի փորձ արեցին հրդեհել հայերի խանութները, բայց դա նրանց չհաջողվեց, քանի որ հայկական թաղերի պաշտպանությունը կազմակերպված էր օրինակելիորեն, և հայերը կռվում էին վրեժխնդրությամբ լի[2]:

Հաջորդ օրը՝ մայիսի 25-ին, լույսը բացվելուն պես շարունակվեց կռիվը: Ժամը 11-ին ռումբ նետվեց մի թուրքի տան մեջ՝ տանելով մի քանի զոհ: Թուրքերի կորուստները մեծ էին. երկու օրում նրանցից սպանվել էր ավելի քան 100 մարդ, իսկ վիրավորների թիվն անցնում էր 200-ից: Հայերի կորուստներն էին՝ 2 սպանված և 3 վիրավոր*: Իրենց անձնազոհությամբ և գործը վարելու ունակությամբ հայ կռվողները գրավեցին ընդհանուրի ուշադրությունը և վաստակեցին նույնիսկ ռուսների համակրանքը: Եթե նրանց անձնազոհությունը չլիներ, թուրքերը կարող էին գրավել ամբողջ քաղաքը:

Զոհերի մեծ թիվը խիստ ճնշող ազդեցություն էր ունեցել թուրքերի վրա, որոնք այլևս չէին կարողանում բաց կռվի դուրս գալ: Փաստորեն հրապարակը մնացել էր հայերին:

Մայիսի 25-ի երկրորդ կեսին մի քանի հարյուր թուրքեր դիմեցին Երևանի պարսից հյուպատոսին՝ խնդրելով պաշտպանություն: Նույն օրվա վերջում

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 3, թ. 10:
[2] Նույն տեղում, թ. 5:
* "Vossisch Zeitung" թերթը 1905թ. N324-ում, անդրադառնալով Երևանի այս ընդհարումներին, ավելի տպավորիչ թվեր էր ներկայացնում, գրելով. «Մայիսի 23-ին թուրքերի տմարդի հարձակման ընթացքում 20-ի չափ վիրավոր ու սպանված տալուց հետո հայերը ընդունեցին հարձակողական դիրք և երկրորդ օրը թուրքերի ամբոխին դիմավորեցին գնդակների տարափով: Երկու օրվա ընթացքում հայերի կողմից արձակված է 10000-ից ավելի գնդակ: Միայն սպանված թուրքերի թիվը 200-ից անց է. հայերինը՝ 5 սպանված և վիրավոր: Հայերը դարձել են քաղաքի տերը, թուրքերը՝ փակված իրենց տներում՝ շատ նեղ դրության մեջ են»:

հայերի և թուրքերի ներկայացուցիչները հավաքվեցին Երևանի նահանգապետի մոտ՝ հաշտություն կայացնելու համար, որին հատկապես ձգտում էին մեծ կորուստներ ունեցած թուրքերը:

Հանդիպման ընթացքում հայերի ներկայացուցիչներն ասացին, որ քաղաքում լուրեր են պտտվում, թե նահանգապետն ազատ չէ իր գործողությունների մեջ, որովհետև Թիֆլիսից ճնշում են գործադրում նրա վրա, այլապես նա սկզբից կարող էր չեզոքացնել համիսլամական ագիտատորների ազդեցությունը: Հայերը շեշտում էին նաև, որ նահանգապետի շրջապատի չինովնիկներից շատերը, որոնք հայտնի են իրենց հայատյացությամբ, ամեն տեսակ արգելքներ են ստեղծում, որպեսզի չզսպվի ոճրագործությունը:

Հայերի ներկայացուցիչները հայտարարեցին, որ նոր արյունահեղություն սանձազերծելու թուրքերի ամեն մի փորձին կպատասխանեն ամենախիստ միջոցներով: Չվստահելով թուրք ներկայացուցիչների հաշտության առաջարկին՝ նրանք լուրջ երաշխիքներ էին պահանջում:

Իշխանությունները, որոնք մինչ այդ անտարբեր դիտողի դերում էին, տեսնելով հայերի տված զգալի հարվածը, վերջապես, միջամտեցին: Զորք բերվեց, և քաղաքում հայտարարվեց ռազմական դրություն:

Մայիսի 27-ին Մոսկվայից հետևյալ հեռագիրն է հղվում Պետրոգրադ՝ ներքին գործերի մինիստրին. «Երևանից և շրջակա բնակավայրերից մեզ են հասել տագնապալի լուրեր սպանությունների, կողոպուտների, հրդեհումների մասին: Նկատի առնելով մեր խոշոր առևտրական գործարքներն այդ վայրերի հայ վաճառականների հետ, որոնց միջոցով մենք արտահանում ենք ապրանքներ Անդրկովկաս և Ադրբեջան (նկատի ունի պարսկական Ատրպատականը: - Հ.Ս.), խնդրում ենք Ձերդ գերազանցությանը, որպեսզի Դուք ձեռք առնեք Ձեզանից կախված բոլոր միջոցները՝ մեր երևանյան գործիչների կյանքն ու կայքը ապահովելու համար: Շարունակվում են վտանգված մնալ երևանյան խանութաշարքերը (торговые ряды), որոնց հրդեհումը և կողոպուտը ուժգին հարված կլինի մեր շահերին»[1]: Հեռագիրը ստորագրել էին. Մոսկվայի «Էմիլ Ցինդել» մանուֆակտուրային ընկերության կողմից՝ Ա. Կերկովը, Սավա Մորոզովի Նիկոլսկի մանուֆակտուրայի կողմից՝ Ա. Վագուրինը և ուրիշներ, ընկերությունների՝ թվով յոթ ներկայացուցիչներ:

Մայիսի 28-ին ներքին գործերի մինիստրի տեղակալ Տրեպովը հեռագրում է Թիֆլիս, փոխարքային.

«Մոսկովյան մանուֆակտուրաների ներկայացուցիչները, տագնապած Երևանյան նահանգում սիստեմատիկաբար տեղի ունեցող սպանությունների, կողոպուտների, հրդեհումների մասին լուրերով, խնդրում են ապահովել երևանյան առևտրականների անձնական գույքի անվտանգությունը, պահանջում են կարգ ու կանոն հաստատել այդ շրջանում, որը կարևորագույն դեր է խաղում Անդրկովկասում և Ադրբեջանում (դարձյալ խոսքը վերաբերում է

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 3, թ. 11:

Պարսկական Ադրբեջանին: - Հ.Ս.) մոսկովյան մանուֆակտուրաների շահերի պաշտպանության տեսակետից»[1]:

Մայիսի 27-ի լույս 28-ի գիշերն անցավ խաղաղ, գերեզմանային լռությունը միայն երկու անգամ խախտվեց թեթև պայթյուններից: Առավոտյան ծագող արևի հետ փողոցները լցվեցին հայերով: Թուրքերը սիրտ չէին անում տներից դուրս գալ: Նրանց դրությունը կրիտիկական էր. ալյուր չունեին, սպառվել էին նաև մյուս սննդամթերքները: Ուստի աղաղակ բարձրացրին և դիմեցին այդ ժամանակ Նախիջևանում գտնվող Շեյխ-ուլ-իսլամին և խնդրեցին գալ Երևան: Մայիսի 31-ին նա եկավ: Կրկին դիմումներ եղան Բաքվի մահմեդականների ղեկավարներին՝ պահանջելով միջամտություն և օգնություն: Քաղաքի ազդեցիկ թուրքերը գաղտնի կապեր էին պահում Թուրքիայի հետ և այնտեղից ստանում աջակցություն: Բայց դա չէր կարող մեղմել թուրք աղքատ զանգվածի կարիքները: Քանի որ շուկան շարունակվում էր փակ մնալ, թուրքերի մեջ սկսվեց խռովություն. մանրավաճառ թուրքերը հայհոյում էին իրենց այդպիսի ծանր կացության մեջ գցող ցեղակիցներին:

ԽԱՌՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ

1905թ. մայիսի 23-25-ին Երևան քաղաքում տեղի ունեցած խառնակությունների ալիքը տարածվեց Երևանի նահանգով մեկ: Առաջինը արձագանք տվեց Երևանի գավառը:

Երևանի գավառը սահմանակից էր Սուրմալուի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Շարուր-Դարալագյազի գավառներին, իսկ հարավ-արևմտյան կողմից մի փոքր սահմանագիծ ուներ Պարսկաստանի հետ:

Երևան քաղաքում պարտություն կրած և այնտեղից փախած մահմեդական ֆանատիկոս խմբերը, անցնելով շրջակա գյուղերը, անմիջապես «սրբազան կռիվ» սկսեցին «անհավատների» դեմ: Նրանք վստահ էին իրենց ուժերին, քանի որ Երևանի գավառի թուրք բնակչությունը թվապես գերազանցում էր հայերին[1]*:*

Արդեն մայիսի 24-ին և 25-ին ընդհարումներ տեղի ունեցան Երևան քաղաքից դեպի արևելք ընկած հայկական և թուրքական գյուղերի միջև: Նախա-

[1] *1897թ. միօրյա վիճակագրության համաձայն, Երևանի գավառի բնակչության ընդհանուր թիվը, հաշված նաև Երևան քաղաքը, կազմում էր 152 հազար: Եթե դրանից հանենք քաղաքի 13,5 հազար հայերին և 13 հազար թուրքերին, ապա Երևան քաղաքից դուրս, Երևանի գավառում ապրում էին 40 հազար հայեր, 74 հազար թուրքեր և ուրիշ ազգերի 7 հազար ներկայացուցիչներ, ընդամենը՝ 121 հազար մարդ: Գավառի 222 գյուղերից հայաբնակ էին 70-ը,որոնցից 15-ը թուրքախառն էին, մնացած հայկական գյուղերի զգալի մասն ընկած էր թուրքաբնակ գյուղերի արանքում (տե՛ս* "Кавказский календарь на *1905* год", III отд., *էջ 48- 49, Ա- ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 122):*

հարձակը եղան Թուրքաբնակ Քյուզաջի, Քյուլլուջա, Մանգյուս, Դամագիրմազ, Թութիա, Քեամալ գյուղերի բնակիչները: Հարձակման առաջին թիրախները դարձան հայկական Ղարաջիբուլաղ, Շորբուլաղ, Ջրվեժ, Թեջրաբակ, Բեզուկլու և Զառ գյուղերը: Կռիվների արդյունքն այն եղավ, որ հիշատակված այս բոլոր Թուրքաբնակ ու հայկական գյուղերն ավերակ դարձան, իսկ բնակիչները երկուստեք զգալի կորուստներ ունեցան: Ընդհարումներին ուղեկցում էր զանգվածային թալանը: Թուրքերի համար թալանելն արհեստ էր դարեր շարունակ, բայց այդ նողկալի երևույթը մուտք էր գործում նաև հայ գյուղացիների միջավայր:

Մայիսի 25-ին ընդհարումներ տեղի ունեցան Գառնի (Ազատ) գետի հովտում միմյանց կից ընկած հայ և թուրք բազմաթիվ գյուղերի միջև, այդ թվում՝ Ղամարլու մեծ և հարուստ գյուղում, որն ուներ 550 տուն հայ և թուրք խառը բնակչություն: Ղամարլու գյուղում էր նստում ենթաշրջանի պրիստավը, այդտեղ էր տեղակայված սահմանապահ գունդը: Մայիսի 25-ին Ղամարլու գյուղում Թուրքերը հարձակվելով հայերի վրա՝ կրակ բացեցին: Հայերը նույն կերպ պատասխանեցին: Կռիվը տևեց մինչև ուշ երեկո: Երկու կողմից զոհեր եղան: Գիշերվա համատարած լռության մեջ երբեմն-երբեմն լսվում էին կրակոցներ:

Հետևյալ օրը՝ մայիսի 26-ին, մասամբ ընդհատված կռիվը շարունակվեց: Թուրքերի մի մասը զինված էր հինգ կրականոց վերջին սիստեմի հրացաններով: Երկրորդ օրը հայերի հարձակումը բուռն էր. Թուրքերը տվեցին մի քանի զոհ, որի դիմաց նրանք իրենց վրեժն առան՝ սպանելով մի ռուս ստրաժնիկի և երկաթուղու վրա աշխատող երկու բանվորի՝ մեկը վրացի, մյուսը՝ հույն: Երկու օր հետո Սուրմալուի գավառից և Պարսկաստանից մեծ թվով Թուրքեր Արաքսն անցնելով՝ հարձակվեցին Ղամարլուի ուղղությամբ ընկած հայկական գյուղերի վրա, բայց հանդիպելով հայերի ուժգին դիմադրությանը և տալով կորուստներ, վերադարձան գետի աջ ափը:

Շրջակա հայկական գյուղերի վրա մեծ հարձակում կատարեցին Բեյուք-Վեդիի Թուրքերը, բայց հայերի համառ դիմադրությունը նրանց ստիպեց հեռանալ՝ տալով զգալի կորուստներ:

Կռիվներ եղան Ղամարլուից դեպի արևելք ընկած Վեդի գետի ստորին հովտում և Ջանախչի գետի վերին լեռնահովիտներում ընկած գյուղերի շրջանում:

Ուլուխանլու զուտ Թուրքաբնակ և ավազակաբարո գյուղի բնակիչները մի քանի հարձակում կատարեցին երկաթուղու կայարանի հայ ուղևորների վրա, բայց ամեն անգամ հանդիպելով այնտեղ տեղակայված զինվորական մի ջոկի զինվորների և զինված ուղևորների դիմադրությանը, դիմում էին փախուստի:

Մայիսի 29-ին գնդապետ Ցակովլևը Երևանից Պետերբուրգ՝ ժանդարմերիայի շեֆին տված հեռագրում նշում էր, որ «Երևանի գավառի անկարգությունները, հրդեհները, կողոպուտները լայն ծավալ են ստացել և դժվար է

ասել, թե երբ կվերջանան»[1]:

Մայիսի 24-ին այս վայրերում սկսված ընդհարումները տևեցին մինչև հուլիսի 6-ը: Այդ ընթացքում սարսափելի տեղեկություններ էին ստացվում գյուղերից՝ երկու կողմից էլ անխնա ոչնչացվում էին ամբողջական գյուղեր: Սպանությունները, հրդեհածգությունները, արտեր կոխ տալը, տավար քշելտանելը սպառնում էին մոտ ապագայում լիապես քայքայել գյուղացիական տնտեսությունը: Գյուղացիներից շատերը, այդպիսով, կորցնելով իրենց կապը հողի հետ, թողնում էին մայրենի դաշտերը, շատերը՝ ընդմիշտ:

Մավալված դեպքերի ընթացքում Թուրքախառն հայ գյուղերից շատ Թուրք ընտանիքներ, վերցնելով ունեցվածքը, քոչեցին ուրիշ Թուրքական գյուղեր, թեև շրջանը խաղաղվելուց հետո նրանք, համարյա բոլորը, վերադարձան իրենց նախկին բնակության վայրերը:

Երբ արդեն տեղի էր ունեցել Նախիջևանի կոտորածը, և կռվի ալիքը տարածվել էր Երևանում ու շրջակա գյուղերում, Հ.Յ.Դ. Ոսկանապատի (Բաքվի) կենտրոնական կոմիտեն հուլիսին հանդես եկավ հայ ժողովրդին ուղղված դիմումով: Այնտեղ ասված էր, որ վտանգի մեջ է հայի հայրենիքը, նրա քաղաքակրթությունը, նրա կյանքն ու պատիվը, որ «ջախջախվելու վրա են մեր բոլոր իդեալները»: Ուստի համայն հայությունը՝ այր թե կին, աշխատավոր թե հարուստ, զինական թե գործավոր, պարտավոր է սթափվել: Բոլորը պարտավոր են ժողովել ողջ ուժերը՝ պաշտպանելու համար ժողովրդի գոյությունն ու պատիվը: Պետք է կյանքի ու մահվան կռվի մեջ ցույց տալ անօրինակ անձնազոհություն և այնպիսի զորություն, որ հարգանք ու միաժամանակ սարսափ ներշնչի հայության գլխին գենք ճոճողներին: Կոմիտեն կոչ էր անում հավատ չտածել իշխանություններին և հուսալ միայն սեփական ուժերին: «Կազմակերպվածության մեջ է ձեր միակ ուժը և, ուրեմն, ձեր փրկությունը: Մեկը ամենքի համար, ամենքը՝ մեկի: Այսպես միայն պիտի կարողանաք զսպել այնքան լկտիացած ու հիմարացած դրացուն և փրկել ձեր կյանքն ու պատիվը »[2]:

Այնուհետև ճշտվում էր, թե տվյալ պահին ինչ է նշանակում ժողովրդի կազմակերպվածությունը և թե ինչպես պետք է կարողանալ եսամոլությունը զոհել ընդհանրական գաղափարին ու նպատակին ի խնդիր:

«Այն հայը, - ասված էր դիմումի վերջում, - որ միայն իր անձի պաշտպանության մասին կը մտածե և կը մոռանա իր հարևանին՝ ստոր դավաճան պիտի կոչվի այսուհետև: Այն համայնքը կամ գյուղը, որ կը բավականանա միայն իր սահմանները պաշտպանելով և օգնության չի հասնի վտանգված հարևան համայնքին, արժանի պիտի համարվի ամբողջ հայ ազգի և մարդկության նախատինքին:

Համառ, հարատև, կազմակերպված ու բոլորանվեր պիտի լինի քո կռիվը,

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 3, թ. 12:
[2] Նույն տեղում, գ. 2, թ. 3:

հա՛յ ժողովուրդ: Եվ այսպես կռվելով միայն՝ պիտի կարողանաս տանել հաղթություն»[1]:

Երևանի գավառից հետո մյուս ծավալուն ընդհարումը տեղի ունեցավ Էջմիածնի գավառում, որը սահմանակից էր Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Սուրմալուի գավառներին և Կարսի մարզին:

Ի տարբերություն Երևանի գավառի՝ Էջմիածնի գավառում հայերը մեծամասնություն էին կազմում (61%), թեև 219 գյուղերից հայաբնակ էին միայն 88-ը: Հայ բնակչության թվական գերակշռությունը (124 հազարից 76 հազար) պայմանավորված էր հայկական գյուղերի խոշոր լինելով[2]: Ըստ որում հայկական գյուղերը համախումբ էին գավառի միայն երկու-երեք շրջաններում, իսկ մյուսները շերտընդմեջ ընկած էին թուրքաբնակ գյուղերի արանքում: Էջմիածնի գավառում միայն մի շրջան՝ Աշտարակի շրջանն էր, որի գյուղերի զգալի մասում հայերն ու թուրքերը ապրում էին խառը: Հենց խառը բնակչություն ունեցող այդ գյուղերն էին, որ սկզբից ևեթ դարձան մասսայական ընդհարումների ասպարեզ:

Էջմիածնից դեպի հյուսիս՝ Արագածի փեշերի վրա, Քասախ գետի և նրա ճյուղերի հովիտներում, ընկած էին Աշտարակ, Մուղնի, Կարբի, Օհանավանք, Իլանչալան և Ղալաչի հայկական գյուղերը: Թուրքախառն գյուղերն էին՝ Փարբին, Սաղմոսավանքը, Ղոթուրը, իսկ զուտ թուրքաբնակ գյուղերը՝ Փաթրինջը, Ագարակը, Քեչիկքենդը, Թաքիան, Նազրվանը, Ուշին, Պերսին, Կոթուրը, Անգրսակը, Քյուրդալուն և Համամլուն: Բացի այդ, ամռան ամիսներին Արագածի փեշերի վրա իրենց հոտերով հանգրվանում էին մեծ թվով քրդեր, իսկ Ղարնի-Ցարըղ կոչված սարի փեշերին՝ Քյուրդալու և Համամլու գյուղերի մոտ իջնում էր Էջմիածնի գավառի ավելի քան 300 տուն ունեցող Զորանքյարա գյուղի համարյա ողջ բնակչությունը:

Թուրքական ամենախոշոր գյուղը Ուշին էր (164 տուն): Ընկած լինելով Աշտարակ գյուղից Ալեքսանդրապոլ տանող այն ժամանակվա ճանապարհի վրա, Ուշին ցանկացած պահին արգելք էր հանդիսանում երթևեկությանը և ընդհանրապես իր ավազակաբարո խժդժություններով վախի մեջ էր պահում շրջապատի թե՛ թուրք և թե՛ հայ բնակչությանը: Պատահական չէ, որ երբ Երևանի ընդհարումները գրգռեցին նահանգի թուրքության ավանդական հակումները, առաջինը Երևանի ցեղակիցներին արձագանքեց հենց այդ գյուղը:

1905թ. մայիսի 24-ին Ղոթուր գյուղի թուրքերը, միանալով Արագածի քրդերի հետ, հարձակվում և քշում-տանում են Կարբիի 300 գլուխ նախիրը: Տարածը հետ բերելու համար կարբեցիներին օգնության են գալիս օշականցիները: Տեղի է ունենում ընդհարում ղոթուրցիների հետ, որի ժամանակ վիրավորվում է Օհան անունով կարբեցիներից մեկը: Երբ վիրավորին սայլով

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 2, թ. 3:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 130:

տանում էին Իլանչալան գյուղը, ճանապարհին Ուշիի թուրքերը հարձակվում են և սայլը տանում վիրավորի հետ միասին:

Ուշիցիների վարմունքը բուռն զայրույթ է առաջ բերում հայերի մեջ: Նրանց բողոքի հիման վրա Էջմիածնի գավառապետը գալիս է այդ շրջան՝ հանգստացնելու կրքերը և ազատելու վիրավորին: Թուրքերը մերժում են գավառապետի պահանջը և հայերի դեմ ընդունում ավելի հանդուգն ու սպառնական կեցվածք: Նրանք այդ օրերին սպանում են մի քանի հայ, փակում Ապարան տանող ճանապարհը, կտրում Մուղնի, Կարբի և Օհանավանք գյուղերի ջրերը: Քեչիկքենդի, Ղոթուրի, Սաղմոսավանքի, Ագարակի, Փարբիի, Նազրվանի և Կոշի թուրքերը քաշվում են Ուշի: Թուրքերի այս համախումբը սպառնալից է դառնում շրջակա գյուղերի հայերի համար:

Ապարանի և Աշտարակի շրջանները պաշտպանելու և հայկական գյուղերի վրա հարձակում գործած թուրք գյուղերից վրեժխնդիր լինելու համար հունիսի 4-ին, առավոտյան ժամը 5-ին, Իլանչալանում հավաքվում է Աշտարակից, Կարբիից և հարևան մյուս գյուղերից եկած դաշնակցական հինգ զինված խումբ՝ 78 զինվորներով: Խմբերի ընդհանուր հրամանատարը մի անվախ ու քաջ երիտասարդ էր՝ ղարաբաղցի Զոփուռ Արսենը[1]:

Արսենը 1905-1906թթ. թուրք-հայկական կռիվների ամենահետաքրքիր և ամենաառեղծվածային դերակատարներից մեկն էր՝ արկածներով լի մութ անցյալով: Նա ղաչաղ էր եղել և երկար տարիներ թուրք ավազակների հետ Ղարաբաղում ասպատակել էր թուրք և հայ գյուղեր: Նրա ասպատակությունների և կռիվների մասին ժողովուրդը բազում երգեր էր հյուսել: Դրոն նկարագրել է ղաչաղ Արսենի անցյալի կռիվներից մեկը, որի մասին, հավանաբար, լսել էր հենց նրանից:

Ղազախի շրջանի հայկական գյուղերից մեկում Արսենը և իր թուրք ընկերները հանդիպում են կազակների մի խմբի: Վերջիններս անմիջապես շրջապատում են նրանց, բայց հանկարծակիի եկած տղաները հասցնում են հանել զենքերը, և սկսվում է փոխհրաձգություն: Սրանք կարողանում են նահանջել ու ամրանալ մի ժայռոտ բարձունքի վրա և ժամեր շարունակ ցույց տալ համառ դիմադրություն: Կազակների խմբի հրամանատարը հարկադրված դիմում է «խաղաղ» միջոցի՝ նրանց հորդորում է դադարեցնել դիմադրությունը և անձնատուր լինել: Բայց Արսենը կտրականապես մերժում է առաջարկը, և կռիվը շարունակվում է: Կազակները ստիպված դիմում են գյուղի քահանային և նրան խնդրում միջամտել, որպեսզի զինյալները կռվին վերջ տան ու հանձնվեն: Արսենը քահանային նույնպես կտրուկ մերժում է և, շարունակելով կռիվը, ազատում է իրեն ու ընկերներին: Այս կռվի մասին նույնպես թուրքերը երգ էին կապել:

Թուրք-հայկական ընդհարումներն սկսվելուց հետո Արսենը հեռանում է

[1] Այդ մասին տե՛ս «Վեմ», N 3, մայիս-հունիս, 1934, էջ 14:

Թուրք ընկերներից և կանգնում հայության պաշտպան մարտիկների շարքերում կարճ ժամանակում նորից հռչակելով իր անունը՝ այս անգամ որպես Թուրք ելուզակների պատուհաս և իր ժողովրդի անձնուրաց պաշտպան[1]: Նախկինում երբեք որևէ մեկին ենթակա չեղած բնության այդ սանձակոծ զավակը բարձր պատասխանատվությամբ կատարում էր իրեն տված կարգադրություններն ու հանձնարարությունները: Եվ ահա նա Աշտարակում էր ու ստանձնել էր հրամանատարի պատասխանատու գործը: Շուտով Իլանչալան եկան նաև 40 զինված կամավոր գյուղացիներ, և, այդպիսով, այդտեղ հավաքված հայկական ուժը կազմեց շուրջ 120 մարդ[2]:

Տեղի ունեցավ Թռուցիկ խորհրդակցություն, որի միջոցին լուր է հասնում, թե Թուրքերը հարձակվել են Սաղմոսավանք գյուղի վրա: Հայ մարտիկներն անմիջապես մեկնում են այնտեղ և ցրում Թուրք-քրդական միացյալ ուժերը, որոնք նահանջում են Ուշի, իսկ նրանց հետևից շտապում են հայ վրիժառու խմբերը:

Կռիվն Ուշիում սկսվում է հունիսի 4-ի ցերեկվա ժամը 2-ին: Թուրքերն ու քրդերը գյուղում ունեին մոտ 250 հրացանավոր: Հայ կտրիճները կռվելով առաջ են գնում: Գյուղի պաշտպանները կարճատև դիմադրությունից հետո թողնում են դիրքերը և սկսում փախչել մեծամեծ զոհերով: Մտնելով Ուշի՝ հայերն այն մատնում են կրակի և ավերում: Ուշիի ընդհարման ժամանակ Թուրքերն ու քրդերը տալիս են 150 սպանված և 180 վիրավոր, որոնց մեծ մասը՝ ծանր[3]:

Ուշին ընկնելուց հետո Թուրքաբնակ 9 գյուղ հրդեհվեց ու ավերի մատնվեց, հատկապես տակնուվրա եղան Նազրվանը և Թաքիան:

Թողնելով իրենց բնակավայրերը՝ Թուրքերը՝ տղամարդ Թե կին, ծեր ու մանուկ, հավաքվեցին երեք կետերում Ախսուում, Քանաքեռի դաշտում և Վաղարշապատի մոտ՝ խնդրելով իշխանությունների պաշտպանությունը:

Հունիսի 6-ին կրկին հայտնվում է գավառապետը՝ կազակներով: Սրանք շրջապատում են իրենց կորած անասունները փնտրող մի խումբ անզեն հայ գյուղացիների, նրանց վրա արձակում հրացաններ, սպանում չորսին, իսկ մնացած բոլորին սոսկալի ծեծի ենթարկելուց հետո տանում Աշտարակ: Մտնելով գյուղերը՝ կազակները բանտարկում են բազմաթիվ հայերի: Տուգանքներ են դրվում հայ գյուղերի վրա, բայց Թուրքերը հայերից գանձած գումարներից ոչինչ չեն ստանում, քանի որ դրանք մտնում էին պետական գանձարան:

Դրանից հետո Էջմիածնի գավառում Վաղարշապատի և Փարաքարի մոտերքում, եղան մի քանի առանձին խլրտումներ ու սպանություններ, բայց մասսայական ընդհարումներ չառաջացան: Դրան մեծապես նպաստեց մի

[1] «Վէմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 4:
[2] «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, էջ 119:
[3] Նույն տեղում:

ազդեցիկ Թուրք՝ Էջմիածնի գավառում ընդարձակ կալվածքների տեր Մուսա խան Մակինսկին, որը, շրջելով գավառի Թուրքաբնակ գյուղերը, իր ազգի մարդկանց կոչ էր անում հանգստության, հորդորում հայ հարևանների հետ ապրել հաշտ ու խաղաղ[1]:

Բայց եթե հունիսի 6-ից հետո Երևանի գավառում բացահայտորեն չէին կրակում հրացանները, ապա դա չէր նշանակում, թե երկուստեք այլևս զոհեր չէին լինում: Այս անգամ զոհերի պատճառը մարդորսություն կոչված սոսկալի երևույթն էր, որին սկիզբ դրին Քյուչուկ-Վեդիի Թուրքերը: Դարանակալելով դեպի Խորվիրապի վանքը տանող ճանապարհը, նրանք որսացին այնտեղ գտնվող հայ գյուղացիների մի խմբի և, գերի տանելով, բոլորին սպանեցին: Նույն կերպ սկսեցին վարվել նաև հայերը: Անմիտ վրեժխնդրության այդ ձևը գնալով ընդունեց մեծ ծավալներ, տարածվեց մյուս տեղերում խլելով հարյուրավոր անմեղ մարդկանց կյանք:

Այդ գործում Թուրքերի հանդգնությունն անցել էր ամեն չափ ու սահման: Ի՞նչ անել: Նիկոլ Դումանն «ի՞նչ անել» հարցին կտրուկ պատասխան տվեց: Նա բոլոր խմբերին հրաման արձակեց այդպիսի դեպքերում առաջնորդվել միայն ու միայն «ակն ընդ ականի» կարգախոսով: Միք. Վարանդյանը վկայում է. «Երբ թաթարները սկսան ճանապարհներին որսալ ու «անհետացնել» հայ մարդիկ, նա հրահանգեց յուրաքանչյուր հայ զոհի փոխարեն առևանգել և «անհետացնել» մի քանի Թուրք: Ու կը պահանջեր, ամենայն խստությամբ, որ ճշտիվ կատարվի պատվերը»[2]:

Չնայած զգալի զոհերին ու ավերածություններին, այնուամենայնիվ, Երևանի նահանգում, բացառությամբ նրա Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառների, կոտորածը մեծ ծավալ չստացավ և տևական չեղավ, ինչպես շատ չանցած տեղի էր ունենալու Գանձակի նահանգում: Դրա առաջին պատճառն այն էր, որ Երևանի նահանգում թվապես գերակշռում էր հայ բնակչությունը, որը միանգամայն դեմ էր ազգամիջյան կռիվներին: Ավելին, նահանգի յոթ գավառներից երկուսը՝ Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի, ընդհարումներից լիովին զերծ մնացին:Նոր Բայազետի գավառում հաշվվում էր 135 գյուղ, որից հայաբնակ էին 58-ը: Գավառում բնակվում էր 122 հազար մարդ, որից հայեր՝ 81 հազար, այսինքն՝ գավառի ողջ բնակչության 66,5%-ը: Հայերի համար վիճակն ավելի գերադասելի էր Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ 164 գյուղից հայաբնակ էր 120-ը: Այստեղ բնակվող 165 հազար մարդուց հայերը 137 հազար էին, կամ կազմում էին գավառի ընդհանուր բնակչության 83%-ը[3]:

Եթե Նախիջևանն ու Շարուր-Դարալագյազը բացառություն եղան, ապա դրա պատճառն այն էր, որ այդ գավառներում Թուրքերը բացարձակ մեծա-

[1] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 131:
[2] Միք. Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 64:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 93, թ. 19:

մանություն էին կազմում: Դա ինչ-որ տեղ սթափեցրել էր ռուսական իշխանություններին: Համիսլամական դրոշով քուրդ և թուրք ասպատակիչների կողմից Թուրքիայից և Պարսկաստանից ռուսական սահմանների բազմաթիվ խախտումները և սահմանախախտ ավարառուների դեմ հայերի զինված դիմադրությունը՝ նրանք իրավացիորեն դիտեցին որպես կռիվ կայսրության արտաքին թշնամիների դեմ: Հայ բնակչության նախիջևանյան և արարատյան զանգվածները ակամա դարձան տերության կովկասյան սահմանների ամենաթույլ հատվածի հուսալի պաշտպանները: Այստեղից էլ իշխանությունների ինչ-որ չափով բարեհաճ վերաբերմունքը նահանգի քրիստոնյա հայ բնակչության նկատմամբ: Սահմանի այս հատվածում կառավարությունը հարկադրաբար որոշ չեղում էր կատարում:

Նշենք, որ դեպքերն արյունալի բնույթ չստացան նաև հարևան Ղարսի մարզում: Պատճառը հայ բնակչության զինված լինելն էր և բարձր կարգապահությունը: Այստեղ Հ.Յ. դաշնակցության խոսքը հայերի համար օրենքի ուժ էր ստացել, իսկ մարզի ռուսական ադմինիստրացիան ի վիճակի չէր վերահսկելու իրադրությունը: Մարզի թուրք բնակչությունը տեսնում էր այդ ամենը և չէր համարձակվում դիմել բացահայտ կռվի:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՆՉԱԿՑԱՆՆԵՐԻ ՎՐԵԺԽՆԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՏՅԱՏ ՅԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԴԵՄ

Հայության նկատմամբ ստորություններ և հանցանքներ կատարած ցարական պաշտոնյաների ու սադրանքի վարպետների, հայ լրտեսների ու մատնիչների սև արարքները չէին կարող անպատիժ մնալ: Հասել էր հայ հարկադրված ահաբեկիչների զենքերի հարվածների տակ ցարական մեծ ու փոքր ոճրագործ պաշտոնյաների գալարումների ժամը: Հայ քաղաքական երկու կուսակցությունների՝ Հնչակի և դաշնակցության մարտիկներն իրենց վրիժառու բազուկներով տապալում էին չարագործներին, անէացնում նրանց գոյությունը: Իրար հետևից թավալգոր ընկնում էին նահանգապետեր, գեներալներ, ոստիկանական պաշտոնյաներ՝ կատարյալ մի կոտորած: Ահաբեկչության տակտիկան, որը կտրականապես մերժվում էր սոցիալ-դեմոկրատների կողմից, շարունակում էր մնալ սոցիալիստ-հեղափոխականների, հնչակյանների և դաշնակցականների պայքարի զինանոցի զենքերից մեկը: Սև հոգիները պետք է սուզվեն տարտարոսի խորքը՝ այս էր այդ կուսակցությունների ահաբեկիչների նշանաբանը:

Վրեժխնդրական ակտերը, որոնք գործադրվում են դառնություն ապրող ժողովրդի զավակների կողմից, չի կարելի չփոթել և հաճախ գիտակցաբար նույնացնել «միջազգային ահաբեկչության» գործողություններին:

Անհատական վրեժխնդրությունը ճնշված ու հալածական ժողովուրդների պայքարի միջոցներից մեկն էր: Այն տվյալ ժամանակաշրջանում որոշ չափով սանձահարում էր ոճրագործ իշխանավորներին, խանգարում նրանց դժոխային ծրագրերի գործադրությանը, միաժամանակ խթանում թմրած հոգիների տրամադրությունը և բոլորին ցույց տալիս, որ չարը չի կարող անպատիժ մնալ:

Հայ հեղափոխական կազմակերպությունների վրեժխնդրական գործողությունները նոր շրջափուլ թևակոխեցին Նիկոլայ II-ի 1903թ. հունիսի 12-ի հրամանով հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման և Սասունի 1904թ. ապստամբությանն աջակցելու նպատակով ռուս-թուրքական սահմանն անցնելու ժամանակ ռուսական սահմանապահ զորքերի կողմից հայ երիտասարդների նկատմամբ իրականացրած արյունալի գործողությունների հետևանքով:

Առաջիններից մեկը, որ արդարացի պատժի ենթարկվեց, Կովկասի կառավարիչ իշխան Գոլիցինն էր: Կովկասահայությունն իր դատի ճամփին որքա՜ն դառնություններ էր կրել այդ անուղղելի ոճրագործից: Անթիվ էին նրա չարագործությունները: Նրա վարած քաղաքականության զոհեր դարձան ոչ միայն եկեղեցական կալվածքների գրավման դեմ ըմբոստացած հայորդիները Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Գանձակում և այլուր, այլև հարյուրավոր անմեղ մարդիկ, որոնք միայն զբաղված էին իրենց հանապազօրյա հացը վաստակելով: Շատերը նետվեցին բանտ կամ քշվեցին տաժանակրության հեռավոր աքսորավայրեր: Երկրամասի կառավարիչը բացահայտ թշնամական դիրք էր բռնել հայ մշակույթի և, մասնավորապես, հայ դպրոցի նկատմամբ, վարում էր ռուսացման դաժան քաղաքականություն:Նա այդ ամենն անում էր ցուցադրաբար, նույնիսկ չէր քաշվում հայտարարելու, թե ինքը լի է ատելությամբ «երկրի հանգստությունը խանգարող» «երախտամոռ ազգի» հանդեպ և ամեն ինչ անելու է նրան «տեղը դնելու» համար:

Մտքերը հուզված էին, և արդեն հորդել էր հայերի դառնության բաժակը: Բոլոր կողմերից բարձրացավ ցասումի ալիքը: Եվ հասավ ժամը հատուցման:

Սոց.-դեմ. Հնչակյան կուսակցության Թիֆլիսի կազմակերպությունը հանձն առավ Կովկասի կառավարչի ահաբեկումը: Տեղեկանալով այդ մասին՝ Գոլիցինը, սարսափած հայ վրիժառուների ուրվականից, ընկել էր անկումային ցնցակթվածի մեջ: Պալատից հազվադեպ էր դուրս գալիս, իսկ եթե դուրս էր գալիս, ապա՝ թիկնապահ կազակների բազմամարդ ջոկատով: Ըստ որում, ամեն անգամ կառքի մեջ, իր կողքին, նստեցնում էր կնոջը: Նա լավ ծանոթ էր հայ հեղափոխականների ավանդույթին, որն արգելում էր զենք բարձրացնել կանանց ու երեխաների վրա: Ավելին, ֆիդային կամ վրիժառուն իրավունք չուներ հրազեն, առավել ևս՝ ռումբ գործածել, եթե գործողությանը ներկա էր կին կամ երեխա: Ահա թե ինչու պալատից շարժվելիս Գոլիցինի կինը միշտ լինում էր ամուսնու հետ:

Հնչակյան մարտիկները ստիպված եղան գործի նպատակը ստորադասել սկզբունքին, դեմ չգնալ բարոյականին՝ եթե նույնիսկ հարկ լիներ վճարել

կյանքով:

Գործողության անմիջական կազմակերպիչը հնչակյան նշանավոր ղեկավար գործիչ Փարամազն էր (Մատթեոս Սարգսյան)[1]:

1903թ. հոկտեմբերի 14-ին Շանթ, Կայծակ և Փայլակ ծածկանուններով հնչակյան խիզախ հայորդիներն իրականացնում են վրեժխնդրական ակտը: Կոջորի ճանապարհով Գոլիցինը իր տիկնոջ հետ սովորական զբոսանքից պալատ վերադառնալիս՝ նրանք անձնուրաց խոյանքով սլանում են կառքի վրա և դաշույնի երեք հարված հասցնում բռնավորին: Քանի որ հարձակվողներն ամեն կերպ խուսափել էին իշխանուհուն վերք հասցնելուց, ուստի իրարանցման մեջ չէին կարողացել դիպուկ մահացու հարված հասցնել ոճրագործին, այլ միայն նրան ծանր վիրավորել էին գլխից: Կարծելով, թե Գոլիցինը սպանված է, վրիժառուները փախչում են տարբեր ուղղություններով, բայց վրա հասած կազակները, հետապնդելով, սպանում են Շանթին ու Կայծակին, իսկ Փայլակին (Մհեր Մանուկյան) հաջողվում է ազատվել և անցնել Պարսկաստան:

Թեև բռնակալ սատրապը չէր մեռել, թեև Թիֆլիսում ամբողջ թաղեր օրեր շարունակ ենթարկվում էին գիշերային խուզարկման, և հարյուրավոր հայեր ձերբակալվում ու աքսորվում էին, բայց սարսափը պատել էր ոչ միայն Գոլիցինին, այլև նրա շրջապատին:

Կովկասի բոլոր ազգերի՝ ռուսների, վրացիների, թուրքերի, հրեաների և այլոց աղոթատներում սկսվեցին արևշատության ժողովրդական մաղթանքներ: Միայն հայ լուսավորչական եկեղեցիներն էին, որ չէին մասնակցում այդ ներկայացմանը:

Հայերի այդ արհամարհական վերաբերմունքը և ցուցադրական ատելությունը էլ ավելի էին սրել բռնակալի սարսափը: Օրերից մի օր նա հայտնում է, թե գիշերները գետնի տակից իրեն խուլ ձայներ են հասնում՝ մտածելով, թե հայ հեղափոխականները ականներ են տեղադրում պալատի տակ՝ իրեն հօդս ցնդեցնելու համար: Անմիջապես կանչված սակրավոր զինվորները պալատի շուրջը փորում են մի բավականին խոր խրամատ, համապատասխան գործիքներով կատարում են տևական զննումներ, բայց ոչինչ չեն գտնում: Ի վերջո, պարզվում է, որ գիշերը Գոլիցինի լսած ստորգետնյա ձայները պալատի ներքնահարկում տեղադրված կառավարչապետության տպարանի մեքենաների ձայնն է[2]:

Թեև Գոլիցինը կենդանի մնաց, բայց դեպքը նրա համար ճակատագրական եղավ: Կովկասի բռնավորը, սարսափից համարյա խելագար, 1904թ. աշնանը փախավ Պետերբուրգ:

Կովկասի կառավարչին սպանելու փորձը մեծ աղմուկ հանեց ամենուր:

[1] Տե՛ս Հ.Մ. Պողոսյան, Փարամազ, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան, 1992, էջ 20:
[2] Շանթի և Կայծակի իսկական անուն-ազգանունը և որտեղացի լինելը հայտնի չեն մեզ:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 4 (76), փետրվար, 1929, էջ 107-108:

Թեև ահաբեկումն անհաջող էր, բայց այն հավանություն գտավ հայկական հասարակության բոլոր շերտերում: Հազարավոր դժբախտացած ընտանիքների նզովքն ու անեծքն էին հետևում Պետերբուրգ փախած Կովկասի հայակեր կառավարչապետին: Ոչ միայն հայերը, այլև ամբողջ Կովկասը ծափահարում էր, որ ազատվել է բռնակալից:

Նույնիսկ Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, որ ընդհանրապես վճռականապես դեմ էր ամեն տեսակ ահաբեկումների, Գոլիցինի դեպքում չդատապարտեց կատարվածը, գտնելով, որ Կովկասի կառավարիչը «ռուսահայերը հալածանքի եւ նեղութեանց ենթարկուելուն իրական առիթը տուաւ» ինքը[1]: Միաժամանակ Օրմանյանը առիթը բաց չէր թողնում շեշտելու, որ ահաբեկչության միջոցով անհնար է լուծել որևէ լուրջ քաղաքական խնդիր: Նա գրում էր. «... Կատարուած դաշունահար մահափորձը Գոլիցինը չկասեցուց իր բռնավորական ձեռնարկներեն», պետական պաշտոնյաների և լրտեսների սպանությունները «չնուազեցրին անիրաւ պաշտօնեաներու թիվը, երբ աճեցուցին ռուսահայոց վրայ կատարուած փորձանքներուն դեզը»[2]:

1904թ. առաջին կեսին ահաբեկման ենթարկվեցին Ախալցխայի ոստիկանապետ Ալշտուլը (հունվարի 4-ին), Էջմիածնի գավառապետ Շմերլինգը (հունվարի 23-ին), որը, ծանր վերք ստանալով, անհետացավ Անդրկովկասից, Վահան Նազարեթյանը (Ախալցխայում, մարտի 10-ին), լրտես Կիրակոս Պետրոսյանը (Կարսում, մարտի 16-ին), Նախիջևանի գավառի Խիլալու գյուղի տանուտերի օգնական Հովհաննես Մանդոյանը (հունիսի 18-ին), Միխայիլ Կուզնեցովը (Հին Նախիջևանում, հունիսի 30-ին) և այլք[3]:

Վրիժառուի գնդակը 1904թ. հուլիսի 11-ի գիշերվա ժամը 2-ին զգետնեց միապետության ամենագարշելի սատրապներից մեկին՝ Բոգոսլավսկուն[4], որը տասներկու տարի գավառապետ էր Սուրմալուի գավառում: Նրա կառավարման տարիները սարսափով էր հիշում գավառի բնակչությունը: Չափ չճանաչող կաշառակերություն, բարքերի ահավոր ապականում, ժողովրդի ամենավայրենի հարստահարում, անհամար բռնություններ՝ այս էր ընդհանուր պատկերը: Գավառապետն ուներ լրտեսների մի ամբողջ բանակ և հարյուրավոր ստրաժնիկներ, որոնք իսկական պատուհաս էին: Այդ հրեշը ոչ միայն հայատյաց էր, այլև մարդատյաց. Սուրմալուից և հատկապես գավառային կենտրոն Իգդիրից անտեղի աքսորել էր տվել բազմաթիվ հայերի և թուրքերի, այդ թվում՝ շատ երևելի անհատների: Ամենափոքր առիթով, նաև

[1] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հատ. Գ, Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001, էջ 5578:
[2] Նույն տեղում:
[3] Այդ մասին տե՛ս Վահան Մինախորյանի «Մեր կյանքի օրերը» հոդվածը («Հայրենիք» ամսագիր, N 5(268), մայիս, 1948, էջ 91:
[4] Բոգոսլավսկու սպանության և քննության նյութերը տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 658, թ.թ. 1-59:

առանց առիթի, մարդիկ ենթարկվում էին սոսկալի ծեծ ու ջարդի: «Ատամներ փշրելու և գլուխ ջարդելու դեպքերն անթիվ են,- «Դրոշակին» ուղարկած նամակում գրում էր ականատեսը: - Գավառի ...գյուղերում [գավառապետը] մարդկանց եղների փոխարեն լծում էր և վարում արտը»[1]: «Իգդիրի բորենի» - այսպես էին նրան բնորոշել գավառի հայերը, իսկ թուրքերը նրա մասին խոսելիս գործածում էին «ջանավար» մականունը: Դաշնակցության օրգանը այնուհետև նշում էր.

«Այս բոլորը քաջ հայտնի էր Կովկասի վարչությանը: Իգդիրցին տասներկու երկար տարիների ընթացքում իսկական և անստորագիր բողոքներով հեղեղեց ոչ միայն այդ վարչության դիվանատները, այլև մինիստրական կաբինետները, բայց անօգուտ-այդ գազանը համարվում էր ռուս կառավարության այժմյան ռեժիմի անհրաժեշտությունը: Բայց մի ամբողջ գավառի հարյուր հազար ժողովրդի ինքնասիրությունը, մարդկային արժանապատվությունը այդպիսի անարդարություն տանել չկարողացան. նրա մեջ գլուխ բարձրացրեց բողոքի ձայնը, աղաղակող խիղճը, բուռն ցասումը, և այդ ընդհանուր զայրույթը արձակեց մի վհիռ, իսկ վհիռը իրագործեց մի անհատ, որի մեջ կուտակված էր այդ զայրույթի ամենամեծ չափը:

Բորենին ընկավ՝ ճակատից ընդունելով գնդակի հարվածը, և հասարակական խիղճը հանգստացավ»[2]:

Սուրմալուի գավառապետ Բոգոսլավսկու մահապատժից շատ չանցած, հուլիսի կեսերին, վրիժառուների գնդակները հասան նրան հավատարմորեն ծառայած ու մատնիչ, Թելերապետ գյուղի գյուղապետ Մարտիրոսին: Ահաբեկումը իրականացրին 19 տարին դեռ չլրացրած և արդեն դաշնակցության անդամ Դրո Կանայանը (Դրո) և դաշնակցական Գեորգանը[3]: Նույն ամսի 22-ին Կարսում սպանվեց ժանդարմ Վասիլի Դրոզդովը:

Սասունի ապստամբներին օգնության գնացող դաշնակցության 51 հոգուց բաղկացած խումբը, որի ղեկավարն էր 25-ամյա Թորգոմը (Թուման Թումյանց), 1904թ. հունիսի 30-ին սահմանն անցնելիս՝ Օլթիի մոտ կրակի էր բռնվել ռուս սահմանապահ զորամասի կողմից՝ նրա հրամանատար, գնդապետ Բիկովի հրամանով: Ռուսներին օգնության էին հասել թուրք սահմանապահները և միացյալ ուժերով արյունալի դատաստան տեսել հայ երիտասարդների հետ՝ սպանելով նրանցից 31 հոգու, այդ թվում խմբապետ Թորգոմին: Օլթիի եղեռնագործությունը ցնցեց հարյուրավոր վրեժխնդիր սրտեր: Հ.Յ.Դ. Ջրաբերդի կ.կոմիտեի վճռով 1904թ. օգոստոսի 31-ին դիտապաստ գետին տապալվեց գնդապետ Բիկովը*: Երեք գնդակներն էլ մահացու էին, և մահը վրա էր հասել վայրկենապես: Ոճրագործին պատուհասել էր Հմայակ (Համո) Ջանփոլադյանը՝ թիկնապահ կազակի աչքի առաջ:

Աչքի ընկած վրեժխնդրական գործողություններից մեկը Գանձակի փոխնահանգապետ Անդրեևի սպանությունն էր: Սա այն բարձրաստիճան սրիկա պաշտոնյաներից էր, որոնք Անդրկովկասում իրենց գլխավոր նպատակներից մեկն էին համարում հայերին որքան կարելի է շատ մնասել: Գուցե նահանգապետերից և փոխնահանգապետերից ոչ մեկն այնքան մեծ եռանդ չթափեց հայ եկեղեցու կալվածքները գրավելու ընթացքում, որքան Անդրեևը: Ոստիկանների ու զորքի գլուխ անցած՝ Գանձակ քաղաքում ու նահանգի գավառներում նա բազմաթիվ ոճրագործություններ կատարեց: Օրերից մի օր քաղաքի հայոց եկեղեցու մոտ նա ատրճանակով սպանել էր մի հայ չարքաշ աշխատավորի՝ միայն այն բանի համար, որ վերջինս համարձակություն էր ունեցել խոսել նրա հետ: Այդ դեպքից հետո ոճրագործը զորքին հրամայել էր կրակ բացել եկեղեցու մոտ համախմբված ամբոխի վրա, որի մեջ կային բազմաթիվ կանայք ու երեխաներ[1]: Բացահայտորեն, առանց թաքցնելու, նա թուրքերին գրգռում էր հայերի դեմ, սրանց մշտապես ներկայացնում մեղադրանքներ, առանց պատճառները քննելու հայտարարում բոլոր չարիքների աղբյուր: Ոճրագործի հրամանով տասնյակ հայեր նետվեցին բանտ, ուրիշներն աքսորվեցին նահանգի սահմաններից: Անդրեևը միաժամանակ արտակարգ հոգատարություն էր ցուցաբերում թուրքերի նկատմամբ, խուսափում էր պատժի ենթարկել որևէ թուրք հանցագործի: Այդ բոլորին ավելացել էր հայերի ցույցը գազանաբար ճնշելու մասին նրա կարգադրությունը:

Անդրկովկասի, մանավանդ Գանձակի հայ հասարակությունն այնպես էր զայրացած, որ Անդրեևի ներկայությունն այլևս անհանդուրժելի էր համարում: Ոչ մի հայ առանց հուզվելու չէր կարող լսել նրա անունը: Չնայած դրան, փոխնահանգապետը շարունակում էր հանգիստ ապրել Գանձակում և

---

[1] **«Դրոշակ»**, N 9(150), սեպտեմբեր, 1904, էջ 125:
Սուրմալուի գավառապետ Բոգոսլավսկու ահաբեկման հեղինակ (ների) մասին ստույգ տեղեկություններ չկան ոչ գրականության մեջ և ոչ էլ արխիվներում: Միակ աղբյուրը Հ.Յ.դաշնակցության 1912թ. դատավարության նախաքննության արձանագրություններն են, որոնք ժամանակին լույս են տեսել Նովոչերկասկում: Ըստ այդ աղբյուրի (որը ֆոնդավորված է ՀՀ ՀՔԿՓԿՊ արխիվի 4047 համարի տակ՝ իբրև արխիվային նյութ), գավառապետի ահաբեկումը իրականացրել էր Իգդիրցի 5 հոգուց բաղկացած խումբը՝ Գասպար Մելքոնով և նրա 20-ամյա խմբապետ որդի Մարկոս Մելքոնով, Մելքոնովների ընտանիքի փեսա Մամիկոն Վիրաբով, Խաչատուր Խաչատուրով և Արամ Աբրամով կազմով: Սրանք բոլորը ձերբակալվել և նետվել էին բանտ՝ տեղի թուրքերի մատնությամբ: Չկարողանալով հաստատել առաջադրված մեղադրանքը՝ դատարանը բոլորին ազատություն էր տվել (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.3, գ.3, էջ 2206-2210, 2214, 2216): Նույն աղբյուրի մի այլ փաստաթղթի համաձայն, ահաբեկումը կատարել էր արևմտահայ Միքայել (Մենակ) Հակոբյանցը, որն Իգդիրում ձերբակալվել էր 1914թ. սեպտեմբերի 13-ին և բերվել Էջմիածնի բանտ, որտեղից հաջորդ օրը կարողացել էր փախչել և անցնել Թիֆլիս: Այստեղ նա կրկին ձերբակալվել էր ոստիկանական վերահսկիչ Տեր-Սահակովի կողմից, նետվել բանտ, որի մեղքը նույնպես դատարանում չէր հաստատվել, և նա ազատ էր արձակվել (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.3, գ.3, թ.թ. 2217, 2219, 2224, 2225, 2271):

[2] **«Դրոշակ»**, N 9(150), սեպտեմբեր,1904, էջ 126:

[3] Տե՛ս **«Դրո»**, Պեյրութ, 1956, էջ 6-7:

* Չշփոթել Թիֆլիսի նախկին նահանգապետ Բիկովի հետ:

[1] **«Հայրենիք»**, N 5 (29), մարտ, 1925, էջ 118:

պաշտոնը վարել անվրդով ու ինքնավստահ:

Հ.Յ.Դ. Կովկասի «Ինքնապաշտպանության» կ. կոմիտեն, որ այդ ժամանակում գտնվում էր Բաքվում և որի համարյա ամբողջ աշխատանքը ծանրացած էր գլխավորապես շուշեցի մտավորական և ռազմիկ Մարգար Ժամհարյանի վրա, որոշում ընդունեց ահաբեկել ժողովրդի այդ եղկելի թշնամուն: Մահվան պատժի իրականացման կազմակերպումն իր վրա վերցրեց Մարգարը: Նա անցավ Գանձակ, որտեղ գործի մեջ ներգրավեց Բարսում գյուղի քաջ երիտասարդներից Գրիգոր Ղուկասյանին և սրա Արծվիկ անունով ընկերոջը: Գանձակի Հայլիքենդ ամառանոցում, ուր 1904թ. հուլիսի 4-ին Անդրեևը եկել էր Թուրքերի ձեռքով իրականացնելու շրջակա հայկական գյուղերը գինաթափելու ծրագիրը, Գրիգորը օրը ցերեկով մի քանի գնդակով վերջ է տալիս նրա կյանքին[1]:

Ցարական պաշտոնյաների վրա դրդդալից հարվածներ տեղացին Սյունիքում և Շուշիում: Դրանց հեղինակը լեգենդար հեղափոխական, գորիսեցի Սաքո Ցապոնացին էր (Համբարձում Սարգիսյանյան): Նա Հ.Յ.Դ. Սյունիքի կազմակերպության հիմնադիրներից էր (1901թ.), իսկ եկեղեցական կալվածքների բռնագրավման ժամանակ (1903-1904թթ.) գավառում առաջինն էր, որ ըմբոստության ոգի ներշնչեց ժողովրդին՝ նրան դիմադրության մղելով ցարական ոստիկանության և կազակների դեմ: Մի քանի հայ պաշտոնյաներ գավառապետին առատ փաստեր էին հաղորդել, թե ովքեր են հանդես գալիս կալվածքների գրավման ցարի հրամանի դեմ, ինչպես նաև նյութեր էին տրամադրել Հ.Յ.Դ. Սյունիքի նորակազմ կոմիտեի գործունեության մասին: Ըմբոստ խառնվածքով Սաքոն չկարողացավ հանդուրժել այդ բանը և կոմիտեի առջև կտրուկ հարց բարձրացրեց ահաբեկել ստորհոգի հայ պաշտոնյաներին: Պետք է առաջին հերթին մաքրագործվել մեր ներքին ցեցերից: Մատնիչների, լրտեսների, չքանչաններով վարձատրված հայ պաշտոնյաների ծնոտները պետք է կափկափեն մահասփյուռ վրիժառուների անուններն անգամ լսելուց - սրտմտած ու բորբոքված ասում էր նա: Կոմիտեն ընդառաջ գնաց Սաքոյի պահանջին և նրան իսկ հանձնարարեց ահաբեկումներն ի կատար ածել ամենամոտ ժամանակում: Սաքոն անթերի կատարեց կոմիտեի վճիռը: Այդ ահաբեկումները չչմեցուցիչ ազդեցություն թողեցին գավառական ճահճացած կյանքով ապրող ժողովրդի վրա և աստիճանաբար նրա մեջ հետաքրքրություն առաջ բերեցին դեպի հասարակական խնդիրները:

Շուշի քաղաքում բազմաթիվ հանցանքներ էր կատարել քաղաքի գլխավոր ոստիկանապետ Սախարովը: Սա չէր բավարարվում ոստիկանական սովորական կամայականություններով և հարստահարումներով, այլ ամեն ջանք գործ էր դնում թշնամացնելու հայերին և թուրքերին: Այդ նպատակով նա իր մոտ

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.3, գ.4, էջ 2968, գ.6, էջ 136: Տե՛ս նաև՝ **Միքայել Վարանդեան**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 72, **«Հայրենիք»**, N 11, սեպտեմբեր, 1936, էջ 86, N 1, նոյեմբեր, 1940, էջ 75, N 5, մայիս, 1948, էջ 9:

էր հրավիրել քաղաքի թուրքերի ղեկավարներին և նրանց ուղղակի գործողությունների դրդել հայերի դեմ: Ավելին, քաղաք էր բերել մի խումբ լեզգի մարդասպանների, նրանց զինել և տվել հայ բնակիչներին ահաբեկելու լայն լիազորություններ: Լեզգիներն անպատիժ կերպով կատարեցին մի շարք լկտի կամայականություններ, բռնություններ ու կողոպուտներ: Հատկապես իրեն անտանելի էր պահում նրանցից մեկը, որը կողոպուտի ժամանակ սպանվեց մի հայ երիտասարդի կողմից: Հ.Յ.Դ. Շուշիի կ. կոմիտեն նամակով Սախարովից պահանջեց՝ 24 ժամվա ընթացքում լեզգիներին հեռացնել քաղաքից, ապա հեռանա նաև ինքը: Առաջին պահանջը ոստիկանապետը կատարեց, երկրորդը՝ ոչ: Ավելին, մնալով իր պաշտոնում, շարունակեց է՛լ ավելի համարձակորեն թուրքերին գրգռել հայերի դեմ: Նա օգտագործեց լեզգու սպանությունը և այն ներկայացրեց որպես մահմեդականների դեմ հայերի գնալով ահագնացող ատելության հետևանք: Հ.Յ.Դ. կ. կոմիտեն հատուկ շրջաբերականով ստիպված եղավ պարզել իրողությունը՝ փորձելով փարատել թուրքերի կասկածները: Նկատի առնելով,որ Սախարովի Շուշիում մնալու ամեն մի օրը հղի է մեծ վտանգներով, կոմիտեն որոշեց ահաբեկել նրան: Կուսակցական բարձր մարմնի հրահանգով Սաքոն Գորիսից անցավ Շուշի և 1904թ. դեկտեմբերի 15-ին, օրը ցերեկով, հենց քաղաքի գլխավոր փողոցում ատրճանակի հարվածներով վերջ տվեց սադրիչ ոստիկանապետի կյանքին[1]:

Շատ չանցած, Սաքոյի գնդակներից ընկավ նաև Շուշի քաղաքի պրիստավ Շումակևիչը[2]:

Երբ սկսվեցին թուրք-հայկական ընդհարումները, Սաքոն կրկին մտավ իր տարերքի մեջ և մեկը մյուսի հետևից զգետնեց պետական չորս ռուս պաշտոնյաների Գորիս քաղաքում և Ղափանի հանքերում:

Սաքոյի մարտական ահաբեկչական գործողությունները հեքիաթային պատմությունների նյութ էին դարձել ժողովրդի մեջ, որը բազմաթիվ երգեր ու լեգենդներ հյուսեց այդ գերհանդուգն մարտիկի շուրջ: Նրա համբավը դուրս էր եկել Սյունիքի և Ղարաբաղի սահմաններից: Պետերբուրգի հայ ուսանողական «Անի» ընկերության հրատարակած գրքույկում դրա հեղինակ, ռուս լրագրող Վլադիմիր Լեբեդևը հիացմունքով է գրել այդ արդարամիտ ու խիզախ հայորդու մասին:

Կովկաս անցած արևմտահայ մարտիկ Խորեն Սարգայանը (Պետրոս Ազիզով), իբրև անվանի վրիժառու, ստանձնել էր վտանգավոր պարտականություններ և դրանք կատարում էր սառնարյուն ճարտարությամբ: Նրա ձեռքով իրենց մահը գտան մի շարք ոճրագործներ, այդ թվում Շիկո և Սամվել անունով մատնիչները, Շերիֆ բեկ ավազակապետը: Առաջինը գետին տա-

[1] **«Դրոշակ»**, N10 (163), հոկտեմբեր,1927, էջ 319, նաև՝ **«Հայրենիք»**, N 1(37), նոյեմբեր, 1925, էջ 34:
[2] Նույն տեղում:

պալվեց Ալեքսանդրապոլում, երկրորդը՝ Թիֆլիսում, երրորդը՝ Բաքվում[1]:

1904թ. դեկտեմբերի 3-ին Թիֆլիսի փողոցներից մեկում սպանվեց միապետության նվիրյալ պաշտպաններից մեկը՝ քաղաքի մեծ թաղամասերից մեկի ոստիկանական վերահսկիչ Տեր-Սահակովը: Սա ողջ Թիֆլիսում հայտնի էր իր դաժանությամբ և անմարդկայնությամբ, որի չարագործությունները չափ ու սահման չունեին: Եվ առհասարակ Կովկասում տիրող ոստիկանական հարստահարումների և գոփումների ամենահանդուգն ներկայացուցիչներից մեկն էր: Նա չէր բավարարվում կաշառքով, որ վերցնում էր ամեն քայլափոխում, այլ այն ապօրինի տուրքերով, որ դրել էր Թիֆլիսի այն թաղամասերի բնակիչների վրա, որոնք նրա սպասարկման ոլորտի մեջ էին: Տեր-Սահակովն առանձին եռանդ էր դրսևորում իր «ծառայության քաղաքական բաժնի» գծով՝ ամեն անգամ ոտնատակ տալով այս կամ այն քաղաքացու մարդկային արժանապատվությունը: Նրա համար սովորական բան էր օրը ցերեկով փողոցում անցորդներին կանգնեցնելն ու խուզարկելը, նրանց ծեծելը մինչև կիսամեռ դարձնելը: Անմեղ մարդկանց բռնելով՝ նրանց շինքին փաթաթում էր որևէ քաղաքական հանցանք, որի հետևանքով սադրանքի զոհերը հայտնվում էին Մետեխի բանտում: Հուսահատ, անպաշտպան բնակչությունը հեղափոխականներից էր սպասում չարիքի վերացումը: Եվ ոճրագործը ընկավ դաշնակցական ահաբեկչի գնդակից: Թիֆլիսի խոնարհ խավերը՝ հայ թե վրացի, ռուս թե թուրք, ուրախությամբ ընդունեցին սպանության լուրը[2]:

Երևանում կար մի թուրքամոլ ռուս փաստաբան Կենգերլինսկի ազգանունով, որը բազմաթիվ ստորություններ էր կատարել քաղաքի հայերի նկատմամբ: Բաքվի փետրվարյան կոտորածներից հետո նա Երևանի մուսուլմաններին՝ հայերին ջախջախելու կոչ էր անում: Վերջիններս բազմիցս դիմել էին նահանգապետին՝ նրան քաղաքից վտարելու խնդրանքով: Վերջապես, Կենգերլինսկին ուղարկվեց Հին Նախիջևան, սակայն այստեղ էլ շարունակեց իր հակահայ դավերը, իսկ Նախիջևան քաղաքի և գավառի կոտորածների օրերին առանց քաշվելու թուրքերին կոչ էր անում «մեկընդմիշտ հաշիվները մաքրել հայերի հետ»: Նախիջևան քաղաքի հայերը նույնպես կոտորածից հետո բազմաթիվ բողոքներ ուղարկեցին նահանգապետին՝ խնդրելով նրան հեռացնել գավառից: Կենգերլինսկուն վերադարձրին Երևան, որտեղ նա շարունակում էր իր դավադիր գործունեությունը:

Հ.Ց. դաշնակցության Մրգաստանի (Երևան) կ.կոմիտեն որոշեց հայատյացին ենթարկել մահապատժի: Իմանալով այդ մասին՝ ոճրագործը ձգեց Երևան քաղաքը և փորձեց փախչել Ռուսաստան: Նրա մեկնելու օրն այդ մասին լուր են տալիս Նիկոլ Դումանին: Հայոց հրամանատարն անմիջապես երկաթուղային կայարան է ուղարկում վրիժառու տղաների և հրամայում գնացքը շարժ-

[1] «Դրոշակ», N4 (170), ապրիլ, 1906, էջ 62:
[2] Նույն տեղում, N 4 (157), ապրիլ, 1905, էջ 63:

վելու պահին «չանսատակ անել կրթված խուլիգանին»: Բայց ոճրագործին սպանել չի հաջողվում, քանի որ կ.կոմիտեն մարդ է ուղարկում կայարան և կարգադրում ահաբեկումը չկատարել Երևանում: Դումանը տղաներին հրամայում է վերցնել գնացքի տոմսակ, ոճրագործին հետապնդել և, ինչ գնով ուզում է լինի, գնդակահարել Ալեքսանդրապոլում: Վրիժառուներին չի հաջողվում առաջադրանքը կատարել նաև Ալեքսանդրապոլի կայարանում և Թիֆլիսում: Ի վերջո անողոք վճիռն ի կատար է ածվում Բաթումում[1]:

Երևանի առաջին ընդհարման (մարտի 20-22) հրահրողներից մեկը եղել էր ռուս բժիշկ Ուվարովը, որին բազմիցս նախազգուշացում էր արվել, բայց նա շարունակել էր գրգռիչ ելույթներ ունենալ թուրքերի թաղերում և նրանց վրեժխնդրության կոչել: Հ.Ց.Դ. քաղաքային կազմակերպությունը որոշում է ընդունում գնդակահարել ոճրագործին, որը և իրականացվում է օրը ցերեկով, նահանգապետարանից ոչ հեռու: Երևանի ոստիկանապետ Բալուևը երդվեց գտնել ահաբեկչին, բայց ստացած սպառնական նամակները նրան ստիպեցին ողջախոհություն հանդես բերել:

Հին Նախիջևան քաղաքի բնակիչ Լազար Իվանով-Մելիքսեթովը թուրք խաների դրդմամբ ոստիկանությանը ցույց էր տվել այն գաղտնարանը, ուր պահվում էին կազմակերպությանը պատկանող հրացանները: Իմանալով այդ մասին՝ կազմակերպությունը վճիռ ընդունեց լրտեսին ահաբեկելու մասին, որն իրականացվեց օրը ցերեկով Նախիջևան քաղաքում:

Գոլիցինի ահաբեկման փորձից հետո իր նշանակությամբ երկրորդ խոշոր վրեժխնդրական ակտը Կովկասում, որը մեծ աղմուկ առաջ բերեց ամենուր, Բաքվի արյունահեղ կռիվների հեղինակ, նահանգապետ Նակաշիձեի սպանությունն էր:

Սարսափի և մահվան մղձավանջն առժամանակ երևութապես վերացել էր Բաքվի հայության գլխից: Բայց հայ ցեղի վրիժառու ձեռքը՝ դաշնակցությունը, չէր կարող անպատիժ ձգել ոճրագործին:

1905թ. մարտի կեսերին Հ.Ց.դաշնակցության Ոսկանապատի (Բաքվի) կ.կոմիտեն հանրությանը հայտարարեց, որ փետրվարի 6-9-ը Բաքվում տեղի ունեցած կոտորածների մեղադրանքով իր կողմից մահվան են դատապարտվել նահանգապետ Նակաշիձեն, ոստիկանապետ Դեմինսկին, պրիստավ Մամեդբեկովը, պրիստավի օգնական Սուլթանովը և թաղային վերակացուներ Միքելաձեն ու Շահթախտինսկին: Միաժամանակ կոմիտեն փոստով՝ առանձին-առանձին, պատվիրված կարգով, այդ բոլոր մեղադրյալներին ուղարկեց իր դատավճիռները, ինչպես և կուսակցության անունից նրանց առաջարկեց մաքրել այս աշխարհի հետ ունեցած իրենց բոլոր հաշիվները, վերադարձնել վերցրած պարտքերը, քանի որ երկու ամսվա ընթացքում պետք է ի կատար ածվեն մահավճիռները:

[1] Մկրտչյան Վարանդեան, Հ.Ց.Դաշնակցության պատմություն, հատ. Բ, էջ 64, տե՛ս նաև՝ «Հայրենիք», N 7 (91), մայիս, 1930, էջ 156:

Դաշնակցության հանդուգն հայտարարության և մահվան դատապարտվածներին կատարված նախազգուշացման մասին հաղորդումներ հրապարակվեցին Ռուսաստանի և Եվրոպայի մամուլի օրգաններում, իսկ 1905թ. մարտի 29-ին Կովկասի փոխարքայության ձայնափող "Кавказ" թերթը տվեց պաշտոնական հաղորդագրություն, ուր բառացիորեն կրկնված էր դատավճիռը[1]:

Դաշնակցության կոմիտեի հայտարարությունը դատարկ խոսք չէր: Մեկը մյուսի հետևից Բաքվում գետին տապալվեցին թուրք ջարդարարներին զինած ու խրախուսած մի քանի ոճրագործներ: Մարտի 16-ին սպանվեց թաղային վերակացու իշխան Միքելաձեն, մարտի 22-ին ծանր վիրավորվեց և հրաշքով փրկվեց իր տխուր գործերով հայտնի Մամեդբեկովը: Նույն օրերին սպանվեցին Շահթախտինսկին և նրա գործակիցներից մի քանիսը[2]: Դաշնակցական Տիգրան Տեր-Սահակյանը (Շեֆ), որը 1902-ին Բաքվում սպանել էր Միրզոևի նավթահորերի դաժան կառավարիչ Բորիսովին, տաժանակիր աշխատանքի էր աքսորվել Սիբիր, բայց կարողացել էր փախչել և 1905թ. սկզբին կրկին հայտնվել Բաքվում: Ապրիլի կեսերին Պարապետում նա գնդակահարեց իր ոճիրներով հայտնի մի ժանդարմի և տեսականորեն նրան փաստեր հաղորդած մի հայ լրտեսի[3]:

Ահաբեկիչների գնդակներին կյանքով հատուցած պաշտոնյաներից բացի, բազմաթիվ ուրիշ ոստիկանապետեր, ոստիկաններ, բացահայտված լրտեսներ, հանցանքներ թույլ տված քաղաքացիական անձինք, զգալով իրենց գլխին կախված վտանգը, նախապես ձգեցին Բաքուն և փախան տարբեր ուղղություններով:

Հերթը հասել էր Նակաշիձեին:

Դաշնակցությունից զատ ու նրանից անկախ, Նակաշիձեի մահվան որոշում էր ընդունել նաև ռուս սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) Բաքվի կոմիտեն: Տեղեկանալով, որ նման որոշում ունի նաև Հ.Յ.Դ. կոմիտեն, սոցիալիստ-հեղափոխականները դաշնակցությունից խնդրում են գործողության իրականացումը թողնել իրենց: Կոմիտեն ընդառաջ է գնում այդ խնդրանքին և օր օրի սպասում ակտի իրականացմանը:

Անցնում է երկու ամիս, բայց սոցիալիստ-հեղափոխականներին ինչ-ինչ պատճառներով չի հաջողվում ժամանակին կատարել իրենց որոշումը: Ձեռնարկն ուշանում էր, և դաշնակցությունը ստիպված կրկին ստանձնում է դրա իրականացումը[4]:

Հարցը նորից քննարկվում է կոմիտեում: Առաջադրանքը կատարելու համար զանազան անուններ են հոլովվում, բայց վերջը կանգ են առնում մարտիկներից մեկի՝ քսանմեկամյա Դրաստամատի (Դրո) վրա, որին օգնական են նշանակում գանձակեցի Կոյին: Որոշվում է գործածել ռումբ: Գործողության ընդհանուր հսկողությունը դրվում է կոմիտեի անդամ Աբրահամ Գյուլխանդանյանի (Աբրո) վրա:

Ինչպես արդեն նշվել է, Բաքվի փետրվարյան կոտորածների ժամանակ Դրո Կանայանն այնտեղ չէր եղել: Երևանի գիմնազիայի չորրորդ դասարանն ավարտելուց հետո նա մեկնել էր Պյատիգորսկ և ընդունվել տեղում բանակած Ախուլգինսկի գնդի զինավարժական բաժին: Բաքվի դեպքերի մասին Դրոն տեղեկացել էր Պյատիգորսկ քաղաքի ռուսական թերթերից և անմիջապես դիմել էր գնդի հրամանատարին՝ խնդրելով արձակուրդ: Նույն ժամանակ արձակուրդ էր խնդրել նաև մի ուրիշ հայ զինվոր և, կիսատ ձգելով զինվորական ուսումը, երկուսով երկաթուղով մեկնել էին Բաքու և այլևս չէին վերադարձել իրենց գունդը: Դրոն անմիջապես ներկայացել էր Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպության ղեկավարությանը և սկսել էր կատարել պատասխանատու հանձնարարություններ:

Դաշնակցության դատավճռի լուրը ստանալուն պես դավադիր նահանգապետը կորցրել էր քունն ու հանգիստը: Նա պահակային պոստեր էր դրել և՛ պաշտոնատեղի, և՛ ծովափնյա իր առանձնապալատի կտուրներին, պահակներ էր կարգել նույնիսկ պալատի խոհանոցում ու զուգարանում, մոտակա բոլոր փողոցներում: Այլևս շատ սակավ էր դուրս գալիս քաղաք, շրջում էր միայն կառքով, միայն՝ հավատարիմ թիկնապահների հետ[1]:

Չնայած ձեռնարկած բոլոր միջոցներին, Բաքվի փետրվարյան կոտորածների բուն կազմակերպիչն ու ոգեշնչողը չփրկվեց արդարացի հատուցումից:

Նշանակված հսկողությունը պարզել էր, որ Նակաշիձեն ամեն օր, որոշակի ժամին, արաբական զույգ նժույգներ լծած կառքով, շրջապատված զինված պահակախմբով, գնում է պաշտոնատեղի և վերադառնում Նաբերեժնայա փողոցի ծովափնյա իր պալատը՝ անցնելով քաղաքի կենտրոնում գտնվող Պարապետի հրապարակով[2]:

Այդ տվյալների հիման վրա կազմվեց գործողության ծրագիր, որի համաձայն ռումբը պետք է թողնվեր ընկերներից մեկի խանութում, որը գտնվում էր Պարապետի մոտ, «Մետրոպոլ» հյուրանոցի դիմաց: Երբ մոտենար ժամը, Դրոն Կոյի հետ պիտի մտներ խանութ և հրապարակ (капсюль) դներ ռումբի վրա, որից հետո Կոն պիտի գնար ու կանգներ հրապարակ տանող փողոցի անկյունում և կառքը երևալուն պես ազդանշան տար Դրոյին, որն այդ ժամանակ ռումբը ձեռքին պիտի լիներ նշանակված տեղը և կառքը մոտենալիս նետեր նրա վրա[3]: Բայց այն, ինչ ծրագրված էր տանը, չհամապատասխանեց տվյալ պահին ստեղծված իրավիճակին:

1905թ. մայիսի 11(24)-ի ցերեկվա ժամը 3-ն էր: Դրոն հետագայում վեր-

---

[1] Տե՛ս "Кавказ", 29 марта 1905թ.:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Վեմ», N 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 106:
[4] Տե՛ս «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 106:

[1] Տե՛ս «Հայրենիք», N 7(91), մայիս, 1930, էջ 152:
[2] Նույն տեղում, N 10 (368), հոկտեմբեր, 1956, էջ 19:
[3] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, 22 ապրիլի 1956թ.:

հիշել է իր համար այդ ճակատագրական պահը: Խոսքը տանք նրան.

«Որոշված ժամին մտա ընկերոջ խանութը, բայց Կոռն չկար: Կափսուլը դրի ռումբի վրա, ռումբը տեղավորեցի թղթի տոպրակի մեջ և դուրս եկա: Փողոցի անկյունում Կոռն չկար: Մի պահ երևաց Աբրահամը (Գյուլխանդանյան: - Հ.Ս.) և անհետացավ: Կարո՞ղ ես երևակայել վիճակս: Մանավանդ որ մի քանի օր տառապում էի սաստիկ փորհարինքով: Վախենում էի, որ փորիս ցավը կբռնի: Դանդաղ շարժվեցի առաջ, կաղնիկաղ, իբրև թե մեկ ոտքս ցավում է և դժվարությամբ եմ քայլում: Քիչ այն կողմ, Պարապետի մուտքի մոտ, մի թուրքի խանութի պես բան կար, պտուղ էր ծախում: Առանձին զամբյուղով կեռաս էր դրված մայթի վրա: Մոտեցա: Խոշոր, հյութեղ կեռասներ էին: Համը նայեցի և պատվիրեցի թուրքին ինձ համար կեռաս կշռել: Թուրքը սարքում էր կշեռքը, ես էլ, զամբյուղի կողքին կկզած, ընտիր կեռասներ էի ջոկում, մեկ-մեկ էլ բերանս էի գցում՝ աչքի տակով նայելով, թե արդյոք Կոռն եկա՞վ, բայց անիրավը չէր երևում...

Մեկ էլ լայն պողոտայի* վերից լսվեց զիլ սուլոց, և շառաչելով երևաց ձիավոր պահակներով շրջապատված կառքը, որ արագ սլանում էր Պարապետի ուղղությամբ: Նակաշիձեն էր: Սիրտս սկսեց ուժեղ տրոփել... կառքը մոտեցավ... թռա տեղիցս և ռումբը ուժով նետեցի կառքի վրա... Լսվեց մի սարսափելի պայթյուն: Բարձրացավ փոշի ու ծուխ: Հառաչանք ու ճիչ: Մարդիկ սարսափից փախչում էին ամեն ուղղությամբ: Օգտվելով խուճապից՝ ես էլ խառնվեցի ժխորի մեջ և ապահով անհետացա: Մի պահ ուզեցա մոտենալ ջարդված կառքին՝ համոզվելու համար, որ հրեշը սպանված էր, բայց միտքս փոխեցի: Ջիմացա ինչ էր պատահել...»[1]:

Իսկ պատահել էր, ինչ որ պետք է պատահեր:Նակաշիձեի կառքը կտոր-կտոր էր եղել, չարագործի արյունալվա դիակը փռվել էր հրապարակի մի անկյունում: Թուրք կառապանը ծանր վերք էր ստացել և շուտով մեռել: Սպանվել էին նաև Նակաշիձեի սպասավորը և կեռաս ծախող թուրք խանութպանը[2]:

«Հակառակ իր բոլոր զգուշություններուն,- գրել է Միք. Վարանդյանը, - ոճրագործը չկրցավ խուսափիլ հայոց Նեմեզիդայի (Նեմեսիս) արդար վրեժխնդրությունից»[3]: Ռումբը նետվել էր կառքից ընդամենը հինգ քայլի վրա:

Մի քանի րոպե փողոցը մնաց ամայացած: Սակայն հաջորդ րոպեներին կազակները շրջապատեցին դեպքի վայրը: Ամբոխը՝ հայեր, թուրքեր, ռուսներ, համր ու ապշահար դիտում էր մեջքի վրա սալահատակին փռված նահանգապետին:

Իսկ վրիժառուն, մի սպիտակ թաշկինակ բռնած բերանին, հեռացավ դեպքի վայրից: Ատամի ցավը չէր, որ հերոսին ստիպել էր ծածկել բերանը. շրթունքը մի փոքր վիրավորվել էր պայթած ռումբի փշրանքից: Նա գնում է մոտակայքում բնակվող իր ընկերներից մեկի տուն, ապա քիչ հետո, լվացված ու գեղեցիկ հագնված, վերադառնում, պաղարյուն ու անփույթ ձևանալով զննում պայթումի վայրը՝ որպես մի պատահական անցորդ[1]...:

Դաշնակցությունն իր վճիռն ի կատար էր ածել փայլուն կերպով: Շեշտակի հարվածով կատարած սպանությունը ցնցող տպավորություն գործեց և խուճապային սարսափ առաջ բերեց ամբողջ քաղաքում: Ամենքը շշմել էին, մանավանդ՝ թուրքերը, որոնք անմիջապես կողպեցին խանութները և փակվեցին տներում: Դա պատահական չէր, քանի որ անդրկովկասյան չափանիշով Բաքվում կատարած ահաբեկումը համազոր էր Պլևեի և մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի մեծաշառաչ ահաբեկումներին[2]:

Նույն օրը, մայիսի 11-ին, Հ.Յ.Դ. Բաքվի կոմիտեն տվեց հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը.

«Հ.Յ. դաշնակցության կովկասյան Բ. կ.կոմիտեի որոշմամբ՝ Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն, փետրվարյան եղեռնի գլխավոր հեղինակը, մայիսի 11(24)-ին ենթարկվեց տեռորի՝ ռումբի միջոցով: Նահանգապետը սպանվեց տեղնուտեղը: Տեռորիստը ազատ է»[3]:

Օրվա վերջում քաղաքում տարածվեց Լևոն Աթաբեկյանի գրած և գաղտնի տպարանում տպված թռուցիկը, որն ազդարարում էր.

«Ռումբը խոսեց: Դազազած հայ ժողովրդի վրեժի որոտաձայն խոսքն էր այն: Հրեշը, որ քամեց մեր սրտի արյունը, ողորմելի դիակ է հիմա: Փետրվարի 6-9-ին նահատակված մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ: Ռումբը դատեր շատ ունի դեռ և վա՜յ նրանց, որոնք կը կամենան այսուհետև հոշոտել հայ ժողովուրդը:

Կորչի՛ բռնակալությունը:

Կեցցե՛ կովկասյան ժողովուրդների եղբայրությունը:

Կեցցե՛ ազատ ֆեդերատիվ կառավարությունը:

11 մայիսի 1905»[4]:

Դեպքի մասին նույն օրը հետևյալ հաղորդումն արեց Կովկասի փոխարքայի պաշտոնական օրգան "Кавказ" թերթը.

«Այսօր, ցերեկվա ժամը 3 և 15 րոպեին Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն կառքով տուն էր վերադառնում գեներալ-նահանգապետ Ամիլախվարիի մոտից: Միքայելյան փողոցի անկյունում, «Մետրոպոլ» հյուրանոցի դիմաց, նահանգապետի կառքի մեջ նետեցին մի ռումբ, որի պայթյունից սպանվեց իշխան Նակաշիձեն»[5]:

---

* Խոսքը Վելիկոկնյաժեսկայա պողոտայի մասին է:

1 «Հայրենիք», N10 (368), հոկտեմբեր, 1956, էջ 19:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Միքայել Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 50:

1 «Հայրենիք», N 10 (368), հոկտեմբեր, 1956, էջ 19:

2 Միքայել Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 51:

3 «Դիրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 81:

4 Նույն տեղում, N 8(161), օգոստոս, 1905, էջ 115:

5 "Кавказ", 11 мая 1905г.

Հաջորդ օրը՝ մայիսի 12-ին, Հ.Յ.Դ. Բաքվի կենտրոնական կոմիտեն տարածեց մի նոր թռուցիկ, ուր նշված էր, որ դաշնակցությունը իշխան Նակաշիձեին դատապարտել էր մահվան, և այդ վճիռը ժամանակին հայտնվել էր դատապարտյալին: Նույնպիսի վճիռ արձակել էին նաև Բաքվում գործող հեղափոխական ուրիշ կազմակերպություններ՝ առանց ազգային և կուսակցական խտրության, բայց վճիռն ի կատար ածեց դաշնակցությունը, որն «այս պարագայում առավելագույն իրավատերն է հասարակական վրեժխնդրության:

Այնուհետև թռուցիկի մեջ ասված էր, որ իշխան Նակաշիձեի կրած պատիժը չպետք է չփոթեցնի ոչ ոքի: Դա մարդասպանի կատարած զազրելի ոճիրների արդար հատուցումն է: Նա էր, որ իրեն պահպանության հանձնած քաղաքը մատնեց հրոսակների խրախճանքին, մահացու զենքեր դրեց մարդասպանների ձեռքը, որոնք այդ զենքերը թաթախեցին հարյուրավոր անմեղների արյան մեջ: Իր եղկելի կյանքը եղեռնագործը պետք է վերջացներ անարգ մահով: Այդ էր պահանջում հասարակության վրդովված խիղճը, և դաշնակցությունը դրա արտահայտիչը եղավ[1]:

Իր հերթին սոցիալիստ-հեղափոխականների Բաքվի կոմիտեն մայիսի 12-ին թողարկեց մի շրջաբերական-թռուցիկ, որում ասված էր, որ վրեժխնդրությունը կատարվել է դաշնակցության որոշմամբ՝ «Արյուն ընդ արյան» կարգախոսով: Բաքվի զազանային կոտորածը, որ ամբողջ աշխարհի կրծքից ցասման աղաղակ կորզեց, չէր կարող անպատասխան մնալ: Ամենքը սպասում էին վճռական հատուցման, և հատուցման ժամը եկավ: Ոճրագործը չկարողացավ խուսափել ժողովրդական դատաստանից: Անհայտ վրիժառու հերոսի ուժեղ ձեռքը վերջ դրեց սատրապի արատավոր կյանքին[2]:

Նակաշիձեի սպանության լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամենուր: Ոճրագործն ընկավ, և խղճի մի անհուն թեթևություն զգաց Կովկասի հայությունը, սփոփանքի ու բերկրանքի հառաչանք պոկվեց նրա սգավոր կրծքից:

«Համիդականությունը Կովկասում» առաջնորդող խմբագրականում «Դրոշակը» գրում էր.

«Իշխան Գոլիցին, ապաստանած Պետերբուրգ, ուր նա կայսերական սիրելիների շարքին է դասվել, և իշխան Նակաշիձե, ապաստանած գերեզմանատանը, ուր նրան տեռորիստի արդարադատ բազուկը տեղավորեց, երկուսն էլ կարող են պարծենալ իրենց գործերով, իրենց դավերի հսկայական արդյունքով: Արժանավոր աշակերտներ սուլթան Համիդի, ներշնչված նույն ատելությամբ դեպի ըմբոստ ժողովուրդը, նույն թույնով դեպի «անհանգիստ» հայությունը,- այդ ոճրագործները արյան դարագլուխ բաց արին այն երկրի ծոցում, ուր աշխատավորի քրտինքը խոպան հողն էր մշակում, և համերաշխությունը

[1] Տե՛ս «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 96:
[2] Տե՛ս նույն տեղում, N 7(160), հուլիս, 1905, էջ 107:

ծաղկում անարգել...»[1]:

Մեծ ոճրագործների ու անվանի ջարդարարների մեծ մասը սև առաքելությունը վերջացնելուց հետո համոզված էր, թե կարող է ապրել անպատիժ, ազատ-համարձակ: Բայց այդպես չէր. անողոք Նեմեզիդան մթության մեջ, թե օրը ցերեկով վրա էր հասնում, և ոճրագործները թավագոր փռվում էին գետնին:

Բաքվի թուրքությունը և ռուս սահմանապահները կազմակերպեցին հսկա հուղարկավորություն, որին մասնակցեց շուրջ 100 000 մարդ: Նակաշիձեի դիակառքը շրջապատել էին թուրքերի առաջնորդները, որոնց բերած անթիվ պսակների սև ժապավեններին գրված էին հավատարմության երդումներ ցարական գահին:

Հզոր հարվածը զորավոր արձագանք ունեցավ հեռավոր Պետերբուրգում: Նիկոլայ II-ը խոր ցավակցություն հայտնեց Նակաշիձեի ընտանիքին, ապա նրա հաջորդ նշանակեց դարձյալ հայատյաց, վրացի իշխան Ամիլախվարիին:

Նահանգապետի սպանությանը հաջորդած օրերին թուրքերի կողմից որևէ շարժում տեղի չունեցավ, և դրա պատճառը ռումբի թողած սարսափն էր: Բայց նախնական տպավորությունն անցնելուց հետո քաղաքում սկսեցին զանազան լուրեր շրջել, թե թուրքերը սկսել են նոր հարձակումների պատրաստություններ տեսնել:

Մյուս կողմից, իշխանությունները թուրքերի մատնություններով սկսեցին լայնածավալ խուզարկություններ հայերի տներում ու աշխատատեղերում, բռնագրավեցին հրացաններ, ատրճանակներ, փամփուշտներ:

Նակաշիձեի ահաբեկչին գտնելու նպատակով ոստիկանությունը դիմեց զանազան միջոցների: Խուզարկվեց ինժեներ Կոնստանտին Խատիսյանի գործարանը, ձերբակալվեցին մի քանի հոգի, վերջում կանգ առան մի բանվորի վրա, որը պարզվեց, որ ազգությամբ հույն է:

Նակաշիձեի ահաբեկումից հետո լրտես-պրիստավ Մամեդբեկովը, որը հազիվ էր փրկվել հայ ահաբեկչի գնդակից, մի զեկուցագիր էր ներկայացրել քաղաքի ոստիկանապետին, որով մի շարք հայ դրամատերերի և գործիչ-մտավորականների ներկայացրել էր որպես Հ.Յ.Դ. Բաքվի կոմիտեի անդամներ ու նահանգապետի սպանության գործի մասնակիցներ: Այդ ցուցակի մեջ նշված էին Դոլուխանյանի, Խատիսյանի, Վաչյանի, Դաստակյանի, Հունանյանի, Պարոնյանի, Թաղիանոսյանի, Գյանջեցյանի և այլոց անունները: Ոստիկանության ցուցակներում առաջիններից մեկը Դոլուխանյանի անունն էր, որին կասկածում էին ոչ միայն Նակաշիձեի, այլև դրանից առաջ՝ Գոլիցինի ահաբեկումը կազմակերպելուն մասնակից լինելու մեջ: Թեև այդ մեղադրանքների հետևանքով իշխանությունները չէին կարողացել հիմքեր ստեղծել և նրան ձերբակալել, բայց նա, իսկապես, այդ երկու ահաբեկումների ակտիվ կազմակերպիչներից մեկն էր:

[1] «Դրոշակ», N 6 (159), հունիս, 1905, էջ 81:

Նակաշիձեի սպանությունից մի կես ժամ հետո, երբ վաղվա ժամանակավոր նահանգապետ Ամիլախվարին իր թիկնապահներով եկել էր դեպքի վայրը, այդ պահին այնտեղ էին հասել նաև մի քանի թուրք երևելիներ, որոնք ցավակցաբար գլուխները օրորելով հարց էին տվել, թե «այս բոլորի վերջը ո՞ւր պիտի հասնի»: Ամիլախվարին զայրույթից բորբոքված պատասխանել էր. «Երբ կոմիտեի անդամներից մի քանիսը, ինչպես, օրինակ, Դոլուխանովը և ուրիշներ, այս ոճրի տեղում կը կախվեն, այն ժամանակ միայն այս ամենը վերջ կունենա»: Այս լուրն առնելով՝ Դոլուխանյանը բողոքագիր է ուղարկում Թիֆլիս՝ փոխարքային, և Պետերբուրգ՝ ներքին գործերի մինիստրություն՝ պահանջելով քննել ու ժխտել իր նկատմամբ արված «զրպարտությունները»[1]:

Մինչ ցարական ոստիկաններն ու լրտեսները գիշեր թե ցերեկ հևիհև փնտրում էին վրիժառուին, Դրոն թաքնվել էր ընկերներից մեկի տանը: Քանի որ այդ տունն անվտանգ չէր, ուստի Հ.Յ.Դ. Բաքվի կ. կոմիտեն որոշեց նրան քաղաքից հեռացնել ապահով տեղ: Կուսակցական ընկերների աչալուրջ հսկողության տակ Դրոն մեկնում է Թիֆլիս, որտեղ նրան դիմավորում են որպես հերոսի: Մի քանի օր Թիֆլիսում մնալուց հետո նա գնում է Երևան, բայց չի ներկայանում Նիկոլ Դումանին: Իգդիրում հարազատներին տեսակցելուց հետո դարձյալ Երևանում էր, բայց Բաքուն ձգում էր նրան:

Հակառակ Հ.Յ.Դ. Բաքվի կ.կոմիտեի կարգադրության, «ընկերական պարտականություն կատարելու նպատակով» 1905թ. հունիսի երրորդ տասնօրյակում Դրոն կրկին հայտնվում է Բաքվում:

Խախտվել էր կուսակցական կարգապահությունը, և շարունակվում էր վտանգված մնալ հերոսի կյանքը: Ուստի Աբրահամ Գյուլխանդանյանը և Հ.Յ.Դ. Բաքվի կազմակերպության փաստացի ղեկավար Լևոն Թադևոսյանը (Պապաշա) կշտամբում են Դրոյին: Հավանաբար իմանալով, որ Դրոն եղել է Երևանում և առանց իրեն ներկայանալու մեկնել է Բաքու, Դումանը Հ.Յ.Դ. Բաքվի ղեկավարությանը հեռագրել էր և պահանջել նրան հետ ուղարկել: Կատարելով Դումանի պահանջը՝ ղեկավարությունը Դրոյին հանձնարարում է անմիջապես ուղևորվել Երևան և տեղ հասնելուն պես անմիջապես ներկայանալ Դումանին:

Իր հուշերի՝ «Առաջին հանդիպումը Դումանի հետ» վերնագրի տակ Դրոն նկարագրում է 1905թ. հունիսի վերջերի այդ պահը.

«Երևան հասնելուս պես շտապեցի ներկայանալ Նիկոլին, որի ժամանակավոր շտաբը գտնվում էր Ցարսկայա փողոցի վրա: Նիկոլը դեռ չէր եկել: Թեև Բաքվում ես նրան մի քանի անգամ տեսել էի, բայց հետը ծանոթ չէի: Դուրս եկա, որ մի քիչ զբոսնեմ: Երբ հեռվից տեսա նրա գալը, անմիջապես վերադարձա և կամաց-կամաց գնում էի նրա հետևից: Շտաբը մտնելիս՝ նա նկատեց, որ ես էլ եմ բարձրանում սանդուղքներով: Դարձավ ու հարցրեց.

– Ի՞նչ կա, ո՞ւմ եք ուզում:

[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 107:

– Ձեր հեռագրի համաձայն եկել եմ, – պատասխանեցի ես»[1]:

Իր հետ տեսակցելու եկած մեկ-երկու ընկերներին հրահանգներ տալուց հետո Նիկոլ Դումանը ներս է կանչում Դրոյին: Տեղեկացնելով, որ «քո Բաքու գնալու մասին Խեչոն* մանրամասն զեկուցել է ինձ», Դումանը հարցուփորձ է անում, թե ի՞նչ կրթություն է ստացել, եղե՞լ է արդյոք զինվորական ծառայության մեջ և այլն: Ստանալով իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները, ապա ակնարկելով Նակաշիձեի ահաբեկումը, նա ասում է.

«Կուսակցությունը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանակում, որ դու, հակառակ նրա Կենտրոնական Կոմիտեի հրահանգին, կարող ես կամ իրավունք ունես վերադառնալու այն վայրը, որտեղից քո իսկ ապահովության եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացրել է: Հայ ազատագրական պայքարը շատ մեծ է, քեալլագեոզությեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը գան, հարկավոր է տնտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի: Մանաւանդ դու, որ թէ՛ գիմնազիայում ես սովորել, թէ՛ զինուորական դպրոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ի՞նչ բան է կարգապահութիւնը: Դու կը մնաս իմ տրամադրութեան տակ: Գնա՛, պէտք եղած դէպքում կը կանչեմ»[2]:

«Ես լուռ, գլուխս կախ լսում էի, – գրել է Դրոն: – Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պաղ: Ուժ չունեի առարկելու կամ արդարանալու: Նրա պարզ, կտրուկ խոսքերը մխվում էին գլխումս՝ այլևս երբեք չմոռացվելու համար:

Այսպես տեղի ունեցավ իմ առաջին հանդիպումս Նիկոլ Դումանի հետ»[3]:

Այն հանգամանքը, որ Նակաշիձեն վրացի էր, իշխանությունները նրա սպանությունը փորձեցին ներկայացնել որպես հակավրացական գործողություն և հայերի դեմ այս անգամ էլ գրգռել վրացիներին: Իհարկե, ինչ-որ չափով դա նրանց հաջողվեց: Վրաց շովինիստները թուրքերի օրինակով թշնամանքի որոմ էին ցանում, հայտնում էին ցասում, Թիֆլիսում և այլուր հայերի դեմ եղան բազմամարդ և անպատկառ ցույցեր:

Այդ վտանգավոր ընթացքի առթիվ հայկական մամուլի, հատկապես դաշնակցության, օրգանները տագնապ էին հնչեցնում, մշտապես շեշտելով, որ ոճրագործ նահանգապետի սպանությունը ոչ մի առնչություն չունի նրա ազգային պատկանելիության հետ, վրաց ժողովրդի նկատմամբ բնավ հակակրանքի կամ թշնամության արտահայտություն չէ: Նակաշիձեն, կազմակերպելով Բաքվի կոտորածը, դրանով իսկ քաղաքական սև բիծ է նետել հենց վրաց ժողովրդի վրա, արատավորել նրա անունը: Ինչ ազգի և ինչ դիրքի էլ պատկանեն ժողովրդի թշնամիները, հեղափոխականների ձեռքը պետք է անխնա

[1] «Հայրենիք», N 4(374), ապրիլ, 1957, էջ 91:
* Խոսքը Դաշնակցական Խեչոյի մասին է:
[2] «Հայրենիք», N 4(374), ապրիլ, 1957, էջ 91-92:
[3] Նույն տեղում, էջ 92:

պատժի նրանց: Հեղափոխական ահաբեկչի համար չի եղել, չկա ու չի լինելու ազգային խտրություն: Եվ, իբրև դրա վկայություն, հայկական մամուլը բերում էր հայ ահաբեկիչների կողմից տասնյակ հայ պաշտոնյաների, լրտեսների, մատնիչների, հարստահարիչների ահաբեկման օրինակներ[1]:

Զգուշացնելով ցարական պրովոկատորների կողմից նյութվող մեծ վտանգներից՝ «Դրոշակը» գրում էր.

«Քաջալերված արյան գետերով, որ այժմ հեղում են Երևանյան նահանգը, բռնապետությունն ուզում է ատելության և թշնամության սիլքները տարածել նաև վրացական գավառներում, վրացիների և հայերի համատեղ բնակության վայրերում, այն վայրերում, ուր հաշտության գաղափարը դեռ բարձրագույն է և հաղթական: Նրա իդեալն է հայ-վրացական ընդհարումը: Այդ իդեալի հաղթանակը կլինի ողբալի նախատինք Վրաստանին և Հայաստանին...»[2]:

Թուրք և վրացի շովինիստները, հայության նկատմամբ հնավանդ ատելությամբ լի, նրանց միացած ռուս սևհարյուրակայինները, չէին կարող մարսել, որ երեկվա հլու «ռայան»՝ հանձինս դաշնակցական և հնչակյան ահաբեկիչների, դարձել է այդքան հանդուգն, մեկը մյուսի հետևից գետին է տապալում պետական կարևոր դեմքերի, գահին նվիրյալ անձանց: Այլ խոսքով, նրանք անկարելի էին համարում, որ հայը համարձակվում է զենքով պաշտպան կանգնել իր ազգային պատվին: Եվ մարդախոշոր արեոպագոսը զայրույթով ահակոչ էր հնչեցնում հայի մեղապարտ հանդգնության դեմ:

Դրացի ժողովուրդների իշխող դասակարգերը, այդպիսով, ձեռք ձեռքի տված, մի սրտառուչ համերաշխությամբ ստանձնում էին մատնիչի դեր՝ մեղադրանքներ առաջադրելով ոչ միայն հայ նեմեսիսներին, այլև ողջ հայությանը:

Ցարական ոստիկանությունը, ամենուր վխտող լրտեսները ջանք չէին խնայում բռնելու հնչակյան և դաշնակցական ահաբեկիչներին: Այդ բանը, սակայն, առանձին բացառություններով, նրանց չէր հաջողվում: Բայց գահի պաշտպանների առջև դրված խնդիրը ձերբակալելն էր, և ձերբակալում էին բանից միանգամայն անտեղյակ մարդկանց: Այդպես եղավ և Նակաշիձեի ահաբեկումից հետո, երբ այդ գործով ամբաստանվեցին հինգ անմեղ հայեր և նետվեցին բանտ: Դրանք էին՝ Գեորգի Մեյրամովը (22 տարեկան), Սիմոն Զալյանցը (33 տարեկան), պարսկահպատակ Պետրոս Սահակյանը (25 տարեկան), Լևոն Հարությունովը (25 տարեկան) և Մինաս Ագասանյանը (16 տարեկան)[3]:

Հ.Յ. դաշնակցության Բաքվի կոմիտեն տարածեց մի թռուցիկ, ուր ասվում էր.

[1] Տե՛ս «Վեմ», N 3, մայիս-հունիս, 1934, էջ 14:
[2] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 98:
[3] «Մշակ», N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

«Հ.Յ. դաշնակցությունը, որ ինքն իրագործեց Նակաշիձեի համար գրված մահվան դատավճիռը, ամբողջ հասարակության առաջ ամենակտրուկ կերպով հայտարարում է, որ իսկական սպանողներն ազատ են»[1]:

Թեև հարցաքննությունը ոչինչ չէր ապացուցել, այնուամենայնիվ, զինվորական դատարանը, գաղտնի ոստիկանության երկու գործակալների ամբաստանության հիման վրա, հոկտեմբերի 2-ին կախաղանով մահվան դատապարտեց Նակաշիձեի հինգ «սպանողներին»:

Հ.Յ.Դ. IV կ. կոմիտեն հոկտեմբերի 12-ին տարածեց հասարակությանն ուղղված «Քաղաքացինե՛ր» վերտառությամբ ազդը, ուր ասված էր.

«Դատապարտված են մարդիկ, որոնք բացարձակապես անմեղ են ...Դատավորների լկտի անամոթությունը հասավ իր գագաթնակետին ...Վրդովված հասարակական խղճի պարտքն է՝ ճշմարտության պաշտպան լինելով, պահանջել մահվան դատապարտված անմեղ մարդկանց արդարացումը»: Այնուհետև ազդի մեջ չեշտված էր. «Հայ հեղ. դաշնակցությունը, որ Նակաշիձեի համար մահվան պատիժ որոշելով՝ այդ վճիռն ինքն էլ իրագործեց, բարոյական պարտականություն է համարում ամբողջ հասարակության առաջ ամենակտրուկ կերպով մի անգամ ևս հայտարարել, որ իր ընկերները, որոնք կատարեցին այդ վեհ գործը, ազատ են և միանգամայն ապահով ...»[2]:

Չնայած հարյուրավոր վկաների ցուցմունքով մեղադրվողների անմեղ լինելը ապացուցված էր, բայց դատավճիռը ի կատար ածվեց:

Վրիժառուների հարվածների տակ մեկը մյուսի հետևից ընկան նաև Բուրկացկին, Էդելսոնը, Լոլաձեն և հայությանը դաված ուրիշ ցարական պաշտոնյաներ:

Վերջապես, հայ Նեմեզիդայի արդար պատժին արժանացավ թուրք ոճրագործների պաշտպան, Վրաստանի մեծ դահիճ գեներալ Ալիխանով-Ավարսկին: Քանի որ այդ ահաբեկումը տեղի ունեցավ 1907-ին, ուստի հայության ոխերիմ թշնամուն գնդակահարելու հանգամանքին կանդրադառնանք աշխատության համապատասխան տեղում:

Ազատագրական շարժման տվյալ փուլում ծայր առած ահաբեկչության խիզախ ոգին Նիկոլ Դումանն էր: Մեծ հայդուկապետի համարձակությունը, ժողովրդի ազատագրության գործի համար անձը զոհելու պատրաստակամությունը, ազգի թշնամիների հանդեպ նրա անողոք լինելը վարակիչ օրինակ էր հայ ահաբեկիչ մարտիկների համար, որոնք ձգտում էին ամեն ինչում նմանվել իրենց հոգևոր-գաղափարական ուսուցչին:

Հայության թշնամիներին պատժող ձեռքը երբեք չէր դողում, քանզի նպատակը պարզ էր, բռնած գործը՝ արդար: Սիմանթոյի խոսքերով՝ վրիժառու հայորդիները եղան արյունաբերան բռնադատիչների ինքնիշխան ու գերագույն դատավորները, եղան հարստահարված հայության սրտից

[1] «Դրոշակ», N 13(165), դեկտեմբեր, 1905, էջ 211:
[2] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4047, ց.1, գ.28, թ.1:

ժայթքած վրեժի աղաղակներ: Այդ նրանք էին՝ Մկրտիչ Աղամալյան, Մարտիրոս Զարուխյան, Դրաստամատ Կանայան, Հմայակ Ջանփոլադյան, Խորեն Սարգսյան (Պետրոս Ազիզով), Համբարձում Սարգիսյանյան (Ցապոնացի Սաքո), ուրիշ շատ անձնազոհ հայորդիներ[1]: Վրիժառուները միշտ խաղում էին մահվան հետ, ուստի նրանց մեծ մասը կյանքից հեռացավ անժամանակ: Ուրիշ տասնյակ վրիժառու մարտիկներ տարիներ շարունակ կրեցին ինքնակալության ծանր շղթաները: Սրանցից քչերին հաջողվեց ազատվել բանտերից ու տաժանավայրերից, այն էլ՝ ծայրահեղ քայքայված առողջությամբ: Այդ տառապած հոգիների թվում էր զանգեզուրցի վրիժառու Համբարձում Սարգիսյանյանը, որի մասին խոսք գնաց վերևում: 1908թ. նա ձերբակալվում է Ղափանի Ղաթարի հանքերում, զինվորական դատարանը դատապարտում է 12 տարվա տաժանակրության և քշում Սիբիր: Շղթայված ոտքերով նրան 8 տարի պահում են բանտային խստագույն ռեժիմի տակ: Միայն 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Սաքոն ազատվեց զնդանից և վերադարձավ Գորիս[2]:

Անդրադառնալով կատարված և կատարվելիք վրեժխնդրական ակտերի նշանակությանը՝ «Դրոշակը» գրում էր. «Պատիժը խիստ պիտի լինի և անողոք:

Պլևե, Բոբրիկով, Անդրեև, Բիկով, Նակաշիձե... իրենց երևակայում էին մեծազոր և ամենակարող, երբ դժոխային դավեր էին սարքում, երբ մի ժողովուրդ մյուսի դեմ էին հանում, որպեսզի արյան և արտասուքի մեջ խեղդեն ազատության ծիլը և ըմբոստների արդար աղաղակը: Նրանք արժանի պատիժ կրեցին: Նույն պատիժը, հատուցման միակ միջոցը, որ բռնապետության սահմաններում տրված է մարտական հեղափոխությանը, կը հասնի և նրանց հաջորդներին, այն անորակելի ոճրագործներին, որոնք ցանկանում են ատելություն, կռիվ, ջարդ, արյուն, դիակներ...»[3]:

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: ԿՈՄՍ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԸ՝ ՓՈԽԱՐՔԱ

Հայ վրիժառուների ահաբեկչությունից հրաշքով փրկված և Պետերբուրգ փախած իշխան Գոլիցինը ցար Նիկոլայ II-ին դիմում էր ներկայացրել՝ Կովկասի կառավարչապետի պաշտոնից իրեն ազատելու խնդրանքով:

Ցար Նիկոլայ II-ի 1905թ. հունվարի 1-ի հրամանով Գոլիցինն ազատվել էր պաշտոնից[4]:

[1] Տե՛ս «Հայրենիք», N 7 (270), հուլիս, էջ 22-23, «Դրոշակ», N 4 (170), ապրիլ, 1906, էջ 61-63:
[2] Տե՛ս «Դրոշակ», N10(269), հոկտեմբեր, 1927, էջ 319:
[3] Նույն տեղում, N 6(159), հունիս, 1905, էջ 82:
[4] Տե՛ս "Кавказский календарь на 1906 год", էջ 234:

Ութ տարի տևած նրա պաշտոնավարությունը, սկսած 1896թ. դեկտեմբերից, ինչպես ասվել է նախորդ էջերում, բազում աղետներ էր բերել երկրամասի բնակչությանը և, առաջին հերթին, հայ ժողովրդին: Ցարը միշտ գոհ էր եղել սատրապի գործերից:

Կովկասի կառավարչապետի պաշտոնից Գոլիցինին ազատելուց հետո Նիկոլայ II-ը նրա անունով տվել էր բարձրագույն ռեսկրիպտ*, որտեղ նշել էր, որ ինքը մեծ ափսոսանքով է ստորագրում իշխանի պաշտոնաթողության հրամանը՝ նրա թախանձագին խնդրանքի համաձայն: «Ցավով զիջելով այդ թախանձանքին,- ասված էր ռեսկրիպտում, - հույս ունենալով ապագայում կազդուրված տեսնել ձեր ուժերը, ես արդարացի եմ համարում հայտնել ձեզ հոգեկան երախտապարտություն ձեր հայրենասիրական, արյունով դրոշմված գործողության համար Կովկասյան երկրի օգտին»[1]:

Կովկասը Ռուսաստանին միացնելուց հետո նոր դարաշրջան էր բացվել ռուս ժողովրդի և կովկասյան ժողովուրդների փոխհարաբերություններում: Հարկ է շեշտել, որ Ռուսաստանը հենց սկզբից Կովկասի նկատմամբ որդեգրեց շրջահայաց քաղաքականություն. դեռևս անծանոթ երկրում նա ոչ այնպես կոպիտ և ոչ այնքան ուղղակիորեն էր գործում, ինչպես ներկայացնում են որոշ պատմաբաններ, այլ գործում էր խիստ հաշվենկատ ու համբերատարությամբ:

Ռուսական արքունիքը քաջ գիտակցում էր, որ Կովկասի՝ դարերով ձևավորված էթնիկական և մշակութային բազմադեմ աշխարհն, ըստ էության, անհնար է դարձնել բացարձակ ռուսական: Կովկասի հետ առնչված բարձր զինվորականները և պետական գործիչները խորապես համոզվել էին, որ կայսրության հետ Կովկասի միաձուլման ամեն փորձ անարդյունավետ է և հղի հետադարձ հետևանքներով: Կովկասը կարելի էր վերածել ռուսական կայսրության անբաժանելի մասի, բայց, միևնույն է, դրա հետ մեկտեղ, այն իր նկատմամբ մշտապես կպահանջեր յուրահատուկ մոտեցում և հատուկ զգուշավորություն: Այս իրողության ճանաչման վկայությունը «Կովկասյան կոմիտե» անունով հատուկ վարչական միավորի ստեղծումն էր, որը գործում էր երկրի առաջին դեմքերի ղեկավարությամբ և տարածաշրջանը լավ իմացող փորձագետների լայն ներգրավմամբ:

Ռուսաստանն ավելի շատ ինքն էր հարմարվում կովկասյան «ծայրամասի» իրողություններին, քան ձգտում էր դրանք հարմարեցնել ինչ-որ միասնական կառավարչական ստանդարտների: Պետերբուրգը հրաժարվեց Կովկասի նկատմամբ ռուսական նահանգների օրինակով արմատական վերափոխման շուտափույթ փորձերից: Ավելի քան մեկ տասնամյակ նրա հետ շփման փորձ ձեռք բերելուց հետո միայն արքունիքն, ի վերջո, որոշեց երկրամասի կառավարման ձևը:

* Ռեսկրիպտ - կայսերական շնորհագիր:
[1] «Մշակ», N 2, 5 հունվարի 1905թ.:

1844թ. ձևավորվեց կովկասյան փոխարքայությունը, որը Կովկասի նկատմամբ Պետերբուրգի հատուկ վերաբերմունքի դրսևորում էր: Դա կառավարման յուրատեսակ ձև էր, որը կոչված էր առավելագույնս հաշվի առնել տարածաշրջանային յուրահատկությունները: Այս «պետությունը պետության մեջ», որպես կանոն, գլխավորում էին երկրամասը լավ իմացող, այնտեղ բնակվող ժողովուրդների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք տածող խելացի ու ճկուն գործիչներ, որոնք առաջնորդվում էին «փոխադարձ ճանաչում, փոխհանդուրժողականություն, փոխադարձ շահ» սկզբունքով:

Կովկասյան տարածաշրջանում, հատկապես Անդրկովկասում, կենտրոնի վարած քաղաքականության մեջ բոլոր, երբեմն կոպտագույն, բացթողումներով հանդերձ, վերջին հաշվով գերակշռողը պրագմատիզմն էր:

*1844-1854թթ. Կովկասի առաջին փոխարքան եղել է իշխան **Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովը***, և հենց նրա ժամանակից է սկսվել քաղաքական կյանքի զարգացումը երկրամասում:*

Դաստիարակված լինելով անգլիական արիստոկրատիզմի սկզբունքներով՝ փոխարքա Վորոնցովը խոր համոզում ուներ, թե Կովկասը Ռուսաստանին ամուր կապելու համար պետք է հենվել տեղի արիստոկրատիայի վրա: Ահա թե ինչու նրա առաջին գործերից մեկը եղավ այդ արիստոկրատիայի դերի ու նշանակության աննախընթաց բարձրացումը՝ նրա տնտեսական ուժի ամրապնդման, նրան մեծ արտոնություններ և առանձնաշնորհումներ տալու միջոցով:

Կովկասում արիստոկրատական դասակարգ ունեին միայն վրացիները, և հենց այդ դասակարգը ցարական գահի հովանավորությամբ հասավ պատկառանք ներշնչող դիրքերի: Նրա առջև լայնորեն բացվեցին զինվորական ծառայության հորիզոնները: Բայց վրաց ազնվականությանը մեծ արտոնություններ ու իրավունքներ տալը որևէ դրական ազդեցություն չէր գործում ժողովրդական կյանքի վրա: Առաջվա պես վրաց գյուղացին կրում էր սեփական ազնվականական-ֆեոդալական դասակարգի ծանր, հարստահարիչ լուծը:

*Կովկասի փոխարքայի պաշտոնում մի կարճ ժամանակ (1854-1856) Վորոնցովին փոխարինեց գեներալ **Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյովը**** (1794-1866), որը, սակայն, որևէ նկատելի հետք չթողեց երկրամասում: Նա շարունակեց իշխան Վորոնցովի քաղաքական գիծը՝ թերևս ավելի պակաս եռանդով ու հետևողականությամբ:*

---

* *Պետական խորհրդի անդամ, գեներալ-ադյուտանտ, ինֆանտերիայի (հետևազոր) գեներալ, կասպիական նավատորմի գլխավոր հրամանատար, Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ (տե՛ս* **"Кавказский календарь на** 1854г.", *էջ 581):*

** *Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր հրամանատար, կասպիական ռազմական նավատորմի հրամանատար, գեներալ-ադյուտանտ, ինֆանտերիայի գեներալ (տե՛ս* **"Кавказский календарь на** 1855г.", *էջ 619):*

*1856-1862թթ. փոխարքայի պաշտոնը վարում էր գեներալ **Ալեքսանդր Իվանովիչ Բարյատինսկին** (1814-1879)*: Սա նույնպես Կովկասում ռուսական ազդեցության ուժեղացումը կապում էր տեղի ազնվականության հետ, բայց առաջնությունը տալիս էր թուրք կալվածատիրական դասակարգի տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդմանը: Նրա ծրագրով թուրք բեկերը պիտի կազմեին Կովկասի մահմեդական արիստոկրատիան և հանդիսանային երկրամասում ցարիզմի երկրորդ հենասյունը վրաց ազնվականությունից հետո:*

Իսկ ռուսական կովկասյան քաղաքականության մեջ այդ նույն ժամանակներում ի՞նչ տեղ էին զբաղեցնում հայ ազդեցիկ խավերը: Բանն այն է, որ հայերը չունեին ազնվականական դասակարգ, հետևապես նրանք ռուս ազնվականության շահերն արտահայտող ցարական վարչակարգի համար չէին կարող հուսալի հենարան հանդիսանալ:

Չնայած դրան, ռուսական կովկասյան քաղաքականության մեջ հայերը շատ կարևոր դերակատարություն ունեին: Պետերբուրգում մտածում էին, որ եթե ազնվականություն չունեցող հայերին չի կարելի վստահել Ռոմանովների գահի պաշտպաններից մեկի դերը, բայց կարելի է նրանց Ռուսաստանի անկեղծ բարեկամներ համարել:

Եթե Կովկասի առաջին փոխարքաների ժամանակ հայ ժողովուրդն առանձին ուշադրության չէր արժանանում, ապա գոնե խորթ զավակի դրության մեջ չէր և իր քաղաքակրթական ձգտումներում չէր հանդիպում անհաղթահարելի արգելքների: Ընդհակառակը, կրթական-առաջադիմական իր տենչերն իրագործելիս՝ նա շատ հաճախ խրախուսվում և աջակցություն էր գտնում ռուս բարձր իշխանությունների կողմից: Դրա հիմնական պատճառն այն էր, որ այդ ժամանակներում իշխանությունն ընդհանրապես Անդրկովկասի տեղաբնիկ ժողովուրդների հանդեպ ուներ հավատ ու վստահություն:

Ինքնակալական ռեժիմը չէր հալածում այն ազգային հավաքականություններին, որոնք գահի հավատարիմ հպատակներ էին:Նա տոգորված էր բարյացակամ տրամադրությամբ դեպի երկրամասի բոլոր ազգերն ու ցեղերը՝ անկախ նրանց էթնիկ ու կրոնական պատկանելությունից:Նրան չէին վախեցնում վրաց և հայ միջավայրում ուսումնական գործի ընդլայնումը, գրականության զարթոնքը, մշակութային վերելքը: Համոզված լինելով, որ Կովկասը, առանց արդեն նկատելի թափ ստացած առաջադիմության, չի կարող հաղորդակից լինել ժամանակի քաղաքակրթական բարձր արժեքներին, որ խաղաղ զարգացման ճանապարհին նա չի կարող ցանկալի նվաճումներ արձանագրել, եթե չունենա անհրաժեշտ նախադրյալներ, փոխարքայական իշխանությունը հայտնի չափով հովանավորում էր տեղական ազգաբնակչության մեջ սկսված կամ նկատվող մտավոր ամեն մի շարժում:

---

* *Ինֆանտերիայի գեներալ, կովկասյան բանակի հրամանատար, գեներալ ֆելդմարշալ, պետական խորհրդի անդամ:*

Իշխան Վորոնցովը Թիֆլիսում ռուսաց թատրոն հաստատեց, դրանով միաժամանակ վրացական ներկայացումների սկիզբը դրեց:Նա էր, որ նպաստեց ռուսահայերի պարբերական մամուլի առաջնեկի՝ «Կովկաս» հայերեն թերթի հրատարակմանը:

Գեներալ Բարյատինսկին մեծ նշանակություն էր տալիս հայոց եկեղեցուն, ամեն կերպ աշխատում էր, որ ռուսահայերը սերտ հարաբերությունների մեջ լինեն թուրքահայերի ու պարսկահայերի հետ, և այդ կապերի միջոցով դպրոցական կրթության ու մշակույթի այն նվաճումները, որ հայերը ձեռք էին բերել Կովկասում, փոխանցվեին իրենց արտասահմանյան ազգակիցներին:

Այդ բարյացակամությունն էր պատճառը, որ երբ, ասենք, Գաբրիել վարդապետ Այվազովսկին, հեռանալով Փարիզից, ուզում էր հայկական մի վարժարան բացել Ռուսաստանում, Բարյատինսկին այդ մտքի առաջին եռանդուն պաշտպաններից մեկն էր: Նա ակտիվ միջնորդել էր, որպեսզի Այվազովսկու դպրոցն առանց մաքսի ու ցենզուրայի արտասահմանից ստանա անհրաժեշտ դպրոցական գույք, պիտույքներ, լաբորատոր սարքավորումներ ու նյութեր և պայմաններ ստեղծի իր հարկի տակ հավաքելու որքան կարելի է շատ թուրքահայ ուսանողների:

Այդ ամենը հետևանք էր այն բանի, որ ռուսական կայսրերը շատ լավ էին հասկանում հայերի հետ բարոյական միություն ունենալու օգուտը: Հայերն էլ աշխատում էին գահին իրենց նվիրվածությունը հաստատել կոնկրետ գործերով և երախտագիտական զանազան արտահայտություններով: Ռուսական քաղաքակրթությունն այդ շրջանում նրանք ընդունում էին ամենայն պատրաստակամությամբ. հայկական բարեկեցիկ ընտանիքներում երեխաները դեռ մանկուց սովորում էին ռուսաց լեզուն, քիչ թե շատ կրթված հայ մարդն իր պարտքն էր համարում մոտենալ ու բարեկամանալ ռուս հասարակության հետ, պարծենում էր ռուսի նման ապրել կարողանալու համար, ընկալում էր նրա սովորությունները, հետևում նրա բարքերին:

1859թ. վերջացավ համառ, երկարատև պատերազմը Կովկասյան լեռնաշղթայի արևելյան մասում: Որքա՜ն արյուն և նյութական զոհողություններ կլանեց լեռնականների դեմ ծանր պատերազմը ռուսական բանակում, շատերն էին այդ պատերազմում հերոսացել, այդ թվում բարձրաստիճան հայ զինվորականներ, բայց քիչ չէին նաև ժամանակին երկրամասից հեռացածները, որոնք չտեսան արյունահեղ պատերազմի վախճանը: Իշխան Բարյատինսկուն էր վիճակվել վերջին օրհասական հարվածը հասցնել լեռնցիների ուժերին: Օգոստոսին Ղունիբ աուլի մոտ հռչակավոր Շամիլն անձնատուր էր եղել փոխարքային, և Դաղստանն արդեն խոնարհված էր գահի առջև:

Բայց միայն Դաղստանը: Կովկասյան շղթայի արևմտյան կողմը դեռ շարունակում էր մաքառել ռուսների դեմ, թեև այդ պայքարն այլևս առանձին կարևորություն չուներ: Կարելի է ասել, որ իմամ Շամիլի անկման հետ ամբողջ Կովկասյան շղթան արդեն ընկրկված էր:

Լեռնականների դեմ ռուսական բանակի երկարատև կռիվներին իրենց մասնակցությունը բերեցին բազմաթիվ հայ զինվորականներ: Ստեղծվել և արագ հասակ էր առել հայկական հասարակության ամենատարբեր խավերից, այդ թվում խոնարհ շերտերից ելած գեներալների, գնդապետների, սպաների մի փայլուն համաստեղություն, որն արդեն իր պատվավոր տեղն էր գրավել ռուսական զինված ուժերի շարքերում:

Լեռնականների դեմ ռուսական զորքերի հաղթանակը մի նոր շրջան էր բացում Կովկասի պատմության մեջ:

Ռուսական կառավարությունը մինչ այդ իր ուժերը լարված էր պահում պատերազմական այն ընդարձակ դաշտում, որը Սև ծովից ձգվում էր մինչև Կասպից ծով: Այժմ, երբ ոչնչացված էր լեռնականների դիմադրական ուժը, ռուսաց իշխանությունների առջև ամբողջ հասակով կանգնեց Կովկասում խաղաղ օրենսդրական գործունեության վերադառնալու անհրաժեշտությունը: Նվաճված վայրերում պետք էր կարգավորել քաղաքացիական կյանքը, որին մեծապես պետք է նպաստեր նույն ժամանակաշրջանում (60-ական թվականներ) Ռուսաստանում «մեծ ռեֆորմների» համար սկսված շարժումը: Վերջինս չէր կարող իր մեջ չառնել նաև Կովկասը:

1862թ. դեկտեմբերի 6-ի հրամանով Ալեքսանդր II կայսրը իր եղբորը՝ Մեծ իշխան **Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովին**, նշանակեց Կովկասի փոխարքա: Հաջորդ տարի նոր փոխարքան Թիֆլիսում էր: Իր նախորդների համեմատությամբ, նա այստեղ ունեցավ ամենից երկար պաշտոնավարություն՝ 19 տարի (1862-1881), որի ընթացքում Կովկասն ստացավ մի շարք առաջնակարգ ռեֆորմներ, որոնք այս ընդարձակ տարածքում հաստատեցին քաղաքացիական և տնտեսական կարգ ու կանոն: Մեծ իշխանի օրենսդրական գործունեությունից մեծապես շահեց նաև կովկասահայությունը, որի հանդեպ փոխարքան, ինչպես և իր նախորդները, տրամադրված էր բարեհաճ վերաբերմունքով: Այդ եռանդուն օրենսդրական գործունեությունը Կովկասի պատմության մեջ մի հետաքրքրական շրջան է, որը, ցավոք, առ այսօր բավարար չափով ուսումնասիրված չէ*:

1881թ. ավարտվեց Միխայիլ Նիկոլաևիչի պաշտոնավարությունը, և դրանով վերջացան «երանելի» ժամանակները կովկասյան ժողովուրդների համար: Փոխարքայության գոյության 37 տարիների ընթացքում Կովկասը վիթխարի առաջադիմություն ունեցավ: Հայության համար նույնպես դրանք ընդհանուր

---

* Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար (տե՛ս "**Кавказский календарь на** 1869 (Адрес календарь)", էջ 91):

** Բացառություն կազմող ուսումնասիրություններից արժեքավոր է **Ս. Էսաձեի** աշխատությունը (Տե՛ս С. Эсадзе, Историческая записка объ управлении Кавказом, т.т. I, II, Тифлис, 1907): Հիշատակելի է նաև **Լեոյի** «Էջեր Կովկասի փոխարքայության պատմությունից» հոդվածաշարը, որը 1909-1910թթ. լույս է տեսել «Հորիզոն» թերթում (տե՛ս «Հորիզոն»,1909թ.,դեկտեմբերի 11(N41), 25(N53), 26(N54), 30(N57), 1910թ. հունվարի հաջորդական թվերը):

առամբ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի տարիներ էին:

Իհարկե, այդ տարիներին բարդ ու դինամիկ ռուս-կովկասյան փոխհարաբերություններին խորթ չէր ոչինչ՝ ատելություն և համակրանք, բռնություն և բարի կամք, կասկածամտություն և վստահություն, հակասություններ ու փոխզիջումներ, բացահայտ հիմարություն և ոչ դիտավորյալ մոլորություններ: Այդ հարաբերությունները երբեք չեն եղել կամ միայն պատերազմ, կամ բարեգութ հովվերգություն և ընդգրկել են միջանկյալ ձևերի լայն ասպարեզ: Կայսերական կենտրոնը և կովկասյան «ծայրամասը» պատմականորեն կապում էին կենտրոնածիգ և բաժանում կենտրոնախույս ուժերը: Այնուամենայնիվ, ընդհանուր միտումն արտահայտվում էր առաջինների վերջնական գերակշռությամբ երկրորդների նկատմամբ, ինչը պայմանավորում էր սկզբում Ռուսաստանի դիրքի ամրապնդումը Կովկասում, այնուհետև՝ վերջինիս վերածումը այդ հսկայական պետության բավական չափով օրգանական (թեև բացառիկ) մասի: Կայսերական միջուկի և «ծայրամասի» միջև գործում էր ոչ թե ինչ-որ վերացական, այլ միանգամայն կոնկրետ աղբյուրից՝ վաղեմի և բազմակողմանի կապերից ծագած ինչ-որ քաղաքական ձգողական դաշտ:

Միխայիլ Նիկոլաևիչի պաշտոնաթողությունից հետո վերացավ նաև Կովկասի փոխարքայությունը, և այն փոխարինվեց կառավարչապետությամբ:

Առաջին կառավարիչը իշխան **Ալեքսանդր Միխայլովիչ Դոնդուկով-Կորսակովն** էր (1882-1890)*, որի Կովկաս գալով դրվեց հայ ժողովրդի նկատմամբ բիրտ ու տմարդի քաղաքականության սկիզբը: Մինչև նրա գալը՝ 1882թ. ամռանը, տեղի էր ունեցել հայոց ուսուցչական համակովկասյան առաջին ժողովը, որը փոխարքայական բարյացակամ կարգերի վերջին արտահայտությունն էր: Երեք տարի էլ չանցած՝ սկսվեց հարձակում հայ դպրոցի, մշակույթի, եկեղեցու դեմ: Նրա որոշումով 1885թ. փակվեց հայկական մոտ 500 ծխական դպրոց, որոնք գործում էին հայ եկեղեցու եկամուտներով: Փողոց նետվեցին 30 հազար երկու սեռի աշակերտ[1] և 900 ուսուցիչ: Փակված դպրոցների մի մասը վերաբացվեց 1886թ., բայց մեկ տարի հետո նորից փակվեց[2]:

Այդ անսպասելի գործողությունները սկզբում չփոթմունք առաջ բերեցին հայ հասարակական և մտավոր շրջաններում, որն աստիճանաբար փոխարինվեց համազգային զայրույթի: Գնալով ահագնացող հալածանքները հայության մեջ առաջացրին հակառուսական տրամադրություններ, որոնք իրենց հերթին պատճառ դարձան նորանոր ճնշումների և պատիժների:

Դոնդուկով-Կորսակովի բիրտ քաղաքականությունը «չտկելու» համար

* Զորքերի հրամանատար, գեներալ-ադյուտանտ, հեծելազորային գեներալ (տե՛ս "**Кавказский календарь** (Адрес календарь)", էջ 103):

[1] Տե՛ս Гр. **Чалхушьян**, Армянский вопрос и армянские погромы в России, Ростов на-Дону, 1905, էջ 29:

[2] Նույն տեղում, էջ 31:

Կովկասի նոր կառավարիչ կարգվեց **Սերգեյ Ալեքսեևիչ Շերեմետևը** (1890-1896)*, որը շարունակեց նախորդի հակահայ բիրտ քաղաքականությունը[1]: Սրան հաջորդած իշխան **Գրիգորի Սերգեևիչ Գոլիցինը**** (1838-1907) ուղղակի տակնուվրա արեց ամեն ինչ:

Իշխան Գոլիցինին Կովկասի վերին կառավարիչ նշանակելու լուրը մեծ ուրախությամբ էր ընդունվել հայ քաղքենիական շրջաններում: Կորսակով-Դոնդուկովի և Շերեմետևի իշխանության տարիների բիրտ հալածանքներից հետո շատերը հույս էին փայփայում, թե նոր կառավարիչը արմատապես կփոխի նախորդների հակահայ քաղաքականությունը:

Ռուբեն Խանազատը գրում է, որ 1896թ., երբ Գոլիցինի նշանակման մասին արդեն լուրեր էին տարածվել, իր մտերիմներից մեկը իրեն բերկրանքով ասել էր. «Կարող եմ քեզ ավետել՝ Կովկասի մեր կառավարիչը փոխվում է: Վերջապես ազատվելու ենք վրացի իշխանուհիների ձեռքին գործիք դարձած այս Շերեմետևից: Նրա փոխարեն նշանակված է իշխան Գոլիցինը, որի մասին ասում, են, թե շատ հայասեր է... և մի հայ ընտանիքի կնքահայր է եղել...»[2]:

Խանազատը վերհիշել է նաև հետևյալը. «Վլադիկավկազում էի, երբ Գոլիցինը Բաքվի վրայով անցել էր Թիֆլիս: Հայ հասարակությունը մեծ ցնծությամբ էր ընդունել Կովկասի նոր կառավարչին: Այնուհետև Թիֆլիսի թերթերը շարունակ մանրամասն տեղեկություններ էին հաղորդում նոր կառավարչի առօրյա կյանքի մասին: Լավ եմ հիշում. «Մշակը» մի անգամ բերկրանքով հայտնում էր, թե ինչպես Գոլիցինը ոտքով զբոսանքի էր դուրս եկել և հանդիպել էր մի խեղճ հայ ընտանիքի հարսանեաց հանդեսին: Կանգնեցրել էր հարսանիքի երթը և մի քանի ոսկի էր նվիրել փեսային: Այս ու նման լուրերը, անշուշտ, գրվում և կարդացվում էին, բերանների ջուրը հոսեցնելով»[3]:

Սակայն պաշտոնավարության առաջին իսկ ամիսներից նոր կառավարչապետը իրեն շրջապատեց նենգամիտ խորհրդականներով և արկածախնդիր թելադրիչներով, որոնք Խրիմյան կաթողիկոսի խոսքերով ասած՝ իշխանությունների հետ հայերի հարաբերությունները և էջմիածնի գործերը շատ կարճ ժամանակում հասցրին «տխուր և նույնիսկ վտանգավոր վիճակի»[4]:

Դրանց թիվը շատ էր. Թիֆլիսի նախկին նահանգապետ Բիկով, Երևանի նախկին նահանգապետ, ապա Գոլիցինի աջ ձեռքը հանդիսացող գեներալ Ֆրեզե, կառավարչապետի դիվանատան պետ ռուսադավան լեհ Միցկևիչ,

* Կովկասյան կազակական զորքերի ատաման, հեծելազորային գեներալ-ադյուտանտ (տե՛ս "**Кавказский календарь на** 1895г. (Адрес календарь)", էջ 349-350):

[1] ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 93, թ. 3, գ. 240, թ. 6:

** Զորքերի հրամանատար, կովկասյան կազակական զորքերի ատաման, ինֆանտերիայի գեներալ (տե՛ս "**Кавказский календарь на** 1897", էջ 446):

[2] «**Հայրենիք**», N 4 (76), փետրվար, 1929, էջ103:

[3] Նույն տեղում:

[4] Է. **Ակնունի**, Կովկասեան վերքեր, հատ. առաջին, հրատ. Հայ Ցեղ. Դաշնակցութեան, Ժընև, 1903, էջ 19:

նահանգապետ Կիրեև, փոխնահանգապետ Ստեֆանովիչ և ուրիշ հայատյացներ:

Գոլիցինը Կովկասի միակ պաշտոնաթերթ "Кавказ" լրագրի խմբագիր նշանակեց ոխերիմ խավարամոլ, տխրահռչակ «բանաստեղծ» Վելիչկոյին, որը հրապարակախոսի գրիչը ձեռքն առնելով և, անշուշտ, կառավարչապետի թելադրանքով մի սոսկալի արշավանք սկսեց ամբողջ հայության դեմ: Նա հայերին մեղադրում էր ամեն մեղքերի մեջ՝ սկսած ավազակությունից ու խաբեբայությունից մինչև արյունալի արարքներ կատարողներ և պետության հիմքերի քանդիչներ[1]:

Հայ մամուլը հնարավորություն չուներ պատասխանելու Վելիչկոյի զրպարտություններին, քանի որ գրաքննությունը լավ գիտեր, որ "Кавказ"-ի խմբագիրը կատարում է կառավարչապետի պատվերը: «Տարօրինակն այն է, - գրել է Ռուբեն Խանազատը, - որ Վելիչկոյի լպիրշ արշավանքի սկզբնական շրջանում ցարիզմի պետական քաղաքականությունից շատ անտեղյակ հայ մտավորականները այնպես էին հավատացած, որ Վելիչկոյի ու Գոլիցինի միջև ոչ մի սերտ կապ չկար, և թե Գոլիցինը հավանորեն չի կարդում Վելիչկոյի հոդվածները, այլապես նա կարգելեր նրան հարձակվելու հայերի վրա: Նրանք զզաստացան ու սթափվեցին միայն այն ժամանակ, երբ Վելիչկոյի հարձակումներին շուտով հետևեցին կառավարչական հալածանքները հայերի դեմ»[2]:

Իշխան Գոլիցինը Կովկասի հայության առջև ծառացավ իսկական հայակերի պատկերով: Նա ամենից առաջ հասավ այն բանին, որ Նիկոլայ II-ի 1897թ. հունիսի 14-ի հրամանագրով Կովկասի հայ ծխական դպրոցները վերցվեցին Էջմիածնից և հանձնվեցին կրթության նախարարությանը՝ «նոր սերունդը հայ կղերի մնասակար ազդեցությունից պաշտպանելու» պատրվակով[3]:

Հայ կրոնավորները չէին ուզում համակերպվել կայսերական հրամանին և կրավորական դիմադրություն էին ցույց տալիս: Դա էլ հենց մտնում էր Գոլիցինի հաշվարկների մեջ. նա դիմեց ծայրահեղ միջոցի՝ Նիկոլայ II-ին խնդրելով թույլ տալ ընդհանրապես փակել հայկական ծխական դպրոցները: Շատ չանցած՝ ստացվեց ցարի համաձայնությունը: Գոլիցինի հրամանով 351 հայ ծխական դպրոցներից փակվեց 320-ը, իսկ որոշ ժամանակ անց՝ մնացած 31 դպրոցներից մի քանիսը ևս[4]: Դա արվում էր հնարովի պատճառաբանությամբ, թե՝ «հայ ուսուցիչներն անձեռնհաս են», և որ, իբր, հայ կղերը հրաժարվում է դպրոցների պահպանության համար տալ անհրաժեշտ

[1] Տե՛ս Եղիշե Ա.Ռ. Դեղամեանց, Ռուս բյուրոկրատիան և հայերը, էջ 74:
[2] «Հայրենիք», N 4 (76), փետրվար, 1929, էջ104:
[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան,թղթ. 237ա, վավ. 47, թ. 36:
[4] Գաբրիել Լազեան, Հայաստանը և հայ դատը հայկական յարաբերություններու լոյսին տակ, «Ադանա» հրատ., Երևան, 1991, էջ 92-93:

դրամական միջոցներ[1]: Փակված դպրոցների սեփականությունը փոխանցվեց կրթության մինիստրությանը[2]:

Դպրոցները փակելուց հետո հերթը հասավ բարեգործական ընկերություններին, հրատարակչություններին, մամուլի օրգաններին:

Պետերբուրգ ներկայացրած իր տեղեկագրերից մեկում Գոլիցինը սադրիչ գնահատականներ էր տվել հայոց բարեգործական կազմակերպություններին, գրելով. «Հայոց բարեգործական ընկերությունները ավելի շատ զբաղված են քաղաքականությամբ, քան բարեգործությամբ: ...Կովկասի բոլոր մեծ քաղաքներն ունեն մասնաճյուղեր՝ ենթարկված այս ընկերություններից մեկին՝ բարեգործական ընկերությանը, որի կենտրոնատեղին Թիֆլիսն է: Փաստերը ցույց են տալիս, որ անջատական շարժման շատ կուսակիցներ այդ ընկերությունների անդամ են: ...Այս ընկերությունները արժանի չեն վստահության»[3]: Տեղեկագրում նա առաջարկում էր իրեն թույլատրել վերացնելու հայոց բարեգործական ընկերությունները[4]:

1899թ. փակվեցին հայկական բոլոր բարեգործական կազմակերպությունները, մասնավորապես 1863թ. Բաքվում հիմնված «Հայկական մարդասիրական ընկերությունը», 1881թ. Թիֆլիսում ստեղծված «Հայ կանանց բարեգործական միությունը», նույն թվականին կյանքի կոչված «Կովկասյան հայկական բարեգործական ընկերությունը»[5]:

1900թ. հունիսին արգելք դրվեց «Հայկական գրքերի հրատարակման ընկերության»[6] վրա:

Գոլիցինը Պետերբուրգի կառավարությունից պահանջում էր փակել կամ խիստ գրաքննության ենթարկել ռուսահայոց մամուլի օրգանները, նույնիսկ Էջմիածնի պաշտոնաթերթ «Արարատը»: Նա գրում էր. «Թիֆլիսում լույս տեսնող հայոց պարբերական հրատարակությունները փոխանակ աշխատելու, որ հայերը ձուլվեն ռուսների հետ, ձգտում են ավելի ընդարձակել նրանց մեջ բացված վիհը: ...Նույն հակառուսական ոգին և մնասակար ձգտումները երևան են գալիս նաև այն լրագրերի մեջ, որոնք հայերի կողմից հրատարակվում են ռուսերեն»[7]: 1901-1902թթ. փակվեցին թերթեր ու հանդեսներ՝ «Արձագանքը», «Տարազը». կանգնեցվեց «Մշակի» և «Նոր-Դարի» տպագրությունը[8]:

Գոլիցինը անընդունելի էր համարում, որ Անդրկովկասի մի շարք քաղաքային խորհուրդներում հայերը գերակշիռ դիրք ունեին, և դա այն

[1] Գաբրիել Լազեան, Հայաստանը և հայ դատը հայկական յարաբերություններու լոյսին տակ, էջ 93:
[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան,թղթ. 237ա, վավ. 58, թ. 10:
[3] Տե՛ս Է. Ակինեան, Կովկասեան վերքեր, հատ. առաջին, էջ 80-81:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս Чалхушян, Армянский вопрос и армянские погромы в России, էջ 33-34:
[6] Նույն տեղում:
[7] Գ. Լազեան, Հայաստանը և հայ դատը հայկական յարաբերություններու լոյսին տակ, էջ 93:
[8] Տե՛ս Чалхушян, Армянский вопрос и армянские погромы в России, էջ 36:

պատճառով, որ 1892թ. օրենքը գերակշռություն էր տալիս սեփականատերերին: Նա գտնում էր, որ այդ դրությանը պետք է վերջ տալ և առաջարկում էր, որ կառավարությունն ինքը ընտրի քաղաքագլուխներին, իսկ քաղաքային խորհուրդների անդամներն ընտրվեն համաձայն մի նոր կանոնագրի, որը կառավարությանը հնարավորություն կտար հակակշռի տակ առնել քաղաքային խորհուրդները և դրանք լիովին ենթարկել իշխանության գործադիր մարմիններին[1]:

Ահա այսպես էր ցարիզմը «հաշիվ մաքրում» հայության հետ: Իր բռնարարքներով Գոլիցինն էր «վիհ բացում» երկու ժողովուրդների բարեկամության մեջ՝ միաժամանակ դրանում մեղադրելով հայությանը:

Հնչակյան «Վերածնություն» թերթը գրում էր, որ բնավ պետք չէ զարմանալ, որ ցարի ծառաները, փոքրից մինչև մեծ, ամեն ջանք գործ են դնում հայ ժողովրդի աչքին լիովին ատելի և զզվելի դարձնելու միապետին՝ իր կառավարական ամբողջ մեքենայով հանդերձ: «Եթե դա չի ծառայում ցարի փառքին, - շեշտում էր թերթը, - և ոչ էլ նրա կառավարության հեղինակությանը, [բայց] ինքնըստինքյան մեծ ծառայություն է [հայ] ժողովրդին»[2]:

Անշուշտ, թերթը նկատի ուներ այն, որ Գոլիցինի հայահալած քաղաքականությունը հայերի մեջ ավելի մեծ թափով էր արթնացնում սերը դեպի իրենց լեզուն, գրականությունն ու դպրոցները: Տմարդի քաղաքականությունը հայ հեղափոխականների համար գործունեության ընդարձակ ասպարեզ էր բացել: Թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում նրանք բացում էին գաղտնի ընթերցարաններ և նույնիսկ դպրոցներ, կազմակերպում դասախոսություններ: Ավելին, հետզհետե իրենց ձեռքն էին առել դատարանները, ունեին իրենց բանտերն ու զինվորները, մեծապես կրճատվել էր պետական դատարաններին դիմող հայերի թիվը, կտրուկ պակասել էին նաև հաճախումները ռուսական թատերական ներկայացումներին[3]:

«Կովկասը խաղաղեցնելու համար» 1901թ. Գոլիցինը դիմեց մի նոր հրեշավոր քայլի: Նա մինիստրների խորհրդին ներկայացավ դիվային ծրագրով, այն է՝ Կովկասը փրկել վտանգավոր հայ տարրից, նրան արտաքսելու միջոցով*: Նա առաջարկում էր. «...Կովկասը ռուսացնելու և հայկական վտանգավոր անջատողականությունը մի անգամ ընդմիշտ արմատախիլ անելու միջոցը

[1] Տե՛ս Գաբրիել Լազեան, Հայաստանը և հայ դատը հայկական յարաբերություններու լոյսին տակ, էջ 94:
[2] «Վերածնություն», N 40, 16/29 մարտի 1904թ.:
[3] Տե՛ս «Հայրենիք», N4 (76), փետրվար, 1929, էջ 105:
* «Վերածնություն» թերթը հաղորդում էր, թե այդ մասին առաջինը 1901թ. հայտնել է Ֆրանսիական մի պարբերական՝ տպագրելով Պետերբուրգից ստացած իր թղթակցի նամակը («Վերածնություն», N40, 16/29 մարտի 1904թ.): Լեոն վկայում է, որ Գոլիցինը մտադրվել էր առաջիններից մեկը բռնի կերպով Սիբիր գաղթեցնել «Շուշու հայ ազգաբնակչությանը», քանի որ քաղաքը «առանձնապես վատ համբավ ուներ, իբրև հայկական կենտրոն հայակեր իշխանի աչքում» (Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 579):

այս է - չկա այլ միջոց - գաղթեցնել հայերին Սիբիր,* ազատել այդպիսով Անդրկովկասը հայկական խռովությունների ներկայությունից և նրանց տեղ հաստատել ներքին նահանգներից բերած ուղղափառ գաղթականներին»[1]:

Ծրագիրը Պլևեի միջոցով ներկայացվել էր ցարին[2]:

Մինիստրների խորհրդում հարցի քննարկման ժամանակ հաղորդումով հանդես է գալիս Գոլիցինը և կրկնում կովկասահայությանը Սիբիրում վերաբնակեցնելու առաջարկը:

Մինիստրների խորհրդի նիստի՝ կովկասահայերին վերաբերող հարցի քննարկման արձանագրությունը առաջին անգամ հայերեն հրատարակել է Խ. Մալումյանը (Ակնունի): Ահա Կովկասի կառավարչի զեկուցման թողած տպավորությունը նիստի մասնակիցների վրա՝ ըստ արձանագրության.

«Տիրեց լռություն: Դա չափազանց էր արդեն: Ամենաուղղափառ շրթունքների վրա անգամ սառեց ժպիտը: Եվ մինչև իսկ զինվորական նախարարը, Կուրոպատկինը, որ երբեմն իբրև կառավարիչ Անդրկասպյան երկրի, բավական լավ ճանաչում էր «հայկական սեպարատիզմի» չափը, հարցրեց.

- Ինչ եք կարծում, Ձերդ պայծառափայլություն, որքա՞ն կլինի հայ խռովահույզների թիվը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում, ինչպիսին Շուշին է կամ Երևանը:

- * * *

- Մոտավորապես 50 կլինի՞:

- Այո, համարյա այդքան:

- Ես ընդունում եմ նույնիսկ, - ավելացրեց նախարարը, - կրկնապատիկը՝ 100: Եվ կարծում եմ, որ «հայկական շարժումը» արմատախիլ անելու ամենալավ միջոցն է՝ կալանավորել այդ 100 խռովահույզներին, դուրս բերել երկրից և աքսորել Սիբիր: Դրանով դուք կատարելապես ազատած կլինեք երկիրը վտանգից, առանց աքսորելու մի ամբողջ ժողովուրդ:

-Իհարկե, իհարկե, - կրկնեցին մյուս նախարարները»[3]:

Այդպիսով, գրում էր Խ. Մալումյանը, «...ջուրն ընկավ բոլոր հայերը գաղթեցնելու քաղաքական ծրագիրը, որի վրա հեղինակը թափել էր իր ամբողջ հանճարը, հայատելության բովանդակ թույնը»[4]:

* Ուրիշ աղբյուրներ նշում են, որ հայությունը Գոլիցինի ծրագրի համաձայն պետք է արտաքսվեր ոչ միայն Սիբիր, այլև Ռուսաստանի հարավ-արևելյան կողմերը, ինչպես նաև Թուրքեստանի ամայի խորքերը (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց.3, գ.28, թ.2: Տե՛ս նաև հիշատակված «Վերածնության» նշված համարը: Թերթը ուշադրություն էր հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ռուսական բյուրոկրատիան երազում էր հայերին զանգվածաբար Կովկասից հեռացնել Սիբիրի և Թուրքեստանի ամայի խորքերը, որպեսզի վայելեր այն կայքերը, գույքերն ու դրամները, որ նրանք իրենց հետևից կթողնեին Կովկասում):
[1] Է. Ակնունի, Կովկասեան վերքեր, հատ. առաջին, էջ 83:
[2] Տե՛ս «Վերածնություն», N 40, 16(29) մարտի 1904թ.:
[3] Է. Ակնունի, Կովկասեան վերքեր, հատ. առաջին, էջ 84:
[4] Նույն տեղում:

Իսկ այդ ամենի պսակը հանդիսացավ իշխան Գոլիցինի հրահրումով Նիկոլայ II-ի կողմից 1903թ. հունիսի 12-ին ստորագրած հրամանի համաձայն՝ հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը:

Դոնդուկով-Կորսակովի ժամանակներից սկսած՝ Ռուսաստանը վարում էր նաև ոչ հայանպաստ արտաքին քաղաքականություն, որը տևեց շուրջ երեք տասնամյակ:

Ռուսական արքունիքի արտաքին հակահայկական քաղաքականության բարձրակետը համընկավ 90-ական թվականներին: Հայերի հանդեպ ուղղակի թշնամական դիրք էին բռնել բյուրոկրատական վերնախավը և նրանցից ներշնչված պահպանողական մամուլը: Ռուսաստանը քամահրեց հայկական հարցը, այսինքն՝ Բեռլինի 1878թ. կոնգրեսում ձևակերպված արևմտահայոց պահանջները: Դա ցայտուն դրսևորվեց հատկապես 1895-1896թթ. թուրքահայության կոտորածների ժամանակ: Նա միանգամայն անտարբեր մնաց հայոց տանջանքների հանդեպ, հայկական խնդրում լվաց ձեռքերը: Այդ չարաբաստիկ դեպքերի ժամանակ հատկապես խիստ բացասական դեր խաղացին ռուսական դիվանագիտությունը և նրա ղեկավար Լոբանով-Ռոստովսկին*:

Որոնք էին հայերից երես թեքելու գլխավոր պատճառները: Դրանք հիմնականում երեքն էին. 1. Ռուսական պետական վերնախավը 80-ական թվականներին հափշտակվել էր համասլավ (панслав) գաղափարներով, և թուրքական լծից բալկանյան սլավոնական ժողովուրդների ազատագրությունը դարձել էր գլխավոր նպատակ: Այս պայմաններում արտաքին-քաղաքական մերձավորարևելյան ուղղությունը մղվել էր հետին պլան՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով հրապարակ բերված հայկական հարցի հետ, 2. Մոտավորապես այդ նույն ժամանակ ցարիզմը ռուսաց արտաքին քաղաքականության երկրորդ կենտրոնը տեղափոխել էր Մայրագույն արևելք՝ նորից մոռացության տալով «հայկական կուլտուրական առաջապահիկ դերի պատմական նշանակությունը», գտնելով, որ «հայերը Մերձավոր արևելքում այլևս իրեն հարկավոր չեն»[1], 3. Ռուսական կառավարությունը հավատ էր ընծայել սուլթան Համիդի «խորհրդին», թե «հայկական ազգային շարժումը պետք է խեղդել բնում, քանի որ այն միջազգային հեղափոխական շարժման մի մասն է, իսկ այդ շարժումն ամենից առաջ ուղղված է միապետական կարգերի դեմ որտեղ էլ դրանք գոյություն ունենան: Ստամբուլից խաբված ռուս դիվանագիտությունը Նելիդովի և Լոբանով-Ռոստովսկու միջոցով Համիդյան մաքիավելյական «խորհուրդը» փոխանցեց ռուս կառավարական վերնախավին, և սա

* Եթե այդ ցավալի իրադարձությունները կովկասահայերը վերագրում էին Լոբանովների պես դիվանագետների ձախորդ քաղաքականությանը, ապա չմոռանանք խոստովանել և հայ ազգային-քաղաքական կուսակցությունների մեղքերը, երբ նրանք, փոխանակ իրենց հայացքը հառելու Հայաստանի և հայ ժողովրդի ավանդական հովանավորի կողմը, ուրիշ կողմերում էին փնտրում նոր հովանավորներ ու «դաշնակիցներ»:

[1] Ալեքսանդր Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 22-23:

ունկնդիր եղավ ու հավատաց:

Այսպիսով, հետադիմականներն ու պահպանողականները, համասլավոնականներն ու ռուսացման կողմնակիցներն իսկական պատերազմ էին հայտարարել հայությանը՝ որպես հեղափոխական տարրի[1]:

Այս պատճառներն էին, գրում էր Ալ. Ամֆիտեատրովը, որ Ռուսաստանը «իր պետական նավի վրայից դուրս շպրտեց հայերին»[2]:

Ցավալին այն է, որ հայության հետ հաշտ չէին նույնիսկ ռուս առաջադեմ մտավորականներից շատերը: Ռուսական հասարակական կարծիքը որևէ դիմադրություն ցույց չտվեց ձևավորվող հակահայկական քաղաքականությանը: Նույնիսկ հասարակության ամենաառաջավոր խմբերը բացարձակապես անտարբեր էին հայկական մարտիրոսագրության հանդեպ: Նրանց մոտ այն հաստատուն կարծիքն էր ձևավորվել, թե հայերը «չարչիների» ազգ է: Այս մոլորությամբ էր տառապում նույնիսկ «Ռուսաստանի այլազգիների բարեկամ» Ն. Կ. Միխայլովսկին, իսկ Լ. Ն. Տոլստոյը, ի տարբերություն բազմաթիվ ռուս գրողների և գիտնականների՝ մերժում է աշխատակցել Գ. Ա. Ջանչյանի կազմած ժողովածուին*, որը հրատարակվելու էր հօգուտ Փոքր Ասիայում թուրքերի իրականացրած հայկական ջարդերից տուժածների: Այդ մերժման հիմնական պատճառն այն էր, որ, լինելով հեղափոխությունների հակառակորդ, Լ. Տոլստոյը նույնպես կուլ էր տվել հայ ազգի հեղափոխականության մասին Աբդուլ Համիդի նետած կարթը[3]:

Ալեքսանդր Ամֆիտեատրովի խոսքերով ասած՝ «հայկական հարցը ռուսական հասարակական կարծիքի առաջ երկու երկանքաքարերի արանքն ընկած հատիկ էր հիշեցնում»[4]: Այդ հարցի հանդեպ Պետերբուրգի կառավարության վերաբերմունքն ստացավ իր հստակ քաղաքական բանաձևումը՝ «Մենք երկրորդ Բուլղարիա չենք ուզում»[5]:

Ահա այս պայմաններում էր, որ «հայկական հեղափոխությունից Կովկասի փրկությունը» հանձնվել էր Գոլիցինի երկաթե գավազանին: Բայց նրա դաժան ռեժիմը չխաղաղեցրեց Կովկասը: Բազմացեղ երկրամասի մյուս ժողովուրդների առջև հայերին մշտապես ստորացնելու պրակտիկան վերջիններիս ոչ թե ընկճեց, այլ իսկապես նետեց հեղափոխական պայքարի գիրկը:

Մինչև Դոնդուկով-Կորսակովին Կովկասի կառավարիչ նշանակելը հայությունն այստեղ համարվում էր ամենաօրինապահը, պահպանողականը, հետևապես՝ ռուսական իշխանության ամենաամուր նեցուկը, բայց հիմա նա

[1] Այդ շրջանի գոլիցինյան քաղաքականության մասին տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, էջ 62-69:

[2] Ալեքսանդր Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 23:

* Ն. Լ. Տոլստոյի՝ Գ. Ն. Ջանչյանին հասցեագրած նամակի ֆաքսիմիլեն տե՛ս " Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1898, стр. LXXIV.

[3] Ալեքսանդր Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 25:

[4] «Արարատ», N 1, հունվար, 1906, էջ 46:

[5] Ал. Амфитеатров, Армянский вопрос, С.-Петербург, 1906, стр. 50.

հուզվել էր և դուրս էր գալիս ափերից:

Գնահատելով հայության նկատմամբ Ռուսաստանի բռնած դիրքը՝ նույն Ա. Ամֆիտեատրովը նշում էր. «մենք (ռուսները: - Հ.Ս.) տուժեցինք՝ կորցնելով մեր հեղինակությունը ... և վստահությունը [հայերի աչքում], որոնք իրենց ազատագրության ամբողջ հույսը կապել էին մեզ հետ»[1]:

Այդ բանը լավ էին հասկանում ոչ միայն Ա. Ամֆիտեատրովի նման քաղաքագետներ, այլև ամենատարբեր զբաղմունքների տեր ռուս մարդիկ: Նրանցից մեկը՝ Ս.Պատալովը, երկար տարիներ ապրած լինելով Կովկասում, իր ծննդավայր վերադառնալուց հետո, օրագրում կատարած գրառումներից մեկում սրտի ցավով նշում էր, որ անարդարացիորեն հալածվում է մի ազգ, որի ծոցից դուրս եկած նշանավոր զավակներից շատերը իրենց կրծքով պաշտպանել են ռուսական ընդհանուր հայրենիքը և շատ հաճախ կյանքը վերջացրել պատերազմի դաշտում կամ աղքատության մեջ: «Մի՞թե երախտամոռություն չէ, - գրում էր նա, - մոռացության տալ Լորիս-Մելիքովին, իշխ. Արղությանին, իշխ. Բեյբութովին, Տեր-Ղուկասովին, Լազարևին, Մաղաթովին, Շելկոմնիկովին և այլոց»[2]:

Եվ ահա այժմ, իշխան Գոլիցինի Կովկասից փախուստ տալուց հետո, ցարը տրամադիր էր այնտեղ ուղարկել այնպիսի մի գործչի, որը սկսված հեղափոխական հուժկու ցնցումների պայմաններում կարողանար խուսանավել, պառակտեր հեղափոխականների շարքերը, նրանց ազդեցությունից հեռացներ որքան կարելի է շատ զանգվածներ, մեծացնել գահի «բարեկամների» թիվը: Այս ընդհանուր առաջադրանքի մեջ էր մտնում նաև հեղափոխական շարժումից հայությանը հեռու պահելու մարտավարությունը՝ գոլիցինյան մղձավանջը մոռացության տալու միջոցով:

Եթե ցարը և նրա մերձավոր շրջապատը (Պոբեդոնոսցև, Կոկովցև և այլոք) հայության նկատմամբ նոր քաղաքականություն մշակելիս առաջնորդվում էին այսրոպեական խնդիրներ լուծելու մարտավարությամբ, ապա կառավարության մեջ և ռուս քաղաքական լայն շրջաններում արդեն քիչ չէին այն կարծիքները, որոնք առաջադրում էին խնդիրն արմատապես լուծելու պահանջներ, այն է՝ կտրուկ ու աներկյուղ շրջադարձ կատարել դեպի հայ-ռուսական ավանդական բարեկամական հարաբերությունների վերականգնումը:

«Հարկավոր էր ժամանակակից կովկասյան դեպքերի ամբողջ սարսափը,- գրել է Ա. Ամֆիտեատրովը, - որ բացվեին բոլոր ռուսական աչքերը հայկական վշտի դեմ և հասկանային այն պետական չարիքը, որ Տաճկաստանն աճեցրեց իր մոտ արտասահմանում, իսկ մենք հնազանդությամբ յուրացրինք, փոխադրեցինք մեր երկիրը և կատարելագործեցինք՝ վրան Պետերբուրգի բյուրոկրատիայի ծաղիկներից պատվաստելով»[3]:

---

[1] **«Արարատ»**, *N 12, դեկտեմբեր, 1905, էջ 1085:*
[2] *Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237[a], վավ. 58, թ. 12 և շրջերես:*
[3] **«Արարատ»**, *N1, հունվար, 1906, էջ 47:*

Պետերբուրգյան արքայական պալատում, իբրև Գոլիցինի հաջորդ, տալիս էին Մեծ իշխան Սերգեյի, ներքին գործերի մինիստր Սվյատոպոլկ - Միրսկու (որը շուտով հեռանալու էր պաշտոնից) և իշխան Օլդենբուրգի անունները:

Մինչ այս թեկնածուների շուրջ թեժանում էին խոսակցությունները և թեր ու դեմ կարծիքներ էին հայտնվում, 1905թ. փետրվարի 26-ին Նիկոլայ II-ը հատուկ հրամանով վերացրեց Կովկասի կառավարչապետությունը և վերականգնեց կովկասյան փոխարքայությունը[1]:

Կայսրի կողմից 1905թ. փետրվարի 26-ին կառավարիչ սենատին տված բարձրագույն անվանական ուկազով գծված էին իրավասությունների այն սահմանները, որոնք տրվում էին Կովկասի նոր փոխարքայությանը:

Անհրաժեշտ էր համարվում Կովկասի փոխարքայի պաշտոնը վերականգնել իշխանության լիակատար ամբողջությամբ այն վայրերի սահմաններում, որոնք մինչ այդ գտնվում էին Կովկասի կառավարչապետի, կովկասյան զինվորական շրջանի զորքերի հրամանատարի և կովկասյան կազակական զորքերի ատամանի վարչության տակ:

Հրամանում ասված էր. «1) Մեր Կովկասի փոխարքային հատկացնել իրեն հանձնված երկրի քաղաքացիական վարչության բոլոր մասերի բարձրագույն իշխանությունը, 2) Ըստ իր կոչման՝ փոխարքան լինելու է պետական խորհրդի, մինիստրների խորհրդի և կոմիտեի անդամ, փոխարքայության սահմաններում գտնվող զորքերի գլխավոր հրամանատար և կովկասյան կազակային զորքերի վարչական (наказной) ատաման, 3) Նրան հանձնված երկիրը կառավարելու գործին օգնելու համար՝ հիմնել փոխարքայի երկու օգնականների պաշտոն՝ զինվորական և քաղաքացիական, անմիջապես նրանց ենթարկելով փոխարքային, 4) Փոխարքայի բացակայության դեպքում նրա պաշտոնը վարում է զինվորական մասի նրա օգնականը, 5) Փոխարքային պարտավորեցվում է՝ փոխարքայությունը կառավարելու համար կազմել օրենքներ, 6) Փոխարքայի զինվորական բաժնի օգնականին հատկացվում են Կովկասի զինվորական շրջանի զորքերի գլխավոր հրամանատարի իրավունքները, իսկ փոխարքայի քաղաքացիական մասի օգնականին հատկացվում են մինչ այդ գործող կովկասյան քաղաքացիական բաժնի ղեկավարի իրավունքները, 7) Վերացվում են Կովկասի կառավարչապետի և Կովկասի զինվորական շրջանի զորքերի գլխավոր հրամանատարի, ինչպես և նրա օգնականի պաշտոնները, 8) Կառավարիչ սենատին հանձնարարվում է ձեռնարկել կայսրի այդ կարգադրությունները իրագործելու անհրաժեշտ բոլոր միջոցները[2]:

Ցարը Կովկասի փոխարքա և կովկասյան զինվորական շրջանի գլխավոր հրամանատար նշանակեց մի փորձված պետական գործչի՝ կոմս ***Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին*** *(1837-1916)[*]:*

---

[1] *Տե՛ս* **"Кавказский календарь на 1906 год"**, *էջ 237:*
[2] **«Մշակ»**, *N 43, 12 մարտի 1905թ.:*
[*] *Գեներալ-ադյուտանտ, հեծելազորային գեներալ:*

Քանի որ Վորոնցով-Դաշկովի անունը սերտորեն առնչված է Կովկասի՝ 1905-1914թթ. ժամանակաշրջանն ընդգրկող պատմությանը, ուստի ավելորդ չէ ընթերցողին ներկայացնել նրա համառոտ կենսագրականը:

Կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովը ծնվել է 1837թ. մայիսի 27-ին: Նա Կովկասի հռչակավոր փոխարքա իշխան Վորոնցովի մտերիկ ազգականն էր, իսկ կինը՝ կոմսուհի Ելիզավետա Անդրեևնան՝ իշխան Վորոնցովի հարազատ թոռը:

Վորոնցով-Դաշկովը զինվորական ծառայության մեջ էր մտել 1858-ին, և նրա ծառայության առաջին վայրը եղել էր Կովկասը, ուր նա մասնակցել էր Դաղստանի, ապա և Արևմտյան Կովկասի պատերազմներին: Երիտասարդ սպան եռանդուն գործունեություն էր ցույց տվել նաև Թուրքեստանում, ուր 1862-ին մասնակցել էր Բուխարան նվաճելու ռազմական գործողություններին: 1877թ. սկսած ռուս-թուրքական պատերազմում նա գործում էր որպես հեծելազորի հրամանատար ռազմաճակատի Ռուչչուկի հատվածում:

Այնուհետև, զինվորական վարչության մեջ զանազան բարձր պաշտոններ վարելուց հետո, Ալեքսանդր III-ի հրամանով Վորոնցով-Դաշկովը 1881թ. նշանակվում է կայսերական պալատի մինիստր և այդ պաշտոնը վարում է կայսրի ամբողջ թագավորության ընթացքում վայելելով նրա բացահայտ համակրանքը: Դա պետության վերնախավին առիթ էր տվել Իլլարիոն Իվանովիչին համարելու Ալեքսանդր III-ի մտերիկ մարդը: Նիկոլայ II-ի օրոք կոմսը հիվանդության պատճառով արձակվում է պալատական մինիստրի պաշտոնից և նշանակվում պետական խորհրդի անդամ:

Երբ սկսվում է ռուս-ճապոնական պատերազմը, Վորոնցով-Դաշկովը ընտրվում է ռուսաց կարմիր խաչի ընկերության գլխավոր վարչության նախագահ և իր եռանդուն գործունեությամբ արժանանում է ընդհանուր համակրանքի: Ահա այդ պաշտոնում էր նա, երբ նշանակվեց Կովկասի փոխարքա*:

Մեծ խելքի տեր, գերազանց տիրապետած պալատական վարվելաձևին, (этикет), Կովկասի յուրահատկություններին նրբանկատ վերաբերմունք ունեցող, ռուսական տերության երկարաժամկետ շահերը խորապես ըմբռնողսրանք հատկանիշներ էին, որոնք Վորոնցով-Դաշկովին շահեկանորեն առանձնացնում էին բարձրաստիճան շատ ու շատ պալատականներից:

Փարիզում Ռուբեն Խան-Ազատի հետ հանդիպման ժամանակ բոլշևիկյան կուսակցության խոշոր գործիչ Բոգդան Կնունյանցը զրույցի ընթացքում, անդրադառնալով Կովկասի նոր փոխարքայի նշանակմանը, ասել է. «Վորոնցով-Դաշկովը Ալեքսանդր Գ-ի դպրոցին պատկանող մի մարդ է և, կարելի է ասել, ռուսաց քաղաքագետների մեջ ամենախելոք, նրբամիտ ու խորամանկ անձնավորությունն է»[1]:

Նոր փոխարքայի անձնական հատկանիշները մեծապես նպաստելու էին ինքնակալական իշխանության և հայ ժողովրդի միջև եղած հակամարտության կարգավորմանը:

Վորոնցով-Դաշկովին Կովկասի փոխարքա նշանակելը հարթ ու խաղաղ չանցավ, և դա կապված էր երկրում ստեղծված իրավիճակի գնահատման հետ:

Հեղափոխության դեմ պայքարի միջոցների ընտրության հարցում համաձայնություն չկար միապետության կարկառուն սյուների միջև: Առավել ռեակցիոն թևին պատկանող գործիչները գիտեին միայն մի միջոց՝ արյան մեջ խեղդել միապետության դեմ ուղղված մեծ թե փոքր ամեն ըմբոստություն: Այս տեսակետի ներկայացուցիչները, որոնց գլուխն էր կանգնած Պոբեդոնոսցևը, մեծամասնություն էին կազմում արքունիքում և կառավարության մեջ:

Ցարիզմի հետևողական պաշտպանների մյուս մասը կողմնակից էր որոշ զիջումների և այդ միջոցով էր հետապնդում միապետության ամրապնդումը: Այս ուղղության ներկայացուցիչների առավել ցայտուն արտահայտիչը Սերգեյ Յուլևիչ Վիտտեն էր: Թեև Նիկոլայ II-ը ոչ միայն անձնապես չէր համակրում, այլև անթաքույց ատելություն ուներ այս գործչի նկատմամբ, բայց ակամայից հաշվի էր առնում նրա կառավարչական տաղանդն ու խելքը և շարունակում էր պահել բարձր պաշտոնների վրա, հաճախ էլ լսել նրա խորհուրդները:

Այս երկրորդ՝ «ազատական», խմբին պատկանող գործիչներից էր Վորոնցով-Դաշկովը՝ Վիտտեի համախոհը: Պատահական չէ, որ երբ Նիկոլայ II-ի հավանությամբ բարձրացավ Վորոնցով-Դաշկովին Կովկասի փոխարքա նշանակելու հարցը, Պոբեդոնոսցևը և նրա կողմնակիցները փորձեցին փոխել կայսրի մտադրությունը՝ ամենից առաջ վկայակոչելով նրա տարիքը: Բայց եթե Նիկոլայ II-ը Վիտտեի նկատմամբ ուներ զուսպ ու սառը վերաբերմունք, ապա Վորոնցով-Դաշկովի հանդեպ տածում էր մեծ վստահություն ու հարգանք:

1905թ. փետրվարի 28-ին Նիկոլայ II-ը Վորոնցով-Դաշկովի անունով տվեց արքայական բարձրագույն ռեսկրիպտ, ուր ասված էր.

«Կոմս Իլլարիոն Իվանովիչ.

Կովկասը ռուսական պետության մեջ ընդունելու օրից, Իմ Թագակիր Նախնիքներիս և Իմ նպատակն է եղել այդ երկրում խաղաղություն, բարօրություն և կարգ զարգացնել՝ հիմնվելով մեր հայրենիքի մյուս մասերի հետ դրա (Կովկասի: - Հ.Ս.) միաձուլության [գաղափարի] վրա: Այդ ուղղությամբ ձեռք բերված հաջողությունները, որի նշաններն են Կովկասի ազգաբնակչության բարօրության ընդհանուր աճը և կովկասցի շատ անձանց աչքի ընկնող ծառայությունները հօգուտ և ի պատիվ Ռուսաստանի, ի մեծ ցավ Իմ, վերջին

* Ռուսաց կարմիր խաչի վարչությունը բաժանվելով իր եռանդուն ու գործունյա նախագահից՝ նրան հղած շնորհակալական ուղերձում հայտնում էր, որ պատերազմում մնացածներին խնամելու գործը մեծ կորուստ է կրում զրկվելով իր նախագահից այնպիսի ժամանակ, երբ դեռ շարունակվում է իր արյունահեղությամբ անօրինական պատերազմը (**«Մշակ»**, N 85, 6 մայիսի 1905թ.):

[1] **«Հայրենիք»**, N 6(78), ապրիլ, 1929, էջ 113-114:

ժամանակներս մթագնվեցին զանազան ազգերի փոխադարձ ընդհարումով, իշխանություններին չհպատակվելու դեպքերով, անկարգություններով, որոնք խանգարեցին կյանքի բնականոն ընթացքը:

Այդ բոլոր անկարգությունները համարելով ժամանակավոր՝ անհրաժեշտ եմ համարում Կովկասում խաղաղության անհապաղ վերահաստատումը, որպեսզի այդ երկիրը մասնակից անեմ ներքին ստեղծագործ աշխատանքին, որ այսօր ձեռնարկված է մեր պետության մեջ Իմ ցուցումներով: Այդ նպատակով Ես ձեզ նշանակում եմ Իմ փոխանորդը Կովկասում: Ձեր գիտակ լինելն այդ երկրին, որ ձեռք եք բերել այնտեղ նախկինում արած ծառայություններով, ձեր բազմակողմանի պետական փորձառությունը և փորձված աշխատանքները հայրենիքի օգտին, ինձ հաստատ վստահություն են տալիս, որ ձեզ այժմ առաջադրած խնդիրը դուք հաջողությամբ կլուծեք՝ հանդիպելով Կովկասի ազգաբնակչության բոլոր դասակարգերի և ազգությունների բարեմիտ անձերի համերաշխ գործակցությանը»[1]:

Փոխարքայի օգնականներ նշանակվեցին գեներալ-մայոր Ցակով Դմիտրիևիչ Մալաման՝ զինվորական և Ե. Շիրինկինը՝ քաղաքացիական գծով, որին որոշ ժամանակ անց փոխարինեց Սուլթան Կրիմ-Գիրեյը, իսկ Շիրինկինը նշանակվեց փոխարքայության ոստիկանական ուժերի պետ: Գոլիցինից հետո, մինչև Վորոնցով-Դաշկովի Թիֆլիս գալը, Կովկասում կարճ ժամանակով իշխանության ղեկին գեներալ Մալաման էր:

Նույն ժամանակ ցարը Լեհաստանի փոխարքա նշանակեց Մաքսիմովիչին, որը նույնպես փորձված պետական գործիչ էր և վայելում էր ցարի մեծ վստահությունը:

Լեհաստանը և Կովկասը ներկայացնում էին երկու հնոցներ, որոնցում, ավելի քան պետության այլ մասերում, բորբոքվում էր ապստամբական կրակը:

Կովկասի ժողովուրդները, այնտեղ գործող հասարակական-քաղաքական ուժերը տարբեր հույսերով ու զգացումներով դիմավորեցին նոր փոխարքայի նշանակումը:

Կովկասյան թուրքերը, իրենց բոլոր հատվածներով, հերթական անգամ արտահայտեցին ռուսաց միապետի նկատմամբ իրենց խոնարհ հպատակությունը և անվերապահորեն ողջունեցին կոմս Վորոնցով-Դաշկովին փոխարքա նշանակելու մասին ցարական ռեսկրիպտը:

Հայերի և վրացիների պահպանողական շերտերը, բուրժուամտավորական շրջանները, լիբերալ և պահպանողական մամուլի օրգանները, որոշակի հույսեր կապելով Վորոնցով-Դաշկովի առաքելության հետ, որոշ վերապահումներով հանդերձ, նույնպես ողջունեցին նրա նշանակումը:

Լսելով Վորոնցով-Դաշկովին Կովկասի փոխարքա նշանակելու մասին լուրը՝ ամենայն հայոց կաթողիկոսը, որն այդ ժամանակ գտնվում էր Թիֆլիսում, հետևյալ հեռագիրն ուղարկեց Պետրոգրադ.

[1] «Մշակ», N 36, 3 մարտի 1905թ.:

«Նորին Պայծառափայլության Կովկասի փոխարքա կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին.

Իմ և ամբողջ հայ հոտիս անունից խնդագին շնորհավորում եմ Ձեր Պայծառափայլությանը այն բարձր պաշտոնի համար, որին Դուք կոչված եք ներկա ծանր օրերում Միապետի ինքնակալ կամքով: Խորապես հավատում եմ, որ Ձեր հայտնի բարյացակամությամբ դեպի Կովկասի ազգաբնակչությունը՝ Դուք, կովկասյան հին ավանդույթներով համակված, կլուծեք այժմ Կովկասը հանգստացնելու և խաղաղեցնելու դժվարին խնդիրը: Աղոթում եմ Աստծուն Ձեզ առաքելու ուժ՝ Ձեզ սպասող մեծ աշխատանքը կատարելու համար: Սրանով հանձնում եմ Պետերբուրգում գտնվող հոգևոր պատգամավորությանը մատուցանելու անձամբ Ձեր Պայծառափայլությանը շնորհավորանքներ իմ և հայ ազգաբնակչության կողմից:

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
19 փետրվարի 1905թ., Թիֆլիս»[1]:

Հաջորդ օրվա առավոտյան ստացվում է կաթողիկոսի հեռագրի հետևյալ պատասխանը.

«Թիֆլիս, Նորին Սրբության Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Խորապես շնորհակալ եմ Ձեր Սրբությունից համակրական հեռագրի համար: Աղոթում եմ Աստծուն տալ ինձ ուժ և հնարավորություն ի կատար ածելու Կայսրի կամքը – խաղաղեցնել ազգաբնակչությանը և հարատևել իմ ջերմորեն սիրած Կովկասի խաղաղ զարգացումը: Հանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղոթքներին:

Կոմս Վորոնցով-Դաշկով
20 փետրվարի 1905թ., Պետերբուրգ»[2]:

Փոխարքա նշանակվելուց հետո իշխան Վորոնցով-Դաշկովը դեռ որոշ ժամանակ մնաց Պետերբուրգում և վերջին պատրաստությունները տեսավ Կովկաս գնալու և պաշտոնը ստանձնելու համար: Մասնավորապես ցարի կարգադրությամբ նրա տրամադրության տակ դրվեցին կազակական նոր զորամասեր, որոնք դեռ մինչև փոխարքայի Պետերբուրգից մեկնելը գնացել և տեղաբաշխվել էին փոխարքայության տարբեր վայրերում:

Օգտագործելով ժամանակը՝ Վորոնցով-Դաշկովը կառավարության հետ մշակեց ու ցարին ներկայացրեց մի շարք առաջարկություններ Կովկասում խաղաղությունը վերականգնելու համար: Այդ առաջարկությունների իմաստը հետևյալն էր. վրացական նահանգներին տրվում է զեմստվո, հայերին են վերադարձվում եկեղեցական կալվածքները, գուցե և դպրոցները, կրկին մահմեդական հոգևորականության ձեռքն են անցնում մզկիթների վակուֆ կալվածքները: Այդ միջոցառումների իրականացմամբ փոխարքան հույս ուներ անմիջապես շահել Կովկասի ժողովուրդների համակրանքը:

[1] «Արարատ», N 3, մարտ, 1905, էջ 212:
[2] Նույն տեղում, էջ 213:

Նախքան փոխարքայության կենտրոն՝ Թիֆլիս մեկնելը, Վորոնցով-Դաշկովը հրավիրվում է ցարի մոտ: Միապետը երկար զրույց է ունենում նրա հետ և շարադրում երկրամասը խաղաղեցնելու մասին իր տեսակետները՝ տալով նաև այնտեղ ապրող ազգերի բնութագիրը: Զրույցի ընթացքում Նիկոլայ II-ը հատկապես խիստ բացասական կարծիք է հայտնում հայ ժողովրդի՝ որպես անհանգիստ և անիշխանական ազգի մասին:

Նոր փոխարքան, պատրաստվելով մեկնել իր պաշտոնավայրը, Պետերբուրգից Թիֆլիս՝ իր տեղապահ գեներալ Մալամային հղում է մի ընդարձակ հեռագիր և պատվիրում մինչև իր տեղ հասնելը դրա բովանդակությունն ազդարարել Կովկասի բնակչությանը: «Թագավոր Կայսրի կամքով, - ասված էր հեռագրում, - ես կոչված եմ կանգնելու ինձ համար սիրելի Կովկասի վարչության գլուխ: Դժբախտաբար ես ստիպված եմ ստանձնել իմ պաշտոնն այն ժամանակ, երբ ամեն օր ստացվում են լուրեր բարօրության խանգարման, խռովությունների, կողոպուտների և ամեն տեսակ բռնությունների մասին: Որպես հին զինվոր, ես անհնար եմ համարում հրաժարվել պաշտոնից պատերազմական ժամանակում: Այդ բանում ինձ խրախուսում է երկրի բարեբեր զարգացման և լիակատար խաղաղեցման հնարավորության հույսը: Ես համոզված եմ, որ կովկասցիները հավատարիմ հպատակներ են Թագավոր Կայսրին, որի համար բոլոր տեղական ազգությունները հավասարապես մոտ և սիրելի են: Դիմում եմ ամբողջ ազգաբնակչությանը, առանց կրոնի և ազգության խտրության, գործակցելու ինձ՝ մայրենի երկրի (նկատի ունի Կովկասը: - Հ.Ս.) հաջող կարգավորման համար: Երկրում խաղաղ ճանապարհով կարգ մտցնելու նպատակով անհրաժեշտ է բոլոր հասարակական ուժերի օգնությունը: Ես հավատում եմ ժողովրդական իմաստությանը և համոզված եմ, որ ազգաբնակչության անհանգիստ մասը չի դիմանա հասարակական բարեսիրտ ահագին մեծամասնության միահամուռ ճնշմանը»[1]: Այնուհետև փոխարքան նշում էր, որ կայսրի տված ցուցումների համաձայն, ինքը հրավիրելու է Կովկասի ազգաբնակչության ներկայացուցիչների ժողով, որին մասնակցելու են ազնվականության, քաղաքների և գյուղական համայնքների, նույնպես և ուղղափառ, հայ-լուսավորչական և մահմեդական հոգևորականության ներկայացուցիչները: Այդ ժողովներին կառաջարկվի՝ կարծիք հայտնել այն միջոցների մասին, որոնք անհապաղ անհրաժեշտ են ամեն տեսակ ավազակությանը, կողոպուտներին ու անկարգություններին վերջ տալու համար, պարզել, թե որքանով է անհրաժեշտ փոփոխության ենթարկել երկրում այժմ գործող դատաստանական կարգը, քննել զեմստվային հիմնարկությունների օրենքների գործադրության հնարավորությունները և նպատակահարմարությունը: Բացի դրանից, նշում էր փոխարքան հեռագրում, «Ես ձեռք կառնեմ

[1] «Մշակ», N 61,2 ապրիլի 1905թ.,«Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 86, «Հայրենիք», N 6(78), ապրիլ, 1935, էջ 121-122:

բոլոր միջոցները՝ փութացնելու հողաբաժանումը, նույնպես և պարզելու պետական այն հողերի իսկական չափը, որոնք պետքական են ազգաբնակչության ամենակարիքավոր մասի բնակության համար»[1]:

Վերջում կոմս Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Ես վստահ եմ, որ պետական հաստատությունների բոլոր պաշտոնյաները խորապես կ'համակվեն, որ ներկա ծանր ժամանակներում չափազանց անհրաժեշտ է խղճմտաբար լարել բոլոր ուժերը՝ հասնելու ամենքի համար բաղձալի հաջողությանը, աչքի առաջ ունենալով Կովկասի զարգացումը և բարօրությունը, համաձայն այն հիմքերի, որ Թագավոր Կայսրը մատնացույց է արել իմ անունով տված Իր ռեսկրիպտում»[2]:

Հեռագիրը, որը տպագրվեց թերթերում, ամենատարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց: Ծարամետ ուժերն անվերապահ ընդունեցին այն, լիբերալները սպասողական դիրք բռնեցին, իսկ հեղափոխական կուսակցությունները հենց սկզբից փաստաթուղթը որակեցին որպես կեղծ խոստումներով ժողովրդին հակացարական պայքարից հեռու պահելու փորձ:

Եթե Կովկասի պահպանողական և լիբերալ շերտերն ուրախությամբ և նույնիսկ ցնծությամբ դիմավորեցին Վորոնցով-Դաշկովի նշանակումը, ապա հեղափոխական ուժերը գտնում էին, որ կատարվածը սին խոստումներով ժողովրդական մասսաներին խաբելու և նրան կրկին հնազանդության բերելու փորձ է:

Վորոնցով-Դաշկովին անխնա նշավակում էին սոցիալ-դեմոկրատները: Բոլշևիկները գտնում էին, որ նոր փոխարքան Կովկասում հեղափոխության համար ավելի վտանգավոր է, քան իր նախորդն էր՝ իշխան Գոլիցինը: Վերջինս իր խելահեղություններով ամբողջ մերկությամբ ցույց էր տալիս միապետական վարչակարգի ամբողջ նեխվածությունն ու անմարդկայնությունը և դրանով իսկ, իր կամքից անկախ, հեղափոխության դրոշի տակ էր բերում հակացարական պայքարի նորանոր մարտիկներ: Բոլշևիկները համոզված էին, որ նոր փոխարքան գործելու է նուրբ ու խաբուսիկ միջոցներով, հրապարակ է բերելու կիսատ-պռատ «ռեֆորմներ», փորձ է անելու անաչառ կառավարչի համբավ վաստակել, ձգտելու է տեղական ազգերի մեջ դեպի ցարը վստահություն առաջ բերել, նրանց դուրս բերել ինքնակալության դեմ ծավալվող հեղափոխական պայքարից:

Ե՛վ բոլշևիկների, և՛ մենշևիկների տեսակետն այն էր, որ ռեֆորմների միջոցով անհնարին է փոխել իրավիճակը երկրում, և որ անզիջում քաղաքական պայքարի, ցարական ինքնակալության ռեժիմի անվերապահ տապալման միջոցով միայն հնարավոր կլինի աշխատավոր մասսաների, կայսրության բոլոր ազգերի ու ժողովուրդների ազատագրումը սոցիալական բիրտ ճնշումից ու ազգամիջյան թշնամանքից:

[1] «Մշակ», N 61, 2 ապրիլի 1905թ.:
[2] Նույն տեղում:

Նոր փոխարքայի նկատմամբ նույնպիսի վերաբերմունք հանդես բերեցին նաև ռուս սոցիալիստ-հեղափոխականները (էս-էռ), որոնք 20-րդ դար թևակոխած Ռուսաստանի ժողովուրդների համար ռոմանովների արյունալի միապետության գոյությունը դիտում էին որպես մեծագույն խայտառակություն: Սոցիալ-դեմոկրատների նման նրանք էլ մասսաներին կոչ էին անում ինքնակալության դեմ անողոք պայքարի:

Հայ ազգային հեղափոխական երկու քաղաքական կազմակերպությունները՝ ս.-դ. հնչակյան կուսակցությունը և Հ.Յ. դաշնակցությունը, նույնպես ծայրահեղ բացասական դիրք բռնեցին փոխարքայի նկատմամբ: Հատկապես անզիջում էին դաշնակցականները:

Վերջապես փոխարքան մայիսի սկզբին Պետերբուրգից ճանապարհվեց Կովկաս: Այդ առթիվ Հ.Յ. դաշնակցության VI կենտրոնական կոմիտեն հետևյալ կոչով դիմեց կովկասահայությանը.

«Հայ ժողովուրդ,

Ահավասիկ Կովկասը ընդունում է փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

Մենք համոզված ենք, որ հասարակության այլասերված և լպիրշ մասը, քսու և զազրելի ժպիտը երեսին, խնվելու է փողոցներում դիմավորելու համար այլանդակ միապետության նոր գործակալին: Բայց ողջամիտ մասսան, անկասկած, գիտակցելու է, որ խաբվելու չէ և որևէ սպասելիք չպետք է ունենա համաշխարհային ժանդարմ և ժողովուրդների դահիճ միապետի դերակատարից: Հասարակության գիտակից մասը պիտի սթափվի և հեռու մնա «ավանսով» հարգանքներ շռայլելուց: Թող նա գիտենա, որ ժողովրդյան խոցերը թարմ են և խորը, որ կիսատ-պռատ շնորհներով և ողորմություններով հնարավոր չէ նրան հանգստացնել: Պետք է կռվով ստանալ սեփական վիճակը տնօրինելու իրավունք և ոչ թե թույլ տալ, որ ուրիշները տնօրինեն: Ուրեմն ըմբռնիր իրականությունը, լարիր ուժերդ, պատրաստվիր և հարձակվիր թափով ախոյանիդ վրա, որ դարերով ծաղրեց տգիտությունդ, ճնշեց, ծծեց, արյունաքամ արավ քեզ և լցրեց քո համբերության բաժակը:

Կորչի՛ միապետությունը:

Կեցցե՛ Կովկասի Ռամկավարական Ֆեդերացիան»[1]:

Սակայն այդ կոչն ազդեցություն չունեցավ: Ռոստովի կայարանում տեղացի հայերը աղ ու հացով դիմավորեցին Կովկաս մեկնող Վորոնցով-Դաշկովին, իսկ հասարակական հայտնի գործիչ Գրիգոր Զալխուշյանը ոգեշունչ ճառ արտասանեց ու փոխարքային գրավոր ուղերձ ներկայացրեց կովկասահայերի հալածական դրության մասին[2]: Բաքվի մատույցներում Բալաջարի կայարանում, Վորոնցով-Դաշկովին դիմավորեցին մի խումբ հայ գործիչներ՝ Կոնստանտին Խատիսյանի գլխավորությամբ: Վերջինիս՝ փոխարքային ուղղած խոսքերը բնութագրում են հոգեկան այն վիճակը, որի մեջ գտնվում էր Բաքվի

[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 111:
[2] «Հայրենիք» ամսագիր, N 6(78), ապրիլ, 1929, էջ 113:

(և Կովկասի) հայ բուրժուազիան: Մի կողմից նա հանդես էր գալիս որպես ցարիզմի վստահելի հենարան և հայցում էր նրա ողորմածությունը, մյուս կողմից, լինելով հայ ազգի մի մասը, երկչոտաբար փորձում էր պաշտպան կանգնել իր ազգակիցներին, թեև նույնիսկ չէր համարձակվում բարձրացնել թուրք-հայկական կոտորածները վերջ դնելու խնդիրը: Ահա նրա ներկայացուցչի ողջույնի վախվորած խոսքը.

«Բաքվի հայ հասարակությունը մեզ բարձր պատիվ է չնորհել՝ ողջունել Ձերդ պայծառափայլության ժամանումը Կովկաս:

Երջանիկ և հպարտ լինելով մեզ վրա դրված պարտականությամբ, մենք ասում ենք Ձեզ, կոմս և Ձեր տիկնոջը՝ կոմսուհուն. բարով եք եկել մեզ մոտ:

Մենք՝ Բաքվի հայերս, ի խորոց սրտի ցավում ենք, որ չենք կարողանում Ձեզ դիմավորել այնպիսի հանդիսավորությամբ ու ճոխությամբ, որը վայել է Ձեզ, ինչպես որ կցանկանայինք դիմավորել կայսեր հավատարիմ փոխարքային, կայսեր, որի նախորդները սովոր էին հայ ժողովրդին դիտել որպես ռուսական տերությանը անսասան նվիրված ժողովրդի:

Մենք չենք կարող Ձեզ շքեղ ու հանդիսավոր դիմավորել, քանզի ոչ շատ առաջ մենք հողին ենք հանձնել Բաքվի փողոցներում և հրապարակներում զոհված մի քանի հարյուր մեր եղբայրներին:

Կոմս, դրա համար մի՛ պարսավեք մեզ: Թող հանդիսավոր շքեղությանը փոխարինի մեր ուրախության ոչ աղմկալից, բայց անկեղծ դրսևորումը այն պատճառով, որ, վերջապես, տեսնում ենք Ձեզ, խաղաղության և համերաշխության առաքյալիդ, երբեմնի հիասքանչ, բայց ներկայումս բզկտված, ավերված և տառապյալ երկրում:

Մենք վստահաբար հավատում ենք Ձեզ, կոմս, որ Ձեր ժամանումով խպառ կանհետանան Կովկասի պատմության վերջին տարիների մռայլ հիշողությունները, և մեր կյանքում կսկսվի մի նոր փառահեղ ժամանակաշրջան, երբ Դուք, մուտիկից ծանոթանալով հայերի հետ, նրանց կոչ կանեք օգնել Ձեզ՝ ամրքելու Կովկասի խոր վերքերը: Այն ժամանակ Դուք, ուղիղ և ազնվորեն նայելով մեր կայսրի աչքերին, համոզված ենք, կասեք. «Այո, հայ ժողովուրդն այն ժողովուրդն է, որի վրա կարող է հենվել Ռուսաստանը, և որին բախտ է վիճակված, ինչպես նախկինում, լինելու Արևելքում նրա մշակութային և պետական նախաձեռնությունների կրողն ու տարածողը:

Մեկ անգամ ևս բարի գալուստ ենք մաղթում, կոմս: Բարով եք եկել, և թող աստված Ձեզ օգնական լինի՝ հաջողությամբ իրագործելու ծանր, բայց ծայրաստիճան ազնիվ խնդիրը, որ Ձեզ վրա է դրվել ի կամոք կայսրի»[1]:

Վերջապես Վորոնցով-Դաշկովը մայիսի 5-ին հասավ Թիֆլիս: Քաղաքի ազգային չորս հիմնական հատվածների՝ ռուսների, վրացիների, հայերի և թուրքերի ներկայացուցիչները մեծ ընդունելություն ցույց տվեցին նրան: Վորոնցով-Դաշկովը իջևանեց փոխարքայի պալատում, որի դիվանը Պետեր-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 66, թ.10:

բուրգից ստացված կարգադրության համաձայն՝ ապրիլի 11-ից վերանվանված էր «Կովկասյան փոխարքայի դիվան»:

Փոխարքայի Թիֆլիս գալով՝ կրքերը չմեղմացան:

Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի) գրում էր, որ միապետական քուրայում մկրտված երկու տիպի պետական գործիչներ կան: Մի տիպը գիտե հարմարվել շրջապատին և ենթարկվել քաղաքական էվոլյուցիայի: Միապետության ձեռքի տակ լինելով բարեխիղճ պաշտոնյաներ՝ այդպիսիները կարող են բարեխիղճ մնալ նաև հեղափոխության շրջանում և ի վերջո վերադասի կողմից դուրս մղվել ծառայությունից: Պետական գործիչների մեծամասնությունը կազմող մյուս տիպը ծայրահեղորեն հավատարիմ է ավազակության և հարստահարության ռեժիմին: Քաղաքական փոփոխությունների դեպքում այդպիսի պաշտոնյաները ներքուստ մնում են անփոփոխ, չեն ենթարկվում էվոլյուցիայի և միայն իրենց ու յուրայինների շահերը փրկելու հույսով դիմում են սիրաշահման բոլոր միջոցների՝ խաբուսիկ և նույնիսկ աղերսական ձևերի, որպեսզի զինաթափ անեն թշնամուն, չափավորները բաժանեն ծայրահեղականներից և, այդպիսով, պառակտում մտցնեն հեղափոխության շարքերում: Ակնունին այդպիսիներից էր համարում Թիֆլիսի պալատի նոր տանտիրոջը, որի ծրագիրը մշակվել էր նույնիսկ ոչ թե Վիտտեի կամ Սվյատոպոլկ Միրսկու շրջապատում (իսկ ավելի ազատամիտ շրջանների մասին խոսք անգամ լինել չէր կարող), այլ մեծ իշխան Վլադիմիրի, Պոբեդոնոսցևի, Բուլիգինի և նրանց նմանների հայացքի տակ, որոնց քաղաքական հավատամքը մեկն է՝ անփոփոխ թողնել միապետի անսահմանափակ իշխանությունը:

Շարունակելով իր միտքը՝ Ակնունին նշում էր, թե Վորոնցով-Դաշկովի շրջապատը իրեն մխիթարում է այն հույսով, որ հայոց կաթողիկոսին մի քանի զիջումներ անելով, սիրաշահելով վրաց ազնվականության պարագլխին, կամ փոխարքայական վստահություն արտահայտելով մահմեդական բեգությանը՝ կարելի կլինի մոռացության տալ տարիների կսկիծն ու թալանը, շղթաներն ու հալածանքները: Նոր փոխարքայի հետ մեծ հույսեր կապողները կարծում էին, թե Ստեփանովիչի փոխարեն Մելիքովին Թիֆլիսի նահանգապետ նշանակելը, Նակաշիձեի իրավունքները որոշ չափով սահմանափակելը, գրաքննական կոմիտեի նախագահի պաշտոնից Գակկելիին հեռացնելը, մի քանի լրագրի վերահրատարակում թույլատրելը կամ, վերջապես, «ազնվականության, քաղաքացիների և հոգևորականության ներկայացուցիչներից» մի խորհրդակցության գումարումը բավական է հանգցնելու համար բորբոքված կրակը, որը կոչված է այրելու միապետի գահը: «Եթե այդպես են կարծում նոր փոխարքան և նրա շրջապատը, ապա խորապես սխալվում են». – այս էր Խ. Մալումյանի և իր կուսակիցների եզրակացությունը[1]:

Այդ օրերին Հ.Ց. դաշնակցության կովկասյան պատասխանատու կոմիտեն տարածեց «Նոր փոխարքան» վերտառությամբ թռուցիկը, որտեղ ասված էր,

[1] «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 88:

որ «միապետի սատրապը» եկել է «ձեռքին բռնած ձիթենու շինծու և կեղծ ճյուղը՝ իբրև նշան հաշտության», գալիս է խաբելու և խաղաղեցնելու Կովկասը, որը կենաց ու մահվան պայքարի մեջ է: Նա եկել է գահի հետ հաշտվելու կոչերով: Հաշտվեցե՛ք, ասում է նա, որովհետև՝ վրացինե՛ր, ձեզ տալիս եմ մի ողորմելի զեմստվո, որից Ռուսաստանի ներքին նահանգները զզված են, որովհետև այդ գյուղական ինքնավարության գլխին դրված է ադմինիստրացիայի և ժանդարմերիայի հրեշավոր կամայականությունը: Հայե՛ր, հաշտվեցե՛ք, որովհետև խոստանում եմ վերաքննել տալ ձեզանից խլված եկեղեցական կալվածքների գրավման, գուցե և ծխական դպրոցների փակման բարձրագույն հրամանները...:

Բայց չէ՞ որ դա ծաղր է ազատագրության դրոշ պարզած ժողովուրդների համար: Հայ և վրացի երեք միլիոնանոց բնակչությունը պահանջում է ոչ թե մի քանի ողորմելի խոստումներ, այլ «ներկա բռնապետական կարգերի արմատական փոփոխություններ», «Կովկասի համար լիակատար ինքնավարություն»:

Այնուհետև ժողովրդին ուղղված ծանուցում-թռուցիկի մեջ դառնաղի խոսքերով նշավակված էին նրանք, ովքեր նոր փոխարքայի մեջ տեսնում էին մի մարդու, որը կարող է բեկում մտցնել կովկասյան ժողովուրդների կյանքում: «Եվ գտնվեցին հայ ու վրացի հասարակությունների մեջ սողուններ ու ողորմելի գրչակներ, որոնք այդ նոր սատրապի ջրիկ խոստումները մե՛ծ շնորհ համարեցին, ներբողներ ու գովաբանական հոդվածներ նվիրեցին: Եվ գտնվեցին հայ բուրժուաներ, վրացի ազնվականներ ու երկու ազգերի հոգևորականներ», որոնք փոխարքային ընդունեցին հրճվանքով ու հանդիսավոր ծեսերով:

Ծանուցման վերջում Հ.Ց.Դ. կովկասյան պատասխանատու մարմինը հետևյալ դիմումն էր հղում.

«Ժողովու՛րդ, հարկերի բեռան տակ հեծող, սակավահող, մայրենի լեզվիցդ զրկվելու դատապարտված, ազգային ինքնասիրությունդ վիրավորված հայ ժողովու՛րդ, մի՞թե դու թույլ կը տաս, որ աղաներն ու հոգևորականները քո անունից խունկ ծխեն բռնապետի նոր սպասավորներին և քո անունից նրան ընդառաջ գնան ու փառքով ընդունեն: Ոչ մի ընդունելություն չես կարող անել քո բռնավորի, հարստահարողի և կեղեքողի ներկայացուցչին: Դոնդուկովներ, Շերեմետևներ, Գոլիցիններ են եկել ու գնացել: Ամենքն էլ եկել են բազմաթիվ խոստումներով, ամենքն էլ խաղաղության պատգամներ են բերել հյուսիսի բռնակալի որջից. և ժողովուրդը, խաբված այդ խոստումներից, օվսաննաներով է ընդունել նրանց, բայց վերջը...: Վերջը հուսախաբված՝ նզովքով ու անեծքներով է ճանապարհ գցել նրանց: Մեր հիշողության մեջ դեռ թարմ են այդ արյուն-արցունք բերած օրերը, և կրկին խաբվել անկարելի է:

Մենք պահանջում ենք, որ մեր երկրի օրենքները ժողովուրդը ինքը որոշե, մեր երկրի օրենքի բախտը ժողովուրդն ինքը տնօրինե և ոչ թե Պետերբուրգից եկած սատրապները»[1]:

Թեև կովկասյան հասարակության ամենատարբեր խավերն ու քաղաքական ուժերը Վորոնցով-Դաշկովի մասին արտահայտում էին ամենաայլազան, շատ դեպքերում տրամագծորեն հակառակ թեր և դեմ կարծիքներ ու տեսակետներ, բայց նորանշանակ փոխարքան Կովկաս էր եկել «իբրև չեզոք անձ, առանց կանխակալ համակրանքի և հակակրանքի»: Համենայն դեպս այդպես էր փորձում ներկայանալ ինքը, և այդպես էր նրան ներկայացնում բյուրոկրատական շրջապատը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՈՏ

Ժամանելով Թիֆլիս՝ կոմս Վորոնցով-Դաշկովն իր առաջին անհետաձգելի գործերից մեկը համարեց երկրամասի կյանքին, այնտեղի ժողովուրդների պատմությանը, քաղաքական կազմակերպությունների ծրագրերին ու նպատակներին ծանոթանալը: Թեև քաջատեղյակ էր կայսրի տեսակետներին, բայց ցանկանում էր երկրամասի ժողովուրդների, նրանց ազգային ձգտումների մասին ունենալ սեփական կարծիք: Այդ նպատակով կոմսն իր շուրջը համախմբեց մարդկանց, որոնց ակնոցները ոչ սև էին և ոչ էլ վարդագույն: Սրանց միջոցով նա ծանոթացավ և համեմատաբար կարճ ժամանակամիջոցում պատկերացում կազմեց երկրամասում ստեղծված իրավիճակի մասին: Ժամանակի ընթացքում փոխարքան մշակեց սեփական, հաճախ նաև կայսրի պատկերացումներին հակառակ կարծիքներ ու տեսակետներ: Դրանով պետք է բացատրել, որ փոխարքայի պաշտոնը ստանձնելուց ընդամենը ամիսներ անց պետերբուրգյան բարձր շրջաններում սկսեցին Վորոնցով-Դաշկովի դեմ նյութել զանազան դավեր, կատարել զրպարտություններ:

1905թ. մայիսի վերջերից փոխարքան ձեռնարկեց հանդիպումներ երկրամասի հիմնական ազգերի ներկայացուցիչների հետ, որոնց նպատակն էր «պարզել անկարգությունների ու խառնաշփոթի պատճառները» և «փնտրել հանգստությունը վերականգնելու ուղիներ»:

Առաջինը փոխարքայի մոտ գնաց ռուս պատվիրակությունը: Թեև այն ներկայացավ Կովկասի ռուս բնակչության անունից, բայց իր կազմով ու առաջադրած հարցերով իրականում ներկայացնում էր երկրամասի ռուս բուրժուազիային: Պատվիրակներից ոմանք բանն այնպես ներկայացրին, թե Կովկասում ոտնահարվում են ռուսների, հատկապես արդյունաբերողների և առևտրականների շահերը: Նրանք իրենց ասածները փորձում էին հիմնավորել՝ հիմնականում վկայակոչելով Բաքվում նավթարդյունահանմամբ զբաղվող ռուս կապիտալիստների եկամուտների, իբր, գնալով նվազումը, մյուս կողմից՝ տեղացի թուրք և, հատկապես, հայ արդյունաբերողների կապիտալի տեսակարար կշռի մեծացումը: Նրանց բողոքների մյուս մասը վերաբերում էր երկրամասում քաղաքական և քրեական հանցագործությունների, հատկապես մարդասպանությունների թվի աճին՝ շեշտադրելով այն, որ սպանությունների զոհեր են դառնում նաև ռուսներ:

Հանդիպման ընթացքում ռուս պատվիրակությունը վախկոտ ստորաքարշության և ծառայակամության օրինակ տվեց:

Ռուս պատվիրակությանը հաջորդեց վրացականը, որը, աննշան բացառությամբ, կազմված էր ազնվականներից: Հանդիպման սկզբում փոխարքան նրանց հավաստիացրեց, որ միապետը և կառավարությունը վրաց ազնվականությանը համարում են Կովկասում ներքին կայունության պահպանման գլխավոր երաշխավորը: Այնուհետև նա ափսոսանք հայտնեց, որ վրաց գյուղացիների որոշ մասը, ինչպես, օրինակ, Գուրիայում, ընկել է հեղափոխական քարոզների ազդեցության տակ, ապստամբել է և չի ճանաչում ո՛չ ազնվական կալվածատերերի և ո՛չ էլ կենտրոնի իշխանությանը:

Պատվիրակները բարձրացրին Վրաստանի ինքնավարության հարցը, որին փոխարքան պատասխանեց, թե կառավարությունը սկզբունքորեն դեմ չէ այդ պահանջին, բայց խնդիրը կարիք ունի հանգամանորեն քննարկման և ինքնավարության հետ կապված մի շարք մութ կետերի պարզաբանման:

Թեև հանդիպման վերջում վրացի պատվիրակությունը փոխարքային հավաստիացրեց, թե վրաց ժողովուրդը հավատարիմ է գահին, բայց, ի տարբերություն ռուս պատվիրակների, իրեն պահեց արժանապատվորեն:

Կարելի էր ենթադրել, որ գոնե Ռուսաստանի ճնշված ազգերից մեկի՝ հայ ազգի բուրժուազիան ցարի հանդեպ իր գետնամած ստորաքարշությամբ ինչոր չափով կտարբերվի ռուս բուրժուազիայից: Բայց, ինչպես սպասվում էր, այդպես չեղավ: Հայ բուրժուազիան կրկին ցույց տվեց, որ նրա համար գրպանի հացը բարձր է ամեն ինչից:

Հունիսի 1-ի առավոտյան ժամը 10-ին փոխարքան ընդունեց հայերի 15 հոգուց բաղկացած պատվիրակությանը[1], *որի մեջ մտնում էին իշխան Ա. Ի. Բեյբուտովը, Պ. Ս. Ղամբարովը, Ս. Ն. Իսանիսյանը, Ա. Ա. Քալանթարը, Ի. Ս. Սպենդիարովը, Գ.Ն. Ստեպանովը, Ա. Ի. Խատիսովը (Թիֆլիս), Ս. Ս. Հարությունովը, Կ. Ի. Խատիսովը (Բաքու), Լ. Ս. Սարգսյանը (Նախիջևանի գավառ), Ս. Ս. Աֆանասևը (Ելիզավետպոլ), Ի. Ցա. Սաղաթելյանը և Ս. Ֆ. Տիգրանյանը (Երևանի նահանգ), Ա. Ա. Մելիք-Ազարյանը (Շուշի), Տեր-Միրաքյանը (Ալեքսանդրապոլ)*[*]:

[1] «Մշակ», N 85, 6 մայիսի 1905թ.:

[1] Մանրամասն տե՛ս «Մուրճ», N 9, սեպտեմբեր, 1905թ., էջ 169-178, «Մշակ», N 109, N 110, 1905թ.:

[*] Անուն-հայրանունների սկզբնատառերի և ազգանունների տառադարձությունը այս դեպքում պահպանված է այնպես, ինչպես կա արձանագրության մեջ:

Սիրալիր զրույց սկսելով՝ Վորոնցով-Դաշկովը հետաքրքրվեց հայ բնակչության կարիքներով. հայտարարեց, թե չուտով վերանայվելու են հայ եկեղեցու ունեցվածքի օտարման, հայկական դպրոցների և մարդասիրական ընկերությունների փակման մասին նախկինում ընդունված օրենքները. խոստացավ վերացնել **հայերին պետական ծառայության մեջ ընդունելու սահմանափակումները**. վճռականորեն շեշտեց, թե Անդրկովկասի բոլոր վայրերում անմիջապես կանխվելու են մարդկանց հանգիստը խանգարող երևույթները, այդ թվում անօրինական խուզարկումները. մեղավոր անձինք, ովքեր էլ լինեն նրանք, խստորեն պատժվելու են. վերակազմավորվելու է Բաքվի ոստիկանությունը. այսուհետև ազատ հողերը տրվելու են միայն տեղաբնակներին:

Դիմելով ներկաներին՝ փոխարքան խնդրեց «Բարոյական լայն ազդեցություն գործել կոմիտեների վրա», որոնց «գործունեությունը խանգարում է բարենորոգումների իրականացմանը»: Վերջում նա հայտարարեց, որ իր «պալատի դռները լայն բաց են բոլոր նրանց համար, ովքեր իրեն տեղյակ կպահեն բնակչության կարիքների մասին»:

Պատվիրակության անդամներից Սամսոն Հարությունյանը հանդիպման ժամանակ այն միտքն էր հայտնել, թե հայ-թաթարական ընդհարումների մեջ կառավարությունը որևէ մեղք չունի, և որ եթե տեղական ոստիկանությունը լիներ իր բարձրության վրա, ապա կոտորածներ ու ավերներ չէին լինի: Դրանից հետևում էր, որ ամբողջ Ռուսաստանում սևհարյուրականների կողմից սանձազերծած բռնությունները նույնպես տեղական իշխանությունների գործն է, նրանց ապաշնորհ աշխատանքի հետևանքը: Ս. Հարությունյանը հույս էր հայտնել, որ «այսուհետև վարչական և ոստիկանական իշխանությունները կանգնած կլինեն իրենց կոչման բարձրության վրա և կվաստակեն ժողովրդի հավատը»:

Պատվիրակությունը հավանություն էր տվել այդ տեսակետին, ասելով, որ միապետությունը լավ է, վատ էին Գոլիցինները և Նակաշիձեները, որ կառավարությունն արդեն ուղղել է սխալները՝ Կովկասի փոխարքա նշանակելով մի մարդու, որը «հույս ու հավատ է ներշնչում հայերին»: Նոր փոխարքան, ասում էր Ալ. Խատիսյանը, կարճ ժամանակում արդեն ցույց է տվել, որ բռնել է այն ուղղությունը, ըստ որի Կովկասի ժողովուրդները մեծ և հզոր Ռուսաստանի խորթ զավակները չեն, այլ միևնույն գահի հավատարիմ հպատակները, միևնույն երկրի քաղաքացիներ՝ արժանի վայելելու համահավասար իրավունքներ կայսրության մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին:

Զրույցի ժամանակ փոխարքան հարցրել էր, թե ինչու Տաճկահայաստանում գործելու համար ստեղծված Հայ հեղափոխական կուսակցություններն իրենց կոմիտեների գործունեությունը տեղափոխել են նաև Անդրկովկաս: Պատվիրակության անդամներն ասել էին, որ իրենք կոմիտեների գործունեությանը տեղյակ չեն, հետևապես չեն կարող այդ հարցին պատասխան տալ, առավել ևս իրենց հայտնի չէ, թե «որտեղ են նրանք»: Միաժամանակ հույս էին հայտնել, որ կոմիտեները կթողնեն Անդրկովկասը, եթե «վերականգնվեն հայերի եկեղեցական և ազգային իրավունքները», այսինքն՝ եթե հայ եկեղեցուն վերադարձվեն նրա կալվածքները, վերացվի արգելքը դպրոցների և բարեգործական հաստատությունների վրայից:

Կ. Խատիսյանը, իբրև Բաքվի բուրժուազիայի ներկայացուցիչ, փոխարքային իր ընտրողների կողմից խոնարհաբար խնդրել էր ազդել Բաքվի իշխանության վրա այնպես, որ նա համոզվի, թե կառավարության առաջ բոլորն էլ հավասար են, քանի որ Ռուսաստանի օրենքները հավասարապես պաշտպանում են բոլոր քաղաքացիների իրավունքները: Բայց Դաշկովի համար ամենաանիրագործելի խնդիրը հենց դա էր, քանզի Ռուսաստանի բոլոր օրենքները հիմնված էին ոչ միայն դասակարգային, այլև ազգային անհավասարության վրա:

---

* 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ հայության նկատմամբ բացահայտ խտրականության քաղաքականությունը ցայտուն արտահայտություն էր գտել նաև կադրերի ընտրության և պաշտոնների նշանակման գործում: Խիստ սահմանափակված էր հայերին պետական ծառայության մեջ ընդունելու հնարավորությունը: Կայսրության մեջ, այդ թվում Կովկասում, բնականաբար, պետական բարձր, միջին, նաև ցածր պաշտոնները վարում էին հիմնականում ռուսները: Անդրկովկասում պետական պաշտոնների թվում վրացիները բռնում էին երկրորդ տեղը: Նրանց թիվը մեծ էր նաև զինվորական բարձր պոստերում: Բաքվի նահանգապետը Նակաշիձեն էր, Գանձակինը՝ Տակայշվիլին, Զանգեզուրի գավառապետը՝ Ավալյանին և այդպես շարունակ: Պաշտոնյաների (հատկապես բարձր) թվով գերմանացիները և լեհերը կայսրության մեջ գրավում էին երկրորդ տեղը: Զտարյուն գերմանացիները զբաղեցնում էին ռուսաց կառավարության շատ կարևորագույն պոստեր, ինչպես օրինակ՝ նախարարների խորհրդի նախագահ բարոն Ֆոն Շտյուրմերը, արքունիքի նախարար բարոն Ֆրեդերիքսը, ցարի առաջին խորհրդական բարոն Նոլդեն, արտաքին գործերի նախարար կոմս Լամզդորֆը, ֆինանսների նախարար Ֆոն Վիտտեն, ներքին գործերի նախարար Ֆոն Պլևեն, կայսրության ժանդարմերիայի պետ Ֆոն Վալը, դեսպաններ Գիրսը՝ Թուրքիայում, Բենկենդորֆը՝ Անգլիայում և այլոք:Նույնպիսի պատկեր էր բանակում և ռազմածովային նավատորմում: Գերմանացի գեներալների և ադմիրալների թիվը առանձին բանակներում մոտենում էր ռուս բարձրաստիճան զորականների թվին: Արքունիքում մեծ ազդեցություն ունեին Ռենենկամպֆը, Սպասնելերը և ուրիշներ: Կովկասի բարձրագույն և բարձր պաշտոնության մեջ գերմանացիները գրավում էին երրորդ տեղը: Այստեղ ժանդարմերիայի շեֆը ֆոն Բասմգարդտն էր, Կովկասի դատաստանական պալատի նախագահը՝ Ստրուվեն,դատախազը՝ Լիմմերմանը, Թիֆլիսի նահանգապետը՝ բարոն Ռաուշ ֆոն Տրաուբենբերգը, Երևանի նահանգապետը՝ կոմս ֆոն Տիզենհաուզենը, Գանձակի նահանգապետը՝ Լացաուն, Բաքվի գեներալ-նահանգապետը՝ Ֆրեզեն, Թիֆլիսի ոստիկանապետը՝ Ցիսը: Էջմիածնի, Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառապետերն էին՝ գնդապետ Շմերլինգը, Ադոլֆ Վանդերլոն, գնդապետ Էնկելը: Էջմիածնի սինոդի դատախազն էր Ֆրենկելը: Անգամ փոքրիկ սահմանային Ջուլֆա ավանի ժանդարմերիայի պետը Շտրաուբեն էր, կայազորի պետը՝ Վագները, ոստիկանապետը՝ Նորդբերգը: Կովկասյան Թուրքերը չորրորդ տեղում էին: Նրանց թիվը հատկապես մեծ էր ոստիկանության մեջ (Բաքվի և Գանձակի նահանգներում նրանք գերակշռում էին գերմանացիներին ու վրացիներին առանձին-առանձին): Ինչ վերաբերում է հայերին, ինչպես ասվեց, Անդրկովկասի պետական պաշտոններում նրանց կարելի էր մատների վրա հաշվել:

Վորոնցով-Դաշկովի մոտ հայկական պատգամավորության ընդունելությունը տևել էր ավելի քան մեկ ժամ: Թիֆլիսից նույն օրը էջմիածին հղած հեռագրում ուրախություն էր հայտնվում տեղի ունեցածի առթիվ: «Պատգամավորությունը, խորապես զգացված սրտառուչ ընդունելությունից, փոխարքայական պալատից հեռացավ՝ անհուն երախտագիտությամբ կոմսի հանդեպ»[1], - ասված էր հեռագրում:

Ս.-դ. բանվորական հայ կազմակերպության օրգան «Սոցիալիստ» թերթը այդ կապակցությամբ գրում էր. «Հայ բուրժուազիան յուր ինտելիգենցիայով մի ավելորդ անգամ եկավ ապացուցելու, որ պրոլետարիատը ոչ մի հույս չը պիտի դնե այդ խաբեբա և էգոիստ դասակարգի վրա: Պրոլետարիատի ազատության գործը՝ որ ազգության ուզում է պատկանի, յուր բազուկների գործն է: Շարունակ միայն պրոլետարիատի արյունն է, որ թափվելու է փողոցներում, բարիկադների վրա, մինչև որ ձեռք կբերվի ցանկալի ազատությունը»[2]: Անդրադառնալով Ս. Հարությունյանի և Ալ. Խատիսյանի ելույթներին՝ նույն թերթը մի ուրիշ՝ «Հայ պատգամավորությունը Դաշկովի մոտ» հոդվածում շեշտում էր. «Հունիսի 1-ին Դաշկովին ներկայացած հայ բուրժուազիայի պատգամավորությունը ցույց տվեց զինքն ավելի ծառայողական, ավելի վախկոտ և ծախու, քան ռուսականը: Նա մի ավելորդ անգամ ցույց տվեց, որ ընդունակ է դաշն կապել ոճրագործ ցարիզմի հետ»[3]:

Հունիսի 1-ին փոխարքա Վորոնցով-Դաշկովն ընդունեց նաև թուրք բեկերին, որոնք մահմեդական բնակչության կողմից նրան ներկայացրին ուղերձ և խնդրագիր: Ընդունելությունը սիրալիր էր, սրտագին և հովանավորող: Ներկայացնելով իրենց պահանջները՝ բեկերը միաժամանակ կանգ առան Երևանյան նահանգի վերջին արյունահեղ ընդհարումների վրա՝ չարամտությամբ ամեն ինչում պատասխանատու համարելով հայերին, մոռացության տալով թուրքական վանդալիզմի անհերքելի փաստերը՝ այրված գյուղերը, թալանի ու կրակի մատնած տները, կոտորածն ու բռնի կրոնափոխությունը:

Փոխարքան, կողմնապահությամբ տարված, պաշտոնապես հայտարարեց, թե ինքը կատարելապես գոհ է մահմեդականներից, գնահատում է նրանց առաքինությունները և լավ գիտե, որ ընդհարումների պատճառը նրանք չեն: Այդ պաշտոնական կարծիքը ընդհանուր զարմանք պատճառեց ամենուր:

Թուրք պատգամավորները, մանավանդ նրանք, որոնք շատ տխուր դեր էին կատարել ընդհարումների ժամանակ, հանդիպումից վերադարձան խրոխտ ու ավելի համարձակ: Հայ գործիչներից մեկը նկատում էր. «Փոխարքան դավաճանեց իր պաշտոնին և պարտականությանը: Այսօրվանից սկսած՝ պատասխանատվությունը ամբողջապես ընկնում է նրա վրա»[4]:

[1] ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ.66, թ.11:
[2] «Սոցիալիստ», N 9 (162), 9(22) օգոստոսի 1905թ.:
[3] Նույն տեղում, N 10(163), 1(14) սեպտեմբերի 1905թ.:
[4] «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, էջ 115:

ՆԻԿՈԼԱՅ II -Ի 1905Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ: ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒՅԳԻ ՈՒ ԿԱՎԱՍԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ: ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Ռուսաստանում ապրող բազմաթիվ ազգեր՝ լեհերը, ֆիններն, լատիշները, առաջին անգամ հանդես էին գալիս իրենց ազգային պահանջներով: Մայրաքաղաքի մամուլը հավանություն էր տալիս այդ պահանջների զգալի մասին և կառավարությանը կոչ էր անում զբաղվել այլազգիների խնդիրներով: Թե՛ վերջիններիս անօրինակ քաղաքական ակտիվությունը և թե՛ ռուս հասարակական կարծիքի դրական վերաբերմունքը այդ պահանջների նկատմամբ՝ չտեսնված երևույթ էր Ռուսաստանում:

Անդրկովկասի սահմաններում ապրող ժողովուրդները նույնպես, գլխավորապես վրացիներն ու հայերը, փորձում էին ձևակերպել իրենց պահանջները:

Իր տված խոստման համաձայն, Վորոնցով-Դաշկովը փոխարքայության «բոլոր հասարակական ուժերի օգնությունը ստանալու համար» սկսեց առանձին-առանձին հրավիրել վրաց, հայ, թուրք ազգաբնակչության ներկայացուցիչների ժողովներ:

Ա. Գյուլխանդանյանը այդ առթիվ գրել է.

«Ի՞նչ էին այդ բոլորը: Մի՞թե հեղափոխության հաղթանակը չէր այս, երբ մի կողմից ժողովրդական ըմբոստությունն էր ուժեղանում, իսկ, մյուս կողմից, ահա, Կովկասի փոխարքան ինքն է այժմ **ցանկանում հասարակական ուժերի աջակցությունը:** Նա ցանկանում է պետական գործերի մեջ մասնակից անել և Կովկասում ապրող ժողովուրդներին, հրավիրել **ներկայացուցչական ժողով և կատարել հողաբաժանում:** Այս բոլորն այնպիսի նորություններ էին, որոնց նմանը ոչ միայն չէր տեսել, այլև չէր **երազել** և ոչ մի լավատես մարդ Ռուսաստանում ու Անդրկովկասում»[1]:

Եթե վրացիների պահանջների արտահայտիչները վրաց ազնվականության ներկայացուցիչներն էին, ապա հայկական պահանջների առաջադրումն ու ձևակերպումը կատարվեց հնարավորին չափ ժողովրդավարական սկզբունքով: Հայաբնակ 24 վայրերից եկած ներկայացուցիչներ, համախմբվելով Թիֆլիսում, մշակեցին իրենց պահանջները: «Իհարկե, - նշել է Գյուլխանդանյանը, - այդ ներկայացուցիչները չէին ընտրված բոլոր կանոններով, բայց սա մի մեծ առաջադիմություն էր՝ համեմատած նախկին դրության հետ, երբ մեկ կամ մի քանի միանգամայն անկոչ անձնավորություններ իրենց համարում էին հայոց ազգի ներկայացուցիչներ: Սա առաջին անգամ էր, որ հայ ազգի ինքնակոչ ներկայացուցիչների տեղ հրապարակ էին իջնում զանազան շրջաններից եկած ներկայացուցիչներ և ընդհանուր ձևով մշակում էին հայ

[1] «Հայրենիք», N 6(78), ապրիլ, 1935թ., էջ 122:

ժողովրդի պահանջները»[1]: Այդ պահանջները «թեև շատ համեստ էին ..., սակայն այն ժամանակների համար դա պետք էր մեծ նվաճում համարել»:

Հայկական պահանջներից կարևորագույններն էին՝ Անդրկովկասում մտցնել տեղական լայն ինքնավարություն, երդվյալների դատարան, վերացնել դասակարգային առանձնաշնորհումները, հավասարեցնել կանանց ու տղամարդկանց իրավունքները, ազդարարել խոսքի, ժողովների, համախմբումների ազատություն, վերացնել գրաքննությունը, մտցնել ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական ուսուցում, Թիֆլիսում բացել համալսարան երկու սեռի անձանց համար, ինչպես նաև Անդրկովկասի տարբեր վայրերում հիմնադրել բարձրագույն մասնագիտական դպրոցներ, հայ ծագում ունեցող մանուկների համար տարրական դպրոցներում հայերենը դարձնել պարտադիր, իսկ հայկական միջավայրում գործող պետական դպրոցներում մտցնել հայոց կրոնի, հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցում, վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրավունքները, վերացնել նրա առջև դրված բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները, հայկական եկեղեցուն վերադարձնել նրա ծխական դպրոցները և կալվածքները՝ վերացնելով 1884-1903թթ. ընկած ժամանակաշրջանի բոլոր օրենքներն ու կարգադրությունները, որոնք վերաբերում են թե՛ ծխական դպրոցներին և թե՛ այդ դպրոցների ու հայոց վանքերի, եկեղեցիների ու հոգևոր դպրոցների կալվածքներին, նախադաս իրավունք տալ տեղական սակավահող և անհող գյուղացիներին բնակվելու արքունական ազատ հողերի վրա՝ Անդրկովկասի սահմաններում, վերացնել ռուսաց հպատակություն ընդունած թուրքահայ գաղթականներին վերաբերող սահմանափակիչ և բացառիկ օրենքներն ու կառավարչական կարգադրությունները և նրանց ուրիշ հպատակների հետ հավասար իրավունք տալ հողաբաժիններ ստանալու Անդրկովկասում, խաղաղ ժամանակ հայ զինվորների ծառայությունն անցկացնել Կովկասի սահմաններում, վերադարձնել վարչական իշխանությամբ աքսորված հայերին, ներում շնորհել քաղաքական և կրոնական գործերի համար տուժած բոլոր անձանց և այլն[2]:

Այս պահանջների մեծ մասը դրական ընթացք չստացավ ոչ 1905-ին և ոչ էլ հետագա տարիներին, երբ վրա էր հասել Ստոլիպինյան դաժան ռեակցիան: Բայց հայության որոշ պահանջներ, այնուամենայնիվ, բավարարություն ստացան: Դրանց թվում ամենակարևորը հայ եկեղեցու հետ կապված ծանր խնդիրների դրական լուծումն էր:

1903թ. հունիսի 12-ի օրենքի գոյությունը շարունակում էր հուզել հասարակական միտքը ոչ միայն հայերի շրջանում, այլև ռուսական մամուլի էջերում, քաղաքական գործիչների ու գիտության մարդկանց մոտ: Նույնիսկ

[1] «Հայրենիք», N 6(78), ապրիլ, 1935թ., էջ 123:
[2] Նույն տեղում, էջ 123-124:

ցարական կարգերին անվերապահորեն նվիրված ռուս պաշտոնյաների թվում կասկածներ էին ծագում օրենքի ճշմարտացիության նկատմամբ:

Այսպես, միապետության ջերմ պաշտպաններից մեկը՝ Վ. Գ. Պոգոժևը, որ լավ ծանոթ էր Կովկասի պայմաններին, իր «Կովկասյան ուրվագծեր» աշխատության մեջ հայ եկեղեցու գույքի, կապիտալների և կալվածքների հարցունիս գրավումը համարում էր «անարդար և քիչ նպատակահարմար»[1]:

Վեհափառ կաթողիկոսի հրամանով 1905թ. հունվարի սկզբին Պետերբուրգ ուղևորվեց մի հատուկ պատգամավորություն, որը հայկական եկեղեցու հարցերով պետք է հանդիպումներ ունենար պետության բարձրագույն պաշտոնատար անձանց հետ:

Պատգամավորության անդամներն էին Բեսարաբիո առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանը և Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը[2]: Ժամանելով մայրաքաղաք՝ նրանք հանդիպումներ ունեցան Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչի, ներքին գործերի մինիստր Բուլիգինի, Կովկասի փոխարքա նշանակված, բայց դեռ Պետերբուրգում գտնվող կոմս Վորոնցով-Դաշկովի, մինիստրների խորհրդի նախագահ Վիտտեի, բարոն Բուդբերգի և պետական ուրիշ ազդեցիկ անձանց հետ:

Մարտի 22-ին Մեսրոպ վարդապետը Պետերբուրգից հեռագրով հաղորդում էր Թիֆլիս.

«Այսօր մենք ներկայացանք Կովկասի փոխարքային: Ընդունելությունը շատ սիրալիր էր: Հունիսի 12-ի հրամանը կվերաքննվի, աքսորված հոգևորականների հարցը կվերանայվի և ըստ կարելվոյն նրանք կվերադարձվեն: Կկարգավորվի դպրոցական հարցը»[3]:

Վորոնցով-Դաշկովի հետ հանդիպումը շատ արդյունավետ եղավ հետևանքների տեսակետից: Էջմիածնի պատվիրակների հետ հանդիպումից և երկար զրույցից հետո փոխարքան մի ընդարձակ նամակ գրեց ցարին՝ ներկայացնելով իր առաջարկները հայ եկեղեցու հետ կառավարության ունենալիք փոխհարաբերությունների մասին:

Հայ ժողովուրդը, գրում էր Վորոնցով-Դաշկովը ցարին, որը չի ճանաչում հոգևորականությանը որպես դաս և հոգևոր անձանց ընտրում է իր իսկ միջավայրից, զուտ պատմական նշանակություն ունեցող պատճառներով սերտորեն կապված է իր հոգևորականության շահերի հետ՝ նույնիսկ անկախ կրոնական հայացքներից: Ուստի եկեղեցական ունեցվածքների բռնագրավումը և հանձնումը պետական տնօրինության՝ վիրավորել է ժողովրդի բարոյական զգացմունքը և նետել հեղափոխական շարժման մեջ գրեթե բոլորին, առանց

[1] В. П. Погожев, Кавказские очерки, стр. 410.
[2] Տե՛ս «Արարատ», N 1, հունվար, 1906, էջ 15:
[3] «Մշակ», N 53, 24 մարտի 1905թ.:

դասակարգերի ու դիրքերի խտրության: ... Ցավոք, նշում էր նա, տեղական ադմինիստրացիան չէր ցանկանում տեսնել չարիքի հիմնական պատճառը և միայն պատժիչ միջոցներ էր կիրառում ձերբակալելով և արտաքսելով երկրամասից այն բոլոր հայերին, որոնք բացահայտորեն արտահայտում էին իրենց բողոքն ունեցվածքների բռնագրավման դեմ: Դրանով իսկ այդ ադմինիստրացիան նրանց ավելի ու ավելի էր հրում դեպի դժգոհների շարքերը: Դրանց կարելի է հետ բերել և լիովին անջատել հեղափոխականներից՝ թույլ տված սխալները ընդունելու և իրավիճակը շտկելու միջոցով,[1] – այսպիսի առաջարկով էր իր նամակը վերջացնում նորանշանակ փոխարքան:

Անշուշտ, Վորոնցով-Դաշկովի նամակը կարևոր նշանակություն ունեցավ հայ եկեղեցու նկատմամբ կայսրի և կառավարության դիրքի փոփոխության համար:

1905թ. առաջին կեսին, թուրք-հայկական ընդհարումների եռուն օրերին, Պետերբուրգում կառավարական այրերը քննում, տալիս-առնում էին հայ եկեղեցու խնդիրը:

Մայիսի 5-ին Թիֆլիս ժամանելուց հետո փոխարքան ուշադիր հետևում էր մայրաքաղաքում հայ եկեղեցու շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը և նամակներով շարունակում էր հարցի վերաբերյալ արտահայտել իր տեսակետը՝ հայ ժողովրդի հանդեպ նախկին թավշյա քաղաքականությանը վերադառնալու անհրաժեշտության մասին[2]:

Հունիսի 22-ին էջմիածնից Թիֆլիս ուղևորվեց վեհափառ հայրապետը: Նրա նպատակն էր այցելել Կովկասի փոխարքային, անձամբ շնորհավորել նրա գալուստը և փութացնել եկեղեցական կալվածքների ու դպրոցների վերաբացման խնդիրը:

Հունիսի 23-ին կաթողիկոսը ժամանեց Թիֆլիս: Կայարանում նրան ողջունելու էին եկել քաղաքի համարյա ամբողջ հոգևոր դասը, Ներսիսյան դպրոցի հոգաբարձության, բարեգործական ընկերության, մամուլի ու նահանգական իշխանությունների ներկայացուցիչները:

Հաջորդ օրը, ընդունված կարգի համաձայն, Խրիմյանին այցելության եկավ Թիֆլիսի նահանգապետը և քաղաքագլուխը՝ մի քանի ձայնավորների հետ: Կիրառելով հիերարխիական սկզբունքը՝ կաթողիկոսի անունից նահանգապետին և քաղաքագլխին փոխադարձ այցելության գնացին նրան ուղեկցող հոգևորականները:

Հունիսի 25-ին փոխարքան արտակարգ հանդիսավորությամբ ընդունեց Խրիմյան կաթողիկոսին:

[1] Տե՛ս "Российский государственный исторический архив в Санкт-Петербурге" (այսուհետ՝ РГИА СПб), Ф -2116, д.130.
[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237[III], վավ. 95, թ. 3:

Հայոց հոգևոր պետին դիմավորելով փոխարքայի պալատի աստիճաններին՝ Վորոնցով-Դաշկովը նրան առաջնորդեց ընդունարան: Կայսեր և նրա տոհմին արևշատություն մաղթելուց հետո կաթողիկոսը հույս հայտնեց, որ «պայծառափայլ, իմաստուն և մարդասեր» միապետը կարգադրելու է եկեղեցական սպասվելիք խնդիրների լուծումը: Իր հերթին փոխարքան չզլացավ հաճոյախոսել՝ հարցնել կաթողիկոսի առողջական վիճակից, ապա խոստացավ փոխադարձ այցելության գալ էջմիածին և միայն ցավ հայտնեց, որ, չտիրապետելով հայոց լեզվին, զրկված է լինելու մատենադարանի ձեռագրերը և մանավանդ «նորին սրբության բանաստեղծական գրվածքները կարդալու հաճույքից»[1]:

Այնուհետև փոխարքան գործնական ջերմ զրույց սկսեց կաթողիկոսի առաջ քաշած խնդիրների շուրջ[2] և հույս հայտնեց, որ բարձրացված հարցի լուծումը «չատ չի ուշանա»:

Նույն օրը Վորոնցով-Դաշկովը իր կնոջ հետ այցելության եկավ կաթողիկոսին, որն ընդունեց նրանց Թիֆլիսի հայկական առաջնորդարանի մեծ դահլիճում: Շարունակվեցին փոխադարձ այցելություններ նաև հաջորդ օրը, սակայն ավելի ցածր մակարդակով՝ արդեն փոխարքայի օգնականների և կաթողիկոսի շքախմբի անդամ -եպիսկոպոսների միջև:

Հունիսի 27-ին կաթողիկոսին այցելություն տվեց փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Սուլթան Կրիմ Գիրեյը: Զրույցի թեման դարձյալ կալվածքներն ու դպրոցները վերադարձնելու խնդիրն էր: Կրիմ Գիրեյը հավաստիացրեց, որ մինչև սեպտեմբեր խնդիրը կլուծվի դրականորեն, միայն թե մինչ այդ պետք է ներկայացնել դպրոցների կանոնադրությունը և մշակել դրանց ծրագրերը[3]:

Նիկոլայ II-ի առաջին խորհրդական, պետական քարտուղար Նոլդեին հուլիսի 19-ին հղած նամակում Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Հայկական եկեղեցու և հայ բնակչության հանդեպ երկու տասնյակ տարիների ընթացքում պարբերաբար կիրառվող պատժիչ միջոցառումները, որոնք ավարտվեցին եկեղեցական դպրոցները և գույքը պետական տնօրինությանը հանձնելով, առաջ բերեցին հայ հոգևորականության և բնակչության ընդհանուր դժգոհությունը և հայ հեղափոխական կոմիտեների եռանդուն ահաբեկչական գործունեությունը»: Փոփոխությունների պահանջը հիմնավորվում էր «երկրամասի խաղաղեցման» հասարակական զարգացման նախաձեռնությունը խլելու և ինքնակալության ձեռքում կենտրոնացնելու անհրաժեշտությամբ: «Անհրաժեշտ է ժամանակին ձեռնարկած միջոցներով կանխել բնակչության (Հայ: – Հ.Ս.) հնարավոր բռնկումները, հնարավորություն չտալ նրան, որպեսզի անբարեհույս տարրերը հավատացնեն իրեն, թե բոլոր բարեփոխումները

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 232[բ], վավ. 73, թ. 1:
[2] «Արարատ», N 7-8, հուլիս - օգոստոս, 1905, էջ 604-605:
[3] Նույն տեղում, էջ 605:

կատարվում են սոսկ անկարգությունների ճնշման տակ»[1]:

Իսկ ծերունի Հայրապետը հուլիսի չոգերին մնալով Թիֆլիսում սպասում էր գործի ելքին:

Վորոնցով-Դաշկովը Թիֆլիսից 1905-ի հուլիսի վերջերին կայսրին ուղարկեց նոր նամակ, որով խնդրում էր վերանայել հայ եկեղեցու իրավունքները սահմանափակող նախկինում ընդունված օրենքներն ու տրված հրամանները: Նամակին կցվել էր տվյալ հարցի վերաբերյալ Կովկասի փոխարքայի գրասենյակի վերլուծական զեկույցը:

Իր նամակում փոխարքան ամենից առաջ անդրադարձել էր հայ բնակչության ռադիկալացման պատճառներին վերաբերող հարցին: «Ինչպե՞ս պատահեց, որ սթափ, պրակտիկ, շրջահայաց ժողովուրդը կարողացավ ընկնել հեղափոխության գիրկը»: Իբրև պատճառ դիտարկվել էր ռուսականացման նեղճակատ քաղաքականությունը, որը չէր համապատասխանում ինքնակալության շահերին: «Չի կարելի ապազգայնացնել մի քանի հազար տարի գոյատևող, պատմություն ունեցող, իր հայրենիքում զանգվածաբար ապրող, գլխավորապես հողագործությամբ զբաղվող, ինքնատիպ մշակույթ, գրականություն, թերթեր, թատրոն ունեցող ժողովրդի»[2]:

Պետերբուրգում փոխարքայի բերած փաստարկները և հետևողական դիրքորոշումը համոզիչ ճանաչվեցին: Վորոնցով-Դաշկովի նամակ-զեկույցի տակ 1905թ. օգոստոսի 1-ին ցարը դրեց մակագրություն՝ «Համաձայն եմ»[3]:

Նիկոլայ II ցարի երկար սպասված «Համաձայն եմ» ստորագրությանը հաջորդեց նրա նույն ամսաթվով հրապարակած ուկազը, որով չեղյալ էր հայտարարվում հայ եկեղեցական և վանական կալվածքներն ու գույքը հարկումից գրավելու մասին 1903թ. հունիսի 12-ի իր իսկ ստորագրած հրամանը[4]: Նույն ամսաթվով հաստատվեց դպրոցները և եկեղեցական գույքը հայ ժողովրդին վերադարձնելը վավերացնող կանոնակարգը[5]:

Ռուս միապետը օգոստոսի 1-ի ուկազը ստորագրել էր հայ ժողովրդի հզոր ճնշման տակ: Ռոմանովների 300 տարի տևած դինաստիայի պատմության մեջ դա բացառիկ ակտերից մեկն էր, երբ ինքնակալն ընդունում էր իր իսկ ձեռքով գործած սխալը, որի հետևանքով ազգովին ընդվզել էր ռուսահայ ժողովուրդը՝ վտանգի տակ դնելով Կովկասում ռուսական տիրապետության կայունությունը: Պետերբուրգից օգոստոսի 2(15)-ին Թիֆլիս հղած կառավարական հեռագրի մեջ ասված էր. «Տեղեկացնում ենք, որ թագավոր կայսրը բարեհաճեց զիջել հայոց կաթողիկոսի աղերսանքներին և կովկասյան փոխարքայի միջնորդությանը: Կայսերական հրամանով հայոց եկեղեցական բոլոր կալվածքներն ու գույքերը վերստին դրվում են հայոց եկեղեցու վարչության ներքո»: Միաժամանակ հեռագիրը հաղորդում էր, որ կայսերական նույն հրամանով վերաբացվում են տասը տարուց ի վեր փակված հայ ծխական դպրոցները և այն էլ ոչ թե 1884թ. սահմանափակ, նեղ, ճնշող կանոններով, այլ 1874թ. հաստատված ծրագրով, որը հայերին լայն, ոչ մի կաշկանդում չընդունող, իրավունքներ էր տալիս տնօրինելու սեփական կրթական գործերը[1]: Հրամանում նշվում էր. «Մենք հօգուտ ժողովրդի հայ հոգևորականությանը շնորհում ենք լուսավորական լայն գործունեություն ունենալու միջոցներ»[2]:

Նույն օրը, օգոստոսի 2-ին, Թիֆլիսից վեհափառ Հայրապետը Էջմիածնի սինոդին հաղորդում էր. «Այսօր հրաժեշտի այցելության ժամանակ Նորին Պայծառափայլությունն Տէր Փոխարքան յայտնեց ինձ, որ իւր զեկուցումը կալուածներ վերադարձնելու մասին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաւանութիւն է գտել և հրամանը ստորագրուել: Դպրոցները կը բացուին:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ»[3]:

Կայսերական ուկազի լուրն ստանալուն պես Հայոց կաթողիկոսը Թիֆլիսից ջերմեռանդ աղոթքներով լի հեռագիր ուղարկեց Պետերբուրգ՝ Նիկոլայ II-ին: Վեհը ամբողջ հայության անունից երախտագիտական զգացմունքներ էր արտահայտում կայսրին և կրկին ու կրկին հավաստում Ռոմանովների գահին իր ժողովրդի անհուն նվիրվածությունը[4]:

Կաթողիկոսի հեռագրի պատասխանը չուշացավ: Կայսրը անկեղծ շնորհակալություն հայտնեց վեհափառին՝ հղած զգացմունքների համար[5]:

Հայոց Հայրապետը երախտագիտության հեռագիր ուղարկեց նաև Կիսլովոդսկում բուժվող փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ նրա «արդար միջնորդության համար»[6]: Փոխարքան պատասխան հեռագրով հույս էր հայտնում, որ հայերը կայսրի գթասրտությանը կպատասխանեն գահի նկատմամբ ամենահավատարիմ հպատակությամբ[7]:

Փոխարքան ստացավ նաև Թիֆլիսի հայ հասարակության հեռագիրը, որով նրան տեղյակ էր պահվում, որ օգոստոսի 7-ին Վանքի Մայր եկեղեցում մոտ 20 000 ժողովրդի ներկայությամբ հայոց կաթողիկոսը ջերմ աղոթքներ է առաքել աստծուն՝ թագավոր կայսրի առողջության համար, որը «ամենաողորմածաբար հրամայել է հայոց եկեղեցուն և ազգին լուսավորիչ ընդարձակ ինքնագործունեության միջոցներ տալ և հայոց եկեղեցուն ետ դարձնել եկեղեցապատկան գույքերը ազատորեն տնօրինելու դարերով սրբագործված իրա-

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 290, թ. 6:
[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237ա, վավ. 48, թ.1:
[3] Նույն տեղում, վավ. 52, թ. 2:
[4] Նույն տեղում, վավ. 57, թ.3:
[5] Նույն տեղում, վավ. 58, թ.4:

[1] Տե՛ս «Խարիսխ», N 10, 14 հուլիսի 1907թ.:
[2] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 52, թ.2:
[3] «Արարատ», N 6, հունիս, 1905, էջ 588:
[4] Նույն տեղում, N 9, սեպտեմբեր, 1905, էջ 767:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, N 6, հունիս, 1905, էջ 768:
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 767:

վունքը»[1]: Ժողովրդի անունից փոխարքային փոխանցվում էր խորին երախտիքի զգացում «այդ արդարամիտ ակտին միջնորդ լինելու համար»[2]:

Նույն օրը վեհափառը հատուկ կոնդակով շնորհավորեց ամբողջ հայ ժողովրդին[3]:

Ամենուրեք գոհացողական պատարագներ և կայսերական մաղթանքներ էին կատարվում հայկական վանքերում ու եկեղեցիներում: Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցած մաղթանքի ժամանակ շեշտվեց, որ ամբողջ քսան տարվա տառապանքից ու կրած մեծամեծ զրկանքներից հետո, վերջապես, հնարավորություն է ստեղծվում շարունակել խաղաղ քաղաքակրթական աշխատանքը[4]: Կայսերական մաղթանքներ կատարվեցին Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում,Գանձակում, Շամախիում, Ախալցխայում, Կաղզվանում, Բաթումում, Աստրախանում և բոլոր այլ տեղերում, ուր կար հայություն և հայ եկեղեցի[5]:

Օգոստոսի 1-ի ցարական ուկազը լայն արձագանք ունեցավ Ռուսաստանի բոլոր ծայրերում և գաղութահայության մեջ՝ մեծ ուրախություն և մխիթարություն պատճառելով հայոց եկեղեցու հետևորդներին: Էջմիածնում ստացվում էին հարյուրավոր շնորհավորական հեռագրեր աշխարհի բոլոր ծայրերից՝ օսմանյան կայսրության տարբեր մասերից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Եվրոպայի տարբեր երկրներից, Ամերիկայից[6]:

Եկեղեցական կալվածքները վերադարձնելու առթիվ շնորհավորելով կաթողիկոսին՝ Արշակ Զոպանյանը Փարիզից գրած նամակում կարծիք էր հայտնում, որ ռուսական կառավարությունը դրանով հայությանը հասկացնել է տալիս, թե Անդրկովկասի մահմեդականներին զսպելով դադարեցնելու է Թուրք-հայկական ընդհարումները, ինչպես նաև եվրոպական պետությունների հետ լուծում է տալու հայկական հարցին:

Հայ պահպանողական շերտերի ցնծությունը վարակել էր լիբերալներին և մամուլի նրանց օրգաններին, որոնց էջերը երկար ժամանակ տրամադրվում էին ժողովրդական բուռն ոգևորության ցույցերի նկարագրությանը: Լիբերալները գտնում էին, որ կայսերական հրամանը լուծումն է 1903թ. հունիսի 12-ից հետո հրապարակ եկած այն խնդրի, որ երկու տարուց ի վեր ջղաձգության գիրկն էր նետել մի ամբողջ ժողովրդի:

---

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 237[բ], վավ. 61, թ.2:
[2] Տե՛ս **«Արարատ»**, N 9, սեպտեմբեր, 1905, էջ 769-799:
[3] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 237[բ], վավ. 61, թ.3:
[4] **«Արարատ»**, N 9, սեպտեմբեր, 1905, էջ 800-801:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 801- 804:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 770-771, նաև՝ **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 237[բ], վավ. 37, թ.2, վավ. 49, թ.4:

Ե՛վ պահպանողականները, և՛ լիբերալները ցարի նոր հրամանը դիտելով որպես հայ ժողովրդի նկատմամբ մեծ հոգատարություն՝ միաժամանակ հաստատապես համոզված էին, որ դրան հետևելու են հայանպաստ նոր քայլեր:

Ինչ վերաբերում է հեղափոխական կուսակցություններին, ապա սրանք միանգամայն հակառակ վերաբերմունք դրսևորեցին ցարի նոր հրամանի նկատմամբ:

Սոցիալ-դեմոկրատները Նիկոլայ II-ի 1905թ. օգոստոսի 1-ի հրամանը համարում էին ավելի վտանգավոր, քան 1903-ի հունիսի 12-ի ավազակաբարո հրամանը, քանի որ հայ եկեղեցու ունեցվածքի վերադարձը ուղեկցվում էր ցարիզմի օգտին մղվող ուժգին պրոպագանդայով: Դա ունակ է ժողովրդական զանգվածների մեջ առաջ բերել սին պատրանքներ, թե միապետությունը, վերջապես, կանգնել է կայսրության ոչ ռուս ժողովուրդների ազգային շահերը հարգելու ճանապարհին:

Բոլշևիկները գտնում էին, որ օգոստոսի 1-ի հրամանի համար հայ հոգևորականությունն ու բուրժուազիան զուր են խունկ ծխում ցարի և նրա սատրապների առջև, անսանձ գովերգում տրված ողորմությունը, միաժամանակ հայ ժողովրդին քարոզում սերտ դաշն կապել ինքնակալական ռեժիմի հետ:

1905թ. օգոստոսի 6-ին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հրատարակեց «Բոլոր քաղաքացիներին» թռուցիկը, ուր հայ ժողովուրդը ոչ թե շնորհակալություն պետք է հայտնի Նիկոլայ II-ին, այլ պետք է սերտորեն համախմբվի հեղափոխական պրոլետարիատի շուրջը և վճռական կռիվ մղի խայտառակ ռեժիմի դեմ[1]:

Հայ պահպանողականների և լիբերալների կողմից ցարի նոր հրամանին տված գնահատականները վճռականապես մերժում էին հնչակյան և Հ.Յ. դաշնակցություն կուսակցությունները:

Հնչակյաններն իրավացիորեն գտնում էին, որ 1903թ. հունիսի 12-ի օրենքից Նիկոլայ II ցարի «դարձը» ոչ թե բռնակալության քաղաքականության մեղմացման հետևանք է, այլ այդ օրենքի դեմ հայ ժողովրդի վճռական և տևական պայքարի արդյունք: Սոցիալ-դեմոկրատների նման հնչակյանները նույնպես այն տեսակետին էին, որ ցարական հրամանը նպատակ ունի խաղաղեցնել հայկական բռնկված տրամադրությունները, մեղմել միապետության նկատմամբ ժողովրդի մեջ ամբարված ատելությունը:

Նույնքան անզիջում էր դաշնակցության դիրքը: Նա ողջունում էր երևույթը, բայց գտնում էր, որ իր նոր հրամանով ցարը ոչ թե «շնորհ» է արել հայերին, այլ ստիպված վերադարձրել է այն, ինչ ավազակաբարո բռնագրավել էր:

«Մի՞թե մենք պիտի գովաբանենք այն թշնամուն, որ դեռ երեկ մեզ ոտնակոխ էր անում,- գրում էր «Դրոշակը», - մի՞թե շնորհակալություն և երախտիք պիտի արտահայտենք ամեն մի ավազակի, ոճրագործի, որ երեկ մեր

---

[1] Տե՛ս **«Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ»**, Երևան, 1960, էջ157:

գույքը հափշտակեց, կողոպտեց, կոպիտ վիրավորանք հասցրեց մեզ, իսկ այսօր այդ բոլորը մեզ, իբրև օրինական տիրոջ, կրկին ետ է դարձնում ...»[1]:

Դաշնակցությունը «տգեղ ու չափ ու սահմանից անցնող» էր համարում հայ պահպանողականների ու լիբերալների ցնծությունը: Բայց հատկապես անտանելի էր հայ կղերի գետնամած ստորաքարշությունը և քծնանքը, որը, չափ ու սահման չճանաչելով, անդադրում գովեստներ էր շռայլում ցարին ու նրա ընտանիքին:

Հ.Յ.Դ. Թիֆլիսի կոմիտեն այդ տգեղ երևույթի կապակցությամբ հրատարակած ու տարածած թռուցիկում, դատապարտելով ազգի արժանապատվությունը տրորող հայ եկեղեցականների անզուսպ քծնանքը, գրում էր. «Մենք դատապարտում ենք հայ հոգևոր դասի քծնողական շողոքորթ վարմունքը: ...Նա սովոր է միշտ աղոթել. երեկ աղոթում էր Եհովային ու Նազովրեցուն, այսօր հեշտությամբ կաղոթե ցարի, գուցե և սուլթանի կյանքի համար»[2]:

Կուսակցության մամուլը երիցս կրկնում էր, որ բռնապետության այդ զիջումը հետևանք է հայ ժողովրդի ըմբոստության, նրա զավակների հանդուգն գործողությունների:

Հայ ժողովրդին ուղղված Հ.Յ.Դ. IV կենտրոնական կոմիտեի՝ «Բողոքի արդյունքը» վերնագրով ուղերձում ասված էր.

«... Այսօր մենք տոնում ենք մեր առաջին հաղթանակը: Ո՞ւմ ենք պարտական մենք, ո՞ւմ պիտի բերենք մեր շնորհավորությունները, ո՞ւմ պիտի ուղղենք մեր երախտագիտության զգացմունքները:

Քե՛զ, հայ ժողովուրդ, և միայն Քեզ: Դու էիր, որ պաշտպան կանգնեցիր Քո նվիրական իրավունքներին, Դու քաջություն ունեցար չհնազանդվել դահիճ կայսեր բարձրագույն «բարեհաճության», Դու Քո արյունով բողոքեցիր բռնության դեմ և տարար հաղթությունը»[3]:

«Խոնարհվող թագը» վերնագրով առաջնորդող հոդվածում «Դրոշակը» գրում էր.

«... Արդեն ուշ է: Երկար տարիների անլուր բռնություններից հետո... ցարի կառավարությունը չի կարող նման զիջումներով սպեղանի պատրաստել խորունկ վերքերի համար, մոռացնել տալ այն ողբերգական պահերը, որոնց մասին հիշողությունն անջնջելի է, արձագանքն՝ անմոռանալի:

Զկա հաշտություն»[4] :

Ցարի նոր հրամանն անկարող էր քաղաքական հաշտություն ստեղծել բռնապետության և հայ ժողովրդի միջև: «Զինադադարը դեռ հեռու է, - շեշտում էր «Դրոշակը»: - Մենք չենք ուզում կախված լինել ոչ միապետի

[1] «Դրոշակ», N 10 (163), հոկտեմբեր, 1905, էջ 154:
[2] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ.27, թ.1:
[3] «Դրոշակ», N 10 (163), հոկտեմբեր, 1905, էջ 147:
[4] Նույն տեղում, N 9 (162), սեպտեմբեր, 1905, էջ 129:

քմահաճույքից և ոչ էլ Գոլիցինների կամ Վորոնցով-Դաշկովների տրամադրություններից: Մենք ուզում ենք մեր տերը լինել: Մերը պիտի լինի և՛ դպրոցը, և՛ եկեղեցին, և՛ հողը, և՛ իրավունքը»: «Կարո՞ղ ենք մենք հաշտության ձեռք մեկնել ցարիզմին»,- հարց էր տալիս Թերթը, և ինքն էլ պատասխանում՝ «երբեք»: Թագի խոնարհումը ազատագրական գործի սկիզբն է միայն և ոչ՝ վախճանը: «Խլել այդ թագը միապետի գլխից և այն դնել ժողովրդի գլխին, ջնջել բոլոր հարստահարումները, ապահովել աշխատավոր ու տանջվող ընդհանրության բոլոր կոխկրտված իրավունքները - ահա այդ կը լինի կռվի վախճանը, խաղաղության միակ պայմանը»[1]:

Թերթի խմբագրությունը գտնում էր, որ ոչ մի երաշխիք չկա, թե վաղը ցարական կառավարությունը նորից նույն կերպ չի վարվի: «Մեր դարավոր հարաբերությունները ռուս կառավարության հետ թող դաս լինեն հայ հասկացող մասի համար, որպեսզի զգուշությամբ վերաբերվենք ցարի կառավարության յուրաքանչյուր քայլին: Դա մի նենգ, սպանիչ քաղաքականություն է եղել, որին հայերը, տարաբախտաբար, միամտորեն հավատ են ընծայել, մի քաղաքականություն, որը մեզ այնքան բազմաթիվ չարիքներ է հասցրել և հասցնում է»[2]: Ուստի, շարունակում էր Թերթը, «մենք կազմ ու պատրաստ պետք է լինենք նոր և անակնկալ դեպքերի առաջ...»[3]:

Իսկ ինչպե՞ս ընդունեց ռուս հասարակայնությունը օգոստոսի 1-ի կայսերական հրամանը:

Արձագանքը հիմնականում դրական էր: Ռուս եկեղեցին նույնպես ողջունեց կատարվածը: Սակայն ծայրահեղ հետադիմականները այլ կարծիքի էին, նրանց սրտովը չէր գույքի և կալվածքների վերադարձը էջմիածնին: Այսպես, զրպարտությունների մեջ թրծված, միշտ հակահայ դիրքերում գտնվող "Новое Время" թերթը գրում էր. «Կոմս Վորոնցով-Դաշկովը միանգամից ջախջախեց այն բոլոր լավ բաները, որ այնքան մեծ նեղությամբ կառուցվել էին իշխան Գոլիցինի ձեռքով: Ցավոք, հայոց եկեղեցական կալվածքները նորից անցան կաթողիկոսի վարչության ներքո»[4]:

Ինչևիցե, եկեղեցու կալվածքներն ու գույքը վերադարձվում էին: Ուստի կաթողիկոսը օգոստոսի 8-ին Թիֆլիսից մեկնեց էջմիածին՝ կայսրի ուկազը կենսագործելու համար միջոցներ ձեռնարկելու: Ղարաքիլիսայում և Ալեքսանդրապոլում բազմահազար ժողովրդի կողմից ստացած մեծամեծ պատիվներից հետո հայոց վեհափառը օգոստոսի 15-ին հասավ Մայր աթոռ[5]:

Իսկ ի՞նչ կալվածքներ ունեին հայ եկեղեցին ու վանքերը:

[1] «Դրոշակ», N 9 (162), սեպտեմբեր,1905, էջ 130:
[2] Նույն տեղում, N 10 (163), հոկտեմբեր,1905, էջ 154:
[3] Նույն տեղում, N 10 (163), հոկտեմբեր,1905, էջ 154:
[4] Մատենադարան, կաթողիկոսական դիվան,թղթ. 237՞., վավ. 56, թ. 2 ("Новое Время" թերթի կտրոնը):
[5] Տե՛ս «Արարատ», N 9, սեպտեմբեր, 1905, էջ 804-809:

Հայ եկեղեցու բարձրագույն հոգևոր վարչությունը ճշգրիտ տեղեկություններ չուներ Էջմիածնի հաստատությունների և դրանց եկամուտների մասին, հաշիվները մոտավոր էին, ենթադրությունները՝ հավանական[1]: Այնուամենայնիվ, մոտավոր հաշիվներն այսպիսի պատկեր էին ներկայացնում.

Մայր-աթոռն ուներ հետևյալ սեփական գյուղերը. - Վաղարշապատ, որից տարեկան ստանում էր 16 000 ռուբլի արդյունք, Եղվարդ՝ 10 000ռ., Օշական՝ 4 000ռ., Մաստարա՝ 3 700ռ., Բջնի՝ 2 500ռ., Մուղնի՝ 400ռ.: Բացի դրանից, Մայր աթոռը Թիֆլիսում, Գանձակում, Աշտարակում, Օշականում և այլ կողմերում ուներ բավականին հողատարածքներ, որոնցից ստացվում էր տարեկան 51 000ռ., որից զեղչելով տարեկան 3 000ռ. հողային և երկրաչափական տուրքերը՝ մնում էր զուտ արդյունք մոտավորապես 48 000 ռուբլի[2]:

Բեսարաբիայի վիճակն ուներ երեք վանք՝ ս. Գևորգ, ս. Փրկիչ և Նոր Նախիջևանի ս. Խաչ, որոնցից տարեկան հասույթ ստացվում էր մոտավորապես 13 085ռ, որից զեղչելով 60ռ. հողային տուրքը՝ զուտ արդյունքը մնում էր 13025ռ.: **Աստրախանի** վիճակում վանական հողեր չկային, միայն Աստրախան քաղաքում կար մի կտոր հող, որի տարեկան արդյունքը՝ 150ռ., հատկացվում էր առաջնորդարանին: **Շամախու** վիճակը (Բաքու), ուներ Սալյանի ս. Ստեփանոս վանքը և Մեծ-Սարի ս. Աստվածածին վանքը, որոնցից ստացվում էր տարեկան 1830ռ. արդյունք:Ղարաբաղի **վիճակն ուներ 14 վանք, որոնց տարեկան արդյունքն էր 6700ռ., որից զեղչելով հողային և այլ տուրքերի համար ծախսված գումարը՝ մնում էր 2 992ռ. արդյունք: Երևանի** վիճակում գտնվում էր Տաթևի վանքը, որն ուներ գյուղեր, անտառներ, վարելահողեր, այգիներ, բանջարանոցներ, արոտատեղիներ և այլն, որոնցից ստացվում էր 5 000ռ. արդյունք: Այս վիճակին էին պատկանում նաև 48 վանքեր, որոնք գտնվում էին զանազան վիճակներում. դրանց մի մասը ոչ մի եկամուտ չէր տալիս, իսկ մնացած մասը տալիս էր տարեկան մինչև 1300ռ. արդյունք: Ընդհանուր առմամբ Երևանի վիճակում ստացվում էր 16 484ռ. արդյունք: **Վրաստանի և Իմերեթի** վիճակն ուներ 17 վանք, որոնցից ստացվում էր 3080ռ. զուտ արդյունք:

Արդ, Մայր աթոռը և մյուս վեց թեմերը իրենց ունեցած 153 000 դեսյատին հողերից ստանում էին մոտավորապես 85 536ռ. արդյունք: Եթե այս գումարի վրա ավելացվեր ռուսահայ բոլոր եկեղեցիների ունեցած հողերի տարեկան արդյունքը՝25 000ռ., ստացվում էր մոտավորապես 110 000ռ., որը գոյանում էր թե՛ վանքապատկան և թե՛ եկեղեցապատկան հողերի արդյունքից[3]: Նիկոլայ II ցարի 1905թ. օգոստոսի 1-ի ուկազով, ինչպես ասվեց, նաև հայկական դպրոցները հայ ժողովրդին վերադարձվեցին այն հիմունքներով, որոնք նախագծված էին 1874թ. հուլիսի 19-ի կանոններով:

[1] Տե՛ս **«Արարատ»**, N 2, փետրվար, 1907թ., էջ 66:
[2] Տե՛ս **Մխիթար վարդապետ**, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906թ., էջ 10:
[3] **«Մշակ»**, N 207, 24 սեպտեմբերի 1906թ.:

Ինչ էին ասում այդ կանոնները: Դրանք արտոնում էին, որ հայ հոգևորականությունը բանա հանրակրթական եկեղեցական-ծխական դպրոցներ՝ ի լրումն այն իրավունքների, որ վերապահված էին հայ հոգևորականությանը հոգևոր դպրոցներ բացելու համար՝ համաձայն 1836թ. մարտի 11-ին հրատարակած "Положение"-ի:

Պետությունը, 1905թ. ցարական ուկազով ճանաչելով հայ հոգևորականության ձեռնհասությունը դպրոցական ցանց կազմելու և դպրոցական կյանքը ղեկավարելու գործում, միաժամանակ ավելացնում էր մի քանի անհրաժեշտ պայմաններ: Այդ պայմաններից մեկն այն էր, որ այն դպրոցներում, որտեղ դասավանդվում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, աշակերտները պարտադիր պետք է անցնեն նաև Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը՝ ռուսերեն լեզվով:

Համաձայն 1874թ. կանոնների, հայերը Անդրկովկասի զանազան վայրերում բացել էին բազմաթիվ դպրոցներ: Հայ հասարակությունը դպրոցներին նվիրում էր իր մշակութային ուժերի և իր բարեգործական զոհաբերությունների մեծ մասը, դրանք զարգացնում և ընդարձակում էր՝ որքան կարողանում էր: Այդ գործի մեջ էին ներգրավվել ժողովրդի բոլոր խավերը. ծխական հոգաբարձություններին էր հանձնվել դպրոցների տնտեսավարությունն ու բարեկարգումը, իսկ մտավորական ուժերին՝ դրանց կրթական և մանկավարժական ղեկավարությունը[1]: Հայկական դպրոցները եղել էին իսկական ժողովրդական դպրոցներ, որոնց կարիքները հոգալու համար եկեղեցին և ծուխը պետության առջև հանդես էին գալիս իբրև մի միասնական ներկայացուցչական մարմին:

Սկսված այդ մեծ մշակութային գործը կշարունակվեր առաջ գնալ ու զարգանալ, եթե դրա գոյությանը չվտանգեր անսպասելի արհավիրքը՝ 1884թ. տխրահռչակ օրենքը, որով փակվեցին հայկական ոչ պետական դպրոցները:

Եվ ահա այժմ, երբ դպրոցները վերադարձվում էին 1874թ. կանոնների հիմունքներով, անշուշտ, հայ հասարակությունը ցանկանում էր վերականգնած տեսնել դպրոցական այն եռուն և ճոխ կյանքը, որ գոյություն էր ունեցել մինչև 1884 թվականը:

Փոխարքայի կողմից հայության օգտին արած առաջին դրական քայլերը, նրա լոյալ արտահայտությունները հայ պահպանողականներին, լիբերալներին, բուրժուամտավորականներին հիմք էին տվել նրան համարելու «հայասեր»: Մեկ-երկու տարի անց այդ գնահատականին միացավ նաև դաշնակցությունը:

Միայն սոցիալ-դեմոկրատները և առաջին հերթին հայ բոլշևիկներն էին, որ Վորոնցով-Դաշկովի գործունեությանը տված իրենց գնահատականի մեջ ոչ մի փոփոխություն չկատարեցին և մինչև վերջ նրա նկատմամբ, որպես ցարիզմի սատրապի, մնացին իրենց անհաշտ դիրքերում:

[1] **Մատենադարան**, կաթողիկոսական դիվան, թղթ. 237², վավ. 42, թ.2:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ 1905Թ. ԱՄՌԱՆԸ

ՆՈՐ ԴԵՊՔԵՐ ԵՐԵՎԱՆՑԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Աչքի առաջ ունենալով Հեռավոր արևելքում ռուսների ծանր պարտությունները՝ հասարակական կարծիքը նպատակահարմար էր գտնում դադարեցնել պատերազմը և ասպարեզ հանել հաշտություն կնքելու խնդիրը: Որպեսզի կարողանար շարունակել պատերազմը, Ռուսաստանը պետք է վերակազմավորեր բանակները նոր ճակատամարտերի համար, իսկ դա կպահանջեր երկար ամիսներ, հսկայական ծախսեր, նոր զոհեր, որոնց թիվն առանց այն էլ շատ ու շատ մեծ էր:

1905թ. օգոստոսին Միացյալ Նահանգների նախագահ Ռուզվելտի նախաձեռնությամբ ԱՄՆ-ի հյուսիս-արևելքում, Նյու-Խեմփշիր նահանգում գտնվող Պորտսմուտ խոշոր ռազմածովային նավահանգստում, գումարվեց ռուս և ճապոնացի լիազորների ժողով, որը երեք շաբաթվա տենդագին սակարկություններից հետո ծանուցեց աշխարհին իր հաշտարար եզրակացությունը: Օգոստոսի 16-ին դաշնագիրն արդեն ուրվագծված էր: Ռուսական կողմը խոստանում էր Ճապոնիային վճարել կոնտրիբուցիա, ընդունում էր հակառակորդի ներկայացրած խաղաղության համարյա բոլոր պայմանները և դրանով մեկ անգամ ևս ցույց տալիս իր անզորությունը: Պայմանագրի նախագծի համաձայն, Ռուսաստանը հրաժարվում էր Կորեայի նկատմամբ ունեցած իր հավակնություններից և ընդունում էր այնտեղ Ճապոնիայի քաղաքական, ռազմական ու տնտեսական գերակշռող շահերը: Ռուսաստանը Ճապոնիային էր զիջում Պորտ-Արտուրը, Սախալին կղզու հարավային մասը և վերջինիս հարակից բոլոր կղզիները, հեռացնում էր Մանջուրիայից իր զորքերը:

Նախքան պայմանագրի ստորագրումը ցարիզմը, վերջապես, մի հաջողություն ունեցավ՝ ռուսական պատվիրակության ղեկավար Սերգեյ Վիտտեի ջանքերով նա չտվեց Ճապոնիայի պահանջած պատերազմական տուգանքը, չտվեց ամբողջ Սախալինը, այլ միայն դրա կեսը, չզիջեց նաև մի քանի երկրորդական կետերում: Ի վերջո, օգոստոսի 23-ին ստորագրվեց խաղաղության պայմանագիրը:

Այսպիսով, 18 ամսվա արյան գետերը Մանջուրիայի դաշտերում դադարառան: Արյունահեղ պատերազմում Ռուսաստանի ձախորդությունների երկար շարքը հետևանք էր ցարական հետադեմ ռեժիմի վերջին 25 տարվա ապիկար քաղաքականության, պատերազմի թատերաբեմի հեռավորության, ռուսների նկատմամբ Մանջուրիայի բնակչության թշնամական տրամադրությունների, ճապոնացիների աննման հայրենասիրության և ռազմական փայլուն արվեստի:

Պորտսմուտում մարեցին նոր նվաճումներ կատարելու և կայսրության սահմաններն ընդարձակելու ցարիզմի հույսերը:

Անփառունակ վախճան, ժողովրդական ցասում, դատարկ գանձարան, լիակատար վհատություն - ահա թե ինչի հասավ պարծենկոտ կառավարությունը: Իսկ Ճապոնիան տոնում էր իր մեծ հաղթանակը...

Ասիական մի փոքր երկիր, որ դեռ երեկ քնած էր միջնադարյան հաճելի երազներով, արհամարհված ու մոռացված աշխարհից, ծնկի էր բերել մի վիթխարի երկրի գոռոզ ու ինքնահաճ միապետությանը: Ռուսաստանի նման հսկա մի կայսրության այդօրինակ պարտությունը վիթխարի տպավորություն էր ստեղծել ամբողջ աշխարհում: Այն ցնցեց նաև ասիական գաղութացված ու գլխիկոր ժողովուրդներին, որոնք բացեցին իրենց աչքերը սեփական ուժի առջև և լցվեցին ապագայի հանդեպ նոր հավատով:

Ցարական Ռուսաստանը պատերազմից դուրս եկավ հսկայական կորուստներով, տնտեսապես և հատկապես քաղաքականապես թուլացած: Ռուսական կայսրությունը քաղում էր իր անփառունակ պարտության դառը պտուղները: Պատերազմը լիովին ցուցաբերել էր երկրի իշխող վերնախավի ապիկարությունն ու սնամեջ գոռոզամտությունը:

Պորտսմուտի հաշտությունը կնքելուց հետո ցարական իշխանությունները և հետադիմական մամուլը փորձում էին ժողովրդին համոզել, թե հաշտության կնքումը թելադրված է այն կարեկցանքով, որով լցված է ցարը ժողովրդի հանդեպ: Իրականում հաշտության շարժառիթն այլ էր՝ անմիտ արյունահեղությունը Մանջուրիայում, պարբերաբար կատարվող զորահավաքները, բանակի ու նավատորմի ջախջախումը, որոնք այն աստիճան էին զայրացրել ժողովրդին, որ ևս մեկ զորահավաք, ու նա մոլեգնաբար կարող էր տակնուվրա անել ամեն ինչ:

Դադարեցնելով պատերազմն արտաքին թշնամու դեմ կառավարությունը լիովին ազատ արձակեց իր ձեռքերը, արյունահեղության դաշտը Մանջուրիայից տեղափոխեց երկրից ներս և նոր ուժով նետվեց «ներքին թշնամու» վրա՝ նպատակ ունենալով այդ դաշտում խեղդել հեղափոխական շարժումը:

Բայց ցարիզմի հաշվարկները սխալ դուրս եկան: Կյանքը շարունակվում էր ալեկոծվել: Հուզված պրոլետարիատը զինվում էր ոչ թե կենաց, այլ մահվան գոտեմարտի: Նա ապշեցնում էր աշխարհը իր հերոսությամբ ու վճռականությամբ: Հեղափոխական կուսակցությունները աճում և զորանում էին օրեցօր:

Եթե բանվորական և գյուղացիական համաժողովրդական դեմոկրատական

չարժման դեմ պայքարում ցարիզմը Ռուսաստանում առայժմ որևէ հաջողություն չէր արձանագրել, ապա Կովկասում նրան դեռ հաջողվում էր ընդլայնել թուրք-հայկական կոտորածների դաշտը:

1905թ. ամռանը Անդրկովկասը ներկայացնում էր մի կատարյալ պատերազմաբեմ, ուր, Աբրահամ Գյուլխանդանյանի արտահայտությամբ, մենամարտի ելած երկու ժողովուրդները անխնայորեն և ամենայն դաժանությամբ կամենում էին բնաջնջել միմյանց[1]: Այդ անմիտ պատերազմը կոչված էր երկար տարիներով հետ մղելու երկրամասի առաջադիմության անիվը:

1905թ. ամռան սկիզբը նշանավորվեց Երևանյան նահանգի նոր կռիվներով:

Հայ ժողովրդի համար բախտորոշ բարեպատեհություն էր, որ նա իր ծոցում ուներ հեղափոխական մի կազմակերպություն, որ ահավոր դժբախտության առաջին իսկ օրից ըմբռնեց կացությունը, գիտակցեց իր անելիքը և իր ամբողջ մեքենան զարմանալի արագությամբ հարմարեցրեց և ի սպաս դրեց կովկասահայ ժողովրդի փրկության գործին: Դաշնակցական մամուլն ամեն օր ահազանգ էր հնչեցնում, կուսակցության գործիչներն ամեն օր իրենց գրավոր ու բանավոր ելույթներով ինքնապաշտպանության էին կոչում հայությանը, լույս էին տեսնում բրոշյուրներ, ինքնապաշտպանության մարտիկներին ուղղված գրավոր խորհուրդներ, որոնք առաջին հերթին տարածվում էին վտանգված վայրերում:

Նիկոլ Դումանը քաջ գիտեր, որ խաղաղությունն անկայուն է, որ իրենց համար բարենպաստ պահի դեպքում թուրքերը նորից են սուրը հանելու պատյանից: Ահա թե ինչու նա Երևանյան նահանգի ամենավտանգաշատ գավառ՝ Նախիջևան ուղարկեց անհրաժեշտ զենք ու զինամթերք և, որ կարևոր էր, եռանդուն ու նվիրյալ գործիչներ:

Նախիջևան գավառի ինքնապաշտպանության ղեկավար նշանակվեց Դաշնակցական Խեչոն: Նա նախիջևանցի էր, դաշնակցության ամենանվիրյալ գործիչներից մեկը: Տեղ հասնելով՝ Խեչոն մեծ եռանդով ձեռնամուխ եղավ գյուղական երիտասարդության կազմակերպման ու զինման գործին: Կարճ ժամանակում ստեղծվեցին մարտական ջոկատներ, նշանակվեցին հրամանատարներ արևմտահայ հայդուկներից (որոնց թվում էին վաղեմի զինվոր վանեցի Լորթոն, մշեցի Ասլանը և ուրիշներ) և արևելահայ դաշնակցական զինվորական գործիչներից, գյուղերում կառուցվեցին պաշտպանական ամրություններ, կանոնավորվեց մարտիկների պարենային ապահովման հարցը և այլն:

Նախիջևանի գավառ ուղարկված զինվորական գործիչների թվում էր Դրոն: Դումանը նրան ուղարկել էր կազմակերպելու և վարելու Ղըրխբուլաղի

[1] Տե՛ս Ա.Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 5: Գյուղ Կոտայքում:

շրջանի ինքնապաշտպանության գործը: Այստեղ Դրոն տեղացի երիտասարդներից կազմակերպում է մարտական խումբ, գլխավորում այն, պաշտպանում շրջանի անվտանգությունը: Սակայն նա այստեղ երկար չի մնում, քանի որ շրջանը համեմատաբար խաղաղ էր, իսկ ինքը փնտրում էր կենդանի ու գրավիչ գործ[1]:

Դրոյի համառ խնդրանքներից հետո Դումանն, ի վերջո, նրան թույլատրում է գալ Երևան, որտեղ և կազմակերպում է 14 հոգանոց մարտական նոր խումբ, որի մեջ են մտնում նաև արևմտահայ քաջարի հայդուկներ Խլաթցի Գալոն և Բերդակցի Օսկոն: Խմբի բոլոր անդամները զինված էին լավագույն հրացաններով: Տղաներից ոմանք մարզված էին ռումբ նետելու գործում:

1905թ. օգոստոսին, Դումանի հանձնարարությամբ, Դրոյի խումբը մեկնում է Հյուսիսային (Լեռնային) Նախիջևանի Նորս-Գյոմուր (Գյումրի) շրջանի գյուղերի հատվածը, որը, ինչպես արդեն ասվել է, ուներ ռազմական կարևոր նշանակություն. այդ գյուղերի միջոցով Նախիջևանը կապվում էր Զանգեզուրի Սիսիանի շրջանի հետ:

Հասնելով Դարալագյազ՝ Դրոյի խումբը, առանց այստեղ կանգ առնելու, անցնում է նշանակված վայրը և իբր կենտրոնատեղի ընտրում Նորս գյուղը:

Իր հուշագրության մեջ Դրոն այսպես է նկարագրել Հյուսիսային Նախիջևանի այդ լեռնային շրջանի վիճակը.

«Մեր եկած շրջանի վիճակը բաւական տխուր էր. բացառությամբ Գժաձոր և Գյումրի գիւղերի, միւս բոլոր հայկական գիւղերը թալանված էին թուրքերի ձեռքով: Դռներն ու պատուհաններն անգամ տարված էին: Բախտավորություն էր գոնէ, որ թուրքերի հարձակման ժամանակ արտերը դեռ հասած չէին: Թալանից յետո, հայ գյուղացիները վերադարձել էին իրենց կիսավեր ու բոլորովին ամայացած տները և հավաքել արտերի բերքը: Այդ պատճառով հացի կողմից ապահովված էին, բայց տավար կամ ուրիշ բան՝ ոչինչ չունէին»[2]:

Թալանված և աղքատության դուռը հասած Նորսում խմբին վիճակված էր գյուղացիների հետ կիսել կյանքի բոլոր դառնությունները: Նույն հուշագրության մեջ Դրոն այսպես է նկարագրել իրենց ապրելակերպը.

«Նորսի մեծ տներից մէկը – անդուռ և անպատուհան – դարձավ մեր բանակատեղին և շտաբը: Իրապես տուն էլ չէր, այլ մի ընդարձակ չարդախ, ուր անց էինք կացնում մեր ժամանակը: Սեղանի տեղ գործ էինք ածում մի կոտրած փէշխուն. անկողնի փոխարէն՝ խոտ ու մեր յափնջիները: Գյուղացիք իրենք էլ անկողին չունէին և մեզ պէս խոտի կամ հարդի վրա էին պառկում: Մեր ամենօրեայ կերակուրը հացն էր: Մեզ համար էր ասված՝ «զհաց մեր

[1] «Վեմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 1:
[2] Նույն տեղում, էջ 8:

հանապազօրդ, տուր մեզ այսօր...»[1]:

Ինչպես դրան, Նորսում եռուն աշխատանք է տարվում շրջանի ինքնապաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ՝ կապ է ստեղծվում Հյուսիսային Նախիջևանի հայկական գյուղերի միջև, վտանգված վայրերում կազմակերպվում են տեղական ինքնապաշտպանական խմբեր և նշանակվում ձեռնհաս խմբապետեր, բարելավվում է հետախուզական գործը՝ թշնամու շարժումների մասին օրը օրին տեղեկություններ ստանալու համար: «Գյուղացիությունը, - վերհիշել է Դրոն, - մեծ վստահությամբ ընդառաջ էր գնում մեր բոլոր առաջարկներին և սիրով կատարում էր կարգադրությունները»[2]: Նա նշում էր, որ իրենց վրա էր ընկել նաև շրջանի վարչական-դատաստանական գործառնությունը, «որովհետև ամբողջ ռուս պաշտոնեությունը վախից հեռացել էր»[3]:

Եվ ահա, օրերից մի օր, երբ Դրոն իր խմբով գնացել էր հարձակման՝ վտանգի ենթակա Կոտտ Մազրա գյուղը, շրջակա գյուղերի թուրքերը արդեն երկրորդ անգամ հարձակվում են Նորսի վրա՝ եղածը թալանելու նպատակով: Գյուղացիները, որ բավական զենք էին ստացել դաշնակցությունից, անմիջապես մտնում են դիրքերը և ուժգին կրակով թշնամուն արգելում խուժել գյուղ: Տեղեկանալով՝ Դրոն իր խմբով վերադառնում է և գյուղի մարտական ջոկատի հետ անցնում հակահարձակման: Թալանչիների ահագին բազմությունը, կորուստներ տալով, խուճապահար դիմում է փախուստի[4]:

Այս ընդհարումից հետո թուրքերը երկար ժամանակ չեն հանդգնում հարձակում գործել Նորսի և շրջանի մյուս գյուղերի վրա:

Երբ Դրոն պաշտպանում էր Հյուսիսային Նախիջևանը, այդ նույն ժամանակ Քեռին պաշտպանում էր Դարալագյազը: Դումանի կարգադրությամբ Հյուսիսային Նախիջևանի պաշտպանությունը նույնպես հանձնվում է Քեռուն, իսկ Դրոն իր խմբով անցնում է նրա հրամանատարության տակ: Բայց շատ չանցած՝ Դումանը նրանց թողնում է միայն Հյուսիսային Նախիջևանի պաշտպանությունը, իսկ Դարալագյազի պաշտպանության ղեկավար է նշանակում Տարոնի նշանավոր հայդուկ, Անդրանիկի զինվորներից Կոտոյի Հաջուն: Քեռին և Դրոն Հյուսիսային Նախիջևանում մնում են մի քանի ամիս, իսկ երբ իրենց հանձնված շրջանում ստեղծվում է քիչ թե շատ տանելի վիճակ, Դումանի հրամանով մեկնում են պաշտպանելու Սիսիանը[5]:

Գլխավոր ավազակարոշ Իթղռան գյուղի ոչնչացումից հետո, երբ Հյուսիսային Նախիջևանում չքացել էր անպատիժ թալանելու թուրքերի ախորժակը, Դրոն իր խմբով հաճախ էր անցնում Դարալագյազ՝ օգնելու Կոտոյի Հաջու մարտիկներին: Նա իր արժեքավոր հուշերից մեկում մեծ տաղանդով նկարագրել է այդ օրերին Դարալագյազի մարտիկների անձնական փոխհարաբերությունները, նրանց հոգեբանությունը, արևմտահայ հայդուկների և արևելահայ զինյալների ջերմ մտերմությունը, աննման սխրանքների և մարտական եղբայրության մի շարք դրվագներ:

Դարալագյազի ընդհանուր հրամանատար նշանակվելուց հետո Կոտոյի Հաջու ենթակայության տակ էին անցել մինչ այդ այնտեղ գործող երկու ձիավոր խմբերը՝ իրենց խմբապետերի գլխավորությամբ, որոնցից մեկը շրջանում մինչ այդ արդեն մեծ համբավ վաստակած Սերոբ Աղբյուրի զինվոր Առյուծ Ավագն էր, մյուսը՝ Զոփուռ Արսենը: Վերջինս, Երևանի և Էջմիածնի գավառներում, հատկապես Աշտարակի շրջանում, իր քաջագործություններով հռչակվելուց հետո, Դումանի հանձնարարությամբ իր խմբով եկել էր Դարալագյազ: Քաջության ու հանդգնության մեջ Արսենը և Ավագը չէին զիջում մեկը մյուսին: Բայց եթե Զոփուռ Արսենի համար Հաջին, իրոք, հեղինակություն էր, ապա Առյուծ Ավագի կարծիքով, վերջինս արժանի չէր իր հրամանատարը լինելու: Ավագը չէր հաշտվում այն մտքի հետ, որ ինքը, լինելով Սերոբ Աղբյուրի զինվորը, ստիպված է ենթարկվել Անդրանիկի զինվորին: Սերոբից քաջ և մեծ մարդ նրա համար աշխարհում գոյություն չուներ: Անդրանիկը Սերոբի ենթական է եղել, ասում էր նա, և հիմա Անդրանիկի զինվորը Սերոբի զինվորի կարգադրիչն է դարձել: Եվ դրա համար նա ուղղակի տանջվում էր:

«Հեյ - հե՜յ, աշխարհ, քեզ հիմ դնողին ի՞նչ ըսեմ, որ Սերոբի փոխանորդ Անդրանիկի զինվորը հրամանատար ի դարձի իմ գլխին. - վայ լըմըն բավ էդ յուր հասանք... Քեզ տունն ավրի, աշխա՜րհ...»[1], - գանգատվում էր Ավագը:

Բայց դրա փոխարեն Առյուծ Ավագն անչափ գնահատում և եղբայրական սեր էր տածում Զոփուռ Արսենի նկատմամբ:

1905թ. ամռան վերջերին Դարալագյազում տեղի ունեցավ մի մեծ կռիվ, որին իր խմբով մասնակից եղավ նաև այնտեղ գտնվող Դրոն:

Թարաքամա թուրքերը Դարալագյազի ամառային արոտավայրերից իջնելիս վճռել էին իրենց անասունների հետ քշել տանել Սուլթանբեկ հայկական գյուղի նախիրը: Հազարավոր թալանչիներ բռնել էին գյուղի հյուսիս-արևելյան բարձունքները և կրակի տակ առել գյուղացիներին, իսկ թուրքերի մի խումբ, իջնելով ձորը, քշում էր նախիրը: Սուլթանբեկցիներն իրենց մի քանի հրացաններով որքան կարողանում են, դիմադրում են: Տեսնելով կռվողների փոքրաթիվ լինելը, բարձունքները գրաված թուրքերի խմբերը, իջնելով գյուղ, հրդեհում են մարագները: Այդ ծանրագույն րոպեին հասնում է մոտակայքում գտնվող Դրոն՝ իր խմբով: Հասնում է նաև մալիշկացի Սարբազ Խեչոն: Մարտիկները, իջնելով ձիերից, դիրքեր են գրավում բարձունքներից

---

1 «Վեմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 8:
2 Նույն տեղում, էջ 9:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, էջ 8-11:
5 Նույն տեղում, էջ 14:

1 «Վեմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 3:

մեկի վրա և, հեռվից նշան բռնելով, հրացանային կրակի տակ առնում գյուղ մտած ավարառուներին:

Թե հետո ինչ տեղի ունեցավ, պատմում է Դրոն.

«Այդ վայրկեանին, չգիտեմ ո՞ր գյուղից, կայծակի արագությամբ օգնության եկավ Առյուծ Ավագը՝ հեծած իր գեղեցիկ սպիտակ նժույգը: Նրան հետևում էր իր խումբը: Մեր հրացանների ձայնը լսելուն պէս՝ նա շտապել էր մեզ օգնության: Մեր դիրքերը դիտելով և իմ զինվորական հրամանները լսելով՝ նա բղավեց ամբողջ կոկորդով.

– Տո՛, ք... մուլի տղէք, էդա պրիցել ի՞նչ ի: Ես տասնեակ տարիներ զինուորութին իմ էրի, չըմ խասկցի պրիցել ինչ ի, վա՛ռէք, հա վառէք:

Ու դառնալով Քուրդ Խէչօին, որ նրա խմբի մէջ էր և իմ մտերիմ ընկերն էր, հրամայեց.

– Տղա՛յ, Քրդո՛, քշէ՛ Թշնամուն վրէն:

Եվ իր ամեհի ձին՝ քառասմբակ ուղղեց դէպի Թուրքերի դիրքերը: Նրան հետևեցին խմբի մյուս զինվորները: Փոթորիկ էր, կարծես, որ տարերային թափով առաջ սլացավ, ճանապարհին իր ամեհի ուժի տակ խորտակելով ամէն բան»[1]:

Տեսնելով Առյուծ Ավագի և նրա խիզախ մարտիկների հախուռն ճակատային գրոհը՝ Դրոն իրեն մեղավոր ու չափազանց ճնշված է զգում: Չէ՞ որ ինքն էլ իր տղաներով կարող էր ձիերով այդպիսի համարձակ ոստյուն կատարել՝ փոխանակ հրացանային նշանառությամբ թշնամուն խփեր քարերի հետև մտած: «Ամոթից գետինն էի ուզում մտնել», – վերհիշել է Դրոն:

Դուրս գալով դիրքերից և թռչելով ձիերի վրա՝ նա և իր մարտիկները սրարշավ հետևում են Առյուծ Ավագին և սլանում գյուղի վրա: Երբ նրանք հասան Ավագին, նրա խումբն արդեն դիրքերից դուրս էր եկել և խելահեղ կատաղությամբ հետապնդում էր հազարավոր թարաքամա Թուրքերին:

Բայց Առյուծն իր գործը դեռ չէր ավարտել: Կրկին խոսքը տանք Դրոյին.

«Առյուծ Ավագը հալածում էր, չարունակ կրակում ու բարձրագոչ հայհոյանքներով սպառնում փախչող Թշնամուն:

Կռվի ամենատաք վայրկեանին, Առյուծ Ավագը նկատեց, որ մի քանի Թուրքեր ձորի միջով քշում էին նախիրը: Կանգ առավ ու գոռաց մեզ.

– Տղե՛ք, Սերոբ Փաշի զինվորի գլխին փափախ չկա՞յ, որ Թուրքեր էդա նախիր տանին. խլե՛ք էդ տավար:

Մենք անմիջապէս հարձակվեցինք տավարը քշող Թուրքերի վրա, փախցրինք և ավարը խլեցինք նրանց ձեռքից:

Թարաքամաներին հետապնդելիս, Առյուծ Ավագը նկատել էր, որ մի Թուրք վախից պահվել է փոքրիկ քարի տակ: Սկսել է կրակել վրան, բայց գնդակները վրիպել են: Եվ կատաղած ու բորբոքված սկսել է գոռալ.

[1] «Վէմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 6:

– Եա՛հ, էդա քուփակ օղլու լաճ Թալսմուկ ի:

Ու ձիուց իջնելով՝ վախից ահաբեկված Թուրքի գլուխը ջախջախել է իր հրացանի կոթով: Հարվածը այնքան սաստիկ է եղել, որ հրացանի կոթը կոտրվել է:

Երբ Թարաքամաներին քշեցինք ու հավաքվեցինք մի տեղ, Առյուծ Ավագն էլ եկավ՝ հետը բերելով սպանված Թուրքերից առնված մի քանի այնալու հրացաններ, ինչպէս և իր ջարդված կոթով հրացանը:

Բոլոր տղաների հավաքվելուց հետո Առյուծ Ավագը նստավ իր սիրուն ձին և խմբի գլուխն անցնելով՝ մեծ հանդիսավորությամբ շարժվեց դեպի գյուղ: Ես էլ իմ խմբի հետ, ամոթխածությամբ հետևեցի նրա խմբին՝ միշտ մնալով պատկառելի տարածության վրա:

Առյուծ Ավագի խումբը գյուղ մտավ Սերոբ Փաշայի երգերը երգելով: Ավագը տղաներին արգելել էր Անդրանիկի երգերը երգել»[1]:

Կռիվը վերջանալուց հետո Դրոն շտապում է Առյուծ Ավագի մոտ, որը գյուղական օդայի մեջ, գորգի վրա նստած, օղի էր խմում, իսկ շրջապատի մարդիկ պտտվում էին հերոսի շուրջը՝ պատրաստ ջանադրությամբ ծառայելու նրան: Բայց Ավագի ցավը նույնն էր՝ ինչո՞ւ Սերոբի զինվորի, այսինքն՝ իր հրամանատարը Անդրանիկի զինվոր Հաջին պիտի լինի: Բախտից դառնացած՝ նա ինքն իրեն բողոքում էր.

– Մըր ամակ ջուր կիյնի. մըր քաջութիւն կը կորսի: Հէհէ՛յ, Սերոբ փաշա, քեզ գերեզմանին մըռնիմ. քեզ զինուորներ քաջութիւն կէնին, իդա Փուլտաղ Կոտոյի Հաճին կը շահի:

Ապա, դառնալով Դրոյին՝ ասում է.

– Դրո՛, էդա կոտրած թվանք կը տեսնա՞ս, էդա թվանք առնիմ Կոտոյի Հաճի չուր Էրէվան կըփախի: Էդա կռիւ դիւ տեսար, քեզ կեաթին ու քեզ նամուսին կը թորկիմ: Քեզ տեսած գրէ պ. Դումանին. թէ չէ մենք կը կռիւնք, քաջութիւն կէնինք, էդա քեզփակ օղլի Փուլտաղ Կոտոյի Հաճի թուղթ կը գրէ ու մըր քաջութիւն իրեն կը վերագրէ: Վա՛յ – լըմըն աշխարհ, քեզ հիմ դնողին ի՞նչ ըսիմ:

Դրոն խոստանում է կատարել Ավագի պահանջը և տեսածի մասին գրել Դումանին: Գրում է, ընդհանուր գծերով նկարագրում կռիվը, հատկապես նշում Առյուծի գործած սխրանքները: Երբ նամակը պատրաստ էր Երևան ուղարկելու, Ավագը պահանջում է կարդալ, և Դրոն կարդում է: Հերոսը դժգոհ է մնում ասելով.

– Տ'ո, տղայ, յո՞րի չիս գրէ, թէ չուր ո՞ր սար քշեցի Թուրքեր, յո՞րի չիս գրէ, իմալ թվանքիս զոնդղով Թուրքի գլուխ ջարդեցի:

Դրոն ստիպված էր այդ մասերը նույնպես ավելացնել: Առյուծը գոհ է մնում:

[1] «Վէմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 6:

«Հետևյալ օրը, - վերհիշել է Դրոն, - երբ պատրաստվում էինք մեկնելու Նախիջևանի լեռնային շրջանը, Առյուծ Ավագը ջերմ բարեմաղթություններով ճանապարհ դրեց մեզ:

- Տղա՛յ, - ասաց նա բաժանվելիս, - էս լեռներուն մէջ տեղ մը չկայ, որ վտանգ ըլի եւ Առյուծ Ավագ թվանքի ձէն լսէ ու օգնութեան չխանի: Գնա՛, կռիւ լէ ունենաս, քշի՛ր վրը թշնամուն, վառէ զրմէն. դոր լէ կռիւ ընես՝ զուշի թեւով քեզի կը հասնիմ. քեռ կռնակն իմ, քեռ օգնութեան կիւգամ. լա՛ւ գիտցիր»[1]:

ԶԻՆՎԵԼՈՒ ՀՐԱՄԱՑԱԿԱՆԸ: «ՓՈԹՈՐԻԿԻ» ԲՌՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն 1905թ. ամռան սկզբներին պարզ էր դարձել, որ Թուրք-Հայկական կռիվները չեն սահմանափակվելու լոկ Բաքվի և Երևանի նահանգներով, այլ, տարածվելով, ընդգրկելու են ամբողջ Անդրկովկասը: Այդ տխուր հեռանկարը հրամայաբար թելադրում էր՝ այս կամ այն վտանգված տեղերի հայ բնակչությանը, հնարավորության ներածի չափով, զենք տրամադրելու գործելակերպից անցնել կովկասահայության համատարած զինման գործին:

Ինչպես արդեն նշվել է, մինչև Բաքվի փետրվարյան կոտորածը դաշնակցությունն ուշադրություն չէր դարձնում Կովկասի հայության զինման և ինքնապաշտպանության խնդրին: Առանձին առիթ էլ չկար այդ բանի համար, քանի որ ռուսական իշխանության ներկայությունը Կովկասում որոշ ապահովություն էր:

Բայց այժմ վիճակն արմատապես փոխվել էր: Նախկինում խաղաղ հայ բնակչության աղերսն ու հորդորը, խրատն ու դիմումը միշտ անլսելի էին մնում: Բաքվի փետրվարյան դեպքերը, սակայն, հայությանը համոզեցին, որ միայն հրացանի որոտը և ռումբի պայթյունն են ի վիճակի սաստելու խելագար խուժանին, նրան ստիպելու հետ քաշվել և վայր դնել արյունոտ սուրը:

Ահա թե ինչու դաշնակցությունը ժողովրդին զինելու համար անմիջապես գավառներ ուղարկեց իր փորձված ուժերը: Սակայն տեղերում կատարված ստուգումները պարզեցին, որ Անդրկովկասի հայաբնակ նահանգներից միայն Երևանի նահանգի հայության մոտ քիչ թե շատ զենք կա: Դեռևս 1904թ. գարնանը Հ.Ց.Դ. Ալեքսանդրապոլի կոմիտեի մարտիկները կարողացել էին պետական զինանոցից դուրս բերել զենքեր և մոտ 4 միլիոն փամփուշտ: Դրա հաշվին համալրվել էին դաշնակցության Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր

[1] «Վեմ», N 6, նոյեմբեր-դեկտեմբեր, 1934, էջ 7-8:

Բայազետի գաղտնի զինապահեստները: Բայց եղածը խիստ անբավարար էր, և զենք ձեռք բերելը դարձել էր օրվա հրամայական:

Զենք հայթայթելը կապված էր մեծ դժվարությունների հետ, ամենից առաջ՝ ֆինանսական: Դրամահավաքը օրախնդիր էր, բայց այն անհնարին էր իրականացնել ընդհանուր ժողովրդական հանգանակության միջոցով, օրինակ, Ռուսաստանում կամ Ամերիկայում, որովհետև եթե ցարական իշխանությունները տեղեկանային, ապա ոչ միայն պիտի արգելեին միջոցառումը, այլև հալածեին թե՛ դրամ հավաքողներին և թե՛ դրամ տվողներին:

Դաշնակցությունը հայ հասարակության մեջ աշխատանքի յուրատեսակ բաժանում էր կատարել, որի համաձայն՝ ամեն մի դասակարգ իրեն հատուկ տուրքը պետք է տար ազգին: Այսպես՝ բանվորները, արհեստավորները և գյուղացիները ընդհանուր պաշտպանության գործին պետք է տրամադրեին իրենց ֆիզիկական ուժը, մտավորականներն՝ իրենց մտավոր կարողությունները, հարուստները՝ իրենց դրամը:

Ելնելով դրանից՝ դաշնակցությունը դրամահավաքի հիմնական աղբյուրը համարեց հայ հարուստների ֆինանսական միջոցները: Կուսակցության կոմիտեների ու ենթակոմիտեների միջոցով բոլոր վայրերում կազմվում էին ունևորների ցանկ և, որոշ քննություններ կատարելուց ու նրանց ունեցվածքի չափերը պարզելուց հետո, որոշվում էր, թե որ հարուստը որքան գումար պետք է տա ինքնապաշտպանության նպատակներին: Այնուհետև պաշտոնական թղթի վրա գրված և կարմիր կնիքով կնքված նամակ էր ուղարկվում նրանց բոլորին: Նամակը որևէ սպառնալիք չէր պարունակում, այլ նրանով տվյալ անձնավորությանն առաջարկվում էր անթերի կատարել ազգային պարտականությունը, ապա նշվում էր վճարելիք գումարի չափը, որ նշանակված էր տվյալ անձի կարողության համեմատ, ինչպես նաև՝ վճարման ժամկետը: Նշենք նաև, որ կոմիտեների նշանակած գումարները 20000 ռուբլուց բարձր չպետք է լինեին և իրապես էլ չէին[1]:

Հայ մեծահարուստների բացարձակ մեծամասնությունը պինդ փակել էր գրպանները և փող չէր տալիս: Այդ էր պատճառը, որ դաշնակցությունը ստիպված դիմեց բռնի միջոցների՝ նրանցից խլելով գումարներ և դրանք տրամադրելով զենք ձեռք բերելու գործով զբաղված անձանց: Գործի մեջ ներգրավվեց նաև Հ.Ց. դաշնակցության «Փոթորիկ» անունը կրող հատուկ մարմինը, որը կուսակցության մեջ վստահություն վայելող, փորձառու և անձնուրաց նվիրյալների մի փաղանգ էր:

«Փոթորիկը» նոր չէր հրապարակ գալիս. այն ստեղծվել էր մի քանի տարի առաջ, այժմ վերսկսում էր ընդհատված գործունեությունը:

Բռնի հանգանակության հարցը առաջին անգամ բարձրացվել էր Հ.Ց.Դ. երկրորդ ընդհանուր ժողովում (1898թ., Թիֆլիս): Այդտեղ բռնի հանգանա-

[1] «Հայրենիք», N 9(391), սեպտեմբեր, 1958, էջ 17:

կության սկզբունքը ընդունելի էր համարվել այն պայմանով, որ կուսակցության մարմինները գործելու այդ մեթոդին դիմեն միայն ամենածայրահեղ պարագաներում:

Հ.Յ.Դ. երկրորդ ժողովից հետո բռնի հանգանակության դիմելու պահանջով պարբերաբար հանդես էին գալիս կուսակցության կովկասյան կ.կոմիտեները և շրջանային ժողովները այն հիմնավորումով, որ իրենց ձեռնարկներից շատ շատերը վիժել են և շարունակում են ձախողվել դրամ չլինելու պատճառով, և դա այն դեպքում, երբ հարստացած ու հղփացած ազգային ջոջերը լողում են փարթամության ու երջանկության մեջ՝ լիովին կտրված ժողովրդի հոգսերից:

1899թ. սկզբից արտասահման անցած և մինչև 1901թ. աշունը ժնևում «Դրոշակը» խմբագրող Քր. Միքայելյանը թերթի էջերում բազմիցս անդրադարձել էր բռնի հանգանակության խնդրին: Ինչպես իր հոդվածներում, այնպես էլ բանավոր ելույթների ու զրույցների ժամանակ նա շեշտում էր կուսակցության միջոցների սուղ լինելը: Դրա հետևանքով, օրինակ, Փարիզում Պիեռ Քիառի կողմից խմբագրվող «Պրո Արմենիա» ֆրանսերեն թերթի լույսընծայումը շատ հաճախ խափանվում էր: Ուստի թերթին աջակցելու համար «Դրոշակի» խմբագրությունը ստիպված էր լինում արտասահմանյան հայ գաղութների խոնարհ խավերի և Եվրոպայում սովորող հայ ուսանողների շրջանում անցկացնել դրամահավաք, որի արդյունքները, սովորաբար, համեստ էին լինում: Բայց կուսակցությանը մեծ գումարներ էին պետք ոչ միայն «Պրո Արմենիան» պահելու, այլև ազատագրական շարժման մյուս գործերը առաջ մղելու համար:

Կուսակցության ֆինանսական գործերը փոքրիշատե բարելավելու համար Եվրոպայում գտնվող Ավ. Ահարոնյանը և Միք. Վարանդյանը Քր. Միքայելյանի հրահանգով 1899թ. վերջերին շրջագայում են Կովկասում և Ռուսաստանում, բայց արդյունքը չնչին է լինում:

Դրանից հետո կուսակցության ղեկավարը, մի կողմ դնելով արժանապատվության հարցը, նամակներով անձամբ դիմում է մի քանի հայ միլիոնատերերի, բայց ստանում է կտրուկ մերժում: Իմանալով, որ Ֆրանսիայի հարավում Նիցցայում, հանգստանում է հայ մեծահարուստներից մեկը՝ Մոսկվայում ապրող ղարաբաղցի Իսահակ Ժամհարյանը, Քր. Միքայելյանը 1900թ. ձմռանը Ժնևից մեկնում է այնտեղ, անձամբ տեսակցում նրա հետ և կազմակերպության համար գումարներ խնդրում: Վերջինս կիսաբերան համաձայնություն է տալիս որոշ գումար տրամադրել կուսակցության արտասահմանյան պրոպագանդայի համար, բայց Քրիստափորի մեկնելուց հետո դրժում է խոստումը:

Կուսակցության ղեկավարը հայ կրեսոսների գրպանը բացելու ուրիշ միջոց չէր տեսնում, ուստի ստիպված դիմում է վճռական միջոցի՝ հայ կապիտալիստներից փող հավաքել բռնությամբ: Մրագրում է ստեղծել հատուկ խումբ, և

ինքն էլ կնքում է անունը՝ «Փոթորիկ»: Մտադրությունը շուտով դառնում է կուսակցական որոշում: Նա «Դրոշակի» տպարանում մեն-մենակ շարում ու տպագրում է փողատերերին ուղարկվելիք պահանջագրերի ձևը, որի վերևի մասում դաշնակցության զինանշանն էր, ներքևում սպառնագիրը: Իր հետ վերցնելով պահանջագրի բազմաթիվ օրինակներ, Քր. Միքայելյանը մեկնում է Կովկաս՝ իրականացնելու մտահղացումը:

Գալով Կովկաս՝ Քրիստափորը հաստատվում է Բաքվում: Սկզբում փորձում է տեղի հայ միլիոնատերերից գումարներ ստանալ խաղաղությամբ, նրանց համոզելով, բայց դա արդյունք չի տալիս, ինչպես չէր տվել նախկինում: Եվ ստիպված, նա հրապարակ է նետում «Փոթորիկը»: Խմբի մեջ նա ընդգրկել էր երիտասարդ նվիրյալ դաշնակցականների՝ Սարգիս (Գրիգոր) Օդաբաշյանին, միլիոնատեր Իսահակ Ժամհարյանի մոտիկ ազգական, բնիկ շուշեցի Մարգար Ժամհարյանին, թեքիրդաղցի հսկա հասակով Օննիկ Նևրուզին, Սև Աշոտին և ուրիշների: Գերմանիայի համալսարաններում սովորող Սարգիսը և Մարգարը թողել էին ուսումը և իրենց դրել Քրիստափորի տրամադրության տակ:

1902թ. ամռանը Քր. Միքայելյանը «Փոթորիկ» խմբի մի քանի անդամների հետ գնում է Շուշի, ուր և կատարում է բռնի հանգանակության առաջին փորձը:

Այդ ժամանակ Շուշիում էր գտնվում հիշատակած մեծահարուստ Իսահակ Ժամհարյանը, որը Մոսկվայից Ղարաբաղ էր եկել՝ ամառն անցկացնելու ծննդավայրում: Քրիստափորի հանձնարարությամբ Մարգարը, Սարգիսն ու Օննիկը առևանգում են նրան, տանում քաղաքից դուրս մի ամայի վայր և պահանջում կուսակցությանը տրամադրել 30 հազար ռուբլի: Սարսափած միլիոնատերը խոստանում է անմիջապես կատարել պահանջը և այդ հիման վրա ազատ է արձակվում: Սակայն, տուն վերադառնալով, նա անմիջապես հայտնում է իր աչքին ամենակարող թվացող ոստիկանությանը, որը և ձերբակալում է երեք երիտասարդներին:

«Փոթորիկի» առաջին փորձը ձախողվեց, բայց այն ճակատագրական եղավ հայ միլիոնատիրոջ համար: Դեպքից մի քանի ամիս հետո Մոսկվայի հայկական եկեղեցու բակում, մեծ բազմության ներկայությամբ, երիտասարդ դաշնակցական ահաբեկիչ ազուլիսցի Մաթևոսը դաշունահարում է Իսահակ Ժամհարյանին:

Միլիոնատիրոջ սպանության լուրը սարսափահար է անում հայ բուրժուազիային: Շուշիի անհաջողությունից հետո Քրիստափորը անցել էր Բաքու, ապա՝ Թիֆլիս, և ղեկավարում էր բուրժուաներից «տուրք» հավաքելու գործը: Վերջիններս, ահաբեկ, թե՛ Անդրկովկասում, թե՛ Հյուսիսային Կովկասում, Ռոստովում, Մոսկվայում և այլուր «բարեխղճորեն» ու ժամանակին կատարում էին «իրենց պարտքը» «ազգի հանդեպ»: Ավելին, նրանցից ոմանք, դեռ պահանջագիր չստացած, մեկնում էին արտասահման և

«կամավոր» մուծումներ կատարում Հ.Յ.Դ.-ին: Մեծահարուստներից մի քանիսը (Հարություն Ադամյան, Ջանփոլադյան և ուրիշներ), որոնք մերժել էին «Փոթորիկի» պահանջը, կրեցին մահվան պատիժ:

Բռնի հանգանակությամբ ձեռք բերած դրամական միջոցները գործելու նոր հնարավորություններ ստեղծեցին կուսակցության համար:

Իր խնդիրը կատարած համարելով Քր. Միքայելյանը Կովկասից նորից անցավ Եվրոպա, ուր նախապատրաստական աշխատանքներ էին տարվում գումարելու Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովը (Սոֆիա, 1904թ. ապրիլ):

Արտասահման անցան նաև բռնի հանգանակության գործով ձերբակալված մի քանի դաշնակցականներ, այդ թվում «Փոթորիկի» անդամներ Նեվրուզը և Սև Աշոտը:

«Փոթորիկի» մյուս անդամ Սարգիս Օղաբաշյանը շարունակում էր մնալ Շուշիի բանտում, և նրան ազատելու փորձերը մատնվել էին անհաջողության: Թուրք-հայկական ընդհարումների նախօրյակին ոստիկանների ուղեկցությամբ Սարգսին Շուշիի բանտից տանում էին Գանձակ՝ դատելու նահանգական դատարանում: Հ.Յ.Դ. Ապառաժի (Շուշիի) կ.կոմիտեն որոշում է՝ ինչ գնով էլ ուզում է լինի, նրան ազատել: Երբ ոստիկանի հսկողությամբ ամբաստանյալին հասցրել էին Եվլախ կայարան, դարանակալ մարտիկներ Ստեփան Ստեփանյանը և Աղաբեկ Մելիք-Շահնազարյանը հարձակվում են, սպանում պահակ ոստիկանին և փախցնում երիտասարդին[1]: Սարգիսն անմիջապես մխրճվում է Թուրք-հայկական կռիվների մեջ Զանգեզուրում և Նախիջևանում, ապա անցնում է Թուրքաց Հայաստան և դառնում Վասպուրականի նշանավոր քաղաքական գործիչներից մեկը՝ Կոմսի, Արամի, Իշխանի զինակիցը՝ Սարգիս Բարսեղյան, Վանա Սարգիս անուններով:

Ինչ վերաբերում է Իսահակ Ժամհարյանին ահաբեկած Մաթևոսին, ապա նա մի քանի տարի տառապում է բանտերում ու սիբիրյան աքսորավայրերում, բայց կարողանում է փախուստ տալ և գալ Կովկաս, ուր որոշ ժամանակ ընդհատակում մնալուց հետո անցնում է Թուրքահայաստան և կուսակցական աշխատանք կատարում Մուշ քաղաքում ու Մշո դաշտում*:

Թեև «Փոթորիկի» հիմնական անդամները հեռացել էին, բայց խումբը չէր դադարեցրել իր գործունեությունը: 1903-1904թթ. «Փոթորիկի» ամենագործոն անդամներից մեկը Մկրտիչ Աղամալյանն էր: Ենթասպայի աստիճանով զինվորական ծառայությունը վերջացրած և Բաքվի տրամվայի գծի ընկերությունում իբրև վերաքննիչ աշխատող Մկրտիչը ամբողջ երկու տարի կարողացել էր հնարամտությամբ թաքցնել իր գործունեությունը «Փոթորիկում»: Նույնիսկ Հ.Յ.Դ. Բաքվի կ.կոմիտեն այդ երկու տարիներին տեղյակ չէր խմբի գործունեության մասին, նրան անհայտ էր, թե ովքեր են դրա անդամները,

[1] Տե՛ս «Հայրենիք», N 11(167), սեպտեմբեր, 1936, էջ 86:
* Վանա Սարգիսը և Մաթևոսը զոհ գնացին 1915թ. եղեռնին:

չնայած դրանցից մի քանիսը նաև կ.կոմիտեի անդամներ էին: Ի վերջո Մկրտիչ Աղամալյանը թողեց իր պաշտոնը և ամբողջովին ընկղմվեց «Փոթորիկի» գործերի մեջ: Ոստիկանական հետապնդումներից խուսափելու համար նա ստիպված էր անցնել խոր ընդհատակ, ամբողջովին կտրվել դրսի աշխարհից և թաքստոցից դուրս գալ միայն այն ժամանակ, երբ պետք է կատարեր հերթական կարևոր գործողությունը՝ քաջությամբ ու սառնասրտությամբ:

Եվ ահա այժմ Թուրք-հայկական ընդհարումների եռուն շրջանում, «Փոթորիկի» գործունեությունը վերսկսվեց իր ամբողջ ծավալով, թեև մի կարճ ժամանակով:

Ստեղծված նոր պայմաններում «Փոթորիկը» Հ.Յ.Դ. բյուրոյից բոլորովին անկախ մարմին էր և պատասխանատու էր միայն կուսակցության հաջորդ ընդհանուր ժողովի առջև: Նրան վերապահված էր նաև 20 հազար ռուբլուց ավելի գումարներ պահանջելու իրավունքը: «Փոթորիկի» գլուխ էր կանգնած կուսակցության նշանավոր ղեկավար գործիչներից Հարություն Շահրիկյանը:

«Կյանքիս գրքեն (Փշրանքներ իմ յուշերեն)» նշանավոր հուշագրության մեջ Արտաշես Զիլինգարյանը, որն այդ ժամանակ Հ.Յ.Դ. Հյուսիսային Կովկասի (Ժլատի) կենտրոնական կոմիտեի գործուն անդամներից էր, նկարագրել է մի դեպք՝ ինքնապաշտպանության համար մեծահարուստ հայերից գումարներ ձեռք բերելու մասին :

Առանց Ժլատի կ. կոմիտեին տեղյակ պահելու՝ «Փոթորիկի» Արմավիր քաղաքի մասնաճյուղը չերքեզահայ մի մեծահարուստից, որը ոչ մի կապ չէր ունեցել հայ ազգային կյանքի և մանավանդ հայ քաղաքական ձգտումների հետ, պահանջել էր 25 հազար ռուբլի, բայց սա մերժել էր որևէ դրամ տալ և իսկույն հայտնել էր ոստիկանությանը: «Փոթորիկը» որոշում էր ընդունել նրան ահաբեկել, և վճիռը գործադրել էին երկու ահաբեկիչներ, սակայն նախօրոք տեղեկացված ոստիկանական և զինվորական ջոկատները շտապել էին դեպքի վայրը և շրջապատել երիտասարդներին: Սրանք անձնատուր չէին եղել և, հանելով մաուզերները, կատաղի կռվի մեջ էին մտել՝ փորձելով ճեղքել շրջապատման շղթան: Նրանցից մեկը սպանվել էր, իսկ մյուսը, թեև վիրավոր, կարողացել էր կռվելով հեռանալ՝ զոհեր խլելով ոստիկաններից ու զինվորներից[1]:

Այդպիսի դեպքերը եզակի չէին, և «Փոթորիկը» իր գործողություններով այս անգամ էլ, ինչպես դրանից երկու-երեք տարի առաջ, սարսափի մթնոլորտ էր ստեղծել հայ բուրժուաների շրջանում:

Հայկական հասարակության քաղաքական ուժերի և հոսանքների մեծ մասը հավանություն չէր տալիս դաշնակցության և հնչակի բռնի դրամահավաքի գործողություններին: Դրանք հատկապես խիստ քննադատվում էին պահպանողականների և լիբերալների կողմից: Այդ տեսակետից առաջնու-

[1] «Հայրենիք», N 9 (391), սեպտեմբեր, 1958, էջ 22:

թյունը պատկանում էր «Մշակին» և մշակականներին, հատկապես թերթի խմբագիրներից Համբարձում Առաքելյանին: Արտասահմանում «Մշակին» հետևում էր Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիան» (Մարսել): Վերջինս «Փոթորիկի» գործողությունների առթիվ գրում էր, թե ոճրագործություն է փողի համար մարդասպանությունը, որը «երբեք ներելի չէ ազատութեան անունով գործողներուն»[1]: Նա դատապարտում էր Ժամհարյանի սպանությունը, գտնում, որ նրա սպանությամբ տուժեց միայն ազգային գործը, քանի որ այդ դրամատերի միջոցներով խնամվում էին Մարաշի որբերը և Շուշիի հիվանդները[2]:

Բռնի դրամահավաքի դեմ ավելի խիստ էին արտահայտվում սոցիալ-դեմոկրատները: Բոլշևիկները շեշտում էին, որ իրենց սոցիալիստներ հռչակած դաշնակցականները և հնչակյանները բռնի դրամահավաքի գործողություններով նորից հաստատում են, որ իրենք որևէ ընդհանրություն չունեն իրավ սոցիալիստների հետ, որոնք կտրականապես մերժում են բռնությամբ փող ձեռք ձգելը՝ ինչպիսիք էլ լինեն արդարացման պատճառաբանությունները[*]:

Դաշնակցությունը և հնչակը իրենց քննադատներին պատասխանում էին, որ տվյալ պահին իրենք այլ միջոց չունեն բացելու միլիոնատերերի գրպանները: Պատահական չէ, գրում էր դաշնակցական գործիչներից մեկը, որ Արմավիրում չերքեզահայ մեծահարուստի ահաբեկումից հետո նույն քաղաքի մեծահարուստ հայերը լայնորեն բացեցին իրենց փողի քսակները, իսկ Հյուսիսային Կովկասի շրջանը մի քանի ամսում հայկական ինքնապաշտպանության համար կուսակցությանը տրամադրեց 2 միլիոն ռուբլի[3]:

Չնայած հարուստներից գումարներ գանձելու գործը աստիճանաբար դրվեց կանոնավոր հունի մեջ, բայց հույսը շարունակում էր մնալ աշխատավոր մարդկանց վրա, որոնք իրենց խնայած կոպեկները տրամադրում էին դաշնակցությանը և հնչակին: Ուրիշ ելք չկար. ինչ գնով էլ ուզում էր լիներ, զենք

[1] «Արմենիա», 10 ապրիլի 1907թ.:
[2] Նույն տեղում:
[*] Նկատենք, որ շատ չանցած՝ 1907թ. հունիսի 13-ին, Թիֆլիսի երևանյան հրապարակում բոլշևիկները Սիմոն Տեր-Պետրոսյանի (Կամո) ձեռքով իրականացրին ցարական պետությանը պատկանող 250 հազար ռուբլու բռնագրավումը՝ իրենց կուսակցության՝ ՌՍԴԲԿ կարիքների համար: Սակայն այդ գումարը բոլշևիկները չկարողացան օգտագործել. բռնագրավված փողերի մեծ մասը 500 ռուբլիանոց էր, ուստի անհնար եղավ դրանք Ռուսաստանում մանրել, իսկ Եվրոպայում մանրացնելու կամ փոխանակելու բոլոր փորձերը ձախողվեցին: Հրապարակելով փողերի սերիաներն ու համարները՝ ցարական կառավարությունը դիմել էր արտասահմանյան երկրների կառավարություններին՝ հայտնաբերելու փոխանակման փորձ կատարողներին: Ձերբակալվեցին մի շարք նշանավոր գործիչներ, և Թիֆլիսյան բռնագրավումը բոլշևիկների համար փաստորեն անարդյունք անցավ: Մենշևիկները փողերի բռնագրավման փորձը օգտագործեցին բոլշևիկներին միջազգային հասարակայնության աչքում վարկաբեկելու համար: (Այդ ամենի մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ, «Հայաստան» հրատ., Երևան, 1967, էջ 254-264):
[3] «Հայրենիք», N 9 (391), սեպտեմբեր, 1958, էջ 22:

ձեռք բերելու համար պետք է ստեղծվեին հատուկ ֆոնդեր՝ հիմնականում ժողովրդական միջոցներով: Այդպիսի ֆոնդ ստեղծեց հնչակը: Ավելի ծավալուն էր դաշնակցության արևելյան բյուրոյի կողմից ստեղծված զինական ֆոնդը (Զիֆոն):

Ժողովուրդը սկզբնական շրջանում դժվարությամբ էր ընդառաջ գնում կազմակերպության կոչերին, քանի որ չէր հավատում, թե թուրքերի կողմից շարունակվելու են հարձակումները: Ուստի անհրաժեշտ էր լինում զանազան միջոցների դիմել, գյուղացիներին համոզել կամ ստիպել, որպեսզի նրանք զենք ձեռք բերեն:

Դաշնակցությունը քարոզչական մեծ աշխատանք ծավալեց ամենալայն զանգվածների շրջանում նպատակ ունենալով նրանց գիտակցությանը հասցնել խնդրի հրամայականը: Կուսակցությունը կոչ էր անում ամեն ինչում տնտեսել, բայց ոչինչ չխնայել զենք ունենալու համար[1]:

«Զինվե՛լ ամեն տեղ, - հրահանգում էր «Դրոշակը», - ահա փետրվարյան արյունոտ օրերի հրամայական պահանջը: Զինվե՛լ մասսայորեն և միշտ պատրաստ հսկելու, թե ո՞ր կողմից է գալիս արյունարբու ոսոխը»[2]: Թերթը նշում էր, որ գարշանքի և անեծքի ճիչեր են հարուցում ռուսական կառավարության քստմնելի դավերը, սիրտ են արյունոտում մահմեդական բախտախնդիրների գազանային արարքները, բայց դրանց կողքին ոչ պակաս վշտաբեր է և այն հանգամանքը, որ հայ ազգաբնակչությունը իր ավանդական անփութության, այսինքն՝ զենք չունենալու պատճառով, այս էլ քանի՛- քանի՛ անգամ, մատնվում է անպատիվ նահատակության: Եվ դա այն դեպքում, երբ վաղուց պտտվում էին չչուկներ թուրքերի պատրաստությունների մասին:

Իրավացի էր «Դրոշակը»: Եթե թուրքահայերի զենք չունենալը դեռ որոշ հարգելի պատճառներ ուներ, քանի որ Տաճկաստանում զենք հայթայթելու և այն կրելու համար հայը պետք է անթիվ-անհամար խոչընդոտներ հաղթահարեր, ապա արմատից մերժելի էր Անդրկովկասի հայության անհոգությունը և զինված չլինելու հանգամանքը: Թերթը նախազգուշացնում էր, որ «անարգ «չեյթանի» ձեռքով բորբոքված հրդեհը հնարավոր է, որ տարածվե ու ճարակե ամբողջ հայ աշխարհը»[3]: «Կ'ուզեինք, ա՜հ, շատ կ'ուզեինք լավատես լինել, հավատալ, որ Բաքվի դժոխքը առաջինը և վերջինը կլինի... Սակայն անփույթ լավատեսությունից հազար անգամ ավելի լավ է մտահոգ զգաստությունը»[4]: Ուստի հայությունը, հատկապես հայկական գավառներում, պետք է դուրս գա կրավորական վիճակից և դիմի զենքի փրկարար ուժին[5]:

[1] «Հայրենիք», N 2 (194), դեկտեմբեր, 1938, էջ 118:
[2] «Դրոշակ», N 3, մարտ, 1905, էջ 33:
[3] Նույն տեղում, էջ 34:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

«Դրոշակը» համոզված էր, որ եթե Բաքվում հայերի դիմադրությունը սկսվեր անմիջապես և ավելի մեծ ծավալով, ապա կասկած չկա, որ հրդեհը կմարեր հենց իր բռնկման րոպեին, և այնժամ «մահմեդական ժողովրդի թափթփուկները Բաքվի մեջ և Բաքվից դուրս միանգամ ընդմիշտ կգիտակցեին, որ այնքան էլ դյուրին չէ հայ ժողովրդի վրա որսի գնալը»[1]:

Դաշնակցությունը ձգտում էր այն բանին, որ՝

1) Ցուրաքանչյուր գյուղացի իր սեփական զենքն ունենա: Ունևորը պարտավոր էր մեկից ավելի զենք գնել՝ մեկը իրեն պահելով, մնացածները ընելով ընդհանուրի տրամադրության տակ: Չքավորներն ազատ էին զենք գնելու պարտավորությունից, 2) Գյուղացիների ընդհանուր հանգանակության միջոցով զենք և ռազմամթերք գնվի իբրև ամբողջ գյուղի համայնական սեփականություն: Դրանք կոչվում էին «ժողովրդական զենքեր», որոնք տրվում էին գյուղի չքավոր քաջ զինվորներին: Այս զենքերի թվի մեջ էին մտնում նաև հարուստների մեկից ավելի գնած զենքերը, 3) Ստեղծվեն դյուրություններ ժողովրդի համար, որպեսզի նա կարողանա հեշտությամբ զենք ձեռք բերել կուսակցության գործակալների կամ մաքսանենգների միջոցով: Վերջիններս ենթակա էին դաշնակցության մարմինների խիստ հսկողությանը, որպեսզի նրանք անտեղյակ մարդկանց անորակ զենքեր չվաճառեին կամ չվաճառեին չափից ավելի թանկ գներով:

Հետզհետե զարգացող դեպքերը ժողովրդին համոզեցին, որ սպառնացող վտանգը շատ մեծ է, և սկսվեց զինվելու ուժգին հոսանք: Գյուղացին ծախում էր իր կովը կամ տան գորգը՝ հրացան գնելու համար:

Օրինակ, Ելիզավետպոլի նահանգի Գանձակի գավառի Բանանց գյուղում հրավիրված ժողովի ժամանակ ժողովրդի դրսևորած պատրաստակամությունն այնքան մեծ էր, որ անմիջապես հենց տեղում հանգանակվեց 3000 ռուբլուց ավելի, որը Հ.Յ.Դ. տեղական կազմակերպության և համայնքի կողմից լիազորված անձերի միջոցով անմիջապես ուղարկվեց Հ.Յ.Դ. Գանձակի կ.կոմիտեին՝ գյուղի համար հրացաններ ու փամփուշտներ գնելու նպատակով[2]:

Նույն կերպ էին վարվում նույն գավառի Գետաբեկի և մյուս շրջանների բոլոր գյուղերի հայերը:

Զենք ձեռք բերելու նույն պատրաստակամությունն էին հանդես բերում նահանգի մյուս գավառների հայերը: Ղազախի գավառի հայկական շրջանների ինքնապաշտպանության ղեկավար Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովանյան) Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին ուղարկած հաշվետվության մեջ գրում էր.

«Շամշադին, Ղազախի զանազան գյուղերի հասարակություններից գալիս են խնդրելու զինամթերք, որոնց բավականություն տալու անկարող եմ գտնվում մթերքների բացակայության պատճառով, ուստի կարգադրեցի անհապաղ փող ժողովել ամեն մի դիմող հասարակությունից յուրաքանչյուրն ըստ իր կարողության, և այդ փողերը առանձին ցուցակով հանձնեցի և գնելի իրերը ևս առանձին ցուցակով հանձնեցի Պ. Սմբատ Հարությունյանցին գնալ մեծ քաղաք* գնելու հարկավոր ռազմամթերքները և զինելու վերաբերյալ բոլոր մասերը: Հայտնում եմ նաև ի գիտություն Բյուրոյիդ, որ Ղազախ քաղաքի ուեզդնի ուպրավլենի չխաուզը** կրակելու միջոցին հայ քաջերը կարողացել են մի քանի տասնյակ զանազան տեսակի հրացաններ հափշտակել և տանել մի մասը դեպի Շամշադին, իսկ մյուս մասը զանազան տեղեր: Ցաքուտի և Լեռնաստանի շրջանի խորհուրդը նախ վճիռ կայացրեց հարձակում գործելու մոտակա թուրք գյուղերի վրա, բայց տեսնելով ծայրերի*** սակավությունը, որից հարյուրակներին տված է յուրաքանչյուր զինվորի 30-50 հատ, հետաձգեց իր մտադրությունը, աշխատելով շուտափույթ պատրաստություն տեսնել ռազմամթերքի և ապա կարգադրել ինչ անելիքը: Առայժմ գործի իսկական դրությունը իր բոլոր կազմով այսպես է: Ամեն բան դասավորելուց հետո կ'անցնեմ դեպի Լեռնաստան:

Ձեր Սաքո:

1905 ամի 5 դեկտեմբերի, Իջևան»[1]:

Ոչ միայն այս, այլև Անդրկովկասի հայկական մյուս գավառների հայրենասեր, արի, զոհաբերող ժողովուրդը զարմանալի պատրաստակամությամբ էր ընդունում զենք ձեռք բերելու բոլոր առաջարկները:

Զենքի գները առասպելական չափերի հասան, որովհետև հայերն ու թուրքերը Ռուսաստանի զանազան քաղաքներն ընկած՝ իրար հետ մրցում էին այն ձեռք բերելու համար: Կռիվների ժամանակ մոսինն արժեր 300 ռուբլի, բերդանը՝ 150 ռուբլի, փամփուշտը՝ 20-50 կոպեկ[2]: Բայց մարդիկ կանգ չէին առնում ոչ մի արգելքի առջև:

Իշխանություններն ամեն տեսակ խոչընդոտ էին ստեղծում հայերի զինման ճանապարհին: Կազակները շարունակ հետամուտ էին հայ մարտիկներին զինաթափ անելու դիտավորությամբ: Հայ գյուղացին չէր կարողանում դուրս գալ դաշտ և եթե զինվում էր ինքնապաշտպանության համար, ոստիկանը գալիս ու խլում էր զենքը: Իր ժողովրդին պաշտպանելու համար դաշնակցությունը կառավարությունից չէր խնդրում ո՛չ գորք և ո՛չ ոստիկան, այլ ինքնապաշտպանության համար հայերին զենք կրելու իրավունք էր պահանջում միայն, ինչպիսի իրավունք փաստորեն ունեին թուրքերը:

---

[1] «Դրոշակ», N 3, մարտ, 1905, էջ 34:
[2] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 46:

* Թիֆլիս քաղաքի՝ Հ.Յ. դաշնակցության կողմից ընդունված ծածկանունն է:
** Խոսքը՝ "Чейхгауз уездного управления"-ի, այսինքն՝ գավառային վարչության մթերանոց-զինապահեստի մասին է: "Чейхгауз" բառը գերմաներեն "Zeighaus" բառն է, որ ռուսները դարձրել են "цейхгауз", իսկ հայ և թուրք գյուղացիները՝ «չխաուզ»:
*** Փամփուշտի՝ հրացանի փողից թռչող ծայրը:
[1] «Հայրենիք», N 8(402), 1959, էջ 79:
[2] Նույն տեղում, N 2(194), դեկտեմբեր, 1938, էջ 122:

Ակնհայտ էր, որ այդ պահանջը տվյալ իրավիճակում երկրամասում խաղաղություն վերահաստատելու միակ միջոցն էր, բայց քանի որ ընդհարումների դադարեցումը չէր մտնում կառավարության հաշիվների մեջ, ուստի հայերի՝ զենք ունենալու միտքը մշտապես հանդիպում էր պաշտոնյաների կատաղի հակազդեցությանը: Դա չէր թուլացնում դաշնակցության եռանդը: «Դրոշակը» գրում էր, որ կուսակցությունը չի ենթարկվելու իշխանությունների սպառնալիքներին և ժողովրդին անզեն չի թողնելու, չի ունկնդրելու նաև հայ բուրժուաների չարաշուք ձայներին: Այս ճակատագրական պահին հայությունն իրավունք չունի նմանվելու այն տխրահռչակ բյուզանդացիներին, որոնք կլանվել էին աստվածաբանական, տիրացուական վեճերով այն միջոցին, երբ թուրքերը սպառազեն կանգնել էին Կոստանդնուպոլսի դարպասների առջև: Ժողովրդին ամենից առաջ պետք է տալ ապրելու հնարավորություն՝ Primumvivere deinte philisopharis*: Կուսակցության պաշտոնաթերթը վճռականորեն հայտարարում էր, որ ոչինչ չի կարող դաշնակցությանը շեղել իր բռնած ընթացքից, որ նա հայության բոլոր դասակարգերին, հայ ազգաբնակչության բոլոր խավերին անդադրում կոչ է անելու ցանկալի հաջողությամբ պսակել ժողովրդական զինավորման գործը[1]:

Եվ գործն առաջ էր գնում: Հայ ազգային հեղափոխական կուսակցությունների համար բավական չէր դրամ հանգանակելը, զենք գտնելը և գնելը: Ոչ պակաս կարևոր էր, եթե ոչ՝ ավելի կարևոր, ձեռք բերած զենքն ու զինամթերքը Անդրկովկասի վտանգված հայկական վայրեր փոխադրելը:

Զենքի փոխադրումը կազմակերպելու համար դաշնակցության զինական ֆոնդը (Զիֆոն) լծվել էր անդուլ աշխատանքի: Զենքերը հիմնականում ձեռք էին բերվում Օրիոլի և Տուլայի զինագործարաններում, նաև՝ Ռուսաստանի այլ վայրերում դրամի ուժով, կաշառքով կամ գողությամբ[2]: Հատկապես ձեռնտու էր դեռևս Ալեքսանդր I-ի ժամանակ կառուցված Զլատոուստի զինագործարանից զենք ձեռք բերելը: Այս քաղաքում աներևակայելի լայն մասշտաբներ էր ընդունել բնակչության կողմից ալկոհոլի գործածումը, իսկ զինագործարանի բանվորների հարբեցողությունը դարձել էր չարիք: Սրանք զենքեր էին դուրս բերում գործարանից և մի քանի շիշ օղու գնով վաճառում տարբեր կազմակերպությունների գործակալներին: Նախքան Անդրկովկաս հասցնելը, զենքն ու զինամթերքը պահեստավորվում էին Հյուսիսային Կովկասի քաղաքներում, առաջին հերթին Վլադիկավկազում, ապա և՝ Պյատիգորսկում ու հանքային ջրերի մյուս քաղաքներում: Զենքի և զինամթերքի տեղափոխման խնդրով զբաղված էին Հյուսիսային Կովկասի համարյա բոլոր դաշնակցական կազմակերպությունները՝ Հ.Յ.Դ.Նալբանդի և Ժլատի կենտրոնական կոմիտեի

* Նախ՝ ապրել և ապա՝ փիլիսոփայել:
1 «Դրոշակ», N 3, մարտ, 1906, էջ 37:
2 «Հայրենիք», N 10(297), հոկտեմբեր, 1950, էջ 54:

գլխավորությամբ: Այդ գործի մեջ կուսակցությունը հատկապես ներգրավել էր երիտասարդ օրիորդների և տիկնանց, որոնք, լավ հագնված, ճամփորդում էին գնացքներով, երկրորդ կարգի կուպեներում կասկածների նվազ առիթ տալու համար: Քանի որ Վլադիկավկազը զենքի կենտրոնացման հիմնական վայրն էր, ուստի նրանք այդտեղ ավելի հաճախ էին հայտնվում: Դաշնակցության հյուսիսկովկասյան պահեստներից ստանալով հասանելիքը և տեղավորելով իրենց պայուսակների մեջ՝ նրանք նախապես մշակված ուղերթով մեկնում էին Անդրկովկասի այն վայրերը, ուր զենքի կարիք կար:

Արտաշես Չիլինգարյանը «Կյանքիս գրքեն» հուշագրության մեջ, անդրադառնալով այդ անձնազոհ հայոց դուստրերի վտանգներով լի գործին, գրում էր. «Եթե բռնուէին, պիտի բանտարկուէին անշուշտ: Բայց անոնք չէին վախնար ատկէ, լիովին գիտակից էին, որ շատ կարեւոր գործ մը կը կատարէին իրենց ժողովուրդի ինքնապաշպանութեան համար:

Ինչ որ ամենէն զարմանալի էր, գրեթէ միշտ ալ անոնք կը յաջողէին զէնքերը անվնաս տեղ հասցնել: Ոչ ցարական ոստիկանութիւնը եւ ոչ ալ թուրքերը, ըստ երեւոյթին, կ՚երեւակայէին, թէ լաւ ընտանիքներու պատկանող հայ օրիորդներ ու տիկիններ կրնային զբաղիլ վտանգաւոր գործով: Այդ պատճառով ալ անոնց հետապնդումը շատ թեթեւ ու մակերեսային էր»[1]:

Հյուսիսային Կովկասից զենքերն Անդրկովկաս էին փոխադրվում նաև մի ուրիշ կերպ, որը, ճիշտ է, հնարավորություն էր տալիս ավելի մեծ քանակությամբ զենք մտցնել հայաբնակ նահանգներ, բայց շատ ավելի բարդ ու դժվարին էր՝ կապված բազում վտանգների հետ:

Զենքի ամենամեծ պահեստարանը Վլադիկավկազի ծայրամասային մի թաղում էր: Հ.Յ.Դ. տեղի կազմակերպությունն այնտեղ գնել էր ընդարձակ բակով մի տուն, հետո վստահելի հայ մարդկանց ուժերով հողի տակ պատրաստվել էր տարողունակ մի գաղտնի պահեստ: Շինարարությունն ավարտելուց հետո բակը վերածվել էր խանի*: Դա շատ հարմար էր քողարկելու ձեռնարկված գործը, քանի որ այնտեղ եկող հյուրերը, որպես կանոն, գալիս էին ֆուրգոններով ու կառքերով: Այդտեղ էին հայտնվում կազմակերպությանը պատկանող և կոնկրետ նպատակների համար հատուկ պատրաստված ֆուրգոնները, որոնք իրենց կառուցվածքում ունեին գաղտնի պահոցներ:

Ֆուրգոնները ռազմավիրական ճանապարհով գալիս էին Թիֆլիսից՝ բերելով զանազան ապրանքներ, որոնք բեռնաթափվում էին խանում, ապա գիշերը վրա հասնելուց «ֆուրգոնչիկներն» իրենց գաղտնի պահոցների մեջ էին լցնում հրացանների մասեր ու փամփուշտներ, որից հետո ֆուրգոնների վրա դարսում էին խոտ կամ նման թեթև ապրանքներ և առավոտ շուտ, նույն

1 «Հայրենիք», N 10(297), հոկտեմբեր, 1950, էջ 54:
* Խան – կյան, օթևան:

ռազմավիրական ճանապարհով, մեկնում էին Թիֆլիս, իսկ այնտեղից՝ Անդրկովկասի զանազան վայրեր:

Երկար ժամանակ դաշնակցությանը հաջողվում էր այդ ձևով զենքեր փոխադրել Անդրկովկաս՝ առանց ոստիկանության կամ Թուրքերի կողմից նկատվելու: Դրա հիմնական պատճառն այն էր, որ կուսակցությունը ինչպես զենքի ձեռքբերման, այնպես էլ փոխադրման դժվարին գործի մեջ ներգրավել էր խիստ վստահելի, սառնասիրտ ու հնարամիտ մարդկանց: Դրանց թվում հատկապես անգնահատելի դեր էր կատարում նշանավոր Թադևոս Ամիրյանը, որը 1905թ. երկրորդ կեսին և 1906թ. գարնանը Հյուսիսային Կովկասից տարբեր ճանապարհներով մեծաքանակ զենք փոխադրեց Բաքու և Անդրկովկասի այն վայրերը, որտեղ մեծ էր դրա կարիքը:

Լինում էին նաև զենքերի հայտնաբերման դեպքեր և բռնագրավման փորձեր: Սակայն ոստիկանության ու ժանդարմերիայի համար նման գործողություններ կատարելը այնքան էլ հեշտ չէր: Արտաշես Զիլինգարյանը պատմել է այդպիսի մի դեպքի մասին:

Օրերից մի օր նա և Լևոն Քալանթարյանը կուսակցական հանձնարարականով Հյուսիսային Կովկասի քաղաքներում կատարած սովորական պտույտից հետո վերադառնում են Վլադիկավկազ և այնտեղ իմանում, որ դաշնակցության կազմակերպության զենքի նշված պահեստը հայտնաբերվել է ժանդարմների կողմից, որոնք, զենքերը լցնելով մեծ արկղերի մեջ, տարել են: Կատարվածը մեծ անհանգստություն է առաջացնում, և հետևանքները խոստանում են բավական տհաճ լինել:

Բայց տեղի է ունենում հանդուգն գործողություններից մեկը: Հաջորդ օրը դաշնակցական Ն. Բաբաքեխվյանը (Կոլյա) մտնում է ժանդարմական վարչության պետ գնդապետ Լուպակովի աշխատասենյակը, և նրա ու ժանդարմական պետի միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը.

« - Գնդապետ Լուպակով, դուք գիտե՞ք, թե ում զենքերն եք բռնագրավել:

Գնդապետը թեև լավ գիտեր, բայց չի ուզում խոստովանել ու անհանգստացած պատասխանում է.

- Ո՛չ, չգիտեմ: Ի՞նչ կա, ինչո՞ւ եք հարցնում:

- Ձեր բռնագրաված զենքերը պատկանում են Հ.Յ. դաշնակցությանը: Այժմ, որ գիտեք, անմիջապես հրաման տվեք, որ զենքերը մեզ վերադարձվեն: Հակառակ պարագային մենք պատասխանատու չենք լինի ծանր հետևանքների համար: Փառք աստծո, դուք լավ եք ճանաչում Հ.Յ. դաշնակցությանը և գիտեք, թե երբեք նա չպիտի ներե ձեզ այդպիսի մի թշնամություն»:

Գնդապետը, բոլորովին այլայլված ու վախվորած, զանգահարում է, և անմիջապես ներս են մտնում երկու ժանդարմներ, որոնց հրամայում է ներսի սենյակում դարսած զենքի արկղերը դուրս բերել և չտապ հանձնել Բաբաքեխվյանին ու նրա մարդկանց: Շուտով վարձված համալները արկղերը դուրս են տանում: Ուրախության որևէ նշույլ իսկ ցույց չտալով՝ Բաբաքեխվյանը գլխով

մի թեթև շարժում է անում, ուզելով ասել, թե հավանություն է տալիս գնդապետի արարքին, և քայլում է դեպի դուռը: Երբ մոտենում է դռանը, Լուպակովը նրան աղաչական ձայնով կանգնեցնում է և ասում.

- Գո՞հ եք և որևէ ուրիշ պահանջ չունե՞ք ինձանից:

- Ո՛չ, չունենք, - պատասխանում է Բաբաքեխվյանը:

- Եթե այդպես է, շատ եմ խնդրում ինձ մի թուղթ տաք, որ ինձանից որևէ պահանջ կամ իմ դեմ որևէ դժգոհություն չունեք այլևս:

- Շատ լավ, - ասում է Բաբաքեխվյանը և, մոտենալով սեղանին, մի քանի տող բան է գրում այդ իմաստով և տալիս նրան»[1]:

Գնդապետ Լուպակովի արարքը բոլորովին զարմանալի չէր, որովհետև հայերի կողմից ռուս պաշտոնյաների սպանությունները, հատկապես իշխան Նակաշիձեի սպանությունը ահաբեկել էին ոչ միայն Անդրկովկասի, այլև Հյուսիսային Կովկասի ժանդարմական ու ոստիկանական վարչություններին: Հայության դեմ գործած ոճիրների համար դրանց հեղինակները սարսափում էին «դաշնակցություն» անունը լսելիս, քանի որ քաջ գիտեին, որ այդ կազմակերպության ահաբեկիչներից փրկություն չկա:

Ռուսաստանից Անդրկովկաս զենք տեղափոխելու գործը գլխավորում էր Հ.Յ.Դ արևելյան բյուրոն, իսկ դաշնակցության արևմտյան բյուրոն զենք էր հասցնում եվրոպական երկրներից:

Մենք վիճակագրական տեղեկություններ չունենք Թուրք-հայկական ընդհարումների ժամանակաշրջանում հայկական կազմակերպությունների կողմից Անդրկովկաս բերված զենքի և զինամթերքի քանակի մասին, քանի որ նման տեղեկություններ ժամանակին, բնականաբար, չեն հրապարակվել, բայց այդ քանակն այնքան նշանակալից էր, որ 1905թ. վերջերին հայկական բոլոր բնակավայրերը զինված էին՝ մի տեղ ունենալով բավարար, մի ուրիշ տեղում քիչ հրացաններ ու զինամթերք:

Այդ հանգամանքը հնարավորություն ստեղծեց, որպեսզի արդեն 1905թ. աշնան վերջին դաշնակցությունը դադարեցնի «Փոթորիկի» գործունեությունը: Այդ նպատակով նախ Հ.Յ.Դ. արևելյան և արևմտյան բյուրոները, ապա նաև կ.կոմիտեները շարքերին իջեցրին խստիվ հրահանգներ: Նույն կերպ վարվեցին հնչակյան ղեկավար մարմինները՝ կուսակցության անդամներին արգելելով հետայսու դիմել որևէ բռնի հանգանակության[2]:

Դաշնակցության վերին մարմինները տեղական կազմակերպություններին հրահանգ էին իջեցրել՝ ուժեղացնել զենքերի պահպանությունը, նպատակային ու խիստ խնայողաբար ծախսել զինամթերքը, որովհետև «ամեն մեկ փամփուշտ մեզի համար մեծ գին ունի»:

Դաշնակցության և հնչակի կողմից գրեթե բացահայտ կատարվող հանգա-

[1] «Հայրենիք», N 10 (392), հոկտեմբեր, 1958, էջ 10:
[2] ՀՀ ՀԳԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 43, թ. 2:

նակությունները և զենքի հայտնվելը հայ հասարակ գյուղացու ձեռքին, առաջ էին բերել թուրքերի վրդովմունքը, ուստի հայերի գործողություններին հսկում էին ոչ միայն ոստիկաններն ու ժանդարմները, այլև նրանք: Մուսուլման բեկերը, կապիտալիստներն ու ազգային գործիչները նույնպես ձեռնամուխ էին եղել զենքի փոխադրման և իրենց ազգի մարդկանց զինման գործին, թեև ոչ այնքան նկատելի, ինչպես անում էին հայ ազգային հեղափոխական կուսակցություններն ու գործիչները:

Առաջվա նման մտահոգում էր մի խնդիր ևս. ի՞նչ անել, որպեսզի իշխանությունները ձեռք քաշեն հայերին զինաթափելու ավանդական գործելակերպից:

1905թ. հունիսի 3-ին հայերը Երևանի նահանգապետ Տիզենհաուզենին ներկայացրին մի հանրագիր՝ պահանջելով խաղաղությունը կայացնելիս հենվել դրանում արված առաջարկների վրա: Այնտեղ ասված էր, որ փետրվարի և մայիսի անցքերը հաստատում են, որ դրանց հեղինակները եղել են մահմեդականները, ուստի և ամբողջ պատասխանատվությունն ընկնում է նրանց վրա: Թեև այժմ մահմեդականների ղեկավարները հավաստիացնում են, թե այլևս երբեք ոտիթ չեն տալու անկարգությունների, բայց խոստումները հավատ չեն ներշնչում: Հավատ կարող է առաջանալ այն ժամանակ, եթե, օրինակ, մահմեդական ղեկավարներն անկարգություններ կազմակերպողներին և հեղինակներին իրենց միջից քշեին Կովկասի սահմաններից դուրս: Հանրագրում նաև պահանջ էր առաջ քաշված դադարեցնել Երևանի նահանգում հայերի զինաթափումը, նկատի առնելով, որ նրանք զենք են գործածում միայն ինքնապաշտպանության նպատակով: Առաջարկվում էր նաև պաշտոնանկ անել Երևանի ոստիկանապետին և պրիստավի օգնական Մեհմեդ բեկ Վեզիրովին[1]:

Հանրագիրն ըստ երևույթին տպավորություն էր թողել նահանգապետի վրա: Նա խոստացավ ընդհանրապես բնակչությանը զինաթափ չանել, ասելով, որ զինաթափության համար խուզարկություններ կկատարվեն միայն այն տներում, որտեղից հրացանաձգություն կլինի:

Հայերն ու թուրքերը նահանգապետին խոսք տվեցին սպանությունները կրկնվելու դեպքում չարագործներին հանձնել կառավարությանը:

Ինչպես և՛ թուրքերը, և՛ հայերը զինված էին և նրանց զինաթափություն չէր սպառնում, բայց քաղաքում տագնապը չէր վերանում. խանութները շարունակում էին փակ մնալ: Երկաթուղային կայարանը լիքն էր այլ վայրեր փախչողներով: Արևամուտին թուրքերը շտապ հեռանում էին իրենց թաղերը, իսկ երեկոյան ժամը 8-ից հետո փողոցներում այլևս ոչ ոք չէր երևում:

Շատերը համոզված էին, որ երկար ժամանակ չի հաջողվի հաշտությունը պահպանել, և որ թուրքերը վաղ թե ուշ փորձելու են վրեժխնդիր լինել

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 128, թ. 3:

հայերից այն մեծ զոհերի համար, որ ունեցել էին Երևանում:

Դրան գումարվեց այն, որ Նահանգապետ Տիզենհաուզենը դրժեց հայերին զինաթափ չանելու մասին տված խոստումը, այն դեպքում, երբ ոչ ոք թուրքերին չէր արգելում զենք ձեռք բերել, կրել կամ գործածել: Նահանգապետն իր խոստումից հրաժարվելը պատճառաբանում էր նրանով, որ փոխարքայի պալատից կարգադրություն էր ստացել բնակչությանը զինաթափել Կովկասի ողջ տարածքում: Ոչ ոք չէր տարակուսում, որ դա ուղղված է առաջին հերթին ինքնապաշտպան հայության դեմ:

Կովկասի ողջ տարածքում բնակչությանը զինաթափ անելու մասին կարգադրությունից հետո մեծահարուստ Դոլուխանովը հանդիպեց փոխարքային: Զրույցի ժամանակ Վորոնցով-Դաշկովն ասել էր, թե կառավարությունը գիտե, որ թուրքերի շարժումը իր բովանդակությամբ համիսլամական է, բայց, դժբախտաբար, ուժ չունի կռիվ հայտարարելու հինգ միլիոնանոց թուրք ժողովրդին: Դոլուխանովը նկատել էր, թե Անդրկովկասում թուրքերն իրենց թվաքանակով ճիշտ է հայերից շատ են, բայց հարկ չկա սարսափել նրանցից: Իսկ երբ խոսք էր բացել, թե կարելի է զինել հայ մարտիկներին, և նրանք ի վիճակի կլինեն պաշտպանելու իրենց ընտանիքների կյանքը, փոխարքան ասել էր, թե օրենքը թույլ չի տալիս երկրի մի մասը զինել մյուսի դեմ[1]:

1905թ. ամռանը հայերի համար անսպասելի բան կատարվեց. Անդրկովկասի մի քանի վայրերում, ուր կռիվներ էին գնում, իշխանությունները ոչ միայն հայերին չէին զինաթափում, այլև առաջին անգամ նրանց սահմանափակ թվով զենք տվեցին: Դա, սակայն, երկար չտևեց, քանզի գտան, որ սխալ են թույլ տվել: Նրանք սարսափ ապրեցին, մտածելով, որ եթե դադարեցվեն ընդհարումները, ապա հնարավոր է, որ զինված զանգվածները նոր խմբերով միանան հեղափոխական ուժերին: Ստացվել էր այնպես, որ երկու կողմին զինելով, իշխանություններն իրենց համար փաստորեն ստեղծել էին զինված միլիցեական կազմավորումներ՝ ինչպես թուրքերի, այնպես էլ հայերի համար: Ահա թե ինչու նրանք օգոստոսի վերջերից փորձեր արեցին հավաքել երկու կողմերին բաժանված զենքերը:

"Возрождение" թերթը 1905թ. N5-ում տպագրել էր միլիցիոներ-դրուժինիկներին ուղղված կոչ, որով նրանց հրավեր էր անում վերադարձնել կառավարությունից ստացած զենքերն այն պատճառաբանությամբ, թե «մենք մեր զենքերով ավելի ենք բորբոքում նրանց (մուսուլմաններին և հայերին: - Հ. Ս.), Ի՛լ ավել ենք մեծացնում նյարդերի լարումը»:

Ցարիզմին հատկապես անհանգստացնում էր այն, որ իր բաժանած զենքերի զգալի մասն ընկել է սոցիալ-դեմոկրատական ուժերի ձեռքը:

Դաշնակցականները հայտարարեցին, որ իրենք պատրաստ են հանձնել զենքերը, բայց միայն այն դեպքում, եթե հավաքվեն նաև թուրքերին տված

[1] «Սոցիալիստ», N 11, 1(14) հոկտեմբերի 1905թ.:

զենքերը: Քանի որ գործնականում դա անհնարին էր, ուստի հայ ինքնապաշտպանական ջոկատներից զենք վերցնելը նույնպես դարձավ անհնարին:

Հայերին կոչ անելով զենքերը չհանձնել՝ խմբագրական-առաջնորդողում «Դրոշակը» գրում էր.

«Իսկ դու, հայ մարտիրոս ժողովուրդ, ... հեռու վանիր քեզանից հուսահատ և սև մտքերը: Արյունը թող վախ չազդե՛ քեզ: Հավատարիմ մնա քո կոչմանը, քո պատմական դերին, անցիր զոհերի վրայից, ու զենքը ձեռքիդ՝ ծառայիր թշնամուդ առաջ: Այդ զոհերը՝ քո մեծության պատվանդանն են:

Նոր զոհերը նոր կռիվ են պահանջում»[1]:

Թուրքերն իշխանություններին պատասխանում էին, որ իրենք զենք չեն հանձնի, քանի որ հայերն անհամեմատ լավ են զինված, և ոչ ոք ի վիճակի չէ ճշտելու նրանց զենքերի թիվը:

Ինչ վերաբերում էր սոցիալ-դեմոկրատներին՝ ցարիզմի ամենահետևողական հակառակորդներին, ապա նրանք առավել վճռականությամբ էին մերժում զենքը իշխանություններին վերադարձնելու և իրենց մարտական ջոկատները ցրելու մասին պահանջը: Նրանք չէին թաքցնում, որ զենքն իրենք պիտի ուղղեն ինքնակալության դեմ նրան տապալելու համար:

Բոլշևիկյան "Кавказский рабочий листок"-ը գրում էր.

«Մենք զենք չենք հանձնի, քանի որ մի խուլիգան սպա, մի սադրիչ ոստիկան կարող են այնպես անել, որ տվյալ քաղաքն ընկնի թուրքերի ձեռքը, խուլիգանների ձեռքը: ...Միայն սոցիալ-դեմոկրատական հեղափոխական ողջ ժողովրդի համերաշխ աջակցությամբ կարող է երաշխավորվել բնակչության անվտանգությունը: Այո՛, մենք, անշուշտ, կդիմենք սոցիալ-դեմոկրատական դրուժինաներին, բայց ո՛չ "Возрождение"-ի կոչով: Մենք [դրուժիններին] կասենք. կանգնեցե՛ք զենքի տակ, ... պաշտպանեցեք ազատության գործը, հրացանը ձեռքից բաց մի թողեք, այն պահին, երբ հազարավոր ծերերի, կանանց ու երեխաների կյանքը վտանգի տակ է, երբ վտանգի տակ է ազատության գործը, հեղափոխության գործը: ...Այդ վտանգը կանցնի այն ժամանակ, երբ կհաղթանակի հեղափոխությունը, երբ ողջ պրոլետարիատը գլխովին կզինվի, կզինվեն ազատության բոլոր պաշտպանները:

Ամուր բռնեցեք ձեռքերի մեջ ձեր հրացանները, ընկերնե՛ր»[2]:

Պատմությունը ում ուզում է կործանել, նրանից խլում է բանականությունը: Բաքվի փորձը դա ապացուցում էր փայլուն կերպով: Ինքնակալությունը հասարակության հատակից բարձրացրել էր այնպիսի ուժեր, որոնց ինքն արդեն ի վիճակի չէր կառավարել: Նա այդ վայրի տարերային ուժերին մղեց իր թշնամու՝ հեղափոխության դեմ, բայց չկարողացավ նրան կոտրել: Ինքնակալության ճնշումից տառապող հասարակական ուժերի առջև ծառանում էր

[1] «Դրոշակ», N 6(159), հունիս, 1905, էջ 82:
[2] "Кавказский рабочий листок", N 6, 1905г.

մի ճակատագրական հարց՝ կամ տրվել ռեակցիայի կամայականություններին, կործանվել և քայքայվել սևհարյուրակայինների հարվածներից, կամ զենքը ձեռքին շարունակել կռիվը գոյություն ունեցող քաղաքական կարգերի դեմ: Կամ երկրի կործանումը և անվերջանալի քայքայումը՝ ամենահետամնաց, ամենամութ հասարակական տարրերի ճնշման ներքո, կամ ժողովրդի գիտակից զանգվածների հաղթանակը, առաջադիմության համար ճանապարհ հարթելը: Այս ընտրության առջև չէր կարող երկմտել փոքրիշատե կենսունակ հասարակական որևէ ուժ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարաբերությունները հասել էին բորբոքման գագաթնակետին, փոխադարձ հավատն իսպառ մարել էր և տեղի էր տվել երկու կողմերի անդուլ, տենդային սպառազինմանը, նաև այն, որ ոստիկանությունն ամբողջ Անդրկովկասում մի առանձին եռանդով սկսել էր զինաթափ անել հայերին, իսկ թուրքերին գրեթե չէր արգելում զենք կրել, Հ.Յ. դաշնակցության կովկասյան պատասխանատու կոմիտեն ռուսերեն բաց թողեց հետևյալ սպառնալից ու սաստիչ թռուցիկ-ծանուցումը՝ ուղղված իշխանություններին.

«Հրաման

ռուսական կառավարության կովկասյան վարչության

Հայ յեղափոխական դաշնակցությունը սրանով հայտնում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետերին, գավառապետերին, ժանդարմներին և խուզարկու ոստիկանության անդամներին, որ այսուհետև նրանցից յուրաքանչյուրն անխնա կերպով կոչնչացվի, եթե համարձակվի հայերի ձեռքից զենք խլել, խուզարկություններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից յուրաքանչյուրը նախքան այդ տեսակ գործ սկսելը հիշե Բաքվի նահանգապետ Նակաշիձեին, Գանձակի փոխնահանգապետ Անդրեևին, գավառապետեր՝ Բոգոսլավսկուն, Շմերլինգին, Պավլովին, ոստիկանապետ Սախարովին, պրիստավներ Նաչչանսկուն, Ջավախովին, Շումակևիչին, Տեր-Սահակովին, ոստիկան Սերգոյին, դռնապան Շեկոյին և շատ ուրիշների, որոնք Հ.Յ. դաշնակցության վճռով մահվան պատժի են արժանացել: Փոխարքայի կողմից 25 ընծա* կամ հեղափոխական գնդակ - ահա թե ինչ պետք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ձևով մնասվածների ընտանիքներին ապահովեցնել. դա թեթևացնում է մեր գործը, որովհետև միայն անմեղ ընտանիքների անօգնական դրությունը կարող է դողացնել հեղափոխականի ձեռքը. այժմ վերացած է այդ արգելքն էլ:

Հ.Յ. Դաշնակցության ԿՊԿ կոմիտե»[1]:

* Նկատի էր առնվում այն, որ դրանից մի քանի օր առաջ Թիֆլիսում ոստիկաններից մեկը մի հայ երիտասարդի զինաթափության փորձ անելիս՝ վերջինս դիմադրել էր, ատրճանակով վիրավորել նրան և փախել: Տեղեկանալով այդ մասին՝ փոխարքան 25 ռուբլի պարգև էր տվել վիրավորված ոստիկանին:
[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 110:

Հ.Ց. դաշնակցության կովկասյան պատասխանատու կոմիտեի այդ հրամանին նախապես ծանոթացել էր սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) Բաքվի կոմիտեն, որը և ընդունել էր հետևյալ պաշտոնական ազդը, որ կցվել էր պատասխանատու կոմիտեի թռուցիկ-ծանուցմանը.

«Սոցիալիստ-հեղափոխականների Բաքվի կոմիտեն միանում է Հ.Ց. դաշնակցության վերևի ազդարարությանը և որոշում է՝ ներգործուն մասնակցություն բերել հայերից զենք խլող ժանդարմներին, ոստիկաններին և այլ պաշտոնյաներին պատժելու գործում:

Սոց. - հեղ. Բաքվի կոմիտե

1905, 31 մայիսի»[1]:

Փաստերը եկան ապացուցելու, որ այդ հրամանը դատարկ խոսք չէր: Հունիսի 2-ին Բաքվում տեռորի ենթարկվեց ոստիկան Կիրիչենկոն այն բանից հետո, երբ նրա մատնությամբ Տելեֆոննայա փողոցում նույն օրը ժանդարմները խուզարկություն էին կատարել մի հայի տանը և գտել ռումբերի մասեր:

Դաշնակցության հրամանից ծնված վախի ազդեցության տակ ժանդարմները, ոստիկանները և կազակներն այլևս խուսափում էին մտնել հայահոծ շրջանները, չէին համարձակվում բացահայտ զինաթափման փորձեր անել, դրսևորում էին զսպվածություն, վախենալով, որ ցերեկվա իրենց հակահայկական արարքների համար կարող են գիշերը վրեժխնդրության զոհ դառնալ:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ

Ընդամենը մի քանի ամիս առաջ, փետրվարյան դեպքերից անմիջապես հետո, խաղաղ ու անզեն հայ ժողովուրդը ապշած էր ու չէր ըմբռնում, թե, վերջապես, ինչ է կատարվում իր շուրջը: Դա բնական էր, քանզի հարձակումն անակնկալ էր, դավադրությունն՝ անսպասելի: Բաքվի կոտորածը հայությունն ընդունեց իբրև մեկն այն սոսկալի պատուհասներից, որ նա պատմականորեն ունեցել է պարբերաբար՝ իր համեմատական թուլության և աշխարհագրական աննպաստ պայմանների հետևանքով: Եվ գուցե հայ ժողովուրդն այս պատուհասը նույնպես տաներ անտրտունջ, եթե Թուրքերը չկատարեին զարհուրելի չարագործություններ, չսպառնային բնաջինջ անել Անդրկովկասի հայ ժողովրդին: Հայերը հասկացան, որ չդիմադրելու դեպքում թալանվելու և կոտորվելու են: Ուստի որոշեցին կռվել ու պաշտպանվել այն հույսով, թե միգուցե այդ միջոցով կարողանան՝ եթե ոչ կոտորածի առաջն առնել, գոնե

[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 111: Հ.Ց.Դ. կովկասյան պատասխանատու կոմիտեի հրամանը՝ ուղղված կովկասյան վարչությանը, ամբողջովին տպագրվել էր "Vossische Zeitung" թերթի 1905թ. N 324-ում:

մասամբ հարվածել թշնամուն ու պահպանել անձը և ունեցվածքի մի մասը: Բայց չէր կարելի լրջորեն մտածել կռվի մասին, երբ ժողովուրդն անպատրաստ էր և, որ գլխավորն է՝ բնավորությամբ խաղաղասեր:

Կոտորած սարքողներն այդ բանը շատ լավ էին հասկանում և հաշվի էին առնում իրենց ծրագրերը մշակելիս: Պատահական չէ, որ Թուրք ղեկավար գործիչներն ասում էին, թե զարմանալի է, որ հայերը զենք են վերցրել ինքնապաշտպանության համար, այն դեպքում, երբ մահմեդականների թիվն Անդրկովկասում զգալիորեն գերազանցում է հայերի թվին, և մեծից փոքրը զինված են: Նրանք շարունակում էին հայերի մասին դատել իրենց պապերի թողած պատգամներով, թե քրիստոնյա այդ ազգի տերերը հարյուրամյակներ ի վեր մահմեդականներն են եղել, թե նա վախկոտ է ու չարչի, զենքի առջև՝ ոչինչ, և այդ իսկ պատճառով այժմ էլ պարտավոր է ապրել ստրուկի դրության մեջ՝ ի փառս և ի բարեկեցություն Թուրքերի:

Բայց Թուրքերը չարաչար սխալվում էին. հայը ոչ վախկոտ էր և ոչ էլ չարչի: Հայը գիտեր նաև կազմակերպվել, եթե դա պահանջում էր ազգային շահը: Հայը նաև ուներ իր կազմակերպիչները՝ հանձինս ազգային հեղափոխական կուսակցությունների և ազգային գործիչների:

Տագնապներով լի հուսահատական այս շրջանում ահաբեկ հայ ազգաբնակչության գլխավոր նեցուկը Հ.Ց. դաշնակցությունն էր: Բախտավորություն էր, որ նա էր կանգնած գործի գլուխ, նա էր զորահավաքի ենթարկում ազգի ներուժը՝ դեմ հանդիման գնալու և կասեցնելու ուրից գլուխ զինված տասնյակ հազարավոր արյունարբու խուժանի հարձակումները: Փետրվարյան չարաշուք օրերից ի վեր աղետներն ամբողջ Անդրկովկասում աներևակայելի ծավալ կառնեին, եթե դաշնակցության զինված խմբերը, հին փորձված զինվորների ղեկավարությամբ, հրապարակ չիջնեին իրենց հատուկ անձնուրացությամբ:

Թուրք-հայկական կոտորածների հենց սկզբից պայքարի տակտիկայի հարցում դաշնակցության մեջ աստիճանաբար զարգացավ միմյանց հակառակ երկու հոսանք:

Առաջին հոսանքի ներկայացուցիչները գտնում էին, որ հայերի շահն է ամեն գնով պահպանել խաղաղություն, հետևապես Թուրքերի հարձակման դեպքում պետք է միայն պաշտպանվել: Այս տեսակետը, որ սկզբից տիրապետող էր, աստիճանաբար տեղի տվեց մյուս հոսանքին, որի ներկայացուցիչներն այն տեսակետն էին պաշտպանում, ըստ որի չպետք է սպասել Թուրքերի հարձակմանը, այլ պետք է նախահարձակ լինել և ճնշել նրանց, որպեսզի այլևս փորձեր չանեն առաջինը նետվելու իրենց հարևան հայերի վրա: Այս տեսակետը կռիվների ընթացքում նորանոր կողմնակիցներ էր ձեռք բերում և, ի վերջո, դարձավ իշխող:

Նախահարձակ լինելու տեսակետին էին փարված հատկապես կուսակցության Բաքվի ուժերը, որոնք գտնում էին, որ Բաքուն է տոն տալիս

կովկասյան բոլոր թուրքերի խժդժություններին, ուստի առաջին հերթին պետք է հարված հասցնել չարիքի կենտրոնին:

Դեռևս 1905թ. ապրիլին Հ.Յ.Դ. Բաքվի զինվորական մարմինը դիմել էր Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյին՝ խնդրելով թույլատրել որդեգրելու նախահարձակման տակտիկան, բայց բյուրոյի պատասխանը կտրուկ մերժողական էր եղել: Բյուրոն գտնում էր, որ նախահարձակ լինելը «մեր կողմից անխոհեմություն կլինի», քանի որ «կարող է Թուրքիայի և Պարսկաստանի փոքրաթիվ հայերի նոր կոտորած առաջացնել: Մեր կուլտուրական կյանքը տասնյակ տարիներով հետ կը մնա: Մեր նպատակը պետք է լինի հանգցնել կրակը և ոչ թե այս ու այն կողմը կոտորած առաջացնել: Անարատ վայրերում մենք պետք է ամեն կերպ պահպանենք խաղաղությունը ու միաժամանակ պատրաստություն տեսնենք ինքնապաշտպանության համար: Հարձակվելով, մենք երեք թշնամու հետ պիտի գործ ունենանք՝ ռուսը, թաթարը և մասամբ վրաց ազնվականությունը»[1]:

Այդ տեսակետն ավելի էր կոնկրետացվել 1905-ի մարտ-ապրիլին տեղի ունեցած Հ.Յ.Դ. կովկասյան ռայոնական ժողովում:

Պաշտպանողական տակտիկայի կողմնակիցներ էին նաև հնչակյանները, սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, մշակականները:

Ժնևում հրատարակվող սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության օրգան «Սոցիալիստ» թերթը գրում էր.

«Հայերի զայրույթը բնական է: Մահմեդականների հարձակումները մեր գավառները ծածկելով արյան գետերով և կրակի բոցերով, չէին կարող չը զայրացնել հայերին:

...Անհրաժեշտ է պաշտպանվել և պաշտպանվել ամենակտրական միջոցներով, ահ ու սարսափ տարածելով: Այո՛, անհրաժեշտ է դա, բայց միայն պաշտպանվելիս»[2]:

Հոդվածում նշվում էր, որ հայերը նախահարձակ չպիտի լինեն, որովհետև «ծայրահեղությունները մեր կողմից կարող են երկար ժամանակ բաժանել մեր (Անդրկովկասի: - Հ.Ս.) բանվոր դասակարգից մահմեդական բանվորությանը և, այսպիսով, թուլացնել սոցիալ-դեմոկրատական շարժումը»[3]:

Ապա՝ «Այո՛, կրկնում ենք, անհրաժեշտ է պաշտպանվել հարձակումների դեմ ամենակտրական միջոցներով, բայց գժություն կլինի հարձակվել մահմեդական համայնքների վրա միայն այն պատճառով, որ նրանք մահմեդական են»[4]:

Իր տեսակետի իրավացիությունը թերթը պատճառաբանում էր հատկապես նրանով, որ եկեղեցական կալվածքների բռնագրավման դեմ զանգվածային պայքարում կովկասահայությունը մեծապես առնականացել է, այսօր հաջողությամբ պաշտպանվում է, վաղը նույնպես կպաշտպանվի, հետ կմղի թուրքերի բոլոր հարձակումները՝ նրանց պատճառելով մեծամեծ կորուստներ: Հետևապես, այդ ամենը հաշվի առնելով՝ չպետք է որդեգրել հարձակողական կռվի մարտավարություն:

Արևելահայության աստիճանական առնականացման գործընթացը տևել էր ուղիղ 100 տարի: 1804թ. ռուսները մտան Անդրկովկաս և նվաճեցին Գանձակի խանությունը: Հաջորդ տարի՝ 1805թ., նրանց հպատակություն հայտնեցին Ղարաբաղի, Շեքիի, Շիրվանի, Բաքվի և Արևելյան Այսրկովկասի մյուս խանությունները: Այդ օրերից հիմք դրվեց մուսուլմանական գիշատիչների մագիլներից հայերի ֆիզիկական ազատագրությանը:

Բայց նույնիսկ ռուսական առաջադեմ պետության կազմում հայության մեջ մնացել էր մուսուլմանների նկատմամբ հոգեկան թերարժեքության բարդույթը:

Չնայած դրան, արդեն տեղի էր ունեցել ամենակարևորը՝ ֆիզիկական ազատագրումը, որը կազմում է մյուս բոլոր բարօրությունների հիմքը, որին անխուսափելիորեն հաջորդելու էր հոգու ազատագրումը, ազգի բարոյական վերածնությունը:

Այդ ճանապարհին կարևոր հանգրվան եղավ 1887 թվականը, երբ կովկասյան քրիստոնյա բնակչությունն առաջին անգամ ենթարկվեց զինվորագրության: Այն ժամանակ կառավարությունը հավաստիացրել էր, որ տեղացի զինվորները, հայ թե վրացի, չեն ուղարկվելու կայսրության ներքին նահանգներ, այլ առանձին զորաբանակներ կազմելով՝ տեղավորվելու են հայրենի երկրում Արարատի և Կազբեկի հովիտներում: Բայց մի քանի տարի անց կառավարությունը դրժեց խոստումը. հայ և վրացի զինակոչիկները Անդրկովկասից ուղարկվեցին Ռուսաստանի հեռավոր վայրերը, իսկ Վրաստան և երկրամասի հայաբնակ գավառներ բերվեցին ու տեղաբաշխվեցին ռուսներից և մուսուլմաններից կազմված զորամասեր:

Ռուսական բանակում ծառայելը մեծ փոփոխություններ առաջ բերեց կովկասահայերի հոգեբանության մեջ: Մինչև հայ երիտասարդների զինվորագրման օրենքի ընդունումը նրանք ընկճվածի պատկեր ունեին, մինչդեռ երբ բանակում ծառայելուց հետո տուն էին վերադառնում, շրջապատում թողնում էին համարձակ և անվեհեր մարդկանց տպավորություն: Բանակի դպրոցն անցած հայ երիտասարդը, բնականաբար, ցուցադրում էր զենքի և քաջության հմայքը՝ թողնելով մեծ ազդեցություն իր միջավայրում:

Գալով հայերի դրացիներին, պետք է նկատել, որ ցարական կառավարությունը, հարգելով թե՛ վրացիների և թե՛ մահմեդականների ազգային ավանդույթները, նրանց թույլատրում էր կրել զենք, որը նրանցից անբաժան էր: Զենքի կարևորության մասին թուրքն ուներ մի խորիմաստ առած՝

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 250:
[2] «Սոցիալիստ» (Ժընև), N 7, 12(25) հունիսի 1905թ.:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

«Հարյուր տարի հետո էլ զենքը մի օր պետք կգա»: Ահա թե ինչու դեռ երեխա տարիքում Թուրքը սովորում էր երկու կենսական բան՝ ձիավարժություն և զինավարժություն: Փոքրուց նա կապում էր խանչալ ու ատրճանակ, կրում էր հրացան, որի համար մեծերի կողմից արժանանում էր գովասանքի, իսկ դա, իր հերթին, նրա մեջ առաջ էր բերում հպարտություն և համարձակություն: Այնպես որ՝ բանակ չգնալով, Թուրքն այդ բացը լրացնում էր տևական զինավարժությամբ:

Բայց հայերը, սկսած ռուսական բանակի՝ մեծ անուն վաստակած բարձրաստիճան զինվորականներից մինչև հասարակ զինվորը, պատերազմների ժամանակ միշտ քաջ են եղել: Դա նշանակում էր, որ հայը թեև շատ էլ չէր սիրում զենքը, բայց նրան չէր պակասում արիությունն ու անվեհերությունը, որոնք իսկույն երևան էին գալիս, երբ ներկայանում էր առիթը:

Այնպես որ, երբ վրա հասավ 1905թ. փետրվարի վտանգը, կովկասահայ երիտասարդությունը թե՛ ռազմական պատրաստվածությամբ և թե՛ իր բարոյահոգեբանական կերտվածքով պատրաստ էր ինքնապաշտպանության:

Նիկոլ Դումանն առաջինը «խախտեց» պաշտպանական կռիվ մղելու մասին իր կուսակցության ղեկավար մարմնի հանձնարարականը. 1905թ. մայիսից Արարատյան երկրում պաշտպանական տակտիկային զուգորդվեց նախահարձակման տակտիկան:

Նախիջևանի և Երևանի երկրորդ կոտորածից հետո Երևանի նահանգի և ընդհանրապես Անդրկովկասի հայությունը կերպարանափոխվել էր: «Դրոշակը» գրում էր, որ «կոտորած» բառը 1895-ից ի վեր կպել էր հայի օձիքից ու պոկ չէր գալիս: «Հայկական կոտորած» ստորացուցիչ ու վիրավորական բառակապակցությունը ցույց էր տալիս հայոց անբողոք, ողբալի ու ստրկացուցիչ վիճակը:

Հիմա Արարատյան դաշտի հայկական հատվածը Նիկոլ Դումանի գլխավորությամբ ճեղք էր բացում «հայկական կոտորած» անիծյալ զուգավորված բառերի միջև: Այժմ հրապարակ էին գալիս խոսքերի նոր դասավորություններ, նոր բառակապակցություններ՝ «հայկական հարձակում», «հայ-թուրքական ընդհարումներ», «հայերի հաղթանակ», «թուրքերի փախուստ» և այլն:

Թշնամու վրա հարձակվելու և հաղթելու գաղափարը Արարատյան աշխարհից լայն ծփանքով տարածվեց Անդրկովկասով մեկ, ամրացավ ժողովրդական մտքի մեջ: Հայը ուզում էր խաղաղ լինել, բայց վախկոտ սեպեցին, ձգտեց լույսի, բայց քշեցին դեպի կռիվ ու արյուն, նա սեր քարոզեց, բայց ստացավ ատելություն ու հալածանք: Նա՝ հուսահատ, վիրավոր, անօգնական հայ մարդը, որ անակնկալ հարվածից սոսկալի ցնցում էր ապրել և սթափվել, այժմ, համբերությունը հատած, օրհասական մռունչ էր արձակում: Ահավոր աղաղակով հնչել էր նրա մարտական զոռ ձայնը: Հրապարակ էր իջել հին, ազատասեր, պատվախնդիր ու վրիժառու հայը, որ արթնացել էր դարերի ան-

հույս մրափից, ստրկական լռությունից: Նա գիտակցել էր, որ Թուրքությունը, խրախուսված ցարական ռեժիմից, նորից ձգտում է իր ազգը դարձնել հպատակ, նրա վզին կրկին դնել մուսուլմանական անարգ լուծը, որից մոտ ութ տասնամյակ առաջ նրան ազատել էր Ռուսաստանը: Նա կռվի ելավ պաշտպանելու ոչ միայն իր ֆիզիկական գոյությունը, այլև մեծ զոհերով ձեռք բերած բարոյական-հոգևոր անկախությունը: Նա հետ կանգնեց խաղաղ աշխատանքից, նույնիսկ չմասնակցեց ազատագրական այն մեծ կռվին, որով բռնկվել էր ամբողջ Ռուսաստանը, և մտածեց միայն այն մասին, թե ինչպես պատժել հրոսակներին, ինչպես զենքով պաշտպանել երեխաների կյանքը և կանանց պատիվը: Բայց, բարեբախտաբար, կնոջ պատիվն արդեն պաշտպանում էր ոչ միայն տղամարդը, այլև ինքը՝ կինը: Անցել էին այն ժամանակները, երբ Միքայել Նալբանդյանը, երգելով իտալուհու սուրբ ազնվությունը, հանկարծ ընդհատում էր խոսքը և բռնկված ու վրդովված սրտի խորքից արտաբերում էր անմոռանալի խոսքերը.

Սորա կեսը, կեսի կեսը,
Գեթ երևար մեր ազգում:

Հիմա հայ կինը ոչ թե ազատաբաղձ իտալուհու արածի կեսը կամ կեսի կեսն էր անում, այլև իր խիզախությամբ հավասար էր նրան, հիմա նա նույնպես հրացան էր բռնում, երբ հարկ էր լինում:

Գովելի հետևողականությամբ հայ ըմբոստները շարքեր կազմեցին, մարտիկները կողք կողքի եկան, դիմադրության դրոշի տակ մտավ ավելի քան 15000 քաջ[1]: Թուրք-հայկական կռիվների օրերին դաշնակցության մարտական ջոկատները, ըստ էության, խաղացին հայկական զինված ուժերի դեր:

Եթե գոյություն չունենային ինքնապաշտպանության համար կազմակերպված խմբերը, եթե հայությունը զուրկ լիներ այն կտրիճ զավակներից, որոնք աներկյուղ կանգնում էին թշնամու դեմ, ապա հայերը, իրենց դեմ Թուրքերի կողմից մղվող վայրագ պատերազմում, որն ընթանում էր բյուրոկրատիայի զորավոր հովանու տակ, ջարդված ու ջախջախված կլինեին:

Կյանքը ցույց տվեց, որ հայությունը միայն իրենց փողերի վրա դողացող նյութապաշտ բուրժուաներ չունի, որ, բարեբախտաբար, նա ավելի շատ ունի քաջարի ու անձնազոհ զավակներ:Նրանք էին, այդ նվիրյալ հոգիները, որ ցրտին ու սառնամանիքին, սարերի ու ձորերի դիրքերում գիշեր ու ցերեկ արթուն պահպանում էին հայ բնակչությանը: Հայ գյուղացին, այդ վերածնված հայ կտրիճը, կուրծքը պատնեշ էր դարձնում թշնամու գնդակների առաջ, աներկյուղ նետվում կռվի մեջ, ոչ միայն պաշտպանվում, այլև հարձակվում, ջարդուփշուր անում Թուրք հրոսակներին՝ իր չորս դին սփռելով տասնյակ ու հարյուրավոր դիակներ, խոյանում էր դեպի թուրքական ավազականոց գյուղերը: Հիմա սոսկալի խարույկների բոցեր էին ելնում այդ գյուղե-

[1] **«Առպարեզ»** (Ֆրեզնո), N 119, 18 նոյեմբերի 1910թ.:

րից, ուր հայը վառել էր թուրքական որջեր, որպես հատուցումն հանիրավի ավերված իր օջախի: Ամենից առաջ հենց դա եղավ լավագույն սանձը թուրք ելուզակների, դա էր զսպում խուժանին, որը եթե չտեսներ հայ մարդու ուժը, ապա նրա անգթությունը չափ ու սահման չէր ճանաչի: Հիմա թուրքն իր բորբոքած հրդեհի մոխիրն էր ցանում իր գլխին:

Ոչ շատ առաջ էր, որ Թուրքաց Հայաստանում տեղի էր ունեցել սասունցի հայերի ապստամբությունը՝ իր ողբերգական ավարտով: Որքան էլ հերոսական, այնուամենայնիվ, Սասունի ընդվզումը և խոյանքը մասնակի երևույթ էր, անվեհեր մարտիկ-անհատների ստեղծագործություն:

Հիմա ուրիշ էր. այս անգամ Ռուսաց Հայաստանի մի մասում կատարվում էին զանգվածային քաղաքագործություններ, տեղի էին ունենում հավաքական հերոսություններ: Հիմա թուրքերը հայերին դաս էին տվել՝ անողոք կռվի դաս: Դաս էր տվել ցարիզմը՝ հայության հանդեպ անմարդկային քաղաքականությամբ, անգթություններով ու հալածանքներով: Այդ դասերի հետևանքն էր, որ հայը կռիվն օրվա արհեստ դարձրեց: Նա այլևս չէր հավատում ոչ թուրքերի խոստումներին և ոչ էլ ոստիկանությանը:

Գերագույն մխիթարությունն այն էր, որ քանակով շատ ավելի կովկասյան թուրքերը, որոնց օգնում էր կառավարությունն իր զորքով, իր գաղտնի և հայտնի գործակալներով, այդ նույն թուրքերն արդեն ճաշակում էին կովկասահայության մարտնչող ոգին:

Պետք է նկատել, որ թուրք-հայկական կռիվը հոգեբանական հեղաշրջում առաջացրեց նաև թուրքերի մեջ: Թուրքերի ասպատակությունների ճանապարհը Կովկասում ամենուր փակում էին հայերը, նրանք էին, որ հարվածին պատասխանում էին ավելի ուժգին հարվածով: Եթե մինչ այդ Կովկասի տարբեր վայրերի թուրքերը նպատակների ընդհանրություն չունեին և այդ իսկ պատճառով նրանց մոտ չափազանց թույլ էր համազգային շահերի գիտակցությունը, ապա այժմ, երբ հայերի դեմ կռվում էին Կովկասի բոլոր թուրքերը՝ լինեին նրանք Բաքվում թե Նախիջևանում, Երևանում թե Շուշիում, Գանձակում թե Զանգեզուրում, արագորեն ձևավորվում էր համաթուրքության գաղափարը, նրանց մեջ արթնացնում էր ազգային գիտակցությունը: Այդ հանգամանքն էր, որ մշտապես ուրախությամբ շեշտում էր Ահմեդ Աղաևը, գտնելով, որ հայերի դեմ կռվում բոլոր թուրքերը վերջապես գիտակցեցին, որ իրենք նույն ազգի զավակներն են, և որ այդ գիտակցությունը խորացնելու համար պետք է թուրք ժողովրդի մեջ անշեջ պահել ատելության զգացումը դեպի հայերը:

Չնայած երկրամասի թուրքությանը համախմբելու ուղղությամբ Ահմեդ Աղաևի, Շահթախտինսկու, Թոփչիբաշևի և թուրքերի մյուս պարագլուխների ձեռնարկած բազմաբնույթ միջոցներին, ամենուր կռիվներում շարունակում էին հաղթանակով դուրս գալ հայերը: Նրանց հանդգնությունը ապշահար էր արել թուրք խուժանին: «Ինձ շատ անգամ է պատահել, - գրել է Ա. Գյուլխանդանյանը, - երբ հայ-թաթարական կռիվների ընթացքին զգուշացնում էի մերոնց, որ դիրք մտնեն և կանգնած չկռվեն, պահվեն թշնամու գնդակներից, միշտ էլ համարյա նույն պատասխանն էի ստանում. «Թաթարն ի՞նչ է, որ նրա գնդակը մեզ սպանի»»[1]:

Հայերի զանգվածային քաղաքագործությունները արմատական հեղաշրջում առաջացրին նրանց մասին թուրքերի մինչ այդ ունեցած պատկերացումների մեջ: «Վախկոտ» հայերի հանդեպ նրանց ունեցած արհամարհական վերաբերմունքը տեղի տվեց ակնածանքին: Հայությունը վերջնականապես ազատագրվեց «անպատիվ և ամոթաբեր վերաբերմունքից, որին նա ենթակա էր երկար դարեր»[2]:

«Մի ամբողջ ցեղի, մարդկային մի ահագին հատվածի բարձրացումն ու մաքրագործումն է այս քաղաքական տանջալից կռիվը»[3], - նկատում էր Է. Ակնունին «Կովկասյան խաբրիկներում»:

«Մեր կտրիճները» վերնագրով հոդվածում «Մշակը» գրում էր.

«Հայ կտրիճը իր կյանքը դնում է հայրենիքի սրբազան սեղանի վրա: Տվե՛ք նրան իր պահանջածը, տվե՛ք առատությամբ, և նա, քաջարին, կփրկի նվիրական հայրենիքը, կփրկի հայի կյանքը, գույքը, պատիվը, հայ մանուկին հոշոտելը կամ հայ կույսին բռնաբարելը անհնարին կդարձնի գազանացած թշնամու համար: Մինչև այժմ հայերին վախկոտ ժողովուրդ համարող թշնամուն նա մեկընդմիշտ կհասկացնի, որ հայն **անհաղթելի** է, ու երբ նա մեր թշնամիներին պարտություն կբերե, այն ժամանակ միայն նրանք ձեռք կվերցնեն մեզանից, վերջնականապես կզսպեն իրենց, և մենք հնարավորություն կունենանք նվիրվել խաղաղ կուլտուրական աշխատանքի, երկրի բարօրության, որին ձգտում ենք մեր ողջ հոգով»[4]:

Կովկասահայության մեջ առաջ էր եկել մի ամբողջ բարոյական հեղափոխություն: Այժմ նա հայերի ջարդարարներին պատասխանում էր համարժեք գործողություններով: Ջարդերն ու կոտորածները միայն հայկական չէին. այժմ դրանք նաև թուրքական էին:

Կովկասյան կռիվների բոցերի մեջ դարբնվում էր նոր Հայությունը՝ ինքնավստահ և առնականությամբ առլեցուն:

Անդրադառնալով այդ երևույթին՝ Դավիթ Անանունը «Ռուսահայերի հասարակական զարգացումը» ուսումնասիրության մեջ գրել է, որ արևելահայության ֆիզիկական ազատագրությանը 1905-1906թթ. ավելացավ ոգու ազատության բարեմասնությունը: «Հայն ու թուրքը հավասարարժեք դարձան: Ցեղական առավելության առասպելը ջնջվեց հրացանների որոտով: Դա՝

---

[1] **Ա. Գյուլխանդանյան**, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. առաջին, էջ 59:
[2] Նույն տեղում, էջ 60:
[3] **«Դրոշակ»**, N 7, հուլիս, 1906, էջ 107:
[4] **«Մշակ»**, N 8, 14 հունվարի 1906թ.:

բացառապես հայերի համար: Այս կետում Թուրքությունը նահանջեց և պատկառանքով տոգորվեց հայության նկատմամբ: Մեր ժողովրդի ազատագրության պատվանդանն ու վերնաշենքը ներդաշնակ վիճակ ստացան»[1]:

Թուրք-հայկական կոտորածներն արդեն 1905թ. ամռանը վերափոխված էին Թուրք-հայկական ընդհարումների:

ՀԱՄԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախիջևանի կոտորածների, Երևան քաղաքի և Արարատյան դաշտի դեպքերի օրերին իր ողջ մերկությամբ հանդես եկավ համիսլամականությունը (պանիսլամիզմը)՝ բացահայտելով իր իսկական դեմքը, էությունն ու նպատակները: Կոտորածը պարարտ հող էր, որի վրա փաստորեն առաջին անգամ ու լայն մասշտաբով ռուսական կայսրության տարածքում համիսլամականությունը փորձարկում էր իր գաղափարական սկզբունքները:

Մահմեդական հոգևորականությունը, որ խավարի երդվյալ պահապանն էր, նույնքան մոլի էր ամեն մի առաջադիմականի նկատմամբ, որքան և ինքը՝ միապետությունը՝ լիներ դա ռուսական ցարիզմը, պարսից շահականությունը թե օսմանյան սուլթանիզմը: Այլ խոսքով, միապետությունը տգիտության ու կրոնական անհանդուրժողականության գոյությունն ապահովող ամուր պատնեշն էր:

Կովկասում ծայր առած գազանությունների տեսական հիմնավորումը հենց սկզբից կատարեցին համիսլամիզմի տեսաբանները: Համիսլամիզմը մահմեդական տիրող դասակարգերի ցնորական քաղաքական տենչանքն է, որը տվյալ պահին ուղղված էր հայերի դեմ, բայց վաղն անխուսափելիորեն պիտի դառնար հակաքրիստոնեական և հակապետական գաղափարախոսություն՝ ընդդեմ ռուսական պետության:

Վաղուց էր Ռուսաստանը համարվում անհաղթելի: Ռուսական բանակները 200 տարվա ընթացքում բազմիցս հզոր հարվածներ էին հասցրել Թուրքիային, որի հետևանքով քրիստոնեության համար մեծ սպառնալիք ներկայացնող Փաղիշահի կայսրությունն իջել էր իր փառքի գագաթից և հայտնվել հիվանդ մարդու վիճակում:

Այդ նույն ժամանակ Ռուսաստանը ջախջախել էր և իրեն միացրել Կազանի, Աստրախանի, Սիբիրի, Ղրիմի թաթարական խանությունները, անդադար հարվածել էր պարսիկներին ու Թուրքերին, վերցրել անմատչելի ամրություններ, ինչպես՝ Կարսը: Նա, ինչպես արդեն ասվել է, երկարատև պատերազմով

[1] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. երրորդ (1901-1918), էջ 263:

քայքայեց կովկասյան լեռնականների ամպահաս բները, որոնք մի ժամանակ իրենց զգում էին հպարտ ու անհաղթ, ինչպես արծիվները: Այդ ամենի հետևանքով իսլամի վրա իրական սարսափ էր իջել: Ռուսաստանի անվերջ հաղթանակները մուսուլմանները դիտում էին իբրև իրենց մեղքերի համար ալլահի զայրույթի, բարձրյալի կամքի արտահայտություն: Մի խոսքով, ռուսական կայսրության համբավն ամբողջ իսլամական աշխարհում, մանավանդ Առաջավոր Ասիայում, չափազանց բարձր էր, և առանց երկմտելու կարելի է ասել, որ հատկապես ռուս-Թուրքական և ռուս-պարսկական սահմանագլխում ահագին զորք պահելու գինն ուներ:

Եվ ահա Հեռավոր արևելքում Ճապոնիայի դեմ մղած պատերազմում Ռուսաստանի ջախջախիչ պարտությունը առաջ բերեց բարոյահոգեբանական իսկական հեղաշրջում հատկապես Մերձավոր արևելքում: Պատերազմի սկզբում մահմեդականները համոզված էին, թե ռուսական բանակը մեկ-երկու շաբաթում ջարդուփշուր կանի ճապոնացիներին: Բայց, ահա, սկսեցին լուրեր գալ ռուսների առաջին, երկրորդ, երրորդ և անվերջ պարտությունների մասին: Հանձնվեց հզոր Պորտ-Արտուրը, ծովի հատակը գնաց ռուսական համարյա ամբողջ նավատորմը: Եվ այդ ամենը կատարեցին աշխարհի հեռավոր մի ծայրում ապրող ինչ-որ կռապաշտներ:

Հեռավոր արևելքից եկած լուրերը, մեծանալով և լեգենդների բնույթ ստանալով, հողմի արագությամբ ցրվում ու տարածվում էին ամեն տեղ: Վերջապես անգլիացիները և հենց իրենք՝ ճապոնացիները, ամեն միջոց ձեռնարկում էին, որպեսզի հեռավորարևելյան դեպքերը հնարավորին չափ լայն տարածում ստանան ամբողջ Ասիայում:

Պորտսմուտի ամոթալի խաղաղությունը Թուրքերին ստիպեց ազատ կրծքով շունչ քաշել. չէ՞ որ նրանց թշնամին ջախջախիչ հարված էր ստացել: Իսկույն շարժվեցին մինչ այդ ճնշված հույսերը:

Համիսլամիզմի գաղափարախոսությունը, որ ակտիվորեն տարածվելու և գործնականում ստուգման ենթարկվելու տեսակետից շուրջ քառորդ դարի ավանդույթներ ուներ, այժմ, Ռուսաստանի կրած ծանր պարտության պայմաններում, ոգեշնչվածության և նպատակների իրագործման նկատմամբ խոր հավատի նոր հանգրվան էր թևակոխում, դառնում էր նաև Կովկասի մուսուլմանության քաղաքական կեցության դրոշ: Այստեղ համիսլամիզմի նպատակը դրվում էր ամուր ոտքերի վրա: Բաքվում քաջ գիտակցում էին, որ ցարիզմն առանց զինվորականության անկարող է ոչ միայն պահպանել կայսրությունը, այլև՝ ինքն իրեն: Արտաքին ձախողանքներին գումարվել էր ներքին հուժկու ցնցումը՝ սկսված հեղափոխությունը: Եվ մեծանուն ու անհաղթելի թվացող միապետությունը, որից դողում էին ռուսական կայսրության հարևից սահմանների մահմեդական երկրները, այժմ տկարացած սպասում էր իր անորոշ ապագային:

Պատերազմի հետևանքով արևելքում Ռուսաստանի հմայքն այնքան էր

ընկել, որ Կ.Պոլսում նույնպես սկսել էին նրան բացահայտ արհամարհել: Թուրք ամբոխի մեջ ամենուր հարություն էր առել կովկասյան թուրքաբնակ տարածքների վրա կրկին մահմեդական բռնապետության դրոշը ծածանելու իղձը:

«Շարկի ռուս» թերթի նախկին խմբագիր Մահմեդ աղա Շահթախտինսկին նույն թերթի 1905թ. N 162-ում լույս էր ընծայել համիսլամիզմի վերաբերյալ հոդված[1], որտեղ տվել էր այդ շարժման բնութագիրը, ծագման համառոտ պատմությունը և ծրագրային նպատակները:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես է ծնունդ առել մահմեդական ազգերի միության կամ համիսլամության գաղափարը, նա գրում էր.

«Եվրոպական պետություններն ուզում են աշխարհի երեսից ջնջել օսմանյան կայսրությունը և այդ միջոցով ոչնչացնել իսլամական կրոնը, հետևապես նաև՝ Մարգարեի փոխանորդին՝ Սուլթան-Խալիֆին, այսինքն՝ օսմանյան Վեհապետին, որն այդ կրոնի մարմնացումն է: Առանց Խալիֆի՝ Մեքքայի և Մեդինայի պաշտպանի, իսլամական կրոնի գոյությունն անհնարին է:

Ուխտագնացությունը (Հաջ) և այցելությունը տիեզերքի պարծանք Մարգարեի սուրբ գերեզմանին՝ իսլամական շենքի հիմնաքարերն են: Առանց Մեքքայի և Մեդինայի՝ Խալիֆի իսլամություն չկա: Հետևաբար, ամեն մի մուսուլման իր կարողության չափով պետք է աշխատի հանուն օսմանյան պետության հարատևության»[2]:

Ապա հոդվածագիրը ընթերցողներին ներկայացնում էր համիսլամականների քաղաքական իղձը՝ լայնատարած մի նոր կայսրություն՝ մի թագավորով, որ թուրքական սուլթանը պիտի լինի. մի մայրաքաղաք, որ լինելու է Ստամբուլը. Հյուսիսային Աֆրիկայի, Եգիպտոսի, Կովկասի, նույնիսկ Հնդկաստանի մահմեդականության դարձ դեպի սուլթանականության գիրկը. ստամբուլյան խալիֆության գայիսոնի տակ սյուննիների ու շիաների և մահմեդական մյուս բոլոր աղանդների միավորումը՝ առանց քաղաքական որևէ խտրության. իրենց սուլթաններ և շահեր կոչող բոլոր մուսուլման իշխանավորների և գահակալ խաների խոնարհում Կ.Պոլսի վեհապետության առջև և այլն: Այլ խոսքով՝ մի վեհապետ, մի խալիֆ, մեկ կենտրոն:

«Ներկայումս թե՛ իր ժողովրդի և թե՛ օտար երկրներում ապրող մահմեդականների մեջ համիսլամության գաղափարը տարածելու համար օսմանյան կառավարությունը ամեն ջանք գործ է դնում»:

Պատերազմի օրերին սուլթանի կառավարությունը էմիսարներ ուղարկեց Անդրկովկաս, որոնք, գալով Բաքու, Ելդրզ Քյոշքի գաղտնարաններում մշակված համիսլամական ծրագրերը փոխանցեցին տեղի իսլամական ֆանատիզմի ներկայացուցիչներին և համատեղ մշակեցին մեթոդներ, թե ինչպես այդ ծրագրերը համապատասխանեցնել Կովկասի պայմաններին[1]: 1904 թվականին Բաքվում ստեղծվել էր համիսլամական կազմակերպություն, որի ղեկավարները գերազանցապես "Каспий" թերթի խմբագիրներն էին և կովկասյան թուրքերի ուրիշ պարագլուխներ: Դրանց թվում առավել ակտիվ գործիչներ էին՝ Ալի Մարդան Թոփչիբաշևը, Ահմեդ Աղաևը, Խրաֆիլ Հաջիևը, Հաջի Ասլան Աշուրովը, Հասան Մահմեդ Հաջինսկին, Բախշի բեկ Թալիշխանովը և էլի մի քանի ուրիշ համիսլամ ղեկավարներ :

Իսկ ինչպե՞ս հասնել առաջադրված նպատակին.

1) Մեծապես նվազեցնել քրիստոնյա տարրերի թիվը մասնակի կրոնափոխության ու ջարդերի միջոցով, 2) Քաղաքական նպաստավոր հանգամանքների դեպքում փորձել բոլոր քրիստոնյաներին Կովկասից դուրս մղել դեպի Ռուսաստան, 3) Գլխավոր նպատակին հասնելու համար միավորել Կովկասի շիա և սյուննի մուսուլմաններին:

Կրոնափոխության խնդիրը բարդ էր: Կովկասում ոչ մի քրիստոնյա կամավոր չէր փոխում իր հավատը, իսկ բռնությամբ իսլամացածները վաղ թե ուշ վերադառնում էին իրենց եկեղեցու գիրկը: Վերջին համոզիչ օրինակը Նախիջևանի գավառի Բաղամլու հայկական գյուղի բնակիչների բռնի իսլամացման անհաջող փորձն էր: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ Կովկասը Թուրքիա չէր: Առայժմ իրեն չէր արդարացնում նաև երկրորդ միջոցը՝ կոտորածը: Թուրք-հայկական ընդհարումների ընթացքում որքան ագրեսիվ ու դաժան էին լինում մուսուլմանները, նույնքան ուժգին էր լինում հայերի դիմադրությունը և նույնքան գնալով մեծանում էր նրանց հաղթանակի հնարավորությունը: Ինչ վերաբերում էր Անդրկովկասի լիակատար իսլամացմանը՝ այնտեղից քրիստոնյաներին դուրս մղելու միջոցով, ապա դա նույնպես անիրականանալի էր, քանի որ այդ դեպքում համիսլամականությունը գործ կունենար թեև հեռավոր արևելքում ծանր պարտություն կրած, բայց դեռ ռազմական հզոր ուժ ունեցող Ռուսաստանի հետ: Համիսլամականների երրորդ նպատակին հասնելը ավելի իրական էր:

Եթե անհնարին էր շիա և սյուննի մուսուլմանների միաձուլումը, բայց կոնկրետ նպատակների շուրջ նրանք անպայման միավորվում էին, որը կրկին ու կրկին իր հաստատումն էր գտնում թուրք-հայկական ընդհարումների օրերին:

Իհարկե, իսլամի այդ երկու ուղղությունների միջև կային որոշ տարբերություններ, մանավանդ՝ Կովկասում: Ընդհարումների ընթացքում առանձին բնակավայրերում սյուննի մուսուլմանները, ի տարբերություն շիաների, հայե-

[1] Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Մշակ», N 44, 28 փետրվարի 1906թ.:
[2] Տե՛ս նույն տեղում:

[1] Տե՛ս В.А. Старосельский, Кавказская драма, Книгоиздательство "Амиран", Петербург, 1906, էջ 20:
Համիսլամ մի քանի նշանավոր գործիչների համառոտ կենսագրությունները ներկայացված են Ա. Գյուլխանդանյանի «Հայ-թաթարական ընդհարումները» գրքի առաջին հատորի 170-177 էջերում:

րի նկատմամբ հանդես էին բերում որոշ զսպվածություն, բայց դա հիմք չէր տալիս նրանց միջև տեսնելու զգալի տարբերություններ. եզակի դեպքերը չէին կարող փոխել իրերի ընդհանուր պատկերը: Դա բազմիցս վկայում էին թե՛ շիաները և թե՛ սյուննիները:

1905թ. կովկասահայ մեկ-երկու թերթում այն միտքն էր արծարծվել, թե հայերին ջարդելու մոլուցքը համակել է հատկապես մուսուլման շիաներին, իսկ սյուննիները շատ հաճախ փորձում են խույս տալ արյունահեղությունից: Այդ կապակցությամբ Բաքվում թուրքերեն լույս տեսնող «Հեյաթ» թերթը տպագրել էր հայերին ուղղված հետևյալ «Բաց նամակը».

«Կովկասյան երկրի, Դաղստանի, Կազանի նահանգի զանազան քաղաքներից Բաքու եկած մուսուլմաններս, միասին հավաքվելով ու միանալով Բաքվի ու Իրանի մուսուլմաններին, ձեռնարկեցինք խորհրդածության առնելու հայերի ընթացքը, որոնք ասում են՝ սյուննիները մեր բարեկամներն են, իսկ շիաները՝ մեր թշնամիները:

Կովկասի բոլոր հայերին հայտարարում ենք, որ իսլամական կրոնի զանազան ճյուղերին բոլոր պատկանողները մի ազգ են կոչվում, և իսլամ կրոնի իսկության մեջ շիա ու սյուննի չկա: Հետևաբար մեզ աղանդավոր համարելով իսլամը երբեք մուսուլման մի ժողովրդի չի հրահրի մյուսի դեմ: Այսպիսի թյուր մտքեր ունեցողներին իմաց ենք տալիս, որ հանուն մարդասիրության՝ այդ վատ ձեռնարկից ձեռք վերցնեն: Կրկնում ենք՝ եղբայրությունն ու հավասարությունը իսլամական կրոնի հիմքերից են: Հետևապես մի եղբոր երջանկությունն ու գոհունակությունը, ինչպես և աղետն ու անբախտությունը, մյուս եղբորն էլ է պատկանում:

Հայե՛ր, մենք ձեզանից խնդրում ենք ձեռք քաշել այս սպանություններից ու կոտորածից, թե չէ, եթե ալլահը գիտենա, ձեր բոլոր շրջանների բնակչությունը կենթարկվի ամենասարսափելի և ահարկու մեծ վտանգի»[1]:

Կարճ ու կտրուկ էր ասված:

Պատասխանելով «Հեյաթի» «Բաց նամակին»՝ «Արշալույսը» գրում էր.

«Թե իսկության մեջ իսլամ կրոնում շիա ու սյուննի կա թե չկա, այդ թողնում ենք իսլամներին, որ իրենք վճռեն:

Մենք այսքանը միայն չեշտենք, որ հայերը երբեք չեն ասել, թե շիաները մեր թշնամին են ու սյուննիները՝ մեր բարեկամները. դա էլ գիտակցաբար տարածված բազմաթիվ ստերից մեկն է: Եվ ո՞ր հայը կարող է նման բան ասել. չէ՞ որ ամբողջ օսմանյան պետությունը սյուննի է, և այդ պետության ու նրա սուլթանի ձեռքով են սարքվել թուրքահայերի պարբերաբար խստացող ու անընդհատ կրկնվող ջարդերը: Իսկ Պարսկաստանը մի՞թե շիա չէ, որի շահը, նույնիսկ իր հոգևորականության հակառակ, պաշտպանում է իր տերության

[1] Թարգմանությունը տե՛ս «Արշալույս» (Թիֆլիս) թերթի 1906թ. հունվարի 5-ի համարում (N3):

հայ բնակիչներին: Մենք այդ երբեք չենք մոռանում և տեղը եկած ժամանակ չենք խուսափում մեր երախտիքը հայտնելու, գործով էլ փոխհատուցելու, երբ առիթը ներկայանում է: ... Հայը բարեկամ է եղել և այդպես էլ կմնա իր բոլոր հարևանների հետ՝ լինի սյուննի թե շիա, երբ նրանք էլ իրոք բարյացակամ են տրամադրված դեպի մեզ և ծածուկ կամ հայտնի դավ ու սպանություն չեն նյութում: Ուրիշ բան չունենք ասելու»[1]:

Թուրքերը նաև մեղադրանք էին հարուցում, թե հայերը խեթ աչքով են նայում մահմեդականների զարթոնքի վրա: Ինչ խոսք, այս մեղադրանքը նույնպես զուրկ էր հիմքից: Ինչո՞ւ հայերը պետք է դեմ լինեին մահմեդականների ինքնաճանաչմանը: Ե՞րբ էր արդյոք լուսավորությունը չարիք նկատվել հայերի կողմից: Նրանք ոչ մի շահ չունեին մահմեդականների տգիտությունից, ընդհակառակը, տուժում էին հենց դրանից:

Իբրև կրոնական վարդապետություն, համիսլամիզմը ամուլ էր իր հիմքում, բայց ամեն անգամ, երբ լծակցվում էր տնտեսական ամուր հիմք ունեցող քաղաքական որևէ շարժման հետ, այդ շարժման համար դառնում էր ուժեղ գործոն: Եվ ահա այժմ այն լծորդվել էր գնալով տնտեսական նորանոր դիրքեր գրավող կովկասյան թուրք բուրժուազիայի ձգտումներին և քայքայվող բեկերի տրամադրություններին: Համիսլամիզմի սկզբունքներով միավորվում էին ոչ միայն մահմեդականության երկու թևերը, այլև իսլամի ազդեցությամբ մտքով ու հոգով գերված մահմեդական շահագործողները:

Անշուշտ այս պայմաններում թուրք ունևորները և սրանց շահերի պաշտպան հրապարակախոսներն անմիտ կլինեին, եթե համիսլամիզմը չօգտագործեին՝ իրենց կողմը գրավելու համար այդ շարժման մեջ անմիջական շահ չունեցող անգիտակից իսլամ զանգվածներին:

Կովկասը Ռուսաստանից անջատելու և այն լիովին իսլամացնելու ընդհանրական նպատակից բացի, մահմեդականության տարբեր խավեր տարբեր նպատակներ էին հետապնդում. թուրք կապիտալիստները երազում էին միայնակ տիրապետել Կովկասի և, առաջին հերթին, Բաքվի տնտեսական ասպարեզը, խաներն ու բեկերը երազում էին վերանորոգված տեսնել իրենց հին փառքը, իսկ հոգևորականությունը տենչում էր ամբողջովին իր ձեռքն առնել խավար ամբոխի սանձը: Նրանք բոլորն էլ համամիտ էին այն բանում, որ որքան երկար շարունակվեն ազգամիջյան կռիվները, այնքան գնալով կուժեղանա իրենց ազդեցությունը թուրք զանգվածների վրա :

[1] «Արշալույս», N 3,5 հունվարի 1906թ.:
Այս իրողության լույսի տակ ժամանակի հայ մամուլը տարօրինակ է գտնում «Մուրճ» ամսագրի 1905թ. N 11 և N 12 համարներում լույս տեսած Ռուբենու (Ալ.Մատուրյան) «Հայ-թուրքական ջարդերի տնտեսական-քաղաքական պատճառները» վերնագրով հոդվածը: Հեղինակը, երկիրն արյունոտող պժգալի անցքերը և նույնիսկ ամբողջ հայկական հարցը բացատրելիս, հնարավոր էր գտել իրար հակադրել պանիսլամիզմը և ... պանարմենիզմը: Այս վերջին տերմինն առաջին անգամ գործածել է Էսաձե ազգանունով մի հայատյաց վրացի, Թիֆլիսում: Այնուհետև տարիներ շարունակ «պանարմենիզմ» բառը

Գլխավոր նպատակին հասնելու հեռանկարը ոգևորելով օրվա հերոսներին՝ միաժամանակ նրանց ստիպում էր դիմել երկերեսանության ու շողոքորթության, այն է՝ մի կողմից քծնել ռուս կառավարությանը և նրան հավատարիմ հպատակի երդումներ տալ[1], մյուս կողմից՝ իբրև կառավարության «ազնիվ» հպատակներ, թույլտվություն ստանալ կոտորելու հայերին, այսինքն՝ ոչնչացնելու իրենց համար ամենավտանգավոր տարրին Կովկասում: Եվ հայատյաց ցարիզմը գուրգուրում էր այդ շարժման մասնակիցներին, նրանց խրախուսում և ուղղում էր հայերի դեմ իբրև հեղափոխականների: Ստեղծվել էր սրտառուչ համերաշխություն ռուս միապետության ներկայացուցիչների և համիսլամական երազներով տարված թուրք գործիչների միջև:

Ցարական կառավարությունն այս էլ քանիերորդ անգամ ցույց էր տալիս իր անհատակ տհասությունը: Ռուս բյուրոկրատիայի գռեհկամիտ գործակալներն անընդունակ էին հասկանալու, որ հայերի նկատմամբ սկսված «պոգրոմները» կարող են անցնել սովորական ջարդերի սահմանից և Թուրքիայի ու Պարսկաստանի քթի տակ ռուս կառավարության համար ստեղծել անասելի բարդություններ:

Սոց.-դեմ. բանվորական հայ կազմակերպության օրգան «Սոցիալիստ» թերթը գրում էր.

«Թաթար համիսլամիստներն ուզում են հավատացնել, թե հայերը գլխովին, մի սիրտ, մի հոգի եղած՝ ուզում են կլանել թաթարներին: Համիսլամական թուրքի տրամաբանությամբ հայ բուրժուազիան նույնն է, ինչ հայ ժողովուրդը: Դրանից դուրս նրա հասկացողության սահմանները փակվում էին: Անհրաժեշտ է, ինչ գնով ուզում է լինի, ապացուցել թաթար ժողովրդին, որ համիսլամիստները խաբում են նրանց, որովհետև հայ ժողովուրդը հայ կապիտալիստների, հայ բուրժուազիայի անխնա շահագործման առարկան է»[2] այնպես, ինչպես թուրք ժողովուրդը թուրք կապիտալիստների, թուրք բուրժուազիայի անխնա շահագործման առարկան է: Կապիտալի արագ ուռճացման և հեղափոխությունների դարում, երբ մարդկությունը հզոր քայլերով ընթանում էր առաջադիմության ուղիներով, հենց կապիտալիզմի հնոցում էին հայտնվում գաղափարներ, որոնք հավակնություններ ունեին վերանորոգելու միջնադարյան խավարը: Այդ հնոցում ամենատարօրինակ, ամենաանբնական մտագարությունն անգամ ընդունակ էր առաջ բերելու հրեշային հետևանքներ:

Նախիջևանի և Երևանի խաները Մակուի խաների հետ ջերմորեն ընդունեցին մուսուլմանական հսկա պետության ստեղծման՝ Կ.Պոլսում և Բաքվում մշակված ծրագիրը, որի իրականացման ճանապարհին ամենից առաջ հերթի էին դրված Նախիջևանը և Արարատյան երկիրը:

Նախիջևանի գավառը թեև ռուսական տերության մի մասն էր, բայց, ինչպես տեսանք, այնտեղ իրականում տեր ու տնօրեն էին խաներն ու բեկերը, որոնք Մակուի տիրակալների հետ հույս ունեին գավառն «ազատել» հայ տարրից՝ նրան կոտորելու կամ գաղթեցնելու միջոցով: Դրան հաջորդելու էր Նախիջևանի գավառը Ռուսաստանից անջատելը և այն Պարսկաստանին միավորելը կամ անկախ հայտարարելը:

Պատահական չէ, որ Նախիջևանյան կոտորածների օրերին և դրանից հետո ամիսներ շարունակ գավառում տարածվում էին բազմաթիվ թռուցիկներ, որոնցով թուրքությանը կոչ էր արվում սրբազան պատերազմի ելնել ռուսների և նրանց «գործակալ» ու «դավաճան» հայերի դեմ, որոնց օգնությամբ է, որ 77 տարի առաջ Ռուսաստանը նվաճել էր Նախիջևանի և Երևանի խանությունները:

Թռուցիկներից մեկում ասված էր. «Եթե Ալլահը հաջողեց, շատ շուտով հայերի հետ անելիքներս կվերջացնենք, իր հերթին Իրանը կբարձրանա, և մենք կսկսենք հալածել ռուսներին: Մեր խնդիրն է՝ նրանց դուրս քշել Նախիջևանից ու ողջ Կովկասից և մեր այդ հողերը միացնել ամենակալ շահի երկրին: Շուտով, ինչալլահ, Թիֆլիսում Սարդարի պալատի առաջ, կծածանվի իսլամական դրոշը: Այս Նախիջևանի վիլայեթն առաջ Իրանինն էր, նրան էլ պետք է պատկանի»[1]:

Երբ Նախիջևանի գյուղերում իշնում էր երեկոն, թուրքերը գլուխ գլխի էին գալիս, սկսում գովերգել իրենց կրոնը, անցյալի ըմբիշ-քաջերին և «հայերին ջարդող»՝ օրվա կռվող երիտասարդներին ու համիսլամության հայտնի ջատագովներին: Պարագլուխները ֆես էին կրում, ունեին կարմիր թևկապեր, երդումներ էին անում Մարգարեի տև դրոշի տակ, որի վրա «Ջիհադ» բառն էր գրված:

Պարադոքս էր ու ցավ: Թուրքերը Նախիջևանի հայերին «դավաճան» էին համարում և մեղադրում Ռուսաստանին «ծախվելու» մեջ, իսկ ռուսական կառավարությունը թուրքերին գրգռում էր հայերի դեմ, նպաստում արյունալի ջարդերին: Եթե այնտեղ՝ Թուրքիայում, սուլթանը հայությանը ջախջախելու համար նրա դեմ էր ուղղում քրդությանը, ապա այստեղ՝ Կովկասում, ցարը հայերին անճիտում էր՝ նրա դեմ ուղղելով կովկասյան թուրքության ոխն ու ոճիրը:

Ցարական կառավարության բացահայտ հակահայ քաղաքականությունը ջերմորեն ողջունում էին Կ.Պոլսում: Պատահական չէ, որ երբ 1904թ. Սասնո ապստամբության օրերին և նրանից հետո քուրդ հրոսակները և թուրք փաշա-

---

չարաշահում էին Սուվորինը, Վելիչկոն, Գրինգմուտը՝ «մերկացնելով» հայերի անջատողական ձգտումները և բարքերը: Այն նաև "Рабочий Листок" բոլշևիկյան թերթում հաճախ հայտնված տերմիններից էր: Եվ ահա այժմ այդ բառը հնչում էր հայ ամսագրի էջերից:

[1] Տե՛ս Л. И. Климович, Ислам в царской России, Очерки, Москва, 1936, էջ 270:

[2] «Սոցիալիստ» (Ժընև), N 1, 1(14) հոկտեմբերի 1905թ.:

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 226, թ.2:

ները արյուն էին հեղում Թուրքահայաստանի հայկական գյուղերում և հայ ժողովրդի բեկորները քչում երկրից դուրս, ջարդարարները ոգևորված էին ոչ միայն Կ.Պոլսի աջակցությամբ, այլև այն մեծ ու բացահայտ հովանավորությամբ, որ գալիս էր Ռուսաստանից, ռուսական բռնապետ կառավարությունից: «Սպիտակ ցարը հայերի դեմ է», - ահա ազդանշանը, որ հայտնվում էր ամեն տեղ, ահա այն գրգռիչ հրահանգը, որից այնքան սիրտ էին առնում և՛ Վանում, և՛ Սասունում, և՛ Էրզրումում, և՛ ամեն տեղ: Այդ հուսադրող խոսքերը թևեր էին տալիս մահմեդական հրոսակախմբերին անցնելու Արաքսը և նետվելու Երևանի նահանգի հայաբնակ գավառների վրա:

Նախիջևանի Թուրքերի հանդգնությունն այլևս սահմաններ չէր ճանաչում: Նրանց օգնությամբ քրդական հրոսակախմբերը, ինչպես արդեն ցույց է տրվել, Պարսկաստանից անցնում էին ռուսական սահմանը և անպատիժ խժդժություններ կատարում ոստիկանության աչքի առաջ: Միայն հայերն էին դիմադրում տալով զոհեր և կրելով վնասներ:

Ի վերջո տեղի Թուրքերի հանդգնությունն այնտեղ հասավ, որ սկսեցին հարձակումներ գործել զորքի, ոստիկանության և պաշտոնյաների վրա:

"Русское Слово" թերթը 1905թ. N254-ում հաղորդում էր, որ Շարուրի Բաշնորաշեն և Կյուլտան գյուղերում ռուս զորքը հարձակման է ենթարկվել, իսկ Մամորզադիզ գյուղի Թուրքերը ծեծ ու ջարդ են տվել քննիչ Սիդաևին և բժիշկ Բադրիձեին, որոնք փրկվել են փախուստով, ապա հարձակվել են գավառապետի և նրա օգնականի վրա:

Այն, ինչ կատարվում էր Նախիջևան-Շարուրում, կատարվում էր նաև Արարատյան երկրում: Այստեղ նույնպես համիսլամ բռնադակությամբ թռուցիկներ էին ցրվում Թուրքաբնակ բնակավայրերում, բայց միայն այն տարբերությամբ, որ Նախիջևանում տարածվող թռուցիկների մեջ կոչեր էին արվում գավառը միացնել Պարսկաստանին, իսկ այստեղի կոչերի իմաստը Արարատյան երկիրը օսմանյան տերությանը միացնելն էր:

Այդ նպատակով Թուրքիան գաղտնի զինում էր Արարատյան և Շիրակի դաշտերի Թուրքերին: Արաքսի մոտ «Արազիանա» կոչվող կայսերական ուղելային 10 հազար դեսյատին կազմող կալվածքում, որի կառավարիչը Թուրք էր, ստեղծվել էր զենքի գաղտնի պահեստ: Պահեստի տեղը շատ ապահով էր այն առումով, որ այնտեղ մուտք գործել չէր կարող ոստիկանությունը, մանավանդ որ Նախիջևանի գավառի պրիստավները Թուրքեր էին՝ հիմնականում Նախիջևանի խաների ազգականները: Մակուի խանության տարածքով Թուրքիայից մեծ քանակությամբ զենք էր փոխադրվում այդ կալվածքը, իսկ այնտեղից՝ ամեն տեղ:

Թուրք և քուրդ ելուզակներն ավելի ու ավելի հաճախ էին խախտում ռուսական սահմանը և օգնության գալիս սահմանամերձ շրջանների մահմեդականներին:

1905թ. հունիսի վերջերին համիդիե կոչվող քրդերը Օլթիի և Իգդիրի մոտ անցել էին սահմանը, որի հետևանքով տեղի էր ունեցել ընդհարում նրանց և ռուս սահմանապահների միջև: Ընդհարման ընթացքում ռուսների կողմից սպանվել էր 15 զինվոր և մի սպա[1]:

Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետը 1905թ. հուլիսի 6-ի N 833 գրությամբ ժանդարմական առանձին կորպուսի հրամանատարին հաղորդում էր, թե հուլիսի 1-ին Արաքսի այն կողմերից 100-ի չափ զինված քրդական խումբը հարձակում է կատարել Զանջարլու հայկական գյուղի վրա, որին Զիվանդարա քրդական գյուղից միացել է մինչև 40 զինյալ[2]:

Հայտնի դարձավ նաև այն հանդուգն ծրագիրը, որ Կովկասի վերաբերյալ կազմվել էր Կ.Պոլսում գերմանացի սպաների օգնությամբ: Առգրավված գաղտնի գրությունները, ինչպես նաև Թուրքերի դիակների վրա գտնված շրջաբերականները ցույց էին տալիս, որ սուլթանը, օգտագործելով Ռուսաստանում ստեղծված ծանր կացությունը, նախատեսել է ներխուժել Կովկաս: Այդ քաղաքական նպատակը, որին երկար տարիներ հետապնդում էր Աբդուլ Համիդը, այժմ ռուսական կայսրության համար դժվարին օրերին, կենդանի կերպարանք էր առնում:

Ծրագրված էր՝ մի կողմ թողնելով Կարսի բերդը, Անդրկովկաս ներխուժել Բայազետի կողմից, անցնել Երևան, վերցնել Նախիջևանը, Ղարաբաղը, Բաքուն և գնալ ու հաստատվել Դաղստանում: Իր առաջխաղացման ճանապարհին օսմանյան զորքը պետք է ոտքի հաներ 5-6 միլիոնի հասնող մուսուլմաններին և համատեղ կռիվ մղեր ռուսական տիրապետության դեմ:

Օսմանյան Թուրքերի ներխուժումը Կովկաս հետաձգվեց Պորտսմուտի անսպասելի հաշտությամբ: Սուլթանը դեռ շարունակում էր չփել ոսկրացած մատները, քանի որ Կովկասի Թուրքությունը գնալով ավելի ու ավելի հանդուգն էր դառնում: Բայց միապետի բերկրանքը երկար չտևեց, քանի որ Անդրկովկասի ամբողջ տարածության վրա «հոտորածն» արդեն կերպարանափոխվել էր «ընդհարման»:

Կովկասը գրավելու գաղտնի ծրագրի և համիսլամական շարժման նպատակների բացահայտումը ցնցել էր ռուսական զինվորական շտաբը: Զինվորականության մի մասն արդեն այն կարծիքին էր, որ պետք է անպատճառ զինել հայ ժողովրդին՝ համիսլամական վտանգը դիմագրավելու համար: Զինվորականության մյուս մասը դեմ էր այդ տեսակետին և գտնում էր, որ, ընդհակառակը, հայկական նահանգները կարելի է առժամանակ տալ մահմեդական ֆանատիկոսության ձեռքը: Նախիջևանում և Արարատյան երկրում կատարված սարսափները այս երկրորդ տեսակետի պաշտպանների իղձերի կատարման նախերգանքն էին միայն:

Զինելով Թուրքերին՝ Կովկասի ռուսական իշխանությունները միայն նոր

[1] ՀՀ ՀԱԿԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 164, թ. 1:
[2] Նույն տեղում, գ. 178, թ. 52:

էին նկատում, որ վտանգավոր խաղ են սկսել, որ կայծը կարող է հրդեհ դառնալ: Գոլիցինը Կովկասում կամեցել էր ստեղծել միայն հակահայկական շարժում և չէր ըմբռնել, որ այն կարող է ժամանակի ընթացքում վերածվել նաև հակաքրիստոնեական, գուցե և հակապետական շարժման: Նախիջևանի և Արարատյան երկրի դեպքերից հետո կովկասյան վարչությունը սկսեց աստիճանաբար բացել աչքերը և զգալ վտանգը: Պատահական չէ, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովը Անդրկովկասի քաղաքական վիճակի մասին 1905թ. հոկտեմբերի 12-ի թվով Թիֆլիսից Նիկոլայ II-ին գրած զեկուցագրով խնդրում էր լրացուցիչ զորքեր ուղարկել Կովկաս: Նա սխալ էր համարում, որ Կովկասից հանվել ու կայսրության արևմտյան սահմաններ են տեղափոխվել 19-րդ, 38-րդ և 41-րդ դիվիզիաները: «Թուրքիայի հարևանությունը, - շեշտում էր նա, - մեզ ստիպում է ամրապնդել նրա հետ ունեցած մեր սահմանները: Նշված դիվիզիաները Կովկաս վերադարձնելը հույժ կարևոր է»[1]:

Ահա թե ինչու 1905թ. ամառվանից սկսած՝ այս կամ այն տեղ ռուսական զորքը երբեմն դուրս էր գալիս խժդժություններ անող մահմեդական զինված խմբերի դեմ: Կարծես թե ցարական իշխանությունները հակվում էին այն տեսակետին, որ պետք է սանձել իրենց իսկ բորբոքած կրակը: Ամեն ինչից երևում էր, որ զորքն ու ոստիկանությունը հրաման են ստացել իրենց վրա (ոչ թե հայերի) մուսուլմանների հարձակման դեպքում տալ զինված հակահարված: Եվ առիթը ներկայացավ:

Առաջ անցնելով ասենք, որ 1905թ. նոյեմբերի 27-ին Նախիջևան քաղաքի շուկայում մի քանի կազակների և թուրքերի միջև տեղի ունեցավ ընդհարում: Նույն օրվա գիշերը կազակները կողոպտեցին թուրքերի՝ Նախիջևանի շուկայում եղած խանութները, որից հետո հրդեհի մատնեցին շինությունները[2]:

Երկու օր անց, նոյեմբերի 29-ին, զինվորների ու թուրքերի միջև տեղի ունեցավ ընդհարում Ջահրի գյուղում: Առիթն այն եղավ, որ թուրքերը գնդակ էին արձակել մի ռուս զինվորի վրա: Հակադարձելով՝ զորքը հրացանային կրակի տակ առավ գյուղը: Երկու օր շարունակ թուրքերը դիմադրում էին, բայց զորքը, որին օգնում էին հայերը, իսկական դատաստան տեսավ դիմադրողների հետ[3]: Գյուղը լիովին կողոպտվեց ու հրդեհվեց, փողոցներում թափված էին դիակներ, սպանված թուրքերի թիվն անցնում էր 170-ից:

Ինչպես արդեն ասվել է, սահմանն անցնում էին քրդական տարազներով ձիավոր խմբեր և կռվի մեջ էին մտնում ռուսական ոստիկանության ու զորքի հետ: Ռուս բյուրոկրատիան չէր ըմբռնում թուրք խաների, բեկերի, կապիտալիստների թաքուն նպատակները: Եվ երբ դեպքերի գունավորումը թանձրացավ, միայն այդ ժամանակ կառավարությունը երկչոտաբար զորքը մղեց ակտիվ գործողությունների մեջ՝ երկյուղ կրելով անախորժությունների հետագա ծավալումից: Եվ եթե որոշ ժամանակ առաջ, երբ հայերը իշխանություններին մատնացույց էին անում տերության անվտանգության համար համիսլամիզմի սպառնալիքը, ռուս բյուրոկրատիան քմծիծաղում էր՝ համիսլամիզմը համարելով միանգամայն անվտանգ, իբրև արևելյան երազների անմեղ դրսևորում, ապա այժմ, երբ սահմանների վրա կասկածելի գործողություններ էին ծավալվել, վերջապես, նույն իշխանությունները տեսան, որ դրանք իրենց խորքում հակապետական են ու վտանգավոր: Եվ նրանք հիշեցին հայկական գործոնը՝ այն դիտելով որպես այդ վտանգի հակակշիռ:

Բայց նույնիսկ այդ դեպքում ռուս միապետականներն իրենցից չէին վանում այն միտքը, որ համիսլամիզմը տագնապալից պահերին ցարիզմին ձեռնտու գործիք կլինի՝ կովկասյան քրիստոնյաներին մասնավորապես հայերին, զսպելու համար: Դա էր պատճառը, որ իշխանությունները սկսեցին հայերին զենք տալ այնքանով, որքանով դա ձեռնտու էր ոչ թե հայերին, այլ իրենց:

Հայերի նկատմամբ ցարիզմի խտրական վերաբերմունքի ակնառու վկայություններից մեկն այն էր, որ նրանց հեղափոխական ընդվզումները ճնշելու համար կառավարությունը մուսուլմանական բնակչությունից զինվորական ծառայության կոչված երիտասարդությանը, իբրև կանոն, ընդգրկում էր հատուկ ազգային զորամասերի մեջ և դրանք տեղաբաշխում քրիստոնեաբնակ «անհանգիստ» վայրերում: Այսպես, օրինակ, Կարսում և Ալեքսանդրապոլում տեղաբաշխված էին մուսուլման կաբարդինացիներից կազմված ազգային զորամասեր: Դրան հակառակ, ռուսական բանակում հայկական առանձին ազգային զորամասեր չէին ստեղծվում: Ցարական իշխանությունները այս դեպքում նույնպես խիստ զգուշանում էին «Հայկական սեպարատիզմից»՝ հանձինս նման զորամասերի տեսնելով ապագայի հայկական բանակի նախատիպը: Նրանք հաշվի էին առնում նաև այն հանգամանքը, որ եթե հայ զինվորը ծառայի Անդրկովկասում, հատկապես երկրամասի հայաբնակ վայրերում, այդ դեպքում նա չի ենթարկվի իր հրամանատարի հրամանին, եթե վերջինս նրան ստիպի կրակ բացել ընդվզող հայ չարքաշ գյուղացու, բողոքի դուրս եկած հայ բանվորի վրա: Այնինչ հայկական միջավայրում ծառայող ցածր գիտակցություն ունեցող չեչենը կամ լեզգին հեշտությամբ կիրագործեն տրված հրամանը: Չէ՞ որ միապետությունն այն վայրագ ռեժիմն էր, որ ընդունակ էր ամեն տեսակ խայտառակությունների գնով երկարաձգել իր գոյությունը:

Թուրք-հայկական ընդհարումների հենց առաջին տարում համիսլամականությունը սկսեց զուգորդվել մուսուլման թուրքերի գաղափարաբանությանն ու շարժմանը՝ համաթուրքականությանը (պանթուրքիզմ):

Եթե համիսլամականության խնդիրը բոլոր մուսուլման երկրների միավորումն էր Սուլթան-խալիֆի իշխանության տակ, ապա համաթուրքակա-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 83, թ.թ. 16,17:
[2] Տե՛ս «Մշակ», N 247, 31 դեկտեմբերի 1905թ.:
[3] «Վտակ» (Թիֆլիս), N 55, 11 մարտի 1908թ.:

նության նպատակը բոլոր թուրքալեզու ժողովուրդներին միավորելն էր՝ դարձյալ օսմանյան տիրակալի գլխավորությամբ: Իսկ քանի որ Թուրքիայից դուրս թուրքալեզու ժողովուրդները հիմնականում գտնվում էին ռուսական կայսրության կազմում, հետևապես համաթուրքականությունն իր սուր ծայրով ուղղված էր Ռուսաստանի դեմ, նպատակ ուներ կայսրության կազմում ապրող եղբայրներին ազատագրել «սլավոնական լծից» և նրանց համախմբել թուրանական հսկա կայսրության մեջ: Համաթուրքության գաղափարախոսները Միջերկրականից մինչև չինական պարիսպները և ավելի հեռուները ներկայացնում էին իբրև ցեղակից և լեզվակից ժողովուրդների երկարաձիգ շղթա: Այդ վիթխարի տարածքի միասնությունը խախտվում էր Հայաստանի և հայ ժողովրդի գոյությամբ, հետևապես, միասնական թուրանական աշխարհի ստեղծման շահերը պահանջում էին մեջտեղից վերացնել «հայկական սեպը»:

Համաթուրքության գաղափարաբանությունը և շարժումը հայ ժողովրդի և Ռուսաստանի համար ավելի վտանգավոր եղան, քան նույնիսկ համիսլամականությունը: Դա էր պատճառը, որ ռուսական կառավարությունը հենց սկզբից խիստ անհանգստություն հանդես բերեց այդ ագրեսիվ և անզիջում գաղափարական նոր ուղղության հանդեպ:

Բաքվում և Նախիջևանում հայերի ջարդերով փաստորեն սկսվել էր համաթուրքականության գործնական ընթացքը: Բաքվի համաթուրքականները, իրենց ճանաչված պարագլուխ, ապագա Պետական դումայի անդամ Մաքսուդովի ղեկավարությամբ, մտածում էին, որ իրերի հաջող դասավորության դեպքում իրենց շարժումը կարող է ապստամբության վերածվել Ռուսաստանի դեմ, իսկ հակառակ պարագային գոնե հնարավոր կլինի «Թուրք հողը մաքրել հայերից», որից հետո, ինչ խոսք, հերթը կհասներ վրացիներին:

Իրադարձությունների հետագա ընթացքը հաստատեց այն բանին, որ մի քանի տարի հետո Կովկասի համիսլամ թուրքերի պարագլուխները դարձան համաթուրքականներ և իրենց ծրագրային գլխավոր նպատակի իրականացումը կապեցին միայն Կ.Պոլսի հետ՝ որոշակի հեռավորության վրա մնալով Պարսկաստանից:

Ռուս ժողովրդի առաջավոր մտածողները, դատապարտելով թուրք-հայկական ջարդերը, ըստ էության դատապարտում էին նաև համաթուրքական գաղափարաբանությունն ու գործնական շարժումը: Ավելին, տեսնելով Ռուսաստանի համար խիստ վտանգավոր այդ շարժման ծավալումը, սկսեցին տագնապ բարձրացնել նույնիսկ ավանդական հակահայ գործիչներից ոմանք՝ պաշտոնական ու կիսապաշտոնական մամուլի ծայրահեղ աջ օրգանների միջոցով:

Այսպես, "Новое Время" լրագիրը, որը հայտնի էր իր անթաքույց համակրությամբ դեպի թուրք տարրը և միշտ նպաստում էր հայատյաց Վելիչկոյի այն գաղափարի տարածմանը, թե թուրք-թաթարները «ռուս ազգի ներքնահողն են կազմում», իսկ հայերի հասցեին նետվում էին ամեն տեսակ զրպարտություններ, ահա այդ լրագիրը տպագրել էր մի վերին աստիճանի կարևոր հոդված՝ «Ռուսաց մուսուլմանների թուրքացումը» վերնագրով: Թերթը գրում էր, որ Բաքվում թուրք մտավորականության մի խումբ զբաղված է համաթուրքականության լայն քարոզչությամբ՝ իր գաղափարների ձայնափող դարձնելով «Հեյաթ» թերթը: «Շարժման ղեկավարները կամենում են բոլոր թուրքերին միացնել ոչ այնքան կրոնի, որքան ազգության գաղափարի միջոցով, փորձում են Ռուսական կայսրության մեջ ապրող 4 միլիոն թուրքերի միջոցով թուրքացնել և իրենց ենթարկել ռուսական մնացած ողջ մուսուլմանությանը»[1]:

Այսպիսով, Պետերբուրգից վարվող բացահայտ հակահայ քաղաքականության և Կ.Պոլսից ղեկավարվող համիսլամական ու համաթուրանական մահացու շարժումների արանքում հայտնված հայ ժողովուրդը ստիպված էր անելանելի կացությունից ելք փնտրել: Ապավինել զենքին և աննահանջ կռվել երկու գիրկընդխառն միապետությունների քաղաքական մեծ դավադրության դեմ: Առայժմ սա էր տեսանելի ելքը:

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

1905թ. օգոստոսին հայ-թուրքական ընդհարումները Երևանի նահանգից անցան Գանձակի (Ելիզավետպոլի) նահանգ: Այստեղ դրանք ընդունեցին ավելի դաժան, ավելի տեսական բնույթ: Արյուն էր փողոցներում ու հրապարակներում, այրվում էին գյուղեր, ամբողջ համայնքներ, մարդիկ փախուստ էին տալիս հարազատ վայրերից, քանի որ թեատրած մարդասպանություն էր, սով ու ավեր, իրավունքը՝ ոտնակոխ, անիրավությունը՝ ասպարեզի տերը:

1846թ. դեկտեմբերի 14-ի վերին հրամանով Անդրկովկասը ենթարկվել էր վարչատարածքային բաժանման: Ռուսական կառավարության 1867թ. դեկտեմբերի 9-ի հրամանագրով երկրամասում կրկին վարչատարածքային բաժանում կատարվեց, որի արդյունքում 1868թ. ստեղծվեց Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը՝ 38,3 հազար կմ տարածքով՝ Ելիզավետպոլի, Շուշիի, Ջիվանշիրի, Զանգեզուրի, Ղազախի, Կարյագինոյի և Կուր գետի ձախափնյա շրջանում գտնվող Նուխիի ու Արեշի գավառներով:

Գանձակի նահանգը հարավային կողմից սահմանակից էր Պարսկաստանին, մյուս կողմերից նրան հարում էին Երևանի, Թիֆլիսի և Բաքվի նահանգները, ինչպես նաև Դաղստանը: Նահանգի հարավային և արևմտյան մասերում գլխավորապես ապրում էին հայեր, իսկ հյուսիսային և արևելյան շրջաննե-

[1] "Новое Время", N 10740, 6 февраля 1906г.

ում՝ հիմնականում թուրքեր:

Ամբողջ Գանձակի նահանգում կար 1613 գյուղ, որից հայաբնակ էր 390-ը:

1897թ. միօրյա վիճակագրության համաձայն՝ նահանգի բնակչության թիվը հասնում էր 878 հազարի, որից թուրքեր՝ 554 հազար, հայեր՝ 294 հազար, զանազան ազգությունների մարդիկ՝ 30 հազար[1]:

Մինչև 1905թ. հունիս ամիսը Գանձակի նահանգապետն էր Լացաուն: Տեսնելով նահանգին մոտեցող աղետը՝ թուրքերի բացահայտ զինվելը, Բաքվից եկած համիսլամական պրոպագանդիստների ակտիվ ագիտացիան և այլն, նա պաշտոնից հրաժարական տվեց՝ չկամենալով մասնակից դառնալ նահանգում նյութվող խառնակությանը, չցանկանալով աջակցել թուրք-հայկական ընդհարմանը: Նրա փոխարեն Գանձակի նահանգապետ նշանակվեց մի վրացի իշխան՝ գեներալ Տակայշվիլին, որը իշխան Նակաշիձեի քրոջ որդին էր:

Գանձակի նահանգում տեղի ունենալիք իրադարձություններն արդեն մի քանի ամիս Անդրկովկասում ընթացող կատաղի առճակատման արձագանքը պիտի լինեին: Դա պատճառներից հիմնականն էր, որին պիտի միանար մի ուրիշ ծանրակշիռ պատճառ՝ քոչը:

Անդրկովկասի թուրքության մի խոշոր հատված միշտ զբաղվել էր խաշնարածությամբ: Իր «Քաղաքապետի մը յիշատակները» հուշագրության մեջ Ալ. Խատիսյանը գրել է.

«Պէտք է ըսել, որ թուրքերը կ'ապրէին դաշտերու վրայ, իսկ հայերը բռնած էին լեռնային մասերը: Հայերը կը վախնային իջնել դաշտերը, իսկ թուրքերը հայերու ահէն կը վախնային բարձրանալ սարերը «եայլաղի», որով մեծապէս կը տուժէին տաքէն, եւ իրենց անասունները կ'ոչնչանային»[2]:

Քոչվորական շարժումները տեղի էին ունենում Գանձակի նահանգի Ղարաբաղի համարյա ողջ տարածքում, Գանձակի և Ղազախի գավառներում, մասնակիորեն՝ Երևանի նահանգի գավառների մեծ մասում: Բայց այդ շարժումներից ամենամասսայականը և ամենավտանգավորը տեղի էր ունենում Զանգեզուրի գավառում:

Կովկասյան թուրքերի ծավալապաշտության ակունքները քննության առնող հայ քաղաքական գործիչներից ոմանք քոչը դիտում էին որպես այդ գործընթացի գլխավոր պատճառներից մեկը: Անդրկովկասի պատմությունը լավ ուսումնասիրած Ռուբեն Տեր-Մինասյանը գրում էր.

«Ադրբեջանը շահագրգռված է լեռնամասերով, և այդ է գլխավոր պատճառը, որ կուզե ամեն գնով իր ձեռքը պահել հայկական գավառները: Ադրբեջանը տաք երկիր է, բնակիչներու խոշոր հատվածը թափառական կամ կիսաթափառական կյանք կվարե:

Այդ տարրը նահապետական խաշնարածությամբ կզբաղվի, ձմեռը, գարունը, աշունը անապատներուն մեջ իր ոչխարները կարածե, իսկ ամառը հոտերով Գանձակի, Ղարաբաղի վրայով կբարձրանա Հայաստանի արոտատեղիները: Ուրիշ խոսքով՝ խաշնարած դաշտաբնակներու համար տնտեսական անհրաժեշտություն է Լեռնային Ղարաբաղը: Բայց այդ պարագային Ղարաբաղն ու Գանձակը լոկ ճանապարհներ են՝ հասնելու համար իսկական արոտատեղերը, որոնք կգտնվին Հայաստանի կուրծքին վրայ՝ Սևանի լճի ավազանը, Դարալագյազի, Զանգեզուրի, Լոռիի, Դիլիջանի, Ալագյազի, Ախալքալաքի լեռներուն մեջ: Եթե Ադրբեջանի թափառական ցեղերու շահը միայն նկատի առնենք, ոչ միայն Ղարաբաղը, Գանձակը, այլև ամբողջ Հայաստանը պետք է զոհաբերվի խաշնարածներու ապահովության: Այսպիսի ծրագիրներ եղած են և կան Ադրբեջանի, ինչպես և Վրաստանի մեջ, ծրագիրներ, որոնք կդրժեն Հայաստանի գոյությունը և կձգտին բաժանել զայն երկու պետութեանց միջև, քաղաքական և տնտեսական պատճառներով...»[1]:

Քոչը դեպի սարերն էր գնում ապրիլի երկրորդ կեսից սկսած, տևում էր ամբողջ մայիս ամիսը և մինչև հունիսի 20-ի կողմերը: Օգոստոսի կեսերից քոչը սկսում էր սարերից իջնել դեպի տափարակները և հազիվ դադարում էր սեպտեմբերի վերջին թվերում: Հինգ ամիս շարունակվող քոչվորական շրջանը մի մեծ պատուհաս էր այն ժողովրդի համար, որի միջով անցնում էր քոչը: Եվ միայն այնտեղ, ուր քոչն անցնում էր բնակավայրերից հեռու և փոքրիշատե լայն ճանապարհներով, ընդհարումներ բնիկ ժողովրդի հետ համեմատաբար քիչ էին լինում:

*

* *

Գանձակի նահանգի ութ գավառներից առաջինն ընդհարումների թատերաբեմ դարձավ Զանգեզուրի գավառը, և այս գավառի դեպքերով էլ 1906թ. աշնանը ավարտվեցին թուրք-հայկական ընդհարումները Կովկասում:

Ուրիշ գավառների արոտներում, ուր թափառում էին թուրքերը, տեղական թուրք գյուղերի թիվը համեմատաբար փոքր էր, ուստի քոչվորներն ընդհարումների ժամանակ մոտակայքում հենակետեր չունեին: Ինչ վերաբերում է Զանգեզուրի գավառին, ապա այնտեղ շատ կային թուրքական գյուղեր, որոնք ծառայում էին իբրև պատսպարաններ քոչվորների համար: Ճիշտ է, Զանգեզուրի նստակյաց թուրք բնակիչները նախկին տարիներին հաճությամբ չէին ընդունում ցեղակից քոչվորներին, բայց քանի որ 1905թ. փետրվարից սկսած թուրք-հայ թշնամությունը սուր կերպարանք էր ստացել, ապա նրանց սկսել էին միավորել համաթուրքական նպատակները:

---

[1] **Ա-Դ0**, *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 143:*
[2] **«Հայրենիք»**, *N 7 (115), մայիս, 1932, էջ 90:*

---

[1] **Ռուբեն**, *Գանձակ-Ղարաբաղի վեճը, հատ. 2, 1926, էջ 51:*

Քոչի ամիսներին Զանգեզուրի ժողովուրդը միշտ լարված դրության մեջ էր, որովհետև ամեն րոպե կարող էր ընդհարում տեղի ունենալ թափառականների և գյուղացիների միջև:

Թուրք քոչվորի և նստակյաց հայ գյուղացու հարաբերությունները բոլորովին հակառակ էին: Վերջինիս մտահոգությունն իր ցանքի և արտերի պահպանությունն էր, մարգագետնի և ցանած բույսերի հնձելն ու հավաքելը: Խաշնարածը մտածում էր միայն այն բանի մասին, թե ինչպես կշտացնի իր խաշներին, ուստի ներելի էր համարում արտեր ու մարգագետիններ փչացնելը:

Որքան էլ գյուղացիներն աշխատում էին խուսափել թափառականների հետ ընդհարվելուց, որքան էլ նրանք ներողամիտ էին անկոչ «հյուրերի» հանդեպ, այնուամենայնիվ, քոչվորների գործողությունները այնպիսի կերպարանք ստացան, որ հայ գյուղացին այլևս անկարող էր համբերել և դիմում էր զանազան միջոցների՝ իր ցանքերն ու արտերը պաշտպանելու համար:

Քոչերը տափարակներից լեռնավայրեր էին բարձրանում իշխանությունների զորավոր հովանավորության տակ: 1905թ. քոչվորները սովորական տարիներից շատ էին: Դա մի կողմից հետևանք էր այդ տարիների սաստիկ շոգերի, մյուս կողմից՝ այն սրտագին խնամքի, որ ցույց էր տալիս կառավարությունը քոչվորների նկատմամբ: Սար էին բարձրանում նաև այնպիսիները, որոնք մի ոչխար անգամ չունեին, բայց, միանալով քոչվորների այս կամ այն խմբին, ուղեկցելով որևէ հոտ կամ նախիր՝ իրենց ձևացնում էին հոտերի ու նախիրների տեր: Բոլորն էլ բարձրանում էին զինված, քանի որ քոչվորները պաշտոնապես զենք կրելու իրավունք էին ստացել: Սարերն էին բարձրանում նաև բազմաթիվ հայտնի ավազակախմբեր՝ քոչվորների դիմակով ծածկված:

Երբ ապրիլին քոչի առաջին խմբերը մտան Զանգեզուր և սկսեցին բարձրանալ սարերը, լուր եկավ, որ նրանց կրկին թույլատրված է ամառային արոտավայրեր գնալ զինված, և իշխանություններից հրահանգ կար, որ ոչ ոք իրավունք չուներ նրանցից խլելու զենքերը կամ խուզարկություններ կատարելու: Քոչվորներին ապահով սարերն անցկացնելու համար նրանց օգնության էին ուղարկվել կազակներ: Սրանց թուրքերն առատաձեռն մատակարարում էին կաթնամթերք, միս, տալիս էին փող և այլն:

Մայիսին Զանգեզուրի հայությունը խոր տագնապի մեջ էր, քանի որ գավառ մտած քոչվոր հորդաներն իրենց սովորականից համարձակ էին պահում և սպառնում արյունոտ ընդհարումներ առաջ բերել: Բարդությունները կարող էին ավերի ու արյան թատերաբեմ դարձնել մանավանդ Սիսիանի գավառամասը, որտեղի թուրք բնակչությանը մի առանձին ոգևորություն էր ներշնչել քոչվորների գալուստը:

1905թ. հունիս և հուլիս ամիսներին մի կողմից հայերի, մյուս կողմից տեղի թուրքերի ու քոչվորների միջև Շաղաթ, Մազրա և Բռնակոթ գյուղերի մոտ եղան մի շարք ընդհարումներ:

Օգոստոսի 16-ին Աղուդի և Վաղուդի գյուղերի սահմաններում թուրքերը հարձակվում են գավառի կենտրոն Գորիս քաղաք գնացած և այնտեղից երկու ուղեկցող ստրաժնիկների հետ տուն վերադարձող չորս անվանի հայերի՝ Զիլֆուղար բեկ և նրա որդի Իսկանդար բեկ Սաֆրազբեկյանների և բռնակոթցի Արշակ բեկ և Ջաֆար բեկ Մելիք-Թանգյանների վրա և չորսին էլ սպանում, իսկ ստրաժնիկներն ազատվում են փախուստով[1]: Չորս բեկերի սպանությունը թեև մեծ հուզմունք առաջ բերեց Սիսիանի շրջանում, բայց հայերը չդիմեցին վրեժխնդրական գործողությունների՝ մասսայական ընդհարումների առիթ չտալու համար: Դրա շնորհիվ հնարավոր եղավ Սիսիանի շրջանում պահպանել հարաբերական խաղաղություն՝ անհատական սպանություններով:

Թուրք քոչվորները Զանգեզուրի ամառային արոտները բարձրանալու համար, տափարակներից մտնելով Գորիսի շրջան (բուն Զանգեզուր), Խնձորեսկ գյուղի վրայով անցնում էին Գորիս քաղաքի և Վերի Շեն գյուղի միջև ընկած 1-2 կիլոմետր լայնություն ունեցող տարածություններով: Հետագա ճանապարհը ձգվում էր Եռաբլրի հարթավայրով, ապա մտնում էր Սիսիանի շրջան և բարձրանում սարերը:

Եվ ահա, սարերից իջնելիս քոչվորները օգոստոսի 16-ին Խնձորեսկի դաշտում սպանում են 15 հայ հնձվոր գյուղացիների[2]:

Տեսնելով սպանությունների և կողոպուտների գնալով ահագնացող վրտանգը՝ հակառակ չզինվելու մասին վրացի գավառապետ Ավալյանիի և քաղաքի պրիստավ Ցավորսկու խիստ կարգադրությունների, ճանապարհներին մոտ գտնվող հայկական գյուղերում և Գորիս քաղաքում երկու-երեք օրում կազմակերպվում են ինքնապաշտպանական խմբեր, որոնք, իշխանությունների լիակատար անգործության պայմաններում, իրենց ձեռքն են վերցնում ժողովրդի պաշտպանության գործը:

Օգոստոսի 18-ին Նյուֆթալի բեկը 15 զինված թուրքերով Համզալու գյուղից գալիս էր Գորիս: Քաղաքին մոտենալիս դիրքերում գտնվող հայ զինյալները կանգնեցնում են խումբը և ստիպում հետ դառնալ: Զենթարկվելով՝ թուրքերը դիմում են հրացանաձգության: Սկսվում է կռիվ, որի ընթացքում սպանվում է երեք թուրք, այդ թվում Նյուֆթալի բեկը: Ընդհարման ժամանակ սպանվում է նաև երկու հայ երիտասարդ[3]:

Սարերից իջնող թուրք քոչվորներին, այնուամենայնիվ, չի հաջողվում Գորիս քաղաքում և հարակից գյուղերում առաջ բերել զանգվածային ընդհարումներ և անել մեծ ծավալի թալաններ: Բայց դրա փոխարեն նրանք

---

[1] **Մատենադարան**, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.1:
[2] Նույն տեղում, թ. 9:
[3] Նույն տեղում, թ. 10:

չտեսնված բարբարոսություններ են կատարում բուն Զանգեզուրի գյուղերից մեկում Մինքենդում:

Մինքենդը գտնվում էր Գորիս քաղաքից դեպի հյուսիս 35 վերստ հեռավորության վրա: Գյուղն ուներ 230 տուն, որից 145-ը թուրքերինն էր, 80-ը՝ հայերինը[1]: Հայերն այդտեղ էին գաղթել 1844 թվականին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղից, և նրանց թիվը 1905-ին շուրջ 700 էր:

Քանի որ Մինքենդն ընկած էր շրջանի հայկական գյուղերից շատ հեռու և ամբողջովին շրջապատված էր թուրք գյուղախմբերով, ուստի հայերի դրությունը վտանգավոր դարձավ, երբ այստեղ հասան Նախիջևանի արյունալի դեպքերի մասին լուրերը: Այդ էր պատճառը, որ նրանք բազմիցս խնդրանքպաղատանքով դիմեցին գավառապետ Ավալյանիին, որպեսզի իրենց թույլ տա տեղափոխվելու շրջանի հայկական մասը, կամ ապահովի իրենց անվտանգությունը՝ գյուղում տեղակայելով կազակական մի ջոկատ: Բայց աղաչանքներին ուշադրություն դարձնող չեղավ: Փոխանակ Մինքենդ ուղարկեր կազակներ կամ զինվորներ, գավառապետի գիտությամբ այնտեղ եկավ պրիստավ Սադրը բեկ Մելիք-Ասլանովը, մի ոճրագործ, որը և եղավ գյուղի հայերի ջարդի կազմակերպիչը:

Օգոստոսի 19-ին գյուղի թուրքերը և սարից իջնող քոչվորներն սկսեցին հայերի տների թալանը և առանձին սպանություններ: Նույն բանը տեղի ունեցավ նաև հաջորդ երկու օրերին:

Վերջապես, օգոստոսի 23-ին եղավ ամենաահավորը: Պրիստավ Սադրը բեկի, շուշեցի Շահմար բեկ Կոչարլինսկու, բայանդուրցի Ամրաստան Մաշադի-Մուրադ օղլու, օգոստոսի 18-ին Գորիս քաղաքի մոտ սպանված Նյուֆթալի բեկի տղա Շամիրի և ուրիշ արյունարբու ոճրագործների առաջնորդությամբ թարաքամա քոչվորները և տեղի թուրքերը ձեռնարկեցին մինքենդյան բարբարոսությունը՝ հայ բնակիչների բնաջնջումը:

Հայերի մի մասը փախավ այս ու այն կողմ, ընկավ սար ու չոլ: Մնացյալ մասը՝ ավելի քան 200 հոգի, պատսպարվեց գյուղի ծայրամասում գտնվող իջևանատանը (заезжий двор):

Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը (Ա-Դ0), որը կոտորածից հետո անձամբ եղել էր Մինքենդում և մանրամասն տեղեկություններ հավաքել կատարված սպանդի մասին, այսպես է նկարագրել այդ տանը պատսպարված հայերի սոսկալի վախճանը:

«"Заезжий" տան բակում տեղի ունեցավ մի չը տեսնված, չը լսված բարբարոս գործողություն: Մի առ մի բակը դուրս բերին այդտեղ պատսպարված մարդկանց, կանանց, երեխաներին անխտիր, ավելի քան 200 հոգու, և սկսեցին սրերով, կացիններով ու հազար ու մի բութ գործիքներով անխնա

[1] Տե՛ս «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.) , «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 2001, էջ 446:

կոտորել: Դրանցից շատ քչերն ազատվեցին: Գազանացած խուժանն այդտեղ կատարեց այն բոլոր քստմնելի գործողությունները, որպիսին ընդունակ է երևան հանելու մոլեգնած ամբոխը:

Թշվառ մարդկանց տանջանքներն ավելի ևս տևողական դարձնելու համար, նախքան մահացնելը, մաս-մաս կտրատում էին նրանց մարմնի անդամները: Այդ ձևի տանջանքների ենթարկվեցին՝ 20 տարեկան Խաչատուր Դավթյանը, 60 տարեկան Մանուչակ Հայրիյանը, որի, նախ ստինքները կտրատեցին և ապա՝ ձեռքերը: 22 տարեկան Համբարձում Գալստյանի մազերից բռնելով՝ կոկորդը կտրեցին ճիշտ այնպես, ինչպես «զասաբը»՝ ոչխարի գլուխը: 65 տարեկան Աննա Դավթյանին և նրա երեք թոռներին՝ 6 տարեկան Գյուլնազանին, 5 տարեկան Սառային և չորս տարեկան Անդրեասին, մեկը մյուսի ետև շարք կանգնեցնելով՝ Զաբրայիլ Շախսուվարովը փորձեց մի գնդակի հարվածով չորսին միանգամից սպանել: Մանուչար Գրիգորյանի հղի կնոջ՝ Նավոմի փորը պատռեցին և երեխան սրի ծայրին մեխած դուրս բերին արգանդից: Բայց քանի՜-քանի՜ սրանցից ավելի սոսկալի տեսարաններ տեղի ունեցան, որոնց անուն առ անուն առաջ բերելը անկարելի էր»[1]:

Թուրքերը Մինքենդի 696 հայ բնակիչներից 196-ին սրի քաշեցին, իսկ 44-ին գերի տարան և անհետացրին: Հայերի կողմից 60 տարում ստեղծած հարստությունը մեկ-երկու օրում անցավ տեղացի «քիրվա» թուրքերի և քոչվորների ձեռքը: Թալանի ենթարկվեց ապրանքներով լի 21 խանութ, 590 կով, հարյուրավոր եզներ ու գոմեշներ, հազարավոր ոչխարներ, ձի ու ջորի, շուրջ 700 կապերտ, 1300 անկողին, անթիվ-անհամար ջեջիմ ու ջվալ, պղնձե կժեր ու ամաններ, ոսկյա ու արծաթյա զարդարանքներ, մեծաքանակ յուղ, պանիր, ալյուր, ցորեն[2]:

Գյուղի հայերից հաջողվեց փախչել 456 հոգու՝ վշտաբեկ ու տառապած, վիրավոր ու սոված: Նրանք ընդմիշտ ձգեցին գյուղը՝ այնտեղ այլևս չվերադառնալու համար: Չէ՞ որ այլևս չէր կարելի մտածել հետ վերադառնալ այնտեղ, ուր թուրքը տեր էր դարձել արյունոտ յաթաղանով: Ոմանք բնակություն հաստատեցին Գորիսի շրջանի՝ Մինքենդին ամենամոտ խոզնավար և ուրիշ գյուղերում, մյուսները ցրվեցին ավելի հեռուները՝ իրենց հոգում պահած անհուն վիշտը, որը կրկնապատկվում էր այն գիտակցությամբ, որ ոճրագործները ոչ միայն որևէ պատիժ չստացան, այլև իշխանությունների կողմից խրախուսված՝ գնացին կատարելու նոր ոճիրներ[3]:

1905թ. օգոստոսին ընդհարումներ տեղի ունեցան բուն Զանգեզուրի Խոզնավար, Խնածախ, Մինքենդին հարևան Զեյվա և Ալիղուլի* գյուղերում,

[1] Ա-Դ0, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 259:
[2] Նույն տեղում, էջ 260:
[3] Մատենադարան , Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.թ. 20-24:
* Ալիղուլին գտնվում էր Մինքենդից դեպի արևելք 15 վերստ հեռավորության վրա: Այդ գյուղը չպետք է շփոթել Գորիս քաղաքից ոչ հեռու նույնանուն (Ալիղուլի) գյուղի հետ:

ինչպես նաև Ջիբրայիլի գավառի սահմանների մոտ ընկած Հարար գյուղում: Սրանք նույնպես ընկած էին միմյանցից հեռու և շրջապատված էին թուրք գյուղերով:

Խոզնավարը, Խնածախն ու Զեյվան թուրքախառն էին, իսկ Խոզնավարի ու Խնածախի արանքում գտնվող զուտ թուրքաբնակ Բայանդուր գյուղի և համանուն ձորակի մի շարք ղշլաղների ավազակաբարո բնակչությունը իսկական չարիք էր ոչ միայն այդ երկու գյուղերի, այլև ավելի հեռու գտնվող Տեղ գյուղի համար:

Մինքենդի սոսկալի նախճիրից հետո Զեյվա գյուղից հայերը շտապով և ընդմիշտ հեռացան՝ թուրքերին թողնելով ողջ ունեցվածքը: Նույն օրերին հրոսակախմբերով շրջապատված Հարար գյուղն առանց դիմադրության անձնատուր եղավ, և 135 տուն կազմող ողջ բնակչությունը կողոպտվելուց հետո ենթարկվեց բարոյական ու հոգեկան անլուր տանջանքների: Երբ, վերջապես, գերված հարարցիներին օգնության գնաց զորքը, և նրանք ազատվեցին սպասվող արյունալի վախճանից, նրանցից ոչ մեկն այլևս չուզեց մնալ արդեն դժոխք դարձած հայրենի գյուղում, որը գոյատևել էր վաղ միջնադարից սկսած: Ինչպես գեհենից փախած, նրանք ընդմիշտ հեռացան ուրիշ վայրեր՝ հողում ամփոփելով իրենց սպանված 18 հարազատներին:

Մյուս երեք գյուղերի՝ Խոզնավարի, Խնածախի և Ալիղուլիի շուրջ բորբոքվեցին ծանր կռիվներ:

Օգոստոսի 20-ին Մինքենդի կողմերից եկած թուրքերը, միանալով հարևան Բայանդուր գյուղի ու համանուն ձորակի ղշլաղների թուրքերի հետ, հարձակում գործեցին Խոզնավար գյուղի վրա: Միաժամանակ հայ բնակիչների թիկունքին հարված հասցրին գյուղի թուրքերը: Խոզնավարի հայերը հանդես բերեցին մեծ կազմակերպվածություն և այնտեղ եղած փոքրաթիվ կազակների հետ ետ մղեցին թուրքերի բոլոր հարձակումները՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ: Գյուղի 50 թուրք ընտանիքները փախան: Զգալի կորուստներ ունեցան նաև Խոզնավարի հայերը՝ 12 սպանված:

Թուրքերը նույն օրերին հարձակումներ գործեցին Խնածախի վրա, բայց ամեն անգամ նահանջեցին մեծ կորուստներով: Գյուղի դիրքի և գյուղացիների տոկուն դիմադրության շնորհիվ Խնածախը զերծ մնաց կողոպուտներից և հրդեհից, թեև ընդհարումների ժամանակ ունեցավ վեց զոհ:

Հերոսական դիմադրություն ցույց տվեց նաև Ալիղուլին: Տեղացի թուրքերը և սարից իջնող քոչվոր խուժանը երկու օր անընդհատ գրոհում էր հայերի դիրքերը, բայց գյուղ մտնել չէր կարողանում: Գորիս քաղաքից ուղարկված զորամասն օգնության հասավ, և թուրքերը կորուստներով ետ մղվեցին: Ալիղուլիի հայերը նույնպես մեծ կորուստներ կրեցին՝ տալով 16 սպանված և ունենալով բազմաթիվ վիրավորներ: Չնայած կռվի հաղթական ելքին, թուրքական գյուղերով շրջապատված Ալիղուլիի հայերը, այնտեղ

մնալն այլևս անհնարին համարելով, ամեն ինչ ձգեցին և հեռացան ուրիշ վայրեր:

Տաթևի վանքի վանահայր Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը 1905թ. սեպտեմբերին կաթողիկոս Խրիմյանին հաղորդում էր, որ օգոստոս-սեպտեմբերին Տաթևի վիճակի Մինքենդ գյուղի կոտորածի, Խոզնավարի և Ալիղուլիի հրդեհումների, Զեյվայի ու Հարարի թալանի ու սպանությունների հետևանքով այդ հինգ գյուղերի կենդանի մնացած բնակիչներն այլևս չեն ուզում վերադառնալ ու ապրել իրենց գյուղերում: «Բնակիչք հայ գիւղօրէից յահէ և ի սարսափե ելեալ ի բնակութեանց իւրեանց, ցրուեալք են ընդ հայ գիւղօրայս և ոչ մի պայմանաւ կամին յետս դառնալ ի հայրենի տեղիս իւրեանց, յայս միտս և չեն ցանեալ նոքա զարտօրայս իւրեանց և ոչ կամին ի գարնան սերմանել զվարելահողս իւրեանց»[1]: Տնավեր գյուղացիները կամենում էին բնակություն հաստատել թուրքերից դատարկված այն գյուղերում, որոնք գտնվում էին հայ գյուղերի հարևանությամբ: Եվ երբ այդ նպատակով դիմել էին նահանգապետին, վերջինս վճռականապես մերժել էր նրանց խնդրանքը, թեև թուրքերը «նոյնպես ուրախութեամբ կամին փոխանակել զգիւղն իւրեանց ընդ հայոց, քանզի հողն հայոց է պտղաւէտ, քան թուրքանց»: Ներսես վարդապետը վեհափառին խնդրում էր «առնել զբարձր միջնորդութիւն Ձեր առ փոխարքայն վասն թոյլատրելոյ զփոխադրութիւնն»[2]:

Ինչպես երևում է արխիվային նյութերից, թուրք բնակիչները իշխանությունների աջակցությամբ վերադարձել էին իրենց գյուղերը: Բացառություն էր կազմել Խոզնավար և Խնածախ հայկական գյուղերի արանքում ընկած Բայանդուր փոքր գյուղը, որի թուրք բնակիչները տեղավորվել էին հայերից դատարկված Մինքենդում, իսկ Բայանդուրում ապաստան էր գտել Խոզնավար և Հարար հայկական գյուղերից գաղթած մի քանի ընտանիք:

Այն օրերին, երբ Զանգեզուրում տեղի էին ունենում նշված դեպքերը, ընդհարումների ալիքը հասավ Շուշի քաղաք: Կովկասյան ոչ մի քաղաքում թուրք-հայկական ընդհարումն այնքան կատաղի և այնքան արյունահեղ չեղավ, որքան Շուշիի առաջին ընդհարման ժամանակ:

Բաքվի դեպքերից հետո Ղարաբաղում և նրա կենտրոն Շուշի քաղաքում միաժամանակ հաջողվեց զսպել ահազնացող իրադարձությունները: Շուշիի թուրքերը, հանդես բերելով մեծ զգոնություն, իրենց հանգիստ էին պահում: Երևանի դեպքերից հետո նրանք համոզվել էին, որ հայերի հետ կռիվ սկսելու դեպքում հազիվ թե շահեն:

Շուշի քաղաքում բնակվում էր 33 հազար մարդ, որից հայերը 18 հազար էին, թուրքերը՝ 14 հազար, ուրիշ ազգության մարդիկ՝ շուրջ հազար[3]: Քա-

---

[1] «Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան», գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813 -1933թթ.), էջ 446:
[2] Նույն տեղում, էջ 447:
[3] Ա-Դ0, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 148:

ղաքը բաժանված էր երկու մասի. վերին մասում ապրում էին հայերը, ներքինում թուրքերը: Մնացած մի քանի թաղերում հայերն ու թուրքերն ապրում էին խառը:

Թեև երկու կողմերը ձգտում էին պահպանել խաղաղությունը, բայց մարդկանց մտքերն արդեն խառնվել էին, և գնալով խորանում էր փոխադարձ անվստահությունը:

Դեռևս 1905թ. մարտի 9-ին Շուշի քաղաքում տեղի էր ունեցել մի դեպք, որը կարող էր այն ժամանակ խախտել խաղաղությունը: Այդ օրը 2-3 թուրք մտել էին մի հայի խանութ և տիրոջ ներկայությամբ հափշտակել ապրանքը: Դրան ի պատասխան, նույն օրվա երեկոյան չորս հայ երիտասարդ մտնում են մի թուրք մրգավաճառի խանութ և բռնությամբ վերցնում մրգեր: Խանութպանի հարայ-հրոցի վրա հավաքվում են մեծ թվով թուրքեր ու հայեր, որոնց խոսակցությունը գնալով սուր բնույթ է ստանում և սպառնում է փոխվել աղետի: Բարեբախտաբար հաջողվում է ժամանակավորապես հանգստացնել կրքերը[1]:

Որքան էլ քաղաքում մեծամասնություն կազմող հայերն ամեն ինչ արեցին իրադրությունը չսրելու համար, այդ բանը նրանց չհաջողվեց: Բաքվից՝ համիսլամիզմի այդ հնոցից, պարբերաբար հրահանգներ էին գալիս Շուշիի թուրք ղեկավարներին, նույն Բաքվից այնտեղ էին ժամանում քարոզիչներ, որոնք տեղի թուրքերին հորդորում էին հնարավորին չափ արագ զինվել:

Գանձակի նահանգի իշխանությունները ոչ միայն չէին խոչընդոտում թուրքերի զինվելը, այլև ամեն կերպ ոժանդակում էին դրան: Այդ գործում չարաղետ դեր էր կատարում ինքը՝ նահանգապետ գեներալ Տակայշվիլին, որը, ինչպես ասվեց, Նակաշիձեի քրոջորդին էր: Լինելով կատաղի հայատյաց՝ նա հայերի հանդեպ լցվել էր վրեժխնդրությամբ՝ հատկապես իր քեռու սպանությունից հետո:

Նահանգապետի նշանակումներով զավառի ոստիկանության մեջ կարճ ժամանակում աշխատանքի անցան բազմաթիվ թուրք եղեռնագործներ ու քրեական տարրեր: Բոլոր կարևոր ճանապարհների հսկողությունը հանձնվեց իրենց չարագործություններով հայտնի թուրք բեկերին: Օրինակ՝ Եվլախ-Շուշի մեծ ճանապարհի հսկողությունը հանձնվել էր հայտնի ավազակապետ Աբբաս Վեզիրովին, որը հայերի իսկական պատուհասն էր:

Շուշի քաղաքի և Ղարաբաղի թուրքերի զինման ու կռվի նախապատրաստման գործը գլխավորում էին Շուշիի բեկերը, որոնց ղեկավարներն էին Բահաթուր բեկը, Աղգյոզալ բեկը և ուրիշներ: Սրանք նախատեսել էին Ղարաբաղի հայերի դեմ հարձակում սկսել երկու ուղղությամբ՝ դեպի Շուշի և դեպի Գանձակ:

[1] ՀՀ ՊԿՊԱ, *ֆ. 227, ց. 1, գ. 395, թ.թ. 19-20:*

Մրագրված էր հարձակման ընթացքում ավերել ճանապարհին ընկած հայկական գյուղերը և կոտորել բնակչությանը[1]:

Թուրքերը գնալով օր օրի դառնում էին հանդուգն ու լկտի:

Մինչև Շուշիի մեծ ընդհարումը հայերի և թուրքերի միջև տեղի ունեցան մի շարք փոքր ընդհարումներ Խաչենի գավառում: Բոլոր այդ ընդհարումների ժամանակ հաջողությունն ուղեկցում էր հայերին:

Ուստի հայերից վրեժ լուծելու համար Աղդամի թուրքերի 300 հոգուց բաղկացած մի զինված խումբ հարձակում գործեց Առաջաձոր հայկական գյուղի վրա, բայց գյուղի ձորի մուտքում դարան մտած հայ քաջերը հետ քշեցին նրանց: Աղդամցիները, կատաղած տուն դառնալով, որոշեցին ուրիշ կերպ վրեժխնդիր լինել:

Այս անգամ, օգոստոսի 8-ին, նրանք կտրում են Աղդամով անցնող Շուշի-Եվլախ ճանապարհը, գերի վերցնում հարյուրից ավելի հայ ճամփորդներ, նրանց թալանում և անպատվում, իսկ մի քանիսին հասցնում դաշույնի հարվածներ: Այդ բոլորը կատարվում է զավառապետի, նահանգապետի օգնականի և ոստիկանական կազմի ներկայությամբ:

Այս ամենը չէր կարող գաղտնի մնալ: Ինչպես ամեն տեղ, Ղարաբաղում ևս Հ.Յ. դաշնակցությունը լծվեց տենդագին աշխատանքի՝ արհավիրքը կազմ ու պատրաստ դիմագրավելու համար: Հ.Յ.Դ. տեղի կենտրոնական կոմիտեն ամենից առաջ հոգ տարավ զինվորներին զինամթերքով ապահովելու և բնակչությանը զինելու համար: Այդ նպատակով քաղաքացիների վրա դրվեց հատուկ տուրք՝ լրացուցիչ զենք ու զինամթերք ձեռք բերելու նպատակով: Ստեղծվեց զինական ֆոնդ, խիստ հաշվառման վերցվեցին զենքերն ու փամփուշտները: Տնտեսական հարցերի լուծման համար ստեղծվեց հատուկ խորհուրդ: Քաղաքի ներքին կարգը պահպանելու համար կազմակերպվեց ժողովրդական միլիցիա, որի մեջ հիմնականում ընդգրկվեցին չքավոր ընտանիքներից սերված երիտասարդներ, որոնք ստացան զենք և անմիջապես ձեռնամուխ եղան զինավարժության:

Ղարաբաղի հայերի ինքնապաշտպանության գործը ղեկավարում էր, ինչպես արդեն ասվել է, Գանձակի նահանգում հայկական ուժերի ընդհանուր հրամանատար նշանակված Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան)՝ կենտրոնատեղի դարձնելով Շուշին:

Զենք ձեռք բերելու համար փող հավաքելու ժամանակ նորից բացահայտվեց ինքնապաշտպանության կազմակերպման նկատմամբ ունևոր, բարեկեցիկ քաղաքացիների եսամոլությունն ու զայրացուցիչ անտարբերությունը: Չնայած դաշնակցության կոմիտեի բազմաթիվ դիմումներին, Շուշիի հայ ունևորներն ամուր փակել էին փողի քսակները և նույնիսկ այդ բախտորոշ պահին հրաժարվում էին միջոցներ հատկացնել պաշտպանության գործին:

[1] *Միքայել Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 69-70:*

Դաշնակցության համապատասխան մարմինները դիմեցին նաև Բաքվի ու Թիֆլիսի մեծահարուստ շուշեցիներին, որոնք իրենց նախնական կապիտալը դիզել էին հայրենի քաղաքում: Նրանց թիվը շատ էր՝ Ադամյաններ, Բեգլարյաններ, Ղուկասյաններ, Գափյաններ, Խունունցներ, Խանդամիրյաններ, Թամիրյաններ, Անանյանցներ, Խաչատրյաններ... Դաշնակցության դիմումներին սրանք անորոշ պատասխաններ էին տալիս և նույնքան, եթե ոչ ավելի, անտարբեր էին իրենց բնօրրանի ճակատագրի նկատմամբ:

Այս պայմաններում Վարդանը ստիպված՝ մեծահարուստներին մի քանի անգամ սպառնաց ենթարկել ամենախիստ պատիժների, բայց սպառնալիքները նույնպես գործին չօգնեցին:

Հ.Ց.Դ. բյուրոյին ուղղված իր մի նամակում Վարդանը գրում էր.

«... Զինվորները կատաղած են, մարդիկ ապրուստի միջոց չունին, անոթի են... Հազիվ կարող ենք զսպել նրանց... Ստիպված ենք լինելու դիմել ծայրահեղ միջոցների... Հետևանքը գուցե շատ ծանր լինի... Դարձյալ պետք է սկսեն գոռալ, լրագրության էջեր սևացնել, թե դաշնակցությունը բռնություններ է գործ դնում և այլն, և այլն: ... Մտածում ես մի կերպ վերջ տալ..., ամեն բան թողնել իրենց պատասխանատվությանը ու ... հեռանալ, բայց հեռանկարն այնքան ողորմելի է, կորստաբեր, որ կը նշանակե մի քանի բուրժուաների համար զոհ բերել մի ամբողջ անգիտակից ժողովուրդ»[1]:

Բայց առավել անտանելին այն էր, որ ինքնապաշտպանության նկատմամբ անտարբեր էին ոչ միայն բուրժուաները, այլև քաղաքացիներից շատերը: Նույն նամակում Վարդանը վրդովված գրում էր, որ ժողովրդին ստիպված ենք զոռով համոզել, որ նա զենք վերցնի և պաշտպանի իրեն:

Հայկական հրամանատարությունը կազմեց ինքնապաշտպանության մանրամասն ծրագիր, որի համաձայն Շուշիի վերին քաղաքամասը, ուր ապրում էին հայերը, բաժանվեց մի քանի հատվածների (սեկտորների)՝ ըստ գոյություն ունեցող թաղերի: Ամեն մի հատվածի (թաղի) գլուխ կարգվեց զինվորական գործին գիտակ և գործունյա թաղապետ, որն ուներ իր օգնականը:

Շուշի քաղաքի տեղանքին գերազանց ծանոթ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը նկարագրել է այդ հատվածների կամ թաղերի տեղադրանքը՝ վերևից սկսած դեպի ներքև: Հայոց քաղաքամասի հատվածները կամ թաղերն էին՝ Գյավուր-Ղալայի, Կազարմայի (որտեղ գտնվում էին Վերին կամ Երևանի դռները, և որտեղով անցնում էր դեպի Գորիս տանող խճուղին), Քամու ջրաղացի (որը քաղաքամասի հյուսիսային կողմն էր, Ղայբալի ձորի վրա), Ղամլուղի (որը հարում էր ներքին գերեզմանատանը), Հին հանգստարանի (որը բռնում էր քաղաքամասի հարավ-արևելյան կողմը) և Բաղունց ձորերը[2]:

Հայոց և թուրքական քաղաքամասերի արանքում էր գտնվում հայերի

[1] Միքայել Վարանդեան, Հ.Ց. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 74:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 148:

չուկան՝ Մեծ մեյդանը, որը նաև կոչվում էր Թոփխանա: Այստեղից սկսած, մինչև Հին հանգստարանի թաղը, Աղաբեկանց ձորը և Ցածի մեյդանը, որտեղից արդեն սկսվում էր թուրքաց քաղաքամասը, շառավղաձև ձգվում էր երեք մեծ փողոց՝ Թատրոնի, Ագուլեցոց եկեղեցու և Փոստի: Թատրոնի փողոցի վրա գտնվում էր Թամիրյանի թատրոնը, Ագուլեցոց եկեղեցու փողոցի վերին շարքում Ղազանչեցոց եկեղեցին, իսկ ներքևի շարքում (Փոստի փողոցում)՝ Ագուլեցոց եկեղեցին: Այդ երեք փողոցները կազմում էին քաղաքի զարդը և իրենց մեջ ամփոփում էին ավելի քան 400 տուն և յեցուն խանութներ[1]:

Ցուրաքանչյուր թաղում ռազմական տեսակետից կարևոր կետերը վերածվեցին դիրքերի, որոնցից ամեն մեկին հսկում էր 4-10 կամավոր: Այդ դիրքերն էին՝ Ճաքած քերծի գլուխը, Վերի դարպասները, աղա Իրզայի պարտեզը, Քարի տակի ճանապարհի բերանը, Գյովհար աղայի տան դիմացի դիրքը, մի այլ դիրք՝ նույն տնից վեր՝ սարի վրա, Բաղունց հորերը, Վերդանց պարտեզը, Ալեքսան բեկի տունը, ապա մի դիրք թատրոնից վար, երեք դիրք Հին հանգստարանի շրջակայքում, տպարանի դիրքը, Ագուլեցոց եկեղեցին, երեք դիրք Աղաբեկենց ձորում, երեքը՝ Ղամլուղում, մեկը՝ աղա Իրզայի տան մոտ, մեկը՝ Քամու ջրաղացում և մեկը՝ Բարութխանայում[2]:

Բացի դրանից, կազմակերպված էր մի թռուցիկ խումբ՝ խմբապետով և նրա օգնականով:

Քաղաքը բաժանվեց երկու թշնամական բանակների: Երկու կողմերը կազմ ու պատրաստ էին կռվի, և միայն մի առիթ էր պետք այն սկսելու համար:

Օգոստոսի 7-ի լույս 8-ի գիշերը քաղաքի թուրքական սահմանի մոտ անհայտ անձանց կողմից սպանվում է մի թուրք լապտերավաճառ: Չնայած որևէ ապացույց չկար, որ սպանությունը կատարել են հայերը, թուրք բեկերն այն վերագրեցին հայերին և սկսեցին բացահայտ սադրիչ հակահայ պրոպագանդա:

Գրգռված թուրք բնակչության ղեկավար դերը ստանձնում է քաղաքի ոստիկանապետ Խոսրով բեկ Փոլադովը, որն ուղղակի հայտարարում է, որ ինքը թողնելու է ոստիկանապետի պաշտոնը և, կազմելով զինված խումբ, պատժելու է հայերին:

Օգոստոսի 16-ին, ցերեկվա ժամը 10-ի կողմերը, Քարահատ կիրճում թուրքերը հարձակվում են մի հայի վրա, նրան վիրավորում և խլում հրացանը: Նույն պահին ուրիշ թուրքեր քաղաքի ներքին դռների մոտ հարձակվում են երկու հայի վրա, դարձյալ վիրավորում և խլում ատրճանակները: Դրանից մի քանի ժամ հետո թուրքական թաղում մի թուրքի հետ ունեցած ինչ-որ մասնավոր վեճի ժամանակ սպանվում է նախկին դատավոր ռուս

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 149:
[2] «Դրոշակ», N 12 (165), նոյեմբեր, 1905, էջ 183-184:

Լունիակինը: Նույն օրը Շուշիից Գորիս տանող խճուղու վրա՝ Ցարմա կոչվող վայրում, զարսլուեցի Թուրքերը վիրավորում են ղարաղշլաղցի մի հայ գյուղացու: Լուրը հասնում է քաղաք, և մի քանի դաշնակցական կամավորներ, այդ թվում ուխտյալ հեղափոխական Մարգար Ժամհարյանը (Մռավ), գնում են օգնության: Ցարմայի մոտ սկսվում է հրացանաձգությունը, և Թուրքերը փախուստի են դիմում:

Այդ օրը, օգոստոսի 16-ին, առաջին հրազենն է արձակվում նաև Շուշիում: Հայ քաղաքացիներից շատերը պնդում էին, որ այդ ազդանշան տվողը հենց ինքը՝ Թուրք ոստիկանապետն էր:

Այդ մի պայթյունին անմիջապես հաջորդեցին Թուրքի մեյդանի կողմից տրվող հրացանային համազարկերը, որին ի պատասխան Թոփխանայից սկսեցին ճայթել հայերի հրացանները: Եվ սկսվեց կռիվը...

Քաղաքի կենտրոնում ու ծայրամասերում միաժամանակ սկսված կատաղի հրացանաձգությունը մի քանի րոպեում Շուշին վերածեց պատերազմի դաշտի: Ամբողջ քաղաքը թափվեց փողոց, բոլոր անկյուններում զինված ու անզեն երիտասարդներ էին: Հայ կանայք նույնպես դուրս էին եկել տներից. նրանցից մի քանիսը զինված էին:

Հրացանաձգությունը վայրկյանե վայրկյան սաստկանում էր. երկու կողմերը դիրք բռնած՝ անխնա կրակ էին թափում: Հայոց քաղաքամասի կենտրոնական շուկայում Թոփխանայում, գնդակահար եղան բազմաթիվ Թուրքեր: Նույն վիճակին ենթարկվեցին հայերը Թուրքաց բազարում: Իրարանցման մեջ հայկական քաղաքամասի Թուրքերը փախան Թուրքական քաղաքամաս, իսկ այնտեղի հայերն անցան հայկական թաղերը: Բայց բոլորը չէին, որ հասցրին իրենց նետել ազգակիցների մոտ. եղան սպանվածներ, շատերը մնացին իբրև պատանդներ:

Շուշին ամբողջապես կտրված էր դրսի աշխարհից: Քաղաքից բազմաթիվ հեռագրեր էին հղվում Պետերբուրգ՝ Նիկոլայ II-ին, թագուհուն, կառավարությանը, Թիֆլիս՝ փոխարքային, Գանձակ՝ նահանգապետին: Իշխանությունները, սակայն, չէին շտապում, և դա ավելի համարձակ էր դարձնում Թուրք ամբոխին: Միակ պատասխանը եկավ նահանգապետից, որը Շուշիի գավառապետին Գանձակից հայտնում էր, որ ինքն ի վիճակի չէ ոստիկանության և զորքի միջոցով պաշտպանելու քաղաքը, քանի որ «ուժերը չեն բավականացնում», ուստի հայերին խորհուրդ էր տալիս՝ «պաշտպանվել՝ գործ դնելով ցանկացած միջոց»:

Վրա հասած գիշերն անցավ առանց կրակոցների, բայց ոչ ոք աչք չփակեց: Հայկական թաղում մինչև լուսաբաց եռուզեռ էր. մարտիկները պատրաստվում էին գալիք օրվա անկանխատեսելի դեպքերին:

Օգոստոսի 17-ի առավոտյան նոր ուժով վերսկսվեց կռիվը: Քաղաքի բոլոր մասերից խլացուցիչ հրացանաձգություն էր: Նախորդ օրը զորանոցից դուրս

չեկած զորքը թեև այժմ իջել էր փողոց, բայց, հրաման չունենալով կրակել, հանդիսատեսի դերում էր և դիտում էր, թե ինչպես է գնալով բորբոքվում կրակը:

Օրվա երկրորդ կեսին քաղաք մուտք գործեց փոխնահանգապետ Բարանովսկին՝ 200 կազակների հետ, բայց դա ազդեցություն չունեցավ երկու կողմերի հրացանաձիգների վրա, որոնք միմյանց կրակի տակ պահեցին մինչև մութն ընկնելը: Այդ օրը Թուրքերը մեծ կորուստներ տվեցին՝ տասնյակ զոհեր: Մի դիրքում միայնակ կռվում էր 19 տարեկան Իշխան Հեյրաթյանը, որն իր վրա հարձակվող Թուրքերից գնդակահար էր արել 17 հոգու: Նման օրինակները քիչ չէին: Կռվի ընթացքում հայերը գերի վերցրին 100-ից ավելի Թուրք կռվողների, այդ թվում հայտնի Հուսեին բեկ Ջիվանշիրսկուն՝ իր Թիկնապահների հետ:

Թեև Թուրքերի համեմատ հայերի կորուստները մեծ չէին, բայց զոհ գնացին մի քանի անվեհեր մարտիկներ՝ խոր ցավ պատճառելով բոլորին: Դրանցից մեկն էր Շամիր անունով մի արիասիրտ երիտասարդ, որը մեն-մենակ կռվում էր առաջավոր ու վտանգավոր դիրքերից մեկում և մինչև սպանվելը գետին էր գլորել բազմաթիվ հարձակվող Թուրքերի:

Այդ օրվա կռվի մեջ ընկածներից էր ըմբոստ և ազնիվ հոգիներից մեկը՝ Մարգար Ժամհարյանը (Մռավ): Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով նա մեկնել էր Գերմանիա, երկու տարի հասարակական գիտություններ ուսանելուց հետո թողել և վերադարձել էր ծննդավայր Շուշի, նետվել կենդանի գործի մեջ, ակտիվ մասնակցություն ունեցել եկեղեցական գույքի բռնագրավման դեմ ուղղված ըմբոստությանը: Այնուհետև տեղափոխվել էր Բաքու, դարձել Հ.Ց.Դ. Բաքվի կազմակերպության ղեկավարներից մեկը: Բաքվի հայոց եկեղեցու դիմացի Պարապետի հրապարակի վրա ռումբ նետելուց հետո, որի մասին խոսք է գնացել աշխատության առաջին էջերում, Ժամհարյանը կուսակցության կողմից պատժվել էր և հեռացվել Հ.Ց.Դ. Բաքվի կոմիտեի կազմից, ապա եղել էր Արևմտյան Հայաստանում և երբ վերադարձել էր Կովկաս, այստեղ արդեն սկսված էին Թուրք-հայկական կռիվները: Նա անմիջապես մեկնում է հայրենի Շուշի, դառնում հայկական ուժերի ղեկավարներից մեկը: Երկու օր շարունակ Մարգարն իր խմբով հրաշքներ գործեց, ի վերջո զոհ գնաց իր վաղեմի համարձակությանը՝ Թուրքերին քշելիս խիստ առաջացավ նրանց Թաղերը և, գնդակն ընդունելով ճակատին, ընկավ հերոսի մահով: Նա ընդամենը 28 տարեկան էր[1]:

Մարգար Ժամհարյանին նվիրված մահախոսականում «Դրոշակը» գրում էր. «Մեր կրած զոհերի մեծությունը թող ավելի բուռն, ավելի ուժգին դարձնե

[1] «Դրոշակ», N 12 (165), նոյեմբեր, 1905, էջ 190: Տե՛ս նաև Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, «Մ. Վարանդեան» հրատ., Երևան, 1994, էջ 197:

մեր մղելիք պայքարը: Ինչ անենք. պատմական ճակատագրի [կողմից] հայ ժողովրդին չպրտած մարտահրավերն է, որից խուսափել անկարող ենք»[1]: Մարգարի անժամանակ մահը խոր ցավ պատճառեց իր կուսակիցներից շատերին՝ հատկապես Բաքվում: Նրա կյանքին ու նահատակությանը նվիրած իր հոդվածում Աբրահամ Գյուլխանդանյանը գրել է. «Չնայած որ Բաքուն այդ օրերին կյանքի ու մահվան կռիվ էր մղում, բայց և այնպես մեր Զինվորական մարմինն անհրաժեշտ համարեց մի սրտառուչ կոչով ողբալ մեր կորուստը, որովհետև Մարգար Ժամհարյանը դադարել էր վաղուց իր ընտանիքի սեփականությունը լինելուց և դարձել էր մերը, մեր հարազատը»[2]:

Օգոստոսի լույս 18-ի գիշերը Շուշի խուժեց Աղդամից եկած մի մեծ խառնամբոխ և միացավ թուրքական թաղերի կռվողներին: Կռիվը առավոտյան նոր համառությամբ բորբոքվեց: Կուտակելով մեծ ուժեր, թուրքերը կարողացան խուժել հայկական քաղաքամասի ներքին հատվածները, որի բնակիչները խուճապով փախան մյուս թաղերը: Հայ արիասիրտ մարտիկները, որոնք առաջին պահին հանկարծակիի էին եկել, կարողացան արագորեն վերադասավորել ուժերը և անցնել հակագրոհի: Թուրքերը չդիմացան շշմեցուցիչ հարվածին և հետ գլորվեցին ելման դիրքերը՝ թողնելով 80-ից ավելի սպանված և բազմաթիվ վիրավորներ: Այդ օրը հայերից զոհվեց 10 և վիրավորվեց 20 մարդ:

Կռվի մեջ հաջողություն չունենալով՝ թուրքերն իրենց վրեժը հանում էին հայկական թաղերը հրդեհելով: Դրան նպաստում էր տարվա այդ օրերի համար անսովոր ուժգին քամին: Վառվում էին Միքայել խանի տները, կրակի լեզուները Արշակ Մելքումյանի խանութից սկսած՝ Անանյանցի տան ուղղությամբ տարածվեցին մինչև Խանի աղբկա աղբյուրը, Բաբա Հախումյանցի տնից մինչև Հին գերեզմանոցի արևելյան ճակատը և Ս.Աղամալյանի տնից մինչև թուրքական քաղաքամասի սահմանը: Հրդեհը լափեց հայերի ավելի քան 400 տուն՝ ամենահարուստ և չքեղ քաղաքամասում[3]: Հակադարձելով, հայ կռվողները ներխուժեցին թուրքական թաղերը և կրակի մատնեցին մոտ 60 տուն:

Երբ Շուշիում տեղի էին ունենում այս դեպքերը, Աղդամի թուրքերը, իշխանությունների անտարբեր աչքերի առաջ, ավերեցին այնտեղի հայերի տներն ու խանութները, կողոպտելուց հետո կրակի մատնեցին շուշեցի առևտրական տների՝ Բաղդասարյանների, Սողոմոնյանների, Խուբլարյանների, Ահարոնյանների և այլոց Աղդամում գտնվող պահեստները:

Օգոստոսի 19-ի առավոտյան կռիվը նորից վերսկսվեց և տևեց մինչև երեկո: Կատաղի մարտ բորբոքվեց հատկապես Ագուլեցոց եկեղեցու տարածքում:

[1] «Դրոշակ», N 12 (165), նոյեմբեր, 1905, էջ 190:
[2] «Հայրենիք», N 11(167), սեպտեմբեր, 1936, էջ 90:
[3] Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 159:

Թուրքերի մի հրոսակախումբ կարողացել էր մտնել եկեղեցուց ներս և, տեղավորվելով զանգակատան գմբեթի տակ, կրակի տակ էր առել շրջակայքը: Հայ մարտիկների բազմաթիվ գրոհներն անհաջող ավարտ ունեցան, եղան զոհեր: Թուրքերը զանգակատան բարձունքից գնդակահար էին անում եկեղեցուն մոտեցողներին: Ի վերջո հրոսակախումբը ենթարկվեց ոմբահարվածի և, թողնելով զանգակատունը, ցրվեց տարբեր ուղղություններով:

Կռիվը շարունակվեց նաև օգոստոսի 20-ին: Ինչպես նախորդ օրերին, այդ օրը նույնպես հայերը ցույց տվեցին անձնազոհ խիզախության բազում օրինակներ: Վերջապես կեսօրին թուրքերը սպիտակ դրոշ բարձրացրին և դադարեցրին կրակը: Նույն օրը տեղի ունեցավ հաշտություն; և հնգօրյա կռվից հետո լռեցին զենքերը:

Առաջին ընդհարումը ծանր նստեց Շուշիի վրա: Հայերը տվել էին 40 սպանված և 68 վիրավոր: Թուրքերի կորուստներն անհամեմատ մեծ էին՝ շուրջ 500 սպանված և դրանից ավելի վիրավոր:

Կատաղի կռվում նյութական ահռելի կորուստներ ունեցան հատկապես հայերը. ավերվել էր հայկական քաղաքամասի մի հսկա տարածք, հրդեհվել էին հարյուրավոր տներ, ապրանքներով լի խանութներ, թատրոնը, հիվանդանոցը, Մարիամյան դպրոցը[1]: Հայերի նյութական կորուստները կազմել էին մոտավորապես 5 միլիոն ռուբլի:

Մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ տված թուրքերը, սակայն, ունեցել էին նյութական փոքր կորուստներ: Նրանց տներից ավերվել և հրդեհվել էր 150-ը, խանութներից մի քանիսը: Թուրքերի տնտեսական մնասը ընդամենը 30 000 ռուբլու չափ էր[2]:

Քաղաքի կռիվն արձագանք գտավ Շուշվա գավառում, նրա բոլոր երեք շրջաններում՝ Խաչենում, Վարանդայում և Դիզակում: Թուրքերը մեծամասնություն էին կազմում գավառի մի շարք տեղերում, մի հանգամանք, որ նրանց դարձնում էր հանդուգն:

Հայերի ղեկավարությանը հայտնի էր դարձել, որ Աղդամում գտնվող թոփալարի բեկը նամակ է ուղարկել Շուշիի թուրքերին՝ կոչ անելով կանանց ու երեխաներին տեղափոխել ապահով տեղ՝ Արաքսի և Քուռի ափերը, որովհետև, ինչպես նշել էր նա, «հազարավոր զինված եղբայրներ» շուտով պիտի հարձակվեն Շուշիի վրա:

Շուշվա կռվի առաջին օրը՝ օգոստոսի 16-ին, Հ.Յ. դաշնակցության Արցախի կ. կոմիտեն հրահանգ էր իջեցրել Վարանդայի և Խաչենի դաշնակցականներին՝ փակել Ասկերանի անցքը, որտեղով անցնում էր Աղդամ-Շուշի ճանապարհը: Նպատակն էր՝ Աղդամի խառնամբոխ հրոսակներին չթողնել խուժելու

[1] Տե՛ս Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838-1913, Թիֆլիս,1914, էջ 584-585:
[2] Միքայել Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 71:

Շուշի: Այդ պատասխանատու խնդրի կատարումը դրվեց Համազասպ Սրբազանյանի մարտական խմբերի վրա:

Օգոստոսի 17-ին Գրիգոր Միրզաբեկյանի (Մածուն Խեչո) և Միսակ Տեր-Դանիելյանի (Արամայիս)* գլխավորությամբ երկու ձիավոր խումբ, ընդամենը 25 հոգի[1], գալիս ու ամրանում են Ասկերանի կիրճում, որի արանքով հոսում է Կարկառ գետը: Կարկառի մի կողմում Խաչենն էր, մյուսում Վարանդան: Երկու գավառների այս հատման կենտրոնում էր գտնվում Ասկերանի հայտնի բերդը: Խեչոյի և Արամայիսի խմբերը դիրքեր են բռնում Վարանդայի հողում մխրճված բերդի մարտկոցներում:

Շատ չանցած, Սեյիդլու գյուղի տարածքից հարյուրավոր թուրք ձիավորներ «Եա՛ Ալի» գոռալով սլանում են դեպի կիրճը՝ Շուշի անցնելու համար, բայց հանդիպելով փոթորկալի կրակի՝ հետ են դառնում և արշավում Խրամորթ ու Խանաբադ գյուղերի վրա: Այստեղ հայ գյուղացիների ուժգին կրակը նրանց ստիպում է նահանջել Սեյիդլու: Երկու ժամ հետո, ցերեկվա ժամը 4-ին, մոտ 500 թուրք ձիավոր հարայ-հրոցով մոտենում է Ասկերանի կիրճին՝ հաջողության դեպքում շարունակելու ասպատակությունը դեպի Շուշի: Բայց այս անգամ էլ նրանց սպասում էին հերոսների գնդակները: Թողնելով տասնյակ սպանվածներ, ելուզակները խուճապով ցրվում են տարբեր կողմեր:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 18-ին, առավոտը բացվելուն պես, Աղդամից, Սեյիդլուից, Մազանլուից, Շելլուից և այլ կողմերից հավաքվում են հազարավոր թուրք ձիավորներ և վճռական հարձակման անցնում Ասկերանի կիրճը պաշտպանող հայ զինյալների վրա՝ այս անգամ հաստատ համոզված, որ ճեղքել-անցնելու են Շուշին: Մի քանի հազարի հասնող թուրք խառնամբոխի դեմ ընդամենը 30 հայորդի: Անհավատալի է, բայց՝ փաստ: Հայ տղաներն անվրեպ կրակի տակ են առնում թուրքերին, որոնք ձիագոր ընկնելով և բազմաթիվ զոհեր տալուց հետո ստիպված հետ են քաշվում, ապա բոլորովին հեռանում կռվի դաշտից և ապաստանում Աղդամում:

Ղարաբաղի հայոց ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչներից Համազասպ Սրվանձտյանը մի խումբ կտրիճներով շրջում է Խաչենի գյուղերում կարգավորելով պաշտպանության գործը: Օգոստոսի 20-ին մի խումբ մարտիկներով նա գալիս ու փակում է խճուղին՝ Խաչենի կողմից, իսկ Խեչոյի և Արամայիսի երեք տասնյակ մարտիկները կիրճը փակում են Վարանդայի կողմից: Համազասպը խնդիր էր դրել՝ ոչ մի թուրքի չթողնել, որ դուրս պրծնի Ասկերանի թակարդից:

Օգոստոսի 22-ին թշնամին եկավ, բայց այս անգամ հակառակ կողմից: Հազարավոր զինված քոչվորներ, որոնք իրենց հոտերով իջնում էին ամառային յայլաղներից, եկել և կանգ էին առել Ասկերանի կիրճի բերանին՝ սիրտ չանելով այդտեղով անցնել իրենց ձմեռանոցները: Միաժամանակ գավառից եկած և Շուշվա կռվին մասնակցած մի քանի հարյուր թուրք ձիավորներ, որոնք վերադառնում էին Աղդամի շրջանի իրենց գյուղերը, վախենալով անցնել Ասկերանի կիրճով, խռնվել էին Խոջալուի մոտ և սարսափում էին Ասկերանի կիրճ մտնել, որովհետև լսել էին, որ ամսի 17-ից սկսած՝ հայերը թուրք են որսում:

«Դրոշակ» թերթին գրած հոդվածում[1] Արամայիսը մանրամասն նկարագրել է կիրճում և նրա շուրջը ծավալված հետևյալ դեպքերը:

Խոջալուում խռնված թուրք ձիավորներից 30 հոգի ռուս կազակների և թուրք պրիստավի ուղեկցությամբ առաջ են անցնում: Զուգելով թակարդը բացահայտել և երեք տասնյակ թուրքերի համար փչացնել ծրագիրը, հայ մարտիկները թողնում են, որ նրանք անարգել անցնեն կիրճը: Ուղեկցող կազակները վերադառնում են, ու այս անգամ գալիս է 11 հոգուց բաղկացած թուրք ձիավորների մի խումբ և ինքնավստահ մտնում ամրոցի պատերից ներս, որտեղով անցնում էր ճանապարհը: Մարտիկները, վրա տալով, սառը զենքերով սրախողխող են անում բոլորին: Հեռվում խմբված ձիավորները մտածում են, որ եթե հրազենի ձայն չի լսվում, ուրեմն երկրորդ խումբն էլ է ապահով անցել կիրճը: 200-ի չափ ձիավոր պրիստավի առաջնորդությամբ մտնում է մահվան թակարդից ներս: Երբ ամբողջ խումբն արդեն օղակի մեջ էր, հայ մարտիկները բոլոր կողմերից փոթորկալի կրակի տակ են առնում նրան: Երկու ժամ տևած գործողության ընթացքում միայն 6 ձիավորի է հաջողվում դուրս պրծնել: Շուրջ 200 թուրք դիակ փռված էր ճանապարհի երկու կողմերում, ամրոցի պատերի տակ, կիրճի քարաբեկորների վրա: Նրանց թվում էին մի քանի նշանավոր բեկեր, որոնք Շուշի էին գնացել

---

* Շուշիի 1905թ. օգոստոսյան կռիվների և ընդհանրապես 1905-1907թթ. թուրք-հայկական ընդհարումների մասին ականատեսի ու ակտիվ գործչի հարուստ գրառումներ, հոդվածներ, գրքեր և գրքույկներ է թողել դաշնակցության հայտնի գործիչ, պատմաբան, գրող և լրագրող Միսակ Տեր-Դանիելյանը (Արամայիս): Հատկապես արժեքավոր են նրա «Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից» (մասն I, «Ասկերան», «Վարանդա- Խաչեն») գիրքը: Հրատարակված աշխատություններից կարելի է հիշատակել նաև 1908թ. գրած «Ազատության արշալույսին» (Թիֆլիս, 1913), 90-ական թվականներին Թուրքահայաստանում տեղի ունեցած հայդուկային կռիվների մասին՝ «Գաղափարի ճանապարհին» (մաս I և մաս II, Թիֆլիս), թուրքահայ փախստականների մասին՝ «Հողի մարդը» (Բաքու,1915) պատմագեղարվեստական երկերը, Մուշ-Սասունում 1915թ. թուրքերի կողմից իրականացված ցեղասպանության մասին «Զարհուրելի ոճիր» գիրքը (Բաքու, 1915): ՀՀ ՊԿՊ արխիվում պահպանվում են Արամայիսի բազմաթիվ անտիպ գրառումները և հուշերը, այդ թվում «Փչրանքներ» վերնագրով մեծածավալ հուշագրությունը՝ գրված 1942թ. Բաքվում (ՊԿՊԱ, ֆ. 150, ց.1, գ.25), ուր հետաքրքիր տեղեկություններ կան տասնյակ հայ քաղաքական և հասարակական գործիչների մասին: Միսակ Տեր-Դանիելյանի գրական հարուստ ժառանգությունը, որի զգալի մասը պահպանվում է ՀՀ ՊԿՊ արխիվում (ֆ. 150, ց.1, գ.գ. 3,4,11,13,16,17,21,22,25, 31) սպասում է հետազոտողի:

[1] «Հայրենիք», N 11(393), նոյեմբեր, 1958, էջ 82:

[1] «Դրոշակ», N 13 (166), դեկտեմբեր, 1905, էջ 203-204:

ավազակախմբերի գլուխն անցած:

Հայ մարտիկները ոչ մի կորուստ չէին տվել:

Ասկերանում տարած փայլուն հաղթության լուրն արագորեն տարածվեց Վարանդայի և Խաչենի գյուղերում: Արամայիսը գրում էր. «Ժողովուրդը ոգևորվել էր. շատերը դժգոհություն էին հայտնում, որ իրենց անգործ ենք թողել գյուղերում, կռվի չենք տանում: Իսկ մենք տեսնում էինք այդ բոլորը և խորապես զգում, որ հայը որքան խաղաղ, նույնքան էլ կռվող է, որքան համբերող, նույնքան էլ կատաղել գիտե»[1]:

Ղարաբաղի ժողովուրդը Ասկերանի հերոսներին ձոնեց սրտաբուխ երգեր, որոնցից մեկը Համազասպին նվիրված երգն էր.

Ամբողջ աշխարհն հռչակվեցավ
Համազա՛սպը պանծալի ...

Երգի մեջ Ասկերանի հերոսը ներկայանում էր որպես թշնամուն շանթահարող պանծալի հայորդի:

Համազասպ Սրվանձտյանը հենց այստեղ՝ Ասկերանում ստեղծեց իր հռչակը, և այստեղից սկսվեց նրա մարտական պանծալի ուղին:

Օգոստոսի 25-ին Շուշի եկավ Գանձակի նահանգապետ Տակայշվիլին: Հայերը մի քանի խնդրագիր ներկայացրին նրան, որոնցում հատկապես շեշտված էր, որ հայկական գյուղերում հողերն անմշակ են մնում, թուրքերը կտրատում են այգիները, ոչնչացնում թթաստանները: «Գյուղացիների քթի ծուխը բարձրանում էր, – գրել է ականատեսը, – աչքերը տնկած այգիների կրակին, վշտի տակ բթացած դեմքով նայում էին ու ...լռում: Ինչ կարող էին անել, ո՞ւմ դիմեին ...»[2]: Հիմա դիմել էին նահանգապետին, որը, սակայն, ոչ մի միջոց չէր ձեռնարկում ամոքելու հայ գյուղացիների ցավերը: Նա եկել էր սփոփելու թուրքերին և բարձրացնելու նրանց ընկած բարոյական ոգին: Միաժամանակ եկել էր «ուսումնասիրելու» հայերի «կատարած ավերների» չափերը՝ վերադասին կողմնակալ հաղորդում անելու համար:

Շուշի քաղաքի առաջին ընդհարումից հետո ամբողջ գավառում ստեղծված անկայունությունը տևեց 11 ամիս: Կանգ առավ առևտուրը, դաշտերը խոպան մնացին, փակվեցին հաղորդակցության ճանապարհները, ամենուր տիրում էր

[1] «Դրոշակ», N 13(166), դեկտեմբեր, 1905, էջ 203: Ընթերցողի մոտ կարող է հարց առաջանալ, թե ինչու տողատակում նշվում է 1905-ի N 13 թիվը, այն դեպքում, երբ «Դրոշակն» ամսաթերթ էր: Բանն այն է, որ այդ տարվա դեկտեմբերին «Դրոշակը» լույս է տեսել երկու անգամ՝ ամսի 15-ին և 30-ին՝ պահպանելով նախկին ծավալը: Օգտվելով Ռուսաստանում մամուլի ազատության մասին տված խոստումներից՝ Հ.Ց. դաշնակցության կովկասյան մարմինները որոշում էին ընդունել Կովկասում հրատարակել կուսակցության մի օրգան ևս (կիսապաշտոնական), ուր արտահայտություն պիտի գտներ կուսակցությանը զբաղեցնող խնդիրների մի նշանակալի մասը: Տեղեկանալով այդ մասին՝ «Դրոշակի» խմբագրությունը փոխում է իր որոշումը, և 1906 թվականի պարբերականը նորից դառնում է միամսյա՝ շարունակելով մնալ որպես կազմակերպության միակ պաշտոնական օրգանը:

[2] Միակ Տեր-Դանիելյան, Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, էջ 18:

վրեժխնդրության ու փոխադարձ անվստահության ոգին: Ուժասպառ էր եղել ժողովուրդը, որից արյուն էր ծորում և հոսում արտասուք:

1905թ. սեպտեմբերին Հ.Ց.Դ. Շուշիի կոմիտեն հանդես եկավ «Ղարաբաղի հայ ժողովրդին» ուղղված դիմումով, որտեղ տրվում էր քաղաքում և գավառում ծավալված արյունահեղ կռիվների գնահատականը, նշվում այն վճռական դերը, որ ունեցել էր տեղի դաշնակցական կազմակերպությունը ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Միաժամանակ կոմիտեն Ղարաբաղի ժողովրդին հայտարարում էր ի գիտություն, որ կազմակերպությունը «որոշել է այսուհետև ևս, ինչ գնով էլ լինի, պաշտպանել հայ ժողովուրդը թուրք խուժանի հարձակումներից և խստորեն պատժել իսլամական ամեն մի անիրավություն»: Կոմիտեն հայ բնակչությանը կոչ էր անում կորուստներից չընկճվել, չհուսահատվել, չլքել հայրենի եզերքը: «Ավերակների վրա թառած էլ չողբանք մեր կորուստները,– ասված էր դիմումի մեջ: – Մեր սիրելիների արյունով հեղված հայրենիքը, այն երկիրը, ուր պիտի հաստատենք մեր բախտը և ապագան, չը թողնենք վատաբար և օտարության մեջ երջանկություն չը փնտրենք: Հարգենք իրար և կազմակերպվենք, որպեսզի դյուրությամբ դիմագրավենք մեր հիմարացած հարևանների հարձակումներին: Դե՛պ ինքնապաշտպանություն, Ղարաբաղի հայ ժողովուրդ՝ հանուն քո պատվի, հանուն քո ապագայի, քո բոլոր քաղաքական և հասարակական իդեալների»[1]:

ԵՐԿՐՈՐԴ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱՔՎՈՒՄ

Շուշիում կատարված զարհուրելի դեպքերի մասին լուրերը, հասնելով Բաքու, ալեկոծեցին քաղաքի հայ և թուրք բնակչությանը:

1905թ. Բաքվի՝ փետրվարյան արյունալի դեպքերից հետո դրանց կրկնվելու դեմ ուղղված բոլոր ջանքերն անցնում էին ապարդյուն: Քաղաքում նոր փոթորիկ էր հասունանում: Բաքուն պատրաստ էր բռնկվելու երկրորդ անգամ:

Թուրքերն ուղղակի անտանելի էին դարձել: Նրանք ցուցադրաբար չէին կատարում հաշտության պայմանները, իշխանությունների ներկայացուցիչներին ուղղակի հայտարարում էին, որ ռուսների դեմ ոչինչ չունեն, բայց հայերին տանել չեն կարողանում, ուստի եթե վերջիններս չեն ցանկանում ենթարկվել նորանոր կոտորածների, ապա պետք է հեռանան ոչ միայն Բաքվից, այլև երկրամասից:

Հաշվի չնստելով ոչնչի հետ՝ թուրքերը քաղաքային խորհրդարանում ծե-

[1] «Դրոշակ», N12 (165), նոյեմբեր, 1905, էջ 191:

ծեցին վարչության հայ ծառայողներին: Նրանց զինված խմբերը նավթահանքերում ազատ շրջում էին և մահվան սպառնալիք կարդում հայերին: Վերջապես, օրը ցերեկով, մի քանի սպանություններ կատարեցին՝ հայտարարելով, թե իրենց վրեժը պիտի լուծեն Շուշիում թուրքերի կրած կորուստների համար:

Քաղաքում կոտորածը սկսվելուց մի քանի օր առաջ հայերը դիմել էին նահանգապետ Ֆադեևին և խնդրել թուրքերի դեմ ձեռնարկել խիստ միջոցներ՝ պատճառաբանելով, թե խռովահույզ նշանները ցույց են տալիս, որ նրանք նոր աղետ են պատրաստում Բաքվում:

Ի պատասխան հայերի դիմումի, Ֆադեևը հայտարարել էր, որ երկու կողմերն էլ պետք է հանգիստ մնան, այլապես քաղաքի խաղաղությունը խախտելու դեպքում ինքը չի խնայելու նրանցից ոչ մեկին և հրամայելու է անխնա կոտորել բոլոր նրանց, ովքեր խռովությունների պատճառ կդառնան: Նա նաև հայտնել էր, որ զորքերը պահված են քաղաքի բոլոր մասերում և հարկ եղած դեպքում, հինգ րոպե չանցած, դուրս են գալու դեպքերի վայրերը[1]:

Օգոստոսի 20-ին Բաքվի ձիաքարշի ծառայողները, որոնք հիմնականում հայեր և ռուսներ էին, հայտարարեցին գործադուլ: Րոպեապես քաղաքի վարչության առջև ցցվեց մի կողմից ընդհանուր գործադուլի ուրվականը, մյուս կողմից՝ թուրք խուլիգանական հարյուրյակների սպառնալիքը:

Կեսօրին ադմինիստրացիան բերել տվեց զինվորներ՝ ձիաքարշը բանեցնելու համար: Երթևեկությունը վերսկսվեց, բայց այն երկար չտևեց. ձիաքարշի ծառայողները փորձեցին խանգարել դա: Ժամը 4[30]-ին տեղի ունեցավ ընդհարում նրանց և զորքի միջև: Հրացանաձգությունն առաջ բերեց իրարանցում քաղաքում: Դրանից հետո գործադուլի մասին այլևս խոսող չկար, որովհետև զորքի և ձիաքարշի ծառայողների միջև ընդհարումը քաղաքի զանազան մասերում վերաճեց ընդհարման հայերի և թուրքերի միջև :

Այս անգամ զորքը միջամտեց և սկսեց անխնա խփել թե՛ հայերին և թե՛ թուրքերին, նրանց, ովքեր զենքով կռվում էին փողոցներում:

ՌՄԴԲԿ կովկասյան միության օրգան հայերեն «Պրոլետարիատի կռիվ» թերթը գրում էր. «Առաջին օրը պարզվեց, որ հայերը ավելի լավ են պատրաստված, քան թուրքերը»[2]: Քննադատելով դաշնակցականներին, որոնք «անխիղճ կերպով կրակում, սպանում են խեղճ ու կրակ համշարիներին», թերթը միաժամանակ նշում էր, որ իրենց հերթին թուրքերը կատարում են անլսելի գազանություններ խաղաղ հայ բնակիչների նկատմամբ, տանջում և սպանում նրանց, երբ ձեռքներն են ընկնում: «Ով իր սեփական աչքերով չի տեսել, նա չի կարող երևակայել այդ սարսափները»[3]:

Փոքր ընդմիջումներով հրացանաձգությունը տևեց ամբողջ գիշեր և դարձեց միայն օգոստոսի 21-ի առավոտյան:

Օգոստոսի 21-ի ցերեկը հանդարտ անցավ, բայց մութն ընկնելուն պես կռիվը նորից բռնկվեց: Մոտիկ գյուղերից մեծ թվով թուրքեր թափվել էին քաղաք՝ բոլորը զինված: Այս անգամ էլ զորքը տարբերություն չէր դնում զինված հայերի ու թուրքերի միջև և անխնա կրակ էր տեղում: Քանի որ հայերը դուրս չէին եկել փողոցներ, հետևապես զորքի գնդակներից հիմնականում ընկնում էին թուրքերը:

Թեև հայերը լավ դիրքեր էին բռնել, բայց դաշնակցության կենտրոնական զինվորական կոմիտեն շրջաբերականով իր զինվորներին կարգադրել էր առժամապես չմասնակցել կռվին և սպասել տեսնելու, թե ինչ դիրք է բռնելու կառավարությունը, մանավանդ որ զորքը սաստիկ գրգռված էր թուրքերի դեմ և պետք չէր նրա զայրույթն ուղղել նաև հայերին:

Երկու օրվա ընդհարումների արդյունքում սպանված հայերի թիվը 25-ից չէր անցնում: Ըստ որում, սպանվածների մեծ մասը ընկել էր զինվորների գնդակներից: Թուրքերից սպանվել էր մոտ 300 մարդ:

Օգոստոսի 22-ի ցերեկը վերսկսվեց հրացանաձգությունը, որը քաղաքից անցավ նավթահանքերը՝ սոսկալի հրդեհումներով:

Օգոստոսի 23-ին Թիֆլիսից Բաքու հասավ 2000 զինվոր և համալրեց քաղաքում գտնվող 4500-անոց զորամասը:

Քաղաքում թուրքերն այս ու այնտեղ սկսեցին հրդեհել հայերի տները, նրանց պատկանող շինությունները և խանութները: Օգոստոսի 23-ից հրդեհաձգությունը մասսայական բնույթ ստացավ:

Բալախանին միաժամանակ հրդեհվեց մի քանի տեղերից: Հրեղեն բոցերը մեկը մյուսի հետևից լափում էին հանքերը: Հրդեհն ու կոտորածներն անցան նաև Սաբունչի, Ռոմանի և Բիբի-Հեյբաթ:

Ռոմանիի ամբողջ շրջանը բռնկված էր կրակով, վառվում էին բոլոր հայերի, այդ թվում Մանթաշյանի և Փիթոյանի նավթահանքերը:

Հրդեհելով և ավերելով Բալախանին և հատկապես նրա մասը կազմող Ռոմանին՝ թուրքերն ասում էին, թե հայերից հետ են խլում այն նավթաբեր հողերը, որ անցյալում պատկանել են իրենց, բայց հայերը հափշտակել են:

Նավթահանքերում հայերի դրությունը դարձավ սպառնալից: Նույնիսկ այդ անելանելի վիճակում զորքը և կազակները հայերին քաղաք էին տեղափոխում նրանց նախապես զինաթափելուց հետո: Ըստ որում, տեղափոխումը կատարվում էր մեծ փրկագներով: Ականատեսը գրում էր. «Բալախանիից քաղաք ուղեկցող մի ընտանիքից երեք կազակներ պահանջեցին 80 ռուբլի: Երբ մի կերպ հավաքվեց 70 ռուբլի, կազակները խիստ դժգոհ մնացին և ընտանիքի գլխավորից վերցրին նաև նրա գրպանի ժամացույցը»[1]:

---

[1] «Դրոշակ», N 10(163), հոկտեմբեր, 1905, էջ 148-149:
[2] «Պրոլետարիատի կռիվը», N 8, 15(28) օգոստոսի 1905թ.:
[3] Նույն տեղում:

[1] ՀՀ ՀԱԿԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 24:

Նավթահանքերի բոլոր շրջաններում հայերի գույքն անխտիր կողոպուտի կամ կրակի մատնվեց: Հրդեհողները հիմնականում համշարիներ էին, որոնք տեղի թուրքերի համար ծառայում էին որպես թնդանոթի միս: Հարձակման ժամանակ նրանց էին առաջ մղում, որոնցից շատերը գնդակների բաժին էին դառնում, իսկ տեղի թուրքերը նրանց արյան գնով տեր էին դառնում հայերի գույքին:

Սպանությունների և կողոպուտի մեջ թուրքերից հետ չէին մնում լեզգիները: Ռուս բանվորներից ոմանք նույնպես մասնակից էին կողոպուտներին:

Օգոստոսի 23-ին փոխարքա Վորոնցով-Դաշկովը կարգադրություն իջեցրեց Բաքվի գեներալ-նահանգապետ Ֆադեևին՝ «Անհապաղ դիմել ամենակտրուկ գործողությունների»[1]: Մոլեգնած ու գազազած ամբոխին հեշտ չէր զսպել: Նույնիսկ գործողության մեջ դրած թնդանոթներն անկարող եղան կանգնեցնելու փոխադարձ բնաջնջման տենչը:

Օգոստոսի 24-ի ամբողջ օրը Բալախանիում այրվում էին Կասպյան ընկերության նավթի ամբարները: Նույն օրը Բիբի-Հեյբաթում Մուխտարովի գործարանի թուրքերի լավ կազմակերպված ավազակախումբը հարձակում գործեց Մանթաշյան ընկերության մի նավթահանքի վրա, բայց ջարդվելով՝ հետ դարձավ ու միացավ գյուղի թուրքերին: Նրանք համատեղ ուժերով ավերեցին Խատիսյան և Ընկ. պատկանող արհեստանոցը՝ սպանելով ու վիրավորելով շուրջ երկու տասնյակ հայերի:

Օգոստոսի 25-ի գիշերը Ռոմանիում թուրքերը կրկին հարձակվեցին Կրասիլնիկյանի, Փիթոյանի և Մանթաշյանի բանվորների վրա: Տեղի ունեցավ մեծ կռիվ, որի ընթացքում սպանվեցին մեծ թվով թուրքեր, իսկ հայերն ունեցան երկու զոհ: Այդ օրը նույնպիսի կռիվ տեղի ունեցավ Միրզոյանների նավթահանքի շրջանում, ուր թուրքերը դարձյալ մեծ կորուստներ կրեցին:

Օգոստոսի 26-ին թուրքերը Սաբունչի գյուղում հարձակում գործեցին "Совет Съезда"-ի վարչական շենքի վրա, ուր հիմնականում ծառայում էին հայեր և ռուսներ: Չնայած ահագին բազմությանը, թուրքերը փախուստի դիմեցին՝ հանդիպելով ուժգին դիմադրության: Միայն դրանից հետո երևացին կազակներ, որոնք շրջապատելով շենքը՝ զինաթափեցին հայերին :

Կազակներն ու զորքն արդեն անխնա էին հայերի նկատմամբ: Կոտորածի առաջին երկու օրերին Բաքվի գեներալ-նահանգապետ Ֆադեևը կատարել էր հայերին և թուրքերին հավասարապես պատժելու իր խոստումը: Հայերի մոտ պատրանք էր ստեղծվել, թե կառավարությունն այս անգամ իրենց նկատմամբ չպիտի բռնի նախկին դիրքը: Ավելին, օգոստոսի 21-ին նրանք նույնիսկ մի պահ դադարեցրել էին կրակը՝ ամեն բան թողնելով զինվորներին: Սակայն անկողմնակալ դիրքի մասին Ֆադեևի խոստումները խաբուսիկ դուրս եկան:

[1] ՀՀ ՀՔԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25:

Օգոստոսի 22-ից զորքը և ոստիկանությունը ակնհայտորեն պաշտպանում էին թուրքերին: Աղաևը, Թոփչիբաշևը և Ընկ. ամեն ջանք գործ էին դրել գեներալ-նահանգապետին համոզելու, որ այս անգամ նույնպես հայերն են պատասխանատու Բաքվի կոտորածի համար: Եվ Ֆադեևը համոզվել էր:

Բոլշևիկյան «Պրոլետարիատի կռիվը» թերթը գրում էր. «Մասնավորապես Բալախանիում և Բիբի-Հեյբաթում պատկերը սարսափելի էր: Այստեղ սպանությունների հետ առաջ էին տանում և հրաձգությունները, որտեղ ամեն ինչ մոխիր դարձրին: Կառավարությունը այստեղ էլ ցույց տվեց իր զարմանալի «կարգապահությունը»: Գազանացած ամբոխը մարդկային կյանք չէր խնայում, կրակը լափում էր կարողությունները, խուլիգաններն ամեն ինչ քարուքանդ էին անում, ավերում, իսկ ադմինիստրացիայի ներկայացուցիչները հայտարարում էին, որ դա իրենց չի վերաբերում, դա իրենց գործը չէ»[1]: Ապա թերթը նկարագրում էր մի էպիզոդ հայերի ինքնապաշտպանությունից. «Բալախանու մի մասի՝ Զաբրաթի Մանթաշևի գործարանում թուրքերը շրջապատել էին մի քանի հայ ընտանիքների, որոնց օր օրի անխուսափելի մահ էր սպառնում: Պաշարվածների մոտ բավականաչափ հրացան գտնվեց, և նրանք հերոսաբար պաշտպանվում էին: 2000-անոց թուրք ամբոխը հինգ-վեց օր պաշարվածներին հանգստություն չէր տալիս: Հայերի ուտեստի պաշարը բոլորովին վերջացավ, և վերջին երեք օրը նրանք բոված գարի էին ուտում: Դրությունը օր օրի վրա վտանգավոր էր դառնում: Կառավարությունը նրանց հուսահատ դրության վրա ուշադրություն չէր դարձնում, ընդհակառակը՝ նրան անհանգստացնում էր այն, որ նրանք կարողանում են պաշտպանվել պաշարող թուրքերից: Իրենք՝ կազակները, երբ տեսնում էին, թե պաշարված հայերը որպիսի վարպետությամբ են իրենց պաշտպանում, ինչպես են կարողանում վարվել նոր տեսակի հրացանի հետ, ակամայից դեպի նրանց թե՛ հարգանք էին տածում և թե՛ երկյուղ: Վարչությունը նրանց հետ սկսեց բանակցության մեջ մտնել, առաջարկեց հրացաններն իրենց հանձնել, իսկ դրա փոխարեն խոստացավ նրանց ապահով տեղ տանել: Երբ գալիս էին բանակցելու, իբրև հաշտության նշան, դրոշակ էին բարձրացնում: Վերջ ի վերջո սկսեցին թնդանոթներով սպառնալ: Հայերը խնդրեցին նրանց, որ երեխաներին և կանանց տանեն կայարան, իսկ իրենց թողնեն: Կառավարությունը չհամաձայնեց: Վերջ ի վերջո հայերը ստիպված էին հրացանները տալ»[2]:

Երկրորդ ընդհարումը Բաքվում տևեց 11 օր՝ օգոստոսի 20-30-ը ներառյալ: Այդ ընթացքում սպանվել էր 400 հոգի՝ 270 թուրք, 130 հայ և այլազգիներ[3]: Գրականության մեջ և արխիվային նյութերում հիշատակված են

[1] «Պրոլետարիատի կռիվը», N 8, 15(28) օգոստոսի 1905թ.:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Հայրենիք», N 7(91), մայիս, 1930, էջ 153: Արխիվային մի փաստաթղթում նշված է, թե թուրքերից սպանվել է ավելի քան 1000 մարդ, այսինքն՝ հայերի մարդկային կորուստներից 6-7 անգամ ավելի (տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց.2, գ. 187, թ. 25):

սպանված հայերի անուններ. Սամվել Մաթևոսյան (գանձակեցի), Մկրտիչ (Մկո) Հովհաննիսյան (ախալքալաքցի), Խաչատուր Ղահրամանյան (ղարաբաղցի), Զաքո Մելքումյան (տաճկահայ), Սարգիս Պետրոսյան (Բաքվի արվարձան Քիշլի գյուղից), Հովհաննես Վարդանյան (ղարաբաղցի), Խոսրով և Խորեն (որոնց որտեղացի լինելը պարզված չէ) և ուրիշներ:

Ավերիչ ձեռքը ոչնչացրել էր նավթի արդյունահանման աշտարակների և մշակման ձեռնարկությունների զգալի մասը, որը հիմնականում պատկանում էր հայերին:

Բաքվի նավթային շրջանը բռնում էր ավելի քան 2 500 դեսյատին տարածություն, որից այն ժամանակ արդյունահանման համար մշակվում էր միայն 1 000 դեսյատինը: Մի քանի նավթային շրջանների բաժանված այդ 1 000 դեսյատինի վրա որպես անտառ բուսել էր 3 000-ից ավելի նավթաշտարակ, որոնցից մնացել էր 1 763-ը: Կրակի հրեղեն լեզուները լափել էին մնացած աշտարակները[1]: Ըստ որում, գրասենյակներով հանդերձ ամբողջովին այրվել էին «Կասպիական», «Ռունո-Թուման», «Արշալույս», «Մանթաշև», «Փիթոև», «Միրզոև», «Կրասիլնիկովներ», «Մելիքով», «Արամազդ», «Ադամով», «Տեր-Հակոբովներ», «Վոլտա», «Կովկասյան», «Ռադուգա», «Կովկաս-Սուչաստնիկ», «Պետրով», «Բալախանյան» ընկերությունների գործարանները: Հրդեհվել էր «Զերնոմորյան» ընկերության հանքերի կեսը, Նույնպիսի կորուստ էր ունեցել Շիբաևը, Նոբելի հանքերից ոչնչացվել էր 1/3-ը, փոխարքա Վորոնցով-Դաշկովին պատկանող նավթահորերից հրդեհվել էր 7-ը, «Մոսկվա-Կովկասյան ընկերությունից»՝ 4-ը: Զգալի կորուստներ էին ունեցել նաև «Շիրվան» ընկերությունը, «Իշխան Գագարի», «Գալպերին» ֆիրմաները: Կողոպտվել և այրվել էին Հակոբովի, Զախմախչիևների, Դիլդարովների, Տեր-Հովհաննիսյանների պահեստները: Մոտավոր հաշվումներով օգոստոսյան ավերումների հասցրած վնասը կազմել էր 25 միլիոն ռուբլի, որից հայ կապիտալիստներինը՝ շուրջ 20 միլիոն:

Թուրքերի տնտեսական կորուստները չնչին էին: Անվնաս էին մնացել «Պոլակ» ընկերության Մուսա Նաղիևի և Ասադուլաևի հանքերն ու գործարանները[2]:

Ամենածանր վիճակը ստեղծվել էր բանվորության համար: Նրանցից տասնյակ հազարները զրկվել էին աշխատելու հնարավորությունից, հետևապես՝ ապրելու միջոցներից: Շատերը չարաթներով գիշերում էին փողոցներում, պատերի տակ՝ մատնված սովի: Բախտի քմահաճույքին թողած հազարավոր մարդկանց մասին հոգացող չկար:

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25:
[2] Նույն տեղում:

Բալախանիում, օրինակ, աշխատում էր մոտավորապես 20 000 բանվոր: 1905թ. օգոստոսից մինչև դեկտեմբերի վերջը նավթահանքերի մեծ մասը չէր աշխատում: Այսինքն՝ 4 ամիս շարունակ 20 հազար մարդ մատնված էր ծանր զրկանքների: Եթե յուրաքանչյուր բանվորի օրավարձի միջինը հաշվելու լինենք 80 կոպեկ, ուրեմն՝ միայն Բալախանիի բանվորությունը կորցրել էր մոտ 2 միլիոն ռուբլի[1]:

Բաքվի երկրորդ կոտորածն էլ ավելի խորացրեց թուրքերի և հայերի միջև ընկած վիհը: Նոր ընդհարման հնարավորությունը չէր վերացել, ընդհակառակը՝ անխուսափելի էր թվում:

Հայերը թուրքերին մի շարք կոնկրետ առաջարկներ արեցին, որոնց իրականացումը, նրանց կարծիքով, կհեռացներ նոր կոտորածի վտանգը: Թուրքերի ղեկավարների հետ ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ հայերի ներկայացուցիչներն առաջ քաշեցին հաշտության համար երկու կողմից երաշխավորվող պարտավորությունների ստանձնումը: Նրանք առաջարկեցին հետևյալը. գործվելիք ոճիրները, լինեն դրանք քաղաքում թե նավթային շրջաններում (Բիբի-Հեյբաթ, Բալախանի, Սև քաղաք), ոճրագործները հայտնի լինեն թե ոչ, ձերբակալվեն թե ոչ, սպանվածը կամ վիրավորվածն աղքատ լինի թե ոչ՝ երկու կողմից ընտրված դատարանի վճռով սահմանել տուգանք, գումարը գանձել ոճիր գործածի հայրենակիցներից և այն հատկացնել սպանվածի ժառանգներին կամ վիրավորյալին, կամ հրդեհի ու կողոպուտի ենթարկվածին: Թուրքերը կտրականապես մերժեցին այդ առաջարկը, և մերժումը հավանություն գտավ նահանգապետի կողմից:

Այդ օրերին էր, որ տեղի ունեցավ Միրզաբեկյանի ծխախոտի գործարանի դեպքը:

Ձեռնարկության մեջ աշխատում էր 7-800 բանվոր, որից 600-ից ավելին հայեր էին, 40-50 թուրքեր, մնացածը՝ ռուսներ: Մինչև օգոստոսյան աղետը գործարանի թուրքերը բազմաթիվ նեղություններ էին պատճառել հայ բանվորներին, անգամ կատարել սպանություն: Օգոստոսի 31-ին, երբ գործարանատերն ուզում էր աշխատանքը վերսկսել, հայ բանվորները նրա առջև պայման դրեցին՝ իրենք աշխատանքի դուրս կգան միայն այն դեպքում, եթե թուրքերը չաշխատեն գործարանում: Միրզաբեկյանն ընդունեց այդ պայմանը, բայց երկու օր հետո ոստիկանությունը միջամտեց և պարտադրեց թուրքերին ընդունել գործարան, եթե ոչ, ապա որևէ թուրք գործարանատեր իր մոտ այլևս հայ բանվոր չի պահի: Իմանալով թուրք գործարարների վերաբերմունքի մասին՝ Միրզաբեկյանը հրաժարվում է հարգել ոստիկանապետի միջամտությունը: Դրանից հետո նահանգապետն ինքն է անձամբ խնդրի լուծումը վերցնում իր ձեռքը և գործարանատիրոջը կարգադրում է աշխատանքում վերականգնել բոլոր թուրքերին, այլապես սպառնալով փակել գործարանը:

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 26:

Բաքվի երկրորդ կոտորածից հետո քաղաքական կազմակերպությունների հայացքներում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ Թուրք-հայկական ընդհարումների նկատմամբ: Արդեն քանիերորդ անգամ հասարակությունը համոզվել էր, որ կոտորածների նախաձեռնողները Թուրքերն են, և որ նրանք են ցարիզմի նվիրյալ ու հետևողական պաշտպանը:

Բոլշևիկների առաջնորդ Լենինն այդ օրերին գրում էր, որ թեև 1905թ. փետրվարյան օրերից հետո մերկացվել և ջրի երես էր հանվել Բաքվի նահանգապետի և ոստիկանության խաղացած ստոր դերը հայերի կոտորածների հարցում, բայց դա իշխանություններին չխանգարեց «երկրորդ անգամ դիմել այդ նույն փորձված միջոցին, բայց այս անգամ տարածելով գրեթե ամբողջ Անդրկովկասի վրա և հասցնելով հրեշավոր չափերի: Թաթարներին տրվել էր սպանելու, բռնանալու, կողոպտելու լիակատար ազատություն: **Եվ այստեղ հակահեղափոխությունը փութաց առաջինը հարձակվել հեղափոխության վրա** (ընդգծումը Լենինինն է: - Հ.Ս.), նախահարձակ լինել, թույլ չտալ հավաքել ուժերը»: Այնուհետև Լենինը շարունակում էր. «Բայց այս անգամ պատկերը փոխվեց: Ոստիկանության ղեկավարությամբ և ցուցումով անպաշտպան հայերին կրկին ջարդելու փոխարեն տեղի ունեցավ բնակչության երկու մասի զինված պայքար, ծագեց քաղաքացիական պատերազմ: Եթե փետրվարին նահանգապետի ձեռքի մի հրամայական շարժումը բավական էր կանգնեցնելու համար մոլեգնած թաթարներին, ապա այժմ նույնիսկ զորքերի միջամտությունը թաթարներն ընդունում էին հրացանի կրակոցներով: Հետադիմական ուժերի պայքարը հեղափոխական ուժերի դեմ փոխվեց երկու ազգերի պայքարի, որը զինված ուժեր ներգրավեց նույնիսկ Պարսկաստանից: ...Շարժումը գերազանցեց կառավարության մտադրությունը: Քանակը փոխվեց որակի»[1]:

Այնուհետև անդրադառնալով Բաքվի օգոստոսյան իրադարձությունների հնարավոր քաղաքական հետևանքներին՝ Լենինը գրում էր.

«Կովկասյան իրադարձությունները հսկայական նշանակություն ունեն ռուսական հեղափոխության համար: Դրանք ցույց են տալիս, որ հակահեղափոխական ուժերի փոքր ի չատե մեծ ծավալի մոբիլիզացումն անհնար է, որ չհանգեցնի հեղափոխական ուժերի մոբիլիզացման: Քանի դեռ կառավարությունը ժողովրդական շարժումը ճնշելու համար օգտվում է ոստիկանության և զորքի ուժից, նա գրգռում, հեղափոխականացնում է բնակչությանը, իհարկե, շարունակելով հաստատուն մնալ իր այն տեսակետին, թե ցարիզմի տիրապետությունը հավերժ է, նրա իրավունքը՝ բացարձակ, իսկ ժողովուրդը իրավազուրկ է: Բայց երբ նա բացահայտ պայքարի է դրդում բնակչության մի շերտին մյուսի դեմ, հավանություն տալիս հետադիմական տարրերի ինքնադատաստանին, դրանով իսկ անուղղակի հավանություն է տալիս և հեղափոխական տարրերի ինքնադատաստանին: Ընդունելով բնակչության մի մասի մյուսի վրա հարձակվելու իրավունքը՝ դրանով իսկ նա ընդունում է ինքնապաշտպանության իրավունքը: Կովկասյանին նմանվող իրադարձությունները ժողովրդական զանգվածների մեջ արմատավորում են հեղափոխության իրավունքի գիտակցություն: Վերցրեք, թեկուզ, Բաքվի իրադարձությունները: Կես տարի առաջ անպաշտպան հայերին կոտորում էին փողոցներում, այրում էին տներում: Այժմ պատկերն այլ է. այժմ զգալի թվով հայեր զինված են և հարձակվողներին ուժեղ հակահարված են տալիս: Ջարդը փոխվում է քաղաքացիական կռվի, առայժմ հեղափոխական տարրերի զուտ ինքնապաշտպանական կռվի: Բայց հեղափոխական պայքարի դիալեկտիկան անխուսափելիորեն պաշտպանությունը կհանգեցնի հարձակման: Այն կհանգեցնի երրորդ փուլին՝ **նախաձեռնող գործողությունների, զինված ապստամբության**: Պաշտպանությունը, նույնիսկ ամենահաջողվածը, լավագույն դեպքում կարող է միայն պաշտպանել հայտնի դիրքերը, բայց չի կարող ոչ մի քայլ առաջ մղել հեղափոխության գործը: Կանգ առնել պաշտպանական պայքարի փուլում, նշանակում է կործանել գործը»[1]:

Որքան էլ տարօրինակ կարող է թվալ, Լենինի այս տեսակետը տվյալ էտապում լիովին համապատասխանում էր Թուրք-հայկական ընդհարումների ընթացքում ինքնապաշտպանությունից հարձակողական մարտավարության անցնելու Նիկոլ Դումանի և նրա համախոհների գործելակերպին:

Թուրք-հայկական ընդհարումների վերաբերյալ Լենինի նոր հայացքը, որպես կուսակցական տեսակետ, անմիջական արտացոլում գտավ բոլշևիկյան մամուլի էջերում:

"Кавказский рабочий листок"-ի 1905թ. N6-ում զետեղված «Ռուսական Մեծ հեղափոխության մի էպիզոդը» վերնագրով հոդվածը նվիրված էր Թուրք-հայկական ընդհարումների նոր էտապի բնութագրմանը: Հոդվածագիրը գրում էր.

«Կովկասը վառվում է: Ողջ երկիրը բռնկված է հրդեհով: Երկու ազգերը սպառազեն կանգնած են մեկը մյուսի դեմ և մղում են պատերազմ իսկական, անողոք, արյունահեղ պատերազմ:

Ինչի՞ համար է այդ կռիվը: Ո՞վ է հայտարարել այդ պատերազմը: Ի՞նչ է դա:

Դա **հեղափոխություն** է (ընդգծումը թերթինն է: - Հ.Ս.):

... Ծնվող նոր բուրժուադեմոկրատական Ռուսաստանը կռվում է հին Ռուսաստանի դեմ: Դա, ավելի ճիշտ, Ռուսական Մեծ Հեղափոխության էպիզոդներից մեկն է»[2]:

---

[1] **Н. Ленин (В. Ульянов)**, Собрание сочинений, т. VI, "1905 год", стр. 483.

[1] **Н. Ленин (В. Ульянов)**, Собрание сочинений, т. VI, "1905 год", стр. 484.

[2] **"Кавказский рабочий листок"**, N 6, 1905г.

Այնուհետև բոլշևիկ հոդվածագիրը զուգահեռներ է անցկացնում կովկասյան իրադարձությունների և 1789թ. ֆրանսիական հեղափոխության միջև՝ թուրքական կողմը համարելով հակահեղափոխական Վանդեա:

Երբ երիտասարդ բուրժուազիան և ամբողջ քաղաքային բնակչությունը Ֆրանսիայում սկսել էին հեղափոխությունը, գյուղացիական ֆեոդալական Վանդեան, ուժեղ ազնվականության ու հոգևորականության գլխավորությամբ, պատերազմ հայտարարեց հեղափոխությանը: Վանդեան կազմակերպել էր իր բանակը և շատ տարիներ համառ կռիվ էր մղում հանրապետական զորքերի դեմ: Հոդվածագիրը հարցնում էր.

«Ձե՞ք գտնում Դուք, ընթերցող, որ իսկական թաթարական Վանդեան, ըստ էության, չի տարբերվում ֆրանսիական Վանդեայից: Այնտեղ ֆրանսիական ժողովրդի մի մասը կռվում էր ամբողջ ֆրանսիական ժողովրդի դեմ: Մեզանում գործը բարդանում է ազգային և կրոնական կողմնակի մոտիվներով: Մեզ մոտ Կովկասում բուրժուական նոր կարգերի կրողները հայերն են և քրիստոնյաները, իսկ ճորտատիրական հին կարգերի կրողները՝ թաթարները և մուսուլմանները: Դա, կրկնում ենք, բարդացնում է իրադարձությունները, բայց չի փոխում դրանց էությունը, դրանց սոցիալ-քաղաքական նշանակությունը:

Մեռնող ինքնակալական կառավարությունը, որպեսզի հետաձգի իր կործանումը, որպեսզի արյան մեջ խեղդի և Թուլացնի հեղափոխական Կովկասը, օգտվելով իրադրությունից, օգնության է կանչել թաթարական Վանդեան[1]:

Բոլշևիկյան թերթը նշում էր, որ թուրք կալվածատերերը՝ ամեն տեսակի խաներ, բեկեր ու աղալարներ, զգալով իրենց անսահմանափակ տիրապետության վերջը, նոր-նոր սաղմնավորվող թուրք թույլ բուրժուազիան, որը մրցակցության մեջ էր մտել ուժեղ հայկական բուրժուազիայի հետ, վերջապես, կալվածատերերի և նրանց հավատարիմ հոգևորականության կողմից տնտեսապես և գաղափարապես հարստահարվող թուրք գյուղացիական մասսաները հզոր զենք են ծառայում ինքնակալության ձեռքին՝ Կովկասում հեղափոխության դեմ պայքարելու համար: Ելնելով այդ բոլորից՝ թերթը ուղղակի չեշտում էր, որ Կովկասում տեղի ունեցող արյունալի հայ-թաթարական կռիվն իր էությամբ առաջադիմական է, նաև հեղափոխական է, որքանով որ ուղղված է ցարիզմի հովանավորությունը և պաշտպանությունը ստացող կովկասյան թուրքերի հակահեղափոխության դեմ[2]:

Հայկական ինքնապաշտպանական կռիվներին բոլշևիկների տված գնահատականը բնական էր, քանզի նրանք նույնպես հանդես էին գալիս միապետական-ֆեոդալական կարգերի տապալման և երկրում բուրժուադեմոկրատական կարգեր հաստատելու պահանջներով, որը հնարավորություն կտար ստեղծելու բանվորների և գյուղացիների ժամանակավոր հեղափոխական կառավարություն: Բանի որ, ըստ բոլշևիկների, հայությունը բուրժուադեմոկրատական գաղափարների կրող էր, իսկ կովկասյան թուրքությունը՝ հին, ֆեոդալական հարաբերությունների կրող, ուստի հայության պայքարը նրանց կողմից դիտվում էր որպես ռուսական մեծ հեղափոխության կարևոր ուժերից մեկը:

Միաժամանակ բոլշևիկները մշտապես ընդգծում էին, որ դա չի նշանակում, թե տվյալ պահին հեղափոխական բոլոր տարրերը պետք է համախմբվեն հայերի, որպես նոր՝ բուրժուահեղափոխական գաղափարների կրողների շուրջը, միջամտեն այդ արյունահեղ կռվին և գնան թուրքերի դեմ: Բոլշևիկները համոզված էին, որ երբ սկսվի ապստամբությունը տիրող կարգերի դեմ, վճռական պահին թուրք զանգվածները նույնպես կկանգնեն դեմոկրատիայի կողքին՝ ընդդեմ ինքնակալության:

«Ահա թե ինչու, - գրում էր թերթը, - մեր խնդիրը հեղափոխական պրոլետարիատի խնդիրն է՝ ոչ թե բորբոքել մեր երկրամասում բռնկված հրդեհը, ոչ թե սաստկացնել անմիտ արյունահեղությունը, այլ **դրան վերջ տալ**: Մեր պարտքն է ոչ թե կռվել թաթարական մասսայի դեմ, որը ներկայումս կույր գործիք է ցարական կառավարության և թաթարական ազնվականության ձեռքին, ոչ թե ոչնչացնել մեր վաղվա դաշնակիցներին, բորբոքել ազգային թշնամություն, քեն ու ոխ, այլ **դադարեցնել կոտորածը, դադարեցնել կռիվը:** Այժմ անհրաժեշտ է ոչ թե կռիվ մղել Վանդեայի դեմ, այլ պառակտել նրան, նրանից բաժանել բանվորական մասսաներին, նրանց հետ միասին, Ռուսաստանի ողջ բանվորական մասսաների հետ միասին պատրաստվել վճռական մարտի արյունալի սարսափների պատճառի դեմ, հայ-թաթարական կոտորածների իսկական մեղավորի՝ ցարական ինքնակալության դեմ»[1]:

Թուրք-հայկական կռվում առաջվա պես հայերի կողմն էր Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, որի բաժանմունքներն ու կազմակերպությունները շարունակում էին ակտիվ բարոյական աջակցություն ցույց տալ հայությանը, հատկապես նրա ազգային կուսակցությանը՝ Հ.Ց. դաշնակցությանը: Սոցիալիստ-հեղափոխականների մամուլը լայնորեն անդրադարձավ ինչպես Շուշիի դեպքերին, այնպես էլ Բաքվի երկրորդ կոտորածին՝ ամեն դեպքում ցույց տալով, որ հայությունն այլ ելք չունի, քան զենքով պաշտպան կանգնելու իր գոյությանը: Ավելին, շարքային սոցիալիստ-հեղափոխականները հաճախ կամավոր հանգանակություններ էին կատարում դաշնակցության օգտին, որոնք գերազանցապես խորհրդանշական բնույթ ունեին:

Ահա այդ համակրանքի արտահայտություններից մեկը:

---

[1] **"Кавказский рабочий листок"**, *N 6, 1905* г.
[2] *Նույն տեղում:*

[1] **"Кавказский рабочий листок"**, N 6, 1905г.

Լեհաստանի Սուվալկյան նահանգի մի խումբ հրեա բանվորներ ժողովի էին հավաքվել, քննել Կովկասում տիրող իրավիճակը, ընդունել որոշում, որը ուղարկելով "Революционная Россия" թերթի խմբագրությանը՝ խնդրել էին այն հանձնել «Դրոշակին»: Խմբագրությունը կատարել էր այդ խնդրանքը: Բանվորների ընդունած որոշման մեջ ասված էր.

«Մենք՝ սոցիալ-հեղափոխական կուսակցության պատկանող, Վոլկովիչյան ճյուղի հրեա բանվորներս, հայտնում ենք մեր խորին ատելությունն ու զզվանքը միապետական կառավարությանը, որ հանդիսանում է Կովկասում արյունոտ անցքերի կազմակերպիչը: Մենք միաժամանակ հղում ենք եղբայրական մեր ողջույնը հայ աշխատավոր ժողովրդին և ցանկանում ենք, որ նա այդ ծանր փորձություններից դուրս գա ավելի ուժեղացած՝ մեր ընդհանուր թշնամու՝ բռնապետության դեմ կռվելու համար:

Սրա հետ միասին ուղարկում ենք հինգ ռուբլի և խնդրում ենք հանձնել Հ.Ց. դաշնակցությանը:

Հրեա բանվորներ՝

Ստորագրություն 50 հոգու»[1]*:*

Բաքվի երկրորդ կոտորածների տպավորության տակ Վ. Լենինը լույս ընծայեց «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հայտնի հոդվածը, ուր նա խոր գիտականությամբ վերլուծել էր Կովկասում թուրք-հայկական կոտորածների դրդապատճառները, դրանում ցարիզմի խաղացած ստոր դերը, ջերմորեն արտահայտվել միջնադարյան խավարի ու տգիտության դեմ կենաց ու մահու կռվի մեջ մտած հայության մասին: Հոդվածում Լենինը գրում էր.

*« ... Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հենվում է պրոլետարիատի վրա, իսկ **կովկասյան պրոլետարիատի ամենագիտակից տարրը հայ բանվորներն էին** (ընդգծումը մերն է - Հ.Ս.): Եվ ահա կառավարության աչքում հայերը Կովկասում դառնում են հեղափոխության նույնպիսի խորհրդանիշ, ինչպիսիք էին հրեաները արևմտյան և հարավ-արևմտյան Ռուսաստանում: Այդ հեղափոխական ուժի դեմ պայքարելու համար մոբիլիզացվում է կովկասյան բնակչության այն մասը, որն **իր սոցիալական դիրքով և իր կրոնական հավատալիքներով ամենաանհամատեղելին էր հայերի հետ՝ թաթարները** (ընդգծումը մերն է- Հ.Ս.)»*[2]*:*

---

[1] **«Դրոշակ»**, N 12 (165), նոյեմբեր, 1905, էջ 191:

[2] **Н. Ленин (В. Ульянов)**, Собр. сочинений, т.VI, "1905 год", Վ. Ի. Լենինի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածը լույս է տեսել "Пролетарий" թերթի 1905 թ. սեպտեմբերի 20-ի (հոկտեմբերի 3-ի) համարում (N19), անստորագիր: ՌԿ(բ)Կ 9-րդ համագումարի (1920թ.) ընդունած որոշման հիման վրա 1920-1926թթ. իրականացվել էր բոլշևիկյան կուսակցության և խորհրդային պետության ղեկավարի երկերի առաջին բազմահատոր ժողովածուի հրատարակումը՝ 20 հատորով (26 գրքով): Նրանում զետեղվել էին Վ. Լենինի նախկինում տպագրված աշխատությունների մեծ մասը և մի շարք

Բաքվի երկրորդ ընդհարումից հետո քաղաքից հայ բանվորների մի նոր հոսք սկսվեց դեպի գավառները: Եթե փետրվարյան դեպքերից հետո դաշնակցությունը քարոզչական լայն աշխատանք էր տարել, որպեսզի հայ բանվորները չլքեն քաղաքը, ապա այժմ, ընդհակառակը, կուսակցությունը ոչ միայն արգելք չէր հանդիսանում ծննդավայր վերադառնալու նրանց ձգտմանը, այլև խրախուսում էր: Պատճառն այն էր, որ ընդհարումներն արդեն տարածվել էին երկրամասի հայկական համարյա բոլոր գավառներում: Դաշնակցությունը ելնում էր այն իրողությունից, որ գավառներից եկած ավելի քան 20-25 հազար հայ երիտասարդ աշխատողներ կուտակված են Բաքվում[1]*, այն դեպքում, երբ միանգամայն անպաշտպան էին հայ գյուղերից*

անտիպ աշխատություններ: Հեղինակի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածը զետեղվել էր ժողովածուի 6-րդ հատորում (տե՛ս **Н. Ленин (В. Ульянов)**, Собрание сочинений, т.VI, "1905 год", стр. *481- 486): Հետագայում հոդվածը վերագրվել է* **Վ. Վորովսկուն** *և լույս է տեսել նրա երկերի 3-րդ հատորում (տե՛ս* **В. Воровский**, Сочинения, т.3, Москва, 1933, стр. *105-110): Անշուշտ, Վ. Լենինի այդ հոդվածը ուրիշ հեղինակի վերագրելն ունեցել է իր «ծանրակշիռ» պատճառաբանությունը: Հոդվածում բոլշևիկների առաջնորդը անկողմնակալ նկարագրել է թուրք-հայկական ընդհարումները: Ըստ որում, նա ընդգծված համակրանք է արտահայտել հայ բանվորության նկատմամբ, միաժամանակ բացահայտել մուսուլմանական ֆանատիզմի հետադիմական էությունը: Թուրք-հայկական ջարդերի գլխավոր հանցագործ համարելով ցարական կառավարությանը՝ Լենինը միաժամանակ ցույց էր տալիս, որ երկու ժողովուրդների միջև ընդհարումներ սադրելով, ցարիզմը հենվում է թուրք-թաթարական մուսուլմանական հետամնաց զանգվածի վրա: Անտարակույս, այս «միակողմանի» վերաբերմունքն է պատճառ եղել, որ հոդվածը հետագայում օտարվել է նրա իսկական հեղինակից: Լենինի երկերի հաջորդական ժողովածուների հրատարակիչները, անշուշտ, հոդվածի մեջ տեսել են ինտերնացիոնալիզմից որոշակի «չեղում» և անհրաժեշտ են գտել Լենինին սրբագրել ու հեռու պահել կողմնակալ երևալու վտանգից:*

Մենք խորապես համոզված ենք, որ «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածը Լենինինն է: Նախ հոդվածի ոճը ամբողջովին լենինյան է: Այնուհետև, այն Լենինի երկերի ժողովածուի 6-րդ հատորում զետեղվել է 1924թ., այսինքն՝ նրա մահվան տարում: Կասկած չկա, որ հատորը տպագրության է պատրաստվել դրանից գոնե 2-3 տարի առաջ, իսկ ժողովածուի նյութերի ընտրությունը կատարվել է հեղինակի գիտությամբ ու հավանությամբ, երբ դեռ կորուկ չէր վատթարացել նրա առողջական վիճակը:

Իբրև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կուսպատմության ինստիտուտի տնօրեն, Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուի (ԵԼԺ, 55 հատոր) հայերեն հրատարակության գլխավոր խմբագիր, ժողովածուի հրատարակության հետ կապված մի խումբ հարցերով, այդ թվում նաև «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածը Լենինին պատկանելու խնդրով ու համապատասխան հիմնավորումներով մենք 1978թ. գրավոր դիմել ենք մեր գերատեսչական հիմնարկի՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի (ՄԼԻ) տնօրինությանը: Մասնավորապես խնդրել էինք համապատասխան լուսաբանում տալ, թե ինչո՞ւ նշված հոդվածը դուրս է թողնվել Վ. Ի. Լենինի ԵԼԺ-ից: ՀՄԼ-ի փոխտնօրեն Պ. Ռոդիոնովի ստորագրած հղագրին կից ստացանք ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների թարգմանության բաժնի վարիչի կազմած պատասխան նամակը, որում, ցավոք, համոզիչ փաստարկներ չէին բերված, թե ինչու է իսկական հեղինակից օտարվել նշված հոդվածը:

[1] *Տե՛ս* **«Հայրենիք»**, N 5(149), մարտ, 1935, էջ 132:

շատերը: Եվ եթե այդ մեծ ուժի գոնե մի մասը մեկներ գավառ, ապա դա փրկություն կլիներ հայ գյուղացու համար:

Գավառ անցնելու խնդիրն ավելի արագացնելու համար Հ.Յ.Դ. Բաքվի կ.կոմիտեն ձեռնարկատերերին պահանջ ներկայացրեց՝ առանց ուշացնելու վճարել ծննդավայր մեկնող բանվորների ռոճիկները: Շնորհիվ դաշնակցության թափած ջանքերի, հայ բանվորներին հասանելիք գումարները վճարվում էին անմիջապես, ավելին, նավթարդյունաբերողներից շատերն իրենց միջոցներով գնում էին երկաթուղու տոմսեր թե՛ գավառ գնացող գործավորների և թե՛ նրանց ընտանիքների համար:

Հազարավոր հայեր, ունկնդիր լինելով Հ.Յ.Դ. զինվորական մարմնի «Դեպի՛ գավառ», «Դեպի՛ հայրենի օջախի պաշտպանություն» նշանաբաններին, իրենց ընտանիքներով այդ օրերին խռնվել էին Բաքվի երկաթուղային կայարանում մեկնելու համար ծննդավայր՝ մասնակից լինելու ինքնապաշտպանական կռիվներին: Կարճ ժամանակում գավառ մեկնեցին շուրջ 15 հազար հանդուգն, նախաձեռնող, համարձակ հայ երիտասարդներ:

Բաքվից երկաթուղով մեկնողները հասնելով Գանձակ՝ լեռնային ճանապարհներով անցնում էին գավառներ և լրացնում տեղի հայ մարտիկների շարքերը: Բաքվի հազարավոր հայ երիտասարդների վերադարձը հարազատ վայրեր բոլորովին փոխում էր Թուրք-հայկական ընդհարումների բնույթը, ուժեղացնում հայոց ինքնապաշտպանական ներուժը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱԿԱՅԱՐԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1905թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները լի էին քաղաքական բուռն իրադարձություններով: Հեղափոխական կազմակերպությունները նախապատրաստվում էին մասսաներին տանելու ինքնակալության դեմ վճռական զինված մարտի և այդ պատճառով զորահավաքի էին ենթարկում բոլոր ուժերը: Իրենց հերթին կառավարությունը և նրա աջակից ուժերը բոլոր միջոցները գործադրում էին, որպեսզի կանգնեցնեն հեղափոխության հետագա զարգացումը, ապա արյան մեջ խեղդեն այն:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՃԻՐՆԵՐԸ

1905թ. օգոստոսի 29-ին Թիֆլիսում տեղի ունեցավ մի ահավոր արյունալի իրադարձություն:

Դրանից մի քանի օր առաջ՝ օգոստոսի 25-ին, նախատեսված էր քաղաքային ինքնակառավարման մարմնի (դումայի) դահլիճում հասարակական քննության ենթարկել Կովկասում զեմստվո մտցնելու հարցը, որից հետո ընտրել զեմստվոյական վարչության անդամներ: Քննարկումը կատարում էին քաղաքի «հայրերը»՝ դումայի իրավասուները և Թիֆլիսի մեծահարուստների երկու տասնյակից ավելի ներկայացուցիչները:

Հաջորդ օրը մենշևիկների կոչով քաղաքային դումայի առջև հավաքված մի քանի հարյուր բանվորներ պահանջեցին նիստը շարունակել իրենց ներկայությամբ՝ նպատակ ունենալով ազդել զեմստվոյական վարչության թեկնածուների ընտրության վրա: Խորհրդակցելով՝ դումայականները որոշեցին ընդառաջել բանվորների պահանջին: Դռանը կանգնած ոստիկանները այլևս չէին խանգարում դահլիճ մտնել ցանկացողներին: Երեկոյան այնտեղ հավաքվել էր շուրջ 2000 բանվոր: Չկարողանալով դա հանդուրժել՝ «հայրերը» հեռացան դահլիճից: Բանվորներն ընտրեցին նոր նախագահ և անցան հարցի քննարկմանը: Մենշևիկների ներկայացուցիչը առաջարկեց բանաձևի մի նախագիծ,

որով առաջարկվում էր բոյկոտել զեմստվոն՝ որպես հակահեղափոխական երևույթ[1]:

Դրանից հետո քաղաքային դումայի դահլիճում, յուրաքանչյուր երեկո, հավաքվում էր 200-300 բանվոր և հասարակության այն մասը, որ վաղուց ձգտում էր լսել ազատ խոսք: Բանվորները ելույթներ էին ունենում, քննադատում ցարական ռեժիմը, ինքնակալությունը տապալելու կոչեր անում: Իշխանությունը հետևում էր այդ ամենին և ... լռում: Այդ տարօրինակ երևույթը միամիտների մոտ տպավորություն էր ստեղծել, թե կառավարությունը վախեցած է, ուժ չունի փոխազդելու, ուստի հարկադրված ժողովրդին զիջում է խոսքի և մամուլի ազատություն:

Այդպես շարունակվեց մինչև օգոստոսի 29-ը: Այդ օրը լուր տարածվեց, թե քաղաքային դումայում քննարկվելու է Պետական դումայի մասին հարցը և հրավիրում են նաև բանվորներին: Երեկոյան ժամը 8-ին դումայի շենքի մոտ հավաքված շուրջ 3000 բանվոր[2] դահլիճի դռները իրենց առջև փակ տեսան: Լուր առնելով, որ դումայի ձայնավորները չեն ներկայացել նիստի, և որ Թիֆլիսի քաղաքագլուխ Քր. Վերմիշևը հայտարարել է, թե ընդհանրապես դումայի պատերից ներս բանվորների կողմից անցկացվող ժողովները ինքը համարում է անարգանք քաղաքի իշխանության նկատմամբ, բանվորները ջարդեցին դռները և մտան դահլիճ: Ընտրելով նախագահ՝ նրանք սկսեցին քննել Բաքվում և Շուշիում տեղի ունեցած թուրք-հայկական կոտորածների հարցը[3]:

Մինչ բանվորները հանգիստ ու խաղաղ զբաղված էին իրենց հուզող հարցերի քննարկումով, ոստիկանությունը պատրաստում էր արյան բաղնիք:

Ժողով ժամանած ոստիկանական պրիստավը, Թիֆլիսի գեներալ-նահանգապետ Ցացկևիչի պահանջով, բանվորներին ցրելու առաջարկ անելուց հետո շտապ հեռացավ: Նրան հետևեց ժողովականների մի փոքր մասը: Նախագահողը մնացածներին հուսադրեց, և ելույթները վերսկսվեցին:

Քառորդ ժամ հետո շենքը շրջապատում է 400-500 ոստիկան, միաժամանակ մերձակա բոլոր փողոցները բռնում են կազակային այլ ստորաբաժանումներ: Մի քանի րոպե անց 100-ից ավելի կազակ խուժում է դահլիճ և սկսում անկանոն կրակել ժողովականների վրա:

Սարսափահար ամբոխը նետվում է դեպի գլխավոր ելքը, բայց դուռը փակ էր: Նա հայտնվել էր նախապես պատրաստված թակարդի մեջ: Մարդիկ զուր էին մի դռնից մյուսը նետվում. նրանցից չատերին այլևս փրկություն չկար: Բոլոր կողմերից՝ փողոցից շենք, դահլիճից՝ միջանցքներ, թռչում էին փամփուշտները և հնձում մարդկանց: Մի քանի կազակ բարձրացել էր

[1] Տե՛ս **Филипп Махарадзе**, Очерки революционного движения в Закавказье, էջ 145:
[2] Տե՛ս **"Пролетарий"**, N19, 20 сентября (3 октября) 1905г.
[3] Տե՛ս **И. Шахин**, Революция 1905 года в Закавказье, էջ 28:

հարևան տների կտուրները և այնտեղից ուղիղ նշանառությամբ կրակում էր դահլիճի պատուհաններից ներս: Բանվորներից ոմանց հաջողվել էր թռչել պատուհաններից, բայց ներքևում սպասող կազակները նրանց գնդակահարում էին տեղնուտեղը: Միջանցքները բռնած կազակները դահլիճից մի կերպ դուրս եկողներին դիմավորում էին հրացանների կոթերով՝ չմոռանալով սպանվածների և հաշմանդամ դարձածների վրայից վերցնել ամենը, ինչ որևէ արժեք էր ներկայացնում:

«Ճակատամարտը» տևեց մինչև 40 րոպե: Ոչ ճշտված տվյալներով զոհվել էր 60 տղամարդ ու կին, վիրավորների թիվը հասնում էր 300-ի, որոնցից չատերի վերքերը մահացու էին[1]:

Սպանված ու վիրավոր բանվորների թվում չատ էին հայերը: Արյունալի նախճիրից երեք ժամ հետո սոց.-դեմ. բանվորական հայ կազմակերպության Թիֆլիսի կոմիտեն բաց թողեց մի թռուցիկ, ուր ասված էր.

«Տարիների փորձը մեզ պետք է համոզեր, որ անցել է միապետության դեմ մանր ցույցեր և ոչ մի բան չխոստացող քաղաքական այն շաբլոն գործադուլներ անելու շրջանը, որ մինչև այժմ եղել է: Պետք է այժմ հասկանանք, որ, փողոցներում ոստիկաններ կամ դռնապաններ սպանելով, մենք միայն բռնակալության ծիծաղը պիտի շարժենք և ցույց տանք մեր թուլությունը: Մենք տալիս ենք ավելի զոհ, քան հարկավոր է, մենք ավելի ենք մորթվում, քան ձեռք բերում մի [որևէ] բան:

Բռնակալության վայրագ շենքը կործանելու համար մեզ անհրաժեշտ է խտացած ու միացած շարքերի այն հանդուգն ու խիզախ կռիվը, որ կլինի վերջնական հեղափոխական ակտը: Իսկ դա այն ժամանակ կլինի, երբ մենք բոլորս, ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատը, միացած, կազմակերպված ու զինված ուժերով կկանգնի բռնակալների բանակի առաջ՝ հանդուգն ցասումով խորտակելու այդ ուժը և հաստատելու ժողովրդի իշխանությունը: Մենք պիտի դադարենք այսուհետև սպառել մեր ուժերը ապարդյուն կերպ: Մասնակի գործողությունները տեղի պիտի տան ընդհանուր ապստամբության առաջ: Մենք պիտի կազմակերպվենք, պատրաստվենք այդ օրվա համար»[2]:

Սարսափելի ողբերգությունից հետո Թիֆլիսի մենշևիկյան ղեկավարությունը օգոստոսի 30-ին բաց թողեց թռուցիկ, ուր նկարագրված էր ջարդը և նշված էին դրա պատճառները: Ըստ որում, տեղի ունեցածի գլխավոր մեղավոր էին նկատված քաղաքագլուխ Քր. Վերմիշյանը, դումայի իրավասու-

[1] Տե՛ս **Филипп Махарадзе**, Очерки революционного движения в Закавказье, էջ 147: Գրականության մեջ բերված են նաև ուրիշ թվեր: Օրինակ՝ Ի.Շախինի"Революция 1905года в Закавказье"գրքում (էջ 28) նշված է 36 սպանված և 50 վիրավոր: «Սոցիալիստ» (Ժնև) թերթը 1905թ. N5-ում եվրոպական մամուլից բերում էր հետևյալ տվյալները՝ 60 սպանված, որոնցից 6-ը՝ կին, վիրավորված՝ հարյուրավոր բանվորներ, ձերբակալված՝ չատերը:
[2] **«Սոցիալիստ»** (Ժընև), N 11, 1(14) հոկտեմբերի 1905թ:

ները և չենքի պահակները: Թռուցիկն ավարտվում էր «Կորչի՛ Վերմիշևը, կորչե՛ն վախկոտ լիբերալները» խոսքերով:

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն օգոստոսի 31-ին տարածեց բանվորներին ուղղված մի պրոկլամացիա՝ «Արյուն է հեղվում, պատրաստվեցե՛ք ապստամբության» վերնագրով: Զինված ապստամբության նախապատրաստության կոչի մեջ ասված էր. «...Կառավարության ստոր ծառաները դիմեցին հերթական ոճրագործության՝ ջարդելով ու ոտնատակ տալով մեր եղբայրներին: ...Գնդակների սուլոցը, կանանց ճիչերը, մեռնողների անեծքը, վիրավորների տնքոցը և «հաղթած» թշնամու քրքիջը - այդ ամենը, իբրև փոթորիկ, անցավ մեր գլխի վրայով: Անեծք ու մահ դահիճ կառավարությանը: ... Բայց մենք չենք նահանջի թշնամու առջև: Ի զե՛ն, վրե՛ժ, կեցցե՛ ապստամբությունը - ահա մեր լոզունգները, ընկե՛ր բանվորներ: ... Իսկ դո՛ւք, թագակիր ժանդարմի լակեյնե՛ր, դո՛ւք, տիրաննե՛ր, որ պարարտացել եք մեր աշխատանքով ու մեր արյամբ, դողացե՛ք ձեր հանցագործությունների համար: Դատաստանը մոտ է ... »[1]:

Պրոկլամացիայում բոլշևիկներն անդրադարձել էին նաև մենշևիկների նշված թռուցիկին: Զարմանալի է, գրում էին բոլշևիկները, թե ինչու է մեղքը բարդվում քաղաքագլխի, այլ ոչ թե ինքնակալության վրա, որը բոլոր դժբախտությունների գլխավոր մեղավորն է:

Անդրկովկասի բոլշևիկների խոշոր ներկայացուցիչներից Ֆիլիպ Մախարաձեն շատ տարիներ անց տպագրած (1927թ.) իր գրքում, անդրադառնալով օգոստոսի 29-ի ողբերգությանը, գրում էր.

«Մի՞թե պրոլետարիատի կարգախոսը պետք է լինի Վերմիշևի տապալումը: Մի՞թե սոցիալ-դեմոկրատիան այդ հեղափոխական շրջանում պետք է իր նպատակը համարի քաղաքագլխի և նրա ենթակաների հեռացումը: Մի՞թե պրոլետարիատի կուսակցությունը պետք է այդքան մանրանա, հարձակման անցնի Վերմիշևների վրա՝ ինքնակալությանը թողնելով անձեռնմխելի: Զարմանում ես, թե մենշևիկներն ինչպես են մոռանում այն ճշմարտությունը, որ «գետը պետք է կտրել ակունքներից»»[2]:

Որպես հարգանքի տուրք զոհերի հիշատակին, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն սեպտեմբերի 1-ին հայտարարեց համընդհանուր գործադուլ: Այդ օրը քաղաքում չէր աշխատում ոչ մի գործարան, փակ էին բոլոր խանութները, ռեստորանները, կրպակները[3]:

Սարքելով նոր արյունահեղություններ՝ կառավարությունն առաջվա պես արմատական միջոցներ չէր ձեռնարկում Կովկասում Թուրք-հայկական ընդհարումը դադարեցնելու համար: Այդ թողտվության պայմաններում Թուրքությունը չէր հանդարտվում: Խառնամբոխները մեկ այստեղ, մեկ այնտեղ Անդրկովկասում կռվի նոր ճակատներ էին բացում, հաջողություններ ունենալու հույսով:

Առաջվա պես անհանգիստ էր Ղարաբաղը: Հատկապես լարված վիճակ էր Վարանդայում, ուր այս անգամ կոտորածների պատճառ դարձան Ավդալ և Գիլաֆլու Թուրք գյուղերի ավազակախմբերը:

Դեռ օգոստոսի 27-ին սարերից իջնող քյարոլու թարաքամա ցեղը, որը ակտիվ մասնակցություն էր ունեցել Մինքենդի հայերի կոտորածին, իջել էր Ավդալ-Գիլաֆլուի դաշտ և չէր հեռանում: Դա կասկած առաջացրեց երկու վերստ հարավ-արևմուտք գտնվող, 60-70 տնից բաղկացած Հայկական Միրաշալու հայ գյուղի բնակիչների մեջ:

Կասկածն անտեղի չէր: Կողք կողքի գտնվող այդ երկու գյուղերի Թուրքերը քյարոլու ցեղին համոզել էին միանալ իրենց և հարձակում գործել, թալանել ու բնաջնջել Միրաշալուն:

Վտանգը ժամ առ ժամ մոտենում էր: Թուրքերը դեռ չէին մոռացել Ասկերանի կոտորածը, իսկ հայերը՝ Շուշիի հրդեհը: Երկու կողմերը գերագույն ուշադրությամբ հսկում էին միմյանց:

Սեպտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը Թուրքերը գաղտագողի մոտեցան Միրաշալուին և խուժեցին գյուղ: Առաջին պահին հանկարծակիի եկած հայ գյուղացիները շատ արագ հավաքեցին ուժերը և դիմագրավեցին աղետը: Բայց թշնամուն, այնուամենայնիվ, հաջողվեց մտնել գյուղ, թալանել 6 տուն, սպանել 6 հոգու, որից հետո նահանջել և կենտրոնանալ գյուղամերձ այգիներում: Հարևան գյուղերից վրա հասած դաշնակցության զինված խմբերը այգիներն առան փոթորկալի կրակի տակ: Երբ Թուրքերի ուժերն արդեն ջլատված էին, հայերը առավոտյան մթնշաղին անցան հակահարձակման և ավազակախմբերին քշեցին Ավդալ-Գիլաֆլու:

Գյուղի գլխին ջուր էր մաղվել: Անհնար էր հանգիստ նայել Թուրք ավազակների կատարածին: Ահա դաշունահար մի պատանի՝ մարող կյանքի վերջին առկայծումներով. օրորոցի երեխա՝ դաշույնը մխրճված կրծքի երկու կողմերից. մորթված մի ջահել հարս, որի մոտ կանգնած էր ամուսինը՝ կատաղության կրակը աչքերում:

Կռվի մասնակից Արամայիսը այսպես է նկարագրել պահը. «Վարանդայի ծայրերից եկել, հավաքվել էին բազմաթիվ սպառազեն երիտասարդներ:

- Կամ պետք է կոտորվենք, կամ մոխիր դարձնենք Ավդալ-Գիլաֆլուն, - գոռում էին նրանք՝ բարկությամբ հրացանի կոթը գետնին խփելով»[1]:

Ավդալ-Գիլաֆլուն ավերե՛լ... - այս էր ընդհանուրի տենչը: Խաղաղ գյուղացիները այլևս չէին համբերում, թեև գիտեին հակառակորդի ուժի մասին: Անառիկ դիրքով և 800 տուն ունեցող Ավդալ-Գիլաֆլուի գրավումը հեշտ չէր.

---

[1] "Пролетарий", N18, 13(26) сентября 1905г.
[2] Филипп Махарадзе, Очерки революционного движения в Закавказье, стр. 148.
[3] "Пролетарий", N18, 13(26) сентября, 1905г.

[1] Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, մասն առաջին, էջ 46:

բացի տեղական ուժերից, գյուղում հավաքվել էին նաև Աղդամի շրջակայքից հարյուրավոր ձիավորներ: Երկու գյուղերում կար զինված ու կռվի պատրաստ շուրջ 2500 հոգի, այն դեպքում, երբ հարձակման պատրաստվող հայ զինյալների թիվը չէր անցնում 380-ից[1]:

Մինչ հայերը պատրաստվում էին գնալ Ավդալ-Գիլաֆլուի վրա, թուրքերը սեպտեմբերի 6-ի վաղ առավոտյան մեծ ուժերով երկրորդ անգամ հարձակում գործեցին Միրաշալլուի վրա, մտածելով, որ հայերը, նախկին հարձակումից սարսափահար, հեռացած կլինեն՝ անտեր թողնելով գյուղը:

Հայ հարյուրակները դուրս եկան թշնամուն ընդառաջ: Սկսվեց մի կատաղի, օրհասական կռիվ: Հայերը, որոնց առաջ էր մղում վրեժխնդրության կիրքը, զարմանալի համարձակությամբ և արագությամբ մեկը մյուսի հետևից խլում էին թուրքերի դիրքերը: Հուսահատ ավազակախմբերը, անհնարին համարելով հարթ տեղում դիմադրելը, խուճապահար փախան դեպի Գիլաֆլուի բանալին հանդիսացող Ավդալ, բայց, չկարողանալով ամրանալ այդտեղ, գյուղի ողջ բնակչության հետ նահանջեցին անառիկ Գիլաֆլու: Հայերը կրնկակոխ մտան Ավդալ և կրակի մատնեցին գյուղը:

Ժամը 12-ին սկսվեց Գիլաֆլուի գրոհը: Թուրքերի մտքով անգամ չէր անցնում, թե հայերը երբևիցե կհամարձակվեն մտնել շրջակայքի վրա մշտապես սարսափ տարածող իրենց գյուղը: Բայց հայերը նույնիսկ չփորձեցին դիրքեր մտնել, այլ առանց կանգ առնելու խուժեցին Գիլաֆլու: Թուրք տղամարդիկ, փոխանակ դիմադրելու, սարսափահար մտան տները: Ավդալի ավերումը նրանց մատնել էր հուսահատության, իսկ օգնության եկած թուրքերը տմարդորեն փախել էին՝ գյուղը թողնելով բախտի քմահաճույքին: Հայերը, կատաղած, սկսեցին անխնա կոտորել ձեռքն ընկածներին: Այրված սրտերը միայն արյուն էին ուզում: Եվ կատարվեցին անթույլատրելի ոճիրներ ...

Մի տան բակում սպանված ընկած էին տանտերն ու երկու ուրիշ թուրքեր: Երբ հայերը վառված ջահը մոտեցրին տանը, և տունը բռնկվեց կրակով, հանկարծ ծխի միջից դուրս թռավ մինչ այդ թաքնված բարձրահասակ ու գեղեցկադեմ մի երիտասարդ կին՝ կրծքին սեղմած մանչուկին: Ծնցող էր պատկերը:

– Մի՞թե սրան էլ ենք սպանելու, – զարհուրանքի շեշտով ասաց միրաշալլուեցիներին օգնության եկած հայ զինյալ երիտասարդներից մեկը և, փամփուշտը դնելով հրացանի մեջ, գոռաց. – ով կհամարձակվի սրանց մոտենալ, դիակը կփռեմ:

Մի վայրկյան լռություն տիրեց, բայց հաջորդ պահին նրա առջև կանգնեց միրաշալլուեցի մի տղամարդ՝ հրացանը պինդ սեղմած ձեռքերի մեջ: Ջղաձգորեն վեր-վեր թռչող շրթունքները սեղմելով և արյունակալած աչքերը հառելով երիտասարդին՝ նա զայրույթից պոռթկաց.

[1] Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, մասն առաջին, էջ 47:

– Իսկ դու Միրաշալլուի եկեղեցում չտեսա՞ր սրախողխող մորը և նրա դաշունահար երեխային:

– Տեսա:

– Տեսա՞ր: Նրանք իմն էին, որ հիմա չկան: Սրանք էլ իմն են: Հեռացի՛ր[1]:

Եվ կատարվեց ոճիրը ...

Ականատեսը գրել է. «Քանի՛-քանի այդպիսի դեպքեր պատահեցին այդ սև օրը դժբախտ Գիլաֆլուում: Արատավորվեց հայի անունը, որովհետև երեխաներ մորթվեցին... խայտառակվեց հայը, որովհետև կանայք գնդակահարվեցին... ստորացավ հայը, որովհետև թալան կատարվեց: Բայց ո՞վ էր եղել ուսուցիչը...»[2]:

«Հանգամանքների բերումով մենք էլ վայրենացանք ակն ընդ ական սկզբունքը պահպանելով, որովհետև լինել չլինելու, կորստյան մատնվելու խնդիր էր»[3], – Գիլաֆլուի կոտորածից հետո գրում էր Նոր Նախիջևանի «Նոր կեանք» շաբաթաթերթը:

Հայերը իրենց գործողությունները դեռ չէին վերջացրել Գիլաֆլուում, երբ այնտեղ հասավ մի հարյուրակ կազակ, որոնք որևէ տրամադրություն հանդես չբերեցին միջամտելու: Ավելին, նրանցից մի քանիսը, միանալով հայերին, տնետուն մտնելով, սկսեցին մեծ եռանդով սնդուկներ ջարդել, քրքրել կապոցներ, գրպանները խոթել ձեռքն ընկած թանկարժեք արդուզարդերը: Կազակներից մեկը, որ մի հարուստ տնից վերցրել էր մի նրբագործ ու գեղեցիկ գորգ և ծալում էր շալակն առնելու համար, կողքից դիտող հայ գյուղացուն ասաց. "А это для нашего командира "[4]:

Սեպտեմբերի առաջին կեսին կատաղի ընդհարումներ տեղի ունեցան Գանձակի նահանգի Ջերբայիլի գավառում, որտեղ թուրքերի թիվը մի քանի անգամ գերազանցում էր հայերի թվին: Անհաջող հարձակումներից հետո թուրքերը սեպտեմբերի 14-ի գիշերը անհամար թվով հավաքվում են և չորս կողմից պաշարում հայկական Դոլանլարը: Հաջորդ օրվա վաղ առավոտյան նրանք փորձում են խուժել գյուղից ներս:

Հայերը սկզբում չվարել էին թուրքերի անակնկալ հարձակումից, բայց չնորհիվ իրենց քաջության, չվհատվեցին և դիմեցին զենքի: Թուրքերի թիվը բոպե առ բոպե ավելանում էր, իսկ հայ գյուղացիները օգնության որևէ հույս չունեին. նրանց հույսը իրենց բազուկներն էին:

Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր շարունակվում է կռիվը: Ընդհարումը վերջանում է նրանով, որ հարձակվողները կռվի դաշտում թողնում են 15 սպանված, որոնց թվում նաև՝ հայտնի բեկեր:

Այդ նույն օրերին թուրք և քուրդ ավազակաբարո ցեղերի հարձակումնե-

[1] Գնթունի, Ցիշողություններ մոտիկ անցեալից, երկրորդ պրակ., Թիֆլիս, 1907, էջ 50-51:
[2] Նույն տեղում, էջ 51:
[3] «Նոր կեանք», Ա տարի, N 14, 1 հոկտեմբերի 1906թ.:
[4] Արամայիս, Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն առաջին, էջ 51:

ին է ենթարկվում բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Ղարաղշլաղ (Ղալադարասի) հայկական գյուղախումբը, որը գտնվում էր Գորիս-Նուշի ճանապարհին՝ Հագարո գետից վեր ձգված անմատչելի բլուրների վրա:

Թուրքերը և քրդերը երկար ժամանակ չէին համարձակվում գրոհել Ղարաղշլաղի վրա: Վերջապես սեպտեմբերի 20-ին գյուղը ենթարկվում է զանգվածային հարձակման: Համառ դիմադրությունից հետո հայերն անցնում են ուժգին հակահարձակման և խուժում թուրքական գյուղերը: Թուրքերը և քրդերը կրում են մարդկային և նյութական մեծ կորուստներ[1]*:*

Սեպտեմբերի 18-ին նոր ընդհարում է տեղի ունենում Երևան քաղաքում: Առիթը Հրազդանի ձորում մի թուրքի սպանությունն էր հայերի և թուրքերի միջև ծագած վեճի ընթացքում: Քաղաքի տարբեր տեղերից սկսվում է հրացանաձգություն, որի հետևանքով սպանվում է 8 թուրք և 2 հայ: Թուրքերը տալիս են նաև 10-ից ավելի վիրավոր:

Բայց ընդհարումը, բարեբախտաբար, դրանով էլ վերջանում է: Դրագունները բռնում են բոլոր փողոցները և ամենքին ստիպում տուն մտնել: Քաղաքը խաղաղվում է:

Չէր հանգստանում Բաքուն: Թեև այստեղ ժամանակավոր խաղաղության նման մի բան էր հաստատված, բայց դա փխրուն ու խաբուսիկ մի պատրանք էր, որ ամեն վայրկյան կարող էր չքանալ:

Այդ վտանգավոր ու անհաստատ կացությունը հնարավորություն չէր տալիս ձեռնարկել ավերված նավթահանքերի վերականգնումը:

Նավթահանքերի վերականգնման աշխատանքներն սկսելու համար կառավարությունը դրել էր մի հիմնական պահանջ՝ Բաքվում լուծարել ցարական կարգերին ընդդիմադիր բոլոր ուժերին, խստիվ արգելել հակացարական ելույթները, հեղափոխական կուսակցություններին հնարավորություն չտալ բանվորությանը շեղել արտադրության խնդիրներից, նրա «միտքը թունավորել» «ոճիրներ նյութող» գաղափարներով: Կառավարության ցավը այդ պահին հեղափոխական կազմակերպությունների գործունեության դադարեցումն էր, այլ ոչ թե ժողովրդի գլխին կախված արհավիրքի՝ թուրք-հայկական արյունահեղության առջևն առնելը:

Ֆինանսների մինիստրի նախագահությամբ 1905թ. սեպտեմբերի 22-ին Պետերբուրգում նշանակված էր նավթարդյունաբերողների ժողով, որտեղ քննարկվելու էին Բաքվի վիճակի և նավթարդյունաբերությունը ուռքի կանգնեցնելու հարցերը:

Բանվորներից կազմված մի հանձնախումբ խնդրանքով դիմել էր Բաքվի իշխանություններին, որպեսզի սրանք միջնորդեն կառավարության առջև՝ նավթագործ բանվորների ներկայացուցիչներին նույնպես ժողովին մասնակից դարձնելու համար: Բաքվի կապիտալիստները «սիրով» ընդունել էին այդ

[1] *Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244*[1]*, վավ. 205, թ. 19:*

առաջարկը և իրենց հերթին նույնպես «բարեխոսել» կառավարության առջև:

Պետերբուրգից եկել էր մերժողական պատասխան: Ժողովին բանվորների ներկայացուցիչների մասնակցությունը կառավարությունը պայմանավորել էր մի հիմնական պահանջով՝ բանվորական մասսաները պետք է բոյկոտեն հեղափոխականներին և արտահայտեն իրենց նվիրվածությունը իշխանություններին:

Այդ առթիվ ՌՄԴԲԿ Բաքվի կազմակերպությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ դատապարտում էր «անսպասելի քայլը»՝ ժողովին մասնակցելու համար բանվորների ներկայացրած խնդրանքը, շեշտելով, որ տվյալ պահին, երբ երկրում թևածում է ռուսական մեծ հեղափոխության շունչը, կառավարության ու կապիտալիստների հետ որևէ գործակցություն դավաճանություն է բանվոր դասակարգին, նրա պայքարին:

Սեպտեմբերի 15-ին ս.-դ. բանվորական հայ կազմակերպության Բաքվի կոմիտեն կոչ հղեց բանվորությանը, ուր ասված էր, որ կատարված թյուրիմացությունը մնասակար է բանվորների շահերին: Նշվում էր, որ «մեր թշնամիների հետ մենք չենք կարող խոսել մեր ցավերի ու պահանջների մասին»: Կապիտալի տերերը շատ լավ գիտեն, որ բանվորները Պետերբուրգի ժողովում ոչինչ չեն ստանալու: Բուրժուազիան և կառավարությունը բանվորության հետ կեղծ բարեկամություն խաղալով՝ փորձում էին նրան գցել իրենց սարդոստայնը: Այդ ժողովը սոցիալիստ բանվորության տեղը չէ: «Մի՞թե մեր բոլոր քաղաքական և տնտեսական պահանջները հայտնի չեն կառավարությանը և բուրժուազիային. մի՞թե հարյուրավոր անգամ այդ պահանջների մասին մենք հրապարակավ չենք հայտարարել: Մենք չենք գնա այն ժողովին, որտեղ մեր կարծիքը ոչ մի նշանակություն չի ունենալու, որտեղ մեր ձայնը խեղդվելու է բուրժուազիայի և ցարիզմի ներկայացուցիչների ձայների մեջ: Այնտեղ ... մենք լուռ ականատեսը կլինենք նրանց [հերթական] խաբեություններին: Ո՛չ, մենք չենք կարող թույլ տալ բանվոր դասակարգի նման ստորացումը: Մենք հավատում ենք միայն հեղափոխությանը, մենք համոզված ենք, որ միայն միապետության խորտակումը մեզ կբերի նոր կյանք և ազատ աշխատանք»[1]*:*

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՄԱՆԻՖԵՍՏԸ

Ռուսաստանը հոկտեմբեր ամիսը թևակոխեց հեղափոխության սրընթաց վերելքի պայմաններում: Հեղափոխությունը ապրում էր իր հաղթության օրերը: Ամբողջ երկրով մեկ տարածվել էր գործադուլային շարժումը: Հոկտեմբերի 7-ին սկսվեց Մոսկվայի երկաթուղայինների գործադուլը: Հաջորդ երեք օրերին գործադուլին միացան Տուլայի, Սարատովի, Խարկովի, Կիևի

[1] **«Սոցիալիստ»**, *N12, 17(30) հոկտեմբերի 1905թ.:*

շրջանների երկաթուղայինները: Հոկտեմբերի 12-ին կանգ առան Պետերբուրգի շրջանի գնացքները, իսկ 16-ին գործադուլն ընդգրկեց բովանդակ Ռուսաստանի երկաթուղային ցանցը:

Ոտքի ելած միլիոնավոր մարդիկ առաջ էին քաշում քաղաքական պահանջներ և, հատկապես, ցարիզմի տապալման հարցը: Ժողովրդի ազատագրական շարժումը նոր հարվածներ էր հասցնում գլուխը կորցրած կառավարությանը: Միապետության գրանիտյա զանգվածի մեջ առաջացել էր մի ճեղքվածք, որ այնուհետև գնալով պետք է խորանար ու ծավալվեր: Ստեղծված դրությունից կառավարությունը ելք էր փնտրում: Առաջվա նման շարժման գլուխ էին կանգնած սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ-հեղափոխականները (էս-էռ):

Օգտագործելով ոչ միայն զորքն ու ոստիկանությունը, այլև սահմանադրական կազմակերպությունների ուժերը՝ ցարական կառավարությունը դաժանորեն ճնշում էր հուզումները: Բայց ցարն այլևս սարսափ չէր ազդում, այլ միայն՝ նողկանք: Բռնությունն այժմ լացի ու ողբի աղբյուր չէր, այլ մարտական հրավեր, որ տանջված ժողովրդի նորագույն սերունդն ընդունում էր սեղմած բռունցքներով:

Էջմիածնի կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը» գրում էր.

«Երկար տանջանքից, հազարաւոր ընտրելագոյն զոհերից և նրանց մաքուր արեան հեղեղներից յետոյ, միլիոնաւոր ընդունակ մարդկանց խաւարի մէջ երկար պահելուց, լուսատու և լուսաւոր գլուխներն աքսորավայրերում փտեցնելուց յետոյ, բոլոր զէնքերի, բոլոր միջոցների և խստութիւնների ապարդիւն հանդիսանալուց յետոյ վերջապէս հասան հոկտեմբերեան ահարկու օրերը, երբ դադարեց ամբողջ Ռուսաստանի սովորական կեանքն ու կենցաղը և աշխատաւոր, ուսանող և ազատութեան սիրահար մասը թողեց իւր բան ու գործը, թափուեց փողոցներ և վճռեց կամ խլել բիւրօկրատիայից վաղուց փափագածը և կամ մեռնել»[1]*:*

Ի պատասխան զորքի, կազակների և ոստիկանության հարձակումների՝ բանվորներն սկսեցին բարիկադներ կառուցել: Ընդհարումներ տեղի ունեցան Մոսկվայում, Եկատերինոսլավում, Օդեսայում, Սարատովում, Դոնի Ռոստովում, Ռիգայում և ուրիշ քաղաքներում: Ընդհանուր քաղաքական գործադուլն աստիճանաբար վերածվում էր զինված ապստամբության:

Բանվոր դասակարգի վիթխարի ուժի ճնշման տակ ցարական կառավարությունը սկսեց տատանվել: Ցարիզմը երկու ելք ուներ՝ սվիններով ճնշել ապըստամբությունը և երկրում հաստատել ռազմական դիկտատուրա, կամ գնալ զիջումների ճանապարհով, ժամանակ շահել և ուժեր հավաքելով վճռական հարձակման անցնել հեղափոխության դեմ: Լիբերալները կառավարությանը շտապեցնում էին, իսկ մինիստրների խորհրդի նախագահ Վիտտեն նույնիսկ

[1] **«Արարատ»**, *N 11, նոյեմբեր, 1905, էջ 986:*

սկսեց խոսել ռեֆորմների անհրաժեշտության մասին:

Լիբերալիզմի հովերը Պետերբուրգի պալատներ էին մտնում նաև այլ պատճառով. ցարն ու կառավարությունը ենթադրում էին, որ ճապոնական պատերազմում կրած խայտառակ պարտություններից ու կրած տանջանքներից հետո Հեռավոր արևելքից եկող զորքը կարող է զանգվածաբար միանալ հեղափոխական շարժմանը: Անհրաժեշտ էր շտապ ձեռք առնել կանխարգելիչ միջոցներ:

Եվ ցարիզմը փորձեց իրեն փրկել՝ ժողովրդին տալով հանգստացուցիչ դեղահաբեր: Ինքնակալը աղերսագին խաբեական դիմում արեց օրվա հերոսին՝ հեղափոխական ժողովրդին, և 1905թ. հոկտեմբերի 17-ի արքայական մանիֆեստ տվեց, որով երդվեց վայր դնել միապետության մտրակը, ճանաչել 150 միլիոն հպատակների իրավունքներն ու պահանջները: Ցարը «դուրս էր եկել» ցարիզմի դեմ:

Այդ միջոցին Պետերբուրգում, Բոլշայա Մորսկայա փողոցի N51 տանը հավաքվել էին Ռուսաստանի գերեզմանափորները՝ Պոբեդոնոսցևը, մետրոպոլիտ Վլադիմիրը, գեներալ-ադյուտանտ Բոգդանովիչը և այլոք՝ խորհրդակցելու ցարական մանիֆեստին հակազդելու միջոցների շուրջ: Այստեղ նրանք ծրագրեցին այն վայրագությունները, որոնք տեղի պիտի ունենային արդեն հաջորդ օրվանից սկսած:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով Նիկոլայ II-ը բնակչությանը խոստանում էր անձի իրական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների ազատություն, մամուլի գրաքննության վերացում: Նախատեսվում էր Ռուսաստանում մտցնել սահմանադրական կարգեր՝ ինքնակալության պահպանմամբ հանդերձ: Դեմոկրատական ուժերը գտնում էին, որ սահմանադրական կարգերի հիմունքները պետք է մշակվեն երկրի բոլոր ժողովուրդների կողմից ընտրված սահմանադիր ժողովում, բայց չհամաձայնելով դրան՝ ցարը խոստանում էր սահմանադիր ժողովի փոխարեն հրավիրել Պետական դումա:

Մանիֆեստը հայտարարում էր, որ օրենսդրական Պետական դումայում տեղ պիտի ունենան նաև բանվորների և գյուղացիների ներկայացուցիչները: Այն նաև սահմանում էր, որ ոչ մի օրենք չի կարող ընդունվել առանց Պետական դումայի:

Ժողովրդական հուժկու գրոհի առջև կիսով չափ անձնատուր լինելով, Նիկոլայ II-ը ստորագրեց մի շարք կարևոր հրամաններ, որոնցով, իբր, ինչ-որ չափով պիտի սահմանափակվեին սանձարձակ բյուրոկրատիայի վայրենությունները:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը հեշտ չէր ծնվել. նույնիսկ այն ազդարարելուց հետո ցարի շրջապատն ամեն ինչ անում էր եթե ոչ խափանելու, գոնե նվազագույնի հասցնելու տված խոստումների գործադրությունը: Բայց քանի որ մայրաքաղաքի ու կայսրության մյուս մեծ քաղաքների փողոցներում ու

հրապարակներում տերն ու տիրականը այլևս ժողովուրդն էր, ուստի անհնարին էր փոփոխության ենթարկել մանիֆեստը:

Սարսափած հեղափոխության հաղթանակի ուրվականից՝ արքայական պալատի 25 տարվա մշտաբնակ դևը՝ անհոգի տիրան Պոբեդոնոսցևը հրաժարական տվեց: Նրա հետ քաղաքական դաշտից հեռացան Պետերհոֆի մի քանի ուրիշ ազդեցիկ դեմքեր:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը ստեղծել էր ուժերի որոշ ժամանակավոր հավասարակշռություն, երբ պրոլետարիատն ու գյուղացիությունը ցարից մանիֆեստ խլելով՝ դեռևս անզոր էին նրան տապալելու, իսկ ցարիզմն արդեն չէր կարող կառավարել նախկին միջոցներով և ստիպված էր խոսքով «քաղաքացիական ազատություններ» և «օրենսդիր դումա» խոստանալ:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստում տրված խոստումները ցնցեցին ամբողջ երկիրը: Փողոցներ ու հրապարակներ դուրս եկած ամբոխը ցնծության մեջ էր:

Թիֆլիսում ստեղծված մասսայական խանդավառության դրսևորման մի դրվագ այսպես է նկարագրել քաղաքի հայ ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Արմեն Գարոն. «Ընկերներուս հետ դուրս եկանք փողոց ժողովրդական ցոյցերը դիտելու համար: Գոլովինսկի փողոցը լիքն էր բազմութեամբ, եւ ամէն քայլափոխի ճառախօսներու կը հանդիպէինք. մէկը միւսէն աւելի կրակոտ խօսքերով **կը փորձէին ժողովուրդը գրգռել, մղելով զայն դէպի ծայրայեղ քայլեր:** Օրուան հերոսը Խաչմանեանն էր, բնիկ սվազցի, բայց Ռուսաստան մեծացած, սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան անդամ: Խօսողներու մէջ ոչ ոք կարող էր զինքը գերազանցել ամբոխավարութեան մէջ: Ծափերով եւ հուռաներով գինովցած ամբոխը կը պահանջէր կախաղաններ սարքել հրապարակներուն վրայ եւ կախաղան բարձրացնել փոխարքայէն սկսած բոլոր ցարական պաշտօնեաները: Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ինչպէս Կովկասի պահպանողական շէֆերը՝ Գիւտ քահանայ Աղանեանը եւ Սպանդար Սպանդարեանը թատրոնին դիմացի տներէն մէկուն պատշգամբէն կը ծափահարէին Խաչմանեանի այս խօսքերը»[1]:

Մարդիկ շտապում էին օր առաջ իրագործված տեսնել ցարի խոստացած ազատությունները: Զափազանց երկար էին նրանք տանջվել իրավազրկության, ստրկության մամլիչի տակ, ուստի միանգամայն արդարացի և օրինական էր առանց այլևս հապաղելու ազատ քաղաքացու կյանքով ապրելու նրանց ձգտումը: Կարծես թե առաջին քայլն արված էր Հոկտեմբերի 17-ին: Պետք էր անհապաղ շարունակել սկսած գործը: «Այլևս ցնորք չէ մեր քաղաքացիական ազատութիւնն ու հասունությունը, - համոզված նշում էր «Արարատը»: - Հոկտեմբերի 17-ին շնորհած Բարձրագոյն հրովարտակից յետոյ ժողովրդական ներկայացուցիչներին կը մնայ միայն կատարելագործել

[1] **Արմեն Գարո**, Ապրուած օրեր, Բոստոն, «Հայրենիք» տպարան, 1948, էջ 164:

երկրի վարչության և կառավարության գործը համապատասխան օրէնսդրությամբ: Չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի. մենք հաւասարազօր ազատ քաղաքացիներ ենք այսուհետև մի երկրի և հայրենիքի և վերջապէս չափահաս ճանաչուած: Գրկենք իրար և դուրս գանք ձեռք-ձեռքի տուած աշխատանքով՝ բուժելու մեր և մեր երկրի վէրքերը»[1]:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը զոհունակություն առաջացրեց Եվրոպայում: Պառլամենտները, պետական ու հասարակական, գիտության ու լուսավորության շատ գործիչներ այն համարեցին շրջադարձային նշանաձող Ռուսաստանի պատմության մեջ: Նույն տրամադրությունը համակեց նաև Կ.Պոլսի և արտասահմանյան հայկական գաղթօջախների մտավորականությանը, հասարակական ու կրոնական գործիչներին:

Մկրտիչ Փորթուգալյանը, օրինակ, խորապես համոզված էր, որ Ռուսաստանում բացարձակ միապետությանը փոխարինելու է եկել սահմանադրական միապետությունը, որն ունակ կլինի արմատապես բարեփոխել երկիրը, իսկ դա, անշուշտ, ... իր օգտակար ազդեցությունը պիտի ունենա Ռուսիայի հայերի վիճակի վրա և փոխադարձապես՝ Թուրքիայի հայերին: Սահմանադրական գրությամբ օժտված ազատական նորածին Ռուսիան, անշուշտ ավելի օգտակար պիտի լինի ..., քան թե նախկին Ռուսիան, որ խավարի մեջ խարխափելով կգործե նույնիսկ իր շահերի դեմ»[2]:

Բայց բնակչության հիմնական զանգվածները չէին հավատում ազատություններ խոստացած ցարին, չէին հավատում նոր վարչապետ նշանակված Սերգեյ Յուլևիչ Վիտտեին: «Ըստ էութեան այդ ազատությունների հայտարարությունը, - գրել է Վահան Մինախորյանը, - միայն մի փորձ էր տարրալուծելու համաժողովրդական հեղափոխական շարժումը, քանի դեռ գահը մնում էր անսասան՝ իր ձեռքը պահելով երկրի գերագույն իշխանությունը»[3]: Բյուրոկրատական Ռուսաստանի ամենախելք և կարող ներկայացուցիչներից մեկը՝ գրաֆ Վիտտեն, շարունակ ժողովրդին կոչ էր անում հավատալ հոկտեմբերի 17-ի մանիֆեստում ցարի տված խոստումներին, համբերություն ունենալ և սպասել, մինչև որ մանիֆեստով խոստացած ազատությունները կիրականացվեն կյանքում: Բայց վարչապետի կոչերն արդյունք չէին տալիս. ամենաչափավոր տարրերն իսկ զգուշավոր վերապահումներով էին արտահայտվում մանիֆեստով հռչակված ազատությունների մասին:

Ժողովրդին խոստացած ազատություններից երկու-երեքը մի քանի օր հետո ձևակերպվեցին օրենսդրական կարգադրությունների ձևով: Այդ առթիվ «Մշակը» գրում էր.

«Ի՞նչ են դրանք: Ազատությունն՞ը: Բայց ի՞նչ տեսակետից ենք նայում

[1] **«Արարատ»** ամսագիր, N11, նոյեմբեր, 1905, էջ 989:
[2] Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, մատյան 85^1, վավ. 11^{79}, թղթ. N5:
[3] **«Հայրենիք»** ամսագիր, N10(273), հոկտեմբեր, 1948, էջ 87:

ազատությանը: Ստրկատերը կարծում է, թե ահագին ազատություն է և այն, որ ստրուկը օդ է շնչում, [բայց որն] ամեն րոպե կարող է մեռնել քաղցից ու տանջանքից: Հարց է՝ այդ «շնորհը» իրո՞ք ազատություն է ստրուկի համար»[1]:

Թե իրականում իրենցից ինչ էին ներկայացնում ցարական մանիֆեստով ժողովրդին «տված» «ազատությունները», բավական է վկայակոչել, ասենք, մամուլին վերաբերող խոստումները:

Մանիֆեստն ազդարարում էր, թե մամուլի օրգանները պետք է լույս տեսնեն առանց նախնական գրաքննության, բայց ոչ մի խոսք չէր ասում գրքերի քննության վերացման մասին: Բացի այդ, մանիֆեստով ուժը կորցրած էին համարվում մամուլի մասին եղած օրենքի մի քանի հոդվածներ միայն. հոդվածների մեծ մասը մնում էր ուժի մեջ: Այն անձինք, որոնք մտադրություն ունեին հրատարակել նոր թերթ, պետք է դիմեին նահանգապետին և նրան ներկայացնեին պարբերականի ծրագիրը, քաղաքական ուղղությունը, նպատակը: Միայն դրանից հետո, եթե թերթը լույս էր տեսնելու ռուսերեն, նահանգապետը երկու շաբաթվա ընթացքում պարտավոր էր պատասխան տալ՝ թույլատրել կամ մերժել: Իսկ ոչ ռուսերեն թերթեր հրատարակել ցանկացողներին նահանգապետի կողմից տրվելիք պատասխանի ժամկետը սահմանվում էր երկու ամիս: Օրենքը մամուլին չէր ազատում վարչական հսկողությունից, այսինքն՝ նրա դատավորը շարունակում էր մնալ նույն ադմինիստրացիան: Վերջապես, նոր օրենքը դնում էր մի շարք արգելքներ: Այսպես, հանցանք էր համարվում մամուլի էջերում քաղաքական պահանջներով գործադուլներ քարոզելը, պետական ծառայողներին և ուսանողներին պայքարի կոչելը: Թերթերն իրավունք չունեին անպատվել զորքին կամ նրա այս կամ այն մասին, հակառակ դեպքում խմբագրին նախատեսվում էր երկու ամսից մինչև մեկ տարի չորս ամիս ժամկետով բանտարկություն:

Իսկ ի՞նչ էր նշանակում անպատվել: Հոկտեմբերի 22-ին Թիֆլիսի փողոցներում զորքը կրակ բացեց բոլորովին անմեղ մարդկանց վրա, եղան զոհեր: Այդ առթիվ մամուլով վրդովմունք հայտնելը դիտվեց որպես զորքին ու իշխանություններին վարկաբեկելու փորձ: Կամ, օրինակ, թուրք-հայ ընդհարումների պահերին զորքը, միացած խուժանին, մասնակցում էր կողոպուտին: Թերթերն իրավունք չունեին դա արձանագրել, այլապես նախատեսվում էր համապատասխան պատիժ՝ զորքին անպատվելու մեղադրանքով:

Հատկապես խիստ հսկողություն էր հաստատված Ռուսաստանում ստացվող մամուլի արտասահմանյան օրգանների նկատմամբ: Որպեսզի դրանք հասնեին ռուսաստանյան ընթերցողներին, նախապես մտնում էին ռուս բյուրոկրատիայի սարքած ավազանը և դուրս գալիս լիովին «պարզաջրված» ու «մաքրված»:

[1] «Մշակ», N 240, 4 դեկտեմբերի 1905թ.:

Հայ հեղափոխական կուսակցությունների մամուլի օրգանների՝ «Հնչակի», «Դրոշակի» և մյուս պարբերականների նկատմամբ ռուսական գրաքննության վերաբերմունքը հայտնի էր. դրանք Ռուսաստան բերելը քաղաքական հանցանք էր համարվում: Ռուս-ճապոնական պատերազմը սկսվելուց հետո Կ. Պոլսի հայ թերթերից ոչ մեկը չէր ստացվում Թիֆլիսում, որովհետև «Սուրհանդակը», «Արևելքը», «Բյուզանդիոնը» և մյուս թերթերը ազատ գրում էին այդ պատերազմի սարսափների մասին: Ռուս բյուրոկրատիան կարծես համոզված էր, թե պետական հիմքերը խարխլված կլինեն, եթե, օրինակ, Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիան» ազատ մուտք գործի Ռուսաստան: Թերթի ամբողջ «մեղքն» այն էր, որ հրատարակվում էր գրաքննական ինկվիզիցիայից ազատ Ֆրանսիայում:

Ազդարարված «ազատությունների» արժեքը այդպիսին էր նաև ընկերությունների ստեղծման, ժողովների ու միտինգների հրավիրման, 8-ժամյա աշխատանքային օրվա և այլ ժողովրդական պահանջների նկատմամբ:

Անդրադառնալով ցարական մանիֆեստով տրված «ազատություններին»՝ «Մշակը» գրում էր.

«Կյանքը չափազանց շատ է առաջ տարել իր պահանջները, իսկ բյուրոկրատիան դողալով է մի բան տալիս, վախենում է, երերվում է...: Ազատ Ռուսաստան ստեղծողը բյուրոկրատիան չպիտի լինի, այլ ժողովուրդը: Թո՛ղ ուրեմն ժամ առաջ հնչե նրա հրամայողական ձայնը, թող շուտ, որքան կարելի է շուտ ձեռքն առնե նա երկրի ճակատագիրը, որ բյուրոկրատիայի ձեռքում միայն տանջանք ու տառապանք է ներկայացնում...»[1]:

Ստորագրելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստը՝ Նիկոլայ II-ը միաժամանակ հրամաններ էր արձակում սևհարյուրակային ջարդեր կազմակերպելու և հեղափոխական բանվորներին գնդակահարելու մասին:

Ինքնակալության հետ ժողովրդին «հաշտեցնելու» կոչված Վիտտեի «նոր կառավարության» կազմում տեղ չէին գտել մարդիկ, որոնք ըմբռնեին հասարակական պահանջի լրջությունը և գոնե հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո խելամիտ քայլեր անեին: Վարչապետի բռնած տարտամ, տատանողական դիրքը լավ բան չէր խոստանում: Նա թույլ տվեց, որ «նոր կառավարության» հետ զուգընթացաբար գործեն Տրեպովներ, Պոբեդոնոսցևներ ու Գլազովներ՝ իրենց բազմաթիվ մութ գործակալներով: Բյուրոկրատիան չէր ուզում հասկանալ, որ հեղափոխական շարժումն անհնար է կանգնեցնել խաբեությամբ, և որ անհրաժեշտ է արմատական զիջումներ անել ժողովրդին: «Դրա փոխարեն, - գրում էր «Մուրճի» խմբագիր Լևոն Սարգսյանը, - դեռ սպառնում են (իշխանությունները: - Հ.Ս.) զինվորական դիկտատուրա հաստատել և արյան մեջ խեղդել ... մանուկ ազատությանը: ...Բյուրոկրատիայի կառուցած ամբարտակներն ու թմբերը, ժամանակավոր արգելքներ դնելով, միմիայն

[1] «Մշակ», N 240, 4 դեկտեմբերի 1905թ.:

ավելի անզուսպ, ավելի կործանիչ են դարձնում հեղափոխական էներգիան»[1]:

Հիրավի, հոկտեմբերի 17-ի մանիֆեստն ի վիճակի չեղավ կանգնեցնելու հեղափոխության զարգացումը, քանի որ հակացարական ուժերը քաջ գիտակցում էին, որ մանիֆեստով ինքնակալն ընդամենը տակտիկական քայլ է արել: Նրանք շարունակում էին կռիվը վերջնական հաղթության հույսով:

Ողջ երկիրն ընդգրկած ընդհանուր գործադուլը չթուլացավ հոկտեմբերի 17-ից հետո: Գործադուլային շարժումն ընդգրկել էր Անդրկովկասի բոլոր երկաթուղիները, ցույցեր ու գործադուլներ էին անում երկրամասի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորները: Հեղափոխական ելույթները շարունակվում էին նաև գյուղում, քանի որ մանիֆեստը չէր բավարարել գյուղացիներին: Այնտեղ ոչ մի խոսք չկար գյուղացիական կյանքի արմատական հարցի՝ հողի մասին: Գյուղացիական շարժումը լայն թափ էր ստացել Զերնիգովի, Կուրսկի, Խարկովի նահանգներում, Մերձբալթիկայում, Կովկասում և այլուր: Գյուղացիները պահանջում էին առանց փրկավճարի իրենց հանձնել պետական, կալվածատիրական, վանքապատկան, ուղելային և կաբինետային հողերը: Շատ շրջաններում կալվածատիրական դաստակերտների վրա հարձակվելու ժամանակ գյուղացիները նրանց տերերին գոչում էին. «Սա մեր հողն է, տու՛ր մեզ»: Նոյեմբերի վերջին Ռուսաստանի 240 գավառներում շարունակվում էին գյուղացիական ապստամբությունները:

Հեղափոխական շարժումն իր մեջ ներառեց բանակը: Մանիֆեստի հրապարակումից հետո նավաստիների միտինգներ տեղի ունեցան Կրոնշտադտում, Հուզումներ եղան Սվեաբորգում: Բողոքների ալիքը տարածվեց Պետերբուրգի զինվորական օկրուգի զորամասերի վրա: Զինվորների խռովություններ, հուզումներ ու բողոքներ եղան Վարշավայում, Վլադիվոստոկում, Տաշքենդում, Կիևում: Դրանցից ամենախոշորը հոկտեմբերի վերջին Սևաստոպոլում սկսված հեղափոխական շարժումն էր: Սևծովյան նավաստիների ապստամբության գլուխն էր կանգնել լեյտենանտ Շմիդտը՝ իր «Օչակով» զրահակիր նավով: Ցարն այլևս չէր կարող վստահ լինել, թե բանակը, որ միշտ եղել է գահի գլխավոր հենարանը, այսուհետև նույնպես կխաղա այդ դերը:

Իրադարձությունների նման բուռն ընթացքը հայ քաղաքական կուսակցություններից պահանջում էր հստակ դիրք բռնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստի և ընդհանրապես արագորեն դեպի զինված ապստամբության շրջափուլ թևակոխող հեղափոխության նկատմամբ: Նրանք, իրոք, բռնեցին այդպիսի, բայց միմյանցից տարբեր դիրքեր:

Հնչակյանները, ծայրահեղ անհանդուրժողականություն դրսևորելով, լիովին հավանություն տվեցին ինքնակալությանը զինված ուժով տապալելու սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների տակտիկային և միացան Նրանց:

Հ.Ց. դաշնակցությունը, չցանկանալով առաջ անցնել իրադարձություն-

[1] «Մուրճ», N11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 257-258:

ների զարգացումից, սպասողական դիրք բռնեց: Կուսակցության արևելյան բյուրոն գտնում էր, որ քանի դեռ Անդրկովկասի հայությունն արյունալի կռիվների մեջ է կովկասյան թուրքերի հետ, չպետք է փոշիացնել ուժերը և ինքնակալության դեմ զինված կռվի գնալ սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների հետ:

Չնայած Հ.Ց.Դ. ղեկավարության պաշտոնական դիրքին, նրա շարքային անդամները, սակայն, շատ տեղերում (Բաքու, Թիֆլիս, Batում) պահանջում էին գնալ արմատական գործողությունների:

Հ.Ց. դաշնակցության V (Թիֆլիսի) կ. կոմիտեն հոկտեմբերի 17-ի մանիֆեստի առթիվ տպագրել ու տարածել էր «Քաղաքացինե՛ր» վերտառությամբ դիմումը, ուր ասված էր. «Ռուս կառավարությունը կորցրել է իր գլուխը. նա կաշվից դուրս է գալիս մի կերպ խաղաղեցնելու երկիրը, որպեսզի վերանորոգի իր խախտված վարկը Եվրոպայի աչքում և հեշտացնի փոխառության գործը:

Սկսվեց զիջումների քաղաքականությունը և, իբրև արդյունք այդ քաղաքականության, լույս տեսավ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը խոստանում է «քաղաքացիական ազատության անհողդողդ հիմունքներ»: Անկե՞ղծ է արդյոք կառավարության ցանկությունը: Ո՛չ, հազար անգամ ո՛չ»[1]:

Չնայած դրան, կ. կոմիտեն բռնի գործողությունների կոչ չէր անում:

Ցարի մանիֆեստից հետո՝ Թիֆլիսի դաշնակցականների շրջանում ստեղծված ծայրահեղ տրամադրություններին անդրադառնալով, Արմեն Գարոն նկարագրել է հետևյալ դեպքը.

«Ամբոխային հոգեբանութիւնը բոլորին վրայ ազդել էր: Մեր ընկերները եւս ենթարկուեցին նոյն հոգեբանութեան և անմիջապէս **ընկերական մեծ ժողով մը սարքեցին Սալալակի տներէն մէկուն մէջ՝** որոշելու համար, **թէ ի՞նչ էր լինելու մեր (դաշնակցութեան) դիրքը հանդէպ օրուայ դէպքերուն:** 30-40 հոգի հաւաքուեցանք, ամէն հասակի մարդիկ, եւ ճառերու շարքն սկսաւ: Ժողովասրահներու հերոսները մէկը միւսէն աւելի ծայրայեղ առաջարկներ կ'ընէին:

Ժողովի մեծամասնութիւնը եկաւ այն եզրակացութեան, թէ պէտք է Մետեխի բանտին վրայ յարձակուիլ եւ բոլոր քաղաքական բանտարկեալները ազատիլ: Չէ՞ որ Ռուսաստանի զանազան քաղաքներէն լուրեր կային, թէ նոյնանման բաներ էին կատարուած, եւ մենք՝ դաշնակցականներս, ինչո՞վ էինք անոնցմէ պակաս:

Ժողովականները ինձ դիմեցին, որպէսզի ես տրամադրեմ **բանտը գրաւելու** համար անհրաժեշտ զինուորները: Սակայն ես բացարձակապէս հակառակ էի ժողովի մեծամասնութեան կարծիքին ու պահանջին: Ես յիշեցուցի իրենց մեր ժողովրդի ֆիզիքական գոյութեան սպառնացող վտանգը, խորհուրդ տուի ետ կենալ Մետեխի բանտի վրայ յարձակուելու ծրագրէն եւ վերջն ալ կտրուկ

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ.39, թ.12:

կերպով մերժեցի իմ տրամադրութեան տակ եղած զինուորներէն մէկ հոգի իսկ տալ այդ թեթեւամիտ ձեռնարկին համար:

Հետաքրքիր պատկեր մը բացուեցաւ իմ աչքին առջեւ այն օրը: Մեր երիտասարդ ընկերներէն շատերը եւ զանոնք առաջնորդելու յաւակնութիւնն ունեցող տարիքաւորներէն մէկ քանիսը զարմացած կը հարցնէին, թէ ինչո՞ւ ես, որ 96 թուին Բանք Օթթօմանը մտած էի, այժմ «հակայեղափոխական» խօսքեր կ'արտասանեմ:

– Այո՛, պարոննե՛ր, ես էի Բանք Օթթօման մտնողը եւ այսօր ալ նոյն բանը ընելու ընդունակ եմ, միայն հայ ժողովրդի գոյութեան պաշտպանութեանը համար եւ ո՛չ թէ ի վնաս անոր եւ ռուս յեղափոխականներուն աչքը մտնելու համար: Մենք պոլսեցոց հոս-հոս կ'ըսէինք, բայց հիմա կը տեսնեմ, թէ հոս-հոսութիւնը Թիֆլիս է փոխադրուած:

Մի քանի խելահաս ընկերներու աջակցութեամբ մեր սալօնի հերոսներուն ճամբայ դրինք այդ օրը եւ ոչ մի յեղափոխական ձեռնարկ չըրինք Թիֆլիսին մէջ»[1]:

Եթե հեղափոխության սկզբից, այսինքն՝ 1905թ. հունվարից, դաշնակցությունը ցարական իշխանությունների նկատմամբ տրամադրված էր նույնքան արմատական, նույնքան անզիջում, որքան սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները, ապա Բաքվի փետրվարյան ջարդերից հետո, երբ նա մխրճվեց հայության ինքնապաշտպանության կազմակերպման դժվարին գործի մեջ, գնալով թուլացավ համառուսաստանյան հեղափոխական շարժմանը նրա մասնակցությունը, իսկ հասունացող 1905թ. դեկտեմբերյան ապստամբության նախօրյակին կուսակցության ողջ ուժերն արդեն նետված էին ինքնապաշտպանության ճակատ:

Ռուսաստանի բուրժուազիան, լիովին բավարարված ցարական մանիֆեստով, սկսեց ստեղծել իր քաղաքական կազմակերպությունները: Տվյալ ժամանակաշրջանում բուրժուազիայի նպատակն էր բանվորների ու գյուղացիների հզոր շարժումն ուղղել խաղաղ հունով: Կուսակցությունները նաև բուրժուազիային հարկավոր էին Պետական դումայի հրավիրման դեպքում այնտեղ պաղամենտական գործունեություն ծավալելու համար:

1905թ. հոկտեմբերին կազմակերպվեց բուրժուական առաջին կուսակցությունը՝ օկտյաբրիստների կամ «Հոկտեմբերի 17-ի միության» կուսակցությունը: Այդ ծայրահեղ աջ կուսակցությունը ներկայացնում էր երկրի խոշոր կապիտալի և խոշոր կալվածատիրության շահերը: Օկտյաբրիստների առաջնորդներն էին մոսկովյան հայտնի արդյունաբերող Ա. Ի. Գուչկովը և խոշոր կալվածատեր ու ֆինանսիստ Մ. Վ. Ռոձյանկոն:

Լինելով ռուսական բուրժուական ծայրահեղ ռեակցիայի մարմնավորում օկտյաբրիստները միապետության կատաղի պաշտպաններ էին և իշխանություններից պահանջում էին ամենադաժան միջոցներով ճնշել բանվորների ու գյուղացիների հեղափոխությունը: Թեև նրանք անհրաժեշտ էին համարում երկրում ունենալ սահմանադրություն և կողմ էին Պետական դումայի անհապաղ հրավիրմանը, բայց թե՛ դուման և թե՛ սահմանադրությունը, ըստ նրանց, կոչված պետք է լինեին ծառայելու միապետության դիրքերի ամրապնդմանը: Կուսակցությունը լիովին պաշտպանում էր ցարական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրա պաշտոնական օրգան "Слово" թերթը համարից համար հավատարմության երդումներ էր տալիս միապետին և կազմակերպության անունից պատրաստակամություն էր հայտնում նրան հավատարիմ մնալ մինչև վերջ:

1905թ. հոկտեմբերին հիմնադրվեց նաև ռուսաստանյան բուրժուազիայի մյուս քաղաքական կազմակերպությունը՝ սահմանադիր-ռամկավար կոնստիտուցիոն-դեմոկրատական (կադետ) կուսակցությունը: Սա առավելապես երկրի լիբերալ բուրժուազիայի կուսակցությունն էր, նրա գլխավոր քաղաքական հենարանը: Կադետների ղեկավարը Մոսկվայի համալսարանի նախկին պատմության պրոֆեսոր Պ. Ն. Միլյուկովն էր, կուսակցության մյուս աչքի ընկնող լիդերներն էին փաստաբան Վ. Ա. Մակլակովը Մոսկվայից, Տվերի նահանգի ազնվականության ղեկավարներից Ֆ. Ի. Ռոդիչևը, զեմստվոյական գործիչ Ա. Ի. Շինգարյովը: Կուսակցության շարքերում հիմնականում ընդգրկվեցին զեմստվոյական գործիչներ, բուրժուական մտավորականներ, փաստաբաններ, պրոֆեսորներ, լիբերալ բուրժուազիայի այլ ներկայացուցիչներ, կուլակներ և առևտրականներ: Արդեն 1905թ. վերջերին կուսակցությունը միայն մայրաքաղաքում ուներ 16 տպագիր օրգան, այդ թվում "Право", "Полярная Звезда", "Русские Ведомости" ամենօրյա թերթերը և 13 օրգան Ռուսաստանի տարբեր նահանգներում:

Կադետները օկտյաբրիստների պես հանդես էին գալիս Ռուսաստանում սահմանադրական-պաղամենտական միապետության օգտին, բայց չէին ընդունում օկտյաբրիստների ծայրահեղ հակահեղափոխականությունը: Եթե օկտյաբրիստները Պետական դուման դիտում էին որպես զուտ խորհրդակցական մարմին, որի ընդունած որոշումները պարտադիր չպետք է լինեին գործադիր իշխանությունների համար, ապա կադետները գտնում էին, որ դուման պետք է լինի ոչ միայն օրինաստեղծ մարմին, այլև օժտված լինի պետական մարմինների նկատմամբ վերահսկողության որոշ իրավունքներով:

Իրենց ծրագրում կադետներն առաջադրում էին գործադուլային իրավունքի և ութժամյա աշխատանքային օրվա պահանջները, ագրարային հարցում հանդես էին գալիս կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի դեմ, բայց հնարավոր էին համարում գյուղացիների հողաբաժինների ավելացումը ուղղային, կաբինետային, վանքապատկան և պետական հողերի հաշվին: Ազգային հարցում նրանք կողմնակից էին միացյալ ու անբաժան Ռուսաստանի, բայց հնարավոր էին համարում մշակութային ինքնավարություն և վարչական

[1] Արմեն Գարո, Ապրուած օրեր, էջ 164-165:

ավտոնոմիա տալ Ֆինլանդիային և Լեհաստանին*:

Եթե սկզբնական շրջանում կադետները հանդես էին գալիս ժողովրդավարական լոզունգներով, ապա 1905թ. հետո, երբ հեղափոխությունն աստիճանաբար գնում էր դեպի անկում, նրանք ավելի ու ավելի ամուր էին կանգնում ցարիզմի պաշտպանության դիրքերում հանդես բերելով իրենց հակահեղափոխական էությունը:

Եթե օկտյաբրիստների կուսակցությունը հայ իրականության մեջ հետևորդներ չունեցավ, ապա սահմանադրական դեմոկրատների ծրագիրը աջակցություն ստացավ հայ բուրժուական լիբերալների կողմից, որոնց ձայնափողը «Մշակ» թերթն էր: «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը, մեկնաբան Համբարձում Առաքելյանը և խմբագրության ուրիշ անդամներ դարձան նվիրյալ կադետականներ, որոնք թերթի էջերում ակտիվ պրոպագանդում էին կադետական կուսակցության ծրագիրը, ջանում էին համառուսական այդ կազմակերպության շուրջը համախմբել որքան կարելի է շատ հայ մտավորական գործիչների**, արդյունաբերողների, գյուղական վերնախավի ներկայացուցիչների և այլոց:

Կադետական կուսակցության պրոֆեսիոնալ գործիչ դարձավ մշակական հոսանքին պատկանող, 19-րդ դարի 80-ական թվականներից հասարակական գործիչ Հայկ Տեր-Միքայելյանը: Նա առաջինը կազմակերպեց կադետական կուսակցության մասնաճյուղը Բաքվում, և ինքն էլ մտավ այդ կուսակցության կենտրոնական կոմիտեի կազմի մեջ***:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո Թուրք-հայկական կռիվը ոչ միայն չմեղմացավ, այլև բորբոքվեց նոր ուժով:

Հոկտեմբերի երկրորդ կեսին ծանր ընդհարումներ եղան Զանգեզուրում: Սարերից իջնող թուրք քոչվորների վերջին խմբերը խժդժություններ կատարեցին բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Ցայջի, Խնձորեսկ, Տեղ, Խոզնավար գյուղերի տարածքներում, որի հետևանքով սպանվեց շուրջ 30 հայ: Կատաղի հակադարձելով՝ հայ զինված խմբերը ոչնչացրին 200-ից ավելի թուրք հրոսակ, ապա, մտնելով թուրքական շրջանները, ավերեցին մի քանի գյուղ ու

* Այս վերջին հանգամանքը դրական արձագանք գտավ նույնիսկ հայ ազգային հեղափոխական դաշնակցության մի մասի շրջանում. ինքնավարության գաղափարը համապատասխանում էր կուսակցության չափավոր տարրերի ազգային ձգտումներին, որոնք կազմակերպության մեջ էին մտել հենց այդ նպատակով:

** Մշակականների այդ քայլերը հավանության էին արժանանում Կ.Պոլսի և արտասահմանի հայ լիբերալ գործիչների կողմից: Արշակ Զոպանյանը նրանց թվում էր (տե՛ս ԳԱԹ, Արշակ Զոպանյանի ֆոնդ, ց.1, բաժ.1, NN 664,665, տե՛ս նաև Զոպանյանի պատասխանը Գրիգոր Խաչատուրովի նամակին, ց.1, բաժ.1, N 2971):

*** Երբ 1917թ. կազմվեց Բաքվի հայոց ազգային խորհուրդը, Հայկ Տեր-Միքայելյանը այդ խորհրդում ներկայացնում էր հայ կադետներին:

բազմաթիվ զոհեր[1]:

Մինչ Զանգեզուրում տեղի էին ունենում այս դեպքերը, հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրապարակումից երկու օր հետո Կովկասի արդյունաբերական գլխավոր կենտրոնում նորից բռնկվեց ազգամիջյան բախում:

ԵՐՐՈՐԴ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱՔՎՈՒՄ

1905թ. հոկտեմբերի 20-25-ը Բաքուն նորից արյունալի կոտորածի բեմ դարձավ:

ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեն, որն ամբողջովին գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ, հոկտեմբերի 16-ից հայտարարել էր գործադուլ, թեև նախօրյակին ինչպես քաղաքում, այնպես էլ նավթահանման շրջաններում գործադուլի տրամադրություն չէր նկատվում:

Բոլշևիկներն իրենց ագիտացիոն-քաղաքական աշխատանքի շեշտը դնում էին հայ և թուրք բանվորների համերաշխության, նրանց շահերի ընդհանրության վրա: Քաղաքի բոլշևիկ ղեկավարները ցանկանում էին ընդհանուր գործադուլով ցույց տալ, որ թուրք բանվորությունը ոչ թե թուրք բուրժուազիայի հետ է, այլ հայ բանվորության, որ հայ, ռուս, թուրք և մյուս ազգերի պրոլետարների աշխատանքի պայմանները համանման են, ուստի չպետք է տարբերություն լինի նրանց պահանջների ու ձգտումների միջև: «Բոլոր երկրների բանվորներն ունեն դասակարգային նույն կռիվը, հետևապես հայ, թուրք և ռուս բանվորները միացյալ ուժերով պետք է կռվեն բոլոր կապիտալիստների դեմ», - ասում էին բոլշևիկները:

Բոլշևիկները հույս ունեին, որ հոկտեմբերի 16-ից սկսվելիք գործադուլը ապացուցելու է իրենց ասածների ճշմարտացի լինելը: Որպես ընդհանուր սկզբունք, նրանց առաջադրած մտքերը երիցս համամարդկային էին, բայց միայն առաջավոր պրոլետարական միջավայրում, այլ ոչ թե հետամնաց թուրքության մեջ, ուր դեռ բացակայում էր դասակարգային գիտակցությունը, և դուրանն ու մոլլան շղթայված էին պահում մուսուլմանների մտավոր աշխարհը: Քաղաքում, ըստ էության, հայ և ռուս բանվորներն էին, որ իրենց ուսերին տանում էին սոցիալիստական շարժումը:

Հ.Ց.Դ. ղեկավար մարմինը մի քանի անգամ դիմեց ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեին, հիշեցնելով, որ թուրք տարրը դեմ է հակակառավարական ամեն մի շարժման, և հենց այդ պատճառով իշխանությունները կանգնած են նրա կողքին: Իսկ դա նշանակում է, որ գործադուլից նոր կոտորածի հոտ է փչում: Կոմիտեն հիշեցնում էր, որ ինչպես Բաքվի փետրվարյան ջարդերի, այնպես էլ օգոստոսին տեղի ունեցած երկրորդ կոտորածի ժամանակ թուրքերն անինա էին ինչպես հայ բանվորների, այնպես էլ հայ կապիտալիստների նկատմամբ, և որ նրանց տրամադրություններն այժմ էլ շարունակվում են դավադրական մնալ: Դաշնակցականները նաև նախազգուշացնում էին, որ թուրքերի ղեկա-

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.թ. 21-24:

վարները, օգտագործելով գործադուլը, այս անգամ էլ «կապացուցեն», թե պայքարող բոլշևիզմի միակ հենարանը Բաքվում հայերն են, ուստի նրանց պետք է դաժանորեն պատժել:

Ընդհանրապես Թուրքերը կարողանում էին իրենց հակահայկական պայքարում գերազանց ճարպկությամբ օգտագործել սոցիալիստական շարժումը: Երբ օգոստոսյան կոտորածների ժամանակ գեներալ Սվետլովը իր մոտ էր հավաքել Սաբունչի, Զաբրաթ և Բալախանի նավթային շրջանների ավազակապետերին և հարցրել, թե ինչու իրենց ազգակիցներն այդպես դաժան ու անողոք են հայերի նկատմամբ, վերջիններս պատասխանել էին. «Հայերը սոցիալիստներ են, հակապետականներ, մենք օգնում ենք մեր ցարին: Մեր ձեռքի տակ բոլոր միջոցներով պետք է ոչնչացնենք հակապետական շարժումը»: Գեներալը ողջագուրվել էր ավազակապետերի հետ, նրանց հայտնել իր խորին շնորհակալությունը, ապա ավելացրել. «Դուք գերազանց գիտեք ձեր անելիքը»:

Ս.-դ. բանվորական հայ կազմակերպության օրգան «Սոցիալիստ» թերթը գրում էր.

«Ամբողջ երկիրը ավերվեց ու թալանվեց: Կառավարությունը դրա հիմնական մեղավորը համարում է հայերին: Պաշտոնական տեղեկագրերը և զեկույցները հայերի դեմ են, դեմ է ողջ ադմինիստրացիան, դեմ են հայատյաց չինովնիկները: Թուրքերը կարողանում են մեծ վարպետությամբ կաշառել իշխանություններին, թերթերի խմբագիրներին ու լրագրողներին: Նրանք հաղթեցին զենքով, հաղթում են նաև գրչով, դիվանագիտությամբ: Ամեն տեղ հայերը պարտություն են կրել: Միայն մի քանի ազատամիտ թերթեր են, որ պաշտպան են կանգնած մեզ: Մարդ ստանում է այն տպավորությունը, թե ամբողջ երկիրը Թուրքերի ձեռքին է»[1]:

Ահա նման պայմաններում է, որ բոլշևիկները պնդում էին. «Գործադուլն անխուսափելի է»: Նրանց հարցնում էին. «Արդյոք համոզվա՞ծ եք, որ գործադուլը նոր կոտորածի առիթ չի տա: Հակառակ դեպքում ռուս բանվորությունն ունի՞ այնքան ուժ, որպեսզի հարկ եղած դեպքում կանգնեցնի նոր ջարդերը, և ո՞րն է դրա երաշխիքը»: Բոլշևիկները պատասխանում էին. «Ընդհանուր գործադուլն առաջ չի բերի ջարդեր, բայց պարտամուրհակ չենք տա: Հակառակ դեպքում կդիմադրենք Թուրք խուժանին»:

Այն բանից հետո, երբ բոլշևիկները հաշվի չառան գործադուլի դեմ ուղղված փաստարկները, հայկական ազգային ուժերը Թուրքիկներով դիմեցին հայ բանվորներին՝ նրանց կոչ անելով դուրս չգալ գործադուլի՝ իշխանություններին և Թուրքերին սադրանքների առիթ չտալու համար: Գործադուլի դեմ արտահայտվեցին Հ.Ց. դաշնակցության Բաքվի կ.կոմիտեն, հնչակյանների ղեկավարությունը, ս.-դ. բանվորական հայ կազմակերպության կոմիտեն, մենշևիկները՝ գտնելով, որ գործադուլն ավելի կբիկացնի մթնոլորտը քաղաքում:

[1] «Սոցիալիստ», N 11, 1(14) հոկտեմբերի 1905թ.:

Ավելին, հիշյալ կազմակերպությունների ղեկավարներից ոմանք հանդիպումներ ունեցան բոլշևիկների հետ: Այսպես, ս.-դ. բանվորական հայ կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը, այցելելով ռուս սոցիալ-դեմոկրատների ղեկավարությանը, նրան երկար ժամանակ համոզում էր հրաժարվել գործադուլ անելու դիտավորությունից, բայց ջանքերն արդյունք չտվեցին[1]:

Գործադուլի օրը՝ հոկտեմբերի 16-ը, վրա հասավ: Ձեռնարկը ձախողվեց: Նավթահանքերը շարունակեցին աշխատել, գործարանները՝ նույնպես: Միայն կանգնեց ձիաքարշը, և մի օր էլ, գրաշարների գործադուլի պատճառով, լույս չտեսան թերթերը:

Ինչպես Բաքվի օգոստոսյան կոտորածների առիթով արդեն ասվել է, ձիաքարշի աշխատողները գերազանցապես հայեր էին, իսկ գործադուլը կազմակերպել էին բոլշևիկները, հետևապես այս անգամ նույնպես Թուրքերին հաջողվեց իշխանությունների առջև նույնացնել բոլոր հայերի և բոլշևիկների նպատակները:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 17-ին, հրապարակվեց ցարի մանիֆեստը: Հոկտեմբերի 18-ին Բաքվի բոլոր թերթերը այդ մասին լույս ընծայեցին պաշտոնական հաղորդագրությունը և մանիֆեստի բովանդակությունը:

«Մեծագույն նվաճման»՝ ցարական մանիֆեստի հրապարակման կապակցությամբ Բաքվում նույնպես տոն էր: Այստեղ մանիֆեստի օգտին գերազանցապես հանդես էին գալիս ռուս սահմանադրականները և Թուրք ռեակցիան: Հայերի մեծ մասը սպասողական վիճակի մեջ էր, դաշնակցության վերաբերմունքը բացասական էր, բայց զուսպ, իսկ բոլշևիկները մանիֆեստը որակում էին որպես հեղափոխության զարգացումը խափանելուն ուղղված դիվային քաղաքական խաղ:

Հայերը պարզ տեսնում էին, որ իշխանություններն ու Թուրքերը, օգտագործելով հոկտեմբերի 16-ի տահմանափակ գործադուլը, իրադարձությունների զարգացումը նորից մտադիր են հանգեցնել արյունալի բախումների: Դրա համար մի առիթ էր պետք, և այն չուշացավ:

Հոկտեմբերի 19-ին Պարապետի վրա հավաքվում է մեծաքանակ ժողովուրդ, որը, տպավորիչ միտինգից հետո, սոցիալ-դեմոկրատների կոչով, բազմաթիվ կարմիր դրոշակներ պարզած, շարժվում է դեպի քաղաքային բանտ՝ պահանջելով արձակել քաղբանտարկյալներին[2]: Երբ ցուցարարները տեղ են հասնում, բանտի պահակներից մեկն առանց նախազգուշացման հրացանային կրակ է բացում, որի հետևանքով սպանվում է 2 և վիրավորվում 7 ցուցարար[3]:

Նույն օրը երեկոյան, քաղաքում ընդհարումները կանխելու մտահոգու-

[1] Տե՛ս «Սոցիալիստ», N 11, 1(14) հոկտեմբերի 1905թ.:
[2] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 38:
[3] ՀՀ ՀՊԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 206, թ. 3:

թյամբ, Հ.Ց. դաշնակցության Բաքվի կ.կոմիտեն կազմակերպում է բազմամարդ ցույց: Ցուցարարները սկսում են շրջել Թուրքական թաղերով՝ «Կեցցե՛ ազգերի համերաշխությունը» մակագրությունը կրող սպիտակ դրոշակ պարզած և համերաշխության կոչեր անելով:

Թվում էր, թե համերաշխության այդ շարժումը հաջորդ օրը գնալով էլ ավելի կծավալվի, բայց տեղի ունեցավ հակառակը:

Հոկտեմբերի 20-ը լուսացավ՝ իր հետ հայերի համար բերելով նոր մղձավանջ: Թե ինչեր էր կատարվել մեկ գիշերվա ընթացքում, այդպես էլ գաղտնի մնաց, բայց կասկած չկար, որ գիշերային խավարի մեջ ծնունդ էր առել ջարդերի մի նոր ծրագիր, որի իրականացման համար խիստ բարենպաստ էր մթնոլորտը քաղաքում: Բաքուն, հասարակական իր տականքներով, իր մութ ու անգիտակից թուրք զանգվածներով, շարունակում էր մնալ չարիքներ ծնող մի հնոց:

Առավոտը դեռ նոր էր բացվել, երբ սկսվեց, այսպես կոչված, ռուս «Հայրենասերների» մանիֆեստացիան, որի շուրջ համախմբվեցին թուրքեր, լեզգիներ, կազակներ: Ահա այդ քառադաս խուժանն էր, որ, առած կայսեր պատկերը, փողոց էր իջել ջնջելու նախորդ օրվա տպավորությունը, բնում խեղդելու համերաշխության լոզունգով սկսված շարժումը:

Գնալով մթնոլորտը շիկանում ու ծանրանում էր կապարի պես: Արագ դատարկվեցին քաղաքի փողոցները, և ասպարեզը մնաց կոպիտ ուժին: Մանիֆեստացիայի քողի տակ Բաքվում սկսվեց հայ բնակչության մի նոր ջարդ:

Թուրքին միացած լեզգին, կազակը և «պատրիոտ» ռուսը իրենց զգում էին միանգամայն անպատիժ: Ջարդարարները, վերցրած յուղոտ լաթեր, նավթի անոթներ և հրդեհածիգ այլ պարագաներ, սկսեցին կրակի տալ հայերի տները:

«Հայրենասերների» թափորը կանգ առավ Տորգովայա փողոցում, ուր հարձակման ու կողոպուտի ենթարկվեցին Մելիքյանի հայտնի նկարչատունը և Սաղաթելյանի տունը: Այդ օրը սպանվեց 10-ից ավելի հայ[1]:

Այդ ծանր պահին ռուս բանվորները, որոնք մի քանի օր առաջ պահանջում էին սկսել ընդհանուր գործադուլ, ասպարեզից անհետացան: Ջիրականացավ բոլշևիկների այն կանխատեսումը, թե հայ և թուրք բանվորները միասնաբար կռվելու են բուրժուաների դեմ, թե ռուս բանվորները զինված դիմադրություն են ցույց տալու թուրքերին, եթե վերջիններս փորձեն զենք գործածել:

Հ.Ց. դաշնակցության Բաքվի կոմիտեն իր զինված խմբերին հրաման ի-ջեցրեց առաջնորդվել «ակն ընդ ական» սկզբունքով և ուժգին հարված հասցրնել խուժանին: Հայերն սկսեցին քաջաբար պաշտպանվել և հակահարձակումներով մեծ կորուստներ պատճառել նրան:

Հոկտեմբերի 21-ին թափորը վերսկսվեց: Նիկոլաևսկայա փողոցի վրա

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 206, թ. 1:

«Հայրենասերները» հրդեհեցին «ցարին դավաճանած հայերի» մի քանի շարքի վրա գտնվող 13 հոյակապ տներ, այդ թվում Միրզաբեկյանի, Շագիդանյանի, Բուդաղյանի և ուրիշ հայ մեծահարուստների տները: Այդ օրը նույն փողոցում սպանվեց մի քանի հայ, այդ թվում Մեսրոպ քհն. Խոսրովունին[1]:

Կոտորած սկսվեց նաև նավթահանքերի շրջաններում:

Բիբի-Հեյբաթում հոկտեմբերի 21-ի առավոտյան մի քանի հայ առաջադրանք ստացավ գնալ քաղաք և տեղում պարզել վիճակը: Մինչ քաղաքում նրանք ականատես էին լինում նոր սարսափների, Բիբի-Հեյբաթում սկսվեցին սպանությունները: Դրանից սարսափած՝ այդտեղի Մանթաշովի նավթահանքերի ընդհանուր կառավարչի տեղապահ շուշեցի Միքայել Գրիգորյանը, լքելով բանվորներին, փախչում է քաղաք և թաքնվում Բայիլովում: Բիբի-Հեյբաթից քաղաք են փախչում նաև հայերին պատկանող մյուս նավթահանքերի հայ կառավարիչները: Այլ ելք չունենալով՝ հայ բանվորները սկսում են կռվի պատրաստվել:

Հոկտեմբերի 22-ին քաղաքում վերսկսվում են ջարդերն ու հրդեհումները: Բարբարոսական ճարտարապետության օրինակ հանդիսացող մի քանի տներ հրդեհվում են Բալախանսկայա և Ստանիսլավսկայա փողոցների հատման հատվածում: Քաղաքի տարբեր մասերում, թալանվելուց հետո, կրակի են մատնվում հայերի բազմաթիվ խանութներ, այդ թվում Պետրոսյանի, Առաքելյանի և Արզումանյանի հայտնի հանրախանութները[2]:

Նույն պահերին Բիբի-Հեյբաթի մի քանի հայ գործիչների նախաձեռնությամբ փորձ է արվում խաղաղության քարոզարշավ սկսել հայ և թուրք բանվորների շրջանում: Այդ նպատակով կազմվում է Բիբի-Հեյբաթի նավթահանքերի կառավարիչների խաղաղության կոմիտե, որը, սակայն, չի կարողանում նիստի հավաքվել այն պատճառով, որ նավթաշրջանում ոչ մի հայ կառավարիչ չկար, իսկ այնտեղ եղած Մուսա Նաղիևի և Մուխտարովի թուրք ֆիրմաների կառավարիչները հրաժարվեցին մասնակցել ստեղծվելիք կոմիտեի աշխատանքներին[3]:

Բիբի-Հեյբաթում Մուխտարովի գործարանը գտնվում էր Մանթաշովին պատկանող հանրակացարանի դիմաց: Այդ գործարանը, ինչպես արդեն ասվել է, իսկական ավազակաբուն էր, ուր մուսուլման բոլոր բանվորները զինված էին:

Հոկտեմբերի 22-ի կեսօրին Մուխտարովի թուրք բանվորները ժողովի հավաքվեցին, որպեսզի պատասխան տան հայերի խաղաղասիրական առաջարկներին: Նրանցից մեկը՝ Ռզաևը, իր հավատակիցներին կոչ արեց հաշտության ուղիներ փնտրել, բայց թուրք բանվորները այդ մասին լսել անգամ չէին

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 206, թ. 1:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ. 189, թ. 7:

ուզում: Զթողնելով ելույթը շարունակել՝ նրանք գոռում էին. «Դու դավաճան ես, հայերը քեզ կաշառել են, և դրա համար դու սոսկալի պատիժ կստանաս»: Մի ուրիշ թուրք ասաց. «Հայերը մեր երկիրը խլել են մեր ձեռքից և մեզ շահագործում են անխղճաբար: Քիչ է, որ նրանք ծծում են մեր արյունը, հիմա էլ նպատակ են դրել մեզ գլխովին կոտորել: Մենք պիտի կռվենք. կամ հայերը, կամ մենք»[1]: Հարյուրավոր զինված թուրքեր սպասում էին ազդանշանի:

Հոկտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերը թուրքերը հրդեհեցին Մանթաշովի՝ Բիբի-Հեյբաթում դեռ մնացած նավթահանքերը. այրվում էր 57-րդ հատվածը: Նույն գիշեր հրդեհի մատնվեց "Союз" նավթահանքը: Հայերը տվեցին առաջին զոհերը: Հեռախոսն անջատվեց:

Նույն գիշերը Բիբի-Հեյբաթում հայ բանվորներից շտապ ստեղծվեց մի մարտական խումբ, որի մեջ մտան դաշնակցական մարտիկներ և ս.-դ. բանվորական հայ կազմակերպության զինված անդամներ: Կազմվեց զինվորական շտաբ՝ բանվորական հայ կազմակերպության անդամ Նորեկի՝ հրամանատարությամբ: Բաժանվեցին հրացաններ, մարտիկները տեղաբաշխվեցին դիրքերում: Խմբից զատ ստեղծվեց երկու ուրիշ ջոկատ, որոնք երկու թևերից պաշտպանության տակ առան նավթահանքերի շրջանի հայաբնակ մասերը: Թուրքերը դիրքեր էին բռնել Մուխտարովի հանքերից մինչև հայերի հանրակացարանների դիմաց ընկած հարթությունը, ինչպես նաև ամբողջովին շրջապատել էին Մանթաշովի դեռ ավերի չենթարկված նավթահանքերը:

Թուրքերը հիմնականում կրակ էին տեղում գիշերը, իսկ հայ մարտիկներին հրամայված էր այդ ժամերին պատասխան գնդակ չարձակել՝ փամփուշտները խնայելու նպատակով:

Արյունահեղությունն անցավ Բալախանի: Մի քանի օրվա մեջ կյանքն այստեղ դարձավ իսկական դժոխք: Շրջակա թուրք գյուղերի ավազակախմբերը, որոնք կազմ ու պատրաստ սպասում էին հրամանի, սպառելով համբերությունը, խուժեցին այնտեղ: Թուրքերը սրախողխող արեցին տասնյակ հայ բանվորների, այրեցին օգոստոսյան հրդեհումներից փրկված հայերին պատկանող նավթահանքերը, արհեստանոցները, գործարանները, տներն ու հանրակացարանները: Արդյունագործական շրջանը անապատ դարձավ:

Ավերները շարունակվում էին քաղաքում: Նույնիսկ այդ ծանր պահին հայ հեղափոխական ուժերը ցուցաբերում էին բարոյական բարձր հատկանիշներ:

Հ.Ց. դաշնակցության Բաքվի կենտրոնական զինվորական շտաբը հոկտեմբերի 23-ին տարածեց քաղաքի հայ ազգաբնակչությանն ուղղված կոչ, ուր, մասնավորապես, ասված էր.

«Այն օրինակելի կարգապահությունը, որ մեր ժողովուրդը մինչև այժմ ցույց տվեց թուրքերի գույքի և ստացվածքի նկատմամբ – մի ավելորդ անգամ

[1] «Սոցիալիստ», N11,1(14) հոկտեմբերի 1905թ:
Ծածկանուն է, չհաջողվեց պարզել ով լինելը:

ևս ապացուցելով, թե նա կուլտուրապես որչափ բարձր է յուր տգետ հարևանից - չպետք է խախտվի ոչ մի կերպ: Իսկ եթե թուրք խուժանը իրեն թույլ տա կողոպուտներ և թալաններ անելու, կազմակերպությունը կ'դիմի ամենախիստ և անողոք միջոցների՝ նրանց պատժելու համար»[1]:

Նույն օրը, հոկտեմբերի 23-ին, թուրք խուլիգանների մի խումբ հարձակում գործելով հայոց անկելանոցի վրա՝ այն հրդեհեց, որի հետևանքով կրակի բոցերում այրվեց 6 կին ու երեխա: Վրա հասած դաշնակցական մարտիկների խումբը պատժեց ջարդարարներին, որոնք, թողնելով երկու տասնյակից ավելի դիակ, փախան զանազան կողմեր:

Նույն ժամանակ «Հայրենասերների» մի այլ խումբ հարձակվեց Միրզաբեկյանի ծխախոտի գործարանի վրա, բայց հանդիպեց զինված դիմադրության և, տալով կորուստներ, հետ մղվեց:

Հոկտեմբերի 24-ի առավոտյան կողոպուտներն ու սպանությունները շարունակվեցին: Ամեն տեղ նույն արյունալի պատկերներն էին:

Ահա մի հայ կին Ստանիսլավսկայա փողոցում երեխան գրկած կանգնել էր դռանը: Գազազած ամբոխը լկտի հայհոյանքներով կնոջն ու երեխային առավ ոտքերի տակ և սպանեց: Բայիլովում ամբոխը հարձակվեց ռուս Նազարովի մեծ տան վրա, ուր վարձով բնակվում էր շուրջ 300 հայ՝ նպատակ ունենալով տունը հրդեհել տնվորների հետ: Բնակիչներին հաջողվեց փախչել ու ազատվել, թեև երեք հոգի ընկան մարդասպանների ձեռքը և հոշոտվեցին տեղնուտեղը: Վրա հասած զորամասը տունը փրկեց հրդեհումից[2]:

Բիբի-Հեյբաթում սպանություններն ու ավերները շարունակվում էին: Հոկտեմբերի 23-ի երեկոյան այստեղ հայերի մոտ է գալիս թուրք գավառապետ Հեքիմովը և հայտնում, որ քաղաքում արդեն հաշտություն է կայացել, որին պետք է հետևեն Բիբի-Հեյբաթի թուրք և հայ բանվորները: Նա ասում է նաև, որ հայերի հետ հանդիպումից առաջ ինքը գնում է Մուխտարովի գործարան, որպեսզի այնտեղից վերցնի 10 զինված թիկնապահ: Հայերն ասում են, որ դրա կարիքը չկա, միաժամանակ նրան առաջարկում են հայ և թուրք ներկայացուցիչներից կազմել խառը հանձնաժողով՝ երկու կողմերի հետ բանակցելու համար: Գավառապետն ընդունում է այդ առաջարկը և գնում Մուխտարովի գործարան՝ «ներկայացուցիչներ բերելու»: Գնաց ու չվերադարձավ:

Վրա հասավ մութը, և Մուխտարովի թուրք բանվորները հրդեհեցին Շիբահի նավթահանքն ու Քալանթարովների նավթահանքերը, որոնք գտնվում էին հայ բանվորների հանրակացարանների մոտ: Պարզ էր, որ գավառապետն ինքն էր կազմակերպել հրդեհումները:

Լույսը բացվեց, և Բիբի-Հեյբաթի հարյուրավոր թուրքեր գրոհի անցան: Նախապես գավառապետը հայերի և թուրքերի միջև ընկած «չեզոք» տարա-

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ.31, թ.1:
[2] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 2, գ. 206, թ. 2:

ծության վրա տեղակայված ռուսական վաշտի հրամանատարին առաջարկել էր վերցնել զինվորներին և հեռանալ: Զարդարարների վրա առանց մի գնդակ արձակելու վաշտը փախավ՝ հայերին թողնելով զինված ավազակախմբերի, մարդասպանների ու գողերի դեմ հանդիման:

Հայերը ստիպված թողեցին հանրակացարանները և բռնեցին դեպի քաղաք տանող ճանապարհը: Թուրքերը մտան նրանց բարաքները, թալանեցին, որից հետո մի ծայրից կրակ տվեցին: Հայ բանվորների մի մասը, թվով մոտ 600 հոգի, գնդակների տարափի տակ Բիբի-Հեյբաթի նավթային շրջանից սկսեց կամաց-կամաց հեռանալ դեպի Բայիլով՝ ճանապարհին տալով զոհեր: Ունենալով միայն վրայի հագուստները՝ հրդեհների ցոլքերի, քամու, ծխի, մթության, գնդակների սուլոցի միջով նրանք, վերջապես, հասան Բայիլովի սահմաններին: Բայց այստեղ սպասում էին ոստիկանությունն ու զորքը, որոնք, բանվորներին կանգնեցնելով, նրանց խուզարկեցին, խլեցին բոլոր զենքերը, որից հետո միայն թույլատրեցին շարունակել ճանապարհը և տեղավորվել Թումանյանի հանրակացարաններում:

Հոկտեմբերի 24-ի առավոտյան հայ բանվորների շարքերը Բայիլովից կազմակերպված ուղղություն են վերցնում դեպի քաղաք և կանգ առնում Արամյանցի տան մոտ: Դրանից քիչ հեռու Բաքու քաղաքի և Բաքվի նահանգի գեներալ-նահանգապետ, գեներալ-լեյտենանտ Ֆադեևի* տունն էր, ուր հավաքվել էին հարյուրավոր թուրքեր՝ զինվորների պաշտպանությամբ: Կարծելով, թե հայերը մոտենում են իրենց՝ ընդհարվելու համար, թուրքերը հրացանային համազարկերով դիմավորեցին նրանց:

Հայ բանվորները դիմում են գեներալ-նահանգապետին՝ խնդրելով կազակների պաշտպանության տակ իրենց տեղափոխել ապահով տեղ: Սա մերժում է և զորքին հրամայում ցրել շարքերը: Եվ դա այն դեպքում, երբ նրա տանը հավաքված թուրք զինյալները շարունակում էին կրակել հայերի վրա: Բանվորների վրա սկսեցին կրակել նաև զինվորները՝ սպանելով մի քանի հոգու[1]:

Բայց թուրք ջարդարարների ղեկավարները դժգոհ էին ռուս զինվորներից, ասելով, թե թույլ են նրանց հրացանային համազարկերը: Նրանք Սաֆար Ալիևի գլխավորությամբ շրջապատում են Ֆադեևին, նրան պատմում զանազան առասպելներ՝ այսինչ տեղը հայերը իբր սպանել են հարյուրից ավելի թուրքերի, այնինչ տեղը այրել են ռուսների տները, ավերել են Սև քաղաքի մեծ մասը, սրի են քաշել թուրքերի կանանց ու երեխաներին... Հավատալով

* Ֆադեևը փոխարքայի կողմից Բաքու քաղաքի և Բաքվի նահանգի ժամանակավոր գեներալ-նահանգապետ էր նշանակվել 1905թ. հունիսի 3-ին (տե՛ս "Кавказский календарь на 1906г.", էջ 241)՝ այդ պաշտոնում փոխարինելով իշխան Ի. Գ. Ամիլախվարիին, որը 1905թ. հուլիսի 10-ին նշանակվեց Թիֆլիսի նահանգի Գորի և Դուշեթ գավառներում տեղակայված զորքերի հրամանատար (տե՛ս նույն տեղում, էջ 242): Վերջինս մեկ ամիս հետո, օգոստոսի 27-ին, վախճանվում է Գորիում (նույն տեղում, էջ 244):

1 «Սոցիալիստ», N11, 1(14) հոկտեմբերի 1905թ.:

այդ ամենին՝ Ֆադեևը բարձրաձայն հայտարարում է, թե թուրքերն անմեղ զոհեր են:

Հոկտեմբերի 25-ի առավոտյան «Բունիաթ» նավով հայ բանվորները փոխադրվում են քաղաքի հայոց թաղը և տեղավորվում բնակիչների բնակարաններում:

Բազմաթիվ դիմումներից հետո հոկտեմբերի 25-ի երեկոյան հնարավոր եղավ դադարեցնել «հայրենասերների» թափորները: Կրակոցները դադարեցին: Բաքուն կարծես խաղաղվեց, բայց ոչ ոք չէր կարող երաշխիքներ տալ, թե ջարդերը վաղը կամ մյուս օրը չեն վերսկսվելու:

Վեց օր տևած ջարդերի կորուստները մեծ էին: Ամբողջ թաղեր, այդ թվում 20-ից ավելի հոյակապ տներ, մոխիր էին դարձել, կողոպտվել և այրվել էին տասնյակ խանութներ: Քաղաքում և նավթային շրջաններում սպանվածների թիվն անցնում էր 100-ից, իսկ վիրավորների թիվը՝ 500-ից: Սպանվածների մեծ մասը հայեր էին*:

* Դեռ 1905թ. Բաքվի երկրորդ (օգոստոսյան) կոտորածներից հետո քաղաքում մնացած հայ բանվորությունը շարունակում էր մնալ ճգնաժամի մեջ: Հազարավոր մարդկանց համար արդեն կորած էր ամեն ինչ՝ աշխատանք, հագուստ, բնակարան: Փողոցների անկյունները, մայթերը, հրապարակները, մանավանդ տաք օրերին, լեփ-լեցուն էին անգործ բանվորներով: Ս.-դ. հայ կազմակերպության «Զայն» թերթը գրում էր. «Ինքը, այդ բանվորական մասսան, սակավ բացառությամբ, կարծես կորցրել էր մտածելու ու դատելու կարողությունը, միայն տրտնջում էր, սպառնալիքներ կարդում այս կամ այն տաքգլուխ անհատի բերանով, բայց էլի, ծույլ ու անտարբեր, քարշ գալիս փողոցներում» («Զայն», N 7, 12 նոյեմբերի 1906թ.): Բանվորության այդ մասը անկարող էր վերադառնալ գավառները, որովհետև այնտեղ այլևս ոչինչ չուներ, որով հնարավոր լիներ քարշ տալ գոյությունը (նույն տեղում, N 6, 5 նոյեմբերի 1906թ.): Հայ բանվորության հոգեկան ծանր վիճակը ավելի թանձրացավ Բաքվի երրորդ կոտորածից հետո:Նրա մի մեծ զանգվածը այլևս չէր ուզում մնալ դժոխք դարձած քաղաքում և ձգտում էր օր առաջ մեկնել հայրենի եզերք: Դաշնակցության և հնչակի կազմակերպությունները այս անգամ նույնպես, ինչպես օգոստոսյան կոտորածից հետո, նպաստում էին այդ զանգվածի վերադարձին գավառներ, որտեղից, մանավանդ, օգնության նորանոր պահանջներ ու խնդրանքներ էին հասել Բաքու: Ձեռնարկած գործողությունների շնորհիվ հնարավոր դարձավ հայ նավթարդյունաբերողներին ստիպել հոգալու հայրենիք վերադարձող զգալի թվով բանվորների ճանապարհածախսը: Այդ նույն ժամանակ դաշնակցության և հնչակի գավառային կազմակերպությունները ձեռնարկում էին միջոցներ, որպեսզի թույլ չտրվի երիտասարդության արտահոսք իրենց բնակավայրերից՝ ինքնապաշտպանական ուժը տեղերում չթուլացնելու համար: Այսպես՝«Սյունիքի Հ.Յ.Դ. զինվորական մարմինը» հոկտեմբերի 29-ին հրատարակել էր մի «Ազդ», ուր ասված էր. «Սրանով պատիվ ունենք հայտարարելու Սյունիքի հայ հասարակությանը՝ ա) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գավառիս երիտասարդությունը ցանկություն ունի մեկնել մեծ քաղաքներ՝ աշխատելու, որի հետևանքով ամենալավ ուժերը կհոսեն այստեղից՝ գավառը թողնելով առանց կռվողների, բ) Նկատի ունենալով այն, որ թեև պետական զորքերը եկան և ոմբակոծեցին գյուղերը (հիմնականում հայ գյուղերը), որը որևէ ցանկալի արդյունք չտվեց, քանզի թուրքերը մերթ այստեղ, մերթ այնտեղ շարունակում են գնդակահարել հայ ճամփորդներին, հարձակվել հայկական գյուղերի վրա, գ) հաշվի առնելով այն, որ գարնանը, երբ թարաքաման կ'բարձրանա սարը, կկսվեն ամենակատաղի և արյունահեղ հարձակումները նրանց կողմից, տեղիս զինվորական մարմինը հրահանգում է. 1. Ոչ ոք իրավունք չունի հեռանալու իր բնակավայրից, 2. Տանուտերերին արգելվում է վկայական տալ անցագրի համար, 3. Ցուրաքանչյուր ոք,

Այս անգամ էլ իշխանությունները չքմեղ ձևացան: Ջարդերի գլխավոր կազմակերպչի մեղադրանքով հոկտեմբերի վերջին բանտարկվեց Թուրք խուլիգանների ղեկավարներից Ասլան Աշուրովը, որի դեմ դատ էին բացել հայերը: Բայց մի շաբաթ անց Բաքվի կայազորի պետի տեղակալ գնդապետ Տոլմաչովը հանդես եկավ քննությունը դադարեցնելու առաջարկով՝ այն պատճառաբանությամբ, թե դա կարող է առիթ դառնալ նոր անկարգությունների[1]:

Նավթարդյունաբերողների ժողովը և տեխնիկական ընկերությունը, որոնցում գերակշռում էին հայերը, որոշեցին աշխատանքը չսկսել այնքան ժամանակ, քանի դեռ պետությունը բանվորներին չի տվել կյանքի լիակատար անվտանգության երաշխիքներ: Դրան հակառակ, ռուս և հրեա կապիտալիստները փորձեցին առանց նման երաշխիքներ ստանալու իրենց նավթահանքերում և գործարաններում սկսել աշխատանքը: Բայց նրանց մտադրությունը ձախողվեց, քանի որ աշխատուժի և նավթային մասնագետների հիմնական մասը հայ բանվորներն էին, որոնք փախել էին գավառները:

«Ով նախկինում տեսել է Բաքուն, - գրում էր «Սոցիալիստ» թերթը, - պիտի զարմանա, որ այդ աղմկալից և շարժուն կենտրոնը, որ մեկ տարի առաջ կյանք էր տալիս ողջ Կովկասին, որն իր արդյունաբերական հզոր շնչով զարմանք էր պատճառում բովանդակ Ռուսաստանում, այլևս չկա: Այդ քաղաքի տեղը մի մեռած, անկենդան մարմին է»[2]:

Բալախանիից, Բիբի-Հեյբաթից և արդյունագործական մյուս շրջաններից քաղաք փախած հայ բանվորները չվեցին գյուղերը: Պարսկահպատակները հազարներով վերադարձան հայրենիք: Ամբողջ նավթահանքերի շրջաններն անցան Թուրք ավազակախմբերի ձեռքը:

1905թ. աշնանը "Каспий" մուսուլմանական թերթի խմբագիրը Բաքվից նամակ էր գրել Մաքսիմ Գորկուն՝ խնդրելով իր կարծիքը հայտնել Կովկասում հայ-թուրքական կոտորածների մասին: Գորկին գրում է պատասխան նամակ, որի տպագրությունը Ռուսաստանում արգելվում է ցարական գրաքննության կողմից, թեև նույն թվականի վերջին առանձին գրքույկով տպագրվում է Ժնևում[3]:

"Каспий" թերթի խմբագրին Գորկին գրում էր.

«Ամոթ է և ցավալի կարդալ ու լսել այն մասին, թե ինչ է տեղի ունենում

ով կցանկանա գնալ օտարության (եթե նույնիսկ ամենակարճ ժամանակով), պարտավոր է ստանալ զինվորական մարմնի թույլտվությունը, 4. Առանց թույլտվության բնակավայրից հեռացածի հայրը, եղբայրները և ազգականները կենթարկվեն մեծ տուգանքի և բանտարկության, մինչև օտարության գնացածի վերադարձը հայրենի օջախ, 5.Առաջիկայում նաև կարգադրություն կարվի, որպեսզի տարբեր քաղաքներում աշխատող սյունեցիներն արձակվեն աշխատանքից և հետ ուղարկվեն հայրենիք» (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 34, թ. 1):

[1] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 206, թ. 2:

[2] «Սոցիալիստ», N 13, 1 (14) նոյեմբերի 1905թ.:

[3] Горький, О Кавказских событиях, изд."Demos", Женева, 1905.

Ձեզ մոտ: Ես այնպիսի՛ ջերմությամբ եմ սիրում վիթխարի գեղեցկության և ուժի մարմնացում ձեր հրաշալի երկիրը (Կովկասը: - Հ.Ս.), նրա ձյունապատ լեռները, նրա հովիտներն ու կիրճերը՝ իրենց արագահոս և զվարթաղմուկ գետերով, նրա գեղեցիկ, հպարտ որդիներին»[1]:

Գորկին նշում էր, որ ներկայումս Կովկասում ստեղծված արյունալի վիճակի մեղքը ոչ հայերինն է և ոչ էլ թուրքերինը, այլ իշխանություն ունեցող մարդկանց: «Այդ մարդիկ, - գրում էր նա, - սովոր են իշխանության, նրանք ապրել են այնպես, ինչպես ցանկացել են՝ ոչ ոքի չտալով հաշվետվություն իրենց գործողությունների համար, տնօրինել են երկրի բախտն ու հարստությունը, ժողովրդի ուժն ու արյունը: ...Եվ ահա այդ հացկատակները զգում են, որ վրա է հասնում իրենց հոգեվարքը, և մոտ է մահը, բայց նրանք ցանկանում են ապրել և պայքարում են, ինչպես կարող են, ժողովրդի կամքի դեմ, պայքարում են անագնիվ մեթոդներով, վախկոտաբար ու անարգաբար ... Նրանք բացահայտորեն ռուսներին, որպես շների, քսի են տալիս հրեաների, լեհերի և ֆիններին, թաթարներին՝ հայերի և վրացիների դեմ ...Մարդկային պատմության մեջ ոչ մի երկրում հրամայող դասակարգը ժողովրդի վրա իր իշխանության պահպանման համար իրեն չի պահել այնքան անամոթաբար, ինչպես մեր երկրում այս արյունաման օրերին»[2]: Գորկին այնուհետև շարունակում էր. «Այն ձեռքը, որ երեկ ջախջախում էր հայի կամ հրեայի գանգը այն բանի համար, որ նրանք ռուսից կամ թաթարից շուտ իրենց զգացել են ազատ մարդիկ, ով կարող է ասել, թե վաղը ում գլխին կիջնի այդ ձեռքը»: «Մենք բոլորս ունենք մի թշնամի»[3], - նամակը եզրափակել էր Մաքսիմ Գորկին:

Հ.Ց.Դ. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1905թ. նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 1-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Հ.Յ. դաշնակցության հերթական ռայոնական ժողովը, որի հիմնական նպատակն էր՝ ամփոփել անցած շուրջ 10 ամսում Կովկասում տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումների արդյունքները և որոշել առաջիկա ամիսներին նոր կռիվների ընթացքում Հ.Յ.Դ. կազմակերպությունների հետագա անելիքները:

Ռայոնական ժողովին մասնակցում էին Համազասպ Սրվանձտյանը, Ավետիք Իսահակյանը (Դուսան), իշխան Հովսեփ Արղությանը, Հարություն Շահրիկյանը, Արմեն Գարոն, Համո Օհանջանյանը, Եղիշե Թոփչյանը, Գարեգին Խաժակը, Հովհաննես Քաջազնունին, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ),

---

[1] Горький, О Кавказских событиях, изд."Demos", Женева, 1905 г. , стр. 5:

[2] Նույն տեղում, էջ 7:

[3] Նույն տեղում, էջ 12:

Ավետիս Ահարոնյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը և ուրիշներ:

Շրջաններից տրված տեղեկությունների հիման վրա ժողովի նախագահությունը պատգամավորներին զեկուցեց, որ 1905թ. Հ.Ց. դաշնակցության բյուջեում մուտք է եղել 600 000 ռուբլի, որից 200 000 ռուբլու զենք է գնվել (դրա մեջ չէին մտնում ճանապարհածախսն ու կորուստները, որոնք կազմել էին այդ գումարի մոտ 40%-ը): Պատվիրակներին տեղյակ պահվեց, որ կուսակցությունը Կովկասում ունի մոտավորապես 1 800 մսին և բերդան, 640 «մաուզեր» սիստեմի ատրճանակ, մոտ 100 000 ծայր, ինչը ժողովը համարեց միանգամյան անբավարար[1]:

Պատվիրակները պահանջում էին մեծացնել զենքի գնման համար նախատեսված գումարները: Այսպես, Ապառաժի (Շուշի, Ղարաբաղ) ներկայացուցիչ Համազասպը, խոսելով զենքի անբավարար քանակի մասին, առաջարկեց կուսակցության բյուջեից առանձնացնել այնքան գումար, որով հնարավոր լիներ գնել ոչ պակաս 5 000 հրացան և 600 000 ծայր[2]:

Զենքի պակասը հուզում էր համարյա բոլոր պատգամավորներին: Երևանի նահանգի ներկայացուցիչները ցավով նշում էին, որ Նախիջևանում կոտորածների նախօրյակին հայերն ունեին ընդամենը 50 կտոր զենք: Նրանք, որ գավառի բնակչության զգալի տոկոսն էին կազմում, համախումբ չլինելու և զենք քիչ ունենալու պատճառով ստիպված էին միայն պաշտպանվել՝ չկարողանալով հարձակումներ գործել: Նույն վիճակում էր հայտնվել նաև Շարուրը, որտեղ հայկական 6-7 գյուղ շրջապատված էր 50-60 թուրքական գյուղերով, բայց լավ դիրք ունեին և կարող էին պաշտպանվել, եթե ունենային բավարար թվով հրացաններ[3]:

Ռայոնական ժողովը նշեց, որ մինչև թուրք-հայկական կոտորածների սկսվելը Սուրմալուն, Կողբը, Վաղարշապատը, Սարդարապատը ապահովված են եղել զենքով, որի շնորհիվ թուրքերը կամ չեն համարձակվել կոտորած սարքել, կամ եթե այդպիսի փորձեր արել են, ապա պարտվել են չարաչար:

Այգեստանի (Գանձակ) ներկայացուցիչը նշում էր, որ այնտեղ, ուր թուրքերն իրենց ուժեղ են զգում, միշտ նախահարձակ են լինում, իսկ այնտեղ, որտեղ թույլ են, խոսում են խաղաղության ու հաշտության մասին: Նա միաժամանակ պատգամավորների ուշադրությունը բևեռեց այն բանի վրա, որ Գանձակում դրությունը շատ լարված է, և ամեն րոպե սպասվում է բախում:

Պատգամավորներից շատերն իրենց ելույթներում ասում էին, որ թուրքերի հարձակումների դրդիչներն ամենուրեք բեկերն են, բայց նրանք, որպես կանոն, ծայրահեղորեն վախկոտ են, և երբ հայերն անցնում են հակահարձակման, առաջինն են հաշտության դիմում:

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 237:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Ժողովում խոսք էր գնում այն մասին, որ թուրքերն այժմ կռվում են հայերի դեմ, բայց բացառված չէ, որ վաղը նրանք իրենց զենքն ուղղեն ռուսների վրա: Նրանք երազում են ապագա սահմանադրական Ռուսաստանում միացած տեսնել կայսրության 30 միլիոն թուրքությունը, որից գլուխ հանելը չափազանց ծանր է լինելու ռուսական կառավարության համար:

Մտահոգ լինելով ռուսական պետության ապագայի նկատմամբ՝ պատգամավորները միաժամանակ ցավով նշում էին, որ Կովկասում թուրք-հայկական ընդհարումների մեջ ռուսների մեծամասնությունը հանդես է գալիս հայության դեմ և թուրքերի պաշտպանությամբ: Մյուս օտարազգիները նույնպես կարծես ուրախանում են հայերի անհաջողություններով, բայց ոչ այնպես ցուցադրաբար, ինչպես ռուսների մեծ մասը[1]:

Անդրադառնալով թուրք-հայկական ընդհարումների պատճառներին՝ ժողովը դրանցից առանձնացրեց երեքը. ռուսական կառավարության սադրանքը, համիսլամությունը, թուրք խուժանի ախորժակը: Պատգամավորներին հանձնարարվեց յուրաքանչյուր առանձին դեպքում ընտրել պայքարի համապատասխան ձև:

Ժողովում երկար վիճաբանություն գնաց թուրք-հայկական ընդհարումների խնդրում տակտիկայի հարցի շուրջ: Պատգամավորները միահամուռ հայտարարում էին, որ հայ մարտիկները գրոհ չեն տալիս հակառակորդի դեմ այն վայրերում, ուր վերջինս կազմում է աննշան փոքրամասնություն, որ նրանք տրամադիր չեն փոխառնելու դրացու նախապատմական ժամանակների բարբարոսական կռիվների մեթոդը և դիվային խրախճանքներ սարքելու ծվատված դիակների շուրջը:

Ժողովականներից ոմանք՝ Համազասպը, Ավ. Իսահակյանը, Շահրիկյանը, Գարոն և ուրիշներ, գտնում էին, որ պատրաստություններ տեսնելուց հետո թուրքերը դիմելու են նոր, էլ ավելի ուժգին հարձակումների, ուստի պետք է նրանց կանխել և նախահարձակ լինել: Նրանք նաև առաջարկում էին գալիք ամռանը թուրքերին չթողնել բարձրանալ սարերը: Ժողովականներից ուրիշները՝ Համոն և այլոք, պնդում էին հակառակը՝ ասելով, որ պետք է դիմել հաշտության և թույլ տալ քոչը:

Այդ հարցի առթիվ ծավալված վիճաբանություններից հետո ընդունվեց բանաձև, որն ամփոփված էր հետևյալ երեք կետերի մեջ.

1) Նախահարձակ չլինել, բայց պատրաստ լինել ուժգին հակահարված տալու, եթե թուրքերը հարձակում սկսեն, 2) Նախահարձակ լինել միայն բացառիկ դեպքերում, երբ պարզ կդառնա, որ թուրքերն անպայման հարձակում են գործելու, 3) Ամեն ինչ անել հայերին Անդրկովկասի որոշակի տերիտորիաներում համախմբելու և հոծ զանգված կազմելու համար:

Այս վերջին հարցը ժողովում սուր կերպով դրել էր Ավ. Իսահակյանը: Նա

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 237-238:

ասում էր. «Նկատի առնելով, որ մենք ցրված ենք և ապրում ենք թուրքերի հետ խառն, որ թուրքերը դամոկլյան սրի պես կախված են մեր գլխին, որ ցրված ու խառն ապրելն ամենից շատ է փոխադարձ դժգոհությունների առիթներ տալիս, - մենք պետք է դիմենք համախմբման գաղափարին, պետք է մեր մեջ ցրված թուրքերին դուրս քշել՝ գուցե և նրանց հետ փոխադարձ համաձայնությամբ գյուղեր փոխանակելով և, այդպիսով, մի հայկական հավաք մասսա ստեղծել, որը կարողանա մշակել ու պահպանել իր սեփական կուլտուրան»[1]:

Այս հարցադրումը պատահական չէր, քանի որ ոչ միայն դաշնակցության շարքերում, այլև հայկական հասարակության լայն շրջաններում խորանում էր այն միտքը, որ պետք է ըստ կարելվույն անջատել երկու ժողովուրդները, քչացնել նրանց շփման կետերը, ոչ մի տեղ չթողնել հայկական թույլ փոքրամասնություն՝ շրջապատված թուրքերով, աշխատել որոշ վայրերում կազմել միաձույլ հայ բնակչություն:

Ռայոնական ժողովը քննության առավ նաև Կովկասում հայկական զինվորական ուժերի կազմակերպման և պահպանման հարցը՝ զո՞րք, թե՞ միլիցիա:

Պատգամավորների զեկուցումից երևաց, որ Հ.Յ. դաշնակցության ձեռքի տակ Կովկասում կա երեք տեսակ զինվորական ուժ. ա) **Զորք**, որն ամբողջովին կազմված էր զինվորական գործին նվիրված անհատներից: Զինվորներն ապրում էին կազմակերպության հաշվին, ստանում էին հագուստ, զենք, ձի և այլ զինվորական ու կենսական պիտույքներ (կազմակերպության վրա ամեն մի զինվոր ամիսը նստում էր 10-20ռ.՝ նայած տեղին ու պայմաններին): Զինվորների մի մասը հետևակ էր, մյուս մասը՝ ձիավոր: Հետևակը կռվող ուժ էր, գյուղերը պաշտպանող, հետախույզ և այլն, ձիավորը սահմանապահ էր, ավազակներ բռնող, թալանը հետ խլող, հարձակվող, սուրհանդակ, հետախույզ և այլն: բ) **Միլիցիա** կամ ոստիկան զինվորներ: Միլիցիան կազմված էր տեղական ուժերից, հիմնականում ռուսաց բանակում ծառայած երիտասարդներից: Սրանց զենքերը սեփական էին, չունևորները կրում էին կազմակերպության տված զենքը: Միլիցիոներները կազմակերպությունից վարձ չէին ստանում, ապրում էին իրենց գյուղերում դաշնակցության տրամադրության տակ, որի հրահանգով, իրենց ընտրած խմբապետերի կամ տասնապետերի ղեկավարությամբ, դուրս էին գալիս պաշտպանելու ժողովրդին կամ օգնության հասնելու մյուս ուժերին: Միլիցիան համարյա կատարում էր նույն գործը, ինչ զորքը, բայց՝ իր գյուղի սահմաններում: գ) **Պահեստայիններ**, որոնք գյուղական երիտասարդներ էին, բայց դեռ զինվոր չէին: Նրանց հաշվում էին պահեստում, և երբ զորքի ու միլիցիայի ուժերն անբավարար էին լինում, պահեստայիններին օգտագործում էին որպես օգնական և լրացուցիչ ուժ:

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 238:

Սրանցից զատ, Հ.Յ.Դ. տրամադրության տակ կային նաև գյուղացիներից կազմված կամավոր խմբեր, որոնց անդամներն իրենց ոչ զինվոր էին համարում և ոչ էլ միլիցիա, բայց անհրաժեշտության դեպքում դուրս էին գալիս կռվի:

Բուռն վիճաբանություններից հետո Կովկասյան ռայոնական ժողովը զինվորական ուժերի կազմակերպման հարցի կապակցությամբ ընդունեց հետևյալ որոշումը. «1) Իբրև սիստեմ ընդունել միլիցիան և այն կազմակերպել ամեն տեղ, 2) Կարիքի դեպքում ունենալ պատրաստի ազատ զինվորներ»: Այսպիսով, զինվորական տարբեր ուժերից նախապատվությունը տրվում էր միլիցիային, իսկ զինվորական մյուս ձևերը վերացվում էին[1]:

Զինվորական գործի կազմակերպման մակարդակը բարձրացնելու համար ընդունվեց նաև մի այլ բանաձև, որը նախատեսում էր. 1) Պատերազմական դրության ժամանակ դաշնակցության յուրաքանչյուր մարմին կից կազմվում է համանուն զինվորական մարմին՝ զինվորական բյուրո, կենտրոնական կոմիտեներին կից՝ կենտրոնական զինվորական մարմին և այլն: 2) Զինվորական բյուրոյին է վերապահվում զենքի ու զինվորական ուժի կանոնավոր բաշխումը և պայքարի ընդհանուր տակտիկայի ընտրությունը՝ ռայոնական ժողովի որոշումների սահմաններում: 3) Զինվորական բյուրոյին են ենթարկվում զինվորական մարմինները: 4) Որոշումները կայացվում են կուսակցության վարչական մարմինների համաձայնությամբ[2]:

Ռուսական զորքի հակահայ ընթացքի կապակցությամբ ռայոնական ժողովն ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատելով, որ շատ անգամ զորքերը՝ միացած թուրք և ռուս խուլիգաններին՝ կոտորում են խաղաղ հայ բնակչությանը, կողոպտում նրա ունեցվածքը, ռայոնական ժողովը նպատակահարմար է գտնում նման դեպքում սկզբունքով ընդունել նաև կռիվը զորքի դեմ, եթե Հ.Յ.Դ. տեղական մարմինները դա կը գտնեն նպատակահարմար ու կարևոր»[3]:

Հայ եկեղեցու գույքը ռուս կառավարության կողմից հարկունիս գրավելուց հետո, երբ հայությունը դուրս էր եկել պայքարի, Հ.Յ. դաշնակցությունն այդ պայքարը Կովկասում ղեկավարելու համար ստեղծել էր պատասխանատու մարմին: Այժմ, երբ շարունակվում էին թուրք - հայկական ընդհարումները, պատասխանատու մարմինն այլևս ավելորդ էր դարձել, և կովկասյան ռայոնական ժողովը որոշեց լուծարել այն:

Ռայոնական ժողովն ընդունեց նաև բանաձև տեռորի մասին, որտեղ ասված էր. «1) Ընդունվում է տեռորը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական անհատների դեմ, որոնք մեզ համար աննպաստ դեր են կատարում թուրք-հայկական ընդհարումների խնդրում: 2) Տեռորի կարող են ենթարկվել բոլոր պաշ-

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 239:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

տոնյաները՝ առանց պաշտոնի ու աստիճանի խտրության: 3) Տեռորը կատարվում է «Հայկական ահաբեկիչ մարմնի» հրահանգով և նրա անունով: 4) Պրիստավը և նրանից ցածր պաշտոնյան կարող են տեռորի ենթարկվել միայն տեղական կենտրոնական կոմիտեի որոշմամբ»[1]:

Թուրք-հայկական ընդհարումների կապակցությամբ կուսակցության ծախսերի մեծացումը, որը կապված էր զենք ձեռք բերելու հետ, թելադրում էր փնտրել ֆինանսական նոր միջոցներ հայթայթելու զանազան ուղիներ: Դրանցից մեկը «Փոթորիկի» նախկին գործունեության վերսկսումն էր ամբողջ ծավալով: Այդ մասին ընդունած բանաձևում առաջադրված էին հետևյալ կետերը. «1) Ներկա պատերազմական ժամանակամիջոցում բացառիկ միջոցներով հանգանակություն անելու համար ժամանակավորապես վերականգնվում է «Փոթորիկը»: 2) «Փոթորիկի» վերակազմումը հանձնարարվում է նախկին «Փոթորիկին»: 3) «Փոթորիկը» իր գործողությունների մասին վաղօրոք ի գիտություն է հայտնում տեղական մարմիններին: «Փոթորիկից» դուրս Հ.Յ. դաշնակցության բոլոր մարմիններին խստիվ արգելվում է որևէ ձևով և անունով հանգանակության համար բռնի միջոցների դիմել: 4) Այս արգելքին հակառակ գործող մարմինները կամ անհատները պատժի են ենթարկվում «Փոթորիկի» կողմից՝ վերջինիս հայեցողությամբ: 5) Կովկասի և Ռուսաստանի Հ.Յ.Դ. բոլոր կենտրոնական կոմիտեները պարտավոր են «Փոթորիկին» ընծայել պահանջվող ամեն տեսակ աջակցություն: 6) «Փոթորիկի» դիմումներն ուղղված պետք է լինեն որոշ դասակարգի չափազանց սահմանափակ շրջանի, և ամեն միջոց պետք է գործ դրվի ծայրահեղ միջոցներից խուսափելու համար: 7) «Փոթորիկի» ձեռք բերած գումարները հանձնվելու են «Ֆոնդի մարմնին»՝ միմիայն ընդհանուր զինման և ինքնապաշտպանության գործին հատկացնելու համար: 8) «Փոթորիկն» իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում ռայոնական ժողովին՝ իրեն ընտրող մարմնի միջոցով՝ առնվազն տարին մեկ անգամ»[2]:

Սրանք էին թուրք-հայկական ընդհարումների ընթացքում առաջացած հրատապ այն հարցերը, որոնք 1905թ. նոյեմբերին դրվել էին Հ.Յ.Դ. կովկասյան ռայոնական ժողովի քննարկմանը:

Ժողովի աշխատանքների օրերին տեղի ունեցան Գանձակի և Թիֆլիսի նահանգների կոտորածները:

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 240:
[2] Նույն տեղում:

ԳԱՆՁԱԿԻ ԱՂԵՏԸ

Շուտով իրականացավ Գանձակի նահանգում լայնածավալ կոտորածների վտանգի մասին Հ.Յ.Դ. կովկասյան ռայոնական ժողովում Այգեստանի (Գանձակ) պատգամավորի արտահայտած մտավախությունը:

Գանձակի (Ելիզավետպոլի) նահանգի սոսկալի ջարդերն սկսվեցին նահանգային կենտրոն Գանձակ (Ելիզավետպոլ) քաղաքից:

Նահանգային Գանձակ քաղաքը գտնվում էր տափարակի վրա, Քուռ գետի ընդարձակ հովտում, այնտեղ, ուր այդ հովիտը հարավարևմտյան կողմից հարում է Արցախի լեռնաշղթային:

Քաղաքը Գանձակ գետով բաժանված էր երկու անհավասար մասերի՝ հայկական և թուրքական: Հայոց քաղաքամասը գետի աջ մասում էր, բարձրադիր ափին, որտեղ երկու՝ Զայլու և Մոլլա-Զալլու, թաղերում միատարր բնակվում էր ավելի քան 400 տուն թուրք: Հայկական քաղաքամասից ոչ հեռու գտնվում էր Թոփալ-Հասանլու թուրք գյուղը, որի բնակիչները հիմնականում զբաղվում էին ավազակությամբ:

Թուրքական քաղաքամասը փռված էր գետի ձախ կողմի հարթության վրա, որի մասերն էին Այգեստանը (Բաղմանլար) և շուկան: Այստեղ էր գտնվում ս. Գևորգ եկեղեցին, որի շուրջը 150 ընտանիքից բաղկացած հայկական թաղն էր: Այս թաղով էր անցնում Գանձակի լայն փողոցներից մեկը, որ հայերի սովորական ճանապարհն էր շուկա երթևեկելիս:

Գանձակի հռչակավոր շուկան մի ընդարձակ քառանկյունաձև հրապարակ էր՝ զարդարված դարավոր, հսկայամարմին չինարիներով և սովորական ժամանակ՝ լի ամեն տեսակ բարիքներով: Շուկայի մի կողմում զետեղված էր հայ արհեստավորների և թուրք մանրավաճառների խանութների շարքը, իսկ մյուս՝ հանդիպակաց կողմում գտնվում էին տեսակ-տեսակ ապրանքներով լի բազմաթիվ խանութներ, որոնք մեծ մասով պատկանում էին հայերին: Ահա այս խանութներում, ինչպես նաև դրանց հետևում գտնվող «ծածկած շուկայում», կենտրոնացած էր հայ առևտրականների ամբողջ հարստությունը:

Բայց շուկան հայերի համար շատ խոցելի էր, քանի որ վտանգի դեպքում թուրքական քաղաքամասի ս.Գևորգ հայկական թաղից դեպի այնտեղ տանող ճանապարհը թուրքերը հեշտությամբ կարող էին կտրել և հայ խանութպաններին ու արհեստավորներին փակել շուկայում, ինչպես ծուղակում: Այս դեպքում հայերը կտրված կլինեին ոչ միայն ս. Գևորգ թաղից, այլև հայկական թաղամասի հենակետերից: Այս պայմաններում նրանք չէին կարող դիմադրություն ցույց տալ և, անշուշտ, զոհ կգնային հարձակվողների կատաղությանը: Ահա թե ինչու ջարդերն սկսվելուց առաջ հայերը բազմիցս դիմեցին իշխանություններին, խնդրելով իրենց թույլատրել խանութները տեղափոխել հայկական թաղը, բայց ամեն անգամ ստանում էին մերժում, միաժամանակ

առատ խոստումներ էին լսում, թե իրենց ոչինչ չի պատահի: Հայերին մշտապես հանգստացնում էր հատկապես քաղաքի թուրք ոստիկանապետը:

Չնայած մոտեցող վտանգին, թուրքական թաղերում ապրող հայ առևտրականները հետևեցին թուրք ոստիկանապետի խորհրդին, հավատացին մոլլաների խոսքերին, որոնք առերես սեր էին քարոզում, օրորում ու քնեցնում նրանց, բայց իրականում պատրաստվում էին սոսկալի հարվածի: Ուստի հայերը չկարողացան ժամ առաջ իրենց ունեցվածքը և ընտանիքները տեղափոխել հայկական քաղաքամաս: Դա, իհարկե, դժվար գործ էր, բայց թուրք-հայկական հարաբերությունների խառնաշփոթի պայմաններում պետք է անխուսափելի համարվեր: Ցավոք, հայի առասպելական դյուրահավատությունը, դրացու նկատմամբ նրա լավատես ու անխոով անտարբերությունը՝ Գանձակի հայկական մասում նույնպես իր ավերիչ դերը պիտի կատարեին:

Գանձակ քաղաքը 1905թ. ուներ 60 հազար բնակիչ, ըստ որում, հայերի և թուրքերի թիվը մոտավորապես հավասար էր[1]: Բնակիչների ընդհանուր թվից 5 հազարը ուրիշ ազգերի մարդիկ էին:

Բաքվի փետրվարյան դեպքերից հետո Գանձակը թեև ինն ամիս շարունակ կարողանում էր պահպանել խաղաղությունը, բայց դա արվում էր հատկապես հայերի գերագույն ճիգերով: Ամիսներ շարունակ բոլորի ղղերը լարված էին, բոլորը հոգեմաշ տանջանքներով սպասում էին հանգուցալուծման:

Գանձակի բնակչությունը ցնծությամբ էր ողջունել 1905թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստը: Բոլորի մոտ հույս էր արթնացել, թե մանիֆեստով ստեղծվելիք նոր իրավիճակը հնարավորություն կտա թոթափելու առօրյա սարսափը, հայ և թուրք քաղաքացիների միջև վերականգնելու նախկին փոխհարաբերությունները:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի առթիվ Գանձակի թուրքերը հոկտեմբերի 21-ին ցույցի դուրս եկան: Հավաքվել էր հսկայական բազմություն, ցուցարարների առջև ճառեր ասվեցին, կոչեր եղան ամրապնդելու թուրք-հայ խաղաղությունը, ապա հավաքի մասնակիցները թափոր կազմած գնացին դեպի ս. Հովհաննես եկեղեցին, որի դիմաց ևս եղան ելույթներ և հայերի հետ համերաշխության կոչեր:

Թուրքերի այդ քայլը ուրախությամբ ողջունեց քաղաքի հայ բնակչությունը, որն առիթ էր փնտրում խուսափելու համար արյուն թափելուց:

Մանիֆեստի առթիվ հայերը նույնպես պատրաստվեցին ցույցի դուրս գալ և ամուր հաշտության համար սեղմել թուրքերի մեկնած ձեռքը: Ծրագրված էր ցույցը կազմակերպել հաջորդ օրը՝ հոկտեմբերի 22-ին, նույնպես թափոր կազմել և գնալ դեպի մզկիթ, նույնպես ամուր խաղաղություն հաստատելու և բարեկամությունը վերականգնելու կոչեր անել:

[1] **«Հայրենիք»**, N 7(115), մայիս, 1932, էջ 92:

Բայց ռուս բյուրոկրատիան քնած չէր: Հայ-թուրքական համերաշխության հաստատումը չէր մտնում նրա ծրագրերի մեջ: Չէ՞ որ հեղափոխությունը երկրով մեկ շարունակում էր փոթորկվել, հեղափոխական ուժերը պատրաստվում էին վճռական գրոհի, գահը երերում էր մեկը մյուսին հաջորդող հարվածներից: Հայ-թուրքական ընդհարումներն, ըստ էության, այդ երկու ժողովուրդների լայն զանգվածներին դուրս էին թողել հակացարական հեղափոխական պայքարից՝ իբրև հետևանք ռուս բյուրոկրատիայի դիվային գործունեության: Եվ ահա այս պայմաններում է, որ Գանձակի թուրքերը և հայերը ձգտում էին համերաշխության: Ամեն կերպ պետք էր արգելք հանդիսանալ խաղաղություն հաստատելու նրանց ձգտմանը, պետք էր խորացնել թշնամությունը, արյան նոր բաղնիքներ սարքել, որպեսզի ժամանակ իսկ չունենային մտածելու հեղափոխությանը մասնակցելու մասին: «Մշակը» գրում էր.

«Ռեակցիան, ասիական կոպիտ բռնակալության ողբալի մնացորդները ուզում են հանգցնել Կովկասի հեղափոխական հրդեհը: ... Բայց զզվելի բյուրոկրատիայի ձեռքին հրդեհաշեջի դերը կատարում է հայի սիրտը, իսկ ջրի տեղ գործ են ածում մեր, հայերիս տաք արյունը»[1]:

Եվ հրապարակ եկան քաղաքի սևհարյուրակային ուժերը՝ «իսկական ռուս մարդիկ», որոնք հայ ցուցարարներին սպառնացին, որ եթե նրանք փորձեն շարժվել տեղից, այսինքն՝ եթե ուղղություն վերցնեն դեպի մզկիթ, ապա այս անգամ իրենք են հայերի կոտորած սարքելու: Միաժամանակ սևհարյուրակայինների պարագլուխները բացեիբաց հայերին ասում էին, թե հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հետ հույս կապելը միամտություն է, որ Ռուսաստանում ոչինչ չի փոխվելու, քանի դեռ գահն ունի այնպիսի նվիրյալներ, ինչպիսիք «իսկական ռուս մարդիկ» են:

Կոտորածի վտանգն իրական էր, և դրությունը գնալով լրջանում էր նաև այն պատճառով, որ իշխանությունների ներկայացուցիչները փորձեր էին անում նախորդ օրվա ցույցին մասնակցած թուրքերից շատերին նույնպես մտցնել սևհարյուրակայինների շարքերը:

Խոհեմություն հանդես բերելով՝ հայերը ցրվեցին: Բայց ռեակցիան չհաշտվեց նման ելքի հետ:

Նահանգապետ Տակայշվիլին, որի հետ միամիտները սկզբում հույսեր էին կապել, թե նա պիտի խաղաղեցնի Գանձակի ընդարձակ նահանգը, բառիս իսկական իմաստով դուրս եկավ մի կատարյալ հրեշ: Նա նորանոր առիթներ էր փնտրում իր քեռու՝ Նակաշիձեի վրեժը հայերից առնելու համար՝ մեկը մյուսի հետևից կազմակերպելով նորանոր սադրանքներ[2]: Հայերին շարունակում էին զինաթափել, առանց հիմնավոր պատճառների նրանց ենթարկում էին հալա-

[1] **«Մշակ»**, N 233, 23 նոյեմբերի 1905թ.:
[2] **«Դրոշակ»**, N 2(168), փետրվար, 1906, էջ 27:

ծանքների, գյուղերը՝ էկզեկուցիաների ու տուգանքների: Այդ ամենն առաջ էր բերում թուրք պարագլուխների երախտագիտությունը: Գանձակի իշխանությունները ցինիզմով շարունակում էին խրախուսել թուրքերին, որոնք զինվում էին ազատ ու անվախ:

Գանձակի հայ մտավորականներից Ներսես Մելիք-Ալահվերդյանցը 1905թ. հոկտեմբերի 31-ին կաթողիկոս Խրիմյանին Շուշիից գրած նամակում բողոքում էր Տակայշվիլու՝ հայերի հանդեպ բռնած դիրքի համար: «Ցավալին այն է,- գրում էր նա,- որ նախ սորա վարմունքը թուրքերի հանդեպ շատ սիրալիր է. որքան էլ թուրքը հանցավոր է լինում, ... նա ոչ միայն չի ուզում նրան պատժել, այլև ամեն ինչ անում է նրան արդարացնելու համար»[1]:

Տագնապահար նամակագիրը Խրիմյանին գրում էր, թե թուրքերը մեծ պատրաստություններ են տեսնում վճռական հարձակում գործելու և «միանգամայն կործանելու ու ջնջելու հայերին», ուստի միակ միջոցը համարում էր այն, որ վեհափառը կազմի մի հատուկ պատգամավորություն և ուղարկի մեծ տերությունների ղեկավարների և, առաջին հերթին՝ Իրանի շահի մոտ: Պատգամավորությունը «պետք է խնդրի մեծերին», որ նրանք «խնայեն մեր ազգին», միջնորդի Ռուսաստանի կառավարության առջև՝ «վերջ դնելու այս կոտորածին», նաև խնդրի «թուրք առաջնորդներին», որպեսզի նրանք իրենց ցեղակիցներին հետ կանգնեցնեն չար նպատակից, «հակառակ դեպքում... մեր ազգն ընդմիշտ կորած է...»[2]:

Մինչ լեղապատառ հայ քաղքենին իր հայացքը հառել էր դրսին, Գանձակի հայ անձնուրաց երիտասարդությունը ստեղծված ծանր իրավիճակից ելքը տեսնում էր զորավոր ինքնապաշտպանության մեջ՝ մերժելով աղաչանք-պաղատանքով ուրիշից փրկություն ստանալու ակնկալիքը:

Մոտենում էին այն օրերը, երբ Նահանգապետը Գանձակը պիտի մատներ կրակի ու կոտորածի և Ներոնի պես հրճվեր իր սև գործով:

Գանձակ քաղաքի ս. Հովհաննես եկեղեցու եկեղեցական խորհրդի հանձնարարությամբ առաջնորդական փոխանորդ Կորյուն վարդապետը մեկնեց Թիֆլիս և Նոյեմբերի 9-ին անձամբ ներկայացավ փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Հանդիպման ժամանակ նա պատմեց իր հոտի կրած տառապանքները, այն, որ թուրքերը բացահայտորեն նախապատրաստվում են արյունահեղության, իսկ հայերը, հետևելով փոխարքայի խորհրդին*, ամեն կերպ խուսափում են խախտել անկայուն խաղաղությունը: Դրությունը փրկելու համար

[1] «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), էջ 444:
[2] Նույն տեղում, էջ 445:
* **Կորյուն վարդապետը**, հավանաբար, ակնարկում էր այն, որ 1905թ. սեպտեմբերի 12-ին գալով Գանձակ, փոխարքա Վորոնցով-Դաշկովը այցելել էր քաղաքի հայոց ս. Հովհաննես եկեղեցի, ուր գոհունակություն և հույս էր հայտնել, թե «հայ ժողովուրդը կմնա միշտ օրինապահ և կաշխատի պահպանել խաղաղությունը քաղաքում» («Արարատ», N 10, հոկտեմբեր, 1905, էջ 883):

առաջնորդական փոխանորդը փոխարքային խնդրեց առաջին հերթին Գանձակի նահանգապետի պաշտոնից հեռացնել Տակայշվիլուն: Փոխարքան միայն ունկնդրեց և չտվեց որևէ խոստում: Հանդիպումից հետո փոխարքայի պալատից Տակայշվիլուն տեղյակ պահեցին առաջնորդական փոխանորդի այցելության և նրա բողոքների մասին:

Կորյուն վարդապետի Թիֆլիս եղած ժամանակ նահանգապետ Տակայշվիլին գտնվում էր Շուշիում: Նոյեմբերի 16-ին վերադառնալով Գանձակ՝ նա իր մոտ զրույցի է կանչում տեղի թուրքերի պարագլուխներից մի քանիսին: Զրույցի արդյունքից հայերը, բնականաբար, անտեղյակ էին, բայց ամեն ինչից երևում էր, որ փոթորիկը մոտենում է և ուր որ է պիտի պայթի:

Երբ Տակայշվիլին դեռ Շուշիում էր, Գանձակի հայ և թուրք ղեկավարները որոշել էին Նոյեմբերի 18-ին, ուրբաթ օրը (որը թուրքերի կիրակին էր՝ ղումման), քաղաքային դպրոցի բակում հրավիրել համատեղ միտինգ և նշել հոկտեմբերի 17-ի մանիֆեստի մեկ ամիսը: Սակայն թուրք պարագլուխների հետ նահանգապետի գաղտնի հանդիպումը փոխել էր ամեն ինչ:

Նախքան միտինգի սկսվելը, վաղ առավոտյան, հայոց քաղաքամասի ծայրում, Դիք-Քյուչա փողոցի գլխամասում գտել էին երկու թուրքի դիակ: Ինչպես հետո պարզվեց, սպանությունը կատարել էին անհայտ անձինք, որոնք դիակները բերել ու ձգել էին հայերի քաղաքամասը:

Թուրքերի սպանության լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքով մեկ: Միտինգի մասին ամենքը մոռացան: Զայրույթից թուրքերը եփեռումի մեջ ընկան, իսկ հայերի մեծ մասին տիրեց սարսափ: Հաշված րոպեների ընթացքում թուրք ամբոխը հավաքվեց Շահ Աբասի մզկիթում: Թե այնտեղ ինչեր էին խոսել՝ հայերը չիմացան: Ուղիղ ժամը 10^{30}-ին կատաղած ու արյունածարավ ամբոխը դուրս թափվեց մզկիթից:

Նույն ժամին շուկայի մոտ հայտնված թուրք աստիճանավոր Սրաֆիլբեկովը, հարակից փողոցում խմբված թուրք ոստիկաններին աջ ու ահյակ տենդագին շարժումներով ինչ-որ բան հասկացնելուց հետո, կառք նստեց ու հեռացավ: Ոստիկանները փափոցներով իրար հետ կասկածելի հայացքներ էին փոխանակում, երբ հաշված րոպեների ընթացքում շուկան լցվեց մզկիթից դուրս թռած թուրքերով: Նրանք շուկա խուժեցին սրերով, սուր ու բութ երկաթներով, հրացաններով ու ատրճանակներով: Գազանացած թուրք խուժանին շուկայի հրապարակի վրա իր շուրջն էր հավաքել սպիտակ ձի նստած թուրքերի պարագլուխներից մեկը, որ ճառ էր ասում, ոգևորում և խրախուսում ամբոխին, գրգռում և էլեկտրականացնում նրան՝ կոչ անելով գնալ հայերի վրա՝ կոտորել, կողոպտել, այրել, սպանել ...Նա հայի արյուն է ուզում[1]: Սկսվեց այնտեղ գտնվող հայերի՝ խանութատերերի, գործակատարների, հաճախորդների անխնա սպանդը:

[1] **«Մշակ»**, N 233, 23 Նոյեմբերի 1905թ.:

Տնտարանները հար նման էին Թուրքերի բարոյականին: Ահա մի Թուրք՝ մի ձեռքին պատյանից հանած արյունլվա դաշույնը, մյուս ձեռքին՝ հրացանը, հայի մանուֆակտուրային խանութից հանած թանկ մահուդեղենը երկու թևերի տակ դրած՝ տուն էր տանում: Ահա Թուրք ոստիկաններ, դիրքեր մտած, կրակում էին շուկայից հայոց քաղաքամաս փախչող հայերի վրա: Ահա շուկայի դարպասների մոտ անշնչացած ընկած էին դպրոցահասակ երեք երեխա. հավանաբար ծնողների հետ եկել էին շուկա, ծնողների հետ էլ նահատակվել:

Շուկայում իր սև գործը վերջացնելով և այնտեղ թողնելով հայերի 100-ից ավելի դիակ[1], կատաղած ամբոխը խուժեց ոչ հեռու գտնվող քարվանսարան՝ «փուչախչիխանան», ուր բացառապես աշխատում էին հայ բազմափորձ արհեստավորներ՝ տարբեր տարիքի ու հմտության: Շողացին դաշույններն ու սրերը, և տանջյալներով անմեղ մարդիկ մորթվեցին իրենց աշխատատեղերում: Այնտեղ եղած հայ արհեստավորներից ոչ մեկը չփրկվեց:

Շուկայի և քարվանսարայի հայերին կոտորելուց հետո, ընչաքաղց ու դառնամաղձ հոգով խուժանը վրա ընկավ խանութների ու արհեստանոցների վրա. սկսվեց մոլեգին կողոպուտն ու ավերը: Դեպի շուկա և քարվանսարա ձգվեցին անթիվ դատարկ սայլեր ու ֆուրգոններ, որոնց բեռնելով խանութների ապրանքները, ջարդարարներն ամենքի աչքի առաջ ամբողջ օրը տանում էին՝ զորքի ու ոստիկանության կողմից չհանդիպելով որևէ արգելքի: Ոստիկանապետ Թեմուր բեկ Հասանբեկովը ոչ միայն որևէ բան չէր ձեռնարկում կանխելու սպանդն ու կողոպուտը, այլև ինքն անձամբ խրախուսում էր սպանությունները, Թուրք խուժանին հրահրում ծայրահեղ հանցագործություններ[2]: Կրկին նշենք, որ Գանձակի ոստիկանությունը համարյա ամբողջովին՝ պետերից մինչև ստորին պաշտոնյաները, կազմված էր Թուրքերից:

Կոտորածը Գանձակի շուկայում սկսվելուն պես՝ Թուրքերը սուրհանդակներ ուղարկեցին շրջակա գյուղերը՝ իմաց տալու, որ շտապեն քաղաք՝ մասնակցելու հետագա կոտորածին ու կողոպուտին: Գյուղերից մեծ խմբերով քաղաք սլացան խառնամբոխներ, որոնք, խուժելով շուկայի հրապարակ, սոված գայլերի նման հարյ-հրոցով թափվեցին հայերի՝ արդեն հիմնականում կողոպտված խանութների վրա: Թալանի ընթացքում նրանց միջև ծագեցին արյունալի ընդհարումներ: Հավանականն այն է, որ նրանց մեծ մասը տուն էր վերադարձել ձեռնունայն, քանզի թալանի առյուծի բաժինն արդեն ժամեր առաջ ընկել էր Թուրք բեկերի, ղոչիների և Թուրք ոստիկանների ձեռքը:

Կողոպուտից հետո սկսվեց հրդեհը: Կրակը չէր ջոկում հային ու Թուրքին: Մզկիթի շուրջն ընկած տարածքն այդ աղոթատան վակուֆն էր, որն ամբողջովին այրվեց: Այրվեց նաև մզկիթից ոչ հեռու գտնվող պասաժը, որը

[1] «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 27:
[2] Այդ մասին մանրամասն տե՛ս "Елизаветполские крововые дни" գրքույկում:

նույնպես պատկանում էր Թուրքի: Այրվեցին հայերին պատկանող «Ցենտրալնի» և «Գրանտ հոթել» հյուրանոցները, «Եվրոպա» հյուրանոցը, որի տերը Թուրք էր: Կրակի մատնվեցին նաև Պոլիցեյսկի փողոցի երկու կողմերում գտնվող տները, որոնք ամբողջովին պատկանում էին Թուրքերին:

Կատարելով մասսայական սպանություններ ու ավերներ՝ Թուրքերը սկսեցին վախ զգալ հայերի վրեժխնդրությունից: Այդ էր պատճառը, որ նրանց պարագլուխները կոտորածի առաջին օրվա վերջում այցելեցին Նահանգապետ Տակայշվիլուն և խնդրեցին անհապաղ զինաթափել Գանձակում գտնվող Ասլանդուզյան և Շեմախյան գնդերում ծառայող 120-ից ավելի հայ զինվորներին: Առանց երկար-բարակ մտածելու՝ նահանգապետը կարգադրություն իջեցրեց, որի հիման վրա անմիջապես բոլոր հայ զինվորներին զինաթափեցին և փակեցին զորանոցներում: Հերթական երախտագիտություն հայտնելով նահանգապետին՝ Թուրքերն ասում էին. «Տակայշվիլին մեր մարդն է, նա մեր գեներալն է»: Նահանգապետի կատարածը նրանք ընկալեցին որպես Թուրքերի նկատմամբ ռուսական իշխանությունների երախտագիտության արտահայտություն:

Այդ արյունալի ոճիրի ժամերին Գանձակի Թուրք պարագլուխներից Խաս-Մամեդովը, հավաքված խուժանի առջև հանդես գալով ճառով, ներկա գտնվող ռուս զինվորականներին դիմեց հետևյալ խոսքերով.

«Ռուս սպանե՛ր, բացատրեցե՛ք ձեր զինվորներին, որ մենք՝ Թուրքերս, անբավ զոհեր տալով, կռվում ենք ցարի թշնամիների՝ հայերի դեմ, նրանց սպանում, կոտորում, հալածում ենք իբրև հեղափոխականների և, այդպիսով, անկարող դարձնում դիմագրավելու ցարի զորքերին: Բացատրեցե՛ք զինվորներին, որ եթե հայկական գավառներում Թուրքեր չլինեն, այն ժամանակ հայերը, իբրև հեղափոխականներ և ցարի իշխանության դեմ կռվողներ, շատ ավելի ուժեղ կլինեն, քան ռուս հեղափոխականները, քան [կայսրության] մյուս ըմբոստ ազգերը ... Այդ մենք ենք, Թուրքերս, որ զրկեցինք հայերին հեղափոխական գործից, նրանց ոտն ու ձեռքը կապեցինք և դարձրինք անկար ու անզոր ... Դուք մեզ եք պարտական»[1]:

Թուրքական մասում գտնվող քաղաքային շուկայում և «փուչախչիխանայում» արած կոտորածից հետո նույն օրը Թուրքերը փորձեցին հարձակում գործել նաև քաղաքի հայկական մասի վրա: Վերևում հիշատակված ավազակաբարո Թոփալ-Հասանլու գյուղից բավական թվով զինված մարդիկ եկան և մտան հայկական մասի Ջայլու և Մոլլա-Ջայլու Թուրքաբնակ թաղերը: Շուտով այդ թաղերից սկսվեց ուժգին հրացանաձգություն դեպի հայերի կողմը: Օրվա ընթացքում Թուրքերը մի քանի ուրիշ տեղերից նույնպես հրացանային կրակի տակ առան հայկական տարբեր թաղեր:

Բայց հայկական մասում Թուրքերն ի վիճակի չեղան անելու այն, ինչ արե-

[1] «Դրոշակ», N 11(177), նոյեմբեր, 1906, էջ 163:

ցին իրենց քաղաքամասում: Երբ Թուրքական մասում հայերը Տակայշվիլուց փրկություն էին աղերսում, այդ նույն ժամերին հայկական մասում դաշնակցական գործիչները մեծ եռանդով կազմակերպում էին ժողովրդի ինքնապաշտպանության գործը:

Այդ օրերին Խրիմյան կաթողիկոսը Էջմիածնից ուղևորվել էր Թիֆլիս՝ այնտեղից խաղաղարար առաքելությամբ Բաքու գնալու մտադրությամբ: Սակայն ոչ բարվոք առողջական վիճակի պատճառով նա փոխել էր մտադրությունը և Բաքու էր ուղարկել Հուսիկ եպիսկոպոսին ու Մխիթար վարդապետին: Թիֆլիսում հայոց հայրապետին այցելում են տեղի մահմեդական հոգևորականության ղեկավարները և ցավակցություն հայտնում Բաքվում տեղի ունեցած վերջին արյունալի դեպքերի կապակցությամբ:

Նոյեմբերի 19-ի առավոտյան Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը այցելության է գալիս ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսին, որը, հիվանդ լինելով, փոխարքային ընդունում է առաջնորդարանի իր առանձնասենյակում:

Ողջունելով կաթողիկոսին՝ փոխարքան հարցնում է նրա առողջությունը: Վեհափառը պատասխանում է, որ ինքը հիվանդ է, բայց հիվանդությունն ամեն րոպե ծանրանում է աղետալի, սոսկալի լուրերից, որ շարունակ ստանում է զանազան տեղերից հայ հոտի սպանության և ավերածության մասին, իսկ այժմ էլ սկսվել է նոր աղետ Գանձակում:

Կաթողիկոսը, այնուհետև, խնդրում է եռանդուն և կտրուկ միջոցներ ձեռք առնել արյունահեղությունը Գանձակում կանգնեցնելու համար: Փոխարքան պատասխանում է, որ արդեն այսօր զորք է ուղարկում Գանձակ, քանի որ այնտեղի զորքի մի մասը ուղարկվել է Շամախի, ուր նույնպես շարժումներ են նկատվում:

Երբ կաթողիկոսի հետ ունեցած տեսակցությունից հետո Վորոնցով-Դաշկովը պատրաստվում էր մեկնել, առաջնորդարանի դահլիճում հավաքված հայ հասարակության մի խումբ ներկայացուցիչներ, թույլտվություն խնդրելով, մի քանի րոպե նրա ուշադրությունը զբաղեցնում են Գանձակի աղետով: Բացատրելով, որ Գանձակի հայությունը հավատ չունի տեղի իշխանությունների և մանավանդ գեներալ Տակայշվիլու նկատմամբ, նրանք փոխարքային թախանձագին խնդրում են, Գանձակ ուղարկել իր օգնական Մալամային, որի հեղինակությունն ու բարձր դիրքը կարող էին ազդել թուրք ամբոխի վրա, բացի այդ, նա կարող էր ավելի կտրուկ կազմակերպել զորքի օգնությունը: Ընդունելով այդ խնդրանքը՝ փոխարքան խոստանում է առանց հետաձգելու Մալամային ուղարկել Գանձակ: Եվ իրոք, հաջորդ օրը Մալաման գնացքով մեկնում է Գանձակ[1], իր հետ տանելով Նիժեգորոդակի հուշակավոր հեծյալ գունդը:

[1] «Մշակ», N 232, 20 նոյեմբերի 1905թ.:

Իսկ նախորդ օրը՝ նոյեմբերի 19-ի երեկոյան, Թիֆլիսի քաղաքային խորհրդի կողմից և փոխարքայի գիտությամբ Գանձակ էին ուղևորվել վարչության անդամներ Կյոքչաևը, Զրելաևը, Ալ. Խատիսյանը և ուրիշներ: Պատգամավորությանն ուղեկցում էին Շուշիից Թիֆլիս եկած խմբապետ Համազասպ Սրվանձտյանը և Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ Կոգդիանին[1]: Թիֆլիսից Գանձակ մեկնեցին նաև տեղի թուրք հասարակության մի քանի ազդեցիկ դեմքեր: Այդ պատվիրակությունների նպատակն էր աշխատել խաղաղություն հաստատել Գանձակի հայերի և թուրքերի միջև[2]:

Խատիսյանն իր հետ Գանձակ էր տանում մեծաքանակ դրամ՝ հանձնելու համար քաղաքի ինքնապաշտպանության ղեկավարությանը՝ առաջնորդական տեղապահ Կորյուն վարդապետին և ուրիշների:

Երբ պատգամավորությունը Թիֆլիսից ուղևորվեց Գանձակ, նոյեմբերի 19-ի ամբողջ օրը այնտեղ տեսած կատաղի կռիվներն արդեն հանդարտվել էին:

Այդ օրվա առավոտյան քաղաքի հայկական մասի Զայլու և Մոլլա-Զայլու երկու թուրք թաղերում հարևան գյուղերից և քաղաքի թուրքական մասից հավաքվել էին մեծաթիվ հրոսակախմբեր: Ժամը 10-ի կողմերը խուժանը սկսեց իր հարձակումը հայկական քաղաքամասի վրա, բայց հանդիպելով հայերի ուժգին կրակին, հետ շպրտվեց զգալի կորուստներով: Նորից թուրքերը գրոհի անցան ժամը 12-ին, բայց այս անգամ էլ արդյունքի չհասան: Անցնելով հակահարձակման՝ հայ կռվողները թուրքական թաղերում կարողացան գրավել երկու ուժեղ դիրք, ապա, խուժանին հետ մղելով, նրան փախցրին թաղերի խորքը:

Շատ չանցած՝ հայերի մի նոր ուժգին հարձակում թուրքերին ստիպեց թողնել հայկական քաղաքամասի իրենց երկու թաղերը և, գետն անցնելով, փախչել թուրքական քաղաքամաս: Մտնելով թուրքերի թաղերը՝ հայերը վերցրին մեծ թվով զերիներ և բերին հայկական մաս, տղամարդկանց պահեցին, իսկ բոլոր կանանց ու երեխաներին ճամփեցին իրենց քաղաքամաս:

Այսպիսով, կռվի երկրորդ օրը ավարտվեց հայերի հաղթանակով, որի հիմնական արդյունքը հայկական քաղաքամասից թուրքերի վտարումն էր:

Նոյեմբերի 20-ի առավոտյան Թիֆլիսյան պատգամավորությունը հասավ Գանձակ: Ալ. Խատիսյանը վերհիշել է. «Կայարանի մեջ կը լսուեին հրացանի զարկեր: Քանի մը տուներ կ'այրվեին: Մուխը բռնած էր երկինքը: ... Մենք որոշեցինք իջևանել Թուրքական մասի մեկ հյուրանոցին մեջ՝ ապացուցանելու համար, որ ես եկած եմ ոչ իբրև հայ, այլ որպես պատգամավոր Թիֆլիսեն, խաղաղասիրական միտումներով: Համազասպը կը ճամբորդեր գաղտնի: Ան

[1] «Հայրենիք», N 7(115), մայիս, 1932, էջ 92:
[2] «Մշակ», N 232, 20 նոյեմբերի 1905թ.:

փաթաթուած իր «եափունչիին» մէջ՝ դուրս չէր ելներ գնացքեն*: Կառք առնելով հասանք Հյուրանոց: Թուրքերը չար կը նայեին մեզ վրայ»[1]:

Քանի որ Նահանգապետը քաղաքում չէր, ուստի պատգամավորության առաջին քայլը եղավ իր ժամանելու մասին իմաց տալ Գանձակի քաղաքագլուխ Կոգնովեցկուն: Քաղաքագլուխը եկավ և կարճատև խորհրդակցության արդյունքում որոշվեց նույն օրը հրավիրել հայերի և թուրքերի համատեղ ժողով՝ հաշտություն կնքելու համար:

Պատգամավորները դուրս եկան քաղաք: Գլխավոր հրապարակում նրանք հանդիպեցին մի հեծյալ զորամասի, որի հրամանատար գնդապետ Մելիք-Ալավերդյանը գանգատվեց, որ իրեն արգելում են որևէ միջամտություն կատարել ծավալվող դեպքերին՝ վերապահելով միայն դիտողի դերը: Իմ զինվորները տեսնում են, թե թուրքերն ինչպես են նավթ լցնում տների վրա ու հրդեհում, ասում էր գնդապետը, բայց միջամտելու իրավունք չունեն[2]: «Շարունակելով ճամբաս, - գրել է Խատիսյանը, - պատահեցի դատախազի օգնական Կուդրևիչին, որ կը ճանաչեի Թիֆլիսեն և որ իր ափերու մէջ բռնած ուներ մեծ քանակությամբ ժամացոյցներ: Զամչնալով՝ Կուդրևիչը ըսավ, որ այդ ժամացոյցները գնած է շատ չնչին գինով թուրքի մը ձեռքե: Պարզ էր, որ հայու մը խանութ էր կողոպտուած, և դատական իշխանութեան ներկայացուցիչը, փոխանակ հետապնդելու ոճրագործը, իր շահի մասին է որ կը մտածեր»[3]:

Մինչ պատգամավորները շրջում էին քաղաքի կենտրոնում, հրապարակում հավաքվեց ժողովուրդը: Եկավ Կորյուն վարդապետը մի խումբ հայ երևելիների հետ, այստեղ էին քաղաքային վարչության անդամները, Նահանգապետարանի պաշտոնյաները, քաղաքագլուխը, Նոր քաղաք հասած Նահանգապետ Տակայշվիլին: Եկան նաև մեծ թվով թուրքեր: Միտինգում ճառեր արտասանվեցին, խոսեց նաև Խատիսյանը, որ հետագայում վերհիշել է. «Ճառով մը ես դիմեցի երկու կողմերուն, որ դադարեցնեն աւելորդ արիւնահեղութիւնը: Ինչպէս միշտ, երկու կողմերեն ալ կը ճառէին դարաւոր բարեկամութեան մասին, որ իրար կը կապէ երկու ժողովուրդները, որ «չէյթանի գործ է երկու ժողովուրդները իրար վրայ նետելը: Հէնց այստեղ որոշուեցաւ զինադադար կնքել՝ կամուրջը նկատելով որպէս չէզոք գօտի: Ինձ խնդրեցին պտտիլ քաղաքը եւ ամենուրեք յայտարարել խաղաղութեան մասին»[4]:

Մինչ միտինգը շարունակվում էր, Հ.Յ. դաշնակցության Գանձակի կոմիտեն հրատարակեց ու տարածեց հերթական թռուցիկը, ուր, մասնավորապես, ասված էր.

«Հայեր.

Մենք գտնվում ենք օրհասական դրության մեջ: Պետք է մեր բոլոր ուժերը լարենք՝ թշնամու ճանկերից փրկելու համար մեր կյանքն ու գույքը, մեր քույրերի, մայրերի, մեր կանանց պատիվը: Այս օրհասական րոպեներին նվիրական գործին, ինքնապաշտպանության սուրբ գործին պետք է նվիրել ամեն ինչ: Ինքնապաշտպանության համար մի բան խնայելը հանցանք է, աններելի, սոսկալի հանցանք, մի այնպիսի մեղք, որը հետո ոչնչով չի կարելի քավել: Ինքնապաշտպանության զինվորներին աջակցեցե՛ք ամեն կերպ՝ զենք, ռազմամթերք, հաց, ջուր, թեյ, տաք կերակուր հասցրեք նրանց, ամոքեցեք, թեթևացրեք նրանց վերքերը: Ամեն մի հայի տան վիրավորները պետք է գտնեն սրտագին խնամք, անկեղծ հոգացողություն, և դա կքաջալերի նրանց, ովքեր դիրքերում կանգնած պաշտպանում են մեր կյանքն ու գույքը, հայության պատիվը ...»[1]:

Նոյեմբերի 20-ի ամբողջ օրը հայկական և թուրքական քաղաքամասերի միջև շարունակվում էր ուժգին հրացանաձգությունը:

Այդ օրը կեսօրին Գանձակ հասավ նաև գեներալ Մալաման: Կարճատև հանգստից հետո նա իր մոտ կանչեց քաղաքի հայերի մի քանի ղեկավարների և առաջարկեց կռիվը դադարեցնել ու հաշտվել: Հայերի ղեկավարներից մեկը հետևյալ պատասխանը տվեց.

«Ձերդ գերազանցություն: Մի՞թե մենք ենք կռիվը սկսել: Հայերը մեծամասնություն են կազմում Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում, Նոր Բայազետում և եթե ցանկանային, կարող էին բնաջնջել այնտեղի բոլոր թուրքերին: Բայց հայերը ուզում են խաղաղ ապրել, այլ ոչ թե մեր հարևանների նման հարձակվել, սպանել, թալանել: Զսպեցեք այդ գազաններին, այլապես կարող է հատել մեր համբերությունը»:

Նույն օրը գեներալ Մալաման Տակայշվիլուն հանձնեց փոխարքայի հրամանը՝ Գանձակի Նահանգապետի պաշտոնից նրան ազատելու մասին: Ժամանակավոր Նահանգապետ նշանակվեց գեներալ Ֆլեյշերը, որը հարգված էր տեղացի հայերի կողմից:

Թիֆլիսի դումայի Գանձակ հասած պատվիրակները նոյեմբերի 20-ի երեկոյան կարողացան կողք կողքի բերել մի խումբ հայ և թուրք պատվավոր անձանց ու հոգևորականների՝ մշակելու համար հաշտության պայմաններ: Երկու կողմերը փոխադարձ համաձայնության եկան առժամանակ դադարեցնել հրացանաձգությունը, փոխանակել դիակներն ու կենդանի բռնվածներին, երկու քաղաքամասերի միջև սկսել հաղորդակցությունը: Ընտրվեց մի խառն հանձնախումբ՝ երեք օր շարունակ փողոցներում ընկած դիակները հավաքելու համար:

---

* Համազասպի գաղտնի ճամփորդելը միանգամայն հասկանալի էր. Ակերանի հերոսի համբավը տարածված էր ամենուր և, ճանաչվելու դեպքում, թուրքերն ափիթը բաց չէին թողնի նրանից վրեժ լուծելու համար:

[1] **«Հայրենիք»**, N 7 (115), մայիս, 1932, էջ 92:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 92-93:

[4] Նույն տեղում, էջ 93:

[1] **«Մշակ»**, N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

Բայց Թիֆլիսից եկածների միջնորդությամբ երկու կողմերի ներկայացուցիչների առաջին հանդիպումը ոչինչ չտվեց. հրացանաձգությունը շարունակվեց ամբողջ գիշեր:

Նոյեմբերի 20-ի գիշերը Գանձակից մի խումբ հայեր հետևյալ հեռագիրը հղեցին Թիֆլիս՝ «Մշակի» խմբագրությանը. «Մեր կրած սարսափները գերազանցում են այն բոլորը, ինչ պատահեց Կովկասում այս տարի: ... Կան շատ սպանվածներ ու վիրավորներ: Քաղաքում քիչ են զորքերը: Հարկավոր է անհապաղ օգնություն: Օգնեցե՛ք»[1]:

Նոյեմբերի 21-ի առավոտյան կռիվը նոր ուժով բորբոքվեց: Քաղաքը շարունակում էր այրվել, լսվում էր անընդհատ հրացանաձգություն: Տեղեկություն ստացվեց, որ Ալաբաշլրից Գանձակի վրա էր շարժվում մոտ 500 զինված թուրք:

Այդ օրը հիմնական իրադարձությունները ծավալվեցին քաղաքի երկաթուղային կայարանի շրջանում:

Անդրկովկասի երկաթուղու գիծը անցնում էր Գանձակի հյուսիսային կողմի տափարակով, քաղաքից 5 վերստ, իսկ հայկական քաղաքամասից՝ մոտ 6 վերստ հեռու:

Դրանից քառորդ դար առաջ՝ 80-ական թվականների սկզբներին, երկաթգիծը կառուցելիս, երկաթուղու վարչությունը որոշած էր եղել այն անցկացնել Գանձակին շատ մոտ, քաղաքի հյուսիսային սահմանագլխով, իսկ կայարանը կառուցել հայոց քաղաքամասին կպած: Բայց հայերի ղեկավարներն այն ժամանակ խաչընդտներ էին հարուցել երկաթգիծը հայկական քաղաքամասին մոտեցնելու և կայարանն այնտեղ կառուցելու ծրագրի դեմ: Պատճառաբանություններն էին եղել. եթե կայարանը կպած լինի հայոց քաղաքամասին, ապա, նրա հետ հաճախակի ու սերտ շփումների հետևանքով, այդտեղ բուն կդնեն բարոյական ախտեր, հայկական մասում կբազմանան այլազգիները, կխեղվեն նահապետական բարքերը, շոգեկառքի անվերջ սուլոցները թույլ չեն տա հանգիստ քնել: Հետագայում հայերը սկսեցին ծեծել իրենց գլուխը, որ այդ մեծ բարիքն իրենց ձեռքից բաց են թողել, բայց արդեն ուշ էր:

Նշված անհարմարությունը՝ քաղաքից կայարանի 5-6 վերստ հեռու լինելը, թուրքերի համար այնքան զգալի չէր, որքան հայերի: Կայարանը թուրքաց քաղաքամասից համեմատաբար մոտ էր: Ճանապարհը դեպի կայարան նրանց համար բոլորովին վտանգավոր չէր, քանի որ անցնում էր թուրքաբնակ վայրով, ուստի ցերեկ թե գիշեր նրանք բոլորովին ազատ ու անարգել անցուդարձ էին անում այդ ճանապարհով, որը նրանց մեծ առավելություն էր տալիս: Տարեցտարի թուրքերի քաղաքամասն ու կայարանն ընդլայնվելով մոտեցել էին իրար, իսկ հայկական քաղաքամասը մնում էր կայարանից հեռու, մեկուսացած:

[1] «Մշակ», N 233, 23 նոյեմբերի 1905թ.:

Երբ 1905-ի փետրվարից սկսվեցին թուրք-հայկական ընդհարումները Կովկասում, հայերի համար անհնարին դարձավ կայարան գնալը՝ առանց զինվորական պահակախմբի: Կայարան ուղեկցելու համար զինվորներն ամեն մի հայից վերցնում էին մեկ ռուբլի, իսկ ապրանք տանող-բերողներից՝ շատ ավելի: Միայն երկու ամսում իրենց քաղաքամասից կայարան գնալու համար հայերը զինվորներին վճարել էին 15 հազար ռուբլի:

Նոյեմբերի 18-ին քաղաքում կոտորած սկսվելուն պես՝ մի քանի հայեր փախել էին և մի կերպ հասել կայարան, ուր միացել էին այնտեղ եղած մի քանի ռուս զինվորներին: Մի քանի զենք ձեռք բերելով՝ նրանք զինվորների հետ ստեղծել էին 40 կամավորից բաղկացած մի խումբ, որի անդամներից 25-ը հայեր էին, մնացածները՝ վրացի և ռուս: Ահա այս խումբն էր, որին բախտ վիճակվեց ունենալու փորձված, կռիվ ու կոտորած տեսած, խիզախ ու հանդուգն ղեկավար: Դա հայտնի դաշնակցական Թադևոս Ամիրյանն էր:

Մի քանի ընկերներով Թադևոսը Բաքվից գաղտնի զենք էր փոխադրում Թիֆլիս: Երբ գնացքը կանգ է առնում Գանձակի կայարանում, նա իջնում է թեյ խմելու և հենց այստեղ լուր է առնում, որ քաղաքում սկսվել են թուրք-հայկական կռիվները: Թադևոսն անմիջապես բարձրանում է գնացք և իր ընկերների հետ դուրս է բերում Թիֆլիս տարվող զենքերը: Նրանց է միանում կայարանում արդեն կազմակերպված զինված խումբը, որի զենք չունեցող անդամներին Թադևոսը տալիս է հրացաններ: Իր հետ Բաքվից եկած մարտիկներով նա հարձակվում և ջարդում է կայարանում գտնվող թուրքերին, որոնք կարճատև դիմադրությունից հետո բռնում են փախուստի ճանապարհը: Հայ մարտիկները տեր են դառնում ամբողջ կայարանին և ոչ հեռու գտնվող նավթամբարներին, փակում թուրք գյուղերից դեպի քաղաք տանող ճանապարհը:

Կայարանը գրավելուց հետո Թադևոս Ամիրյանը մտադրվում է իր մի քանի կտրիճների հետ խփել-անցնել թուրքերով բռնված խճուղով, կտրել 4-5 վերստ և հասնել արյան վայրը՝ իր եղբայրներին օգնության: Բայց կայարանի պաշտպանները նրան համոզում են մնալ իրենց մոտ: Նա համաձայնում է և դառնում կայարանի պաշտպանության ղեկավարը:

Թուրք խուժանը մի քանի անգամ գրոհ է ձեռնարկում կայարանի վրա, բայց, ամեն անգամ զոհեր տալով, հետ է շպրտվում:

Երկաթուղային կայարանի գրավումը մեծ նշանակություն ունեցավ ամենից առաջ այն իմաստով, որ քաղաքի թուրքերը զրկվեցին երկաթգծով զենք ու զինամթերք ստանալու հնարավորությունից: Բացի դրանից, կայարանը պաշտպանող քաջերն իրենց վրա էին գրավել թուրքերի զգալի ուժեր և դրանով իսկ մեծապես թեթևացրել հայկական քաղաքամասի զինյալների գործը:

Նոյեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը թուրքական գյուղերից հավաքված մի մեծ բազմություն ուժգին հարձակում է գործում կայարանի վրա: Հույսը դնելով իրենց թվական տասնապատիկ գերակշռության վրա և օգտվելով գիշե-

բային խավարից՝ Թուրքերն ինքնավստահ ընդհուպ մոտենում են կայարանին, կրակի տակ առնում այն, փորձելով նույնիսկ շենքից ներս մտնել: Թաղևոսը որոշում է ոչ թե պաշտպանվել, այլ առաջին իսկ վայրկյաններից հարձակման անցնել: Հանելով մաուզերը՝ նա իր մարտիկներով դուրս է սլանում կայարանի շենքից և, աջ ու ձախ կրակելով՝ մխրճվում Թուրքերի շարքերի մեջ, որոնք անսպասելի սրընթաց հարձակումից ահաբեկ, ցաք ու ցրիվ են լինում կայարանին հարող տարածքում թողնելով 20-ից ավելի դիակ:

Առավոտյան հայոց առաջնորդարան եկավ նոր նահանգապետ նշանակված գեներալ Ֆլեյշերը և հայ ներկայացուցիչներին արեց երեք առաջարկ. 1) Երկաթուղային կայարանից հեռացնել զինված հայերին, որոնք գնդակահարում են կայարան գնացող-եկող Թուրքերին, 2) Գիշերը տեղի ունեցած կռվի վայրը ստուգելու համար այնտեղ ուղարկել մի խումբ՝ պարզելու, թե որ կողմն է նախահարձակ եղել, ապա մարդիկ ընտրել և ուղարկել գեներալ Մալամայի մոտ՝ նրան զեկուցելու եղելությունը, 3) Պատվիրակներ ընտրել Թուրքերի հետ ընդհատված բանակցությունները վերսկսելու համար:

Առաջին առաջարկը հայերը մերժեցին, ասելով, որ եթե կայարանից հայ տղաները դուրս գան, ապա անմիջապես այնտեղ կխուժեն Թուրքերը, և կայարանում մնացած հայերի վիճակն անտանելի կդառնա: Մնացած երկու առաջարկներն ընդունվեցին, մանավանդ որ Մալաման Ֆլեյշերին հանձնարարել էր հայերի ներկայացուցիչներին հայտնել, որ եթե կողմերը զլանան հաշտություն գլուխ բերել, ապա ինքն ստիպված կլինի և՛ հայերին, և՛ Թուրքերին հանգրստացնել զենքի ուժով, կամ զորքն առնելով հեռանալ Գանձակից:

Մինչ կայարանի շուրջը կատաղի կռիվները չէին դադարում, քաղաքում հրդեհը լափում էր նորանոր շինություններ, իսկ Թուրքերը շարունակում էին անհաջող հարձակումները հայկական քաղաքամասի վրա: Զորքը առաջվա պես «չեզոք» էր և դեպքից դեպք էր միջամտում իրադարձություններին:

Թիֆլիսի քաղաքային դումայի կողմից Գանձակ եկած ներկայացուցիչներ Կյոքչաևը, Զրելաևը և Խատիսյանը նոյեմբերի 21-ի երեկոյան Թիֆլիս ուղարկած հեռագրում նշում էին. «...Կողոպտողների և մարդասպանների վրա գնդակ չէին արձակում (զինվորները: - Հ.Ս.), և դա խրախուսում է նրանց (Թուրք ջարդարարներին: - Հ.Ս.)»[1]:

Նոյեմբերի 22-ին, Գանձակի Թուրքերի հրավեր -խնդրանքով, 500 ձիավորից բաղկացած իր հրոսակախմբով քաղաք էր մտել հայտնի ավազակապետ Դալի-Ալին[2]: Իշխանությունները աչք էին փակել, հույս ունենալով, որ ավազակախմբի գալով առաջին հերթին կբազմապատկվեն Թուրքերի «բարոյական» ուժերը: Այդպես էլ եղավ՝ նրանք մեծ ոգևորությամբ պատրաստվեցին

[1] **«Մշակ»**, N 233, 23 նոյեմբերի 1905թ.:
[2] **«Դրոշակ»**, N 2(168), փետրվար, 1906, էջ 27:

իրենց քաղաքամասից ճակատային ուժգին հարձակում գործել հայկական մասի վրա:

Երեկոյան ժամը 9-ին Թուրքական քաղաքամասի Բաղմանլար Թաղից սկսվեց ուժգին հրացանաձգություն, որը գնալով ավելի ու ավելի զանգվածային դարձավ: Հայերն անմիջապես հակադարձեցին է՛լ ավելի ուժգին համազարկերով: Սոսկալի հրացանաձգության պահին Թուրքերը փորձեցին անցնել գետը: Իրոք, նրանցից մի քանի տասնյակ մարդու հաջողվեց գետն անցնելով մտնել հայերի այգիները և հրդեհել մի դեզ:

Այս մի հրդեհը բավական էր հայկական մասում իրարանցում առաջ բերելու համար, նրանք սարսափով կարծում էին, թե գետն անցել են հազարավոր Թուրքեր և ուր որ է գրոհի կանցնեն: Բայց գետն անցել էր ընդամենը 50-60 հոգի:

Հայերի համար հոգեբանական այդ ծանր պահին հրապարակ եկավ Համբո անունով հաղթանդամ ու ամեհի ուժի տեր մի մարդ, որը մի քանի կտրիճ տղաներով անցավ գետը և մտավ Բաղմանլար: Թե ինչ տեղի ունեցավ, այդ իրենք գիտեն, իսկ մենք գիտենք միայն, որ Համբոն իր փոքրաթիվ խմբով ընդամենը երկու ժամում տակնուվրա արեց Թուրքական թաղը՝ փախուստի մատնելով ոչ միայն զինված հրոսակներին, այլև թաղի ողջ բնակչությանը: Գիշերվա ժամը 3-ին Բաղմանլարում այլևս շունչ չկար[1]:

Այդ զարմանահրաշ գործողության ժամանակ Համբոյի տղաներից զոհվեց 5-ը, իսկ Թուրքերից միայն սպանվածների թիվն անցնում էր 80-ից:

Գանձակի նոր նահանգապետ նշանակված, բնավորությամբ բարի Ֆլեյշերի առաջին գործողությունները հայերին հույս էին ներշնչել, թե նա նահանգը կառավարելու է անկողմնակալ արդարության սկզբունքով: Բայց շատ քիչ ժամանակ անցավ, որպեսզի սրանք համոզվեն, որ նա նույնպես երկրի բյուրոկրատական սիստեմի հավատարիմ ներկայացուցիչ է: Նոր նահանգապետը անպատիժ թողեց Թուրք ավազակապետերին ու հանցագործ պաշտոնյաներին: Նույնիսկ մարդասպան-ոստիկանապետ Հասանբեկովը մնաց իր պաշտոնում: Այդպես էլ պետք է լիներ. գեներալը չէր կարող չկատարել հրահանգները, որ գալիս էին վերևից:

Վերջապես գեներալ Մալամայի միջնորդությամբ, նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ հանդիսավոր հաշտություն: Լռեցին համազարկերը, մարդիկ աստիճանաբար դուրս եկան փողոց, սկսվեց երթևեկությունը երկու քաղաքամասերի միջև:

Զսպասելով հայոց առաջնորդարանին ներկայացրած պահանջների կատարման մասին նահանգապետի զեկուցմանը՝ նոյեմբերի 26-ի երեկոյան Մալաման, չմտնելով կայարանից ներս, որտեղ տիրություն էր անում հայ մար-

[1] *Գանձակ քաղաքի Բաղմանլար Թաղի կռիվների և Համբոյի քաջագործությունների մասին տե՛ս «Իազմիկ» (Թիֆլիս), N 27, 21 հունվարի, N 31, 4 փետրվարի 1906թ.:*

տիկների խումբը՝ Թադևոս Ամիրյանի գլխավորությամբ, գնացքով Գանձակից մեկնեց Թիֆլիս: Գանձակի կայարանը հայերի ձեռքին մնաց մինչև նոյեմբերի 29-ը:

Շուրջ մեկ շաբաթ տևած՝ նոյեմբերի 18-ից մինչև 23-ը, ընդհարումները վերջ էին գտել, բայց քաղաքի հայ և թուրք բնակչությունն արդեն բաժանված էր երկու զինված բանակների՝ կանգնած դեմ-դիմաց: Նրանց միջև չկար ոչ մի վստահություն, և երկու կողմերը սպառազեն սպասում էին նոր անակնկալների: Քաղաքում զենքի տակ կար 4000 թուրք և 1500 հայ[1], որոնք ցանկացած պահի պատրաստ էին կրակ բացել միմյանց դեմ: Նույնիսկ հաշտությունից հետո թուրքերն այս ու այնտեղ դավադրաբար սպանում էին հայերի: Միայն նոյեմբերի 23-30-ը անկյունից արձակված գնդակներով քաղաքում զոհվեց 20-ից ավելի հայ: Ստիպված էին նույնպիսի գործողությունների դիմել նաև հայերը, որի հետևանքով թուրքերը, վերջապես, դադարեցրին դավադրաբար անկյունից կատարվող մարդասպանությունը:

Բոլորի համար պարզ էր, որ աղետը նահանգի կենտրոն Գանձակ քաղաքով չի վերջանալու, որ այն դառնալու է փոթորկալից մի արհավիրք և ստեղծելու է մի այնպիսի դժոխք, որը գուցե գերազանցի մինչ այդ եղածները: Ուստի պատահական չէ, որ մեծ հուզում էին ապրում նահանգից դուրս գտնվող գանձակցիները, որոնցից շատերը շտապում էին հայրենի ծննդավայր:

Անդրկովկասի տարբեր վայրերում ծառայող կամ պահեստի գանձակեցի հայ զինվորները բազմաթիվ դիմումներ էին հղում Պետերբուրգ՝ ռազմական մինիստրությանը, Թիֆլիս՝ փոխարքային, Էջմիածին՝ ամենայն հայոց կաթողիկոսին և ուրիշների՝ խնդրելով ժամանակավորապես իրենց ազատ արձակել ծառայությունից, որպեսզի կարողանան մեկնել Գանձակ՝ իրենց աղետյալ ընտանիքներին օգնելու համար:

Նոյեմբերի 21-ին կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հետևյալ հեռագիրն էր ստացել.

«...Գանձակի նահանգի այն հայ զինվորները, որոնք վերջացրել են իրենց ծառայության ժամկետը, խնդրում են Ձերդ Սրբությունից Ձեր հեղինակավոր գործակցությունը՝ կատար ածելու մեր որոշումները: Իսկ զինվորները խնդրում են ազատել իրենց և կազմել առանձին վաշտ իրենց սպաների ղեկավարությամբ և ուղարկել Գանձակի գավառը՝ կարգը վերհաստատելու համար»[2]:

[1] «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 27:
[2] «Մշակ», N 233, 23 նոյեմբերի 1905թ.:

*
* *

Գանձակ քաղաքի կոտորածը և ավերը ալիքանման անցան գյուղերը: Նահանգի 8 գավառներից միայն Նուխու գավառը խուսափեց զանգվածային ընդհարումներից, մնացած 7-ը սրածության, կրակի և կողոպուտի ասպարեզ դարձան:

Հայության այն մասը, որն ապրում էր նահանգի լեռնային շրջաններում, ուներ փոքրիշատե սեփական ուժ և ապահովություն, թեև, իհարկե, անբավարար: Այդ տեղերում հայ բնակչությունն ապրում էր համեմատաբար համախումբ և ուներ դիրքեր, որոնք դժվարացնում էին թուրքերի հարձակողական շարժումները:

Բայց էական դիմադրություն ցույց տալու համար բազմամարդությունը և դիրքերը բավական չէին, եթե չլինեին անհրաժեշտ պաշտպանական միջոցներ: Իսկ պաշտպանական միջոցները քիչ էին գյուղացիների ձեռքում:

Այն տեղերում, հիմնականում հարթավայրերում, ուր հայ բնակչությունը սակավաթիվ էր ու պաշտպանության համար չուներ բնական հաջող դիրքեր, և ուր շրջապատված էր հոծ թուրքական գյուղերով ու գյուղախմբերով, այնտեղ վտանգ կար, որ ամբողջ գյուղեր կդառնան ավերակներ, իսկ բնակչությունը գլխովին սրի կքաշվի:

Երբ Թիֆլիսի հայ գործիչները համառորեն պնդում էին, թե Գանձակի նահանգի թուրքերը լուրջ պատրաստություններ են տեսնում հարձակվելու հայերի վրա, ամեն անգամ փոխարքայի պալատից ասում էին, թե չափազանցվում է իրերի դրությունը: Երբ հայ գյուղացիների ներկայացուցիչները նահանգի զանազան կողմերից գալով Թիֆլիս, հաղորդում էին թուրքերի կասկածելի արարքներից ամբողջ փաստեր, իշխանություններից միայն մի պատասխան էին ստանում. «Հարկավոր միջոցներ ձեռք են առնված հուզումները խեղդելու համար, ամեն տեղ բավականաչափ զորք կա, վարչական անձերին տրված են անհրաժեշտ հրամաններ: Հանգիստ եղեք»: Այդ առթիվ «Մշակը» գրում էր.

«Մենք այնքան սովոր ենք նման պատասխանի, այնքան շատ ենք լսել [այդպիսի խոսքեր], որ վաղուց ոչ մի նշանակություն չենք տալիս դրանց: Մեզ միայն մի բան է զարմացնում. այն, ինչը օրը ցերեկով լույսի նման պարզ և ակնհայտ է բոլոր հայերի համար, ինչո՞ւ հայտնի չի լինում վարչական անձերին: Սա է սոսկալին, սա է անտանելի»[1]:

Քաղաքից հետո ջարդերն ամենից առաջ տարածվեցին **Գանձակի գավառում**, որն ընկած էր նահանգի հյուսիսային կողմում և բնակիչների թվով ու տարածությամբ ամենամեծն էր նահանգի մյուս գավառների մեջ: Գավառում,

[1] Տե՛ս **"Кавказский календарь на 1905 год"**, III отд., էջ 48-49, նաև՝ «Մշակ», N 238, 23 դեկտեմբերի 1905թ.:

չհաշված Գանձակ քաղաքը, ապրում էր 125 հազար մարդ, որից Թուրքեր՝ 88 հազար, հայեր՝ 28 հազար, ուրիշ ազգեր՝ 9 հազար: Գավառում կար 171 գյուղ, որոնցից հայաբնակ էր 38-ը[1]:

Շամխոր գետի ընթացքով ընկած էր հայկական չորս գյուղ՝ Բարումը, Բարսումը, Գուլամբիրը և Նուզգերը, որից հետո գալիս էր Նույն գետի ստորին հոսանքի հովտում ընկած գերմանական Անենֆելդ գաղութը: Վերոհիշյալ չորս գյուղերի հայերը կարողացան զենքով պաշտպանվել Թուրք խուժանի հարձակումներից, բայց այլ կերպ դասավորվեց գերմանական Անենֆելդ գաղութում ապրող հայերի ճակատագիրը:

Նոյեմբերի 18-ին Գանձակից եկող գնացքը կանգ առավ Դալլար կայարանում: Գնացքից իջան Դալլարի Թուրք բեկերից մի քանիսը և մի քանի գանձակեցի Թուրք, որոնք կայարանում եղածներին պատմեցին քաղաքում տեղի ունեցող Թուրք-հայկական ընդհարումների մասին: Թուրք ամբոխը գրգռվեց: Դալլար կայարանում բնակվող մի քանի տասնյակ հայ խանութպանները, որոնց ձեռքին էր տեղի ամբողջ առևտուրը, անմիջապես փակեցին խանութները և փախան գերմանաբնակ Անենֆելդ գաղութը, որը գտնվում էր Դալլարից երեք վերստ հեռավորության վրա: Այս գյուղի բոլոր խանութպանները նույնպես հայեր էին: Գանձակ քաղաքում տեղի ունեցած կոտորածի լուրը սարսափի մեջ ձգեց նաև այստեղի բոլոր հայ բնակիչներին:

Քառորդ ժամ չանցած՝ Դալլար և Մորոլ գյուղերի Թուրքերը լցվեցին Անենֆելդի փողոցները, կացիններով, բահերով, քլունգներով ջարդեցին բոլոր խանութները, կողոպտեցին ապրանքները և, դրանք իրար ձեռքից խլելով, բարձեցին սայլերի վրա ու տարան: Թուրքերի բղավոցները, կացինների հարվածները և հրացանների ձայները ականջ էին խլացնում, իսկ այդ պահին հայերն իրենց ընտանիքներով փակվել-պատսպարվել էին գերմանացիների անասնագոմերում:

Այդ բոլորին ներկա էր Թուրք պրիստավ Իսմայիլ բեկ Հաջիբեկովը՝ իր զինված մարդկանցով:

Լուսացավ, և սարսափահար, պապանձված ու կիսամեռ ժողովուրդը դուրս եկավ թաքնված տեղերից: Առավոտյան ժամը 9-ին պրիստավ Հաջիբեկովն իր խմբով և 20 կազակներով եկավ Անենֆելդ ու գյուղապետի հետ «այցելեց» կողոպտված խանութները: Նա իրեն այնպես էր պահում, կարծես թե կատարվածից ոչ մի տեղեկություն չունի: Հավաքելով հայերին՝ պրիստավը պատվիրեց. «Շտապ պատրաստվեցե՛ք, ձեզ պիտի տանեմ կայարան, իսկ այնտեղից ուր ուզում եք, կարող եք գնալ»: Երկու ֆուրգոնի մեջ տեղավորվելով՝ հայերն ուղևորվեցին դեպի կայարան, բայց պրիստավն իր անելիքը գիտեր: Ճանապարհի կեսից նա հրամայեց հետ դառնալ, քանի որ, իբր, դիմացից գալիս է կատաղած Թուրք ամբոխը: Թողնելով ֆուրգոնները՝ հայերը սարսափահար

[1] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 324:

հետ փախան Անենֆելդ՝ այնտեղ թաքնվելու և գազանացած ամբոխի ձեռքից ազատվելու համար: Ծրվելով փողոցներում նրանք սկսեցին թաքնվելու տեղ որոնել: Գերմանացիները հայերին արգելեցին մտնել իրենց բակերը, ուստի վերջիններիս մեծ մասը հավաքվեց մի լքված բակում, և հենց այստեղ Թուրք ամբոխը վրա տվեց ու թալանի մատնեց նրանց. կանանց վրայից քաշելով պոկեցին զարդեղենները, բոլորից հանել տվեցին հագուստները: Այդ բոլորը նույնպես կատարվում էր պրիստավի և զորքի աչքերի առաջ:

Ժամը 3-ին պրիստավ Հաջիբեկովը գերմանացի գյուղապետին հրամայեց հավաքել թաքնված հայերին՝ իբր նորից նրանց կայարան տանելու համար: Գերմանացիները հայերին վռնդեցին իրենց տներից: Դժբախտներն ահ ու դողով մի կերպ հասան Դալլար կայարան այն պահին, երբ շրջակա գյուղերից այնտեղ խուժած Թուրքերը սկսել էին հայերի կոտորածը: Նրանք ոչ միայն ականատես եղան այդ արհավիրքին, այլև ընկան սրի բերան[1]:

Մեծ ողբերգություն ծավալվեց Զեգամ երկաթուղային կայարանում և նրանից ոչ հեռու գտնվող Հին Զեգամ հայկական գյուղում: Զեգամ կայարանի ռուս պետը Անդրկովկասի երկաթուղու կառավարչին նոյեմբերի 18-ին ուղարկած զեկուցագրում հաղորդում էր.

«Հին Զեգամում Թուրքերը սրի անցկացրին բոլոր հայերին, իսկ երեկոյան կարելի էր տեսնել այդ գյուղի անպաշտպան հայերի այրվող բնակարանների ցոլքը:

... Հայերը և առհասարակ այդ շրջանի բոլոր բնակիչները կատարելապես անպաշտպան դրության մեջ են Թուրքերի վայրենի կամայականությունից, և մենք կարծում ենք, վաղուց արդեն ժամանակն է միջոցներ ձեռք առնել նրանց զսպելու համար: Զեգամ կայարանի երկաթուղին պաշտպանելու համար նոյեմբերի 19-ին կար ընդամենը 32 զինվոր, որը, ուշադրության առնելով այն հանգամանքը, որ շրջապատված ենք ֆանատիկոսների գյուղերով, չափազանց անբավարար է: Բավական չէ՞ արդյոք արյունը: Կարծեմ ժամանակն է հիշելու, որ բոլոր մարդիկ եղբայրներ են, և տալ անպաշտպան հայերին կամ պաշտպանություն, կամ երաշխավորություն անմիտ մարդկանց, անզուսպ ամբոխի վայրենի կամայականությունից...»[2]:

Բաքվից մինչև Թիֆլիս երկարող ամբողջ երկաթուղու գիծը գտնվում էր Թուրքերի ձեռքին: Այդ ավելի քան 18 ժամ տևող ճանապարհի ամբողջ գծի վրա մնացել էին Թիֆլիսի կայարանը՝ Երևանի համար, և Գանձակի կայարանը՝ Գանձակի ամբողջ նահանգի համար: Հայերը կարող էին օգտվել միայն այդ երկու կայարաններից, քանի որ 1905թ. մայիսից սկսած՝ վտանգվել էին թե՛ Եվլախի և թե՛ Աղստաֆայի կայարանները, և այդ ճանապարհներով անցնող բազմաթիվ հայեր անհայտանում էին կամ կոտորվում:

[1] «Մշակ», N 235, 29 նոյեմբերի 1905թ.:
[2] Նույն տեղում, N 233, 23 նոյեմբերի 1905թ.:

Օրինակ՝ երբ Փոյլի կայարան ժամանեց գնացքը, զինված թուրքերը մտան վագոնները՝ հայ որոնելու: Եվ գտան ... մի խեղճ պատանու, որին խլեցին լեղապատառ մոր գրկից, դուրս քաշեցին պլատֆորմ և ռուս ժանդարմների, ստրաժնիկների, զինվորների, սպաների և ապշած հասարակության առջև մորթեցին թշվառին, միմիայն այն պատճառով, որ նա հայ էր[1]:

Անպաշտպան հայերի կոտորածը սոսկալի ձևեր ընդունեց Գանձակ քաղաքից դեպի հյուսիս ընկած տափարակի վրա, որտեղ գտնվում էին գերմանացի Ֆրիդրիխ (Ֆրից) Ֆորերի, ռուս իշխան Գորչակովի, հայ մեծահարուստ Ղորղանյանի, բազմամիլիոնատեր հայ Նավթարդյունաբերող Առաֆելովի (Առաֆելյան) կալվածքները: Սրանցից ամեն մեկի մերձքաղաքային այգիներում բանում էին հարյուրավոր խեղճ ու կրակ հայ մշակներ՝ ենթարկվելով անմարդկային շահագործման:

Արյունալի մեծ դրամա ծավալվեց հատկապես Ֆորերի կալվածքում: Այս գինեգործ կապիտալիստն իր որդիներով ապրում էր քաղաքից 7 վերստի վրա գտնվող գերմանական Ելենենդորֆ գաղութում: Նա ոչ միայն Գանձակի գավառի, այլև նահանգի ամենահարուստ մարդկանցից մեկն էր՝ օժտված կապիտալիստի բոլոր գիշատիչ հատկություններով: Սրա մոտ աշխատում էր 1000-ից ավելի բանվոր՝ հիմնականում շրջակա հայ գյուղերից, որոնք ձախորդ հանգամանքների պատճառով զրկված լինելով սեփական տնտեսությունից, ստիպված էին օրավարձով ապրեցնել իրենց բազմանդամ ընտանիքը: Նրանցից շատերը Ֆորերի մոտ բատրակություն էին անում 20-30 տարի:

Լավ իմանալով, որ Ֆորերի «Ղարաեր» վիթխարի այգում հատկապես այդ օրը մեծաթիվ հայ մշակներ կան՝ 60 տարեկան ծերունիներից մինչև 13-14 տարեկան պատանիներ, թուրքերը բազմամարդ խմբերով պաշարում են այն: Միաժամանակ նրանք մարդ են ուղարկում կալվածքի կառավարչի՝ Ֆորերի ավագ որդու մոտ և նրանից պահանջում 1000 ռուբլի՝ իբրև հայերի կյանքի համար փրկանք, խոստանալով այն ստանալուց հետո, առանց որևէ միջադեպի, հեռանալ: Սակայն հազարավոր մշակների կաթիլ-կաթիլ քրտինքով դիզած հարստությամբ գիրացած կառավարիչը, անգամ այդ կրիտիկական րոպեին, չի մտաբերում, որ ինքը մարդ է: Նա մերժում է Ֆորերների ընտանիքի համար այդ չնչին գումարը տալ ընչաքաղց ավազակներին և հազարավոր զինված թուրքերի ճանկերում գտնվող, արյունը երակներում ցամաքած, հույսն ամեն տեղից կտրած ու փրկությունը միայն իրենց տիրոջից սպասող դժբախտներին թողնում է գազազած թուրքերի հոշոտմանը[2]: Ու սկսվում է տասնյակ ընտանիքների միակ հույսը հանդիսացող, նրանց օրվա հացը հայթայթողների դժոխային դրաման:

Թուրքերն առաջին հերթին խուժում են այգում գտնվող մատուռակի գործարանը, գլխովին կոտորում այնտեղ գտնվող բոլոր հայ բանվորներին և դիակների վրայից հանում արյունոտված հագուստները: Այնուհետև, մտնելով այգիները, հարձակվում են անզեն ու անպաշտպան գյուղացի մշակների վրա և անխնա սպանում նրանց:

Այդ ամենը տեղի էր ունենում «կուլտուրական» եվրոպացու աչքերի առաջ: Նա քար սառնասրտությամբ դիտում էր նաև մի ուրիշ սոսկալի տեսարան: Նրա մոտով թուրքերը քարշ էին տալիս 12-14 տարեկան երկու հայ երեխաների, որոնք իրենց հայրերի հետ եկել էին գյուղից և 20 կոպեկ օրավարձով ցախ էին հավաքում այգուց: Պատանիները լալահառաչ, արտասվախառն աղերսով դիմում են իրենց «կուլտուրտրեգեր*» տիրոջը և աղաչում փրկել գազանների ձեռքից, բայց՝ զուր: Ֆորերի պատասխանն է լինում. «Գնացե՛ք, գնացե՛ք նրանց հետ, ձեզ ոչինչ չեն անի»: Թուրքերը երեխաներին տանում են, հավանաբար, սպանելուց առաջ քստմնելի արարքի ենթարկելու, բայց քանի որ դժբախտները համառում են, մարդասպանները «կուլտուրտրեգերի» աչքի առաջ նրանց մորթում են դաշույններով[1]:

Նշենք նաև, որ Ֆորերի պահեստներում կային բավական թվով հրացաններ ու փամփուշտներ, որ նա ստացել էր իշխանությունից՝ այգու պաշտպանության համար: Վերահաս մահվան սպասող հայերը, որոնց թվում քիչ չէին կտրիճ տղաներ, գերմանացուն խնդրում, աղաչում են, որ նա հրացանները տա ինքնապաշտպանության համար, բայց վերջինս սառնասրտորեն մերժում է նրանց աղերսանքը և անտարբեր հանդիսատես է դառնում տարիներ շարունակ իր կալվածքում քրտինք թափած մշակների կոտորածին:

Ֆրից Ֆորերի այգու մշակներից փրկվում է մի քանի տասնյակ միայն, այն էլ բանվորներից մեկի՝ չողառեցի հայ կտրիճի շնորհիվ, որը զենք է ունենում: Մտնելով դիրքի մեջ, նա հրացանազարկ է անում թուրքերից մի քանիսին, իսկ մյուսները փախուստի են դիմում: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծում, որպեսզի կենդանի մնացած մշակները թաքնվեն մոտակա եղեգնուտում և փրկվեն:

Մեծահարուստ Գորչակովի, կալվածատերեր Ղորղանյանի և Առաֆելյանի այգիներում աշխատող մի քանի տասնյակ հայ մշակները նույնպես հրացանազարկ են լինում հարձակվող մարդասպանների կողմից: Թուրքերը ձեռք չեն տալիս ռուս իշխանի ունեցվածքին, բայց քանդում և ավերում են երկու հայ կալվածատերերի այգիներն ու շինությունները: Հատկապես տուժում է Ղորղանյանի կալվածքը: Ելուզակները կրակի են մատնում նրա հոյակապ առանձնատունը՝ այնտեղից նախապես դուրս բերելով ու տանելով դաշնամուրները, գորգերը, արտասահմանյան կահկարասին: «Մշակը» գրում էր.

[1] Տե՛ս «Մուրճ», N11-12, նոյեմբեր - դեկտեմբեր, 1905, էջ 260:
[2] «Մշակ», N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

* Կուլտուրտրեգեր – մշակույթ կրող:
[1] «Մշակ», N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

«Թույլ ենք տալիս մեզ ասելու, որ վիլայի տիրոջ հախն է. պատիվ է բերում նրանց, որ Զազալուի տափարակում ձեռք է բերել հող և սկսել կուլտուրական գործ, այգեպանություն մեծ ծավալով: Բայց ի՞նչ «դալաթ» էր անում Զազալուի տափարակում հարյուր հազարանոց վիլյան. անհամեմատ ավելի մեծ գործ չէի՞ն լինի արած Ղորղանյանի պես պարոնները, եթե հարյուր հազարներ տային բնաջնջման դատապարտված հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին, եթե մեր արյունարբու թշնամիների առջև անահ ու աներկյուղ կանգնած, նրանց դեմ հերոսաբար կռվող հայ կտրիճների համար գնեին հրացաններ և փամփուշտներ ... եթե Ղորղանյանի այգու վիլայում դաշնամուրների ու հարյուրներ արժեցող գորգերի փոխարեն կազմ ու պատրաստ լինեին ինքնապաշտպանության մի քանի զինվորներ մոսինի հրացաններով, այն ժամանակ նրա այգին կփրկվեր, կփրկվեին նաև թանկագին շատ կյանքեր»[1]:

Ուժգին ընդհարումներ եղան Արթոնաջուր (Ղուշղարա) գետի և նրա ճյուղավորումների վրա ընկած, թուրք բազմաթիվ գյուղերով շրջապատված Քարհատ, Ներքին Քարհատ, Բանանց, Խաչակապ, Կիրանց, Փիր և Զովդար գյուղերի շրջանում: Թուրքերի նպատակն էր զանգվածային հարձակումներով կոտորել ու տեղահան անել այդ գյուղի բնակիչներին: Փակվեցին դեպի հայ գյուղերը տանող ճանապարհները, կտրվեցին հաղորդակցության բոլոր ուղիները: Երկար դիմադրությունից հետո, տեսնելով, որ ուրիշ տեղից օգնության հույս չկա, հայկական այդ գյուղերի բնակիչները որոշեցին սեփական ուժերով ճեղքել և դուրս գալ շրջափակման օղակից: Բռունցք կազմելով՝ նրանք անցան հարձակման ու կատաղի կռվում փախուստի մատնեցին թալանի և սպանության ծարավ հրոսակներին:

Մասսայական ընդհարումներից կարողացան խուսափել Գանձակ գետի վերին հոսանքի և նրա ճյուղերի վրա ընկած Ոսկանապատ, Միզրիկ, Մուրութ և Բարաջուր հայկական գյուղերը: Թուրքերը չէին համարձակվում հարձակվել այդ չորս գյուղերի վրա, քանի որ տեղյակ էին, որ դրանց բնակիչները լավ զինված են:

Դրան հակառակ, ուժգին ընդհարումներ եղան Ղարաչայ գետի հովտում ընկած հայ գյուղերի շրջանում: Ավազակախմբերը հատկապես կատաղի հարձակումներ կատարեցին հայկական Աղջաղա գյուղի վրա, բայց ամեն անգամ հետ էին շպրտվում իրենց համար մեծ կորուստներով:

Մռավ և Քափազ սարերից սկիզբ առնող Քյուչուկ-չայի ստորին հովտում ընկած էին հայկական երեք գյուղեր՝ Ղարադաղլուն, Խոյլարը և Սարովը, որոնք, շրջապատված լինելով տասնյակ թուրք գյուղերով, կտրված էին հայկական մյուս գյուղերից: Հազարավոր խուժանը զանգվածային հարձակումներով կարողացավ գրավել և թալանի մատնել նշված երեք գյուղերը, որի բնակիչները հեռացան Գետաշեն և Գանձակ:

Այնուհետև թուրքերն իրենց հայացքն հառեցին Քյուչուկչայի վերին հոսանքում գտնվող 6-7 հազար բնակիչ ունեցող Գետաշեն, ապա՝ Նորաշեն, Բուզլուխ, Մանաշեթ և Էրքեջ հայ գյուղերի վրա:

Բայց եթե գետի ստորին հոսանքի նշված երեք հայ գյուղերը ենթարկվեցին թալանի ու տեղահանության, ապա վերին հոսանքի գյուղերի շրջանում թուրքերը փշրեցին իրենց ատամները:

Այդ գյուղերի բնակիչները որոշեցին չսպասել թշնամու հարձակմանը և իրենք նախահարձակ եղան: Գետաշենի և հարևան գյուղերի զինված ջոկատները հարձակման անցնելով՝ գրավեցին և ավերեցին շրջանի ամենաավազակաբարո Զայլիլարը, ապա նաև՝ Դարդարանը, Սարբսուն, Դոզիլարը և ուրիշ թուրք գյուղեր:

Նոյեմբերի 19-ին հազարավոր հրոսակներ հարձակումներ սկսեցին Գանձակից 35 վերստ հեռավորության վրա դեպի հարավ-արևմուտք ընկած Զարդախլու մեծ ու շեն, հպարտ ու խիզախ գյուղի վրա, բայց ջախջախվելով՝ թոզեցին ու հեռացան:

Չկարողանալով չափվել Զարդախլուի հետ՝ հրոսակախմբերը շրջվեցին և ուղղվեցին դեպի 15 վերստ հեռավորության վրա գտնվող հայաբնակ գյուղախմբերից անջատ գտնվող, հարուստ ու բարգավաճ Բաղաքենդ (Բաղա) գյուղը և պաշարեցին այն:

Բաղայից դեպի ամենամոտիկ հայաբնակ վայրը 14-15 վերստի վրա գտնվող երկաթուղու Զեգամ կայարանն էր, իսկ ամենամոտ գյուղը՝ Ելիզավետպոլի գավառի Զարդախլուն, որ Բաղայից հեռու էր 20 վերստ[1]:

Բաղան պատկանում էր թուրք կալվածատեր Ալլահեար բեկ Զուլղադարովին:

Մինքենդի և Շուշիի դեպքերից հետո բաղացիները, տագնապահար, երերում էին հուսո և հուսահատության միջև: Ամեն օր նրանք սպասում էին թուրքերի հարձակմանը:

Գյուղը, տարաբախտաբար, պատրաստ չէր պաշտպանության: Հայ ազգային հեղափոխական կուսակցություններից որևէ մեկը այնտեղ անդամներ չուներ, նաև չկար գոնե մի զորեղ անձ, որը կարողանար կազմակերպել համայնքը և պատրաստել ինքնապաշտպանության: Բաղացիք անկարող էին դրսից ձեռք բերել զենք ու զինամթերք, քանի որ, ինչպես ասվեց, գյուղը մեկուսացված էր գավառի մյուս գյուղախմբերից: Շրջակայքի թուրք բնակչությունը խիստ աչալրջությամբ վերահսկում էր, որ դրսից զենք չմտնի Բաղա: Գյուղում միայն մի քանի որսորդական հրացան կար:

---

[1] **«Մշակ»**, N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

[1] Տե՛ս **Քաջբերունի**, Բաղա գյուղի ավերումը, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, 1910, էջ 15:

Երիտասարդները պահանջում էին՝ ինչ կերպ ուզում է լինի՝ զինվել ու պատրաստ լինել ինքնապաշտպանության, իսկ տարիքավորները ավելորդ էին համարում նրանց անհանգստությունը, վկայակոչելով Ալլահեար բեկի խոսքերը, որը գյուղամիջում հավաքված շինականներին ասել էր. «Բաղան իմն է, Բաղան ձեռքիցս չեմ գցի, բաղացիներն իմ հարազատներն են, ոչ մի օտար մարդ չի կարող մոտենալ նրանց»[1]:

Բայց այդ խոսքերն ավել էին բաղացիների զգոնությունը բթացնելու համար: Ալլահեար բեկ Զուլղադարովը և հարևան Ալիկու գյուղի կալվածատեր Բեռուզ աղա Կարաբեկովը մանրամասն մշակում էին Բաղայի հայերին կոտորելու դիվային ծրագիրը:

1905թ. նոյեմբերի 23-ի վաղ առավոտյան թուրքերը հրդեհեցին Բաղայի շրջակայքի բոլոր բինաները, ապա աստիճանաբար չորս կողմից մոտեցան գյուղին: Որսի հրացաններով զինված մի քանի գյուղացի փորձեցին բնակավայրի մատույցներում դիմադրել թշնամուն, բայց ստիպված նահանջեցին: Թուրքերը մտան Բաղա: Զունենալով զենք ու զինամթերք՝ բնակիչները դուրս էին եկել փողոցները և կռվում էին փայտերով ու կացիններով: Անհավասար գոտեմարտում Բաղան պարտվեց: Թուրքերն անցան իրենց սովորական գործին. տեղի ունեցան սարսափելի դեպքեր, քստմնելի չարագործություններ: Արյունարբուները բոլոր ձեռքն ընկածներին, մեծ թե փոքր, սրի քաշեցին: Ժողովուրդը ցրվեց անտառներում ու սարերում, բայց թուրքերը, հետապնդելով շատերին՝ որսում էին և տեղնուտեղը սպանում: Ճակատամարտում դատապարտվածները խուժանից գթություն չէին հայցում: Անպատիվ չդառնալու համար հայ կանայք ինքնասպան էին լինում:

Ահա թե ինչպես է նկարագրել այդպիսի տեսարաններից մեկը Ա-ԴՕ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)՝ թուրք-հայկական ընդհարումներին նվիրված իր հայտնի գրքում.

«Հովհաննես Մովսիսյանի կինը՝ 18 տարեկան Նինոն, և Սարգիս Պետրոսյանի կինը՝ 20 տարեկան գեղեցկուհի Խալլուն, որոնց հարազատներին կոտորելուց հետո թուրքերն ուզում էին նրանց առևանգել, մի հուսահատ ճիգով դուրս պրծնելով գազազած ամբոխի ձեռքից՝ ահագին քարափից ձորը նետվեցին՝ ազատելով իրենց պատիվը»[2]:

Բաղացիներից սպանվեց շուրջ 120 մարդ՝ ծեր թե մանուկ, տղամարդ թե կին: Թուրքերի ձեռքն ընկան լի շտեմարաններ և հացահատիկի անթիվ հորեր, իսկ նրանց կենդանի մնացած տերերը, սոված ու մերկ, փախան և ապաստան գտան դաշտային Ղարաբաղի հայկական գյուղերում:

[1] Քաջբերունի, Բաղա գյուղի ավերումը, էջ 14:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 347-348:

Այդ օրերին ծանր ողբերգություն ապրեց Զարդախլուից 25 վերստ հարավ ընկած Գետաբեկը[1]: Այստեղ «Սիմենս և Հալսկե» ընկերության հանքերն էին և մետաղ զտող գործարանները, որոնցում աշխատում էր ավելի քան 2000 բանվոր: Սրանց մեծ մասը թուրքեր էին, հիմնականում պարսկահպատակներ, հայերը մոտ 500 հոգի էին, կային նաև հույներ և ուրիշ ազգերի բանվորներ: Հայ բանվորների զգալի մասը հանքերին մոտ գտնվող Ղազախ փոքր գյուղից էր:

Նոյեմբերի 19-ին խուժանը միաժամանակ օղակեց Գետաբեկը և Ղազախ գյուղը: Երկու տեղում էլ հայերը մի ամբողջ օր կատաղի դիմադրում էին, բայց ուժերն անհավասար էին: Թուրքերը մտան Գետաբեկ՝ իրենց հետ բերելով ահավոր սարսափներ:

Ամիսներ հետո Գետաբեկ գնացած Ա-ԴՕ-ն այսպես է նկարագրել կոտորածի պատկերը. «...Մի վանդալական չահատակությամբ ամբոխը խուժեց բազարի վրա: Նախ սկսվեց խանութների խորտակումն ու կողոպուտը, թալանը հասավ ծայրահեղ չափերի... Կողոպուտից հետո սկսվեց հրդեհը, որի ժամանակ ամբոխը հարձակվում էր տների վրա, թաքնված տեղերից դուրս էր քաշում տղամարդ, կին, երեխա և կենդանի-կենդանի նետում կրակի մեջ: Հրե բոցերում այրվողների տանջանքի աղաղակն ավելի էր սիրտ տալիս ու կատաղեցնում ամբոխին: Մարդակերպ գազանները հղի կանանց փորերը պատռում էին և երեխաներին հանելով՝ կրակը նետում: Մարդկանց նախքան սպանելը մաս-մաս կտրատում էին և այդպես մահացնում: Բարբարոսությունների ձևերը գերազանցեցին մեկը մյուսին: Մի քանի տասնյակ տղամարդ, կին, երեխա ընկան առանց գնդակի՝ սրով ու հրով. չարժեր նրանց համար փամփուշտներ փչացնել»[2]:

Հոշոտող բազմությունը մերկասրունք ցատկումներով խելահեղորեն պարում էր արյան լճակներում:

Բայց ողբերգության երկրորդ արարը դեռ առջևում էր: Կոտորածից դուրս պրծած մի քանի տասնյակ հայ դիմեց հանքերի գերմանացի կառավարչին՝ խնդրելով ապաստան տալ և փրկել: Նրանց երկու օրով տեղ տվին, բայց նոյեմբերի 25-ին ներկայացավ պրիստավ Մուսեիբ բեկ Ալիևը և կառավարչից պահանջեց հայերին հանձնել իրեն՝ «Զարդախլու տեղափոխելու համար»: Հայերը լաց ու կոծով գերմանացիներին խնդրեցին իրենց չհանձնել թուրքերի ձեռքը. բայց նրանք չունկնդրեցին աղաչանքներին և հայերին ստորաբար դուրս շպրտեցին ժամանակավոր կացարանից: Թուրքերը նրանց լցրին երեք ֆուրգոնների մեջ՝ «Զարդախլու տանելու համար»: Ֆուրգոնները նոր էին շարժվել տեղից, երբ ամբոխը պրիստավ Մուսեիբի տված նշանով գայլերի նման հարձակվեց դժբախտ քարավանի վրա: Թուրքերը դաշույններով,

[1] Տե՛ս «Մշակ», N 80, 16 ապրիլի 1906թ.:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 350:

սրերով, կացիններով սոսկալի տանջանքներով կոտորեցին տղամարդկանց, որից հետո գզվռտոցով սկսեցին իրար մեջ բաժանել գեղեցիկ կանանց ու աղջիկներին, որոնցից երկու օրիորդ բաժին ընկան Մուսերին: Մնացած կանայք արժանացան մորթված տղամարդկանց բախտին:

Հարց էր առաջանում. կարո՞ղ է հայը շարունակել բարի հարևանությունը մի տարրի հետ, որի գազանային բնազդներն ամեն րոպե պատրաստ էին բռնկվել այս կամ այն սադրիչի, բեկի կամ սեիդի քարոզով: Այդ հարցին պատասխանելով՝ «Մուրճ» հանդեսի խմբագիր Լևոն Սարգսյանը Գետաբեկի դեպքերի առիթով գրում էր. «Միամտություն կլիներ ակնկալել, թե սոցիալ-դեմոկրատների և ազատականների քարոզների ազդեցությամբ տեսանելի գալիքում տեղի կունենա քաղաքակրթական հեղաշրջում թուրք հետամնաց զանգվածների մեջ»: Հետևապես մնում է մի միջոց. մշտապես պատրաստ լինել հակահարվածի: «Այդ ավազակներից պետք է պաշտպանվել այնպես, ինչպես պաշտպանվում ենք արյունարբու գազաններից՝ առանց դոնկիխոտական ճառերի: Եվ հավատացեք. գազաններն այնքան խելք ունեն, որ գիտեն իրենց կաշին հեռու պահել անվրեպ գնդակներից... Գայլի գլխին ավետարան կարդալն աննպատակ միջոց է... Պետք է մեր քայլերը հարմարեցնենք մեր առջև ընկած ճանապարհին. գեղեցիկ է աստղազարդ երկինքը, բայց մենք ստիպված ենք նայել մեր ոտքերի տակ և քայլել խորդուբորդ ճանապարհով...»[1]:

Գետաբեկի հայերին սպանդի ենթարկելուց հետո թուրքերը ձեռնարկեցին հանքերին մերձակա Ղազախ գյուղի բնակչության բնաջնջումը: Նոյեմբերի 23-ին նրանք շրջապատեցին գյուղը, որի տղամարդիկ երկու օր հերոսական դիմադրությամբ հետ էին մղում մեկը մյուսին հաջորդած գրոհները: Բայց փամփուշտները վերջացան, և դրությունը կրիտիկական դարձավ: Որոշվեց թողնել գյուղը և անցնել ոչ հեռու գտնվող ռուս դուխոբորների Սլավյանկա գյուղը: Տղամարդիկ պաշտպանության տակ առան դեպի այդ գյուղը տանող ճանապարհը, որի շնորհիվ ժողովուրդը կարողացավ շրջապատումից դուրս գալ և փախչել: Դուխոբորները, սակայն, հրաժարվեցին ներս առնել հոգնած ու տանջված մարդկանց:

Որոշվեց շարունակել ճանապարհը և փախուստ տալ դեպի Զարդախլու: Այդ նպատակով նրանք դուխոբորներից խնդրեցին սայլեր՝ հիվանդներին, հոգնած ծերերին ու երեխաներին տեղափոխելու համար, բայց կրկին հետևեց մերժումը: Մահացու վտանգից սարսափահար, սոված ու թշվառ քարավանը վերջապես հասավ Զարդախլու:

Այսպիսով, Բաղա, Գետաբեկ և Ղազախ գյուղերի մազապուրծ հայությունը հավաքվեց Զարդախլու գյուղում: Բայց փախստականներն այստեղ էլ հանգիստ չառան: Նրանց գյուղերը կործանելուց հետո թուրքերն իրենց ուժերը

[1] «Մուրճ», N11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 263:

նետեցին Զարդախլուի վրա: Նոյեմբերի 25-ից մինչև 30-ը հայերը հետ մղեցին 10-ից ավելի զանգվածային հարձակում՝ մեծ կորուստներ պատճառելով խուժանին:

Զորքն ու ոստիկանությունը հանդիսատեսի դերում էին: «Ոչ ոք մեզ չուն. երկու վայրենիներ հոշոտում են միմյանց», - ասում էին ռուս պաշտոնյաները և ստացած դիմում-բողոքները նետում զամբյուղ:

Հայերը նորից դիմեցին սեփական ուժերին՝ ոճրագործներին պատժելու համար:

Գետաբեկի բարբարոսությունների մեջ հատկապես դիվային դեր էր կատարել Սոգյութլու գյուղի խուժանը, ուստի որոշվեց առաջին հերթին պատժել նրան:

Որոշ ժամանակ անց, վրեժխնդրությամբ լի հայերը, ծովացած զայրույթով երկաթե օղակի մեջ առան Սոգյութլուն: Ոճրագործ գյուղի տղամարդիկ, որ «հերոսաբար» կոտորում էին անզեն ու անմեղ մարդկանց, կրակի մեջ նետում կանանց ու երեխաներին, այժմ գլուխները կորցրած վազվզում էին այս ու այն կողմ ինչպես հենց նոր թակարդն ընկած առնետներ: Չկարողանալով դիմադրել հայերի փոթորկալի կրակին, թուրք տղամարդիկ, թողնելով մի քանի տասնյակ դիակներ և լքելով կանանց ու երեխաներին, գլխապատառ փախան: Հայերը կանանց, երեխաներին ու ծերերին ձեռք չտվեցին, բայց ավերեցին գյուղը և վերադարձան Զարդախլու:

Գանձակի նահանգի գավառներից ամենաարյունալի ընդհարումները 1905թ. նոյեմբերին տեղի ունեցան Նահանգի Գանձակ գավառում, բայց մյուս գավառները նույնպես, մեծ թե փոքր ծավալներով, եղան կատաղի ընդհարումների ասպարեզ:

Գանձակ քաղաքի դեպքերից հետո Ջիվանշիրի ամբողջ դաշտավայրը լցվեց թուրքերով, խաներով ու Շուշի քաղաքի մուսուլման բնակիչներով, որոնք տեղի գռեհիկ մուսուլման ամբոխին ուժգնորեն գրգռում էին հայերի դեմ: Այդ բեկերի թվում աչքի էր ընկնում հատկապես Բահաթը բեկ Կալաբեկովը, որի քարոզների նշանաբանն էր՝ «Ձեռք ընկած ոչ մի հայի չխնայել»:

Ջիվանշիրի թուրքերը հարձակումներ կատարեցին գավառի Վանք, Առաջաձոր, Կուսապատ, Թալիշ, Վերին Զայլու, Մարաղա և այլ գյուղերի վրա, բայց բոլոր հարձակումները վերջացան պարտությամբ: Կճողուտ հայկական գյուղը ենթարկվեց Ումուտդու և Իմարաթ երկու գյուղերի հրոսակների համատեղ հարձակմանը, բայց կարողացավ կազմակերպված դիմադրություն ցույց տալ և հետ մղել գրոհը: Կճողուտցիները, շրջակա գյուղերից օգնություն ստանալով, անցան հակահարձակման: Այդ հակահարձակումը և ինքնամոռացության մեջ թուրքերի օրինակով կատարած սպանություններն ու գործած ավերները բնավ հատուկ չէին խաղաղ հայ մարդկանց, բայց նրանց հարկադրել էր վայրենի կրքերի բորբոքման բարբարոս ժամանակը:

Խոսքը տանք Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին (Ա-Դ0).

«Մի քանի ժամ տևած դիմադրությունը Թուրքերին չփրկեց կոտորածից: Հայերը ներս խուժեցին այդ երկու գյուղերը՝ բարբարոսություններ գործելով:

Հայ խուժանը Ումուդտու գյուղում, ոչ պակաս Թուրք խուժանից, երևան հանեց չարագործության տեսակները, անխնա սպանելով աջ ու ձախ: Պատմում են, որ Թրքուհիներն այդտեղ հերոսության օրինակներ տվեցին: Նրանցից մեկը, տարիքով երիտասարդ, իր ամուսնուն սպանող Հայի ձեռքից խլեց սուրը և խրեց իր կուրծքը: Այդ երկու գյուղերի մեջ ընկան տասնյակներով մարդ ու կին, սակայն ավելի սոսկալի բան տեղի ունեցավ կոտորածից հետո:

Ականատեսի պատմելով՝ կոտորածից ազատվածները, որոնք չէին կարողացել երկար ճանապարհ գնալ, մնացել էին անտառի մեջ և ցրտից սառել: Այսպես, մի կին սառել էր երեխան գրկում, մի մարդ սառել էր կանգնած տեղը ծառից ամուր բռնած դրությամբ և այլն:

Մի տարվա սարսափների և ոճիրների դաստիարակությունը դուրս էր քշել մարդկանց կրծքի տակ պահված Թրթռուն սիրտը և նրանց ընդունակ դարձրել բարբարոսությունների: Ժամանակն այսպիսի բարքերի ընտելացրեց նաև խաղաղ աշխատանքի սովոր Հային»[1]:

Համեմատաբար քիչ կորուստներ կրեց Գանձակի նահանգի Արեշ գավառի հայությունը:

Արեշ գավառն ընկած էր Քուռ գետի ձախ ափին՝ արևելյան կողմից կազմելով Բաքվի նահանգի սահմանը:

Հայերի Թիվն Արեշի գավառում փոքր էր. 67 հազար բնակչից 14 հազարը հայեր էին, մնացածը՝ Թուրքեր: Գավառի 137 գյուղերից հայաբնակ էին 18-ը, որոնք գտնվում էին միմյանցից բավական հեռու՝ շրջապատված Թուրք գյուղերի հոծ բնակչությամբ: Չնայած հայերի համար այդ աննպաստ վիճակին, նրանց գյուղերից միայն 5-ը ենթարկվեցին հարձակումների և կորուստներ կրեցին: Դրանք էին՝ համեմատաբար քիչ բնակչություն ունեցող Մազրդան, Քյանդակը, Հավարիկը, Էրմենի բազարը, Նեմեթաբադը:

Ընդհարումները լայն ծավալ չստացան նաև Ղազախի գավառում, որն ընկած էր Գանձակի նահանգի հյուսիսարևմտյան ծայրում: Այն սահմանակից էր Երևանի և Թիֆլիսի նահանգներին, իսկ հարավարևելյան կողմից միանում էր Գանձակի գավառին:

Գավառի 112 հազար բնակչից 64 հազարը Թուրքեր էին, 44 հազարը՝ հայեր, 4 հազարը՝ ուրիշ ազգերի մարդիկ[2]:

Գավառը բաղկացած էր երկու գավառակից (գավառամաս)՝ բուն Ղազախից, որը մասամբ դաշտային էր, առավելաբար՝ լեռնային, և Շամշադինից, որն ամբողջովին լեռնային էր: Գավառի 131 գյուղերից 48-ը հայկական էին,

[1] Ա-ԴՕ, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 228:
[2] Տե՛ս "Кавказский календарь на 1905 год" , III отд., էջ 48-49:

որոնցից 30-ը գտնվում էր բուն Ղազախում Դիլիջան, Պողոս-Քիլիսա, Ջարխեջ (Շարխաչ), Իջևան, Աչաջուր, Ուզունթալա, Սևքար, Կոթի, Կողբ, Ղալաչա և այլն, իսկ 18-ը՝ Շամշադինում, որոնցից 14-ը զուտ հայկական՝ Հախում, Մոսես,Ներքին կարմիր աղբյուր, Բաշքենդ և այլն:

Այս 48 գյուղերից բացի, 200-ից ավելի հայ ընտանիքներ, հիմնականում առևտրականներ, բնակվում էին գավառային կենտրոն Ղազախ քաղաքում, իսկ մի քանի տասնյակ ընտանիքներ՝ Թոուզ, Թաթլի և Աղստաֆա կայարաններում:

Ղազախի գավառում ընդհարումները լայն ծավալ չստացան հիմնականում երկու պատճառով. 1) Հայերի Թիվը գավառում բավականին մեծ էր, 2) Նրանք, որ հիմնականում բնակվում էին գավառի լեռնային մասում, տոկուն էին ու խիզախ, որը մեծ երկյուղ էր ներշնչում խուժանին, 3) Թեև ոչ վճռորոշ, բայց որոշ նշանակություն ուներ այն, որ գավառապետն Առնոլդն էր՝ Կովկասում ռուսական ադմինիստրացիայի բացառիկ դեմքերից մեկը, եթե ոչ առաջինը, որը բացահայտորեն հանդես էր գալիս Թուրք-հայկական կոտորածների դեմ և իր անկողմնակալ գործողություններով ձեռք էր բերել գավառի հայ բնակչության մեծ հարգանքը: Նա, հակառակ կառավարության քաղաքականության, չէր թաքցնում իր համակրանքը հայության նկատմամբ և ամեն ինչ անում էր զսպելու գավառի Թուրքերի գազանաբարո կրքերը:

Դեռ հուլիսի կեսերին մի Թուրք ավազակի ապտակելու համար Առնոլդը կանգնել էր պաշտոնաթող լինելու վտանգի առաջ: Ղազախի մի խումբ Թուրքեր, օգտագործելով այդ դեպքը, համախոսական էին ներկայացրել փոխարքայի օգնականին՝ խնդրելով գավառից արտաքսել նրան:

Մի խումբ հայեր, որոնց, բարեբախտաբար, միացել էին նաև Թուրքեր, մեկնում են Թիֆլիս և օգոստոսի 1-ին ներկայանալով փոխարքայի օգնականին, պարզում են գավառապետի օգտակար ծառայությունը՝ խնդրելով նրան թողնել իր պաշտոնին: Նրանք ասում են, որ հակառակ պարագայում վտանգի կենթարկվի Ղազախի բնակչությունը, և անխուսափելի կդառնան ընդհարումները հայերի ու Թուրքերի միջև: Գավառապետ Առնոլդը մնում է իր պաշտոնում, պայմանով, որ նա «այլևս մարդ չծեծի»:

Ամբողջ Կովկասը քանդվում ու ավերվում էր, գյուղերը վառվում էին ծխրտալով, կրակե լեզուները լափում էին չինականների արյուն-քրտինքով շաղախված տարիների տքնության արդյունքը, բայց անպատիժ էին մնում բարձրաստիճան ոճրագործ պաշտոնյաները, իսկ ահա մի գավառապետ՝ փոքրիշատե արդար, կանգնում էր պաշտոնից հեռացվելու վտանգի առջև՝ մի ավազակի ապտակելու համար:

Նոյեմբերի սկզբներից Թուրքերը կողոպտեցին Թիֆլիս-Բաքու երկաթուղու՝ Ղազախի գավառով անցնող հատվածի Թոուզ, Թաթլի և Աղստաֆա կայարաններում բնակվող հայերի խանութներն ու արհեստանոցները, սպանեցին նրանցից մի քանիսին:

Գավառապետ Առնոլդը կողոպուտների և սպանությունների մեջ մեղադրեց հանցագործներից մի քանիսին: Դրան անմիջապես հաջորդեցին թուրքերի բողոքի բազմաթիվ հեռագրեր: Ռուս և թուրք խոշոր ու փոքր մեծավորների մի ամբողջ լեգեոն ամեն տեսակ արդար և անարդար միջոցներով աշխատում էր Ղազախից հեռացնել գավառապետին: Եվ այդ բանը նրանց հաջողվեց:

Նոյեմբերի 5-ին Ղազախի թուրք ղեկավարները, հավաքվելով ժողովի, կազմում են փոխարքա Վորոնցով-Դաշկովին ուղղված խնդրագիր՝ կրկին պահանջելով Առնոլդին ազատել զբաղեցրած պաշտոնից: Իմանալով այդ մասին՝ Ղազախի հայերն անում են հակաքայլ:

Նոյեմբերի 12-ին Ղազախի գավառից հայ, ռուս, նաև թուրք գյուղացիներից, վաճառականներից և մտավորական անձերից կազմված 50 հոգանոց մի պատգամավորություն ներկայացավ Վորոնցով-Դաշկովին՝ զեկուցելու իրենց գավառի կարիքների մասին, միաժամանակ խնդրելով, որ գավառապետ Առնոլդը մնա իր պաշտոնում:

Պատգամավորության անդամները հայտնեցին, որ Ղազախի գավառը տարիներ շարունակ եղել է ավազակության և ասպատակության մի սարսափելի բուն: Միայն վերջին տարիներին, երբ գավառապետի պաշտոնում Առնոլդն է, Ղազախի գավառը հանդարտ է:

Լսելով պատգամավորների պատճառաբանությունները՝ փոխարքան խոստացավ Առնոլդին թողնել իր պաշտոնում[1], բայց խոստումը չկատարեց:

Նոյեմբերի 18-ին Ղազախի թուրքերի կողմից Թիֆլիս գնացած պատվիրակությունը, ներկայանալով Վորոնցով-Դաշկովին, Առնոլդի հասցեին ամեն տեսակ զրպարտություններ կատարելով, կարողացավ փոխարքայի կարծիքը փոխել: Մի քանի օր հետո Ղազախի գավառապետը կանչվեց Թիֆլիս և պաշտոնանկ արվեց[2]:

Այդ արդարամիտ ու պարկեշտ մարդուն պաշտոնազուրկ անելու առթիվ «Մուրճի» խմբագիր Լևոն Սարգսյանը ցավով նշում էր, որ «Առնոլդներին պաշտոնից հեռացնող մի ադմինիստրացիա երբեք չի նպաստի արդարության վերականգնմանը ...»[3]:

Ամեն ինչից երևում էր, որ գավառը չպիտի կարողանա զերծ մնալ կռիվներից: Անհրաժեշտ էր ռազմապես կազմակերպել Ղազախ-Շամշադինի ամբողջ տարածքը՝ ի խնդիր պաշտպանության թե՛ ճանապարհների և թե՛ գյուղերի: Այս շրջանի պաշտպանությունը նույնպես, բնականաբար, պիտի ստանձներ հայության մեջ գործող գլխավոր մարտական ուժը՝ դաշնակցությունը:

Հաշվի առնելով իրադարձությունների հետագա զարգացման տենդենցը՝ Կովկասում Հ.Յ. դաշնակցության գերագույն մարմինը՝ արևելյան բյուրոն,

[1] **«Մշակ»**, N 227, 15 նոյեմբերի 1905թ.:
[2] Նույն տեղում, N 231, 19 նոյեմբերի 1905թ.:
[3] **«Մուրճ»**, N 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 17:

որոշում է ձեռնարկել գավառի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործը: Անհրաժեշտ էր հայկական բնակարաններն ամրացնել ռազմականորեն, ճիշտ օգտագործել բնական պայմանները, գյուղերից ներս պատրաստել արհեստական ամրություններ, զինել երիտասարդությանը, անպատասխան չթողնել թուրքերի ոչ մի հարձակում: Երբ հարց առաջացավ, թե ում վրա դնել գավառի հայերի ինքնապաշտպանության ղեկավարությունը, բյուրոն, իր անդամների միահամուռ կամքով, երաշխավորեց Սևքարեցի Սաքոյին (Սարգիս Ծովանյան):

Հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերից էր Սաքոն, որն իր թիկունքում ուներ տասնհինգ տարիների հեղափոխական ու մարտական անցյալ և հարուստ փորձառություն, բացի այդ, լինելով տեղացի, լավ ծանոթ էր գավառի, հատկապես դրա հայկական շրջանների տեղագրական պայմաններին, իր հայրենակիցների հոգեբանությանը, զենքի գործածության նրանց ունակություններին: Ոչ պակաս կարևոր էր այն, որ Սաքոն մեծ հարգանք ու սեր էր վայելում ոչ միայն կուսակցության շարքերում, այլև հայրենակիցների շրջանում:

Իր ժողովրդի ազատագրության դատին անմնացորդ նվիրված այս մեծ գործչին Միքայել Վարանդյանը բնութագրել է որպես արի ու հմայիչ մի մարդու, որի կյանքն ամբողջապես կազմված էր հերոսական դրվագներից ու անհաշիվ զրկանքներից: Պատմաբանը նրան այսպես է բնութագրել. «Ջնաշխարհիկ պարզություն մը՝ միացած ջինջ անձնուիրութեան և անսահման բարութեան հետ, որ կը դարձնեին այդ մարդը պաշտելու չափ սիրելի»: Ժողովրդի նվիրյալ զավակը «ցուցամոլութեան ետևէ չինկավ երբեք, այլ միշտ ղեկավարուեցավ պարտքի, խղճի թելադրանքով: Փառք չփնտրեց Սև Քարի մեծ զավակը – փառքն ինքը եկավ զայն շրջապատեց ժողովրդական միահամուռ սիրո և գուրգուրանքի մեջ: Միշտ բարի և վեհանձն՝ ընկերական հարաբերութեանց մեջ, միշտ զիջող, համբերատար, միշտ անտրտունջ սպասավոր կուսակցութեան ու գաղափարի, – այդ անես, գեղջկատիպ ռազմիկը **զանձ** մըն էր Հ.Յ. դաշնակցութեան համար, մեկը հազվագյուտ բյուրեղներեն մեր անփայլ իրականութեան մեջ... »[1]:

Սաքոն մեծ եռանդով անցավ իր պարտականությունների կատարմանը: Նշանակումը նրա առաջին ինքնուրույն գործն էր: Նա, որ ազատագրական պայքարի ամբողջ ընթացքում միշտ հրամաններ էր կատարել, այժմ առաջին անգամ հայտնվել էր հրամայողի դերում, այն էլ ռազմագիտական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող մի ընդարձակ շրջանում: Մանր պատասխանատվության տակ մտած Սաքոն փայլուն կատարեց իր կուսակցության հանձնարարականը:

[1] **Միքայել Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 274:

Շրջանի ընդհանուր հրամանատարի առաջին գործը եղավ մի զինվորական ուժեղ միավորի՝ հեծյալների խմբի ստեղծումը, որի մեջ ընդգրկվեցին մի քանի հարյուր զինված գյուղացիներ: Այնուհետև Սաքոն Թիֆլիս-Բաքու երկաթգծի Աղստաֆա կայարանից սկսվող և Դիլիջան-Սևանի վրայով մինչև Երևան երկարող խճուղու Ուզունթալա-Իջևան հատվածի ամբողջ երկարությամբ կարգում է զինված պահակախմբեր՝ կանխելու համար թուրքերի կողմից հայ ճամփորդների առևանգումը: Այդ խճուղին շրջանի հայ գյուղացիների համար հաղորդակցության շատ կարևոր ճանապարհ էր և, եթե ընկներ թշնամու հակակշռի տակ, պիտի խզվեր ամեն կապ խճուղու երկու կողմերին ցրված գյուղերի միջև: Վերջապես, իր նախաձեռնությամբ և գյուղական ներկայացուցիչների ու հայտնի մարդկանց մասնակցությամբ հրամանատարը մի խորհրդաժողով է հրավիրում, որի ավարտից հետո իր պատասխանատվությանը հանձնած շրջանի ողջ տարածքում նշանակում է երեք հատուկ լիազոր, որոնք վարելու էին պաշտպանության գործը՝ ընդհանուր հրամանատարի հրահանգների համեմատ: Շամշադինի պաշտպանության ղեկավար է նշանակվում սպա Լևոնը, Կողբ, Ղալաչա, Բարանա, Դվեղ գյուղերի լիազոր՝ Աղդամի նախկին պրիստավ Վանո բեկը, Կոթի գյուղի, Ղոչղոթանի, Բաղանիսի, Ճոճովանքի և Ոսկեբառի շրջանի լիազոր՝ Շամշադինի նախկին պրիստավ Մեսրոպ բեկը[1]:

Սաքոյի կարգադրությամբ հաշվառվում են վերոհիշյալ երեք շրջաններում եղած ձիերը, զենքերը, ռազմամթերքը, ինչպես նաև 1887 թվականից բոլոր պահեստի զինվորները*, 18-35 տարեկան ամրապինդ ու քաջ տղաները: Այս ամենը դրվում են երեք լիազորների հրամանի տակ: Շրջանի բոլոր ծառայողները, պետերը և բոլոր գործող անձինք նույնպես իրենց զենքերով ու ձիերով, Հ.Ց.Դ. ենթակոմիտեների հայեցողությամբ, մտնում են լիազորների տրամադրության տակ:

Պաշտպանության մտահոգիչ տեղը մնում էր ռազմամթերքի, հատկապես փամփուշտի ծայրերի սակավությունը: Կռիվների նախօրյակին ամեն մի հայ մարտիկի տրվել էր ընդամենը 30-50 փամփուշտ, բայց, չնայած դրան, նրանք կարողացան հաղթել թշնամուն, որը համրանքով ավելի բազմամարդ լինելուց բացի, նաև լավ զինված էր ու կարելիություններ ուներ փամփուշտի նորանոր պաշարներ ստանալու թե՛ դրսի յուրայիններից և թե՛ ռուս իշխանավորներից:

Նախապատրաստական աշխատանքներն ավարտվելու վրա էին, երբ նոյեմբերի 19-ին, այսինքն՝ գավառապետ Առնոլդին պաշտոնից հեռացնելու հաջորդ օրն իսկ, շրջակա գյուղերից թուրքերի մի ստվար բազմամբոխ հարձակում գործեց Ղազախ քաղաքի հայերի վրա: Եկած խուժանին միացան տեղի

* «Հայրենիք», N 8(402), օգոստոս, 1959, էջ 78:
Ինչպես արդեն ասվել է, 1887 թվականին, առաջին անգամ լինելով, ռուսահայ երիտասարդությունը կանչվել էր զինվորական ծառայության:

թուրքերը և, լիակատար ազատություն տալով իրենց թալանչիական ախորժակին, անասելի աղմուկ-աղաղակով սկսեցին հայերի տների, խանութների ու արհեստանոցների կողոպուտը: Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը գրել է. «Թափվել եկել էին բոլոր սեռերը և բոլոր հասակները: Կողոպտածը կրում էին մեջքի վրա, ձիերով ու սայլերով: Կողոպուտին մասնակցում էին մանուկները, նույնիսկ կանայք: Հայերի կողմից դիմադրության որևէ փորձ չեղավ, հրապարակը մնաց խուժանի ձեռքին»[1]: Կատարվեցին նաև սպանություններ: Թալանվելուց հետո խանութներն ու տները հրդեհվեցին:

Երբ գավառի կենտրոնում արդեն վերջացել էին կողոպուտները ու հրդեհումները, Գանձակ քաղաքից այդտեղ եկավ մի վաշտ, որի պաշտպանության տակ հայերը տեղափոխվեցին Թիֆլիս, Գանձակ ու մոտակա հայ գյուղերը:

Այնուհետև թուրքերը հարձակվեցին, կողոպտեցին ու ավերեցին հայաբնակ Կրգեն, Լալի գյուղ, Պիպիս, Սևքար և այլ՝ թվով 12 գյուղ:

Ղազախի գավառի հայկական ուժերի հրամանատար Սաքոն կտրուկ միջոցներ ձեռնարկեց թշնամու խժդժությունները զսպելու համար:

Դեկտեմբերի 4-ին հրամանատարը Շամշադինի գավառակը և վերևում նշված հայկական գյուղերի շրջանը հայտարարեց ռազմական դրության մեջ:

Տեսնելով իշխանությունների անտարբեր վերաբերմունքն ընդհարումների նկատմամբ՝ Սաքոն Ղազախի և Լոռի-Փամբակի հայերին դիմեց սեփական ուժերի վրա հենվելու կոչով: Բոլոր գյուղերում ստեղծվեցին ինքնապաշտպանական կամավորական ջոկատներ, ձեռք բերվեց զգալի քանակի զենք ու զինամթերք: Հրամանատարը կարգադրեց նախահարձակ չլինել, բայց թուրքերի ոչ մի հարձակում անպատասխան չթողնել, հակադարձել ջախջախիչ հակահարձակումներով: 1905թ. նոյեմբեր - 1906թ. փետրվար ժամանակահատվածում հայերն ավերեցին 23 թուրքական գյուղ, այդ թվում Ալիբեկլուն, Ջաֆարլին, Աղքիլիսան, Մազամլուն, Բաղանիս-Այրումը, Հաջալին և այլն:

Թուրքերը ոչ միայն շուտով դադարեցրին իրենց հարձակումները, այլև, զգալի կորուստներ տալով, հետ քաշվեցին կռվի ճակատներից՝ չդիմանալով հուժկու հարվածներին, որ նրանց հասցնում էին ղազախեցի ու շամշադինցի հայ մարտիկները:

Սաքոն իր մարտիկներին պատվիրել էր ձեռք չտալ կանանց, երեխաներին, ծերերին, գործ ունենալ միայն զենքը ձեռքին կռվողների հետ:

Այդ մարդասիրական վերաբերմունքն անհասկանալի էր թուրքերի համար, որոնք չէին խնայում իրենց ձեռքն ընկած թույլ ու անպաշտպան հայ կանանց ու երեխաներին: Նրանց երևակայության մեջ Սաքոն դարձել էր արդարամտության, խղճի ու բարոյականության խորհրդանիշ, իրենց ըմբռնումներին չհամապատասխանող անսովոր մի դյուցազն, արտակարգ ուժի, խելքի ու հնարամտության տեր հերոս:

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 362:

Պատահական չէ, որ Ղազախի թուրքերը քաջազուն ռազմիկի անվանը կպցրել էին «փադիշահ»* բառը՝ անկարող լինելով ուրիշ կերպ արտահայտել նրա հանդեպ իրենց սքանչացումը:

Առաջ անցնելով ասենք, որ 1906թ. փետրվարին Ղազախի թուրքերը մեծ պատվիրակություն ուղարկեցին Թիֆլիս, որը հանդիպել էր փոխարքայի օգնական Մալամային: Նրանք կառավարությանը «լուր» էին բերել, թե հայերը Ղազախում Սաքո անունով իրենց ղեկավարին թագավոր են հռչակել, որը հարկ է վերցնում թե՛ թուրքերից և թե՛ հայերից ու ստեղծել է իր կառավարությունն ու բանակը: Այդ խոսքերին հավատացողներ եղան Թիֆլիսում զինվորական և քաղաքացիական բարձր շրջաններում:

Սաքոյի կենսագիր Վալադ Վալադյանը նշել է, որ «փադիշահ»-ությունը ինքնին պերճախոս մի վկայություն էր, մանավանդ որ թշնամու կողմից էր եկել: «Բայց Սաքոն բնավ չչոյվեց այդ բարձր գնահատանքից. նա երբեք կարևորություն չտվեց իրեն շնորհված բարձր տիտղոսին: Փադիշահական ոչինչ չզգաց իր անձի ու կատարած գործի մեջ: Նա շարունակեց անխռով մնալ այն համեստության սահմաններում, որ իրեն էր հատուկ և իր անհատական նկարագրի հարազատ, անբաժանելի մասն էր կազմում»[1]:

Թուրքերը զգացել էին ոչ միայն Սաքոյի ուժը, այլև նրա լայն սիրտը: Կռիվ մղելով քաջի դեմ, միաժամանակ պատկառանք, իսկ ոմանք նույնիսկ սեր էին տածում նրա նկատմամբ:

Մալխասը պատմում է, որ մի օր, երբ Սաքոն, Արմեն Գարոն և մի ուրիշը Դիլիջանից մեկնում էին Սևան, ճանապարհին, Թուրքաբնակ մի գյուղի մոտով անցնելիս, տեսնում են մի շենքի առջև խմբված զինված թուրք գյուղացիների, որոնք, անշուշտ, հավաքվել էին ոչ բարի նպատակով: Սաքոն կանգնեցնում է կառքը, ցած իջնում և առանց այլևայլի մոտենում թուրքերին: Սրանք, ճանաչելով «փադիշահին», անկեղծ ուրախությամբ իսկույն շրջապատում են նրան, մինչ Գարոն ու իր ընկերը բավական անհանգիստ վիճակի մեջ, զենքերը ձեռքերին պատրաստ, սպասում էին, որ, ահա, ուր որ է, կռիվ է սկսվելու:

Բայց Սաքոն, բարձր տրամադրությամբ «լայն դեմքի վրա այն մանկունակ ծիծաղովը, որ այնքան գրավիչ և առինքնող էր, կը մոտենա ամեն մեկուն, հալ

* Շատ հաճախ թե՛ Կովկասում և թե՛ Թուրքիայում, թուրքերը թե քրդերը, որոնք հայերին համարում էին թշնամիներ, հիացական որակումներով պատվում էին նրանց նշանավոր ռազմիկներին՝ «փադիշահ», «փաշա», «խան» մականուններով: Հայերը, հետևելով թուրքերին ու քրդերին, իրենք նույնպես սովորել էին այդ պատվանուններով ու տիտղոսներով արդարության և երախտագիտության տուրք մատուցել ժողովրդի փառապանծ ռազմիկ զավակներին: Ճիշտ է, այս կամ այն հայորդու արժանիքները գնահատելիս հայերը երբեմն չափազանցությունների մեջ էին ընկնում, իսկ առանձին դեպքերում նույնիսկ նրան պատվում էին ոչ ճիշտ ընտրությամբ, բայց կարևորը սխալ կամ ճիշտ գնահատելու փաստը չէր, այլ այն, որ ժողովրդի մտքում կռվող հերոսներն արժանի էին ամենաբարձր կոչումների:

[1] «Հայրենիք», N 8(402), օգոստոս, 1959, էջ 82:

էհվալ հարցնելու, անոնց հետ ունեցած կռիվներեն էպիզոդներ պատմելու, գովելու անոնց կորիճությունը, և ինքը, որպես մարմնացած համերաշխություն, ցույց տալու, թե որքա՜ն աննպատակ և կործանարար է երկու դրկից ժողովուրդներու համար անմիտ արյունահեղությունը»[1]:

Ամբողջացնելով Սևքարեցի Սաքոյի՝ իբրև մարդու, ղեկավարի, ռազմիկի կերպարը, Միք. Վարանդյանը գրել է.

««Գերմարդ» մը՝ ժողովրդական երևակայութեան մեջ: Դյուցազն՝ աներևոյթ և անպարտելի, «Սաքո-փադիշահ» է թաթար զանգվածներու աչքին: «Պահապան հրեշտակ» է հարազատ ժողովրդի համար... Իգիթի անձին շուրջ կը հյուսուին երգեր ու առասպելներ: Մեծ է անոր հեղինակությունը թշնամի տարրերուն մեջ իսկ: Ոչ միայն բռունցքի հեղինակություն, այլև բարոյական կախարդիչ մի ուժ ... Վանզի «Սաքո-փադիշահը» լենկթեմուրեան գծերով օժտուած հրոսակապետ մը չէր, այլ ազնիվ ռազմիկ մը, որ գիտեր զարնել արյունածարավ խուժանները, բայց և ստեպ հանդես կուգար որպես հաշտարար ոգի մը՝ համերաշխութեան քարոզներով լեցնելու կոյր ու մութ մոլեռանդությունը: Ազգերու համերաշխութեան համոզուած ռահվիրա... Հերոսի այդ հատկանիշներուն կը պարտինք մասամբ այն իրողությունը, որ ավերիչ ընդհարումները Ղազախի գավառում համեմատաբար սահմանափակ ծավալ առին»[2]:

Սաքոյի հմուտ գործողությունների շնորհիվ շրջանը խաղաղվեց, և հայ գյուղացին 1906թ. գարնանն ազատորեն ձեռնարկեց իր դաշտային աշխատանքներին: Թուրքերն այլևս փորձ չէին անում կրկին վրդովելու վերահաստատված խաղաղությունը և նախընտրում էին առաջվա պես հաշտ լինել դրացի հայերի հետ, քանի որ իրենց գործած հարձակումները, թալանն ու սպանությունները վերջիվերջո ավելի մնասակար եղան իրենց համար, քան հայերի:

Երբ արդեն գավառի հայությունն այլևս անվտանգ էր, Սաքոն մնաց իր ծննդավայր Սևքար գյուղում, նվիրվեց գյուղական խաղաղ աշխատանքին և հաստատեց իր ընտանեկան օջախը: «Երախտագետ ղազախ-շամշադինցիք, - գրել է Վ. Վալադյանը, - հավաքաբար նվիրել էին նրան կով, եզ, ոչխար ... և այդպիսով հնարավորություն տվել մի սեփական տնտեսություն ստեղծելու իրեն համար: Թաթարական վտանգը հաղթահարած «փադիշահ»-ը, դառնալով իր համագյուղացիներից մեկը՝ ձեռքն է առնում մաճն ու մանգաղը: Հողն է հերկում, ցանքս անում, հնձում խոտ ու ցորեն, իր անասունների հոգը տանում... Ակնջը, սակայն, շարունակ անդին, թե Հ.Ց. դաշնակցության վերին մարմինը ինչ նոր գործի պիտի կանչեր իրեն»[3]:

[1] Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, Պոսթն, 1931, էջ 350:
[2] Միքայել Վարանդյան, Հ.Ց. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 274:
[3] «Հայրենիք», N 8 (402), 1959, էջ 82:

Նոյեմբերին հարձակումներ եղան նաև **Ջեբրայիլի գավառում**: Գավառի այն շրջանում, ուր ապրում էին հայերը, պատմական Դիզակն էր, բայց ոչ ամբողջը: Նրա 47 հայկական գյուղերից 12-ը միացած էին Շուշիի գավառին, 3-ը՝ Զանգեզուրին, մնացածը Ջեբրայիլի գավառում էին[1]: Գավառապետ Ցիմբալովի թողտվության պայմաններում հարձակումների ենթարկվեցին Էդիլլուն, Ջամձորը, Բանազուրը և մի քանի ուրիշ հայկական գյուղեր, բայց հայերը ընդհարումներից միշտ դուրս էին գալիս հաղթական:

Գանձակի նահանգի նոյեմբերյան ջարդերը լայն արձագանք գտան **Զանգեզուրի գավառում**:

Ինչպես Գանձակի նահանգի մյուս բոլոր գավառների, այնպես էլ Զանգեզուրի բնակչությունը միատարր չէր: Բնակչության թվում գերակշռում էին հայերը, բայց գավառի երեք շրջաններում Սիսիանում, Ղափանում և Արևիքում (Մեղրի) մեծ թիվ էին կազմում թուրքերը: Գավառի միայն Գորիսի շրջանում և Գորիս քաղաքում թուրքեր չկային :

Բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում քրդերը, որոնք բնակվում էին Զաբուղ գետի երկու կողմերում ընկած գյուղերում: Այդ տարածքը հայտնի էր Քուրդիստան կամ Քյուրդլար անունով: Քրդերը, որպես մուսուլմաններ, միշտ հանդես էին գալիս թուրքերի կողմում, ընդդեմ հայերի:

Գավառում բնակվում էին նաև ռուսներ: Դրանք հիմնականում պաշտոնյաներ էին, մի քանի մասնագետներ էլ աշխատում էին Ղափանի հանքերում: Սիսիանում կար ռուս մոլոկանների երկու գյուղ՝ Բազարչայը և Բորիսովկան: Այս գյուղերի ռուս բնակիչները թուրք-հայկական ընդհարումների ժամանակ աջակցում էին մուսուլմաններին, դրսից ռազմամթերք էին ներմուծում ու վաճառում նրանց և, առհասարակ, հոգով ու սրտով հակված էին դեպի թուրքերը[2]:

Մեծ փոթորկի էին բռնվել հատկապես գավառի Սիսիանի և Ղափանի շրջանները: Գորիսի և Սիսիանի շրջանների սահմանագլխի Աղուդի և Վաղուդի գյուղերի թուրքերը, միացած Քյուրդլարի քրդերին ու թուրքերին, սպառնում էին Գորիս քաղաքին և Շինուհայրի ձորի գյուղերին, իսկ Հյուսիսային Պարսկաստանի Ղարադաղի խաները, միացած Ղափանի թուրքությանը, վտանգում էին Ղափանի հանքերի և Օխչի ձորի հայության խաղաղ կյանքը: Վերջապես, Սիսիանի շրջանի թուրքերը, միացած Նախիջևանի հետ, շարունակական հարձակումներ էին գործում հայ գյուղերի վրա:

Իր հոծ հայությամբ և բնական ամրություններով գավառը Գանձակ-Ղարաբաղ-Նախիջևան-Արարատյան դաշտ-Երևան-Շիրակի դաշտ ինքնապաշտպանական շղթայում մեծ կարևորություն ունեցող օղակ էր: Պատահական չէ, որ դաշնակցության արևելյան բյուրոն Զանգեզուր էր ուղարկել ժողովրդի

[1] **Ա-ԴՕ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 230:
[2] **«Մշակ»**, N 17, 25 հունվարի 1906թ.:

նվիրյալ գավակներից մեկին, հավատավոր դաշնակցական գործիչ, Ներսիսյան դպրոցն ավարտած գանձակեցի Ստեփան Ստեփանյանին (Հարությունի Պետրոսյան): Նա այստեղ էր եկել դեռ 1905-ի փետրվարից առաջ Շուշիից: Ստեփանը Հ.Ց.Դ. Ապառաժի կ. կոմիտեի անդամ էր և կազմակերպական մեծ աշխատանք էր տանում Ղարաբաղում: Եվ ահա նա Զանգեզուրում էր, ուր գործում էր նույնքան եռանդով, նույնքան անձնուրաց*: Նրա գալով հեղափոխական նոր շունչ ստացավ տեղի հայությունը: «Դրոշակը» գրում էր. «Այդ ասպարեզում նա ուղղակի փոթորիկ էր ու մրրիկ: Կայծակի արագությամբ նա տասնյակ գյուղեր բերում, կանգնեցնում էր կարմիր գաղափարի առջև: Ուր ոտք էր դնում ժողովուրդը նրա հետ էր ու գործի գերին ... »[1]: Շատ շուտով Ս. Ստեփանյանը դարձավ գավառի քաղաքական կյանքի ղեկավարը**:

Զանգեզուրի հայոց հասարակական կյանքը, հատկապես գյուղերում, աննկարագրելի շարժման մեջ էր, արթուն էր հատկապես բնակչության երիտասարդ մասը: Ամեն գյուղում ժողովներ էին գումարվում, ուր խոսակցությունը պտտվում էր միայն ու միայն ինքնապաշտպանության շուրջ, պատրաստություններ էին տեսնվում դիմադրելու թուրքերի նոր հարձակմանը, որ վաղ թե ուշ տեղի էր ունենալու:

Հայությանը պատրաստելով վերահաս վտանգների դեմ Ս. Ստեփանյանը միաժամանակ գավառի մահմեդականների շրջանում տանում էր լուսավորական - պրոպագանդիստական լայն աշխատանք՝ փորձելով նրանց հասկացնել, թե ով է կանգնած սկսված արյունահեղության հետևում:

Թուրք հարևանները, սակայն, գերադասեցին ունկնդիր լինել իրենց ցեղի ավանդույթների թելադրանքին: Այդ էր պատճառը, որ գավառի ինքնապաշտպանության ղեկավարն իր զինակիցների հետ սկսեց պատժի ու հատուցման գործը:

Ստեփան Ստեփանյանը կարճ ժամանակ գործեց Զանգեզուրում, մի քանի ամիս ընդամենը, բայց այդ կարճ ժամանակն էլ բավական էր, որ նա ձեռք բերեր ազգանվեր ու քաջարի հայորդու համբավ: Այդ նշանավոր գործչի համարձակությունը հասել էր այնտեղ, որ գավառի իշխանությունները նրա սպառնալիքների տակ ստիպված էին լռակյաց կատարել բազմաթիվ պահանջներ: Զանգեզուրը նրան էր պարտական, երբ առաջին անգամ տեղի հայերը բացահայտորեն սկսեցին զենք կրել, և նրանց զինաթափումը իշխանությունը

* Ստեփան Ստեփանյանից առաջ Հ.Ց.Դ. Ապառաժի կոմիտեն Զանգեզուր էր ուղարկել գանձակեցի Նիկոլ Օդաբաշյանին, որն այստեղ մնաց կարճ ժամանակ և հետ կանչվեց ավելի պատասխանատու հանձնարարություն կատարելու համար: Շուտով նա անցավ Թուրքահայաստան և դարձավ Հ.Ց.Դ. Վան-Վասպուրականի կազմակերպության նշանավոր ղեկավար գործիչներից մեկը՝ Սարգիս Բարսեղյան (Վանա Սարգիս) անունով:
[1] **«Դրոշակ»**, N 3(169), մարտ, 1906, էջ 45- 46:
** **Ստեփան Ստեփանյանի** կյանքի ու գործունեության մասին տե՛ս **«Մշակ»**, N 25, 3 փետրվարի 1906թ., **«Դրոշակ»**, N3(169), մարտ, 1906, էջ 45-46:

ների համար դարձել էր անհնարին բան, քանի որ Ստեփանյանը գավառապետին և ոստիկանապետին զգուշացրել էր, որ նույնիսկ մի հայի զինաթափման փորձի դեպքում ինքը, իբրև պատասխան, իր մարդկանցով զինաթափելու է գավառի ոստիկանությանը և գրավելու է Գորիս քաղաքի զինանոցը: Նրա զինակից ականատեսը գրում էր. «Ստեփանյանի հոգում խոսում էր դաշնակցության ցասումը: Եվ դա զգացին ռուս կառավարության պաշտոնյաները ու հաշվի առան՝ գիտենալով, որ այլապես մաուզերի գնդակներն իրենց կուրծքը պիտի պատռեն»[1]:

Եվ ահա, վրա հասավ ողբերգական նահատակությունը:

Հ.Յ.Դ. Զանգեզուրի կ. կոմիտեն որոշեց տեղահանել Գորիս-Սիսիան ճանապարհը փակած ավազակաբարո Աղուդի և Վաղուդի թուրքական գյուղերը: Ստեփան Ստեփանյանի գլխավորությամբ՝ հիմնականում Գորիս քաղաքի երիտասարդներից կազմված մի փոքրաթիվ խումբ գնում էր այդ գյուղերի վրա: Իր խմբով Ստեփանին է հետևում գորիսեցի Մխիթարը: Երկու խմբերը, շրջանցելով Աղուդին և Վաղուդին, մեկնում են ոչ հեռու Բռնակոթ գյուղը, ուր կազմում են գործողության մանրամասն ծրագիր, որի համաձայն վաղ առավոտյան մարտիկները պետք է պաշարեին երկու գյուղերը:

Բռնակոթցի մի այրի կին՝ Բալախանումը, տեղեկանալով այդ մասին, գիշերով շտապում է Հարևան Թուրքաբնակ Ջահրի գյուղը, ուր բնակվում էր իր սիրականը, և հայտնում հայերի ծրագրի մասին: Դավաճան հայուհին ջահրեցի մի քանի թուրքերի ուղեկցությամբ այդտեղից գիշերը մեկնում է ոչ հեռու թուրքաբնակ Շաքի և գյուղի երիտասարդությանը կոչ անում պատրաստվել վաղվա կռվին[2]:

Վաղ առավոտյան Գորիսի երկու խմբերը Ստեփանի և Մխիթարի գլխավորությամբ մոտենում են Աղուդի և Վաղուդի գյուղերին: Թշնամու ուժերի մասին ճշգրիտ տեղեկություն չունենալով՝ խմբերն ընկնում են ուժգին կրակի տակ և ստիպված քաշվում են Աղուդի գյուղից հյուսիս գտնվող լեռը: Ստեփանն ու իր մարտիկներից մի քանիսը չհասցնելով հեռանալ, մնում են գյուղից ոչ հեռու ընկած քարքարուտներում շարունակելով հերոսաբար կռվել թշնամու մեծաթիվ ուժի դեմ: Թուրք ոստիկանապետ Շահսուվար բեկի ջանքերով Շաքիից և Սիսիանի ուրիշ գյուղերից, ինչպես նաև Մինքենդից աղուդցիներին օգնության են գալիս նորանոր կռվողներ, որոնք հայ երիտասարդներին կրակի տակ են առնում թիկունքից: Ստեփանը և նրա ընկերները կռվում են այնքան, մինչև որ սպառվում են փամփուշտները: Նրանք իրենց հրացանները ջարդում են քարերի վրա՝ դրանք թշնամու ձեռքը չգցելու համար, ապա բաց կրծքերը դեմ են տալիս թշնամուն: Բոլորը նահատակվում

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.66:
[2] Նույն տեղում, թ.թ.68-69:

են՝ մահն ընդունելով արիաբար: Ստեփանն ընդամենը 27 տարեկան էր: Է՛լ ավելի փոքր տարիք ունեին նրա ողբացյալ ընկերները:

Իրենց ցեղակիցներին ոգեշնչելու նպատակով «Հաղթողները» կտրում են Ստեփանի գլուխը, հանում ցցի վրա և պտտեցնում Սիսիանի թուրքական գյուղերում:

Մի քանի օր անց բռնակոթցիները կարողանում են Ստեփանի՝ Աղուդիի դաշտում ընկած դին վերցնել և թաղել իրենց գյուղի եկեղեցու բակում: Իսկ մատնիչ Բալախանումին բռնում ու տանջամահ են անում[1]:

Զանգեզուրի և Ղարաբաղի հայությունը խորապես սգաց Ստեփանի մահը, քանի որ նա այդ երկու գավառներում էր կատարել անմոռաց գործեր:

Գորիսեցիներից շատերը վրեժխնդրության էին կոչում: Նրանցից մեկը՝ Կիզիրին Գալուստն էր: Իր շուրջը համախմբելով երեք տասնյակ երիտասարդների՝ Գալուստը Գորիսից գնում է Ցայջի գյուղը, այնտեղից լուսադեմին հարձակվում Հարևան Քյուրդլարի վրա և բնաջինջ անում: Գյուղը, թալանվելուց հետո, մատնվում է կրակի[2]:

Ստեփան Ստեփանյանի մահից հետո Սյունիքի պաշտպանները մնացել էին առանց ղեկավարի, մինչև որ ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի կարգադրությամբ Բաքվից այնտեղ ուղարկվեցին Համբարձում Մելքումյանը (Մելիք), որպես Գորիս քաղաքի ու շրջակայքի ինքնապաշտպանության ղեկավար, և գործիչ Թադեն, որը նշանակվեց Տաթևի շրջանի պաշտպանության կազմակերպիչ: Համբ. Մելքումյանն առանց ժամանակ կորցնելու Գորիսում վերակազմեց ինքնապաշտպանության տեղական ղեկավար մարմինը, որը զբաղեցրեց Լալազարյանների մեծ շենքը, որտեղ տեղավորվեց նաև Հ.Յ.Դ. Զանգեզուրի (Գորիսի) կ. կոմիտեն: Այդ մարմինը, ելնելով ստեղծված ծանր իրավիճակից և հաշվի առնելով մարտական ուժերի պակասը, օգնության խնդրանքով միաժամանակ դիմեց և՛ Երևան՝ Դումանին, և՛ Շուշի՝ Վարդանին:

Արձագանքը չուշացավ. Վարդանի կարգադրությամբ Գանձակի նահանգից և Դումանի կարգադրությամբ Երևանի նահանգից Զանգեզուրին օգնության շտապեցին զգալի թվով արևելահայ և արևմտահայ մարտիկներ: Գավառի պաշտպանների շարքերը համալրեցին նաև Բաքվի երկրորդ ընդհարումներից հետո Ինքնապաշտպանության կ. կոմիտեի որոշմամբ իրենց երկիրը վերադարձած ավելի քան 200 զանգեզուրցիներ[3], որոնց մեջ էր գիմնազիայի նորավարտ, բայց արդեն Բաքվում աչքի ընկած դաշնակցական գործիչ Արշակ Շիրինյանը: Նոյեմբերի կեսերին, մի խումբ զանգեզուրցիների գլուխն անցած, Ալեքսանդրապոլից Գորիս է հասնում Հովհաննես Պարոնյանը (Ցապոն)[4]:

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ. 73,74:
[2] Նույն տեղում, թ. 72:
[3] «Հայրենիք», N 3(219), հունվար, 1941, էջ 158:
[4] Նույն տեղում:

Մոտավորապես նույն ժամանակ իր խմբով Հյուսիսային Նախիջևանից Զանգեզուր է գալիս Քեռին, իսկ նրա հետ՝ սասունցի Գոմսա Իսոն՝ իր արևմտահայ քաջերով: Սրանց է միանում նաև Երևանից եկած Ռաշիդի խումբը: Զանգեզուր եկածներն անմիջապես անցնում են Հ.Ց.Դ. Գորիսի կ. կոմիտեի տրամադրության տակ:

Նոյեմբերի 21-ին Տաթևի վանքում վանահայր Ներսես Մելիք-Թանգյանի նախագահությամբ տեղի է ունենում դրսից եկած գործիչների խորհրդակցություն, ուր քննարկվում է այն հարցը, թե նրանցից որը գավառի որ շրջանի պաշտպանության ղեկավարությունը պիտի ստանձնի: Ղափանի շրջանի ինքնապաշտպանությունը պիտի գլխավորեին Արշակ Շիրինյանը և Գոմսա Իսոն: Քեռին իր վրա վերցրեց Զանգեզուրի ամենավտանգված շրջանի՝ ամբողջ Սիսիանի պաշտպանությունը: Ռաշիդին հանձնարարվեց Դարաբաս-Շնաթաղի շրջանը, իսկ Դարալագյազից նոր եկած Զուխուռ Արսենը, տեղացի գործիչներ Գասպար և Դավիթ Տեր-Մկրտչյան եղբայրների հետ, պետք է պաշտպաներ Գորիսի և Շինուհայրի շրջանները: Խորհրդակցությունը բոլոր խմբապետերից պահանջեց ամեն գյուղում կազմել թռուցիկ ճիավոր խումբ, որ ի պահանջ հարկին հասներ վտանգված բնակավայրերը: Միաժամանակ որոշվեց Նիկոլ Դումանին խնդրել ժամանակավորապես գավառ ուղարկել երկու օգնական խումբ:

Խմբապետերն իրենց խմբերով անցան նշանակված շրջանները, իսկ հալիձորցի ռազմիկ Հովհաննեսը, իր հետ վերցնելով Դումանին հասցեագրած գրությունը, մեկնեց Երևան: Ընդառաջելով Զանգեզուրի խնդրանքին՝ Դումանն առաջինը այնտեղ ուղարկեց Սեբաստացի Մուրատին, որը որոշ ժամանակ անց դառնալու էր գավառի ինքնապաշտպանության փաստացի ղեկավարը:

Խնդրած երկրորդ խումբը Զանգեզուր եկավ 22-ամյա Դրոյի գլխավորությամբ: Ինչպես արդեն ասվել է, Դրոն Քեռու տեղակալն էր Հյուսիսային Նախիջևանում, և երբ իր պետը հրաման էր ստացել անցնել Զանգեզուր, ինքն էլ իր խմբով մեկնել էր Երևան և, Դումանին ներկայանալով, նրանից թույլտվություն խնդրել մի քանի օրով գնալու իր ծննդավայրը՝ Իգդիր՝ ծնողներին տեսակցելու: Նա հասնում է հայրենի քաղաք, որտեղ ականատես է լինում շարունակվող այն անզիջում հակամարտությանը, որ վաղուց կար երկու մեծ գերդաստանների՝ Կանայանների և Ավագյանների միջև: Վերջիններիս Նվարդ անունով աղջիկն ընդունում է ամուսնանալու մասին Դրոյի առաջարկը, և ավարտին է հասնում երկու կողմերի թշնամությունը: Դրոյի հայրը՝ Մարտիրոսը, հարսանեկան չքեղ հանդեսի պատրաստություն է տեսնում: Երբ եկեղեցում վերջացել էր պսակադրության արարողությունը, և երկու կողմի հարազատներով ու ընկերներով շրջապատված ամոլը դիմում է դեպի դուրս, վազեվազ Դրոյին է մոտենում մի երիտասարդ և նրան հանձնում Դումանի

«շտապ» հեռագիրը, որով հրահանգված էր. «Անմիջապես խմբովդ անցիր Դարալագյազ-Սյունիք՝ օգնելու կովողներին»:

«Հայրենիք» ամսագրում կարելի է կարդալ դրան հաջորդած պահի նկարագրությունը.

«Հանդիսավոր այդ պահին անակնկալ այս հեռագիրը մի վայրկեան կը շուարեցընէ Դրոյին: Բայց նա իսկոյն ինքինքը կը գտնէ եւ, առանց պաղարիւնությունը կորսնցնելու, հարսին թեւը անցած՝ կը դիմէ իր հայրենական տունը: Հարազատները մեծ ուրախութեամբ կը դիմավորեն նորապսակներին:

Երբ հայրն ու մայրը մօտենում են եւ համբուրում փեսային ու հարսին, Դրօն դառնում է հօրը երկիւղած և խորունկ երախտագիտութեամբ ասում.

– Հայրիկ ջան, նոր ստացայ Դումանից հեռագիր: Ես խմբովս պէտք է իսկոյն գնամ ազգային պարտականութեանս: Իմ հարսս քեզ կը թողնեմ ամանաթ: Պահի՛ր եւ գուրգուրայ նրան քո հարազատ զաւակի պէս՝ մինչև վերադարձս ...

Ծնողքի եւ հարազատների փորձերը համոզելու, որ գոնէ մի քանի օր մնայ հարսի հետ, ապարդյուն են անցնում:

– Ազգային պարտականութիւնը գերադաս է անհատականից,– ասում է Դրոն եւ ապա, դուրս ելնելով, կը դիմէ իր խումբին.

– Տղե՛րք ջան, ես ձեզ զուրբան, ձիերը թամբեցէք եւ յառա՛ջ՝ դէպի սուրբ պարտականութիւն:

Եւ խոնարհութեամբ համբուրում է հոր, մոր ու լացող հարսին և, թռչելով իր նժոյգի վրայ, սլանում է դէպի կենդանի գործ...»[1]:

Դրոն իր խմբով գալիս է Սիսիան, ներկայանում Անգեղակոթում գտնվող Քեռուն և անցնում նրա ենթակայության տակ:

Ստանձնելով Սիսիան գավառամասի ռազմական ղեկավարությունը՝ Քեռին սկզբում կենտրոնատեղի է դարձնում Անգեղակոթ մեծ գյուղը, որը հայտնի էր իր քաջամարտիկ երիտասարդներով, և որի դեմ շրջակա թուրքությունը հարձակման խոշոր պատրաստություններ էր տեսնում ամիսներ ի վեր[2]:

Համոզվելով, որ Անգեղակոթին վտանգ չի սպառնում, քանի որ այնտեղ կազմակերպել էր շուրջ 100 երիտասարդներից կազմված մի վստահելի խումբ, Քեռին տեղափոխվում է Բռնակոթ և այնտեղ հաստատում իր շտաբը:

«Ես Քեռիի օգնականն էի, – գրել է Դրոն: – Նա ինձ տվել էր գործելու կատարյալ ազատություն: Ինձ էր հանձնել շրջանի տեղական ուժերի կազմակերպումը...»[3]: Դրոյի հրամանատարության տակ էր երեսունի չափ ձիավոր, որոնց թվում էին արևմտահայ հայդուկներ Բերդակցի Օսկանը, Կոփեցի

---

[1] «Հայրենիք», N 10(368), հոկտեմբեր, 1956, էջ 21:
[2] Նույն տեղում, N 2 (408), փետրվար, 1960, էջ 51:
[3] «Վէմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 47:

Կնյազը, Մոկացի Խեչոն, Խլաթցի Գալոն, իգդիրցի Քուրդ Խեչոն:

Գյուղերում ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Դրոն 10-15 օրով դուրս է գալիս շրջան, պտտվում բոլոր վտանգավոր վայրերում, խրախուսում թուրքիկ խմբերի մեջ ընդգրկված երիտասարդ մարտիկներին, որոնց մեծ մասն իր տարիքին էր: Հենց սկզբից նա սիրելի դարձավ Սիսիանի ժողովրդին. բոլորը մեծ գուրգուրանքով էին վերաբերվում քաջ ու արդարամիտ «կրակ ու բոց խմբապետին»:

«Երբ վերադարձա Բռնակոթ և մտա Քեռու շտաբը, - հետագայում վերհիշում է Դրոն, - աչքիս պատկերացավ հետևյալ տեսարանը. ընդարձակ սենյակում երկու կարի մեքենա դրված մի կողմ, մի չուստ կարելու մեքենա էլ մի ուրիշ կողմ, տեղացի մի քանի հագուստ ու չուստ կարող արհեստավորներ մեծ եռանդով աշխատում էին: Պատերից կախված էին հասարակ կտորից կարված հագուստներ և էժանոց կտավից սպիտակեղեններ, որ Քեռին պատրաստել էր տվել զինվորների համար: Պատերից խնամքով կախված էին նաև ձիերի ղոլաններ, թարքի թաղիքներ, նոխտաներ: Այդ ահագին պաշարը պատրաստվել էր վերջին 10-15 օրվա ընթացքում»[1]:

Դրոն պատմում է, որ զինվորներից շատերը տրտնջում էին, թե մյուս խմբապետերն իրենց տղաներին թանկ կտորից հագուստ են տալիս, իսկ իրենք հագնում են էժան կտորից պատրաստվածը: Քեռին պատասխանում էր, որ ժողովուրդը դրամ չունի իր զինվորներին դիագանալ շալվար և կաբարդին մորթե փափախ հագցնելու:

«Քեռին ազգի ամէն կոպէկ հաշվով էր ծախսում, - նշում էր Դրոն: - Ու շնորհիվ այսպիսի վերաբերումի, կուսակցական դրամարկղից ստացած 2000 ռուբլուց մի տարվա ընթացքում ծախսել էր հազիվ 500 ռուբլի: Դումանը խմբապետերի ժողովում բացառիկ գովասանքով ու ջերմ գնահատանքով էր խոսել Քեռու խնայողության մասին ու նրա ներկայացրած հաշիվները, իբրև օրինակ, ցույց տվել մյուս խմբապետերին»[2]:

Կանխատեսելով թուրքաբնակ Սիսիան գյուղի ավազակախմբերի կողմից Թազագյուղի վրա կախված վտանգը՝ Քեռին Դրոյին կարգադրում է հեծյալների մի խմբով անցնել այնտեղ և ամրացնել պաշտպանությունը, քանի որ այդ գյուղի խմբապետ Բոգդանը ուներ հրացան ունեցող ընդամենը տասը կռվող: Միաժամանակ ասում է, որ հաջորդ օրվա առավոտյան ինքն էլ կգա Թազագյուղ:

Հետն առնելով իր մշտական զինվորներից Քուրդ Խեչոյին, Բերդակցի Օսկանին, Խլաթցի Գալոյին, Մոկացի Խեչոյին և մի քանի ուրիշների, ընդամենը տասը հոգու, Դրոն մեկնում է վտանգված գյուղը: Քեռու հրամանով

[1] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 47:
[2] Նույն տեղում:

Թազագյուղ եկավ նաև Բռնակոթ գյուղի քահանայի տղա Հովհաննեսի* գլխավորած 15 հոգանոց խումբը:

Իսկ այդ ժամանակ Սիսիան գյուղում թշնամին ուժեր էր հավաքում:

Թալանչիների իր խմբով այդտեղ էր եկել նաև հայտնի դաշտ Խանլարը: Թուրքերը մտադրվել էին վճռական գործողությունների անցնել Թազագյուղի վրա, կողոպտել և ավերել:

Դիշերը Թազագյուղում հանգիստ անցավ: Առավոտյան Դրոն եկեղեցում ընդհանուր ժողով հրավիրեց՝ քննելու համար օրվա անելիքները: Այդտեղ էին նաև Դրոյի մի քանի մարտիկներ իրենց զենքերով: Օգտվելով այդ հանգամանքից՝ Սիսիան գյուղի թուրքերը մեծ ուժերով հանկարծակի հարձակվում են և սպառնում ներխուժել Թազագյուղ: Գյուղի պաշտպաններն իսկույն դիրքեր են գրավում, իսկ եկեղեցում անմիջապես ընդհատվում է ժողովը: «Տղե՛րք, հետևեցե՛ք ինձ», - հրամայում է Դրոն, և ամենքը դուրս են թռչում:

Թշնամու ներխուժմանն արգելք լինելու համար անհրաժեշտ էր բռնել Սիսիանից դեպի Թազագյուղ տարածվող բարձունքները, որոնք արդեն գրավված էին թուրքերի կողմից: Ստեղծվել էր խիստ վտանգավոր կացություն: Ինչ գնով ուզում էր լիներ, պետք էր թշնամուն դուրս մղել զբաղեցրած դիրքերից, այլապես վտանգը գնալով սպառնալից էր դառնալու, քանի որ բարձունքներում հայտնվում էին թուրքերի նորանոր զինված խմբեր: Եվ Դրոն ընդունեց ամենավտանգավոր ու հանդուգն վճիռը՝ ուղղակի անցնել ճակատային գրոհի: Նա թռավ ձիու վրա և իր խմբին հրամայեց հետևել իրեն: Այդ պահը այսպես է նկարագրել նա. «Մեր տղաներից ոմանք նույնիսկ ժամանակ չէին ունեցել սանձելու ձիերը, հեծել էին առանց թամբի ու նոխտաների և այդպես արշավում էին թշնամու դեմ: ... Մենք անմիջապես վրա տվինք ու շեշտակի կրակի տակ առինք թուրքերին, որոնք, անակնկալի եկած, սկսեցին խուճապով հետ քաշվել»[1] և ամրանալ նոր բնագծի վրա:

Թուրքերը տեղի չէին տալիս, հուսահատորեն շարունակում էին դիմադրել, իսկ հայ մարտիկներն, իրենց հերթին, համառորեն առաջ էին նետվում: Երկու կողմերի համար կռիվը օրհասական դարձավ: «Մենք նահանջի տեղ չունեինք, - գրել է Դրոն. - Թուրքերն էլ հասկանում էին, որ եթե տեղի տան, ոչ միայն իրենց ամբողջ ձեռնարկը կը վիժէր, այլև անձնապէս էլ կը վտանգվէին: Մի գերագույն ճիգ ևս մեր կողմից, և մենք հասանք բլրի գագաթը, դէմ առ դէմ մեզ վրա արշավող թրքական նոր ուժերին: Շտապով ամրացանք, ու սկսվեց մի կատաղի դիրքային կռիվ: Մեզ թշնամուց բաժանող տարածությունը հազիվ 80-100 քայլ էր: Իմ ձախ կողմը կռվում էր Քյուրդ Խէչոն իր ընկերներով, աջ կողմս բռնակոթցի և տեղական ուժերն էին: Թշնամու

* Հետագայում հայտնի դաշնակցական գործիչ, Հայաստանի պառլամենտի անդամ Վահան Խորենու ավագ եղբայրը:
[1] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 50-51:

գնդակների տարափը այնքան սաստիկ էր, որ գլուխ բարձրացնել հնարավոր չէր, և ես չէի իմանում, թե ինչ դրություն մտել էին իմ աջի ու ձախի ուժերը: Իմ մոտի տղաներից Բոգդանը վիրավորվեց ձեռքից: Մի թեթև վէրք էլ ես ստացա աջ ոտքիցս: Հետոյ պարզվեց, որ ես դուրս էի եկել Թուրք դաշտ Խանլարի խմբի դեմ, որ բաղկացած էր Հայտնի կովող ավազակներից»[1]:

Քեռին, որ, կատարելով իր խոստումը, հենց նոր Բռնակոթից հասել էր Թազագյուղ, Դրոյի ուղարկած սուրհանդակի միջոցով տեղեկանում է, թե ինչ է կատարվում բարձունքներում: Նույն վայրկյանին նա հեծյալ տղաների հետ սրարշավ սլանում և հասնում է Դրոյի դիրքերին ու անմիջապես մխրճվում կռվի մեջ: Գնդակահար գետնին է գլորվում նրա ձին: Դարձյալ խոսքը տանք Դրոյին. «Անայլայլ, կարծես ոչինչ չէր պատահել, մտրակն ու պարաբելում ատրճանակը ձեռքին, Քեռին առաջ խոյացավ Թուրքերի վրա: Տատանվելու ժամանակ չէր, մենք էլ հետևեցինք նրան: Հետևից օգնության հասան և բռնակոթցիք: Այժմ արդեն նեղվելու հերթը թշնամունն էր. մեր դիրքերի առջև գտնվող բոլոր Թուրքերը կոտորվեցին: Ով կարողացավ ազատվել՝ փախավ: Մեր հաղթությունը եղավ կատարյալ»[2]:

Երբ արդեն Թուրքերը քշված էին դիրքերից, վրա են հասնում Ախլաթյան և Բնունիս գյուղերի ուժերը, և հայ բոլոր խմբերը միասին, համախմբված ու շղթա կազմած, հարձակման են անցնում Սիսիան գյուղի վրա: Կրկին ունկնդիր լինենք Դրոյին.

«Քեռին ձին հեծած անվերջ «ուռա՜» կանչելով՝ գնում էր շղթայի առջևից: Նա հրահանգել էր հիմքից այրել Սիսիանը, որ ոչինչ չմնար այդ՝ թշնամու համար կարևոր, ռազմական նշանակություն ունեցող գյուղից: Մենք էլ Քեռու «ուռա»-ներին «ուռա»-ներով պատասխանելով՝ մտանք Սիսիան և ինչ-որ կարելի էր այրել ու ոչնչացնել՝ ոչնչացրինք, դիմադրողներին էլ ջարդ ու փշուր արինք: Կոտորվեցին և շրջակա գյուղերից եկած բավական մեծ թվով Թուրքեր, որոնք հավաքվել էին Սիսիան՝ Թազա հայ գյուղի թալանին մասնակցելու համար: Սիսիանից մնացին միայն հրկիզված տների կույտեր ...»[3]: Կոտորածից ազատ մնացին միայն կանայք և երեխաները:

Հայկական ուժերը, Դրոյի գնահատմամբ, փառավոր ճակատամարտ էին շահել: Սիսիանին պատուհասելը «սարսափելի տպավորություն գործեց շրջանի Թուրքերի վրա»: Եվ դա պատահական չէր, քանի որ «իր մեծությամբ ու խաղացած ազդեցիկ դերով» այդ գյուղը շրջանի Թուրքության պատվարն էր, որն այժմ կործանված էր:

Թուրքերի կորուստները հսկայական էին, հայերը տվել էին երեք սպանված և նույնքան վիրավոր: Վիրավորների թվում Դրոն էր: Քեռին նրան

[1] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 51- 52:
[2] Նույն տեղում, էջ 52:
[3] Նույն տեղում, էջ 53:

պատվիրեց անմիջապես վերադառնալ Թազագյուղ և դարմանել վերքը: «Քեռի ջան, վերքս թեթև է, քանի դու Սիսիանում ես, ես չեմ հեռանա մոտիցդ»[1],- լինում է Դրոյի պատասխանը:

Սիսիան գյուղի անկմանը հաջորդեց ագուլեցի Ռաշիդի խմբի միջոցով Դարաբասի ձորի Թուրքերին պատժելը: Զոփուռ Արսենի խումբը Զամբուղի Թուրքերին սարսափի մատնելուց հետո մի քանի հաջող արշավանք կատարեց Գորիսից Ղափան տանող խճուղու վրա ընկած Շուռնուխ գյուղի և ճանապարհի երկու կողմերին գտնված Թուրք գյուղերի վրա:

1905թ. նոյեմբերի վերջերին դրությունը բարդացավ Ղափանում և Արևիքում (Գենվազ, Մեղրի): Թեև Արշակ Շիրինյանն ու Գոմսա Իսոն շրջանի ինքնապաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ մեծ աշխատանք էին ծավալել, բայց Հ.Յ.Դ. Գորիսի կ.կոմիտեն դեկտեմբերի սկզբներին հանքեր ուղարկեց Ցայտնին՝ որպես Ղափանի և Արևիքի միացյալ շրջանի հրամանատար: Այդ նշանակումը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Ա. Շիրինյանը Ղափանից Գորիսի, Հ.Յ.Դ. կ.կոմիտեին լուր էր ուղարկել, թե շրջանը գտնվում է մեծ դեպքերի նախօրյակին, քանի որ Հյուսիսային Պարսկաստանի Թուրքաբնակ Ղարադաղի հինգ խան իրենց ձիավոր խմբերով հավաքվել են Արաքսի մյուս ափին և պատրաստվում են ներխուժել Արևիք ու Ղափան: Զանգեզուրի Թուրքերը Պարսկաստանի Թուրքերից ստանում էին զենք ու ռազմամթերք: Գիշերները Արաքսի ափերից դեպի Ղափանի և Արևիքի Թուրք գյուղերն էին մտնում զինված մարդիկ՝ բեռնավորված հրացաններով և փամփուշտներով:

Նաև հայտնի էր դարձել, որ խաների հեծյալ խմբերի ներխուժման օրը Բարգյուշատի կողմից Ղափանի վրա պիտի հարձակվեր հայտնի Թուրք ավազակապետ Հաջի բեկի լավ զինված խումբը: Դաշնակցության տեղական մարմինը որոշում է վերացնել Հաջի բեկին, նախքան նա կձեռնարկեր իր հարձակումը: Կազմակերպության որոշումն անթերի կատարում է գավառի ինքնապաշտպանության՝ դրսից եկած մարտիկներից մեկը՝ երիտասարդ դաշնակցական Պետոն: Չնայած դրան, Բարգյուշատի Թուրքական ուժերը հարձակում են սկսում Ղափանի վրա, որոնց աջակցում են շրջանի Թուրքական մի շարք գյուղեր, հատկապես Օխչին: Գոմսա Իսոյի ջոկատը Հանդ գյուղի մոտ շրջապատում է Թուրքերի հիմնական ուժերը և ջարդ տալիս: Նույնպիսի ջարդ է կրում Զանգելանի կողմից Արևիք մտած մի զինված Թուրք խառնամբոխ: Թուրքական բանդային Արևիքից դուրս մղելու ընթացքում սպանվում է անձնազոհ դաշնակցական գործիչներից մեկը՝ Բեխ գյուղացի շրջիկ գործիչ Դավիթ Մելիք-Փարսադանյանը, որը մեծ վտանգի ժամանակ քարոզչական գործով անցել էր Շիվանիձորի շրջանը և վերադարձին զոհ էր գնացել դարանակալ թշնամու գնդակին:

Հարկ է նշել, որ եթե Զանգեզուրի Սիսիանի շրջանի և Բյուրդլարի մուսուլ-

[1] «Վեմ», N 2, մայիս-հունիս, 1935, էջ 53:

մանները հանդես չէին բերում հայերի հետ հաշտվելու որևէ ցանկություն, ապա Ղափանի և Արևիքի շրջանների, ինչպես նաև հարևան Զանգեզուրի շրջանի թուրքերի մեջ հասունանում էր այն տրամադրությունը, որ պետք է վերջ տալ ընդհարումներին: Նույնիսկ թուրք բեկերից ոմանք հանդես էին գալիս կռիվները դադարեցնելու կոչերով: Նրանցից էին Զանգելանի Խոջահան գյուղից Քեարբալայ Հյուսեին բեկ Խոջահանսկին և Գենվազի Լեհվազ գյուղացի Քեարբալայ Մեխտին, որոնք իրենց հավատակիցներին պատվիրում էին Զանգեզուրում խաղաղություն պահպանել, չմղել անմիտ կռիվներ հայերի դեմ:

Բայց առանձին թուրք մարդիկ ի վիճակի չէին փոխելու ընդհանուր հակահայ տրամադրություններն իրենց ցեղակիցների մոտ:

Գանձակի նահագի 8 գավառներից միայն նահանգի հյուսիսարևելյան ծայրում ընկած **Նուխու գավառն էր**, որտեղ 1905թ. նոյեմբերին ոչ մի ընդհարում չեղավ: Դրա պատճառներից մեկը թերևս գավառի թուրք բնակչության ընդհանուր թվում սյունի դավանանքին պատկանող թուրքերի մեծ տոկոսն էր: Թուրք-հայկական պատերազմը վարում էր առավելապես շիա դավանանքին պատկանող թուրքությունը, իսկ սյուններիի մի մասը չեզոք էր:

Նուխու գավառը երջանիկ բացառություն էր կազմում, իսկ Գանձակի ողջ նահանգն արյան թատերաբեմ էր: Ծխում էին ավերակները, ամեն օր տասնյակ շիրիմներ էին բացվում անմիտ եղեռնագործության դժբախտ զոհերին ամփոփելու համար:

Եվ այսպես, Ապշերոնյան թերակղզուց մինչև Գանձակ, մինչև Երևան ու Արաքսի ափերը առատորեն հոսում էր անմեղ արյունը, ժողովուրդը Կայեն դարձած՝ իր ձեռքերը ներկում էր հարևանի արյունով: Անտեր մնացած հազարավոր հոգիներ, զավակներից զրկված մայրեր, որբ մնացած երեխաներ երկնքից գթություն էին հայցում և խաղաղության սպասում: Բայց իզո՞ւր ...

Բարձրաստիճան պաշտոնյաները արյունալի դեպքերից հետո այցելում էին աղետների վայրերը, սառն անտարբերությամբ զայլի ավետարան էին կարդում ժողովրդի գլխին և, իրենց պարտքը կատարած համարելով, հանգիստ խղճով վերադառնում էին իրենց փափուկ աթոռներին:

Անեզր խավարի վրա չէին երևում լույսի հուսատու կետեր:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Բաքվի, Երևանի և Գանձակի նահանգներից հետո 1905թ. նոյեմբերին, Գանձակի աղետից մի քանի օր անց, թուրք-հայկական կոտորածների ալիքը տարածվեց փոխարքայանիստ Թիֆլիս քաղաքում և Թիֆլիսի նահանգում:

Թիֆլիսի նահանգն ընկած էր Քութայիսի, Երևանի, Գանձակի նահանգների և Կարսի, Թերեքի, Դաղստանի շրջանների կենտրոնում: Նահանգն ուներ 9 գավառ՝ Թիֆլիսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի, Գորիի, Դուշեթի, Թելավիի, Թիոնեթիի, Սղնախի: Կովկասի բոլոր նահանգների մեջ Թիֆլիսի նահանգն ամենաբազմամարդն էր: 1897թ. մարդահամարի համաձայն նահանգում բնակվում էր 970 հազար մարդ, որի բացարձակ մեծամասնությունը վրացիներ էին, 219 հազարը՝ հայեր, 113 հազարը՝ թուրքեր[1]:

Թիֆլիսի նահանգում առաջինն ընդհարման ասպարեզ դարձավ Թիֆլիս քաղաքը:

Թիֆլիսը առանձնահատուկ դեր ուներ Կովկասի կյանքում: Վրաց թագավորության երբեմնի մայրաքաղաքը 19-րդ դարի առաջին տասնամյակներից դարձել էր փոխարքայության վարչաքաղաքական շքեղ կենտրոնը, Կովկասի հոգևոր ամրոցը, մտավորականության միջնաբերդը, կրթական ու մշակութային հաստատությունների կենտրոնավայրը:

Այսպես էր ներկայանում այն օրերի Թիֆլիսը. քաղաքը եզակի էր իր դիրքով ու կառուցվածքով՝ բաժանված բազմաթիվ թաղերի: Երևանյան հրապարակը, որ փռված էր քաղաքային դումայի առջև, աշխարհագրական իմաստով քաղաքի կենտրոնն էր, իսկ քաղաքական իմաստով՝ Թիֆլիսի զարկերակը: Հավաքարը Քուռ գետի ձախ կողմի բարձրության վրա թառած գավառատիպ թաղ էր՝ համեստ աշխատավորներով ու խանութպաններով: Շեյթան բազարում, որը հիշեցնում էր Պոլսո Սամաթիան, տիրություն էին անում Հին Նախիջևանից եկած մանր առևտրականները՝ իրենց զայֆեխանաներով: Սոլդատսկի բազարը հայտնի էր իր ձկնավաճառներով ու անհատնում մանր կրպակներով: Թիֆլիսի միջուկն էին կազմում փոխարքայի պալատը, Փառաց տաճարը, Գոլովինսկի պողոտան, Հայոց արտիստական թատրոնը, պետական օպերան: Սոլոլակը ճարպակալած հայ մեծահարուստների թաղն էր՝ շքեղ տներով, մաքուր փողոցներով և արիստոկրատ բնակիչներով, որոնց մեծ մասը, այս նկարագրության հեղինակ Մալխասի խոսքերով ասած՝ «հազիվ թե երկու տասնյակ տարիներե ի վեր Ղազախի գյուղերեն եկեր և հարստություն դիզեր էին Թիֆլիսի մեջ, որոնց չարուխները դեռ կարգին չորցած չէին, բայց որոնք անպատճառ ռուսերեն կը խոսեին, եթե նույնիսկ աղճատուած ռուսերեն»[2]:

Այս բոլոր թաղերով, անհոգ և ուրախ, անցնում էր Թիֆլիսի կինտոն՝ սրամիտ կատակներ շռայլելով: Նրա բարեձև, ճապուկ մեջքը սեղմված էր արծաթե լայն քամարով, գլխին՝ հավասարակշռված փայտե խոշոր ափսեի մեջ, նայած տարվա ժամանակին, բրգաձև դասդասված էին Գանձակի կեռասը կամ Բաթումի առաջին թարմ վարունգը[3]:

[1] Տե՛ս **"Кавказский календарь на 1905 год"**, III отд., էջ 46-47:
[2] **Մալխաս**, Ապրումներ, հատ. Ա, էջ 409-410:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 411:

Թիֆլիսի Նահանգում և փոխարքայանիստ Թիֆլիս քաղաքում ամիսներ շարունակ հնարավոր էր եղել կանխել աղետը մի շարք պատճառներով. 1) Ինչպես ասվեց, Թիֆլիսը Կովկասի կենտրոնն էր, այստեղ էին ռուս հարյուրավոր պաշտոնյաներ՝ ընտանիքներով, այստեղ էր փոխարքան իր պալատականներով: Նրանք մտահոգ էին իրենց և իրենց ընտանիքների անվտանգությամբ և չէին կարող թույլ տալ կրակոցներ իրենց շուրջը, 2) Թիֆլիս քաղաքում հայ բնակչությունն իր թվով մեծապես գերակշռում էր թուրք բնակչությանը, և այդ պատճառով վերջիններս Բաքվի փետրվարյան կոտորածներից հետո երկար ժամանակ, շուրջ 10 ամիս, չէին համարձակվում դիմել արյունահեղության, 3) Թիֆլիսում էին կենտրոնացած հայ քաղաքական կազմակերպությունների ղեկավար մարմինները, այստեղ էին լույս տեսնում հայ մամուլի կարևոր օրգանները, Թիֆլիսն էր շարունակում մնալ հայ մշակույթի կենտրոնը: Ինչպես ամեն տեղ, առավել ևս Թիֆլիսում հայերը բնավ շահագրգռված չէին, որ այստեղ խանգարվի ազգային եռուն կյանքը: Ուստի Հ.Յ. դաշնակցությունը և հայկական քաղաքական մյուս ուժերն ամեն ինչ անում էին պահպանելու խաղաղությունը Թիֆլիսում և Նահանգում, 4) Կովկասի վարչական կենտրոնում որոշ թիվ էին կազմում ուսումնառած թուրք ղեկավարները, որոնք արդեն ըմբռնում էին կովկասյան ադմինիստրացիայի խաղացած դերը թուրք-հայկական ընդհարումների մեջ և խուսափում էին իշխանությունների սադրանքների ցանցի մեջ ընկնելուց:

Թիֆլիսում բնակվող ռուս պաշտոնյաները եթե մի կողմից իբրև մարդ-անհատներ իրենց անձնական անվտանգությունից ելնելով՝ շահագրգռված չէին Թիֆլիսում խաղաղության խախտումով, ապա որպես ռեժիմի պահապաններ պիտի կատարեին վերևից եկած հրահանգները: Իսկ վերևում չփոթություն էր, խուճապ ու սարսափ:

Հոկտեմբերյան համառուսաստանյան ընդհանուր գործադուլից հետո նոյեմբերին հերթի էր դրված մի նոր վիթխարի գործադուլ: Ցարական բյուրոկրատական շենքը ճարճատում էր հեղափոխության հզոր ալիքների հարվածներից, հեղափոխություն, որի կրակները ճարակել էին նաև Կովկասը, հատկապես Վրաստանը: Տիրող վերնախավը ծրագրել էր մի նոր խլրտում առաջացնել ապստամբ ժողովրդի ծոցում, այս անգամ արդեն մաքառող Վրաստանի սրտում՝ Կովկասի մայրաքաղաքում: Եվ կրկին նա հրապարակ բերեց ամբողջ 10 ամիս Անդրկովկասում մոլեգնող թուրք-հայկական ընդհարումը:

1905թ. նոյեմբերի սկզբներին Թիֆլիսում լուր էր տարածվել, թե երեքշաբթի, նոյեմբերի 6-ին, ռուս սևհարյուրակային «հայրենասերները», խուլիգանների հետ միացած, քաղաքում կազմակերպելու են հակահայ մեծ ցույց, որը հանգելու է արյունալի ջարդի: Ժողովուրդը սարսափի մեջ էր: Հեղափոխական կուսակցությունները ձեռք էին առնում հարկ եղած միջոցները՝ դիմագրավելու սպասվելիք հարձակումները:

Դաշնակցությանը զուգահեռ մեծ ակտիվությամբ գործում էին հնչակյանները՝ առավելագույնս դրսևորելով իրենց մարտական կարողությունները: Նրանց ռազմական խորհուրդը քաղաքի բոլոր կարևոր կետերում նշանակել էր պահակախմբեր, ավելացրել խուզարկու և թռուցիկ խմբերի թիվը[1]:

Թեև «սևհարյուրակներին» հաջողվել էր նոյեմբերի 6-ի ընթացքում համախմբվել տարբեր թաղերում, բայց նրանք չկարողացան ստեղծել հզոր թափոր և կազմակերպել ահեղ ցույց: Չնայած դրան, նրանց հաջողվեց մի քանի մանր սադրանքներ կատարել: Օրինակ՝ Ավչալյան փողոցում մի գորոդովոյ սկսել էր հայհոյանքներ թափել դաշնակցություն և հնչակյան կուսակցությունների հասցեին, և երբ հնչակյան թաղային պահակները մոտենում են կատաղած ոստիկանին և նախազգուշացնում, վերջինս, հանելով ատրճանակը, սկսում է կրակել նրանց վրա: Ոստիկանին օգնության է գալիս մի «ռուս հայրենասեր» և իր հերթին հրացան պարպում: Երեք հնչակյան վիրավոր մարտիկներ, հաղթահարելով ցավը, հարձակվում են նրանց վրա և զինաթափում[2]:

Նոյեմբերի 13-ին չարագործների ձեռքով Թիֆլիսի Հավլաբար քաղաքամասում սպանվել էին մի թուրք ստրաժնիկ և մի թուրք խանութպան: Դեպքը մեծ հուզում էր առաջ բերել թուրքերի մոտ:

Նոյեմբերի 15-ին Հ.Յ. դաշնակցության Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն հրապարակեց հետևյալ կոչը.

«Քաղաքացինե՛ր.

Խուլիգան – ոստիկանությունը շարունակում է իր դժոխային գործը՝ բաժանել ժողովուրդները ու նրանց մեկմեկու դեմ հանել: Նորերումս չարագործների ձեռքով սպանված մի թուրք ստրաժնիկի և մի թուրք խանութպանի դեպքը նա նորից շահագործում է իր հանցավոր ու ոճրագործ նպատակների համար՝ առաջ բերելու արյունահեղ ընդհարումներ Թիֆլիսի տարբեր ժողովուրդների միջև ու դրանով մեծացնելու այն վիհը, որ այսօր բաժանում է հարևան ժողովուրդները, և որը նրա չարագործ աշխատանքի արդյունքն է:

Քաղաքացինե՛ր, հերիք է, զգույշ պետք է լինել այդ մեքենայություններից: Ժամանակն է մեզ ճանաչելու մեր թշնամին, ժամանակն է հասկանալու, որ **ժողովուրդները մեկմեկու թշնամի լինել չեն կարող**: Այսօրվա բաժանումը արհեստական է և ոճրագործների գործն է: Հ.Յ. դաշնակցությունը հայտնում է իր զայրույթը այդ ոճրագործության դեմ:

Լինելով հավատարիմ իր դրոշակի վրա գրած **Ժողովուրդների եղբայրության սկզբունքին**, Հ.Յ. դաշնակցությունը իր կողմից ամեն միջոց գործ կդնի գտնելու այդ չարագործ պրովոկատորներին և նրանց ըստ արժանվույն պատ-

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ.100, թ.1:
[2] Նույն տեղում:

ժելու»[1]:

Նոյեմբերի 18-ին Թիֆլիսի Ալյուրի մեյդանում Թուրքի զգեստ հագած մեկը սպանում է մի Թուրք սեյիդի: Իսկույն լուր է շրջան առնում, թե հայերն են սպանել: Բայց այս անգամ էլ գրգռիչ պրովոկատորները չեն հասնում իրենց նպատակին: Սեյիդին սպանողը բռնվում է, և պարզվում է, որ նա Թուրքի զգեստ հագած մի ռուս խուլիգան է[2]:

Նույն օրը՝ նոյեմբերի 18-ին, Թիֆլիսում լուր ստացվեց, թե Գանձակում հայերի ջարդ է տեղի ունեցել: Լուրն անհնարին էր ճշտել, քանի որ քաղաքի փոստ-հեռագրատան աշխատողները այդ օրերին գործադուլ էին անում: Շուտով գնացքով Թիֆլիս եկողները և Գանձակից փախածները մանրամասն պատմեցին սոսկալի ճշմարտության մասին:

Գանձակի ընդհարման լուրը Թիֆլիս հասնելուն պես՝ այստեղի Թուրքերի մեջ խլրտում սկսվեց:

Թեև քաղաքի Թուրք բնակչության համեմատ Թիֆլիսի հայերի թիվը մի քանի անգամ մեծ էր, բայց ժողովուրդը վախի մեջ էր այդ մի բուռն Թուրքերից: Լուրեր տարածվեցին, թե Բորչալուի Թուրքերը հարձակվելու են Թիֆլիսի վրա՝ օգնելու քաղաքում բնակվող Թուրքերին: Ասում էին նաև, թե Թալանի տենչն էր բորչալվեցի Թուրքերին մղում քաղաք:

Ընդհանուր իրարանցման մեջ տեղի ունեցավ Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստ, որի անդամները տագնապալից ելույթներ ունեցան, քանզի քաղաքի ծայրամասերից արդեն հասնում էին մտահոգիչ լուրեր: Նրանք նշում էին, որ հայկական Հավլաբար և Թուրքի մեյդան թաղերում պտտվում են զինված մարդիկ, ուստի բավական է հրացանի մեկ կրակոց, որպեսզի խառնվի ամեն ինչ: Խորհրդի նիստը որոշում ընդունեց դիմել քաղաքի հայ և Թուրք համայնքների ղեկավարներին՝ հանդիպում ունենալ և քննարկել վտանգը կասեցնելու միջոցառումների հարցը:

Կազմակերպելով հայերի ինքնապաշտպանությունը՝ Հ.Յ. դաշնակցության Թիֆլիսի կոմիտեն նոյեմբերի 21-ին բանակցությունների մեջ մտավ ՌՄԴԲԿ տեղի կոմիտեի հետ, որպեսզի վերջինիս համոզի ոչ թե մնալ կողմնակի դիտողի դերում, այլ հրապարակ իջնել և ակտիվ աշխատանք ծավալել՝ նպաստելու խաղաղության վերահաստատմանը քաղաքում: Բանակցությունների հաջող ավարտի համար անհրաժեշտ հող էր ստեղծված: Դաշնակցության և սոցիալ-դեմոկրատների միջև համաձայնության կայացման հիմնական գրավականը ցարիզմի նկատմամբ նրանց անզիջում դիրքն էր. երկուսն էլ Թուրք-հայկական ընդհարումների գլխավոր դերակատարը համարում էին ոճրագործ կառավարությանը:

ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, քննարկելով դաշնակցության առաջարկը,

[1] «Մշակ», N 230, 18 նոյեմբերի 1905թ.:
[2] Նույն տեղում, N 231, 19 նոյեմբերի 1905թ.:

գտավ, որ քաղաքում խաղաղության վերահաստատման ուղղությամբ սոցիալ-դեմոկրատներն ի վիճակի կլինեն աշխատանք տանել, եթե հայկական զույգ կուսակցությունները՝ Հ.Յ.Դ.-ն և Հնչակը, իրենց տրամադրեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար*:

Կովկասում սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները և մենշևիկները գտնվում էին միևնույն կուսակցական կազմակերպություններում: Վրաստանում այդ կազմակերպությունների մեջ մենշևիկները հիմնականում ներկայացված էին հանձինս վրացիների: Նույն պատկերն էր նաև ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեում: Ինչպես ՌՄԴԲԿ կովկասյան կազմակերպություններում, այնպես էլ նրանց ղեկավար մարմնում՝ ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեում, անհաշտ պայքար էր գնում բոլշևիկների (որոնք հիմնականում հայեր և ռուսներ էին) և մենշևիկների (որոնց բացարձակ մեծամասնությունը վրացիներ էին) միջև: Կովկասի մյուս բոլոր նահանգներում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ ղեկավար դեր ունեին բոլշևիկները:

Հարկ է նշել, որ այդ տարիներին հայ ազգային կուսակցությունները՝ դաշնակցությունը և Հնչակը, գերադասում էին գործ ունենալ հայ և ռուս բոլշևիկների, քան վրաց մենշևիկների հետ:

1905թ. աշնանը Հ.Յ. դաշնակցության մարմինները և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները գնալով հաճախակի սկսեցին համագործակցել և համատեղել իրենց գործողությունները: Նոյեմբերի 21-ին Թիֆլիսում սկսված բանակցություններն այդ համագործակցության դրսևորումներից մեկն էր:

Նախորդ օրը, նոյեմբերի 20-ին, Թիֆլիսում սկսել էր լույս տեսնել սոցիալ-դեմոկրատների «Кавказский рабочий листок» ամենօրյա լրագիրը, որի առաջին համարի առաջնորդողում ասվում էր, թե Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը չի կարող բավականանալ ցարի խոստացած բարենորոգումներով, այլ պետք է ձգտի երկրում հաստատել դեմոկրատական հանրապետություն, այնպիսին, որտեղ հնարավոր լինի իրագործել սոցիալիզմի սկզբունքները:

«Դեմ-դիմաց կանգնած են ցարը և ժողովուրդը,- նշված էր առաջնորդո-

* Հնչակյան գործիչ Գրիգոր Եղիկյանը վկայում է. «Հայ-Թուրքական ընդհարումների օրերին Ստալինը, որ ռուս ընկերավարական-բանվորական կուսակցության բոլշևիկ հատվածի ռազմական կազմակերպությունն էր ղեկավարում, մի օր դիմում է Թիֆլիսի հնչակյաններին և դրամ ուզում ասելով, թե նրանք դրամ շատ ունեն և պարտավոր են օգնել դրամ չունեցող բարեկամ կազմակերպություններին: Հնչակյանները պատասխանում են, որ իրենց գանձարանում եղած գումարները հանգանակված են միմիայն Թուրք-հայկական ընդհարումների օրերին հայերին զինելու և զինված խմբերը պահելու համար: Ստալինը արհամարհանքով ասում է. «Բնական է, որ մեզ չէք օգնի, որովհետև դուք ներկայանում էք Թիֆլիսի հայ դրամատիրության ծառաները և նրա շահերը պաշտպանելու համար նրա նվիրած դրամներով կոտորել էք տալիս Թուրք գյուղացիներին ու բանվորներին: Մեղք է նույնիսկ ձեզ «բարեւ, աստծու բարին» ասել» (**«Հայրենիք»**, N3 (195), հունվար, 1939, էջ 145-146):

ղում: - Ցարի ինքնակալություն կամ ժողովրդի ինքնիշխանություն: Մեկի պարտությունը և մյուսի հաղթությունը կարող է լինել միայն վճռական ճակատամարտից հետո, որը կլուծի կյանքի ու մահվան հարցը թշնամի կողմերի համար: Այդ կռիվը դեռ վրա չի հասել, այն դեռ առջևում է: Եվ ռուսական հեղափոխության հուժկու տիտանը՝ համառուսական պրոլետարիատը, այդ կռվին է պատրաստվում բոլոր ուժերով, բոլոր միջոցներով»[1]:

Դաշնակցության և սոցիալ-դեմոկրատների նոյեմբերի 21-ի խորհրդակցությունը հաջող ելք ունեցավ. երկու կողմերը պայմանավորվեցին գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի քաղաքում չխախտվի խաղաղությունը:

Նույն օրվա՝ նոյեմբերի 21-ի երեկոյան Թիֆլիսի քաղաքային վարչության դահլիճում տեղի ունեցավ քաղաքի հայերի և թուրքերի ներկայացուցիչների համատեղ խորհրդակցություն՝ քաղաքագլխի պաշտոնակատար իշխան Ջերքեզովի նախագահությամբ: Թուրքերը եկել էին հայտնելու, որ իրենց կողմից հայերի դեմ հարձակման որևէ փորձ չի լինելու: Իրենց հերթին հայերը նրանց հավաստիացրին, որ իրենք երբեք նախահարձակ չեն եղել և այսուհետ նույնպես չեն լինելու:

Երկար բացատրություններից հետո խորհրդակցությունը երկու ազգերի ներկայացուցիչներից ընտրեց մի հանձնախումբ, որը պետք է քննության ենթարկեր ծագած ամեն մի թյուրիմացություն[2]:

Չնայած ձեռնարկած միջոցներին, անհնարին եղավ խուսափել աղետից: Հետագայում պարզվել էր, որ խաղաղ համակեցության խոստումներ տալով Թիֆլիսի թուրքերի ղեկավարները միաժամանակ տենդագին կերպով նախապատրաստվում էին ընդհարման: Դրան նպաստել էին Դանձակում տեղի ունեցած «հաղթական» կռիվները և Կովկասի մայրաքաղաքում ընդհարումներ սկսվելու դեպքում օգնության գալու մասին Բորչալուի գավառի թուրքերի խոստումները:

Տեսնելով թուրքերի խորհրդավոր անհանգստությունը՝ դաշնակցական զինված խմբերը շրջապատեցին նրանց թաղը և դիրքեր գրավեցին: Մեկ օր հակառակորդ կողմերը այդպես մնացին դեմ առ դեմ:

Նոյեմբերի լույս 22-ին, երեքշաբթի գիշերը, Շեյթան բազարի կողմում գտնվող իրենց տների պատուհաններից ու պատշգամբներից, ինչպես նաև քարվանսարայից թուրքերը սկսեցին գնդակներ տեղալ հայկական շինությունների ու խանութների վրա: Այդ թաղում ապրող հարյուրավոր հայեր, հիմնականում կանայք, երեխաներ ու ծերեր, սկսեցին փախչել դեպի Սոլոլակ և Վերա: Շատերը սարսափից լալիս էին:

Անսպասելի հրացանաձգությունից հանկարծակիի եկած հայ մարտիկները շատ շուտ ուշքի եկան և փոթորկալի կրակի տակ առան քաղաքի թուրքաց

[1] **"Кавказский рабочий листок"**, N 1, 20 ноября (3 декабря) 1905г.
[2] **«Մշակ»**, N 233, 23 նոյեմբերի 1905թ.:

մասը: Միահամուռ որոտ էր բոլոր կողմերից: Մի կատաղի պատերազմ: Երկու կողմերն էլ բարիկադներ սարքեցին փողոցների բերաններում:

Նկատի ունենալով այդ պահը՝ «Մուրճ» ամսագրի խմբագիր Լևոն Սարգսյանը գրում էր, որ թուրք մարդասպաններից կազմված ոհմակների «առջև ցցվեցին ոտից գլուխ զինված հայ կտրիճները», որոնք բնավ նման չէին Հռոմի կրկեսների այն քրիստոնյաներին, «որոնք հույսները դրած նախախնամության վրա՝ աղոթքներ էին մրմնջում այն ժամանակ, երբ գազանները հոշոտում էին նրանց մարմինը և լիզում իրենց արյունոտ դունչերը...»[1]:

Քաղաքում էր դաշնակցության ղեկավարներից Ռոստոմը, որի ցուցումով կուսակցության տեղի ղեկավարներն անմիջապես անցան ինքնապաշտպանության կազմակերպմանը՝ հրապարակ հանելով շուրջ 500 կամավոր, որոնք տեղաբաշխվեցին Քուռ գետի աջ ու ձախ կողմերի քաղաքամասերում:

Արմեն Դարոն, որ դաշնակցության արևելյան բյուրոյի կողմից նշանակված էր Թիֆլիսի նահանգի ինքնապաշտպանության ղեկավար, առանձնեց Քուռի աջ կողմի հրամանատարությունը: Նա ռազմական գծով իր օգնական նշանակեց ռուս-ճապոնական պատերազմից նոր վերադարձած կապիտան Բաղդասարյանին, իսկ վարչական գծով՝ դաշնակցական գործիչ, ճարտարապետ Տիգրան Ստեփանյանին: Քուռի ձախ ափին ընկած Հավլաբարի ընդարձակ ու ամենահայաշատ քաղաքամասում Արմեն Դարոն հրամանատար կարգեց դաշնակցական հին գործիչներից Տուրբախին: Պարենավորման գործն իր վրա վերցրեց դաշնակցության Թիֆլիսի կ. կոմիտեն, հաստատվելով Պրետոնովների առանձնատան մեջ[2]: Մարտիկների պարենավորումը հենց սկզբից շատ լավ կազմակերպվեց՝ շնորհիվ քաղաքացիների անձնվեր աջակցության[3]:

Նախօրյակին Թիֆլիս գենքի հերթական խմբաքանակ էր հասցրել Թադևոս Ամիրյանը, որն իր տարերքի ուժով անմիջապես մխրճվեց ծագած կռվի մեջ:

Նոյեմբերի 23-ի (չորեքշաբթի) առավոտյան հայկական շարքերն ամուր կառչած էին իրենց դիրքերին: Հայոց պաշտպանությունը դարձավ անառիկ: Մարտիկների շարքերում խիստ կարգապահություն էր, յուրաքանչյուրը քաջ ըմբռնում էր իր պարտքն ու անելիքները: Բացի կազմակերպված կանոնավոր զինվորներից, քաղաքի զանազան թաղերն ունեին նաև իրենց տեղական ուժերը, որոնք ենթարկվում էին ընդհանուր զինվորական մարմնին: Կռվի մասնակիցներից մեկը հետագայում գրել է. «Հայերը շատ լավ էին կազմակերպված. հայ կանայք կերակուր էին բերում դիրքերը, ամեն անկյունում գործում էին Հայ կարմիր խաչի անդամները՝ առաջին օգնություն հասցնելով վիրավորներին»[4]: Իրական ուժը քաղաքում դարձան հայ զինվորական

[1] **«Մուրճ»**, N11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905, էջ 258-259:
[2] **«Հայրենիք»**, N 5, մարտ, 1923, էջ 42,44:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, N 6(239), նոյեմբեր-դեկտեմբեր, 1943, էջ 43:

խմբերը: Բանը հասել էր նրան, որ ոստիկանությունը չէր համարձակվում փողոց դուրս գալ, և հրապարակն ամբողջովին մնացել էր հայ մարտիկներին: Նրանք կանգնեցնում և խուզարկում էին դեպի Թուրքական Թաղը գնացող ցանկացած մարդուն, այդ թվում ռուս զինվորներին ու սպաներին, որպեսզի զենք ու ռազմամթերք չհոսի Թուրքական կողմը[1]:

Ասպարեզից քաշվելով՝ իշխանությունները հրապարակն ամբողջովին թողեցին առճակատող կողմերին, որպեսզի անմիտ կռվում նրանք՝ թե՛ հայերը և թե՛ Թուրքերը, արյունաքամ լինեն ու ջլատվեն: Ամեն ինչ կարծես գնում էր իրենց ցանկացած հունով:

Բայց ադմինիստրացիայի հաշիվները սխալ դուրս եկան: Իրենց բարձր կազմակերպվածությամբ, կարգապահությամբ, մարտիկների խիզախությամբ հայկական զինված խմբերը դաշնակցության գլխավորությամբ փաստորեն տեր դարձան Թիֆլիսին:

Առաջին պահերի հրացանների որոտից սարսափած հայ քաղաքացիները կամաց-կամաց խաղաղվեցին՝ իրենց ճակատագիրը վստահելով մարտական խմբերին: Այդ խմբերի շնորհիվ էր, որ հայկական քաղաքամասերում ժողովուրդը շարունակում էր ապրել սովորական կյանքով, մինչդեռ Թուրքերն իրենց Թաղերում ռազմական դրության մեջ էին:

Նոյեմբերի 23-ի օրվա առաջին կեսին դադարել էին կրակոցները: ՌՄԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի կոչով քաղաքի 20 հազար բանվոր Թողել էր աշխատանքը և դուրս եկել ցույցի: Շարասյունը, որին հետևում էր նաև մուսուլմանական մի ամբոխ, սպիտակ դրոշներ պարզած, շարժվեց դեպի Թուրքական մասը: Ցուցարարները կանգ առան Օրթաճալայում, և սկսվեց միտինգ: Այստեղ էին ռուս պաշտոնյաներ, Թիֆլիսի Թուրք ղազին, քաղաքի Թուրք համայնքի ղեկավարներից մի քանիսը, Թիֆլիսի պարսկական հյուպատոսարանի աշխատակիցներ: Արտասանվեցին ճառեր՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն և Թուրքերեն[2]: Սոցիալ-դեմոկրատներն իրենց ելույթներում մերկացնում էին իշխանությունների նյութած մեծ դավը: Նրանցից մեկը մի կրակոտ Թուրք երիտասարդ էր, որը նույնպես նշում էր, Թե հայ-Թուրքական կռիվը ոստիկանության և կառավարության սադրանքների արդյունք է: Միտինգին ներկա մի քանի Թուրք մեծամեծներ սարսափի մեջ էին ընկել և փորձում էին ընդհատել ելույթ ունեցողին՝ ստրկական հայացքներ նետելով միտինգին ներկա ռուս պաշտոնյաների վրա՝ հասկացնել տալով, Թե իրենք համամիտ չեն «դալի» (գիժ) երիտասարդի ասածներին: Նրան հաջորդեց Հ.Յ.Դ. ներկայացուցիչը, որը նախ հայերեն դիմեց հայերին, ապա ռուսերեն՝ Թուրքերին: Նրա ելույթի բովանդակությունը մոտավորապես այսպիսին էր. «Բա՛վ է այդ անիմաստ կռիվը, հերիք

[1] **«Հայրենիք»**, N 5, մարտ, 1923, էջ 42:
[2] «1905 Թվի հեղափոխությունը» (ժողովածու), ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատ., Մոսկվա, 1930, էջ 206-207:

է խաբվելով իրար կոտորենք: Ասեմ ձեզ, Թուրք եղբայրներ, որ հայի համբերության բաժակն արդեն լցված է, մեր ջղերը լարված են ծայրահեղորեն: Ձեր կողմից ամենաչնչին ադիթն իսկ կարող է մեզ հանել համբերությունից»[1]: Նա կոչ արեց լրջախոհության և հույս հայտնեց, որ Թուրք ժողովուրդը շուտով կհամոզվի, Թե ով է իր իրական Թշնամին:

Հռետորների ելույթներն ընդհատվում էին որոտընդոստ ծափերով: Ելույթով հանդես եկավ նաև Թիֆլիսի նահանգապետ Ռաուշ ֆոն Տրաուբենբերգը, որը փորձում էր ժխտել Թուրք-հայկական կոտորածներում ադմինիստրացիայի պրովոկացիոն դերը: Միտինգի պահին Թուրքերը սկսեցին բացել խանութները: Բոլոր կողմերից լսվում էին «Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատիան», «Կեցցե՛ հաշտությունը», «Կորչի՛ անմիտ արյունահեղությունը» բացականչությունները: Միտինգին նախագահողը իր եզրափակիչ խոսքում բանվորներին առաջարկեց դադարեցնել գործադուլը, բայց ամեն բոպե պատրաստ լինել նոր կոտորածների դեպքում նոր գործադուլ սկսելու:

Միտինգը վերջացավ, և բանվորները ցրվեցին՝ հեղափոխական երգեր երգելով[2]:

Դեռ նոր էր վերջացել միտինգը, երբ հրացանային ուժգին կրակոցները նորից ցնցեցին Թիֆլիսը: Ոստիկանությունը և զորքը կողմնակի դիտողի դերում էին: Այդպես էր հրամայված: Զմիջամտելով զարգացող իրադարձություններին՝ իշխանությունները, դրանով իսկ, ուզում էին ցույց տալ, Թե մեղքն իրենցը չէ, և դրա լավագույն ապացույցը քաղաքում խաղաղությունը վերականգնելուն ուղղված դաշնակների և սոցիալ-դեմոկրատների համատեղ ջանքերի տապալումն է, որոնց կամքին հակառակ է տեղի ունենում նախորդ օրվա կռվի վերսկսումը:

Զորքի և ոստիկանության «չեզոք» պահվածքը հայերին մղեց զենք ձեռք բերելու գործողությունների: Եթե կառավարությունը չէր կատարում քաղաքացիներին պաշտպանելու իր անմիջական պարտականությունը, ապա մարդիկ պետք է զենք ունենային և իրենք պաշտպանեին իրենց անձն ու գույքը: Եվ ամբոխը դիմեց դեպի զինավաճառանոցները. կողոպտվեցին Գոլովինսկի մայրուղու վրա գտնվող Կուրցի մեծ վաճառատունը, Մաղաթյան կըղզում Սարգսյանի խանութը, իսկ Միջին փողոցի կողմերում մի քանի արհեստանոցներ, որտեղ սառը զենք էին պատրաստում[3]:

Ժամը 2-ի մոտերքում զորքը վերջապես շարժվեց: Դրագունները Թատերական ձևերով սկսեցին «զորազբոսներ» կատարել Սոլոլակում ու քաղաքի ուրիշ մասերում: Դրվեցին պահակներ բոլոր գլխավոր հրապարակներում: Չնայած այդ շարժումներին, զինվորներն ու ոստիկանները կրկին հանդիսատեսի դե-

[1] **«Մշակ»**, N 234, 27 նոյեմբերի 1905թ.:
[2] **"Кавказский рабочий листок"**, N 4, 27 ноября (9 декабря) 1905г.
[3] **«Մշակ»**, N 234, 27 նոյեմբերի 1905թ.:

ում էին: Բացառություն կազմեց այն զորամասը, որը գրավեց Մամա-Դավթի բուսաբանական այգու վրայի լեռնաշղթան: Բարեբախտաբար զորամասում կային հայասեր ռուս սպաներ, որոնք, հակառակ ադմինիստրացիայի սպասածի, օգնեցին հայերին՝ համազարկի բռնելով թուրքական դիրքերը[1]: Իսկ քաղաքում դարձյալ իսկական պատերազմ էր: Անընդհատ փոթորկալի հրացանաձգության պայմաններում չափվում էին երկու կողմերի ուժերը:

Հայ մարտիկները կռվում էին մեծ ոգևորությամբ ու պարտքի խոր ըմբռնումով: Նրանց պահվածքը, նվիրվածությունը, անվեհերությունն առաջ էին բերել ընդհանուր հիացում: Նոյեմբերի 23-ի ժամը 3-ին արդեն 42 զոհ կար, որոնցից 36-ը թուրքեր էին, 3-ը՝ հայ, 2-ը՝ ռուս, 1-ը՝ վրացի[2]:

Հերոսաբար էին կռվում հնչակյան ջոկատները և պահակախմբերը:

Հնչակյան մարտական Ա խումբը դիրքեր էր բռնել կռվի ամենավտանգավոր տեղերից մեկում՝ Շեյթան բազարի և Այուրի մեյդանի շրջակայքում: Ջոկատի մարտիկները ճակատ առ ճակատ կռվում էին թուրք առաջապահ ուժերի դեմ, իսկ երկու թռուցիկ կտրիճ խումբ, մտնելով թուրքերի թաղերը, թիկունքից խփել էր հակառակորդի դիրքերին՝ առաջացնելով խուճապ:

Միաժամանակ հնչակյան զինյալները վեհանձն ասպետություն էին հանդես բերում թուրք գերիների և պատանդների նկատմամբ, դրսևորում բարոյական բարձր նկարագիր:

Նոյեմբերի 23-ին քաղաքագլուխ Վերմիշևը դիմում է հնչակյան մարտական կենտրոնին և խնդրում Թիֆլիսի դումայի թուրք անդամներին ապահով առաջնորդել թուրքական քաղաքամաս: Հնչակյան զինվորները կատարում են այդ խնդիրը, նրանց հանձնում խմբապետերից թավրիզեցի Աբասին և վերադառնում: Հաջորդ օրը թուրքական թաղից հնչակյան զինվորական խորհուրդը ստանում է հետևյալ գրությունը: «Մենք այսօր միմյանց դեմ գնդակ ենք արձակում, ձեր խմբերը մեզ շատ կորուստներ են պատճառում, բայց մենք նաև ականատես ենք ձեր ասպետական գործերին: Դուք չեք թափում անմեղ ու անզեն մարդկանց արյուն, չեք արատավորում ձեր զենքը: Մնալով որպես ձեր դեմ կռվող թշնամի՝ միաժամանակ մենք հարգանք ենք փոխանցում «զանգի նշան» ունեցողներիդ, հավատացած լինելով, որ կշարունակեք մնալ նույն «ազնիվ թշնամին»»[3]:

Հետախույզ խմբի անդամներից մեկը հնչակյան զինվորական խորհրդին լուր է տալիս, թե զանազան ազգերի խուլիգաններից կազմված մի ամբոխ Մանթաշյանի քարվանսարայում կողոպտում է թուրք «Սամադով և ընկ.» մետաքսեղենի ու արծաթեղենի խանութը: Անմիջապես այնտեղ է հասնում

[1] **«Հայրենիք»**, N6 (239), նոյեմբեր-դեկտեմբեր, 1943, էջ 43:
[2] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ.100, թ.2:
Հնչակյան զինվորները իրենց կրծքերին կրում էին զանգակաձև (հնչակաձև) տարբերանշան:
[3] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ.100, թ.1 (շրջերես):

հնչակյան է խումբը և հալածում ամբոխին: Կողոպտիչներից մեկը, մի ահագին կապոց ձեռքին, հակառակ հնչակյան զինվորի ազդարարության, շարունակում է փախչել: Զինվորը ստիպված կրակում ու վիրավորում է նրան: Կողոպտվածը վերադարձվում է խանութ, իսկ վիրավորին ուղարկում են հիվանդանոց: Պարզվում է, որ զինված կողոպտիչը հայ է:

Դեպքից անմիջապես հետո հնչակյան զինվորական խորհուրդը հանդես է գալիս հայերին ուղղված դիմումով, ուր ասված է. «Հայը զենք է վերցրել պատերազմելու, այլ ոչ թե կողոպտելու համար, որպիսիք են մեր ավազակ ոսոխները...»[1]:

Մխիթարական էր, որ Թիֆլիսի հայ մարտական խմբերի միջև տիրում էր կատարյալ համերաշխություն[2]: Հայության գլխին կախված սպառնալիքը դաշնակցականներին մերձեցրել էր հնչակյանների հետ և, դա եզակի պահերից մեկն էր, որ նրանք համադրում էին իրենց ջանքերը: Թեև դաշնակցության ուժը քաղաքում անհամեմատ մեծ էր, բայց այժմ նա խուսափում էր արհամարհել հնչակյանների հնարավորությունը, մանավանդ որ վերջիններիս շարքերում կատարյալ կարգապահություն էր, հնչակյան մարտիկները հանդես էին բերում ոչ պակաս քաջություն:

Այն օրերի հնչակյան փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Առ այժմ դիմադրում է Թիֆլիսը: Եվ ո՞ւմ շնորհիվ. հեղափոխական բոլոր ուժերի և կուսակցությունների ջանքերի: Որքա՜ն ուրախալի է տեսնել տարբեր կուսակցությունների զինվորների խիզախումները: Այս արյան օրերում չքացել են քենն ու ատելությունը. այլևս հնչակյան, դաշնակցական, սոցիալիստ-հեղափոխական չկա, բոլորն էլ կողք կողքի կռվում են ընդհանուր թշնամու դեմ: Հնչակյանների և դաշնակցականների անձնվիրությունը, կարգ ու կանոնը, զինվորական դիսցիպլինան և դեպի թշնամին ցույց տված ասպետությունը՝ նույնիսկ մեր ոսոխների՝ կռվող թաթարների զարմանքը և հիացմունքն են առաջ բերել»[3]:

Ինչպես միշտ ու ամենուր, առավել ևս Թիֆլիսում, հայ բուրժուաները մի կողմ քաշված դողում էին իրենց անձի և ունեցվածքի վրա: Միքայել Վարանդյանը գրում էր.

« ... Հիացմունքով կը դիտեր մեր մարտական շարքերը նաև հռչակավոր Սոլոլակի հայ պճնազարդ, օտարացած բուրժուազիան, որ կը ներկայացներ կովկասեան մայրաքաղաքի ամբողջ հարստությունն ու պերճանքը և որ մինչ այդ քար անտարբերություն էր ցուցահաներ հայ մարտական կազմակերպութեան և անոր դատին հանդեպ ...: Այժմ, երբ իր կաշին պետք էր ազատել, իր հոյակապ ապարանքներն ու գույքերը պետք էր փրկել կողոպուտե և հրդեհե,

[1] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ.100, թ. 1 (շրջերես):
[2] Տե՛ս **«Մշակ»**, N 236, 30 նոյեմբերի 1905թ.:
[3] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ.100, թ. 1 (շրջերես):

այժմ, երբ իշխանություններն լքված թշվառորեն նա կը դողա՜ր թուրքական հրոսակներուն առջև, – այդ ապիկար, հավերժորեն անպարտաճանաչ, եսամոլ դասակարգը ինչպիսի՜ հպարտությամբ կը դիտեր անոնց խրոխտ ու անվեհեր կեցվածքը և կը տրամադրեր իր չքեղ պալատները մեր զինվորական մարմիններուն և այժմ արդեն քիչ կը սակարկեր իր նյութական աջակցությունն ևս ինքնապաշտպանության գործին համար ...»[1]:

Նոյեմբերի 23-ի երեկոյան Հ.Յ. դաշնակցության Թիֆլիսի կ. կոմիտեն հետևյալ շրջաբերականը հղեց քաղաքի հայ և թուրք բնակչությանը:

«Այս դառն ու արյունալի օրերում Հ.Յ. դաշնակցությունը նորից կոչ է անում հայ ու թուրք ժողովրդին: Նա դիմում է ձեզ, աշխատավոր ժողովուրդ, ձեզ, որ կրծքի վրա տանում եք տանջանքի ու ցավի բեռը, ձեզ, որ քամում եք դավաճանների ու ոճրագործների եղբայրասպան հանցանքի դառնությունը: Եվ տասն ամիս է, որ սկսվել է եղբայրասպան կռիվը, երկուստեք ոչնչացումը, տասն ամիս է, որ մեր հայրենիքի ամեն մի անկյունում, ինչպես փոթորիկ, անցնում է ավերածություն, հրդեհ, թալան ու կողոպուտ:

Նույն փոթորիկն է, որ այսօր կախված է նաև Թիֆլիսի հայ ու թուրք ազգաբնակչության գլխին, սպառնալով այսքան անմեղների: Հերիք է այսքան զոհեր ու արյուն, որի դեմ բողոքում է մարդկային զգացմունքը և խիղճը:

Երեկվա և այսօրվա դեպքերի ու զոհերի առթիվ մենք հայտնում ենք մեր ցավն ու վիշտը: Միաժամանակ կոչ ենք անում երկու ժողովուրդներին՝ չկորցնել սառնասրտությունը և զոհ չը գնալ ոճրագործ պրովոկացիաների»[2]:

Հաշվի առնելով, որ առանձին հայ զինյալներ քաղաքում թույլ էին տվել անկարգություններ, որոնք արտահայտվել էին առանձին խաղաղ թուրք քաղաքացիների խուզարկումով կամ սպառնալիքներով, Հ.Յ. դաշնակցության Թիֆլիսի ինքնապաշտպանության կենտրոնական մարմինը նույն օրը՝ նոյեմբերի 23-ին, ցրեց մի շրջաբերական, որով խստիվ պատվիրում էր կարգապահություն: Այնտեղ ասված էր. «Թող ոչ ոք չը համարձակվի անցորդներին խուզարկել, զենքերը խլել կամ բռնել և բանտարկել, եթե նրանք հարբած չեն և անկարգություններ չեն անում կամ զենքը հանած՝ խռովության և հուզմունքի տեղիք չեն տալիս: Զինվորական դատի կենթարկվեն մեր զինվորներից նրանք, որոնք հրազեն կը պարպեն անմեղ և խաղաղ քաղաքացիների վրա»[3]:

Նոյեմբերի 23-ի երեկոյան քաղաքի թուրքական մասը պաշարված էր հայ մարտական խմբերով, որոնք գիշեր ու ցերեկ գնդակոծության տակ էին պահում ամեն ինչ: Նրանց ուժգին հարվածներից թուրքերն արդեն ընկրկել էին և ընկճվել հոգով, քանի որ մեծ կորուստներ ունեին:

[1] Միքայել Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 108:
[2] «Դրոշակ», N 1(167), հունվար, 1906, էջ 15:
[3] Նույն տեղում:

Այդ նույն ժամերին քաղաքի կենտրոնում տեղի ունեցավ հայ և վրաց կուսակցությունների ներկայացուցիչների ժողով, որին մասնակցում էին նաև քաղաքագլուխը, նրա տեղակալը, մի քանի թուրք հասարակական և հոգևորական գործիչներ: Նոյեմբերի լույս 23-ի գիշերը, ժամը 1-ին, ժողովը որոշում է երկու հոգու՝ մենշևիկներ Արամայիս Երզնկյանին և Թուրք Օմար Ֆայիկին ուղարկել թուրքական թաղ, որպեսզի նրանք այնտեղ բացատրեն սադրանքի պատճառներն ու էությունը և հայտարարեն, որ հայերի կողմից հարձակում չի լինելու:

Գիշերով անցնելով կրակոցները և հրացանների նշանառության տակ վերցրած Ալրի մեյդանի տարածքը՝ պատվիրակները հասնում են թաղի գլխավոր մեջիդը, ուր հավաքված էր թուրքական ժողովարանը: Այստեղ էին թուրք հասարակական գործիչներ, կրոնապետեր և ինքնապաշտպանության ղեկավարներ: Հետագայում անդրադառնալով պատվիրակության առաքելությանը՝ Ա.Երզնկյանը գրել է. «Անմիջապես գումարում եմ ժողով, հայտնում եմ մեր խորհրդակցության որոշումները, պարզում կառավարության դերը պրովոկացիայի գործում և հանգստացնում [ներկաներին], որ ձեռք կառնվեն բոլոր միջոցները՝ ապահովելու նրանց [անվտանգությունը]: Նույն ճանապարհով ժամը 4-ին (գիշերվա) վերադառնում եմ քաղաքի հայկական մասը»[1]:

Գիշերը հրացանաձգությունը լրիվ դադարեց, տիրեց մեռելային լռություն: Թեև պատվիրակները «բարի լուրեր» էին բերել, բայց հայկական ինքնապաշտպանության ղեկավարները թերահավատ էին: Ուստի մթության մեջ տենդագին աշխատանք էր կատարվում: Ձեռք բերած համաձայնության հիման վրա սոցիալ-դեմոկրատները թուրքի մեյդանի վրա հսկող դաշնակցականների դիրքերն ուղարկեցին զինված 20 հոգու, որոնք այնտեղ մնացին մինչև ժամը 4-ը և ինչ-որ հրահանգով հեռացան: Առաջվա պես դիրքերում մնացին միայն դաշնակցական մարտիկները: Քիչ անց սրանք էլ ցրվեցին ու գնացին այս ու այն կողմ հանգստանալու՝ համոզված, որ խաղաղությունն այլևս չի խանգարվելու:

Նոյեմբերի 24-ի (հինգշաբթի) վաղ առավոտյան Հ.Յ.դաշնակցության կամավորները, ելնելով նրանից, որ ամբողջ գիշերը խաղաղ է անցել, սկսեցին ազգաբնակչությանը հորդորել՝ բացել խանութներն ու արհեստանոցները և ընդհանրապես զբաղվել սովորական աշխատանքով:

Ժամը 8-ին մի քանի բարեմիտ հայ երիտասարդներ կառք են նստում և մտնում թուրքական թաղը, գոչելով. «Մենք եղբայրներ ենք, պատճառ չկա մեր կռիվներին, եկեք բացենք խանութները, եկեք վերջ տանք թշնամությանը»: Նրանց շուրջը հավաքվեցին և՛ թուրքեր, և՛ հայեր: Վերջիններս խկույն արձագանք տվեցին և բացեցին շուկայի մոտերքում գտնվող իրենց սրճարաններն ու խանութները: Հավաքված թուրքերը նույնպես տվեցին

[1] «1905 թվի հեղափոխությունը» (ժողվածու), էջ 208-209:

համաձայնություն և կամաց-կամաց հեռացան հայ երիտասարդներից: Երբ սրանք մնացել էին առանձին, շրջակա Թուրքերի տներից հանկարծակի հրացանային կրակ տեղաց, որի հետևանքով սպանվեց հայերից մեկը և վիրավորվեցին մի քանիսը: Նույն պահին մսագործ Ալի-Բալան 30-ի չափ զինված մարդկանցով հարձակում է գործում «Աշուղ Ջիվանի» սրճարանի վրա: Թուրքերը, կրակ բացելով, սպանում են սրճարանի անդեն ծառայողներից մեկին և վերքեր հասցնում ուրիշ երկու ծառայողների: Երբ սրճարանի հաճախորդներից մի հայ երիտասարդ, հանելով ատրճանակը, կրակում և սպանում է հարձակվողներից մեկին, հրոսակախումբն անմիջապես փախուստի է դիմում[1]:

Ընդհարումը կարճ տևեց, իսկ երեկոյան կողմ հատուկենտ կրակոցները նույնպես դադարեցին: Դրանից հետո դաշնակցության Թիֆլիսի կ.կոմիտեն հրապարակեց «Թիֆլիսի ազգաբնակչությանը» վերտառությամբ շրջաբերականը, ուր նկարագրված էր օրվա ուխտադրուժ դեպքը: Շրջաբերականը վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Այսպես ուրեմն, մի անգամ ևս մեր դրացի Թուրք ամբոխը դավաճանեց իր խոսքին: Սրանով պարզ է, թե ում վրա է ծանրանալու գալիք աղետների պատասխանատվությունը»[2]:

Մի քանի ժամ անց Հ.Յ. դաշնակցության Թիֆլիսի կ.կոմիտեն մի նոր շրջաբերական տարածեց, ուր ասված էր.

«Ի նկատի ունենալով երեկ քաղաքում պատահած մի շարք սպանության ու կողոպուտի քստմնելի դեպքերը՝ հարկ ենք համարում հիշեցնել հասարակությանը, որ ինքնապաշտպանության նպատակն է միայն պաշտպանվել՝ երբ տեղի կունենա հարձակում խաղաղ ու անմեղ քաղաքացիների անձի ու գույքի վրա: Վնասել խաղաղ քաղաքացիներին, բարբարոսներին վայել միջոցների դիմել՝ թալանել, կողոպտել ու հրդեհել՝ ամենախիստ կերպով արգելվում է»[3]:

Այս ծանր պահին վրաց սոցիալիստ ֆեդերալիստների թերթի խմբագրատանը տեղի ունեցավ հեղափոխական կուսակցությունների Թիֆլիսյան մարմինների խառը ժողով, որին մասնակցություն բերեցին ՌՄԴԲԿ-ի վրացական հատվածը, Հ.Յ. դաշնակցության տեղի կ.կոմիտեն, էսէռների կուսակցության Թիֆլիսի կոմիտեն և վրաց ֆեդերալիստների ներկայացուցիչները[4]: Վրաց գործիչները հայտարարեցին, թե իրենք այն համոզմանն են հանգել, որ աղետն ամեն ժամ կարող է անվերահսկելի դառնալ, ուստի անհրաժեշտ է դիմել տվյալ պահի համար միակ արտակարգ և անսովոր միջոցի, այն է՝ զինել սոցիալ-դեմոկրատների ազդեցության տակ գտնվող վրացի բանվորներին: Նրանց կարծիքով միայն չեզոք ու անկողմնակալ երրորդ ուժն ի վիճակի կլիներ քով-

[1] «Մշակ», N 234, 27 նոյեմբերի 1905թ.:
[2] «Դրոշակ», N 1(167), հունվար, 1906, էջ 15:
[3] Նույն տեղում:
[4] «1905 թվի հեղափոխությունը» (ժողովածու), էջ 209:

քովի բերել հակամարտ կողմերին և հաշտություն կայացնել:

Թեև ժողովին մասնակից դաշնակցականները տարակուսում էին առաջարկվող միջոցառման արդյունավետության մեջ, բայց, ընդհանուր խաղաղարար տրամադրությունից ելնելով, որոշեցին ոչ միայն որևէ խոչընդոտ չհարուցել, այլև նպաստել ծրագրի իրականացմանը:

Վիճաբանությունների ընթացքում ժողովասրահ է մտնում Թիֆլիսի ոստիկանապետ Ցիսը և հայտնում, որ ուզում է տեսակցել սոցիալ-դեմոկրատների (վրաց մենշևիկների) հետ: Վերջիններս հայտնում են, որ պատրաստ են նրան լսելու:

«Երկու ժամ է, ինչ փնտրում եմ սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչներին, - ասում է ոստիկանապետը: - Նորին պայծառափայլություն կոմս Վորոնցով-Դաշկովը հրամայել է ինձ ներկայանալ ձեզ և հայտնել նրա խնդրանքը, որը հետևյալն է. Անդրկովկասի մայրաքաղաքում սկիզբ առած հայ-թուրքական կռիվները վերջ տալու համար ոստիկանությունը անզոր է, ուստի խնդրում է սոցիալ-դեմոկրատներին, որպես ուժեղ և ազդեցիկ կուսակցության, միաժամանակ, իբրև միջազգային կազմակերպություն, հրապարակ գալ և հարթել հայ-թուրքական հարաբերությունները»[1]:

Պարզ դարձավ, որ ժողովի եկած վրաց մենշևիկները մինչ այդ արդեն պայմանավորվել էին իշխանությունների հետ: Դա նրբորեն մտածված խաղ էր: Սուտ էր, թե ոստիկանությունը ուժ չունի զսպելու կռիվները: Վերջապես, բացի ոստիկանությունից, Թիֆլիսում կային մի քանի խոշոր զորամասեր:

Ցիսի ելույթից հետո, առանց խորհրդակցելու ժողովի մասնակից մյուս քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ, վրացի հին սոցիալ-դեմոկրատ Իսիդոր Ռամիշվիլին խոսք է առնում և ասում. «Եթե փոխարքան մեզ 1000 հրացան տա՝ բանվորությանը զինելու համար, ապա այդ դեպքում միայն մեզ վրա կվերցնենք ծանր պարտականությունը»[2]:

«Ես իսկույն այդ մասին կզեկուցեմ Նորին մեծություն փոխարքային», - ասում է ոստիկանապետ Ցիսը և մեկնում պալատ:

Ցիսի գնալուց հետո հայտնվում է նահանգային ոստիկանապետ Մարտինովը և տեղեկացնում, թե ինքը արդեն եղել է փոխարքայի մոտ, որը խոստացել է պետական պահեստներից վրացի բանվորներին հանձնել 600 հրացան՝ քաղաքում կարգը վերականգնելու համար: Հեռանալուց նա վրացի սոցիալ-դեմոկրատներին խնդրում է երկու լիազորված անձանց ուղարկել փոխարքայի պալատ՝ զենքերի ստացման հետ կապված հարցերը վերջնականապես պարզելու համար: Ժողովը մենշևիկյան գործիչներ Արամայիս Երզնկյանին և Իսիդոր Ռամիշվիլուն ուղարկում է պալատ, որտեղից Ի.

[1] «1905 թվի հեղափոխությունը» (ժողովածու), էջ 211:
[2] Նույն տեղում:

Ռամիշվիլին մեկնում է Նախալովկայի զինապահեստ, իսկ Ա. Երզնկյանը վերադառնում է ժողովատեղի:

Ժողովը ցրվելու վրա էր, երբ վրաց ֆեդերալիստները հարց են բարձրացնում զենքերից իրենց բաժին հանելու մասին: Սոցիալ-դեմոկրատները պատասխանում են, որ իրենք ազգային կազմակերպություններին ոչ մի զենք չեն տա, քանի որ դա ավելի կբարդացնի դրությունը:

Շուտով իր մարդկանցով ներս է մտնում ֆեդերալիստների պահակախմբի պետ Նախկին անարխիստ Կանչելին և հայտարարում, թե սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչները համարվում են բանտարկված, իսկ իրենք այստեղից դուրս չեն գա, մինչև չստանան հրացանների իրենց պահանջած բաժինը:

Երկարատև բանակցությունից հետո մյուս կուսակցությունների ներկայացուցիչներին հաջողվում է ֆեդերալիստներին համոզել հրաժարվել իրենց անմիտ քայլից[1]:

Հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչների ժողովից անմիջապես հետո տեղի ունեցավ Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստը, որը որոշեց մի հանձնախումբ ուղարկել փոխարքայի մոտ և խնդրել նրա պաշտպանությունը քաղաքին սպառնացող վտանգի հանդեպ: Հանձնախմբի մեջ ընդգրկված Ալեքսանդր Խատիսյանը հետագայում իր «Քաղաքապետի մը յիշատակները» հուշագրության մեջ վկայել է.

«Փոխարքան մեզ ընդունեց, խոստացավ իր աջակցությունը և խնդրեց, որ ես մնամ իր մոտ: Նա պալատ կանչեց զորքերի հրամանատարին և նահանգապետին: Վերջինս հաստատեց, որ կացությունը ծանր է, իսկ զորքերի հրամանատարը հայտարարեց, որ ոչ մեկ վստահություն ունի իր 8 հազար հոգի բաղկացած բանակի վրա: Փոխարքան հրամայեց ամեն պարագայի պատրաստ պահել զորքերը»[2]:

Շատ չանցած՝ պալատ է գալիս նաև ոստիկանապետ Մարտինովը, որը փոխարքային զեկուցում է հեղափոխական կուսակցությունների որոշման մասին: Պալատ են կանչվում նաև զինվորական պահեստի պետը և Իսիդոր Ռամիշվիլին:

Վորոնցով-Դաշկովն առանձին զրույցի է հրավիրում Խատիսյանին և Ռամիշվիլուն: Դիմելով նրանց՝ փոխարքան ասում է. «Ինձ հայտնեցին, որ սոցիալ-դեմոկրատ բանվորությունը հանձն է առնում իր վրա վերցնել քաղաքի պաշտպանությունը: Երկուսիդ վրա էլ ես կատարյալ վստահություն ունեմ: Թող պ-րն Խատիսյանն ինձ հավաստիացնի, թե այդ միջոցը կարող է օգտակար լինել, իսկ պ-րն Ռամիշվիլին թող ինձ վստահեցնի, որ կառավարության կողմից բաժանված զենքերը չպիտի օգտագործվեն նրա դեմ»[1]:

Խատիսյանը փոխարքային վստահեցնում է, որ գնալով ահագնացող չարիքի առաջն առնելու համար տվյալ պահին առաջարկվող միջոցը լավագույնն է: Իր հերթին Ռամիշվիլին խոստանում է, որ ստացած հրացանները ծառայելու են միայն քաղաքում կարգը վերականգնելու նպատակին և երբեք չեն գործադրվի ընդդեմ պետության, թեև իրենք, որպես սոցիալ-դեմոկրատներ, միշտ շարունակելու են պայքարը ցարական իշխանությունների դեմ: Ե՛վ Խատիսյանը, և՛ Ռամիշվիլին ստորագրում են այդ ոգով գրված իրենց հայտարարությունների տակ, որից հետո փոխարքան զինվորական պահեստի պետին կարգադրում է հրացաններ հանձնել Թիֆլիսի բանվորներին: Կարգադրությունն անմիջապես կատարվում է. քաղաքի ոստիկանապետ Ցիսի միջոցով վրաց սոցիալ-դեմոկրատ մենշևիկներին է հանձնվում 600 հրացան[1]:

Վրաց սոցիալ-դեմոկրատները մեծ ուրախությամբ ընդունեցին կատարվածը. առիթ էր ստեղծվել հասարակությանը ցույց տալու, որ իրենք որոշակի ուժ ու հեղինակություն են ներկայացնում կառավարության աչքում: Հասարակությունը, սակայն, ապշած էր: Կատարվածը հարուցել էր բոլորի զարմանքը. առաջին հայացքից տեղի էր ունեցել արտառոց անակնկալ՝ ռուս բյուրոկրատական կառավարությունը դիմել էր իր հակառակորդ սոցիալ-դեմոկրատների աջակցությանը: Շատերը մտածում էին, որ մի անմաքուր բան է կատարվում, նախապատրաստվում է մեծ սադրանք: Ինչո՞ւ զենքը բաժանվեց միայն մենշևիկներին, ինչո՞ւ բոլշևիկները կամ դաշնակցականները զենք չստացան: Այդ հարցերի պատասխանն ինքնին պարզ էր. կառավարությունը չէր կարող զենք տալ ցարիզմի արմատական հակառակորդ բոլշևիկներին և այդ օրերին Թուրք ջարդարարների դեմ անդրկովկասյան հայության կռիվը կազմակերպող դաշնակցականներին, ջարդարարներ, որոնց հետևում կանգնած էր նույն կառավարությունը: Եվ արտառոց ոչինչ չկար, որ զենքերը ստացել էին միայն վրացական սոցիալ-դեմոկրատները (վրաց մենշևիկները), քանի որ նրանք հաճախ հակված են եղել ցարի հետ համաձայնության գալու տեսակետին:

Ադմինիստրացիայի կողմից զենքը սոցիալ-դեմոկրատներին հանձնելը բուռն բողոքներ առաջ բերեց ռուս զինվորականության շրջանում, որը չէր ըմբռնում, թե փոխարքան ինչպես կարող է անհասկանալի կարգադրություն անել և զենքերը տալ պետության թշնամիներին:

Տարակուսանքի մեջ էին նաև բոլշևիկները: "Кавказский рабочий листок" լրագիրը գրում էր. «Եթե սադրանքը նախկինի պես պետք է գործի, եթե կառավարությունը մի ձեռքով պիտի զենք տա պրոլետարիատին և կարգի պահպանության ողջ պատասխանատվությունը դնի սոցիալ-դեմոկրատների վրա,

[1] **«1905 թվի հեղափոխությունը»** (ժողովածու), էջ 211:
[2] **«Հայրենիք»**, N 7 (115), մայիս, 1932, էջ 91:

[1] **«Հայրենիք»**, N 7 (115), մայիս, 1932, էջ 91:
Որոշ աղբյուրներում նշված է 500 հրացան (տե՛ս օրինակ՝ «Հայրենիք», N 5, մարտ, 1923, էջ 42), «1905 թվի հեղափոխությունը»(ժողովածու), էջ 211:

իսկ մյուս ձեռքով կազմակերպի հակահեղափոխական տարրերին, ապա այդ պայմաններում, իհարկե, խաղաղություն պահպանելն անհնարին է»[1]:

Միքայել Վարանդյանը վրաց մենշևիկներին հեշտությամբ զենք տալու Վորոնցով-Դաշկովի քայլը բացատրում էր Նրանով, որ «խորամանկ կառավարչապետը, լավ գիտենալով [վրաց] սոցիալ-դեմոկրատ կուսակցության զինվորական անկարողությունը, կուզեր վարկաբեկել զայն: Եվ իրոք հասավ իր նպատակին»[2]:

Մ. Վարանդյանն այս բացատրությունն արել էր տարիներ անց, բայց այն օրերին Հ.Ց. դաշնակցությունը ողջունեց սոցիալ-դեմոկրատ մենշևիկների քայլը: Ավելի դրական էր հայ լիբերալների վերաբերմունքը: «Մշակը» գրում էր.

«Մենք տեսնում ենք նրա (սոցիալ-դեմոկրատիայի: - Հ.Ս.) գործունեությունը: ... Առաջին անգամ է, որ նա ասպարեզ է գալիս իբրև զինված, ակտիվ ուժ: Նա, այսպես ասած, հրային մկրտություն է ստանում, հասարակության առջև հասունության քննություն է տալիս: ... Զինված սոցիալ-դեմոկրատիան ... անձնվիրաբար ծառայում է մեծ գործին, այն է՝ մեր երկիրն ազատել ազգամիջյան արյունահեղությունից»[3]:

Վերադարձնելու պայմանով սոցիալ-դեմոկրատներին հրացաններ տալով՝ փոխարքան միաժամանակ հայտարարել էր, թե դրա փոխարեն պետք է զինաթափվեն հայկական բոլոր մարտական խմբերը: Այդ դիվային ծրագրի դեմ առաջինը հանդես եկան սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները: Նրանց պաշտոնական օրգան "Кавказский рабочий листок"*-ը խմբագրական առաջնորդողում գրում էր.*

«Իշխանությունը բացեց իր խաղաթղթերը: Հրատարակված է փոխարքայի հայտարարությունը, որով ազդարարվում է, թե սոցիալ-դեմոկրատական զորախմբից բացի, քաղաքում չպետք է լինի ոչ մի կամավորական զինված ուժ: Սա իրապես նշանակում է զինաթափ անել հայ հասարակությանը, ուստի սոցիալ-դեմոկրատիան այդ ձեռնարկության մեջ մասնակցություն չի ունենա: Նա իրեն չի կարող թույլ տալ հակադրվել հայ բնակչությանը, թույլ չի տա կառավարությանը, որ թշնամություն սերմանի վրացիների և հայերի միջև, ինչպես սերմանել է հայերի և թուրքերի միջև: Եթե կառավարությունը, այնուամենայնիվ, կփորձի զինաթափ անել հայ բնակչությանը, սոցիալ-դեմոկրատիան (նկատի ուներ ռուս և հայ սոցիալ-դեմոկրատներին: - Հ.Ս.) իսկույն կանցնի նրա կողմը: Չէ՞ որ մենք տեսել ենք և՛ Օդեսայում, և՛ Ռոստովում, և՛ Բաքվում, թե ինչպես զինաթափ անողների հետևից գնում էին նրանք, որոնք

[1] **"Кавказский рабочий листок"**, N 5, 29 ноября (11 декабря)1905г.
[2] *Միքայել Վարանդեան, Հ.Ց. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 108:*
[3] *«Մշակ», N 235, 29 նոյեմբերի 1905թ.:*

սպանում էին, կողոպտում և այրում: Իր հայտարարությամբ փոխարքան արդեն ազատեց սոցիալ-դեմոկրատներին այն պատասխանատվությունից, որ նրանք վերցրել են իրենց վրա: Եվ այդ պատասխանատվությունը նրանք նորից չեն ստանձնի, մինչև որ փոխարքան հետ չվերցնի իր կարգադրությունը:

Մենք պիտի հայտարարենք, որ սոցիալ-դեմոկրատական զորախմբերը հրաման ունեն՝ չխլել զենքերը հայ բնակչությունից, և ոչ մի հիմք չկա, որ սոցիալ-դեմոկրատները ընդհարումներ ունենան դրոշակակիրների (դաշնակցականների: - Հ.Ս.) հետ»[1]:

Անդրադառնալով բոլշևիկյան լրագրի այս հաստատումներին՝ «Մշակը» գրում էր.

«Ավելի գեղեցիկ մի վավերագիր, որ ցույց տար այս նոր ուժի բարոյական կերպարը, դժվար է գտնել... Հավատանք, որ նոր օրեր պիտի տեսնենք: Կոթնած մեր ինքնապաշտպանության հզոր ու անխախտելի զենքի վրա, միշտ զգույշ ու պատրաստ, առաջ գնանք սոցիալ-դեմոկրատիայի հետ եղբայրաբար մեր անկեղծ համակրանքներով՝ պատվելով նրա հերոսական անձնվիրությունը բոլոր ազգերի աշխատավոր դասի դատին»[2]:

Ոստիկանապետ Ցիսի կողմից զենքերը վրաց սոցիալ-դեմոկրատներին հանձնելուց հետո, նույն օրը, նոյեմբերի 24-ին, փոխարքան իր մոտ խորհրդակցելու հրավիրեց հայ հասարակության վստահությունը վայելող մի քանի անձանց՝ Ս. Հարությունյանին, Ս. Մելիք-Ադամյանին և Ալ. Խատիսյանին: Փոխարքայի պալատ կանչվեցին նաև Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնակատար իշխան Զերքեզովը և սոց.-դեմոկրատական կուսակցության վրաց ներկայացուցիչ Իսիդոր Ռամիշվիլին: Մտքերի փոխանակությունը տևեց մոտ 6 ժամ: Քննարկվող հարցը թուրք-հայկական ընդհարումների առաջն առնելու միջոցների մշակումն էր: Վորոնցով-Դաշկովը, հավանություն տալով խորհրդակցության բոլոր մասնակիցների համատեղ առաջարկությանը, համաձայնեց ոչ միայն Թիֆլիսում, այլև ամբողջ Անդրկովկասում թուրք-հայկական արյունահեղ ընդհարումների պատճառով խանգարված կարգն ու խաղաղությունը վերահաստատելու համար դիմել հասարակության աջակցությանը:

Փոխարքան նաև հոժարեց քննարկել ինքնապաշտպանության նպատակով գյուղական վայրերում զինված պահակախմբեր ստեղծելու մասին հայության ներկայացուցիչների կողմից մինչ այդ բազմիցս իրեն ուղղված և միշտ մերժված խնդրանքը: Օգտվելով հարցի նկատմամբ փոխարքայի դրական տրամադրությունից՝ խորհրդակցության հայ մասնակիցները փոխարքային ներկայացրին «Գյուղական պահակի մասին» նախօրոք մշակված կանոնագիրը, որով նախատեսվում էր. 1. Ամեն մի գյուղի թույլատրվում է կազմել

[1] **"Кавказский рабочий листок"**, N4, 27 ноября (9 декабря) 1905г.
[2] *«Մշակ», N 235, 29 նոյեմբերի 1905թ.:*

պահակախումբ՝ ամեն հինգ ծխի վրա մեկ պահակի հաշվով: 2. Պահակներն ընտրվում և նշանակվում են գյուղական ժողովի կողմից: 3. Ամեն մի պահակ ստանում է մի պետական հրացան և 200 փամփուշտ, որ հաշվով տրվում է գյուղական հասարակությանը: 4. Գյուղական ամեն մի պահակի վրա հսկողությունը պատկանում է հասարակության կողմից ընտրված երեք անձանց, իսկ գավառի բոլոր գյուղերի պահակախմբերի վրա վերահսկողությունը պատկանում է գավառապետին և զեմստվոյի պահակախմբի սպային, ըստ որում, գյուղական պահակը ոչ մի դեպքում ոստիկանական ծառայություն չի կատարում: 5. Գյուղական պահակի ապրուստի միջոցներն ամեն մի գյուղ ինքն է հոգում: 6. Ընդհանուր վտանգի դեպքում ամբողջ շրջանում գյուղական պահակները մեկտեղվում են[1]:

Թեև փոխարքան վերցրեց կանոնագիրը և ծանոթացավ դրա կետերին, բայց նրա համար որոշ հարցեր կախյալ էին մնացել, այն է՝ ո՞ւմ զենք տալ և ո՞ւմ չտալ, ի՞նչ երաշխիքներ կան, որ զենք ստացողը չի դիմելու հակապետական և հակահասարակական արարքների, իրեն վեր չի դասելու համայնքի մյուս անդամներից և չի կատարելու անօրինականություններ: Քանի որ նման դեպքերի առաջն առնելու համար կանոնագրում չկային համապատասխան երաշխիքներ, ուստի հայ ներկայացուցիչների համար պարզ դարձավ, որ այս անգամ նույնպես հայ հասարակության խնդրանքը մնալու է թղթի վրա:

Մյուս հարցը, որ քննության առնվեց խորհրդակցությունում, վերաբերում էր փոխարքայի դիվանատանը կից մի հանձնաժողովի ստեղծմանը, որը պետք է տնօրիներ թուրք-հայկական ընդհարումներին վերաբերող բոլոր գործերը և միջոցներ մշակեր ապագա ընդհարումների առաջն առնելու համար, ինչպես նաև քններ և լուսաբաներ այս ու այն կողմից արված բոլոր գանգատները:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո խորհրդակցությունը հաստատեց հանձնաժողովի կազմը՝ բաղկացած 12 հոգուց, որոնցից 8-ը Անդրկովկասի չորս հիմնական ազգային հատվածների ներկայացուցիչներ (2 հայ, 2 վրացի, 2 թուրք, 2 ռուս), մյուս անդամներն էին՝ փոխարքայի դիվանատան կառավարիչ Պետերսոնը, Թիֆլիսի նահանգապետ ֆոն Տրաուբենբերգը, ոստիկանապետ Ցիսը և փոխարքայի խորհրդի անդամ Ջունկովսկին: Վերջինս նշանակվեց այս նորաստեղծ հանձնաժողովի նախագահ:

Որոշվել էր, որ հանձնաժողովի 8 անդամներն ընտրվելու են Թիֆլիսի քաղաքային դումայում: Հաջորդ օրը, նոյեմբերի 25-ին, գումարվեց դումայի արտակարգ նիստ, որտեղ ծավալվեցին բուռն վիճաբանություններ փոխարքայի առաջարկած հանձնաժողովի ստեղծման նպատակահարմարության հարցի շուրջ: Ելույթ ունեցողների մի մասը չեշտում էր, որ թուրք-հայկական ընդհարումները դադարեցնելու նպատակով ամենազանազան մակարդակներով և ամենատարբեր տեղերում նախկինում էլ կազմվել են բազմաթիվ

[1] «Մշակ», N 235, 29 նոյեմբերի 1905թ.:

հանձնաժողովներ, որոնք ոչ մի արդյունքի չեն հասել: Առաջ քաշվեց նաև մի ուրիշ հարց. հանձնաժողովին կարող են մասնակցել միայն լեգա՞լ, թե՞ նաև՝ հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչները: Դումայի նիստին նախապես հրավիրվել էին նաև հեղափոխական կուսակցությունների՝ սոցիալ-դեմոկրատների, վրաց ֆեդերալիստների, դաշնակցականների, հնչակյանների և սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպության ներկայացուցիչները: Ելույթներ ունենալուց և իրենց տեսակետները հայտնելուց հետո նրանք զանազան պատճառաբանություններով անհնարին համարեցին հանձնաժողովին իրենց մասնակցությունը:

Ի վերջո դուման ընտրեց հանձնաժողովի անդամներ. հայերի կողմից ընտրեցին Հարությունյանին և Խատիսյանին, վրացիների կողմից՝ Ջերքեզովին և Զրելևին, ռուսների կողմից՝ Վեսելազորովին և Օստրոգորսկուն: Թուրքերը հայտարարեցին, թե իրենց ներկայացուցիչների անունները կտան հետո:

Նույն օրը, երեկոյան ժամը 9-ին, փոխարքայի պալատում տեղի ունեցավ նորընտիր հանձնաժողովի առաջին նիստը, որն սկսեց քննարկել Թիֆլիսում հասարակական կարգը վերականգնելու հարցը:

Պետական զենքեր ստացած վրաց մենշևիկների դրուժինան ձեռնարկեց քաղաքի «կարգի պաշտպանությունը» և այդ նպատակով մտավ հայերի ու թուրքերի միջև բացված պարապ տարածությունը: Պայմանավորվածության համաձայն, դաշնակցական կազմակերպությունը թույլ էր տվել, որ սոցիալ-դեմոկրատների զինյալները տեղավորվեն Թուրքի մեյդանի մոտ և այլ տեղերում, ուր գտնվում էին դաշնակցականների դիրքերը: Հայ մարտիկներին պատվիրված էր չեզոք դիրք բռնել և չմիջամտել նրանց գործողություններին:

Սկզբում վրաց սոցիալ-դեմոկրատներն աշխատում էին **բարոյական ազդեցությամբ** թուրքերին համոզել վերջ դնելու ընդհարմանը: «Եվ ամենքն ալ ճերմակ դրոշներ անցուցած էին իրենց հրացաններու ծայրը ..., - գրել է Մ. Վարանդյանը: - Չէին կրակեր, այլ բարձրաձայն քարոզ կկարդային թուրքերուն, կը հորդորեին հանուն ռուսական ազատարար յեղափոխութեան դադարեցնել հրացանաձգությունը: Մեզի ալ պաշտոնապես դիմեցին վրացի միջնորդները՝ զինադադար ընելու և սպասելու իրենց իրավարարութեան արդյունքին»[1]: Արմեն Գարոն գրել է. «Մեզ թուրքերու հետ հաշտեցնելու յավակնութեամբ... վրացի մեր «ընկերները» մեզ հայրական խրատներ կուտային, թե վերջ դնելու ենք այս «եղբայրասպան» կռուին և իրենց հետ միացած կռուելու ենք ցարական կառավարութեան և կապիտալիզմի դեմ: Կարծես մենք էինք սկսած այս կռիվները»[2]:

Դաշնակցությունն ընդունեց կրակը դադարեցնելու մասին «հաշտարար միջնորդ» վրաց սոցիալ-դեմոկրատիայի առաջարկը, միաժամանակ մարտիկ-

[1] Միքայել Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 109:
[2] Արմեն Գարո, Ապրուած օրեր, էջ 169-170:

ները խստիվ հրաման ստացան կազմ ու պատրաստ մնալ դիրքերում այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքերը նույնպես չեն ընդունել առաջարկը:

Այդ ժամերին էր, որ ՌՄՌԿ և դաշնակցության Թիֆլիսի կոմիտեների ներկայացուցիչները հանդիպում ունեցան և մշակեցին հետևյալ դրույթները՝ ի ղեկավարություն երկու կուսակցությունների մարտական ջոկատների. 1) Բոլոր քաղաքացիներն ունեն իրավունք կրելու զենք, 2) Այն անձինք, որոնք իրենց Թույլ կտան ակնհայտ ոտնձգություն կատարել քաղաքացիների անձի և ունեցվածքի դեմ, զինաթափել քաղաքի չեզոք մասերում: Մեղավորները զրկվում են զենք կրելու իրավունքից, իսկ վերցրած զենքը հանձնվում է Հ.Ց.Դ. և ՌՄՌԿ համապատասխան կազմակերպություններին (Մանոթություն: - Չեզոք են համարվում քաղաքի բոլոր մասերը, Մեյդանից և նրա շրջակայքից բացի, որոնք մտնում են «Ռազմական գործողությունների» շրջանի մեջ: Այդ շրջանի սահմանը սկսվում է Պեսկովսկայա փողոցից, դուրս է գալիս Մեյդան և վերջանում է Օրթաճալայում), 3) Եթե հարձակում տեղի ունենա հայկական դիրքերի վրա, ապա սոցիալ-դեմոկրատական դրուժինան այդ մասին հայտնում է «Դաշնակցություն» կազմակերպությանը, իսկ Թաթարական դիրքերի վրա հարձակման դեպքում սոցիալ-դեմոկրատական դրուժինան գործում է իր հայեցողությամբ, 4) Եթե երկու դրուժինաների միջև տեղի ունենա թյուրիմացություն, ապա այն պետք է հարթվի ոչ թե փողոցում, այլ կազմակերպությունների ներսում, 5) Հայերն իրենց առաջապահ դիրքերը կհանձնեն սոցիալ-դեմոկրատական դրուժինային, եթե Թաթարները երաշխիքներ կտան, որ չեն խախտելու խաղաղությունը, եթե գյուղերից քաղաք եկած Թաթարները կվերադառնան իրենց բնակավայրերը և եթե, վերջապես, Թաթարները նույնպես իրենց առաջապահ դիրքերը կգիջեն սոցիալ-դեմոկրատներին, 6) Քաղաքի վրա զանգվածային հարձակման դեպքում սոցիալ-դեմոկրատական դրուժինան կգործի մյուս հեղափոխական կուսակցությունների հետ»[1]:

Հայկական կողմը երկու օր (նոյեմբերի 24-ին և 25-ին) սպասում էր, բայց Թուրքերից պատասխան չէր գալիս, Թեև եռօրյա ընդհարումներում նրանք ավելի շատ էին տուժել: Ինչու՞մն էր բանը, ինչու՞ նրանք չահագրգռված չէին խաղաղության հաստատմամբ: Ի վերջո ամեն ինչ պարզ դարձավ:

Նոյեմբերի լույս 25-ի (ուրբաթ) գիշերը 2000-ի չափ զինված Թուրքեր Բորչալուից եկել ու կանգ էին առել Նավթլուղի մոտերքը՝ այդ կողմից փակելով քաղաքի մուտքը:

Զգալով, որ ընդհարումների վտանգը հետզհետե սպառնալից է դառնում, մենշևիկյան ղեկավարությունը Ի. Ռամիշվիլուն և Ար. Երզնկյանին ուղարկում է Սողանլուխ՝ բանակցելու Բորչալվի Թուրքերի հետ, որպեսզի նրանք վերադառնան իրենց տեղերը: Սակայն բանակցություններն ապարդյուն են անցնում, Թուրքերը նրանց լսել անգամ չեն ուզում[1]:

Զորքի և ոստիկանության կողմից չհանդիպելով որևէ արգելքի՝ մի քանի ժամ անց բորչալվեցիները խուժեցին քաղաք և մտան Թուրքաց Թաղը՝ լրացնելով իրենց ցեղակիցների շարքերը: Վրաց սոցիալ-դեմոկրատները ոչ միայն Թուրք ելուզակներին արգելք չեղան, այլև ստիպված սկսեցին ջերմ զրույցներ նրանց հետ:

Ուրբաթ առավոտվանից մինչև ուշ գիշեր վրացի գործիչներն ու պրոպագանդիստներն ամեն կողմ լուրեր էին տարածում, Թե Բորչալուի Թուրքերը հսկայական ուժեր են մտցրել Թուրքաց քաղաքամասը՝ բոլորն էլ զինված ռուսական մոսին հրացաններով: Տարածված տեղեկությունների համաձայն, քաղաք էր մտել առնվազն 14 հազար Թուրք:

Քաղաքի հայ բնակչությանը խուճապի մատնելու նպատակով վրացիներն ամեն անկյունից տագնապ էին բարձրացնում, Թե փոխարքայի տված միայն բերդան հրացաններ են՝ ընդամենը 10-ական փամփուշտով, որոնցով իրենց դրուժինան չի կարող ոչինչ անել հազարավոր մոսիններով զինված բորչալվեցի Թուրքերի դեմ, Թե իշխանությունները հենց սկզբից էլ այդ ամենը ծրագրել էին, որպեսզի Թուրքերի ձեռքով տակնուվրա անեն Կովկասի հեղափոխական կենտրոն Թիֆլիսը: Եվ որպեսզի Թուրքերը ահավոր կոտորածի չենթարկեն քաղաքի բնակչությանը և, առաջին հերթին՝ հայությանը, պետք է ամեն ինչ անել նրանց հետ մի կերպ լեզու գտնելու և հաշտվելու համար: «Այս պրոպականդը վրացիները այնքան լաւ էին կազմակերպած, - գրել է Արմեն Գարոն, - որ ամբողջ հայ ազգաբնակչութիւնը քանի մը ժամուայ մեջ ենթարկուեցաւ սոսկալի խուճապի եւ սկսաւ դատարկել Սօլօլակի եւ մոտակա բոլոր թաղերը»[2]:

Սակայն հայերի ինքնապաշտպանության ղեկավարությունը տեղյակ էր Թուրքերի իրական ուժին: Հետախույզները հաղորդել էին, որ նոյեմբերի 24-ին և 25-ին Թուրքական Թաղն էր Թափանցել 1500-2000 բորչալվեցի, որոնցից շատերը եկել էին սայլերով՝ քաղաքից մեծ Թալան տանելու[3]: Իհարկե, Թիֆլիս խուժած այդ զինված ամբոխը փոքր Թիվ չէր հայերի զինական ուժի դիմաց:

Եթե կռվի առաջին օրը, նոյեմբերի 22-ին, հայկական ուժերի տրամադրության տակ կար ընդամենը 200 կտոր տարբեր տեսակի զենք, ապա ուրբաթ օրը, նոյեմբերի 25-ին, հայ մարտիկներն իրենց ձեռքն ունեին 500 հրացան՝ չհաշված տարբեր տեսակի ատրճանակները: Առկա էր նաև ռազմամթերքի բավականաչափ պաշար[4]:

Նոյեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը, ժամը 3-ի մոտերքը, հայկական ինքնապաշտպանական ուժերի շտաբ եկան վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակ-

[1] Տե՛ս **"Кавказский рабочий листок"**, N 6, 30 ноября (12 декабря) 1905г.

[1] Տե՛ս **«1905 թվի հեղափոխությունը»** (ժողովածու), էջ 212:
[2] **Արմեն Գարո**, Ապրուած օրեր, էջ 171:
[3] Տե՛ս **«1905 թվի հեղափոխությունը»** (ժողովածու), էջ 212:
[4] Նույն տեղում:

ցության պարագլուխներից Նոյ Ժորդանիան և Ռամիշվիլին՝ նպատակ ունենալով, իրենց ասելով, հայերի ու թուրքերի ղեկավարների միջև գլուխ բերել բանակցություններ: Շտաբում գտնվող զինվորական և մտավորական ղեկավարներին ներկայացրած նրանց հիմնական փաստարկն այն էր, թե՝ դրությունը հուսահատական է, քանի որ թուրքերի ղեկավարությունը, առաջին հերթին նրանց զինվորական հրամանատար Եղիգարովը, հենված մոտին հրացաններով զինված 14 000-անոց զինական ուժի վրա, վերջնագիր են ներկայացրել հայերին՝ 24 ժամվա ընթացքում ընդունել հաշտության իրենց պայմանները, այն է՝ 1. Հայոց կաթողիկոսն անձամբ պետք է գնա Կովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ շեյխ-ուլ-իսլամի մոտ և ներողություն խնդրի կատարված սպանությունների համար, 2. Հայ հոգևորականությունը եկեղեցիներում և փողոցներում պետք է դատապարտի կատարված սպանությունները և հաշտության քարոզ անի ժողովրդին, 3. Հ.Յ. դաշնակցությունը նույն մտքով պիտի հրատարակի թռուցիկներ և կազմակերպի միտինգներ քաղաքի զանազան մասերում, 4. Անմիջապես իշխանություններին հանձնել 70 թուրք սպանած ոճրագործներին՝ նրանց արժանի պատիժ տալու համար[1]:

Ինչպես տեսնում ենք, «վերջնագրում» պահանջ չկար թուրքերի կրած նյութական կորուստների փոխհատուցման, հայերի զինված ջոկատներն իրենց թաղերի սահմաններից հեռացնելու մասին և այլն: Թուրքերն ամենից առաջ ձգտում էին հայերի պատիվը գետնով տալ՝ նրանց զառամյալ կաթողիկոսին ստորացնելու միջոցով, իրենց հրոսակներին սպանած հայ մարտիկներին փորձում էին տեսնել ոստիկանության ճանկերում, իսկ առաջինը հրացաններ արձակած զոչիների մեղքի, նրանց խժդժությունների մասին որևէ մեղանչում չէին անում:

Ներկայացնելով այս պահանջները՝ Ժորդանիան և Ռամիշվիլին զգուշացրին, որ դրանք չընդունելու դեպքում թուրքերը սպառնում են քարուքանդ անել Թիֆլիսը և կոտորել ամբողջ ազգաբնակչությանը:

Շտաբում գտնվող չուրջ չորս տասնյակ ընկերների համար, որոնց թվում էին Համո Օհանջանյանը, Հայր Աբրահամը (Ավետիք Սահակյան), Գարեգին Խաժակը, Եղիշե Թոփչյանը, ստեղծվել էր հոգեբանական ծանր մթնոլորտ. ընդունե՞լ «վերջնագիրը», թե՞ ոչ: Թիֆլիսի հայ ազգաբնակչությունը ենթարկված էր խուճապի, իսկ հայ բուրժուաները սկսել էին փախչել քաղաքից: Այս իրողությանն ի տես շտաբում խոհեմություն համարեցին ընդունել թուրքերի ներկայացրած պահանջներից երեքը: Կաթողիկոսի հիվանդ լինելու պատճառով նպատակահարմար էր համարվել շեյխ-ուլ-իսլամին ցավակցություն հայտնելու համար նրա մոտ ուղարկել Սաթունյան եպիսկոպոսին, երկրորդ և երրորդ պայմանները նույնությամբ ընդունվել էին, իսկ վերջին պայմանի կապակցությամբ ասել էին, թե իրենց հայտնի չեն թուրքերին

[1] Տե՛ս **Միքայել Վարանդեան**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 111:

սպանողների անունները, ուստի չեն կարող հանձնել ռուս կառավարությանը, բայց կաշխատեն հանցավորներին գտնել և պատժել սեփական միջոցներով:

Հայկական ուժերի ընդհանուր հրամանատար Արմեն Գարոն շտաբ եկավ այն ժամանակ, երբ վրաց-մենշևիկյան պարագլուխները, իրենց գործն ավարտած համարելով, պատրաստվում էին հեռանալ: Իմանալով սրանց կողմից ներկայացրած առաջարկների բովանդակության մասին՝ նա ջղային շարժումներով ամոթանք տվեց ներկա գտնվողներին և հայտարարեց, թե ինքը կտրականապես մերժում է ինչպես վրաց բանագնացների միջոցով թուրքերի ներկայացրած վերջնագրային պահանջները, այնպես էլ տված բանավոր պատասխանը: Ժորդանիան և Ռամիշվիլին, ոչինչ չհասկանալով Գարոյի ասածից, Համո Օհանջանյանին խնդրեցին թարգմանել և երբ իմացան իր ենթականերին ուղղած հայոց հրամանատարի նախատինքների իմաստը, անհանգստացան և ցանկություն հայտնեցին որքան կարելի է շուտ իմանալ նրա պաշտոնական պատասխանը: Գարոն հայտարարեց, որ ինքն այժմ ոչ մի պատասխան չունի տալու, բայց մեկ ժամ հետո պատասխանը գրավոր կուղարկի վրացոց շտաբը:

Գարոն հետագայում գրել է. «Իմ այս պատասխանս բնաւ դուր չեկաւ իրենց: Իսկ մերոնք սկսան իմ վրաս ճնշում բանացնել, ըսելով, թէ իրենք արդէն որոշ համաձայնութեան եկած էին եւ անյարմար պիտի լինէր այդ ձեւով ճամբու դնել վրացի չէֆերը:

Վրացիք, իրենց մեկնելէն առաջ, անգամ մըն ալ կրկնեցին թուրքերու սպառնալիքը, որ, եթէ մինչեւ շաբաթ երեկոյ իրենք մեր պատասխանը չստանան, կիրակի առաւօտ 250 ձիաւորով վերջին ցոյց մը պիտի ընեն քաղաքին գլխաւոր փողոցներէն անցնելով, եւ ատկէ վերջը իրենք իրենց ազատ պիտի զգան իրենց սպառնալիքը գործադրելու»[1]:

Այսպես ավարտվեց վրաց մենշևիկների «դիվանագիտական առաքելությունը»:

Վրացիների մեկնելուց հետո լուրջ վիճաբանություն սկսվեց Արմեն Գարոյի և շտաբում գտնվողների միջև: Սրանք ամեն կերպ փորձում էին նրան համոզել, թե թուրքերը, իրոք, հսկայական ուժ ունեն, և այդ պատճառով քաղաքի ողջ հայության կյանքը վտանգված է, իսկ եթե Թիֆլիսահայությունը կոտորվի, գավառահայությունը համարյա անպաշտպան կմնա: Գարոն, ծայրաստիճան զայրացած, նախատում է ներկաներին, որ սրանք իրենց ազգային պատիվը զոհաբերում են վրաց մենշևիկների սադրանքին: «Այնքան սարսափահար եք եղած, - ասել էր նա, - որ առանց մտածելու իսկ կուլ կուտաք վրացոց բոլոր սուտերը: ... Դուք, որ կովկասցի եք եւ տեղական պայմանները ինձմէ լաւ պիտի գիտնաք, ըսեք խնդրեմ, Բորչալուի 38 հազար թուրք ազգաբնակչութիւնը ի՞նչպես կարող էր 14 000 զինուոր դուրս բերել: Մեր

[1] **«Հայրենիք»**, N 5, մարտ, 1923, էջ 45:

տեղեկութիւնները ցոյց կուտան, թե միայն 1 500 թուրք են մտած այս երեք օրուան ընթացքին, իսկ դուք՝ ենթարկուած ընդհանուր խուճապի՝ ինձ կ'ուզեք հավատացնել, թե 14 հազար զինուած մարդ ունին թուրքերը: Կը մտածե՞ք, թե ինչ ազդեցութիւն է ունենալու ձեր անձնատուութիւնը Թիֆլիսի մեջ գավառի հայերու վրայ, երբ անոնք լսեն, որ Թիֆլիսի հարիւր հազարէ աւելի հայութիւնը տեղի է տուեր 5 000 քոսոտ թուրքերու սպառնալիքին առջեւ: Մեկ ամիս առաջ դուք չէի՞ք, որ կ'որոշէիք 25 հոգիով Մետեխի բանտ առնել 10 հազարանոց ռուս պահակազորքի ձեռքէն եւ այսօր թուրք Ետիկարովի մը առջեւ անձնատուր կ'ուզեք լինել: Ես թոյլ չեմ տար, որ այդպիսի խայտառակութիւն մը տեղի ունենա: Մեր ազգային պատիւն է դրուած սեղանի վրայ»[1]:

Կտրականապես մերժելով հանուն հաշտութեան ստորացման ճամփան բռնելու տեսակետը՝ Արմեն Գարոն հրամայաբար ասում է. «Ո՛չ մի պատասխան այդպիսի լիրբ առաջարկներուն: Այսօր երկու օր է, որ կռիւը դադրած է: Եթե թուրքերը հաշտութիւն կ'ուզեն, թո՛ղ իրենց զինուած խումբերը քաղաքէն հեռացնեն. մեր կողմէն ոչ մի նոր յարձակում չէ լինելու: Ուրիշ ոչ մի պատասխան»[2]:

Ներկաներից մի քանիսը, մանավանդ Հայր Աբրահամն ու Հովնան Դավթյանը, փորձելով բարոյական ճնշում գործադրել հրամանատարի վրա, շեշտում են, որ նա, դեմ գնալով ընկերների մեծամասնության կարծիքին, իր վրա մեծ պատասխանատվություն է վերցնում: Հետևում է Գարոյի կտրուկ պատասխանը.

«Տղե՛րք, խոսքին կարճը՝ ... եթէ դուք այդ պայմաններով հաշտութիւն կնքէք, ես վաղը եւեթ, երեսուն զինուոր առնելով, պիտի յարձակուեմ թուրքերուն վրայ կռիւը վերսկսելու համար. ո՛չ ձեր որոշման կ'ենթարկուիմ եւ ո՛չ ալ կուսակցական տիսիպլինի: Սա իմ վերջին խոսքն է: Դէ՛հ գնացէք, ինչ որ կ'ուզէք, այնպէս ալ ըրէք»[3]:

Հրամանատարի կտրուկ և սպառնալից խոսքերը ազդեցին բոլորի վրա: Կրկին հարցնում էին. «Ուրեմն ամբողջ պատասխանատվությունը վերցնում ես քեզ վրա՞»: Նորից լսվում է կտրուկ պատասխան. «Այո՛, ամբողջ պատասխանատուութիւնը: Դե՛հ, հիմա գնացէք տներնիդ, եւ այս երկու օրս ոչ ոք թո՛ղ չգայ զինուորական շտաբը մեր գլուխը խառնելու»[4]:

Բոլորը ցրվեցին, իսկ Գ. Խաժակն ու Ե. Թոփչյանը ժամը 4-ի մոտերքը մեկնեցին վրացիների շտաբը՝ իրենց հետ տանելով հայ հրամանատարի թելադրած պատասխանը՝ «Եթե թուրքերը հաշտություն են ուզում, թող իրենց զինված խմբերը հեռացնեն քաղաքից»:

[1] **Արմեն Գարո**, Ապրուած օրեր, էջ 174-175:
[2] Նույն տեղում, էջ 173-174:
[3] Նույն տեղում, էջ 175:
[4] Նույն տեղում:

Ժորդանիան և Ռամիշվիլին շատ դժգոհ էին մնացել հայոց հրամանատարի կոշտ ու կտրուկ պատասխանից և այն նույնությամբ փոխանցեցին թուրքերին:

Գտնելով, որ իրենց կռվող ուժերը թե՛ թվական տեսակետից և թե՛ զինվածության աստիճանով զգալիորեն գերազանցում են հայկականին, թուրքերն իրենց հերթին մերժեցին Արմեն Գարոյի պահանջը և պատրաստվեցին նոր կռվի:

Նոյեմբերի 26-ի (շաբաթ) առավոտյան բոլոր դիրքերի հայկական ջոկատների պետերը ստացան Գարոյի հրամանը. «Թուրքերի նոր հարձակումն անխուսափելի է, կազմ ու պատրաստ եղեք տալու արժանի հակահարված»: Մարտիկները ժամեր շարունակ սպասում էին անհամբեր և կռվելու բարձր տրամադրությամբ:

Ցերեկվա ժամը 4-ն էր, երբ թուրքերը վերսկսեցին ուժգին հրացանաձգությունը, որին հայերը պատասխանեցին փոթորկալի կրակով: Մեկ ժամ տևած դիրքային կռվից հետո մի քանի հազար թուրքեր բոլոր կողմերից գրոհի անցան, բայց, տալով տասնյակ զոհեր, հետ շպրտվեցին ելման դիրքերը: Գրոհները կրկնվում էին ամեն անգամ թուրքերի համար մեծ կորուստներով:

Այսպիսով, երեքօրյա դադարից հետո սկսվեց Թիֆլիսի երկրորդ մեծ կռիվը:

Կռիվը վերսկսելու կապակցությամբ վրաց սոցիալ-դեմոկրատները ոչ միայն հրապարակավ բողոքեցին, այլև «մտահոգություն» հայտնեցին երկու կողմերի «անմեղ զոհերի» համար: Բայց նրանք անկեղծ չէին: Ինչ խոսք, նրանց համար կարևորը հայերի և թուրքերի կրած զոհերը չէին, այլ իրենց մայրաքաղաքն ավերից ու հրդեհումներից փրկելը:

Սոցիալ-դեմոկրատների դրուժինան, որ դիրքեր էր գրավել թուրքաց և հայկական թաղերի միջև, այսինքն՝ Մեյդանում, ըստ էության անգործության մատնվեց: Դրուժինայի հրամանատարությունը չէր կարողանում որոշել՝ կրակ բացե՞լ, թե՞ ոչ. ո՞ւմ վրա կրակել՝ թուրքերի, թե՞ հայերի: Զնայած բռնած չեզոք դիրքին, թուրքերը կրակն ուղղեցին նաև միջնորդ ուժի կողմը: Սոցիալ-դեմոկրատ զինվորներից մի քանիսը վիրավորվեցին, իսկ երկուսը՝ Սիլվեստր անունով մի երիտասարդ և Թիֆլիսի դեպոյի բանվոր Ռաֆեն Ստուրուան, սպանվեցին[1]: Մնացածները, թողնելով դիրքերը, փախան իրենց թաղերը: Այդ խուճապի ժամանակ հայ մարտիկները փախչող վրացիներից խլեցին մոտ 40 հրացան[2]:

«Մշակը», որ երկու-երեք օր առաջ մեծ համակրանքով ու խանդավառությամբ էր արտահայտվում սոցիալ-դեմոկրատների դրուժինայի մասին, այժմ ավելի զգաստ էր գնահատում նրա գործողությունները: «Միամիտ էր առհա-

[1] **"Кавказский рабочий листок"**, N5, 29 ноября (11 декабря) 1905г.
[2] **Արմեն Գարո**, Ապրուած օրեր, էջ175:

սարակ սոցիալ-դեմոկրատիայի խաղացած դերը, - գրում էր Թերթը. - դա արդյունք էր այն բանի, որ նրանք չէին ճանաչում Թուրք տարրի, գոնե նրա հսկայական մեծամասնության, հոգին ... Նրանք ուզում էին «բարոյապես ազդել» այդ տարրի վրա, մոռանալով, որ բարոյապես ազդելու համար պահանջվում են տարիներ և նույնիսկ դարեր ...»[1]:

Հ.Ց. դաշնակցության Թիֆլիսի կ. կոմիտեն հրատարակեց մի թռուցիկ, որով դատապարտվում էր Թուրքերի դավաճանական հարձակումը սոցիալ-դեմոկրատական զորախմբի վրա: Կոմիտեն խորին ցավակցություն էր հայտնում կատարվածի համար և նշում, որ սպանվածների «հիշատակն անջնջելի կմնա խաղաղասեր հայ ժողովրդի սրտում», միաժամանակ բողոք էր հայտնում, թե «գոնե սրանք լինեն խելակորույս ամբոխի վերջին զոհերը»[2]:

Ստուրուայի դին պիտի տեղափոխվեր նրա ծննդավայրը՝ Սամտրեդի: ՌՄՌԿ Թիֆլիսի կոմիտեի նստավայրում դրված դագաղը զարդարված էր թարմ ծաղիկներով, չորս կողմը կանգնած էին կուսակցությունների ներկայացուցիչները: Մաղկեպսակներ կային ՌՄՌԿ Թիֆլիսի մենշևիկներից և բոլշևիկներից առանձին-առանձին, բոլշևիկյան Թերթերից, Հ.Ց. դաշնակցության կոմիտեից, հայկական ընկերություններից, հրեական ինքնապաշտպանական մարտական ջոկատից և այլն: Տեղի ունեցավ միտինգ, որին հավաքվել էր տարբեր ազգությունների մինչև 15 հազար մարդ՝ բացառությամբ Թուրքերի, որոնք երկյուղ էին կրում իրենց դեմ հնարավոր գործողություններից: Ելույթներ ունեցան տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ: Դաշնակցության ներկայացուցիչը հայերի կողմից երախտագիտական խոսք ասաց զոհված մարտիկին, ինչպես նաև գնահատանքի խոսք ուղղեց սոցիալ-դեմոկրատիային՝ խաղաղությունը վերահաստատելու ջանքերի համար: Արտասանվեցին նաև ուրիշ ճառեր, որից հետո դիակը մեծ բազմության ուղեկցությամբ շարժվեց դեպի երկաթուղային կայարան[3]:

Այդ դեպքից հետո ՌՄՌԿ Թիֆլիսի կոմիտեն, քննարկելով իրավիճակը, կազմեց և մուսուլմանական բնակչության ընտրովի խորհրդին ուղարկեց հետևյալ նամակը.

«ՌՄՌԿ կոմիտեն սրանով ծանուցում է ձեզ, որ առանց առիթի թաթարների կողմից զենք է գործածվել մեր պարեկային խմբի դեմ: Փոխհրաձգության ընթացքում մեր ընկերներից սպանվել է մեկ և վիրավորվել են երկու հոգի: Նկատի առնելով ստեղծված վիճակը, տեղյակ ենք պահում, որ քաղաքի թաթարական մասից մենք հանում ենք մեր պահակախումբը և սրանով հայտնում ենք, որ որևէ պատասխանատվություն չենք կրելու հետագա իրադարձությունների համար»[4]:

[1] «Մշակ», N 237, 1 դեկտեմբերի 1905թ.:
[2] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 267, թ.1:
[3] "Кавказский рабочий листок", N8, 3(16) декабря 1905г.
[4] «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 28:

Հայտարարությունից հետո վրաց սոցիալ-դեմոկրատները հրաժարվեցին միջնորդի դերից և քաշվեցին հրապարակից: Մնացին դարձյալ դաշնակցական զինյալները:

Այս պայմաններում, երբ կռվողների թվի տեսակետից Թուրքերը մեծ գերազանցություն էին ստացել, Վորոնցով-Դաշկովի հավանությամբ ոստիկանապետ Ցիսը զգալի թվով զենք տվեց նաև հայերին, իսկ սոցիալ-դեմոկրատ վրաց մենշևիկներից պահանջեց հետ տալ պետական հրացանները:

Ինչպես նշվել է նախորդ էջերում, կառավարությունը 1905թ. ամռանը առաջին անգամ զենք էր տվել հայերին, բայց այժմ դրա քանակը բավական մեծ էր, և տվածը հիմնականում նորագույն սիստեմի կատարելագործված «մոսին» հրացաններ էին: Ինչ էր կատարվել իշխանության հետ, ինչո՞ւ էր նա դիմում այդ քայլին:

Կառավարության համար պարզ էր, որ Հ.Ց. դաշնակցությունն ի վիճակի չէ ակտիվ մասնակցություն ունենալու ռուսական հեղափոխությանը, քանի որ Կովկասում ամբողջովին կլանված է հայության ինքնապաշտպանության խնդիրներով: Այդ զենքը, ուժեղացնելով հայերին, միաժամանակ պիտի նպաստեր Թուրք-հայկական ընդհարումների հետագա ծավալմանը: Չէ՞ որ, ինչպես շուտով պարզվեց, էլ ավելի մեծ քանակության զենք էին ստացել Թուրքերը:

Իրենց միջնորդի դերից հրաժարվելու կապակցությամբ ՌՄՌԿ Թիֆլիսի կոմիտեն հետևյալ ծանուցումն ուղարկեց Հ.Ց.դաշնակցության Թիֆլիսի կ. կոմիտեին.

«Քանի որ առանց որևէ առիթի Թուրքերը վերսկսեցին ռազմական գործողությունները՝ հրացանային կրակի տակ առնելով մեր մարտիկներին, որի հետևանքով նրանք զոհեր տվեցին, մենք վերցնում ենք մեզանից որևէ պատասխանատվություն ապագա դեպքերի համար»[1]:

Ստանալով սոցիալ-դեմոկրատների ծանուցումը՝ Հ.Ց.Դ. Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն հատուկ շրջաբերականով այդ մասին տեղյակ պահեց հանրությանը: Կ. կոմիտեն, մասնավորապես, հայտարարում էր.

«... Եվ այսպես, ռուս սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ջանքերը՝ վերականգնելու խաղաղ հարաբերություններ Թուրքերի և հայերի միջև՝ ապարդյուն անցան, դժբախտաբար: Եվ այդ փաստը մի անգամ ևս ապացուցեց, թե Թուրքերը ամեն տեղ և միշտ հանդիսացել են հարձակվող կողմ և նրանց հանձն առած բարոյական պարտավորությունները երբեք գին չեն ունեցել: Այս անգամ ևս ազգերի եղբայրության և խաղաղության գաղափարների համար կռվող սոց.-դեմոկ. կուսակցությունը մյուս հեղափոխական կազմակերպությունների հետ միասին հանդիպեց խոչընդոտի ագրեսիվ տրամադրված Թուրք խուժանի կողմից:

[1] «Դրոշակ», N 1(167), հունվար, 1906, էջ 11:

Հայ յեղափոխական դաշնակցությունը բոլոր ջանքերը գործ կը դնի հարկավոր դիմադրությունը անելու Թուրքերի ագրեսիվ գործողություններին: Միևնույն ժամանակ նա հայտնում է, որ մեր կուսակցության կողմից ձեռք առնվող բոլոր ակտիվ միջոցների միակ նպատակն է՝ խաղաղությունը շուտափույթ վերականգնել և դադարեցնել այն բռնությունները, որ Թուրքերի պատերազմիկ մասը գործում է խաղաղ ազգաբնակչության դեմ:

Այդ պատճառով դաշնակցությունը հայտարարում է ի գիտություն ընդհանուրի.

1. Ամեն մի բռնություն խաղաղ ու անզեն Թուրքերի վրա՝ կը հալածվի, իսկ նրանց գույքը Թե՛ խանութներում և Թե՛ տներում կը պահվեն:

2. Ընդհարումների շրջանից դուրս զինավորված Թուրքերը մինչև խաղաղության վերականգնումը զինաթափ կ'արվեն մեր կուսակցության կոմիտեից լիազորություն ունեցող անձանց ձեռքով:

3. Մինչև Թուրքերի կողմից հարձակումները դադարեցնելը, նրանց անցնելը չեզոք շրջանից պատերազմական շրջան՝ չի Թույլատրվում»[1]:

Նոյեմբերի 26-ի երեկոյան «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը խորհրդակցելու համար Թերթի խմբագրություն հրավիրեց դաշնակցության մի քանի ներկայացուցիչների: Նրա առաջարկով քննվեց հետևյալ հարցը. արդյո՞ք նպատակահարմար չէ, որ դաշնակցությունն իր գլխավոր ուշադրությունը Կովկասի մայրաքաղաքից տեղափոխի գավառներ՝ այնտեղ տանելով իր գլխավոր ուժերը, քանի որ հայկական գյուղերը մեծ մասամբ անպաշտպան են, չունեն բավարար ռազմիկ ուժեր, բացի այդ, նկատի ունենալով, որ Թիֆլիսում կա բավարար Թվով զորք և ոստիկանություն, ինչպես նաև կան սոցիալ-դեմոկրատական դրուժիններ և որ այդ բոլորի շնորհիվ քաղաքի հայ բնակչությանն այլևս լուրջ վտանգ չի սպառնում:

Դաշնակցության ներկայացուցիչները պարզաբանեցին, որ սոցիալ-դեմոկրատներն արդեն փորձել են կատարել հաշտարարի դեր, բայց ձախողվել են, և եթե առաջիկայում էլ նրանք ցանկանան նույն բանն անել, ապա ոչ մի երաշխիք չկա, Թե կկարողանան ապահովել քաղաքի հայ բնակչության անվտանգությունը, մանավանդ որ նրանք միամտորեն համոզված են, որ Թուրքերի վրա բացառապես կարելի է ազդել բարոյական քարոզներով: Այդ ամենը մեջտեղ բերելով՝ դաշնակցության ներկայացուցիչները հայտարարեցին, Թե հայությունը դառը փորձով համոզվել է, որ զորքն ու ոստիկանությունը ոչ Թե իր, այլ իր Թշնամիների պաշտպանն է: Ինչ վերաբերում է սոցիալ-դեմոկրատներին, ապա նրանց հետ գործակցությունը սկզբունքորեն ընդունելի համարելով, այնուամենայնիվ, հայ մարտիկներն իրենց գրված դիրքերում մնալու են այնքան ժամանակ, մինչև չհամոզվեն, որ ապահով են քաղաքի հայության կյանքն ու գույքը:

[1] **«Դրոշակ»**, N 1(167), հունվար, 1906, էջ 11:

Մինչ նոյեմբերի 26-ին տեղի էին ունենում այս դեպքերը, ամբողջ օրը շարունակվում էր կռիվը բոլոր դիրքերի վրա: Մի քանի տեղերում անցնելով հակահարձակման՝ հայկական ջոկատները ընդհուպ մոտեցան Թուրքերի ամենաամրացված դիրքերին: Նրանց մեծ կորուստներ պատճառեց Հավլաբար հայկական քաղաքամասից անդադար տեղացող կրակը, որ անձամբ վարում էր այդ տեղի ուժերի հրամանատար Տուրբախը:

Կռիվը շարունակվեց նաև կիրակի օրը, նոյեմբերի 27-ին, երբ առավոտյան քաղաքի և Բորչալուից եկած Թուրքերը համատեղ նոր հարձակում կատարեցին հայերի դիրքերի վրա, բայց ամեն անգամ նահանջեցին մեծ կորուստներ կրելով: Օրվա վերջում Թուրքական ուժերը շնչահեղձ եղան:

Վրա հասավ գիշերը: Օգտվելով գիշերային խավարից՝ Թուրքերը փորձեցին դուրս փախչել քաղաքից, բայց ամեն անգամ հայկական Թռուցիկ խմբերը նրանց հետ էին քշում իրենց Թաղը: Այլևս ի վիճակի չլինելով ռազմական որևէ գործողության դիմելու, այդ գիշեր ելուզակները մի քանի փորձ կատարեցին կրակ տալու հայերի տները: Հրձիգներից մեկը, որ ռուս սպայի համազգեստ էր կրում, բռնվեց նավթի անոթը ձեռքին: Երբ ռուս սպան իմացավ հրձիգի բռնվելու մասին, եկավ ուզելու իր մունդիրը՝ ասելով. «Ես երկու ժամով էի տվել նրան ...»:

Վերջապես նոյեմբերի 27-ին, երկուշաբթի առավոտյան, Թուրքերի դիրքերում բարձրացան սպիտակ դրոշներ: Թեև նրանք դադարեցրել էին հրացանաձգությունը, բայց հայ մարտիկները դեռ շարունակում էին կրակը: Եվ ահա, վերջապես, երևաց մի ռուսական զորամաս ու մտավ հակառակորդներին բաժանող ազատ տարածքը: Ամեն կողմ ազդարարվեց, Թե կռվին վերջ է տրված: Արդեն ընդհանուր կանոն էր դարձել՝ եթե Թուրքերը պարտվում են, ուրեմն, կռվին վերջ պիտի տրվեր:

Մոտ մեկ շաբաթ տևած կռվից հայերը դուրս եկան լիակատար հաղթանակով: Թիֆլիսում դրության փաստացի տերը դարձավ դաշնակցությունը, որի հետ համերաշխ գործակցում էին հայ հասարակության համարյա բոլոր շերտերը: Դաշնակցության տեղի կ. կոմիտեի հրամանով քաղաքի բոլոր փողոցները, բացի Թուրքական Թաղից, դրվեցին ինքնապաշտպանական խմբերի հսկողության տակ: Տարած հաղթանակը հնարավորություն տվեց մարտիկների ձեռքն ընկած ավելորդ զենքերն ուղարկել Գանձակի շրջան:

Կռվի ընթացքում Թուրքերը տվել էին մեծ Թվով զոհեր՝ 500 սպանված և վիրավոր[1]: Հսկայական էին նաև նրանց նյութական կորուստները: Շատերն իսպառ հեռացան քաղաքից՝ շտապ ծախելով իրենց ունեցած-չունեցածը:

Նյութական մեծամեծ կորուստներ կրեցին նաև հայերը: Հրդեհները տարածվել էին Թե՛ Թուրքական և Թե՛ հայկական Թաղերում: Հատկապես հայկական Թաղերից, ուր մոլեգնում էր կրակը, սկսվեց մարդկանց զանգվածային

[1] **Միքայել Վարանդեան**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 112:

գաղթը դեպի քաղաքի ծայրամասերը: Կրակը ճարակել էր Մեյդանի, Վորոնցովսկայա, Կրասիլնայա, Կրեպոստնոյ և այլ փողոցների շինությունները: Այրվեցին Խարազյանի, Հարությունյանների, Բեփինյանների, Զախարբեկյանի, Տեր-Հակոբյանի, Աբամելիքի, Թեյմուրազյանի, Թուլաևի, Գուրգենբեկյանների, Ոսկանովի, Գեորգյանի և այլոց տները[1]:

Հայկական զինված խմբերը շատ զոհ չունեցան, սպանվել էր 7 և վիրավորվել 12 հոգի[2]:

Սպանվածների մեջ էր մի ընտիր հայորդի, քաջ ու կորովի, ընդամենը 22 տարեկան, բայց հուժկու ու թիկնավետ տղամարդ, ասես՝ ժայռից պոկված մի հսկա՝ խնուսցի Մուշեղը: Նա զոհվեց Խարփուղի թաղում, երբ իր խմբով խուժել էր թուրքերի դիրքերը, բայց չէր կարողացել ժամանակին հետ քաշվել: Հերոսական էր մահը, բայց անտանելի էր թողած կսկիծը: Հերոսի հուղարկավոր թափորի մասնակիցներից մեկը իր նամակում գրել է.

«Թաղումը հուզիչ էր: Որքա՜ն մայրեր էին լալիս այդ «զարիբ ախպորը»՝ ինչպես անվանում էին նրան իրենց գովքի մեջ Հավլաբարի կանայք: Ուրիշ զարիբ ընկերներ էլ կան այստեղ, բոլորն էլ պատիվ են բերում Թուրքահայաստանին: Ընտիր ու կատաղի մարտիկներ են, սառնարյուն, հպարտ ու քաջ տղամարդիկ: Վստահության և հավատի մի շունչ է փչում մարդու վրա՝ դրանց հետ խոսելիս. մռայլ են, լուրջ, ճակատները կնճռոտ, բայց որքան ուժ, որքան եռանդ...»[3]:

Թանկագին զոհերը տրվել էին ազգակիցների փրկության համար, բայց այդ զոհերը կարող էին չլինել, եթե երկրի շինքին նստած չլիներ բարբարոս կառավարությունը:

Թիֆլիսում ծայր առած կռիվների ընթացքում սպանվել էին նաև ոչ քիչ թվով խեղճ ու կրակ պարսկահպատակ համշարիներ, որոնք գտնվում էին հայերի դեմ կռիվ սանձազերծած թուրքերի կողմում: Վերջիններիս ղեկավարներն առիթը բաց չթողեցին և, ներկայանալով Թիֆլիսում պարսիկ հյուպատոսին, փորձեցին նրան համոզել, թե հայերը կռվում են ոչ միայն քաղաքի թուրքերի, այլև ընդհանրապես պարսկահպատակ մուսուլմանների դեմ՝ լինեն դրանք թուրքեր թե պարսիկներ: Այդ վտանգավոր սադրանքը նպատակ ուներ Իրանում գրգռել մուսուլման ֆանատիկ զանգվածներին և երկրում առաջ բերել հայերի կոտորածներ:

Սադրանքը, սակայն, նպատակին չհասավ: Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը պարսից հյուպատոսին ուղղած մի գրության մեջ պարզաբանում էր, որ թուրք-հայկական զինված բախումները որևէ կրոնական իմաստ ու գունավորում չունեն, և չարամիտ զրպարտությունները երբեք չեն կարող խաթարել քրիստոնյա հայ և իսլամ պարսիկ ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Պարսիկ հյուպատոսը բազմաթիվ նամակներ ստացավ Թիֆլիսի նշանավոր հայերից, որոնք չեշտում էին, թե իրենց դիրքերում գտնվող հայ կռվողները չէին կարող նախապես իմանալ, թե հակառակ դիրքերից իրենց վրա կրակողները ովքեր են՝ պարսկահպատակնե՞ր, թե՞ ռուսահպատակներ, հետևապես հայերի փոխադարձ հրացանաձգության զոհ կարող էին դառնալ թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Հայերը, որտեղ հնարավոր էր, ամեն ջանք գործ էին դնում, որպեսզի պարսկահպատակները չվնասվեն և նրանցից, որքան հնարավոր է, քիչ զոհեր լինեն: Կռիվների ժամանակ հայ մարտիկները ազատեցին և պաշտպանեցին մեծ թվով պարսկահպատակ թուրքերի ու պարսիկների և գնդակների տակ ուղեկցելով՝ նրանց հանձնեցին պարսից հյուպատոսարանին: Նրանք նաև պահպանում էին պարսկահպատակների խանութները, հետ էին առնում թալանված ապրանքներն ու գույքը և վերադարձնում տերերին:

Այդ կարևոր գործին առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Ռոստոմը՝ նաև կռիվները վերջանալուց հետո: Նրա հանձնարարությամբ դաշնակցական գործիչ Տիգրան Դերոյանն իր 12 հոգանոց զինված խմբով շրջում էր հայերի թաղերում, ազատում նրանց կողմից գերված պարսկահպատակ թուրքերին[1]:

Դրան հակառակ, Թիֆլիսի և Բորչալուից եկած թուրքերը շատ տեղերում կողոպտեցին պարսկահպատակ թե՛ թուրքերին և թե՛ պարսիկներին:

Այդ ամենի մասին Թիֆլիսի պարսից հյուպատոսը պարբերաբար տեղեկացնում էր Իրանի շահնշահին, սադրազամին և արտաքին գործերի մինիստրությանը: Ի պատասխան պարսկահպատակների նկատմամբ հայերի վերաբերմունքի մասին Թեհրանից տված հերթական հարցի՝ հյուպատոսը նշել էր, որ ամենուրեք կարելի է հանդիպել պարսկահպատակների նկատմամբ հայերի բարեկամական անկեղծ վերաբերմունքի դրսևորումների[2]: Իսկ Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդին ուղարկած պատասխան նամակում նա գրել էր. «Մեր ինքնակալ Շահը և սադրազամը տոգորված են լավագույն զգացումներով հայերի նկատմամբ և ոչ մի միջոց չեն խնայի, որպեսզի Պարսկաստանում հայերի հանդեպ բացառվի որևէ խռովություն»:

Հայ մարտիկները պաշտպանում էին ոչ միայն պարսկահպատակ մուսուլմաններին՝ թուրքերին և պարսիկներին, այլև մյուս բոլոր մահմեդականներին, որոնք իրենց չեզոք էին պահում, զենք չէին բարձրացնում հայերի դեմ:

«Մշակ» թերթը տպագրել էր 10 ստորագրություն կրող հետևյալ նամակը՝

---

[1] Ա-Դ0, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 397, «Մշակ», N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:

[2] «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 29: Ըստ Արմեն Գարոյի, հայերի կորուստները կազմել են՝ 8 սպանված և 60 վիրավոր (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 5, մարտ, 1923, էջ 47):

[3] Նույն տեղում:

[1] «Հայրենիք», N 6(239), նոյեմբեր-դեկտեմբեր, 1943, էջ 42- 43:

[2] «Մշակ», N 6, 12 հունվարի 1906թ.:

ուղղված խմբագրությանը.

«Մենք, յափունջու և չալի առևտուր անող լեզգիներս, որ բնակվում ենք Զուբալովի քարվանսարայում, խնդրում ենք «Մշակի» միջոցով շնորհակալություն հայտնել հայերին, դաշնակցական և հնչակյան զինվորներին, որ վերջին Թուրք-հայկական ընդհարման ժամանակ Թիֆլիսում մեծ խնամքով պահպանեցին և մեր մեծ քանակի ապրանքը պահեցին անվնաս: Բացի այն, որ մեզ ոչ մի վնաս չհասցրին, այլև այդպիսի խառնակ ու երկյուղալի օրերում մեզանից գնում էին յափունջիներ՝ մեզ համար ձեռնտու գներով:

Ստորագրություններ»[1]:

Քանի որ փոխարքայի նախաձեռնությամբ և Ջունկովսկու նախագահությամբ ստեղծված հանձնաժողովը չէր արդարացրել իր վրա դրված հույսերը և ոչնչով չէր նպաստել Թիֆլիսում հասարակական կարգի վերականգնմանը, Վորոնցով-Դաշկովը դեկտեմբերի սկզբներին լուծարեց այն:

Փոխարքան կատարեց նաև մի շարք կադրային փոփոխություններ, որոնք նպատակ ունեին խստացնել իշխանությունների վերահսկողությունը Կովկասի մայրաքաղաքի վրա: Նրա 1905թ. դեկտեմբերի 26-ի հրամանով Թիֆլիս քաղաքի և գավառի ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակվեց Կովկասի զինվորական շրջանի զորքերի խոշոր զորամիավորումներից մեկի հրամանատար, Նախիջևանի արյունալի ջարդերի «հերոսներից» գեներալ-մայոր Ալիխանով-Ավարսկին: Առաջին օրվանից իսկ նա փորձեց բռնությամբ զինաթափել հայկական ուժերին, բայց դաշնակցության Թիֆլիսի կ.կոմիտեի սպառնագին նախազգուշացումից հետո առայժմ չափավորեց իր քայլերը: Բարեբախտաբար հայության այդ ոխերիմ թշնամին երկար չպաշտոնավարեց Թիֆլիսում. փոխարքան նրան առաջ քաշեց և 1906թ. հունվարի սկզբին նշանակեց Քութայիսի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, իսկ գեներալ-մայոր Տիմոֆեևը փոխարքայի հրամանով ստանձնեց Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի գավառի ժամանակավոր գեներալ-նահանգապետի պաշտոնը:

Թիֆլիսի նոյեմբերյան ընդհարումը լայն արձագանք գտավ: Պետերբուրգի, Մոսկվայի և Ռուսաստանի ուրիշ քաղաքների բազմաթիվ թերթեր լուսաբանեցին ծավալված կռիվները, քաղաքում կատարված ավերածությունները, երկու կողմերի կրած մարդկային և նյութական կորուստները: Հոդվածներ լույս տեսան անգլիական "Morning Advertises", "Daily Chronicle", "Evening News", "Times", "Evening Standard", ֆրանսիական "Temps" և եվրոպական ուրիշ թերթերում:

Ինչպես բովանդակ Անդրկովկասի բոլոր վայրերում, այնպես և փոխարքայության կենտրոնում հայության գերագույն պաշտպանը, նրա հույսն ու ապավենը հայ մարտական կազմակերպությունն էր: Թեև հայ ցեղի նավը հայտնվել էր հողմակոծ ու մրրկված ծովի վրա, բայց նա անղեկ չէր: Պատահական չէ, որ նոյեմբերյան օրերին դաշնակցության նույնիսկ ամենամոլի հակառակորդները Թիֆլիսի հայ հասարակությունից ներս ստիպված էին խոստովանել, որ ժողովրդի պաշտպանության գործում կազմակերպությունը խաղում է բացառիկ ու անգնահատելի դեր և կամա թե ակամա գնահատում էին նրա թափած ջանքերը:

«Մշակ» թերթը, որ տարիներ շարունակ անողոքաբար քննադատում էր դաշնակցությանը, նրան համարում վերջին տասնամյակում հայ ժողովրդի գլխին եկած պատուհասների հիմնական պատասխանատու, Թուրք-հայկական ընդհարումների ամբողջ ժամանակաշրջանում հաճախ էր շեշտում այդ կազմակերպության բացառիկ դերակատարությունը, իսկ Թիֆլիսի նոյեմբերյան ընդհարումների օրերին հիացական ներբողներ էր ուղղում դաշնակցական անձնազոհ մարտիկներին: Թերթը գրում էր.

«Եվ դեռ գտնվում են մարդիկ, որոնք հանդգնում են անվանարկել կամ արհամարհել դաշնակցության ուժը և բարոյական ազդեցությունը: Հայ ժողովրդի համար ներկա օրերում չկա ուրիշ պաշտպանություն: Նա հանգիստ է, երբ կա դաշնակցությունը: Նա հավատում է այդ վստահելի ուժին»[1]:

*

* *

Թիֆլիսում տեղի ունեցած ընդհարումների օրերին խժդժություններ սկսվեցին նաև Թիֆլիսի նահանգի գավառներում, թեև դրանք այստեղ այնպիսի մեծ ծավալներ չստացան, ինչպես Գանձակի և Երևանի նահանգներում:

Առաջինը շարժվեցին Կարայազի հարթավայրի թուրքերը: Նոյեմբերի 24-ին մի քանի հազարի հասնող խառնամբոխը հարձակվեց հայ հողատերեր Մուրադով եղբայրներին պատկանող կալվածքի վրա և քշեց 10 000 գլուխ մանր և 600 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 25-ին, հարթավայրի Կոսալի, Նազարլի, Թազաքենդ գյուղերի թուրքերը՝ 500 զինված և 2000 անզեն մարդ, սկսեցին թալանել Կարայազի հայկական գյուղերը: Կողոպտում էին ամեն բան, ինչ կարելի էր վերցնել, նույնիսկ տանում էին շներին:

Կարայազում տեղաբաշխված էր Դերբենտյան գնդից 60 հոգուց բաղկացած մի զորամաս՝ կապիտան Ջերնյավսկու հրամանատարությամբ, որը բացարձակապես չմիջամտեց դեպքերին: Հարթավայրի գյուղերի բոլոր հայկական ընտանիքները մերկ ու քաղցած թափվեցին Թիֆլիս:

Կարայազում մեծ հողատարածություններ ունեցող Աղա Մուրադովի, Շահ-Պարոնովի, Խատիսովի, Տեր-Ավակովի, Կորգանովի, Ադամովի կրած կորուստները հասնում էր 100 000 ռուբլու, նույնքան էլ հաշվվում էին հայ

[1] «Մշակ», N 6, 12 հունվարի 1906թ.:

[1] «Մշակ», N 236, 30 նոյեմբերի 1905թ.:

գյուղացիների կորուստները[1]:

Կարայազի դեպքերը չհանգեցրին սպանությունների. թուրքերն այստեղ բավարարվեցին միայն մեծածավալ և, հատկապես, մեծ արժեք ունեցող գույք ու ապրանքներ կողոպտելով:

Ընդհարումները Կարայազում դադարելուց հետո Շահ-Պարոնովը դիմել էր դատարան՝ իր ունեցվածքի գոնե մեծ արժեք ունեցող ապրանքներն ու գույքը վերադարձնելու հույսով: Նախաքննության ընթացքում թուրք բեկերն ասում էին, թե թալանը խուլիգանների գործն է և որ իրենք որևէ առնչություն չունեն կողոպուտի հետ: Շահ-Պարոնովը պատասխանել էր, որ խուլիգանը գողանում է այնքան, որքան իրեն երկրորդ օրը բավական է ծխախոտի ու օղու համար, խուլիգանը երբեք չի կարող յուրացնել ու անհետ կորցնել տասնյակ հազարներ արժողության իրեր և անասուններ. դա միայն ընդունակ են անելու բեկերն ու աղալարները:

Կողոպուտներ և ավերումներ տեղի ունեցան նաև Թիֆլիսի Նահանգի Բորչալուի գավառում: Գավառի բնակչությունը բազմազգ էր՝ ապրում էին հայեր, թուրքեր, ռուս դուխոբորներ, գերմանացիներ և այլ ազգերի մարդիկ: Թեև թուրքերն իրենց թվով (38 հազար) գերազանցում էին հայերին (45 հազար), բայց անհամեմատ լավ էին զինված և ամենուր հայտնի էին իրենց ավազակային հակումներով: «Բորչալվեցի թուրք» անվանումը հատկապես սարսափ էր մատնում Թիֆլիսի քաղաքների հայությանը:

Այն բանից հետո, երբ հիմնականում թալանի նպատակով Բորչալուից Թիֆլիս եկած 2000 զինված թուրքերը դատարկաձեռն վերադարձան գավառ, նրանք հանգիստ չմնացին, այլ, հարձակվելով, կողոպուտի ենթարկեցին ռուսների Բաշկեչետ, հայաբնակ Կիանեթ, Ռատևան, Ակաուրտ, Բոսլեպ, Ղարաքիլիսե, հայ-վրացաբնակ Բալիջի և Դմանիս գյուղերը: Մտնելով եկատերինենֆելդ գյուղը՝ նրանք ձեռք չտվեցին գերմանացիների ունեցվածքին, բայց կողոպտեցին բոլոր հայերին: Մասնակի հարձակումների ենթարկվեց գավառի կենտրոն Շուլավերը, ասպատակությունների ասպարեզ դարձան Թիֆլիսից դեպի Շուլավեր տանող ճանապարհի երկու կողմերում ընկած հայկական Կումիս, Հայ-Սողանլուխ, Թելեթ, Կոդա, Վաշլովան գյուղերը: Թուրք բնակչությունը հարձակվել էր նաև Թիֆլիս-Երևան երկաթուղու Բորչալուի գավառով անցնող հատվածի վրա գտնվող կայարանների շրջակայքի հայկական գյուղերի վրա, թալանել ու ավերել[2]: Այրվել էին Մուրինովի, Արամյանի, Միրզոևի և Մանթաշյանի կալվածքները: Շուլավերը շրջապատվել էր 2000-ից ավելի ձիավոր զինված թուրքերով՝ աղալարների առաջնորդությամբ:

Շուլավերի հայկական պաշտպան ուժերի խմբապետը հետևյալ տագնապալի գրությունն էր ուղարկել Թիֆլիս՝ Հ.Յ. դաշնակցության կենտրոնական

[1] **"Кавказский рабочий листок"**, N6, 30 ноября (13 декабря) 1905г.
[2] **«Մշակ»**, N 235, 29 նոյեմբերի 1905թ.:

կոմիտեին.

«Մեր դրությունը ես անզոր եմ նկարագրելու: Մեր ուժը ձեզ շատ լավ հայտնի է. մի շաբաթից ավելի է ոչ ես և ոչ տղերքը մի բոպե անգամ չենք քնել: Խնդրում եմ շտապ դիմել փոխարքային, որպեսզի զորք ուղարկի՝ գոնե 300 հետևակ զինվոր: Զորք ուղարկելու խնդրանքով գավառապետը երեք անգամ դիմել է նահանգապետին, բայց ոչ մի պատասխան չի ստացել: Ներկայումս այստեղ կա 100 կազակ և Լոռուց եկած 40 հայ: Հաղորդակցություն չկա, որպեսզի մեր վիճակի մասին մշտապես տեղյակ պահենք ձեզ: Զափազանց մեծ ուժի հետ ես կռիվ կմղեմ մինչև վերջին ընկերոջս զոհվելը, բայց երբ լսեք, որ մենք պարտվել ենք, խնդրում եմ մեզ չմեղադրել գոնե մեր մահից հետո:

Աղաչում եմ, եթե փոխարքան զորք չտա, գոնե 300 հրացան խնդրեցեք: Աշխատեցեք հասցնել փամփուշտ և զենք: Կարիք կա վառոդի և արճճի: Մեր դժբախտությունը նրա մեջ է, որ Շուլավերը դիրքեր չունի, ու [նույնիսկ] հազար մարդ անզոր կլինի պաշտպանելու բնակավայրը: Հնար չկա իմանալու, թե թշնամին որտեղից կմտնի, որովհետև ամեն կողմից բաց է»[1]:

Անխնա թալանվեցին Բորչալուի գավառի Լոռվա հայկական մի շարք գյուղեր: Մեծապես տուժեցին Մանթաշյանի, Արամյանի, Մատուրյանի, Միրզոյանի, Վարդ-Պատրիկյանի, Ենիկոլոպյանի ընդարձակ կալվածքները, Օպոչինինի, Գրաբի, Քալանթարյանի, Մաթևոսյանի չվեյցարական պանիրներ արտադրող գործարանները: Հրոսակախմբերն այրեցին ընդարձակ շինություններ, կողոպտեցին շարժական գույքը, տարան տասնյակ տոննաներով պատրաստի պանիր, հարյուրավոր ընտիր կովեր և այլն: Հարձակվելով Գևորգ Շադինյանի Ղարախաչում գտնվող պանրագործարանի վրա՝ թուրքերը հիմնահատակ ոչնչացրին այն: Ամբողջ շինությունը կրակի մատնվեց, իսկ մինչ այդ կողոպտիչները տարան գործարանի ողջ տարողությունները, իրեղենները և գործիքները, 2000 փութ չվեյցարական պանիր, որը ծախծխեցին շրջակա գյուղերում: Նրանք քշեցին ու տարան նաև Ղարախաչում պահվող Շադինյանին պատկանող 400 գլուխ կովերը[2]:

Թուրքերը ձեռք չտվեցին օտար, հատկապես գերմանական ֆիրմաներին, քանի որ նրանց տերերը, որպես կանոն, հանդես էին գալիս թուրքերի պաշտպանությամբ և ատելություն էին տածում հայերի նկատմամբ: Այդ տեսակետից հատկապես հայտնի էր Կուզենբախի ֆիրման՝ իր տերերի ծայրահեղ հայատյացությամբ[3]:

Հարկ է նշել, որ այդ օրերին Հ.Յ.Դ. Բորչալուի կազմակերպությունը ռուսերեն մի քանի թռուցիկ տարածեց թուրքերի շրջանում, որոնցում բացատրր-

[1] **«Մշակ»**, N 235, 29 նոյեմբերի 1905թ.:
[2] Նույն տեղում, N 239, 3 դեկտեմբերի 1905թ.:
[3] **Ա-ԴՕ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.) ,էջ 398:

վում էր, թե հայերն ու թուրքերը, որոնք մշտապես կողք կողքի ապրել են իբրև բարի հարևաններ, ինչո՞ւ այժմ սուր են ճոճում միմյանց դեմ: Միաժամանակ կոչեր էին արվում դադարեցնել թշնամանքը և վերականգնել խաղաղությունը ատելության և վրեժխնդրության հրդեհով բռնկված գավառում:

Այդ խառնակ ժամանակ Թիֆլիսից իր հայրենի Լոռի էր եկել Հովհաննես Թումանյանը: Մեծ բանաստեղծը թե՛ իր հրապարակախոսական և թե՛ գեղարվեստական գործերում տարիներ շարունակ անդրադարձել էր ժողովուրդների, հատկապես կովկասյան ազգերի համերաշխության և բարեկամության խնդիրներին՝ խաղաղ գոյակցությունը համարելով նրանց առաջադիմության ու բարօր կյանքի հիմնական պայմանը:

Այստեղ, Լոռիում, իր կյանքը վտանգի ենթարկելով, Հովհ. Թումանյանը խաղաղասիրական քարոզներով շրջում էր Լոռու ու Ղազախի հայկական և թուրքաբնակ գյուղերը: Թուրք հասարակ գյուղացիների հետ ունեցած հանդիպումներից ստացած տպավորությունները նա արտացոլել է ջերմ մարդասիրությամբ ներծծված «Այլահից ղրկված» անպաճույճ պատմվածքում:

Մեծ հումանիստը, վերհիշելով թուրք-հայկական ընդհարումները, գրել է. «1905 թվի աշնանն էր, թուրք-հայկական այդ ընդհարումների ամենակատաղի ժամանակը: Ես իմ հայրենիքում էի – Լոռու սարերում: Մենք մի ժողով արինք ու որոշեցինք թե՝ լոռեցիներս չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ, որովհետև եթե ուժեղ ենք՝ անխղճություն է դա, իսկ եթե թույլ ենք՝ հիմարություն է: Բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և աշխատում ենք սերն ու խաղաղությունը պահել մեր սարերում ու ձորերում»[1]:

Թուրք-հայ կոտորածների մղձավանջն արտացոլում է գտել նաև Թումանյանի «Ահմադը» պատմվածքում, ուր դառը խոսքեր կան ազգամիջյան հակասությունները բորբոքելուն ուղղված ցարիզմի վարած քաղաքականության դեմ:

Բանաստեղծը երկու ազգերի դաժան ընդհարումը համարում էր 20-րդ դարից դարձ դեպի բարբարոս դարերը, դեպի անցյալի վայրենի բնազդները: Հետագայում մեծ բավականությամբ վերհիշելով իր հաշտարար դերը՝ Փ. Վարդազարյանին հասցեագրած նամակում գրել է. «Ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու: Եվ այսօր այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից»[2]:

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հատ. III, էջ 86:
[2] Նույն տեղում, հատ. V, էջ 298:

Թիֆլիս վերադառնալուց հետո Թումանյանը հանդիպումներ ունեցավ քաղաքի հայ մտավորականների հետ՝ նրանց կոչ անելով ամեն ինչ անել երկու ազգերի միջև խաղաղությունը վերահաստատելու համար:

Դաշնակցական գործիչ Արամայիսը (Միսակ Տեր-Դանիելյան) իր անտիպ հուշերում վկայում է, որ Հովհ. Թումանյանի հետ հանդիպման ժամանակ բանաստեղծը նույնպիսի կոչով դիմել է նաև իրեն: «Նա հավատ ուներ, – գրել է Արամայիսը, – որ երկու ժողովուրդների միջև բացված վիհը հնարավոր է լցնել և վերականգնել նախկին բարիդրացիական հարաբերությունները. «Մենք բոլորս մի սիրտ, մի հոգի դարձած պետք է աշխատենք այդ ուղղությամբ. ոչինչ չպետք է խնայենք եղբայրական դրություն ստեղծելու ոչ միայն հայերի ու թուրքերի, այլև վրացիների, Կովկասում ապրող բոլոր ժողովուրդների միջև: Թե չէ... մոտիկ ապագայում կարող ենք ավելի ահավոր տեսարանների առաջ կանգնել»»[1]:

Դաշնակցական պրոպագանդայի, Հովհ. Թումանյանի և նրա համախոհների բեղմնավոր հաշտարար գործունեության, հայ բնակչության խաղաղասիրական կեցվածքի շնորհիվ էր, որ Բորչալուի գավառում սպանություններն ու կողոպուտները մեծ ծավալներ չընդունեցին: Առհասարակ Բորչալուի գավառի թուրքերն ավելի շատ ձգտում էին թալանի, քան մարդասպանության, և պատահական չէ, որ այստեղ սպանված հայերի թիվը կարելի էր հաշվել մատների վրա, իսկ թալանի ժամանակ թուրքերից սպանվել կամ վիրավորվել էր մոտ 40 մարդ:

1905թ. նոյեմբերյան օրերին Թիֆլիսի նահանգի 9 գավառներից 8-ում չարձանագրվեցին սպանությունների ու կողոպուտների դեպքեր՝ շնորհիվ հայ բնակչության համբերատարության ու աչալրջության:

ՀԱՑ – ՎՐԱՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԴԱՑՈՒՄԸ

Թիֆլիսում ծայր առած արյունալի դեպքերը լիովին ջրի երես հանեցին հայ-վրացական հարաբերությունների բազմաբնույթ կնճիռները, նպաստեցին Կովկասի ամենամեծ քրիստոնյա երկու ժողովուրդների միջև հակասությունների հետագա սրմանը, որոնց իրական կրողները ոչ թե այդ ժողովուրդներն էին, այլ վրաց ազնվականությունը և վրացահայ բուրժուազիան:

Մյուս կողմից, հենց այդ օրերին վերջնական տեսք ստացան կովկասյան թուրքերի և վրացիների քաղաքական հարաբերությունները, որոնք միտված էին երկու ժողովուրդների միջև հաստատված բարեկամության հետագա ամ-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 150, ց.1, գ.25,թ.8:

բապնդմանը, որի կրողներն էին սոցիալական նույն դասին պատկանող վրաց ազնվականությունը և Թուրք բեգությունը:

18-րդ և 19-րդ դարերի սահմանագծում Վրաստանը կորցրեց իր անկախությունը, իսկ շատ չանցած՝ ռուսական տիրապետությունը հաստատվեց ողջ Անդրկովկասում:

Պարսկական տիրապետությունից ազատագրվելուց և ռուսական կայսրությանը միավորվելուց հետո Անդրկովկասը մի շարք բարիքներ ստացավ. բարենպաստ պայմաններ ստեղծեց արտադրողական ուժերի, լուսավորության ու մշակույթի զարգացման համար, նպաստեց տարածաշրջանի ժողովուրդների փոխադարձ շփմանը:

Համառուսաստանյան հասարակական-տնտեսական կյանքի մեջ ընդգրկվելը հատկապես նկատելի դրական նշանակություն ունեցավ քրիստոնյա ժողովուրդների համար: Հաստատվել էր համեմատաբար կայուն մի իրավակարգ՝ իր պետական օրենքներով, տանելի կառավարչությամբ, դատական անկախ համակարգով: Դրանք բարիքներ էին, որոնց վաղուց սպասում էին Անդրկովկասի ժողովուրդները:

Հայության համար անգնահատելի եղավ Անդրկովկասում առևտրաարդյունաբերական կյանքի աշխուժացումը, որը, մինչև ռուսների կողմից երկրամասի նվաճումը, գտնվում էր նախնական վիճակում: Այժմ, փոփոխված նոր իրադրության մեջ, երբ Անդրկովկասում հաստատվել էր մեծաթիվ ռուս պաշտոնեություն, երբ երկրամասի բոլոր գավառներում հիմնավորված էին զինվորական կայազորներ, նպաստավոր պայմաններ էին ստեղծվել տեղական արդյունագործության առավել որակյալ արտադրատեսակների և դրսից բերված ապրանքների սպառման համար: Ի տարբերություն պարսիկ պաշտոնյաների ու զորքի, որոնք լիուլի օգտվում էին երկրի բարիքներից՝ առանց նրանց փոխարժեքը վճարելու, ռուսներն իրենց վերցրածի դիմաց տալիս էին հասանելիք դրամը: Գնալով Անդրկովկասի ժողովրդի ձեռքը մեծ քանակությամբ դրամ էր անցնում, որը հնարավորություն էր ստեղծում առևտրական կապեր հաստատել ռուսական կայսրության ամենահեռավոր վայրերի, Թուրքիայի և Պարսկաստանի, մասամբ նաև՝ Եվրոպայի հետ:

Այս բոլոր հանգամանքները հեղաշրջող նշանակություն ունեցան Անդրկովկասի կյանքի համար: Ստեղծված համեմատաբար ազատական պայմանները գործելու և առաջադիմելու լայն դաշտ էին ստեղծում շնորհք և ընդունակություն ունեցող մարդկանց համար: Իսկ Անդրկովկասի ժողովուրդների մեջ ամենից ավելի հայ ժողովուրդն էր ունակ հրապարակ հանելու ձեռներեց առևտրականներ ու արդյունաբերողներ: Այստեղ վճռական դեր էին խաղում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք էին ուշիմությունը, ռիսկը, հարմար գործընկերներ գտնելու ունակությունը: Պակաս կարևոր չէր այն, որ հայերը, ի տարբերություն իրենց հարևանների, դարեր շարունակ զբաղվել էին առևտրով

ու արհեստներով, և նրանց՝ որպես քաջահմուտ ու վստահելի առևտրականների համբավը վաղուց էր տարածվել Հայաստանի սահմաններից շատ հեռու:

Անդրադառնալով հայերի առևտրական ունակություններին՝ գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտը նշել է, որ նրանք դեռ շատ հնուց բազմաթիվ երկրներում հայտնի էին իրենց ավանդական գործառնությամբ: «Մարդաբանություն պրագմատիկական տեսանկյունից» հայտնի աշխատության մեջ նա գրել է. «...Հայերի մեջ տիրապետում է հատուկ տեսակի մի ինչ-որ առևտրական ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ, ուրբով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափի Կորսոյի հրվանդանը: Դա վկայում է առանձնահատուկ ծագումը այդ խելամիտ և աշխատասեր ժողովրդի, որը հյուսիս արևելքից դեպի հարավ արևմուտք տանող ուղղությամբ անցնում է գրեթե ամբողջ հին աշխարհը և կարողանում սիրալիր ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մեջ, որոնց մոտ նա լինում է: Դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախասկզբնական ձևավորումը մենք ի վիճակի չենք հետազոտելու) գերազանցությունը...»[1]:

Անդրկովկասում հայերի կողմից դրամագլուխ կուտակելու գործընթացը, հանգամանքների բերումով, տեղի էր ունենում նրանց հայրենի գավառների սահմաններից դուրս: Ազատ մրցակցության պայմաններում դրամը հայերի ձեռքում կուտակվում էր մեծ արագությամբ:

Անդրկովկասում ռուսական տիրապետության հաստատումից շատ ժամանակ չէր անցել, բայց Պետերբուրգում արդեն խոսում էին երկրամասում հայկական կապիտալի նվաճած առաջնակարգ դիրքերի մասին:

1836թ. մի հրատարակության մեջ ասված է. «Հայերը տիրել են ամբողջ Անդրկովկասի առևտրին. կատարում են ամէն հանձնարարություններ, պահում են համարյա բոլոր կապալները, վերցնում բոլոր ձեռնարկությունները, կատարում են մատակարարական հանձնաժողովների պարտականությունները: Մի խոսքով՝ ուր շահելու հնարավորություն կա, այնտեղ անպատճառ գտնվում են հայերը: Շահոտացությունը նրանց խոհերի ու գործերի միակ շարժիչն է»[2]:

Հին (1846թ.) փաստաթղթերից մեկում մատնանշվում էր, որ Ռուսաստանի հետ Անդրկովկասի տարեկան առևտուրը 1845թ. կազմել է 5 534 600 ռուբլի, որը բացառապես գտնվել է հայերի ձեռքում[3]:

Այդ շրջանում հայերի տնտեսական վերելքը Կովկասում չէր սահմանափակվում միայն առևտրով և գործարանային պարզ արտադրությամբ: Հայկական դրամագլուխը մուտք էր գործել նաև գյուղատնտեսության մեջ՝ իրեն են-

[1] **И. Кант**, Соч. в шести томах, т.6, М., 1966, стр. 572-573.
[2] Մեջբերված է՝ **«Հայրենիք»**, N 2 (396), փետրվար, 1959, էջ 27:
[3] Նույն տեղում:

թարկելով բամբակագործությունը, գինեգործությունը, կաշեգործությունը և այլ ճյուղեր*: Առևտրում, գործարանային արտադրության ասպարեզում և գյուղատնտեսության մեջ հայերից հետո որոշ դիրքեր ունեին նաև գերմանացիները, բայց հայ դրամագլխի հետ նրանք ի վիճակի չէին մրցել: Ինչ վերաբերում է մյուս ազգային կապիտալներին, ապա դրանց տերերը մտածել անգամ չէին կարող հայկական կապիտալի հետ մրցակցության մասին:

Անդրկովկասի տնտեսական կյանքում հայ ունևորի դերը տիրական էր հատկապես ռուսական տիրապետության սկզբնական շրջանում, երբ նորահաստատ իշխանության և հատկապես ռուս զինվորականության համակրանքը հայության կողմն էր: Այս ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ պետականորեն խրախուսվում էր հայ տարրի նյութական վերելքը: Հետագայում նույնպես, այն բանից հետո, երբ 80-ական թվականների սկզբներից իշխանությունների վերաբերմունքը դեպի հայությունը դարձել էր անբարյացակամ, հայկական կապիտալի դիրքերը շարունակում էին մնալ ուժեղ և անսասան:

Նույն 80-ական թվականներին հայտնի կապիտալիստ Մորոզովը մասնագետներից կազմված մի խումբ էր ուղարկել Անդրկովկաս՝ ծանոթանալու համար երկրամասի շուկայի պայմաններին և այնտեղ իր գործարանների արտադրանքի վաճառքի ընդլայնման հնարավորություններին: Մասնագետները կատարում են հանձնարարականը և իրենց ուսումնասիրության արդյունքների մասին ներկայացնում զեկուցագիր[1], ուր, մասնավորապես, շեշտված էր, որ «Անդրկովկասի ամբողջ արտադրական կարողությունները գործում են հայերի ձեռքով, որոնք տիրել են նաև համարյա ամբողջ առևտրին», որի հետևանքով «նրանց ձեռքում են կենտրոնացված բոլոր խոշոր դրամագլուխները»[2]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ դրամատերերը տիրական դիրք ունեին ամբողջ Անդրկովկասի տնտեսական կյանքում. նրանց ձեռքում էին առևտրի ու արդյունաբերության հիմնական ոլորտները, բանկերը, անշարժ գույքի մեծ մասը, քաղաքներում տները, քաղաքներից դուրս՝ նախկինում ազնվականությանը պատկանող հողերն ու կալվածքները:

«Պարզ է, - գրել է Ալեքսանդր Մյասնիկյանը, - որ վաշխառուական, առևտրական և արդյունաբերական կապիտալը գլխավորապես գտնվում էր հայերի ձեռքին: Ամենաուժեղ տարրը... Անդրկովկասում հայ բուրժուազիան էր, որ մի կողմից հարվածում էր վրացի ազնվականությանը՝ գնելով նրանց հողերը և

* Այդ գործընթացը Թիֆլիսի նահանգի օրինակով հանգամանորեն ցույց է տվել Գուլիշամբարովը (Ст. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Тифлисской губернии (Отчет на 1886г.), Тифлис, 1888.

[1] А. Макаров, Закавказье в торговом отношении. Доклад Т. С. Морозову, М., 1884, стр. 28.

[2] «Հայրենիք», N 2 (396), փետրվար, 1959, էջ 28:

քայքայելով նրանց, իսկ մյուս կողմից՝ նա մրցում էր թուրք բեկերի և առևտրականների հետ»[1]:

Հայկական կապիտալը մեծ հաջողությունների հասավ հատկապես Թիֆլիսում: Թիֆլիսը դարեր ի վեր եղել է Վրաստանի թագավորանիստ մայրաքաղաքը և պատմական բոլոր տվյալներով վրացիներինն է: Նրա դերն էլ ավելի բարձրացավ, երբ դարձավ երկրամասի վարչական և տնտեսական կենտրոն, փոխարքայի բնակատեղի: Դա իր հետ բերեց ռուս բնակչության թվի ավելացում, որի հետևանքով արդեն 19-րդ դարավերջին շատ առումներով ռուսական քաղաք էր՝ չդադարելով, իհարկե, վրացիների մայրաքաղաքը լինելուց: Այն հավասարապես պատկանում էր բոլոր կովկասցիներին: Այդ իրողությունը, սակայն, չէին հանդուրժում վրացիները: Նրանք ափթը բաց չէին թողնում պնդելու, թե իրենցից բացի մյուսները եկվորներ են, որոնք զանազան անկյուններից եկել և խլել են իրենց պատմական քաղաքը:

Թիֆլիսը ձգողական կենտրոն էր դարձել հատկապես հայերի համար: Այն նաև հայկական քաղաք էր: Իրենց գավառների հորիզոնն արդեն չափազանց նեղ էր նրանց համար, քանի որ մեծ գործերի էին ձգտում: Լինելով բնիկ հայաստանցիներ՝ նրանք լքում էին հայրենի քաղաքները՝ Ալեքսանդրապոլը, Կարսը, Ագուլիսը, Երևանը, Շուշին, Գանձակը, և գալիս ու հաստատվում էին բարձր մշակույթով և առողջ կլիմայով Թիֆլիսում: Քաղաքը նրանց համար լայն հնարավորություններ բացեց, և հայն այդ հնարավորություններն օգտագործեց լիուլի՝ հանդես բերելով մեծ ընդունակություններ առաջին հերթին առևտրի ասպարեզում, ապա նաև՝ արդյունագործության մեջ: Նրանց հրապուրում էր նաև այն, որ այստեղ էին համախմբված կովկասյան երկրի ամենաբարձր հիմնարկությունները՝ փոխարքայությունը, զորքերի հրամանատարությունը, դատական և ոստիկանական բարձր իշխանությունները:

Դեռ մինչև Անդրկովկասում ռուսական տիրապետության հաստատումը Թիֆլիսի բնակչության մեծ մասը հայեր էին: 19-րդ դարում քաղաքի հայ բնակչության տոկոսային հարաբերությունը դարձյալ բարձր էր: 1886թ. մարդահամարի համաձայն Թիֆլիսում կար 78 445 բնակիչ, որից հայ՝ 37 442 (47%), վրացի՝ 21 576 (28%), ռուս, լեհ, գերմանացի՝ 16 564 (21%), հրեա՝ 1584 (2%), թուրք՝ 1287 (1%)[2]: 1905թ. Թիֆլիսի 300 հազար բնակչությունից 120 հազարը հայեր էին, 80 հազարը՝ վրացիներ, 70 հազարը՝ ռուսներ, 13 հազարը՝ թուրքեր, մնացածը՝ այլ ազգության մարդիկ[3]: Այսպիսով, հայերն իրենց թվով Թիֆլիսում բռնում էին առաջին տեղը:

[1] Ա. Ֆ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 452-453:

[2] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջմիածին, տպ. Գիտական ինստիտուտի, 1922, էջ 113:

[3] Տե՛ս Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը ..., էջ 122:

Ոչ միայն Թիֆլիսը, այլև Վրաստանի ուրիշ քաղաքներ՝ հատկապես Քութայիսը, Բաթումը, Թելավը, կարելի է ասել, հայաբնակ էին: Դա պատահական չէր, քանի որ սովորաբար քաղաքներն առաջանում են՝ որպես արհեստների և առևտրի կենտրոններ, և Վրաստանը բացառություն չէր: Այստեղ արհեստավորներն ու առևտրականները հիմնականում հայեր էին, որոնք և կազմում էին Վրաստանի քաղաքային բնակչության բացարձակ մեծամասնությունը: Ինչ վերաբերում է վրացիներին, ապա նրանք, կարելի է ասել, գյուղացի ազգ էին. ազնվականները, որոնց ձեռքին էր երկրի հողատարածությունների մեծ մասը, ապրում էին իրենց գյուղական դաստակերտներում՝ անգործեն շահագործելով սեփական հողագործ ճորտերին:

Այնպես որ, Վրաստանի քաղաքներում հայերի թվական գերակշռությունը հետևանք էր այդ երկրի տնտեսական զարգացման օբյեկտիվ ընթացքի:

Այդ նույն պատճառով հայ բնակչությունը թվական գերակշռություն ուներ նաև Անդրկովկասի ուրիշ քաղաքներում:

Հայերը Թիֆլիսում հիմնեցին դրամատներ ու վարկային ընկերություններ, բացեցին բարեգործական ու կրթական հաստատություններ: Նրանց էին պատկանում քաղաքի բոլոր մեծ հիմնարկությունները՝ թատրոն, գրադարան, դրամատուն, խանութ:

1905-ին Թիֆլիսի 15 հազար շենքերից 11 հազարը պատկանում էին հայերին[1]: Այստեղ էին գործում քաղաքական կուսակցությունների գլխավոր կենտրոնները, որոնց թվում հայկական ամենաուժեղ կուսակցության՝ Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն:

1900թ. տվյալներով Թիֆլիսում 9 բանվորից ավելի ունեցող արդյունաբերող ձեռնարկությունները 71-ն էին, որոնցից հայկական էին 36-ը՝ տարեկան 2 580 հազար ռուբլու շրջանառությամբ և 4.654 բանվորներով ու ծառայողներով: Ձեռնարկությունների նշված թվից վրացիներին էր պատկանում 7-ը՝ տարեկան 103 հազար ռուբլու շրջանառությամբ և 570 բանվորներով ու ծառայողներով: Գերմանական էին 17-ը՝ 481 հազար ռուբլու շրջանառությամբ և 869 բանվորներով ու ծառայողներով: Մյուս ազգերի ներկայացուցիչներին բաժին էր ընկնում 11 ձեռնարկություն՝ տարեկան 284 հազար ռուբլու շրջանառությամբ և 223 բանվորներով ու ծառայողներով[2]: Հինգ տարի հետո, 1905թ., պաշտոնական տվյալներով Թիֆլիսի արդյունաբերության և առևտրի մեջ հայերին էր պատկանում բոլոր ձեռնարկությունների 62%-ը, շրջանառության 73%-ը և շահույթի 69%-ը: Տեղական մյուս ազգերի ներկայացուցիչներն ունեին ձեռնարկությունների 18%-ը, շրջանառության 8%-ը, շահույթի 9,39%-ը: Դրսից Անդրկովկաս եկած ուրիշ ազգությունների անձանց էին

[1] «Հայրենիք», N 7 (115), մայիս, 1932, էջ 86:
[2] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջ 54:

պատկանում Թիֆլիսի ձեռնարկությունների 20%-ը, շրջանառության 19%-ը և ստացած եկամուտների 21,61%-ը[1]:

Նույն թվականին բաժնետիրական-արդյունաբերական ընկերությունները քաղաքում 8 -ն էին, որոնցից 2-ը հայկական էին՝ 1 758 հազար ռուբլու տարեկան շրջանառությամբ և 1 014 բանվոր-պաշտոնյաներով: Մնացած 6 ընկերությունները պատկանում էին ուրիշ ազգությունների ներկայացուցիչներին և ունեին տարեկան 1 738 հազար ռուբլու շրջանառություն և 763 բանվոր ու պաշտոնյա: Այլ խոսքով, հայկական երկու ընկերությունները թե՛ տարեկան շրջանառությամբ և թե՛ տարեկան բանվորների ու պաշտոնյաների թվով գերազանցում էին մնացած 6 ընկերություններին[2]:

Բաժնետիրական դրամատները (բանկերը) քաղաքում 6-ն էին, որոնցից 4-ը կամ զուտ հայկական էին, կամ առավելապես հայերին պատկանող: Մնացած երկու դրամատները պատկանում էին վրացիներին: Հայկական դրամատների տարեկան շրջանառությունը կազմում էր 3 381 հազար ռուբլի, ունեին 93 պաշտոնյա, իսկ վրացական դրամատների պաշտոնյաների թիվը 36 էր, շրջանառությունը՝ 2 182 հազար ռուբլի[3]:

Այս թվերը վկայում են, որ արդյունաբերության և ֆինանսների բնագավառներում Թիֆլիսի հայերը վրացիներից շատ առաջ էին անցել և վերջիններիս համար այլևս դարձել էին անհասանելի:

Աշխատասիրություն ու տոկունություն - ահա այն հատկանիշները, որոնք հայերին հաջողություն էին բերում: Հայ բուրժուազիան, որ գյուղացիության միջավայրից էր սերվել, գիտեր իր ծախքերը խնայել ու կշռել և, ի վերջո, կարողանում էր հաղթող դուրս գալ տնտեսական մրցակցության մեջ: Այդ հաղթողներից էին Մանթաշյանները, Միլոմները, Աֆրիկյանները, Օգանեզովները, Արամյանները, Սեյլանյանները, Զիլինգարյանները և ուրիշներ, որոնք հայտնի էին ոչ միայն ամբողջ Կովկասում, այլև նրա սահմաններից դուրս:

Թիֆլիսում հարստացած ձեռներեց հայն իր կապիտալը սկսում էր ներդնել նաև Անդրկովկասի ուրիշ վայրերում, ուր տնտեսական գործարքները խոստանում էին մեծ շահույթներ: Թիֆլիսից կապիտալը հոսում էր Բաթում, Քութայիս, Բաքու...

Եթե հայ դրամատերերը 19-րդ դարում Կովկասի կենտրոն Թիֆլիսում շփման մեջ էին առավելապես վրացիների հետ, ապա նույն դարի 80-ականներից սկսած՝ նաև թուրքերի հետ, այս անգամ արդեն նավթաբեր աշխարհում:

Հսկայական հարստություն կուտակած Թիֆլիսահայ բուրժուազիան նաև

[1] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջ 54:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Հայրենիք», N 2 (396), փետրվար, 1959, էջ 28:

տեր էր դառնում անշարժ գույքի, հողերի, կալվածքների՝ ամբողջ երկրամասով մեկ, բայց հատկապես Վրաստանում :

Հայ կապիտալիստները Վրաստանում հողերը գնում էին մեծ պարտքերի տակ ընկած, ծույլ ու պորտաբույծ վրաց ազնվականներից, որոնք այլևս ի վիճակի չէին պահելու իրենց սեփականությունը և հետագա գոյությունը պահպանելու միակ հնարավորությունը տեսնում էին այն բանում, որ վաճառեն պապերից ու հայրերից ժառանգած հողերն ու կալվածքները և, ստացած գումարները մսխելով՝ շարունակեն ապրել ճոխ կյանքով, երբեք նեղություն չպատճառելով իրենց անձին:

Կալվածքներ ծախելը կամ գրավ դնելը սովորական երևույթ էր ավատապետական կարգեր ունեցող երկրների համար, բայց Վրաստանում սնանկացողը միշտ լինում էր փող չունեցող վրացին, իսկ նրա ունեցվածքը ձեռք բերողը՝ փողատեր հայը: Դա անխուսափելիորեն խորացնում էր վրաց ազնվականության և հայ բուրժուազիայի միջև արդեն նախորդ տասնամյակներին առաջացած թշնամանքը:

Իր «Բաղաքապետի մը յիշատակները» հուշագրության մեջ Ալեքսանդր Խատիսյանը, տիպական փաստեր բերելով, նկարագրել է վրաց ազնվականության սնանկացման և հայ փողատերերի կողմից նրա ունեցվածքը սեփականացնելու գործընթացը:

Օրինակ՝ վրացի իշխան Բարաթովի հսկա տունն իր կալվածքով գրավի փոխարեն ընկել էր հայ մեծահարուստ Արամյանցի ձեռքը: Բարաթովները դիմել էին փոխարքային, որ նա Արամյանցին ստիպի վերադարձնելու իրենց ժառանգական կալվածքը: Հայ մեծահարուստը համաձայնություն էր տվել ընդառաջ գնալու՝ իր տված փոխարժեք 600 հազար ռուբլին վերադարձնելու պայմանով: Բարաթովներն անկարող եղան հայթայթելու այդքան գումար, իսկ մուրհակներն արժեք չունեին: «Տունը մնաց Արամյանցին, - գրել է Խատիսյանը: - Շատ սովորական երևույթ մը բոլոր երկիրներու համար, սակայն Կովկասի մեջ այդ երևույթները ուրիշ գունավորում կ'առնեին: Վրաց իշխանի պատմական կալվածքն էր, որ հայու սեփականությունը կը դառնար»[1]:

Ալ. Խատիսյանը բերում էր մի ուրիշ դեպք ևս: Հայ մեծանուն հարուստ Ալեքսանդր Մանթաշյանը Թիֆլիսի կենտրոնում գնել էր լավագույն շենքերից մեկը, որը պատկանում էր վրաց ազնվականության առաջնորդ իշխան Մուխ-

* Այդ գործընթացի մասին բազմաթիվ տեղեկություններ կան Ս. Լ. Ավալյանի «Գյուղացիական հարցն Անդրկովկասում» մեծարժեք ուսումնասիրության մեջ (տե՛ս С.Л.Авалян, Крестьянский вопрос в Закавказье, т. I, Одесса, 1912; т. II, Одесса, 1913; т. III, Одесса, 1914; т.IV, Тифлис, 1920; т.V, Тифлис, 1986), ինչպես նաև Սեգալի արժեքավոր գրքում (Сегаль, Крестьянское землевладение в Закавказье, Тифлис, 1912):

[1] «Հայրենիք», N 7(115), մայիս, 1932, էջ 86:

բանսկուն: Թիֆլիսի Ազնվականական դրամատունը Մանթաշյանին առաջարկեց այդ տունը վերադարձնել նախկին տիրոջը, իհարկե, ստանալով փոխարժեքը: Մանթաշյանը, սակայն, մերժեց[1]: Դրամատերը (հայը) հաղթել էր ազնվականին (վրացուն):

Երևույթն ընդհանրական էր: Վրաց ազնվականությունը մեռնում էր: Ասպարեզը մնում էր հայ փողատիրոջը:

Քանի որ ցարիզմի սոցիալական հիմքը կալվածատիրությունն էր, ուստի իշխանությունները շահագրգռված էին պահպանելու վրաց ազնվականության տնտեսական դիրքերը Վրաստանում և կովկասյան թուրք բեգությանը՝ Այսրկովկասում:

Պետերբուրգ, ֆինանսների նախարարին 1898թ. հղած գրության մեջ իշխան Գոլիցինը նշում էր, թե Անդրկովկասի կալվածատերերը և հատկապես վրաց ազնվականները պարտքերից ազատվելու համար իրենց հողերն անխուսափելիորեն վաճառքի են հանելու, որոնք գերազանցապես անցնելու են հայերի ձեռքը, քանի որ նրանց մոտ են կուտակված երկրամասի դրամական հիմնական միջոցները: Կովկասի կառավարիչը դա համարում էր միանգամայն անթույլատրելի, պետական շահերին խիստ հակասող: Նրա բերած հիմնական պատճառաբանությունն այն էր, թե քաղաքական տեսակետից հայերն անբարեհույս ժողովուրդ են և, տնտեսապես է՛լ ավելի հզորանալով, անկանխատեսելի գլխացավանք կպատճառեն պետությանը[2]:

Ելնելով հայերի՝ իր իսկ ստեղծած խիստ բացասական կերպարից՝ Գոլիցինն առաջարկում էր զանազան միջոցներ՝ նրանց տնտեսական առաջխաղացումը կանգնեցնելու համար:

Մի ուրիշ պաշտոնական զեկուցագրում ասված էր.

«Եթէ սկզբում հայերի գործունէությունը ճանաչվել է օգտակար, որովհետեւ նրանք, լինելով Թիֆլիսի նահանգի վրացիներից ավելի եռանդուն ու ձեռներեց, իսկ տեղական մահմեդական բնակչությունից ավելի զարգացած, քիչ չեն նպաստել երկրի առևտրի ու արդյունաբերության բարգավաճմանը, այժմ, երբ հայերի թիվը հասել է Անդրկովկասի ողջ բնակչության քսան տոկոսին, նրանց գործունէության զարգացումը պետք չէ ցանկալի համարել: Այդ տարրը, լինելով միաձույլ եւ գործելով միաբան՝ ցույց է տալիս չոչափելի գերակշռություն մյուս ժողովուրդների նկատմամբ, սպառնում է մերձավոր ապագայում իր ձեռքում կենտրոնացնել երկրի ողջ առևտուրն ու արդյունաբերությունը և մնասել բուն ռուս բնակչության շահերին, բնակչություն, որի թվաքանակը Անդրկովկասում ութ անգամ պակաս է հայերից»[3]:

Հայության համար արհեստականորեն ստեղծելով աննպաստ վիճակ՝

[1] «Հայրենիք», N 7(115), մայիս, 1932, էջ 86:
[2] Տե՛ս նույն տեղում, N 2 (396), փետրվար, 1959, էջ 28:
[3] Տե՛ս նույն տեղում , էջ 29-30:

իշխանությունները խախտում էին երկրամասի բոլոր ազգությունների համար առաջադիմության հավասար պայմաններ ստեղծելու կանոնները:

Թեև Կովկասի կառավարչությունն ամեն ինչ անում էր կանգնեցնելու հայ ֆինանսական կապիտալի հաղթարշավը, բայց իր ջանքերում սպասած արդյունքի չէր հասնում:

*
* *

Հայ-վրացական հարաբերությունների վրա խիստ բացասական ազդեցություն է ունեցել ռուսական օրենքը քաղաքների մասին:

Այդ օրենքով մի շարք արտոնություններ էին վերապահված ունևոր սեփականատերերին: Օրինակ՝ ընտրական իրավունքը տրվում էր միայն վաճառականներին և անշարժ գույք ունեցողներին՝ անկախ ազգային պատկանելությունից: Իսկ Անդրկովկասի քաղաքներում, հատկապես Թիֆլիսում, ունևոր սեփականատերերի մեծ մասը, ինչպես ասվեց, հայեր էին: Այդ հանգամանքը վրացիների և հայերի միջև առաջ էր բերում մեծ գժտություններ հատկապես Թիֆլիսի քաղաքային ինքնավարության խորհրդի ընտրությունների ժամանակ:

1892թ. ընդունված օրենքի համապատասխան՝ սեփականատիրական ցենզով Թիֆլիսի քաղաքային խորհրդի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների 50%-ից ավելին հայեր էին, ռուսները կազմում էին 20%-ից մի քիչ ավելին, իսկ վրացիները՝ 16-17%: Մնացած մոտ 13%-ը այլ ազգերի ներկայացուցիչներ էին: Խորհրդի իրավասուների (պատգամավորների) ընդհանուր թիվը 80 էր[1]:

Հայ ունևոր դասը, ունենալով ընտրողների կեսից ավելին, ընտրություններից միշտ հաղթող էր դուրս գալիս, և իրավասուների ճնշող մեծամասնությունը միշտ հայեր էին լինում: Քանի որ քաղաքային խորհուրդն իր իրավասուներով շատ հարցերում քաղաքի տերն էր, ուստի այդ հարցերի լուծումը կախված էր բացառաբար հայերի կամքից, ավելի ճիշտ՝ քաղաքի հայ բուրժուաների կամքից: Ճարպկությամբ հափշտակելով ու յուրացնելով ազգայնական սկզբունքը, Թիֆլիսի հայ բուրժուազիան տասնամյակներ շարունակ իր ձեռքի մեջ ամուր պահում էր քաղաքային խորհուրդը: Հայեր էին խորհրդի վարչության անդամները, քաղաքագլուխը, որն ընտրվում էր խորհրդի կողմից և միջնորդ էր իշխանությունների ու ժողովրդի միջև: 1870-1916 թվականների ընթացքում, այսինքն՝ 46 տարում Թիֆլիսն ունեցել է 11

[1] **«Հայրենիք»**, *N 2(396), փետրվար, 1959, էջ 30:*
*Այդ խնդրին անդրադարձել է Վ. Լինդենն իր աշխատության (*В. И. Линден, Высшие классы коренного населения Кавказского края и правительственные мероприятия по определению их сословных прав, Тифлис, 1917*) տարբեր էջերում:*

քաղաքագլուխ, որոնցից 9-ը եղել են հայեր (Մատինյան, Իզմիրյան, Եվանգուլյան, Վերմիշյան, Խատիսյան և այլոք) և միայն 2-ը՝ վրացի (Կիպիանի և Զերքեզով)[1]:

Այս պարագան խիստ զայրացնելով վրաց թույլ բուրժուաներին և ընդհանրապես ազգայնականներին՝ նրանց լարում էր հայերի դեմ: Բայց վրացիներին այնպես էլ չէր հաջողվում որևէ բան անել, քանի որ օրենքը հայերի կողմն էր և, անշուշտ, ոչ նրանց հայ լինելու պատճառով, այլ որովհետև, ինչպես ասվեց, քաղաքի ունևորների մեծ մասը հայեր էին:

Հայերի դեմ մղվող սուր պայքարում պարտվելով՝ վրացիները, վիրավորված ինքնասիրությամբ, բոլորովին հեռացան քաղաքային ինքնավարությունից:

Վրաց ազգայնականները, բնականաբար, չէին հաշտվում այդ իրողության հետ: Վրացական որոշ թերթեր գրում էին, թե հայերը կարող են օգտվել Թիֆլիսի բոլոր բարիքներից, բայց չպետք է իրենց զգան այս երկրի տերը: Վրացիք առաջարկում էին քաղաքային խորհրդի իրավասուներին (պատգամավորներին) ընտրել ոչ թե համաձայն ցենզի, ինչպես պարտադրում էր օրենքը, այլ ըստ տարբեր ազգերի բնակչության թվի: Այդ դեպքում հայերը խորհրդում կունենային 36 ներկայացուցիչ, իսկ վրացիները՝ 21, այսինքն՝ հայերի թիվն ինքնավարության մեջ կկիսվեր, իսկ վրացիներինը՝ կեռապատկվեր:

Վրացիների պահանջը համարելով «շատ միամիտ»՝ Արշալույս Աստվածատրյանը նկատել է.

«Նախ՝ հայերը չէին, որ քաղաքային օրէնքը պիտի փոխէին, և ապա՝ որտե՞ղ էր տեսնված, որ որևէ դասակարգ հրաժարվէր օրէնքով իրեն տրված իրավունքներից, ինքնաբերաբար սահմանափակվէր: Այդ առաքինությունը աշխարհում գոյություն չունի: Վրաց ազգայնականներն այդ բանը պահանջում էին հայ բուրժուազիայից, և որովհետև վերջինս ականջ չէր կախում նրանց, ուստի «ցեղային վէճը» գնալով բորբոքվում էր»[2]:

Թիֆլիսի քաղաքագլուխ Գ.Եվանգուլյանին 1897թ. հղած նամակում Կարապետ Եղյանը խորհուրդ էր տվել ընդառաջ գնալ վրացիների պահանջին, գրելով. «Թողե՛ք այդ անիծյալ քաղաքակետությունը, տվեք վրացիներին. ի՞նչ եք փնտրում [այնտեղ]»[3]: Պատասխան նամակում քաղաքագլուխը բերում էր վրացիների հանդեպ հայ ունևորների անզիջում լինելու պատճառաբանությունը: Նա գրում էր. «Չեք կարող երևակայել, թե ո՛ր աստիճանի է հասել վրացոց և հայոց մեջ անբավականությունը: Վրաց կողմն է բռնում Վելիչկոն, որի լրբությունը Սուվորինի լրբությունից անցել է: Վրացոց կողմն

[1] *Տե՛ս* **«Հայրենիք»**, *N 7 (115), մայիս, 1932, էջ 87:*
[2] *Նույն տեղում, N 2 (396), փետրվար, 1959, էջ 31:*
[3] *Նույն տեղում:*

է պաշտոնյաների մի մասը: Գիտեմ ձեր կարծիքը: ...Գուցե ձեր կարծիքն արդարացի է, բայց խնդիրն այն է, որ դումայի և հայոց վերաբերմամբ բացարձակ մեղադրանքները ստություններ են: Զիջելով՝ առիթ պիտի տանք կարծելու, թե մեղավոր ենք, իսկ մրցելով օրինական սահմաններում պիտի ապացուցենք, որ արդարությունը մեր կողմն է: Դուք չգիտեք վրացոց լրբությունը: Մտնելով դումա մեծ թվով և դառնալով քաղաքի տեր՝ նրանք դիտմամբ այնպիսի կարգադրություններ կանեն, որ ժողովրդի մեջ ապստամբություն առաջ կբերեն: Այդ էլ բավական է ռուս որոշ մամուլին: Տեսնենք, թե ի՞նչ դիրք պիտի բռնի կառավարչապետը իր անօրինակ իրավունքներով»[1]:

Այսպիսով, հայ սեփականատերերը չէին զիջում վրացիներին այն հիմնական պատճառով, որ վախենում էին, թե քաղաքը նրանց ձեռքն անցնելուց հետո իրենց դրությունը կվատթարանա: Վրացիները, լինելով ավելի արմատական, իրենց կարգադրություններով կարող էին ժողովրդին մղել ապստամբության, - մի բան, որ բնավ չէր համապատասխանում հայ ունևորի շահերին:

Ահա, պատճառների այս կծիկն էր, որ 19-րդ դարի վերջերից առաջ բերեց վրաց տիրապետող խավերի բուռն անդրադարձը:

Դարեր շարունակ հայ և վրաց ժողովուրդներն ապրում էին բարի հարեվանությամբ, բայց այժմ նրանց փոխհարաբերություններում առաջացել էին խոր ճեղքվածքներ: Փոխադարձ վստահությունը տեղի էր տվել կասկածամտության, իսկ հետո աստիճանաբար փոխարկվել անվստահության ու առանձին դեպքերում թշնամանքի:

Պատմական շատ կարճ ժամանակում կատարված այդ փոխակերպումը, բնավ չբխելով հայերի և վրացիների կենսական շահերից, դժբախտություն եղավ երկու ժողովուրդների համար:

Վրաց ազգայնականները իսկական արշավանք սկսեցին հայ ունևոր դասի դեմ՝ նրան ներկայացնելով հարստահարչի և գիշատչի տեսքով:

Հայ ունևորի դեմ ուղղված վրացիների պահանջն իրավացի էր: Արշալույս Աստվածատրյանը նկատել է. «Եթե խնդիրը սահմանափակվեր այդքանով, այսինքն՝ եթե վրաց ազգայնականների հարվածներն ուղղված լինեին միայն հայ ունևորի, հայ բուրժուազիայի դեմ, երևույթը բնական պիտի համարվեր: ... Որևէ ազգ իր ամբողջությամբ պատասխանատու չէ իր միջից ծնունդ առած այս կամ այն խավի ուրույն շահերի ընթացքի համար: ... Բայց վրաց ազգայնականները ընդհանրացնում էին հարցը: Հայ բուրժուան նրանց աչքում հայ ժողովրդի ներկայացուցիչն էր, և հայ ազգը պատասխանատու էր այդ բուրժուազիայի արարքների համար»[1]: Հայ բուրժուազիայի մեղքերը նրանք փաթթում էին ամբողջ հայ ժողովրդին, իրենց թունավոր սլաքներն ուղղում նրա դեմ ոչ մի տարբերություն չդնելով հայ մեծահարուստների և քաղաքային հայ չարքաշ խավերի միջև:

Մոլեգնում էր վրացական մամուլը: Հայության դեմ կատաղի պայքար էր սկսել վրաց ծայրահեղ շովինիստական տարրերի արմատական ձայնափողը՝ "Возрождение" թերթը: Ընդգծված հակահայ դիրք էին բռնել նեղ ազգայնական ուղղության «Էրթոբա» և ազատական «Ցնորիս Փուրցելի» թերթերը:

Իր չունեցած մեղքերի համար հայությանը մեղադրում էր վրաց մշակույթի խոշորագույն գործիչ Նիկո (Նիկոլայ) Նիկոլաձեն*: Հայերի դեմ պայքարը բորբոքելու մոլուցքով էին տարված մեծ բանաստեղծներ, վրաց աղքատացած կալվածատերերի տրամադրությունների արտահայտիչներ Իլյա Ճավճավաձեն և Ակակի Մերեթելին: Նրանք, ձեռք ձեռքի տված, կատաղի հայատյաց, կովկասյան թուրքերի պարագլուխներից Ահմեդ բեկ Աղաևի ու նրա համախոհների, նույնքան հայատյաց ռուս բանաստեղծ-հրապարակագիր Վելիչկոյի, պետերբուրգյան ռուս հրապարակագիր-հրատարակիչ Սուվորինի հետ, նույն սև գործն էին անում[2]:

Գոլիցինի և Վելիչկոյի ժամանակ հայերին սևացնելը վրաց ազգայնամոլների համար հայրենասիրական գործ էր համարվում: Առաջինը Ակակի Մերեթելին էր «գյուտ» արել, թե հայերն իրենց հոգևորականների ներշնչմամբ թունավորել ու բնաջնջել են Ուփլիս-Ցիխեի վրացիներին և գրավել վրացական հողերը: Նա հյուսեց հակահայկական բնույթի բազմաթիվ ուրիշ սև առասպելներ նույնպես, որոնց դեմ ջախջախիչ փաստերով և զայրույթով հանդես եկավ Նիկոլայ Մառը:

Վրաց, թուրք, ռուս հայատյացները բնավ չէին անդրադառնում այն փաստին, որ հայ գյուղացիության մի զգալի մասը Վրաստանում և Արևելյան Անդրկովկասում ենթակա է վրացի և թուրք պորտաբույծ ազնվականների կեղեքումներին և իր աշխատանքով ապրեցնում է այդ անաշխատ դասակարգին: Նրանք անտեսում էին այն, որ նյութական միջոցների տիրացած բուրժուազիան ամենուրեք և ամեն ազգի մեջ շահագործող է: Հայ ժողովուրդը պատասխանատու չէր իր ունևոր դասի գործերի համար: Այդ դասը, ոչ օրինակ այլոց, զարգացել ու հասակ էր առել հայկական միջավայրի սահմաններից դուրս: Տնտեսության մեջ և հատկապես առևտրի ասպարեզում մեծ գումարներ կուտակած հայ ունևորն աստիճանաբար կտրել էր կապը

---

[1] **«Հայրենիք»**, N 2, փետրվար, 1959, էջ 31:

* Նշենք, որ Թիֆլիսի հայ բուրժուազիան իր կամքով երբեք չզիջեց վրացիների պահանջները և քաղաքում իշխողի իր դիրքը պահեց մինչև 1917թ. փետրվարյան հեղափոխությունը, երբ հայերը քշվեցին քաղաքային ինքնավարությունից:

[1] **«Հայրենիք»**, N 2 (396), փետրվար, 1959, էջ 30:

* Ն. Նիկոլաձեի հակահայկական ուղղվածության գրվածքների թվում հատկապես առանձնանում է "Армяно-грузинские отношения в 1893-1898 г.г." աշխատությունը (Тифлис, 1920):

[2] **Դ. Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջ 32:

հարազատ միջավայրից, ծնող ժողովրդից, խորթացել նրանից, որի արդյունքում կորցրել էր ազգային նկարագիրը: Նրան չէին հետաքրքրում հայկական գավառները, նրա գումարները հոսում էին այնտեղ, որտեղ կարելի էր ստանալ առավելագույն շահույթ: Ազգային հարցը հայ բուրժուազիայի ձեռքին լոկ զենք էր՝ սեփական փառքի ու տիրապետության գործիք: Թիֆլիսի հայ բուրժուաները, որոնք իրենց ամբողջ կյանքի ընթացքում հայերեն մի բառ չէին խոսում, հայերեն չէին կարդում և հայի ցավերին ու կարիքներին բոլորովին անտեղյակ էին, միայն քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ էին հրապարակ նետում իրենց հայ ծագումը, որովհետև ազգության ուրիշ նշաններ չկային նրանց վրա, բացի նրանից, որ մկրտվում էին հայոց եկեղեցում և պիտի թաղվեին հայոց գերեզմանատանը:

Վերը նշվեց այն դրական դերը, որ միջնադարում կատարում էին հայ վաճառականները: Սակայն պետականությունը կորցնելուց և թուրքերի ու պարսիկների տիրապետության տակ անցնելուց հետո հայ էթնոսում կատարվեցին ազգային նկարագրի փոփոխություններ դեպի վատը: Դա հատկապես արտահայտություն գտավ հայ վաճառական դասի մոտ:

Անդրադառնալով հայ դրամատերերի, վաճառականների բարոյական կերպարի հարցին, Դավիթ Անանունը «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության մեջ գրել է.

«Հայ վաճառականը **յուր հայրենիքից դուրս** նախ և առաջ ոչ մայրենի լեզու ունի, ոչ ազգային պարտաճանաչություն և ոչ էլ հասարակական ինքնասիրություն: Նա գույն չունի: Նա բոլորին, ում հետ կապված է գործով, ամենից առաջ աշխատում է դուր գալ թե կեղծավորությամբ, թե շողոքորթությամբ: Նա խոսում է միշտ յուր ձեռնարկությունների, առևտրի, վաստակի, վնասի մասին և խոսում է ամեն լեզվով, բացի յուր մայրենի լեզվից, թեև ոչ մի լեզու օրինավոր չգիտե: Զկա նրա համար հետաքրքրական և խոսակցության արժանի խնդիր, բացի նյութականից: ...Նորա խելքը գործում է միևնույն ուղղությամբ: «Շահ կլինի՞ արդյոք» - ահա այն հարցը, որ կաչկանդած է պահում միշտ և ամեն տեղ նորա ուղեղի բոլոր ծալքերը»[1]:

Իսկ ինչպիսին է հայ փողատերը **յուր բնակավայրում**: Կրկնակի վատթար՝ հաստատում էր Անանունը: «Այստեղ արդեն հայ վաճառականը, - լինի նա փերեզակ, վաշխառու, դրամատեր թե կապալառու, - յուրաքանչյուր մտածող մարդու առջև ներկայանում է իբրև մի իրականացած զզվանք: ... Փերեզակ - մանրավաճառը կոպիտ [է], խաբեբա, լկտի: Հարուստ խանութպանը՝ շողոքորթող, օրական հարյուր անգամ Աստծո անունով սուտ երդվող և հինգ հարյուր անգամ նույն Աստծո դեմ մեղանչող»[2]:

[1] **Դ. Անանուն**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջ 100:*
[2] *Նույն տեղում, էջ 101:*

Անհագ ծարավով փող կուտակելու հայ վաճառականների տենչի, զզվանք առաջացնող նրանց գծուծության մասին բազմիցս գրել են նաև օտարները: Այսպես, Շամախի քաղաքի փողատեր հայերի մասին ռուս Վ. Լեզգորիտովը նշել է, որ նրանց բոլորի գործողությունների շարժիչը շահասիրությունն է[1]: Հին Նախիջևանի հայերի մասին ռուս հետազոտող Վ.Գ.-ն գրել է մոտավորապես նույնը[2]: Իսկ բարոն Հաքստհաուզենը հայ առևտրականներին որակել է ոչ միայն որպես անչափ շահասեր, այլև ոչ հուսալի գործընկեր[3]: Նշված հեղինակները, սակայն, հայերի այդ հատկությունները բնածին չէին համարում, այլ՝ հետևանք պարսկական և թուրքական արևելյան բռնապետությունների տակ նրանց քաղաքական ծանր վիճակի:

Հայատյացներին բնավ չէր հետաքրքրում, որ Թիֆլիսի ինքնավարության մեջ հայ բուրժուազիայի տիրապետությունը հայ դեմոկրատիայի սրտով չէր, որ այդ դեմոկրատիան հետևողականորեն ու աներկրա այդ հարցում պաշտպանում էր վրացոց պահանջը: Հայ բուրժուազիայի անզիջում դիրքը քաղաքային դումայի խնդրում խիստ քննադատության էր արժանանում հատկապես «Մշակի» էջերում: Թերթը բազմիցս նշել է, որ Թիֆլիսի հայ աշխատավոր խավերը ոչ մի օգուտ չունեն նրանից, որ քաղաքային դուման գտնվում է հայ բուրժուաների ձեռքին: Օգտագործելով ընտրական ցենզի անարդար ձևը՝ հենց այդ բուրժուազիան քաղաքային գործերից հեռացրել էր Թիֆլիսի հայ հասարակության մյուս շերտերին:

Ինչպես տեսնում ենք, հայերի հետ մրցակցային պայքարում վրացիներն ամենուրեք տանուլ էին տալիս, ի վիճակի չէին նրանց հետ ուղք գցել ո՛չ տնտեսության բնագավառում, ո՛չ ֆինանսական ոլորտում, ո՛չ էլ Թիֆլիսի ինքնավարության մարմիններում: Չնայած դրան, նրանց քաղաքական դիրքերն ընդհանուր առմամբ ուժեղ էին, քանի որ հայերը ենթակա էին նաև ռուս իշխանությունների հալածանքներին և թուրքերի հարձակումներին:

Ֆինանսատնտեսական բնագավառում և ընտրովի մարմիններում տանուլ տված վրաց ազնվականներն ու բուրժուաներն իրենց կորուստները փոխհատուցում էին նրանով, որ ռուս բյուրոկրատիայի միջոցով ոչ միայն Թիֆլիսում ու ամբողջ Վրաստանում, այլև ողջ Անդրկովկասում տիրացել էին նշանակովի պաշտոնների զգալի մասին:

Աշխատության նախորդ էջերում խոսք է գնացել այն մասին, թե Անդրկովկասում պետական ծառայության մեջ ինչ չափով էին ներկայացված տարբեր

[1] В. Лезгорытов, Обозрение российских владений за Кавказом, часть III, С.П.Б.,1836, стр.123.
[2] В. Г., Статистическое описание Нахичеванской провинции, С.П.Б., 1833. стр.19.
[3] Барон Август фон-Гакстгаузен, Закавказский край, часть I, С.П.Б.,1857,стр.37 *(Աշխատության՝ հայերի մասին հատվածների թարգմանությունը տե՛ս «Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագրի 1862թ. հունվարի և փետրվարի համարներում):*

ազգերի մարդիկ: Արդեն փաստերով ցույց է տված, որ երկրամասում նշանակովի պետական պաշտոններ ստացած վրացիները ռուսներից և գերմանացիներից հետո բռնում էին երկրորդ տեղը ոչ միայն տոկոսային հարաբերությամբ, այլև բացարձակ թվով: Դա պատահական չէր. ռուս ազնվականական-կալվածատիրական դասակարգը, որը կայսրության իշխանության տերն էր, չէր կարող հովանու տակ չառնել Կովկասում իր համար ամենահավատարիմ, ամենավստահելի դասակարգային եղբայրներին՝ վրաց ազնվականներին ու կալվածատերերին: Դասակարգային համերաշխությունը հարազատացրել էր ռուս և վրացի պարագլուխային, մեռնող խավերին: Եվ ինքը՝ ռուս ազնվականների իշխանությունը, իրեն հարազատ վրաց ազնվականության ներկայացուցիչներին Անդրկովկասում նշանակում էր ամենաեկամտաբեր պաշտոնների և՛ բանակում, և՛ վարչական կազմի մեջ:

Վրաց ազնվականներին պաշտոնների նշանակումը տեղի էր ունենում պետական ծառայությունից հայ պաշտոնության դուրս մղման կամ նորերին ծառայության չվերցնելուն զուգընթաց:

Կովկասի փոխարքայության ժամանակ, ընդհուպ մինչև փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի պաշտոնավարության վերջը, հայ պաշտոնյաները կարևոր տեղ ունեին պետական ծառայության մեջ*: Նրանց թիվը գերազանցում էր առանձին-առանձին վերցրած երկրամասի մյուս ազգերից սերված պետական ծառայողների թվին: Այսպես, վերջին փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի օրոք, 1877թ. տվյալներով, փոխարքայությունում եղել էր 2365 պաշտոնյա, որոնցից 523-ը կամ բոլոր պաշտոնյաների 22,1%-ը հայեր էին: Սակայն, փոխարքայությունը վերացնելուց և դրա փոխարեն կառավարչապետություն ստեղծելուց հետո, հայ պաշտոնյաների թիվը տոկոսային հարաբերությամբ սկսեց իջնել: Կառավարչապետ իշխ. Դոնդուկով-Կորսակովի պաշտոնավարության առաջին տարիներից իսկ, երբ սկսվեցին հալածանքները հայերի դեմ, ծայր առավ նաև հայ պաշտոնյաներին պետական ապարատից դուրս մղելու գործընթացը: 1886թ. տվյալներով, փոխարքայության պաշտոնյաների թիվը աճելով հասել էր 3217-ի, որից հայեր էին 661-ը, կազմելով բոլոր պաշտոնյաների 20,5%-ը, այսինքն՝ տոկոսային հարաբերությամբ պակասել էին 1,6%-ով: Հաջորդ կառավարիչ իշխ. Գոլիցինի ժամանակ Կովկասի պետական ապարատից հայերին դուրս մղելն է՛լ ավելի արագացավ: 1897թ. տվյալներով Կովկասում եղել է 719 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (4065) 17,6%-ը, իսկ 1901թ., երբ Գոլիցինը նորանոր չարիքներ էր նյութում հայերի

* Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Վ. Իվանենկոյի հետազոտությունը (В. И. Иваненко, Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901). Տե՛ս նաև՝ «Обозрение российских владений за Кавказом», С.-Петербург, 1836.

դեմ, հայ պաշտոնյաների թիվը կազմել է 617 կամ բոլոր պաշտոնյաների (4917) 12,5%-ը[1]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1877-1901թթ., այսինքն՝ 24 տարում, Կովկասում պետական պաշտոնյաների թիվը 2365-ից հասել էր 4917-ի, իսկ հայ պաշտոնյաներինը՝ 523-ից 617-ի: Այլ խոսքով, նշված ժամանակահատվածում հայ պաշտոնյաների տոկոսը Կովկասում 22,1-ից իջել էր 12,5%-ի:

Սակայն կառավարչապետ Գոլիցինը, որքան էլ ուզում էր, ի վիճակի չեղավ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում պետական ծառայության մեջ գտնվող հայերին նույնպիսի հաջողությամբ դուրս մղել :

Դրա պատճառն այն էր, որ հայ պաշտոնյաները, որոնց մեծ մասը կրթություն էր ստացել ռուսական և եվրոպական համալսարաններում, ուներ բարձր որակավորում և բարձր համարում քաղաքի բազմազգ բնակչության շրջանում: Նրանք անփոխարինելի մասնագետներ էին բանկային համակարգում, հաշվապահության մեջ, կապի ու տրանսպորտի զանազան ծառայություններում, առևտրի և առողջապահության կազմակերպման ոլորտներում, քաղաքային տնտեսության մեջ և այլն: Թիֆլիսի քաղաքային բոլոր ծառայողների թիվը 1906թ. հաշվվում էր 770 հոգի (626 տղամարդ և 144 կին), իսկ ըստ ազգության բաժանվում էր այսպես. հայ՝ 361, վրացի՝ 198, ռուս՝ 155, լեհ՝ 15, հրեա՝ 11, օս՝ 11, մնացածները՝ 3 կամ 3-ից պակաս[2]:

Մյուս ազգերի ներկայացուցիչների համեմատ, Թիֆլիսում է՛լ ավելի մեծ թիվ էին կազմում պետական ծառայության մեջ չգտնվող ազատ պրոֆեսիայի տեր հայ մասնագետները՝ բարձրորակ բժիշկները, իրավաբանները, գրողները, լրագրողները, արվեստի գործիչները:

1905թ. ռուսական մեծ հեղափոխությունը սկսվելուց հետո, երբ երկիրը թևակոխել էր ազատագրական նոր շրջան, վրաց ազնվականության գաղափարախոսները մի պահ ընկրկել էին: Զառամյալ սերնդի կալվածատիրական թթու ազգայնամոլությունը ստիպված էր հայերի հանդեպ որոշ չափով մեղմել իր ատելությունը: Պատճառն այն էր, որ ձրիակեր ավատապետերի դեմ գոռ բողոքով ըմբոստացել էր նրանց լծի տակ դարեր ի վեր հարստահարվող վրաց աշխատավոր գյուղացիությունը: Վրաց ժողովուրդը լի էր վճռականությամբ՝ հնոտիների արկղ նետելու ավատական կարգերի մնացորդ իշխանական համակարգը: Դա օրակարգային և իրականանալիք խնդիր էր: Չէ՞ որ վրացի իշխանը վրաց ժողովրդի համար նույնը չէր, ինչ թուրք բեկն իր ժողովրդի համար: Թուրք բեկը թուրք զանգվածի համար ամեն ինչ էր, իսկ վերջինս լոկ գործիք էր նրա ձեռքին և ազատագրական շարժման մեջ կատարում էր հակահեղափոխական դեր: Պատահական չէ, որ ցարիզմի սադրանքները մշտապես պարարտ

[1] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ, էջ 113:
[2] «Ծառայ», N 43, 9 մարտի 1906թ.:

հող էին գտնում Թուրք զանգվածների մեջ: Ինչ վերաբերում է վրացի իշխաններին, սրանք իրենց արժեքը զանգվածների աչքում վաղուց էին կորցրել. ժողովուրդը նրանց վրա նայում էր որպես ձրիակերների, որոնք սպառում են գյուղացու արյուն-քրտինքով ստեղծածը: Շնորհիվ սոցիալ-դեմոկրատական պրոպագանդայի, ոչ միայն վրաց բանվորները, այլև գյուղացիները պարզ գիտակցում էին իրենց տնտեսական ու քաղաքական դրությունը և ներգրավվել էին Ռուսաստանի ազատագրական մեծ կռվի մեջ:

Այս պայմաններում ավատապետական կարգերի մնացորդների պաշտպաններին առայժմ մնում էր մի բան՝ հայության դեմ իրենց հին ու անպատվաբեր արհեստը գործածել կամացուկ փսփսոցներով՝ կառավարական շենքերի միջանցքներում մանր չարախոսություններ ցնցելով կամ մամուլի մեջ կիսատպռատ ակնարկներ նետելով:

Կովկասում Թուրք-հայկական հարաբերությունների բարդացումը և հայ-վրացական անհամաձայնությունները, բնականաբար, ստեղծեցին վրաց-Թուրք ճակատ ընդդեմ հայերի: Հայության նկատմամբ անսքող ատելություն տածող վրաց ազնվականությունը միաժամանակ ջերմ բարեկամությամբ էր տոգորված դեպի Թուրքերը, հատկապես՝ դեպի նրանց մեջ գործող հայության թշնամի մուսուլմանական քաղաքական ուժերը[1]: Իրենց Թուրքասիրության մեջ ազնվականները սահմաններ չէին ճանաչում:

Թուրք-հայկական ընդհարումների հենց սկզբից վրաց ազնվականության ներկայացուցիչները շարունակ կրկնում էին, թե Թուրքերը և վրացիները միշտ և ամեն տեղ բարի դրացիներ են եղել, երբեք միմյանց նկատմամբ թշնամություն չեն արել, հետևապես, վրացիները ոչ մի առիթ չունեն համակրանք չտածելու նրանց նկատմամբ:

Արդեն ալեհեր Ներեթելին, նորից փորձելով հրապարակ հանել հայերի հանդեպ իր վաղեմի ատելությունը, "Кавказ" թերթի 1905թ. N22-ում տպագրեց «Վրացիների և մահմեդականների փոխհարաբերությունները» վերնագրով հոդվածը, որում նորից ու նորից զարգացնում էր դրանց եղբայրական հարաբերությունների մասին տեսակետը, չեշտելով, թե պատմության ողջ ընթացքում Թուրքերը եղել են Վրաստանի հավատարիմ դաշնակիցներ, իսկ հայերը համարյա միշտ դավաճանել են իրենց ապաստան տված երկրին:

Պատահական չէ, որ Թիֆլիսում ծայր առած Թուրք-հայ կռիվների օրերին վրաց ազնվականությունը բազմաթիվ բարեկամական ցույցեր արեց Թուրքերի հանդեպ: Նույնիսկ ազնվականներից կազմված մի պատգամավորություն գնաց Բորչալուի Թուրքերի մոտ և նրանց հաղորդեց, թե «վրաց ժողովուրդն անհողդողդ կանգնած է եղբայրական մուսուլման ժողովրդի կողքին»:

[1] Այդ մասին տե՛ս «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 28:

Թուրք-հայկական ընդհարումների ընթացքում հայերի նկատմամբ բացահայտ թշնամություն և Թուրքերի հանդեպ ընդգծված բարեկամություն էր դրսևորում նաև վրաց բուրժուազիան: Վրացական համարյա բոլոր բուրժուական կուսակցություններն ու կազմակերպությունները և մամուլի նրանց օրգանները դատապարտում էին հայերին: Դրանց թվում բացառություն էր կազմում վրաց ֆեդերալիստների կուսակցությունը, որը հանդես էր գալիս հայության գոյամարտի պաշտպանությամբ:

Վրաց բուրժուազիայից շատ հեռու չէր վրացական սոցիալ-դեմոկրատիան:

Ռուսական և գերմանական համալսարաններ հաճախած մի խումբ վրացի երիտասարդներ դարասկզբին Վրաստանում պրոպագանդում ու տարածում էին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները: Կովկասի հետամնաց պայմաններում, ուր դեռ կենդանի էր միջնադարյան ավատապետությունը, ուր ռուս բռնապետության հովանու տակ և տնտեսական հողի վրա մղվում էր ազգամիջյան բարդ պայքար, այդ բռնազբոսիկ պրոպագանդայի հետևանքն այն եղավ, որ Մարքսի տեսությունը «հարմարեցվեց» տեղի պայմաններին, այլ ո՛չ թե տեղական պայմանները փոխվեցին և բարձրացան բանվոր դասակարգի պայքարի պահանջների մակարդակին:

Հայ-վրացական վեճի առաջին շրջանում վրաց սոցիալ-դեմոկրատների համակրանքը հայ աշխատավորության կողմն էր: Նրանք հանդես էին գալիս վրաց ազգայնականների դեմ, քննադատում նրանց: Բայց ժամանակի ընթացքում վրաց սոցիալիստների վերաբերմունքը հայերի հանդեպ փոխվեց, և դա հատկապես այն բանից հետո, երբ հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903թ. ցարական օրենքից հետո Հ.Յ. դաշնակցությունն իր գործունեության մեջ ներառեց նաև Անդրկովկասը:

Որպես Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մենշևիկյան թևի անդամներ, վրաց սոցիալ-դեմոկրատներն իրենց պայքարն ուղղել էին քաղքենի բուրժուական դասակարգի դեմ: Սակայն, շատ չանցած, նրանց մոտ դասակարգերի և դասակարգային պայքարի մարքսյան տեսությունը այլասերվելով՝ վերափոխվեց ազգայնական «սոցիալիզմի»: Նրանք արագորեն ընկալեցին վրաց և ռուս հայատյացների միջավայրում ծնունդ առած այն տեսակետը, թե համարյա ամեն հայ, թեկուզ բանվոր կամ գյուղացի, շահագործող է, իսկ համարյա ամեն վրացի՝ խեղճ ու կրակ պրոլետար: Ելնելով դրանից, վրաց սոցիալ-դեմոկրատները հայությանը սկսեցին համարել բուրժուական դասակարգի մաս, որպես այդ դասակարգի խորհրդանիշ: Պատահական չէ, որ նրանց հասկացած դասակարգային պայքարն աստիճանաբար վերածվեց ազգամիջյան պայքարի, որը գերազանցապես տարվում էր թերթերի էջերում, խմբագրություններում, առանձին հրատարակություններում: Ըստ էության, այդ մարդիկ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի դիմակի տակ ծածկված մոլի

ազգասեր էին, որոնք հնարամտությամբ իրենց ազգային շահերը պաշտպանում էին ընդդեմ հայ բուրժուազիայի*:

Ինչ վերաբերում է կովկասյան Թուրքերի նկատմամբ վրաց սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքին, ապա այն անփոփոխ համակրական էր, իսկ Թուրք-հայկական ընդհարումների օրերին նրանք չէին ցանկանում հայերի հաղթանակը: Թեև վրաց սոցիալիստները լավ գիտեին, որ Թուրքերն են եղել նախահարձակը, իսկ հայերը միայն պաշտպանվում են, բայց երբեք չխոստովանեցին այս ակնհայտ իրողությունը, որպեսզի չխախտեն ու չսրեն Թուրքերի հետ իրենց հարաբերությունները: Չէ՞ որ Թուրք-հայկական Թշնամությունից շահողները, Թե՛ նյութապես և Թե՛ բարոյապես, լինելու էին վրացիները:

Ռուսական մեծ հեղափոխության և մարքսյան սոցիալիզմի հմայքը հսկայական էր հայ երիտասարդության վրա, որն իր մտավոր ու հոգեկան պաշարը գերազանցապես ստացել էր ռուս իրականությունից: Նրանցից շատերի համար արժեք չուներ հայկական «փոքրիկ» հարցը, երբ համամարդկային հսկա հարցերն էին դրված սեղանի վրա: Ստեղծվել էր մի դրություն, երբ Վրաստանում ապրող մի շարք հայ երիտասարդ սոցիալիստներ, որպեսզի չերևան նեղ-ազգայնական ու չենթարկվեն վրաց և ռուս դրացիների մեղադրանքներին, մտան դիմակավորյալ վրաց սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ՝ ցույց տալու համար, Թե իրենք անկողմնակալ գաղափարական մարդիկ են: Այդ ձգտումով էլ նրանք սկսեցին հրապարակավ նույն ջրով լվանալ հայերին ու Թուրքերին:

Վրաց սոցիալ-դեմոկրատների հետ նույն կազմակերպության մեջ գտնվող հայ երիտասարդ սոցիալիստները Թուրք-հայկական ընդհարումների օրերին հոգեբարոյական տեսակետից, բնականաբար, ներքնապես երկատված էին: Մի կողմից, նրանց մեջ ուժեղ էր մտավոր սնոբիզմը, որ ամեն կերպ նրանց մղում էր վրաց սոցիալիստների ժողովարանները, իսկ, մյուս կողմից, անկարելի էր անտեսել ցեղային պարտականություն կատարելու հրամայականը: Այս երկվությունը նրանց համար անելանելի վիճակ էր ստեղծում, և շատերը, չդիմանալով այդ դժվարին փորձությանը, հեռանում էին վրաց սոցիալիստներից և սոցիալիստական իրենց ձգտումներին բավարարություն տալու համար մտնում էին այլ կուսակցությունների մեջ:

Վրաց ազնվականության, վրաց բուրժուազիայի և նրանց կուսակցությունների ու ներկայացուցիչների, ինչպես և վրաց սոցիալ-դեմոկրատների կողմից անընդհատ ենթարկվելով հարձակումների, հայերը, բնականաբար, դիմում

* Մինչև 1917 թվականը վրաց սոցիալ-դեմոկրատիան ռուսական սոցիալ-դեմոկրատիայի թևերից մեկի՝ մենշևիկների կազմակերպության մաս էր կազմում: Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական սոցիալ-դեմոկրատիայի վրացական թևը վերածվեց ինքնուրույն քաղաքական կազմակերպության՝ վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցության: Լիովին կորցնելով դասակարգային և միջազգայնական բնույթը՝ կուսակցությունը դարձավ վրաց ազգայնականության նպատակների արտահայտիչը:

էին ինքնապաշտպանության:

Իհարկե, հայերի դեմ վրացիների հարձակումները արմատապես տարբերվում էին կովկասյան Թուրքերի հարձակումներից: Եթե առաջին դեպքում դրանք տեղի էին ունենում Թերթերի էջերում, գրվածքներում, ժողովներում, ապա երկրորդ դեպքում զենքով, ռազմաղաշտում, որի հետևանքներն էին լինում հայերի և Թուրքերի փոխադարձ սպանություններն ու ավերները:

Հայկական մամուլը, գործիչները, ի տարբերություն վրացականի, սովորաբար խուսափում էին համարձակ արձագանքել վրաց մտավորականության վերին խավերի հակահայ հրապարակումներին, բայց ստիպված երբեմն-երբեմն մամուլի էջերում պատասխանում էին առավել Թթու հայատյացներին: Հայ մտավորականության մի փաղանգ ընդհանրապես խուսափում էր բանավեճի մեջ մտնելուց, մշտապես ընդգծում էր երկու ժողովուրդների բարեկամության դարավոր ավանդույթներին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը: Այդ փաղանգի ամենակարկառուն ներկայացուցիչը Հովհաննես Թումանյանն էր՝ Վրաստանի և վրաց ժողովրդի մեծ բարեկամը:

Հակադրվելով ազգամիջյան պառակտումներ բորբոքող ցարական իշխանությունների քաղաքականությանը և՝ ելնելով անդրկովկասյան ժողովուրդների պատմական ճակատագրերի, ազգային հոգեբանության ու սովորությունների նմանությունից՝ պետն իր ստեղծագործությունների մեջ հանդես էր գալիս որպես խաղաղության ու բարեկամության մունետիկ:

Ապրելով և գործելով Վրաստանի մայրաքաղաքում Հովհ. Թումանյանն իր ուշադրության կենտրոնում էր պահում առաջին հերթին հայերի և վրացիների փոխհարաբերությունների հարցը: «Եվ էն երկու ժողովուրդը, - գրում էր Թումանյանը, - որոնք իրենց պատմությունը սկսում են նրանով, Թե Հայկոսը (Հայկ) և Քարթլոսը եղբայրներ էին, մնացել և մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից ճակատագրով և մեծագույն հիշատակներով»[1]:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդումը համարելով ազնիվ նպատակ՝ եղբայրության և խաղաղության մունետիկը չեչտում էր, որ պատմությունը երկու ժողովուրդների առջև հրամայաբար դրել է հաշտության ու համերաշխության խնդիրը.

Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր, ընկե՛ր,
Մի՛ նայիր ետև, ինչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում:

Հայ մտավորականության կողմից բարեկամական ձեռքմեկնմանը վրաց գործիչներից քչերն էին ընդառաջ գնում:

Սկսված հեղափոխության պայմաններում հայության դեմ պայքարի հիմնական ծանրությունը, վրաց ազնվականության փոխարեն, իր վրա էր վերցրել

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հատ. IV, էջ 421:

վրաց բուրժուազիան: Վերջիններիս անսքող աջակցում էին սոցիալ-դեմոկրատ վրացի մենշևիկները: Հարություն Շահրիկյանը զուր չէր գրում, թե վրաց սոցիալ-դեմոկրատիան «նույնքան շովինիստ է, որքան վրաց ազնվականությունը»[1]:

Տնտեսական խնդիրների և Թիֆլիսի ինքնավարության հարցի շուրջ ծագած գժտություններին 1905-1906թթ. ավելացավ երեք թնջուկ, որոնք սաստկացնում էին հայ-վրացական հակասությունները: Այդ նոր հակասությունների առիթներն էին՝ Անդրկովկասում տեղական ինքնակառավարում (զեմստվո) մտցնելու, կովկասյան ֆեդերացիայի գաղափարի մարմնավորման և Թիֆլիսում Կովկասի համար բարձրագույն դպրոց բացելու շուրջ ծայր առած վեճերը, որոնք նպաստեցին վրաց-թուրքական հետագա մերձեցմանը՝ ընդդեմ հայերի:

Աշխատության նախորդ էջերում ասվել է, որ 1905թ., երբ երկիրը սկսել էր ցնցվել հեղափոխական փոթորիկներից, ցարական կառավարությունը ստիպված որոշ զիջումների գնաց, որի արտահայտություններից մեկը Անդրկովկասում զեմստվո մտցնելու հարցի պաշտոնական հարուցումն էր:

Անդրկովկասում զեմստվո մտցնելու հարցն առաջին անգամ բարձր մակարդակով քննության նյութ դարձավ փոխարքա Վորոնցով-Դաշկովի պալատում հայ, վրացի, ռուս, թուրք ներկայացուցիչների մասնակցությամբ 1905թ. հուլիսին հրավիրված խորհրդակցության ընթացքում, որի մասին արդեն խոսք է գնացել: Խորհրդակցության մասնակիցներին նախապես բաժանվել էին երկրամաս զեմստվո մուծելու ծրագրի և կանոնադրության նախագծերը՝ ակնկալելով դրական արձագանքներ:

Բայց խորհրդակցության մասնակիցներն արծարծել էին անհաշտ տեսակետներ: Վրացիները և թուրքերը՝ հիմնականում խոշոր կալվածատերեր (ազնվականներ ու խաներ), միանալով, ընդհանուր ճակատ էին կազմել պալատ եկած հայերի դեմ: Վերջիններս մերժեցին համաձայնություն տալ վրաց-թուրք միացյալ ծրագրին. այն ընդունել, կնշանակեր հանդես գալ ընդդեմ սեփական ժողովրդի շահերի:

Վրացիները և թուրքերն առաջարկում էին Անդրկովկասի համար ընդունել Ռուսաստանի ներքին նահանգներում գործադրվող զեմստվոյական կանոնադրությունը, որն ստեղծվել էր շատ տարիներ առաջ: Այն ամբողջովին նպատակաուղղված էր հողատիրոջ շահերի պաշտպանությանը, քանի որ ընտրական իրավունքի հիմքում դրված էր հողային սեփականության սկզբունքը:

Անդրկովկասում հիշյալ կանոնադրության տեղայնացման դեպքում երկրամասում ստեղծվելիք զեմստվոյի համակարգը պիտի ունենար երկաստիճան (գավառ, նահանգ) կառուցվածք՝ ինչպես կար Ռուսաստանում: Վրացիները և թուրքերը դեմ էին ընդհանուր անդրկովկասյան զեմստվոյի գաղափարին:

[1] **«Հայրենիք»**, N 11(191), սեպտեմբեր, 1938, էջ 97:

ելնելով դրանից՝ նրանք, օրինակ, պահանջում էին, որ Թիֆլիսը, Բաքուն և նավթահանքերը չկազմեն զեմստվոյական առանձին միավորներ, այլ մտնեն համապատասխան գավառների մեջ: Թիֆլիսի գավառի բնակիչները գերազանցապես վրացիներ էին, Բաքվի գավառինը՝ համարյա բացառապես մուսուլմաններ, հետևապես՝ երկու տեղում էլ հայերը փոքրամասնություն կկազմեին, թե՛ Թիֆլիսում և թե՛ Բաքվում կզրկվեին քաղաքական կշռից:

Պարզ է, որ հայերը չէին կարող համաձայնել այդ առաջարկին և ներկայացրին հակառակ տեսակետ: Նրանք գտնում էին, որ Ռուսաստանի ներքին նահանգներում վաղուց գործող զեմստվոյի կանոնադրության ընդօրինակումը անթույլատրելի է, քանի որ այն արտահայտում է միայն մի դասի շահերը, բացի այդ, չի կարող հաշվի առնել Անդրկովկասի տեղական պայմանները, այնտեղի ժողովուրդների սովորությունները, ավանդույթները, պահանջները: Հայերի առաջարկն ուղղված էր եռաստիճան՝ գավառային, նահանգային, համաերկրամասային զեմստվային համակարգի ստեղծմանը:

Այս ծրագիրը նախատեսում էր նաև Անդրկովկասում նոր սահմանաբաժանում ելնելով ազգային և տնտեսական հանգամանքներից: Թեև Անդրկովկասի մեծ մասում ազգերը տարածված էին շերտընդմեջ, բայց երկրամասի պայմանները թույլ էին տալիս ստեղծել տնտեսական և ազգային շրջաններ՝ մոտավորապես միատեսակ տարածքային չափերով, բնակլիմայական պայմաններով, ընդերքի հարստությամբ: Հայերն առաջարկում էին Բաքվի և Դաղստանի նահանգներից ու Գանձակի նահանգի մի մասից ստեղծել կովկասյան թուրքերի տիրապետության շրջան, Երևանի նահանգից, Կարսի մարզից, Գանձակի նահանգի մնացած մասից և Թիֆլիսի նահանգի հայկական տարածքներից (Լոռի, Ջավախք)՝ հայերի շրջան, Քութայիսի և սևծովյան նահանգներից ու Բաթումի շրջանից՝ վրացական շրջան: Այդ դեպքում անդրկովկասյան երեք հիմնական ազգերից ամեն մեկը հնարավորություն կստանար ինքնակառավարմամբ (զեմստվո) կարգավորել տեղական գործերը՝ առանց հարևանների հետ վեճերի ու բախումների մեջ մտնելու: Վարչատարածքային այդ նոր միավորների զեմստվոներից վեր կգտնվեր համերկրային զեմստվոն, որը կկարգադրեր ընդհանուր համերկրային գործերը:

Թիֆլիս ու Բաքու քաղաքները և նավթահանքերը Բաքվի ու Թիֆլիսի գավառների հետ միավորելու վրաց և թուրք կալվածատերերի պահանջը իրենց ազգային շահերին միանգամայն հակառակ համարելով՝ հայերն առաջարկում էին Թիֆլիսը, Բաքուն և նավթահանքերի շրջանը դարձնել զեմստվոյական առանձին միավորներ և դրանք ուղղակի ենթարկել համերկրային զեմստվոյին: Նրանք նաև գտնում էին, որ զեմստվոյական ընտրական իրավունքի հիմքում պետք է դնել ոչ թե հողային սեփականությունը, դրա ծավալները, այլ պետությանը տրվելիք տուրքի չափը: Դա, նրանց կարծիքով, շատերին հնարավորություն կտար մասնակցելու զեմստվոյական գործերին, և զեմստվոն չէր դառնա մի դասակարգի ձեռքի հլու գործիք:

Փոխարքայի պալատում տեղի ունեցած խորհրդակցությունից հետո Թուրքերը լայն վիճաբանություններ չծավալեցին հայերի առաջարկների շուրջ, քանի որ զբաղված էին կոնկրետ «գործով»՝ հայերի հետ զինված ընդհարումներով: Ինչ վերաբերում է վրացիներին, ապա նրանք խիստ դժգոհ էին հայերի առաջարկներից, հատկապես Անդրկովկասը ազգային երեք շրջանների բաժանելու մասին ծրագրից: Վրաց ազնվականությունը տագնապ էր հնչեցնում, թե հայկական նահանգի ստեղծումը մահացու վտանգ է ներկայացնում Վրաստանի համար, քանի որ այդ նահանգի մեջ կընդգրկվեն վրացական պատմական տարածքներ, որոնք ներկայումս բնակեցված են հայերով: Այդ ոգով հատկապես միալար աղաղակում էր ֆեոդալական «Կյտե» թերթը:

Կովկասի իշխանությունը, հանձին փոխարքա Վորոնցով-Դաշկովի, հակվում էր դեպի հայոց առաջարկը, բայց նրա օրոք հարցը չլուծվեց: Փոխարքան, ըստ երևույթին, Անդրկովկասում զեմստվո մտցնելու առանձին փափագ չուներ*:

Վրաց-հայ հակասությունները բորբոքող հարցերից մյուսը առնչվում էր **կովկասյան ֆեդերացիայի գաղափարին:** Ինչպես վրաց, այնպես էլ հայ մամուլի օրգանները լայնորեն արծարծում էին այդ խնդիրը: Մասնավորապես հայ մամուլն ուզում էր օր առաջ պարզած տեսնել վրաց ղեկավար շրջանների, ազատական և պահպանողական գործիչների տեսակետները կովկասյան ֆեդերացիայի վերաբերյալ:

Իր հերթին վրաց հասարակության մեջ համառորեն սկսել էին տարածվել զանազան սադրիչ լուրեր, որոնցից մեկն այն էր, թե հայերը դեմ են կովկասյան ֆեդերացիայի գաղափարին: Իրականում հայերը դեմ չէին այդ գաղափարին, միայն թե նրանց ղեկավար գործիչների մի մասը երկյուղ ուներ, թե ստեղծվելիք ֆեդերացիան, իրերի անցանկալի դասավորության դեպքում, ասենք՝ եթե դրանում անվերապահ և վճռական ազդեցություն ձեռք բերեն հասարակության արևմտամետ թևը կամ կովկասյան Թուրքերի ղեկավար ուժերը, ապա հնարավոր է, որ նրանք Կովկասը դուրս բերեն Ռուսաստանի կազմից և գցեն եվրոպական որևէ տերության կամ Թուրքիայի ազդեցության տակ, մի բան, որ հակառակ էր հայ ժողովրդի արմատական շահերին:

Եվ ահա, կովկասյան ֆեդերացիայի հարցում հայ գործիչների մի մասի և մամուլի առանձին օրգանների արտահայտած նման մտավախությունները որպես փաստարկ օգտագործելով և մեղադրանք ներկայացնելով հայերին՝ վրացական հետադիմությունը նպատակ ուներ նրանց դեմ հանել անգամ վրաց հասարակության այն շերտերը, որոնք համակրում էին հայության պայքարին:

* 1915 թվականին փոխարքա Վորոնցով-Դաշկովին փոխարինեց Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը, որը նույնպես զբաղվեց զեմստվոյի հարցով: Նա բռնեց կալվածատերերի և ազնվականների կողմը: Այդ հանգամանքը թեև թեավորեց վրացիներին, բայց նոր փոխարքայի օրոք նույնպես Անդրկովկասը զեմստվո չստացավ վրացիների և Թուրքերի պահանջած սկզբունքներով:

Վերջապես, վրաց-հայ հակասությունների բորբոքմանը, 1908 թվից սկսած, նպաստում էր մի հանգամանք ևս, որը թեև առանձին կարևորություն չուներ, բայց, այնուամենայնիվ, կրակի վրա յուղի կաթիլի դեր էր կատարում իրար դեմ լարելով նրանց: Դա **Կովկասում առաջին բարձրագույն դպրոցի՝ պոլիտեխնիկումի հարցն էր:**

Այդ դպրոցը պիտի բացվեր Թիֆլիսում: Բայց քաղաքի ո՞ր մասում: Ահա այստեղ էր, որ դարձյալ բուռն վեճեր էին ծագել:

Հայերը պահանջում էին պոլիտեխնիկումը բացել Նավթլուղում, ուր իրենք մեծամասնություն էին կազմում, իսկ վրացիները առաջարկում էին այն բացել Սաբուրթալայում վրաց ազնվականության թաղում*:

Օգտվելով վրաց-հայ հակասությունների ծավալումից՝ կառավարչական գործակալները 1905-1906թթ. վրաց ամբոխը հայերի դեմ գրգռելու մի քանի փորձ արեցին: Դավադիր ոստիկանությունը հույս ուներ, որ եթե Թիֆլիսի Թուրք և ռուս խուժանը հակահայկական ցույցի դուրս գա, ապա վրաց ամբոխը նույնպես, իր հերթին, ոտքի կկանգնի և կմիանա հայերի դեմ պայքարին:

Բորբոքվող փոխադարձ անվստահությունը շարունակում էր ընդլայնել իր սահմանները: Նույնիսկ քաղաքական այդ տագնապի միջոցին, երբ պահանջվում էր Կաղբեկի և Արարատի հայացքների տակ ապրող ժողովուրդների միակամ համերաշխություն, երբ ավելի, քան երբևէ, պետք է լռեին ներքին տարաձայնությունները, տարաբախտաբար, տեղի էր ունենում հակառակը՝ հայ-վրացական հարաբերություններում սկսվում էին նոր ինճիռներ:

Հայկական մամուլը հիշեցնում էր, որ հարյուր տարի առաջ ռուսական միապետությունը շլացուցիչ խոստումներ էր տալիս «անձնվեր» Վրաստանին՝ անկախություն, փառք, ազատություն, լայն իրավունքներ, բայց այդ բոլորի փոխարեն դյուրահավատ ժողովրդին թողել է շղթայակապ հայրենիք, հողազուրկ գյուղացիություն, եկեղեցի՝ առանց լեզվի, լեզու՝ առանց գործածության, ազգ՝ առանց իրավունքների: Ցավոք, այդ ժամանակներում Պետերբուրգի կառավարությունը կարողացավ միամիտ հայերին գործիք դարձնել՝ վրացական ուժը տկարացնելու համար: Իսկ, այժմ էլ ահա, ցարիզմը շոյում էր վրաց ազնվականության ազգայնական զգացումները՝ հայությանը նոր հարվածներ հասցնելու համար:

«Դավադիր կառավարության հրապուրանքներն ու խաբեությունները,- գրում էր «Դրոշակը», - նպատակ ունեն շշմեցնել, խաբել դարավոր հարևաններին, անհաշտ թշնամիներ դարձնել նրանց և մղել դեպի անարգ,

* Վորոնցով-Դաշկովը 1913թ. վեճը լուծեց հայերի օգտին, բայց սկսած գործը անավարտ մնաց 1914թ. ծայր առած համաշխարհային պատերազմի պատճառով: Այնուամենայնիվ, նախապատերազմյան 8-9 տարիներին պոլիտեխնիկումի տեղը որոշելու հարցը բավական ջուր պղտորեց՝ ավերակելով հայ-վրաց վստահության խախուտ շենքը, նպաստելով ազգամիջյան ներհակության խորացմանը:

եղբայրասպան, մահաբեր կռիվ: Թուրքն արդեն զոհ գնաց այդ դավադրության և նախատինքով ծածկեց իր մռայլ պատմությունը, իր աննախանձ գոյությունը: Մի՞թե նույն խարդախության զոհ պիտի գնա «վրացի» անունը կրող բազմատանջ ամբոխի մի մասնիկն անգամ, որի քաջարի զավակները դեռ երեկ ազատության ու համերաշխության ռազմերգ էին հնչեցնում գուրիական ձորերում, պատրաստ կուրծք տալու ընդհանուր թշնամուն»[1]:

Կասկած չկա, որ եթե անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեին, ապա հայ-վրացական ընդհարումների վտանգը կարող էր ռեալ կերպարանք ստանալ: Ուստի հայկական կուսակցություններն ու քաղաքական հոսանքները, այդ թվում՝ հայ բոլշևիկները, հայ մամուլի զանազան ուղղությունների օրգանները քաղաքական տագնապ և ահազանգ էին հնչեցնում:

Մի նոր ավերիչ հրդեհի նախանշանը պետք էր հանգցնել հայ և վրաց հասարակության ընդհանուր ջանքերով:

1905թ. ԱՎԱՐՏԻՆ

Հոկտեմբերյան ընդհանուր քաղաքական գործադուլը և նոյեմբերյան առճակատումները մասսաներին ընդհուպ մոտեցրին քաղաքական պայքարի բարձրագույն ձևին՝ զինված ապստամբությանը:

Ամենից առաջ զինված ապստամբության էր բարձրանում դասակարգային մարտերում կռված Ռուսաստանի հերոսական պրոլետարիատը: Երկիրը ծայրից ծայր բռնված էր տենդով: Վիթխարի պետությունը նման էր ալեկոծ ծովի, որի հուզումները ոչ միայն մակերևույթն էր սասանում, այլև ամենաստորին խորքերը: Բանվոր դասակարգը իր հետևից տանում էր Ռուսիո գյուղացիական հոծ զանգվածներին:

«Օրհասը մոտ է» առաջնորդողում «Հնչակը» գրում էր. «Դարավոր ստրուկ, հնազանդ և ցարի անվան առաջ երկյուղածությամբ ծունր խոնարհող ռուս մուժիկը այսօր, իբրև ըմբոստ քաղաքացի, ուզի է կանգնել և ապտակահարում է իր բռնակալներին, իրեն կեղեքողներին, չահագործողներին»[2]:

Ապստամբության գլխավոր կազմակերպիչը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն էր, հատկապես նրա բոլշևիկյան թևը: Հիմնականում ՌՍԴԲԿ ղեկավարությամբ էին ստեղծվում ռազմական կազմակերպություններ, մարտական դրուժիններ, բանվորների և գյուղացիների զինված ջոկատներ: Կուսակցությունը մեծ ջանքեր էր գործադրում բանակը հեղափոխության կողմը գրավելու համար և այդ նպատակով ամենաակտիվ աշխատանք էր տանում զորքերի մեջ:

[1] «Դրոշակ», N 7(160), հուլիս, 1905, էջ 98:
[2] «Հնչակ», N 9-10, նոյեմբեր-դեկտեմբեր, 1905:

1905թ. նոյեմբերին Լենինը արտասահմանից վերադարձավ Ռուսաստան և սկսեց անմիջականորեն ղեկավարել զինված ապստամբության նախապատրաստության գործը:

Զինված ապստամբության նախապատրաստման ուղղությամբ մեծ աշխատանք էր տանում նաև սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) կուսակցությունը՝ հատկապես գյուղացիության շրջանում: Այս կուսակցությունը ևս ուներ իր զինված դրուժինաները գյուղերում, քաղաքներում և արդյունաբերական այլ վայրերում:

Ինչպես սոցիալ-դեմոկրատները, այնպես էլ սոցիալիստ-հեղափոխականները զինված ապստամբության նախապատրաստման կենտրոն դարձրին Մոսկվան, որի կայազորը և ընդհանրապես մոսկովյան զինվորական օկրուգի զորքերը գտնվում էին հեղափոխական կազմակերպությունների ազդեցության տակ: Մոսկվայի սովետը, որին ղեկավարում էին բոլշևիկները, ձեռք էր բերել զենք, ստեղծել իր մարտական դրուժինաները:

Դեկտեմբերի 7-ին Մոսկվայում սկսվեց քաղաքական գործադուլ՝ զինված ապստամբության վերաճելու մտադրությամբ: Իշխանություններն սկսեցին պատժամիջոցներ կիրառել գործադուլավորների և ցուցարարների նկատմամբ: Դեկտեմբերի 8-ին քաղաքում երևացին առաջին զինված ջոկատները, իսկ հաջորդ օրը Մոսկվան ծածկված էր բարիկադներով[1]: Իշխանությունները բանվորների դեմ նետեցին մեծաքանակ զինված ուժեր, բայց նրանք հերոսաբար պաշտպանվում էին հարձակվող կազակների և ժանդարմերիայի դեմ: Իսկական պատերազմ էր սկսվել: Դա ռուսական հեղափոխության զարգացման բարձրակետն էր:

Վլադիմիր Լենինը «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածում, որը 1905թ. սեպտեմբերի 20-ին լույս էր տեսել "Пролетарий" թերթի N19-ում, հիշեցնում էր Գերմանիայի 1848թ. հեղափոխական իրադրության մասին Կ.Մարքսի արտահայտած մտքերը: Մարքսը գրել էր, որ մեկ անգամ ուղ դնելով հեղափոխական ուղու վրա՝ անհրաժեշտ է գործել մեծագույն վճռականությամբ՝ նաև հանդես գալ որպես հարձակվող կողմ:

Ելնելով մարքսյան այս հիմնարար տեսակետից՝ Լենինը հիշյալ հոդվածում գրում էր. «Պաշտպանվողի դիրքը ցանկացած զինված ապստամբության մասն է: Այդ դեպքում նա (պաշտպանվողը: - Հ.Ս.) կործանվում է առանց թշնամու հետ ուժերը չափելու: Զարկե՛ք թշնամուն, քանի նրա ուժերը ցաքուցրիվ են, նախապատրաստվեք նորանոր հաղթանակների, որքան էլ որ փոքր լինեն դրանք, միայն լինեն օր օրի: Պահպանեք առաջին հաջողության ընձեռած բարոյական գերակշռությունը: Ձեր կողմը գրավեք այն տատանվող տարրերին, որոնք միշտ զիջում են առավել ուժեղ տպավորության ազդեցության տակ և միշտ անվտանգ տեղ են փնտրում: Ստիպեք թշնամուն նահանջել

[1] «Կայծ», N 24, 7 հունիսի 1906թ.:

ավելի շուտ, քան նա կհասցնի ձեր դեմ լարել բոլոր ուժերը, կարճ ասած, ինչպես ասել է մինչև այժմ հայտնի հեղափոխական քաղաքագետներից մեծագույնը՝ Դանտոնը. "De Paudace, de Paudace, encone de Paudace"*:

Ցարական կառավարությունը քաջատեղյակ էր հեղափոխականների որդեգրած հարձակման տակտիկային: Նա չէր սպասում իր հակառակորդի հարձակմանը: Նա ռեակցիայի սևհարյուրակային ուժերն ավելի վաղ էր շարժում, քան հեղափոխական տարրերը կնախապատրաստվեին հարձակման:

Կառավարությունն ի վիճակի չէր Մոսկվայի կայազորի միջոցով ճնշել ապստամբությունը, քանի որ զինվորները հրաժարվում էին կրակել: Բայց նա կարողացավ հավաքել ցիրուցան ուժերը՝ օրհասական կռվի համար: Հարություն առան նոր Պլևներ նոր անուններով՝ Սիպյագին, Իգնատև, Դուբասով... Իշխանությունները ստիպված էին Պետերբուրգից մեծ ուժեր բերել Մոսկվա, և միայն դրանից հետո հաջողվեց դեկտեմբերի 18-ին, բանվորների 9-օրյա հերոսական մարտերից հետո, ճնշել պրոլետարիատի վիթխարի ապստամբությունը: Կռիվը ապստամբներից խլել էր 800 զոհ:

Զինված ապստամբություն տեղի ունեցավ ոչ միայն Մոսկվայում, այլև Ռուսաստանի մի շարք ուրիշ խոշոր քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում՝ Սորմովոյում, Դոնբասում, Գոռլովկայում, Լուգանսկում, Խարկովում, Դոնի Ռոստովում և այլ տեղերում:

Թեև Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությունը խեղդվեց արյան մեջ, բայց ժողովրդական ազատության համար պայքարում նրա նշանակությունը անգնահատելի էր: Մոսկովյան հերոսական էպոպեան ուսանելի դասեր թողեց ցարիզմի դեմ կռվի ելած ուժերին: Ավելին, հեղափոխական պոեզիայի համար այն դարձավ ոգեշունչ արարումների աղբյուր: Հեղափոխական գրականությունը հարստացավ բազմաթիվ մեծարժեք ստեղծագործություններով: Դրանց թվում էր բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանի «Մեռա՞ն՝ չկորան» հոյակապ քերթվածը (1906թ.): Ժամանակի սիրված և լայն ժողովրդականություն ստացած այդ բանաստեղծությունը մարդիկ արտասանում էին բարձր ներշնչումով, իսկ դերասան Հովհաննես Զարիֆյանը բեմերից հնչեցնում էր իբրև բողոքի և ըմբոստության մարտահրավեր:

Բանաստեղծը ստեղծել էր պայքարի ու նահատակության անմոռանալի պատկերներ.

Ինչպիսի՛ հերոս ընկերնե՛ր մեռան, -
Մեռա՞ն՝ չկորան...
Կրա՛կն էր ցայտում նրանց աչք - ունքից,
Շա՞նթը՝ շրթունքից,
Երբ խոսում էին ծով - ամբոխի մեջ
Վիշտ ու կարիքից.

Վրեժի, ցասման հրով բորբոքված
Նրանք բեմ ելան՝
Եվ բեմը դարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան,
Ինչպիսի՛ հերոս ընկերնե՛ր մեռան...
Այսօր բանտերում, վաղը աքսորում,
Մյուս օր կախաղան
Հանելու համար դահիճը դաժան
Կացինն է սրում.
Բայց հերոսների շուրթերից սեղմված
Նզովք չէ՛ լսվում.
Բաժակն են ըմպում Վերածնության՝
Սյուներին կախված,
Ու հիմնը երգում Հեղափոխության՝
Հպարտ, չհաղթված,
Ինչպիսի՛ հերոս ընկերնե՛ր մեռան...

Ստեղծագործության մեջ գովք է հյուսված հեղափոխության հերոս մարտիկներին, որոնք իրենց կյանքը դրեցին ազատության սեղանին և անմահացան:

Հե՛յ ազատության անպա՛րտ զինվորներ,
Դո՛ւք, որ անխռով
Ներկեցիք փողոց ու գործարաններ
Ձեր տաք արյունով,
Նույն վայրում այսօր ջահիլ-ջիվաններ
Ըմբոստ շարքերով
Ձեր գովքն են անում... ձեր թափված արյամբ
Մնվում, ամրանում...
Եվ անմահներիդ երդվում են անվամբ
Ու հպարտանում,
Որ դուք, հիրավի, պատվով, վեհությամբ
Ձեր գործը տարաք,-
Մեռա՞ք՝ չկորա՞ք:

Ի տարբերություն կայսրության մյուս մասերի՝ Կովկասում ցարական զորքերի, ոստիկանության ու ժանդարմերիայի գործողությունները սահմանափակ բնույթ էին կրում, քանի որ միայն Վրաստանում էր բռնկվել մասսայական ապստամբություն, որն ընդգրկել էր ոչ միայն արդյունաբերական կենտրոնները, այլև գավառները:

Դեկտեմբերյան զինված ապստամբության օրերին հակացարական պայքարը բարձր լարվածության էր հասել Թիֆլիսում:

* «Համարձակություն, համարձակություն, դարձյալ համարձակություն»:

Հատկապես սոցիալ-դեմոկրատների մոտ կրքերը ծայրահեղորեն բորբոքվել էին այն պատճառով, որ դեկտեմբերի 6-ի երեկոյան Բաքվի Ազիատսկի փողոցում երկու մարդասպանի կողմից սպանվել էր բոլշևիկ Պյոտր (Պետրո) Մոնտինը: Նա մի շաբաթ դրանից առաջ Թիֆլիսից եկել էր Բաքու և մասնակցել նոյեմբերի վերջերին տեղի ունեցած ՌՄԴԲԿ կովկասյան միության 4-րդ կոնֆերանսին, որպես Բաքվի Բիբի-Հեյբաթի բանվորության ներկայացուցիչ: Մոնտինը պատրաստվում էր մեկնել Ստոկհոլմ, որպես ՌՄԴԲԿ 4-րդ (միավորիչ) համագումարի պատգամավոր: Նա աշխատում էր Թիֆլիսի վագոնային պարկում, 16 տարեկանում մտել էր հեղափոխական շարժման մեջ, 18 տարեկանում նստել Մետեխի բանտում: Եվ ահա դեռ 22 տարին չլրացած, նա հեռացավ կյանքից: Թե ովքեր էին մարդասպանները, այդպես էլ չպարզվեց: Բայց ընթերցողը հիշում է, թե հայերի պաշտպան Մոնտինը ինչպիսի կրքով էր մերկացնում ցարիզմի և մուսուլմանական ռեակցիայի դերը Բաքվի 1905թ. փետրվարյան կոտորածների օրերին: Անշուշտ, նա զոհ էր գնացել թուրք մարդասպանների կամ ցարական ագենտների գնդակին:

Նահատակ հեղափոխականի դին Բաքվից տեղափոխվեց Թիֆլիս, ուր հուղարկավորությունը վերածվեց վիթխարի ցույցի[1]:

Դեկտեմբերի 7-ից Թիֆլիսում հայտարարվեց ընդհանուր քաղաքական գործադուլ, իսկ իշխանությունը քաղաքում հաստատեց զինվորական դրություն: Առաջին իսկ օրերից խստությունները գերազանցեցին նույնիսկ պլևե-գուլիցինյան ռեժիմի ժամանակների խստություններին: Զորքը թնդանոթներով քարուքանդ արեց բանվորական թաղը՝ Նախալովկան:

Երևանյան հրապարակից քիչ հեռու՝ Սոլդատսկի բազարում, ռումբ էին ձգել, որի հետևանքով սպանվել էր մի կազակ: Իբրև պատասխան, զորքը թնդանոթի բռնեց Ներսիսյան դպրոցին պատկանող մեծ շենքը, որը կրակի ճարակ դարձավ իր ներսում եղած խանութների ու ճաշարանների հետ: Հրապարակում փռված էին ածխացած դիակներ: Զորքը սկսեց գնդակահարել փախչողներին: Այրվածների և սպանվածների թիվն անցնում էր 100-ից՝ բոլորն էլ խեղճ ու կրակ մարդիկ: Նույն գիշերը կազակները թալանեցին Սոլդատսկի բազարի շուրջը գտնվող բոլոր խանութները՝ մինչև «Մշակ» թերթի խմբագրության փողոցը, որոնք բոլորն էլ պատկանում էին հայերին[2]:

Այդ օրերին էր, որ Թիֆլիսի զինվորական իշխանությունը մշակեց մի ծրագիր, որը պետք է անմիջապես գործադրության մեջ դրվեր քաղաքում ապստամբություն ծագելու դեպքում: Ծրագիրը, որը հայտնի դարձավ դաշնակցությանը, նախատեսում էր ապստամբությունն արագ ճնշելու և քաղաքի ռուս բնակչության անվտանգությունն ապահովելու միջոցները: Արմեն Գարոն իր հուշերում անդրադառնալով այդ փաստին՝ գրել է.

[1] **"Кавказский рабочий листок"**, N15, 11(24) декабря 1905г.
[2] **«Դրոշակ»**, N1(167), հունվար, 1906, էջ 10:

«Կանխաւ քաղաքին ռուս ազգաբնակչութեանը յայտնուած էր գաղտնի կերպով, որ պատրաստ լինի անմիջապէս հաւաքուելու Փոխ-Արքային պալատին պարտէզը, երբ պալատէն ռաքէթ մը արձակուէր դէպի երկինք: Այդ նոյն նշանին վրայ Թիֆլիսի ամբողջ զորքը դուրս պիտի գար քաղաքէն եւ թնդանօթի բռնէր քաղաքի հայ եւ վրացական թաղերը, իսկ պալատին շուրջը հաւաքուած ռուսները պիտի պաշտպանէր կօզակներու շղթայ մը չթողնելու, որ հայերն ու վրացիք մօտենային պալատին»[1]:

Ի լրումն այդ ամենի, նույն օրերին Թիֆլիս քաղաքի և գավառի գեներալ-նահանգապետ նշանակվեց տխրահռչակ Ալիխանով-Ավարսկին:

Քաջալերված այդ նշանակումից՝ թուրքերը Թիֆլիսում նորից սկսեցին վտանգավոր շարժումներ, որոնք իրենց հերթին Հ.Ց. դաշնակցությանը և հայկական զինված խմբերին մղեցին աչալրջության:

Այդ օրերին Թիֆլիսի թուրքերը միավորվել էին քաղաքի ռուս սահմանադրական «Հայրենասիրական ընկերության» հետ, որի շարքերում արդեն հաշվվում էր 6000-ից ավելի մարդ: Թուրքերն ու «Հայրենասերները» հանդես էին գալիս միասնաբար և պատրաստվում էին համատեղ ճնշել սպասվելիք ապստամբությունը: Այնուամենայնիվ, Թիֆլիսում գործը չհասավ դրան, ուստի փոխարքայի պալատում մշակված ծրագիրը չդրվեց գործադրության մեջ:

Դեկտեմբերի 3-ին քաղաքական գործադուլ հայտարարվեց Բաթումում, որը հաջորդ օրը վերածվեց զորքի ու ոստիկանության հետ զինված բախման: Քաղաքում հայտարարված էր պաշարողական դրություն, և բնակչությունը հանձնվել էր մի քանի հարյուր կազակների կամայականությանը, որոնք սպանում ու թալանում էին անպատիժ: Քաղաքից պատգամավորություն գնաց Վորոնցով-Դաշկովի մոտ խնդրելու, որ կազակներին դուրս տանեն քաղաքից: Թիֆլիսից այդպիսի հրաման եղավ, բայց Բաթումի պարետը չկատարեց այդ հանձնարարականը: Ավելին, դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած քաղաքային միտինգի ժամանակ զորքը վրա հասավ և սկսեց գնդակահարել մասնակիցներին[2]:

Վրաստանում հեղափոխական բանվորների և գյուղացիների նկատմամբ կատարվող հաշվեհարդարները ղեկավարում էր գեներալ Ալիխանով-Ավարսկին: Այդ դահճի հրամանով կրակի էին մատնվում ամբողջ գյուղեր, խոշտանգվում հազարավոր մարդիկ: Համարյա ամբողջապես հրկիզվեց Օզուրգեթ քաղաքը, Գորիի գավառում գյուղացիների դեմ գործի էր դրվել հրետանի:

Կովկասյան իրադարձությունները նույնպես պերճախոս վկայում էին, որ ինքը՝ կառավարությունն է ժողովրդին ապստամբության մղում: Միաժա-

[1] **Արմեն Գարո**, Ապրուած օրեր, էջ 179:
[2] **«Դրոշակ»**, N 2(168), փետրվար, 1906, էջ 29:

մանակ դրանք ցույց էին տալիս, որ գործադուլային պայքարի բարձր վերելքի հետ համեմատած՝ ժողովուրդն անբավարար է նախապատրաստված զինված կռվի, թույլ էր ապստամբության տեխնիկական հագեցվածությունը, հեղափոխական կուսակցությունները (ՌՄԴԿ, էսէռներ) դեռևս անհրաժեշտ ազդեցություն չունեին զանգվածների վրա: Չնայած այդ ամենին, իրականությունն ամեն քայլափոխում ցույց էր տալիս, որ դա միակ ճանապարհն է, որով կարելի էր ձեռք բերել ժողովրդի էական շահերն ապահովող քաղաքական ազատություն: Միայն զինված ապստամբությունն էր ի վիճակի ռուսաստանյան հողից արմատախիլ անել ինքնակալությունը և նրա կողմից հովանավորվող հին կարգերի մնացորդները: Միայն հեղափոխական բանակը, միայն անխտիր զինված ժողովուրդը կարող էր կաթվածահար անել հին կարգերը: Միայն ժամանակավոր հեղափոխական բանվորագյուղացիական կառավարությունը, որպես հաղթական ապստամբության օրգան, կարող էր պահպանել ժողովրդի իշխանությունը, որը նա ձեռք էր բերելու զենքով և հանձնելու էր ժողովրդի իրական կամքն արտահայտող հիմնադիր ժողովին:

Այդ իսկ պատճառով սոցիալ-դեմոկրատիայի՝ երեք մասից բաղկացած ֆորմուլը՝ զինված ապստամբություն, հեղափոխական բանակ, ժամանակավոր հեղափոխական կառավարություն - դարձել էր ողջ դեմոկրատական հեղափոխության լոզունգը: Կյանքն ամեն քայլափոխում ապացուցում էր այդ լոզունգի ճշմարտացիությունը: Պրոլետարիատի գլխավորությամբ լայն զանգվածների վճռական պայքարը ամենալավ երաշխիքն էր այն բանի, որ ինքնակալությունը կտապալվի, և ժամանակավոր ռազմական ոչ մի հաղթանակ նրան չի փրկի: Լենինը գրում էր.

«Հակահեղափոխությունը և հեղափոխությունը Կովկասում զինված պայքարում բախվեցին: Քաղաքացիական պատերազմը բռնկվեց վառ բոցերով, և նրա արյունալի ցոլքերում առավել արհամարհված են թվում սնամեջ պառլամենտարիզմի աննշան փորձերը: Ցարիզմի հետ անկշտում գործարքներ կնքող բուրժուազիան թող խռնվի նորահայտ դումայի* դռների առջև, ուր կառավարությունը հրապուրել է նրան՝ համաձայնության գալու հույսով: Իսկ հեղափոխական պրոլետարիատին և ժողովրդական հուզված զանգվածներին նա (ցարական կառավարությունը: - Հ.Ս.) մարտի հանեց, հրահրեց քաղաքացիական պատերազմ և սովորեցրեց հասկանալ, որ միայն քաղաքացիական պատերազմում կարող է վճռվել թագավորի և ժողովրդի միջև եղած վեճը, միայն նրա շնորհիվ կարող է նվաճվել ժողովրդական ազատությունը»[1]:

Ռուսաստանի հեղափոխական շարժումը մի փառավոր հարցաքննություն էր կայսրության մեջ ապրող ազգությունների համար, և ամենքը հնարավորություն ունեին ապացուցելու, թե այս կամ այն համայնքը որքան է հասուն

* Խոսքը օրապակաս Բուլիգինյան դումայի մասին է:
[1] "Пролетарий", N19, 20 сентября 1905г.

նացած:

Այդ տեսակետից վիճակն անմխիթարական էր հատկապես թուրքաբնակ գավառներում, ուր զանգվածների մակարդակը գտնվում էր քաղաքական կյանքի հատակում: Դրությունը մխիթարական չէր նաև հայության մոտ: Մինչդեռ 1905թ. դեկտեմբերին Ռուսաստանի բոլոր անկյունները սրատարոփ ապրում էին հեղափոխության կյանքով, մինչդեռ հարևան Վրաստանում անզիջում կռիվ էր գնում ցարիզմի դեմ, և երկիրը ծայրե ի ծայր շնչում էր քաղաքական ազատության շնչով, մինչդեռ նրա գյուղերում ու քաղաքներում այդ օրերին բազմամարդ միտինգներ էին կազմակերպվում, հայ իրականության մեջ, անգամ հայկական կենտրոններում, հասարակության լայն խավերը շատ դեպքերում նույնիսկ անտեղյակ էին, թե ինչ է կատարվում Ռուսաստանում: Դա միանգամայն հասկանալի է, քանզի դեկտեմբերյան զինված ապստամբության օրերին Անդրկովկասի հայաբնակ և թուրքաբնակ գավառների բնակիչները փաստորեն դուրս էին մնացել ռուսական մեծ հեղափոխության ընթացքից և զբաղված էին իրար կոտորելով:

Զինված ապստամբության կոչեր անելուց խուսափում էր Հ.Ց. դաշնակցությունը, բայց նրա ղեկավար գործիչները իրավունք էին ստացել, ելնելով կոնկրետ իրավիճակից, վճիռներ կայացնել՝ զինված ելույթներին մասնակցե՞լ, թե՞ ոչ:

Թիֆլիսի հայության ինքնապաշտպանության ղեկավար Արմեն Գարոն «Կովկասը 1905 թուին» հուշագրության մեջ նկարագրել է Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո Թիֆլիսում ստեղծված նախաապստամբական վիճակը և քաղաքական տարբեր կազմակերպությունների բռնած դիրքը:

Երբ դեկտեմբերի 12-ին Թիֆլիս լուր էր հասել, որ սոցիալ-դեմոկրատների գլխավորությամբ բանվորները Մոսկվայում ապստամբություն են բարձրացրել և քաղաքը վերցրել իրենց ձեռքը, ՌՄԴԿ Թիֆլիսի կոմիտեն, որի անդամների մեծ մասը վրացիներ էին, ժողովի հրավիրեց հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչներին՝ առաջարկելով Մոսկվային օգնելու համար Թիֆլիսում նույնպես զինված ապստամբություն բարձրացնել, իսկ այն կազմակերպությունը, որը կհրաժարվի միանալ ապստամբներին, կդիտվի որպես հակահեղափոխական ուժ:

Դաշնակցությունից իբրև բանագնացներ ժողովին մասնակցում էին Համո Օհանջանյանը և Իշխանը: Ժողովում սոցիալ-դեմոկրատները դաշնակցությունից պահանջեցին 24 ժամվա ընթացքում պաշտոնական պատասխան տալ՝ կուսակցությունը մասնակցելո՞ւ է զինված ապստամբությանը, թե՞ ոչ:

Վերադառնալով՝ բանագնացները Հ.Ց.Դ. արևելյան բյուրոյին հայտնեցին սոցիալ-դեմոկրատների պահանջի մասին: Բյուրոն անմիջապես խորհրդակցության հրավիրեց քաղաքի դաշնակցական բոլոր ղեկավար գործիչներին: Հարցը քննության դրվեց: Մեծամասնությունը գտնում էր, որ դաշնակ-

ցությունը հեղափոխական կուսակցություն է, ուստի չի կարող չմասնակցել զինված ապստամբությանը: Ոմանք իրենց ելույթներում մատնանշում էին, որ եթե հայությունը հեռու մնա ապստամբությունից, ապա նրա վիճակը կարող է տաժանելի դառնալ, եթե հեղափոխությունը հաղթանակ տանի, ինչը, իրենց կարծիքով, կասկածից վեր է:

Երբ պարզ դարձավ, որ ժողովի մեծամասնությունը կողմ է զինված ապստամբության, խոսք է վերցնում Արմեն Գարոն և առաջարկում քննվող հարցի մասին որոշում տալուց առաջ նախ հայ զինվորներից հարցնել, թե նրանք արդյո՞ք կուզեն կռվել ռուս զինվորների դեմ: Հրամանատարի այս նկատողությունը զարմացնում է ժողովականներին, որոնք փաստում են, թե բյուրոյի կողմից ընդունվելուց հետո որոշումը պարտադիր է դառնալու դաշնակցական զինվորների համար, և նրանք, ուզեն թե ոչ, պիտի անթերի կատարեն այն:

Մայր առան թեժ վիճաբանություններ: Բանավեճին վերջ տալու համար Գարոն հայտնում է, թե ինքը, իբրև քաղաքի հայ զինվորական ուժի հրամանատար, դեմ է, որ իր զինվորները մասնակցեն զինված ապստամբությանը, ուստի վաղը ևեթ այցելելու է բոլոր խմբերին՝ հայտնելու իր որոշումը: Հետևում են ապստամբության կողմնակիցների կշտամբանքները հրամանատարի հասցեին, նրան մեղադրում են պաշտոնը չարաշահելու մեջ, ասելով, թե նա իրավունք չունի օգտագործելու զինվորների վրա ունեցած իր բարոյական ազդեցությունը: Իր հերթին Գարոն հիշեցնում է Թիֆլիսի նոյեմբերյան կռիվների օրերին վրաց սոցիալ-դեմոկրատների պարագլուխների հետ տեղի ունեցած բանակցությունների մասին, որի ընթացքում նրանք դաշնակցության ղեկավար ընկերներին համոզել էին ընդունել թուրքերի կողմից հայերին ներկայացրած ստորացուցիչ վերջնագիրը:

Չկարողանալով իրեն զսպել՝ Գարոն այնուհետև ասում է. «Ո՞ւր էր ձեր այսօրուայ քաջութիւնը ասկէ ամիս մը առաջ, երբ այդ նոյն «յեղափոխական» շէֆերուն խօսքին հաւատալով կ'ուզէիք անձնատուր լինել 5000 քոսոտ թուրքերու: Ո՞ւր մնացին այն 14 000 հրացանաւոր թուրքերը, որոնց մասին կը խօսէին այդ նոյն Ճորտանիան եւ Ռամաշվիլին: Իսկ այսօր հերոսներ էք դարձել բոլորդ եւ կ'ուզէք զինուած ապստամբութիւն ընել տաս հազարանոց ռուս բանակին դէմ, շատ լաւ գիտնալով, որ վրացիք 120 զէնք ունին ընդամէնը, իսկ մենք հազիւ 250 հրացան (Թիֆլիսի կռիւները վերջանալուն պէս մեր աւելորդ զէնքերը ուղարկեցինք Գանձակի շրջանը): Կը մտածէ՞ք բոպէ մը, թէ ի՞նչ է լինելու ապստամբութեան արդիւնքը: Որպէսզի Ճորտանիա մը ձեզ «հակահեղափոխական» չանուանէ, դուք կ'ուզէք հարիւր հազարանոց հայ ազգաբնակչութիւնը ռուսական թնդանօթներուն բերանը տալ. ապրի՛ք: Ահա դուք, ահա զինուորները: Գնացէք առաջնորդեցէք զիրենք դէպի ապստամբութիւն: Ես այս գործին մէջ չկամ»[1]:

Այս տաք խոսակցության արդյունքն այն եղավ, որ հաջորդ օրն իսկ Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն վրաց սոցիալ-դեմոկրատներին հայտնեց, թե դաշնակցությունը չի մասնակցելու իրենց ծրագրած զինված ապստամբությանը: Իսկ քանի որ վրացի սոցիալիստները հենց հայկական զինված ուժերի վրա էին դրել ապստամբություն բարձրացնելու իրենց հույսը, ուստի նրանց ծրագիրը հենց սկզբում խափանվեց:

Դաշնակցության արևելյան բյուրոյի բռնած դիրքը հեղափոխական կուսակցությունները համարեցին սխալ, իսկ բոլշևիկները՝ դավաճանություն: Դաշնակցության Թիֆլիսի ղեկավարությունն այն ժամանակ համոզված էր, որ իր ընդունած որոշումը բխում է ոչ միայն քաղաքի հայության, այլև վրացոց շահերից:

Հետագայում դաշնակցության ղեկավար գործիչները բազմաթիվ առիթներով ափսոսանք են հայտնել, որ թուրք-հայկական ընդհարումների ընթացքում, գլխովին զբաղված լինելով հայության ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրներով, կուսակցությունը չի մասնակցել ռուսական մեծ հեղափոխությանն ընդհանրապես, չի արձագանքել նաև Մոսկվայի 1905թ. դեկտեմբերյան ապստամբությանը:

Այդ էր պատճառը, որ 1905-ի դեկտեմբերին Կովկասի բոլշևիկներն առավել ջանքեր էին թափում թուրք-հայկական ընդհարումները գոնե մեղմելու համար, որպեսզի զանգվածները արյունալի ազգամիջյան կոտորածից շուռ գան դեպի հեղափոխական կռիվը: Նրանք իրենց աջակցությունն էին ցույց տալիս այն բոլոր ուժերին, որոնք նպաստում էին հայերի և թուրքերի միջև խաղաղության հաստատմանը:

Բոլշևիկների այդ տակտիկան համընկնում էր Հ.Յ. դաշնակցության նպատակներին, որը Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, Գանձակում, Բաթումում և այլուր իր զինված ջոկատների միջոցով հնարավորին արագ մարում էր այն առկայծումները, որոնք կարող էին վերածվել լայնատարած հրդեհի: Ավելին, և՛ ՌՄԴԿ, և՛ Հ.Յ. դաշնակցության կոմիտեները կապ էին պահպանում Կովկասի փոխարքայության հետ, որպեսզի օգտագործեն խաղաղության մեջ շահագրգիռ լինելու մասին Վորոնցով-Դաշկովի գնալով հաճախակի դարձող հայտարարությունները:

Այդ օրերին Բաքվում տեղի ունեցած ՌՄԴԿ կովկասյան միության 4-րդ կոնֆերանսն ընդունել էր բանաձև «Հայ-մուսուլմանական ընդհարումների մասին», որտեղ նշված էր. «Մենք պետք է կանգնենք մեր դիրքերում կանխելու թաթարների և հայերի միջև՝ սպանդը վերսկսելու ամեն մի փորձ: Բայց միաժամանակ մենք պարտավոր ենք սեռուն հետևել, թե ինչ է տեղի ունենում քաղաքում, թե ինչ է ձեռնարկվում ադմինիստրացիայի և բոլոր «կոչում-

[1] **«Հայրենիք»**, N 5, մարտ, 1923, էջ 48:

ներով պճնված մարդկանց» կողմից»: Այնուհետև բանաձևում նշվում էր, որ հայ մտավորականությունը, որն իր մակարդակով անհամեմատ բարձր է նոր սաղմնավորվող թուրք մտավորականությունից, կարող է իր վրա վերցնել մեծ առաքելություն՝ նպաստել թուրք-հայ արյունահեղության դադարեցմանը, մի բան, որ, ցավոք, չի անում:

Բանաձևի հանձնարարական մասում ասված էր. «Ուշադրության առնելով, որ ա) հայ-թաթարական ընդհարումները, որ վերջին ժամանակներս լայն ծավալ են ստացել, հարմար հող և զենք են հանդիսանում Կովկասում հակահեղափոխության զարգացման և ուժեղացման համար, որ բ) այդպիսի ընդհարումների համար հիմք են հանդիսանում հայ-թաթարական մասսաների տգիտությունն ու անգիտությունը, որոնք ենթակա են իրենց ազգերի բուրժուանացիոնալիստական գաղափարների ուժգին ազդեցությանը, ՌՄԴԲԿ կովկասյան միության 4-րդ կոնֆերանսն իր կազմակերպություններին երաշխավորում է.

1. Ուժեղացնել սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան երկու ազգերի պրոլետարիատի շրջանում նպատակ ունենալով նրանց հեռու պահել հակահեղափոխականներից, 2. Իրենց վրա վերցնել հաշտեցնելու միսիան՝ բոլոր ազգերի պրոլետարների ներկայացուցիչներից կազմված դատարանների միջոցով, 3. Ընդհարումների ժամանակ ոստիկանական ագենտների սադրանքները կանխելու համար նշանակել պահակակետեր:

Երբ սկսվի ջարդը, կոնֆերանսը հանձնարարում է այդ պահին գործի դնել բոլոր միջոցները՝ ցույցերից սկսած, մինչև ջարդերի առավել ակտիվ կազմակերպիչների ու գործակալների տեռորը... »[1]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլշևիկները, որոնք ընդհանրապես վճռականորեն մերժում էին տեռորը, պայքարի զինանոցում տեռորի զենքը պահելու համար անողոք դատափետում էին սոցիալիստ-հեղափոխականներին (էս-էռ) ու դաշնակցությանը, այժմ զինված ապստամբության ժամանակ, ենթարկվելով օբյեկտիվ իրողությունների ճնշմանը, տվյալ ժամանակահատվածում Կովկասում տեռորն ընդունելի էին համարում և իրենց կազմակերպություններին խորհուրդ էին տալիս գործածել պայքարի այդ զենքը:

Հայ-մուսուլմանական ընդհարումների մասին ՌՄԴԲԿ կովկասյան միության 4-րդ կոնֆերանսի բանաձևը, ուր տրված էր նաև ջարդերի պայմաններում հայ մտավորականության բռնած դիրքի բնութագրությունը, զայրույթով ընդունվեց և՛ դաշնակցական, և՛ լիբերալ հայ մամուլի կողմից:

Բոլշևիկների օրգան "Кавказский рабочий листок"-ը 1905թ. դեկտեմբերի 17-ին պարզաբանում էր, որ կոնֆերանսում խոսքը չի գնացել ողջ հայ մտավորականության մասին: «Հայ բուրժուական ամբողջ մտավորականությանը մեղադրել կոտորածի մեջ նույնքան անհեթեթ է, - գրում էր թերթը, -

[1] **"Кавказский рабочий листок"**, N9, 4(17) декабря 1905г.

որքան անհեթեթ է, երբ դուք պնդում եք, թե թուրք բոլոր մտավորականները համիսլամականներ են»[1]: "Листок"-ը մեջբերում էր թուրք մտավորականներից մեկի հետևյալ խոսքերը. «Այնտեղ, որտեղ մարդիկ սպանում են իրենց հարևաններին, մանկության ընկերներին, այնտեղ, որտեղ նրանք կրակի են մատնում ունեցվածքը երեկվա իրենց ընկերների, որոնց հետ տարիներով ապրել են նույն փողոցում, նույն բակում, նույն տանը, այնտեղ, որտեղ մարդիկ, կատարելով բոլոր այդ «քաջագործությունները», չունեն այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ են նրանք այդ բանն անում, այդպիսի երկրում չարժե ապրել»[2]:

Հայկական կոտորածները որակելով որպես հակահեղափոխական ուժերի մոբիլիզացման մի ձև[3], բոլշևիկների կոնֆերանսը մեկ հետևություն էր արել. «Պետք է զենքն ուղղել ժողովրդի գլխավոր թշնամու, կոտորածների գլխավոր մեղավորի դեմ: Պետք է կործանել Կարթագենը»[4]:

Բայց հեղափոխական կազմակերպությունների ձեռնարկած միջոցներն ի վիճակի չէին կանգնեցնելու ազգամիջյան կռիվը Կովկասում: Ռուս բյուրոկրատիան դեռ չահագրգռված էր, որպեսզի շարունակվի արյունալի կռիվը՝ որպես հեղափոխության ընթացքը արգելակող հակամիջոց:

1905թ. դեկտեմբերի 3-ին Թիֆլիսից Պետերբուրգ, փոխարքայության գրասենյակից ներքին գործերի մինիստրություն ուղարկած հեռագրում կային այսպիսի տողեր. «Հեղափոխական շարժման ընթացքը չի կարելի ուժեղացված համարել ինչպես ողջ փոխարքայությունում, այնպես էլ Թիֆլիսում: Ընդհակառակը՝ ներկայումս հայ-թաթարական ընդհարումների ազդեցության տակ շարժումը նույնիսկ դեպի անկում է գնացել՝ [մարդկանց] ուշադրությունը շեղելով ուրիշ կողմի վրա»[5]:

Չնայած դրան, դեկտեմբերի սկզբներից նորից լարված դրություն էր ստեղծվել Բաքվում: Դեկտեմբերի 15-ին այստեղ սկսվեց բանվորների ընդհանուր գործադուլ, որը տևեց հինգ օր: Օգտվելով այն բանից, որ գործադուլի հետևանքով նավթահանքերում թուլացել է հսկողությունը՝ թուրքերը կրակի մատնեցին հայ կապիտալիստներին պատկանող մի շարք նավթահորեր: Միաժամանակ որտեղ հնարավոր էր, նրանք զինաթափում էին հայերին:

Երբ զինված թուրքերի մի խումբ քաղաքի կենդանաբանական այգում ձերբակալել ու զինաթափել էր չորս հայ պահակների, հրաձգային գումարտակի առաջին վաշտի հրամանատար Սալտիկովը դիմել էր գումարտակի հրամանատար Սեմյոնովին և խնդրել հարց բարձրացնել գեներալ Ռիլսկու առջև՝

[1] **"Кавказский рабочий листок"**,, *N 13, 9(22)* декабря 1905г.
[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում, N 8, 3(16)* декабря 1905г.
[4] *Նույն տեղում, N 2, 23* ноября (6 декабря) 1905г.
[5] **"Революционное движение в Армении. 1905-1907гг."** Сборник документов и материалов, Айпетрат, Ереван, 1955, стр. 152-153.

ուժեղացնելու իր վաշտը՝ ինքնագլուխ զինաթափումների առաջն առնելու համար: Գումարտակի հրամանատարը չէր դիմել գեներալին, այլ զինվորներին հայ բնակիչների հոծ խմբին մատնացույց անելով, հայտարարել էր. «Սրանց համար բնավ չարժե զորք ուղարկել. չէ՞ որ սրանք էին, որ գոռում էին՝ «Կորչի՛ բանակը»»[1]:

Դեկտեմբերի վերջին տասնօրյակում Բաքվում 20-ից ավելի հայերի և թուրքերի սպանություններ տեղի ունեցան, իսկ դեկտեմբերի 31-ին ծագած հրացանաձգության ժամանակ միանգամից սպանվեց մի քանի մարդ: Հաջորդ օրը քաղաքում վերականգնվեց խաղաղությունը[2]:

Դեկտեմբերյան ազգամիջյան հուզումներից անմասն չմնաց **Երևանը**, որտեղ թուրք ղեկավարները, միացած թշնամություն սերմանող ռուս «Հայրենասերների» հետ, նախապատրաստվում էին գործը հասցնել նոր ընդհարման: Արդեն բոլորն այդ մասին գիտեին, և քաղաքը բոպե առ բոպե սպասում էր նոր փոթորկի:

Բախումը կարող էր տեղի ունենալ դեռ նոյեմբերի կեսերին, բայց հոկտեմբերից Երևանի ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակված Ցացկևիչը կտրուկ քայլերի դիմեց այն կանխելու համար: Գեներալը փոքրաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներից էր, որը չէր վարում ընդգծված հակահայ քաղաքականություն և եռանդուն գործունեություն էր ծավալել նահանգում կարգուկանոն հաստատելու համար:

Նոյեմբերին Երևանում ընդհարում տեղի չունենալը բացատրվում էր նաև նրանով, որ Բաքվի և Նախիջևանի կոտորածներից հետո այստեղ հայությունը շատ լավ էր զինվել ու կազմակերպվել և ամեն բոպե պատրաստ էր հակահարված տալ նոր խժդժություններին:

Չնայած ձեռնարկած միջոցներին, հնարավոր չեղավ չեզոքացնել թուրքերի հարձակման վտանգը: Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբության պարտության լուրն առնելուց հետո թուրքերը դեկտեմբերի 15-16-ին Երևանի մեյդանում մի շարք հարձակումներ գործեցին անզեն հայերի վրա: Սպանվեց շուրջ երեք տասնյակ բնակիչ, վիրավորվեց ավելի քան 50-ը: Ավազակային այդ հարձակումից հետո ելուզակները քաշվեցին իրենց թաղերը և ամրացրին դիրքերը: Երևանի հայկական ինքնապաշտպանության կոմիտեն զինված ջոկատներին հրաման արձակեց՝ թուրքերի նոր հարձակման պարագային նույնպես ոչ մի պատասխան չտալ, մինչև որ չիջեցվի համապատասխան հրահանգ: Այդ «տարօրինակ» կարգադրության պատճառն այն էր, որ ամենափոքր իսկ ընդհարման ժամանակ իշխանությունները լուրեր էին տարածում (հեռագրով, թերթերին ուղարկած թղթակցություններով), թե հայերն են թուրքերին կոտորում, հետևաբար՝ մեղավորը հայերն են:

[1] **"Кавказский рабочий листок"**, N 5, 29 ноября (11 декабря)1905г.
[2] **«Արշալույս»**, N 4, 7 հունվարի 1906թ.:

Դեկտեմբերի 17-ին թուրքերը նոր հարձակում սկսեցին, որին զոհ գնացին մեծ թվով հայեր: Զինված մարտիկները, ատամները սեղմած, լուռ ականատես էին, քանի որ չարունակում էր գործել իջեցված հրահանգը: Հիվանդանոցը լցվեց սպանվածներով ու վիրավորներով, որոնց թվում չկար ոչ մի թուրք: Հիմա այլևս չէին կարող մեղքը ձգել հայերի վրա: Պարզ էր այլևս, թե ով է մեղավորը: Վերջապես, գոնե մեկ անգամ, Երևանից լուրեր հաղորդվեցին, թե թուրքերն են նախահարձակ եղել:

Ոգեշնչված իրենց անպատիժ գործողություններով՝ ելուզակները մի քանի ժամ հետո նորից հարձակում ձեռնարկեցին, այս անգամ՝ փոստի շրջանում: Հայկական ջոկատները բոլոր դիրքերից կրակ բացելու հրաման ստացան: Երեք գիշեր ու ցերեկ թուրքական թաղերը անընդհատ խաչաձև կրակի տակ էին: Տեղ-տեղ մաքրվեցին ամբողջ թաղեր, ռումբերով քարուքանդ արվեցին թշնամու բազմաթիվ ամրացված դիրքեր:

Մեկշաբաթյա դադարից հետո, դեկտեմբերի 29-ին, Երևանում նորից ծայր առավ հրացանաձգություն[1], որը դադարեց հաջորդ օրը, բայց շատ չանցած՝ դեկտեմբերի 31-ին, կրկին վերսկսվեց[2]: Հայերի հզոր կրակահերթերին ու գրոհներին չդիմանալով՝ թուրքերն աղաչանքով դիմեցին Երևանի նահանգապետին՝ խնդրելով միջամտել և դադարեցնել կռիվը:

Տեսնելով, որ հայերն ի վիճակի են հաղթելու քաղաքի ողջ թուրքությանը, իշխանություններն իրար անցան, զորք հանեցին փողոցները և դադարեցրին կրակը: Մեջտեղ եկան ազդեցիկ մոլլաները և հայ հոգևորականների հետ «հաշտություն» կնքեցին:

Զինված ընդհարումները շարունակվում էին մի շարք գավառներում: Դեկտեմբերի կեսերին Դարալագյազի թուրքերի կողմից հարձակումների ենթարկվեցին Խաչիկը, Ռինդը, Մալիշկան և ուրիշ հայկական գյուղեր: Հարձակումները հետ էին մղվում մեծ դժվարությամբ, քանի որ խիստ պակասում էին զենքն ու զինամթերքը:

Դարալագյազի թուրքական բավականին մեծ գյուղերից Հորսը հարձակումների նախաձեռնությունը վերցրել էր իր ձեռքը: Հայերը որոշեցին ուժգին հարված հասցնել այդ ավազակային որջին: Տարբեր գյուղերից հավաքված զինված խմբերը հարձակվելով Հորսի վրա՝ իսպառ ավերեցին այն:

Գավառի հայերի պատգամավորությունը 1905-ի դեկտեմբերի 5-ին հասել էր Թիֆլիս՝ զենք խնդրելու և իրենց գյուղերը թուրքերից պաշտպանելու համար: Նրանք ասում էին, թե պատրաստ են տալու իրենց ողջ ունեցվածքը, միայն հրացան ունենան: Գյուղացի պատվիրակները պատմում էին, որ Երևանի փոխնահանգապետ Կովալյովը տնտեսապես իսպառ քայքայել է գավառի 12 գյուղեր՝ Հորսի տուժած թուրքերին վարձատրելու համար, ամեն

[1] **«Արշալույս»**, N 3, 5 հունվարի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 9, 15 հունվարի 1906թ.:

տնից վերցնելով 10-ական ռուբլի, և դա այն դեպքում, երբ կրած ահռելի կորուստների դիմաց ոչ մի հայ փոխհատուցում չի ստացել: Պատվիրակությունը Թիֆլիսից վերադարձավ ձեռնունայն: Հույսը սեփական բազուկներն էին[1]:

Անհանգիստ էր Շուշիի գավառը: Գավառի երկրորդ բաժնի պրիստավ Ա. Միրզոյանը և ռոտմիստր Իկոնիկովը դեկտեմբերի 25-ին Եվլախ կայարանից միասին դուրս էին եկել՝ մեկնելու իրենց ծառայության վայրերը՝ առաջինը Ղազար գյուղ, երկրորդը՝ Հադրութ: Աղդամի և Ֆիր-բուլաղի միջև թուրքերը, նրանց կանգնեցնելով, կառքից դուրս են քաշում և կտրում Միրզոյանի գլուխը: Իկոնիկովի ականջները կտրելուց հետո սպանում են նաև նրան: Հայ պրիստավի գլուխը վերցնելով և թողնելով սպանվածների դիակները, չարագործներն անհետանում են[2]:

Դարձյալ թուրքերի նոր հարձակումների թիրախ դարձավ հերոսական Ղարաղշլաղը:

Դեկտեմբերի 30-ին թուրքերը և քրդերը, այս անգամ ավելի մեծ զանգվածներով, այդ թվում հեռավոր գյուղերից եկած օգնական ուժերով, վճռական հարձակման են դիմում Ղարաղշլաղի վրա: Գյուղախումբը պաշարվեց բոլոր կողմերից: Սկսված կատաղի կռիվը տևեց մի ամբողջ օր և վերջացավ թուրքերի գլխապատառ փախուստով[3]: Հետապնդելով հրոսակախմբերին՝ ղարաղշլաղցի զինյալները խուժեցին շրջակա մի քանի թուրքական գյուղեր և ավերելուց հետո վերադարձան:

Թուրքերը և քրդերը, գազազած այս անհաջողություններից, անցան գաղտագողի անհատական սպանությունների, որին զոհ գնացին տասնյակ ղարաղշլաղցիներ: Հատկապես ցավալի էր 13 ղարաղշլաղցի պատանիների սպանությունը, որոնք խմբով դուրս էին եկել զբոսանքի և ընկել թփերի տակ թաքնված թուրքերի ձեռքը: Այդ պախարակելի գործողությունները յուրացրին ղարաղշլաղցիները, որոնց վրեժխնդրությանը զոհ գնացին ոչ քիչ թվով թուրքեր և քրդեր:

Բոլոր հարձակումները հետ մղած Ղարաղշլաղը առաջվա պես բարձունքներից հսկում էր Գորիս-Շուշի ճանապարհի անվտանգ երթևեկությունը:

Դարձյալ արյունալի բախումների ասպարեզ դարձավ Զանգեզուրը: Դեկտեմբերի 17-ին Ջիջիմլվեցի թուրքերը քշեցին-տարան Գորիսի Տեղ գյուղի նախիրը: Իրենց անասունները հետ բերելու համար գյուղացիները հարձակվելով ավերեցին վերին և ներքին Ջիջիմլու գյուղերը՝ սպանելով 15 թուրք: Հաջիլարի թուրքերը տարան Գորիսի Խոզնավար գյուղի 100 գլուխ տավարը և գերեցին երկու հոգու: Ի պատասխան՝ խնածախցիները հարձակվեցին Հաջիլարի վրա, կռվում սպանեցին հինգ հոգու և, նախիրը հետ բերելով, հանձնեցին

[1] «Դրոշակ», N 2(168), փետրվար, 1906, էջ 29:
[2] «Արշալույս», N 4, 7 հունվարի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 3, 5 հունվարի 1906թ.:

խոզնավարցիներին: Դեկտեմբերի 21-ին թուրքերը շրջապատեցին Գերենզուր գյուղը, բայց, հանդիպելով ուժգին դիմադրության, ստիպված եղան պաշարումը վերացնել[1]:

Առավել կատաղի կռիվներ տեղի ունեցան Զանգեզուրի Սիսիանի գավառամասում:

Ինչպես ամենուրեք, այստեղ նույնպես հրոսակախմբերի կազմակերպմանը մասնակցում էին կիսավայրենի թուրք ազնվականության ներկայացուցիչները՝ բեկերը, որոնք թալանում և սպանում էին կարիքից կամ վրիժառությունից, կամ էլ պարզապես ավազակի «կտրիճություն» ցուցաբերելով:

Սիսիան-Գորիս ճանապարհի վրա ընկած Աղուդի և Վաղուդի թուրք գյուղերի ավազակախմբերը, փակելով ճանապարհը, կատարում էին սպանություններ ու կողոպուտներ: Դեկտեմբերի 23-ին, երբ կազակները զորքի գույքը գրաստներով Գորիսից տեղափոխում էին Սիսիան, Աղուդի գյուղի թուրքերը հարձակվում են, կողոպտում ողջ գույքը և սպանում կազակներին ուղեկցող մի գորիսեցու: Դեկտեմբերի 25-ին հայերը հարձակվում են Աղուդիի վրա և պաշարում: Սկսվում է գրոհը: Պաշարված ցեղակիցներին օգնության են գալիս շրջանի Շաքի և ուրիշ գյուղերի թուրքերը: Դեկտեմբերի 23-25-ին Աղուդի և Վաղուդի գյուղերից կատարված ուխտադրուժ հարձակումների և սանձազերծած կռիվների ընթացքում սպանվեց 22 հայ և 190 թուրք[2]:

Տալով սպասածից մեծ զոհեր՝ հայերը որոշեցին թողնել Աղուդի գյուղի պաշարումը: Այդ նահանջը խրախուսիչ ազդեցություն ունեցավ թուրքերի վրա և նրանց մղեց նոր ոճիրների՝ այս անգամ Որոտան գետի ձորահովիտներում գտնվող գյուղերում:

Այս հովիտներում էին գտնվում Որոտ, Իրիմիս, Բահարլու թուրքաբնակ, դեպի արևմուտք ձգվող Դարաբասի ձորում Շամբ ու Դարաբաս հայ-թուրք խառը բնակչությամբ և զուտ հայաբնակ Լոր, Գետաթաղ, Լծեն, Շինաթաղ գյուղերը:

Նշված թուրքաբնակ ու թուրքախառն, ինչպես և Աղուդի ու Վաղուդի գյուղերը, ունեին անցյալի բազմազան հիշատակներ: Հարյուրամյակների ընթացքում թուրքերը աստիճանաբար թափանցել են Որոտան գետի միջին հոսանքի տարածքները, հայերի մի մասին դուրս մղել իրենց բնակավայրերից, մյուսներին կրոնափոխ արել և թուրքացրել:

Աղուդի և Վաղուդի գյուղերի դեպքերն արձագանք ունեցան Դարաբասում (215 տուն թուրքեր, 36 տուն հայեր) և Շամբում (35 տուն հայեր, 20 տուն թուրքեր):

Դարաբասի հայ գյուղացիներն ամեն կերպ խուսափում էին թուրքերի հետ

[1] «Արշալույս», N 6, 12 հունվարի 1906թ.:
[2] Նույն տեղում:

ընդհարվելուց, ուստի որոշում են գյուղի քահանա տեր Մկրտչի գլխավորությամբ պատգամավորություն ուղարկել գյուղի երևելի թուրքերի մոտ:

Դեկտեմբերի 26-ին Դարաբասի բեկերից մեկի տանը հավաքվել էին թուրք երևելիները՝ զինված: Բեկի հրավերով այնտեղ գնացին տեր Մկրտիչը և տարիքն առած ուրիշ հինգ հայեր: Խորհրդակցության պահին թուրքերը սպանում են քահանային, բայց նրա հետ եկած հայերին հաջողվում է դուրս փախչել: Նրանց հետևից անմիջապես դուրս են գալիս նաև զինված թուրքերը և սկսում ատրճանակներով ու հրացաններով գետին տապալել պատահած հայի, այդ թվում՝ կանանց ու երեխաների: Հայերը փակվում են տներում և սպասում իրենց վախճանին: Բարեբախտաբար, մոտակա հայկական գյուղերից հասնում են օգնական ուժեր: Ներխուժելով Դարաբաս՝ հայերն անում են նույնը, ինչ արել էին թուրքերը: Վերջիններիս մեծ մասը փախչում է գյուղից, իսկ մնացածները պատսպարվում են երեք մեծ տներում, այդ թվում՝ նաև այն բեկի տանը, որտեղ սպանվել էր տեր Մկրտիչը: Տներում փակված դարաբասցի հայերը, ոգեշնչված նրանից, որ եկել են օգնական ուժեր, դուրս են թափվում փողոց, կողոպտում ու հրդեհում թուրքերի տները, ապա հարձակվում այն երեք տների վրա, ուր այս անգամ պատսպարվել էին թուրքերը՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ, ծերեր: Նրանք գազազած ու մոլեգնաբար կատարում են այն, ինչը հատուկ էր իրենց թուրք հարևաններին. հրդեհում են երեք տները՝ այնտեղ եղած մարդկանցով: Կրկնվում է Մինքենդը՝ այս անգամ թուրքերի համար:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 27-ին, Դարաբասի վրա հարձակում գործեցին Աղուդի և Վաղուդի գյուղերի թուրքերը: Այս անգամ էլ փախան հայերը, և թուրքերը թալանեցին ու հրդեհեցին նրանց տները: Այդպիսով, փոխադարձ ատելության ու վրեժխնդրության արդյունքում ամբողջ գյուղը վերածվեց ավերակույտի:

Դարաբասի թուրքերի կորուստը ահռելի էր. նրանցից սպանվել էր 278 մարդ[1]: Հայերը նույնպես զգալի կորուստներ էին ունեցել:

Եվ այսպես, երկու հարևան ժողովուրդները շարունակում էին միմյանց անխնա կոտորել: Ինչպես Մինքենդի հայերի սոսկալի կոտորածը, այնպես էլ Դարաբասի թուրքերի արյունալի ջարդը չարժանացան որևէ լուրջ քննության: Ամեն ինչ վերջացավ նրանով, որ ոստիկանության ներկայացուցիչները ինչպես Մինքենդում, այնպես էլ Դարաբասում կազմեցին արձանագրություններ և իրենց գործը համարեցին ավարտած:

Սիսիան, Աղուդի և Դարաբաս գյուղերի ցնցող դեպքերը վրեժխնդրության ալիք բարձրացրին Սիսիանի շրջանի թուրքերի մեջ, որոնք ծրագրեցին պատասխան կործանիչ հարված հասցնել հայկական գյուղերից որևէ մեկին: Եվ ընտրությունն ընկավ Անգեղակոթի վրա:

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ. 71:

1906թ. հունվարի 6-ի առավոտյան, երբ Անգեղակոթի հայերը կատարում էին ծննդյան հանդեսը, հանկարծ աղմուկով ու հրացանաձգությամբ գյուղի վրա հարձակվեց թուրքերի մի մեծ բազմություն՝ ավելի քան 1000 զինված մարդ, որոնք խմբվել էին Աղուդի, Վաղուդի, Որոտ, Շաքի և այլ գյուղերից: Ջարդարարների հետ եկած մի մոլլա հավատակիցներին անընդհատ սրբազան կռվի կոչ էր անում:

Թուրքերին, սակայն, չհաջողվեց հանկարծակի բերել անգեղակոթցիներին: Արագորեն հավաքելով ուժերը՝ նրանք անմիջապես դուրս եկան թշնամու դեմ, որը, չդիմանալով ուժգին գրոհին, փախուստի դիմեց՝ թողնելով բազմաթիվ սպանվածներ և վիրավորներ:

Գորիս եկած Պետերբուրգի "Новое Время" թերթի թղթակիցը Շուշիից հեռագրով խմբագրությանը հաղորդում էր.

«Զանգեզուրի գավառը թողնված է բախտի քմահաճույքին: Ամեն կողմ կոտորած է. հարյուրավոր մարդկանց սպանությունները սառեցնում են մարդու արյունը, սարսափ ձգելով խաղաղ բնակչության մեջ: Օգնություն չկա, ադմինիստրացիան անզոր է, անիշխանությունը՝ կատարյալ: Ցրտից ու քաղցից հալածված կազակները թողել են պահակատեղերը և հեռացել: Կենսական անհրաժեշտ մթերքներ չկան: Շուշիի ճանապարհը փակ է, փոստը կանգնած է, գեներալ-նահանգապետին ուղղած բոլոր հեռագրերը մնում են առանց պատասխանի: Բոլոր մասերի պաշտոնյաներն իրենց ընտանիքներով և խաղաղ բնակչությունը, գտնվելով ծայրահեղ վտանգի մեջ, աղաչում են կառավարությանը պաշտպանել իրենց կյանքը զորքերով և ազատել իրենց անլուր սարսափներից»[1]:

Անհանգիստ էր նաև ուրիշ գավառներում: Դեկտեմբերի 23-ին «Արշալույս» թերթին գրած նամակում նշված էր. «Այսօր կամ վաղը Եղիգարովների առաջնորդությամբ սպասվում է հարձակում Շուլավերի վրա»[2]: Իսկ դեկտեմբերի 29-ին Եղիշե վարդապետը Նուխիից նույն թերթի խմբագրությանը հայտնում էր. «Դալի-Ալին և ուրիշ թուրքեր, հավաքված Գանձակի և Արեշի գավառներից, մտադիր են մեծ խմբերով հարձակվել Արեշի և Նուխվա գավառների վրա»[3]:

Դեկտեմբերին կոտորածները, ավերն ու թալանը կատաղի ընթացք ունեին հատկապես երկաթգծերի շուրջն ընկած տարածքներում: Բաքվից Գանձակ ու Թիֆլիս, Թիֆլիսից Ալեքսանդրապոլ, Երևան ու Նախիջևան գնացքները ենթարկվում էին հարձակումների և ավերի: Մի քանի տեղերում զինվորների ու ժանդարմների աչքի առաջ վագոններից հանել էին հայերին և կոտորել: Կողոպուտն անհաշիվ էր: Արյունի և ավերի մի փոթորիկ էր գործում: Ամբողջ գծի

[1] "Новое Время", 4 января 1906г.
[2] «Արշալույս», N 1, 1 հունվարի 1906թ.:
[3] Նույն տեղում:

վրա երկու ժողովուրդների միջև կատարյալ պատերազմ էր:

Հայերի տարած հաղթանակների շնորհիվ, 1905-ի վերջերին երկու կողմերի կրած վնասները հավասարվում էին: Հասել էր այն պահը, երբ հայերը չէին, որ հեռագրերով զորք էին խնդրում (քիչ բացառություններով), այլ՝ թուրքերը:

Երկիրը թևակոխում էր 1906 թվականը: Ինչպիսի՞ կլինի այդ տարին, ի՞նչ անակնկալներ է սպասվում ժողովրդին: «Արարատ» հանդեսը փորձում էր տալ հարցի պատասխանը.

« ... Մի առ մի թվել այն բոլորը, ինչ անցավ 1905 թվականի ընթացքում, ... ընդգրկել մարդկային օվկիանոսի այն հսկայական փոթորիկը, որ տեղի ունեցավ և դեռ ... շարունակվում է Վլադիվոստոկից սկսած մինչև Վիլնո և Արխանգելսկից սկսած մինչև Ջուլֆա - անհնարին բան է, որովհետև Ռուսաստանն ամբողջ քառասուն տարի այնքան չի ապրել և գործել, որքան ապրեց և աշխատեց 1905 թվականի ընթացքում և հանձնում է այդ հսկայական փոթորկած երկիրը 1906 թվականին: Միմյանց շնորհավորելով արյունոտ թվականի վերջը և նորի սկիզբը՝ մաղթենք, որ ջախջախվի եսական շահասերների թունավոր հիդրան և ազատության ու խաղաղության արշալույսը բացվի ընդարձակ Ռուսաստանի վրա, որի ամենատանջված զավակներն ենք նաև մենք և որը դարերի ընթացքում սիրելի մայր էր բոլորիս համար՝ մինչև Գալիցիաների և Լոբանովների խելացնոր քաղաքականությունն ու նրանց սերմանած որոմը...»[1]:

Այն ժամանակ, երբ, մի կողմից, ռուսական մեծ հեղափոխությունը շարունակում էր ցնցել Կովկասի հասարակական-քաղաքական կյանքը և, մյուս կողմից, այստեղ իսկական պատերազմ էր գնում կովկասահայերի և կովկասյան թուրքերի միջև, սահմանից անդին՝ Արևմտահայաստանում, հայ ժողովրդի թուրքահայ հատվածը առաջվա պես ենթակա էր օսմանյան պետության անլուր հալածանքներին և գործադրում էր գերմարդկային ճիգեր՝ գոյատևելու համար:

[1] «Արարատ», N1, հունվար, 1906, էջ 20-21:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԼԱՑՆԱԾԱՎԱԼ ՈՃԻՐՆԵՐ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԺՈԽՔՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սասունի 1904թ. ապստամբության պարտությունից հետո Թուրքահայության համար համիդյան ճնշումների ու բռնությունների նոր շրջան էր՝ առավել սոսկալի ձևերով ու աննախադեպ արհավրալի հետևանքներով: Այդ ժամանակաշրջանի հայության անօրինակ տագնապները համեմատելի են միայն 1895-1896 թվականների մղձավանջի հետ:

Սուլթանը և նրա կառավարությունը թեև երազում էին կրկին յաթաղանի բերան տալ հայությանը, ինչպես արվել էր դրանից տասը տարի առաջ, բայց եվրոպական հասարակական կարծիքի կողմից դատապարտելու նոր ալիքի բարձրացման վտանգը փոխեց հայության հետ բացահայտ արյունալի հաշվեհարդարներ տեսնելու նախկին գործելաձևերը և որդեգրեց նոր քաղաքականություն՝ հարստահարումների ու բռնությունների, սոսկալի հարկերի ու սովի, բանտային տանջանքների ու մասնակի ջարդերի անօրինական սանձազերծման միջոցով, Եվրոպայի աչքից հեռու, փոքրասիական խորքերում տառապող հայության համար ստեղծել այնպիսի անտանելի պայմաններ, որպեսզի նա «կամավոր» ու անաղմուկ հեռանա իր երկրից:

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐԻ ՄԵՋ

Մեկ այստեղ, մեկ այնտեղ տեղի էին ունենում հայերի մասնակի ջարդեր: Թուրք զինվորները, զապթիեն, քուրդը թե ջանբեզարը ցանկացած պահին հայի արյուն էին ոթում: Ամեն օր հարյուրավոր ոճիրներ էին կատարվում ոչ միայն աչքից հեռու՝ մութ անկյուններում, ձորերի ու անտառների մեջ, այլև քաղաքներում օտար հյուպատոսների աչքի առջև:

Քրդերը վարժվել էին, որ իրենց հարձակումները հայ գյուղերի ու ճամփորդների վրա անպատիժ են թողնվում: Կառավարությունն ամեն կերպ քաջալերում էր քրդերին, իսկ հարձակման ենթարկվող հայ գյուղացին իրեն պաշտպանելու, հակահարված տալու ոչ կարելիություն ուներ և ոչ էլ կամք:

Սասունի ապստամբության պարտությունից հետո այնտեղի չորս գյուղերում Տափիկում, Սեմալում, Տալվորի Վերին գյուղում և Կելիեկյուզանում կառուցվել էին զորանոցներ: Յուրաքանչյուր զորանոցում կար 400-500 զինվոր, որոնց գազանային վերաբերմունքը դեպի հայերը դժվար էր նկարագրել:

Ապստամբության ժամանակ Մշո դաշտ իջած սասունցիները վերադառնալով իրենց ավերված գյուղերը՝ սարքել էին հյուղակներ և մի կերպ պատսպարվել: Նրանցից ամեն մեկի գլխին ամեն րոպե կանգնած էր կյանքից զրկվելու վտանգը: Զինվորներն առանց պատճառի ծեծ ու ջարդ էին տալիս նրանց, իսկ փոքր-ինչ բողոքողների վրա՝ գնդակ արձակում:

Թուրքերի և քրդերի կողմից ծաղր ու ծանակը, կոտանքն ու սպանությունները ամենօրյա բաժինն էին նաև Սասնո այն հայերի, որոնք ապստամբությունից հետո մնացել էին իրենց գյուղերում:

1905թ. հոկտեմբերի 1-ին թուրքերը և քրդերը մեծ արյունահեղություն սարքեցին Տարոնի Արվառինճ գյուղում:

Շաբաթ օր էր: Արշալույսը դեռ նոր պիտի բացվեր, երբ մեծաթիվ թուրք զորքը չորս կողմից պաշարեց Արվառինճը: Շուտով զորքին օգնության եկան պալաքցի, խութեցի, դեղձմերցի աշիրեթները՝ կրոնամոլ հաջի Ֆերոյի գլխավորությամբ և շրջակա վայրերի քրդական այլ խառնամբոխներ: Պատրվակ բռնելով, թե գյուղում ֆիդայիներ կան, 3000-ից ավելի թուրք և քուրդ խուժում են այնտեղ և սկսում անլուր քստմնելի խժդժություններ:

Սպանդից ճողոպրած գյուղացիներից մեկը «Դրոշակին» գրել էր. «Խուճապը եւ իրարանցումը սկսած էր գիւղին մէջ, ուր 120 և ավելի թշառ հայ ընտանիքներ արգելափակ մահուան կը սպասեին ... որոտումները, զինուորներու և թուրք խուժանի գոռում-գոչումը, ժողովրդի սարսափելի վայնասունը սարերը կը թնդացնէին, բայց ահռելի կոտորիչներուն երբէք գութ ու կսկիծ չէին ազդեր: Գրոհը գյուղը հասնելուն պես՝ գյուղի չորս կողմէն զորքերը հրդեհը բռնկեցուցին, եւ հայ արեան ծարաւիները ձեռնարկեցին անմեղ ու անտեր հայ ժողովուրդը ջարդելու, որը ողջ-ողջ հրդեհներուն կուտային, որը կը յողոտէին, որը գնդակահար կը տապալէին անխնայ՝ առանց սեռի եւ տարիքի խտրութեան ... Ջարդը կը տեւէ մինչեւ հետեւեալ առաւօտն ալ, թե գյուղի, թե կալերու եւ թե արտերու և մեծագոյն մասը տուներու մէջ»[1]:

Այդ սև օրը գազանացած թշնամին մարեց Արվառինճի ծուխը: Սպանվեց 95 տղամարդ, 22 մանուկ ու պատանի, 13 կին ու դեռատի աղջիկ[2]:

Հայերի նկատմամբ թուրքերի ոճրագործությունների և քրդերի հարստահարումների մասին նորանոր օրինակներ բերելն իմաստ չունի, քանի որ դրանք ամեն օր կատարվում էին հարյուրներով: Թուրքահայաստանի հայկական գյուղերում հեկեկանք էր, արցունք ու տնքոց: Դրությունն աղետալի էր ամենուր, վիշտը՝ բազմապատիկ, տեսարանները՝ սրտաճմլիկ: Ահռելի տանջանքներից և անհաշիվ չարիքներից գյուղացիները ելք էին փնտրում, բայց չէին գտնում:

Պատմական հետազոտությունները, ականատեսների հուշագրությունները, արխիվներում պահվող փաստաթղթերն ու վավերագրերը, վախվորած սրտաշարժ արտահայտություններով ու անպաճույճ բառերով գրած նամակները շատ բան են ասում այդ օրերի տաճկահայ արյունոտ իրականության մասին՝ ընթերցողի առջև վերակենդանացնելով սուլթանական արյունալի ռեժիմի դժոխային պատկերները:

Անհուն տառապանքների նկարագրությունից ընթերցողը կարող է այնպիսի տպավորություն ստանալ, թե Սասունի ապստամբության պարտությունից և եվրոպական հայասերների ձեռնարկումների անհաջողությունից հետո անդառնալիորեն ջարդված էր արևմտահայ ժողովրդի պայքարի կամքը, ու նա այլևս չուներ չարին դիմադրելու ուժ և ունակություն:

Սակայն դա այդպես չէ: Հայ երիտասարդները նույնիսկ այդ դժոխային պայմաններում իրենց մեջ ուժ էին գտնում զենքով պաշտպանելու իրենց դրժբախտ ընտանիքներին ու ազգակիցներին:

1905թ. հոկտեմբերի 6-ի առավոտյան Տարոնի Արգավանք գյուղում քրդերը պաշարեցին այն տունը, որտեղ հավաքված էին հայ երիտասարդներ: Սկսվեց տաք կռիվ, որը տևեց մի քանի ժամ: Քրդերին օգնության եկավ կանոնավոր զորաց մի վաշտ: Կռիվը տևեց մինչև արևամուտ: Բոլոր հայ տղաները, տալվորիկցիներ Զաքարի և Հարութի գլխավորությամբ, քաջաբար կռվեցին մինչև վերջին փամփուշտը և ընդունեցին նահատակության պսակը:

Գործած գազանության պահին քուրդ ավատապետ Հյուսեին բեկը սպանվել էր Մշո դաշտի Զգուտի Խարս վայրում: Բեկի զինված մարդիկ որոշում են վրեժ լուծել և Հասան չաուշի գլխավորությամբ հասնում ու շրջապատում են հայ տղաներին: Ընդունելով մարտը՝ հայերը կռվում են ամբողջ օրը, որից հետո ճեղքում և դուրս են գալիս շրջապատումից:

Հայոց դիմադրական պայքարի օրինակներն անհատնում էին:

Հայը կրկին ու կրկին համոզվում էր, որ իր վիճակը թեթևացրում է երկու բան՝ կամ Հայաստանից հեռանալ, կամ մնալ հայրենիքում ամուր կառչած մայր հողին և հեղափոխականների ղեկավարությամբ շարունակել փրկության կռիվը:

Անսահման էր ժողովրդի ատելությունը դեպի իշխանությունները և դեպի տզրուկ հարևանները, որոնք ապրում էին իր արյուն-քրտինքով: Սխալ կլիներ այդ ատելության և հեղափոխական պայքարի հիմքերը որոնել միայն զանազան գաղափարական ձգտումների մեջ: Ժողովրդի կռիվը գլխավորապես ուղղված էր տնտեսական ազատություն ձեռք բերելուն:

Մի փաստաթղթում կարդում ենք. «Դուրան-Բարձրավանդակի ժողովուրդը հեղափոխական է, և հեղափոխական է, որովհետև սոված է, նրա պայքարի հիմնաքարը դասակարգային տնտեսական ազատության մի ձգտում է՝ գունա-

[1] «Դրոշակ», N3(169), մարտ, 1906, էջ 40:
[2] Նույն տեղում, էջ 41:

վորված ազգային ազատության փայլուն ներկերով»[1]:

Անհավատալի է, բայց փաստ է, որ արևմտահայ ժողովրդի համար 1905-1907 թվականները, լինելով իսկական դժբախտության տարիներ, միաժամանակ երկրի սրտում Վան-Վասպուրականում և Դուրան-Բարձրավանդակում, հեղափոխական պայքարի կազմակերպման տեսակետից արդյունավետ տարիներից էին:

1895-1896թթ. սկսած՝ Վան-Վասպուրականի և Դուրան-Բարձրավանդակի շրջաններում հայոց համար ամենաազդեցիկ կազմակերպությունը շարունակում էր մնալ Հ.Յ.դաշնակցությունը՝ Սասնո 1904թ. ապստամբության կազմակերպիչը և ղեկավարը: Նշված տեղերում գործում էին նաև արմենականները (գերազանցապես՝ Վան քաղաքում) և փոքրաթիվ հնչակյաններ (Վանում և Վասպուրականի առանձին վայրերում): Հնչակի ազդեցությունն ուժեղ էր Կիլիկիայում, Սեբաստիայի նահանգում և սևծովահայաց քաղաքներում:

Եթե ասում ենք, թե տվյալ ժամանակաշրջանում դաշնակցությունը ուժեղ էր Երկրում*, իսկ հնչակյան կուսակցությունը նշված վայրերում, ապա դա բնավ չի նշանակում, թե կայսրության հայաբնակ ուրիշ տեղերում նրանք անելիք չունեին: Ընդհակառակը, այդ կուսակցությունների ուշադրության կենտրոնում էին Թուրքահայաստանից շատ հեռու գտնվող Իզմիրը և մայրաքաղաք Կ.Պոլիսը: Հենց այս երկու քաղաքներում էր, որ 1905թ. տեղի ունեցան դեպքեր, որոնք մեծադղորդ աղմուկ հանեցին կայսրության մեջ և ցույց տվեցին, որ հայոց դիմադրությունը ջախջախված չէ:

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԴԻՆ ՊԱՏԺԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՄԱՀԸ

Թուրքական դեսպոտիզմի ծանր թաթի տակ հեծող Թուրքահայությունը բաղձանք ուներ իր զավակների ձեռքով դիտապաստ տեսնել Մեծ մարդասպանին: Դա երկար տարիներ ի վեր ոչ միայն հայ, այլև օտար հեղափոխական կազմակերպությունների երազանքն էր:

1895-1896 թվականներին Թուրքահայերի մասսայական կոտորածներից հետո հայ քաղաքական գործիչների մոտ ցանկություն էր առաջացել ահաբեկել դրանց գլխավոր հանցակրին՝ սուլթան Համիդին:

Եգիպտահայ դաշնակցականներից մեկը՝ Արտաշես Դևյանը, տարիներ առաջ նույնիսկ կազմել էր սուլթանին ահաբեկելու ծրագիր, և արդեն նախապատրաստական աշխատանք էր սկսվել հանդուգն մտադրությունը իրականացնելու համար, բայց դաշնակցության Կ.Պոլսի կ.կոմիտեն, որին ենթակա էին Հ.Յ.Դ. Եգիպտոսի կազմակերպությունները, արգելել էր կյանքի կոչել ծրագիրը[1]:

Սակայն 1904թ. Սասունի ապստամբության պարտությունից հետո Թուրքահայության դեմ սկսված լայնածավալ նոր, դաժան հաշվեհարդարները նորից վերակենդանացրին Կարմիր Գազանին տապալելու գաղափարը: Ժողովրդի բաղձանքը փոխանցվեց հայ հեղափոխական կուսակցություններից Հ.Յ. դաշնակցությանը :

Հ.Յ. դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովը (Սոֆիա, 1904թ. փետրվար-մարտ) որոշում էր ընդունել վերսկսել ցուցական գործունեությունը երկու մեծ ծովեզրյա կենտրոններում Կ.Պոլսում և Իզմիրում դրանցում կազմակերպելով «ցնցող» գործողություն[2]: Այդ նպատակով ժողովը ընտրել էր հինգ հոգուց կազմված պատասխանատու մարմին: Այդ ցուցական մարմնի մեջ առաջինն իր թեկնածությունն էր առաջարկել կուսակցության ղեկավար Քրիստափոր Միքայելյանը (Էլլեն, Էդուարդ): Ժողովականներից մեկը, աչքի առաջ ունենալով կուսակցության շահը և վտանգավոր համարելով ցուցական մարմնի մեջ մտնելու Քրիստափորի ցանկությունը, նրան առաջարկել էր հետ առնել իր թեկնածությունը: Բայց վերջինս վճռական էր գտնվել իր որոշման մեջ: Խորհրդակցելով՝ ժողովականներն ընդառաջ էին գնացել կուսակցության ղեկավարի ցանկությանը և նրան միաձայն ընտրել էին ցուցականի անդամ: Միաձայնությամբ ընտրվել էին նաև մյուս անդամները՝ Հ.Յ.Դ. Ոսկանապատի (Բաքվի) կազմակերպության ներկայացուցիչ Մարտիրոս Մարգարյանը

---

1 «Նյութեր...», հատ. Դ, էջ 54:

* Մինչև 1918թ. սկիզբը **Հայաստան** ասելով հասկացվում էր Թուրքահայաստանը: Անդրկովկասի հայկական գավառները հայերն անվանում էին Ռուսահայաստան: **Երկիր** ասելով ազատագրական շարժման տարիներին նկատի էր առնվում Հայաստանի (Թուրքահայաստանի) մի մասը միայն, այն է՝ Դուրան-Բարձրավանդակը (Մշո Դաշտ և Սասուն), Տարոն-Տուրուբերանը (Մեծագույն Տարոն), Սալոն ձորը (Բիթլիս-Ախլաթ) և Վան-Վասպուրականը: Հետագա տարիներին **Երկիր** տեղանունը սկսեց օգտագործվել Հայաստան (Թուրքահայաստան) իմաստով: Սույն աշխատության մեջ Երկիր (մեծատառով) տերմինն օգտագործված է այն իմաստով, ինչպես ընկալվում էր ազատագրական շարժման տարիներին:

---

1 Տե՛ս **«Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր»**, երկրորդ մաս, Երևան, 1995, էջ 53:

Հայակեր սուլթան Աբդուլ Համիդի տապալման ձեռնարկին («Նժույգի գործ») նվիրված սույն ենթագլխի շարադրման ընթացքում մենք օգտվել ենք հրապարակի վրա եղած ոչ մեծաթիվ աղբյուրներից, բայց մեզ համար հիմնական սկզբնաղբյուրը, այնուամենայնիվ, եղել է Հ.Յ.Դ. IV ընդհանուր ժողովի (1907թ.) քննությանը ներկայացրած տեղեկագիրը, որը պատկանում է Սաֆոյի (Մարտիրոս Մարգարյան) գրչին, թեև փաստաթղթի տակ Սաֆոյի ստորագրության կողքին դրված են նաև ձեռնարկի երկու ուրիշ մասնակիցների՝ Թորգոմի ու Քրիսի ստորագրությունները: Այս փաստաթղթից, որը ամենաարժանահավատն է (տե՛ս «Նյութեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար», հատ. Դ, էջ 194-223), օգտվել ենք լայնորեն՝ շարադրանքի ընթացքում կատարելով ուղղակի մեջբերումներ, ինչպես նաև ոչ քիչ թվով պարբերություններ՝ անուղղակի խոսքով: Օգտագործել ենք նաև «Նյութերի...» մյուս (Ա, Բ, Գ) հատորներում զետեղված խնդրո առարկային վերաբերող փաստաթղթերը:

2 Տե՛ս **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատ. Բ, տպ. «Մշակ», Պեյրութ, 1960, էջ 94:

(Սաֆո), Կ.Պոլսի դաշնակցական հայտնի գործիչ Թորգոմը, Բալկանների և Կ.Պոլսի գործիչներից Աշոտ Բագրատունին* և Հոնան (Հովնան) Դավթյանը: Բոլոր հինգ ընկերները համարվում էին **պատասխանատու**՝ կուսակցության վերին մարմինների առջև:

Առաջադրված գործողությունն իրականացնելու համար ընդհանուր ժողովը ցուցականի տրամադրության տակ էր դրել մի պատկառելի գումար՝ 119614 ֆրանկ:

Եթե ձեռնարկվելիք գործողություններն այդքան վտանգավոր էին, ապա ինչո՞ւ Քրիստափոր Միքայելյանը համառորեն ցանկացել էր մտնել պատասխանատու մարմնի մեջ, ավելին՝ գլխավորել այն:

Արյունարբու սուլթանի նկատմամբ ունեցած արգահատանքից և հոգում կուտակված անհուն վրեժի զգացումից բացի, այդ բանում ոչ պակաս դեր էր խաղացել հոգեկան այն խռովքը, որը հետևանք էր Հ.Յ.Դ. նույն երրորդ ընդհանուր ժողովում ստացած խոր վիրավորանքի:

Բանն այն է, որ նախքան ընդհանուր ժողովի կողմից պատասխանատու մարմնի ստեղծումը, դրան նախորդած նիստերից մեկում ժողովի երկու պատգամավորի՝ կուսակցության ղեկավարներ Քրիստափորի և Սիմոն Զավարյանի միջև ծագել էին որոշ տարաձայնություններ (Հ.Յ.դաշնակցության երրորդ ղեկավարը՝ Ռոստոմը, համագումարին չէր մասնակցում): Դրանցից մեկը վերաբերում էր Թուրքահայաստանում տարվելիք աշխատանքների մեթոդներին և ֆինանսավորմանը: Նիստում Զավարյանը անսպասելիորեն բարձրացրել էր նաև չնախատեսված մի հարց: Նա զայրագին տոնով պահանջել էր, որ դաշնակցության ղեկավարներն իրենք նույնպես մտնեն Թուրքահայաստան, այլ ոչ թե միայն բավականանան «երիտասարդներին կրակի մեջ նետելով»: Այդ ասելով՝ նա անմիջապես իր թեկնածությունն էր դրել Երկիր անցնելու համար:

Սիմոնի ակնարկն ամենից առաջ վերաբերում էր Քրիստափոր Միքայելյանին, որը երբեք չէր եղել Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայում:

Միք. Վարանդյանը Քրիստափորին նվիրված հուշագրության մեջ նշել է. «Նա (Զավարյանը: - Հ.Ս.) առհասարակ վերին աստիճանի անկեղծ ու անաչառ էր և, Քրիստափորին ու Ռոստոմին ջերմորեն սիրելով հանդերձ, գիտեր երբեմն ամենաչնչին պատճառներով հարձակվել նրանց վրայ, ինչպես և մյուս ընկերներու վրայ, իր բուռն խառնուածքի ամբողջ մոլեգնութեամբ»[1]:

Դյուրագրգիռ էր Զավարյանը, բայց՝ անհիշաչար ու ազնիվ: Վարանդյանը շեշտում էր, որ «ինքը ևս կը զղջար իր գործած ակամայ անարդարություններու համար, բայց առիթը ներկայանալուն պես վերստին կը դիմեր նոյն ծայրա-

* Ամենայն հավանականությամբ Աշոտ Եղիկյան - Սև Աշոտ:
[1] **«Նորք»** (Երևան), N 8-9, 1991, էջ 97:

հեղութեանց իր գերզգայուն ու դյուրագրգիռ բնավորութեան շնորհիվ»[1]:

Քրիստափորը վշտոտ հեռացավ Սոֆիայի ժողովից: Նա մեկնեց Ժնև՝ մի կարճ ժամանակ այնտեղ առանձնանալու: Հոգեկան ալեկոծումները նրան հանգիստ չէին տալիս: Դրան գումարվել էր մրսածությունը, որի հետևանքով անկողին էր ընկել: Քրիստափորի հետքերով Ժնև գնաց Սիմոնը: Նրան տանջում էր խիղճը: Պետք է Սոֆիայից մեկներ Կիլիկիա, բայց Ժնև էր եկել սփոփելու պաշտելի ընկերոջը: «Տեղ հասնելով՝ [Սիմոնը] շտապեց դեպի Քրիստափորի բնակարանը, - վերհիշել է Միք. Վարանդյանը: - Միասին էինք: Նետուեց դեպի հիվանդը, գրկեց գլուխը և երկա՛ր - երկա՛ր համբուրեց ...Այդպես կարող էր վարուել միայն ամենաքնքոյշ, ամենամտերիմ հարազատը ...Զգիտեմ, թե ինչ կը զգար այդ վայրկեանին ինքը հիվանդը և թե որքան նա կը հակազդեր այդ եղբայրական փաղաքշանքներին. նրա դեմքն անշարժ էր ...»[2]:

Քր. Միքայելյանի վշտի մեծությունը ցույց տալու համար Վարանդյանը հիշեցնում է մի ուրիշ պարագա ևս:

Հ.Յ. դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովի նախօրյակին Վառնայում հրատարակվող դաշնակցության Բալկանի կոմիտեի օրգան «Շարժում» թերթը Քրիստափորի դեմ հրապարակել էր մի քանի հոդված՝ առանց անունը տալու, բայց խիստ թափանցիկ ակնարկներով: Այդ գրությունների հեղինակներն էին խմբագիր Վարդ-Պատրիկյանը (Վարդո) և դաշնակցության նշանավոր տեսաբան Գարեգին Խաժակը: Հոդվածներում, որոնք գրված էին անբարյացակամությամբ, խոսվում էր այն մասին, որ «դաշնակցության պարագլուխ, սիրող հեղափոխականը» չի համարձակվում Երկիր մտնել՝ վախենալով իր անձին սպասվելիք վտանգներից: Քրիստափորը շատ էր ազդվել այդ հրապարակումներից և նախատինքի մի կարճ երկտող էր ուղարկել թերթին, բայց ստացել էր տպագրված հոդվածներից է՛լ ավելի վիրավորական պատասխան:

Սոֆիայի ընդհանուր ժողովում Սիմոն Զավարյանի շուրթերով պարզապես հնչել էր «Շարժում» թերթի հոդվածների արձագանքը:

Խորապես վերապրելով հասցրած վիրավորանքը՝ Քր. Միքայելյանը որոշում է դիմել մի քայլի, որը պատասխան պետք է լիներ իր անձը զրպարտողներին:

Դաշնակցության ղեկավարը պատրաստվեց անձամբ խոյանալ Մեծ մարդասպանի վրա և դիտապաստել նրան: Ծրագրած գործը մահվան ռիսկ էր: Վարանդյանը մեծագույն ափսոսանքով գրում էր, որ դաշնակցության նման հզոր կազմակերպությունը մի զարմանալի կրավորական համակերպությամբ հաշտվեց իր ղեկավարի ընդունած ճակատագրական որոշման հետ: Միայն հատ-հատ բողոքի ձայներ լսվեցին Կովկասից՝ զգաստության հրավիրելով կուսակցության արտասահմանյան մարմիններին, բայց այդ ձայները մնացին իբրև «ձայն բարբառոյ յանապատի»:

[1] **«Նորք»** (Երևան), N 8-9, 1991, էջ 97:
[2] Նույն տեղում:

Քրիստափորը Ժնևից գնացքով մեկնեց Սոֆիա՝ իր ծրագրի իրագործումը նախապատրաստելու համար: Միք. Վարանդյանն այսպես է նկարագրել բաժանման պահը.

«Ժընևի կայարանը հավաքուել էր մեծ բազմություն: Ամենուն ծանոթ չէր Քրիստափորի ուղևորութեան նպատակը. ամենքը, սակայն, գիտեին, որ նա այս անգամ պիտի նետուեր մահացու վտանգի մեջ: Սպասումի ծանր, ճնշող վայրկեաններ էին: Խոսելու սիրտ չկար: Լուռ արձանացած էինք մեր սիրելի ուսուցչի հանդեպ, որ կանգնած էր գնացքի լուսամուտին: Երբ գնացքը շարժուեց, բազմութեան մեջ լսուեցաւ բարձրաձայն հեկեկանք և հրաժեշտի այս խոսքերը. «Քրիստափո՜ր, թանկագին Քրիստափոր, մնաս բարով»... Վիշտը համակեց բոլորին: Տխուր նախազգացումը կար վեթերանի մոտալուտ մահուան ...»[1]:

Հ.Յ. դաշնակցության ընդհանուր ժողովը հրահանգել էր, որ ցուցական մարմինն ինքը պետք է որոշեր, թե ինչպիսի գործողություններ է ձեռնարկելու: Մարմինը նաև ի զորու էր իր աշխատանքների մեջ ներգրաւել օժանդակ ընկերների՝ նախապես ամենայն մանրամասնությամբ ստուգելով նրանց վստահելի լինելը: Իրեն տված լիազորությունների հիման վրա մարմինը տարբեր երկրներից հավաքագրեց, որպես օժանդակ ուժերի, ազգային հեղափոխության գործին նվիրված, բազմիցս պատասխանատու գործերում փորձված 18-20 հոգու, որոնց թվում էին Սարգիսը (Պարսկաստանից), տիկ. Միշելը և Կարոն (Բաքվից), Լևոն I-ը (Թիֆլիսից), Լևոն II-ը (Բաթումից), Մկրտիչը (Սեբաստիայից), Զահիլը (Ռումինիայից), Արամը (Եգիպտոսից), Զարեհը (Ժնևից), օր. Ռուբինա Արեշյանը (Բեռլինից), Պոլսում եղած ընկերներից՝ Քիրսը և Վռամը:

Քրիստափորն այդ վտանգավոր, բայց հրապուրիչ աշխատանքի մեջ ներգրավեց նաև օտար ազգերի տարբեր դասակարգերի պատկանող գաղափարակից ընկերների՝ բելգիացի անիշխանական (անարխիստ) Ժորեսին, կես-հունածին Սիլվիո-Ռիչչիին, գերմանացիներ Սոֆի Ռիպսին և օր. Էմիլին, ուրիշ համարձակ ու արկածասեր անհատների[2]:

1904թ. մայիսի վերջերին Աթենքում խորհրդակցության հավաքվեցին ցուցական պատասխանատու մարմնի անդամները՝ Քրիստափորը, Հոնանը, Աշոտը և Սաֆոն: Շուտով այս չորսին միացան երկու օժանդակ ընկերներ (տիկ. Միշել, օր. Էմիլ) և դրսի ընկեր Սարգիսը: Երկար տևած խորհրդակցությունը քննարկեց, թե ինչպիսի ձեռնարկ պետք է ընտրել բազմաթիվ տարբերակներից: Խորհրդակցության արդյունքում ընդունվեց որոշում, որը ստորագրվեց Քր. Միքայելյանի ձեռքով:

Որոշման մեջ նշված է, որ քննության ենթարկելով «Վիշապում» (Կ. Պոլսում - Հ.Ս.) իրագործվելիք մի քանի հնարավոր ձեռնարկներ՝ ցուցական մարմինը եկել է այն եզրակացության, որ, համաձայն եղած հնարավոր տարբերակների, պետք է ընտրել «ամենամեծը», «ամենափայլունը», այսինքն՝ իր գործելիք տպավորությամբ և հավանական հետևանքներով ամենաուժեղը: Երկար քննարկումներից հետո պատասխանատու մարմինը բոլոր հնարավոր ձեռնարկներից ընտրեց **«Նժույգի գործը»**, այսինքն՝ սուլթան Համիդի տապալումը:

Միաժամանակ «Նժույգի գործին» կցվեց Ոսկեհանքի (Իզմիրի) ծրագիրը, որը պիտի լիներ առաջինին աջակցող մի տեսակ լրացուցիչ ձեռնարկ: Այն պետք է ալեկոծեր մեծ, վաճառաշահ կոսմոպոլիտ քաղաքի անդորրությունը, հարվածեր այնտեղ եվրոպացիների ունեցած շահերին՝ օդ հանելով նրանց բանկերը և ուրիշ հաստատություններ: Դա պետք է պետություններին ստիպեր վճռական միջամտություն ունենալ հայկական հարցում: Ոսկեհանքի ծրագիրը պետք է գործադրության մեջ դրվեր միայն այն դեպքում, եթե «Վիշապի» (Կ. Պոլսի) ձեռնարկը անզոր լիներ հրավիրելու Եվրոպայի միջամտությունը և միայն առիթ հանդիսանար նոր կոտորածների[1]:

Այսպիսով՝ Կ. Պոլսում հարվածը պիտի ուղղվեր Թուրք կառավարության, իսկ Իզմիրում եվրոպական շահերի դեմ:

Պետք է ասել, որ «Նժույգի գործը», իբրև ձեռնարկ, շատերը համարում էին անկարելի բան: Նրանք նշում էին, որ նույն հարցը բարձրացվել էր նաև Հ.Յ.Դ. երկրորդ ընդհանուր ժողովում (1898), բայց միահամուռ մերժվել էր այն պատճառաբանությամբ, թե նման գործողությունն իր հետևից անխուսափելիորեն բերելու է ընդհանուր կոտորած: Նախատեսվող ձեռնարկի դեմ արտահայտվողները թվարկում էին մի շարք խոչընդոտներ, որոնց հաղթահարելը համարում էին ուժից վեր բան: Այդ խոչընդոտներից հատկապես առանձնանում էին երկուսը՝ Կ. Պոլսի խիստ պայմանները և սուլթանի անմատչելիությունը:

Ցուցականի պատասխանատու մարմնի Աթենքի խորհրդակցությունը կտրականապես հանդես եկավ **«Նժույգի ծրագրից »** հրաժարվելու ամեն տեսակ առաջարկների դեմ և կրկին ու կրկին արտահայտեց իր վճռական կամքը՝ դիտապաստել Հրեշին: Կուսակցության ղեկավարությունն առանց տատանվելու ողջունեց պատասխանատուների վճռական կեցվածքը՝ համոզմունք հայտնելով, որ ծրագրված ձեռնարկի հաջողության դեպքում այն «զարմացնելու է աշխարհը», հարգանք ու ակնածանք է ներշնչելու դեպի հայ դատը՝ նպաստելով դրա զարգացմանը: Կուսակցությունը միաժամանակ գտնում էր, որ սուլթանի գործը ուրիշ ձեռնարկներից համեմատաբար նախադասելի է նաև «եվրոպական միջամտության տեսակետից», քանզի այն իրականացվելու է «Թուրքերի սրտում», «Եվրոպային մոտիկ», նրա շահերի հետ կապված վայ-

---

[1] **«Նորք»**, N 10-12, 1991, էջ 165-166:

[2] Տե՛ս **Միքայել Վարանդեան**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ, էջ 119:

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 255:

ռում: Եվ, վերջապես, Հ.Յ.Դ.-ն համոզված էր, որ այդպիսի խոշոր գործողությունը տիրող թուրք բյուրոկրատիային և ինտելիգենցիային անխուսափելիորեն ներշնչելու է ակնածանք դեպի հայությունը՝ նրա մեջ տեսնելով բացարձակ ուժ: Նրա կարծիքով հետևանքն այն կլիներ, որ թուրքերն այլևս չէին շարունակի արհամարհել հայի գոյությունը, «ընդառաջ կգնան» նրա «նվազագույն պահանջների բավարարմանը»:

Աթենքի խորհրդակցությունից հետո պատասխանատու մարմնի կազմում տեղի ունեցավ փոփոխություն: 1904թ. հունիսին նրա կազմից դուրս եկավ Հոնան Դավթյանը, քանի որ բարդացել էր թոքախտով հիվանդ շվեյցարուհի կնոջ վիճակը, և ամուսինը ստիպված էր ամբողջ ժամանակը նվիրել նրա բուժմանը: Հետագա շաբաթներին ևս փոփոխություններ եղան. Քիրսն ու Վռամը (Պոլսից) և օր. Ռուբինան (Բեռլինից) ընտրվեցին նրա կազմում:

Երրորդ ընդհանուր ժողովի կողմից իրեն տրված լիազորությունների համեմատ պատասխանատու մարմինը, գործի մեջ ներգրավելով օժանդակ ընկերների, միաժամանակ ուրիշ նմանօրինակ ձեռնարկների համար կազմակերպել էր ***«գործադիր կոմիտեներ»****:*

Ցուցական պատասխանատու մարմնի գործունեության համար կարևոր նշանակություն ունեցավ նրա անդամների հավաքը Պիրեյում (Հունաստան), որը տևեց 1904թ. հուլիսի 17-ից օգոստոսի 10-ը: Ներկա էին բոլորը, բացի Թորգոմից, որը, չհամբերելով, արդեն մուտք էր գործել «Վիշապ» (Կ. Պոլիս): Խորհրդակցության մի շարք նիստերում մշակվեց պատասխանատու մարմնի 20 կետից բաղկացած ներքին կանոնագիրը՝ իբրև մի համառոտ ընդհանուր հրահանգ, որով ճշտվում էին գործի մեջ մտած ընկերների փոխադարձ հարաբերությունները:

Համաձայն կանոնագրի 3-րդ հոդվածի՝ ցուցական պատասխանատու մարմինը պարտավոր էր ամեն ճիգ գործադրել ձեռնարկը 1904թ. ընթացքում իրականացնելու և այն չհետաձգելու 1905թ., եթե չկան խիստ հարգելի կամ ակներև անհնարելիության առջև կանգնելու պատճառներ: Հոդված 7-ը արձանագրում էր, որ գործադիր կոմիտեները կատարյալ անկախ են ստանձնած ձեռնարկի հաջողության համար նախատեսվելիք միջոցների ընտրության մեջ: Կանոնագիրը հատկապես կարևորագույն նշանակություն էր տալիս գաղտնապահությանը: 9-րդ հոդվածը նախատեսում էր, որ օժանդակ ընկերները, աջակցելով գործին, կարող են նույնիսկ մինչև վերջին րոպեն չիմանալ պատասխանատու մարմնի կողմից ծրագրված ձեռնարկների բնույթի մասին: Հոդված 11-ում նշված էր, որ յուրաքանչյուր օժանդակ ընկեր ցուցականի հետ իր կապը պահպանում է միայն այն ընկերոջ միջոցով, որի միջնորդությամբ հրավիրվել է գործի և անծանոթ է մնում մյուս բոլոր ընկերների համար: Հոդված 14-ում ասված էր, որ ոչ մի ընկեր (պատասխանատու կամ օժանդակ), եթե անգամ ինքն իրեն կասկածված կամ վտանգված է համարում, առանց պատկանյալ մարմնի համաձայնության իրավունք չունի ստանձնած

գործից ինքնակամ հրաժարվել ու հեռանալ: Հոդված 15-ը պատվիրում էր. «Թե՛ պատասխանատու մարմնի անդամները և թե՛ օժանդակ ընկերները գործի վրա գտնված օրից, իբրև անհատներ, կտրում են դրսի աշխարհի հետ ամեն տեսակ հարաբերություններ՝ թե՛ անձնական և թե՛ գործին վերաբերող: Վերջին կարգի հարաբերությունները վերապահվում են միայն պատասխանատու և գործադիր մարմիններին»: Հոդված 18-ը նախատեսում էր. «Գործի վայրում բոլոր ընկերներն իրենց ժողովներից և պայմանավորված տեսակցություններից դուրս իրար անծանոթ են: Կարևոր դեպքերի համար ունեն, սակայն, պայմանական նշաններ, որոնք մշակվում են տարբեր ձևերով՝ ընկերների ջոկ-ջոկ խմբերում, որպեսզի մի խմբի նշանները անհայտ մնան մյուս խմբերին»[1]*:*

Կանոնագրի տակ դրված էր Քր. Միքայելյանի ստորագրությունը՝ Էլլեն:

«Նժույգի» գործողության իրականացումը պետք է անցներ երեք փուլով. 1. ռումբերի պատրաստում և փորձարկում, 2. ընկերների ապահով մուտք Կ. Պոլիս, 3. Համիդի տապալում:

Այդ փուլերը ոչ թե ժամանակագրական առումով հաջորդելու էին իրար, այլ լինելու էին ներտընդմեջ, այսինքն՝ մինչև գործողության ավարտը առաջ էին տարվելու զուգահեռաբար, միաժամանակ:

1904թ. սեպտեմբերից սկսած՝ ռումբերի պատրաստում և փորձարկումներ էին կատարվում տարբեր տեղերում, բայց հատկապես Բուլղարիայում (Վառնա, Սոֆիա, Ֆիլիպե և այլուր), Հունաստանում (Աթենք, Պիրեյ): Այլազգի հեղափոխականների, առավելապես մակեդոնացիների օգնությամբ ձեռք էին բերվում պայթուցիկ նյութեր և ռումբի պատրաստման հետ կապված մյուս պարագաները:

Խնդիրն այն էր, որ ստեղծվեին ռումբեր, որոնք չբռնկվեին լուցկուց, վառվող գլանակից կամ դրսից եկող այլ կրակի միջոցով, պայթեին ավտոմատ կերպով: Մյուս խնդիրը այնպիսի ռումբերի ստեղծումն էր, որոնք կատարելապես վստահելի լինեին անվրեպության տեսակետից:

Այն ժամանակներում ձեռնառումբը դեռ կատարելագործված և անվտանգ զենք չէր: Վառնայից, Պլովդիվից, Աթենքից և մյուս տեղերից, ուր ձեռնառումբերի փորձարկումներ էին տեղի ունենում, Սոֆիայում գտնվող Քր. Միքայելյանին հայտնում էին, թե «տասը հատ ձգեցինք, որոնցից հինգը չպայթեց, մեկը կոտրվեց, մյուսը միայն վառվեց առանց պայթելու» և այլն: Մեզ հարկավոր են ռումբեր, պատասխանում էր Քրիստափորը, որ եթե 20 հատից վերցնենք 10-ը և նետենք, տասն էլ պայթեն, որ դրանք վաղաժամ պայթման վտանգից զերծ լինեն, որ բեկորներ տան ոչ շատ մանր (որ անուժ լինեն) և ոչ էլ շատ խոշոր (որ թվով քիչ լինեն):

Քրիստափոր Միքայելյանը նույնպես անձամբ լծվել էր ռումբեր պատրաս-

[1] ***«Նյութեր...»****, հատ. Դ, էջ 221-223:*

տելու գործին: Դաշնակցության ռմբային գործի լավագույն մասնագետներից մեկը կուսակցության ղեկավարներից Ռոստոմն էր, բայց ահա այժմ այդ վտանգավոր ձեռնարկին լծվել էր նաև կուսակցության առաջին մեծության առաջնորդը: Ամենակարճ ժամկետում Քրիստափորը ոչ միայն յուրացրեց ռումբ պատրաստելու գործը, այլև դրա կատարելագործման համար մի տաղանդավոր գյուտ արեց՝ ավտոմատ գլխիկներ պատրաստեց, որոնք ամրացվում էին ռումբերի վերնամասին՝ փորձարկման ժամանակ պատահական պայթյունների վտանգից խուսափելու համար:

Ռումբերի պատրաստմանը և փորձարկումներին զուգահեռ, կազմակերպվում էր ընկերների մուտքը Կ.Պոլիս: Այս գերվտանգավոր գործը նույնպես գլխավորում էր Քր. Միքայելյանը:

Բանկ Օթոմանի գործողությունից (1896թ. օգոստոս) հետո բոլոր հայերին, լինեին տաճկահպատակ թե օտար, արգելված էր ազատ մուտք գործել մայրաքաղաք Կ. Պոլիս: Իսկ եթե օտարահպատակ որևէ հայ, հենվելով իր անցագրի վրա, այնուամենայնիվ, կարողանում էր մտնել քաղաք, ապա նա անմիջապես ընկնում էր գաղտնի ոստիկանության խիստ հսկողության տակ, նրա յուրաքանչյուր քայլը, ամեն մի շարժումը այլևս չէր վրիպում իշխանությունների սուր աչքից: Իսկ գաղտնի ոստիկանների (խալիֆաների) թիվը միայն մայրաքաղաքում 30 - 40 հազար էր: Այլ խոսքով, Պոլսի պայմանները հայերի համար դարձել էին ուղղակի դժոխային:

Կ.Պոլսի շուրջ՝ Աթենքի, Վառնայի և Սոֆիայի կողմերում հավաքված պատասխանատու մարմնի անդամները և նրանց միացած օժանդակ ընկերները՝ Լևոնը, Զարեհը, Մարտիկը, Սարգիսը, Կարոն, Մանոլը, տիկ. Միշելը, նախ զբաղվեցին գործի սկզբնական դժվարությունները հաղթահարելու հարցերով. ինչպե՞ս ապրանքները դրսից մտցնել մայրաքաղաք, ինչպե՞ս իրենք քաղաք մտնեն՝ առանց ոստիկանության մոտ կասկած առաջացնելու, ով ի՞նչ կերպ և ո՞ր գծով մտնի Պոլիս և ո՞ր ազգության անվան տակ, ներս մտնողները ո՞ւր պետք է իջևանեն և ինչո՞վ պարապեն մինչև ձեռնարկի իրականացումը: Այս և ուրիշ հարցերի լուծման համար պահանջվում էին օրեր և շաբաթներ՝ յուրաքանչյուր դեպքի հետ կապված հնարավոր ողբերգական հետևանքների մանրակրկիտ վերլուծություն, առավել ճիշտ, ասել է թե՝ անվտանգ տարբերակների ընտրություն:

Որոշ ժամանակ անց արվեցին Պոլիս մտնելու առաջին գործնական քայլերը, որոնք վերջացան անհաջողությամբ: Մաքսանենգների միջոցով փորձ արվեց Կ.Պոլիս մտցնել պայթուցիկ նյութեր, բայց դրանց երկու խմբաքանակները բռնվեցին թուրք ոստիկանների կողմից: Մի խմբաքանակը, որի մեջ «դժոխային մեքենա» էր և դրան պատկանող ժամացույց, էլեկտրական գործիքներ, հրապատիճներ (капсюлы), փորձ արվեց քաղաք մտցնել հույն մաքսանենգների միջոցով, բայց վերջիններս բռնվել էին Պոլսի սահմանին չհասած: Երկրորդ խմբաքանակը, որ բռնվեց արդեն քաղաքի մեջ, պարունակում էր

զամբյուղի մեջ տեղավորված 15 ռումբ, որը բերվել էր Վառնայից՝ մակույկով: Ձերբակալված թուրք մակույկավարը հարցաքննության ժամանակ պատմել էր, որ զամբյուղն իրեն են հանձնել հայերը:

Մյուս լուրջ պատահարը տեղի ունեցավ Բուլղարիայում: Ռումբերի փորձարկման ժամանակ այստեղ ձերբակալվեց մի քանի ընկեր: Կատարված խուզարկության ժամանակ գտնվել էին պատասխանատու մարմնի անդամների Կ.Պոլսի հասցեները, որոնք թուրք ագենտների միջոցով ընկան ոստիկանության ձեռքը: Ձերբակալվածները բարեկամ մակեդոնացի հեղափոխականների միջոցով ազատվեցին բանտից, բայց աքսորվեցին Բուլղարիայից:

Այս երկու դեպքերը ոտքի կանգնեցրին սուլթանական ոստիկանության ամբողջ կազմը, աննախադեպ ուժեղացան խստությունները հայերի նկատմամբ: Խուզարկվեցին հարյուրավոր տներ, բանտեր նետվեցին տասնյակներով մարդիկ: Հատկապես դաժան հարցաքննությունների ենթարկվեցին ձերբակալված մեծաթիվ օտարահպատակ հայեր:

Նշված պատահարները կրկին ու կրկին վկայում էին, որ մայրաքաղաք մտնելը, առավել ևս՝ մինչև սուլթանի պալատ հասնելը հարկ էր լինելու հաղթահարել համարյա անհաղթահարելի արգելքներ:

Օժանդակ ընկերներից ոմանք՝ Աշոտը, Սմբատ Խաչատրյանը և ուրիշներ, որոնք այդ պահին համարվում էին Պոլսին առավել լավատեղյակ անձեր, նույնիսկ առաջարկեցին հրաժարվել ծովով թե ցամաքով մայրաքաղաք մտնելու գաղափարից և առայժմ սպասել: Դրա հետ համաձայնել չէր կարող մեծամասնությունը: Քրիստափորը և մյուս ընկերները նոր հնարավորություններ էին փնտրում: Եվ ծնվեց մի հանդուգն տարբերակ՝ սարքել օդապարիկ և զինամթերքն առած՝ գիշերով թռչել ու իջնել քաղաքի հայաբնակ մի հատվածում: Երկար քննարկումից հետո ընկերները հրաժարվեցին այդ մտքից: Առաջարկ եղավ նաև զինված մարտիկների մի մեծ խմբով հարձակվել մայրաքաղաքի մատույցները պաշտպանող ոստիկանության ու զորքի վրա, ճեղքել պաշտպանության շղթան և, թեկուզ մեծ կորուստների գնով, ռումբերով մտնել քաղաք: Այդ առաջարկը նույնպես երկար քննարկելուց հետո, ի վերջո, մերժվեց: Եղան Կ.Պոլիս թափանցելու ուրիշ առաջարկներ ևս, որոնք նույնպես քննարկվեցին ու մերժվեցին:

Հարկ չհամարելով պատմել, թե ինչպիսի ահռելի դժվարություններ ու ահավոր վտանգներ հաղթահարեցին ձեռնարկի մեջ ընդգրկված ընկերները Կ.Պոլիս մտնելու համար, միանգամից ասենք, որ 1904թ. հոկտեմբեր - դեկտեմբերին բոլորն արդեն քաղաքի ներսում էին:

Իր հերթին Քր. Միքայելյանը Սոֆիայից 1904թ. աշնանը կարողացավ Սամուել Ֆայն գերմանա - հրեական ծագմանունով անցագրով թափանցել Ոսկեհանք (Իզմիր)՝ անձամբ ծանոթանալու այնտեղ տարվող նախապատրաստական աշխատանքներին:

Բանն այն է, որ գործերը Ոսկեհանքում լավ չէին գնում բացբերանու-

թյուն, անտեղի, շռայլ ծախսեր, անկարգապահություն: Այդտեղի ընկերները փորձում էին ձեռնարկն իրականացնել՝ առանց հաշվի առնելու երկրի շարժումները, մինչդեռ Հ.Յ.Դ. երրորդ ընդհանուր ժողովը որոշել էր ինչպես «Նժույգի գործը», այնպես էլ Ոսկեհանքի ծրագիրը ծառայեցնել հայկական դատին: Քրիստափորը Ոսկեհանքում լարված աշխատանքների էր լծվել՝ վերացնելու արդեն վտանգավոր չափեր ընդունած թերությունները: Անհրաժեշտ հրահանգները նա զուգորդում էր իրավիճակի քննախույզ ուսումնասիրության հետ՝ պարզելու համար թերությունների և բացթողումների պատճառները:

Մայրաքաղաքի իրական պայմանների թելադրանքով շատ շուտով վրիժառուների գլխից հօդս ցնդեցին օդապարիկի հետ կապված և մյուս բոլոր ոչ իրական գաղափարները, և աստիճանաբար նրանց մոտ սկսեց ուրվագծվել առաջիկա գործողության պատկերը: Շաբաթների և ամիսների ընթացքում քայլ առ քայլ պարզվեցին նաև ձեռնարկի միջոցներն ու ձևերը:

Այժմ, քաղաքում հայտնվելուց հետո, ընկերների առջև ամբողջ հասակով կանգնեց հիմնական հարցը՝ ինչպես կատարել սուլթանի ահաբեկումը: Խնդիրը գերդժվարին էր, եթե նկատի ունենանք, որ միահեծան ինքնակալ բռնակալների շարքում շատ հազվադեպ է պատահել թափանցիկ մտքի տեր, խելացի ու խորամանկ այնպիսի մեկը, ինչպիսին օսմանյան Կարմիր Սուլթանն էր: Ահա թե ինչու վրիժառուներն այս անգամ ևս սկսեցին քննարկել ամենազանազան տարբերակներ և, ի վերջո, դրանցից մնացին երկուսը՝ այսպես կոչված «տարեկանի» և «ուրբաթի» տարբերակները:

Ավանդաբար տարին երեք անգամ սուլթանը մեծաթիվ զորքի և ոստիկանության պաշտպանությամբ Ելդիզից դուրս գալով՝ Պեշիկ Թաշի փողոցով գնում էր Տոլմա-Բախչա պալատը, այնտեղից ծովով, մարտանավերի պաշտպանությամբ և տասնապատկված սվինների շարքերի տակ, անցնում էր Թոփ Կափու՝ ներկա գտնվելու Խրխայի Շերիֆի տոնին: Դեպի նստավայր վերադարձը սուլթանը կատարում էր նույն մեծաթիվ ուժերի պաշտպանության տակ[1]:

Տարեկան երեք անգամ սուլթանի դուրս գալն իր պալատից հնարավորություն էր ստեղծում, Քր. Միքայելյանի, օր. Ռուբինայի և էլի ուրիշ մի քանի ընկերների կարծիքով, նրա դեմ մահափորձ կատարել Պեշիկ Թաշի փողոցով անցնելիս: Այդ նպատակով նշված փողոցի՝ դեպի պալատ թեքվող անկյունի մոտ մեծ դժվարությամբ վարձվեց մի երեքհարկանի տուն՝ մի շինություն, որն ուներ 16 լուսամուտ: Դա կնշանակեր, որ միանգամից կարելի էր նույնքան ռումբ նետել փողոցի վրա՝ այնտեղով սուլթանի անցնելու ժամանակ, այն էլ խոշոր ռումբեր: Վրիժառուների կարծիքով, այդ կերպ կարելի կլիներ սուլթանական ամբողջ շքախումբը Նժույգի (Համիդի) հետ ռումբերի տարափի տակ

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 196, 203:

ձգել և այդպիսով անպայման ապահովել ձեռնարկի հաջողությունը: «Տան ներքևի հարկն էլ կարող ենք լցնել մեծաքանակ պայթուցիկ նյութերով, - ասում էին նրանք, - և երբ շրջապատվենք, վերջին վայրկյանին շինությունը մեզ հետ օդը կհանենք»[1]:

Մի քանի օրում հաջողվեց տուն ներս բերել 204 կգ մելինիթ, մի քանի հարյուր հրապատիճ, պատրույգներ, էլեկտրական հաղորդիչներ և զանազան անհրաժեշտ այլ պարագաներ:

Բայց գործողության ծրագրի **տարեկան տարբերակի** հակառակորդների թիվը գնալով աճում էր: Սրանք պատճառաբանում էին, որ տարբերակը ինչպես հարկն է ուսումնասիրված չէ, որ իրենցից ոչ ոք դեռ չի տեսել, թե ինչ կերպ է կատարվում տարեկանի արարողությունը, փողոցով ինչպես են շարժվում շարքերը, ինչ արագությամբ է ընթանում սուլթանական կառքը՝ փա՞կ, թե՞ բաց: Եթե փակ, ապա անհնար է իմանալ, թե կառքերից որի մեջ է գտնվում արյունարբուն և այլն:

Տարեկանի ծրագիրը, ի վերջո, մղվեց հետին գիծ, և քննարկման համար մնաց միայն մեկը՝ դժվարին երկունքով ծնված **ուրբաթի ծրագիրը** :

Դարձյալ ավանդաբար յուրաքանչյուր **ուրբաթ** կեսօրին սուլթանը Ելդիզ պալատից դուրս գալով՝ իջնում էր պալատին կից, հազիվ 100-150 քայլի վրա գտնվող Համիդիե մզկիթը: Առավոտյան ժամը 10-ից սկսած՝ պալատը շրջապատող ամբողջ թաղը, ինչպես և Պեշիկ Թաշի փողոցը լցվում էր մեծաքանակ հետևակ և հեծելազորքով: Թաղով անցնող բոլոր փողոցների մուտքերը հրսկում էին հատուկ վարժեցված զորամասեր: Սովորաբար այդ հանդիսավոր արարողությանը մասնակցում էին սահմանափակ թվով թուրք, այբան և քուրդ քաղաքացիներ, իսկ հայերի մասնակցությունն ընդհանրապես արգելված էր:

Պալատից մզկիթ տանող լայն ճանապարհի ամբողջ երկարությամբ կանգնում էր երկշարք հետևակ զորք՝ պալատական և մայրաքաղաքի զանազան գնդերից: Մզկիթի դեմ առ դեմ գտնվող լայն հրապարակը, որ Մարզարան անունն էր կրում, համարյա մինչև կեսը լցվում էր հեծելազորքով՝ երբեմն վեց, երբեմն ավելի շարքերով: Երբ անվտանգության ապահովման համար ամեն ինչ արված էր, սուլթանը պատրաստվում էր դուրս գալ պալատից: Վավերագրի՝ այդ պահի նկարագրությանը նվիրված հատվածում կարդում ենք.

«Սուլթանի երևալուց առաջ, երկու շարքով, 50-60 հոգի պալատից դեպի մզկիթ են ուղևորվում հետիոտն - պալատական պաշտոնյաները, բոլոր նախարարները, հրամանատարները, շեյխ ուլ իսլամը, պալատական մոլլան՝ որուն ողջունում են մեծ ակնածանքով նույնիսկ նախարարները. ապա երևում է հարեմը՝ կառքերով, հարեմի գլխավոր ներքինապետը և այլն: Ամբողջ ժամանակ պալատական նվագախումբը նվագում է մզկիթի առաջ՝ Համիդիե քայլերգը:

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 202:

Հանկարծ նվագն ընդհատվում է, և ընդհանուր լռության մեջ հնչում է փողը՝ պալատից սուլթանի դուրս գալու ազդանշանը: Այս ամենից հետո երևում է սուլթանը՝ նստած բաց կառքի մեջ՝ իր հանդեպ ունենալով զինվորական նախարարին: Նա իջնում է բավական դանդաղ, զորքը բարևի կանգնած «եաշասըն» է կանչում: Հյուրերը գլխարկները հանում են: Սուլթանը ձեռքի նշանով բարևում է հյուրերին: Նա անցնում է 15-17 քայլի վրա՝ հյուրերից և, ծռվելով դեպի մզկիթի արտաքին դուռը, մտնում մզկիթ: Վերջացնելով աղոթքը, ժամի չափ մնալով այնտեղ և ապակյա պատշգամբի հետևից դիտելով զորքերի հանդիսավոր մարշը՝ նստում է մի ուրիշ կառք՝ մենակ ու առանց կառապանի, շրջապատված նախարարներով, հետիոտն կառքի հետևից վազող նազիր-վեզիրներով դանդաղ, բարձրանում է պալատ»[1]:

Այս ամենը սելամլըքի արարողությունն էր:

Հենց ուրբաթ օրվա այս արարողության ժամանակ է, որ սուլթանի վրա մահափորձ պետք է կատարվեր: Այստեղ գործողություն կատարելը թեև ավելի դժվար ու վտանգավոր էր, բայց թվում էր՝ ավելի հուսալի: Իսկ երբ վրիժառուները սկսեցին սուլթանի պալատի՝ Ելդըզի շրջակայքի մանրակրկիտ ուսումնասիրումը, համոզվեցին՝ սուլթանն այնպես է պաշտպանված, որ հավասարազոր է «երկաթե վանդակի» մեջ գտնվելուն:

Հիրավի, անասելի ծանր էր ցուցական պատասխանատու մարմնի առջև դրված խնդիրը, որի լուծումը ոչ միայն մեծ պատիվ էր նրա անդամների համար, որին նրանք, ցավոք, չարժանացան, այլև մեծ պատասխանատվություն ողջ կուսակցության առջև:

Բայց ոչինչ չէր կարող փոխել հայ ցեղի բաղձանքն իրականացված տեսնելու անձնազոհ հայորդիների վճիռը:

Երկար քննարկումներից հետո որոշվեց սուլթանի մահավճիռն իրականացնել պայթուցիկներով լեցուն **կառքի միջոցով**, որը, հնարավոր բոլոր հնարքները գործադրելով, պետք է հասցվեր Ելդըզի հրապարակ:

Թեև Բուլղարիայում և այլուր ստեղծված ու փորձարկված ռումբերից բավական թվով ներմուծվել էր Պոլիս և Իզմիր, բայց սելամլըքի ժամանակ դրանց օգտագործման արդյունավետությունն ու հուսալիությունը լուրջ կասկածներ էին հարուցում: Դրանք կարիք ունեին կատարելագործման, հետևապես՝ նոր փորձարկումների:

Հարկավոր էր Պոլսից և Իզմիրից շտապել Բուլղարիա՝ շարունակելու և արագացնելու փորձերը:

1905թ. սկզբին Իզմիրից Բուլղարիա վերադարձավ Քրիստափորը: Տեղ հասնելով՝ նա Պոլսից եկած օր. Ռուբինայի հետ մեկնեց Ֆիլիպե, ուր Թաթար-Բազարջիկ կայարանի մոտերքը սկսեց փորձարկել պատրաստի ռումբերի առաջին շարքը: Փորձերին, բացի Ռուբինայից և Սարգսից, մասնակցում էին

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 200-201:

նաև Ֆիլիպեի մակեդոնացի ընկերներից Անտոն Գոչը և Պիոնը: Փորձերը Ֆիլիպեում տևեցին շուրջ երկու ամիս: Արդյունքները վատ չէին, բայց դեռ պակասներ կային, և Քրիստափորը հույս ուներ դրանք լրացնել վերջին փորձերով, որի համար նա ինտենսիվ պատրաստվում էր:

Ռումբերի փորձարկումներից բացի, անհրաժեշտություն առաջացավ խորհրդակցել նշանավոր որևէ մասնագետի հետ թե՛ ռմբային գործի և թե՛ կառքի մասին: Հատկապես կառքի, որը բոլորովին նոր ձեռնարկ էր. հրապարակի վրա միայն դրա գաղափարն էր, իսկ կոնկրետ գործադրման ձևերի մասին ոչինչ հայտնի չէր: Պատասխանատու մարմինը ճիշտ համարեց, որ այդ նպատակով Փարիզ և Ժնև մեկնի Քր. Միքայելյանը, որն ամեն առավելություններից զատ՝ տիրապետում էր Ֆրանսերենին:

Նախքան Արևմտյան Եվրոպա մեկնելը Քրիստափորը որոշեց ռմբային վերջին փորձերը կատարել Սոֆիայում, Կնյաժնոյ ամառանոցի մոտ, Վիտոշ լեռան բլուրների վրա:

*

* *

Ժողովրդի ծոցից ծնունդ առած հայ ազգային հեղափոխական կուսակցությունների ղեկավար գործիչների թվում առանձնանում է Հ.Յ. դաշնակցության հիմնադիր և առաջնորդ Քրիստափոր Միքայելյան մտավորականը, հեղափոխականը և կազմակերպիչը:

Տեսական պատրաստվածությամբ, կազմակերպչական տաղանդով, բարոյական մաքրությամբ ու հմայքով՝ դաշնակցության հոգևոր առաջնորդ Քրիստափորը բացառիկ տեղ է բռնում հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ նա դաշնակցության անձնավորումն էր, այլ խոսքով, նրա մեջ կենտրոնացված էր այդ կուսակցության տասնհինգ տարիների պատմությունը:

Քրիստափոր Միքայելյանը կարծես մի մարմնացած հավատ էր դեպի իր փայփայած գործը: Ուժեղ իմացականության տեր այս մեծ հեղափոխականը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք իրենց հոգու ամբողջ ուժով գիտեն կենտրոնանալ մեկ նպատակի վրա և ձգտել նրան իրենց կյանքի ամբողջ ընթացքում:

Անշո՛ւշտ, բազմաթիվ էին նրա գործերն ու հոգսերը, բայց մեկնակետը և նպատակը նույնն էր՝ հայությունը: Եվ համակված այդ գաղափարով՝ նա չէր նշմարում այլևս, թե քաղաքականապես որքանո՛վ է հնարավոր իր հետապնդած իդեալի իրագործումը: Կամ եթե անգամ նշմարում էր, այդ զգացումը թուլանում էր ու չքանում իր հիմնական իդեալի իրագործման անհրաժեշտության մղումով:

Ֆրանսիացի մեծ հայասեր, «Պրո Արմենիա» թերթի խմբագիր Պիեռ Քիյարը այսպես է արտահայտվել Քրիստափորի՝ որպես իր դավանած գաղափարին

անհունորեն նվիրված գործչի մասին.

«Իր տոմյն դեմքը, անանձնական երկար տառապանքէ մը հալած, դառնորեն կը պատմեր թե ինք զգացած էր իր մարտիրոսուած ու հալածական եղբայրներուն ամբողջ տուայտանքները, թե ինք արյունոտուած էր անոնց ամբողջ վերքերովը և լացած էր անոնց ամբողջ արցունքներովը: Բայց այդ դեմքը նույնպես կը պատմեր թե ինք անոնցմե չէր որոնց համար տանջանքը համակերպություն կը սորվեցնե և իրեններուն դեմ գործուած ամեն մեկ նոր ոճիր ալ ավելի կ'ամրացներ ու կը զարգացներ իր մեջ անխախտ որոշումը չար բաղդին չի հպատակելու և լավագույն օրեր պատրաստելու՝ այն ամեն միջոցներով, որ ինք ուներ՝ ամենեն նուրբ ու խաղաղասեր դատողություններեն մինչև հարկավոր ու օրինական բռնությունը երբ ուրիշ միջոց չէ մնացած այլևս»[1]:

Նյութական դժվարություններն ու զրկանքները ոչինչ էին Քրիստափորի համար: Անձնական կյանքի հանգամանքները, գրել է Լեոն, ոչ մի նշանակություն չունեին նրա համար: Չնայած «իր վտիտ, փխրուն արտաքինին, նա երկաթե մարդ էր: Ճիշտ երկաթե: Միայն երկաթը կարող է այդքան անհոգի սառնությամբ վերաբերվել դեպի սեփական կենսական կարիքները, դեպի զգեստի, ուտելիքի, կուշտ ու հանգիստ լինելու հոգսը...»[2]: Քրիստափորի ծայրագույն համեստությունը և պարզությունը պատմաբանը համեմատում էր Եղիշեի գեղանկարած սակավապետ հերոսների հետ: «Նրա մարմինը ծածկող հնոտիները երբեք թույլ չէին տալիս, որ այդ մարդու վերաբերմամբ որևէ նյութական, շահադիտական հասկացողություն ոչ միայն կազմվի, այլև կազմվելու հնարավորություն անգամ ունենա: Նա ապրում էր իր սեփական երգի քաղցրությունը ծծելով*: Իսկ նրա երգը, կյանքի ընթացքում, մինչև վերջը, մեկ էր՝ գաղափարը...»[3]: Ապա՝ «Սեփականություն նա չուներ. Նրա աղքատիկ բնակարանը, մաշեցնող աշխատանքով նրա հայթայթած դրամը հավասար իրավունքով պատկանում էր նաև նրա ընկերներին ու ծանոթներին: Նրա մոտ մտնում էին առանց հարցնելու, և նա ուրախ էր, որ այդպես են վարվում իր հետ: Նա ինքը քնում էր չոր հատակի վրա, որպեսզի հյուրը քնի իր մահճակալին, նրա անկողնու մեջ...»[4]:

Քրիստափոր Միքայելյանի ընկերները նրան ընդհանրապես չէին էլ երևակայում զրկանքներից դուրս: Նրա համար կարծես բոլորովին անհնարին բան էր ապրել փոքրիշատե հարմար պայմանների մեջ:

---

[1] **ԳԱԹ**, Սիամանթոյի ֆոնդ, N 252", թ. 1:
[2] Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 3, վավ. 6[3] (թերթի կտրոն):
* Լեոն նկատի ուներ պատմիչ Եղիշեի կողմից հայ հերոս կանանց նկարագրությունը, որոնց նա նմանեցնում էր անարյուն ճպուռներին, որոնք ապրում են իրենց երգերի քաղցրությամբ, կերակրի կարիք չունեն, կենդանի են մնում միայն օդը ծծելով և անմարմին էակների օրինակ են հանդիսանում:
[3] Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. N 3, վավ. 6[3] (թերթի կտրոն):
[4] Նույն տեղում:

Մշտական կարիքին ու նյութական զրկանքներին գումարվում էին ռուս կառավարության հալածանքները, բանտն ու աքսորը: Միշտ ժողովրդի հետ էր, ճնշվածների ու զրկվածների հետ: «Որքան մեծ էր նրա սերը դեպի հարազատ ժողովուրդն ու նրա դատը, – գրել է Միք. Վարանդյանը, – նույնքան հզոր էր ատելությունը դեպի այդ ժողովրդի թշնամիներն ու ամեն կարգի ցեցերը: Վերջիններու շարքին կը դասեր Քրիստափորը հայ դրամատեր բուրժուազիան, որը Թուրքահայոց մեծ ճգնաժամի օրերուն թերացավ իր տարրական պարտավորություններու մեջ, դավաճանեց հայկական դատին: ... Ասում են իբր թե ... 1905-ի մարտին լսելով Բագուի հայ-թաթարական ընդհարումներու մանրամասները և մեծահարուստ հայ բուրժուաներու կոտորածը, բացականչել էր.

- Դա արժանավոր պատիժ է մեր գծուծ բուրժուազիայի համար, որ այնքան անտարբեր էր դեպի թուրքահայոց տանջանքներն ու մեր քարոզները...Թո՛ղ այժմ իր կաշուի վրայ զգայ բռնության հարուածը, գուցե սթափուի...»[1]:

*

* *

1905թ. մարտի 4(17) -ն էր: Քրիստափորը (Էդուարդ) և նրա հետ հայ ու մակեդոնացի 10-ից ավելի գաղափարակիցներ գնում էին դեպի մերձակա Վիտոշ լեռան ստորոտը՝ փորձարկելու նոր պատրաստած ռումբը: Երբ հասնում են փորձարկման նախատեսված վայրը, նրանց մեջ տարակարծություն է առաջանում: Ոմանք գուշակելով անհաջող ելք, հորդորում են ռումբը չպայթեցնել, իսկ մյուսները տատանվում են: Քրիստափորը, սակայն, անհողդողդ էր: Նա փաստարկում է, թե նախորդող փորձերը հաջող են անցել, հետևապես պատճառ չկա տարակուսելու:

Վրա հասավ ռումբի փորձարկման պահը: Քրիստափորը բոլորին պատվիրեց հեռանալ, բարձրանալ մոտակա բլրակը և այնտեղից դիտել ռումբի պայթյունն ու նրա ավերմունքի ուժը: Բոլորը հեռացան, նրա հետ մնաց մեկը՝ դարձյալ Էդուարդ ծածկանունով հեղափոխական մարտիկ Վռամշապուհ Քենտիրյանը: Որոշված էր, որ նա է նետելու ռումբը:

Երբ ընկերներն արդեն բլրի գագաթին էին, Քենտիրյանը ձեռքը վերցրեց ռումբը և շարժում արեց նետելու: Դա տևեց մի քանի վայրկյան: Եվ հանկարծ մի ահավոր դղրդյուն ցնցեց շրջակայքը: Ռումբը պայթել էր Վռամշապուհի ձեռքին: Մխի քուլաները պատեցին չորս կողմը, ապա բարձրացավ փոշու ամպ[2]:

---

* Նկատի ունի հայերի կոտորածները Թուրքիայում 1895-1896 թվականներին:
[1] **«Նորք»**, N 8-9, 1991, էջ 92:
[2] **«Դրոշակ»**, N4 (157), 1905, էջ 51-52:

Փորձարկման տեղից հեռացած ընկերները բլրից սլացան ներքև, և նրանց աչքերի առջև բացվեց մի սոսկալի տեսարան:

Ռումբը ահագնաչառաչ ամեհի ուժով Քենտիրյանին նետել էր կանգնած տեղից բավականին հեռու: Ձյունախառն հողի մեջ նա ընկած էր արյունաթաթախ, անշնչացած: Քիչ այն կողմ ընկած էր Քրիստափորը՝ վերջին շունչը բերանին: Նրա աջ երեսը, կրծքի աջ կողմը և աջ ոտը պատառոտված էին, այլանդակված, իսկ աջ ձեռքը կտրված էր արմունկից[1]:

Երկու նահատակների դիակները ձյան մեջ ընկած մնացին երկար ժամեր՝ շրջապատված ոստիկանական պահակներով... մինչև որ պիտի պարզվեին զոհերի նահատակության հանգամանքները[2]:

Մարտի 10-ին տեղի ունեցավ նահատակների թաղումը Սոֆիայում: Թաղման թափորում մի քանի հազար մարդ կար, որոնց մեծ մասը հայ դատին համակրող մակեդոնացիներ և բուլղարներ էին: Մակեդոնական նշանավոր հեղափոխական Բորիս Սարաֆովը եկել էր իր կազմակերպության ղեկավար կազմի հետ, այնտեղ էին նաև մակեդոնական կոմիտեի անդամներ, ռուս սոցիալիստ - հեղափոխականների, հնչակյան տեղական մասնաճյուղի, դաշնակցական խմբերի ներկայացուցիչներ:

Նախքան զոհերին գերեզման իջեցնելը դամբանական ասացին Խ.Մալումյանը (Ակնունի)՝ հայերի կողմից, և Ս.Գերովը՝ մակեդոնացիների կողմից:

Իր խոսքի մեջ Մալումյանը նշում էր. «Այս դագաղի մեջ ամփոփված է հայ հեղափոխության սիրտը և հայկական մարտնչող երիտասարդության փայփայանքը: Գրչի վարպետ չէր մեր աննման ընկերը կամ չանթահարող ճառասաց, և ոչ էլ հայդուկների ղեկավար՝ Արյան երկրի փոշոտ ձորերում: Ոչ: Նրա ուժն ու տաղանդը բնորոշելու համար պետք է հնարել մի նոր բառ, որ գոյություն չունի մեր լեզվի մեջ, - **մարդազործ** էր նա, մի հմայիչ, դյութիչ ուժ, որ հրաշակերտում էր **գաղափարական մարդը** խոպան, անմշակ սրտերի և ուղեղների մեջ, շաղկապում նրանց և ուղղում դեպի մտքի պայքար, դեպի հեղափոխական վերանորոգիչ կռիվը»[3]: Հուզարկավորությանը ներկա մակեդոնացի ընկերներին Մալումյանը դիմեց հետևյալ խոսքերով. «...Ձեզ, մակեդոն ընկերներ, ձեր հսկողությանն ենք հանձնում հայկական հեղափոխության աննման վետերանին՝ անմոռաց Քրիստափորին՝ իր երիտասարդ բարեկամի հետ միասին, որ նրա գործակիցը եղավ արյունոտ հեղափոխության մեջ, և հարևանը՝ անարյուն դամբարանում: Այս երկու գերեզմանը թող հայ - մակեդոն դաշինքի գրավականը լինի, մշտական հուշարձանը՝ մեր դժբախտության, մեր կռվի, մեր գրավիչ ապագայի: Պահեցեք նրանց խնամքով, հսկեցեք նրանց քնքշությամբ մինչև այն **մեծ օրը**, երբ մեր

[1] **«Դրոշակ»**, N4 (157), 1905, էջ 52:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ընկերները, անկասկած, ավելի երջանիկ, քան մենք, դարձյալ մի անգամ կը գան նույն այս քաղաքը, ոչ գլխիկոր և վշտաբեկ, ինչպես մենք, այլ հպարտորեն, անկնճիռ ճակատով, այս հյուրընկալ երկրից ազատ - Հայաստան փոխադրելու նշխարներն այն տարագիրների, որոնք իրենց շղթայակապ հայրենիքի մեջ, բռնապետական ճիրաններում սեղմված, մի գերեզմանատեղ անգամ չունեն, չունեն վերջին հանգստատեղ... Այդ մեծ օրը պիտի գա, քանզի մեծ են զոհերը...»[1]:

Իր ելույթում Գերովը խոր ափսոսանք հայտնեց Քրիստափորի վաղաժամ և ողբերգական մահվան առթիվ: Նա մարտնչող մակեդոնացիների անունից հավաստիացրեց, որ ամեն կերպ կամրապնդեն հայ-մակեդոնական եղբայրական զինակցությունը, որի համար այնքան մեծ ջանքեր էր գործադրել հանգուցյալը[2]:

Քրիստափորի մահը համազգային սգի կերպարանք առավ: Անակնկալ կույր դիպվածից շշմել էին ոչ միայն նրա կուսակցական ընկերները, այլև բոլոր նրանք, որոնց սրտերն ունակ էին հուզվելու նվիրյալների կորուստների ցավից՝ անկախ իրենց քաղաքական դավանանքից: Խոր կսկիծ էին ապրում հայ իրականության համարյա բոլոր քաղաքական կազմակերպությունները և հոսանքները:

Մեք. Վարանդյանը գրում էր, որ հայ մամուլը միայն երկչոտ տողերով արձանագրեց կորուստը: Բայց մահվան բոթը խուլ որոտի պես թափանցեց Հայաստանի ու ամբողջ Կովկասի գյուղերը և քաղաքները՝ ամեն տեղ վշտի հառաչանք ու մրմունջ խլելով հայ սրտերից: «Իսկ երբ 1905-ի հոկտեմբերյան մանիֆեստեն յետոյ լեզուները բացուեցան, անվերջ սգահանդեսներու թափորներ էին, որ կը կազմակերպուեին ամենուրեք, խուռն բազմութեան ներկայութեամբ և վշտի անկեղծ ու յուզիչ արտայայտություններով: Դժուար է գտնել մի ուրիշ հայ դեմք - Խրիմեանեն զատ - որ այնքան հմայք ու ժողովրդականություն վայելեր, այնքան սիրուած ու յարգուած լիներ թե մտավորականութենեն և թե զանգուածներեն»[3]:

«Ողբի նամակ Հ.Յ. դաշնակցութեան» գրության մեջ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան) սգում էր.

«... Քրիստափորը մեռավ... Ան որ զմեզ իր չքնաղ ու խորունկ հոգիովը կը սնուցաներ. ան որ քաղցր էր. ան որ անճառելիորեն սիրող էր ու բազմագութ ու բազմաչարչար... Քրիստափորը, բովանդակ էութիւն մը, հոգիի և գաղափարի տիեզերք մը, ազատութեան և փրկութեան լուսավորիչ մը, վարդապետ մը և այսօր մեռեալ մը միանգամայն...:

Ո՛վ գիտե ի՞նչ պիտի ընեն անոնք որ հերոսներու պես կը կռուին, ի՞նչ

[1] **«Դրոշակ»**, N 4(157), ապրիլ, 1905, էջ 52:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] **«Նորք»**, N 8-9, 1991, էջ 85:

պիտի ընեն անոնք որ կը մտածեն, ինչ պիտի ընեն անոնք որ երկյուղածորեն կը յուսան, ինչ պիտի ընե հայութեան լավագոյն մասը, ինչ պիտի ընեն իր հազարավոր գաղափարազավակ աշակերտները, ինչ պիտի ընեն անոնք որ զինքը կը պաշտեն, ինչպես պիտի մխիթարուին, կարելի՞ է մխիթարուիլ այլևս: Թող ըսեն ինծի, թող ըսեն ինծի...»[1]:

««Մեր Քրիստափորը» չկա..., - գրում էր Լեոն (Առաքել Բաբախանյան): - Քրիստափորներ շատ կան: Բայց մի հատիկ էր այն Քրիստափորը, որին անփոփոխ կպած էր այդ մտերմական «մեր»-ը: Ամեն մեկը նրան համարում էր իրենը: Եվ նա իր ամբողջ էությամբ մի փայլուն օրինակ էր, որ դա սխալ չէ, որ ինքը պատկանում է ամենքին և ամենքից հետո, ամենքից քիչ՝ իրեն: Ես գոնե այդպես էի ճանաչում և հասկանում Քրիստափոր Միքայելյանին մեր ընկերական շրջաններում»[2]:

«Եթե երբեք գաղափարները մարդոց վաղանցուկ կեանքեն յետո դեռ չը շարունակեին ապրիլ, - խոր ցավով նշում էր Պիեռ Քիյառը, - այս մահը անդարմանելի կորուստ մը պիտի ըլլար հայկական դատին և հեղափոխութեան համար: Բայց այդ գաղափարները այնպես ամուր կերպով հաստատուած էին իր մեջ, այնպիսի ճառագայթում մը տուած էր անոնց՝ որ իր անհետանալեն ետքն ալ, անոնք պիտի մնան հավատարիմ ուղիներու մեջ և պետք եղած ժամանակը պիտի ներշնչեն մեզ ամենքս ալ որպեսզի իր սկսած գործը շարունակենք՝ այնպես ինչպես որ ինք պիտի ուզեր, և որպեսզի ժամանակին պահանջներուն համեմատ կատարենք հարկավոր աշխատություններն ու արարքները»[3]:

«Անմոռանալի գործչի հիշատակին» վերնագրով Գանձակից «Մշակին» ուղարկած նամակում Ստ. Տեր-Ավետիքյանը գրում էր, թե հայ գործիչներից հազվագյուտներն են առլեցուն հասարակական իդեալների հաղթանակի հավատով: «Այդ հազվագյուտների թվին ամենայն իրավամբ պատկանում է հանգուցյալ Քրիստափոր Միքայելյանը, «Մեր Քրիստափորը», մեր անզուգական, մեր անմոռանալի, մեր պաշտելի Քրիստափորը, որին ողբում է այժմ հայ ինտելիգենցիայի ամենաստվար մասը, որը իր բազմաթիվ ընկերների ու աշակերտների համար տարիներ շարունակ եղել է մի լուսաճաճանչ փարոս, հեռու հորիզոններ ցույց տվող փարոս... Վերջին մի քանի տարիներում ոչ մի մահ այնպիսի խորը, ցնցող տպավորություն չի գործել հայ ինտելիգենտ շրջանների վրա, ինչպես մեր նահատակ Քրիստափորի մահը. կորուստը շատ ծանր է, նույնչափ անտանելի...»[4]:

Երկար ժամանակ մարդիկ չէին կարողանում հաշտվել ծանր կորստի հետ և ամենից առաջ Սիմոն Զավարյանը, որը մինչև կյանքի վերջը իրեն չէր ներում

[1] ԳԱԹ, Սիմանթոյի ֆոնդ, N 241, թ.1:
[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. N 3, վավ. 6[3] (թերթի կտրոն):
[3] «Հորիզոն» (Կահիրե) շաբաթաթերթ, N 21, 5 մայիսի 1905թ.:
[4] «Մշակ», N 50, 20 մարտի 1905թ.:

Հ.Ց.Դ. երրորդ (1904, Սոֆիա) ընդհանուր ժողովում Քրիստափորին քննադատած լինելու համար: Նրան թվում էր, թե այդ քննադատությունն է պատճառ հանդիսացել կյանքի համար վտանգավոր գործերի մեջ իր ընկերոջ մխրճվելուն: Սիմոնը կարծես որբ էր մնացել և երկար ամիսներ իրեն հեռու էր պահում կուսակցության գործերից, չէր մասնակցում ժողովների, գրիչ չէր վերցնում[1]:

Քրիստափորի ողբերգական մահվան առաջին տարեդարձի օրը և հետագա տարիներին հայ մամուլի օրգանները պարբերաբար հանդես էին գալիս հոդվածներով, հուշերով և այլ նյութերով:

Օրինակ՝ երկու տարի անց «Ժամանակ» թերթը գրում էր, որ Քրիստափորը հայ ազատագրական շարժման բարոյական չափանիշն էր, մի հաստակուռ կաղնի, որի ոստերին փարված էին Թուրքահայ ժողովրդի ազատագրության բովանդակ հույսերը, նրա լուսավոր իդեալները և խոհերը[2]:

Հայ բոլշևիկները, համարյա առանց բացառության, քննադատում էին Քր.Միքայելյանի հղացած ծրագիրը՝ որպես Թուրքահայության համար խիստ վտանգավոր ձեռնարկ, որը սուլթանին առիթ կտար կազմակերպելու հայերի նոր ջարդեր:

Հնչակյան ղեկավարության մեծ մասը նույնպես հավանություն չտվեց Քրիստափորի քայլին: Կուսակցության նշանավոր ղեկավար գործիչ Ռուբեն Խանազատը գրել է. «Տարիներ առաջ հնչակյաններիս մեջ էլ միտք հղացավ սուլթանին տեռորի ենթարկելու, բայց մեր տաճկահայ ընկերները սաստիկ հակառակվեցին, բացատրելով, որ սուլթանը, բացի Թուրքիայի քաղաքական պետը լինելուց, նաև մարգարէի փոխանորդն է համարվում, և նրան սպանելը այնպիսի զայրույթ կ'առաջացնի իսլամ ժողովրդի մեջ, որ դժվար է երևակայելն անգամ: Եվ այդ ժամանակ էր դեռ, երբ հայկական կոտորածներ չէին եղել: Իսկ այժմ, երբ հայերին սրի ու կրակի մատնելը մի սովորական բան էր դարձել, ի՞նչ արդյունքի կամ հետևանքի էր սպասում Քրիստափորը՝ սուլթանին տեռորի ենթարկելով»[3]: Շարունակելով իր խորհրդածությունը՝ նա ավելացնում էր. «Քրիստափորի ծրագրած այդ տեռորը ինձ զարմացնում էր ու անհասկանալի էր և՛ մի այլ տեսակէտից: Ինչպէ՞ս կարող էր այդ հին նարոդովոլեցը, ռուսական չափանիշով սնված հեղափոխականը, այնպիսի մի ժամանակ, երբ Ռուսաստանը բռնված էր եռուն ու հուսատու հեղափոխական կենդանի շարժումներով, այն աստիճան տարվել Սուլթանին սպանելու անմիտ ու ոչ մի արդյունք չխոստացող ձեռնարկով, որ ինքն էլ զոհ գնար այդ ձեռնարկին»[4]:

Կատարվածի գնահատականները տարբեր էին. իրար լրացնող կամ հակա-

[1] Տե՛ս «Մուսա լեռ տարեգիրք», N17, 1974, էջ 40:
[2] Տե՛ս «Ժամանակ» (Թիֆլիս), N49, 6 մարտի 1907թ.:
[3] «Հայրենիք», N 6, ապրիլ, 1929թ., էջ 115:
[4] Նույն տեղում:

սող, հավանություն տվող կամ նույնիսկ դատապարտող:

Իհարկե, հանդուգն ծրագրի իրականացման գաղափարի հղացումը և շատ ցավալի հետևանքներով ձախողումը դժվար է միանշանակ գնահատել: Մի մեծ կուսակցության ղեկավարը մահվան վտանգներով լի գործողության իրականացումը ոչ թե հանձնարարել էր իր կարգապահ կուսակցության անդամներից որևէ մեկին, այլ որոշել էր իր ժողովրդի ոխերիմ թշնամուց վրեժ առնել անձամբ:

Ուրիշ կերպ Քրիստափորը չէր կարող, շեշտել է Երվանդ Ֆրանգյանը, քանի որ «նա այն մարդկանցից, այնպիսի հասարակական և հեղափոխական գործիչներից չէր, որոնք ուրիշներին են մղում դեպի կեանքի հորձանուտ հոսանքը, դեպի մարտի և արյան դաշտը, իսկ իրենք մնում գործից հեռու, ապահովության մեջ: Նա միշտ այնտեղ էր, ուր կարևոր գործ կար...»[1]:

Անդրադառնալով դաշնակցության առաջնորդի կատարած քայլի նկատմամբ տարբեր մոտեցումների և կարծիքների հարցին՝ իր «Քրիստափոր Միքայելյան» երկասիրության մեջ Ավետիս Ահարոնյանը գրել է.

«Հնարավոր է շատ տարբեր, նույնիսկ բացասական կարծիքներ ունենալ քաղաքական ահաբեկումների մասին: Կարելի է վիճել նրանց իրական արժեքի և գործնական հետևանքների մասին. կարելի է ցավել, որ երբեմն բարոյական ու ֆիզիկ վիթխարիներ են զոհվում մի հատիկ անիծված մեջք փշրելու համար առանց կարողանալու իրենց հարվածով պատմության անիրավ անիվը շրջել: Եվ բնավ այդ տեսակետով չէ, որ պետք է մոտենալ սասանեցուցիչ ձեռնարկին և իր խոլական հղացումին: Քրիստափորի վճռականությունը հասկանալու համար նորեն պետք է վերհուշել իր անհուն անօրինակ սերը դեպի իր ժողովուրդը, և այդ իսկ ժողովուրդի ապրած սարսափները մի մարդ-հրեշի երեսից, մի բռնավորի, որ թունավորում է աշխարհի մթնոլորտը իր շնչով և պղծում երկրի երեսը»[2]:

Իր տառապյալ ազգի դատին անմնացորդ նվիրվածության և գերագույն անձնազոհության բացառիկ օրինակներից էր Քրիստափորի արարքը: Նա ընկավ անձայն, հեռու այն երկրից, որի համար տարիներով տանջանքներ էր կրել՝ խորհրդավոր ստվերի պես անցնելով երկրից երկիր, քաղաքից քաղաք՝ ամեն տեղ տանելով իր ապշեցուցիչ անհատականության, իր գերող անձնավորության հմայքը:

Այդ արարքը անընդունելի և դատապարտելի էր այն իմաստով, որ նա իր իսկ ստեղծած ու սնուցած կուսակցությանը զրկեց անզուգական առաջնորդից, իսկ հայ ժողովրդին՝ նրա մեծ զավակներից մեկից:

---

[1] **Ե. Ֆրանգեան**, Քրիստափոր Միքայելեան. նրա կեանքը և աշխարհայեցողութիւնը, «Արամազդ» տպարան, Բագու, 1917, էջ 26:
[2] **Ա. Ահարոնյան**, Ժողովածու երկերի, հատ. հինգերորդ, Բոստն, 1948, էջ 365-366:

«ԵԼԴԸԶԻ ՌՈՒՄԲԸ»: ՁԱԽՈՐԴ ՄԱՀԱՓՈՐՁԸ ՍՈՒԼԹԱՆԻ ԴԵՄ

Քրիստափոր Միքայելյանի (Էլլեն, Էդուարդ) մահը շանթահար էր արել պատասխանատու մարմնի անդամներին և բոլոր նրանց, ովքեր ընդգրկված էին «Վիշապի» ձեռնարկի մեջ:

Ինչպես վերևում նշվել է, դեռ Վիտոշի ողբերգությունից առաջ նրանց մեծ մասին արդեն հաջողվել էր զանազան ճանապարհներով և հնարքներով թափանցել Կ.Պոլիս: Վարանումը կարճատև եղավ:

Քրիստափորի կիսատ թողած գործը շարունակելու համար Հ.Յ.Դ. բարձրագույն մարմին խորհուրդը որոշեց՝ «Նժույգի» տապալումը հետապնդել մինչև վերջ՝ թեկուզ մի մարդ մնա»[1]: Կուսակցության ղեկավարության որոշմամբ ծրագրի իրականացման գլուխ կանգնեց պատասխանատու մարմնի անդամ Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո):

Լինելով Հ.Յ. դաշնակցության հիմնադիրներից՝ ականավոր այդ դաշնակցականը ապրել է ծայր աստիճան հետաքրքրական ու արկածալից կյանք՝ նվիրված իր կուսակցությանը և հեղափոխությանը:

Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան) իր վաղեմի բարեկամ Մարտիրոս Մարգարյանի մասին ծոցատետրում թողել է այսպիսի տողեր. «Նա տեր է մի բարդ հոգու, որի մեջ իրար հակասող կրքերի ահավոր անդունդներ կան: Այդ հոգու մեջ անհատական երջանկության անհուն տենչանքների կողքին անձնվիրության և «ես»-ի ժխտման տարերային զգացումներ են»[2]:

Սաֆոն մեծ եռանդով շարունակեց կիսատ մնացած գործը: Պոլսում արդեն բավական ժամանակ գտնվող ընկերները, որոնց մի մասը սրտնեղել էր անորոշ վիճակից, Վիտոշի պատահարից հետո այլևս տրտունջ չէր հայտնում: Անասելի աղետի առաջ նրանք բոլորը խոստացան քաղաքում սպասել այնքան ժամանակ, որքան հարկավոր է: Համոզվելով, որ Պոլսում գտնվող բոլոր ընկերները պատրաստ են մեռնելու, միայն թե հաջողվի գործը, Սաֆոն դուրս է գալիս մայրաքաղաքից և շտապում Սոֆիա՝ ռմբային փորձերն ավարտելու և սուլթանի ահաբեկման հետ կապված դեռևս չլուծված գործերը գլուխ բերելու համար:

Գալով Սոֆիա՝ Սաֆոն գտավ Ռոստոմին, որը ժնևից եկել էր այցելելու Քրիստափորի աճյունին: Սաֆոն Ռոստոմի միջոցով Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոյի առջև բարձրացրեց սպանված ընկերների՝ Քրիստափորի և Վռամշապուհի փոխարեն ցուցականի կազմը լրացնելու հարցը: Օրերն անցնում էին, բայց ոչ Հ.Յ.Դ. արևմտյան բյուրոն և ոչ էլ կուսակցության խորհուրդը պատասխան

---

[1] **«Նյութեր...»**, հատ . Դ, էջ 205:
[2] **«Հայրենիք»**, N12 (394), դեկտեմբեր, 1958, էջ 16:

չէին տալիս, ուստի ընկերները եղած ուժերով շարունակեցին իրենց գործը Պոլսում:

Սոֆիայում Սաֆոյի մյուս կարևոր գործը եղավ հանդիպել ռմբային գործի մի լուրջ մասնագետի և խորհրդակցել: Այդ նպատակով Ռոստոմի հետ նա մեկնում է Ժնև, ուր արևմտյան բյուրոն «Դրոշակի» խմբագրատանը կազմակերպում է Սաֆոյի հանդիպումը հայտնի մասնագետ, տեսաբան ու պրակտիկ Ս. Ռուերի հետ: Լսելով իրենց պատրաստած ռումբերի և դրանց փորձարկումների մասին Սաֆոյի պատմածը՝ գիտնականն ասում է, թե անհատի վրա գնալիս չի կարելի վստահել ռումբի բեկորներին, այլ պետք է հույսը դնել օդի ցնցումի վրա, որը վրիպում չունի և վստահելի մահացու գործոն է: Բոլորովին միևնույն է, նշում էր Ռուերը, թե ինչ հաստության պտեր ունի ռումբը՝ հա՞ստ է, թե՞ բարակ, ա՞յս մետաղից է, թե՞ այն, գլխավորն այն է, որ ռումբի ներսում պայթուցիկ նյութն առատ լինի՝ ոչ պակաս երկու կիլոգրամից:

Պարզ դարձավ, որ հենց սկզբից ընկերների պատրաստած ռումբերը չէին կարող իրենց նպատակին հասնել, քանի որ դրանցում դինամիտի քանակությունը չէր անցնում 300-400 գրամից: Իսկ ի՞նչ ուժ կունենա թիթեղյա տակառը, եթե դրա մեջ լցվի, ասենք, 100 կիլոգրամ մելինիտ և պայթեցվի, - հարցրեց Սաֆոն Ռուերին՝ մտքում ունենալով կառքի պատկերը: Պատասխանը Սաֆոյի համար շշմեցուցիչ եղավ. կոչնչանան ոչ միայն 30 մետր շրջագծով կենդանի բոլոր էակները, այլև օդ կհանվեն շրջապատի եռահարկ շինությունները: Ուրեմն մինչև այժմ փորձարկված մանր ռումբերից պետք է անհապաղ անցնել խոշոր, հսկայական մի ռումբի պատրաստմանը, որ իրենց հետ տանեին ոչ թե մարդիկ, այլ կառքին լծված ձիերը:

Նույնիսկ Ռուերի բացատրություններից հետո. Սաֆոն հարկ համարեց նրա ասածները ստուգել ուրիշ աղբյուրներից: Այդ նպատակով նա բժ. Լորիսի* հետ մեկնում է Փարիզ: Վերջինիս հանձնարարական նամակով Սաֆոն ներկայանում է Փարիզի բարձրագույն դպրոցներից մեկի պայթուցիկ նյութերի լաբորատորիայի վարիչ, ազգությամբ լեհ քիմիկոս Բոբանովիչին, որը խառնվածքով լինելով հեղափոխական, սիրով ընդունում է Սաֆոյին և պատրաստակամություն հայտնում պատասխան տալ նրա բարձրացրած բոլոր հարցերին:

Այս անգամ Սաֆոն հարցն այսպես է դնում. որքա՞ն պայթուցիկ նյութ է պետք, որպեսզի բավարար համարվի 30 մետր շառավղով ոչնչացնելու ամեն ինչ: Հետևում է քիմիկոսի պատասխանը. այդքան տարածքի վրա կենդանի ոչինչ չմնալու համար բավական է 12 - 15 կիլոգրամ մելինիտ, եթե, իհարկե, լավ տեսակից է, բայց ավելի վստահ լինելու համար լավ է վերցնել 20 կիլոգրամ: Այնուհետև Բոբանովիչը նյութի քանակի մասին համարյա նույնն է

* Փաստաթղթում, որի վրա հենվել ենք («Նյութեր...», հատ. Դ, էջ 217-218), նշված չէ սույն բժշկի անունը: Հավանաբար խոսքը վերաբերում է դաշնակցության արտասահմանյան պրոպագանդայի գծով հայտնի գործիչ բժ. Լորիս Մելիքյանին:

ասում, ինչ Ժնևում ասել էր Ս. Ռուերը:

Փարիզից Սաֆոն ուղևորվում է Վիեննա՝ այնտեղ կառք ձեռք բերելու և Պոլիս ուղարկելու համար, քանի որ պոլսեցիները սովորաբար գերադասում էին կառք ձեռք բերել Ավստրիայի մայրաքաղաքից, որտեղ պատրաստված կառքերը Եվրոպայում լավագույններն էին:

Վիեննայում կառքը պատրաստել տալուց և Պոլիս ուղարկելուց հետո Սաֆոն վերադառնում է Սոֆիա: Այստեղ պայթուցիկ նյութեր վաճառող ոմն Տյուֆալչևի և մակեդոնացի ընկեր Լյապովի հետ նա քաղաքից դուրս ձեռնարկում է մի շարք փորձեր՝ մելինիտի այն չափերով, որ խորհուրդ էին տվել Ռուերը Ժնևում և Բոբանովիչը Փարիզում: Փորձարկումներն ընդհանուր առմամբ հաջող էին, ուստի կառքը նախատեսված ձեռնարկի մեջ գրավեց առաջին և միակ տեղը՝ դառնալով բոլոր ընկերների ուշադրության կենտրոնը:

Սոֆիայում փորձարկումները վերջացնելուց հետո Սաֆոն օր. Էմիլի հետ շտապում է Պոլիս: Ժնևում գտնվող օր. Ռուբինա Արեշյանը Քրիստափոր Միքայելյանի մահից հետո կորցրել էր հավասարակշռությունը և նյարդային հիվանդության մեջ էր, այնքան հիվանդոտ, որ օրը մի քանի անգամ ուշաթափ էր լինում ամենաթեթև ադիթից: Բավական էր նրա ներկայությամբ արտասանվեր «Քրիստափոր» անունը, որ նա ճչալով ուշագնաց լիներ: Ահա թե ինչու Պոլսում գտնվող ընկերները որոշեցին նրան չկանչել: Դա Ռուբինայի մոտ առաջ էր բերել հոգեկան նոր ցնցումներ: Նա նամակը նամակի հետևից էր գրում Պոլիս, հայտնում, որ ինքը լիովին առողջ է և կմեռնի, եթե իրեն չկանչեն: Իր հերթին Ռոստոմը, ընդառաջելով Ռուբինայի թախանձագին խնդրանքին, Ժնևից նամակ է ուղարկում Պոլսում գտնվող ընկերներին: Ի վերջո վերջիններս ստիպված են լինում տեղի տալ, և Ռուբինան նույնպես մուտք է գործում քաղաք:

Կառքն արդեն Վիեննայից ստացվել էր, վարձվեց ախոռ, գտնվեցին ձիեր, պատվերով պատրաստվեց երկաթե սնդուկ, որի մեջ ափեափ պետք է լցվեր պայթուցիկ և զետեղվեր մի ուրիշ, այս անգամ փայտյա, սնդուկի մեջ և ամրացվեր կառապանի նստատեղի տակ: Լուծվեցին էլեկտրական կրակատուի և վայրկենաչափի հետ կապված հարցերը: Երկաթե սնդուկի մեջ լցվեց 121կգ մելինիտ և շուրջ 1500 բեկոր առաջացնող երկաթե իրեր:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, որոշվեց, որ, գործի համար անհրաժեշտ մարդկանցից բացի, մնացած ընկերները պետք է հեռանան Կ.Պոլսից՝ ավելորդ զոհեր չտալու համար: Որոշումն արագ կատարվեց և ցուցականից Պոլսում մնացին Սաֆոն, օր. Ռուբինան, Զարեհը, Թորգոմը, Քիրսը, Արամը, Աշոտը, օր. Էմիլը՝ ընդամենը 8 հոգի: Զարեհը մնում էր իբրև կառապան, Սաֆոն՝ մինչև վերջ գործին հետևելու համար: Այդ երկուսից բացի, հարկավոր էր ևս մեկը, որպեսզի ընկերակցեր Զարեհին և նստեր կառքի մեջ: Ընկերների մոտ համաձայնություն չկայացավ, թե ով պետք է Զարեհի հետ կառք նստի. ամեն մեկը վճռականապես առաջարկում էր իր թեկնածությունը, իրեն էր հարմա-

բագույնը համարում այդ դերի համար: Ի վերջո որոշվեց ընտրություն կատարել գաղտնի քվեարկությամբ: Ընտրությանը մասնակցեց հինգ հոգի՝ Ռուբինան, Սաֆոն, Թորգոմը, Քիրսը և Արամը: Վիճակն ընկավ Արամին: Ռուբինան, որ սաստիկ ցանկանում էր ինքը նստել պայթուցիկով ծանրաբեռ կառքը, ճչաց և ուշագնաց եղավ, ապա ուշքի գալով խնդրեց կրկնակի քվեարկություն կատարել: Արամը համաձայնեց, և այս անգամ գաղտնի քվեարկության դրվեց միայն Արամի և Ռուբինայի թեկնածությունը: Կրկին վիճակը Արամին ընկավ: Երեք օր շարունակ Ռուբինան աղաչանքով Արամին խնդրում էր գործը զիջել իրեն: Վերջինս ստիպված էր կատարել համառ ու անգիջում ընկերուհու խնդրանքը[1]:

1905թ. հուլիսի 21-ին, ուրբաթ առավոտյան ժամը 10-ին Շիշլիում, հունաց գերեզմանատան մոտ, Զարեհը և Ռուբինան նստում են կառքը և շարժվում դեպի Ելդըզի հրապարակ: Նրանք իրենց հետ վերցրել էին Կ.Պոլսում տերությունների դեսպաններին ուղարկվելիք նամակներ: Եթե կենդանի մնային, պիտի շտապ վերադառնային իրենց ընդհանուր բնակարանը, իսկ եթե հետապնդվեին՝ պետք է փորձեին մուտք գործել ոչ հեռու գտնվող անգլիական դեսպանատուն և անգլերեն նախապես գրած թուղթը հանձնեին դեսպանին: Թղթի մեջ գրված էր, թե իրենք դաշնակցականներ են և, Հ.Յ.Դ. Պոլսի մարմնի որոշման համաձայն, կատարել են սուլթանի մահվան վճիռը՝ իբրև պատասխան հայ ժողովրդի նկատմամբ նրա չարագործությունների, որոնց արդյունքը տասնյակ և հարյուր հազարավոր զոհերն են:

Նշանակված ժամին կառքը հասավ տեղ՝ Մարզարանի հրապարակ: Կառքի վրա Զարեհը և Ռուբինան էին: Ըստ հաշվարկների եկել էր այն պահը, երբ սուլթանը դուրս էր գալու մզկիթից, իսկ ժամացույցի մեխանիզմն այնպես էր լարված, որ պայթյունը տեղի ունենա ճիշտ նրա անցնելու պահին: Զարեհը սեղմեց պայթուցիկ արկղի զսպանակը, և ըստ վայրկենաչափի՝ 1 րոպե 30 վայրկյան հետո տեղի էր ունենալու պայթյունը: Նրանք կառքից իջան և արագ քայլերով հեռացան՝ ուղղություն վերցնելով դեպի տուն: Ուղիղ ժամը 12-ն անց 45 րոպեին Համիդիե մզկիթում կատարված սելամլըքի աղոթքից հետո սուլթանը վերադառնում էր պալատ: Զինվորները պատիվ արեցին «սալամ դուր» գոչյունով: Հանկարծ լսվեց մի ահավոր դղրդյուն, որը կրկնվեց հինգ կարճ ընդմիջումներով: Տիրեց մի սարսափելի իրարանցում: Մեծ մարդասպանը գտնվում էր 30 քայլ հեռավորության վրա: Ռուբինային, սակայն, թվաց, թե պայթյունը խեղված է ու թույլ:

Ընկերներից ոչ մեկին չէին հասել ռումբի բեկորները, և սկսված ընդհանուր խուճապի ու իրարանցման մեջ Նրանք կարողացան դեպքի վայրից հեռանալ և վերադառնալ տուն:

Իսկ այնտեղ, Ելդըզի հրապարակում, ռումբի թեկուզ նախատեսվածից

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 217-218:

թույլ պայթյունը կատարել էր բավականին մեծ ավերածություն:

Ըստ պաշտոնական տվյալների՝ պայթյունից փշրվել էր 15-ի չափ կառք, սպանվել և վիրավորվել էր շուրջ 80 մարդ և այլն: Հեռագրական տեղեկությունները սպանվածների և վիրավորվածների թիվը հասցնում էին 200-ի[1]: Բայց արյունարբու Համիդը մնաց անվնաս:

Բոլոր սպաները և փաշաները խուժեցին դեպի սուլթանը, Նրան խնդրելով մզկիթ վերադառնալ՝ վախենալով երկրորդ պայթյունից:

Սարսափելի դեպքի ամբողջ ընթացքում սուլթանը կանգնած էր գունատ, բայց ինչպես միաբերան հաստատում էին բոլոր վկաները՝ պահպանում էր արտաքին հանգստություն, հակառակ իր առասպելական երկչոտությանը:

Դա զարմանալի էր, քանի որ խաղաղ օրերին նույնիսկ իր պալատի հաստաբետոն պատերից ներս նրա կյանքն անցնում էր ահ ու դողի մեջ: Համիդը տառապում էր հալածախտով ու հայուցինացիայով, ուստի նրան մշտապես թվում էր, թե իր շուրջը վխտում են անհամար թշնամիներ: Բռնակալը հատկապես սարսափում էր հայ հեղափոխականներից, որոնք ունակ էին ամենահանդուգն անձնազոհ գործողությունների:

Բոպեներ անց իր ամենասիրելի որդու հետ սուլթանը կառք նստեց, բազմությանը հրամայեց ճամփա բանալ և, մտրակը շաչեցնելով, անձամբ վարելով կառքը՝ սլանալով դիմեց պալատ՝ Ելդըզի իր ոճրանոցը:

Պալատ հասնելուն պես՝ Համիդն անմիջապես իր մոտ հրավիրեց Ավստրիայի դեսպան Քալիչին, որ ներկա էր սելամլըքին, և երկար զրույց ունեցավ նրա հետ: Դեսպանը մեծապես զարմացած էր նրա պաղարյունության վրա:

Հետո սուլթանը պալատ կանչեց բարձր պաշտոնյաներին, որոնց թվում էր գաղտնի ոստիկանության գլխավորը՝ տխրահռչակ գեներալ Ֆեհմի փաշան: Նրան տեսնելով՝ Համիդը հարձակվեց և մտրակի տակ առավ:

Նույն օրը սուլթանը նշանակեց զինվորական քննիչ հանձնախումբ՝ գործը պարզելու համար: Հանձնախմբի մեջ էին զինվորական մինիստրը, սուլթանի առաջին քարտուղարը և իտալացի գեներալ Ռոմեի փաշան: Նշանակվեց երկու ուրիշ հանձնախումբ ևս: Այդ երեք հանձնախմբերը գործում էին միմյանցից անկախ, իսկ դրանցից մեկը նստում էր Ելդըզ Քեոշքում: Հուլիսի լույս 22-ի

[1] **«Նյութեր...»**, հատ. Դ, էջ 198: Լեոն իր «Անցյալից» ուսումնասիրության մեջ չփոթել է դեպքերի հաջորդականությունը և սխալ է ներկայացրել որոշ մանրամասներ՝ կապված Քր. Միքայելյանի նահատակության ու սուլթան Համիդի ահաբեկման անհաջող փորձի հետ: Նա բառացի գրել է. սուլթանի «մահափորձը տեղի էր ունենում 1904-ի գարնան սկզբին, այն ժամանակ, երբ Անդրանիկը դեռ հաղթական էր Սասունում: Սելամլըքի արարողության ներկա լինելու համար Ելդըզի պալատն էր մտնում մի եվրոպացի մի չքեղ կառքով, որի մեջ սարքված էր դժոխային մեքենա: Մեքենան վաղաժամ պայթեց, սպանեց մի քանի զինվորներ, իսկ Համիդն անվնաս մնաց: Միքայելյանը, սակայն, չհուսահատվեց, սկսեց պատրաստել մի նոր դավադրություն, որի մեջ ինքն էլ պիտի մասնակցեր, իբրև գործող տեռորիստ: Բայց մինչդեռ փորձեր էր անում Բուլգարիայում, զոհ գնաց պայթած ռումբին» (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 141):

գիշերը այս վերջին հանձնախումբը հարցաքննություններ սկսեց սուլթանի ներկայությամբ:

Կմախքաձև ձեռքերով հպատակների անմեղ արյունը խառնող քինահույզ, արյունռուշտ հրեշը վրիժառության մոլուցքով ձեռնարկեց նոր ոճիրներ: Զգտնելով մահափորձի հեղինակներին՝ նա ճչում ու գալարվում էր կատաղության մեջ, պահանջում նորանոր զոհեր: Ոստիկանությունը գործում էր անդադար: Բազմամբոխ մայրաքաղաքը նորից դարձավ լրտեսական ոհմակների շահատակությունների ասպարեզ: Տարբեր ազգություններից կատարվեցին անհավատալի թվով ձերբակալություններ: Կառավարության տեռորն անասելի չափեր ընդունեց: Գաղտնի ոստիկանության խմբերը (ժուրնաիներ) դիմեցին արյունալի գործողությունների:

Կառավարական շրջաններում ասում էին, թե Համիդը մտադիր է մի բարձր պարսպով ելքերը խսպառ կզգիացնել դրսի աշխարհից, իսկ պալատին հարող թաղերը ոչնչացնել՝ դրանցից սպասվող վտանգները չեզոքացնելու համար:

Ամբողջ քաղաքն իրարանցման մեջ էր: Տանը հավաքված վրիժառուները մի պահ վարանելուց հետո որոշում են հենց նույն ժամերին հեռանալ քաղաքից: Նրանք մտադիր էին Պոլսից հեռանալ ծովով, բայց տեղեկացան, որ նավահանգստից այդ պահին մեկնելու է ընդամենը երկու նավ՝ մեկը դեպի Պիերա (Հունաստան), մյուսը՝ Ռուսաստան, և նավերն արդեն բարձրացրել էին խարիսխները: Ժամանակն անցնում էր, միաժամանակ մոտենում էր վտանգը: Միակ երթուղին մնում էր գնացքը, որը Կ. Պոլսից դուրս էր գալու երեկոյան ժամը 8-ին և մեկնելու էր Սոֆիա - Վիեննա գծով: Հազիվ մի կառք ճարելով՝ ընկերները շտապում են երկաթուղային կայարան:

Ինչպես նավահանգիստը, երկաթուղային կայարանը նույնպես վերցված էր ոստիկանական խիստ հսկողության տակ: Վրիժառուները կայարան են հասնում այն ժամանակ, երբ լսվում է գնացքը շարժվելու երկրորդ զանգը: Կանանց (օր. Ռուբինայի և օր. Էմիլի) ներկայությունը թուլացնում է ոստիկանների և ժանդարմների ուշադրությունը, ավելին՝ նրանք իրենք են օրիորդներին օգնում հասնելու գնացքին: Հնչում է երրորդ զանգը, և հևիհև վազող ուղեվորները հազիվ մտնում են վագոն, ու գնացքը շարժվում է: Բոլորը, վերջապես, շունչ են առնում տառապալից ժամերից հետո և, չկարողանալով պահել ուրախության պոռթկումը, երջանկության խոր զգացումով ողջագուրվում են միմյանց հետ: Նրանք հավատացած էին, որ թուրքական գահը այլևս թափուր է:

Որքան մեծ եղավ ընկերների հիասթափությունը, երբ հետևյալ օրը, հասնելով Սոֆիա, տեղեկանում են մեծ անհաջողության մասին՝ սուլթանը կենդանի է, բոլորովին անվնաս: Հոգեկան աներևակայելի խռովքով նրանք շարունակում են ճանապարհը մինչև Ժնև:

Սուլթանի մահափորձի հետևյալ օրն իսկ ոչ միայն Թուրքիայում լույս տեսնող մամուլի բազմալեզու օրգանները, այլև եվրոպական, մասնավորապես

գերմանական մամուլը հաղորդումներ տվեց դեպքի մասին: Թուրք թերթերը օրեր շարունակ հուր ու կայծակ էին տեղում:

Սկզբում ոչ ոք չգիտեր, թե Համիդի մահափորձը ում ձեռքի գործն է և ինչ է պայթել հրապարակում: Թերթերը նույնիսկ գրեցին, թե պայթյունը եղել է ստորերկրյա: Այդ հաղորդման հիման վրա իսկույն ձեռք առնվեցին պեղումներ, որոնք ոչնչով չհաստատեցին այդ վարկածը: Ոմանց երևակայությունն էլ այնտեղ էր հասել, որ պատմում էին, իբր, իրենք տեսել են, թե ինչպես ռումբով ծանրաբեռ արծվի ձև ունեցող մի օդապարիկ իջել է մզկիթի հրապարակում: Լոնդոնի պահպանողական "Daily Telegraph" խոշոր թերթն իր խմբագրականում գրում էր. «Թե ինչպե՞ս է ձգվել ռումբը, առայժմ անբացատրելի է, բայց նշաններից երևում է, որ դա մի զարհուրելի բան է»[1]:

Առաջին պահին բոլորն այն կարծիքին էին, թե մահափորձի հեղինակները բուլղարներ են, որովհետև վերջին ամսում կառավարությունը տեղեկացել էր, որ բուլղարական կոմիտեները պատրաստվում են սուլթանի սպանության փորձ կատարել: Այդ կարծիքը ստեղծվել էր նաև այն պատճառով, որ դեպքը մեծ տպավորություն էր թողել բուլղարական մայրաքաղաք Սոֆիայում: Ժողովրդի մեծամասնությունը, որ ավանդական թշնամություն ուներ այն ամենի հանդեպ, ինչ թուրքական էր, և ատելություն ուներ հատկապես Համիդի հանդեպ՝ որպես բուլղարների գլխավոր թշնամու, բնականաբար, ցավում էր, որ փորձն անհաջող է անցել:

Բուլղարիայի պաշտոնական շրջաններն, ընդհակառակը, զոհ էին, որ սուլթանը փրկվել է: Նրանք կարծում էին, որ եթե փորձը հաջողություն ունենար, ապա դժվար էր կանխատեսել, թե Բալկանյան թերակղզու առանց այն էլ վտանգավոր կացության համար ինչ հետևանքներ կունենար: Այդ շրջանները երկյուղում էին, որ Թուրքիան կարող է առիթ բռնել այդ անհաջող փորձը և սաստկացնել հալածանքները բուլղարների դեմ Մակեդոնիայում և Ադրիանուպոլսի վիլայեթում: Դրա հետևանքը կլիներ թուրք-բուլղար հարաբերությունների կտրուկ սրումը: Իրենց հերթին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունները հայտարարեցին, թե իրենք ոչ մի առնչություն չունեն կատարվածի հետ, քանի որ Պոլիսը դուրս է իրենց գործունեության ասպարեզից:

Հուլիսի 22-ին "Frankfurter Zeitung" թերթը գրում էր. «Այն հարցը, թե ո՞վ է փորձի հեղինակը, այժմ զբաղեցնում է բոլորին. սկզբում կարծեցին, թե բուլղար է, հետո՝ երիտասարդ թուրք, սիրիացի արաբ և, վերջապես, անիշխանական: Ենթադրվում է, որ ռումբ նետողը սպանված է. կարծում են նույնպես, որ նա պայմանները լավ չէր ուսումնասիրել: Դրա վկայությունն այն է, - շարունակում էր թերթը, - որ «սալամ դուր» ազդարարության ժամանակ, որ արվում է մզկիթից սուլթանի դուրս գալու ժամանակ, ահաբեկիչը կարծել է, թե նրա կառքն արդեն շարժվում է: Եթե կառքը շարժված լիներ, Համիդն,

[1] Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Դրոշակ», N 8(161),օգոստոս, 1905, Հավելված, էջ 6:

անշուշտ, սպանված կլիներ»:

Անդրադառնալով նույն հարցին, թե ով կարող է լինել պայթյունի հեղինակը, "Berliner Tageblatt" թերթը, բնավ չկասկածելով հայերի վրա, հուլիսի 27-ին գրում էր. «Կ. Պոլիսում շրջող լուրերի համաձայն, փորձության հեղինակը ռումբը ձգել է պալատական պաշտոնյաների, նույնիսկ սպաների օգնությամբ : Ռմբաձիգը նպատակ է ունեցել ոչ թե սպանել սուլթանին, այլ միայն վախեցնել նրան և ստիպել ռեֆորմներ իրագործել»:

Այս վարկածին ուժ էր տալիս գաղտնի ոստիկանության պետ Ֆեհմի փաշան: Դիրքը փրկելու համար նա սուլթանին հայտնեց, թե իր կարծիքով դավադրության սադրիչը գահաժառանգ Ռեշատ էֆենդին է: Այդ ամբաստանության արդյունքում սուլթանը Ռեշատին ենթարկեց մեկուսացման Զրաղանի պալատում: Ժամանակին նույն պալատում էր փակվել Ռեշատի եղբայր Մուրատը, որը Համիդի կողմից գահընկեց արվելուց հետո դատապարտվել էր ցմահ պալատում մնալու և այնտեղ էլ մահացել էր 1904 թվականին: Մեռնելուց առաջ նա եղբորը՝ Ռեշատին էր հանձնել իր հիշատակարանը, որի մեջ պատմել էր իր գահընկեցության, պալատում բռնափակված տարիներին աննախանձելի կյանքի մասին և խիստ ամբաստանություններ էր արել Համիդի դեմ:

Զրաղանի պալատում բանտարկվելուց հետո Ռեշատ էֆենդին սուլթանին գրում է մի ազդու նամակ և բողոքում իր արգելափակման դեմ: Նա սպառնում է հրատարակության տալ Մուրատի հիշատակարանը, ինչպես նաև դիմումներ հղել մեծ պետություններին, եթե սուլթանն անմիջապես իրեն ազատ չարձակի:

Իմանալով այդ մասին՝ Ֆեհմի փաշան կարողացավ ձեռք գցել Մուրատի հիշատակարանը և այն նամակների տեքստերը, որ Ռեշատը պատրաստվում էր ուղարկել տերությունների ղեկավարներին, ու այդ ամենը ներկայացրեց Համիդին: Բայց ոչինչ չօգնեց գաղտնի ոստիկանության պետին: Սուլթանը նրան շնորհազուրկ արեց և աքսորեց Արաբիայի խորքերը:

Հ.Ց. դաշնակցության պաշտոնաթերթը՝ «Դրոշակը», դեռ չգիտեր, որ սուլթանի մահափորձի հեղինակները հայեր են, և կարծում էր, թե ձեռնարկն իրականացրել է մեկ անձ: Թերթը հարց էր տալիս. «Ո՞վ է նա, անհայտ խորհրդավոր վրիժառուն...: «Ով էլ որ լինի, - գրում է «Դրոշակը», - ազատության պատգամաբեր է բռնակալության անմատչելի ապաստաններում, ժողովրդական ցավերի ծնունդ է, դաժան, արյունոտ օրերի ծնունդ, խիզախ տենչերի խիզախ արտահայտիչ:

Ով էլ որ լինի նա - անսովոր հանդգնությամբ ու անհնարին զոհողություններով է հրապարակ եկել. նրա ժեստը՝ վսեմ, հրապուրիչ, կաչկանդում է բոլոր մտքերը. նրա գործը խրախույս է գտնում բոլոր հալածական ժողովուրդների մեջ, ամբողջ զգացող ու խորհող աշխարհում, որ այսօր ողբում է

նրա վրիպումը, ցավում է սրտանց, որ նրա քայլը չպսակվեց հաղթանակով»[1]:

Հ.Ց. դաշնակցության արևմտյան բյուրոն սկզբում հակառակ էր, որ իմացվի, թե մահափորձի հեղինակները հայեր են: Ձեռնարկը տապալվել էր, և բյուրոն չէր ուզում, որ այդ անհաջող գործողությունը վերագրվի դաշնակցությանը: Ռոստոմը գտնում էր, որ պետք է նպաստել այն վարկածի հաստատմանը, ըստ որի մահափորձի հեղինակները երիտթուրքեր են, կամ ահաբեկման ծրագիրը հղացվել է հենց Ելդզում, այսինքն՝ արդյունք է պալատական ինտրիգների: Նա համոզված էր, որ այդ դեպքում անխուսափելի պառակտում առաջ կգա թուրք կառավարության և հասարակության միջև:

Հետագա օրերին կասկածների շրջանակը նեղացավ: Այժմ տրվում էր երեք ուժերի անունները՝ երիտթուրքեր, մակեդոնական հեղափոխականներ և հայկական կոմիտեներ: Մարսելի "Le Semaphore" թերթի թղթակիցը Պոլսից գրում էր.

«Հայերը և բուլղարները փորձված մարդիկ են ռումբերի գործածության մեջ. հայերն ապացուցել են այդ 1896 թվին, երբ նրանք օրը ցերեկով գրավեցին Բանկ Օթոմանը ... Ինչ վերաբերում է երիտասարդ թուրքերին, նրանք անընդունակ են թվում ըմբռնելու և գործադրելու մի փորձ՝ ռումբի կամ դժոխային մեքենայի միջոցով»[2]:

Սակայն գնալով հայերի շուրջ կասկածներն ուժեղանում էին: Թուրքական և եվրոպական մի քանի թերթեր ուշադրությունը կենտրոնացնում էին միայն հայերի վրա:

Գերմանական "Freie Presse" թերթը հուլիսի 22-ի համարում հիշեցնում էր, որ սուլթանի մահափորձից մի շաբաթ առաջ Հայդար փաշա կոչված թաղում, որ գտնվում է մայրաքաղաքի ծայրամասում, ոստիկանությունը խուզարկություն է կատարել Նազարեթ անունով մի հայի հյուրանոցում և այնտեղ գտել դինամիտային ռումբերով լի մի արկղ: Հյուրանոցի տերը ձերբակալված է:

Նույն հուլիսի 22-ի թվով "Berliner Tageblatt" թերթը գրում էր. «Թվում է, թե [սպանության] փորձի հեղինակը հայ է, պատկանում է միջազգային այն կոմիտեին, որ ապստամբություն է պատրաստում և՛ Ռուսական, և՛ Թուրքական Հայաստանում»: Այնուհետև նշում էր, որ «եթե նկատի ունենանք Տաճկաստանում իշխող հեղափոխական հոսանքներն ու խռովությունները, կատարվածը չպիտի զարմացնի մեզ: Ամենաշատը մենք կարող ենք զարմանալ, որ այդ փորձը չի կատարվել սրանից շատ առաջ»:

Անդրադառնալով Կ.Պոլսում կատարվող ձերբակալություններին և քննություններին՝ "Die Zeit" թերթը օգոստոսի 1-ին մի այլ հաղորդագրության մեջ գրում էր. «Քննությունները ոչ մի դրական արդյունք չեն տալիս, որովհետև

---

[1] **«Դրոշակ»**, N 8(161), օգոստոս, 1905, Հավելված, էջ 1:

[2] Հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Դրոշակ»**, N 9 (162), սեպտեմբեր, 1905, էջ 142:

անհետ չքացել են խորհրդավոր կառքի կառապանը և տերերը, որոնք, կարծում են, եղել են ծպտյալ ռուսահայեր, չքացել է նաև ֆրանսերեն և իտալերեն խոսող այն պարոնը, որը կառքը ստացել է մաքսատնից»:

Օգոստոսի 3-ին "Freie Presse"-ն գրում էր. «Մի հայուհի, ռուսահպատակ, Պետրովա ազգանունով, խիստ կասկածելի է երևում: Կարծում են, որ նա է փորձ արել սպանել սուլթանին: Այդ օրիորդը Պոլիս էր եկել Հունաստանից՝ մահափորձի նախընթաց օրը և մի օր հետո գնացել է Ռումինիա»:

Կատարված հարցաքննությունների արդյունքում օգոստոսի սկզբին Թուրքիայի ոստիկանական շրջանները վերջնական եզրակացության էին եկել, որ մահափորձ կատարողները հայեր են:

Ոչ քիչ թվով եվրոպական թերթեր հաղորդումներ էին տպագրում դեպի թուրքական սուլթանը ցավակցական զգացմունքներով: Այդ տեսակետից հատկապես աչքի էր ընկնում գերմանական "Norddeutsche Allgemeine Zeitung"-ը: Միք. Վարանդյանը գրում է. «Տեղ-տեղ, անշուշտ, կը լսվեին կեղծ, շահախնդիր համակրանքի խոսքեր Համիդի հասցեին: Այդպես, օրինակ, Բելջիկայի խորհրդարանին մեջ նախարարը փորձեց դատապարտել Կ.Պոլսոյ դավադրությունը, վեր հանելով քաղաքակիրթ մարդկութեան ծանոթ սկզբունքը, որ կը հռչակե, թե «մարդկային անձը սուրբ է, անբռնաբարելի»: Բայց մինիստրական ճառեն յետոյ նույն խորհրդարանի մեջ որոտաց ընկերվարական Վանդերվելդի վրիժառու ձայնը, որ ցասումով կը յայտարարեր ի լուր աշխարհի, թե մարդկային անձի սրբազանութեան հավատամքը գործ չունի Աբդուլ Համիդի հետ, վասնզի նա բռնակալ մըն է, որ դուրս է վտարված մարդկութեան շրջանակներեն» - "un despote au ban de J'humanite' "[1]:

Բայց եվրոպական, հատկապես գերմանական մամուլի օրգանների մեծ մասը, այնուամենայնիվ, ընթերցողներին ճշմարիտ էր ներկայացնում Կ. Պոլսում տեղի ունեցածը: «Երլդզի ռումբը, - նշել է Վարանդյանը, - չյարոյց ցասման ու կատաղութեան շանթեր դեպի անյայտ դավադիրները՝ անգամ բուրժուապահպանողական թերթերու մեջ: Իսկ բոլոր դեմոկրատ, պարկեշտ օրգանները կը բացատրեին, կը պատճառաբանեին յեղափոխականներու արարքը և նույն իսկ կը ջատագովեին զանոնք, վեր հանելով սուլթանական ոճիրները, մասնավորապես 1895-96-ի հայոց ջարդը»[2]:

Օրինակ՝ գերմանական "Vorwarts" թերթը «Թուրքական ռումբը» խորագրով հոդվածում գրում էր, որ սուլթանի մահը կողջուներ իրեն հարգող ամեն մարդ, որը ծանոթ է նրա գործած սարսափելի հանցանքներին: «Ուժի միջոցով բռնապետությունը տապալելու փորձը, որ այժմ սասանում է Ռուսաստանը, գործադրվում է նաև Թուրքիայի նկատմամբ, այն պետության, որը Ռուսաստանի պես ինքն իրեն փակում է նոր ժամանակի զարգացման առջև և որի

[1] Միքայել Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 126-127:
[2] Նույն տեղում, էջ 126:

պետը ցարի նման արյունալի բռնությամբ ճնշում է ամեն մի շարժում դեպի ազատություն և քաղաքական իրավունք»[1]:

Իսկ ինչպե՞ս ընդունեցին Համիդի դեմ կատարած մահափորձը սուլթանական կարգերին ընդդիմադիր թուրք հեղափոխականները:

Երիտասարդ թուրքերի ժնևում հրատարակվող «Իթթիհադ» ամսաթերթը այդ առթիվ հետևյալ խորհրդածությունն էր անում. «Մարդկային կյանքի սպանության փորձի համար պետք է ցավել: Բայց արդյո՞ք կարելի է ցավ զգալ մի արարածի համար, որ գիշեր ու ցերեկ հազարավոր գարշելի ոճիրներ է գործում, առանց խղճմտանքի կրծանում է կայսրությունը՝ նրա տարբեր ժողովուրդների միջև սերմանելով ատելություն»[2]:

Երիտթուրքերի պարագլուխ Ահմեդ Ռիզան Փարիզում հրատարակվող իր «Մեշվերեթ» թերթում գրում էր. «Աբդուլ Համիդը կատարելապես գիտե, որ ժողովուրդը իրեն ատում է, նզովում և իր արագ կորուստն է մաղթում: Այդ բանն իմանալով է, որ նա երբեք Երլդզի թաղից դուրս չի գալիս և Երլդզի Քեոշքը գիշեր ու ցերեկ պաշտպանված է 20 հազարանոց զորքով: Այն օրը, երբ ստիպված է լինում կայսերական պալատից իջնել բակ և գնալ մզկիթ, այդ պահը նրա համար սարսափելի է լինում»: Ռիզան նշում էր, որ սուլթանի փրկության միակ ելքը երկրում սահմանադրական կարգեր մտցնելն է, և դրա համար պահը շատ հարմար է, քանի որ «Ռուսիան կլանված է պատերազմով և ներքին խառնակություններով, մի բան, որ մեզ ասպարեզ կտա գործադրելու ազատական բարեփոխումներ: Այսպիսի նպաստավոր առիթից չօգտվելը ոճիր է»[3]:

Իսկ ժնև հասած վրիժառուների հոգին ալեկոծվում էր ճակատագրական անհաջողությունից: Մայր առան փոխադարձ մեղադրանքները և դժգոհությունները: Անհաջողության համար ամեն մեկը պատճառը փնտրում էր մյուսի մեջ և այդ կերպ թեթևացնում իր վիշտը:

Հետագայում միայն պարզվեց, որ ոչ ոք մեղավոր չէ, որ գործողության բոլոր մասնակիցները մեծագույն պատասխանատվությամբ և բացառիկ անձնուրացությամբ են կատարել իրենց տրված հանձնարարականը, որ անհաջողության պատճառներն ուրիշ են եղել՝ հիմնականում երեքը.

1. Ջարչի վաճառականը, որից գնվել էր պայթուցիկը, գումարը ստացել էր ամենաբարձր որակի ապրանքի համար, բայց փոխարենը տվել էր ամենացածր տեսակի և խարդախված մելինիտ՝ դրանով իսկ շահելով մի քանի հազար ավելի ֆրանկ: Քիմիկոս Նիկողայոս Տեր-Սարգսյանը (չուշեցի), որ հիմնավորված էր Փիլիպեում, պահեստում մնացած նույն պայթուցիկից վերցրած նմուշները լաբորատոր քննության ենթարկելով՝ եկել էր այն եզրակացության, որ

[1] Հոդվածի թարգմանությունը տե՛ս «Դրոշակ», N 8(161), օգոստոս, 1905, Հավելված, էջ 6:
[2] Նույն տեղում, էջ 7:
[3] Նույն տեղում:

նրա ընդհանուր ծավալի մեջ մելինիտը կազմում է ընդամենը 20%, իսկ մնացած 80%-ը բերտոլետյան աղի և այլ նյութերի խառնուրդ է ներկայացնում: 2. Ռումբի ներսում եղած ավելի քան 120 կիլոգրամ նյութն ամբողջովին չէր պայթել նաև այն պատճառով, որ երկաթե արկղի (սնդուկի) պատերը թույլ են եղել: Եթե այն պատրաստված լիներ ավելի ամուր, այսինքն՝ ավելի հաստ պատերով և ավելի բարձրորակ երկաթից, կպայթեր ներսում եղած ողջ մելինիտը, և հետևանքը սոսկալի կլիներ: 3. Սուլթանը ողջ էր մնացել նաև այն պատճառով, որ մզկիթում կես րոպե ուշացել էր՝ խոսքի բռնվելով պալատականներից մեկի հետ: Նա հազիվ էր դուրս եկել մզկիթի սանդուղքների առաջին աստիճանի վրա, երբ այդ վայրկյանին պայթյունը տեղի էր ունեցել մոտավորապես 35 մետրի վրա, այնինչ եթե խոսքի բռնվելու պատահականություն չլիներ, Մեծ մարդասպանը պայթյունի ժամանակ պիտի գտնվեր 25 մետրի վրա, և այդ դեպքում շատ ավելի հավանական կլիներ նրա տապալումը[1]:

Ոչ միայն փլվել էր ձեռնարկի գործը, այլև հայությունը նոր զոհեր էր տվել: Սպանվել էին Քրիստափոր Միքայելյանը և Վռամ Բենդիրյանը, թուրքական դատարանի կողմից մահվան դատապարտվեցին Մանուկ Ցումատյանը, Նշան Հովհաննիսյանը, Առաքել Նահապետյանը, ցկեանս բանտարկության պատիժ ստացան Հովհաննես Ղարիբյանը, Հովսեփ Թոփալյանը, Բրո Պաղտոյանը, 15 տարվա բանտարգելության դատապարտվեցին բիթլիսցի Մանուկ Օրոյանը, մշեցիներ Պողոս և Մանուկ Կեչյանները:

Սուլթանի ցասումը մեղմելու համար ոստիկանությունը ձերբակալեց նաև բազմաթիվ ոչ հայերի՝ բուլղարների, մակեդոնացիների, արաբների, դալմաթների, նույնիսկ երիտթուրքերի: Ձերբակալվեցին նաև մի քանի եվրոպացիներ, որոնց թվում կային «Վիշապի գործի» մասնակիցներ, ինչպես օրինակ՝ բելգիացի Ժորեսը, որը ջերմ համակրանք և հիացում ուներ դաշնակցության հանդեպ: Նա իրեն արտակարգ համարձակ պահեց քննիչ հանձնախմբի առջև, հրաժարվեց մատնել իր հայ ընկերներին, իսկ դատավարության ժամանակ չթաքցրեց, որ ինքը բարեկամ է Հ.Ց. դաշնակցությանը, ատում է բոլոր բռնավորներին, Աբդուլ Համիդին համարում է ոսոխ, միացել է հայերին հոգու թելադրանքով և նպատակ է ունեցել՝ ամեն կերպ նրանց աջակցել՝ տապալելու արյունարբու սուլթանին: Ժորեսը դատապարտվեց մահվան, բայց Բելգիայի և եվրոպական մի շարք երկրների կառավարությունների միջամտությամբ նա ազատ արձակվեց ու վերադարձավ հայրենիք:

Դաշնակցությունը ահռելի ջանքեր թափեց, տվեց թանկագին զոհեր, ծախսեց դրամական մեծ միջոցներ, բայց արդյունքը եղավ ցավալի: Ավելին, սուլթանի մահափորձը Եվրոպայում չունեցավ այն արձագանքը, որ կուսակցությունը սպասում էր: 1905թ. օգոստոսի 1-ին Հ.Ց.Դ. արևմտյան բյուրոյի անունից Ռոստոմը արևելյան բյուրոյին գրած նամակում ցավով հաղորդում

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 256-257:

էր. «Եվրոպական մամուլը հարկ եղած ուշադրությունը չդարձրեց, մանավանդ ֆրանսիականը. գերմանացիք ավելի գրեցին»[1]:

« Վիշապի » անհաջող ձեռնարկից հետո տապալվեց նաև Ոսկեհանքի (Իզմիրի) ծրագիրը, որն, ի դեպ, ավելի վատ էր նախապատրաստված, քան «Նժույգի գործը»:

Հ.Ց.Դ. արևմտյան բյուրոյի անունից 1905թ. հուլիսի 26-ին Ոսկեհանքի Հ.Ց.Դ. հատուկ մարմնին ուղարկած նամակում Ռոստոմն անհանգստություն էր հայտնում այն կապակցությամբ, որ տեղի ընկերներն իրենց հանձնարարած ձեռնարկի իրականացումը համարում են հայկական ընդհանուր խնդրից բաժան մի գործ և, «Նժույգի ձեռնարկի» անհաջողությունից հետո խուճապի մատնվելով, ձգտում էին «ծանր բեռից» ազատվելու համար չտապ իրականացնել ծրագիրը, որի նախապատրաստման գործում դեռևս մեծ թերություններ կային: Նամակում Ռոստոմը պատվիրում էր «Նժույգի» անհաջող գործողությունից հետո ակնդետ հետևել իրադարձությունների հետագա զարգացմանը և ձեռնարկը կատարել միայն Հ.Ց.Դ. վերին մարմնի լրացուցիչ հրահանգով: Նա գրում էր.

«Ընդհանուր ժողովի որոշումը ձեզ ոչ մի իրավունք չի տալիս բռնելու այն ընթացքը, որին դուք յամառաբար դառնում եք ամեն անգամ: Ի զուր եք պընդում ձեր տեղական պայմանների ստիպողականութեան վրայ: Ամեն մի յեղափոխական մարմնի համար ստիպողական կարող են լինել միմիայն գործի ընդհանուր շահերը և ոչ թե այլ և այլ տեղական պայմաններ: Մարմինը հենց նրա համար է Մարմին, որ տեղական պայմանները հարմարեցնի և ծառայեցնի գործի ընդհանուր պահանջներին և ոչ թե ենթարկվի դրանց:

Ինչ տեսակետից էլ նայելու լինենք խնդրին՝ ընկերական թե իրավաբանական, դուք անպայման պետք է ենթարկուիք Խորհրդի որոշումներին, ձեր պայմանները նրան հարմարեցնելով, թե չէ ձեր տատանվող տրամադրությունը ավելի ևս կը խառնե գործի կանոնավոր ընթացքը: Մի՛ շփոթուեք, մի՛ կորցնեք ձեր պաղարյունությունը: Մի՞թե կարծում եք, որ եղել են կամ կարող են լինել դավադրական գործողություններ, որոնց պատրաստութեան շրջանը ապահովուած լինի պատահարներից: Կամ քի՞չ են վտանգուել գործեր, բոլորովին պատրաստ, սպասելով յարմար րոպեի»[2]:

Ռոստոմն ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ կազմակերպության մեջ կան մարդիկ, որոնք բերանբաց են և կարող են անգիտակցաբար ու ակամայից գաղտնիքներ դուրս տալ ու վտանգել ամբողջ գործը:

Մտավախությունը զուրկ չէր հիմքից: Թե ումից և ինչ ճանապարհով Անդրե Պրոտոպապա անունով իզմիրցի մի հույն վաճառական իմացել էր սպասվելիք գործողության մասին, հայտնի չէ: Նա անմիջապես հայտնել էր իշխանու-

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 257:
[2] Նույն տեղում, էջ 256:

թյուններին, որոնք արագ գործողություններով բացահայտել էին ծրագիրը: "Frankfurter Zeitung" թերթի թղթակիցը օգոստոսի 16-ին Զմյուռնիայից (Իզմիր) գրում էր, որ հայկական կոմիտեն նախատեսել է սուլթանի գահակալության տարեդարձի օրը՝ սեպտեմբերի 1-ին, իրագործել բոլոր հյուպատոսարանների, բանկերի և հասարակական հիմնարկների ավերումը: «Ռեյտեր» գործակալությունը հայտնում էր, որ բոլորը կապ են տեսնում սուլթանի մահափորձի և Զմյուռնիայում սպասվելիք դեպքերի միջև[1]: Իսկ "Daily Mail" թերթը գրում էր, թե Զմյուռնիայի հայկական ծրագրի բացահայտումը մեծ սարսափ է տարածել ամբողջ օսմանյան կայսրության մեջ:

«Վիշապում» ծավալված հաշվեհարդարներին հետևեցին Ոսկեհանքում սկսված բռնությունները: Հայտնաբերվեցին պահեստավորված համարյա բոլոր նյութերը: Անցագրային բյուրոն և կայարանները ենթարկվեցին խիստ հսկողության: Քաղաքի հայկական թաղը լցվեց զորքով: Ձերբակալվեցին և բանտ նետվեցին բազմաթիվ հայեր, որոնց մի մասը բանից բոլորովին անտեղյակ էր, իսկ դաշնակցական գործիչ Պետրոս Սեմերջյանը կախաղան հանվեց[2]: Մեծ հուզմունք էր տիրում ողջ Զմյուռնիայում: Քաղաքի հայերը ոչ առանց հիմքի երկյուղ էին կրում, որ ուր որ է սկսվելու են զանգվածային կոտորածներ:

Այս անգամ, սակայն, Ելդզի բորենին չհանդգնեց հայերի զանգվածային նոր ջարդերի դիմել ո՛չ Իզմիրում և ո՛չ էլ Պոլսում: Եվրոպական հասարակական կարծիքը ոչ միայն չէր դատապարտել հայերին, այլև համակրանք էր արտահայտել հայ ահաբեկիչների կատարած մահափորձի նկատմամբ: Եվ Համիդը ստիպված էր հաշվի նստել հասարակական կարծիքի հետ:

Թեկուզ «կարմիր» մարդասպանը ողջ էր մնացել, բայց անհայտ հերոսները, որոնք հղացել էին արդար պատիժը, իրենց գերբնական անձնուրացությամբ բոցավառել էին հայերի երևակայությունը և նրանց հոգում անհուն հպարտության զգացում ծնել: Դեռ հայտնի չէր հեղինակը, Սիամանթոն նրան համարում էր «աստվածառաք ու չքեղ ու անպարտելի Անծանոթ»:

«Հայորդիները» բանաստեղծական շարքի «Փա՛ռք ահաբեկիչներուն» մասում (Զ. մաս) Սիամանթոն (Ատոմ Եարճանյան) փառաբանում էր հայ նեմեսիսների անձնազոհությունը, ժողովրդի ազատագրության գործին նրանց անեզր նվիրվածությունը: Նա գովերգում, ջատագովում ու շեփորում էր հայ վրիժառուների անպարտելի երկաթեղեն ու արդարակշիռ ձեռքերը, նրանց զինավառ ու կրակոտ կրծքերից դուրս ժայթքող վրեժի աղաղակը: Արյունաբերան ու եղեռնապաշտ բռնապետների պատժիչներին բանաստեղծը համարում էր ինքնիշխան գերագույն դատավորներ: Ճշմարտության ճամփաների

[1] «Դրոշակ», N 9 (162), սեպտեմբեր , 1905, էջ 142:
[2] «Նյութեր...», հատ . Բ, էջ 255:

վրա հայոց որդիների կողմից չարին հասցրած բազկազարկերն այնքան արագ էին ու այնչափ խորտակիչ, որ բանաստեղծը դրանք համեմատում էր «խավարակուռ անտառներ մոխրացնող վայրկենական կայծակներուն...» հետ:

Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք և ո՛չ ձեր հաւատքին վրայ իշխողներ,
Դուք, – դուք ձեր անձն էիք անսահմանօրէն և ձեր արփաթև հոգին,
Ձեր Եսը գերագոյն – մարդուն եան է ամեն զօրութենէ գերիվեր,
Ձեր վճիռը ամեն վճռի մահավճիռն է անողոք,
Եւ վա՜յ անոնց, որոնք ձեր կարմիր և մահացու կնիքովը կը խարանուին...

Հայ արիների զարհուրաբեր վրեժաձայնը աստվածագոչ արդարության ձայնն է, Ազատության ձայնը, բազկահարվածը պատվերն է մայր երկրի: Քաջազունների ցասումից ու զայրույթից ահավոր սարսափի մեջ են արյունակզակ ու դիվահար բռնապետները, որ արդեն դողում են մահվան գիշերասարսափ երազներից: Բայց պայքարը դեռ առջևում է, քանզի հայի տանջանքը շարունակվում է:

Բայց դեռ մա՛հ պէտք է որոտանք, մա՛հ պէտք է համասփռենք, մա՛հ պէտք է մրրկենք,
Այն ատելութեան և անբարշտութեան չարաշուք պալատներուն վրայ,
Որոնց զանգուածներուն տակ իբր հիմնաքար մեր ցեղին մտածումը և մարմինը և հոգին է որ կը հեւայ...
Որոնց որմերը մեր արիւնովն են շաղախուած և մեր ոսկորներովը կառուցուած...
Որոնց աղբիւրները մեր անօգուտ արցունքներէն են առատ,
Եվ զինովութեան ու եղեռնի բաժակները, ձեռքէ ձեռք շրջող, մեր արիւնովն աւլցուած...
Մա՛հ պէտք է համասփռենք հոն, ուր մեր ստրուկի ծնրադիր պաղատանքները չի հասան...

Հայության արյունը ոթող բռնապետ թագակիրը և նրա սատրապները հիմա սարսափ են ապրում հայ քաջազունների մոխրացնող զարկերից: Նրանց սրերի բոցից ահաբեկ մարդասպանները զարհուրանքից կրճտացնում են ատամները, նոր ոճիրներ են նյութում, պատրաստվում նոր հայակերության: Ուստի՝

Մա՛հ այդ թագակիր, բայց արդէն ահաբեկեալ և կիսամեռ դահճապետներուն,
Վասն զի, իրենք, այդ արիւնկզակ և դիւահար բռնաւորները վախճանաւոր,

Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը, ձեր բարկությունը, ձեր ցասումը,
ձեր զայրույթն ահաւոր...
... Ուրեմն ոտքի՛, նորէն ոտքի՛, նորէն ոտքի՛ Հայորդինե՛ր,
Դիւցազուննե՛ր, Ազատաբերնե՛ր,
Ոտքի՛, և օդերուն մէջ, օդերուն մէջ թո՛ղ ցնդին, օդերուն մէջ թո՛ղ
մոխրանան
Մեր բռնաւորներուն սա՛ պատժապարտ պալատներն արիւնաթոր ...
Եըլտըզ - Քեռչք և Զարըսքոե Սելօ ...:

*Աբդուլ Համիդի սպանության փորձը թեև վերջացավ անհաջողությամբ, բայց որոշ զսպիչ ազդեցություն ունեցավ: Կազմակերպված ահաբեկչությունը արդարացի էր. չէ՞ որ ծրագրվել էր տապալել մի մարդու, որն ամբողջ մի ժողովրդի համար դահճի դեր էր խաղացել քառորդ դար շարունակ: Երիցս արդարացի էր ձեռնարկը, քանզի Մեծ մարդասպանի ձեռքերը թաթախված էին ոչ միայն հայերի, այլև օսմանյան կայսրության սահմաններում հեծող քրիստոնյա մյուս ժողովուրդների արյան մեջ**:*

Սուլթան Համիդի անհաջող մահափորձը և Իզմիրի ծրագրի տապալումը ցույց տվեցին նման (թեկուզ և արդարացի) ձեռնարկների անարդյունավետությունը և անհեռանկար լինելը: Հայ հասարակության ոչ բոլոր քաղաքական ուժերն էին հավանություն տալիս սուլթանի 1905թ. հուլիսի 21-ի մահափորձին: Այն դատապարտեցին պահպանողականները և ազատականները մի կողմից, սոցիալ-դեմոկրատները՝ մյուս կողմից, Մ. Փորթուգալյանը «Արմենիայում» գրում էր. «Շատ հույս չկա, թե սուլթանի փոխուելովը Հայաստանի վարչական դրությունն ալ պիտի կրնա փոխվիլ»[1]: Կատարվածին բացասական արձագանք տվեց Ա. Զոպանյանը[2]: Դժգոհ էր Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, որը ընդհանրապես դեմ էր տեռորին, գտնելով, որ այն միայն մնաս է բերել հայկական խնդրին[3]:

Նույնիսկ դաշնակցության շարքերում հասունանում էր այն միտքը, որ Աբդուլ Համիդին վերացնելով՝ ոչինչ չի փոխվի: Օրինակ՝ Վասպուրականի դաշնակցական ղեկավարությունը կուսակցության կենտրոնին ուղարկած տեղեկագրերից մեկում գրում էր. «Ախր մի քիչ պետք է հեռատես լինել: Սուլթանը սպանելով՝ հայի չարիքը չի վերջանայ, ո՛չ: Հայրենիքից հեռու, շատ հեռու մի անկախ վայրում ռումբ պայթեցնելով՝ տաճկահայը չի շահի»[4]: Դաշնակցությունը հիմա՝ Կ.Պոլսի խոշոր անհաջողությունից հետո, տրամադիր էր վերաքննելու իր տեռորի տակտիկան՝ նրանից ոչ թե մեկընդմիշտ հրաժարվելու, այլ այն միայն բացառիկ դեպքերում գործադրելու համար, այն էլ՝ Հ.Ց.Դ. կ.կոմիտեների գիտությամբ:

Դրա փոխարեն անհրաժեշտ էր ավելի ընդլայնել պրոպագանդան հայության լայն զանգվածների շրջանում, ավելի մեծ եռանդով շարունակել ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, ուժեղացնել կովկասահայերի կողմից թուրքահայությանը ցուցաբերվելիք օգնությունն ու աջակցությունը և, վերջապես, ամեն կերպ ամրապնդել Երկրում գործող կուսակցական կազմակերպությունները:

* *Զարըսքոե Սելօ (Ցարսկոյե Սելո) - ռուս ցարերի թագավորական պալատ Պետերբուրգի մոտ:*

** *Ուրիշի երկիրը նվաճողի դեմ վաղ թե ուշ առաջ է գալիս երկրի իսկական տիրոջ ազատագրական կռիվը: Մեծ թվաքանակով հարատահարված ժողովուրդը օտար բռնադատչի դեմ պայքարում սովորաբար ի զորու է մարտադաշտ հանել ապստամբական զանգվածային ուժեր: Փոքր թվաքանակով ժողովրդի պարագայում վիճակն այլ է. նրա պայքարը բացառապես կրում է պարտիզանական կռվի բնույթ: Դեռ չի եղել որևէ պարտիզանական շարժում, որը չձեռնարկի ահաբեկչական ակտեր: Տնտեսապես թույլ, կանոնավոր զինված ուժեր չունեցող, նվաճված ժողովրդի արդար պայքարը մշտապես ուղեկցվում է ահաբեկչական գործողություններով: Իհարկե, չի կարելի արդարացնել պայքարի այդ մեթոդը: Բայց պարզից էլ պարզ է, որ անհատական կամ խմբական ահաբեկչության բուն պատճառը օտար զավթիչն է, ավազակ պետությունը, որի դեմ նվաճված թույլ ժողովուրդը կռվի այլ միջոց չունի: Հայոց հայրենիքը զավթած թուրք օկուպանտը հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման առաջացման պատճառն էր: Շարժման առաջին երկու տասնամյակներին պայքարի ձևերը հիմնականում երկուսն էին՝ ֆիդայական կռիվ և առավել ատելի պաշտոնյաների ու դավաճանների ահաբեկում: Դրանք պետական ահաբեկչության դեմ ուղղված ստիպողական գործողություններ էին: Աշխարհի հզորները չեն ընդունում պետական ահաբեկչությունը, և հենց նրանք են հնարել «միջազգային ահաբեկչություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ներկայումս դրա հեղինակը Պաղեստինի արաբ ժողովրդի հայրենիքը զավթած միջազգային սիոնիզմն է, որն իր մագիլների մեջ առնելով աշխարհի երկու հզոր տերությունների՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի տնտեսական ու ֆինանսաբանկային համակարգերը, մեծապես ազդում է նաև նրանց ներքաղաքական կյանքի ու հատկապես արտաքին քաղաքականության վրա: Պետական ահաբեկչության քաղաքականությունը մեր օրերում ամբողջովին որդեգրել է ԱՄՆ-ի վարչակարգը, որը, օգտվելով միաբևեռ աշխարհում իր համար ստեղծված բացառիկ բարենպաստ իրավիճակից, անպատիժ իրականացնում է ահաբեկչական սանձարձակ գործողություններ այնտեղ, որտեղ ինքն է ցանկանում ելնելով ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի շահերից: Ըստ որում, վարչակարգն ինքն է որոշում, թե աշխարհի որ երկիրն է «դեմոկրատական» և որը՝ «չարիքի աղբյուր», «միջազգային տեռորիստական այլանսի անդամ», որին և սպառնում է իր զինված ուժերի ողջ հզորությամբ:*

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՎԿԱՍԻՑ

Չնայած սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին, Անդրկովկասի հայ բանվորությունն այն աղբյուրն էր, որից առատորեն սնունդ էր ստանում հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը: Արևմտահայության ազատության համար Անդրկովկասի հայ աշխատավորը չէր խնայում ոչինչ: Իր ստացած եկամտի մի զգալի մասը նա ներմուծում էր ազգային զանձարկղ, նպաս-

[1] **«Արմենիա»**, *20 դեկտեմբերի 1905թ.:*
[2] **ԳԱԹ**, *Արշակ Զոպանյանի ֆոնդ, ց. 1, բաժ. 1, N 663:*
[3] *Տե՛ս* ***Մաղաքիա արքեպ. Օրմանեան****, Ազգապատում, հատ. Գ, էջ 5439:*
[4] **«Նյութեր...»**, *հատ. Դ, էջ 46:*

տում զենքի ու զինամթերքի ձեռքբերմանը:

Սասնո կռիվներից անմիջապես հետո դաշնակցության ղեկավարությունը որոշեց վերակազմակերպել ուժերը բուն Երկրում: Դա թելադրված էր ոչ միայն նրանով, որ ապստամբության ընթացքում կազմակերպությունը կրել էր մեծ կորուստներ, այլև նրանով, որ նրա մի շարք ղեկավար գործիչներ՝ Անդրանիկը, Մուրատը, Սեպուհը և ուրիշներ, կուսակցության որոշմամբ Երկրից հեռացել էին: Շատերն էին պնդում, թե առայժմ անհնարին և անմիտ է Երկրում ծավալել հեղափոխական գործունեություն, բայց դաշնակցության վերին մարմինները գտնում էին, որ անհրաժեշտ է ղեկավար գործիչների, և ոչ միայն նրանց, կորուստները հնարավորին չափ լրացնել, նոր ուժեր ներգրավել պայքարի ղեկավարման գործի մեջ:

Իսկ որտեղի՞ց այդ ուժերը: Դրանց պահեստանոցն առաջվա պես մնում էր Ռուսահայաստանը: Հեղափոխական կոչերին կովկասահայ ընկալունակ երիտասարդությունը ձգտում էր դեպի Երկիր: Հատկապես Սասնո ապստամբության հերոսական օրերին, երբ լեռնավայրի հայությունն արյունահեղ կռիվ էր մղում թուրքական կանոնավոր զորքերի և քրդական բազմահազար համիդիեների դեմ, կովկասահայ երիտասարդությունը, զինված խմբեր կազմելով, խումբ առ խումբ գնում էր օգնության: Նա այլևս կանգ չէր առնում ոչ մի զոհողության ու վտանգի առջև: Կարծես կռիվը, տենդն ու հերոսական մահը հոգեկան պահանջ էին իր համար: Նա բավարարություն էր գտնում խիզախության, անձնազոհության մեջ: Հայի ցեղային բնազդները, ազգային կյանքը երբեք այդքան չքեղ ուժով չէին ձգվել դեպի ազատությունը, երբեք հայ երիտասարդության սիրտն այդքան հուզումով, այդքան կատաղի սիրով բաբախած չէր օրհասական կռվի ելած եղբայրների համար:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ

20-րդ դարասկզբին Ղարաբաղի կենտրոն Շուշին ապրում էր տնտեսապես արագ զարգացող և մշակութային կյանքով դեպի Արևմուտք հակվող տիպիկ արևելյան քաղաքի բուռն կյանքով, ուր եռանդուն դեր էր խաղում ուսումնասեր երիտասարդության մի ստվար բազմություն: Դեպի գիտության ձգտող երիտասարդները մեկնում էին ուսումնական կենտրոններ՝ շարունակելու ուսումնառությունը: Հարյուրից ավելի շուշեցի երիտասարդներ սովորում էին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի բարձրագույն դպրոցներում[1]: Ղարաբաղից (Լեռնային թե Դաշտային) սերված տասնյակ ու հարյուրավոր հայորդիներ այդ տարիներին բեղմնավորում էին հայոց կյանքը իրենց գիտելիքներով ու աշխատանքով: Անդրկովկասում և այլուր աշխատում էին մեծաթիվ տաղանդավոր գիտնականներ, բժիշկներ, ինժեներներ, կրթության գործի կազմակերպիչներ, գրողներ ու արվեստագետներ:

Ղարաբաղից են սերվել նաև հասարակական-քաղաքական, կուսակցական-հեղափոխական ականավոր ու նշանավոր բազմաթիվ գործիչներ, որոնք պատրաստ էին ամեն տեսակ տքնանքի ու զոհողության՝ հանուն իրենց ժողովրդի ազատության, հանուն բռնություններից ու հալածանքներից, հարստահարումից ու շահագործումից զերծ արդար հասարակության ստեղծման:

Այդ նրանք էին՝ բոլշևիկներ Բոգդան Կնունյանց, Վլադիսլավ Կասպարով, Ալեքսանդր Բեկզադյան, Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Աշոտ Հովհաննիսյան ..., դաշնակցականներ Արամ Մանուկյան, Սարգիս Բարսեղյան, Հոնան Դավթյան, Վարդան Մեհրաբյան, Նիկոլ Դուման, Արշակ Իսահակյան (Ջամալյան), Թուման Թումյան (Թորգոմ), Կոստի Համբարձումյան, Սարգիս Մանասյան, Միքայել Հովհաննիսյան (Վարանդյան), Եփրեմ Դավթյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Ստեփան Ստեփանյան, Մարգար Ժամհարյան (Մռավ)..., հնչակյաններ, մենշևիկներ, էսէռներ, կադետներ ...

Անունների լոկ այս թվարկումը հպարտությամբ է համակում հայոց սրտերը:

Նշանավոր գործիչների այդքան առատ, այդքան բեղմնավոր հունձքն արդյունք էր մտավոր-կրթական այն բուռն զարթոնքի, որ ապրեց Ղարաբաղը ընդամենը երկու տասնամյակի ընթացքում՝ սկսած 19-րդ դարի 80-ական թվականների կեսերից:

Մտավոր-մշակութային կյանքին զարկ էին տալիս Շուշիի ուսումնական երեք հաստատությունները՝ քաղաքային դպրոցը, ռեալական դպրոցը և թեմականը: Առաջին երկուսը ռուս պետական դպրոցներ էին, իսկ թեմականը Արցախի թեմի հոգևոր դպրոցն էր[1]:

Վերհիշելով նշված ժամանակաշրջանում Շուշիի մշակութային բեղուն կյանքը և հասարակական մեծ եռուզեռը՝ շուշեցի Առաքել Բաբախանյանը (Լեո) նկատում էր, որ դրան մեծապես տոն էր տալիս հատկապես թեմական դպրոցը, ուր խմբվել էր Ղարաբաղի «գործունյա, առաջավոր երիտասարդությունը»: «Նոր ժամանակ էր սկսվել»[2], - շեշտում էր նա:

Հիրավի, Շուշիի սրբատաշ քարերով կառուցված երեք հարկանի թեմական դպրոցը՝ փայլուն ուսուցչական կազմով, Ղարաբաղի սրտում եղել է լույսի օջախ՝ բացառիկ դեր խաղալով հայության կյանքում: Դպրոցը բացվել է 1838թ. հունիսին և սկզբում կոչվում էր «Հոգևոր ճեմարան վիճակին հայոց Ղարաբաղու»[3]:

«Երբ այսօրվա հեռվից մի ընդհանուր հայացք ես ձգում Շուշիի թեմական ուսումնարանի երախտալից գործունեության վրա, - գրել է նշանավոր պատ-

[1] Տե՛ս Հ. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ, էջ 226:

[1] «Հայրենիք», N 10, հոկտեմբեր, 1958, էջ 64-68:
[2] Լեո, Անցեալից, էջ 32:
[3] Տե՛ս Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 182:

մաբան, Ղարաբաղի պատմության հմուտ ուսումնասիրող Բագրատ Ուլուբաբյանը, - չես կարող հպարտությամբ չլցվել նրա համար, որ այնտեղ են գործել մեր ազգային մշակույթի փառավորված բազմաթիվ գործիչներ»[1]:

Հիրավի, հպարտանալու արժանի անուններ. Պետրոս Շանչյան, Սեդրակ Մանդինյան, Պերճ Ռոշյան, Ղազարոս Աղայան, Հրաչյա Աճառյան, Մանուկ Աբեղյան, Աշոտ Հովհաննիսյան, Արտաշես Աբեղյան, Լևոն Սարգսյան, Ստեփան Դեմուրյան և շատ ու շատ ուրիշներ[2]:

Դպրոցը ոչ միայն բազմակողմանի հարուստ գիտելիքներ է տվել երիտասարդությանը, այլև ազգային-հեղափոխական ոգով կրթել, դաստիարակել ու հրապարակ է նետել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի անզուգական գործիչների մի փայլուն համաստեղություն:

Երիտասարդների հայրենասիրական տրամադրություններն իրենց արտահայտությունն էին գտնում ռեալականի և թեմականի աշակերտական թերթերում, որոնք հրապարակվում էին ամիսը մեկ անգամ խմորատիպ կամ գրչագիր: Ռեալական դպրոցի «Искра» անունով ռուսերեն թերթը խմբագրում էր Միքայել Շահգելդյանը, իսկ թեմականի «Կոկոն» հայերեն խմորատիպ ամսաթերթը՝ Թուման Թումյանը (Թորգոմ): Թեմականում կար նաև կրտսերաց դասարանների խմորատիպ «Միածան» թերթը, որը համատեղ ուժերով լույս էին ընծայում Արսեն Տերտերյանը (Արշակունի), Նիկոլ Պողոսյանը, Թադե Պետրոսյանը, Սիմոն Նարինյանը (Մնար)[3]:

Երբ խմբագիրներն ավարտում էին դպրոցը և հեռանում, նրանց տեղը բռնում էին բարձր դասարանցիներից նորանոր ուժեր, որոնց ձեռքն էին անցնում նաև աշակերտական թերթերը: Օրինակ՝ «Կոկոն» թերթի խմբագրումն անցել էր Նիկոլ Պողոսյանին, որին աջակցում էր թեմականի աչքի ընկնող աշակերտ Ալ. Մատուրյանը՝ հետագայում նշանավոր սոցիալ-դեմոկրատ՝ «Ռուբեն» ծածկանունով[4]:

Դպրոցներում կային նաև աշակերտական միություններ, որոնք կազմակերպում էին ժողովներ, դասախոսություններ, դիսպուտներ, ներկայացումներ: Այդ բոլորից զատ թեմականից դուրս, քաղաքի ծայրամասային տներում տեղի էին ունենում, այսպես կոչված, «ինքնազարգացման խմբակային ժողովներ»:

Նման խմբակներից մեկը ղեկավարում էր բարձր դասարանցիներից Սարգիս Հովհաննիսյանը: Արդեն այդ ժամանակ նա քաղաքում ճանաչված հեղափոխական էր: Թեմականի աշակերտներից մեկը՝ ղափանցի Ստեփան Մելիք-Փարսադանյանը, որը այս խմբակի անդամներից էր, հետագայում վերհիշել է. «Նրա (Ս. Հովհաննիսյանի: - Հ.Ս.) հռչակն այնքան մեծ էր, որ պետա-

[1] Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 196:
[2] Տե՛ս Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցի (1838-1913), էջ 558, 559:
[3] «Հայրենիք», N 10, հոկտեմբեր, 1958, էջ 66:
[4] Նույն տեղում:

կան ժանդարմներն անգամ լսել էին նրա գործունեության մասին»[1] և ուզում էին որոնում նրան դպրոցից հեռացնելու ու նույնիսկ ձերբակալելու համար:

Թեմականի տեսուչ Բենիկ վարդապետը Լեոյի բնութագրմամբ՝ ամենակատարյալ խտացումն էր էջմիածնական ուղղության, այն է՝ «արհամարհել ժողովրդի ձայնը, մի կողմ նետել կանոնադրությունները, ամեն ինչ կարգադրել անձնական հայեցողությամբ, դպրոցը շրջապատել այնպիսի պատուարներով, որոնք արգելեին ժամանակի ոգու մուտքը, որոնք հնարավոր դարձնեին վանական մտքով հասկացուած այն կրոնական-բարոյական դաստիարակությունը, որ չէր կարող արմատ բռնել կեանքի մեջ ...»[2]:

Ընդառաջ գնալով ոստիկանության պահանջին՝ տեսուչը, դարավերջից սկսած, պարբերաբար դպրոցը «մաքրում» էր անբարեհույս տարրերից: Առաջիններից մեկը 1899թ. սկզբին դպրոցից հեռացվեց Սարգիս Հովհաննիսյանը, հետագա 2-3 տարում վտարվեցին ուրիշ 12 «անբարեհույսներ»:

Շուշիի թեմականից հեռացվածների մի մասը ուսումը շարունակում էր Երևանի թեմականում, որը տեղավորված էր ս. Սարգիս եկեղեցու բակում, առաջնորդարանին կից միհարկանի անշուք շենքում: Դպրոցի տեսուչն էր զարթաղցի Գարեգին վարդապետ Հովսեփյանցը: Նրա միջնորդությամբ Շուշիի թեմականից տեղափոխվել և այստեղ աշխատանքի էին անցել ուսուցիչներ Արշակ Չիլինգարյանը և Պատվական Քուշմանյանը՝ իրենց հետ բերելով ազատական տրամադրություններ ու գաղափարներ:

Երևանի թեմական ընդունված Սարգիս Հովհաննիսյանը 1901թ. բարձր առաջադիմությամբ ավարտելով դպրոցը՝ մեկնում է Բաքու, որն այդ օրերին Հ.Յ. դաշնակցության գործունեության կենտրոնն էր (Կովկասի դաշնակցական բոլոր մարմինները ենթակա էին Հ.Յ.Դ. Բաքվի կ. կոմիտեին): Սարգիսն անցնում է կ. կոմիտեի անմիջական տրամադրության տակ, կատարում պատասխանատու հանձնարարություններ: Մեկ-երկու տարի հետո նա դառնում է Բաքվի կազմակերպության ճանաչված գործիչներից մեկը: Քաղաքում արդեն նրան գիտեին Սերգեյ անունով:

Երբ էջմիածնի կաթողիկոսության կալվածքները պետականացնելու մասին 1903թ. հուլիսի 12-ի ցարական որոշման դեմ ուզի էր կանգնել ամբողջ հայ ժողովուրդը, Բաքվի կ.կոմիտեի հանձնարարականով Սերգեյ Հովհաննիսյանն անցնում է Գանձակ, կազմակերպում տեղի հայության դիմադրությունը, ապա նույն նպատակով մեկնում Թիֆլիս ու Ալեքսանդրապոլ:

Շուշիի թեմականի ազատական մթնոլորտում դաստիարակություն ստացած երիտասարդների մեծ մասի իղձն էր՝ կյանքում գտնե մեկ անգամ լինել Թուրքահայաստանում և հնարավորին չափ օգտակար լինել հարազատ ժողովրդի ազատագրական պայքարին:

[1] «Հայրենիք», N 10, հոկտեմբեր, 1958, էջ 66:
[2] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 561:

Փաստ է, որ 1904-1905 թվականներից սկսած մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքահայաստանի ազատագրական շարժման ղեկավարության մեջ տոն էին տալիս ծննդով ղարաբաղցի գործիչները, որոնց ղեկավարությունը տարածվում էր ողջ Վասպուրականի և Վանա լճից հարավ ու հարավ-արևմուտք ընկած ամբողջ տարածքի, այսպես կոչված Լեռնապարի վրա:

Եթե Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին Ղարաբաղի մասնակցությունը լուսաբանված է պատմագիտական ուսումնասիրություններում, հոդվածներում, հուշագրություններում, ապա Թուրքահայ ժողովրդի մղած ազգային ազատագրական պայքարում նրանց կատարած բացառիկ դերի մասին գիտությունը դեռևս չի ասել իր լիաբուռն խոսքը: Թուրքահայության ազատագրության պայքարին անմնացորդ նվիրված ղարաբաղցու կերպարը պատմաբանների, հոգեբանների, սոցիոլոգների բացահայտմանն է սպասում:

Ղարաբաղցի բազմաթիվ գործիչներից Թուրքահայ ազատագրական շարժման մեջ առանձնահատուկ դեր են կատարել Շուշիի թեմականում կրթություն ստացած վեց հեղափոխականներ՝ Սարգիս Հովհաննիսյանը (Արամ), Նիկոլ Պողոսյանը (նաև Միքայելյան), Եգոր Առուստամյանը (Մենակ), Թուման Թումյանը (Թորգոմ) և Իսայան Առաքելյանը (Կոլոտ): Սրանց պետք է ավելացնել նաև գանձակեցի Գրիգոր Վարդանյան-Օղաբաշյանին (Սարգիս Բարսեղյան):

Հայ հեղափոխական շարժման մեջ, սկսած 19-րդ դարի 90-ական թվականների կեսերից, առանձնակի դեր է ունեցել Կարսը, որը Երկիր գնացող ռուսահայ ազգային հեղափոխական ղեկավար գործիչների հիմնական հավաքատեղին էր: Կարսը այդպիսին էր նաև Սասնո ապստամբության պարտությունից հետո: Այն մնացել էր որպես տենդագին աշխատանքի ասպարեզ, հայդուկային խմբերի պատրաստման և դրանք սահմանից անդին ուղարկելու խարիսխ: Այստեղի աշխույժ հասարակական մթնոլորտում շատերն ստացան հեղափոխական մկրտություն, մարզվեցին ու ձեռք բերեցին անհրաժեշտ ռազմական գիտելիքներ, վարժվեցին զենք գործածելու մեջ, կոփվեցին ու թրծվեցին իբրև տոկուն մարտիկներ: Կարսում էր գործում Հ.Ց.Դ. խոշոր կազմակերպություններից մեկը՝ Ջրաբերդինը՝ իր կենտրոնական կոմիտեով: Քաղաքը դաշնակցության կուսակցական աշխատանքի ծավալման և կազմակերպության շարքերի համալրման կարևոր կենտրոն էր, հեղափոխական պրոպագանդայի, կադրերի գաղափարական դաստիարակության իսկական հնոց: «Աննկարագրելի եռուզեռ և ոգևորություն էր տիրում շրջանում»[1], - գրել է Արշ. Աստվածատրյանը:

Տարբեր տեղերից եկած երիտասարդ դաշնակցականների համար Կարսը կյանքի մեծ դպրոց էր: Նրանք կոփվում էին հեղափոխական գործի ու մտքի այս դարբնոցում, ձեռք բերում ազատագրական պայքարի ղեկավար գործիչներ համար անհրաժեշտ հմտություններ, միաժամանակ պրոպագանդիստական-կազմակերպական աշխատանքներ էին տանում քաղաքի և Կարսի մարզի հայ բնակչության մեջ:

Շուշիի թեմականի ազատախոհ աշակերտներից առաջինը Կարս եկավ **Իսայան Առաքելյանը**: Նա եղել է դպրոցի ամենատաղանդավոր աշակերտներից, ակտիվորեն մասնակցել է քաղաքի հասարակական կյանքին, անդամագրվել Հ.Ց.Դ. Շուշիի կազմակերպությանը և կատարել պատասխանատու հանձնարարություններ: Բայց նրա մեծ երազը մնում էր Թուրքահայաստան անցնելը: Կուսակցությունը նրան ուղարկել էր Կարս՝ նախապատրաստվելուց հետո Երկիր անցնելու համար:

Իսայան Առաքելյանին հաջորդել էր **Եգոր Առուստամյանը**:

Արցախի Վարանդայի գավառի Քռասնի գյուղը տվել է հայ ազգային ազատագրական շարժման երկու խոշոր դեմք՝ ականավոր դաշնակցական գործիչներ Նիկոլ Պողոսյանին (1883-1915) և Եգոր Առուստամյանին (1882-1903):

Գյուղում տարրական ուսում ստանալուց հետո Եգորն ընդունվել էր Շուշիի թեմական դպրոցը, որտեղ հանդես էր բերել բարձր առաջադիմություն, գրում էր բանաստեղծություններ ու երգեր, Ավ. Իսահակյանի բանաստեղծական տեքստի վրա ստեղծագործել էր «Մաճկալ ես, բեզարած ես» հայտնի երգի երաժշտությունը: Դա հետագայում երկուսի միջև ջերմ հարաբերությունների հաստատման պատճառ էր դարձել:

Երիտասարդ հեղափոխականին վիճակված էր ապրել հոգեկան ծանր տվայտանքներ: Մանթանալով Կնունյանցների հայտնի ընտանիքի դուստր Փառանձեմի հետ՝ նա ջերմագին սեր է տածում օրիորդի հանդեպ, բայց մնում անպատասխան: Մերժված սիրո պատճառով Եգորն ընդունում է «Մենակ» ծածկանունը՝ «առանց սիրած աղջկա» իմաստով:

1900թ. ավարտելով դպրոցը՝ Եգորը մեկնում է Բաքու և անցնում դաշնակցության տեղի կազմակերպության տրամադրության տակ, պրոպագանդիստական աշխատանք տանում հայ բանվորության շրջանում: Բայց նրա այդօրինակ աշխատանքը երկար չի տևում, Եգորի խնդրանքով կուսակցությունը նրան ուղարկում է Կարս:

Հետևելով իր ընկերների օրինակին՝ Շուշին թողնում է նաև **Թուման Թումյանը**: Նա Նիկոլի, Իսայանի և Եգորի հետ սովորում էր թեմականի նույն դասարանում: Դպրոցի տաղանդավոր աշակերտներից էր և իր ընկերներից ամենից շուտ էր ընդունվել դաշնակցության մեջ, երբ դեռ 16 տարեկանը չէր լրացրել:

1903թ. սկզբին Թումանը Շուշիից մեկնում է Կարս և այնտեղ միանում Եգորին ու Իսայանին:

Շուտով Շուշիից մեկնում է նաև **Նիկոլ Պողոսյանը** :

Բնածին տաղանդ էր Նիկոլը, թեմականի ամենաջանասեր աշակերտներից մեկը: Բոլոր առարկաներից գերազանց էր: Ուսուցիչներն այն կարծիքին էին,

[1] «Արամը», Թեհրան, 1969, էջ 147:

որ ցանկացած մասնագիտություն ընտրելիս՝ Նիկոլին սպասվում է փայլուն ապագա:

Բայց ազատատենչ պատանին չկարողացավ տանել թեմականի խստագույն ռեժիմը և ավարտել դպրոցը: Մեկնելով Երևան՝ նա նույնպես ընդունվում է տեղի թեմական դպրոցը: Բայց այստեղ մնում է մի քանի ամիս միայն: Թողնելով Երևանը, Նիկոլն անցնում է Կարս:

Այսպիսով, հարազատ Շուշիից ընդմիշտ հեռացած թեմականի հինգ արցախցի տաղանդավոր աշակերտներից չորսը՝ Իսաջանը, Եգորը, Թումանը և Նիկոլը, հավաքված էին Կարսում:

Լարված, դժվարին աշխատանք էր գնում: Գյուղից գյուղ ընկած՝ հեղափոխական գաղափարներ էր քարոզում Եգորը: Առաջին օրերից իսկ շրջապատը սիրեց նրան իր անկեղծ զգացմունքների, մաքուր ու չիտակ բնավորության, ժողովրդի ազատության գործին կյանքը տալու պատրաստակամության համար: Իսաջանը, Նիկոլը, Թումանը ժամանակի մեծ մասը նվիրում էին ռազմական գործի յուրացմանը, զենքի տարբեր տեսակներին տիրապետելուն: Իսաջանը հմտանում էր նաև ռումբ պատրաստելու մեջ:

Հ.Յ. դաշնակցության վերին մարմնի հրահանգով նշանավոր դաշնակցական գործիչ Կոմսը (Վահան Փափազյան) պատրաստվում էր անցնել Վան-Վասպուրական՝ ստանձնելու այնտեղի կուսակցական գործի ընդհանուր ղեկավարությունը: Նա գալիս է Ալեքսանդրապոլ, ուր առաջին անգամ հանդիպում է Իշխանին, և իմանալով, որ նա եղել է Նևրուզի արշավախմբի կազմում ու մահից հրաշքով է փրկվել, առաջարկում է ընկերանալ իրեն: Նա մտածում է, որ կարճահասակ, վտիտ մարմնով երիտասարդը գաղափարի նվիրյալ է, զոհաբերության պատրաստ, ուստի կարող է Վանում դառնալ իր լավ գործակիցը և ենթական: Նրանք Ալեքսանդրապոլից անցնում են Երևան, ապա այնտեղից Զինգլի և Արաղայի գծով 1903թ. ուշ աշնանը բարեհաջող մտնում են Վան:

Վերջապես Կարս մեկնելու ցանկություն է հայտնում թեմականի ընկերական խմբի մյուս անդամը՝ Բաքվում գտնվող **Սարգիս (Սերգեյ) Հովհաննիսյանը:** Նա նույնպես մտադրվել էր Կարսի հեղափոխական հնոցում վարժվելուց ու թրծվելուց հետո անցել Կենտրոնական Հայաստան՝ Էրզրում-Տարոնի շրջան:

Ա.Գյուլխանդանյանը «Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ» հոդվածաշարում վերհիշել է. «Մենք այնպես էինք ընտելացել նրան, որ երբ նա դրականապես 1903թ. հայտնեց մեզ իր Ղարս անցնելու մասին, մեծ դժվարությամբ մենք... բաժանվեցինք նրանից, չնայելով, որ այն ժամանակվա մեր ամբողջ գործունեությունը պահանջում էր որքան կարելի է մեծ թվով ընկերներ ուղարկել սահմանգլուխ և Տաճկաստան»[1]:

1903թ. նոյեմբերին Սերգեյը հասնում է Կարս: Թեև նա առաջին անգամ էր լինում Կարսում, բայց քաղաքը հենց սկզբից հարազատ եղավ նրան: Միայն

[1] **«Հայրենիք»**, N 9(21), հուլիս, 1924, էջ 108:

թե պակասում էր մի մեծ բան՝ կյանքից հեռացել էին իր սրտակից ընկերները՝ Իսաջանը և Եգորը, իսկ Իշխանն արդեն հեռվում էր:

Սերգեյն անմիջապես մխրճվում է գործի մեջ: Կուսակցական այն խումբը, որի ղեկավարությունը հանձնարարված էր իրեն, հենց նոր էր կազմակերպվել: Խմբի մեջ ընդգրկված էին 17-30 տարեկան երիտասարդներ, որոնք նախապատրաստվում էին իրենց նվիրելու կուսակցական աշխատանքի:

Մի փոքր ուշ՝ 1903-ի դեկտեմբերին, Զրաբերդի կ.կոմիտեի տրամադրության տակ անցավ կուսակցության մեջ նոր ընդունված Ռուբեն Տեր-Մինասյանը: Նրանց ընտանիքը Ախալքալաքից տեղափոխվել ու հաստատվել էր Կարսում, և այստեղ էլ երիտասարդը սկսել էր իր հեղափոխական ուղին:

Ռուբենն անդամակցում է այն խմբին, որի ղեկավարը Սերգեյն էր: Բայց նորեկի համար դժվար էր առաջին պահին ղեկավարին տարբերել խմբի մյուս անդամներից: Իր «Հիշատակներում» նա նկարագրել է Կարսում Սերգեյի հետ առաջին հանդիպումից ստացած տպավորությունը[1]:

Երկուսի այդ առաջին հանդիպումը նշանակալի եղավ: «Զգիտեմ Սերգեյը ի՞նչ գտավ իմ մեջ, բայց այդ օրուընե բոլորովին տարբեր վերաբերմունք ունեցավ ինձ հանդեպ: Մենք ավելի մտերմացանք իրարու հետ, և մեր մտերմությունը քանի գնաց՝ ավելի խորացավ, մինչև անոր մահը»[2]:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման այս երկու ապագա խոշոր գործիչների ծանոթությունը ժամանակի ընթացքում վերածվեց մեծ բարեկամության և եղբայրական հարաբերությունների: Ճակատագիրը նրանց ամուր կապեց: Երկուսն էլ անցան Արևմտահայաստանի ազատագրական պայքարի բովով, դարձան կուսակցական աշխատանքի խոշոր կազմակերպիչներ և հայդուկային շարժման առաջնորդներ, ենթարկվեցին մահացու վտանգների, բայց միշտ մնացին իբրև գաղափարի զինվորներ, գերմարդկային ճիգեր թափեցին առաջին աշխարհամարտի տարիներին, վերապրեցին արևմտահայության 1915-ի գողգոթան, ապա երկուսին էլ վիճակվեց լինել Հայաստանի անկախության առաջապահ կերտողներ:

Շատ ժամանակ չի անցնում, և Սերգեյն իր եռանդուն գործունեությամբ Կարսում հայտնի է դառնում որպես տաղանդավոր կազմակերպիչ: Արդեն 1904թ. գարնանը Կարսի կ.կոմիտեն նրան նշանակում է քաղաքում քարոզչական գործի ընդհանուր ղեկավար. նա դառնում է Հ.Յ.Դ. Կարսի կ.կոմիտեի կենտրոնական դեմքերից մեկը:

Բայց երիտասարդ հեղափոխականի միտքն ու հոգին այնտեղ էր՝ Երկրում: Նա իր մտադրության մասին մի քանի անգամ խոսք էր բացել կ.կոմիտեում, բայց ամեն անգամ մերժում էր ստացել, որովհետև ընկերները գտնում էին, որ, լինելով անփոխարինելի հասարակական-քաղաքական գործիչ, նա շատ ան-

[1] Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա, էջ 35:
[2] Նույն տեղում, էջ 37:

հրաժեշտ է հենց այստեղ՝ Կարսում, ուր հեղափոխական գործիչների պատրաստումը ոչ պակաս կարևոր գործ էր: Ընկերների մյուս պատճառաբանությունն այն էր, որ Սերգեյի առողջությունը տկար է, աչքերի գեղձախտ հիվանդություն ունի և կարճատես է:

Սերգեյը Կարսում տեղեկացավ, որ Գանձակի նահանգապետի և Էջմիածնի սինոդի հրամաններով 1903թ. դեկտեմբերի 17-ին փակվել է Շուշիի թեմական դպրոցը՝ «Ի պատճառս մնասակար ընթացից որպես կառավարող անձանց, նույնպես և սանունց նորին»[1]: Մինչ այդ դպրոցը փակելու հանձնարարականը եկել էր Պետերբուրգից, Պլևեի 1903թ. հոկտեմբերի 27-ի N 370 կարգադրությամբ[2]: Անմիջական առիթն այն էր եղել, որ հայ եկեղեցական կալվածքների բռնագրավման մասին ցարի 1903թ. հունիսի 12-ի հրամանի դեմ աշակերտներն ու դասատուները ցույց էին կազմակերպել, և ելույթ ունեցողները դատապարտել էին հրամանագիրը[3]:

Երբ ցավալի բոթը հասել էր Շուշի, թեմականի աշակերտությունը և մանկավարժական կազմը բուռն արձագանքել էին կամայական հրամանին, բայց դա ոչինչ չէր փոխել: Այն հարցին, թե որն է, ի վերջո, այդքան խիստ որոշման պատճառը, նահանգապետը պատասխանել էր. «Որովհետև դպրոցը տալիս է ավելի շատ հեղափոխականներ, քան հոգևորականներ»*:

Թեմականի աշակերտներից Ստեփան Մելիք-Փարսադանյանը հետագայում վերհիշել է. «Երբ լսեցինք դպրոցի փակման մասին, կարծես ջուր թափվեց ամբիոնի գլխին: Վերջացավ մեր ուրախ աշակերտական կյանքը, և հարյուրավոր աշակերտներ [ուսումնական] տարվա կեսին ցիրուցան եղան տարբեր ուղղություններով»[4]: Նրանք ցրվեցին Ղարաբաղի ու Զանգեզուրի իրենց գյուղերում, ոմանք մեկնեցին Բաքու՝ աշխատանք գտնելու, իսկ մոտ քսան հոգի ճանապարհվեց Թիֆլիս և Երևան՝ նույն տարում ընդունվելու Ներսիսյան և Երևանի թեմական դպրոցների համապատասխան դասարանները:

---

[1] **Լեո**, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 579:
[2] Նույն տեղում, էջ 578:
[3] Տե՛ս **Բագրատ Ուլուբաբյան**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 194:
* Երբ կաթողիկոս Խրիմյանը 1905թ. հունիսին մեկնել էր Թիֆլիս և այցելել Վորոնցով-Դաշկովին, զրույցի ընթացքում բարձրացրել էր նաև Շուշիի թեմական դպրոցի վերաբացման հարցը: Փոխարքան խոստանում է խնդիրը կարգավորել առանց ուշացնելու, և նույն թվականի աշնանը դպրոցում վերսկսվում են պարապմունքները (տե՛ս **«Արարատ»**, N 7-8, օգոստոս-սեպտեմբեր, 1905, էջ 606):
[4] **«Հայրենիք»**, N 10(392), հոկտեմբեր, 1958, էջ 66:

ԴԵՊԻ ԵՐԿԻՐ

Սասունի ապստամբության օրերին և դրանից հետո Թուրքերն ավելի էին ամրացրել սահմանների պաշտպանությունը: Ուստի 1904 թվականին Երկիր գնալը կապվում էր է՛լ ավելի մեծ դժվարությունների և մահացու վտանգների հետ: Եթե սահմանն անցնողներին հաջողվում էր շրջանցել ռուս և թուրք սահմանապահների արգելքը, հայտնվում էին թուրքաբնակ ու քրդաբնակ շրջանների վտանգավոր կածաններին և մի կերպ հասնում Երկիր: Դա լավագույն դեպքում միայն: Սահմանն անցնելուց հետո ռուս և թուրք պահակախմբերի ու զորքերի հարձակումներին ենթարկված կովկասահայ զինված երիտասարդների խմբերը շարունակում էին տալ մեծ զոհեր, իսկ նրանք, որոնց հաջողվում էր հրաշքով փրկվել և վերադառնալ սահմանից այս կողմ, ենթարկվում էին ցարական իշխանությունների դաժան հալածանքներին, բանտարկվում կամ աքսորվում:

Չնայած դրան, անհնարին էր կանգնեցնել մաքառող Սասունին օգնության շտապելու կովկասահայ երիտասարդների անկասելի ձգտումը: Նորանոր զինված արշավախմբեր էին կազմվում, որոնք անցնում էին սահմանը՝ Երկիր թափանցելու կամ կործանվելու:

Արշավանքներից մեկը գլխավորեց Թորգոմը (Թուման Թումյան-Թումյանց):

Բոլորը միասին պատրաստվում էին անցնել Երկիր՝ Սասունի ժայռոտ ու արյունոտ լեռները:

Ինչպես ընդունված էր, Երկիր անցնողները պետք է փոխեին իրենց անունը և ստանային ծածկանուն. Թուման Թումյանը դարձավ Թորգոմ, Նիկոլը՝ Իշխան, Եգորը՝ Գրիգոր, Իսաջանը, ավա՜ղ, չհասցրեց ունենալ երկրորդ անունը:

1903թ. օգոստոսին Իսաջանը Կարսում ենթարկվեց դժբախտ պատահարի՝ իր չորս ընկերների հետ զոհ գնալով ռումբի պայթյունի:

Իսաջանի մահը խոր ցավ պատճառեց ընկերներին, բայց չընկճեց նրանց մարտական ոգին:

Գրիգորը (Եգոր) մտնելով սասունցիներին օգնության գնացող Խանի «Կայծակ» ձիավոր խմբի մեջ՝ հասնում է Երկիր և այնտեղ մնում երկու շաբաթ: Կարսի շրջան վերադառնալիս՝ խումբը Բասենում արյունալի կռվի է բռնվում թուրքական զորամասի հետ, և շատ ուրիշ մարտիկների հետ նահատակվում է նաև Գրիգորը: Դա տեղի ունեցավ Իսաջանի սպանվելուց մեկ ամիս անց:

«Կայծակ» խմբի հետ միաժամանակ սահմանն անցել և դեպի Սասուն էր գնում թաքիրդաղցի Նևրուզի «Շանթ» հետևակ արշավախումբը, որի կազմում զինվորագրվել էր Իշխանը: Կարսի շրջանից մտնելով թուրքական Բասեն՝ խումբը սեպտեմբերի 18-ին հասնում է Գոմաճոր և Դալի-Բաբա գյուղերը: Տեղի է ունենում արյունալի կռիվ վրա հասած թուրքական խմբերի դեմ: Շատ քչերին է հաջողվում փրկվել, որոնց թվում էր Իշխանը:

Այդ անհաջողությունը չի ընկճում Իշխանին, բայց նրան մղում է խորհելու արշավախմբային տակտիկայի ճիշտ կամ սխալ լինելու հարցի շուրջ:

Բանն այն է, որ հայդուկային արշավախմբերը, որոնց նպատակն էր Կովկասից ռազմական ուժեր և ռազմամթերք անցկացնել Թուրքահայաստան, կամ պատժական հարձակումներ կատարել թուրքական սահմանների վրա, մեծ մասամբ ենթարկվում էին անհաջողության՝ տալով մեծաթիվ զոհեր: Այդ պատճառով դաշնակցության և հնչակի ղեկավար շրջաններում հասունանում էր այն տեսակետը, թե անհրաժեշտ է հրաժարվել արշավախմբային տակտիկայից և Երկիր ուղարկել որքան կարելի է շատ անհատ գործիչների, որոնք շեշտը դնեին ժողովրդին կազմակերպելու և նախապատրաստելու վրա, տեղացիներից խմբեր կազմեին սահմանից այն կողմ Թուրքական Հայաստանի զանազան տեղերում:

Մինչ կուսակցությունների ղեկավար մարմինները պատրաստվում էին պաշտոնապես հրաժարվել արշավախմբային տակտիկայից, Նրանց ստորին օղակներում շարքային գործիչները, իրենց փորձից ելնելով, արդեն խուսափում էին կամավոր մտնել արշավախմբի մեջ և գերադասում էին Երկիր անցնել միայնակ կամ երկու-երեք հոգով:

Այդպես մտածողներից և գործողներից մեկը եղավ քսանամյա Իշխանը:

Թորգոմը մեկ անգամ արդեն եղել էր Սասունում անցած «Մրրիկ» հեծյալ խմբի գլուխ: Եվ ահա երկրորդ անգամ «Որսկան» անունով մարտական խմբի հրամանատարներից մեկն էր:

Խումբը կազմակերպվել էր Օլթիի դաշնակցական մարմնի նախագահությամբ և իր կազմում ուներ 61 երիտասարդ: «Որսկանը» բաժանվեց երկու խմբի՝ մեկը Որսորդի, մյուսը Թորգոմի գլխավորությամբ: 1904թ. հունիսի 30-ի գիշերը խմբերն անցան ռուսական սահմանը և աղջամուղջին մտան Էրզրումի վիլայեթի Զարդանիս գյուղի ավերակները: Հենց այդ ժամանակ 300 ռուս սահմանապահ զինվոր ու կազակ, միացած թուրքական զորամասերին, համատեղ հարձակման անցան խմբերի վրա: Անհավասար կռվում հայ մարտիկները տվեցին տասնյակ զոհեր: Մեծ էր վիրավորների ու գերվածների թիվը: Սպանվել էր նաև Թորգոմը:

Այսպիսով, Կարս եկած շուշեցի չորս երիտասարդներից միայն Իշխանին հաջողվեց կենդանի մնալ և հեղափոխական աշխատանք ծավալել Թուրքիայում:

Սահմանի վրա պարբերաբար կատարվող ողբերգությունները գնալով խորացնում էին Սերգեյի համոզումը, որ իր տեղը Կարսում չէ, այլ՝ Երկրում: Երիտասարդների կործանումը ծանր էր ազդում Սերգեյի և նրա ընկերների վրա, որոնք իրենց մեղավոր էին զգում «թիկունքում մնալու» համար:

Կարսն այլևս անտանելի էր դարձել Սերգեյի համար: «Խիղճս ինձ տանջում էր, որ ամենքը գնացին և նահատակվեցին, իսկ ես կարծես մի խորամանկությամբ ետ մնացի», - հետագայում վերհիշել է նա: Սերգեյը վերջնական որոշում է ընդունում «հանգստավետ անկյունից» դուրս գալ և նետվել բուն կռվի մեջ, այնտեղ, ուր զգում էին իր նմանների կարիքը: Չնայած Հ.Յ.Դ. Կարսի կ.կոմիտեի խիստ առարկությանը, նա իր վճիռը համարեց անկասելի:

Ինչպես ընդունված էր հեղափոխական գործիչների շրջանում, Սերգեյը նույնպես փոխեց իր անուն-ազգանունը: Սարգիս (Սերգեյ) Հովհաննիսյանն այնուհետև հանդես էր գալու **Արամ Մանուկյան** ծածկանունով: Այդ անուն-ազգանունով էլ նա պատրաստվեց մեկնել Կարսից:

Ռուբենը նկարագրել է Կարսում Արամի հետ իր վերջին հանդիպման պահերից մեկը:

«Սերգեյի աչքերը անթարթ կը նայեին մեկ կետի: Երբեմն յօնքերը կը կիտեր: Ես չէի խանգարեր զինք: Միտքս կը թափառեր Սերգեյի և անոր Շուշիի ընկերներուն շուրջը, որոնցմէ ոմանք արդեն վերջնականապես բաժանուած էին Սերգեյեն: Եվ ես կը մտածեի, որ մնացածներն ալ շուտով պիտի բաժանուեին անկե, և գուցե ինքն ալ բաժանուեր ինձմէ, իր ընկերներուն պես: Արդեն նահատակութեան պակը կը տեսնեի անոր գլխուն և կը ցավեի ու կը նախանձեի ...»[1]:

Քանի որ Կարսից շուտով Երկիր էր անցնելու նաև Ռուբենը, ուստի սա Արամին փորձեց համոզել միասին գնալ Վան: Վերջինս, սակայն, անդրդվելի մնաց. նա երազում էր Սասնո լեռները: Իր հետ վերցնելով հավատարիմ զինվորներից մանազկերտցի Մոսոյին՝ նա Կարսից մեկնեց Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյից վերջին հրահանգները ստանալու և Սասուն անցնելու համար: Բայց Սասնո ապստամբությունն արդեն պարտված էր, և բյուրոն որոշում է նրան լիազոր գործչի հանգամանքով ուղարկել Վան, ուր արդեն գտնվում էին բժ. Վահան Փափազյանը և Իշխանը[2]:

1904թ. հուլիսի 25-26-ին Թիֆլիսում կայացած արևելյան բյուրոյի շրջանի արտակարգ ռայոնական ժողովի արձանագրության մեջ կա այսպիսի պարբերություն.

«1-Վրեժստանի* և Երկրի զանազան վայրերը պահանջում են ինտելիգենտ ուժեր: Որոշվեց որ այդ պահանջները բոլորն էլ արդարացի են և ըստ կարելվոյն պետք է գոհացնել շուտով: Դիմելու է Եուսուֆին և Վարդանին՝ Վրեժի** և Շամի*** համար, դիմելու է Ս.Օ.-ի: Պատմաբան Լ. Մինասյանը և Տիգրանը արդեն Վրեժից անցած պետք է լինեն Շամ ու Շատախ: Դիմել Կոստի Համբ [արձումյանին] Ոսկանապատում**** և ուրիշների»[3]:

---

[1] Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա, էջ 186-187:
[2] Տե՛ս **«Արամը»**, էջ 154:
* Ատրպատականի:
** Հ.Յ.Դ.Ատրպատականի կազմակերպությունը:
*** Հ.Յ.Դ.Վասպուրականի կազմակերպությունը:
**** Բաքվում:
[3] **«Նյութեր...»**, հատ . Բ, էջ 371:

Արդյո՞ք Ս.Օ.-ն Սերգեյ Հովհաննիսյանը չէ, եթե նկատի ունենանք, որ Բաքվում նրան գիտեին Սերգեյ Օգանեսով անուն-ազգանունով:

Մենք այստեղ մանրամասն ենք նկարագրելու Արամի անցումը Երկիր, որպեսզի ցույց տանք, թե ընդհանրապես կովկասահայ հեղափոխական գործիչները կյանքի համար ինչպիսի անհամար վտանգների էին հանդիպում ճանապարհներին, մինչև հասնում էին նշանակված վայրը:

Ո՞ր ճանապարհը պետք է ընտրվեր Վան անցնելու համար. բոլոր ուղիները լի էին մահացու վտանգներով: «Կարսի սահմանագլխի դեպքերը, - նշել է Արամը, - փչացրել էին մեր հարաբերության բոլոր գծերը: - Համարյա ամբողջ գծի վրա եղած կազմակերպությունները քայքայվել էին գործիչների նահատակության կամ ձերբակալման պատճառով»[1]:

Բայց անձնազոհության պատրաստ հեղափոխականի համար Հայաստանը շուկա չէր, այլ խորհրդապաշտական Բացարձակ գաղափար և նրան որդիաբար ծառայելը՝ հոգեկան անհագ պահանջ: Հայաստանը, Արմենիան, ասում էր նա, մոխիրների տակ թաքնված և դրսից աննշմարելի մշտնջենական կրակ է, ընդերքում խուլորեն դղրդացող աղբյուր, տարօրինակ և մեծաշունչ մի պոեմ: Հայաստանը Սիփանի և Գրգուռի լանջերին, Սասունում ու Վանում ծնունդ առած առասպելների ու լեգենդների ասպետական երկիր է, հայրենիքի համար ընկած սրբացած անունների թանկագին պանթեոն: Այդ Հայաստանն է, որ օրհասական պահին օգնության չեփոր է հնչեցնում և կանչում իր նվիրյալ զավակներին:

Թիֆլիսում կուսակցական փորձված ընկերները, հատկապես նրանք, ովքեր արդեն եղել էին Երկրում, Արամին տալիս են անհրաժեշտ խորհուրդներ: Նրանց խորհրդով էր, որ նա Վան մեկնելու համար ընտրում է Պարսկաստանով անցնող ուղին, որն ուներ որոշ դյուրություններ:

Գործը Թիֆլիսում վերջացնելուց և արևելյան բյուրոյից անհրաժեշտ գումար ստանալուց հետո Արամը, իր հետ վերցնելով երկու զինվորի՝ գանձակեցի Նիկոլին և մշեցի Հարությունին, գնացքով մեկնում է Երևան: Այստեղ նա մնում է մի քանի օր, հանդիպումներ ունենում տեղի գործիչների հետ, որոնց թվում էին՝ իր հին ընկեր Գալուստ Ալոյանը (Թորոս) և Սարգիս Օհանջանյանը, որը Բաքվում եղած ժամանակ իր անմիջական պետն ու հովանավորն էր եղել: Վերջինս երկու տարի առաջ էր Բաքվից եկել Երևան, փորձել էր Վան գնալ, բայց ճանապարհին բռնվել և մի դիպվածով ազատվելով՝ եկել ու կրկին հաստատվել էր Երևանում:

Հրաժեշտ տալով ընկերներին՝ Արամն իր երեք զինվորների՝ Մոսոյի, Հարությունի և սրանց միացած Նիկոլի հետ Երևանից մեկնում է Նախիջևանի գավառ՝ Պարսկաստան անցնելու համար:

Շատ տարիներ անց՝ 1917թ. գրած իր հուշերի մեջ Արամը մանրամասն

[1] «Արամը», էջ 154:

նկարագրել է դեպի Վան իր երկարատև ճանապարհորդության ընթացքում հանդիպած դժվարությունները, արկածներն ու պատահարները: Իր փոքր խմբով նա հասնում է Դավալու, ուր, պայմանավորվածության համաձայն Նախիջևանի կողմից գալիս է Թուրք վալադը և նոյեմբերյան մի ցուրտ գիշեր նրան առաջնորդում պարսկական սահմանը: Նույն գիշեր նրանք անցնում են Արաքսը և ուղղություն վերցնում դեպի Խոյ: Ճանապարհն անցնում էր Մակուի խանության թուրք և պարսիկ գյուղերի միջով, որոնց բնակիչները հարյուրներով վարակված էին խոլերայով: Ամբողջ ճանապարհին խումբն ականատես էր բազմաթիվ անտեր ու անթաղ դիակների, գյուղերի մեջ՝ անհաշիվ հիվանդների:

Վերջապես տանջված և ուժասպառ ճամփորդները հասնում են Խոյ*, ուր նույնպես խոլերան իր հունձն էր անում: Արամը չտապում է գտնել ծրագրով նշված հասցեատերերին և տեսակցել նրանց հետ:

Իր հուշերում Արամը հետաքրքիր է նկարագրել հատկապես պարսկական սահմանագլխային տարածքներում Հ.Ց.դաշնակցության կազմակերպությունների կառուցվածքը, կենտրոնից դրանց ղեկավարման մեթոդները և այլն: Նա գրում է.

«Այդ ժամանակ Խոյ, Սալմաստ և Թադեի վանքը ունեին սահմանագլխի կոմիտեներ, որոնք զբաղվում էին Երկիր զենք, ռազմամթերք և ընկերներ-խմբեր ճամփելով, Երկրի և արտասահմանի միջև հարաբերություններ պահպանելով:

Այդ կոմիտեները, գլխավորությամբ Թավրիզի կ.կոմիտեի, եղել են, ճիշտ է, մեծապես Երկրի համար աշխատող և անգնահատելի օրգաններ, բայց նրանք մեծ դեր են կատարել և Ատրպատականի հայոց կրթական, իրավական, ինքնապաշտպանության և այլ գործերի մեջ: Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիի, Թավրիզի և ուրիշ վայրերի [համարյա] բոլոր դպրոցների հիմնադիրները եղել են Երկիր գնացող կամ Երկրից եկող ու ժամանակավորապես այդ շրջաններն ապաստանող հեղափոխական գործիչները՝ ո՛չ միայն մեր կուսակցության, այլև մյուս կուսակցություններին պատկանող»[1]:

Ամեն կոմիտե իրեն հանձնարարած տարածքի տարբեր տեղերում ուներ ներկայացուցիչներ, որոնք, որպես կանոն, տեղացիներ չէին, այլ ռուսահայեր, թուրքահայեր, ամերիկահայեր: Ցուրաքանչյուր ներկայացուցիչ իր տրամադրության տակ ուներ 5-10 զինվոր:

Սահմանագլխային կոմիտեները յուրատեսակ կայաններ էին, որոնց պե-

* Խոյ քաղաքը գտնվում է Խոյ (Ավարայր) գավառում, որն իր հերթին ընկած է Պարակահայք նահանգի հյուսիսային սահմանում, պատմական Արտազ դաշտում: Նրա արևմտյան կողմից, Կոթուր գավառից, սահելով առաջ է գալիս Տղմուտ գետը և ոռոգելով ամբողջ Ավարայրի դաշտը ու անցնելով դեպի հյուսիս-արևելք՝ թափվում է Արաքսի մեջ: Խոյ գավառին սահմանակից են Սալմաստ, Կոթուր, Արտաժ (Մակու) և Մարավե գավառները:

[1] «Արամը», էջ 61:

տերն ունեին մեծ ու պատասխանատու պարտականություններ, այն է՝ հոգում էին Երկիր գնացող ընկերների կարիքներն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք գտնվում էին սահմանագլխին, հայթայթում նրանց ճանապարհածախսը, ձեռք բերում անցագրեր, նաև պատասխանատու էին նրանց անվտանգության համար:

Կոմիտեներն ունեին ուրիշ խնդիրներ նույնպես. ստանում, տեղավորում ու պահպանում էին դրսից եկած զենքերը, ռազմամթերքը, այլ կարևոր ապրանքներ, կազմակերպում դրանց անվտանգ ուղարկումը Երկիր: Կայանների պետերի վրա էր ընկած նաև սուրհանդակների միջոցով Երկրի հետ նամակագրական կապի պահպանման, թերթերի ու ընթերցանության այլազան նյութերի առաքման հոգսը:

Այլ խոսքով, սահմանագլխային կոմիտեները Հ.Յ. դաշնակցության հաղորդակցության փորձված միջոցներն էին, դրսից ներս, ներսից դուրս հարաբերելու հուսալի կապուղիները:

Հոկտեմբերի վերջին Խոյ հասած Արամը ներկայանում է այդ շրջանի Հ.Յ. դաշնակցության պատասխանատու ներկայացուցիչ Մալխասին: Հ.Յ. դաշնակցության արևելյան բյուրոն այս գործչին Թիֆլիսից վեց ամսով Պարսկաստան էր ուղարկել՝ այնտեղ փորձառություն ձեռք բերելու, որից հետո միայն Երկիր անցնելու համար: Բայց բանն այնպես էր դասավորվել, որ նա արդեն մեկ տարուց ավելի գտնվում էր Խոյում:

Արամի հետ առաջին իսկ զրույցը Մալխասի մոտ ստեղծեց խոր տպավորություն: Վերջինս հետագայում վերհիշել է.

«Երիտասարդը Արամն էր, հետագայում այն բացառիկ կենտրոնական դեմքը, որ մեր վերջին 10-15 տարիներու ամենացայտուն, հոյակապ ղեկավար ուժը եղավ: Բայց և այնպես, այն օրերուն ան Արամ փաշա չէր, այլ պարզ նոր սկսնակ մը, մեր սերունդի մեկ համեստ ներկայացուցիչը, որ ինքզինքը նուիրեր էր գործին»[1]:

Արամը չէր կարող երկար մնալ Խոյում, քանի որ հեռուն գնալու խնդիր ուներ: Ուստի նա անցնում է Թադեի (կամ Թադեոս Առաքյալի) վանք, որը հայտնի էր նաև Մենավոր անունով, քանի որ այն միայնակ կանգնած էր անմարդաբնակ մի մեծ տարածքի կենտրոնում: Մենավորի վանահայրն էր Գևորգ վարդապետ Նալբանդյանը (ծածկանունը՝ Ընծայր), որը նաև այդտեղ Հ.Յ.Դ. ներկայացուցիչն էր[2]:

Պարսիկներով և քրդերով շրջապատված Մենավորը Ատրպատականը Երկրի հետ կապող կամուրջն էր, ընկած երեք պետությունների՝ Պարսկաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի սահմաններում:

1904-1907թթ. Մենավորի կայանն ուներ 6 գիծ: Դրանցից երկուսը Մենավորի վրայով Երկիր էին անցնում Ռուսաստանից: Դրանք էին՝ Արփիլ-Մենավոր և Կովադաշտից-Բլուրի վրայով - Մենավոր: Այս երկրորդ գիծը բաց էր լինում երեք ամիս, երբ քրդերը քոչում էին Մասիսի հարավային ստորոտները՝ Թուրքական հողերը: Սարերից ջալալցի քրդերի վերադառնալուց հետո գիծը վտանգվում էր, քանի որ նրանք կողոպտում և սպանում էին այդ ճանապարհով անցնող հայերին: Երրորդը Արաբլու-Մենավոր գիծն էր: Մյուս երեք գծերը Մենավորից անցնում էին Վան: Դրանցից մեկը Փարոսից - Կարկառ-Վան ուղին էր, որով գնացողների մեծ մասը ենթարկվում էր քրդերի հարձակումներին և ջարդվում: Մյուսը Վան էր մտնում Կոթուրի վրայով, բայց այն համարյա չէր գործում, որովհետև այդ ճանապարհին վարձկան քուրդ վալադներն իրենց վստահված ապրանքների մեծ մասը յուրացնում էին: Վերջին գիծը Մենավորից դարձյալ Վան էր գնում Սալմաստի և Բաշկալայի վրայով, որը Վան տանող բոլոր գծերից ամենավստահելին էր[1]:

Նշված վեց գծերի վրայով զինվորների, գործիչների, խմբապետերի անընդհատ երթևեկություն էր կատարվում: Այդ գծերից մեկը պիտի ընտրեր Արամը: Բայց նրան վիճակված էր չորս ամսից ավելի մնալ վանքում : Օգտվելով առիթից՝ ուսումնասիրում է վանքի պատմությունը, ծանոթանում կուսակցական գործիչներին, նամակներ գրում Վանի ընկերներին և խնդրում վալադներ ուղարկել իրեն այնտեղ առաջնորդելու համար:

Մենավորի վանահայր Ընծայրի աջակցությամբ Արամը վանքից անցնում է Սալմաստ:

Սալմաստ գավառը գտնվում էր Պարսկահայք նահանգում, Ուրմիո լճի հյուսիս-արևմտյան մասում, պարսկաթուրքական սահմանագլխից մի քանի ժամվա հեռավորության վրա: Որպես Տաճկաստանի սահմանագլուխ, Սալմաստը շատ վաղուց էր դարձել հեղափոխական ակտիվ գործունեության վայր: Հ.Յ. դաշնակցությունը այստեղ իր գործունեությունը սկսել էր դեռ 1890-1896թթ.: Այնտեղ կենտրոնացված էր Կովկասից Երկիր փոխադրվելիք ռազմամթերքը, այնտեղ էին պատրաստվում և Երկիր անցնում պարսկահայերի զինակիր խմբերը, Սալմաստում էին իրենց ժամանակավոր հանգիստը գտնում Երկրից վերադարձող մարտիկները[2]:

Սալմաստում Հ.Յ. դաշնակցության կուսակցական պատասխանատու գործիչը Սամսոնն** էր, որի օգնությամբ Արամը լինում է ոչ միայն քաղաքի հա-

---

[1] «Արամը», էջ 424:
[2] «Նյութեր...», հատ .Դ, էջ 277:

[1] «Նյութեր...», հատ. Դ, էջ 277:
* Վ. Փափազյանը (Կոմս) իր հուշագրության մեջ սխալմամբ գրել է («Իմ յուշերը», հատ. Ա, Բոստըն, տպ. «Հայրենիք», 1950, էջ 350), թե Արամը մինչև Վան մեկնելը Պարսկաստանի հիշյալ շրջաններում մնացել է մոտ մեկ տարի և տեղ է հասել 1904-ի աշնանը: Իրականում Արամը Թադեի վանք է եկել 1904թ. հոկտեմբերին և Վան է հասել 1905-ի փետրվարին:
[2] «Նյութեր...», հատ. Դ, էջ 268:
** Սամսոնը, իսկական անունը Ստեփան Թադևոսյան, Քրիստափոր Միքայելյանի քրոջ ավագ որդին էր, նշանավոր դաշնակցական գործիչ Պարսկաստանում Սամսոն խան անունով: Նրա կրտսեր եղբայրը՝ Լևոն Թադևոսյանը (Պապաշա) Հ.Յ.Դ. Բաքվի կազմա-

յության մեջ, այլև շրջակա հայկական գյուղերում, ծանոթանում ժողովրդի նիստ ու կացին, հաղորդակից լինում նրա քաղաքական տրամադրություններին, տեղեկություններ քաղում հարևանների հետ փոխհարաբերությունների մասին և այլն:

Սալմաստում Արամը ստանում է Թադեի վանքից Վան գրած իր նամակների պատասխանները: Նամակներից մեկը գրել էր Հ.Յ.Դ. Վանի կուսակցական կազմակերպության ղեկավար Վահան Փափազյանը (Կոմս): Արամին նա հայտնում էր, որ արդեն ուղարկել է «ամենահմուտ սուրհանդակին», որը ճանապարհին է և շուտով կներկայանա իրեն: Նամակ էր գրել նաև իրենից մեկ տարի առաջ Երկիր մտած և Վանում արդեն կուսակցական-կազմակերպական աշխատանքների մեջ մխրճված Իշխանը: Իր նամակում վերջինս բացատրում էր, թե ինչպիսի դրություն է տիրում Վան-Վասպուրականում, նկարագրում էր Կովկասից եկած ընկերների և ընդհանրապես ոչ տեղացիների համար ստեղծված անասելի դժվարությունները և խորհուրդ էր տալիս Երկիր մտնել միայն շատ լավ ծանր ու թեթև անելուց հետո:

Արամի կենսագիրներից Արշալույս Աստվածատրյանն Իշխանի այդ նամակի առթիվ գրում էր, որ նրանում հաղորդած տեղեկություններն Արամի համար նորություններ չէին, բայց տված խորհուրդը ցույց էր տալիս, որ Իշխանը Արամին դեռ լավ չէր ճանաչում, որքան էլ հին էր նրանց ընկերությունը, այլապես նրան չէր տա այդ խորհուրդը[1]*:*

Ատրպատականում Արամի երկար մնալը շատ կարևոր նշանակություն ունեցավ այն տեսակետից, որ նա հանգամանորեն ծանոթացավ պարսկահայության մի հատվածի կյանքին, հաղորդակից եղավ նրա կարիքներին ու ձգտումներին:

Դաշնակցության գործունեության առաջին շրջանում հաջողվել էր Պարսկական Ատրպատականի սահմանափակ մի շրջան միայն ներգրավել Հ.Յ. Դ. Թավրիզի (Վրեժի) կ.կոմիտեի գործունեության ոլորտը: Հետագայում, 1901 թվականից, կուսակցության կազմակերպություններ էին ստեղծվել նաև Պարսկաստանի ուրիշ վայրերում: Այնպես որ, 1904թ. կազմակերպության ցանցը տարածվել էր մինչև Գիլան (Կասպից ծովի հարավարևմտյան ափերը), Թեհրան (Շահ, Շահստան), Խորասան և Նոր Ջուղա (Դեռափ):

Վրեժի կ.կոմիտեի այդաստիճան ընդարձակումը, բնականաբար, առաջ էր քաշել կազմակերպչական և ազգային-հասարակական նոր հարցեր, որի հետևանքով դրվել էր Պարսկաստանում Հ.Յ.Դ. երկրորդ կ.կոմիտե ունենալու պահանջը և իբրև կենտրոն նպատակահարմար էր գտնվել ընտրել Թեհրանը կամ Գիլանը:

կերպության ղեկավարներից մեկն էր: Մյուս եղբայրը՝ Հովսեփ Թաքևոսյանը, նույնպես նվիրյալ հեղափոխական էր: Երեքն էլ գնացել էին մորեղբոր գծած դժվարին ուղիով:

[1] *Տե՛ս* ***«Արամը»****, էջ 22:*

Ավելին, նույնիսկ խոսակցություն էր գնում այն մասին, որ երկու՝ արևելյան և արևմտյան բյուրոների կողքին՝ Հ.Յ.Դ. պետք է ունենա նաև երրորդ բյուրո, որն ընդգրկեր Պարսկաստան-Վասպուրական աշխարհագրական տարածքը՝ կենտրոն ունենալով Թավրիզը[*]*:*

Ամեն տարի Կովկասից Պարսկաստանի վրայով Երկիր էին անցնում տասնյակ դաշնակցական գործիչներ: Հ.Յ.Դ. Վրեժի կ.կոմիտեի մի տեղեկագրում կարդում ենք. «Վերջերս անցան Երկիր՝ Սարգիսը[**]*, Մալխասը, Ալեսը, Արմենակը, Թորգոմը*[***]*, զինագործ Գրիգորը ...»*[1]*:*

Բոլոր գործիչները ճանապարհին կրում էին մեծ դժվարություններ ու տառապանքներ՝ ավել կամ պակաս սաստկությամբ: Նրանք շատ հաճախ ամբողջ օրեր քաղցած էին, ամբողջ գիշերներ ճանապարհներ էին կտրում՝ ուսած հրացանը, մեջքին կապած փամփուշտակալների ծանր ժապավենները և այլ պարագաներ:

Թադեից Վան իր տաժանալից անցումը նկարագրելով՝ Մալխասը դժգոհում էր. «... Անտեր մնալիք փամփուշտակալի կաշիները ուսերս կը ցավցնեն, հրացանն ալ շատ ծանր կու գայ, թեև չորս-հինգ կանգուն երկարութեամբ գոտի մը պլլեր եմ մեջքիս, բայց նորեն բան դուրս չի գար, կողոսկորներս սաստիկ կը ցավին»[2]*:*

Սալմաստում և նրա շրջակա հայկական գյուղերում Հ.Յ.Դ. կազմակերպությունների աշխատանքների հետ ծանոթանալուց հետո Արամը վերադառնում է Թադեի վանք, որտեղից, վերջապես, 1905թ. հունվարի վերջերին ուղեկիցների հետ մեկնում է Վան, ուր հասնում է փետրվարի 6-ին՝ ծպտյալ ու անկատ, աղքատի ցնցոտիների մեջ:

Վան հասած Արամ Մանուկյանի առաջին ցանկությունը, բնականաբար,

[*] *Հ.Յ.Դ. երրորդ բյուրո ստեղծելու հարցը կուսակցության ներսում լրջորեն չքննարկվեց, իսկ Պարսկաստանում Հ.Յ.Դ. երկրորդ կոմիտեի ստեղծումը երկար ժամանակով հետաձգվեց: Դեպի Երկիր անցումի, փոխադրության, կապի և ընդհանրապես կազմակերպական բոլոր գործերն առաջվա պես շարունակում էին ընկած մնալ Ատրպատականի կազմակերպության ուսերին: Հ.Յ.Դ. Ատրպատականի կոմիտեի ենթակայության տակ գործում էին Թեհրանի (Շահի), Գիլանի, Խորասանի, Թավրիզի (Վրեժի), Սալմաստի (Մինարեթի), Ուրմիայի, Ավարայրի շրջանների կազմակերպությունները: Միայն 1911թ. Հ.Յ.Դ. վեցերորդ ընդհանուր ժողովի որոշումով ստեղծվեց Պարսկաստանի երկրորդ՝ Շահստանի կոմիտեությունը՝ կենտրոն ունենալով Թեհրանը:*

[**] *Տեղեկագրի այս տողերից կարելի է ենթադրել, որ Սարգիս Օղաբաչյանը, կրելով Բարսեղյան ծածկանունը, Արամից առաջ էր նույն ճանապարհով անցել Վան: Շուտով Սարգիս Բարսեղյանը պիտի դառնար Վան-Վասպուրականի ամենաարժեքավոր գործիչներից մեկը:*

[***] *Հիշատակված Թորգոմի ով լինելը չկարողացանք պարզել, համենայն դեպս նա Թուման Թումյանը (Թորգոմը) չէ, քանի որ սա առաջին անգամ Սասուն էր անցել Կարս-Բասեն գծով, իսկ երկրորդ անգամ կրկին փորձել էր Սասուն գնալ նույն ճանապարհով, բայց, ինչպես արդեն ասվել է, սահմանն անցնելուց հետո զոհվել էր Զարդանիս գյուղի ավերակներում ծավալված կռվում:*

[1] ***«Նյութեր...»****, հատ. Դ, էջ 232:*

[2] ***Մալխաս****, Ապրումներ, հատ. Ա, էջ 394:*

իր սրտակից ընկերոջ՝ Իշխանի հետ հանդիպելն էր: Բայց վերջինս Վանում չէր. նա գտնվում էր հեռվում լեռներում:

ՎԱՆ - ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Արամի Վան գալուց ավելի քան մեկ տարի առաջ Կոմսի հետ այստեղ եկած Իշխանը հենց սկզբից ցույց էր տվել, որ ինքը մտադիր չէ ենթարկվել որևէ մեկին: Ուրիշի հրամանին ենթակա լինելը հարիր չէր իր խառնվածքին: Դա երևացել էր դեռ այն ժամանակ, երբ ինքն անցել էր Նևրուզի ենթակայության տակ և քննադատաբար էր վերաբերվել նրա հրամաններին: Վանում առաջին ամիսը դեռ չէր լրացել, բայց Իշխանը համարել էր, թե Վասպուրականի կենտրոնն իր տեղը չէ, քանի որ «այստեղ սահմանափակված է իր ազատությունը»: Նա որոշել էր գնալ Վանից հեռու՝ Շատախի լեռները, և գործել ինքնուրույն, անկախ ու ինքնիշխան:

Վանից իր հեռանալու որոշումը Իշխանը Կոմսին պատճառաբանել էր այն հանգամանքով, թե Հ.Յ.Դ. Շամի (Վանի) կենտրոնական կոմիտեի անդամները բարոյական իրավունք չունեն ղեկավարելու կազմակերպությունը, քանի որ տգետ ու անկարող մարդիկ են, հետևաբար ինքը վիրավորված է զգում կատարել նրանց հանձնարարականները: «Ես քաղաքը մնացող չեմ,- ասել էր նա Կոմսին: - Թերուս , մեծամիտ ջոջ-աղաներ են... Բարի վայելում քեզ: Զզուելի է մութ տուներու և մառաններու մեջ պահուըտիլ ամբողջ օրը և լսել պոլիտիկոններու դատարկ դատողությունները: Լեռնային շրջանը յանձն կ'առնեմ կազմակերպել»[1]:

Իշխանի այս պատճառաբանությանը Կոմսն իր կողմից ավելացրել էր. «Պարզ էր ինձ համար, որ քաղաքը և դաշտային շրջանները Իշխանի տեղը չէին երբեք: Իր վարուելակերպն ալ տեղական ընկերներու հետ սրտաբաց չէր. հավասար չէր նկատեր իրան. քիչ մը հեգնական ու հրամայական՝ ժողովներու մեջ, անոնց կարծիքները արհամարհելու տրամադրություններ ուներ: Ընկերներն ալ կը խրտչեին անոր կտրուկ կամ հեգնող կից-կտուր շարժումներեն ու արտայայտություններեն և ի զուր կը ջանային սիրաշահել ու ջերմություն ներշնչել իրենց վերաբերմամբ»[2]:

Շամի ղեկավար ընկերների նկատմամբ իր դժգոհությունները Իշխանը արտահայտել էր նաև Ռուբենին: «Երբ ես ու Կոմսը Վան եկանք,- ասել է նա,- դաշնակցությունը եկամտի աղբյուր էր ասոր ու անոր համար: Հասանք թէ չէ, ահա մեզ կը դիմավորեն Վասպուրականի ղեկավարները եւ մեզ կ'ուզեն իրենց հովանիին տակ առնել: Անոնք հաճոյակատար, յարգալից կ'երևան եւ շռայլաբան: Անոնք իրենք զիրենք Վասպուրականի Կենդրոնական Կոմիտէ կը

[1] Վ. Փափազեան, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 164:
[2] Նույն տեղում:

համարեն եւ ղեկավարը ամբողջ նահանգի կազմակերպութեան: Հարց ու փորձ կ'ընեմ և կը տեսնիմ, որ բացի քաղաքի թաղերէն, ոչ մի գաղափար չունին նահանգի մէջ տիրող կացութեան մասին: Կազմակերպութեան մասին հարցուփորձ կ'ընեմ, կը տեսնիմ, որ գաղափար չունին անոր էութեան մասին: Նահանգի մէջ անոնց հոտն իսկ չկայ, իսկ քաղաքի մէջ կան իրենց տղաքը, որոնց թիւը հազիւ մի քանի տասնեակի կը հասնի: Եթէ կազմակերպութիւն չկայ եւ միայն իրանց տղաքը կան, այդ պարագային ո՞վ է, ուրեմն, զանոնք ընտրել կամ նշանակել Կեդր. Կոմիտէի անդամներ: Անոնց երեսը կը նայիմ, շարժումները կը դիտեմ, կը տեսնիմ **զարկան փէտայիներ** չեն՝ Սերոբի, Գէորգի կամ Շահպազի նման, որ ըսեմ գլխուս վրայ: Ուսումնին կը նայիմ բէխաբար-տգէտ, խանութպանի աշկերտի նման: Զարգացում ալ չունին, որ ըսեմ գլխուս վրայ: Եւ ասոնք են, որ ելել ինքզինքին Կեդր. Կոմիտէ կը ծախեն ...»[1]:

Որպես Շամի կ. կոմիտեի անդամ և լիազոր - ներկայացուցիչ 1904թ. ամռանը Իշխանը մեկնում է Շատախ:

Սկսած 1890-ական թվականների կեսերից՝ դաշնակցությունը Շատախ էր ուղարկել մի շարք գործիչների՝ ժողովրդին կազմակերպելու համար: Տարբեր ժամանակներում այնտեղ էին գնացել կովկասցիներ Վարդանը, Հովսեփ Արղությանը, Սևքարեցի Սաքոն, Գուրգենը, Վարդան Շահպազը (Մինաս Տոնիկյան) և ուրիշներ[2]: Նրանցից ամեն մեկը Շատախում մնացել էր մի քանի ամիս, փորձել էր գյուղերում ստեղծել կուսակցական բջիջներ և եթե հաջողվեր՝ նաև գավառային կազմակերպություն, բայց բոլոր փորձերն անարդյունք էին վերջացել. գավառում դաշնակցության ազդեցությունը նախկինի նման մնացել էր սաղմնային վիճակում:

Սփոփիչ էր, սակայն, այն, որ այնտեղ էին և ժողովրդին շարունակում էին սատար կանգնել հին ֆիդայիները՝ Մեծ Հովսեփը, Սևտիկընա Պազիկը, Արմշատցի Պետրոսը, Մոկացի Հարությունը, Ազոն, Ցարոն, Գուլամիրը, Պոզո Տիգրանը, Ապրոն, Խեչոն, Գավաշի Հաջի Մուրատը, Կարճկանի Վարդանը, Ասպոն և նմանները[3]:

Եվ ահա Իշխանը գնալով լեռնային այդ շրջանը՝ հաստատ որոշել էր այնտեղ մնալ տևական ժամանակով*, այնքան, որքան անհրաժեշտ կլիներ, որպես-

[1] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ա, էջ 313-314:
[2] «Հայրենիք», N 10(392), հոկտեմբեր, 1958, էջ 49:
[3] Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 160:
* Իշխանը Լեռնապարում առանց ընդհատման գործել է 10 տարուց ավելի, չհաշվելով այն 4-5 ամիսները, որոնց ընթացքում անհրաժեշտ էր եղել Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովին (1907թ.) մասնակցելու համար գնալ Վիեննա և վերադառնալ: Դրսից Արևմտահայաստան գնացած ուրիշ ոչ մի գործիչ այնքան երկար ժամանակ չի մնացել որևէ վայրում, նույնիսկ շատ տարիներ Վան-Վասպուրականում գործած Արամ Մանուկյանը: Թերևս Իշխանից ավելի դրսում հեղափոխական աշխատանք էր տարել Սամսոն Թադևոսյանը, այն էլ ոչ թե երկրում, այլ Պարսկաստանում (Սալմաստում):

զի Շատախը դառնար ազատագրական շարժման ամուր հենակետերից մեկը:

Իշխանն իր համար կայան - «Նստավայր» ընտրեց Կարկառի շրջանի մի աննշան գյուղ՝ Խնձորուտը, ավելի ճիշտ՝ դրան անմիջապես հարող, անդնդախոր մի ձորի գլխին թառած, ընդամենը հինգ տուն հաշվող Հալսը:

Սակայն Իշխանը չէր բավարարվում միայն Շատախում կազմակերպական-հեղափոխական տենդագին աշխատանք ծավալելով: Իր ազդեցությունը նա արագորեն տարածեց Շատախից դուրս՝ գյուղից գյուղ, գավառից գավառ: Հասնում էր ամեն տեղ, անձամբ ստուգում, կարգադրում, լուծում խնդիրներն ու դատերը: Խստապահանջ էր՝ հաճախ դաժանության հասնող: Գերազանցորեն գործի մարդ էր, տանել չէր կարողանում ժողովները, դրանք համարելով ժամավաճառություն: Եվ լեռնական ժողովուրդը հարգում ու սիրում էր այդպիսի մարդկանց, ամուր կապվում նրանց հետ:

Արդեն 1904թ. վերջին Իշխանը ճանաչված ղեկավար էր Վասպուրականի հարավարևմտյան ողջ շրջանի վրա, որը երկարում էր մինչև Սղերդ և Բաղեշ: Այդ լեռնավայրի մեջ էին մտնում Վանա լճի հարավային ափերին տարածված և դեպի արևմուտք ձգվող իրար հաջորդող լեռնոտ գավառները և գավառակները՝ Շատախ (Շիդան)՝ Կեորեն դաշտ և Փեսան դաշտ մասերով, Վերին Հայոց ձոր, Ներքին Հայոց ձոր, երկու ծովեզրյա շրջաններ՝ Գեավաշ և Կարճկան, Կարկառ, Մոկս, Մամրտանք, Սպարկետ, Խիզան, Ոզմ, Շնձոր, Կեցան:

Սույն տարածքների վրա կար 173 հայկական և 70 քրդական գյուղ (առանց Մոկս և Սպարկետ գյուղերի, որոնց թվի մասին տեղեկություններ չունենք): Հայ ազգաբնակչությունը (այդ թվում Մոկսում և Սպարկետում) 47,1 հազար էր, կար դաշնակցական 245 խումբ, որոնցում ընդգրկված էր 6277 հոգի[1]:

Այդ ամբողջ լեռնաստանը հենց ինքը՝ Իշխանը կոչեց **Լեռնապար**, և այդ անունը մտավ պաշտոնական փաստաթղթերի մեջ: Իսկ ժողովուրդը Իշխանին տվեց «Վանա Իշխան» և «Լեռնապարի Իշխան» ծածկանունները:

Իր խմբապետական-մարտական արժանիքներով և կազմակերպական-վարչական ընդունակություններով Իշխանն ընդամենը երկու տարում Լեռնապարում ստեղծեց ուժեղ ու կուռ կազմակերպություն: Կազմակերպվածություն ամեն ինչում այս էր նրա նշանաբանը: Իսկ դա ինքնանպատակ չէր:

Առաջին խնդիրը ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումն էր, պաշտպանությունը քրդական հարձակումներից ու հարստահարումներից: Հայկական գյուղերի համար վտանգ սպասվում էր ամեն օր ու ամեն ժամ: Հատկապես վտանգված էին Լեռնապարի այն գավառները, ուր քրդերը ներկայացված էին հոծ զանգվածներով, իսկ առանձին գավառներում հայերի համեմատությամբ թվական գերազանցություն էին ձեռք բերել: Օրինակ՝ Շատախի 110 գյուղերից 60-ը արդեն քրդական էին:

[1] «Նյութեր...», հատ .Դ, էջ 53: Տվյալները վերաբերում են 1905 թվականին:

Քրդերի կողմից հայերի սպանությունները և հարստահարումները գնալով էլ ավելի սանձարձակ էին դառնում: Ահա թե ինչու կյանքի ապահովության ստեղծումը Իշխանը Լեռնապարի հայության գլխավոր խնդիրը համարեց: Ինքնապաշտպանությունը և քրդական ելուզակային հարձակումներին արժանի հակահարված տալը գերագույն պայման էր, առանց որի ոչինչ էր ամեն աշխատանք ու պայքար, անօգուտ և անիմաստ էր ամեն ճիգ ու զոհողություն:

Լեռնապարը Իշխանի կողմից ղեկավարվելու մեկ տարվա ընթացքում ստեղծվեց երեք զինված խումբ: Կարևոր էր այն, որ խմբերը ստեղծվում էին ոչ թե Կովկասյան Հայաստանում և մտցվում Երկիր, այլ հենց տեղում թուրքահայ երիտասարդներից: Այդ խմբերի ստեղծումը դաշնակցության մարտավարության փոփոխության առաջին արտահայտություններից մեկն էր: Նորաստեղծ խմբերը հիմնականում թռուցիկ էին, շարժական, միշտ կազմ ու պատրաստ օգնության գնալու ամեն տեղ, ուր հայ բնակչությունը ենթակա էր քրդական հարձակման վտանգի: Մարտական խմբերն իրենց խիզախությամբ ու ռազմունակությամբ սարսափ ու պատկառանք էին ազդում շրջակա քուրդ աշիրեթների վրա:

Խմբերից ամենամեծը Իշխանինն էր, ուր ընդգրկված էին ընտրովի մարտիկներ: Մյուս երկու խմբերից մեկի հրամանատարությունը նա հանձնել էր Մակուց Մեսրոպին, մյուսինը՝ Ռուսաստանից նոր եկած ախալցխացի Արտաշես Սուջյանին:

Իշխանը զինվորներին մշտապես հիշեցնում էր ժողովրդի հանդեպ պարտքի մասին, խստորեն զգուշացնում հոգատար լինել հայ մարդկանց հանդեպ, սատար կանգնել նրանց հոգսերին ու ցավերին: Նա չէր հանդուրժում որևէ անարդար բան, որևէ անիրավություն:

Լեռնապարի առաջնորդը կողմնակից էր տեռորի: Գտնում էր, որ չպետք է հանդուրժել որևէ մեկին, լինի նա շարքային թե ղեկավար, եթե դավաճանում է ազգային գործին, հայտնում է գաղտնիքներ, տուրք է տալիս սեռական կրքերի սանձազերծմանը և այլն: Փայփայում էր Լեռնապարի ժողովրդի ազգային ավանդույթները, ընտանեկան սրբությունները, կենցաղային ու բարոյական սկզբունքները, չէր հանդուրժում, երբ խախտվում էին կյանքի դարերով սրբագործված կանոնները:

Իր զինված խմբի քաջ զինվորներից Աբդալը գյուղերից մեկում մտերմական կապ էր հաստատել մի նորահարսի հետ: Պղծվել էր մի հայ ընտանիքի պատիվը: Այն օրերի համար դա ծանրագույն հանցանք էր, մի խայտառակություն, որը պետք է սրբվեր արյունով: Իշխանը վճիռ է արձակում և ինքն էլ իր ձեռքով գնդակահարում զինվորին:

Իշխանն անողոք էր հատկապես դավաճանների ու մատնիչների հանդեպ: 1904թ. աշնանը նա անձամբ գնդակահարել է Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Արսեն վարդապետին, որին Շամի կ.կոմիտեն վաղուց տվել էր տեռորի որոշում հակազգային արարքների համար:

Իշխանի հոգսերից մեկը ժողովրդի կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացումն էր, նրան լուսավորելը: Նա մեծ ջանքեր էր գործադրում ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք նպաստեին հետամնաց զանգվածների մտավոր ու բարոյական զարգացմանը:

Լեռնապարի կրթական հաստատությունների համրանքն աննշան էր, եղածներն էլ խեղճ ու կրակ դպրոցներ էին, որոնցում երեխաները հազիվ գրել-կարդալ էին սովորում: Իշխանը հոգ տարավ, որպեսզի Վանից մտավորական ուժեր տեղափոխվեն Լեռնապարի գավառները և ստանձնեն կրթական գործը: Նա գյուղական համայնքների վրա պարտականություն էր դրել սեփական ուժերով ու միջոցներով վերանորոգել խարխուլ «դպրոցական» խրճիթները և բացել նորերը: Նրա ջանքերով Աղթամարի վանքին կից կազմակերպվեց դպրոց, ուր ընդգրկվեցին տարբեր գավառների չնորհալի պատանիներ: Իշխանի հրահանգով գավառներում մտավորական հատ ու կենտ ուժերից և գյուղական երիտասարդներից ստեղծվում էին թատերական խմբեր, որոնք ներկայացումներով հանդես էին գալիս ոչ միայն իրենց գյուղերում, այլև շրջում էին տարբեր բնակավայրերով: Որպես կանոն՝ ներկայացումները հայրենասիրական բովանդակություն ունեին և կոչված էին բարձրացնելու ժողովրդի բարոյահոգեբանական և մարտական ոգին: Իշխանի կարգադրությամբ ժողովեցին Լեռնապարի եկեղեցիներում և վանքերում անխնամ մնացած հին ձեռագրերը և կենտրոնացրին Աղթամարի կաթողիկոսարանում պահպանության համար ստեղծելով հարմար պայմաններ: Աղթամարում սկիզբ դրվեց «Արյան ձայն» խմորատիպ թերթի հրատարակմանը, խմորատիպով լույս էր տեսնում նաև մի երգիծաթերթ՝ «Կոտոշ» անունով: Երկու թերթերը խմբագրում էր Աղթամարում ստեղծված կենտրոնական թեմական դպրոցի տեսուչ, Էջմիածնի ճեմարանավարտ Հայկակ Կոսոյանը[1]:

Ինչպես տեսնում ենք, Իշխանը Լեռնապարում անբաժան իշխանություն ունեցող գործիչ էր, որը ոչ ոքի չէր ենթարկվում և ղեկավարվում էր սեփական մտածումներով ու կամքով: Նրան համարում էին իսկական դիկտատոր: Բայց դիկտատոր էր ոչ թե ավանդական իմաստով, երբ բռնությամբ իշխանության տիրացած անձը ենթակաների նկատմամբ դիմում է ամեն տեսակ հալածանքների՝ իր բարօր կյանքը ապահովելու համար: Նա **գաղափարական** դիկտատոր էր, շեշտում էր Իշխանի կենսագիր Վ. Վալադյանը, որի «նպատակը ժողովրդի համար գործելն ու կռվելն է, որը անձնական շահ ու հաշիվ չի հետապնդում, այլ միշտ և հանապազ նկատի է ունենում հանրության օգուտը, որ պատրաստ է ամէն անձնական զրկանքի ու զոհողութեան, միա՛յն թէ իր գործից, իր աշխատանքից օգտուողը ժողովուրդը լինի: Ժողովուրդը իր ամբողջութեան մէջ, իր բոլոր հոգսերով ու կարիքներով»[2]:

[1] **Վ. Փափազեան**, *Իմ յուշերը*, հատ.Ա, էջ 275:
[2] **«Հայրենիք»**, N 11(393), նոյեմբեր, 1958, էջ 48:

*
* *

Վան հասած Արամ Մանուկյանը առաջին հերթին ներկայացավ Հ.Յ.Դ. Վան-Վասպուրականի կազմակերպության ղեկավար Կոմսին (բժ. Վահան Փափազյան):

Վերհիշելով Արամի հետ իր առաջին հանդիպումը՝ Կոմսը գրել է.

«Գրկաբաց ընդունեցի զինքը: Առաջին իսկ տեսակցութեանս՝ զգացի որ եկողը լուրջ, խելահաս և կարող ուժ մըն էր: Թանկագին ընկեր մը կրնար լինել ինձ համար, որովհետև տարիներով Բագուի, Կարսի և Սալմաստ-Ռոյի սահմանամերձ շրջաններուն մեջ գործչի հանգամանքով շրջած, մոտեն ծանոթացած և փորձառություն ձեռք բերած էր»[1]:

Կովկասահայ գործիչների Վան գալով՝ կտրուկ բարձրացավ կուսակցական-քաղաքական աշխատանքների մակարդակը: Կազմակերպական գործերը կանոնավոր տանելու համար Վանի ողջ վիլայեթը բաժանվեց շրջանների (բացառություն էր Լեռնապարը, որը կառավարվում էր Իշխանի սահմանած օրենքներով):

Ներկուսակցական գործունեության մեջ գլխավոր ուշադրությունը կենտրոնացվում էր շարքերում կարգապահության ամրապնդման վրա:

Վահան Փափազյանը վկայում է, որ Հ.Յ.Դ. Վան-Վասպուրականի կազմակերպության մեջ ղեկավար թե շարքային անդամների համար հավասարապես հաստատվել էին ամենախիստ կարգապահական կանոններ և պատիժներ: Կուսակցության անդամը խստորեն պատժվում էր, եթե ցուցաբերում էր անբարոյական վարք, տարվում էր թղթախաղով ու հարբեցողությամբ, եթե գաղտնապահ չէր, ստում էր ու չարախոսում: Ընդհակառակը, պահանջվում էր շիտակություն, հանդգնություն և անվերապահ զոհաբերություն[2]:

Բոլոր դաշնակցականները ներկուսակցական կյանքում ունեին հավասար իրավունքներ, բայց տարբեր էին պարտականությունները, բոլորը պատասխանատու էին Շամի կ.կոմիտեի առջև, որն իր հերթին ենթակա էր կուսակցության ծրագրին և կանոնակարգային պահանջներին, նաև՝ կուսակցության շարքերում մշակված չգրված օրենքներին:

Նույնիսկ Վանի հակադաշնակցական գործիչներից, հետագայում նշանավոր ռամկավար Համբարձում Երամյանը խոստովանում էր, որ քաղաքում, առավել ևս Վասպուրականի շրջաններում, դաշնակցությունն աչքի էր զարնվում «իր խիզախութեամբ, կուսակցական **տիսիպլինով** և ուժեղ կազմակերպվածութեամբ»[3]:

[1] **Վ. Փափազեան**, *Իմ յուշերը*, հատ. Ա, էջ 350:
[2] Նույն տեղում, էջ 171:
[3] **Համբարձում Երամեան**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 354:

Հ.Յ.Դ. կազմակերպության ներսում հաստատված խիստ կարգապահության օրինակով Վասպուրականի կ. կոմիտեն փորձում էր քաղաքական կարգապահական կանոններ մտցնել նաև բնակչության մեջ:

1906թ. մարտին կ. կոմիտեն տպագրել ու տարածել էր մի հրահանգ-թռուցիկ, որում ասված էր, թե ոչ ոք իրավունք չունի զբաղվել դավաճանությամբ, մատնություններով ու լրտեսությամբ, գիշերները հանդիպել թուրք պաշտոնյաների հետ, ոչ ոք չպետք է համարձակվի տեղեկություններ հավաքել հեղափոխական անձնավորությունների և նրանց գործերի մասին, կազմակերպության կնիքը կեղծելու և փաստաթղթեր կնքելու միջոցով նրա անունից սպառնալիքներ կարդալ կամ պահանջներ ներկայացնել, անհատական հաշիվներով տեռորներ կատարել, գաղտնի կամ բացահայտ զենք կամ փամփուշտ վաճառել թուրքի կամ քրդի, կեղծ դրամ կտրել և ցրել՝ մանավանդ Հ.Յ.Դ. կազմակերպության անունով:

«Այս հրահանգները չլսող ու չկատարողները թող վստահ լինեն, - ազդարարում էր թռուցիկը, - որ իրենց ոչ մեկ քայլը չպիտի վրիպի կազմակերպության ուշադրությունեն և թող հավատացած լինեն, որ կազմակերպությունն իրենց դեմ ձեռք պիտի առնե ամենակտրուկ միջոցները և գործադրե ամենախիստ պատիժներ, կանգ չառնելով նույնիսկ մահուան պատժի առաջ»[1]:

Չնայած այդ խստություններին, դաշնակցականների թիվը գնալով հետզհետե ավելանում էր: Օրինակ՝ Վանից ոչ հեռու Թաղ ավանում, եթե 1904թ. կար կուսակցական մեկ խումբ, ապա 1905-ի վերջին խմբերի թիվը հասել էր հինգի: Ստեղծվեց բավական ծավալուն ցանց. խմբեր՝ իրենց ղեկավարներով, շրջաններ՝ իրենց ենթակոմիտեներով և կոմիտեներով՝ գլուխ ունենալով Շամի կենտրոնական կոմիտեն: Ցանցի թելերը հասնում էին լեռների կամ անտառների մեջ կորած հայկական վերջին բնակավայրերը[2]:

Հեղափոխականների ընտանիքն ուներ իր ներքին օրենքներն ու կանոնները: Արդեն նշվել է, որ Կովկասի հայ հեղափոխականների շրջանում ընդունված էր փոխել անուն-ազգանունը: Նույնը երկրում էր: Այստեղ ազգանունով հանդես գալն ընդունված չէր, բոլորն իրար դիմում էին միայն անունով՝ հիմնականում կրճատ, պարզ, հասկանալի, առանց ձևականությունների: Նույն անունը կրող անձանց իրար հետ չշփոթելու համար անվանը կցվում էր մականուն, որով շեշտվում էր տվյալ անհատի ծննդավայրը կամ գործելու տեղը: Ըստ որում, անունով դիմում էին ոչ միայն շարքայիններին, զինվորներին, այլև բոլոր մակարդակների կուսակցական գործիչներին, հեղափոխականներին :

[1] **«Դրոշակ»**, N 6 (172), Հունիս, 1906, էջ 95:
[2] **«Հայրենիք»**, N 6(317), Հունիս, 1952, էջ 67-68:
Այդ երևույթին անդրադառնալով՝ Անդրանիկը նշել է. «Մենք մեր զինուորները առաջին անունով կը կանչեինք: Երբեք չէինք հետաքրքրվեր անոնց երկրորդ անունով (այսինքն՝ ազգանունով: - Հ.Ս.) կամ ո՞ր գյուղեն կամ քաղաքեն եկած ըլլային չէինք ուզեր գիտնալ

Եվ այսպես, Կոմսի, Արամի, Իշխանի, Սարգսի և կովկասահայ մյուս գործիչների ջանքերով Վասպուրականը կարճ ժամանակամիջոցում ունեցավ դաշնակցական տիպար կազմակերպություն: Անվարան կարելի է ասել, որ հազիվ թե Հայաստանի ուրիշ որևէ վայր ունենար ընդհատակյա այնպիսի ծավալուն կազմակերպություն, ինչպիսին ուներ Վասպուրականը 1904-1908թթ. շրջանում:

Ինչպես Լեռնապարում, նույնպես և Վասպուրականի կենտրոնական շրջաններում ձեռնարկվում էին բազմաբնույթ միջոցներ՝ գավառների ինքնապաշտպանության ուղղությամբ: Այդ նպատակով շարունակվում էին զենք ձեռք բերելու աշխատանքները, և մանավանդ մեծ ուշադրություն էր դարձվում մնայուն ու թռուցիկ զինված խմբերի կազմակերպմանը: Ամեն մի շրջան ուներ իր առանձին շրջիկ գործիչը, որը փոքրիկ զինված խմբով պտտվում էր գյուղից գյուղ:

Վարդան Շահբազը գրել է. «Գյուղացիք կարծես երազի մեջ էին: Մինչ այդ հրացանը տեսած էին թուրքի ուսին, հիմա կը տեսնեին զինված երիտասարդ հայեր: Աչքերնին ուրախության արցունքով լեցուած, ձեռքերնին երկինք պարզած փառք կուտային Աստուծոյ, որ հայն ալ զենք ուներ»[1]: Նրանք միմյանց հարց էին տալիս՝ ովքե՞ր են այս մարդիկ, որ Կովկասում թողել են իրենց տունն ու տեղը, հրաժարվել կյանքի վայելքներից և եկել են մի երկիր, որ կատարյալ դժոխք է: Ովքե՞ր են այս մարդիկ, որոնց մարմնի անբաժան մասը դարձել է հրացանը:

Եզրակացությունը մեկն էր. նրանք իրենց եղբայրներն են, որ հոգու կանչով եկել են Արարատյան աշխարհից և Նախիջևան-Գողթնից, Թիֆլիսից և Բաքվից, հատկապես՝ Ղարաբաղից: Նրանք իրավ հայորդիներ են, որոնք ազգային դաստիարակություն են ստացել Շուշիի թեմական դպրոցում և Երևանի ուսուցչական սեմինարիայում ու թեմականում, Թիֆլիսի Ներսիսյանում և Էջմիածնի ճեմարանում, տարվել իրենց ժողովրդի ազատագրության գաղափարով և որոշել կյանքը նվիրել այդ գաղափարի հաղթանակին:

Կովկասից եկած գործիչները դեռ այնտեղ լավ գիտեին, որ Արևմտահայաստանում իրենք պիտի ապրեն ծանրագույն կյանքով, ճիշտ այնպես, ինչպես ժողովուրդը, որ լինելու են սակավապետ ու չարքաշ՝ ճիշտ ժողովրդի նման: Գալով Երկիր՝ վտանգներով լի ընդհատակյա կյանքը նրանց սովորեցնում էր բավարարվել քչով, իրենց ապրուստի միջոցները հայթայթել սեփական աշխա-

այն նպատակով, թե կրնար պատահիլ, որ մեզմե մեկը կամ մյուսը թուրքերուն ձեռքը ինար և ծեծի ու չարչարանքի տակ կամայ մատնություններ ըներ: Մենք ստիպված էինք այդպես ընել, երբ նույն ատեն նկատի ունեինք թե միշտ նորեկ զինուորներ կուգային ու կերթային կամ քիչ ատեն մեր մոտ կմնային ու կհեռանային դարձյալ» («Առաքելոց վանքի կուիր: Հայ յեղափոխութիւնէն դրուագ մը»: Պատմեց զոր.Անդրանիկ, գրի առավ Լ. Լյուլեճեան, Բոսթըն, 1925, էջ 53):
[1] **«Հայրենիք»** ամսագիր, N 1(264), Հունվար, 1948, էջ 82:

տանքով*: Նրանք անտրտունջ տոկում էին զրկանքների ու նեղության, սովի ու հիվանդությունների՝ ձգտելով նեղություն չտալ շրջապատի մարդկանց:

Օրինակ՝ Արամը խիստ կարճատես լինելով և հաճախ հիվանդանալով, նույնիսկ ամաչում էր խոսել իր առողջության մասին: 1905թ. վերջերին նրա մոտ կրկին սրացան սոսկալի հոդացավերը, միաժամանակ բորբոքվեցին աչքերը: Ամբողջ երեք շաբաթ նա գամված մնաց անկողնուն: Հոդերի բուժումը պահանջում էր երկար ժամանակ, բայց Արամը ոտքի կանգնեց դեռ ցավերը չմեղմացած: Ժամանակը չէր սպասում: Թե որքան լարված էր Արամի ժամանակը, որքան էր նա զբաղված, կարելի է իմանալ՝ կարդալով նրա միայն մեկ օրվա աշխատանքի ծրագիրը: Ահա այն. ա) Տեսակցել կուսակալի և այլ կարևոր թուրք մարդկանց հետ, բ) Տեսակցել [Հ.Յ.Դ. արևելյան] բյուրոյի՝ Վան եկած անդամների և կարևոր ընկերների հետ, գ) Լինել կենտրոնական կոմիտեում և զեկուցում տալ աշխատանքների ընթացքի մասին, դ) [Բյուրոյի] ներկայացուցիչների հետ ժողով անել և զեկուցել Տարոնի կացության մասին[1]:

Երկիր եկած կովկասահայ երիտասարդների չարքաշ կյանքին անդրադառնալով՝ Վարդան Շահբազը նշել է.

«Հրացանը ուսած, փամփուշտները կռնակին կապած՝ մեկ-մեկ տոպրակ, որուն մեջ իրենց երկու ձեռք փոխնորդ ճերմակեղէն և հրացանի անմիջական պէտք եղած բոլոր մասերը՝ կը պտտէին անոնք ամբողջ տարիներ»[2]:

Նկարագրելով իր կենցաղը Վանում անցկացրած տարիներին՝ Վահան Փափազյանը նշել է. «Ես չեմ յիշեր, քաղաքի մեջ անցուցած տարիներուս մեջ, որ որևէ ատեն, սովորական մարդու մը պես, անկողին մտնայի հագուստներս հանած: Կը պառկէինք ոչ միայն հագուստներով ու կոշիկներով, այլև մեր փամփուշտակալներով, զենքերնիս կամ թևերնուս մեջ գրկած, կամ մեր քովիկը: ...Մատնութեան և պաշարման վտանգը այնքան անակնկալ կրնար լինել, որ մութին մեջ հագուելու ոչ ժամանակ կը մնար և ոչ ալ հնարավորություն: ...Մտցուցած այս խիստ կանոններուն ենթարկուեցան բոլորը մինչև վերջ: Կը յիշեմ որ «մարդու պես» հանուած անկողին եմ մտեր, երեք տարուան ընթացքին՝ երկու անգամ Կտուց անապատ կղզիին մեջ և անգամ մը Աղթամար: Շրջապատս կ'ըսեր արդեն. «Պարոն բժիշկը մեկ աչքով կը քնանայ, մյուսով արթուն է...»»[3]:

Եկվոր հեղափոխականը ստիպված էր լավ յուրացնել զենքի գործածությունը, սովորել վառոդ լցնել պարկուճները, բաճկոնի տակ ծանր փամփուշտակալները, հարկ եղած դեպքում, ոտքով օրական անցնել տասնյակ կիլոմետրեր:

* Հ.Յ. դաշնակցության ամեն մի կ. կոմիտեում կուսակցության հաշվին ապրող միայն մի ազատ անդամ կար, մնացած գործիչներն իրենք էին հոգում իրենց ապրուստի միջոցները (տե՛ս «Նյութեր...», հատ. Բ, էջ 372):

1 Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, էջ 232:
2 «Հայրենիք» ամսագիր, N 1(264), հունվար, 1948, էջ 82-83:
3 Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 200-203:

Ժողովուրդն ամեն ինչ տեսնում էր, ականատես ու վկա էր կովկասցիների անձնվիրությանը:

Վան-Վասպուրական եկած տասնյակ ռուսահայ գործիչներ հիմնականում մտավորական ուժեր էին, որոնք կարճ ժամանակում ղեկավար դիրքեր էին գրավել կուսակցական կազմակերպություններում և ժողովրդի մեջ ձեռք բերել մեծ հեղինակություն:

Ինչ վերաբերում է հասարակ զինվորներին, նրանք, առանց բացառության, տեղացի էին: Տեղացի էին նաև համարյա բոլոր ֆիդայիները, որոնք Կովկասից եկածների պես կրում էին կյանքի իրենց բաժին ընկած բոլոր դառնությունները:

«Հայդուկը, - գրել է Ռաֆֆին, - բնական արտահայտություն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարություններից տանջված և իր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի: Հայդուկը ստրուկի բողոքն է իշխող բարբարոսության դեմ: Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծված է, նա թողնում է իր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում և այնտեղ, որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին սկսում է տիրել ամայության վրա...»[1]:

Ֆիդայիների օրն սկսվում էր ոչ թե առավոտյան, այլ մութն ընկնելուց հետո: Իր «Հայ ֆեդային» հոդվածում Վարդան Շահբազը տվել է նրանց դժվարին, տառապալից կյանքի հարազատ նկարագրությունը:

«Ֆեդայիներու արշալոյսը երեկոեան կը բացուէր: Տունէ տուն, գեղէ գեղ, գաւառէ գաւառ փոխադրուելու ատեն երեկոեան ժամի 8-9-ի ատենները դուրս պէտք է ելլէին, լուսնեակ կար թէ ոչ, անձրև էր թէ ձիւն: Պիտի գնային, բնութեան սպառնալիքն անգամ պիտի արհամարհէին եւ, ահագին բեռը շալակած, 5-11 ժամ պիտի քալէին:

Ջափազանցութիւն թող չնկատուի, Շատախի, Մոքսի, Կարկառի, Խիզանի խոր ձորերով բաժանուած լեռներու մէջ, ան ալ գիշերը, կը քալէին՝ առանց որևէ տրտունջ, որևէ դժգոհութիւն յայտնելու: Կը քալէին լուռ ու մունջ, անչշուկ, կարգապահ:

Անկարելի է երեւակայութեամբ պատկերացնել այս ինքնախաչելութեան պատկերը»[2]:

1904-1905 թվականները Վասպուրականի կրթամշակութային կյանքի վերելքի տարիներն էին: Կովկասահայ գործիչները, միացած տեղի մտավորական ուժերին, կարողացան ստեղծել մի ներքին խոշոր մեքենա՝ դպրոց, մշակույթ, քարոզչություն, գաղտնի մամուլ, գրադարան և այլն:

Վանի մոտ գտնվող հիշատակված Թաղ փոքրիկ ավանը մշակույթի լուսա-

1 «Արաքս», գիրք Ա, 1892, էջ 91:
2 «Հայրենիք», N 1(264), հունվար, 1948, էջ 83:

վոր վայր էր: Հազար հոգանոց այս ավանում կար երեք դպրոց՝ տղաների և աղջիկների ազգային վարժարաններից բացի, բողոքականներն էլ ունեին առանձին դպրոց[1]:

Կովկասյան գործիչները և տեղական ընկերները համատեղ աշխատանքով Վասպուրականի բոլոր գյուղերում անխտիր հիմնեցին դպրոցներ, երիտասարդ ուսուցիչների ցանցով պատվեց նահանգը:

Աճում էր հայրենասեր ու խանդավառ երիտասարդություն, որը պիտի գար հետագայում ստվարացնելու հայ կուսակցությունների, հատկապես դաշնակցության շարքերը:

Վան քաղաքի այն օրերի աշակերտներից մեկը հետագայում վերհիշել է. «Դասընկերներուս հետ բռնկած էինք ըմբոստութեան սրբազան կրակով տիրող բոլոր կարգերուն դեմ պետական-բռնապետական, ընկերային-տնտեսական, ընտանեական-դպրոցական - բոլորը անխտիր մեր ցասումին առարկայ էին: Ու յեղափոխական գրականութեան եւ պրոպագանդի ազդեցութեան տակ առաջին ըմբոստութեան դրոշը պարզեցինք դպրոցական կարգ ու սարքին դէմ, յայտարարեցինք դասադուլ եւ դպրոցական կեանքը կանգնեցուցինք մէկ շարժումով: Զուր անցան բոլոր ջանքերը մեզ հնազանդութեան բերելու, եւ միայն յեղափոխական Արամի միջամտութիւնը կրցաւ վերջ դնել մեր դասադուլին: Արամ լուր տուաւ մեզ թէ ցանկութիւն ունի տեսնելու ըմբոստներուս հետ: Գիշեր մը հաւաքուած մեր դասընկերներէն Բրուտեան Աբրահամենց տունը սրտատրոփ Արամին կը սպասէինք, երբ ներս մտաւ ան երկու թիկնեղ զինուորներու հետ: Հրճւանքի անհուն սարսուռ մը զգացի, որովհետեւ առաջին անգամն էր որ կը տեսնէի հայ յեղափոխականը՝ սպառազինուած հայդուկներու հետ: Արամը ոգեշունչ եւ գեղեցիկ ճառով մը փառաբանեց մեր ըմբոստութիւնը, գնահատեց ընդվզումի այն կրակը սրբազան, որմէ ծնած են բոլոր յեղափոխականները, եւ որմէ կը ծագեն բոլոր արշալոյսները: Ղարաբաղի անպաճոյճ բարբառով, այն օրը Արամը մկրտեց մեր մէջ հայ յեղափոխութիւնը եւ անկէ վերջ անիկա Սարգիսի հետ եղաւ վարպետ եւ ուսուցիչ Վասպուրականի նոր սերունդին»[2]:

Հեղափոխական դաստիարակության տեսակետից կարևոր նշանակություն էր տրվում գրադարանների ստեղծմանը:

Վանում դաշնակցությունն ուներ «Ազատ» անունով գաղտնի գրադարան, որի գրքերը առանձին նշանակված ցրիչների միջոցով հասցվում էին դաշնակցական և արմենական խմբերին (քաղաքում հնչակյաններ համարյա չկային): Գրադարանի գրքերից էին Բաֆֆու «Խենթը», «Ջալալեդդին», «Կայծեր», «Դավիթ Բեկ», Ավ. Ահարոնյանի «Մրրիկի սուրը», «Ազատության ճանապարհին», «Ռաշիդը», «Սև օրեր», «Արազ», օտար գրականությունից՝ «Լուսադեմին», «Անդրոնիկ», «Դոնչո» և այլն[1]:

Կովկասահայ գործիչների ջանքերով Վանում սկսեց հրատարակվել «Աշխատանք» շաբաթաթերթը: Նրանց նախաձեռնությամբ կազմակերպվեց քառաձայն երգչախումբ, որն իր հերթին օգնում, ընթացք էր տալիս քաղաքի ինքնագործ երգչախմբերի և դրամատիկական խմբերի աշխատանքներին:

Բազմաբնույթ միջոցառումների ու ձեռնարկների անցկացման, Հ.Յ.Դ. կուսակցական կազմակերպությունների ամրացման և նրանց գործունեության ընդլայնման շնորհիվ կարճ ժամանակամիջոցում Վան-Վասպուրականի ժողովրդի մեջ կատարվեց արմատական հոգեփոխություն:

Սակայն գործին մեծապես խանգարում էին հեղափոխականների շրջանում մշտական անհամաձայնություններն ու հակասությունները:

Ընդ որում, հիմնական տարաձայնությունները ոչ թե տեղացի և Կովկասից եկած գործիչների միջև էին, այլ հենց վերջիններիս միջև: Այդ լուրջ տարաձայնություններն ու հակասությունները տարածվեցին նաև Վան քաղաքի և գավառի գործիչների վրա: Վերջիններիս գլուխ էր կանգնել Իշխանը: Նա չէր ուզում ենթարկվել Կոմսին և պահանջում էր Լեռնապարում ստեղծել անկախ կ.կոմիտեություն:

Խաղաղ լուծում չգտնելով՝ Կոմսը կուսակցության գերագույն մարմնից խնդրեց իրեն Վանից հետ կանչել: Բայց գերագույն մարմինը մերժեց Կոմսի խնդրանքը:

Գերադասելով հաշտության ուղին՝ Կոմսը համոզված էր, որ այն կարելի կլինի գլուխ բերել Արամի միջամտությամբ: «Մեծ հույսեր ունեի, - գրել է նա, - որ Արամը պիտի յաջողեր մեր ընկերական մթնոլորտը շնչելի դարձնել, խիստ կարևոր էր, մանավանդ, վերացնել Իշխանի և իմ տարակարծությունները և ցրել փոխադարձ թյուր կարծիքները: ...Այսպես կամ այնպես, մեծ մխիթարություն էր ինձի համար ունենալ քովս կարող և հավասար ընկեր մը, որուն հետ բաժնեի իմ խոհերը, ներքին հոգեկան տառապանքս, պատասխանատուութիւնը և մտածումները, որին հետ դյուրին լիներ խորհրդակցել և գործակցել»[2]:

Կոմսը չէր սխալվում: Միայն Արամը կարող էր համբերությամբ ձեռնարկել պայքարի ընկերների հաշտեցման գործը: Արամի հետ ծանոթ մարդիկ բազմիցս նշել են, որ նա մարդկանց մոտենալու, նրանց հետ առնչվելու և լեզու գտնելու անգերազանցելի վարպետ էր: «Կարելի է ասել, - նշել է Արամի կենսագիր Արշալույս Աստվածատրյանը, - որ այդ ընդունակությունը նրա ներքին կարողությունների զարդն էր կազմում, հասարակական կյանքի հա-

---

[1] **«Հայրենիք»**, N 6(317), հունիս, 1952, էջ 67:
[2] Նկատի ունի Սարգիս Բարսեղյանին:
[2] **«Վեմ»**, N1, հունվար-փետրվար, 1934, էջ 111:

[1] **«Հայրենիք»**, N 10(226), օգոստոս, 1941, էջ 82:
[2] **«Արամը»**, էջ 431:

ղողությունների գլխավոր բանալին»[1]:

Ընդամենը մի քանի ամիս էր անցել, երբ Արամ Մանուկյանը Վանում էր, բայց արդեն գտնվում էր իրադարձությունների բուն կենտրոնում:

Երկիր գալու առաջին օրերից, որպես Շամի կ.կոմիտեի անդամ, նա ստանձնել էր աշխատանքի մի շարք ուղղությունների պատասխանատվությունը՝ քարոզչական գործ, արտասահմանյան կուսակցական կազմակերպությունների և կենտրոնների հետ կապի իրականացում, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, կապ կրթական և ազգային հիմնարկների հետ:

Արամը յուրօրինակ մոտեցում ուներ կուսակցական ընկերների հանդեպ և ընդհանրապես դեպի շրջապատը: Նրա մոտեցման առանձնահատկությունը մարդկանց չափից ավելի վստահելն էր, մի բան, որ սկզբում առաջ բերեց կուսակցական ընկերների քննադատությունը: Աշխատանքի այդ ոճը անընդունելի էր համարում հատկապես Իշխանը, որը կողմնակից էր գործիչների խիստ ընտրությանը: Նա այս կամ այն անհատի նկատմամբ վստահություն էր տածում միայն ու միայն աշխատանքում տևական ժամանակ փորձելուց հետո: Երկու մերձավոր ու բախտակից ընկերներ – երկու տարբեր բնավորություններ:

Բայց կյանքը ցույց տվեց Արամի ճշմարտացի լինելը: Նրա «չափից ավելի մեղմ» ոճը բխում էր աշխատավորական լայն զանգվածների սրտից և նրանց համախմբման ու կազմակերպման տեսակետից առավել արդյունավետ էր: Թափած մեծ ջանքերի շնորհիվ նա ձեռք էր բերել տիրական ազդեցություն և հսկայական հեղինակություն: Նա բոլորի համար՝ ամենապարզ գեղջուկից մինչև պատանին, սրտակից ընկեր էր: Գեղջուկը հեռավոր գյուղերից քաղաք էր գալիս իր գործի մասին Արամի կարծիքը հարցնելու, առևտրականը Արամին էր դիմում իր ձեռնարկի համար: Եվ նա բոլորին տալիս էր իր խորհուրդը, ամենքին լսում էր անձանձրույթ և սրտով:

Այդ տարիներին Արամին մոտիկից ճանաչած, վանեցի Հմայակ Մանուկյանը հետագայում գրել է.

«Արամը միայնակ գտնել դժուար էր. անիկա՝ ըլլար փողոցեն անցած պահուն, ըլլար իր տունը սեղանին շուրջ, թեյի կամ ճաշի նստած, ըլլար նույնիսկ մահճակալին մեջ պառկած, միշտ կը շրջապատուեր ժողովուրդով: Ցաճախ կը տեսնեիր զինքը, որ գլուխը առլև ծռած դանդաղորեն կը քալե գյուղացիներու խումբ մը ետևն ունենալով: Ցուրաքանչյուրն իր գործին համար կը հարցնե, ու Արամ, առանց ետև նայելու, կը պատասխաներ յուրաքանչյուրին ալ, որոնք գոհ սրտով կը կտրուին խումբեն, կը մնան ետև ու կը հեռանան մեկիկ-մեկիկ, մինչ Արամ կը շարունակե առաջանալ և իր դեմ ելլողներով լեցնել մեկնողներուն տեղը: Եթե պատահեր որ Արամը մինակ մնար, ինքն էր, որ կը սկսեր ժողովուրդ փնտրել և կեցնել առաջին հանդիպողը՝ այս կամ այն, մասնավոր կամ ընդհանուր խնդրի մասին հրահանգ տալու կամ տեղեկություն ստանալու

[1] «Արամը», էջ 23:

համար: Եվ դարձեալ եթե պատահեր որ մարդու ալ չհանդիպեր, կը մտներ առաջին հանդիպած տունը, որովհետև տուն չկար, մարդ չկար, նույնիսկ ծեր ու մանուկ, որ Արամին ծանոթ չըլլար: Անիկա կը հետաքրքրուեր ամենաաննշան բաներով և ամենաաննշան դեպքերով. ով որու քենին է, ով որու հետ ամուսնացավ, ով ինչ յարաբերութեան մեջ է իր այնինչ ազգականին կամ բարեկամին հետ: Ու այդ աննշան մանրամասնությունները Արամին համար ժողովուրդին խորքը թափանցելու և զայն լիովին ըմբռնելու համար մեյ մեկ ազդակներ կը հանդիսանային:

Ու այսպես, մեծեն մինչև փոքր, կուսակալեն մինչև յետին գյուղացին, մանրեն մինչև ընդհանուրը, մասնավոր ամուսնական հարցեն մինչև հասարակական-պետական մեծ խնդիրներ, ամեն բան Արամի մտաշխարհին մեջ իր համապատասխան տեղը կը գրավեր»[1]:

Զուր չէ, որ Վանում գտնվելու կարճ ժամանակամիջոցում ժողովուրդը նրան տվեց «փաշա» տիտղոսը: Վան-Վասպուրականում նա «Արամ փաշա» էր, իսկ կուսակցական վերին մարմիններում և Կովկասում նրան անվանում էին «Վանի Արամ»:

Արամը մեծ ջանքեր էր գործադրում կազմակերպության մեջ հաշտություն կայացնելու:

Ուսումնասիրելով դրսից եկած գործիչների միջավայրում ծագած տարաձայնությունների պատճառները, նա եզրակացության էր հանգել, որ լուրջ պատճառներ չկան. հիմնական պատճառն այն անտանելի, դժոխային պայմաններն էին, որում ապրում էին նրանք: Թափած ջանքերն առայժմ արդյունք չէին տալիս:

Զցանկանալով շարունակել պայքարն իր հանդեպ եղած ընդդիմության հետ՝ Կոմսը, երկու տարի Շամի կազմակերպությունը գլխավորելուց հետո, կուսակցական վերին մարմնի համաձայնությամբ, 1905թ. գարնանը կ.կոմիտեի ղեկավարությունը հանձնում է Արամին և, թողնելով Վանը, հեռանում Կովկաս:

Այդ ժամանակ արդեն Երկիր էր եկել նաև Ռուբեն Տեր-Մինասյանը: Նա նույնպես չցանկանալով մնալ Վանում մեկնել էր Լեռնապար, որպես Իշխանի գործակից:

Սակայն Կոմսի հեռանալով տարաձայնությունները չհարթվեցին: Հեղափոխականների շրջանում հակառակությունները շարունակվում էին հատկապես ազատագրական շարժման հետագա մարտավարության հարցերի շուրջ:

Սասնո ապստամբությունից առաջ այդ խնդրի կապակցությամբ ձևավորված գաղափարական երկու տարբեր մոտեցումների կրողները Հրայրը և Անդրանիկն էին: Նրանց միջև առաջացած հարաբերությունները դեռ այն ժամանակ առաջ էին բերել շարժման պառակտման լուրջ վտանգ:

[1] «Արամը», էջ 354-355:

Եվ ահա այժմ, 1905թ. կեսերից սկսած, այդ հարցը նորից հայտնվել էր վիճաբանությունների կենտրոնում: Վասպուրականում այդ տեսակետներից մեկի կրողներն էին Կոմսը, Արամը և նրանց կողմնակիցները, մյուսինը՝ Իշխանը, Տիգրանը և նրանց համախոհները:

Կոմսը և Արամը պաշտպանում էին Հայրի այն գաղափարը, որ եթե հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն, ապա դա պետք է լինի համաժողովրդական՝ նախապատրաստված բազմակողմանիորեն և հիմնավոր: Նրանց տեսակետը հիմնված էր այն բանի վրա, որ հայ գյուղացիությունը, արհեստավորությունը և մանր առևտրականներն անսահման կրքով փարված են ընդհանուր ապստամբության միջոցով բացարձակ ազատության հասնելու բաղձանքին:

«... Մեր երիտասարդությունը, - գրել է Կոմսը, - օր առաջ կուզեր «զարնել զարնուիլ» և կը հավատար, թե կարելի է խորտակել տիրող վարչաձևը ժողովրդային ընդհանուր ապստամբությամբ»[1]:

Երկրի հայությանը միաժամանակյա ապստամբության դուրս բերելու հնարավորության տեսակետին դեմ էր Իշխանը, դեմ էին նրա կողմնակիցները: Իշխանը դա անհնարին էր համարում վկայակոչելով Երկրի աշխարհագրական, տնտեսական և քաղաքական տարբեր պայմանները: Դրա փոխարեն նա ճիշտ էր համարում Անդրանիկի տեսակետը, թե լեռնային առավել անմատչելի վայրերը առանձին-առանձին պետք է վերածել ապստամբական հնոցների: Լեռնավայրերը, դրանցում ստեղծվելիք ռազմական կայանները, դիմադրական կենտրոններն են՝ փրկության խարիսխները, - ասում է Իշխանը: Ըստ նրա, այդպիսի մի քանի վայրերում ապստամբությունների բռնկումը անխուսափելիորեն կգրավի եվրոպական պետությունների ուշադրությունը և կհանգեցնի նրանց միջամտությանը: Ինչ վերաբերում է Արևմտահայաստանի քաղաքներին, ապա դրանք խախուտ են ապստամբական խարիսխների համար, և ընդհանրապես քաղաքացիների հետ հույսեր չպետք է կապել:

Շամի կ.կոմիտեում խորացող հակասությունները գնալով ծանր կացություն էին ստեղծում: Իշխանը հասավ նրան, որ, շրջանցելով կոմիտեն, անմիջական հարաբերություններ հաստատեց Հ.Ց.Դ. բյուրոյի հետ, որի համաձայնությամբ Շամի (Վանի) կ.կոմիտեն բաժանվեց երկու մասի, և Լեռնապարը ունեցավ իր առանձին կ.կոմիտեն:

Այսպիսով, Լեռնապարի կ.կոմիտեի ստեղծումով նախկին երկու կոմիտեների փոխարեն այժմ Երկրում գործում էին երեքը՝ Վասպուրականի (Շամի), Լեռնապարի և Դուրան-Բարձրավանդակի:

Այս անգամ տարաձայնություններ ծայր առան Լեռնապարի կ.կոմիտեի մեջ: Իշխանը չէր հաշտվում նաև Ռուբենի հետ:

Ի վերջո Ռուբենը որոշեց Լեռնապարից հեռանալ Երկրի ամենավտանգավոր մասը՝ Դուրան-Բարձրավանդակ: Դրան նպաստեցին Դուրան-Բարձրավանդակից Գևորգ Զաուշի (Գևորգ Ղազարյան) գրած երկու նամակները՝ Շամի և Լեռնապարի կենտրոններին: Նամակների մեջ Գևորգը նկարագրում էր Սասուն-Դուրանի ժողովրդի ծանր կացությունը, անտանելի հալածանքները, Խարսի կռիվը, այդ կռվում հրաշքով իր ողջ մնալը և այլն: Նա գրում էր, որ, կտրված լինելով դրսի աշխարհից, ինքը ոչ մի տեղեկություն չունի, թե ինչ է կատարվում Վան-Վասպուրականում և Լեռնապարում: Միաժամանակ խնդրում էր իրեն օգնելու համար Շամի կամ Լեռնապարի պատասխանատու ընկերներից մեկին ուղարկել Դուրան-Բարձրավանդակ:

Ռուբենի վկայությամբ, Գևորգի նամակներից մեկում այսպիսի տողեր կային.

«Իմ հոգս չէ, այսօր կամ վաղը ես պիտի սպաննուիմ: Պարզ է ինձ համար, որ իմ վերջը եկած է. թեեւ, եթե ուզէնամ ամէնուն պէս լքել ժողովուրդը եւ հեռանալ, ես ալ իբր հերոս երկար, շատ երկար տարիներ կրնամ ապրիլ: Ես յուսահատ եմ ամէնքէն, բացի ձեզմէ: Իմ խնդրանքն է, որ անպայման մէկը ձեզմէ ճամբէք այս Երկիրը: Այդ ընկերը կամ կը հասնի իմ ողջութեանը կամ չի հասնի, այդ միեւնոյն է: Ճամբեցէ՛ք մէկը, որ այս ժողովուրդին գլուխն անցնի»[1]:

Դուրան գնալու Ռուբենի ցանկությունը քննության առնվեց Շամի և Լեռնապարի կ.կոմիտեների նիստում: Բոլորը լավ գիտեին, որ այնտեղ գնացողը հազիվ թե ողջ մնա: Ռուբենն էլ լավ էր հասկանում, որ «հոն գնացողները քանի մը ամիս կապրին»[2]: Երկար տևած նիստը, ի վերջո, բավարարեց Ռուբենի ցանկությունը, և նա մեկնեց Դուրան: Իբրև դաշնակցության լիազոր, Ռուբենը գնում էր Գևորգ Զաուշի հետ կիսելու տեղի առավել դաժան, բայց նաև՝ առավել հերոսական կյանքի դառնությունները*:

[1] «Արամը», էջ 435:

* Ռուբենը գրել է, թե Գևորգ Զաուշի այդ շատ կարևոր նամակներից մեկը ուղղված է եղել անձամբ Իշխանին, որի հետ նա ծանոթ է եղել Աղթամարի կռվից հետո, հետևապես դրանք զուր է փնտրել արխիվներում:

[1] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Բ, էջ 201:

[2] «Արամը», էջ 413:

** Եթե ընկերների ընտրությունն ընկներ ոչ թե Ռուբենի, այլ ռայոնական ժողովի մի ուրիշ մասնակցի վրա, ապա, անտարակույս, հայ պատմագրությունը զրկված կլիներ Դուրան-Բարձրավանդակի հեղափոխական շարժման, Գևորգ Զաուշի կյանքի վերջին տարվա, լեռներ բարձրացած կամ անտառներ մտած ֆիդայիների ապրելակերպի, կենցաղի, անձնազոհության, հերոսապատումների անխառն հայրենասիրության այն նկարագրություններից, որ զարմանալի վարպետությամբ նա կատարել է իր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» մեծարժեք հուշագրության հատորներում: Դաշնակցական նշանավոր գործիչ Եփրեմ Սարգայանը իրավացի էր, գրելով. «Տարիներ յետոյ երբ լուսակեաց Ռուբէնը լեզու առաւ եւ խօսեց այն ամսագրի (խոսքը «Հայրենիք» ամսագրի մասին է: -Հ.Ս.) էջերում, պատմեց Հայ յեղափոխութեան պատմութեան ամենահետաքրքրական, ամենագրաւիչ դրուագները, անառիկ Սասունի ազատասէր բարձունքներում ու անտառներում հայ հայդուկի կրած չարքաշ ու անտանելի տուայտանքները, հերոսական արարքների կողքին մարդկային հոգու անխուսափելի թուլութիւնը,

ԴՈՒՐԱՆ - ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ

Ժամանակակիցները նշում էին, որ Վասպուրականի և Տարոնի հայերը շեշտված ու ինքնահատուկ տարբերիչ գծեր ունեին:

Վ. Փափազյանի վկայությամբ, վասպուրականցի հայը խելացի էր, ձեռներեց, համառ, աշխատունակ և ուշիմ: Վասպուրականցիների 70%-ը Վան քաղաքում և 30%-ը գյուղերում գրագետ էին: Վանեցին իր հոգևոր սնունդը ստանում էր Կ.Պոլսից, պոլսահայերից՝ նրանց միջոցով հաղորդակից լինելով եվրոպական մշակույթին: Նա ընթերցասեր էր, նրա տանն անպայման կար հատուկ պահարան, որի դարակներում կարելի էր հանդիպել ինչպես հայ, այնպես էլ եվրոպական, հատկապես ֆրանսիական գրական ստեղծագործությունների: Վանեցին ընթերցում էր Դյումային, Հյուգոյին, Զոլային... Պոլսահայ մամուլի օրգանները բազմաթիվ բաժանորդներ ունեին Վան քաղաքում և գավառում:

Նկատելի էր, սակայն, որ վասպուրականցու բնութագրի շատ կողմեր կարծես չէին համապատասխանում հին հայի դիմագծին ու բնույթին: «Ան շատ ենթակա է եղած արտաքին ազդեցություններու, - գրել է Փափազյանը: - Միակ գիծը, որ բուն հայկական կրնամ նկատել, վանեցիի բնածին դիմացկունությունը և ուշիմությունն է. աննկուն ստեղծագործական տաղանդը, նախաձեռնության ոգին և աշխատասիրությունը»[1]:

Ի տարբերություն Վան-Վասպուրականի հայերի՝ Տարոնի հայության կրթական մակարդակը բավականին ցածր էր: Տարոնահայության միայն 15-20%-ը գիտեր կարդալ: Չնայած դրան, տարոնցին շատ խելացի էր, խորաթափանց: Նա անսահման քաջ էր, անձնուրաց: «Իր հոգեկան կառույցով կը թուի թե՝ տարոնցին է հին հայը»[2], քանի որ նա համարյա չի ենթարկվել արտաքին ազդեցությունների*:

ընկերական ջերմ ու գուրգուրոտ սիրոյ կողքին անձնական քէնն ու եսասիրությունը, նոր միայն լրացաւ ու պարզաբանուեց ինձ համար Ռուբէնի, Իշխանի և նրանց նման բազմաթիւ հայդուկների կրած հոգեկան տառապանքն ու ողբերգությունը» (**«Արամը»**, էջ 445):

1 **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 220:

2 Նույն տեղում:

* Ինչպես հայտնի է, գերազանցապես լեռնային բնական բաժանագծերով առանձնացված հայության հատվածները վաղնջական, իսկ ավելի ուշ՝ ավատական-նախարարական դարաշրջաններում ապրել են մեկը մյուսից կղզիացած, անկախ կամ կիսաանկախ վիճակով, երբեմն միմյանց ներհակ և նույնիսկ թշնամի՝ ինչպես խորթ տարրեր: Եթե դրան ավելացնենք այն, որ հայության զանազան հատվածներ դարեր շարունակ ենթարկվել են զանազան արտաքին՝ Վանա ծովի շրջակայքը՝ ասորական, Փոքր Հայքը՝ հունական, Արարատյան դաշտը և Նախիջևանը՝ պարսկական, Գուգարքը՝ վրացական, Աղվանքը՝ կովկասյան լեռնականների ազդեցություններին, ապա Վ. Փափազյանի ներկայացրած Դուրան-Բարձրավանդակի և Վան-Վասպուրականի հայերի տարբերությունների պատկերը ամբողջական կդառնա: Այդ օրինաչափությունը խախտող օրինակներից էին Տարոնը Արևմտյան և Զանգեզուրը Արևելյան Հայաստանում:

Ամբողջ Տարոնը (Դուրան) բաժանված էր վեց շրջանների՝ Ովասիսի, Կովածաղկի, Սոխակյանի, Սահակյանի, Վահագնյանի և Հովտի:

Բարձրավանդակը (Սասունը) չէր ենթարկված որոշակի բաժանումների՝ նկատի առնելով բնակչության կենցաղը, ավանդույթները, բնավորության գծերը:

Բյուրակնը մի առանձին շրջան էր, իսկ Ապահունիքը բաժանված էր վերի և վարի շրջանների: Սրանք նույնպես ենթակա էին Դուրան-Բարձրավանդակի կ. կոմիտեին:

Հ.Ց.Դ. Դուրան-Բարձրավանդակի կազմակերպության կ.կոմիտեի անդամներ էին Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ, Տատրակ), Գևորգ Զաուշը (Սարհատ) և Վարդան վարդապետը (Վկա): Այս կազմակերպության մեջ նույնպես կային սկզբունքային անհամաձայնություններ, որոնք ծագել էին Սասունի կռվից հետո:

Դասեր առնելով Սասնո անհաջող ապստամբությունից՝ հեղափոխական գործիչների մի մասը եկել էր այն համոզման, որ պետք է հրաժարվել մինչ այդ որդեգրած ճակատային կռվի մարտավարությունից, որի առավել ցայտուն ներկայացուցիչը Անդրանիկն էր, և ընդունել նոր մարտավարություն, որը խարսխված էր տևական համբերատար աշխատանքի վրա՝ նպատակ ունենալով ժողովրդական զանգվածներին լուրջ նախապատրաստել հետագա պայքարին: Այս տեսակետի կողմնակից գործիչներին գլխավորում էր Կորյունը (Գոմսա Իսո), որի հետ էին Մշո Գեղամը և Վարդան վարդապետը: Նրանք բոլորը Հրայրի աշակերտներն էին, նրա գաղափարների ջերմ երկրպագուները: Կորյունը քարոզում էր ու վերակազմակերպում Տարոնը,Պուլանըխը և Ինուսը:

Կորյունի և նրա բազմաթիվ համախոհների տեսակետը չէր բաժանում Գևորգ Զաուշը:

Գևորգ Զաուշ ... Նրա կյանքը նման է ասքի, որի յուրաքանչյուր պատումը միահյուսված է հայ ժողովրդի ազատագրական գոյամարտին՝ լի վերելքներով ու վայրէջքներով, փոթորկոտ ընդվզումներով ու դրամատիկ պահերով:

Ասպատակիչ քուրդ ցեղերի, կառավարական զորքերի ու ոստիկանության դեմ կռիվները Զաուշը միշտ մղել է անհավասար, նվազ ուժերով: Շատ է պատահել, որ մի քանի հայդուկներով նա կռիվ է տվել հարյուրների հասնող թշնամու դեմ: Այդ զարմանալի հոգին եղավ իր ժողովրդին բռնադատողների մշտական սարսափը և վայելեց այդ ժողովրդի անհատնում սերն ու պաշտամունքը:

Ապշեցուցիչ անձնվիրությամբ Զաուշը շուրջ 20 տարի, առանց զենքը վայր դնելու մղել է 40-ից ավելի կռիվ: Նա Սասունի 1904թ. կռիվների մեծանուն ֆիդայապետերից էր: Ապստամբության պարտությունից հետո, մինչև իր եղերական մահվան օրը, նրա կատարած դերը ամենադժվարը, գործունեությունը՝ ամենադժնդակը եղավ մնացած իր բոլոր զոհաբերությունների համեմատ:

Սասնո հերոսամարտից անմիջապես հետո Գևորգը ասել էր. «Երբ զէնք

կեղեքիչներ: Օրըստօրե ահագնացող բռնության տակ ժողովուրդը ոչ միայն հյուծվում էր ֆիզիկապես ու նյութապես, այլև անխուսափելիորեն դիմում էր բարոյական քայքայման:

Եվ Գևորգն իր ամենաընտիր 50 զինվորներով օրը ցերեկով լեռներից իջնում է Մշո դաշտ, գյուղացիներից վերցնում ձիեր, խումբը դարձնում ձիավոր և սկսում շրջել հայ գյուղերը: Նրա խմբի մեջ էին հանդուգն հայորդիներ Սպաղանաց Մակարը, Գալեն, Զոլոն, Ղազարը, Մանուկը, Ախոն, Ավրանա Արամը, Մոսոն, Զաթոն ու Մկրոն, Կրպոն ու Տիգրանը, Մորուք Կարոն և ուրիշներ:

Իր կողքին տեսնելով Գևորգ Զաուշին ու նրա զինյալներին՝ Մշո դաշտի տառապյալ հայությունը նոր կյանք էր առել:

Ռուբենը մեզ է փոխանցել նրա աննկարագրելի ուրախությունը.

«Կին թէ երեխայ, մեծ ու պզտիկ աղ ու հացով, լացով եւ ուրախութեամբ կը դիմաւորեն Գէորգ Զաւուշն ու ֆեստայիները եւ գոմէշ ու եզներ կը քաշեն անոնց առջեւեն մատաղի փոխարէն, հաւ ու ճիւ, գառ ու երինջ կը մորթեն զանոնք պատուելու համար, բրինձէ փիլաւ, սեր ու կարագ մէջտեղ կը բերեն ամէնուն սիրելի քաջերը կերակրելու համար: Կարծես ժողովուրդը պահ մը կը մոռնայ իր դաժան վիճակը. զանգեր կը խփուին եւ բարձր ձայնով «Գէորգ եկաւ» աչքի լոյս կու տան իրարու»[1]:

Ժողովրդի հույսն ու ապավենը մնում էին հայդուկները: Զուր չէ, որ Սիամանթոն այսպիսի խոսքերով էր դիմում նրանց.

«...Մխիթարությունը նորեն ու նորեն ձեզմե պիտի գայ: Ով սիրական ու հեռավոր ու հերոսական հայդուկներ, մխիթարությունը ձեր կամքեն, ձեր զորութենեն, ձեր յաղթանակներեն պիտի գայ... Արցունքները մեզի՝ տկարներուս, անգործոններուս ձգեք. գիտեմ որ արցունքները ձեր արյուն ծարավ աչուքներուն ու ձեր կտրիճ հոգիներուն չեն վայելեր: Իր գերեզմանը մեր խորանն է այլևս, իր անունը մեր առջև բացուած ազատագիրքը և իր յիշատակը մեր բոլորին ոգեվիրան»[2]:

Տարոն-Սասունում Գևորգն անդուլ ու անդադար մի տեղից մյուսն էր անցնում: Մի օր նա դաշտում էր, հաջորդ օրը՝ սարերի վրա: Իր խմբով շրջագայելիս՝ նա բազմաթիվ բախումներ ունեցավ կառավարական զորքերի և քրդական խառնախմբերի հետ: Հիշատակելի են Առաղի, Խարսի, Արգավանքի, Առվարինջի կռիվները[3]:

Մասնավոր հիշատակության է արժանի Խարսի կռիվը: Գևորգի խմբում այդ օրը կար 30 հոգի: Կռվում թուրքերից սպանվեց 60-ից ավելի զինվոր և 20 սպա, Գևորգի ձեռքն անցավ 100-ից ավելի զենք: Ֆիդայիներն այդ օրը միայն

[1] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Գ, էջ 323:
[2] ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ, N 241, թ. 1:
[3] Այդ կռիվների մասին տե՛ս Ավո, Գևորգ Զաուշ, էջ 274-303:

մեկ զոհ տվեցին՝ ճահիճներում խեղդվեց Զաուշի հավատարիմ ընկեր Մշեցի Եղոն, որի կորուստը խոր վիշտ պատճառեց ֆիդայապետին[1]:

Միշտ չէր, որ գործողություններն ավարտվում էին հաջողությամբ: Այդպիսին եղավ 1905թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած Առվարինջի կռիվը, որը Զաուշի քսան տարվա փոթորկալի կյանքի՝ իր հետևանքներով, ամենաանհաջող կռիվն էր՝ մեծ կորուստներով:

Այդ օրը 12 ընտիր ֆիդայիներով Գևորգն իջնում է Առվարինջ: Գյուղը շրջապատվում է հազարավոր զորքով և քրդերով: Սկսվում է բախտորոշ կռիվ: Ֆիդայիներից ինը սպանվում է, հրաշքով ազատվում են Գևորգը և մարտիկներից երկուսը[2]: Թշնամին արյունալի դատաստան է տեսնում խաղաղ բնակիչների նկատմամբ՝ ջարդելով 134 գյուղացու:

Այդ անհաջող կռիվը ծանր հարված եղավ ֆիդայիների վարկին:

Գևորգի կռիվներից դժգոհ Կորյունը, որը կազմակերպական գործերով զբաղված էր Խնուսի շրջանում, այնտեղից անցնում է Կովկաս՝ իր հետ տանելով երիտասարդ զինվոր Մուշեղին*: Կորյունի հեռանալուց հետո նրա համախոհները շարունակում են գործել իրենց հայդուկապետի մարտավարության համաձայն և առաջվա պես անհամաձայնություն էին հայտնում Զաուշի հախուռն գործողություններին:

Թվում էր, թե այդ դեպքերից հետո Գևորգը պիտի հրաժարվեր կռիվներից և ընդուներ Կորյունի տեսակետը: Բայց այդպես չեղավ: Նա շարունակում էր նորանոր հարվածներ հասցնել հայ գյուղացիներին տանջող Թուրք և քուրդ հարստահարիչներին:

Գևորգ Զաուշն անողոքաբար պատժում էր քրդական վերնախավի առավել գիշատիչ ներկայացուցիչներին, որոնք իսկական պատուհաս էին ոչ միայն հայ գյուղացիների, այլև քուրդ ներքնախավերի գլխին:

Հիշենք նրանցից ամենագլխավորներից մեկին՝ մշեցի Քերիմ աղային, որից իրենք՝ քրդերը, ահ ու դողի մեջ էին: Բռնությամբ սա տիրացել էր Ալիճան հայ գյուղի ամբողջ կեսին՝ գերության ու տարապարհակ տառապյալ աշխատանքի մատնելով բոլոր գյուղացիներին: Քերիմին մահ հասցնելը այդ վամպիրից փրկեց ոչ միայն Ալիճանը, այլև շրջակա բոլոր հայ գյուղերը: Գևորգի հարվածներից ընկան Փեթարը կեղեքող Ցուսուֆ աղան, Առվարինջի բեյը, Գոմսի ջիբրանցի Մեհմեդ Ալին, որոնք ամենակարող և առավել անզուսպ բռնակալներ էին անզեն ժողովրդի գլխին:

Գևորգ Զաուշի պատույտները Տարոն-Բարձրավանդակում չափազանց հոգնեցնում էին թուրքական վաշտերին, որոնք այս կամ այն կողմ արշավանքի էին դուրս գալիս, ամբողջ Տարոնը ոտքի տակ տալիս, բայց չէին կարողանում

[1] Տե՛ս «Պատմություն Տարոնի աշխարհի», պատմագրեց Կ. Սասունի, Պեյրութ, 1957, էջ 696:
[2] Նույն տեղում, էջ 696-697:
* Երիտասարդ զինվորը հետագայի նշանավոր զինվորական գործիչ Սասունցի Մուշեղն էր:

բռնել հերոսին: Օրը ցերեկով Գևորգը հաճախ մտնում էր քրդական ցեղախմբերի մեջ, ձիարշավ խաղալով գնում կանգնում էր աշիրապետերի վրանների կողքին, նրանց հղում թունդ սպառնալիքներ, պատվիրում «խելոք մնալ», ապա աներևույթ անհետանում անորոշ ուղղությամբ:

Անձնազոհ մարտիկներից կազմած իր խմբով Դուրան-Բարձրավանդակում Գևորգ Չաուշի մղած բազմաթիվ կռիվները հայ ժողովրդի ազատագրական պայքարի տարեգրության մեջ պիտի մնան իբրև քաջության ու սխրագործության անզուգական կոթողներ:

Արյունռուշտ բեկերը զսպված էին, նրանցից ոմանք բարեկամ էին ձևանում Գևորգին և զգուշանում նեղել հայերին: Նրանցից էին Տոմ գյուղի տեր մշեցի անգութ ու հայատյաց Հաջի Նազիրը, Ղըզլաղաջ և Ավզաղբյուր գյուղերի տեր Ջեզայիր աղա Ցուսուֆը, Սոլուխ գյուղը տիրապետող Հաջի Ահմեդը, Հայտնի ոճրագործ Մուսաբեկի եղբայր Ղասըմ բեկը՝ իր ցեղախմբով և դրանց նման ուրիշ ավազակներ[1]:

Բայց կային նաև քուրդ երևելիներ, որոնք անկեղծորեն նվիրված էին մեծանուն ֆիդայապետին և նույնպես հանդես էին գալիս թուրք բռնակալության դեմ: Չաուշին հաջողվեց իրեն կապել, օրինակ, ջիբրանցի և պատկանցի քուրդ ցեղախմբերը՝ իրենց ցեղապետերի գլխավորությամբ: Նա ջանում էր այդ ցեղապետերի միջոցով քրդերի մեջ ևս հեղաշրջում առաջ բերել, նրանց քաշել հայերի կողմը, որպեսզի «ի պահանջել հարկին, զինու զորությամբ միասնաբար պաշտպանեին երկու ազգերու կենսական իրավունքները»[2]: Սակայն ջանքերը սպասած արդյունքը չէին տալիս. քրդությունը, առանձին բացառություններով հանդերձ, չէր հակվում հայերի կողմը:

Մյուս կողմից, պատժելով չարագործներին՝ Գևորգն իր ձեռքով, որքան ներում էին ուժերը և միջոցները, նպաստներ էր բաժանում ոչ միայն հայ, այլև քուրդ կարուտյալներին[3]:

Գևորգ Չաուշի նոր կռիվները և պատժիչ գործողությունները անհետևանք չէին անցնում խաղաղ հայ բնակչության համար, որը ենթակվում էր նոր հալածանքների թուրքերի և քրդերի կողմից, իսկ դա իր հերթին առաջ էր բերում նոր դժգոհություններ Կորյունի կողմնակիցների մոտ:

Դաշնակցության նորեկ լիազոր Ռուբեն Տեր-Մինասյանին էր վիճակված Դուրան-Բարձրավանդակում հարթել թյուրիմացությունները և հոգեպես կրկին միավորել հեղափոխական գործիչներին ու ֆիդայիներին:

Ռուբենը Տարոն հասավ 1906թ. հուլիսի կեսերին: «Նա նոր մտավորական և զինուորական ուժ մըն էր, - գրել է Կարո Սասունին, - որ կու գար օգնելու Գեորգին և Տարոնի յեղափոխական շարժմանը: Պետք է խոստովանիլ, որ Ռուբեն եղավ այն հազուագյուտ մարտիկներեն մեկը, որ շուտով թրծուեցավ Գեորգի ֆեդայական խումբերուն մեջ, նոյնացավ անոնց հետ, դիմացավ ֆեդայական չարքաշութեան և եղավ ղեկավար դեմք մը, ֆեդայական մարտական նկարագրի կնիքը կրելով»[1]:

Շուտով Դուրան-Բարձրավանդակի պատասխանատու մարմինը՝ կ.կոմիտեն, վերակազմվում է և համալրվում Ռուբենով: Վերադասավորվում են Տարոնի և Սասունի երկու ենթակոմիտեությունները, հաշվառվում և կարգի են բերվում մարտական խմբերը: Կ.կոմիտեում քննվում և վճռվում են բազմաթիվ կարևոր հարցեր՝ հարաբերություններ կառավարության և քրդերի հետ, հողային հարց, դպրոցական հարց և այլն:

Մեծ թափ ստացավ քարոզչական գործը: Հատկապես գավառներում քարոզչական աշխատանքներ կատարելու համար որոշ տեսական պատրաստություն ունեցող երիտասարդներից կ.կոմիտեները կազմակերպում էին հատուկ դասընթացներ՝ դասախոսներ և ագիտատորներ պատրաստելու համար:

Քարոզչական աշխատանքում կարևոր նշանակություն էր տրվում արտասահմանից, առանձնապես Կովկասից, հեղափոխական և ընկերավարական գրականության ներմուծմանը և տարածմանը: Կովկասում սկսել էր լույս տեսնել «Ցառաջի գրադարան» անունով մատենաշարը, որի գրքույկները հասնում էին Արևմտյան Հայաստանի բոլոր կարևոր կետերը և օսմանյան կայսրության հայաբնակ վայրերը: Այդ գրականության տարածումը և բովանդակության լուսաբանումը հատուկ դասընթացում ընդգրկված պրոպագանդիստների հիմնական խնդիրներից մեկն էր:

Կոմսի վկայությամբ՝ «Արտասահմանեն ներմուծուող յեղափոխական գրականությունը և պարբերականները հեղեղեցին Երկիրը. անոնցմե բաժին կը հանեին նաև Տարոնին և հեռավոր հյուսիսային և հարավային գավառներուն»[2]:

Աշխուժացավ կապը կուսակցության արտասահմանյան կազմակերպությունների ու կենտրոնների հետ, մի բան, որ արտակարգ կարևորություն ուներ աշխատանքների ճիշտ կազմակերպման համար: Մյուս կենտրոնական կոմիտեներից տեղեկությունների, իսկ բյուրոներից հրահանգների ու որոշումների ստացումը և դրանց համեմատ աշխատանքների ծավալումը նպաստում էին մեկուսացածության մթնոլորտից կազմակերպության հանելուն: Մյուս կողմից, վերին մարմիններին տեղերից պարբերաբար ուղարկվող հաշվետվությունները բարձրացնում էին կազմակերպությունների պատասխանատվությունը, ինչպես նաև մեծ աջակցություն էր կենտրոնին՝ ճիշտ պատկերացում կազմելու տեղական կազմակերպությունների վիճակի մասին, ճիշտ ծրագրելու այս կամ այն կենտրոնական կոմիտեի գործողությունները:

---

[1] Տե՛ս **Սարգիս և Միսակ Բդէեան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրե, 1962, էջ 235:
[2] Նույն տեղում, էջ 236:
[3] Տե՛ս **«Դրոշակ»**, N10(187), հոկտեմբեր, 1907, էջ 152:

[1] **«Պատմություն Տարոնի աշխարհի»**, պատմագրեց **Կ. Սասունի**, էջ 698:
[2] **«Արամը»**, էջ 435:

Առանձնահատուկ նշանակություն էր տրվում «Դրոշակ» թերթի խմբագրության հետ կապի իրականացմանը, որը կոմիտեների աշխատանքի պատասխանատու բնագավառներից մեկն էր: Վերջիններիս պարտականությունների մեջ էր մտնում թերթի համարների ստացման հետ կապված դժվարությունների հաղթահարումն իրենց տարածքներում, թղթակցությունների ժամանակին առաքումը: Թղթակիցների պարտականությունն էր ճշմարտացի նկարագրել կատարված դեպքերը, ուղարկել նյութեր, որոնցում արտահայտվեին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ հունձքերի վիճակը, տուրքերը, քաղաքական բանտարկյալների վիճակը, սպանությունների ու բռնությունների, կամավոր և ստիպողական կրոնափոխության դեպքերը, քրդերի և թուրքերի կողմից հայաբնակ վայրերի զավթումը, օտար ցեղերի, այդ թվում չերքեզների, բռնած դիրքը դեպի հայերը և այլն: Ըստ որում, թղթակցությունները չպետք է լինեին վերացական, այլ՝ առարկայական, պարունակեին կոնկրետ անուններ ու թվեր, տեղագրական ճիշտ նկարագրություններ՝ համապատասխան ծանոթագրություններով:

Աշխուժացան երիտասարդության հետ տարվող աշխատանքները, ուժեղացան կոմիտեների հսկողությունն ու ազդեցությունը կրթական և ազգային հաստատությունների վրա:

Հատուկ ուշադրություն էր դարձվում օտար երկրներում պանդխտության մեջ գտնվող հարազատների ու հայրենակիցների հետ կապերի ամրապնդման խնդրին՝ նպատակ ունենալով կարգավորել դրսից դրամական օգնության գործը: Դա հույժ կարևոր էր թևածող սովը մեղմելու համար:

Ձեռնարկած միջոցառումները տալիս էին իրենց գոհացուցիչ արդյունքը: Դրան նպաստում էր այն, որ աճում էր մեծ հույսեր ներշնչող նոր սերունդ: Երիտասարդները բռնում էին իրենց հայրերի տեղը, գյուղերում նորահաս մարտիկները հավատարմությամբ ու անձնուրացությամբ կատարում էին հին ֆիդայիների դերը:

*

* *

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ծրագրված ու հետևողական աշխատանքով Երկրի բոլոր երեք մասերը՝ Վան-Վասպուրականը, Լեռնապարը և Դուրան-Բարձրավանդակը, կարճ ժամանակում ամրապնդվեցին կազմակերպչորեն: Արդեն 1906-ի կեսերին Երկրում հայությունը սերտորեն համախմբված էր ազգային կուսակցությունների շուրջը: Զանգվածների մտքերի վրա տիրական էր Հ.Ց. դաշնակցությունը՝ իր գաղափարներով, ուժեղ կազմակերպական կառույցով, շարքերի ամուր կարգապահությամբ, զինված մարտական խմբերով, ժողովրդին անմնացորդ ծառայելու անկոտրում կամքով:

Կարելի է անվարան ասել, որ այդ ամենի մեջ վճռական դերակատարություն են ունեցել թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարի նվիրյալ կովկասահայ հեղափոխականները:

Արևմտահայաստանում, հատկապես Երկրում, հայ քաղաքական կուսակցությունների գլխավորությամբ, լարված աշխատանք էր տարվում ապագա մարտերին նախապատրաստվելու համար, բայց այժմ նրանց ամենօրյա մտահոգությունը ժողովրդին **պաշտպանելն** էր: Այդ նպատակին էին ուղղված զինված հայ խմբերի վրեժխնդրական գործողությունները Վասպուրականում և Լեռնապարում[1]:

Բայց Երկրի մյուս մասում Դուրան-Բարձրավանդակում, վիճակն այլ էր: Այնտեղ հայտնված Գևորգ Չաուշն իր հեծյալ խմբով չսահմանափակվեց ժողովրդի կրավորական պաշտպանությամբ: Իր ֆիդայական խմբերով հայդուկապետը հանդես էր գալիս ոչ միայն որպես Տարոնի և Սասունի հայության պաշտպան, նրան հարստահարող թուրք և քուրդ բռնադատիչներին պատժող վրեժխնդրական ուժ, այլև՝ **նախահարձակ** ուժ: Ամբողջ Արևմտյան Հայաստանում միայն Դուրան-Բարձրավանդակում էր, որ Գևորգի շնորհիվ տեղի հայությունը շարունակում էր մնալ ապստամբական վիճակում:

Այսպիսով, թուրքական դժոխքում նոր ուժով էին սանձազերծվել լայնածավալ ոճիրները հայ ժողովրդի նկատմամբ: Շատերի համար արդեն պարզ էր, որ հայ-թուրք հարաբերությունների սրությունը հասել է մի հանգրվանի, որից տեսանելի ապագայում սկսվելու է իրավիճակի հանգուցալուծումը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 6 (317), Հունիս, 1952, էջ 66:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՆՈՐ ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՑ ԿՅԱՆՔՈՒՄ

1905թ. դեկտեմբերյան զինված ապստամբության ջախջախումը ցարական ինքնակալությանը վստահություն ներշնչեց իր ուժերի հանդեպ, և նա ամբողջ թափով հարձակման անցավ ժողովրդական զանգվածների դեմ:

Կառավարությունը ամենից առաջ լայն միջոցառումներ էր ձեռնարկել՝ «Արյունոտ կիրակի» տարելիցի օրը Պետերբուրգում և Մոսկվայում թույլ չտալու փողոցային երթեր, ցույցեր, միտինգներ, գործադուլներ: Դեռևս հունվարի 9-ից մի քանի օր առաջ կայազորները դրվել էին լիակատար պատրաստության մեջ, զինվորական ստորաբաժանումները զբաղեցրել էին կարևորագույն ռազմական կետերը, ինչպես նաև կենտրոնացվել էին կառավարական հիմնարկությունների, կայարանների, բանկերի, խոշորագույն գործարանների ու ֆաբրիկաների, էլեկտրակայանների, պետական տպարանների, բանտերի մոտ և այլուր[1]:

Միաժամանակ երկրով մեկ մոլեգնել սկսեց հակահեղափոխական արյունալի տեռորը, որն ամենից առաջ տարածվում էր այն շրջանների վրա, որոնք առավել մեծ ակտիվություն էին հանդես բերել ցարիզմի դեմ ծավալված կռվում: Երկրի նահանգների մեծ մասում հայտարարված էր արտակարգ ռազմական դրություն: Միապետական սատրապների գլխավորությամբ ամենուրեք կազմակերպվում էին պատժիչ արշավախմբեր: Այդ արշավախմբերի գլուխն էին կանգնում անձամբ Նիկոլայ II-ի կողմից երաշխավորված կամ նշանակված բարձրաստիճան զինվորականներ, որոնք նախընթաց ամիսներին գործած գազանային արարքներով ցույց էին տվել իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը գահին: Ողջ պատժիչ-ջարդարարական շարժման ընդհանուր ղեկավարությունը ցարը դրել էր մինիստրների խորհրդի նախագահ Վիտտեի և ներքին գործերի մինիստր Դուրնովոյի վրա:

Արյունարբու ցարի դահիճները Լեհաստանում, Մերձբալթիկայում, Ուկրաինայում, Սիբիրում և այլուր վրեժ էին լուծում բանվորներից ու գյուղացիներից, հեղափոխական կազմակերպություններից: Հազարավոր մահապատիժներ, տասնյակ հազարավոր ձերբակալություններ, հարյուրավոր ու

[1] *Տե՛ս* **"Революция 1905-1907г.г.в России"**, Документы и материалы.**"Второй период революции"**, часть первая, январь-апрель 1906 года, книга первая, Изд. АН СССР, Москва, 1957, *էջ VII:*

հազարավոր գանահարվածներ մտրակով, սիբիրյան աքսորավայրեր ձգվող «քաղաքական հանցագործների» շարաններ - ահա Նիկոլայ II-ի պատժիչ արշավախմբերի արյունալի հետքը:

1906թ. ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐՅԱՆ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»

Ռեակցիայի անողոք հարվածները հասնում էին նաև Կովկաս: Հունվարին Թիֆլիսը պաշարման մեջ էր: 1905թ. դեկտեմբերին Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի գավառի գեներալ-նահանգապետ նշանակված[1] Ալիխանով-Ավարսկու հրամանով այստեղ ձերբակալվեցին սոցիալիստական և այլևայլ հեղափոխական կազմակերպությունների 200-ից ավելի անդամներ, փակվեց քաղաքում լույս տեսնող թերթերի մեծ մասը: Երևան-Բաքու երկաթգծի հսկողությունը հանձնվեց թուրքերին: Վրաստանի գավառներում զորքը դատաստան էր տեսնում ապստամբ գյուղացիների հետ:

Ս.-դ. բանվորական հայ կազմակերպության օրգան «Գործ» շաբաթաթերթը գրում էր. «Ամեն անգամ, երբ Ռուսաստանում նորից և ավելի ու ավելի ուժգին թափով բռնկվում է հեղափոխական կրակը և Անդրկովկասը տալիս է իր սովորական արձագանքը, կառավարությունը պիտի իսկույն դիմե մոմենտի համապատասխան քաղաքականության: Նա նորից և կրկնակի ու եռյակ եռանդով պիտի լարե ինչպես հրեական պոգրոմներ, այնպես էլ հայ - թուրքական ջարդ ու կոտորած առաջ բերելու մեխանիզմը[2]»:

Բայց հեղափոխությունն ընդհանուր առմամբ նահանջ էր ապրում: Ակնհայտ էր, որ հակացարական պայքարն այլևս չի բարձրանալու այն մակարդակին, որին նա հասել էր 1905թ. դեկտեմբերին:

Համոզված, որ դժվարագույնը մնացել է հետևում, ինքնակալությունը մի պահ չունչ առավ և թուլացրեց թուրք-հայկական ընդհարումների զսպանակը:

. 1906թ. սկզբին հայ-թուրքական ընդհարումների թուլացման գլխավոր պատճառը, սակայն, ուրիշ էր. թուրքերն արդեն համոզվել էին, որ այլևս չեն կարող անպատիժ կոտորած ու թալան սանձազերծել: Գլխավոր պատճառը հրացանավոր հայ մարդն էր, որը բարձրացրել էր խավար ուժերի նետած ձեռնոցը:

1906-ի հունվարին Նոր Նախիջևանում տեղի ունեցած հայկական մի բազմամարդ ժողովում ընդունված որոշման մեջ մասնավորապես ասված էր.

«1. Հայտնել մեր հիացմունքն ու համակրանքը կովկասյան հայ ազգաբնակչությանը՝ վերջին հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հակա-

[1] *Տե՛ս* **"Кавказский календарь на 1906 год"**, *էջ 259:*

[2] **«Գործ»**, *N 11, 27 մայիսի 1906թ.:*

հեղափոխական տարրերի դեմ ցույց տված անսահման տոկունության և անձնվեր ու քաջարի վարած կռիվների համար, 2. Հայտնել խորին հարգանք Հ.Ց.Դ. դաշնակցության և բոլոր այն քաջամարտիկ զինվորներին, որոնք հերոսաբար իրենց կուրծքը դեմ դրին թշնամուն և արյան գնով պաշտպանեցին հայ ժողովուրդը»[1]:

Ինչևէ, կովկասյան իշխանությունները 1906թ. հունվար-փետրվարը մկրտեցին որպես «խաղաղ ամիսներ»:

Բայց այդ «խաղաղության» պայմաններում էլ մեկ այստեղ, մեկ այնտեղ կործանվում էին մարդկային կյանքեր:

Անցած, 1905-ի ամռանը հացահատիկի բերքը Ղարաբաղում շատ ցածր էր եղել. հավաքված հացահատիկը բնակչությանը կարող էր բավարարել ընդամենը 4-5 ամիս: Սովը խոստանում էր մեծ ավերներ գործել: Միակ ճանապարհը, որով կարելի էր դրսից հացահատիկ բերել, Աղդամ-Եվլախ գիծն էր, որ հայերի համար փակել էին թուրքական ուժերը[2]: Բայց Շուշիի մուսուլման բնակչությունը նույնպես նույն ճանապարհով էր ստանում հաց ու պարեն: Կազակները կամ ստրաժնիկները որևէ խոչընդոտ չէին հարուցում Շուշիի իրենց ցեղակիցներին պաշար հասցնող թուրքերին:

Այդպիսի անբնական դրությունը հայերին ստիպեց համանման քայլերի դիմել. եթե Եվլախը փակ է հայերի համար, ապա Շուշին էլ պետք է փակվի թուրքերի առջև – այս էր հունվարի 3-ին Շուշիի հայերի ընդունած որոշումը: Նույն օրը հայերի կողմից փակվեց Ասկերանի անցքով անցնող Աղդամից Շուշի եկող ճանապարհը[3]:

Հայերը, այդպիսով, պատասխան ուժգին հարված հասցրին հակառակորդին: Անգամ 150 կազակների օգնությամբ թուրքերը չկարողացան անցնել Ասկերանով:

Կազակ զորքը կանգնած մնաց Ասկերանի անցքում: Զորամասի հրամանատար Ֆոն-Ազարովսկին կոչով դիմեց շրջակայքի հայ բնակիչներին՝ սպառնալով ռմբակոծել Աղդամ-Շուշի ճանապարհի վրա ընկած բոլոր հայկական գյուղերը: Միաժամանակ նա հայերին սպառնում էր, թե կոչին չարձագանքելու դեպքում իր զորամասը Ասկերանի շրջանից դուրս կբերի, որին անխուսափելիորեն կհաջորդի Աղդամի թուրքության զանգվածային հարձակումը[4]:

Խոսքին հաջորդեց գործը, և հունվարի 4-ի առավոտյան Ֆոն Ազարովսկին զորքը հանեց Ասկերանից: Այլևս կասկած չկար, որ թուրք հրոսակներն անցնելու են վճռական հարձակման:

---

[1] «Դրոշակ», N 2 (168), փետրվար, 1906, էջ 32:
[2] «Արշալույս», N 16, 24 հունվարի 1906թ.:
[3] Տե՛ս Արամայիս (Միակ Տեր-Դանիելյան), Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն առաջին, I Ասկերան, II Վարանդա-Խաչեն, էջ 55:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 34:

Հունվարի 6-ի լուսադեմին Շելլու թուրքաբնակ գյուղից սկսած մինչև Բաղվանլար գյուղի գլուխ, այսինքն՝ 12 վերստ տարածության վրա, ձիավոր և հետևակ զինված թուրքերը, թվով առնվազն 6 հազար հոգի, անցան հարձակման: Նրանք իրենց հետ բերել էին անթիվ սայլեր ու փուրգոններ՝ ակնկալելով հեշտ ու առատ թալանից հետո դրանց մեջ բարձել ավարը: Թուրք անգիտակից մասսան աղալարների, խաների ու բեկերի թելադրանքով գնում էր հարստանալու:

Բայց տեղի ունեցավ սպասածից միանգամայն ուրիշ բան. Ասկերանի անցքի պաշտպաններն ընդհարումից դուրս եկան փայլուն հաղթանակով: Թալանի փոխարեն թուրքերն ստիպված էին իրենց սայլերն ու փուրգոնները բարձել դիակներով:

Նույն օրը՝ հունվարի 6-ին, մի քանի հազար թուրք և քուրդ ձիավորներ արշավելով Պարսկաստանից՝ հարձակվեցին Խրամորդ, Վարազաբուն, Նախիջևանիկ, Փիրջամալ հայկական գյուղերի վրա: Կռիվը տևեց 7 ժամ: Ռուսական զորքը կրկին անգործության էր մատնված: Թուրքերը հետ մղվեցին՝ իրենց հետ տանելով մեծ թվով դիակներ: Հայերի կողմից սպանվել էր 12 հոգի, կային նաև վիրավորներ:

Իրենց հերթին հայերը հարձակման անցան Կարաբիրին գյուղի վրա, որտեղ թշնամին տվեց 150 սպանված: Հայերի կորուստներն էին 9 զոհ և 6 վիրավոր[1]:

Միաժամանակ հայերը քարուքանդ արեցին Զարդախլուի մոտի Սոգյութլու գյուղը:

Գանձակի նահանգի պատժիչ արշավախմբերի հրամանատար գեներալ Գոլոշչապովը Թիֆլիսից ստացել էր հրաման՝ կարգը վերականգնելու համար «չխնայել ո՛չ հայերին, ո՛չ թուրքերին»: Գանձակից գալով Շուշի՝ նա ձեռնարկեց Ղարաբաղի հնազանդեցումը:

Հունվարի 19-ին գեներալը հեռագրում է Թիֆլիս, փոխարքային և նրան տեղյակ է պահում իր ձեռնարկած գործողությունների մասին: «Հունվար 17-ին հետևակ զորքով և թնդանոթներով ես դուրս եկա Շուշի քաղաքից, շարժվեցի դեպի Խանքենդի, ռմբակոծեցի Ղայբալիշենը և Կիրջմալին, որոնց բնակիչները կրակել էին կազակների վրա: Վերադառնալով Շուշի՝ երկրորդ անգամ ռմբակոծեցի Շոշ գյուղը ...»[2]:

Ռուս կազակները ձերբակալում էին հայերին, ռմբակոծում հայկական գյուղերը, մինչդեռ Աղդամը, Սեյիդլուն, Մուրադբեկլուն, Ջեբրայիլը, Աղջաբադին և մյուս ավազակորդները մնում էին անպատիժ:

Ցարիզմը հավատարիմ էր իրեն: Նույնիսկ այն բանից հետո, երբ 1906թ. սկզբին, խախտելով ռուսական սահմանը, թուրքերն ու քրդերը խուժել էին

---

[1] «Դրոշակ», N 1 (167), հունվար, 1906, էջ 4:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 2, գ. 82, թ. 8:

Երևանի նահանգի Սուրմալուի շրջան, իշխանությունները հրաժարվեցին զինել այդ կողմի հայերին, որպեսզի զորքի հետ պաշտպանեն սահմանը: Նրանց պարզապես չէին վստահում: Դրա փոխարեն սահմանը հսկելու համար 1906թ. փետրվարին կառավարությունը մտադիր էր կազմել համիդիեի պես գնդեր: Այդ գործը հանձնվեց հայտնի ավազակապետ, քուրդ ցեղապետ Աշրաֆ բեկին, որը հանձն էր առել ստեղծել 2000 հոգուց բաղկացած գունդ: Աշրաֆ բեկն այն Հյուսնի բեկի եղբայրն էր, որ 1877թ. ռուս-թուրքական պատերազմի ամենաթեժ պահին դավաճանել էր Տեր-Ղուկասովին և իր քրդական գնդով անցել թուրքերի կողմը: Սուլթանի կողմից փաշայի տիտղոսով վարձատրվելուց հետո Հյուսնի բեկը մեծ չարագործություններ էր կատարել Ալաշկերտի հայերի նկատմամբ: Այսպիսով, սահմանի այն կողմում հայակեր ավազ եղբայրն էր, այս կողմում կրտսեր եղբայրը:

Սակայն Երևանի նահանգում ընդհանուր առմամբ թուրքերը զսպված էին և չէին համարձակվում հայերի հետ խոսել զենքով:

1905-ի դեկտեմբերին Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքերից հետո հայերն այնտեղ անառարկելիորեն տիրական էին մնում: Նիկոլ Դումանը Երևան քաղաքի և նահանգի հայության ոչ թե ֆորմալ, այլ իրական ղեկավարն էր: Հայերը նրան էին վստահում և միայն նրան ենթարկվում: Եվ դա անում էին ցուցադրաբար: Մեծ հայդուկապետի, որպես Արարատյան աշխարհի պաշտպանության ղեկավարի, խոսքը օրենք էր դարձել նաև քաղաքի ու նահանգի ամենաբարձր ռուս պաշտոնյաներից շատերի համար:

1906թ. հունվարին Նիկոլ Դումանը տեղեկացավ, որ ռուսական կառավարությունը զենք է հատկացրել Ախտայի շրջանի ռուս մոլոկաններին՝ Երևան քաղաքի թուրքերին փոխանցելու համար: Երբ հայտնի դարձավ ռուս կազակների միջոցով Ախտայից Երևան զենքի տեղափոխման օրը, Դումանն անմիջապես ձեռնարկեց այն բռնագրավելու գործողությունը:

Պատասխանատու խնդրի կատարումը ընդհանուր հրամանատարը հանձնարարեց «Բորեաս»* խմբի աչքառու և քաջարի անդամներին, միաժամանակ

* Երևանի ռուսական գիմնազիայում սովորող աշակերտներ Դրաստամատ Կանայանի (Դրո), Սեդրակ Ջալալյանի, Տիգրան Դևոյանի նախաձեռնությամբ 1903թ. ստեղծվում է 10 հոգուց բաղկացած մի զինված խումբ,որի մեջ էին Սմբատ ու Խոսրով Եղիազարյանները, Խոսրով Տեր-Սահակյանը և ուրիշներ (տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. 1, էջ 400-401): «Ասոնք էին, - գրել է Վ. Փափազյանը , - որ հայ-թաթարական կռիվներու ատեն, իբր թուրքիկ խումբ, մեկ-մեկ հերոս դարձան իրենց յանդգնութեամբ և քաջագործություններով» (նույն տեղում, էջ 400): Հ.Յ.Դ.Մրգաստանի կ.կոմիտեի որոշմամբ խումբը ընդունվում է դաշնակցության մեջ, որպես նրա մարտական խմբերից մեկը՝ «Բորեաս» անվան տակ (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, N 7(91), մայիս, 1930, էջ 155, N 10(368), հոկտեմբեր, 1956, էջ 19-20, Կ. Գեորգեան, Ամէնուն տարեգիրքը, Ա տարի, 1954թ., էջ 102): Խումբն իրեն նմանեցրել էր Ալագյազից փչող «բորյազ» քամուն, որ գալիս է անսպասելի և ճանապարհին գործում ավերածություններ (տե՛ս «Հայրենիք», N 4, փետրվար, 1934, էջ 65):

խստիվ հրահանգեց՝ եթե գործողությունն իրականացնելիս հրացանաձգության հարկ լինի, աշխատել չսպանել ռուս պահակներից ոչ մեկին, իսկ եթե անխուսափելի դառնա մեկին կամ երկուսին խփելը, վարպետորեն կորցնել հետքը:

Ստանալով հրահանգը՝ «Բորեաս» խմբի կտրիճ տղաներից 7-8 հոգի անմիջապես անցնում են խնդրի կատարմանը՝ կտրելով Սուխոյ Ֆոնտանից Քամիջապես անցնում են խնդրի կատարմանը՝ կտրելով Սուխոյ Ֆոնտանից Քանաքեռ եկող ճանապարհը: Երբ ցերեկվա ժամը 12-ին մոտենում են զենքով բեռնված ձիաքարշ սահնակները, բորեասականները հանկարծակի հարձակվում են, շրջապատում և զինաթափում ռուս պահակներին: Գործողությունը կատարվում է ակնթարթային արագությամբ, առանց մի կրակոցի: Բարձրանալով 60 հրացանով և փամփուշտով բեռնված սահնակների վրա՝ տղաներն ավարը բերում հասցնում են Քանաքեռ[1]:

Առաջադրանքը պատվով կատարած քաջերը ներկայանում են Դումանին, որը գովում է նրանց գործերը և կարգադրում ամեն մեկին տալ մի մսոին՝ փամփուշտներով: Ապա բոլորին լծում է ինքնապաշտպանության գործին, որպես թուրքիկ խումբ[2]:

Երևանի նահանգապետ Ցացկևիչը կարգադրում է, որ հայերը վերադարձնեն խլած զենքերը, այլապես սպառնում է թնդանոթներով քարուքանդ անել քաղաքի հայկական թաղերը: Նահանգապետի պատվերով հայ վաճառականները և քաղաքի երևելիները միջնորդում են, որ Դումանը հետ տա զենքերը: Հրամանատարը պատասխանում է, որ ինքը ոչնչից տեղյակ չէ, չգիտի, թե ինչ ավազակախումբ է խլել զենքը, և ընդհանրապես քաղաքից դուրս կատարվող ավազակային հարձակումների համար քաղաքի հայերը որևէ պատասխանատվություն կրել չեն կարող: Վերադառնալով նահանգապետի մոտ՝ միջնորդները հաղորդում են Դումանի խոսքերը: Ցացկևիչին այլ բան չի մնում անելու, քան հաշտվել կատարվածի հետ: Հ.Յ. դաշնակցությունը մարսում է գրավվածը[3]:

Երևանի նահանգի հայ զինյալները առաջվա նման օգնության էին գնում մյուս նահանգների հայ բնակչությանը:

Նիկոլ Դումանի կարգադրությամբ 1906թ. հունվար-փետրվարին Զանգեզուր մեկնեցին մի քանի նոր խմբեր: Դրանցից մեկը Բաշգառնեցի Մարտիրոսի գլխավորած խումբն էր[4]: Բաշ-Գառնիի երիտասարդներից կազմված այդ խումբը, որը բազմաթիվ համարձակ գործողություններ էր կատարել Կոտայքում, Երևան քաղաքում և գավառում[5], հիմա գնում էր միանալու Զանգեզուրի

[1] «Հայրենիք», N 7(91), մայիս, 1930, էջ 156:
[2] Նույն տեղում, N 10(368), հոկտեմբեր, 1956, էջ 20:
[3] Նույն տեղում, N 7 (91), մայիս, 1930, էջ 156:
[4] Նույն տեղում, N 3 (385), մարտ, 1958, էջ 27:
[5] Կ. Սասունի, Ցուշեր և վկայություններ, Պեյրութ, 1972թ., էջ 245:

պաշտպաններին: Հասնելով Սիսիան՝ Մարտիրոսն իր խմբով անցնում է Դրոյի ենթակայության տակ:

Սիսիանի թուրքերը, որոնք 1905-ի դեկտեմբերին տեղի ունեցած կռիվներում կրել էին մեծաթիվ կորուստներ, հայ մարտական խմբերի արշավանքներից ընկած, մի պահ տրամադիր էին հաշտություն խնդրել, բայց, խրախուսված իշխանություններից, նորից դիմում են հարձակումների[1]: Ուստի Դրոյի ուժերը, այդ թվում Սիսիան եկած Մարտիրոսի խումբը, ստիպված էին իրականացնել մի շարք համարձակ գործողություններ և նորից զսպել թշնամու ախորժակը:

Մանր վիճակ էր ստեղծվել Գողթանում, ուստի Դումանը Դրոյին կարգադրում է անցնել այնտեղ՝ հետն առնելով նաև Մարտիրոսի խումբը[2]:

1905թ. դեկտեմբերին և 1906-ի հունվար-փետրվարին Զանգեզուրում թուրքերի կրած նոր պարտություններն անհանգստություն էին առաջացրել նահանգային իշխանությունների մոտ: Դուրս գալով շրջագայության՝ Գանձակի նահանգապետ Ալֆտանը փետրվարի վերջին ժամանում է գավառային կենտրոն՝ Գորիս: Գավառի բոլոր շրջաններից պատվիրակություններ են գալիս նահանգապետի մոտ և գրավոր բողոքներ ներկայացնում զորքի ու ոստիկանության անօրինական գործողությունների դեմ: Ալֆտանը հյուրասիրվում է բժ. Միքայել (Միշա) Պարոնյանի տանը, ուր հրավիրվել էին նաև հայ, թուրք և ռուս գավառային պաշտոնյաներ: Հյուրերի ներկայությամբ բժիշկը խոսք է բացում թուրք-հայ ընդհարումների մասին, շեշտելով, որ երկու ժողովուրդները դարեր շարունակ ապրել են հարևանությամբ և նրանց միջև երբեք չի եղել այնպիսի թշնամություն, ինչպիսին առաջացել է վերջին մեկ տարում: Նահանգապետը, արձագանքելով, նշում է, որ ինքն այդ մասին գիտի և ցավ է հայտնում գնալով խորացող թշնամանքի առթիվ: Բժ. Պարոնյանը, առանց վարանելու, շարունակում է իր միտքը՝ ասելով. «Մեղքը կառավարությանն է. եթե նա Բաքվում օրը ցերեկով թույլ չտար, որ հայերն ու թուրքերը իրար հոշոտեն, ապա զուր տեղն այնքան անմեղ մարդկանց արյուն չէր թափվի, և ժողովուրդն այդքան նյութական վնասներ չէր կրի: Ես զինվորական չեմ, բայց տվե՛ք ինձ 150 կազակ, և ես ամենակարճ ժամանակում կվերականգնեմ կարգն ու կանոնը Զանգեզուր-Ղարաբաղում: Եթե կառավարությունը վճռական միջոցներ ձեռք առներ, անմիջապես կդադարեին ընդհարումները»[3]:

Թեև հեղափոխությունն ուժգին հարված էր ստացել, բայց շարունակում էր մեծագույն սպառնալիք մնալ ցարիզմի համար: Ուստի վերջինս, ժողովրդի դեմ կատարելով նորանոր բռնություններ, միաժամանակ փորձում էր ցույց

[1] «Դրոշակ», N 1 (167), հունվար, 1906, էջ 4:
[2] «Հայրենիք», N 3 (385), մարտ, 1958, էջ 27:
[3] Եղիշե Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, «Հայաստան» հրատ., Երևան, 1999, էջ 494:

տալ, թե ինքը շարունակում է հավատարիմ մնալ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ոգուն և նույնիսկ երկրին տված ազատությունների երաշխավորն է:

«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» – այսպես կարելի է բնորոշել 1906թ. առաջին երեք ամիսները, որի ընթացքում հայ և թուրք կազմակերպությունները փորձում էին իրենց ազգային շահերին առավելագույնս ծառայեցնել այդ տարօրինակ վիճակը:

1906թ. հունվարին Պետերբուրգում տեղի ունեցավ մուսուլմանների համառուսական համագումարը, որի նպատակն էր մշակել Ռուսաստանի մուսուլման բնակչության քաղաքական գործունեության ծրագիրը: Համագումարին պատվիրակներ էին եկել Վերին Կովկասից, Անդրկովկասից, Ղրիմից, Կազանից, Աստրախանից, Սիբիրից, կայսրության ուրիշ վայրերից:

Կառավարությունը չթույլատրեց համագումարին տալ պաշտոնական բնույթ, ուստի այն կայացավ ոչ պաշտոնապես: Ներքին գործերի մինիստր Դուրնովոն հայտնեց, թե ոչ ինքն անձամբ և ոչ էլ ռուսաց կառավարությունը ոչինչ չունեն մուսուլմանների դեմ, և եթե համագումարը պաշտոնական բնույթ չի ստանում, ապա դրա միակ պատճառն այն է, որ պաշտոնական թույլտվությունը կարող է նախադեպ ստեղծել հրեաների, լեհերի և հայերի համար, որոնք նույնպես կպահանջեն համագումարներ հրավիրելու թույլտվություն: Միաժամանակ մինիստրը մուսուլման ներկայացուցիչներին չհապաղեց հայտարարել, թե ռուսաց կառավարությունը մուսուլմաններին համարում է կայսրության ամենալոյալ բնակչությունը, ռուս ժողովրդի ամենաանկեղծ բարեկամը:

Համագումարը հիմնականում ընդունեց սահմանադրական-դեմոկրատական (կադետական) կուսակցության ծրագիրը, որոշեց առայժմ հարել այդ կուսակցության կենտրոնին, բայց մոտ ամիսներին ստեղծել «Մուսուլման պրոգրեսիստների» հոծ ու զորեղ կուսակցություն: Այդ կուսակցության գլխավոր նպատակներից պետք է լիներ՝ ժողովրդին տնտեսական և քաղաքական բարիքներ պարգևելը, Պետական դումայի ընտրություններին ակտիվ մասնակցությունը, հեղափոխության դեմ վճռական պայքար մղելը:

Համագումարը նաև անդրադարձավ հայ-թուրքական ընդհարումներին՝ դրանց մեջ մեղադրելով միայն հայերին: Կովկասյան թուրքերի ներկայացուցիչը կրկնում էր արդեն ծամծմված փաստարկներ, որ, իբր, ա) հայերը Անդրկովկասում տեր են դարձել երկրամասի տնտեսությանը և թուրքերին զրկել ապրուստի միջոցներից, բ) հայերը ամեն կերպ խոչընդոտում են թուրքերի արթնացմանը և քաղաքակրթական զարգացմանը:

Չնայած հեղափոխության սկսված նահանջին, նշված ամիսներին նկատելիորեն աճեց մամուլի օրգանների թիվը Անդրկովկասում:

Թե որքան թույլ էր պարբերական մամուլի զարգացումը Ռուսաստանում, և թե այդ բանում կայսրությունը ուրիշ երկրներից որքան էր հետ մնացել, պարզ կարելի է տեսնել հետևյալ վիճակագրական թվերից: Մեկ պարբերական

հրատարակություն ընկնում էր՝ Շվեյցարիայում 3 000 բնակչի, Գերմանիայում 4 700, Ֆրանսիայում 6 300, Անգլիայում 7 800, Ավստրիայում 10000, Իտալիայում 12 000, Ռուսաստանում 100 000 բնակչի[1]: Կովկասի բնակչությունը մամուլից օգտվում էր ավելի համեստ չափերով:

Խիստ սահմանափակ թվով ընթեցողներ ուներ վրացական մամուլը*: Զափազանց տխուր էր թուրք մամուլի վիճակը**: Մատների վրա էին հաշվվում ռուսալեզու պարբերականները***: Կովկասում մեծ չէր նաև հայկական մամուլի օրգանների թիվը: Հայերը 1905-ին Թիֆլիսում ունեին ամենօրյա «Մշակ» (լույս էր տեսնում 1872 թվականից), «Նոր-Դար» (1884-ից) լրագրերը, «Մուրճ» (1889-ից) ամսագիրը, «Աղբյուր» (1883-ից) մանկական հանդեսը և նրա պատկերազարդ հավելված «Տարազը» (1890-ից) և ուրիշ պարբերականներ: 1886-ից Էջմիածնում հրատարակվում էր միակ կրոնական ամսագիրը՝ կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը»:

Թե՛ Կովկասի և թե՛ Թուրքիայի ու արտասահմանի հայկական մամուլի օրգանների թվում առանձնանում էր «Մշակը»: Այդ թերթը մի ահագին աշխարհ էր, որի էջերում ծնվում, հասունանում էին, նաև՝ խորտակվում մտքեր, հաստատվում ու մերժվում գաղափարներ: «Մշակը» մի հայելի էր, որում արտացոլվում էր հայոց բովանդակ կյանքը՝ իր բոլոր վատ ու լավ կողմերով ու դրսևորումներով: Անցյալի երկար տարածության վրա թերթն այն փարոսն էր, որի շուրջ միշտ խմորվում էր հասարակական կարծիքը:

[1] Տե՛ս «Մշակ», N 244, 7 նոյեմբերի 1906թ.:

* Վրացիներն իրենց լեզվով Կովկասում ունեին չորս թերթ և երկու ամսագիր: Երկուսը՝ «Իվերիան» և «Ցնորիս փուրցելին», Թիֆլիսում լույս տեսնող ամենօրյա լրագրեր էին, այստեղ էին հրատարակվում նաև «Մոամբե» ամսագիրը և «Ջեջիլի» մանկական հանդեսը՝ իր շաբաթական պատկերազարդ «Կվալի» հավելվածով: Դրանցից բացի, վրացերեն լույս էր տեսնում երկու շաբաթաթերթ՝ մեկը Կվիրիլիում տպագրվող «Մցղեմսին» էր, մյուսը՝ Քութայիսում տպագրվող գյուղատնտեսական պարբերականը:

** Կովկասյան թուրքերի առաջին տպագիր պարբերականը 1902-ին Թիֆլիսում թուրքերեն լույս տեսած «Քեչկյուլ» անունով շաբաթաթերթն էր, որը, սակայն, երկար կյանք չունեցավ: Միայն 1905-ին Թիֆլիսում սկսեց հրատարակվել թուրքերեն «Շարքի ռուս» երկօրյա լրագիրը՝ հավանաբար կառավարության գումարներով և գլխավորապես քաղաքական նպատակներով: Թուրք մամուլի թուրքերեն երկրորդ օրգանը «Մոլլա-Նասրեդդին» զավեշտաթերթն էր, որը նույնպես լույս էր տեսնում Թիֆլիսում: Կովկասի մուսուլմանների մոտ դա միակ ազատամիտ պարբերականն էր, որը ծաղրի էր ենթարկում թուրք և հայ գործիչներին, որոնք հակում չէին դրսևորում քովքովի գալու, դաղարեցնելու ընդհարումները, բարեկամական ձեռք մեկնելու միմյանց:

*** 1905-ին Թիֆլիսում կար երեք ամենօրյա ռուսերեն լրագիր. "Кавказ" կառավարական օրգանը (լույս էր տեսնում 1847-ից), հայերին պատկանող "Новое Обозрение"(1883-ից) և "Тифлисский Листок" թերթերը: Բաքվում լույս էր տեսնում Թաղիևին պատկանող "Каспий" պանիսլամական ուղղության թերթը ու հայերին պատկանող "Баку" և "Бакинские Известия" թերթերը: Բաթումում հրատարակվում էր նաև անորոշ ուղղության "Черноморский Вестник" թերթը:

Թվերը ցույց են տալիս, որ հասարակական այնպիսի մեծ ուժից, ինչպիսին մամուլն է, կովկասահայությունը նույնպես սահմանափակ չափով էր օգտվում, եթե հաշվի առնենք, որ անհամեմատ բարձր էր նրա կրթական մակարդակը, մեծ սեր ուներ ընթերցանության և, հատկապես այն, որ հայ մամուլն ուներ հարուստ ավանդույթներ:

Սակայն 1906թ. առաջին կեսին վիճակն արմատապես փոխվեց: Եթե թուրքերին պատկանող երեք թերթերին այդ ընթացքում չավելացան նորերը, իսկ մամուլի վրացական օրգաններն ավելացան երկու-երեքով, ապա հայկական մամուլը հարստացավ բազմաթիվ պարբերականներով:

1905թ. վերջին և 1906-ի սկզբներին հայ լրագրական ընտանիքը համալրվեց «Աշխատանք», «Ցոյս», «Դիտակ» շաբաթաթերթերով՝ բոլորը Թիֆլիսում: 1906թ. մարտից, դարձյալ Թիֆլիսում, հրապարակ եկավ սոց.-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության «Կեանք» թերթը:

Հենց առաջին համարից թերթը պարզում էր իր ուղղությունը, դավանանքը, աշխարհայացքը և ծրագրի ամբողջությունը: «Կեանքը» հանդես էր գալիս իբրև մարքսիստական-սոցիալիստական-դեմոկրատական օրգան: Առաջին համարում խմբագրությունը հայտարարում էր, որ իր փայփայանքի առարկան լինելու է ոչ թե ընդհանուր հայությունն իր բոլոր խայտաբղետ շերտերով, այլ հայ բանվոր դասակարգը, հայ պրոլետարիատը, որը, «Կեանքի» խոսքերով ասած, ունի իր դասակարգային առանձնահատուկ շահերը և քաղաքական-կուսակցական տարբեր ձգտումներ՝ իբրև մի ինքնատիպ դասակարգ և քաղաքական ուրույն մեծություն[1]:

1906թ. ապրիլի 1-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր հայերեն թերթ՝ բոլշևիկյան «Կայծը»*:

1906թ. ապրիլի 20-ին թույլտվություն ստացվեց Թիֆլիսում տպագրելու «Հայ մուզա» գրական, բանաստեղծական-գեղարվեստական պատկերազարդ շաբաթաթերթը, ապրիլի 27-ից դարձյալ Թիֆլիսում սկսեց հրատարակվել դաշնակցության «Ալիք» հայերեն նոր, ամենօրյա թերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր բժ. Տիգրան Թադևոսյանը: Հունիսից Բաքվում հայերեն և թուրքերեն սկսեց լույս տեսնել «Կոչ-Դեվեթ» շաբաթաթերթը**:

Խաբուսիկ խաղաղությունը հայերի մի մասի մեջ հույսեր էր արթնացրել, թե իշխանությունները, հենց իրենց շահերից ելնելով, ցուցաբերելու են լայնախոհություն, հրաժարվելու են կոշտ միջոցներից և համաձայնության են գալու հեղափոխականների հետ: Հայ պահպանողականները և ազատականները

[1] «Կեանք», N1, 18 մարտի 1906թ.: Սույն թերթի մասին դեռ խոսք կլինի իր տեղում:

* Բոլշևիկյան թերթերի մասին ավելի հանգամանորեն կանդրադառնանք աշխատության 11-րդ գլխում:

** Հատկանշական է, որ դաշնակցական «Ալիքը» ջերմորեն ողջունեց «Կոչ-Դեվեթ» բոլշևիկյան հայ-թուրքական միացյալ թերթի հրապարակ գալը (տե՛ս «Ալիք», N 27, 30 մայիսի 1906թ.):

մատնացույց էին անում իշխանությունների կողմից բռնություններից հրաժարվելու մի քանի նախանշաններ, որոնցից մեկը, օրինակ, այն էին համարում, որ 1906թ. մարտի սկզբներին Երևանի նահանգային դատարանը, քննելով 1904թ. հուլիսի 12-ին Իգդիրի մոտ, ռուս-թուրքական սահմանի վրա, ռուս սահմանապահ զորքի և կազակների հետ ընդհարված ու ձերբակալված 29 հայ հայդուկների գործը՝ նրանց բոլորին անմեղ էր ճանաչել և ազատել որևէ պատժից:

Մուտենում էր թուրք-հայկական ընդհարումների տարելիցը: Ռուսաստանի և կովկասյան մամուլի օրգանները բազմաթիվ հոդվածներ ու նյութեր էին հրապարակում անցած մեկ տարում հայ և թուրք ժողովուրդների կրած տանջանքների ու սարսափների մասին: Հեղափոխական կուսակցությունները, նաև լիբերալ ուղղության որոշ կազմակերպություններ, առաջվա նման պահանջում էին կառավարությանը, երկու ժողովուրդներին կոչ էին անում խնդիրները լուծել համատեղ, առանց միջնորդների:

1906թ. փետրվարի 6-ին, թուրք-հայկական ընդհարումների տարելիցին, սոցիալիստ-հեղափոխականների (էսէռ) կուսակցության Բաքվի կոմիտեն հանդես եկավ հայերին և թուրքերին ուղղված կոչով՝ երկու ժողովուրդներին կարդալով հաշտության հրավեր: «Թող այսօրվա օրն անցնի՝ պարուրված ծանր ու մութ հիշողությունների սուգով, թող այսօր ձեր սրտերում ապրի՛ վիշտը՝ աղբյուրը զզվանքի և վրեժխնդրության դեպի մեր տառապանքների սկզբնապատճառները՝ դահիճներն ու ցարի կառավարությունը: Մենք կոչ ենք անում ձեզ՝ դեպի խաղաղություն՝ հանուն ընկած անմեղ զոհերի, հանուն կենդանի մեռածների երջանկության»[1]:

Գարունը շուտով գալու էր: Պետք էր չտկել արորը, նորոգել գութանը, հոգ տանել լծկանների մասին: Պետք էր վար անել: Իսկ դա նշանակում էր հրացանը փոխարինել բահով, վառոդը՝ արորով: Բայց ինչպե՞ս վար ու ցանք անել, երբ ինքը՝ հայ շինականը, թողած դաշտ, արոտ, ոչխար՝ հրացանը ուսած պաշտպանում էր իրեն և իր ընտանիքը:

Գարունը գալիս էր, պետք էր վար ու ցանք անել, հակառակ դեպքում սովը՝ թշնամիներից ամենասոսկալին, իր դաժան գործը կտեսներ:

ԹՈՒՐՔ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԻ ՆՈՐ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԸ

1905թ. դեկտեմբերյան ապստամբության պարտությունը նոր ոգի էր ներշնչել կովկասյան թուրքերի պարագլուխներին, որոնք այդ պարտությունը նաև ընկալում էին որպես «թագավորին թշնամի հայության պարտություն»:

Հայերի հետ դեմ առ դեմ կռվում ամենուրեք զիջելով՝ թուրքերը փորձեցին

[1] «Դրոշակ», N 3 (169), մարտ, 1906, էջ 40:

իրենց համար առավելագույն արդյունավետությամբ օգտագործել ստեղծված նոր բարենպաստ պայմանները և 1906թ. հունվար-փետրվարյան խաբուսիկ խաղաղության ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ դիմեցին նորանոր սադրանքների: Նրանք մի կողմից փորձում էին, որքան կարելի է, հայերի դեմ ուղղել արդեն ուժեր հավաքող ինքնակալության զայրույթն ու վրեժխնդրությունը, մյուս կողմից՝ վերակենդանացնել թուրք-հայկական կռիվները որպես կրոնական պատերազմ ներկայացնելու նախորդ ամիսներին արդեն ձախողված ճիգերը՝ նպատակ ունենալով ամենուրեք հայերի հանդեպ առաջ բերել ռուսաստանյան մուսուլմանների թշնամությունը:

Սադրիչները չէին հոգնում ռուսական իշխանություններին համոզելու, թե հայերը Ռուսաստանի երդվյալ թշնամիներն են, իսկ կովկասյան թուրքերը՝ Անդրկովկասում կայունության երաշխավորները, կայսրության ամենահուսալի և ամենահավատարիմ պաշտպանները: Բնականաբար այն «հետևությունն» էր արվում, թե քանի որ հայերը գործում են Ռուսաստանի դեմ, ուստի թուրքերը, «զայրացած» հայերի բռնած այդ դիրքից, կամավոր ստանձնել են երկրամասում վարվող ռուսական քաղաքականության պաշտպանի դերը:

Մամեդ աղա Շահթախտինսկին "Кавказ" թերթում լույս ընծայած հոդվածում գրում էր. «Եթե մեզանում, անդրկովկասյան մահմեդականների մեջ, գաղտնի դիտավորություն լիներ ոչնչացնելու ռուսական տիրապետությունը Կովկասում, ապա մենք պետք է որոնած լինեինք դաշինք հայերի հետ այն ժամանակ, երբ նրանք արդեն ուզ էին դրել հեղափոխական ճանապարհին, և ոչ թե կռվեինք նրանց դեմ»[1]:

Շահթախտինսկին, Աղաևը և թուրքերի մյուս պարագլուխները այդ օրերին նորից կենդանություն տվեցին հայատյաց ռուս սևհարյուրակայինների այն զրպարտությանը, թե հայերը ձգտում են ստեղծել մի թագավորություն, որն իր մեջ է առնելու ոչ միայն ամբողջ Անդրկովկասը, այլև Հյուսիսային Կովկասը և ռուսական այն բոլոր հողերը, որ տարածվում են մինչև Դոնի Ռոստով՝ ներառյալ քաղաքը:

Պետերբուրգյան բյուրոկրատիայի բարեհաճ աջակցությամբ մինչև Ռոստով ու անդին հայկական թագավորություն ստեղծելու առասպելը կրկին զրոսնելու գնաց Ռուսաստանով մեկ...

"Новое Время" թերթը 1906թ. հունվարի սկզբին նորից լայնորեն բացել էր իր սյունակները ռուս շովինիստ «հայրենասերների» բանսարկությունների և զրպարտությունների առջև: Նորից «Ռուսաստանի հավատարիմ զավակները» սկսեցին աղմկել, թե հայրենիքի բոլոր դժբախտությունների պատճառն անիծյալ ջհուդները, հայերը, լեհերը և ֆիններն են: Դրանց թվում թերթն առանձնացնում էր հատկապես հայությանը՝ նրան ներկայացնելով որպես ուրիշ ազգերին շահագործելու և կեղեքելու բնածին հակումներ և անհագուրդ

[1] "Кавказ", N 5, 1906г.

ձգտում ունեցող առևտրական ժողովուրդ:

Ի պատասխան "Новое Время"-ի բազմիցս կրկնած այդ զրպարտությանը՝ "Русь" թերթը տպագրել էր Ի. Վերմիշյանի՝ պատասխան հոդվածը, ուր հեղինակը վիճակագրական տվյալներով ցույց էր տալիս առաջադրված մեղադրանքի անհիմն լինելը: Նա նշում էր, որ կայսրության մեջ բնակվող հայերի 70%-ը զբաղվում են երկրագործությամբ, հետևապես անմտություն է ողջ հայությանն անվանել առևտրական ժողովուրդ[1]:

Իր հերթին Ալ. Խատիսյանը Շահթախտինսկու վերը հիշատակված հոդվածի առթիվ "Новое Обозрение" թերթում թուրք գործչին մեղադրում էր զրպարտության մեջ: Իրականությունն այն է, գրում էր նա, որ հայ ժողովրդի որևէ հատվածի կամ խավի կողմից երբեք չի ծրագրվել, չի պաշտպանվել Կովկասում ռուսական տիրապետության թուլացմանը կամ խախտմանն ուղղված որևէ գործողություն: Խատիսյանը շեշտում էր, որ մինչև Ռոստով և նրանից էլ այն կողմ հայկական թագավորություն ստեղծելու առաստղը հնարվել է հայության ամենաեղկելի թշնամիների կողմից և իրականության հետ որևէ աղերս չունի[2]:

Նույն օրերին Կովկասի փոխարքայության դիվանատուն ներկայացրած մի փաստաթղթում Թիֆլիսի հայոց առաջնորդարանը հիշեցնում էր, որ Ռուսահայաստանում հաշվվում է ընդամենը 1 400 000 հայ, որոնք բնակվում են Երևանի և Գանձակի նահանգներում, Ղարսի մարզում, մասամբ էլ Թիֆլիսի և Բաքվի նահանգներում: Բաքվի նահանգի բնակչության թիվը հասնում է 1 միլիոնի, որից 100 000-ը հայեր են: Գանձակի նահանգում նույնպես բնակչության թիվը 1 միլիոն է, որից 300 000-ը հայեր են: Թիֆլիսի նահանգի 1 միլիոն բնակչության մեջ հայերի թիվը 250 հազար է: Միայն Երևանի նահանգում են հայերը մեծամասնություն կազմում, ուր 1 միլիոն բնակչության ընդհանուր թվում նրանք 600 000 են: Մի՞թե նման ցրվածության և փոքրաթիվ լինելու պայմաններում որևէ լրջախոհ հայ մարդ կարող է մտածել այնպիսի թագավորություն ստեղծելու մասին, որն իր մեջ ներառեր ոչ միայն ողջ Կովկասը, այլև բուն ռուսական հողերը:

Առաջնորդարանը նշում էր, որ թուրք ազգաբնակչության ծովում հայերի ցիրուցան տեղադրումը գլխավոր պատճառն է, որ նրանք դարեր շարունակ աշխատել են մոտենալ Ռուսաստանին, որը Վրաստանի հետ եղել և մնում է Հայաստանի ամենամոտիկ հարևան քրիստոնեական երկիրը: Ռուսաստանն է եղել հայերին ստրկացնողների թշնամին, հետևապես՝ Հայաստանի բնական դաշնակիցը: Եվ այդ դերում նա կշարունակեր մնալ, եթե գոյություն

* Հայտնի հասարակական գործիչ, հրապարակագիր ու խմբագիր Քրիստափոր Վերմիշյանի եղբայրը:

[1] **"Русь"**, N 2, 2 февраля 1906г.

[2] **"Новое Обозрение"**, 22 января 1906г.

չունենար կառավարող շրջանների՝ դեպի հայերը բռնած անբացատրելի դիրքը, դեպի հայերը նրանց անվստահ և թերահավատ վերաբերմունքը[1]:

Ռուս «հայրենասերները» և Բաքվի թուրք պրոպագանդիստները հայերին մեղադրում էին սեպարատիզմի մեջ, բայց իրականում ինչպես կովկասյան, այնպես էլ ամբողջ Ռուսաստանի ազգերի մեջ հայերը միակն էին, որ վճռապես և ամենայն տոկունությամբ հանդես էին գալիս սեպարատիզմի դեմ: Ցավոք, ռուսների մեծ մասը սովոր էր հայերի մասին դատել այն մարդկանց կցկտուր տեղեկություններով, որոնք չափազանց հեռու էին հայ կյանքից, անծանոթ՝ հայոց խոհերին ու մտածումներին: Այդպիսիք այնքան ծույլ էին ու անգործունյա, որ իրենց նեղություն չէին տալիս տեղեկանալու իրերի իրական դրությանը, այլապես կարող էին հեշտությամբ համոզվել, որ հայերը սեպարատիստներ չեն:

Հայկական մամուլը հիշեցնում էր, որ դեռևս 1905թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցած հայկական բոլոր գավառների ներկայացուցիչների համագումարն առաջարկել էր կովկասյան փոխարքայի դիվանատանը կից ստեղծել կովկասյան բոլոր ազգությունների ներկայացուցիչներից կազմված օրինախորհրդակցական մարմին, իսկ հայերի համար իշխանություններից խնդրել էր միայն մեկ բան՝ վերադարձնել եկեղեցական կալվածքները և վերաբացել ծխական դպրոցները, որ իշխանությունները խլել էին առանց ռուս ժողովրդի և պետության շահերը գիտակցելու: Այդ ամենով հանդերձ, համագումարն ի լուր ամենքի հայտարարել էր, որ հայերը եղել և մնում են Ռուսաստանի հավատարիմ հպատակները, վճռականապես մերժել և հետայսու նույնպես մերժելու են անջատողականության ամենափոքր իսկ դրսևորումները:

Հայկական համագումարից հետո տեղի ունեցած Մոսկվայի զեմստվոյականների համաժողովում հանդես եկած հայերը նույնպես հայտարարել էին, որ հետևողականորեն պաշտպան են կանգնած կայսրության միասնությանը: Նրանք, ինչպես ողջ Ռուսաստանը, պահանջում էին միայն պետական դումա և ընդհանուր բարենորոգումներ:

Մտնելով վարչակարգի աչքը՝ թուրքերը նաև ասում էին, թե իրենք հայերին կոտորում են, որովհետև նրանք ծնունդ են տվել հեղափոխական կուսակցությունների, որոնց նպատակն է քանդել երկիրը: Բայց ի՞նչ կապ կար երկիրը քանդելու և հեղափոխականների գործունեության միջև: Առավել ևս՝ ի՞նչ կապ կարող է լինել հայերի կոտորածների կազմակերպիչների և հեղափոխականների միջև: Հեղափոխականներ կային նաև ռուսների և վրացիների մոտ, բայց մի՞թե նրանց պատճառով թուրքերը պետք է կոտորեին ռուսներին և վրացիներին: Իսկ մի՞թե բացառված էր, որ թուրքերի միջավայրում նույնպես հանդես գային նման կազմակերպություններ:

[1] ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 113, ց. 3, գ. 94, թ. 2:

Հայերին կոտորել այն պատրվակով, թե նրանց մոտ գոյություն ունեն հեղափոխականներ, միևնույն ժամանակ բարեկամ լինել ուրիշ ազգերի հետ, որոնց մեջ նույնպես կային ոչ պակաս, եթե ոչ ավելի թվով հեղափոխականներ, այսպիսի մոտեցմամբ անհնար էր ուրիշներին համոզել, թե Թուրքերն անկեղծորեն շահագրգռված են ռուսական ռեժիմը հեղափոխականներից պաշտպանելու խնդրով:

Ի՞նչ կապ կարող էր ունենալ հեղափոխականներին հալածելը այն բանի հետ, որ Թուրքերը Բաղամլուի, Մինքենդի, Բաղայի և ուրիշ գյուղերի հայերին զենքի ուժով ստիպել են ընդունել մահմեդականություն: Մի՞թե վերջիններիս հավատափոխ անելը թուլացնում էր հայ հեղափոխական կուսակցություններին: Իհարկե՝ ոչ: Ընդհակառակը՝ նպաստում էր հեղափոխական տրամադրությունների խորացմանը հայերի մեջ:

Ո՛չ դաշնակցությունը, ո՛չ հնչակը, ո՛չ հայ պահպանողականներն ու լիբերալները, չխոսելով արդեն հայ բոլշևիկների մասին, երբեք հարց չեն դրել, թե Կովկասը պետք է անջատել Ռուսաստանից: Եղել է հակառակը՝ նրանք բոլորը միշտ նպաստել են Կովկասում ռուսական տիրապետության ամրապնդմանը:

"Новое Обозрение" թերթում տպագրված Ալ. Խատիսյանի հոդվածին հաջորդեց նրան ուղղված Շահթախտինսկու պատասխանը: Թուրք պարագլուխը գրում էր, թե հայերի մասին արտահայտած իր կարծիքներն այնպիսի բացարձակ ճշմարտություններ են, որոնք վաղուց ակնհայտ են բոլորի համար, և որ ինքը միայն կրկնել է ուրիշ ազգերի ներկայացուցիչների ասածը: «Զրպարտիչ է նա,- նշում էր Շահթախտինսկին, - ով հնարում է չեղած բանը, իսկ ես արտահայտել եմ ամենալավատեղյակ և ամենահեղինակավոր մարմնի՝ ռուս կառավարության կարծիքը»:

Իբրև հաստատումն իր ասածների, Շահթախտինսկին իր հոդվածում վկայակոչում էր իշխան Գոլիցինի, Սուվորինի, Պետերբուրգի մի քանի քաղաքագետների և ուրիշ հայատյացների կարծիքները:

Այսպիսով, կոտորած սկսելով և դրա պատճառներից մեկը հայտարարելով այն, թե հայերը «անջատողականներ» են և ցանկանում են իրենց թագավորն ունենալ, Թուրք ղեկավարներն արտահայտում էին ոչ միայն իրենց, այլև ռուսական կառավարող շրջանների ամենահետադեմ գործիչների կարծիքը:

Ինչպես ասվեց, Թուրք պարագլուխների հակահայ սադրանքների մյուս մասը հասցեագրված էր Ռուսաստանի մուսուլմաններին:

Բաքվի Թուրք պրոպագանդիստները ծավալուն գործունեություն էին սկսել Հյուսիսային Կովկասի տարածքներում և հատկապես Դաղստանում: Քարոզիչներն ամեն կերպ աշխատում էին թշնամություն սերմանել հատկապես այնտեղ ապրող երկու ազգությունների՝ հայերի և լեզգիների միջև: Իրենց նպատակին հասնելու համար նրանք ցրում էին պրոկլամացիաներ, որոնցով բոլոր լեռնականներին կոչ էին անում միանալ Անդրկովկասի մահմեդականներին և համատեղ պայքարել հայերի դեմ բացատրելով, թե բոլոր մահմեդա-

կաններն արյունակից եղբայրներ են, թե սյունիների և չիաների միջև չկա ոչ մի խտրություն, և որ մեկի թշնամին նաև մյուսի թշնամին է, հետևապես հայը ոչ միայն Բաքվի կամ Ելիզավետպոլի, այլև բոլոր մահմեդականների թշնամին է:

Հակառակ Թուրք պրոպագանդիստների բոլոր ջանքերին, լեռնականները ոչ միայն որևէ նշանակություն չտվեցին նրանց սադրանքներին, այլև հայտարարում էին, թե իրենք հայերի հետ որևէ խնդիր չունեն և, ինչպես միշտ, այսուհետև նույնպես նրանց հետ շարունակելու են ապրել հաշտ ու խաղաղ[1]:

Բաքվի Թուրք պրոպագանդիստները հայտնվել էին նաև Ղրիմում և փորձում էին թաթարներին գրգռել տեղի հայերի դեմ:

Ղրիմի թաթարները, սակայն, ավելի անտարբեր գտնվեցին սադրիչների հակահայ քարոզների նկատմամբ, քան նույնիսկ Հյուսիսային Կովկասի ոչ Թուրք և Թուրք բնակիչները:

Ի տարբերություն Անդրկովկասի Թուրքերի՝ Ղրիմի թաթարները լայնորեն ընդգրկվել էին Ռուսաստանի հեղափոխական-ազատագրական շարժման մեջ, պայքարում էին սոցիալական և քաղաքական իրավունքներ ձեռք բերելու համար, պահանջում էին, որպեսզի վակուֆները և պետական հողերը տրվեն հողազուրկ գյուղացիներին, թաթար նորակոչիկ զինվորները չուղարկվեն օտար վայրեր, շատ տեղերում, նույնիսկ քաղաքներում, կազմակերպել էին միլիցիայի կամավոր խմբեր (օրինակ՝ Թեոդոսիայում)՝ խուլիգանների և սևհարյուրակայինների առաջն առնելու համար, պաշտպանում էին բնակիչների անձն ու գույքը և այլն :

Ղրիմի թաթարների մեջ արթնացել էր քաղաքակրթության ոգին, և թեև նրանք Ղուրանի հավատարիմ հավատացյալներ էին, բայց չէին ուզում կույր գործիք դառնալ Բաքվի «եղբայրների» ձեռքին:

Այսպիսով, թեև մի ամբողջ տարի Անդրկովկասում շարունակվում էին կոտորածները, վառվել էին անթիվ խարույկներ, ավերվել էին հարյուրավոր գյուղեր, անարգվել էին մարդկանց պատիվը, դավանանքը, ազգային սրբությունները, բայց չարիքի քուրմերը, դասեր չառնելով այդ բոլորից, շարունակում էին խորացնել երկու ժողովուրդների միջև բացված վիհը:

ՀԱՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թուրք-հայկական ընդհարումների սկզբից ի վեր, Բաքվի 1905թ. փետրվարյան կոտորածներից սկսած, Հ.Յ. դաշնակցության պաշտոնական տեսակետն այն էր, որ ընդհարումների ժամանակ պետք է կիրառել ինքնապաշտպանական տակտիկա և նախահարձակ չլինել: Եվ ամբողջ 8-9 ամիս, մինչև

[1] «Արշալույս» (Թիֆլիս), N 13, 20 հունվարի 1906թ.:

1905թ. աշնան վերջերը, հայ զինյալ խմբերն, առանձին բացառություններով, հետևում էին այդ ընդհանուր ղեկավար ցուցումին:

Բայց գնալով աստիճանաբար բեկում առաջ եկավ հայ ինքնապաշտպանության ղեկավարների մտքերում որպես հետևանք Թուրք-հայկական ընդհարումներում հայկական գործոնի դերի ուժեղացման: Հայ մարտիկներն ու բնակչությունը արդեն կռիվներից միշտ դուրս էին գալիս հաղթական: Դա բացատրվում էր ոչ միայն նրանով, որ հայերի ձեռքը նույնպես մեծ թվով զենք էր անցել, այլև նրանով, որ նրանց բարոյահոգեբանական վիճակը և մարտական ոգին անհամեմատ բարձր էին:

Նոր իրավիճակը թելադրում էր փոխել կռվի տակտիկան և առաջնությունը տալ նախահարձակմանը: Հայերի կողմից հարձակողական գործողություններ սկսեցին կիրառվել 1905թ. նոյեմբեր - 1906թ. փետրվար ամիսներին, իսկ 1906-ի գարնան սկզբից նախահարձակումը դարձավ նրանց կռվի գլխավոր մարտավարությունը:

Հայկական ուժերի հրամանատարության և շարքային հայ մարտիկների մտքերում կատարված այդ արմատական փոփոխության առավել ակնհայտ արտահայտությունը 1906թ. փետրվարին մեծ քաղաքում (Թիֆլիսում) տեղի ունեցած հայ զինվորական ղեկավար գործիչների խորհրդակցությունն էր, որն ընդունեց կռվի տակտիկան փոխելու կարևորագույն որոշումներ:

Խորհրդակցությունը նախատեսված էր անցկացնել դեռևս 1905-ի աշնանը, այսինքն՝ նախքան նույն թվի նոյեմբերին կայանալիք Հ.Յ. դաշնակցության կովկասյան ռայոնական ժողովը: Ենթադրվում էր, որ զինվորական խորհրդակցության ընթացքում կարող են լինել այնպիսի առաջարկներ, որոնք հարկ կլիներ ներկայացնել ռայոնական ժողովին:

Զինվորական խորհրդակցությանն այն ժամանակ պետք է մասնակցեին չորս կարևոր շրջանների զինվորական ղեկավար գործիչները՝ Նիկոլ Դումանը Երևանի շրջանից, Վարդան Մնհրաբյանը Շուշիից, Արմեն Գարոն Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի կողմից և Թիֆլիսի շրջանից, Աբրահամ Գյուլխանդանյանը՝ Գանձակի և Բաքվի կողմից: Բայց խորհրդակցությունը տեղի չունեցավ նշված զինվորական գործիչների զբաղվածության պատճառով. նրանցից ոչ մեկը չէր ուզում նույնիսկ կարճ ժամանակով թողնել իրեն հանձնած շրջանի պաշտպանության գործը և մեկնել Թիֆլիս, որտեղ նախատեսված էր նրանց հավաքը: Նպատակահարմար գտնվեց խորհրդակցությունը հետաձգել և անցկացնել ձմռանը, երբ, ինչպես ենթադրվում էր, կռիվների լարվածությունը զգալիորեն ցած կլիներ:

Եվ ահա Թիֆլիսում հավաքվել էին՝ վերը նշված զինվորական ղեկավար չորս գործիչներից երեքը՝ Դումանը, Արմեն Գարոն և Գյուլխանդանյանը:

* Թե 1906թ. փետրվարի որ օրերին է տեղի ունեցել զինվորական խորհրդակցությունը, նշված չէ գրականության մեջ և արխիվային փաստաթղթերում:

Վարդանը չէր կարողացել Թիֆլիս գալ:

Խորհրդակցության մասնակիցները, որոնք հավաքվել էին վերագնահատելու մինչ այդ ունեցած զինվորական գործելակերպը, քննարկեցին հետևյալ հրատապ խնդիրները. 1. Ինչպիսին պետք է լինի հայերի կռվի տակտիկան Թուրք-հայկական ընդհարումների ընթացքում, 2. Ինչպես կանոնավորել ռազմամթերքի բաշխումը կռվող շրջաններին, 3. Ինչպիսին պետք է լինի տեղացիների մասնակցությունը ինքնապաշտպանության գործին:

Խորհրդակցությունում շոշափվեցին նաև մի քանի ուրիշ, ոչ այսրոպեական հարցեր՝ հայերի նկատմամբ կառավարության քաղաքականությունը և իշխանությունների կողմից գործադրվող միջոցներին հակադրվելու եղանակները. կովկասյան Թուրքերի զինումը խոչընդոտելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը. հետամնացության հետևանքով Թուրքերի գործած զարհուրելի գազանությունների մերկացումը. անպատիժ մնալու ջարդարարների վստահության բեկումը. հաշտության փորձերի դեպքում Թուրքերի նենգավոր քաղաքականության պսակազերծումը:

Տակտիկական հարցերը քննելուց հետո խորհրդակցության երեք մասնակիցներ հանգեցին հետևյալ եզրակացության.

Մեկ տարի տևող կռիվներն ամբողջապես քայքայել են Անդրկովկասի հայկական և Թուրքական գավառների տնտեսությունը, կաթվածահար արել արտադրողական ուժերը: Չնայած դրան, չնայած հայերի կողմից արված խաղաղասիրական առաջարկներին և թափած ջանքերին, Թուրքերն այսօր էլ տրամադիր չեն վայր դնելու զենքերը: Ուստի ոչ ոք չգիտի, թե երբ են վերջանալու կռիվները, քանի որ նրանք դեռ չեն գիտակցում, թե ինչպիսի անպատվաբեր դեր են ստանձնել՝ դառնալով ցարական պաշտոնյաների ձեռքի գործիքը: Եվ որքան Թուրքերը շարունակեն այդպիսին մնալ, որքան ցարական իշխանությունները շարունակեն զաղտնի ու բացահայտ քաջալերել նրանց՝ կռիվների դադարեցման մասին խոսք լինել չի կարող: Խորհրդակցության մասնակիցները խորապես համոզված էին, որ այն վայրերում, ուր Թուրքերն իրենց զգում են ուժեղ, այսուհետև նույնպես պիտի հարձակվեն հայերի վրա, մանավանդ որ կովկասյան Թուրքերի որոշ շերտեր իրական շահ ունեն այդ կռիվներում ոմանք ծարավի են թալանի, մյուսների՝ հատկապես համիսլամական հովերով տարվածների համար, այդ կռիվները միջոց են գործողության մեջ ստուգելու իրենց գաղափարները:

Զարիքների առաջն առնելու և կռիվներին վերջ տալու նպատակով խորհրդակցության մասնակիցները միակ միջոցը համարեցին Թուրքերի սանձահարումը, որպեսզի նրանք երկյուղ ունենան և այլևս չհամարձակվեն հարձակումներ կատարելու հայերի վրա: Պետք է հասնել այն բանին, որ նրանք ամեն անգամ, նախքան հարձակման անցնելը, լավ մտածեն և հաշվի առնեն հայ ժողովրդի դիմադրական ուժը: Այս դեպքում միայն Թուրքերը ստիպված կլինեն հայերի հետ ապրել խաղաղորեն:

Այդ հնարավորությունն իրականություն դարձնելու համար, զինվորական վարիչների համոզմամբ, պետք է արմատապես փոխվեր գործողության մեջ գտնվող կռվի եղանակը: Պաշտպանողական տակտիկան թշնամուն հնարավորություն էր տալիս հանդես գալ իբրև թելադրող և հարձակվել լավ պատրաստություն տեսնելուց հետո: Բացի այդ, հայերի կողմից պաշտպանական տակտիկայի որդեգրումը թուրքերին բերել էր այն հաստատ համոզման, որ հայերը երբեք չեն համարձակվի նախահարձակ լինել, հետևապես՝ թուրքերը միշտ իրենց ձեռքում են պահելու կռվի նախաձեռնությունը: Դա նրանց միշտ հնարավորություն էր տալիս իրենց ուժերն այնպես դասավորել և այնպես շարժման մեջ դնել, որ մի վայրում հայերին պարտության մատնելուց հետո անցնեն մյուս շրջանները:

«Մենք գիտակցում էինք, - գրել է խորհրդակցության երեք մասնակիցներից Աբրահամ Գյուլխանդանյանը, - որ այլևս ժամանակն է, որ հայերը կարեվորություն չտան այն հարցին, թե **իրենք հանգիստ և բոլորովին խաղաղ [ժողովուրդ] են, և թաթարներն են, որ միշտ հարձակվում են հայերի վրա,** - ինչպես դա արվում էր ամեն անգամ, երբ հայերը ուզում էին իրենց դատը պաշտպանած լինել կառավարության առջև կամ մամուլում: Մենք այլևս կարիք չէինք զգում դիմելու այդպիսի արդարացումների: Ո՞ւմ առաջ պիտի արդարանայինք. այն ստոր պաշտոնեությա՞ն, որն ինքն էր կազմակերպում այդ կռիվները: Այդ բոլորը մեզ ստիպում էր փոխել մեր կռվի տաքտիկը և, խլելով թաթարների ձեռքից նախաձեռնության իրավունքը, պետք եղած ժամանակը **ոչ միայն պաշտպանվել, այլև հարձակում գործել թաթարների վրա:** Մենք միաձայնությամբ որոշեցինք **պաշտպանողական տաքտիկայից անցնել հարձակողականի**»[1]:

Որոշվեց նախահարձակ լինելով վերացնել բոլոր մեծ ու փոքր ավազակային կենտրոնները, թուրքական ու քրդական այն գյուղերը, որոնք խանգարում էին Գանձակից Շուշի, Շուշիից Գորիս և Նոր Բայազետից Գորիս հաղորդակցությանը:

Բայց որպեսզի այդ որոշումը չդառնար մի վրեժխնդրական գործողություն, որոշվեց ձեռք չտալ այն շրջանների թուրքերին, որոնք քիչ կամ թույլ լինելու պատճառով փորձ չէին արել հարձակվելու հայերի վրա: Բացի այդ, որոշվեց հնարավոր բոլոր միջոցներով հակառակորդին բացատրել, թե որպիսի աղետաբեր հետևանքներ ունեն կռիվները ոչ միայն երկու կողմերի, այլև Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար:

Այսպիսով, դաժան իրականությունը հայերին բերել էր այն եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռականապես հրաժարվել Հ.Յ.Դ. բարձր մարմինների, այդ թվում բյուրոյի և կովկասյան ռայոնական ժողովների՝ պաշտպանական կռիվների մասին կողմնորոշող հանձնարարականներից ու ղեկավար հրահանգներից և որդեգրել պայքարի միանգամայն նոր՝ հարձակողական եղանակը:

[1] **«Նյութեր..»**, հատ. Բ, էջ 251:

Պայքարի նոր տակտիկայի որդեգրման արդյունք էր նաև այն, որ զինվորական խորհրդակցության մասնակիցները որոշեցին վճռականորեն արգելել թուրք քոչվորների՝ հայկական սարեր բարձրանալը:

Կռվի տակտիկայի փոփոխման հետ սերտորեն կապված էր զինվորական ուժերի ճիշտ դասավորման ու տեղաբաշխման հարցը: Ուստի որոշում ընդունվեց Բաքվում, Թիֆլիսում և Բաթումում եղած մարտական ուժերի մի մասը ուղարկել գավառներ, հատկապես այն վայրերը, որտեղ գերակշռում էր թուրք բնակչությունը:

Օրակարգի երկրորդ հարցը, ինչպես ասվեց, զինական խնդիրն էր:

Խորհրդակցության մասնակիցները համակարծիք էին, որ ընդհանրապես, տեսականորեն, զենքը չարիք է մարդկության համար, բայց՝ անխուսափելի չարիք: Հանգամանքներն այնպես են դասավորվել, որ հայ ժողովուրդը ստիպված դիմել է այդ չարիքի օգնությանը, հարկադրվել է թե՛ զենք ձեռք բերել և թե՛ ռազմիկներ պատրաստել: Հայերը թերևս ամենավերջիններից էին, որ սկսեցին գործ ունենալ զենք կոչված չարիքի հետ:

Ամբողջ լուսավոր մարդկությունը բողոքում էր զենքի դեմ, բայց միաժամանակ ստիպված էր հաշտվել դրա գոյության հետ, որովհետև զենքն ու զորքը գործնականում անխուսափելի անհրաժեշտություն են, ժողովուրդների ապահովության գրավական:

Նիկոլ Դումանը խորհրդակցությունում ասում էր. «Մեզ ևս վիճակվեց մտածել զենք ու զինվորություն ունենալու մասին, և ներկայումս մենք ունենք թե՛ մեկը և թե՛ մյուսը: Իրականությունը դա է»:

Հիրավի, զենք ձեռք բերելու համար բավական աշխատանք էր տարվել, տարվել էր հատկապես Հ.Յ.Դ. կենտրոնական զինական մարմնի կողմից: Խորհրդակցությունում նշվեց, որ հայկական այն բնակավայրերում, որտեղով անցնում է երկաթուղի, հաջողվել է զգալի քանակությամբ զենք ձեռք բերել, իսկ հեռավոր, խուլ շրջաններում զենք ձեռք բերելը կապված է հսկայական դժվարությունների հետ: Մասնավորապես այդպիսին էր դրությունը Զանգեզուրի շրջանում, որը բոլոր կողմերից շրջապատված էր թուրք հոծ բնակչության օղակով:

Որոշվեց՝ 1. Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի երկաթուղիները առաջվա պես շարունակել օգտագործել զենք տեղափոխելու համար, 2. Բաքվի գծով ստացված ռազմամթերքն ամբողջովին հատկացնել Գանձակի նահանգին և հասցնել Գանձակ կայարան, 3. Թիֆլիսի և Բաթումի գծերով ստացված ռազմամթերքի 3/4-ը ուղարկել Երևանի նահանգ, իսկ մնացած 1/4-ի մի մասը հասցնել Ղազախ, մյուս մասը՝ Գանձակ: Այստեղ կենտրոնացված զենքն ու ռազմամթերքը բաժանվելու էին այսպես. Գանձակի շրջանն իր մոտ պահելու էր ստացած զենքերի և ռազմամթերքի միայն 1/3-ը, մնացած 2/3-ը ուղարկելու էր Շուշի, որն, իր հերթին, պետք է բոլոր միջոցները ձեռնարկեր ստացած ռազմա-

մթերքի որոշ մասը հասցնելու Զանգեզուր[1]:

Քանի որ հնարավորություն կար գանազան մասնավոր գինագործարաններին պատվիրել և օրինական ճանապարհով ստանալ որսորդական հրացաններ ու փամփուշտներ, և քանի որ Գանձակի փորձն արդեն ցույց էր տվել, որ այդ որսորդական հրացանների փամփուշտները կարելի է հարմարեցնել բերդան հրացաններին, որոշվեց պատվիրել որսորդական հրացանների երկու միլիոն դատարկ պարկուճներ և դրանք հարմարեցնել բերդան հրացաններին: Այդ բանն արվում էր Գանձակի գաղտնի արհեստանոցում: Որոշվեց նման արհեստանոցներ ունենալ ուրիշ տեղերում ևս[2]:

Անցնելով օրակարգի վերջին՝ ինքնապաշտպանության գործին տեղացիների մասնակցության հարցին՝ զինվորական խորհրդակցությունը, ելնելով այն բանից, որ զենք ձեռք բերելու համար դրամահավաքության ամբողջ ծանրությունն ընկած է Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի, Թիֆլիսի և մանավանդ Բաքվի հայության վրա, որի հետևանքով այս շրջանների հայերն արդեն սկսել են տրտնջալ ու բողոքել և նախկինի պես ակտիվորեն չեն աջակցում ինքնապաշտպանության գործին, որոշեց, որ գավառների հայ բնակչությունը բացառապես ինքը պետք է միջոցներ հատկացնի՝ զենք ու ռազմամթերք ձեռք բերելու և իր տեղական մարտիկներին զինելու համար:

Խորհրդակցության ընթացքում հայ զինվորական ղեկավար գործիչները, օրակարգային հարցերից դուրս, քանիցս, այս կամ այն առիթով, բարձրացնում էին դաշնակ-հնչակ հակամարտության ցավոտ հարցը:

Նրանք փաստում էին, որ Թուրք-հայկական ընդհարումներն սկսվելուց ի վեր Անդրկովկասի որոշ վայրերում ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը և վարումը դաշնակցականները և հնչակյանները իրականացրել են համատեղ: Դա հատկապես ցայտուն դրսևորվել էր 1905թ. աշնանը Թիֆլիսում:

Դրական համարելով նման դրսևորումները, խորհրդակցության մասնակիցները միաժամանակ նշում էին, որ դրանք հազվադեպ իրողություններ են, որոնք, սակայն, չեն փոխում երկու կուսակցությունների աննորմալ հարաբերությունների ընդհանուր պատկերը:

ԵՂԲԱՑՐԱՍՊԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Հայ ազգային-հեղափոխական երկու կուսակցությունների միջև 19-րդ դարի 90-ական թվականների կեսերից սկիզբ առած թշնամությունը տևեց տասնամյակներ: Այդ հողի վրա տեղի էին ունենում կատաղի բախումներ, բազում զոհերով եղբայրասպան կռիվներ, կատարվում էին դավադիր սպանություններ, որոնք խոչընդոտում էին ազատագրական պայքարի կազմակերպմանը Արևմտահայաստանում և հայ աշխատավորությանը համառուսաստանյան հեղափոխական շարժման մեջ ներգրավելուն:

Ցավոք, փաստերը, ամոթալի փաստերը շատ էին՝ նույնիսկ Թուրք-հայկական ընդհարումների արյունալի օրերին:

1905թ. հուլիսի 28-ին Ալեքսանդրապոլում սպանվել էր հնչակյան Հակոբ Աբրահամյանը, բայց մեղավորը այդպես էլ չէր հայտնաբերվել[1]: Չէին բացահայտվել դաշնակցական Գևորգ Ալեքսանյանի սպանությունը իրականացնողը և կազմակերպիչները Բաթումում[2]: 1906թ. առաջին ամիսներին դաշնակցականները Կարսում սպանել էին 2 հնչակյան, Կաղզվանում 1, Ալեքսանդրապոլում 3, Վաղարշապատում 1, Թավրիզում 1 և Սարիղամիշում մի քանի հոգու[3]:

Դաշնակ-հնչակ բախումները սովորական բան էին Սյունիքի բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Խնձորեսկ գյուղում:

Գավառի բնակավայրերը գտնվում էին դաշնակցության ազդեցության տակ, բացի Խնձորեսկ գյուղից, ուր գործում էր Սյունիք-Ղարաբաղի ամենախոշոր հնչակյան կազմակերպությունը, որն ուներ ավելի քան 200 անդամ: Դաշնակցականների թիվը գյուղում չէր անցնում չորս տասնյակից: Խնձորեսկի հնչակյանները առիթը բաց չէին թողնում ընդգծելու իրենց ինքնուրույնությունը և ուժը: Դրա հետևանքով Հ.Յ.Դ. Սյունիքի կ. կոմիտեն չէր կարողանում որևէ միջոցառում անցկացնել գյուղում, ինչը պարարտ հող էր ստեղծում առճակատումների համար:

1906թ. հունվարի 25-ին Հ.Յ.Դ. Սյունիքի կոմիտեի ժամանակավոր քննիչ Մելիքը, գնալով Խնձորեսկ և գյուղացիներին հավաքելով տեղի երևելիներից Ցուզբաշյանցի տան ընդարձակ բակում, հայտարարում է, որ մինչև փետրվարի 15-ը գյուղը պարտավոր է 3000 ռուբլի մուծել զենքի ֆոնդի համար: Խնձորեսկցիները հրաժարվում են, ասելով, որ գյուղն ունի ավելի քան 1000 տուն, բայց ընդամենը 100 տուն հաց ունի, իսկ մյուս ընտանիքները չվարած են, թե ինչպես են դիմանալու մինչև գարու հունձը[4]: Պատճառաբանում են նաև, որ գյուղի հասարակությունը, բացի 30 տնից, հնչակյան է, ուստի դաշնակցության կոմիտեի պահանջը իրենց համար պարտադիր չէ: Չնայած սպառնալիքներին, գյուղացիները մնում են անդրդվելի[5]:

Վերադառնալով Գորիս՝ քննիչը 8 գյուղերի դաշնակցական զինվորներից 300 ձիավոր է հավաքում Ալղուլի հայաբնակ գյուղում, որտեղից հարձակում է սկսվում Խնձորեսկի վրա[6]: Նախապես տեղեկացված հնչակյան երիտասարդ-

---

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 253:
[2] Նույն տեղում:

[1] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ. 88, թ.1:
[2] Նույն տեղում, թ.2:
[3] Տե՛ս «Կայծ», N 38, 16 հուլիսի 1906թ.:
[4] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.թ. 74-75:
[5] Նույն տեղում, թ. 76:
[6] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ. 37, թ.4:

ները, զենք առնելով, պատրաստվում են կռվի: Տեղի է ունենում ընդհարում, որի պատճառով սպանվում է մեկ դաշնակ զինվոր, վիրավորվում են մի քանի հնչակյաններ և դաշնակցականներ[1]:

Բոլշևիկյան «Բանվորի ձայն» թերթը դեպքի առթիվ գրում էր, որ, ամոթալի ախտերը զոհեր խլելով, «թունավորում են հայ քաղաքական կյանքը» և խաթարում ժողովրդի վարկը[2]:

Մի քանի ամիս անց Խնձորեսկում տեղի ունեցավ նոր ողբերգություն:

1906թ. հունիսին Բաքվի հնչակյան կոմիտեն զինել և Զանգեզուր էր ուղարկել քաղաքում աշխատող մի քանի խնձորեսկցի երիտասարդի, որոնց առջև խնդիր էր դրվել գյուղը պաշտպանել հարևան թուրք ավազակախմբերի հարձակումներից: Երբ հասնում են Խնձորեսկ, Հ.Յ.Դ. Սյունիքի կ.կոմիտեն նրանց կարգադրում է ենթարկվել գավառի դաշնակցական զինվորական մարմնին, որին հետևում է կտրուկ մերժումը: Դաշնակցականները հարձակվում են հնչակյան զինվորների վրա՝ սպանում նրանցից 4 հոգու՝ Գրիգորին, Արտոյին, Սմբատին և Սայադին, գյուղացիներից ծանր վիրավորում Պետրոսին, Սարգսին և Արշակին, թեթև վերքեր պատճառում ուրիշ 10 հոգու[3]:

Հուլիսի 10-ին հնչակի Բաքվի կոմիտեն, իր զինվորների սպանության կապակցությամբ, հանդես եկավ հայտարարությամբ, որով դատապարտում էր ոճիրը, միաժամանակ Խնձորեսկի հնչակյան երիտասարդությանը կոչ էր անում չդիմել վրեժխնդրական գործողությունների և արյունը արյունով չսրբել[4]:

Բայց Խնձորեսկում չունկնդրեցին Բաքվից եկած կոչին: Հնչակյան կուսակցության Կովկասի գործադիր մարմնի հրահանգով հնչակյանները սպանեցին և վիրավորեցին համագյուղացի մի քանի դաշնակցականների[5]:

«Վրդովեցուցիչ փաստեր» խորագրով առաջնորդող հոդվածում «Կայծ» թերթը Խնձորեսկում տեղի ունեցած արյունալի դրաման բնորոշում էր մեկ բառով՝ տմարդի[6]:

Եղբայրասպան կռիվները չեղում էին հայ աշխատավորության ուշադրությունը օրվա կենսական խնդիրներից: Գրիգոր Վարդանյանն իր «Եղբայրասպան ոճիրները» վերնագրով հոդվածում գրում էր. «Այն միջոցին, երբ Ռուսաստանի ժողովուրդները լարված ուշադրությամբ դեպի հյուսիս, դեպի Ռուսիո կենտրոնն են սևեռել իրենց հայացքը, ուր կատարվում է մի չտեսնված, մի չլսված ողբերգություն, և որի այս կամ այն կերպ լուծումից է կախված միլիոնավոր ժողովրդի ճակատագիրը, այդ ահավոր, այդ սպառնալից օրերում, Զանգեզուրի հայ չարատանջ գյուղացու աչքերի առաջ եղբայրը եղբորն է սպանում»[1]:

Նույն օրերին դաշնակցական և հնչակյան կազմակերպությունները իրար հետ չափվել էին Ապարանում: Հնչակյաններն այստեղ սպանել էին երկու դաշնակցական զինվոր: Իբրև պատասխան դաշնակցականները պաշարել էին Տամջլուն և մի քանի ուրիշ գյուղեր: Եղվարդի շրջանում տեղի ունեցած կատաղի հրացանաձգությունից ծանր վերքեր էին ստացել մի քանի հոգի[2]:

Հնչակյանների և դաշնակցականների գնդակները զոհեր էին խլում Պարսկաստանում, Թուրքիայում, Ամերիկայում և այլուր:

Արտահայտելով իր ցասումն այդ արարքների դեմ «Կայծի» թղթակիցը գրում էր. «ՀՀ «սոցիալիստ» դաշնակցությունը հնչակյան «սոցիալ-դեմոկրատ» կուսակցության [անդամներին] է կոտորում: Հնչակյան զինվորները հրապարակով թռուցիկներով «վրե՛ժ», «վրե՛ժ» են աղաղակում և սպառնում դաշնակցական շեֆերին ...

Եվ այս բոլորը միշտ և միշտ հանուն «պրոլետարիատի», հանուն «աշխատավոր դասակարգի»»[3]:

Մկրտիչ Փորթուգալյանը, որ ընդհանրապես դեմ էր կուսակցությունների գոյությանը, նրանց տարբեր հայացքներին և ուղղություններին, «Արմենիա» թերթում գտնում էր, որ եթե նրանք շարունակելու են միմյանց կոտորել, այլ ոչ թե համագործակցել ընդհանուր թշնամու դեմ, լավ է դադարեցնեն իրենց գործունեությունը և որքան շուտ, այնքան՝ լավ: «Հայրենիքի և ազգի առաջ բոլոր կուսակցություններն ալ, իրենցը մոռացած, գլուխ ծռելու են»[4]:

Ինչ խոսք, դաշնակ-հնչակ եղբայրասպանությունը մեծապես հուզում էր երկու կուսակցությունների առավել սթափ մտածող և լրջախոհ գործիչներին: Հենց նրանք էին, որ փորձում էին կանգնեցնել ոճիրների ընթացքը՝ համոզված, որ հակառակ դեպքում գալիք հայ սերունդները դատակնիքով են դրոշմելու երկու կուսակցությունների հարաբերությունների այդ ամոթալի էջը:

1906թ. հուլիսի 10-ին Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն շրջաբերական նամակ էր հղել Կովկասի դաշնակցական մարմիններին, որով հանձնարարվում էր չբարդացնել դաշնակ-հնչակ հարաբերությունները: Շրջաբերականում ասված էր, որ Զ. շրջանում դաշնակցականները սպանել են 3 հնչակյան զինվոր և մի քանիսին վիրավորել, և որ հանձնարարված է քննել ու ամենայն մանրամասնությամբ պարզել սպանության պարագաները: Բյուրոն հանձնարարում էր բոլոր դաշնակցականներին՝ ամեն միջոց գործ դնել, որպեսզի այլևս տեղի չունենա որևէ զինված ընդհարում հնչակյանների հետ, և «եթե լինեն առիթներ հնչակ-

---

[1] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.թ. 77-78:
[2] Տե՛ս «Բանվորի ձայն», N 1, 1906թ.:
[3] ՀՀ ՀԲԿՓԿԳԱ, ֆ. 4045, ց.1, գ. 80, թ.1:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, գ. 92, թ. 1:
[6] Տե՛ս «Կայծ», N 37, 13 հուլիսի 1906թ.:

[1] «Կայծ», N 38, 16 հուլիսի 1906թ.:
[2] Տե՛ս «Աշխատանք» (Երևան), N 28, 2 օգոստոսի 1906թ.:
[3] «Կայծ», N 38, 16 հուլիսի 1906թ.:
[4] «Արմենիա», 17 փետրվարի 1906թ.:

յանների կողմից, չպատասխանել նրանց անմիջապես, այլ խնդիրը դնել խառն մասնաժողովների քննության՝ կազմված երկու կողմի ներկայացուցիչներից և չեզոք անձերից»[1]:

Ավելին, ամիսներ անց Հ. Ց. Դ. Ատրպատականի կ.կոմիտեն և Հնչակյան ս.-դ. կուսակցության Պարսկաստանի մասնաճյուղերի գործադիր հանձնախումբը 1906թ. դեկտեմբերի 15-ին համատեղ հանդես եկան համերաշխության շրջաբերականով՝ ուղղված իրենց շարքերին:

Փաստաթղթում ասված էր, որ հայ ժողովրդի հերոսական ճիգերը ցանկալի արդյունք չեն ունեցել մի շարք ծանր հանգամանքների պատճառով, որոնց թվում վերջին տեղը չէ հայ կռվող ուժերի անհամերաշխությունը: «Մարդիկ, որոնք պետք է նույն նպատակի համար համախմբվեն, մարդիկ, որոնք կոչված են դժբախտ ժողովրդի ցավոտ վերքերը դարմանելու, շատ անգամ անհամերաշխության պատճառով ջլատում են առանց այն էլ չափազանց փոքր ուժերը և անգիտակցաբար զորացնում թշնամուն ու ասպարեզ տալիս հակահեղափոխական մութ ու խավար ուժերին»[2]:

Շրջաբերականը դաշնակ և հնչակ զինյալներին հիշեցնում էր, որ բազմատանջ հայությունը խոր ցավով է ընդունում եղբայրասպան ամեն մի ոճիր: «Ձեզ, դեպի ձեզ է ուղղում տառապյալ ժողովուրդը յուր հայացքը, ձեզ է երկարում իր ձեռքը արյան ծովի միջից, և դու՛ք, հայ հեղափոխականներ, միահամուռ ուժերով դեպի նրան վազեցե՛ք, լսեցե՛ք նրա ցավատանջ սրտից բխող «Համերաշխությու՛ն» կոչին, որ անում է հայ ժողովուրդը յուր ազնիվ զավակների, նրա ցավերն իրենց ուսերի վրա տարիներ շարունակ տանող հերոսների և անհամերաշխության դառը պտուղները վայելող քաջերի բերանով ...

Թո՛ղ այս համերաշխության կոչը արձագանք տայ ամենուրեք, ուր հայ սիրտ կայ՝ հայ ցավի համար բաբախող, և յուրաքանչյուրն աշխատի համերաշխության հիմքի առաջին քարը դնել:

Մենք գնում ենք այդ ճանապարհով ...»[3]:

Ցավոք, այս սրտառուչ կոչը նույնպես, ինչպես նախկինում արվածները, որևէ նշանակություն չունեցավ: Եղբայրասպան ոճիրները շարունակվեցին: Նորից ու նորից երևան էր գալիս հայի պատմական անմիաբանությունը: Արհավիրքների դուռ բացելուց զատ, այն սպառնում էր ծանր հարված հասցնել ազատագրական պայքարի գաղափարին, արատավորել այն դրոշը, որի տակ հազարավոր հայորդիներ կռվել ու զոհաբերել էին իրենց կյանքը:

Այո, մեծապես ցավալի էր, որ հայ ազգային հեղափոխական երկու կուսակցությունները մեկը մյուսի նկատմամբ այդպիսի խոր ատելությամբ էին համակված: Ինչ արած, այդպես էր: Բայց չէ՞ որ թե՛ մեկի և թե՛ մյուսի գոյության նպատակը նույնն էր՝ թուրքահայության ազատագրությունը: Թվում էր, թե այդ ընդհանուր նպատակը ոչ թե միմյանցից պետք է վաներ, այլ, ընդհակառակը, միավորեր, մի բունցքի մեջ հավաքեր երկուսի ուժերը: Բայց դա տեղի չունեցավ: Երկու կուսակցությունների փոխադարձ ատելության պատճառը, կարծում ենք, այն էր, որ նրանք գործում էին նույն քաղաքական դաշտում, ուր ծավալվել էր հիվանդագին մրցակցություն՝ թուրքահայ ազատագրական շարժման մեջ գլխավոր դերակատարություն ունենալու համար:

---

[1] **«Դրոշակ»**, *N 8 (174),օգոստոս, 1906, էջ 128:*

[2] **ՀՀ ՀԲԿՓԿՊԱ**, *ֆ. 4047, ց.1, գ. 45, թ.1:*

[3] *Նույն տեղում:*

ՎԱՐԱՆԴԱՑԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

1906թ. հունվար-փետրվարյան «խաղաղության» պայմաններում կովկասյան վարչությունը փորձեր էր անում հասարակությանը ներկայանալ ձիթենու ճյուղը ձեռքին՝ իբրև խաղաղության անկեղծ ջատագով, բայց այդ բանը նրան այդպես էլ չէր հաջողվում:

Խաբուսիկ խաղաղությանը հաջորդեցին մարտ ամսին հայերին հասցրած նոր պատուհասները, հատկապես Գանձակի նահանգում:

Այդ պատուհասներից մեկը և ամենազարհուրելին 1906թ. մարտին տեղի ունեցավ Ղարաբաղում՝ Վարանդայի ավելի քան 15 գյուղերում, այնտեղ ուղարկված զինվորական պատժիչ արշավախմբերից մեկի կողմից:

Արշավախումբը բաղկացած էր ավելի քան 400 զինվորից ու կազակներից, ուներ չորս թնդանոթ: Այն գործում էր փոխգնդապետ Վիվերնի, սպաներ Բյուրիլկինի և ազգությամբ օս Հաջիևի, գավառապետ Ֆրեյլիխի, հաշտարար միջնորդ Երմոլաևի, պրիստավ Ֆիտի ղեկավարությամբ[1]:

Զորքերի գալու լուրը սկզբում հայերն ընդունել էին ուրախությամբ՝ կարծելով, թե նրանց միսիան խաղաղ է ու բարի: Այդ էր պատճառը, որ նրանք ամեն տեղ ճաշ ու բնակարան էին պատրաստում զինվորների ու կազակների, կեր՝ ձիերի համար: Գյուղական հասարակությունը նրանց ընդառաջ էր գալիս աղ ու հացով, իսկ հոգևորականությունը՝ խաչ ու ավետարանով: Բայց շատ շուտով ամեն ինչ պարզ դարձավ: Զորքն ու կազակներն ամեն տեղ սկսեցին հայերի հետ վերաբերվել կոպտությամբ ու անպատվությամբ: Գնդապետ Վիվերնը և մյուս սպաները հրաժարվում էին հայերի մոտ ճաշելուց, բայց դա սկիզբն էր միայն: Շուտով գյուղերի վրա մեծ տուգանքներ դրվեցին: Թեև բնակչությունը պատրաստ էր կատարելու ներկայացված պահանջները, բայց նրան ոչինչ չփրկեց ջարդ ու թալանից[2]:

---

[1] **«Դրոշակ»**, *N 5(171), մայիս, 1906, էջ 71:*

[2] *Այդ մասին մանրամասն տե՛ս* **Արամայիս**, *Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն առաջին, էջ 85-96: Վարանդայի սարսափները ավելի մանրամասն նկարագրել է Վասիլի Կոլմակովը՝ իր "Расправы и расстрелы" գրքում (1907թ.), որը, ցավոք, մեր ձեռքը չի անցել:*

Զինվորներն ու կազակները կատարելապես ամայացնում էին գյուղերը՝ հենց զինվորական և վարչական իշխանությունների աչքի առաջ: Վարանդան հեծեծում ու տնքում էր «փրկիչների» հարվածների տակ:

Ինչո՞ւ է կառավարությունը Արցախ ուղարկել ոչ թե խաղաղարար, այլ պատժիչ արշավախումբ, - միմյանց հարցնում էին արցախցիները: - Մի՞թե ժողովուրդն ապստամբել է ու չի ենթարկվում ռուսական կառավարությանը. մի՞թե բնակչությունը հրաժարվում է հարկ վճարել պետությանը. հայերը հրաժարվո՞ւմ են ծառայել բանակում. Արցախի ռուս փոքրամասնությունը հալածվո՞ւմ է հայերի կողմից. հայե՞րն են եղել ազգամիջյան հրդեհ վառողները:

Արցախի հայերի հիմնական «մեղքն» այն էր, որ կարողացել էին պաշտպանվել և հակառակորդի ջարդարարական մոլուցքին հակադրել կազմակերպվածությունն ու համարձակությունը:

Մոռենալով գյուղերին՝ արշավախումբը պահանջում էր հանձնել եղած զենքերը և «խուվարարներին»: Այդ ամենի համար տրվում էր որոշ ժամանակ, որից հետո տեղի էին ունենում ռմբակոծություն, տների հրդեհում, ծեծ, տանջանք, բռնաբարություն, կողոպուտ ու ավեր:

Տող գյուղում թնդանոթային հարվածներով զորքն ավերակների վերածեց բազմաթիվ տներ: Կազակներն այստեղ հրդեհեցին Մուսայելյանի երկհարկանի տունը՝ ամբողջ կարգ ու սարքով, հացի ամբարներով և մանուֆակտուրային ապրանքների պահեստով[1]: Սկսվեց խուզարկությունը, և գյուղացիներից խլվեց 25 հրացան: Շատերն անխնա կերպով ենթարկվեցին ծեծ ու ջարդի, որոնցից 15 հոգի՝ մերձ ի մահ, ոմանք դարձան անբուժելի հաշմանդամ: Մնացած գյուղացիները փախան մերձակա լեռներն ու անտառները՝ գյուղը թողնելով բախտի բերմունքին: Գյուղից փախած կանանց մոտ եղան վաղաժամ ծննդաբերության ու վիժման դեպքեր: Կազակները, խրախուսված հաշտարար միջնորդ Երմոլաևից, մտնում էին տները և թալանում ամեն ինչ, ջարդում տնային կահկարասին, գինով լի ամանները, կանանց ճակատներից պոկում էին գլխի զարդերը, կոտրում փակած սնդուկները: Երմոլաևը քաջալերում էր կազակների զազրելի արարքները, ավելին, ինքն անձամբ նավթ էր լցնում տների վրա և հրդեհում[2]: Վերջում գյուղի վրա դրվեց 900 ռուբլու տուգանք:

Այդ «սխրանքները» կատարելուց հետո գավառապետ Ֆրեյլիխը և հաշտարար միջնորդ Երմոլաևը կազակներին ուղարկեցին Թաղլար և Ազոխ գյուղերը, որտեղ տեղի ունեցան նույն բարբարոսությունները: Ավերվեցին և այրվեցին տները, տակն ու վրա եղան հացահատիկի ամբարները: Գիշի գյուղը վճարեց 500 ռուբլի տուգանք և ենթարկվեց թնդանոթային 12 հարվածի: Խնուշինակ գյուղի լավագույն տները ռմբակոծելով հրդեհվեցին: Գյուղեյ-

[1] **«Դրոշակ»**, N 4 (170), ապրիլ, 1906, էջ 50:
[2] Նույն տեղում, N 5 (171), մայիս, 1906, էջ 70:

ճարտար գյուղը վճարեց 1200 ռուբլի տուգանք, ռմբակոծվեցին տները: Կազակները գյուղում ապրեցին 6 օր և այդ ժամանակում դատարկեցին գինու կարասները, ապա փշրեցին դրանք, բացելով հորերը՝ ձիերի կերակուր դարձրին գարու և ցորենի պաշարները: Աղերսանքին՝ մտրակ, լացին՝ քրքիջ - ահա լիրը պատասխանը, որ ստանում էր դժբախտ ժողովուրդը:

Նույնպիսի բարբարոսություններ կատարվեցին Թաղլար, Հաղորտի, Թաղավարդ, Շեխեր, Տումի գյուղերում: Այս գյուղերում կողոպտած իրերը ձիերին բարձելով՝ կազակները տանում էին ռուս մոլոկանների Սկոբելևկա գյուղը, մասամբ վաճառում[1]:

Բայց առավել անտանելին կանանց նկատմամբ կատարած արարքներն էին: Կազակներին կատարյալ ազատություն էր տրված: Մի քանի գյուղերում նրանք բռնաբարեցին կանանց ու աղջիկներին՝ երբեմն նրանց խլելով հայրերի, եղբայրների և ամուսինների ձեռքից[2]: Սոսում ծեծից մեռավ գյուղացի Հայրապետը, որը փորձել էր արգելք հանդիսանալ կազակների կողմից 70-ամյա իր մոր բռնաբարությանը: Նույն գյուղում բռնաբարվել էր 12 տարեկան մի հիվանդ աղջիկ՝ ծերունի պապի աչքերի առջև: Ազոխ գյուղում կազակները Խոսրով Կարապետյանից պահանջեցին նրա կնոջը, բայց մերժում ստանալով՝ նրան կիսամեռ արեցին: Նույն գյուղում բռնաբարվեց մի կին՝ ինն ու երեք տարեկան երեխաների աչքի առաջ:

Հեկեկանքների ու բռնաբարությունների ենթարկվեցին բազմաթիվ կանայք և օրիորդներ նաև ուրիշ գյուղերում: Եղան խելագարության և անձնասպանության դեպքեր: Բռնաբարված հայ կանայք և օրիորդները հոգեկան տվայտանքների մեջ էին շատ տարիներ՝ բարոյական հարվածի ծանրության տակ: Իսկ քանի՞սը կային, որոնք հրաժարվում էին հրապարակ հանել իրենց կրած անարգանքը:

Իրականությունն արյունոտ էր ու կսկծալի՝ իր սարսափներով ու մորմոքներով: Փաստեր՝ մեկը մյուսից սոսկալի, մեկը մյուսից վրդովեցուցիչ: Վարանդան իր գյուղերով և իր բնակիչներով անարգված էր, ենթարկված ճիվաղային այլանդակություններ:

Վարանդայի կսկիծն ու մորմոքը, իբրև մի սուր նետ, խրվել էր հայության սրտում: Դա մի տմարդի վիրավորանք էր, որ մաքիավելական ձեռքերով հասցված էր հայ ժողովրդին: Հայերը համակվել էին ամենաբուռն զայրույթի և սրտամորմոք բողոքի զգացմունքներով:

Վարանդայի դեպքերը լայն արձագանք գտան ողջ Կովկասում: Հայկական մամուլի էջերը լիքն էին զայրույթ արտահայտող հոդվածներով ու նյութերով: «Մշակը», «Ալիքը», «Արշալույսը», «Կայծը», «Դրոշակը», «Հնչակը» և մյուս թերթերը օրեցօր անդրադառնում էին կատարվածին և ամենայն մանրամաս-

[1] Այդ ամենի մասին տե՛ս **«Ցառաջ»**, N 66, 10 ապրիլի 1906թ., N 70, 15 ապրիլի 1906թ.:
[2] **«Դրոշակ»**, N 4 (170), ապրիլ, 1906, էջ 50:

նությամբ նկարագրում սահմռկեցուցիչ դեպքերը:

Ծննդով ղարաբաղցի, ժամանակի հայտնի հրապարակախոսներից Տիգրան Նազարյանը, որը Թիֆլիսում հրատարակվող «Աղբյուր-Տարազի» խմբագիրն էր, հանդեսի 1906թ. N12-ում զետեղված «Բռնաբարված Արցախը» վերնագրով իր հոդվածում գրում էր, որ Թուրքերը հայոց Արցախը մոխրակույտեր են դարձրել, իսկ քրիստոնյա ռուս պաշտոնյաները, ռուս կազակը և ռուս զինվորը բռնաբարել են հայերի սրբության սրբոցը՝ նրանց անարատ օջախները:

Կատարված ոճրագործությունների մասին բողոքի բազմաթիվ հեռագրեր հղվեցին Կովկասի փոխարքային, Պետերբուրգ՝ կառավարությանը և ուրիշ հասցեներով:

1906թ. մարտի 28-ին Արցախի հայ կանանց անունից Շուշիից հեռագիր էր հղվել կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնային և կոմսուհի Վորոնցովա-Դաշկովային: Հեռագրում կային այսպիսի տողեր. «Զնայելով հայերի դարավոր հավատարմությանը ռուսական գահին և անձնվեր ծառայությանը ինքնակալ ցարին ռազմի դաշտում և քաղաքացիական պատերազմում, նրանց դեմ, այնուամենայնիվ, ինչ-որ հալածանք է սկսված, որի նմանը մեր պատմությունը չի հիշում նույնիսկ մահմեդական տիրապետության ժամանակներից...»[1]:

Արքունիքը լուռ էր, ոչ մի արձագանք չէր տալիս: Ոճրագործ կառավարության համար Վարանդայում կատարվածը սովորական բաներ էին:

Սակայն քստմնելի արարքները աննկատ չմնացին ռուս հասարակայնության աչքից: Մայրաքաղաքի, Մոսկվայի և այլ քաղաքների մի շարք թերթեր, անդրադառնալով Վարանդայի դեպքերին, դատապարտեցին կատարված անլուր խժդժությունները:

Պետերբուրգում լույս տեսնող "Дело Народа" թերթը (սոցիալիստ-հեղափոխականների օրգան) Վարանդայի դեպքերի առթիվ տպագրած առաջնորդողում գարշանքով նկարագրում էր ռուս զինվորների ու կազակների գործողությունները, գրելով. «Անմարդկային այդ մարդակերպերը գժվում ու հղփանում են վայելքով՝ լողանալով շուրջը ծավալվող սարսափի ծովում: Եվ հենց այստեղ պոռթկում են ամենաստոր անասնական մի այլ ձևի բնազդներ: Կանանց տեսնելով՝ բռնկում է սեռական հեշտասիրություն, և հենց տեղն ու տեղը բավարարություն է ստանում հիվանդոտ, անբնական ձևերով՝ ընդունելով մասսայական սեռական համաճարակի բնույթ: Ահա ձեր աչքերի առջևից անցնում են սգավոր թափորով դժբախտ զոհերի գունատ ստվերները՝ դժբախտացած ջահել ու նուրբ օրիորդներ, ամուսնացած կանայք, որոնց հղիությունը նրանց չէր փրկել խայտառակությունից. բռնաբարված՝ դեռ չկազմակերպված մանկահասակ աղջիկներ և նույնիսկ պառավներ: Բոլորը միմի գունատ ստվեր: Ահա ձեր առջևն է մի ծծկեր երեխայի մայր, որը հերթով

[1] «Արցախականչ», N 4 (11), 7 փետրվարի 1991թ.:

բռնաբարվում է մի քանի կազակներից, որոնք ստանում էին իրենց սեռական գրգռումը կնոջ կատարյալ ուժասպառության սարսափելի պատկերից: Ահա մի այլ այդպիսի մայր, որին այդ կերպով անարգում են 6 թե 7 խումբ կազակներ՝ մեկը մյուսի հետևից: Ահա 50, 55 և համարյա 70 տարեկան պառավ կանայք, որոնց զառամյալությունը չի ազատում անասնական օրգիայով հղփացած մարդանման արարածի խեղաթյուրված ֆանտազիայից: Ահա մի 12 տարեկան կաթվածահար զոհ, որին զրկում են կուսությունից՝ իր 70 տարեկան պապի աչքի առաջ ...»[1]:

"Дело Народа"-ի խմբագրությունը հանձինս թերթի առաջնորդող հոդվածի՝ արտահայտում էր իր արգահատանքը ռուս մարդու անունը ոտնահարող մարդակերպ ստորատիպ էակների նկատմամբ և ռուս բոլոր մարդկանց անունից ներողություն խնդրում կատարված ահավոր եղելությունների համար: Թերթը սրտի ցավով դիմում էր ռուս մարդկանց հետևյալ խոսքերով.

«Ռուս քաղաքացինե՛ր: Թափանցեք միայն այդ փորձանքների ամբողջ սարսափի մեջ, երևակայեք միայն, թե ձեզ պատահում է այցելել այդ հայկական գյուղերը, որտեղ ամենքը՝ մի քանիսը վախով, մյուսները ատելությամբ կնայեն ձեզ՝ **ռուսի** վրա: ... Ի՞նչ արին, ի՞նչ արին այս ռուս պատրիոտները «ռուս»-ի այն անվան հետ, որով նրանք՝ ռուսների հարազատ եղբայրները, այնքա՜ն պարծենում էին: Դրանից հետո մարդ ստիպված է ամոթ, սաստիկ ամոթ զգալ, սրանից հետո մի տանջող ամոթով է համակվում մարդ, զգալով իրեն «ռուս»[2]:

Պատժիչ արշավախմբի հրամանատար փոխգնդապետ Վիվերնը ամեն ինչ անում էր թաքցնելու համար եղելությունը: Այդ նպատակով նա հոդված էր տպագրել Բաքվի "Каспий" թերթում փորձելով ժխտել այն գազանությունները, սպանություններն ու բռնաբարությունները, որ կազակներն ու զինվորները կատարել էին Վարանդայի հայ բնակչության նկատմամբ:

Կանանց, պառավների ու աղջիկների բռնաբարությունների առթիվ նա գրում էր. «Մի՞թե կարելի է հավատալ, թե 23-25 տարեկան մի կազակ բռնաբարած լինի պառավ կնոջ: Դա զառանցանք է: Իրականում «Հայկական կոմիտեն»* է, որ հրամայել է պառավին ասելու, թե իրեն բռնաբարել են»[3]: Կազակներին վերագրած բոլոր մեղքերը նա համարում էր սադրանք՝ հայտարարելով, թե բարձրացրած աղմուկը «Հայկական կոմիտեի» հանդուգն կեղծիքների արդյունք է: «Կոմիտեն վարանդացիներին ստիպում է հպատակվել իր հրահանգներին: Ով չի հնազանդվում, նրան ոչնչացնում են: Եվ ահաբեկված

[1] Թարգմանությունը տե՛ս «Ալիք» (Թիֆլիս), N 15, 16 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում:
* Նկատի ունի Հ.Յ. դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղի) կոմիտեն:
[3] "Каспий", N 142, 2 июня 1906г..

ազգաբնակչությունը ակամա ենթարկվում է ...»[1]:

Ռուս առաջադեմ մարդիկ գտնում էին, որ կատարված բռնություններն ու խժդժությունները թաքցնելը և հայկական գյուղերում շարունակվող պատիժները չեն կարող սկզբունքորեն լուծել որևէ հարց: "Страна" թերթը ընդգծում էր, որ բռնություններ գործադրելու փոխարեն իշխանությունները պետք է խորամուխ լինեն եղելությունների մեջ, ամեն մի կոնկրետ դեպքում բացահայտեն երևույթների պատճառները և խելացի ու համբերատար կերպով հայերի և թուրքերի կյանքը աստիճանաբար մտցնեն նորմալ հունի մեջ: Այդ նպատակով թերթն առաջարկում էր. 1. Անմիջապես վերացնել զինվորական դրությունը և դատի տալ պատժիչ արշավախմբերի ղեկավարներին, 2. Հայ-մուսուլմանական նահանգներից հեռացնել իշխանության այժմյան ներկայացուցիչներին, 3. Կովկասին տալ ներքին գործերի մեջ օրենսդրական լայն ֆունկցիաներով օժտված տեղական ինքնավարություն[2]:

Վարանդայի հայկական գյուղերում կազակների կատարած խժդժությունները ստուգելու նպատակով, բազմաթիվ բողոքների հիման վրա, փոխարքայի կողմից նշանակվեց քննիչ հանձնաժողով՝ Վայդենբաումի նախագահությամբ[3]:

Հանձնաժողովն սկսեց շրջել գյուղերում: Ամեն գյուղի մոտ նրան դիմավորում էին հոգևորականները՝ զգեստավորված, ինչպես և գյուղական հասարակությունը՝ աղ ու հացով:

Սոս գյուղի մոտ, երբ քահանա տեր Հակոբը մի ճառով ողջունում էր հանձնաժողովին՝ շեշտելով կազակների կողմից հասարակությանը հասցրած անպատվությունները և ավերումները, հավաքված մարդիկ լալիս էին դառնագին: Տեսարանը սաստիկ հուզիչ էր: Թիֆլիսի մամուլի հաղորդած փաստերը ոչ միայն հաստատվում էին, այլև նսեմանում էին իրականության առջև:

Սարսափն այնքան ուժեղ էր, որ հանձնաժողովը գյուղերին մոտենալիս՝ կանայք, թեև նախազգուշացված, այնուամենայնիվ, փախչում էին լեռներն ու անտառները:

Միայն մեղավորներին խիստ պատժելը կարող էր հանգստացնել խորապես անպատված ու վրդովված բնակչությանը: Չնայած Վայդենբաումի հանձնախումբը հաստատել էր բռնություններին, հրդեհներին, կողոպուտներին ու բռնաբարություններին վերաբերող փաստերը, ապացուցել, որ դրանց նախաձեռնողներ եղել են վարչականները, ինչպես նաև սպաները՝ անպատիվ անելով իրենց մունդիրները, և, վերջապես, չնայած փոխարքան համոզվել էր ամոթալի փաստերի ճշտության մեջ և կարգադրել էր դեռ մինչև քննության ավարտը հեռացնել հանցանք կատարած պաշտոնյաներին, բայց բարբարոսական գործողությունների հեղինակները շարունակում էին մնալ իրենց տեղերում:

Հանձնաժողովի հեռանալուց հետո Շուշի եկավ գեներալ Մալաման, որի գալուստը նույնպես ոչ մի հետևանք չունեցավ: Շուշիից նա անցավ Գորիս, մյուս օրը վերադարձավ Շուշի, ընդունեց մի քանի մարդկանց, ի թիվս որոնց՝ մի խումբ տիկնանց ու օրիորդների, համաձայնեց, որ «իսկապես շատ ցավալի դեպքեր են տեղի ունեցել» և որ հանցավորները կ'պատժվեն: Դեներալը չմոռացավ ասել, որ ինքը հատկապես... քոչի խնդրով է եկել: Զնականորեն ափսոսանքներ հայտնելուց հետո նա անվրդով վերադարձավ Թիֆլիս[1]:

Ավելին, գեներալի Թիֆլիս վերադառնալուց հետո փոխարքայի պալատից հրահանգ գնաց նահանգական իշխանություններին՝ ամեն կերպ արգելք հանդիսանալ, որպեսզի թերթերը հաղորդումներ չտան Վարանդայի դեպքերի մասին:

Ապրիլի 13-ին Թիֆլիսի գեներալ-նահանգապետը հատուկ կարգադրությամբ Թիֆլիս քաղաքի և նահանգի թերթերին արգելեց որևէ բան տպագրել Վարանդայի և ընդհանրապես պատժիչ արշավախմբերի գործողությունների մասին, նաև պատվիրեց խիստ սահմանափակել հայ-թուրքական ընդհարումների մասին հաղորդումները[2]: *Այսինքն՝ եթե ամբողջ գյուղեր ու քաղաքներ ավերակ դառնային, շարունակվեին չլսված բարբարոսությունները, միևնույն է, մամուլը պետք է լռեր, որպեսզի հասարակությունը չիմանար իրողությունը:*

Վարանդայի գործողության «հաջող» ավարտից հետո փոխարքայի հրամանով Գանձակի նահանգապետ, գեներալ-մայոր Ալֆտանի ենթակայությունից դուրս բերվեցին Կարյագինոյի, Շուշվա և Զանգեզուրի գավառները, և այդ տարածքների գեներալ-նահանգապետ նշանակվեց կովկասյան հեծելազնդի զորամասի և Գանձակի նահանգում գործող պատժիչ արշավախմբերի հրամանատար գեներալ-մայոր Գոլոշչապովը:

ՀԱՑ-ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ»

Դեռևս 1905թ. նոյեմբերի վերջերին փոխարքա Վորոնցով-Դաշկովի մոտ միտք էր հղացել իշխանությունների հովանավորությամբ հրավիրել հայ և թուրք ներկայացուցչական ժողով: Այդ գաղափարի ծագմանը, անշուշտ, նպաստել էին Կովկասի մայրաքաղաքում 1905թ. նոյեմբերին տեղի ունեցած թուրք-հայկական դաժան կռիվները, որոնց ընթացքում քիչ գնդակներ չէին անցել նաև փոխարքայական պալատի վրայով:

Վորոնցով-Դաշկովը քաջ գիտեր, որ նման ներկայացուցչական համատեղ հավաքն ի վիճակի չէ լուծելու քիչ թե շատ էական հարցեր, բայց դա կնպաստեր ժողովրդի աչքում վարչակազմի վարկի բարձրացմանը:

---

[1] **"Каспий"**, *N* 142, 2 июня 1906г..

[2] **"Страна"**, *N* 45, 13 апреля 1906г..

[3] *Վայդենբաումի քննիչ հանձնաժողովի մասին տե՛ս* ***«Ցառաջ»****, N 65, 9 ապրիլի 1906թ.:*

[1] ***«Դրոշակ»****, N 6 (172), հունիս, 1906, էջ 87:*

[2] ***«Մշակ»****, N 5, 3 մայիսի 1906թ.:*

1905թ. դեկտեմբերի 4 թվով փոխարքայի օգնական գեներալ Մալաման հայոց կաթողիկոսին տեղյակ է պահում, որ հայերը պետք է ժողովին ուղարկեն 20 հոգու՝ նրանց ընտրելով Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի, Երևանի նահանգների և Կարսի շրջանի հայ ազգաբնակչության կողմից: Դեկտեմբերի 7-ին կաթողիկոսը Մալամային գրավոր հարցում է անում իմանալու համար, թե հակառակ կողմը քանի հոգով է ներկայանալու ժողովին[1]: Փոխարքայի օգնականը դեկտեմբերի 16-ի գրությամբ Խրիմյանին պատասխանում է, որ մահմեդականության ներկայացուցիչների թիվը լինելու է 30, որից 20-ը՝ շիա, 10-ը՝ սուննի[2]:

Ժողովի թվակազմի նախատեսումը գտնելով ոչ արդարացի և կամենալով խուսափել հոգնեցուցիչ գրագրությունից՝ կաթողիկոսը մեկնում է Թիֆլիս և անձամբ բանակցում Մալամայի հետ: Արդյունքում նախնական համաձայնություն է ձեռք բերվում հայերից և մահմեդականներից ժողովի ուղարկել հավասար թվով ներկայացուցիչներ:

Խորհրդակցության նախօրյակին Խրիմյանը, ամրապնդելու համար ձեռք բերած նախնական համաձայնությունը, գրություն է ուղարկում փոխարքային և կրկին շեշտում երկու կողմից հավասար թվով ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտությունը: Կաթողիկոսը գրում է.

«Բանագնացութիւնք այդոքիկ հանգուցեն յայն հետևանս, եթե նախ՝ ի կազմութեան խորհրդակցութեանն թիւ հայոց և մահմեդականաց պարտ է լինել հաւասար և երկրորդ՝ արդարացի լինել հրաւիրել մասնակցութիւն այնմ նոյնպես և զհայ-կաթոլիկս, եթե արդեն կարգադրեալ էր հրաւիրել զսիւնի-մահմեդականս, ամենևին չը մասնակցելոց հայ-թաթարական ընդհարմանց և գտանելոց ընդ հայս ի բարի դրացիական յարաբերութիւնս: Ի հետևումն այսորիկ պայմանաւորելու ընտրելի ի Հայոց անձիս թուով, յորոց քսանևհինգն ի լուսավորչականաց և հինգն ի կաթոլիկաց»[3]:

Հիրավի, երիցս իրավացի էր հայոց կաթողիկոսը. եթե մահմեդականության թևերից մեկը՝ սիւննիզմի հետևորդները, Կովկասում կարող էին ժողովին մասնակցելու ուղարկել 10 ներկայացուցիչ, ապա ինչո՞ւ ոչ լուսավորչական հայերը, տվյալ դեպքում Կովկասի հայ կաթոլիկները, չէին կարող նույն թվով ներկայանալ հավաքին:

Ի վերջո վերջնական համաձայնություն ձեռք բերվեց, որ հայ և թուրք հասարակությունները ժողովին են ուղարկելու 30-ական պատգամավոր: Թուրք պատգամավորների կազմը նույնն էր՝ 20 շիա և 10-ը սուննի, իսկ հայ պատգամավորներից 26-ը ներկայացնելու էին լուսավորչականներին և 4-ը՝ հայ կաթոլիկներին:

---

[1] Տե՛ս **«Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան»**, գիրք Թ, էջ 455:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Վերջապես 1906թ. հունվարի կեսերին պաշտոնապես հայտարարվեց, թե թուրք-հայկական կռիվների պատճառները վերլուծելու և ընդհարումներին վերջ տալու համար փետրվարի վերջին հրավիրվելու է հայ-թուրքական համագումար: Անմիջապես հասարակության մեջ սկիզբ առան տարբեր կարծիքներ: Ոմանք գտնում էին, թե հավաքը կարող է դրական դեր խաղալ, գոնե մշակել առաջիկա գործունեության որևէ ծրագիր:

Բայց հայկական հասարակության մեծ մասը հենց սկզբից հոռետես եղավ և բացասական վերաբերմունք դրսևորեց դեպի այդ ձեռնարկը: Հոռետես էին հնչակյաններն ու դաշնակցականները՝ չխոսելով արդեն սոցիալ-դեմոկրատների մասին, որոնք փոխարքայի ծրագիրը համարեցին զանգվածներին մոլորեցնելու և խաբելու հերթական քայլ:

«Դրոշակը» գրում էր.

«Հասարակության մեջ քիչ թե շատ հավատ չկա ժողովի և նրա հետևանքների նկատմամբ: Անցյալի նմանօրինակ փորձերը հիասթափեցրել են ժողովրդին: Շատերը գտնում են, որ կառավարության և թուրք պատգամավորների կողմից խաղ է խաղացվում»[1]:

Դաշնակցության օրգաններից մյուսը՝ «Ցառաջը», այն տեսակետն էր հայտնում, թե համագումարի հրավիրումն ավելորդ է, քանի որ առանց դրա էլ իշխանությունը շատ լավ գիտի, թե ով է թուրք-հայկական ընդհարումների պատճառը, ով է կովկասյան Վանդեա ստեղծողը, ժողովրդից արյուն քամողը, որ առանց համագումարի էլ նա կարող է արագորեն վերջ դնել արյունահեղությանը՝ դադարեցնելով սադրանքները, պաշտոնյաների հանցավոր զանցառությունները, պատժելով վաղուց հայտնի ոճրագործներին: Թերթը շեշտում էր, որ համագումարն ավելի բան չի կարող ասել, քան այն բազմաթիվ պետիցիաները, «պատգամավորական դիմումները», հեռագրերն ու բողոքները, որոնք վաղուց ներկայացված են իշխանություններին[2]:

Հիրավի, կառավարությունը «խաղաղարար» ձեռնարկներով ձգտում էր մթագնել ժողովրդի արթնացող գիտակցությունը, ծածկել կատարած ոճրագործությունները և Պիղատոսի նման լվանալ ձեռքերը, ռուս և օտար հասարակությունների առջև արծարծել այն միտքը, թե ինքը հանցավոր չէ և նույնիսկ «խաղաղեցնելու» փորձեր է անում:

Չնայած հայկական հասարակության տարակուսանքներին, հրապարակվեց համագումարի պատգամավորների ընտրության մասին հրահանգը: Լրագրում հրատարակված պատգամավորական ցուցակների և նրանց ընտրության եղանակի մասին տեղեկություններից չէր երևում, թե համագումարը լինելու է ազգաբնակչության տեսակետների ու կամքի արտահայտիչը: Պատգամավորական թեկնածուների կազմում ընդգրկված էին Անդրկովկասի,

---

[1] **«Դրոշակ»**, N 3 (169), մարտ, 1906, էջ 34:
[2] Տե՛ս **«Ցառաջ»** (Թիֆլիս), N 43, 9 մարտի 1906թ.:

այսպես կոչված, «պատվավոր անձինք»՝ խոշոր կապիտալի ներկայացուցիչներ և գերազանցապես նրանց սպասարկող մտավորականներ, ցարական իշխանությունների ողորմածությունը հայցող կրոնական դեմքեր:

Թեև դաշնակցությունը ոչ մի հույս չէր կապում առաջիկա համագումարի հետ, բայց Հ.Յ.Դ. արևելյան բյուրոն, այնուամենայնիվ, որոշեց, որ կուսակցությունը մասնակցելու է ընտրություններին՝ «մերկացնելու համար» իշխանություններին: Ընտրություններին մասնակցեցին նաև հայ լիբերալները: Միայն հայ բոլշևիկներն էին դրանք բոյկոտել:

Պատգամավորների ընտրությունները տեղի ունեցան ժողովրդի մեծ մասի բացարձակ անտարբերության պայմաններում: Միայն հասարակության մի նեղ շրջանակում տեղի ունեցած կիսատ-պռատ «ընտրությունների» արդյունքով համագումար գնացին «ժողովրդի ներկայացուցիչները»: Գնացին, գուցե հավատալով, թե մի գործ են կատարելու: Իսկ բուն ժողովուրդը՝ հոգսերի մեջ խեղդված, մնաց մի կողմ իբրև լուռ վկա այդ նոր կատակերգության:

Հայ համայնքից չէր ընտրվել ոչ մի բանվոր կամ աշխատավոր գյուղացի: Համագումար գնացած հայ պատգամավորները չէին կարող ժողովրդի իսկական ներկայացուցիչներ համարվել և պաշտպանել նրա շահերը:

Իրենց ժողովրդի ներկայացուցիչներ չէին նաև թուրք պատգամավորները, որոնց թվում նույնպես չկար ոչ մի աշխատավոր: Դրանք խաներ էին, բեկեր, աղալարներ և ուրիշ արտոնյալներ – մի խոսքով հենց այն տարրերը, որոնք անողոքաբար կեղեքում էին թուրք աշխատավոր գյուղացիությանը, նրան պահում տգիտության ճանկերում, կռվի մղում հարևանների դեմ:

Հայ պատգամավորներն էին. **Թիֆլիսից**՝ Ալեքսանդր Քալանթարը, Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, բժ. Կարապետ Ստեփանյանը, բժ. Ալեքսանդր Խատիսյանը և Հ. Սպենդիարյանը, **Բաքվից**՝ Ալեքսանդր Թաղիանոսյանը, Կոստանտին Խատիսյանը, Ա. Ղուկասյանը, **Գանձակից**՝ Հովսեփ Մելիք-Բեգլարյանը, Միքայել Լազարյանը, Իս. Խոջոյանը և Լ. Մնացականյանը, **Երևանից**՝ Հովհաննես Մելիք-Աղամալյանը, Լ. Մուշեղյանը և Ա. Տեր-Ավետիքյանը, **Ղազախի գավառից**՝ Սամսոն Հարությունյանը, **Բաթումից**՝ Սարիբեկ Հարությունյանը, **Ալեքսանդրապոլից**՝ Գ. Տեր-Պետրոսյանը, **Կարսից**՝ Եղիշե վարդապետ Մուրադյանը, **Նուխիից**՝ գեներալ Սիլիկյանը, **Շուշավերից**՝ Վախտանգ Մեհրաբյանը, **Նախիջևանից**՝ Լևոն Սարգսյանը և Համբարձում Առաքելյանը, **Շուշիից**՝ Ներսես վարդապետ Տեր-Միքայելյանը, Ջավադ Իշխանյանը և Լևոն Ղույանը, **հայ կաթոլիկների կողմից**՝ Գաբրիել վարդապետ Նահապետյանը, Առաքել Սարուխանյանը, Պ. Գուրգենյանը և Պ. Կարա-Մուրզան:

Թուրքերի ներկայացուցիչներն էին. **Թիֆլիսից**՝ Շախմալիևը, Էմինովը, Հուսեին բեկ Եդիգարովը, Միրզոևը, Ղազի Սուբհանգուլիևը, Ղազի Մովլա-զադեն, **Երևանից**՝ Աղա խան Երիվանսկին, Աբասկուլի բեկ Հաջիբեկովը, պրինց Շահկուլի Միրզան, **Նախիջևանից**՝ Էյնալի բեկ Սուլթանովը, Մահմեդ աղա Շահթախտինսկին, **Սուրմալուից**՝ Ալի աղա Ակիմովը, **Բաքվից**՝ Թոփչիբաշևը,

Աղաևը, բժ. Ղարաբեկովը, Հաջիևը, **Շամախուց**՝ ինժ. Ահմեդբեկովը, **Գանձակից**՝ Խասամեդովը, Զիաթխանովը, **Շուշիից**՝ Նուրի բեկը, Ջհանգիր խան Ղալաբեկովը, Իսմայիլ Ղուլիևը, **Զանգեզուրից**՝ Ջամալ բեկ Սուլթանովը, **Նուխիից**՝ Հաջի Ջալիլը, **Արեշից**՝ Սուլթան բեկ Սուլթանովը, **Ղազախից**՝ գնդապետ Վեքիլովը, **Ախալքալաքից**՝ Պալավանդովը, **Բորչալուից**՝ Աբդուլ Ռահման Ախվերդի-օղլին: Քիչ ուշացումով սրանց միացան Բախտիար բեկ Զեյնալովը և Փոլադ բեկ Աշարովը:

Թուրք պատգամավորները պայմանավորվել էին համագումարի ողջ ընթացքում հետևել միայն մի տակտիկայի՝ հարձակողականի, խոսել հիմնականում հայկական կազմակերպությունների տեռորների և դավադրությունների մասին կամ առաջ մղել այնպիսի հարցեր, որոնք նպաստեին հասարակական կյանքի բոլոր բնագավառներում թուրքերի համար այնպիսի իրավունքներ ձեռք բերելուն, ինչպիսի իրավունքներից օգտվում են հայերը և ընդհանրապես քրիստոնյաները: Եվ, ինչպես ցույց տվեց համագումարի ընթացքը, ցանկացած հարցում, յուրաքանչյուր նիստում նրանք առանց տատանվելու, առանց քաշվելու, միայն մեղադրանքներ էին, որ թափում էին մերթ հայ ժողովրդի, մերթ հայ հեղափոխական կազմակերպությունների՝ հատկապես դաշնակցության, մերթ հայ մամուլի՝ հատկապես Հ.Յ.Դ. օրգան «Ցառաջի» գլխին: Միաժամանակ իրենց ներկայացնում էին որպես անմեղ զառնուկներ, որոնք զոհերն են «հայկական զինված զորաբանակների»[1]:

Այդ տակտիկայի հետևանքը եղավ այն, որ չբացահայտվեց ցարական կառավարության ու ոստիկանության, թուրք բեկերի, թուրք արտոնյալ մյուս տարրերի ավերիչ դերը, շղարշվեց պանիսլամիզմի կերպարանքը, մի խոսքով՝ չպարզվեցին ընդհարումների գլխավոր պատճառները:

Հայ պատգամավորներն իրենց առջև խնդիր էին դրել համաժողովում խոսել այն հարցերի լուծման անհրաժեշտության մասին, որոնք առաջացել էին թուրք-հայկական ընդհարումների հետևանքով, արտահայտել հայության բաղձանքը, այն է՝ թույլ չտալ նոր արյունահեղություններ Անդրկովկասում, հնարավորին չուտ վերականգնել նախկին խաղաղ դրությունը:

Այսպես կոչված հայ-թուրքական «համագումարը» կամ համաժողովը իր աշխատանքներն սկսեց 1906թ. փետրվարի 20-ին Թիֆլիսում, փոխարքայի պալատում և տևեց ամբողջ 15 օր:

Ժողովը համառոտ խոսքով բացեց փոխարքա Վորոնցով-Դաշկովը և հեռացավ: Նրա հանձնարարությամբ նախագահական աթոռը զբաղեցրեց փոխարքայի առաջին օգնականը՝ գեներալ Մալաման՝ ունենալով իր երկու կողմերում փոխարքայի մյուս օգնականներին՝ գեներալներ Սուլթան Կրիմ-Գիրեին և Շիրինկինին:

Արդեն առաջին նիստը ցույց տվեց, որ համաժողովը պտղաբեր չի լինելու,

[1] **«Ցառաջ»**, N 44, 10 մարտի 1906թ.:

քանի որ հենց սկզբից լուրջ տարաձայնություններ ծագեցին օրակարգի առթիվ[1]:

Հայ պատգամավորներն առաջարկեցին օրակարգի մեջ մտցնել հայ-թուրքական ընդհարումների պատճառների հարցը, քանի որ առանց դրանք քննելու հնարավոր չէր առաջ շարժվել: «Ամեն մի հիվանդության հիմնաքարը, - ասաց Ալ. Խատիսյանը, - երևույթի պատճառներն իմանալն է, ուստի չի կարելի հեռացնել այս և այն երևույթը, եթէ մենք չգիտենք նրա պատճառները: Եթէ ներկա դեպքում ցաալի դեպքերի պատճառները բարդ են, այդ դեռ չէ նշանակում, թէ չպետք է շոշափել նրանց: Ընդհակառակը, մեզ պետք է իմանալ այդ պատճառները և որքան կարելի է՝ մանրամասն: Մեզ հարկաւոր է ճշմարտությունը, անագորույն ճշմարտությունը: Գուցէ ճշմարտությունը բանալով կվնասի մեր և մեր հարևանների կամ վարչության ինքնասիրությունը, բայց դա արգելք չպիտի լինի, որ մենք մերկացնենք ամբողջ ճշմարտությունը»[2]:

Բայց հենց այդ ճշմարտության մերկացումը բնավ ձեռնտու չէր իշխանություններին, մանավանդ որ հայ պատգամավորները վճռականորեն էին տրամադրված մերկացնելու վարչակազմի խաղացած դերը:

Ելույթ ունենալով՝ մուսուլման պատգամավորները կանգնեցին վարչակազմի պաշտպանության դիրքերում և առաջարկեցին չանդրադառնալ հայ-թուրքական ընդհարումների պատճառների քննությանը՝ ասելով, որ դա «շատ հեռու կտանի»: Ահա Գ. Հաջիևի տեսակետը.

«Ես ականատես էի Բաքվի անցքերին և բոլոր խղճով հաստատում եմ, որ իշխանությունն այդ բանում բոլորովին մեղավոր չէր: Բաքվում սկզբում հայերը եկեղեցու մոտ հարձակվեցին թուրքերի վրա: Նրանք ասում են, թե կուլտուրական ժողովուրդ են: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս են թույլ տալիս իրենց հարձակվելու մեզ վրա: Այդ ո՞ր իշխանությունը կկոտորի իր հպատակներին: Ճշմարիտ է, իշխանությունը թույլ էր, բայց խիղճս թույլ չէ տալիս մեղադրել նրան...»[3]:

Մուսուլման պատգամավորներն ասում էին, որ եթե հայերը կամենում են որոնել ընդհարումների պատճառները, ապա իրենք՝ թուրքերը, կարող են մատնացույց անել միայն մի պատճառ՝ հայ հեղափոխական կոմիտեները: Նրանք հատկապես Հ. Յ. դաշնակցությանն էին համարում ընդհարումների գլխավոր մեղավոր քաղաքական ուժը[4]: Հայ պատգամավորներն իրենց ելույթներում ստիպված էին թուրքերի պարագլուխներին բացատրել դաշնակցության ծրագրային նպատակները, ցույց տալ, որ նա պայքար է մղում ոչ միայն

[1] **«Արշալույս»**, N 39, 22 փետրվարի 1906թ.:
[2] **«Մշակ»**, N 39, 22 փետրվարի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 40, 23 փետրվարի 1906թ.:
[4] **«Արշալույս»**, N 40, 23 փետրվարի 1906թ.:

թուրքահայ ժողովրդի ազատագրության համար, այլև իր գործունեությամբ նպաստում է անդրկովկասյան ազգերի շահերի ներդաշնակմանը, հետևապես՝ երկրամասի քաղաքական առաջադիմության գործին: «Դաշնակցության դերը, - նշում էր Սամսոն Հարությունյանը, - եղել է բացառապես ինքնապաշտպանական. այդ կուսակցությունը երբեք ձեռք չի բարձրացրել ժողովրդական իրավունքների վրա»[1]:

Արդյունավետ եղավ ժողովի փետրվարի 23-ի նիստը:

Այդ օրն առաջին անգամ թուրք պատգամավորները, ի դեմս նրանց մտավորական մասի, այն պալատում, ուր երկու-երեք տարի առաջ ջատագովում էին գոլիցինյան խայտառակ և հրեշավոր ռեժիմը, այնքան քաղաքացիական քաջություն ունեցան, որ խոստովանեցին, թե, արդարև, երկու ազգերի միջև ստեղծված դժոխային վիճակի գլխավոր պատասխանատուները գոլիցինյան ռեժիմի ներկայացուցիչներն են, տեղական իշխանությունների հանցավոր անգործությունը, մեկը մյուսին հաջորդած սադրանքները[2]: Թուրքերի կողմից այդ ճշմարտության ընդունումը հայ պատգամավորները համարեցին մի ահագին քայլ դեպի թուրքերի և հայերի միջև ստեղծվելիք բաղձալի հաշտությունը:

Սակայն թուրք պատգամավորների այս եզակի զեղումը չէր կարող փոխել հարցի քննարկման մթնոլորտը: Նրանք անմիջապես «շտկեցին» իրենց կեցվածքը՝ պնդելով, թե գոլիցինյան ռեժիմն առնչություն չուներ ցարական «մարդասիրական» կարգերի հետ, որ այդ ռեժիմը բացառություն էր Կովկասի կառավարման պատմության մեջ: Դրանով նրանք հարցի քննարկումը մտցրին փակուղի:

«Ցավալի իրականություն» վերնագրով առաջնորդող հոդվածի հեղինակ Ա. Աթանասյանը «Արշալույս» թերթում գրում էր, որ համաժողովն ըստ էության հրաժարվեց քննել այն պատճառները, որոնք «առաջացրին այն սոսկալի հրդեհը, որ մի տարի շարունակ լափեց մի քանի նահանգներում գիւղեր, քաղաքներ, ուր ոչնչացան տասնեակ տարիների ընթացքում աշխատաւոր մասսաների ձեռք բերած ինչքը, ստացւածքը, որը տարավ հազարաւոր անմեղ զոհեր և ժողովրդին գցեց յուսահատ ինքնապաշտպանութեան անխուսափելի փոթորկի մեջ»[3]:

Նույն՝ փետրվարի 23-ի նիստում թուրք պատգամավորները բարձրացրին իրենց հուզող պահանջներից մեկը՝ «Տվե՛ք մեզ, մուսուլմաններիս, հավասար իրավունքներ քրիստոնյաների, հայերի հետ»:

Հայ պատգամավորները ողջունեցին այդ պահանջի բարձրացումը, միաժամանակ ընդգծեցին, որ հայերը ոչ մի մեղք չունեն, եթե մուսուլմանները կայս-

[1] **«Մշակ»**, N 40, 23 փետրվարի 1906թ:
[2] **«Ցառաջ»**, N 33, 25 փետրվարի 1906թ.:
[3] **«Արշալույս»**, N 44, 28 փետրվարի 1906թ.:

ության մեջ մինչև այժմ քրիստոնյաների հետ հավասար իրավունքներ չունեն: Նրանք նաև արդարացի համարեցին մուսուլմանների պահանջը, որ իրենք պետք է հայերի հետ հավասար իրավունքներ ունենան քաղաքային ինքնավարության, փաստաբանության և ուրիշ ասպարեզներում:

Ապա համագումարը քննարկեց վարչակազմի և ոստիկանության վերակազմության անհրաժեշտության հարցը: Ինչպես հայ, այնպես էլ թուրք պատգամավորները գտնում էին, որ հույժ հրատապ ու անհետաձգելի խնդիր է վերանորոգել գործադիր վարչության և ոստիկանության կազմը, դրանք մաքրել օրվա պահանջներին չհամապատասխանող պաշտոնյաներից:

Հաջորդ կարևոր հարցը մոտալուտ քոչի հարցն էր, որը քննարկվեց փետրվարի 26-ին, համաժողովի 5-րդ նիստում:

Խնդիրը հրատապ էր: Ընդամենը մեկ-երկու ամիս հետո հարթավայրերում ապրող թուրք բնակչության մի ստվար մասն իր տնային անասունների հետ հերթական հուժկու վերելքն էր կատարելու դեպի սարերը, ապա ամառվա վերջում կամ աշնան սկզբին նորից վերադառնալու էր ձմեռանոցները: Ե՛վ լեռնային արոտներ բարձրանալիս, և՛ այնտեղից իջնելիս նա անխուսափելիորեն ընդհարվելու էր հայ գյուղացիության այն մասի հետ, որն ընկած էր քոչի ճանապարհին: Սար բարձրանալն ու իջնելը, բնականաբար, մեծ խնդիրներ էր առաջ բերելու հատկապես այն տեղերում (Գանձակի և Երևանի նահանգներ, մասամբ Թիֆլիսի նահանգ), ուր հայերի և թուրքերի հարաբերությունները լարված էին ծայրահեղորեն:

Նույնիսկ խաղաղ տարիներին անպակաս էին եղել հայերի գանգատները թուրք և քուրդ քոչվորների կատարած բռնությունների ու ասպատակությունների առիթով: Հայ գյուղերի մոտով անցնող երկար ճանապարհի վրա հարյուր-հազարավոր անասուններին անհրաժեշտ էր կեր: Եվ քոչվորները, հատկապես գիշերները, իրենց անասուններին ճանապարհներից դուրս բերելով, երբեմն մի քանի կիլոմետր խորանում էին աջ ու ձախ և հայ գյուղացիների խոտհարքներում, մարգագետիններում և արտերում արածեցնում իրենց հոտերն ու նախիրները: Ավելին, եթե հարմար պահ էր ստեղծվում, գողանում էին գյուղացիների անասունները և, միացնելով իրենց հոտերին ու նախիրներին, բարձրացնում քոչատեղերը: Իսկ եթե հաջողվում էր, ճանապարհներին առևանգում էին հայ գեղեցիկ կանանց ու աղջիկների ու իրենց հետ տանում սարերը: Նման դժբախտների վերջը սովորաբար թուրքացումն էր լինում:

Այդ ամենի հետևանքով առաջ էին գալիս անխուսափելի կռիվներ քոչվորների և ճանապարհների շուրջն ընկած հայկական գյուղերի բնակիչների միջև, որի հետևանքով երկու կողմից զոհվում էին մարդիկ:

Ինչպես հայտնի է, Կովկասում ռուսական իշխանության հաստատումից ի վեր, տասնյակ անգամներ հարուցվել էր քոչվորների խնդիրը, բայց սկզբունքորեն հարցը չէր լուծվել:

Դեռևս 1884թ. հունիսի 29-ի օրենքով Անդրկովկասի ամառային արոտա-

տեղիները ճանաչվել էին պետական սեփականություն, և այդ ակտով պետության ձեռքն էին անցել հսկայական հողատարածություններ: Օրինակ՝ Գանձակի նահանգում պետական սեփականություն հանդիսացող արոտատեղիները կազմում էին ավելի քան 424,2 հազար[1], Երևանի նահանգում՝ շուրջ 353,8 հազար դեսյատին[2]:

Կառավարության որոշմամբ պետական ամառային արոտավայրերը կապալավարձով տրվեցին կարիքավոր անասնապահներին, դրանով իսկ խրախուսվեց թափառաշրջիկ անասնապահությունը: Հետևանքն այն եղավ, որ 19-րդ դարի 90-ականներին ամեն տարի Ղարաբաղի ավելի քան 307 հազար դեսյատին կազմող ամառային արոտատեղիներ էին բարձրանում 26 հազարից ավելի ընտանիքներ՝ իրենց ողջ անասնագլխաքանակով: Այդ ընտանիքների շուրջ 75%-ը թուրքեր էին, 14%-ը քրդեր, 10%-ը հայեր, մնացածը՝ թաթար[3]: Դարավերջի տեղեկություններով Գանձակի նահանգի վաչկատունների թիվը կազմում էր ավելի քան 32 հազար, իսկ Երևանի նահանգում՝ ավելի քան 26 հազար ծուխ[4]:

Այդ վիթխարի բազմությունը ամեն տարի դուրս գալով իր ձմեռային բնակատեղիներից՝ անցնում էր երկու-երեք հարյուր վերստ տարածություն՝ Զանգեզուրի արոտավայրերը հասնելու համար: Օրինակ՝ Բաքվի նահանգի Զևաթի գավառի Մուղանլու և Հաջի-Քերիմբեկլու գյուղերից դեպի Զանգեզուրի սարեր եկող վաչկատուն թուրքերը կտրում էին 240-290 վերստ ճանապարհ[5]:

Քոչվորական տնտեսություններին նստակյաց դարձնելու համար իշխանությունները ոչ մի միջոց չէին ձեռնարկում (ճահիճների չորացում, տափաստանների ոռոգում, թափառաշրջիկների ընտելացում հողին, նրանց կենցաղի բարելավում, հետևողական պայքար ջերմի ու տենդի դեմ և այլն):

Այդ վիճակը ինչպես անցած քսան տարում, հայ-թուրքական համաժողովի օրերին էլ մնացել էր նույնը:

Քոչի հարցի առթիվ համագումարում առաջինը ելույթ ունեցավ «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը: Նա նշում էր, որ խնդիրը վերաբերում է ոչ միայն թուրք և քուրդ քոչվորներին, այլև նստակյաց հայ բնակչությանը: Քոչվորները, ասում էր նա, սովորական ճանապարհորդներ չեն, որոնք գործ են ունենում միայն ճանապարհի հետ: Քոչը թափառող ժողովրդի տեղահանություն է իր բոլոր դառը հետևանքներով:

---

[1] **"Обзор Елизавет. губ. за 1895г."**, Тифлис, 1896, стр. 28.

[2] **"Памятная книжка Эриванск. губ. на 1906"**, отд. II, Эривань, 1892, стр. 33.

[3] *Տե՛ս* **Դ. Անանուն**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1870-1900), հատ. երկրորդ, էջ 33:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում, էջ 34:*

Եղել էին դեպքեր, երբ նահանգային և գավառային իշխանությունները, նկատի առնելով քոչի հարուցած վնասները, փորձ են արել արգելելու այն. բայց դա սպասած արդյունքը չի տվել, քանի որ մինչ այդ չէին ստեղծվել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի քոչվորները նստակյաց դառնան: Ուստի սրանք ստիպված նորից ու նորից սարերն են բարձրացել իրենց կենսական կարիքները հոգալու համար: Միակ ելքն այն էր, որ քոչվորը իր ապրուստը կարողանար հոգալ երկրագործական եղանակով:

Անկարելի է քոչը կանգնեցնել միանգամից, կտրուկ կարգադրություններով, ասում էր ելույթ ունեցողը, բայց կարելի է հնարավորին չափ սահմանափակել նրա թողած ավերները:

Քոչի աղետները մեղմելու համար Ա. Քալանթարը ժողովին ներկայացրեց մի քանի առաջարկ. 1. Ձեռնարկել խիստ միջոցներ ճանապարհների թիվը կրճատելու ուղղությամբ, որի հետևանքով կպակասեին այն զրկանքներն ու զոհերը, որ կրում են և՛ քոչվորները, և, առավելապես, նստակյաց գյուղացիները, 2. Անասունների հետ թույլատրել սարերը բարձրանալ միայն անասնապահներին և նրանց ընտանիքներին, արգելքներ ստեղծել, որ քոչվորներին ավելորդ մարդիկ չմիանան, որոնց նպատակը սովորաբար ոչ թե անասուններ պահելն է, այլ ավազակությունը և ավարառությունը, 3. Քոչն առաջ տանել արագ, որքան հնարավոր է կարճ ժամկետում, որի հետևանքով նստակյաց գյուղացիների արտերին ու արոտատեղերին հասցրած վնասը որոշ չափով կմեղմվի, 4. Ճանապարհների որոշ կետերում ստեղծել պահակակետեր՝ կարգը պահպանելու համար, 5. Բարվոքել անասնաբուժական հսկողությունը, 6. Ստեղծել գյուղական պահակախմբեր՝ հարձակումներից և վնասներից գյուղերը պաշտպանելու համար[1]:

Հանդես գալով Ալեքսանդր Քալանթարի հարցադրումների և առաջարկների դեմ Ահմեդ Աղան ասում էր, որ անկարելի է քոչը վերացնել վարչական միջոցներով, այն էլ մի քանի տարիների ընթացքում, որ դրա համար անհրաժեշտ է պատմական էվոլյուցիայի մի ամբողջ դարաշրջան: Մարդկանց տափարակներից դեպի սարերն են քշում կարիքն ու կենսական պահանջը: «Ամառը,- ասում էր նա, - տափարակի վրա թոշնում է ամեն բան, ցամաքում են ջրերը, չորանում է բուսականությունը, մեռնում է կյանքը, ուստի ամեն ինչ, որ կենդանի է, ձգտում է դեպի վեր, դեպի սարերը: Բացի դրանից նրանց սարերն է քշում նաև մալարիան: Տափարակների բնակիչներին ասել՝ որ «մի՛ քոչեք, մընացե՛ք ձեր տեղում, նշանակում է նրանց դիտմամբ դատապարտել մահվան»[2]:

Այսպիսով, ժողովում քոչի խնդրի շուրջ հանդես եկան տրամագծորեն հակառակ երկու կարծիքներ՝ Քալանթարի և Աղաևի, և այդ երկու առանցքների

[1] «Արշալույս», N 43, 26 փետրվարի 1906թ., N 44 , 28 փետրվարի 1906թ., N 45, 1 մարտի 1906թ:

[2] «Մշակ», N 44, 28 փետրվարի 1906թ.:

շուրջ ծավալվեցին բուռն վիճաբանություններ:

Լևոն Սարգսյանն իր ելույթում քննադատեց Աղաևին, որն ասում էր, թե քոչի հիմնական պատճառը տափարակների վատ կլիման է: Բայց տափարակների վրա ապրում են նաև գերմանացիներ, հայեր, ռուսներ, որոնք չեն քոչում, - վկայում էր Սարգսյանը:

Վեքիլովը, դոկտ. Կարաբեկովը, Թոփչիբաշևը, Խասամեդովը և ուրիշ թուրք պատգամավորներ, կրկնելով Աղաևին, պնդում էին, որ թե՛ տնտեսական և թե՛ այլ պատճառներով անհնարին է կանգնեցնել քոչը և առաջարկում էին գործնական միջոցներ ձեռնարկել առաջիկա գարնան քոչի ժամանակ հնարավոր ընդհարումների առաջն առնելու համար:

Կ. Խատիսյանը, Հ. Մելիք-Բեգլարյանը, Տեր-Ավետիքյանը, Մ. Լազարյանը, Ալ. Խատիսյանը և ելույթ ունեցող մյուս հայ պատգամավորները, հաստատելով հանդերձ, որ քոչը անհրաժեշտ պահանջ է թուրքերի համար, միաժամանակ նշում էին, որ իրենք որևէ պատասխանատվություն չեն կարող ստանձնել հաստատելու համար, թե ընդհարումներ չեն լինի: Ուստի, ելնելով դրանից, նրանք առաջարկում էին այդ տարվա գարնանը հետաձգել քոչի բարձրանալը կամ գոնե խիստ սահմանափակել այն:

Նիստին նախագահող գեներալ Մալաման, ամփոփելով քոչի հարցի շուրջ տեղի ունեցած վիճաբանությունները, նշում էր, որ քոչի առջև արգելք չի դրվելու, բայց կառավարության կողմից կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ ընդհարումները բացառելու համար:

Թեև քոչի հարցը համաժողովի մի քանի նիստերի նյութ դարձավ, բայց երկու կողմերից ընտրված հանձնաժողովը չկարողացավ խմբագրել երկուստեք ընդունելի մի բանաձև՝ խոր տարաձայնությունների հետևանքով: Հարցի լուծումը մնաց բաց այն պատճառով, որ թուրք պատգամավորները լուրջ վախ ու կասկածներ էին հայտնում, թե մոտալուտ քոչը կարող է առաջ բերել նոր սոսկալի հետևանքներ:

Ժողովը փետրվարի 27-ին քննարկեց նահանգական և գավառային վարչական հաստատություններին կից երկու ազգերի ներկայացուցիչներից խառնարար մասնաճյուղեր կազմակերպելու, բոլոր պաշտոնյաների վրա դրած ծառայական պարտականությունները անխափան ու պատշաճ կատարելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, տեռորի դեմ պայքարն ուժեղացնելու, ազգայնական հողի վրա կատարած ոճիրների հեղինակներին տուժած կողմերին հանձնելու հարցերը[1]: Հատկապես բուռն վիճաբանությունների տեղիք տվեց տեռորի հարցը, որի քննարկման ժամանակ թուրք պատգամավորները (Աղաև, Հաջիև, Շախմալիև, Խոջաև և ուրիշներ) իշխանությունների առջև բարձրացրին «տեռորների հիմնական հեղինակին»՝ Հ. Յ. դաշնակցությանը օրենքից դուրս հայտարարելու և ջախջախելու պահանջը, որը

[1] «Արշալույս», N 46, 2 մարտի 1906թ.:

հանդիպեց Ալեքսանդր Քալանթարի, Սամսոն Հարությունյանի, Կոստանտին Խատիսյանի և ուրիշ հայ պատգամավորների բուռն զայրույթին ու հակադարձությանը[1]:

Փետրվարի 28-ին տեղի ունեցած 7-րդ նիստը քննության առավ հայ պատգամավորների կողմից բարձրացրած երկու հարց՝ արդարադատության մարմինների ծայրահեղ անբավարար աշխատանքը և Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ կրած մնասների հատուցումը:

Առաջին հարցի քննարկման ժամանակ հայ պատվիրակները խստորեն դատապարտեցին արդարադատության մարմինների անգործությունը և անկարողությունը:

Սամսոն Հարությունյանն իր ելույթում նշում էր, որ չի կարելի հուսալ, թե ցավալի դեպքերն այլևս չեն կրկնվելու, քանի դեռ ազգաբնակչությունը վրտահ չէ, որ կա օրենք ու արդարություն, քանի դեռ նա չի ներշնչվել այն համոզմունքով, որ կարգի ու օրենքի ամեն մի խախտմանը անխուսափելիորեն հետևելու է պատիժը: Համոզիչ փաստերով Ս.Հարությունյանը ապացուցում էր, որ ինչպես վարչական իշխանությունները, նույնպես և դատաստանական մարմինները ցավալի դեպքերի ժամանակ չեն եղել իրենց կոչման բարձրության վրա, դատարաններում չի քննվել որևէ մարդասպանի, կողոպտչի կամ հրդեհածիգի գործ, չի պատժվել ոչ մի հանցագործ: Ուստի նա առաջարկում էր անհապաղ ստեղծել ժամանակավոր միջնորդ դատարաններ՝ դրանց որոշումներին տալով պարտադիր զորություն, ինչպես նաև առաջիկա ժամանակներում ավելացնել քննիչների հաստիքները, մտցնել ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտը, վերակազմել նախնական քննության գործը, ստեղծել դատաստանական ոստիկանություն[2]:

Մ. Լազարյանը բերում էր օրինակներ Գանձակի դեպքերից, երբ քննիչի ու դատախազի աչքի առաջ կատարվում էին հրդեհածգություններ, կողոպուտներ, ջարդեր, բայց հանցագործների ձեռքը բռնող չկար:

Ինչպես միշտ, այս անգամ էլ Թուրք պատգամավորները կանգնեցին ինչպես գործադիր, այնպես էլ դատական իշխանությունների պաշտպանության կողմը:

Զիաթխանովը գտնում էր, որ արդարադատության հասցեին արած հանդիմանությունն անարդար է: Նույնը հաստատում էր Հաջիևը, ասելով. «Արդարադատության մարմինները մեղք չունեն, որ հասարակությունը նրանց չի օգնում քննություններ կատարելիս»: Իսկ Աղաևը «համոզված» էր, որ «իշխանությունները ցավալի դեպքերի ժամանակ արել են այն, ինչ կարողացել են»:

Փոխարքայի դիվանատան տնօրեն Պետերսոնը, համերաշխվելով Թուրք պատգամավորների արտահայտած կարծիքներին և գժտության խնձոր

[1] Ա- Դ0, Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թ.), էջ 410:
[2] «Արշալույս», N 47, 3 մարտի 1906թ.:

գլորելով հայ և Թուրք պատգամավորների միջև, ասում էր, որ ներկա նիստի աշխատանքների միջով կարմիր թելի նման անցնում է մի առանձնահատկություն. հայ պատգամավորներն ամեն անգամ շեշտում են իշխանությունների թերությունները, իսկ մուսուլման պատգամավորները եթե ոչ բոլոր դեպքերում են արդարացնում իշխանություններին, ապա գոնե աշխատում են բացատրել նրանց թերացումների պատճառները[1]:

Հայ պատգամավորների հասցեին Պետերսոնի արած հանդիմանությունն անարդար համարելով՝ Ալ. Խատիսյանը նշում էր, որ հայերը ոչ մի հիմք չունեն գոհ լինելու արդարադատության մարմինների աշխատանքից և գործադիր իշխանությունից, քանզի մի ամբողջ տարի ոչ միայն տուժած քաղաքացիները, այլև մամուլը հականե - հանվանե փաստերով մատնացույց են արել մեղավորներին, բայց վերջիններս ոչ միայն չեն պատժվել, այլև շատ հաճախ պաշտոնի կամ աստիճանի բարձրացում են ունեցել, ստացել են շքանշաններ:

Անդրադառնալով Պետերսոնի այն դատողությանը, թե հայերը շարունակ քննադատում են պետական մարմինների աշխատանքը, իսկ Թուրքերը հակառակն են անում, Ալ. Քալանթարն իր ելույթում ասում էր.

«Մենք՝ պատգամավորներս, սպասում էինք պետության ներկայացուցիչներից, որ մեզ ասեին. «Ասացեք ազատ կերպով ձեր ասելիքը և եղեք անկեղծ ու շիտակ», իսկ մեզ այսօր ուրիշ բան են ասում: Մեզ հրավիրել է փոխարքան, բայց [համաժողովին] նախագահում է նրա օգնականը: Մենք ժողովրդի ներկայացուցիչներ ենք և եկել ենք պարզորեն ասելու ամեն բան, ինչպէս որ մենք հասկանում ենք և թելադրում է մեր խիղճը: Եթէ մենք խոսում ենք պետական օրգանների մասին, այդ այն պատճառով, որ ներկա հայ-Թուրքական կնճռոտ հարցի լուծման մէջ դեր պէտք է կատարեն ոչ միայն հայերը և Թուրքերը, այլև կառավարությունը: Եթէ այդ երեք ֆակտորներից մէկը ցանկանա խանգարել գործին, հարցը չի լուծվի: Մենք պարտավոր ենք խոսել վարչական գործունէության մասին: Եթէ խորհրդակցութեան հայ անդամներս այստեղ մի հայտնելիք միայն ունենք, այն է, թէ քանի որ մենք այստեղ մասնակցում ենք իբրև հայ պատգամավորներ, հավատարիմ կմնանք մեզ և կշարունակենք խօսել այն շիտակութեամբ և անկեղծութեամբ, որ պատվիրում է ժողովրդի կողմից մեզ վրա դրած հանձնարարությունը»[2]:

Փետրվարի 28-ին և մարտի 2-ին համագումարը քննարկեց հայերի արծարծած մյուս խնդիրը՝ ընդհարումների ընթացքում երկու կողմերի կրած մնասների փոխհատուցման հարցը[3]: Այդ հարցի քննարկումը ևս առաջ բերեց ուժգին տարաձայնություններ:

[1] «Մշակ», N 46, 2 մարտի 1906թ.:
[2] Նույն տեղում:
[3] «Ցառաջ», N 37, 2 մարտի, 1906թ., N 39, 4 մարտի 1906թ., «Արշալույս», N 48, 4 մարտի 1906թ., N 49, 5 մարտի 1906թ.:

Սամսոն Հարությունյանը գտնում էր, որ «դատարանով վնասներ պահանջելը զուր է», ուստի գործն առաջ մղելու համար ժողովրդի ընտրյալների մասնակցությամբ պետք է ստեղծել հատուկ կարգ: Անհրաժեշտ է, ասում էր նա, որ պատճառած վնասների համար պատասխանատու լինեն համայնքները, որոնք գիտեն իրենց հանցավորներին և նրանց միջև էլ կբաժանեն փոխհատուցվելիք վնասների չափերը: «Վնասների պահանջը կարևոր է հանուն արդարության, այլապես նոր ջարդեր կլինեն»:

Փոխհատուցման հայերի պահանջը սաստիկ դիմադրության հանդիպեց թուրք պատգամավորների կողմից:

Հանդես գալով՝ Զիաթխանովը հայտնեց թուրք պատգամավորների կտրուկ կարծիքը. «Մենք հակառակ ենք վնասների պահանջին, քանի որ դա անհնարին է ...»:

Ինչպես միշտ, մաղձալից ելույթ է ունենում Ահմեդ Աղաևը, ասելով.

«...Դուք, պարոնայք հայ պատգամավորներ, ասում եք, որ բոլոր այս ցավալի թշնամությունը ծագեց իշխանության ստորին գործակալների կամքով, որոնք կամենում էին, իբր թե, կանգնեցնել ազատագրական շարժումը, և որոնց ձեռքում մուսուլման տգետ ամբոխը գործիքի դեր է խաղում (թեև մենք բոլորովին համաձայն չենք այդ կարծիքի հետ և երբեք չենք եղել գործիք իշխանության ձեռքում): Ինչ իրավունք ունեք, ուրեմն, այժմ պահանջել վնասներ այդ գործիքից, թողնելով մի կողմ այն, թե ո՞վ է, ձեր կարծիքով, ուղղություն տալիս այդ գործիքին: Ապացուցեք, որ մուսուլման ժողովրդի առանձնաշնորհյալ դասակարգերը ղեկավարում էին մասսան, և միայն այդ ժամանակ դուք իրավունք կունենաք նրանցից պահանջել վնասներ, այսինքն՝ կործանել նրանց: Ես արտոնյալ դասակարգերի երկրպագուն չեմ, բայց կարծում եմ, որ առանց իր բեկերի և աղալարների մուսուլման ժողովուրդը կկորչի, որովհետև նրանք հանդիսանում են նրա մտավորականությունը, հոգևոր, մտավոր, բարոյական ղեկավարները: Ահա այդ գիտակից տարրը դուք կամենում եք կորցնել: Բայց այդ բանը մուսուլմանությունը թույլ չի տա»[1]:

Թուրք պատգամավորների եզրակացությունն այն էր, որ ոչ ոք չպետք է պատժվի ընդհարումների համար, ոչ ոքի չպետք է պատասխանատվության կանչել կոտորածների և կողոպուտի համար: Եղած դժբախտություններն արդեն անցել են, իսկ թալանածը ետ պահանջելը կարող է միայն գրգռել մարդկանց և հուզել կրքեր:

Հայ և թուրք պատգամավորների միջև տեղի ունեցած վիճաբանությունները պարզում էին, թե ինչ հայացքներ են տիրում երկու ազգերի ղեկավար շրջաններում այնպիսի խոշոր հարցերում, ինչպիսիք են՝ կոտորածները, ավերներն ու թալանները և դրանց համար պատասխանատվություն կրելը:

Մարտի 2-ի նիստում քննարկվեց նաև հայերի կողմից բարձրացրած մի

[1] **«Մշակ»**, N 46, 2 մարտի 1906թ.:

ուրիշ հարց՝ ապահով տեղերում այն գյուղացիներին հող տալու մասին, որոնք այլևս չեն կարող վերադառնալ իրենց բնակության վայրերը[1]:

Այդ հարցը վերաբերում էր այն գյուղերին, որոնք գտնվում էին բացառիկ դրության մեջ: Հայ պատգամավորներն առաջարկում էին ընդունել մի ընդհանուր որոշում այն մասին, որ յուրաքանչյուր գյուղ վերադառնա իր նախկին տեղը և շարունակի իր տնտեսությունը: Նրանք նշում էին, որ դա հիմնական պահանջն է, բայց կան հայ և թուրք գյուղեր, որոնք բացառիկ դրության մեջ են գտնվում, և որոնց բնակիչները չեն կարող վերադառնալ իրենց նախկին տեղերը: Նրանք պահանջում էին, որ այդ բացառիկ դրության մեջ գտնվող գյուղերին հնարավորություն տրվի հաստատվել ազատ պետական հողերի վրա կամ կառավարության աջակցությամբ հայ և թուրք գյուղերի միջև կատարել հողի փոխանակություն:

Մի քանի բացատրություններ լսելուց հետո ժողովը, առանց վիճաբանությունների, ընդունեց ի գիտություն, որ ցանկալի է գյուղերին իրավունք տալ փոխանակելու հողերը և այդ նպատակով ստեղծել հանձնաժողով՝ խնդիրը մոտիկից ուսումնասիրելու համար:

Ապա նույն նիստում քննարկվեց Գանձակի խնդրանքը՝ թույլատրել կռիվների ժամանակ քաղաքի հայկական և թուրքական ավերված թաղերում կատարել տարածքների փոխանակում: Հայ պատգամավորները նշում էին, որ Գանձակ քաղաքում այլևս անհնարին է, որ հայերը բնակվեն թուրքական, իսկ թուրքերը՝ հայկական թաղերում: Թուրք պատգամավորները վճռականապես դեմ արտահայտվեցին հայերի այդ առաջարկին, հավանաբար այն պատճառով, որ հայկական քաղաքամասում անհամեմատ ավելի շատ թուրքեր էին ապրում, քան թուրքական քաղաքամասում հայեր: Ի վերջո համաժողովը եկավ այն եզրակացության, որ բարձրացված հարցը մասնավոր բնույթ ունի, և դրա վճիռը պետք է թողնել Գանձակի դումային:

Մարտի 3-ին համաժողովը քննարկեց հաղորդակցության ճանապարհների կազմակերպման հարցը, որ քննարկման էին ներկայացրել հայ պատգամավորները[2]:

Հայերն առաջարկում էին ճանապարհների վրա դնել պահականոցներ՝ պահակներ նշանակելով միայն ռուսներից: Թուրք պատգամավորները դարձյալ հայերին էին մեղադրում ճանապարհների վրա կատարվող սպանությունների և թալանի համար, իսկ հայ պատգամավորները հակառակն էին ապացուցում: Ի վերջո նախագահող Մալաման եզրափակելով վիճաբանությունները՝ ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող հետևյալ խորհուրդը տվեց. «Ցանկալի է, որ վարչությունը ուժեղացնի հաղորդակցության ճանապարհների պահպանությունը, իսկ բնակչությունը դադարեցնի ուղևորների խուզարկությունը»:

[1] **«Արշալույս»**, N 49, 5 մարտի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 50, 7 մարտի 1906թ., **«Ցառալ»**, N 40, 5 մարտի 1906թ.:

Մարտի 3-ին ժողովը քննարկեց նաև զինաթափության հարցը, որն օրակարգի մեջ էին մտցրել Թուրք պատգամավորները[1]:

Թուրքերը չէին ժխտում, որ իրենց ցեղակիցները լավ են զինված, բայց միայն՝ գավառներում, իսկ քաղաքներում, ասում էին Նրանք, հայերի զենքերը մի քանի անգամ գերազանցում են Թուրքերի զենքերի քանակը: Ելնելով իրենց իսկ առաջադրած տեսակետից՝ Նրանք առաջարկում էին զինաթափում իրականացնել քաղաքներում, իսկ զենք կրող գյուղացիներին ձեռք չտալ:

Իր ելույթում Զիաթխանովն ասում էր. «... Կյանքն ինքն է ստիպում մուսուլմաններին զենք կրել. Թուրքերի մեծ մասը խաշնարած է, և հովիվն իր երկու օգնականներով չի կարող դաշտում, սարում առանց զենքի մնալ: Մենք իրավունք չունենք այդպիսիներից զենք խլելու: Մի տարբերություն պետք է լինի հայերի և Թուրքերի միջև զենքի տեսակետից. հայերը զինված են քաղաքներում, իսկ մուսուլմանները՝ դաշտերում: Քաղաքում զենքը ոչ ոքի պետք չէ, պետք է այնտեղ զինաթափ անել, բայց հովվին, խաշնարածին, որ պետք է կովի և՛ ավազակների, և՛ վայրի գազանների հետ, զենքը հարկավոր է: Եթե հայերն էլ պարապում են խաշնարածությամբ, նրանց ևս հարկավոր է զենք: Այժմ մուսուլմանները կատարելագործված զենք ունեն փոքր քանակությամբ, բայց եթե ընդհարումները շարունակվեն, նրանք շատ կունենան: Ներկայումս մուսուլմանի համար ամենաթանկ բանը զենքն է: Զինաթափման ժամանակ իշխանությունները պետք է շատ ուշադիր լինեն, որ չզինաթափեն նրանց, որոնց պետք չէ զինաթափ անել»[2]:

Հայ պատգամավորները զինաթափմանը դեմ արտահայտվեցին մի շարք պատճառաբանություններով:

Նրանք շեշտում էին, որ առանց այն էլ 1906թ. սկզբներից իշխանությունները լայն կամպանիա են սկսել հայերին զինաթափելու համար: Պատճառը պարզ էր՝ ընդհարումների ընթացքում ամենուրեք հայերի հաղողությունները: Հայերի զինաթափմանը՝ իշխանություններին մշտապես դրդում էին Թուրքերի պարագլուխները, քանի որ սրանք տագնապած էին, որ ապրիլին, երբ քոչը սկսի բարձրանալ սարերը, դեմ կառնի հայ զինված խմբերի արգելքին: Թուրքերի թելադրանքով հայերին զինաթափելու փորձերն ուղեկցվում էին դաժան բռնություններով: Պատգամավորները բերում էին օրինակներ, թե ինչպիսի դաժանություններ են թույլ տալիս գեներալ Գոլոշչապովը, որը գլխավորում է հայերի զինաթափման գործը Շուշիի շրջանում, գնդապետ Լևիցկին, որը գործում է Լոռվա կողմերում և այլն:

Ալ. Խատիսյանը գտնում էր, որ զինաթափման գործադրությունն այն հետևանքը կունենա, որ խաղաղ մարդկանցից կխլեն զենքը և կթողնեն անպաշտպան, իսկ սար ու ձոր չափչփող ավազակները կմնան զինված: Նա նշում

[1] «Ցառաջ», N 40, 5 մարտի 1906թ.:
[2] Նույն տեղում:

էր, որ ոչ ոք զենք կրելու ցանկություն չունի, բայց քանի դեռ խաղաղություն չի հաստատվել, զինաթափում լինել չի կարող:

Իր ելույթում Մեհրաբյանը անկուրջ համարեց Զիաթխանովի և մյուս Թուրք պատգամավորների տեսակետը, թե Թուրք տավարածների ու խաշնարածների զենքերը չպետք է խլել: Ընդհակառակը, ասում էր նա, հենց պետք է զինաթափ անել բնակչության անհանգիստ տարրերին, բայց ոչ խաղաղ երկրագործներին: Իսկ այդ անհանգիստ տարրերը Թուրք բեկերի ու աղալարների ավազակային խմբերն են, որոնց շարքերում կան նաև տավարածներ ու խաշնարածներ:

Հայ պատգամավորները պահանջեցին ընդհանրապես քննարկումից հանել հարցը, որին վճռականապես առարկում էին Թուրքերը:

Նախագահող գեներալ Մալաման դադարեցնելով հարցի քննարկումը՝ հայտարարեց, որ համընդհանուր զինաթափման հարց դնելը վաղաժամ է:

Մարտի 4-ին տեղի ունեցավ հայ-Թուրքական ժողովի վերջին նիստը՝ գեներալ Մալամայի նախագահությամբ:

Բացելով նիստը՝ նախագահողը Ն. Պետերսոնին առաջարկեց կարդալ համագումարի ընդունած բոլոր որոշումների կամ, ինչպես ասված էր պաշտոնական արձանագրության մեջ, հայ-Թուրքական թշնամությունը դադարեցնելուն միտված «իղձերը»[1]: Այո՛, իղձեր, այլ ոչ թե որոշումներ, որոնք պարտադիր լինեին և անառարկելիորեն կատարվեին թե՛ հայերի և թե՛ Թուրքերի կողմից:

Մենք այստեղ չենք վերարտադրի «իղձերի» բովանդակությունը, քանի որ դա կլիներ նախորդ էջերում շարադրվածի հակիրճ կրկնությունը, ինչպես նաև նկատի առնելով այն, որ ժողովից հետո «իղձերը» մնացին իբրև մեռած տառ և գործնական որևէ ազդեցություն չունեցան հայ-Թուրքական ընդհարումների ընթացքի վրա:

Նախագահող Մալաման նիստի վերջում շնորհակալություն հայտնեց պատգամավորներին «արդյունավետ աշխատանքի համար», միաժամանակ նրանց տեղեկացրեց, թե փոխարքա Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովը, որ անձամբ բացել էր ժողովը, անձամբ էլ ցանկություն է հայտնել փակել այն, ուստի և պատգամավորներին խնդրանք է ուղարկել վերջին անգամ նիստի հավաքվել երկու օր հետո՝ երկուշաբթի օրը:

Հայ-Թուրքական համագումարի փակումը տեղի ունեցավ մարտի 6-ին փոխարքայի պալատի Սպիտակ դահլիճում նախագահությամբ կոմս Վորոնցով-Դաշկովի:

Փոխարքան արտասանեց մի հակիրճ ճառ, որից ընթերցողների համար կարող է հետաքրքրություն ներկայացնել զինաթափության մասին նրա հետևյալ խոսքերը. «Այժմ ես կկամենայի կանգ առնել մի կետի վրա: ... Ես

[1] «Մշակ», N 50, 7 մարտի 1906թ.:

կարծում եմ, որ գրչի մի հարվածով չի կարելի ստիպել ժողովրդին հանձնել զենքը, որ նա կրել է հազարավոր տարիների ընթացքում: Զենքը շատերը պահում են ինքնապաշտպանության համար, իսկ զենք կրելը առաջ է եկել անհրաժեշտությունից: Բայց ես կհամաձայնեի ընդհանուր զինաթափության օգտին, եթե հավատացած լինեի, թե իրողապես հնարավոր է ի կատար ածել այդ միջոցը: Սակայն ես համոզված եմ, որ միայն խաղաղ մարդիկ կհանձնեն զենքը, իսկ նրանք, որոնք պահում են զենքը հանցավոր նպատակների համար, կթաքցնեն: Այդ պատճառով ես չեմ ընդունում ընդհանուր զինաթափության հարցը, բայց ես պնդում եմ զենքը բոլոր զինավորված կազմակերպությունների, հասարակությունների և զենքը ի չարը գործ դնող մասնավոր անձանց ձեռքից խլելու անհրաժեշտության վրա: Կարծում եմ, որ կհասնի այն օրը, երբ կովկասյան ազգերը ևս կհանեն իրենց վրայից զենքը, իբրև ավելորդ բեռ: Այդ ժամանակ կհասնի այն օրը, երբ իսկական քաղաքակրթությունը, հիմնված սիրո վրա առ մերձավորը և հարգանքի վրա առ օրենքը, կթափանցի Կովկասի բոլոր տեղերը և կդառնա ամենքի, մեծի և փոքրի ժառանգություն»[1]:

Փոխարքայի ճառի այս հատվածն իսկ ակնհայտորեն ցույց է տալիս, որ կառավարությունն ի վիճակի չէր կամ ցանկություն չուներ իրականացնելու զինաթափում: Իսկ դա նշանակում էր, որ թե՛ հայերը և թե՛ թուրքերը շարունակելու էին զինվել, հետևապես դեռ վաղ էր մտածել զենքերը վայր դնելու մասին: Հաշտության պատրանքը, որ ստեղծվել էր հայ-թուրքական «համագումարում», շուտով ցրվելու էր վաղորդյան մշուշի պես:

Եվ դա բնական էր, քանզի խորհրդակցական կարգավիճակով գումարված մի ներկայացուցչական ժողովի ուժերից վեր էր հասնել գործնական արդյունքների:

Հայ-թուրքական ժողովի աշխատանքներն ու արդյունքները լայն արձագանք գտան հայկական հասարակության տարբեր շերտերում, զանազան քաղաքական ուղղությունների թերթերի էջերում:

Գորիսից «Մշակին» գրում էին.

«Զանգեզուրի հայը լսելով հայ-թուրքական համագումարի մասին և նրա նպատակը, ի սրտե հոգոց է հանում ու ասում՝ երանի էն օրին, երբ հայերի և թուրքերի միջև վստահորեն երթևեկություն կը սկսվի: Մերունի գյուղացիք օրհնում են ժողովի ներկայացուցիչներին, ասելով. «Որքա՜ն բարի և ազնիվ է նրանց արածը: Մտնելով մեր նեղ դրության, մեր անտանելի կյանքի մեջ՝ նրանք մարդասիրական զգացումով ձգտում են մեր ցավին դեղ գտնել»:

Հայը, իրաք, հասկացել, զգվել և ատում է թուրք-հայկական արյունահեղության անիմաստ և աննպատակ լինելը: Իսկ ի՞նչ են մտածում թուրքերը: Նրանք մտածում են առաջվա նման և ծրագրում են գարունը բացվելուն պես ապրիլ ամսից վերսկսել հարձակումները»[1]:

Մի քանի օր անց «Մշակը» տպագրել էր նույն քաղաքից ստացված մի ուրիշ թղթակցություն, ուր ասված էր. «Նորից երևացել են կայծեր, որոնցից կբռնկվեն ամբողջ հրդեհներ: Իսկ երբ բանը կհասնի ընդարձակ ընդհարումների, այն ժամանակ այլևս անկարելի կլինի զսպել մասսաները, և նորից դժոխային արհավիրքները կը լափեն ու կ'ողողեն իրենց կոհակներով ամեն ինչ, պատճառելով անդարմանելի ավերներ ու անվերջ կործանումներ»[2]:

Հայկական մամուլի տարբեր ուղղությունների օրգանների համար համենայն դեպս մի բան ակնհայտ էր. համաժողովի մասնակից երկու կողմերն էլ տուն են վերադարձել համոզված, որ քննարկված հարցերի լուծումը պահանջում է երկար տարիների համառ ջանքեր, այսինքն՝ հարցեր, որոնք իրական չեն, այլ կապված են հեռավոր բաղձանքների ու խոհերի հետ, եթերային ու պատրանքային են: Հենց որ հերթը գա օրվա կամ վաղվա կոնկրետ, կարևոր և իրենց հետևանքներով ծանր խնդիրներին, հակառակ բանակներն անմիջապես բաժանվելով՝ մտնելու են իրենց դիրքերի մեջ:

Համաժողովում քննարկված մյուս հարցերով հասարակությունն առանձնապես չէր հետաքրքրվում, քանի որ դրանց լուծումը կողմերի ձեռքին չէր, այն երկար ժամանակի գործ էր, և դրանք իրագործելու համար անհրաժեշտ էին բազմաթիվ պայմաններ՝ ամենից առաջ երկրի հանգստություն, կյանքի կանոնավոր դրություն, մի բան, որ չկար և ոչ էլ երևում էր մոտիկ ապագայի հեռանկարում:

Հայ-թուրքական համագումարն իր հետևից միայն մի «հետք» թողեց. դա այնտեղ ընտրված չարաբաստիկ «խաղաղարար» մասնաժողովն էր, որը որոշ ժամանակ, շաբաթը մեկ անգամ, նույն պալատում նիստեր էր ունենում և «քննարկում» նույն հարցերը: Մասնաժողովի անդամները եռանդով շարունակում էին ճառել: Բառերի և դատարկ հնչյունների արդյունքն այն էր լինում, որ ընդունվում էին «որոշումներ» ու «գրավոր կարծիքներ», որոնք պարբերաբար ներկայացվում էին փոխարքային: Բայց այդ «փաստաթղթերը» մնացին իբրև մեռած տառ, քանի որ իշխանությունները դրանց ոչ մի նշանակություն չէին տալիս[3]:

Հայ-թուրքական ժողովին անդրադարձան ռուսական մամուլի որոշ օրգաններ, որոնք գերազանցապես հանդես եկան քննադատական խորհրդածություններով: Ժողովի բացման առաջին իսկ օրից մինչև նրա փակվելը կանոնավոր հաղորդումներ էր տալիս միայն Մաքսիմ Կովալևսկու "Страна" թերթը: Մայրաքաղաքի թերթերի մեծ մասն ընդհանրապես ոչ մի խոսք չգրեց:

Ժողովի փակման կապակցությամբ Կովալևսկու թերթը 1906թ. N 10-ում

---

[1] **«Մշակ»**, *N 51, 8 մարտի 1906թ.:*

[1] **«Մշակ»**, *N 55, 12 մարտի 1906թ.:*

[2] *Նույն տեղում, N 63, 23 մարտի 1906թ.:*

[3] **«Ալիք»** *(Թիֆլիս), N 21, 23 մայիսի 1906թ.:*

գրում էր. «Վերլուծելով այն հարցերը, որոնք քննարկվելու են համագումարում, ինչպես նաև փոխարքայի եզրափակիչ ճառի համառոտ բովանդակությունը, մենք չենք կարծում, թե առաջիկայում կխաղաղվի Կովկասը, և երկրամասը կկանգնի կանոնավոր կուլտուրական զարգացման ճանապարհին»:

Ապա խոսելով այն մասին, որ երկիրը խաղաղեցնելու համար բարի իղձերը բավական չեն՝ թերթը այն կարծիքն էր հայտնում, թե Կովկասի կանոնավոր զարգացման համար հարկավոր է տեղական լայն ինքնավարություն: «Երկրի բարեկեցության համար... անհրաժեշտ է մշակել տեղական օրենքներ՝ հարմարեցված տեղի պայմաններին, որպեսզի ամեն մի ազգություն, ամեն մի ցեղ, ամեն մի անձնավորություն զարգանա հօգուտ ամբողջ ռուսաց պետության, ամբողջ ռուսական քաղաքակրթության: Ո՛չ բարքերը, ո՛չ ավանդույթները, ո՛չ լեզուն, ո՛չ գրականությունը չպետք է ենթարկվեն նախատինքի կամ ոչնչացման, այլ պահպանվեն և զարգանան առաջադիմության բնական օրենքների համաձայն»:

1906թ. փետրվարի վերջերից Պետերբուրգում Միլյուկովի և Հեսենի խմբագրությամբ սկսել էր լույս տեսնել "Речь" թերթը, որը 1906թ. N8-ում տպագրել էր ռուս գրող Կ. Պոնոմարյովի հոդվածը, որտեղ հեղինակը խիստ բացասական կարծիք էր հայտնել ժողովի ընթացքի ու արդյունքների մասին:

«Եթե հայ-թուրքական համաժողովը ներկայանար որպես երկու ազգությունների ազգաբնակչության իսկական ներկայացուցիչ, այն ժամանակ նա ամբողջ ձայնով պետք է ասեր. «Բավական է այդքան արյուն և արտասուք, բավական են վայրենացումն ու ավերումները, բավական է ժողովրդի ազատության և բախտավորության թշնամիների ձեռքով սարքած այդ զարհուրելի խաղը»: Բայց կարո՞ղ է արդյոք Թիֆլիսի համաժողովը համարվել Բաքվի, Թիֆլիսի, Երևանի և Գանձակի նահանգների հայ և թուրք բնակչության ցանկությունների և ձգտումների իսկական արտահայտիչը»:

Իր տված հարցին հոդվածագիրը բացասական պատասխան էր տալիս:

Հայ հասարակությունը միշտ երախտագիտական զգացումներ է տածել տարբեր երկրների իր բարեկամների, տվյալ դեպքում նաև՝ նշված հոդվածի հեղինակի նկատմամբ:

Սակայն ուրիշ տեղերից եկած խորհուրդները չէին, որ հայերին և նրանց քաղաքական կազմակերպություններին պետք է ճիշտ ուղի ցույց տային, թե ինչպես դուրս գալ ամբողջ մի տարի տևող արյունաներծ գեհենից, իմանային, թե ովքեր են ոճիրների մեղավորները: Հայերը լավ գիտեին, որ արյունահեղությունը կարելի է դադարեցնել միայն այն դեպքում, եթե կռվող երկու ժողովուրդները և նրանց ղեկավար ուժերն իրենք դրսևորեն անհրաժեշտ խելամտություն ու կամք՝ բռնելու հաշտության ուղին:

Դաշնակցության «Ալիքը» գրում էր, որ հայ ժողովուրդը պատմության մեջ երբեք առաջինը զենքի չի դիմել և այժմյան արհավիրքի պատճառը նույնպես ինքը չէ, այլ կայսրության չար ուժերն են, մուսուլմանական հետադիմությունն ու կրոնական մոլեռանդությունը:

«Թող թուրք ժողովուրդը մի անգամ ևս յիշե, - նշում էր թերթը, - որ հայը երբեք ցանկություն չէ ունեցել ընդհարվելու իր դարավոր հարևանի հետ. որ նա երբեք իր չութն ու արորը թողած զենքի չէր դիմի, եթե իր կյանքը, գույքը և պատիվը ազատ թողնեին խուլիգանական արշավանքներից, զոհ չդարձնեին դաժան ու բարբարոս հարվածների: Թող նա հավատա, որ այսուհետև էլ հայի ձեռքը երբեք չի բարձրանա հարևանի արյունը հոսեցնելու, եթե վերջինիս կողմից անկեղծ ցանկություն լինի հաշտ ու համերաշխ ապրելու, եթե թուրք մասսան նորից ու նորից գործիք չը դառնա իր բեգերի, աղալարների ու խաների մութ ինտրիգներին ու բարբարոս կառավարության արյունոտ պրովոկացիային: Թող թուրք և հայ աշխատավոր մասսաները լայն բաց անեն աչքերը իրենց չարն ու բարին տեսնելու, իրենց իսկական բարեկամներին ու թշնամիներին ճանաչելու համար»[1]:

«Ալիքը» հիշեցնում էր, որ դառն է թե՛ հայի և թե՛ թուրքի ճակատագիրը, մեկ է նրանց վզին ծանրացած հարստահարության ու բռնության լուծը, ուստի նրանք պետք է ընթանան նույն ուղիով և համատեղ ջանքերով կանգնեցնեն աղետը: Միայն միասնաբար կարելի է կռել ու կոփել իսկական հաշտությունը. դա՛ է փրկարար միջոցը, դա՛ է համերաշխության հիմքը:

«Ալիքն» իր խորհրդածություններն ավարտում էր հետևյալ եզրահանգումով.

«Վերևում կատարվող բանակցությունները միշտ կեղծ ու խաբուսիկ կլինեն, բեգական-բուրժուական հաշտությունն ու խաղաղությունը՝ միշտ անհիմն ու երերուն: Միայն բուն ժողովուրդը կարող է իսկական հաշտություն հաստատել իր գիտակից վերաբերմունքով, և նրան է, որ նորից ու նորից ուղղում ենք մեր խոսքը:

Եվ եթե այդ խոսքը նախապաշարմունքի ու թերահավատության քողերը պատռելով՝ հասնի մեր թուրք հարևանների ականջին, եթե նա կարողանա գեթ փոքր չափով զարկ տալ նրանց գիտակցությանը, մենք մեր նպատակին հասած կլինենք»[2]:

ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ ՀԱՄԱՃՆԴՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Հայ-թուրքական համագումարի ավարտից հետո մամուլը լայնորեն լուսաբանում էր դրա արդյունքները, վերլուծում այնտեղ բարձրացված հարցերի քննարկումները, հանդես գալիս տարբեր առաջարկներով:

[1] «Ալիք» (Թիֆլիս), N 5, 3 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում:

Շարունակական քննարկման արժանացած հարցերի թվում հատկապես առանձնանում էր դրանցից մեկը՝ երկու կռվող ազգերին միմյանցից բաժանելու և սահմանազատելու հարցը:

Այդ հարցը առաջացել էր Թուրք-Հայկական ընդհարումների թեժ պահին և ինչպես Հայ-Թուրքական համագումարի նախօրյակին, այնպես էլ հատկապես համագումարի ընթացքում շարունակվում էր պարբերաբար արծարծվել հայկական մամուլում:

Թերթերը («Դրոշակ», «Մշակ», «Ցառաջ» և այլն) գրում էին, թե կառավարության թնդանոթները գուցե կարողանան զսպել կռվող կողմերին, բայց դա կլինի ժամանակավոր խաղաղություն՝ մինչև մի նոր Գոլիցինի կամ Նակաշիձեի Երևան գալը:

Երկիրը խաղաղեցնելու ուրիշ միջոցներ չտեսնելով՝ հայ մտավորականների մի մասն այն կարծիքին էր, որ հայերին պետք է անջատել թուրքերից և առաջին հերթին հեռացնել այն տեղերից, որտեղ նրանք գտնվում են վտանգավոր կացության մեջ՝ շրջապատված բազմաթիվ թուրք գյուղերով: Նույնն առաջարկում էին թուրքերի համար, որոնց դրությունը վտանգավոր էր հայ գյուղերի շրջապատում:

Հայ մտավորականների և քաղաքական գործիչների ընդհանուր տեսակետն այն էր, որ հայությանը պետք է կենտրոնացնել Երևանյան նահանգում, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում:

Երևանից Հ. Մարկոսյան ստորագրությամբ «Մշակին» էր ուղարկվել հոդված, որը տպագրվել էր թերթի 1906-ի N43-ում: «Հայերի բաժանման և համախմբման հարցը» վերնագրով այդ հոդվածում ասված էր, որ եթե «Հայ-Թուրքական համագումարը չգտնի ավելի արմատական լուծումներ հաշտեցնելու միմյանց թշնամի դարձած երկու ազգերին, ավելի նպատակահարմար է նրանց բաժանել»[1]:

Բերելով վիճակագրական տվյալներ 1897թ. մեկօրյա մարդահամարից՝ հոդվածագիրը նշում էր, որ շուրջ 10 տարի առաջ Անդրկովկասում կար 1,1 միլիոն հայ, ըստ որում, Երևանյան նահանգի 7 գավառներում ապրում էր ավելի քան 440 հազար հայ: Բացի այդ, արևելքից, հյուսիսից և արևմուտքից Երևանի նահանգին կպած են 8 հայաշատ գավառներ: Հայ բնակչության թիվն այդ գավառներում 1897թ. հետո ավելացել է և, ըստ "Кавказский календарь"-ի 1905թ. տվյալների, կազմում է Զանգեզուրի գավառում 63 246, Շուշիի՝ 74 213, Գանձակի՝ 43 113, Ղազախի՝ 44 050, Բորչալուի՝ 45 347, Ախալքալաքի՝ 54 771, Կարսի՝ 46 242, Կաղզվանի գավառում 21 678 հայ[2]: Այնպես որ, միմյանց հետ կապված այդ 15 գավառները (7+8), ունենալով 832994 հայ բնակիչ, կազմում էին ամբողջ ռուսական կայսրության ամենահայաշատ երկիրը՝ միակ հայկական աշխարհը: Այլ խոսքով, գրում էր հոդվածագիրը, մխիթարական է, որ «Անդրկովկասի ամբողջ հայությեան 3/4 -ը գտնվում է իր մայրենի երկրում, ամուր կպած նրա հողին, որը և մենք պարծանքով ցույց ենք տալիս այն բոլոր այլազգիներին, որոնք ուզում են մեզ համեմատել հայրենազուրկ հրէաների հետ...»[1]:

Նշված 15 գավառների վրա չէր տարածվում հայերի տեղափոխության գաղափարը: Թեև դրանց մի մասում հայերը մեծամասնություն չէին կազմում, բայց նաև այնպիսի փոքրամասնություն չէին, որպեսզի չկարողանային դիմադրել թուրքերի ճնշմանը:

Ահա այս 15 գավառներից դուրս Անդրկովկասում գտնվում էին 10 գավառներ, որոնցում թեև կային զգալի թվով հայեր, բայց, համեմատական կարգով մեծապես զիջելով թուրքերին, գտնվում էին մշտական վտանգի տակ: Դրանք էին՝ Թիֆլիսի նահանգի Թիֆլիս գավառը, Ախալցխայի և Գորիի գավառները, Բաքվի նահանգի Բաքվի, Գեոկչայի և Շամախու գավառները, Գանձակի նահանգի Արեշի, Ջիբրայիլի, Ջիվանշիրի, Նուխիի գավառները:

Միանգամայն պարզ էր, որ, օրինակ, Նուխի գավառի 2 հազար հայերն ընդհարումների ժամանակ չէին կարող դիմանալ նույն գավառի 92 հազար թուրքերին: Նույն կերպ Արեշի գավառի 14 հազար հայերն անզոր էին 54 000 թուրքերի դեմ հանդիման:

Այս վերջին 10 գավառներից հետո գալիս էին անդրկովկասյան մյուս գավառները, ուր հայերը բեկորների պես ցրված էին մուսուլմանական ծովում (Բաքվի նահանգի մյուս գավառներում, Դաղստանի և Վրաստանի բոլոր անկյուններում):

Այսպիսով, գրում էր հոդվածագիրը, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հայերը խիտ զանգվածներով բնակվում են իրենց բնիկ երկրում Երևանյան նահանգում ու դրա շրջակայքում, իսկ որքան հեռանում են այդտեղից, այնքան նոսրանում են, դառնում սակավաթիվ, հետևապես՝ դառնում վտանգված ու խոցելի:

Թուրք-հայկական անթիվ ընդհարումները կրկին եկան հաստատելու, որ հայը պաշտպանված կարող է լինել միայն այն վայրերում, ուր ապրում է մեծաքանակ զանգվածներով և ամուր կապված է իր պատմական հայրենիքի հետ:

Իսկ ինչպե՞ս իրականացնել հայերի տեղափոխման գաղափարը: Տեղափոխման կողմնակիցները կոնկրետ առաջարկներ էին անում:

Նախ, նրանք գտնում էին, որ նշված 10 գավառների թուրքաշատ տեղերի ավերված հայ գյուղերը չպետք է նորոգել ու վերականգնել, ավելին, հայկական այն գյուղերը, որոնք անհուսալի վտանգավոր դրության մեջ են, պետք է դատարկել և դրանց բոլոր բնակիչներին փոխադրել մոտակա հայաշատ ապահով շրջաններ, կամ ավելի լավ է՝ Երևանյան նահանգ, ու այնտեղ հարմար

[1] **«Մշակ»**, *N 43, 26 փետրվարի 1906թ.:*
[2] **"Кавказский календарь на 1905 год"**, III отд., стр. 49.

[1] **«Մշակ»**, *N 43, 26 փետրվարի 1906թ.:*

վայրերում հիմնել նոր գյուղեր:

Այսպիսով, կստեղծվեր միատարր հայություն ունեցող մի երկիր:

Հայերի տեղափոխությունը Երևանյան նահանգ հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե կարելի լիներ հողերի փոխանակություն կատարել թուրքերի հետ: Այսինքն՝ գաղթել ցանկացող հայերն իրենց հողերը կտային Երևանյան նահանգից հակառակ ուղղությամբ գաղթող թուրքերին և փոխարենը կստանային նրանց հողերը:

Սակայն Անդրկովկասի հայ և թուրք ազգաբնակչության փոխանակման և հայերին Երևանյան նահանգում համախմբելու կողմնակիցները հանդիպում էին հայ մտավորականության և քաղաքական գործիչների մյուս մասի լուրջ ընդդիմությանը: Ընդդիմադիրների թվում հատկապես շատ ակտիվ էր Ա-ԴՕ-ն, որը փոխանակման և հայերին Երևանյան նահանգում կենտրոնացնելու գաղափարի դեմ մի շարք հոդվածներ տպագրեց Թիֆլիսի հայ լրագրերում: Նա և իր համախոհները վճռականորեն իրենց տեսակետները հիմնավորելու համար առաջ էին քաշում ոչ պակաս լուրջ փաստարկներ:

Նրանց առաջին փաստարկն այն էր, որ գործնականում անհնար է մարդկանց և հատկապես ավանդապաշտ հայերին ստիպել թողնել իրենց ծննդավայրը և հեռանալ ուրիշ վայրեր: Այդպիսի մի վիթխարի ծրագրի իրականացումը գուցե հնարավոր լիներ գլուխ բերել, եթե և՛ հայերը, և՛ կովկասյան թուրքերը ունենային իրենց պետությունը, որոնց կառավարությունները համաձայն լինեին և պատրաստակամություն հանդես բերեին ծրագրի իրականացմանը տրամադրելու պահանջվող հսկա միջոցները:

Փոխանակման կողմնակիցները այս փաստարկին հակադրում էին այն ակնհայտ իրողությունը, որ կովկասյան ժողովուրդներից ոչ մեկն այնպես հակված չէ իր ծննդավայրից հեռանալու, ինչպես հայերը: Եթե հնարավոր է հեշտությամբ հայրենիքը թողնել և երկիրը հանձնել թուրքերին, ինչպես հայերը դա անում են շատ տեղերում, ապա ինչու անհնարին է նրանց օտար տեղերից հայրենիք բերելը:

Ազգաբնակչության փոխանակման կողմնակիցներն իրենց տեսակետի օգտին վկայակոչում էին նաև ուրիշ օրինակներ. ա) Տաճկահայաստանից փախած հազարավոր գաղթականներին, որոնք Սև ծովի ափերին հողեր են ստացել և հիմնավորվել, բ) Ռուսաստանից հազարավոր կիլոմետրեր ճանապարհ կտրած և Անդրկովկասում հաստատված ռուս գաղթականներին, որոնք լավագույն հողերի վրա հիմնել են իրենց գյուղերը:

Փոխանակման գաղափարի հակառակորդները գտնում էին, որ կառավարությանը բնավ ձեռնտու չէ մի վայրում ուժեղացնել որևէ էթնիկական տարր, տվյալ դեպքում հայերին՝ Երևանյան նահանգում, ուստի նա երբեք ընդառաջ չի գնա այդ առաջարկին:

Պատասխանելով այդ ընդդիմախոսությանը՝ փոխանակման կողմնակիցները գտնում էին, որ այդ նպատակի իրականացումը, ճիշտ է, շատ դժվար է,

բայց պետք է մոբիլիզացնել հայ մտավորականների և քաղաքական գործիչների բոլոր հնարավորությունները՝ իշխանություններին համոզելու համար, ապացուցելու, որ հայ քրիստոնյա զանգվածներով՝ Թուրքիայի և Պարսկաստանի հարևանությամբ գոյություն ունեցող Երևանյան նահանգի ամրապնդումը ոչ միայն հայությանն է ձեռնտու, այլև Ռուսաստանին:

Վերջապես, ազգաբնակչության բաժանումը սխալ, անցանկալի և անկարելի համարող գործիչները վկայակոչում էին իրենց հիմնական և կարծես թե անառարկելի թվացող փաստարկը՝ հայ ժողովուրդը բնածին կարողություններով օժտված, տոկուն, աշխատասեր, ձեռներեց հավաքականություն է, որի չնորհիվ դրսևորման համար լայնարձակ, բարերար և բնական մեծ հարստություններ ունեցող Կովկասը տալիս է բոլոր հնարավորությունները: Դա է պատճառը, ասում էին նրանք, որ պատմական կարճ ժամանակահատվածում ընդամենը 20-25 տարում հայերը այս երկրում դուրս եկան առաջին տեղը վաճառականության և արտահանության (բամբակի, մետաքսի, օղու, գինու, բրդի, մորթեղենի) բնագավառներում: Հայ կապիտալը ամուր արմատներ է նետել Բաքվի նավթահանման և նավթաթորման, Թիֆլիսի, Բաթումի, Գետաբեկի և այլ վայրերի արդյունաբերության մեջ: Հայերը ձեռք են բերել ընդարձակ կալվածքներ Աղդամի, Բորչալուի, Դերբենտի կողմերում, Մուղանում և այլուր: Եվ ահա, այդ հարստությունները թողնել, գալ, հավաքվել ու կուչ գալ Անդրկովկասի մի նահանգում, նշանակում է խեղդել հայության բնածին ընդունակությունները, նրան զրկել երկրամասի արդյունաբերական ու արտահանման ասպարեզներից, կանգնեցնել նրա տնտեսական և կուլտուրական զարգացման ընթացքը: Հետևապես, նշում էին նրանք, ոչ միայն ազգաբնակչության որևէ տեղափոխություն չպիտի լինի, ոչ միայն չպետք է կուչ գալ ու սեղմվել, այլ որքան հնարավոր է պետք է ավելի լայն ասպարեզներ բանալ, առաջ գնալ, ընդարձակվել, որովհետև այդ են պահանջում հայ ժողովրդի ընդունակությունը, ձեռներեցության ոգին, աճելու բնական կարողությունը, նրա ազգային շահերը:

Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ անդառնալի կերպով դեռ խզված չեն հայ-թուրք հարաբերությունները: Հայ ժողովրդին պատահողմի մեջ առած փոթորիկը ահավոր է, կորստաբեր, ավերակվել են ամբողջ գավառներ: Բայց այդ ամենի մեջ մխիթարական մի բան կա՝ հայ ժողովրդի առասպելական տոկունությունը, նրա դիմադրական ուժը, պայքարի կորովը, անկոտրում հավատը վաղվա օրվա նկատմամբ: Հայության նվիրյալ զավակները հզոր թափով հետ են մղում ուխտադրուժ հարևանի հարձակումները, հարվածին պատասխանում են է՛լ ավելի ուժգին հարվածներով: Ուստի պիտի հավատալ, որ հայության գլխին թափված խորշակը անցողակի է, որ արյունալի դեպքերը տեղի են տալու մտքերի աստիճանական խաղաղեցման:

Ա-ԴՕ-ի և նրա պես մտածողների տեսակետն ակտիվորեն պաշտպանում էր

«Արշալույս» թերթն իր մի շարք հրապարակումներով[1]:

Հետագա տարիների իրադարձությունները ցույց տվեցին հայ և թուրք ազգաբնակչության սահմանազատման և Երևանի նահանգում հայության կենտրոնացման կողմնակիցների ճշմարտացի լինելը: Երևանյան նահանգը դարձավ այն միջուկը, որը կյանք տվեց Հայաստանի նորագույն շրջանի պետականությանը՝ իր երեք դրսևորումներով՝ առաջին, երկրորդ և երրորդ հանրապետություններով: Ինչ վերաբերում է երկու ժողովուրդների բաժանումն անցանկալի համարող գործիչների փաստարկմանը, թե առևտրական ու արդյունագործական բնածին ունակություններ ունեցող հայությունը հսկայական հարստություններ է ստեղծել Անդրկովկասի ողջ տարածքում և այդ կարողություններից հրաժարվելն ու Երևանի նահանգի փոքր տարածքում կծկվելը կնշանակեր խաչ քաշել նրա տնտեսական զարգացման հեռանկարի վրա, ապա դրա իրավացի կամ ոչ իրավացի լինելու գնահատականը տվեց ինքը՝ կյանքը: 1918թ. մայիսին ստեղծված անդրկովկասյան երկու՝ վրացական և ադրբեջանական ազգային պետական կազմավորումների մեջ հայության տնտեսական դիրքերին հասցվեցին մահացու հարվածներ, հայերը կորցրին տասնամյակների ընթացքում ստեղծած իրենց վիթխարի հարստությունները, իսկ այդ հանրապետությունների կործանումից և Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատումից հետո Ադրբեջանում և Վրաստանում զրկվեցին ունեցվածքի վերջին մնացորդներից:

Անդրկովկասի հայ և թուրք համայնքների բաժանման և սահմանազատման անհրաժեշտության մասին հայ մտավորականության և քաղաքական գործիչների շրջանում 1905-1906թթ. ծագած գաղափարը թեև այդ ժամանակ նկատելի դրսևորումներ չունեցավ, բայց շարունակեց մնալ օրակարգում: Այն նորից հրատապ դարձավ 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո և մասնակի կիրառում ունեցավ հայկական ու ադրբեջանական ազգային անկախ պետականությունների գոյության տարիներին (1918-1920թթ.): Քաղաքական ձգտումներով միմյանց անհարիր երկու ժողովուրդների բաժանման ու սահմանազատման գաղափարն, ի վերջո, լուծում ստացավ տասնամյակներ անց՝ 1988թ. սկսված դարաբաղյան շարժման հզոր ալեբախումների օրերին, բայց ոչ թե ազգաբնակչության կամավոր տեղափոխման ու փոխանակման, այլ բռնի տեղահանումների միջոցով:

[1] Օրինակ՝ տե՛ս «Արշալույս» թերթի 1906թ. փետրվարի 8-ի (N 29) առաջնորդողը և այդ օրերի ուրիշ հոդվածներ:

Հ.Յ.Դ. ԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 1906 Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼՅԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Որքան էլ 1905թ. ապրիլ-մայիսից սկսված ընդհարումներից հայերը մեծ մասամբ հաղթանակով էին դուրս գալիս, բայց այդ հաղթանակների գինը չափազանց մեծ էր, և Հ.Յ. դաշնակցությունը՝ հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հիմնական ուժը, ամրապնդելով և ավելացնելով իր զինված խմբերը, միաժամանակ անկեղծորեն հանդես էր բերում թուրք ղեկավարների հետ երկխոսություն սկսելու պատրաստակամություն, որի ակնհայտ վկայություններից մեկը նրա արևելյան մարմինների 1906թ. մարտ-ապրիլին տեղի ունեցած ռայոնական ժողովն էր:

«Հայ ժողովուրդը, հայ մարտական կազմակերպությունը այժմ ևս ամեն վայրկյան պատրաստ են սիրով վերադառնալ նախկին վիճակին, - գրում էր կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակը»: - Համերաշխության համոզված պաշտպան դաշնակցությունն անմիջապես վայր կը դնե զենքը և եղբայրաբար կը հաշտվի հակառակորդի հետ, հենց որ վերջինը նույնպես ցույց կը տա շիտակ ու անկեղծ խաղաղասիրական տրամադրություն»[1]:

Հ.Յ.Դ. արևելյան մարմինների (կամ արևելյան շրջանի) ռայոնական ժողովը տեղի ունեցավ Մեծ Քաղաքում (Թիֆլիս), 1906թ. մարտի 28-ից մինչև ապրիլի 8-ը: Ժողովին մասնակցում էին Սիմոն Զավարյանը, Ռոստոմը, Արմեն Գարոն, Հովհան Դավթյանը, Համո Օհանջանյանը, Ավետիս Ահարոնյանը, Գարեգին Խաժակը, Ավետիք Սահակյանը, Եղիշե Թոփչյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Միքայել Վարանդյանը, Սեբաստացի Մուրատը, Համազասպը, Վահան Փափազյանը և ուրիշներ:

Օրակարգի հիմնական հարցերի թվում էր հայ-թուրքական ընդհարումների հարցը: Այդ առնչությամբ պետք է քննարկեին այնպիսի հրատապ խնդիրներ, ինչպիսիք էին՝ կռիվների վերջնական դադարեցում, ոճրագործների պատուհասման պայմանների ու չափի ճշտում, թուրք քոչվորների շարժումների արտոնում կամ արգելում, ընդհարումների հետևանքով հայերի և թուրքերի կրած վնասների ճշտում, Կովկասում հայ-թուրքական հետագա հարաբերությունների կառուցում:

Ինչպես ընթերցողը նկատում է, հայերի առջև կանգնած ամենածանր ու հրատապ խնդիրներից մեկը դարձյալ ու դարձյալ քոչի խնդիրն էր, որը մինչ այդ հանգամանորեն քննարկվել էր Թիֆլիսում տեղի ունեցած հայ զինվորական ղեկավար գործիչների խորհրդակցությունում (1906թ. փետրվար) և դարձյալ Թիֆլիսում գումարված հայ-թուրքական ժողովում (1906թ. փետրվար-մարտ):

[1] «Դրոշակ», N 3 (169), մարտ 1906, էջ 37:

Եվ ահա, այստեղ Նույնպես՝ Հ.Յ.Դ. ռայոնական ժողովում, նորից ողջ սրությամբ դրվեց քոչի հարցը, և ելույթ ունեցող պատգամավորները բազմակողմանի վերլուծեցին դրան առնչվող բոլոր հանգամանքները:

Խոսելով քոչվորական շարժումների հետևանքով հայ գյուղացիների կրած հսկայական վնասների մասին՝ Գանձակի ներկայացուցիչը շեշտում էր. «Այս տարի՝ 1906թ., երկու ազգերի լարված հարաբերությունների պատճառով վնասները հատկապես հսկայական կլինեն: Կասկած չկա, որ կառավարությունը ալակցելու է քոչի բարձրանալուն, և, այդ հովանավորությունից օգտվելով, թուրքերը կաշխատեն ավելի շատ վնասել հայերին»: Ելույթ ունեցողը ժողովի մասնակիցներին տեղյակ պահեց, որ իրենց շրջանային ժողովը ձայների մեծամասնությամբ վճռել է քոչի առջև խոչընդոտներ չստեղծել, միաժամանակ որոշել է զինված խմբեր ուղարկել այն տարածքները, որտեղով անցնելու է քոչը՝ խաղաղ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Դա հատկապես անհրաժեշտ էր այն պատճառով, որ թուրքերը կազմակերպել էին ավազակային խմբեր, ինչպես օրինակ՝ Դալի Ալիի խումբը՝ զինված մոտ 300 մոսինով, և Նաղիի խումբը՝ զինված 70 մոսինով:

Ելույթ ունեցողներից ոմանք նշեցին, որ թուրքերին պետք է բաժանել երկու մասի՝ մի կողմում բեկերն ու խաներն են, մյուս կողմում պարզ խաշնարած մարդիկ: Վերջիններս, ասում էին նրանք, միշտ բարեկամաբար են վերաբերվել դեպի հայերը, և եթե հարձակումներ են գործել, ապա՝ խաների ու բեկերի դրդմամբ: Հետևապես բեկերն են հայերի թշնամիները, Նրա՞նց դեմ պետք է կռվել, այլ ոչ թե թուրք խաղաղ բնակիչների: Եվ եթե հայերն արգելեն քոչը, որը սարերն է բարձրանում ապրիլից սկսած, ապա դրանով նրանք իրենց դեմ կհանեն ահռելի մի ուժ, որի դեմ կռվելու ոչ մի հնարավորություն չպիտի ունենանք: Հետևապես պիտի թողնել, որ քոչն անցնի[1]:

Ապա ռայոնական ժողովը քննեց ոճրագործներին պատժի ենթարկելու պայմանների և չափի հարցը:

Պատգամավորների ընդհանուր տրամադրությունն այն էր, որ ոճրագործների նկատմամբ պետք է կիրառել խիստ պատիժներ: Բայց քննարկման ընթացքում հարցի սրությունը գնալով թուլացավ: Ոմանք գտնում էին, որ չպետք է տեռորի ենթարկել ոճրագործ այն պաշտոնյաներին, որոնք այլևս պաշտոնի վրա չեն: Ուրիշները դեմ էին այդ տեսակետին, գտնելով, որ դա ավելի կխրախուսի ոճրագործներին, մտածելով, որ կարող են ամեն տեսակ ոճիրներ գործել և ապա պաշտոնաթող լինելով՝ հանգիստ ապրել: Ուստի, որպեսզի նրանց մեջ այդ համոզմունքը չմտնի, պետք է նրանց ևս պատժել:

Պատգամավորներից մի քանիսը առաջարկում էին թուրք ոճրագործներից տեռորի ենթարկել միայն նրանց, ովքեր ճնշում էին թե՛ հայերին և թե՛ թուրքերին: Դրանով, նրանց կարծիքով, հնարավոր կլիներ թուրք զանգվածներին

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 264-265:

ցույց տալ, որ հայ հեղափոխականները չովինիստներ չեն, այլ մարդիկ, որոնց համար բարձր է ճնշվածների շահը՝ ինչ ազգության և հավատքի էլ նրանք պատկանեն: Նույնիսկ առաջարկ եղավ տեռորի ենթարկել Ահմեդ Աղաևին և իր գաղափարական առավել ակտիվ ընկերներից ոմանց, որոնք հայ-թուրքական ընդհարումների կազմակերպիչները և ղեկավարներն էին:

Սիմոն Զավարյանը վճռականապես դեմ արտահայտվեց այս վերջին առաջարկին, ասելով. «Աղաևը և այլք թուրքերի համար համարյա նույն դերն են կատարում, ինչ որ մի ժամանակ կատարում էր Գրիգոր Արծրունին մեր մեջ: Նոքա ոչ մի ոճիր չեն կատարում քարոզելով իրենց սկզբունքները: Հայ-թուրքական ընդհարումների հարցում թուրք ղեկավարների կազմակերպական գործունեությունը պետք է տարբերել կռիվը անմիջականորեն վարող թուրքերի քստմնելի ոճիրներից: Երբ սրանք կռվում են իրենց դեմ ունենալով կռվողներ՝ դա զզրելի չէ, բայց երբ նոքա ի չարն են գործ դնում և հարձակվում, կոտորում են անզեններին, կատարում վայրագություններ՝ դա ոճիր է»[1]:

Նաև առաջարկ եղավ՝ քանի հայերը հաշտության են ձգտում, ընդհանրապես թուրք ոճրագործների նկատմամբ տեռոր չկատարել: Ինչ վերաբերում է չինովնիկներին, լինեն դրանք ռուս, թուրք թե հայ, եթե ոճրագործ են, անպայման տեռորի ենթարկել:

Ի վերջո ռայոնական ժողովը տեռորի վերաբերյալ ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ի նկատի ունենալով, որ ներկայումս անհրաժեշտ է վերականգնել խաղաղությունը, հայ հեղ [ափոխական] դաշնակցութեան ռայոնական ժողովը որոշեց՝ առ այժմ թուրք ոճրագործների նկատմամբ տեռոր չկատարել: Ինչ վերաբերում է [ոճրագործ] պաշտոնեաներին, լինեն ռուս, թուրք կամ հայ, անպայման տեռորի ենթարկել: Բայց եթե ընդհարումները նորից սկսվեն, թուրք ոճրագործներին ևս՝ անպատճառ ենթարկել տեռորի, ընտրելով գլխավորապես այնպիսի անձնավորությունների, որոնց դեմ դժգոհություններ կան նաև թուրք ժողովրդի աշխատավոր խավերում»[2]:

Ռայոնական ժողովը նաև ընդունեց Սիմոն Զավարյանի առաջարկած բանաձևը՝ թուրք-հայկական ընդհարումների տվյալ էտապի բնութագրությամբ:

Բանաձևում նշված էր, որ թուրք-հայկական ընդհարումների պատճառների թվում առանձնանում են միապետական վարչության սադրանքներն ու աններելի անգործությունը՝ մի կողմից, թուրք տարրի վայրենի հակումների և թալանի տենչի սանձազերծումը՝ մյուս կողմից: Ստեղծված վիճակը քայքայման եզրին է կանգնեցրել պատերազմող երկու կողմերին, մի բան, որ հրամայաբար պահանջում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ: Ելնելով դրանից՝ ռա-

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 266:

* Նկատի է առնվում պաշտոն չունեցող թուրք ոճրագործներին:

[2] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 267:

յոնական ժողովն ընդունեց հետևյալ որոշումը.

«Բոլոր հնարավոր միջոցներով ազակցել խաղաղություն հաստատելուն և ոչ մի դեպքում առիթ չտալ ընդհարումների: Դիմադրելով Թուրքերի բոլոր հարձակումներին, նրանց կողմից կատարած անհատական սպանություններին չպատասխանել և սպասել կառավարության և Թուրք բանիմաց դասի բռնած դիրքին: Փոխադարձաբար անցնել նախկին տակտիկային (հարձակողական-պաշտպանողական) միայն այն դեպքում, եթե կառավարությունը կամ Թուրքերի բանիմաց մասը չպատժեն հանցավորներին: Սրա հետ միասին շարունակել ինքնապաշտպանության համար ձեռք առնված անհրաժեշտ պատրաստությունները, առանձին ուշադրություն դարձնելով Ապառաժի շրջանի (Ղարաբաղի: - Հ.Ս.) վրա: Կազմակերպել թռուցիկ խմբեր՝ Դալի Ալիի նման ավազակային խմբերի գործունեության առաջն առնելու համար»[1]:

Ընդհարումների դադարեցման դեպքում անխուսափելիորեն դրվելու էր կոիվների ժամանակ վնասների փոխհատուցման խնդիրը:

Մեկ տարվա ընդհարումների հետևանքով հայերն ունեցել էին տասնյակ միլիոնների հասնող վնաս, այն դեպքում, երբ Թուրքերի վնասները կազմում էին 7-8 միլիոն: Հայերի նյութական կորուստը հատկապես մեծ էր Բաքվում, իսկ Թուրքերն այնտեղ համարյա վնաս չէին կրել:

Վնասների փոխհատուցման հարցը քննելիս ժողովում հանդես եկան տրամագծորեն հակառակ երկու կարծիքներ: Առաջին տեսակետի կողմնակիցները, Գանձակի պատգամավոր Աբրահամ Գյուլխանդանյանի գլխավորությամբ, պնդում էին, որ պետք չէ վնասների հատուցում պահանջել, և ընդհանրապես առաջարկում էին փոխհատուցման հարցը հանել քննարկումից: Նրանք իրենց պահանջը հիմնավորում էին նրանով, որ հատուցում պահանջելու դեպքում իշխանությունները, որոնք շարունակում են հովանավորել մուսուլմաններին, Թուրքերի կրած վնասները կվերցնեն հայերից, իսկ հայերի կրած վնասների դիմաց ոչինչ չեն վերցնի հակառակ կողմից, քանի որ Թուրքերը կառավարությանն իրենց վնասները մի քանի անգամ ավելի են ցույց տվել, քան իրականում կրել են: Այս տեսակետի ներկայացուցիչները հարցի մերժումը կատարում էին նաև Հ.Յ. դաշնակցության սկզբունքների դիրքերից, չնչտելով, որ վնասների հատուցման մասին խնդրանքը պետք է ներկայացվի կառավարությանը, իսկ հեղափոխական կուսակցությանը վայել չէ խնդրանքով դիմել ոճրագործ միապետությանը: Վերջապես, ընդգծվում էր, որ հատուցման դեպքում առաջին հերթին տուժելու են հայ և Թուրք աղքատ խավերը, իսկ հարուստներն ամեն կերպ խուսափելու են հատուցում կատարելուց:

Այդ մոտեցման դեմ հանդես եկավ ժողովի մեծամասությունը՝ Սիմոն Զավարյանի գլխավորությամբ: Նա նշում էր, որ սխալ կլինի այդ խնդրին նայել դասակարգային տեսակետից, քանի որ Թալանին մասնակցել են և՛ աղքատ

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 267:

Թուրքերը, և՛ հարուստները, հայերի կողմից նույնպես ջարդերին ու կողոպուտներին մասնակից են եղել մարդիկ՝ անկախ իրենց սոցիալական դրությունից: Հետևապես բոլորն էլ տուժել են: Զավարյանը նկատում էր, որ Թուրք բեկերը և հայ հարուստները նույնպես դեմ են հատուցման, քանի որ նրանք էլ պիտի տուժեն: Գալով նրան, Թե այս դեպքում էլ կտուժեն միայն աղքատները՝ սխալ է: Նույնիսկ եթե աղքատների մի որոշ մասն էլ տուժի՝ ընդունելի է, «քան Թե մենք ձեռքներս լվանանք և հեռանանք»: Ապա՝ «եթե Թույլ տանք, որ Թալանը մարվի, այն ժամանակ ժողովուրդը ավելի կանբարոյականանա, քան եթե հատուցումը պահանջենք: Ընդհանուր խաղաղեցման տեսակետից էլ անպայման ամենամեծ միջոցն է վնասների հատուցումը, որով Թալանի ախորժակն էլ փակած կլինենք: Ազգային տեսակետից էլ մենք ենք ավելի տուժողը, հետևապես մենք պետք է ավելի պահանջենք»[1]:

Գալով Թուրքերի մեջ երկպառակտում մտցնելու խնդրին՝ Զավարյանն ասում էր, որ երբ Բորչալուի գավառում վնասները պահանջեցին, այնտեղի Թուրք գյուղացիությունը մի սոսկալի բողոք բարձրացրեց բեկերի դեմ, և «եթե վնասների պահանջը կատարվի նաև ուրիշ տեղերում, այդպիսով, մենք երկպառակտություն կձգենք նրանց մեջ: Եվ այս միջոցով կը նպաստենք Թուրքերի գիտակցությանը, որով աշխատավորը կը բաժանվի ավազակներից և կը միանա մեզ: Եթե այժմ չպահանջենք վնասների հատուցումը, այդ դեպքում ապագայում էլ քոչի ատեն չենք կարող պահանջել վնասները բեկերից: Իսկ հատուցման պահանջը կը լինի մի միջոց, որով խրատած կլինենք այդ ավազակներին»[2]:

Վնասների փոխադարձ հատուցման խնդրի վերաբերյալ քվեարկության դրվեցին բանաձևի երկու՝ Աբրահամ Գյուլխանդանյանի և Սիմոն Զավարյանի ներկայացրած նախագծերը: Գյուլխանդանյանի նախագծում ասված էր. «Ի նկատի ունենալով, որ փոխադարձ հատուցման վնասներ հավաքողը լինելու է ոստիկանությունը, որի ժամանակ պետք է տուժե կրկնակի և եռակի մեր աշխատավոր ժողովուրդը, համարել փոխադարձ հատուցումը վնասակար մեր ժողովրդի շահերին և աշխատել ըստ կարելոյն, որ դա չիրականանա»[3]:

Քվեարկության արդյունքում, սակայն, ընդունվեց Սիմոն Զավարյանի նախագիծը՝ հետևյալ ձևակերպումով.

«Ի նկատի ունենալով, որ վնասների փոխադարձ հատուցումը հանդիսանում է ամենահզորագույն միջոցը ընդհարումներին վերջ դնելու համար, ինչպես և առաջն առնելու երկու կողմերի անբարոյականացման, ռայոնական ժողովը ցանկալի է համարում կուսակցության կողմնակի միջամտությունը՝ տուժած գյուղացի և աշխատավոր դասակարգի կրիտիկական վիճակը մեղմելու

[1] **«Նյութեր...»**, հատ. Բ, էջ 269:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 271:

համար: Այս հարցի հետ կապված գործնական միջոցների մշակումն ու առաջ մղելը [ռայոնական ժողովը] թողնում է կենտրոնական կոմիտեներին»[1]:

Այնուհետև ժողովը քննարկեց Թուրք-հայկական ընդհարումներին վերջ տալու հնարավորությունների ու միջոցների հարցը:

Ընդհարումների վերջ տալն ինչի՞ց սկսել և ինչպե՞ս. Թուրքերի մեջ եղած ո՞ր ուժերին պետք է հաշտության ձեռք մեկնել, արդյո՞ք Թուրք ժողովուրդն էլ այնպես անկեղծորեն խաղաղություն է ցանկանում, ինչպես հայերը - սրանք հարցեր էին, որոնք հստակ պատասխան էին պահանջում:

Ոմանք կարծիք էին հայտնում, թե անօգուտ է հաշտության ձեռք մեկնել Թուրքերի մեջ գործող քաղաքական կազմակերպություններին, ինչպես նաև մտավորականությանը, և որ հնարավոր է երկխոսություն սկսել միայն նոր սերընդի Թուրք երիտասարդ ներկայացուցիչների հետ, որոնք դեռ չեն ընկել համիսլամիզմի ազդեցության տակ:

Եղիշե Թոփչյանը և նրան հետևող պատվիրակները գտնում էին, որ հայ-Թուրքական ընդհարումներն անհնարին է կանգնեցնել առանց Թուրքերի քաղաքական կազմակերպությունների և Թուրք մտավորականության աջակցության, ուստի հենց նրանց հետ պետք է համաձայնության գալ թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական հարցերում: Իր հերթին Աբրահամ Գյուլխանդանյանը մերժում էր այդ տեսակետը և առաջարկում անմիջական հարաբերություններ սկսել Թուրք բանվորության և գյուղացիության հետ:

Ընդհարումները վերջ տալու միջոցների խնդրի վերաբերյալ ժողովը միաձայն ընդունեց Սիմոն Զավարյանի առաջարկած բանաձևի նախագիծը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի նկատի ունենալով Կովկասի ընդհանուր կուլտուրական շահերը, ինչպես և բարեացակամ դրացիության պահանջները, որոնք կարող են ապահովված լինել միմիայն Կովկասի բոլոր ազգերի համաձայնությամբ և համերաշխ գործակցությամբ, ի նկատի ունենալով, որ աշխատավոր դասակարգի շահերը կարող են ապահովվել միմիայն այն ժամանակ, երբ բոլոր աշխատավորները, առանց խտրության կրոնի ու ցեղի, կը լինեն համամիտ միմիանց հետ, - ռայոնական ժողովը հանձնարարում է դաշնակցության բոլոր մարմիններին ու դաշնակցական ընկերներին՝ հարաբերության մեջ մտնել բանիմաց ու վստահելի Թուրք անհատների ու խմբակների հետ, համաձայնության գալ համակովկասյան քաղաքական այն մասսայական պահանջների կետերի նկատմամբ, որոնք հիշված են մեր նախագծի՝ մեջ: Թուրք աշխատավոր շրջանների նկատմամբ հետևել գործնական ուղղության, բացատրել բոլոր աշխատավորների շահերի ընդհանուր լինելը, անել որոշ դրական քայլեր ձեռք-ձեռքի

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 271:

* Նկատի ունի Հ.Յ.Դ. «Կովկասյան նախագիծը», որին հանգամանորեն կանդրադառնանք գրքի հաջորդ էջերում:

տված՝ տնտեսական հողի վրա, համապատասխան նախագծի՝ ...կետերի»[1]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հ.Յ.Դ. կովկասյան կազմակերպությունների՝ Թիֆլիսում 1906թ. մարտ-ապրիլին տեղի ունեցած ռայոնական ժողովի՝ Թուրք-հայկական ընդհարումների վերաբերյալ ընդունած որոշումները արմատապես տարբերվում էին դրանից մեկ ամիս առաջ, դարձյալ Թիֆլիսում, հավաքված հայ զինվորական գործիչների խորհրդակցության որոշումներից: Ժողովի պատգամավորները տրամադրված էին կռիվը դադարեցնել «խաղաղ» միջոցներով, իսկ զինվորական խորհրդակցության մասնակիցները, ընդհակառակը, հետևողականորեն պաշտպանել էին այն տեսակետը, որ կռիվները կարող են վերջ գտնել միայն այն դեպքում, եթե հայերը գործեն հարձակողական տակտիկայով և զենքի ուժով հակառակորդին ստիպեն մտնելու խաղաղության գործընթացի մեջ:

Ուստի պատահական չէր, որ ռայոնական ժողովի որոշումների կատարումը տեղում հանդիպում էր մեծ դժվարությունների. զինվորական գործիչները, հատկապես Դումանը և Վարդանը, հետևելով փետրվարյան խորհրդակցությունում ձեռք բերված պայմանավորվածությանը՝ կիրառում էին կռիվների հարձակողական տակտիկան: Դա էր պատճառներից մեկը, որ ձգձգվեց Թուրք-հայկական ընդհարումները վերջ տալու կուսակցության որոշումների կատարումը:

ՆՈՐ ՎԵՐՔԵՐԻ ԳԱՐՈՒՆԸ

Թեև Վարանդայի դեպքերը եզակի էին իրենց դաժանությամբ և անբարոյականությամբ, բայց դրանով չվերջացան պատժիչ արշավախմբերի խժդժությունները: Գարունը բացվելուն պես հայկական և վրացական գավառները հերթականորեն ենթարկվեցին այդ արշավախմբերի ասպատակություններին՝ ամեն տեսակի բռնություններով հանդերձ: Հայկական գավառների վիճակն ավելի ծանր էր այն պատճառով, որ մարտի սկզբներից դրան գումարվել էին Թուրքերի նոր հարձակումները: Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի) «Կովկասյան խաբրիկներում» տալիս էր Անդրկովկասի դժբախտ պատկերը 1906թ. գարնանը.

«Լաց ու աղերսանք բոլոր կողմերից: Ահա Վրաստանը՝ քաղցած ու սգավոր: Ահա Վարանդը՝ կրծքապատառ ու մերկ: Ահա Արարատյան դաշտը՝ սովատանջ և ահաբեկ: Ահա Ղարաբաղի կենտրոնը՝ կարոտ ցորենի՝ ստամոքսը կերակրելու և չորի՝ մերկությունը ծածկելու համար: Ահա Զանգեզուրը՝ հացի պատառը որկորում մնացած: Ահա Նախիջևանը՝ ավերակների վրա նըս-

* Դարձյալ նկատի են առնված «Կովկասյան նախագծի» համապատասխան կետերը:

[1] «Նյութեր...», հատ. Բ, էջ 273:

տած, անհաց ու անջուր: Ահա մեծ քաղաքները՝ լի սարսափով ու փախուստով: Ահա փոքր գյուղերը՝ անճար և հուսահատ:

Անդրկովկաս է այդ «քանդվածի» անունը»[1]:

Թալանված գյուղերը հաց, շոր, դրամ էին խնդրում: Բազմաթիվ չինական հասարակություններ եզ ու գութան չունեին վար ու ցանք անելու համար, որպեսզի առաջիկա ամիսներին սովամահ չլինեն: Իշխանությունները նորանոր հարկեր էին պահանջում, գյուղերի վրա դրված տուգանքները հասնում էին հարյուր հազարների, կանգ էր առել աշխատանքը, չկար երթևեկություն, մեռնում էր առևտուրը...

«Մշակը» տպագրել էր հատվածներ այն նամակից, որ Թերթի խմբագրությունը ապրիլի սկզբներին ստացել էր Նախիջևանի Արազին գյուղի 6 գյուղացիներից: Նամակում ասված էր.

«Մեր գյուղն ամենասարսափելի դրության մեջ է: Գյուղացիները սովամահ են լինում. ոչ մեկի տանը հաց չկա: Քանի՜-քանի՜ երեխաներ խոտ ուտելուց մահացել են: Ոչ ոքից օգնություն չկա մեզ: Մենք, գյուղացիներս, այսօր հավաքվելով, Նախիջևանից այս նամակն ուղարկեցինք «Մշակի» խմբագրության, որ իմանաք մեր գյուղի որպիսությունը, գոնե ձեր լրագրի միջոցով օգնություն խնդրեք բարերարներից: Ի սե՛ր Աստծո, մեր այս խնդիրը կատարեցեք. մեր ընտանիքներն ամբողջ ժամանակ աղցան ուտելով են ապրում. հաց չէ ճարվում տներում: Բազմաթիվ 3, 4, 8-9 տարեկան աղջիկներ մեռան գինձ և ուրիշ խոտեր ուտելուց: Ամենասաստիկ սովի մեջն ենք: ... Գնացինք 10 հոգով Նախիջևան. երեք օր աղաչելով հազիվ 7 քսակ այլուր տվին, այն էլ ճանապարհի երկյուղից ոչ ոք չտարավ: Մենք կրկին առաջնորդից (խոսքը Նախիջևանի առաջնորդ Թովմաս վարդապետի մասին է: - Հ.Ս.) խնդրեցինք, որ մեզ զինվորների ուղեկցությամբ ուղարկե մեր գյուղը: Բայց նա բարկացավ: Նույն օրը առանց ուղեկցողի 10 հոգի ճանապարհվեցինք...: Առաջներս կտրեցին, և երկուսս հազիվ փախանք, իսկ 8 հոգու սպանեցին ահավոր տանջանքներով, ոմանց ականջները կտրտեցին, ոմանց երեսն ամբողջովին քերթեցին: Ահա լուսանկարներից մի օրինակ էլ ուղարկում ենք ձեզ: Այժմս էլ ավելի վատթար դրության մեջ ենք: Նորից ու նորից կրկնում ենք, որ տներում հաց չկա: Ի սեր Աստծո, խնդրում ենք՝ օգնություն հասցնել»[2]:

Եվ այդ սարսափազդու պատկերը գծվում էր այն երկրում, որը բնության առատ պարգևների և իր աշխատասեր ժողովրդի շնորհիվ կարող էր լինել հարուստ ու երջանիկ, բայց ճակատագրի քմահաճույքով դատապարտված էր ողբալի վիճակի:

«Հեղեղը չէ, որ քանդեց մեր տները, և ոչ էլ պատահական հրդեհի զոհ են մեր քրտինքի,մեր աշխատանքի, մեր երկունքի պտուղները: Մեր ցանքսերը

[1] «Դրոշակ», N 5 (171), մայիս, 1906, էջ 72:
[2] «Մշակ», N 96, 6 մայիսի 1906թ.:

կարկուտից չը փչացան: Մեր անբավ դիակների պատճառը արկածը չէ կամ վարակիչ ժանտախտը: Այդ ավերիչ հեղեղը, այդ լափող հրդեհը, այդ մահաբեր ժանտախտը մի անուն ունի՝ ցարիզմ»[1], - այսպես էր գրում Է. Ակնունին «Կովկասյան խաբրիկներում»:

Իրադարձությունները սուր բնույթ էին ստացել Զանգեզուրում:

Գանձակից Զանգեզուր մեկնած մի պատժիչ արշավախումբ, բաղկացած շուրջ 200 կազակներից ու զինվորներից, դաժան տեռորի ենթարկեց գավառի հայ բնակչությանը[2]:

Հատկապես մեծապես տուժեցին Շուշիից մինչև Սիսիանի վերջին՝ ռուս մոլոկանների Բազարչայ գյուղը գնացող ճանապարհի վրա ընկած հայ գյուղերի բնակիչները: Պատրվակ էին բռնել, թե նախորդ տարվա գարնանը, երբ թուրք և քուրդ քոչվորները բարձրանում էին Սիսիանի ամառային յայլաղները, այդ գյուղերի բնակիչներն արգելքներ են հարուցել, որի պատճառով առաջ են եկել ընդհարումներ, եղել են զոհեր:

Մի այդպիսի դեպք, իսկապես, տեղի էր ունեցել 1905թ. մայիսի սկզբներին՝ ճանապարհի վրա ընկած Տեղ գյուղի հատվածում: Պատճառը եղել էր այն, որ սար բարձրացող Ավազարի (Լաչինի) քրդերը ոչխարների իրենց հոտերին խառնել էին Տեղին պատկանող՝ ճանապարհի եզրին մակաղած ոչխարի մի մեծ հոտ և քշել: Իմանալով այդ մասին՝ հայ գյուղացիները հասել էին քրդերին և փակել ճանապարհը: Տեղի էր ունեցել ընդհարում, որի հետևանքով զոհվել էին մեկ հայ և մեկ քուրդ, երկու կողմից եղել էին վիրավորներ:

Եվ ահա, մեկ տարի անց, այդ դեպքը պատրվակ բռնելով, պատժիչ արշավախումբը Տեղ գյուղը ենթարկեց ասպատակության: Մասսայական տեռորը տարածվեց նաև հարևան Գերենզուր, Խնածախ, Խոզնավար գյուղերի վրա:

Ըստ որում, պատժիչները ձեռք չէին տալիս գավառի թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերի բնակիչներին, այն դեպքում, երբ, որպես կանոն, ընդհարումներն առաջ էին բերում հենց նրանք: Գավառի իշխանությունը, վրացի գավառապետի գլխավորությամբ, հովանավորության տակ առնելով թուրքերին ու քրդերին, ըստ էության, նրանց խրախուսում և մղում էր հայերի նկատմամբ նոր ոճիրների:

Թիֆլիսում գտնվող իր հայրենակցին ուղարկած նամակում Տիգրան Սազանդարյանը Գորիսից գրում էր.

«Մենք կարոտ մնացինք և չտեսանք, որ ադմինիստրացիայի (նկատի ունի Գանձակի Նահանգի: - Հ.Ս.) կողմից ուղարկված որևէ իրավասու խիստ պատիժ տա մեր գավառի կոտորածները ղեկավարող թուրքերից գոնե մեկին: Եվ նրանց (կազակների: - Հ.Ս.) գալով անմեղ թալանված հայը ավելի է տուժում, քան ավազակ թուրքը: Եվ մի՞թե ադմինիստրացիայի կողմից մեծ ոճիր

[1] «Դրոշակ», N 5(171), մայիս, 1906, էջ 73:
[2] Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244[1], վավ. 205, թ.թ. 26-27:

չէ, երբ ուղարկում է մի գնդապետ, որ թնդանոթի հարվածներով դղրդացնում է Տեղ, Խնածախ և այլ հայկական գյուղերը, սարսեցնում հարյուր անգամ թուրքի սրից, գնդակից փախած ու կյանքն ազատած հայերին, իսկ Մինքենդի արյան ճապաղիք սարքող, անգեն հայերին մորթող, հղի կանանց և անմեղ մանուկներին հոշոտող թուրքերին ադմինիստրացիան հանգիստ է թողնում»[1]:

Կացությունը գնալով ավելի ու ավելի դժոխային էր դառնում Ղարաբաղում:

Ղարաբաղի գյուղական շրջաններում իսկական պատուհաս էին զինվորական պատժիչ արշավախմբերը, որոնք սովորաբար հայտնվում էին այն ժամանակ, երբ արդեն վերջացած էր լինում այս կամ այն ընդհարումը, գալիս էին, որպեսզի թնդանոթներով ավերի ենթարկեն դեռ կանգուն մնացած բնակավայրերը:

Գանձակի նահանգում գործող պատժիչ արշավախմբերից մեկը մարտ ամսին շահատակություններ սկսեց Շուշիի գավառի Տող, Ազոխ, Զանախչի, Նորաշեն, Ավտուր, Դահրազ, Մեվրիշեն, Քեանդխուրդ, Աղեկ, Կարաքենդ գյուղերում[2]: Գյուղացիները ենթարկվում էին էկզեկուցիաների, ծեծ ու ջարդի: Նշված գյուղերում կատարված անօրինականությունների մասին Շուշիի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագրեր ուղղեց Թիֆլիսի համարյա բոլոր թերթերին և Բաքվի "Баку" թերթին (N 90, 1906թ.):

Նույն ժամանակ Գետաբեկի գործարանի հայ բանվորները կազակների և նրանց օգնության եկած շրջակա գյուղերի թուրք ավազակախմբերի կողմից ենթարկվեցին հարձակումների և զոհեր տվեցին[3]: Գործարանի գերմանացի կառավարիչ Ադոլֆ Էրնին ամեն կերպ աջակցում էր ջարդարարներին:

Ապրիլի սկզբներից իրերի վիճակը դեպի վատը կտրուկ փոխվեց նաև Գանձակի գավառում: Թուրքերի և հայերի հարաբերությունները, որոնք մի քանի ամիս քիչ թե շատ տանելի էին, կրկին լարվեցին ու սպառնալի բնույթ ստացան[4]: Ապրիլի կեսերին հայերի կողոպուտ և բազմաթիվ սպանություններ եղան Գանձակի նահանգի Արեշ գավառում: Մեծամեծ տուժեցին Հավարիկ, Քանդակ, Մազրդի, Էրմանի-բազար (Արաշ) և Մամաթավա (Նեմեյթաբադ) գյուղերը: Վարձու մշակների սպանություններ տեղի ունեցան Սիլիկովին պատկանող 4000 դեսյատին հողամասի տարբեր հատվածներում: Նույն բախտին արժանացան Գանձակ քաղաքի մերձակայքի Աննենֆելդ գերմանապատկան կալվածքի հայ բանվորները[5]: «Զարդախլուն ոմբակոծվում է» վերնագրով առաջնորդողում «Արշալույս» թերթը նկարագրում էր այն տմարդի գործողությունները, որ զորքը ծավալել էր նշված հայկական գյուղի դեմ[1]:

Մայիսին փոխադարձ սպանություններ եղան Ջիվանշիրի գավառում[2] և Զանգեզուրում[3], Հյուսիսային Արցախի բազմաթիվ գյուղերում:

Որքան մոտենում էր Ղարաբաղի և Զանգեզուրի սարեր քոչը բարձրանալու ժամանակը, այնքան տագնապալի էր դառնում քոչի ճանապարհին ընկած հայկական գյուղերի բնակիչների վիճակը, այնքան հաճախ էին այդ ճանապարհներին կատարվում հայերի սպանություններ:

Շուշիից Գորիս տանող ճանապարհին, Լիսագոր բնակավայրի մոտ, թուրքերը հարձակվել էին հայերի քարավանի վրա, սպանել երկուսին և գերի տարել չորս հոգու, հետո հարձակում էին գործել Գերգեր գյուղի վրա և սպանել 7 մարդու: Մայիսի 9-ին Ջիվանշիրի գավառում, Խաչենի մոտերքում, թուրքերը գերել էին մի քանի հայ ճանապարհորդների: Մայիսի կեսերին Խաչեն գետի մոտերքում, Սուլթանբեկի անտառում, գտնվել էր 10 հայի դիակ: Նույն օրերին թուրքերը նոր հարձակում էին ձեռնարկել Ղարաղշլաղի վրա, գերել ու կոտորել 14 հայի: Միայն երրորդ օրը գյուղում հայտնվեցին կազակներ, որոնք բավականացան չորս խեղճ ու կրակ թուրքեր ձերբակալելով:

Խաչեն գետի մոտերքում տեղի ունեցած դեպքից հետո, մինչև մայիսի վերջը, Ղարաբաղում հայերից սպանվել ու գերվել էր մոտ 100 մարդ:

Մայիսի սկզբներից ոչ միայն Ղարաբաղում, այլև Գանձակի ողջ նահանգում մասսայական բնույթ ստացավ իշխանության ձեռքով թուրքերի զինումը: Օր չէր անցնում, որ մի քանի տասնյակ քոչվոր, նախքան սար բարձրանալը, զենք կրելու իրավունք չստանար նահանգապետի ստորագրությամբ:

Թիֆլիսի «Ալիքը» տպագրել էր իր թղթակցի հետևյալ հաղորդումը. Գանձակի նահանգապետի տան ընդարձակ նախասենյակում խմբված են գավառի տափարակից եկած թուրքեր: Նրանք քոչվորներ են, որոնք իրենց բազմաթիվ հոտերով ու նախիրներով շուտով բարձրանալու են սարերը: Եկվորները նահանգապետարանում արժանանում են պաշտոնյաների առանձին հոգածությանը, սիրալիր ժպիտներին: Ամեն պաշտոնյա պարտավորված է համարում մոտենալ թուրքերին, հայրաբար զրուցել նրանց հետ, հարցնել «քեֆն ու հալը»: «Նրանց այնպես են փաղաքշում ու գուրգուրում, կարծես ուղարկում էին խաչակրաց պատերազմի»[4], - գրում էր թղթակիցը:

Կարգադրված էր 300 գլուխ ոչխար կամ 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուն ունեցող սար բարձրացող ամեն թուրքի տալ արագաձիգ հրացան կրելու իրավունք: Թե որքան ապրանք ունի քոչվորը, դրա համար պահանջվում էր ընդամենը տանուտերի կողմից տրված վկայական՝ վավերացված

---

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ. 45, թ.1:
[2] «Արշալույս», N 66, 26 մարտի 1906թ.:
[3] «Մշակ», N 25, 17 մարտի 1906թ.:
[4] «Ալիք», N 5, 3 մայիսի 1906թ.:
[5] «Արշալույս», N 57, 15 մարտի 1906թ.:

[1] «Արշալույս», N 57, 15 մարտի 1906թ.:
[2] «Ալիք», N 23, 25 մայիսի 1906թ., N 37, 10 հունիսի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 34, 7 հունիսի 1906թ.:
[4] Նույն տեղում, N 6, 4 մայիսի 1906թ.:

պրիստավի ձեռքով: Այդպիսի վկայականներ թուրքերը ձեռք էին բերում շատ հեշտությամբ, քանի որ թե՛ տանուտերերն էին թուրքեր և թե՛ պրիստավները: Պահանջվելիք վկայականները թխվում էին բոպեապես՝ առանց ստուգելու անասունների թիվը: 200 գլուխ ոչխար կամ 100 խոշոր եղջերավոր ունեցող թուրքը բերում էր վկայական, որում նշված էր մի քանի հազար գլուխ մանր և խոշոր անասուն: Ներկայացված թվի համար էլ նա ստանում էր համապատասխան թվով զենքեր գնելու և դրանք գործածելու իրավունք:

Օրինակ՝ հայտնի ոճրագործ բեկերից մեկը՝ Շամքորսկին, որն ուներ 5 հազար գլուխ ոչխար, վկայական էր ներկայացրել, թե իր ոչխարների թիվն անցնում է 30 հազարից, և սար բարձրանալուց առաջ ստացել էր 100 արագաձիգ հրացան գնելու և այդ թվի համեմատ ռազմամթերք ունենալու իրավունք[1]:

Կային շատերը, որոնք մի հավ անգամ չունեին, և որոնց մասնագիտությունը գողությունն էր, բայց, ապրանքատեր ձևացած, հեշտությամբ զենք կրելու իրավունք էին ստանում: Քանի որ զենք ունեցողը նահանգապետի ստորագրությամբ գրպանում ուներ նաև թույլտվության թուղթ, ուստի ճանապարհներին պատահող կազակներն ու ստրաժնիկները իրավունք չունեին նրան զինաթափելու: Եվ նրանք, ոտից ց'գլուխ զինված, ապահով բարձրանում էին սարերը, ուր լայն ասպարեզ էր բացված նրանց «սխրագործությունների» համար:

Գավառի լեռնավայրերից եկող հայ գյուղացիները, որոնք սոսկումով էին նայում մոտավոր ապագային, պատմում էին, որ այս տարի քոչի քարավանները սովորական տարիներից անհամեմատ ավելի ստվար են, ու բոլոր քոչվոր տղամարդիկ, սկսած 14-15 տարեկանից, զինված են: Կազակների զորավոր հովանավորության տակ առաջ ընթանալով՝ նրանք հանդուգն, արյունարբու հայացքներ էին գցում ճանապարհով անցնող անզեն հայ գյուղացիների վրա, որոնք, ոչ մի հավատ չտածելով դեպի կազակները, ահ ու դողով անցնում էին սպառազինված թուրք ոհմակների մոտով: Հենց որ հարմար առիթ էր լինում, թուրքերը կրակում էին հայերի վրա, բնավ չքաշվելով ուղեկից կազակներից, որոնք, գառ, յուղ, պանիր ու դրամական քրթամ ստանալով թուրքերից, ամեն կերպ հովանավորում էին նրանց՝ ասելով. "Армяне от мала до велика кромольники, а татары наши верноподданные друзья"[2]:

Այդ ամենին գումարվում էր այն, որ Գանձակի նահանգի հատկապես քիչ պաշտպանված հայկական բնակավայրերը պարբերաբար ենթարկվում էին Դալի-Ալու, Նազիի, Դալի-Աստանի, Ջաֆարի, Սեռունի և ուրիշ հրոսակապետերի զինված խմբերի ասպատակություններին[3]:

[1] «Ալիք», N 13, 13 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 13, 13 մայիսի 1906թ.:
[3] Նույն տեղում, N 14, 14 մայիսի 1906թ.:

Բնական է, որ հայ գյուղացիներից շատերը երկյուղից չէին գնում անտառները, հեռու արտերը՝ քաղհանելու, անասունները չէին քշում հեռուները, և դրանց պահելը դառնում էր անհնարին: «Ի՞նչ անենք, - ասում էին Գանձակի գավառի Փիր գյուղի բնակիչները, - ի՞նչ ձևով պաշտպանվենք, երբ օրը ցերեկով մեզ վրա եկող գող թուրքերին չենք կարողանում պատժել, որովհետև երկյուղ ենք կրում [պատժիչ արշավախմբերի] թնդանոթներից: Աշնանը չթողեցին դաշտերում վար ու ցանք անել, հիմա էլ, երբ գարունը բացվել է, չենք կարողանում արտերը խնամել»[1]:

Երբ իշխանությունները բացարձակ շարունակում էին զինել Գանձակի նահանգի թուրքերին, այդ նույն ժամանակ հայ գյուղացու համար առաջվա պես մահացու մեղք էր համարվում զենք ձեռք բերելն ու կրելը: Նրանից ոչ միայն խլում էին զենքը, այլև ենթարկում տուգանքների ու բարբարոսական կտտանքների, դրանով իսկ թուրքերին քաջալերում նոր թշնամական գործողությունների:

«Այդպիսի պայմաններում, - գրում էր «Ալիքը», - հավատալ իշխանության խոստումներին, հույս դնել նրա դավաճան պաշտպանության վրա, կամ մխիթարվել մամուլի մի մասի ցնորալի դատողություններով - ավելի քան դատապարտելի միամտություն է:

Անցյալի փորձը բավական է, որպեսզի ժողովուրդն իմանա իր անելիքը: Որքան էլ դժնդակ լինեն նրան շրջապատող պայմանները, որքան էլ ծանրանա վիճակը, այնուամենայնիվ ժողովուրդը միայն իր սեփական ուժերի վրա պիտի դնե իր հույսը, իր կյանքի, գույքի ու պատվի պաշտպանությունը»[2]:

Մի բան էր միայն հույս ներշնչում հայ գյուղացու տոկունությունը, նրա բարոյական արիությունը, նրա ցույց տված կենսունակությունը: Շատ էր դիմացել և դեռ շարունակում էր դիմանալ ու դիմադրել՝ կրելով անողոք բյուրոկրատիայի և դավադիր հարևանի հարվածները: Արհամարհելով մահացու վտանգները՝ գյուղացիների մեծ մասը դաշտ էր դուրս գալիս զենքն ուսած: Այլ ելք չկար. մի ձեռքին հրացանն էր, մյուսին՝ գութանի մաճը:

«Գիտենք, ծանր է այդ պաշտպանությունը, - գրում էր դաշնակցության «Ալիքը», - բայց դա միակ փրկարար ու ապահով միջոցն է: Թո՛ղ,ուրեմն, հայկական գիտակից ուժերը լինեն միշտ զգույշ, որպեսզի անտեղի բարդություններ ու ընդհարումներ չառաջանան, բայց միևնույն ժամանակ և արթուն, որպեսզի ավերիչ ձեռքն անկարող լինի նրանց գլխին պայթեցնել փոթորիկը:

Թող հայ աշխատավոր մասսան իր բոլոր ջանքերով ձգտի համերաշխություն հաստատել իր հարևան թուրք աշխատավորների հետ և ջանա բաց անելու նրանց գիտակցությունը, բայց միևնույն ժամանակ թող պատրաստ լինի արյունոտ պատահարների դեմ:

[1] «Ալիք», N 18, 19 մայիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 12, 11 մայիսի 1906թ.:

Միայն այդ ձևով կարելի է չարիքի առաջն առնել կամ գուցե նրա հարվածները թեթևացնել»[1]:

Քոչը բարձրանալու օրերին խիստ տագնապալի վիճակ ստեղծվեց Շուշի քաղաքում:

Աղդամը և նրա շրջակա թուրքական գյուղերը հավաքատեղի էին դարձել մի քանի հազար սպառազեն քոչվոր հրոսակների համար, որոնք ազդանշանի էին սպասում վճռական գրոհ տալու Շուշիի վրա:

Մահացու վտանգ էր կախվել քաղաքի ողջ հայության գլխին, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ բուն քաղաքում բնակվում էին շուրջ 20 հազար սպառազեն թուրքեր ու քրդեր՝ կազմ ու պատրաստ թիկունքից խփելու հայ բնակչությանը:

Թուրքերը մտածում էին, որ եթե իրենց հաջողվի գրավել Շուշին, կոտորել և այնտեղից դուրս մղել հայերին, այսինքն՝ տեր դառնալ Ղարաբաղի միջնաբերդին, ապա դրանից հետո դյուրին կլինի գրավել ու քանդել հարյուրավոր գյուղեր, արյունալի հաշվեհարդարի ենթարկել Ղարաբաղի հայությանը, հայ տարրը քշել տարածաշրջանից:

Իշխանությունները պահանջեցին հանձնել քաղաքի ինքնապաշտպանության հայ ղեկավարներին, այն դեպքում, երբ ոչ մի թուրք ավազակ, բեկ կամ պրիստավ մինչ այդ չէր ձերբակալվել: Չկարողանալով հասնել իրենց նպատակին՝ նրանք ձերբակալեցին չուշեցի երկու անմեղ հայերի՝ բժ. Բահաթրյանին և Գերասիմ Շահնազարյանին՝ վարչական կարգով Օրենբուրգի նահանգ աքսորելու նպատակով:

Մայիսի 13-ին Շուշի քաղաքի հայկական մասում ցրվում է հայերեն թռուցիկ, որի բովանդակությունը հետևյալն էր. «Հայե՛ր, չկարծեք թե մենք խաղաղվել ենք. մենք ձեզ, իբրև անհաշտ թշնամիների, նորից կռվի ենք կանչում»:

Երկու օր հետո համարյա նույն նախադասություններով մի ուրիշ թռուցիկ է ցրվում թուրքական քաղաքամասում այս անգամ թուրքերեն: Պարզ էր, թե սադրանքը որտեղից էր գալիս:

Շուշի եկող գլխավոր ճանապարհի փակումը աղետալի վիճակ ստեղծեց քաղաքի հայության համար: Պետք էր դրությունից ելք գտնել և ճեղքել շրջապատման օղակը: Եվ Շուշիի հայերը ձեռնամուխ եղան դեպի Գանձակ լեռնային ճանապարհի բացմանը, որն իրականացրին անհավատալի կարճ ժամանակամիջոցում:

Բայց դա հարցի արմատական լուծում չէր, քանի որ ճանապարհն անցնում էր կածաններով ու թավուտներով, վերելքներով ու վայրէջքներով, շատ տեղերում թուրք հոծ բնակչություն ունեցող գյուղերի տարածքներով: Ուրեմն՝ ամեն ինչ պետք էր անել Աղդամի վրայով Եվլախի կայարանի հետ կապվելու

[1] «Ալիք», N 12, 11 մայիսի 1906թ.:

համար, բայց տվյալ պահին դա թվում էր համարյա անհնարին:

Մայիսի 14-ին Եվլախ-Աղդամ-Շուշի խճուղու վրա, Աղդամից ոչ հեռու, Ղարբանդ կայանի մոտ 40 զինված թուրքեր հարձակվում են Շուշի գնացող ճանապարհորդների վրա և գերում: Այլազգիներին վերադարձնելով Եվլախ՝ նրանք պահում են 28 հայ ճանապարհորդներին, որոնց թվում կային 3 կին և 2 երեխա: Մի քանի օր անց գտնվեցին այդ գերված հայերից 15-ի մորթված ու այլանդակած դիակները, իսկ մյուսներն անհետ կորան:

Այդ ժամանակ Շուշիում գտնվող Գանձակի ժամանակավոր գեներալ-նահանգապետ Այլֆտանը մայիսի 19-ին փոխարքային հեռագրում էր. «Մայիսի 15-ին (պետք է լինի մայիսի 14-ին: - Հ.Ս.), կեսօրվա մոտերքը Աղդամի փոստային տրակտի վրա թուրքերը կողոպտեցին երկու հանրակառք և գերի տարան 14 հայերի: Գերիներին որոնելու համար կազակներ են ուղարկված»[1]:

Ինչպես տեսնում ենք, փոխարքային կիսով չափ պակաս էր ներկայացված հայ գերյալների թիվը, իսկ նրանց որոնելու մասին հավաստիացումները այնպես էլ մնացին թղթի վրա:

Այդ արյունալի դեպքի կապակցությամբ «Ալիքը» գրում էր. «Սարսուռ է գալիս ձեր սրտին, մարդու մազերը փշաքաղվում են՝ այդ ցած ու տմարդի ոճրի ամբողջ ծավալը պատկերացնելիս»[2]:

Կատարված եղեռնագործությունից հետո նորից փակվեց Եվլախ երկաթուղային կայարանի և Շուշիի միջև ճանապարհը: Երթևեկությունը լիովին դադարեց:

Շուշիի թուրքերը մտածում էին նոր ընդհարում առաջ բերել քաղաքում, բայց նախորդ շրջանում կրած պարտությունների հիշողությունը նրանց սթափության էր մղում, ուստի սիրտ չէին անում զենքի դիմել: Բայց դրա փոխարեն, հայերին մնասելու համար, ուրիշ միջոցներ էին փնտրում:

Մայիսի կեսերին քաղաքի թուրքերը բոյկոտ հայտարարեցին՝ ոչ մի ապրանք չծախելով հայերին: Թուրքի բազար գնացող հայ գնորդներին նրանք անպատվում ու ճանապարհ էին դնում: Նրանցից մեկը նզովելով «գյավուրներին»՝ միաժամանակ ասել էր. «Այս ռուսը մեր արանքից ձեռք չքաշեց, որ մենք իրար կոտորեինք ու պրծնեինք»[3]:

Շուշի-Եվլախ ճանապարհին նորից կատարվում էին սարսափելի բաներ: Վարչությունն ամբողջ վեց-յոթ ամիս խոստումներ էր տալիս, հրամաններ արձակում, զորքեր էր ուղարկում գյուղերը ռմբակոծելու, բայց չէր կարողանում այնպիսի մի հասարակ գործ կատարել, ինչպիսին մեծ ճանապարհի ազատ ու ապահով երթևեկության վերականգնումն էր:

Այս ճգնաժամային պահին քաղաքի հայության ղեկավարությունը Շուշիի

[1] «Մշակ», N 107, 20 մայիսի 1906թ.:
[2] «Ալիք», N 22, 24 մայիսի 1906թ.:
[3] «Մշակ», N 106, 19 մայիսի 1906թ.:

թեմական առաջնորդին՝ Աշոտ եպիսկոպոսին առաջարկեց մեկնել Թիֆլիս և հայերի կողմից փոխարքային ներկայացնել խնդրագիր: Առաջնորդը գնաց Թիֆլիս և ընդունվեց փոխարքայի կողմից: Ներկայացրած խնդրագիրը պարունակում էր այսպիսի կետեր. 1. Գեներալ Գոլոշչապովին, որն այդ ժամանակ գտնվում էր Թիֆլիսում, նորից ուղարկել Շուշի: Հայերը համարում էին, որ չնայած գեներալն իրենց նկատմամբ մինչ այդ վարվել է դաժանորեն, բայց դա, նրանց ասելով, տանելի է, քանի որ նույնպիսի դաժանությամբ վերաբերվել է նաև թուրքերի հետ: Այլ խոսքով, հայերի վրա Գոլոշչապովը թողել էր «անաչառ» ու «անկողմնակալ» մարդու տպավորություն, 2. Ապահովել Եվլախ-Շուշի և Շուշի-Գորիս ճանապարհների երթևեկությունը, 3. Պայմաններ ստեղծել, որպեսզի գյուղացիները դաշտային աշխատանքները կատարեն անվտանգ, 4. Վերադարձնել Վարանդայի գյուղերից ապօրինաբար գանձած տուգանքները, 5. Հայերից չխլել զենքերը, ինչպես չի խլվում թուրքերից, 6. Դադարեցնել Վարանդայի գյուղերում Վիվերնի պատժիչ զորամասի գործողությունները, 7. Պատժել Վարանդայի չարագործությունների հեղինակներին, 8. Քոչվորներին արգելել իրենց հետ զենք տանել սարերը[1]:

Փոխարքան, լսելով առաջնորդին, խոստացավ բավարարություն տալ բարձրացրած բոլոր խնդիրներին, ասելով նաև, թե «հարկավոր միջոցներ ձեռք են առնված», «հանցավորներն անպայման կպատժվեն» և այլն: Բայց այդ խոստումները, ինչպես բոլոր նախորդները, մնացին օդում կախված: Թեմական առաջնորդի ներկայացրած բոլոր խնդրանքներից կատարվեց միայն մեկը՝ փոխարքայի հրամանով գեներալ Գոլոշչապովը մեկնեց Ղարաբաղ:

Մայիսի վերջին Գոլոշչապովը նորից Շուշիում էր: Առաջին օրերին նա փորձում էր ցույց տալ, թե անկողմնակալ է և առանց ազգային խտրության պատժելու է նրանց, ովքեր զենք կգործադրեն: Բայց գեներալն առաջվանը չէր. երևում էր, որ նրա իրավունքները սահմանափակված են, ուստի կոնկրետ ոչինչ չէր անում վերահաս աղետը կանխելու համար: Շարունակ հայերին մեղադրելով՝ միաժամանակ նրանց հանգստացնում էր, ասելով. «Դուք ոչինչ մի՛ ձեռնարկեք, ես ամեն բան կարգի կբերեմ»:

Գոլոշչապովի գալուց հետո առաջվա պես ճանապարհները մնացին փակ, շարունակվեցին անհատական սպանությունները: Քաղաքի թուրքերն իրենց չափազանց համարձակ էին պահում և առիթի սպասում: Նրանք ազատորեն զինված մարդ էին գալիս թե՛ ճանապարհի վրա և թե՛ քաղաքի մեջ՝ իրենց մասում ու հայկական մասի սահմաններում անթաքույց նախապատրաստվելով նոր արյունահեղության: Քաղաքի թուրքերի նախապատրաստությունները ղեկավարում էր Նաջաֆկուլի աղան: Ամեն ինչից երևում էր, որ նոր ընդհարումն ավելի ծավալուն և ավելի կատաղի է լինելու, քան անցած տարվա օգոստոսին տեղի ունեցածը:

[1] **«Ալիք»**, N 40, 14 հունիսի 1906թ.:

*
* *

1906թ. գարնան վերջին ամսին հայության գլխին եկած նոր աղետները, ցարական իշխանությունների շարունակվող սադրանքները, տարդի հարևանի հարձակումները հայ ժողովրդի սոցիալական տարբեր խավերին, նրա տարբեր հատվածներին մղեցին համերաշխ գործակցության, ամրապնդվեց ազգային գիտակցությունը, ուժեղացավ միմյանց սատար կանգնելու ձգտումը:

Համերաշխության այն մթնոլորտը, որ հայության մեջ ստեղծվել էր 1905 թվականին, ավելի խորացավ 1906-ին:

Թուրք-հայկական ընդհարումներից մնասված և տնտեսապես քայքայված հայ գյուղացիներին օգնելու նպատակով դեռևս 1905թ. ամռանը կազմվել էր կենտրոնական նպաստամատույց հանձնաժողով, որը կարողացավ ինչպես 1905-ին, այնպես էլ 1906-ին բավականաչափ խոշոր գումար հանգանակել և իրապես օգնության հասնել մնաս կրած գյուղացիական տնտեսություններին՝ բաժանելով ալյուր, ցորեն, սերմացու, հագուստ և այլն: Այդ նպատակին 1905թ. ծախսվեց մոտավորապես 400 000 ռուբլի, մոտավորապես նույնքան էլ 1906-ին:

1906թ. Նոր տարվա նախօրյակին կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը կոնդակներ էր հղել Կ. Պոլսի պատրիարքին, Ամերիկայի, Պարսկա-Հնդկաստանի, Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի և Բեսարաբիայի առաջնորդներին, նույնպես՝ Պողոս փաշա Նուբարին (Եգիպտոս), իշխան Աբամելիք Լազարյանին (Պետերբուրգ), Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, Նոր Նախիջևանի եկեղեցական հոգեբարձությանը և բարեգործական ընկերությանը՝ առաջարկելով նվիրատվություններ ժողովել հայ-թուրքական ընդհարումներից մնասված հայերին օգնելու համար[1]: Կաթողիկոսի կոչն ամենուրեք լայն արձագանք գտավ:

Օրինակ՝ Պետերբուրգի հայ եկեղեցական խորհուրդը այդ նպատակով իր միջոցներից հատկացրեց 100 000 ռուբլի[2]: Մեծ գումարներ հավաքվեցին Նոր Նախիջևանում, Մոսկվայում, Աստրախանում:

Գանձակի նահանգի 1906-ի առաջին կեսի դեպքերը մի իսկական քննություն էին Թիֆլիսի հայության համար: Ազգային գործիչների նախաձեռնությամբ այստեղ լայն կամպանիա էր սկսվել տուժածներին նյութական և այլ կարգի օգնություն ցույց տալու համար: Հանգանակվեց մի քանի հազար ռուբլու հասնող դրամ, հավաքվեց հագուստ ու կոշիկ, և այդ բոլորն ուղարկվեց Վարանդա ու Արեշ:

[1] **«Արշալույս»**, N 23, 1 փետրվարի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 36, 18 փետրվարի 1906թ.:

Ձեռնարկված կարևոր միջոցառումներից մեկը դեղորայքի գնումն էր և վիրավորներին բժշկական օգնություն հասցնելը: Այդ նպատակով մամուլի օրգանները կոչեր էին հղում հայ բժիշկներին, նրանց հորդորում էին օր առաջ մեկնել գավառներ և օգնություն ցույց տալ տուժած ազգակիցներին:

Չնայած հայ մամուլի օրգանների, բարեգործական և այլ կազմակերպությունների բազմաթիվ կոչերին, հայ բժիշկները հապաղում էին: «Ամոթ» վերնագրով հոդվածում «Մշակը» գրում էր.

«Ամո՛թ ձեզ, հայ բժիշկներ, բյուր ամո՛թ և նախատի՛նք ձեզ... Խաղք ու խայտառակ եղաք դուք ձեր քարացած անտարբերությամբ»: Թերթը հայ բժիշկներին կոչ էր անում «թողնել գրավիչ քաղաքը իր բոլոր բարիքներով, փառահեղ դահլիճները, հանգիստ կառքերը և գնալ դժոխային ճանապարհներով դեպի տանջարան գյուղերը, մտնել կուզեկուզ ցածլիկ, խոնավ ու մութ մարդկային որջերը և այնտեղ թաց ու սառը գետնին ընկած մսե այլանդակ կույտերին ձեռք տալ, բարձրացնել, սիրտ տաքացնող մի խոսք ասել, ցավին դարման անող մի ճար անել, ... հիշելով միմիայն, որ նրանք էլ մարդ են»[1]:

Խիստ էին մամուլի որակումները և նախատինքը. հասարակական ընդհանուր կարծիքի ճնշման տակ տասնյակ հայ բժիշկներ Թիֆլիսից և Բաքվից մեկնեցին Վարանդա, Արեշ, Զանգեզուր:

Կովկասում կատարվող իրադարձությունները շարունակում էին մնալ գաղութահայության ուշադրության կենտրոնում, հուզում էին նրա միտքն ու հոգին:

Տարբեր երկրներում լույս տեսնող հայկական թերթերը պարբերաբար գաղութահայությանը ներկայացնում էին տեղի ունեցող կռիվները՝ իրենց մանրամասն նկարագրություններով: Հնչակյան և դաշնակցական կազմակերպությունները հրավիրում էին ժողովներ ու հավաքներ, ուր միջոցներ էին հանգանակվում:

1906թ. հունվարի 27-ին Հ.Յ. դաշնակցության Ամերիկայի կենտրոնական կոմիտեն Կովկասի եղբայրներին օգնություն ցույց տալու կոչ ուղղեց ամերիկահայությանը:

Հայրենակիցներին հիշեցում էր արվում, որ արդեն մեկ տարի է, ինչ Անդրկովկասի հայությունն անհավասար կատաղի կռիվ է մղում մի բարբարոս ցեղի՝ կովկասյան թուրքերի դեմ, որին ուժ են տալիս և՛ ցարը, և՛ սուլթանը: Հիմա ծանր օրեր են հատկապես Գանձակի նահանգի հայերի համար, որոնք, սակայն, չեն ընկճվում, հանդես են բերում ռազմական խրոխտ ոգի, զենքի ուժով արժանի դաս են տալիս ելուզակներին:

Ողբալով զոհերին, այնուհետև ասված էր կոչի մեջ, մենք միաժամանակ պետք է օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացածներին: Կ. կոմիտեն ամերիկահայերին հիշեցնում էր, որ կովկասահայությունը միշտ ձեռք է մեկնել իր

[1] «Մշակ», N 75, 11 ապրիլի 1906թ.:

թուրքահայ եղբայրներին, երբ վերջիններս դժբախտության մեջ են եղել:

Հերթը մերն է՝ Ամերիկայում ապաստանած տաճկահայերինը: «Օգնե՛նք Կովկասին, օգնե՛նք՝ ապացուցանելու համար աշխարհին, որ մենք մեռած ժողովուրդ մը չենք, ցուցնելու համար մեր ցեղի թշնամիներուն, թե հայությունը եսամոլ, անմիաբան, բաժան-բաժան եղած, իդեալե զուրկ մարդոց խումբ մը չէ, ցուցնենք, թե հայը ազգություն մըն է, գիտակից իր համազգային ճակատագրին:

Ամերիկահա՛յ եղբայրներ, մինչև հիմա օգնութեան կազմակերպումը ցանցառ երևույթ մը ունեցավ: Ուստի կոչ մը կընենք ամենուն, ամեն մեկուն, որ փութան օգնել Կովկասին:

Ամեն կազմակերպություն՝ բարեգործական, գրադարանական, եկեղեցական կամ յեղափոխական, կրնայ նախաձեռնարկ ըլլալ այս գործին, յուրաքանչյուր գաղութին մեջ, քանի որ այս գործը վեր է կրոնական և կուսակցական ամեն հարևանութենե:

Փութանք ուրեմն»[1]:

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ: ՀԱՑ ԵՎ ԹՈՒՐՔ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ

Չնայած հեղափոխության դանդաղ վայրէջքին, ժողովրդական հուզումները շարունակում էին ալեկոծել երկրի հասարակական կյանքը: Մարդիկ սպասում էին ազատության, բայց դրա փոխարեն ստացան կոտորածներ, ավերմունք, զինվորական դրություն, գեներալ-նահանգապետեր, էկզեկուցիա, վայրագ կազակներ, կողոպուտ և ... մութ խոստումներ ու ակնարկներ:

Արյունալի հաշվեհարդարի հետ միասին ցարական կառավարությունը փորձեց նոր «օրենսդրական դումա» հրավիրելու օգնությամբ իսպառ ոչընչացնել հեղափոխությունը: Ցարիզմը հույս ուներ դումայի հրավիրումով մասսաներին շեղել հեղափոխությունից և ամրացնել իր դաշինքը լիբերալ-բուրժուազիայի հետ:

Հասարակությունը Պետական դումայի ընտրությունների շրջանն էր մրտնում գնդակների տարափի և սվինների շաչյունի տակ: Այս անգամ մարդկանց մտքերն այլևս բռցավառված չէին սին հույսերով, քանի որ նրանք արդեն բավական փորձ էին ձեռք բերել և զրկվել ոգեշունչ լավատեսությունից: Սակայն, չնայած դրան, մարդիկ դարձյալ սպասումների մեջ էին, անհամբեր սպասումների:

Պետական դումայի ընտրությունները պետք է անցկացվեին 1905թ. դեկ-

[1] «Մշակ», N 44, 28 փետրվարի 1906թ.:

տեմբերի 11-ի ընտրական օրենքի հիման վրա: Այդ օրենքն ապահովում էր մի բուռ կալվածատերերի և բուրժուազիայի խիստ մեծ գերակշռությունը դումայում:

Բնակչության մեծամասնությունն ամբողջապես զրկված էր ընտրական իրավունքից: Ընտրելու իրավունք չունեին կանայք, բոլոր քոչվոր ժողովուրդները, բանակը, մինչև 25 տարեկան երիտասարդները և բանվորների զգալի մասը: Ընտրությունները կատարվելու էին ըստ կուրիաների, առանձին-առանձին՝ հողատեր-կալվածատերերը, քաղաքային բնակչությունը, գյուղացիները, բանվորները: Ընտրություններն ուղղակի չէին, այլ բազմաստիճան՝ բանվորների համար՝ եռաստիճան, գյուղացիների համար՝ քառաստիճան: Ընտրել կարող էին միայն սեփական տուն կամ բնակարան ունեցողները: Պետական դումայի անդամների ընդհանուր թիվը սահմանված էր 524 մարդ:

Ընտրությունները տեղի ունեցան 1906թ. փետրվար-մարտ ամիսներին՝ կառավարական ահավոր տեռորի պայմաններում: Նահանգների 70%-ում ռազմական դրություն էր հայտարարված, ամենուրեք պատժիչ արշավախմբեր էին:

Բնական է, որ ընտրությունների նման կազմակերպման դեպքում բանվորների և գյուղացիների համար չափազանց դժվար էր դումա ընկնելը:

Սպասումներին հակառակ՝ ընտրություններն անցան հաջող. պատգամավորների առավել ռեակցիոն թեկնածուները, շատ քիչ բացառություններով, ամեն տեղ պարտություն կրեցին, և հաղթությունը մնաց ազատամիտներին:

Բոլշևիկները կոչ էին արել բոյկոտի ենթարկել ընտրությունները, գտնելով, որ դրանք ժողովրդական չեն, այսինքն՝ կատարվում էին ոչ թե քառյակ սիստեմով՝ գաղտնի, հավասար, ուղղակի և ընդհանուր քվեարկությամբ, այլ երկպատիկ ընտրությամբ: Որոշ ժամանակ անց և՛ բոլշևիկները, և՛ մենշևիկները գտան, որ սխալ է այդ բոյկոտը:

Չնայած բոլշևիկների բոյկոտին, որոշ շրջաններում բանվորները մասնակցեցին ընտրություններին, և մի քանի սոցիալ-դեմոկրատներ (մենշևիկներ) ընտրվեցին դումայում:

Պետական դումայում ընդամենը ընտրվել էր 478 պատգամավոր: Այնտեղ ինչ-որ չափով ներկայացված էին երկրի այն հասարակական ուժերը, որոնց պայքարը և փոխազդեցությունը վերջին հաշվով պետք է որոշեին հեղափոխական պայքարի ելքը:

Այդ ուժերն էին. ա) Դումայի մեծամասնությունը կազմող կադետները (179 մանդատ, այսինքն՝ պատգամավորների ընդհանուր թվի 1/3-ից ավելին), որոնք ուզում էին հինը հաշտեցնել նորի հետ, լիակատար ազատություն ձեռք բերել բուրժուազիայի համար, բ) «Օկտյաբրիստները» և «Պրավոպորյադկովցիները», այսինքն՝ խոշոր կապիտալիստների և ազնվականության ներկայացուցիչները, որոնք ուզում էին, ինչ գնով էլ լինի, փրկել միապետությունը (սրանք ընտրություններում լիակատար ձախողում կրելով՝ ունեին ընդամենը 22 մանդատ և զբաղեցնում էին դումայի ծայրահեղ աջ թևը), գ) բանվորական

և գյուղացիական դեմոկրատիայի ներկայացուցիչները, որոնք տիրող կարգերի անհաշտ թշնամիներ էին և պայքարում էին քաղաքական կատարյալ ազատության համար (սրանց մեծ մասը գյուղացիական դեմոկրատներ էին՝ 94 պատգամավոր, մյուս մասը՝ սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ՝ 13 տեղ)[1]:

Սևհարյուրակային կուսակցությունները դումայում տեղ չէին ստացել:

Եթե դումայի անդրկովկասյան ներկայացուցիչներն ուզում էին որևէ քաղաքական դեր կատարել, ապա պետք է հարեին այդ կուսակցություններից որևէ մեկին: Եթե նրանք խուսափեին այդ բանից և փորձեին կազմել առանձին ու չեզոք «ազգային» խմբակցություններ, ապա դրանով իսկ ցույց կտային կատարյալ քաղաքական տհաստություն ու կդատապարտվեին կատարյալ անգործության:

Բայց ու՞մ հարել:

Թիֆլիսի և երկրամասի արևմտյան գավառների սոցիալ-դեմոկրատ ներկայացուցիչների համար այդ հարցը, իհարկե, վճռված էր նախապես. ամեն ոք գիտեր, թե ինչ դիրք են բռնելու կովկասյան պրոլետարիատի ներկայացուցիչները Պետական դումայում: Բայց դեռ հայտնի չէր, թե քաղաքական ինչ դավանանքի կհետևեն հայկական և թուրքական գավառների պատգամավորները:

Բոլշևիկյան «Կայծ» թերթը գրում էր, որ եթե դումայի հայ և թուրք պատգամավորները մտադիր են ծառայել աշխատավոր ու հարստահարված ժողովրդի, բանվորության և գյուղացիության շահերին, ապա ներկա դեմոկրատական հեղափոխության մեջ նրանք պետք է վճռականապես անցնեն դումայի ձախակողմյան կուսակցությունների կողմը, գործեն համերաշխ, ձեռք ձեռքի Անդրկովկասից գնացած պրոլետարական ներկայացուցիչների, սոցիալ-դեմոկրատ պատգամավորների հետ[2]:

Բայց այդպես չեղավ: Անդրկովկասից Պետական դումայում ընտրված պատգամավորների զգալի մասը միացավ կադետներին, իսկ մեծամասնությունը անկախ էր և չէր հարում որևէ ֆրակցիայի:

Դումայում ազատականների գերակշռությունը փոքր-ինչ ոգևորություն ներշնչեց հասարակական լայն շրջաններին, և նրանք նորից սկսեցին զանազան հույսեր փայփայել:

Ինչ էր սպասում ժողովուրդը դումայից: Նա սպասում էր, որ դուման առնվազն պետք է իրագործի այն ազատությունները, որ ցարը խոստացել էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստով: Թեև մանիֆեստի խոստումները չափազանց մշուշապատ էին, բայց այնտեղ կային մի քանի կետեր, որոնք բավականին որոշ էին: Այդ որոշակի կետերից ամենագլխավորն այն էր, որ ժողովրդի ներկայացուցիչներից կազմված օրենսդիր ժողովը՝ Պետական դուման, իրավունք

[1] Տե՛ս "История КПСС", том II, Политиздат, Москва, 1966, էջ 201:

[2] «Կայծ», N 25, 9 հունիսի 1906թ.:

պիտի ունենար պետության համար մշակելու օրենքներ, փոխելու հները և կազմելու նորերը: Այլ խոսքով, ինչպես բոլոր սահմանադրական երկրները՝ Ռուսաստանը ևս ունենում էր պառլամենտ՝ լայն իրավունքներով:

Իսկ պառլամենտի կամ օրենսդիր ժողովի ամենաէական իրավունքները, նույնիսկ ամենանեղ սահմանադրություն ունեցող երկրներում, շատ որոշ են. 1. Ոչ մի օրենք, առանց օրենսդիր ժողովի հավանության և որոշման, չի կարող հրատարակվել և դրվել գործադրության մեջ, 2. Օրենսդիր ժողովը, բացի օրենքներ մշակելուց, իրավունք ունի հսկելու, որպեսզի իր ընդունած և հրատարակած օրենքները մինիստրները, նահանգապետերը, քաղաքապետերը, դատավորները և այլոք գործադրեն ճշտությամբ: Դա նշանակում է, որ ով խախտում է օրենքը, նա պետք է պատասխան տա ժողովրդի ներկայացուցչական ժողովի առջև, 3. Օրենսդիր ժողովն է որոշում, թե ինչ տեսակ հարկեր ու տուրքեր պետք է նշանակել ժողովրդի վրա և թե ինչպես կամ պետության ինչ կարիքների վրա պետք է ծախսել պետական հասույթները:

Ահա այս երեք հիմնական իրավունքները նույնիսկ ամենախղճուկ պառլամենտի ամենաէական իրավունքներն են, որոնք և խոստացվել էին հոկտեմբերի 17-ի մանիֆեստով: Բոլորը համոզված էին, որ դուման, որպես օրենսդիր ժողով, ունենալու է այդ վերոգրյալ իրավունքները: Բացի դրանից, հավատացած էին, որ օրենսդիր ժողովի հաստատումով երկրում պետք է վերջ դրվի բացարձակ ինքնակալությանը, քանի որ սահմանադրական կառավարումը և ինքնակալ իշխանության գաղափարը միմյանց բոլորովին հակառակ, միմյանց ժխտող սկզբունքներ են:

Մոտենում էր դումայի գումարման օրը: Հենց այդ ժամանակ բյուրոկրատիան չտեսնված կարճ ժամանակում մշակեց և հռչակեց «Պետական հիմնական օրենքները», որոնք գալիս էին խորտակելու լավատեսական բոլոր հույսերը:

Դեռևս 1906թ. փետրվարին Նիկոլայ II-ը «վերակառուցել» էր պետական խորհուրդը, որը դառնում էր օրենսդրական ֆունկցիաներ ունեցող մի պալատ՝ դումային համահավասար: Առանց այդ խորհրդի հավանության՝ դումայի ընդունած ոչ մի օրենք չէր կարող ուժ ունենալ: Պետական խորհուրդը կիսով չափ կազմված էր ցարի նշանակած խոշոր չինովնիկներից, կիսով չափ էլ՝ ազնվականների, հոգևորականության և առևտրաարդյունաբերական բուրժուազիայի վերնախավերի ընտրած ներկայացուցիչներից: Դրան գումարվեցին Պետական դումայի բացման նախօրյակին՝ ապրիլի 24-ին հրապարակված «Պետական հիմնական օրենքների» նոր դրույթները:

«Պետական հիմնական օրենքների» 4-րդ կետում ասված էր. «Ռուսաց կայսրը ունի բարձրագույն ինքնակալ իշխանություն»: 5-րդ կետն ազդարարում էր. «Համառուսաստանյան կայսրին է պատկանում գերագույն ինքնակալական իշխանությունը: Ենթարկվել նրա իշխանությանը ոչ միայն ահից, այլև խղճի մտոք՝ ինքն աստված է հրամայում»: 8-րդ կետով նշվում էր.

«Թագավոր կայսրին է պատկանում օրենսդրության վերաբերյալ բոլոր խնդիրների նախաձեռնությունը»: 9-րդ կետ. «Թագավոր կայսրն է հաստատում օրենքները, և առանց նրա հաստատման ոչ մի օրենք չի կարող ունենալ իր գործադրությունը»: 55-րդ կետում ասված էր. «Պետական խորհրդին և Պետական դումային իրավունք է տրվում առաջարկություն անել գոյություն ունեցող օրենքները վերացնելու կամ փոփոխության ենթարկելու, նոր օրենքներ հրատարակելու մասին, բացի պետական հիմնական օրենքներից, որոնց վերաքննելու նախաձեռնությունը պատկանում է միմիայն Կայսրական Մեծությանը»:

Այնուհետև սահմանվում էր, որ մինիստրները պատասխանատու են միմիայն միապետի առաջ, միայն ցարն իրավունք ունի հրատարակելու բանակին և նավատորմին վերաբերող օրենքներ, նա կարող է նաև կնքել փոխառություններ, եթե նույնիսկ Պետական դուման դրանք չհաստատի նստաշրջանի ժամանակ և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս օրենքը, ինքն իրեն հռչակելով «հիմնական օրենք», ինքնըստինքյան բացառում էր սահմանադրության, որպես ժողովրդավարության երևույթի, սկզբունքը: Չէ՞ որ բոլոր սահմանադրական երկրներում ինքը ժողովուրդն է միայն, որ ի դեմս պառլամենտում իր ներկայացուցիչների, իրավունք ունի փոխելու պետական հիմնական օրենքները:

Այսքանն էլ բավական է հասկանալու համար, որ իրականում Պետական դուման զրկված էր օրենսդրական իրավունքներից: Եթե նկատենք, որ «պետական հիմնական օրենքներ» մշակողները լիովին նկատի են ունեցել նաև իրենց շահերը, այլ ոչ միայն կայսերական ընտանիքի և անձամբ կայսրի, ապա պարզ է դառնում, որ իշխող դասակարգերը չէին ուզում ոչինչ փոխել երկրում: Դումայի մի քանի հարյուր պատգամավորների դեմ կանգնած էր զորավոր բյուրոկրատիան:

Այսպիսով, ամենապինդ թելերով կաշկանդված հենց այդ դումայից է, որ ժողովուրդը դարման էր սպասում իր ցավերին: Նա սպասում էր մամուլի, խոսքի, խղճի ազատության, գումարումների, ժողովներ կազմելու, ընկերություններ հիմնելու կատարյալ ազատության, աշխատանքի և գործադուլի ազատության, կայսրության բոլոր ժողովուրդների իրավունքները հավասարեցնելու, անձն ու բնակարանն անձեռնմխելի դարձնելու, չարատանջ երկրում խաղաղություն և անդորրություն հաստատելու, երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու, անհող գյուղացիներին հող տալու, բանվորների աշխատանքը մարդավայել դարձնելու մասին օրենքներ:

Մի քանի ամիս վարչապետի աթոռը զբաղեցնելուց հետո, դումայի բացումից անմիջապես առաջ, իր պաշտոնից հրաժարական տվեց մինիստրների կաբինետի նախագահ կոմս Վիտտեն: Հրաժարականի պատճառն այն էր, որ նա ցանկացել էր ձեռք բերել և՛ հասարակության համակրանքը, և՛ այսպես կոչված ազդեցիկ շրջանների բարեհաճությունը: Եվ ահա անհաշտելին

հաշտեցնելու և անհամաձայնը համաձայնեցնելու իր փորձերի մեջ նա լիովին ձախողվել էր:

Ռուսաստանի տարբեր քաղաքական ուժերը և նրանց մամուլը միահամուռ դատապարտում էին Վիտտեին՝ ծայրահեղ աջակողմյաններից մինչև ծայրահեղ ձախակողմյանները, քանի որ իր կարճատև կառավարման ընթացքում նա չկարողացավ գտնել ոչ մի հասարակական խումբ կամ քաղաքական կուսակցություն, որը նրան հայտներ իր համակրությունը:

Արտասահմանյան մամուլը գրեթե հակառակ կարծիք էր հայտնում Վիտտեի հրաժարականի մասին՝ դրա մեջ տեսնելով միայն հետադիմության հաղթանակը: Շատ թերթեր գրում էին, որ կոմսի հրաժարականը վաղուց վճռված էր պալատական կուսակցության կողմից, որի գլուխն էին կանգնած Տրեպովը և Պոբեդոնոսցևը:

Պալատական կուսակցությունը երբեք չէր դադարում մեղադրել Վիտտեին՝ իբրև վտանգավոր նորարարի, իսկ ընտրությունների ելքը այդ կուսակցությանը տվեց ուժեղ զենք: Կոմս Վիտտեն գուշակում էր ստրուկ դումա՝ կազմված տգետ մուժիկներից: Դեպքերը ցույց տվեցին, որ նա բոլորովին չէր հասկացել երկրում ստեղծված դրությունը: Դրանից պալատական կուսակցությունն այն եզրակացությանը հանգեց, որ Վիտտեն պետքական չէ նախագահի բարձր պաշտոնի համար: Նրան հաջողվեց տապալել Վիտտեին, բայց դժվար էր հասկանալ, թե հին ռեժիմն ինչ օգուտ կարող է քաղել նրա անկումից: Համենայն դեպս կոմս Վիտտեն հին կարգին ծառայում էր նվիրումով: Նա կարող էր եթե ոչ չեզոքացնել ընդդիմությունը, գոնե հիմք դնել նրա հետ կոմպրոմիսների քաղաքականությանը:

Վիտտեի հրաժարականից հետո մինիստրների խորհրդի նախագահի պաշտոնում նշանակվեց սևհարյուրակային բյուրոկրատ Իվան Լոգինովիչ Գորեմիկինը: Ներքին գործերի մինիստր նշանակվեց Ստոլիպինը՝ գյուղացիների ջարդարարը և 1905-ի հոկտեմբերյան գործադուլի խեղդողը Սարատովի նահանգում: Նա փոխարինեց կատաղի միապետական Դուրնովոյին, որն իր հերթին փոխարինել էր «ազատական» Սվյատոպոլկ-Միրսկուն:

Այս պայմաններում է, որ ժողովուրդն աչքերը հառած սպասում էր դումայի հրավիրմանը՝ նրա հետ կապելով կարոտած ազատության իրագործումը և իր հոգնած հույսերի կատարումը:

Առաջին Պետական դուման բացվեց 1906թ. ապրիլի 27-ին, Ձմեռային պալատի Գեորգիևյան դահլիճում, Նիկոլայ II-ի ճառով:

Բացելով դուման՝ ցարը պատգամավորներին դիմեց շնորհավորական խոսքով, միաժամանակ հիշեցնելով, որ նրանք ընտրված են իր հրամանի համաձայն և իր հպատակների կողմից: Որևէ ակնարկ չանելով հեղափոխության հիմնական «մեղսակցի»՝ բանվոր դասակարգի մասին՝ նա, սակայն, գյուղացիությանն անվանեց իր «սրտին չափազանց մոտ»: Ցարը դումային խոստացավ ամեն տեսակի աջակցություն, այն դումային, որին շուտով պիտի արձակեր:

Դուման չարդարացրեց ցարական կառավարության հույսերը: Երկար դարերից ի վեր Ռուսաստանի բազմատանջ ժողովուրդը իր ներկայացուցիչների բերանով առաջին անգամ հնարավորություն էր ստացել հարգանք ներշնչող ձայնով ներկայացնել իր պահանջները: Դումայում բուռն քննադատություններ ծավալվեցին կառավարության, նրա առանձին պաշտոնյաների հասցեին, առաջադրվում էին երկրի դեմոկրատացման և աշխատավորների սոցիալական վիճակի բարելավման խնդիրներ:

Ժողովրդական ներկայացուցիչների առաջին քայլերը, Ալադինի, Անիկինի, Ռոդիչևի, Պետրունկևիչի և ուրիշ պատգամավորների լուրջ, մտածված ճառերը, որ արտասանում էին դումայի ամբիոնից, այլևս ոչ մի կասկած չէին թողնում և կարող էին համոզել նույնիսկ ամենաթունդ սկեպտիկներին, որ ռուսական առաջին ներկայացուցչական ժողովի պատգամավորների մեծ մասը կանգնած է իր կոչման բարձրության վրա, որ նրանք հաստատ վճռել են ժողովրդի կյանքի էական պահանջների վերաբերյալ կառավարությանը չանել ոչ մի զիջում, որ անշեղ առաջ են մղելու այն պահանջները, որոնց իրագործումից էր կախված պետական կազմի վերանորոգությունը և ժողովրդի համար հիմնական պահանջների ապահովումը:

Թեև դուման իր ամբողջության մեջ հեռու էր հեղափոխականությունից և դավանում էր ռեֆորմների ուղին, բայց ազատամիտ պատգամավորների կողմից երկրում արմատական վերափոխումներ կատարելուն ուղղված կտրուկ պահանջների առումով դուրս էր գալիս սովորական բարենորոգչական սահմաններից և մեծ հնչեղություն էր տալիս ժողովրդական մի շարք պահանջների:

Կադետներից հետո դումայում առանձնակի ակտիվություն էր ցուցաբերում աշխատավորական խմբակցությունը (տրուդովիկներ), որը քանի գնում ավելի էր թեքվում դեպի ձախ և փորձում էր կապվել ու ձուլվել հեղափոխական ժողովրդի հետ: Հունիսի վերջին խմբակցությունն իր նիստերից մեկում որոշել էր պարբերաբար ներկայացուցիչներ ուղարկել գավառները և ժողովրդական զանգվածների մեջ արծարծել կազմակերպվելու և դումայի իրենց ներկայացուցիչների հետ կապվելու անհրաժեշտության խնդիրը:

Իբրև կազմակերպական ձև, դումայի աշխատավորական ներկայացուցիչներն առաջարկում էին ստեղծել տեղական ինքնակառավարման ընտրովի մարմիններ, որոնք գյուղերում պետք է իրենց վրա վերցնեին ագրարային հարցի լուծումը:

Կազմակերպվելու այդ ձևը տվյալ հեղափոխական պահին վերին աստիճանի կարևոր էր ու ժամանակին: Ամենամեծ դերը, որ կարող էր կատարել դուման, հենց այն էր, որ նա պետք է իր շուրջը համախմբեր ու կազմակերպեր դեռևս անկազմակերպ, դեռ հեղափոխական կուսակցությունների դրոշի տակ չմտած ժողովրդական լայն մասսաներին:

Բանվորական անթիվ-անհամար գործադուլները, գյուղացիական հուզում-

ները, հետզհետե ծավալվող շարժումը զորքի մեջ, ամենուր հեղափոխական տրամադրությունների աճը ակներև էին դարձնում տարերային նոր բունկումների անխուսափելիությունը: Այդ պարագայում հաջողության հասնելու հիմնական պայմանը հեղափոխական ուժերի համախմբումն էր, նրանց կազմակերպումը:

Բավական չէր հեղափոխական տրամադրության և հեղափոխական գիտակցության ներկայությունը: Հարկավոր էր, որ նրանք մարմնավորվեին որոշակի կազմակերպությունների մեջ, որոնք ունակ լինեին վճռական բոպեին հակադրվելու ռեակցիայի արհավիրքներին:

Ահա թե ինչու սոցիալ-դեմոկրատական մամուլը ջերմորեն ողջունում էր դումայի աշխատավորական խմբակցության վերոհիշյալ որոշումը:

Բոլշևիկյան «Կայծը» այդ կապակցությամբ գրում էր.

«Ժողովրդական մասսաները պետք է ընդառաջ գնան աշխատավորների խմբակցության կոչին և պետք է ամեն կերպ ձգտեն կազմակերպվել, կազմակերպվել և՛ [դարձյալ] կազմակերպվել»[1]:

Դումայի պատգամավորների առաջին քայլերը ողջունվում էին ամբողջ Ռուսաստանի կողմից՝ համակրությամբ ու խրախուսանքով:

Քաղաքական կուսակցությունները դումային տալիս էին տարբեր գնահատականներ և ներկայացնում ամենատարբեր պահանջներ:

Բոլշևիկները դուման համարում էին կաղետական և նրանից ոչինչ չէին ակնկալում: Նրանք գտնում էին, որ դումայի իսկ գոյությունը պատրանքներ է ծնում աշխատավոր զանգվածների մեջ և մթագնում հեղափոխության գործին: Նրանց կարծիքով, քանի որ ռեալ իշխանությունը շարունակում է մնալ ցարական կամարիլիայի ձեռքում, ապա դուման չի կարող քիչ թե շատ կարևոր հարցեր լուծել: Այդ իրավացի հաստատումներն իրենց արտացոլումը գտան բոլշևիկյան բազմաթիվ պրոկլամացիաների և թռուցիկների մեջ, որոնք տպագրվել էին 1906թ. մայիսի 1-ի առթիվ:

Ի տարբերություն բոլշևիկների՝ հայ ազգային կուսակցություններն ու հոսանքները որոշակի հույսեր էին կապում դումայի հետ;

Դումայի նշանակությունը բարձր էին գնահատում հայ լիբերալները, հատկապես «Մշակի» շուրջ համախմբված մտավորականները: «Հնչակը» և Հ.Յ. դաշնակցությունը գտնում էին, որ դուման կարող է պատմության մեջ իր արժանի տեղը գրավել, եթե կարողանա իր բարենորոգչական գործունեությունը զուգորդել հեղափոխության կողմից առաջ քաշած արմատական պահանջների հետ:

Հ.Յ.Դ. առաջին կենտրոնական կոմիտեն 1906թ. մայիսի 1-ի կապակցությամբ հրատարակած իր պրոկլամացիայում առաջ էր քաշում կուսակցության երեք խոշոր պահանջները տվյալ հեղափոխական իրադրության մեջ, պահանջներ, որոնք նաև դրված էին Պետական դումայի առջև, իբրև հրատապ խնդիրներ:

«Մենք, իբրև բանվորներ և սոցիալիստներ, - ասված էր դաշնակցության պրոկլամացիայում, - պետք է տոնենք Մայիսի 1-ը այն երկրում, որ ցարիզմի բռնապետության պատճառով դարձել է մի հսկա արյան բաղնիք, սվինների մի հրեշավոր անտառ»[1]:

Կ. կոմիտեն թվարկում էր բանվոր դասակարգի տվյալ ժամանակաշրջանի հիմնական պահանջները՝ 1) 8-ժամյա բանվորական օր, 2) մշտական բանակների վերացում և ժողովրդական միլիցիայի կազմակերպում, 3) դեմոկրատական հանրապետության հաստատում: Կոմիտեն շեշտում էր. «Մենք՝ իբրև սոցիալիստներ, ընդունում ենք այդ բոլոր պահանջները, միայն «Դեմոկրատական հանրապետության» փոխարեն պահանջում ենք «Դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն»[2]:

Պրոկլամացիայում Հ.Յ.Դ. Կ.կոմիտեն հատկապես կարևորագույն խնդիր էր համարում 8-ժամյա բանվորական օրվա պահանջի կենսագործումը: Բուրժուազիան և բռնակալությունը վճռականապես դեմ էին 8-ժամյա աշխատանքին, պատճառաբանելով, թե «հայրենի արդյունաբերությունը կվնասվի», բայց իրականում նրանք վախենում էին իրենց գրպանի վնասից: Նրանք վախենում էին, որ եթե բանվորները աշխատեն 8 ժամ, ապա կունենան ավելի շատ ազատ ժամանակ ինքնակրթվելու և շատ բան իմանալու, իսկ դա կնշանակեր մահ բուրժուաների և բռնակալների համար: «Նրանց, - ասված էր պրոկլամացիայում, - հարկավոր են մութ ու խավար բանվորներ, աղքատ ու խեղճ, որ սև հացի կարոտից երբեք աչք չբացեն, երբեք միջոց չգտնեն իրենց ցավերի մասին մտածելու»[3]:

Դաշնակցությունը Պետական դումայի առջև բարձրացնում էր համաժողովրդական բանակի ստեղծման պահանջը:

Աշխատանքը և պատերազմը հակադրություններ են: Եթե բանվորն ու գյուղացին ստեղծագործող ուժեր են, ապա չինովնիկն ու զորքը, ընդհակառակը՝ ավերիչ ուժեր: Հարյուր հազարներով ուժեղ, աշխատելու ընդունակ երիտասարդ մարդկանց խլում են ստեղծագործ ոլորտից և մտցնում զորանոցները: Սրանք չեն աշխատում, չեն արտադրում, դրանով իսկ հասարակության համար դառնում են մի անտանելի բեռ: «Եվ դա արվում է, որպեսզի մի ցար ու իր ավազակ մինիստրները տիրեն ուրիշ ժողովուրդների, «զսպեն» ներքին թշնամիներին»: Ապա դաշնակցությունն ազդարարում էր. «Մենք պահանջում ենք ոչնչացնել այդ կործանիչ մշտական բանակները և դրա փոխարեն 20 տարեկանից մինչև 45 տարեկան զենք կրելու ընդունակ բոլոր

[1] «Կայծ», N 27, 14 հունիսի 1906թ.:

[1] ՀՀ ՀԱԿՓԿԳԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 40, թ. 2:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

տղամարդկանց դարձնել հայրենիքի պաշտպաններ, նրանց զենք տալ և տարեկան մի քանի անգամ վարժեցնել զենքի գործածության մեջ, որից հետո նրանց թողնել զբաղվելու իրենց ստեղծագործ աշխատանքով»[1]:

Այդ «զինված ժողովուրդը», այդ «ժողովրդական միլիցիան» կռվի դուրս կգան միայն այն ժամանակ, երբ բախտախնդիր դրացիները կհանդգնեն մտնել իր հայրենիքը՝ փորձելով տիրել կամ կողոպտել այն:

«Այո, – ասված էր պրոկլամացիայում, – աշխատավոր մարդը խաղաղասեր է, և նրա աշխատանքը պահանջում է համաշխարհային խաղաղություն: Աշխատավորը կռվի դուրս կգա միայն ու միայն հայրենիքի պաշտպանության համար և ուրիշ ոչ մի դեպքում»[2]:

Այնուհետև անդրադառնալով դեմոկրատական հանրապետության իր պահանջին՝ դաշնակցությունը գտնում էր, որ պետական կառավարման ոչ մի ձև՝ ո՛չ ցարի բռնապետական ինքնակալությունը, ո՛չ սահմանադրական միապետությունը, ո՛չ էլ կենտրոնացած բյուրոկրատական հանրապետությունը չեն կարող ապահովել աշխատավոր ու կեղեքվող մասսաների թե՛ մեծամասնության և թե՛ փոքրամասնության իրավունքներն ու շահերը:

Ժողովրդական զանգվածները դեմոկրատական հանրապետություն էին պահանջում, որովհետև կառավարության այդ ձևն էր իշխանությունը դարձնում ժողովրդի շահերի և տրամադրությունների իսկական արտահայտություն, որովհետև դա էր ապահովում աշխատավոր մեծամասնության տիրապետությունը, ժողովրդի գերիշխանությունը:

Դաշնակցության տեսակետով՝ կենտրոնացած հանրապետությունը միշտ տանում է դեպի բյուրոկրատիզմ, դեպի փոքրամասնության ձայների խեղդում, դեպի մի ազգի մշակույթի նվաստացում: Այդ պատճառով նա պահանջում էր ֆեդերատիվ հանրապետություն: «Մենք պահանջում ենք, որ Պետերբուրգում լինի ընդհանուր կայսերական պառլամենտ, իսկ Կովկասն ունենա իր ներքին պառլամենտն ամբողջ Կովկասի համար: Բացի դրանից, մենք պահանջում ենք, որ Կովկասը բաժանված լինի մի քանի տասնյակ մանր կանտոնների, և ամեն մի կանտոն անկախ վարե իր ներքին գործերը: Բայց մենք պահանջում ենք նաև, որ ամբողջ Կովկասը լինի ֆեդերատիվ Ռուսաստանի մի անբաժան մասը»[3]:

Ինչպես տեսնում ենք, Հ.Յ. դաշնակցության առաջադրած պահանջները ընդհանուր էին բոլոր երկրների պրոլետարների համար, բացի դեմոկրատական հանրապետության պահանջի երկրորդ մասից, այսինքն՝ ֆեդերատիվ հանրապետության պահանջից: Համաշխարհային պրոլետարիատի մի խոշոր մասը կտրականապես մերժում էր ֆեդերացիան, որը, նրա կարծիքով, նպաստում էր

[1] ՀՀ ՀԱԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 40, թ. 3:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, թ. 4:

ոչ թե բուրժուազիայի դեմ պրոլետարիատի միավորմանը, այլ պրոլետարիատի շարքերի միասնության թուլացմանը: Ֆեդերացիայի դեմ հանդես էին գալիս Ռուսաստանի բոլոր հեղափոխական ուժերը և, առաջին հերթին, բոլշևիկները, որոնք կողմնակից էին կենտրոնացված աշխատավորական ունիտար պետության ստեղծմանը և հանդես էին գալիս մարզային ինքնակառավարման պահանջով:

Առաջին Պետական դուման հասցրեց զբաղվել Կովկասում թուրք-հայկական ընդհարումների խնդրով:

1906թ. հունիսի 6-ին դումայի հայ պատգամավորներ Թումանյանը, Տեր-Պետրոսյանը, Բահաթրյանը և բժ. Հարություն Այվազյանը ստացած հեռագրերի հիման վրա հարցապնդում էին արել Իգդիրի և Շուշիի արյունահեղ անցքերի մասին՝ կցելով Վարանդայում Վիվերնի զինվորական արշավախմբի անմարդկային գործողությունների մասին փաստաթղթեր[1]: Հայ պատգամավորների հարցապնդմանը միացել էին Զիաթխանովը և կովկասյան թուրքերի կողմից դումա ներկայացված մյուս թուրք պատգամավորները: Այդ հարցապնդումն ըստ էության բողոք էր ազգամիջյան կոտորածներ բորբոքող ռուսական բյուրոկրատիայի զազրելի արարքների դեմ: Մյուս կողմից, ուրախալի էր, որ հարցապնդումը համատեղ ստորագրել էին արդեն թշնամացած երկու կողմերի պատգամավորները:

Հարցապնդումից հետո, հունիսի 12-ին, դուման քննության է առնում կովկասյան ընդհարումների հարցը, որի առթիվ առաջինը հանդես է գալիս Տեր-Պետրոսյանը: Իր ելույթում նա դումայից պահանջում է ակտիվ միջամտություն ցույց տալ և կանգնեցնել կոտորածները, որոնք, անհուն տառապանքներ բերելով երկու ժողովուրդներին, միաժամանակ գցում էին ռուսական պետության վարկը:

Կրակոտ ելույթ է ունենում Զիաթխանովը՝ զարմացնելով ոչ միայն հայ պատգամավորներին, այլև դումայի անդամներից շատերին:

Իր ճառում Զիաթխանովն ասում է. «Ուղիղ հարյուր տարի է, ինչ Ռուսաստանը տիրել է Կովկասին, և այդ ընթացքում մենք՝ անդրկովկասյան մուսուլմաններս, զրկված բոլոր իրավունքներից, բառիս իսկական առումով եղել ենք ստրուկներ՝ մշտապես ենթակա ամենատես կառավարության հսկողությանը: Եթե վերցնենք մեր կյանքի բոլոր կողմերը՝ քաղաքական, սոցիալական թե տնտեսական, ամենուրեք կտեսնենք իրավազրկություն, կրոնական մեր զգացմունքների ոտնահարում... Հարյուր վերստ տարածության վրա դուք չեք գտնի մի դպրոց անգամ»[2]:

Նկարագրելով կովկասյան թուրքերի կյանքի մռայլ պատկերը՝ Զիաթխանովը, այնուհետև, անդրադառնում է բուն նյութին՝ թուրք-հայկական ընդհա-

[1] Հարցադրման մասին տե՛ս «Ալիք», N 35, 8 հունիսի 1906թ.:
[2] «Կայծ», N 28, 16 հունիսի 1906թ., «Ալիք», N 45, 21 հունիսի 1906թ.:

ռումների առաջացման պատճառներին և այստեղ է, որ արժեքավոր բացահայտումներ է անում արյունահեղության գլխավոր մեղավոր համարելով... կառավարությանը: Նա շեշտում է, որ վարչակարգը մահու չափ վախենում է կովկասյան ժողովուրդների համերաշխությունից և հենց այդ պատճառով բացահայտ դիմել է սադրանքի: «Հրաշալի Վրաստանը, - ասում է նա, - մատնվեց զորքերի վայրագություններին, իսկ մուսուլմաններն ու հայերը հանվեցին իրար դեմ: Երբ սկսվեց ազատագրական շարժումը, բոլորի առջևից գնում էր Վրաստանը: Կառավարությունը ճնշեց վրացական շարժումը: Իսկ ի՞նչ կլիներ, եթե հայերը նույնպես միանային շարժմանը: Ահա այստեղ է, որ գործի անցան ոստիկանական գործակալները և սկսեցին հավատացնել, թե հայերը ձգտում են Կովկասում հաստատել սեփական թագավորություն և կլանել վրացիներին ու թուրքերին, իսկ հայերին վախեցնում էին պանիսլամիզմի ուրվականով»[1]:*

Անդրադառնալով թուրք-հայկական կոտորածներին՝ Զիաթխանովը նշում էր. «Երբ Բաքվում տեղի ունեցավ առաջին արյունահեղությունը, կառավարությունն ազդարարում էր, թե ինքը քիչ զենք ունի, իսկ երբ դեպքերը տարերային և ընդհանուր բնույթ ստացան, տեղի ունեցող իրադարձություններն սկսեց բացատրել ազգայնական գժտությամբ: Բայց ես այս ամբիոնից հայտարարում եմ, որ մեր և հայերի միջև տնտեսական հողի վրա չի եղել ոչ մի թշնամություն: Մենք միասին ապրել ենք որպես բարի հարևաններ, սիրել միմյանց: Բոլոր կոտորածներն ստեղծեցին բյուրոկրատիան և ոստիկանությունը: ... Եվ երկրորդ տարին է, որ մենք լողում ենք արյան ծովում, քայլում դիակների վրայով ... »[2]:

Զիաթխանովի ելույթը զարմանալի էր, բայց՝ փաստ:

Թուրք պատգամավորից հետո ելույթ է ունենում Բահաթրյանը: Թուրք-հայկական ընդհարումներում շեշտելով կառավարության սադրիչ դերը և նկարագրելով տագնապալի վիճակը Կովկասում նա ասում է. «Մեր ձեռքին կան անհերքելի ապացույցներ կառավարական անձերի պրովոկացիայի մասին: Մենք այդ մասին կներկայացնենք համապատասխան փաստաթղթեր, երբ ստանանք մեր հարցապնդման պատասխանը»[3]:

Հայկական հասարակության տարբեր քաղաքական հոսանքները տարբեր կերպ ընկալեցին Զիաթխանովի ճառը դումայում:

Դաշնակցական մամուլը, մասնավորապես «Ալիքը», թուրք պատգամավորի ելույթը որակեցին որպես հայերին կրկին անջատողականության մեջ մեղադրելու փորձ («Հայերն ուզում են սեփական թագավորություն ստեղծելու»

---

* *Նկատի ունի ռուսական հեղափոխությունը:*

[1] ***«Ալիք»**, N 45, 21 հունիսի 1906թ.:*

[2] ***«Կայծ»**, N 28, 16 հունիսի 1906թ.:*

[3] ***«Ալիք»**, N 45, 21 հունիսի 1906թ.:*

առասպելի տարածում, այս անգամ, իբր, նախատելով այդ առասպելի հեղինակներին), ինչպես նաև թուրք-հայկական կոտորածներում պանիսլամիզմի իրական վտանգը ժխտելու փորձ («Հայերին վախեցնում են պանիսլամիզմի ուրվականով»), շեշտելով, թե քրիստոնյա հայերի և մահմեդական թուրքերի միջև ծագած արյունալի բախումների մեջ պանիսլամիզմը ոչ մի դեր չունի: Վերջապես, դաշնակցական մամուլը գտնում էր, որ Զիաթխանովը փորձել է սնացնել հայությանը կամ նրա մի մասին՝ ասելով, թե հայերը նույնպես ենթարկվել են կառավարության սադրանքներին՝ դրդված պանիսլամության սպառնալիքից: Այնինչ հայերի և թուրքերի կոտորածների հիմնական մեղքն ընկնում է ոչ միայն կառավարության, այլև թուրք պաշտոնյաների, բեգերի, աղալարների, կապիտալիստների վրա, որոնք հայերի դեմ նյութած չարիքների ընթացքում միշտ աջակից են եղել պետերբուրգյան բյուրոկրատիային:

Հայ լիբերալներն, ընդհակառակը, Զիաթխանովի ճառն ընդհանուր առմամբ դրական գնահատեցին: Նրանք բացառիկ երևույթ էին համարում այն, որ առաջին անգամ մի թուրք ղեկավար ցարական իշխանությունների գնահատականի հարցում ըստ էության համերաշխվել է հայերի բազմիցս արտահայտած տեսակետի հետ, առաջին անգամ մի թուրք մերկացրել է հայկական թագավորության մասին առասպելը:

Բոլշևիկյան մամուլը նույնպես թուրք պատգամավորի ելույթը դրական գնահատեց: «Կայծը» գրում էր, որ կովկասյան թուրքերից մեկը դումայի ամբիոնից բարձրաձայն ու համարձակորեն դատապարտել է ցարիզմի ջարդարարական քաղաքականությունը: «Զիաթխանովի խոսքերի իմաստն այն է, - նշում էր թերթը, - որ թուրքերին վախեցրել են հայերով, հայերին վախեցրել են թուրքերով: Երկու կողմերի մեջ էլ փոխադարձ թշնամութիւն են սերմանել և թշնամութեան այդ հողի վրա ոճրագործ «չէյթանը» կառուցել է իր արիւնոտ չէնքը»[1]: «Կայծն» անընդունելի էր համարում դաշնակցական «Ալիքի» այն պնդումը, թե կոտորածների գլխավոր մեղքն ընկնում է թուրք թաթարների վրա: «Իհարկէ, ճիշտ է,- նշում էր «Կայծը», - որ թուրք մասսան ներկայումս աւելի անկուլտուրական է և աւելի հեշտ ենթարկւող սադրանքների, ճիշտ է, որ եթէ նա այնքան բարձր լինէր գոնէ իր քաղաքական գիտակցությամբ, որքան հայերն են, կառավարութիւնը չէր կարողանայ իրագործել իր զազրելի ոճրագործութիւնը ...: Բայց ճիշտ է և այն, որ հայ մասսան էլ շատ հեռու չէ գնացել իր գիտակցութեամբ, որ նա էլ ենթարկւեց՝ թէև անդրադարձ կերպով՝ կառավարութեան սադրանքին, նրա մեջ էլ արթնացան գազանային բնազդներ, և դրա շնորհիվ կոտորածը աւելի վատ ձև ստացաւ, և աւելի լայն չափեր ընդունեց, քան նա կարող էր ընդունել:

Իհարկե, մենք շատ հեռու ենք այս բոլորով հայ ժողովուրդը «մեղադրելուց», «դատապարտելուց». այդ մենք թողնում ենք պանիսլամիստներին,

---

[1] ***«Կայծ»**, N 28, 16 հունիսի 1906թ.:*

ինչպէս ձեզ էլ՝ պանարմենիստներիդ, թողնում ենք դատապարտել թուրք ժողովուրդը:

Այդ կոտորածը ոչ հայ և ոչ թուրք ժողովուրդների յանցանքը չէ, այլ նրանց դժբախտութիւնն է»[1]*:*

Ժողովրդական ներկայացուցչության օգնությամբ մասսաներին խաբելու ցարիզմի հույսերը չարդարացան: Առաջին Պետական դուման բավականաչափ հնազանդ չգտնվեց:

Եվ ցար Նիկոլայ II -ը, 1906թ. հուլիսի 9-ի հրամանով ցրեց I Պետական դուման՝ նրա գոյության 72-րդ օրը:

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ռուսական մեծ հեղափոխությունը, որն իր հորձանուտի մեջ էր առել կովկասահայ կյանքն իր բոլոր բաղադրիչներով, ինչպես և պետք էր սպասել, ուժգին ազդեցություն ունեցավ նույնիսկ այնպիսի ավանդապահ մի հաստատության վրա, ինչպիսին հայոց եկեղեցին է:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉԸ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՆԵՐՍ

Ընդհանրապես հեղափոխությունն ամենից առաջ ըմբոստություն է, որի հիմքը դժգոհությունն է տիրող հասարակական-քաղաքական կարգերից, գոյություն ունեցող կացութաձևերից ու կյանքի կերպից: Այդ ըմբոստության ոգին թափանցեց նաև հայ եկեղեցու գաղջ մթնոլորտը և շարժեց հոգևոր դասի մտքերը:

«Վրա հասաւ ռուսական յեղափոխութիւնը և մտքերի շփոթութեան և քաոսի մեջ մեր եկեղեցին դարձաւ ծովի ալիքների վերայ պատահականութեան ենթարկուած անղեկ մի նավ»[2]*, - սրտի ցավով գրում էր Էջմիածնի պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրի խմբագիր Գարեգին վրդ. Հովսեփյանը և ավելացնում. «Ինչքան էլ կամենանք լաւատես լինել, ցաւալի իրողութիւնն անտես անել, չենք կարող. մեր ժողովրդի որոշ մասերի մեջ հակակրութեան կամ սառն անտարբերութեան զգացում է տիրում դեպի եկեղեցին և հոգևորականութիւնը: Սրտերն այլևս չեն բաբախում եկեղեցու բաղդով, և եկեղեցին չի կարողանում ջերմացնել նրանց, ոգևորութիւն ներշնչել այն գաղափարների համար, որի անունով ապրում է ինքը»*[1]*:*

Տագնապը զուր չէր: Քրիստոնեական եկեղեցին այն տեսքով, ինչպես հասել էր 20-րդ դար, ոչ միայն հայ, այլև ուրիշ ազգերի մեջ, վաղուց հոգեվարք էր ապրում: Շատ ժողովուրդներ հսկայական ջանքեր էին գործադրում իրենց վրայից թոթափելու մտավոր բռնության դարավոր կապանքները: Կրոնը իր գոյության ընթացքում ոչ մի ժողովրդի չտվեց խոստացած հավասարությունը, եղբայրությունը, երջանկությունը:

«Քրիստոնեությունը, - գրել է Միք. Վարանդյանը, - սկզբունքով վերացրեց ատելությունը և քարոզեց սեր ու եղբայրություն բոլոր մարդկանց մեջ: Բայց, հակասելով իր հիմնական սկզբունքին, նա թողեց հարատևել անհավասարությունը ...: Ավետարանը մուտք գործեց ամեն տեղ, դարձավ տիեզերական, բայց մարդիկ շարունակեցին խողխողել իրար, աշխարհը շարունակեց թատերաբեմ լինել մովսիսական դժնդակ օրենքի՝ «ակն ընդ ակն»-ի արհավիրքների ...»[2]*:*

Թեև մարդկությունը թևակոխել էր լուսավոր դար, բայց հայության որոշ զանգվածներ դեռ մոլորված էին կրոնական հավատալիքների լաբիրինթոսում, չէին ուզում բարեփոխված տեսնել «դարավոր սրբությունը»՝ եկեղեցին: Նրանք շարունակում էին ապրել եկեղեցու հանդեպ նույն երկյուղածությամբ ու խոնարհ հպատակությամբ, հրաշքների նկատմամբ հավատով լի, ինչպես նախընթաց շատ դարեր:

«Մենք շատ անգամ լսել ենք առանձին հայ անհատների կողմից մի հուսահատ բացականչություն. «Ի՞նչ տիրացու ազգ ենք հայերս» - և դա մի աղաղակող ճշմարտություն է, - գրում էր Ստ. Շահումյանը: - Տիրացությունը մեզ խեղդում է: ... Ամեն տեղ սարսափելի տիրացություն: Մեր ամբողջ հասարակական կյանքը կպած է տերտերների փարաջաներից, ամեն ինչ պտտվում է Էջմիածնի շուրջը: Ոչ մի հետաքրքրություն դեպի քաղաքական հարցերը, դեպի պետական կյանքը, դեպի նույնիսկ տեղական ինքնավարության օրգանները: Թերթեցեք մեր պարբերական հրատարակությունները (մանավանդ մինչև 1905 թիվը, այդ թիվը շատ բան փոխեց մեր կյանքում), և դուք կտեսնեք, որ բացի ծխական, հոգեբարձական, քահանայական հարցերից, ոչ մի հարց, ոչ մի հետաքրքրություն»[3]*:*

Ոչ ոք, իհարկե, ժխտել չի կարող, որ կորցնելով հայրենիքի անկախությունը, հայ ժողովուրդը ապավինել է եկեղեցուն, որը շատ ժամանակներ ինչ-որ չափով փոխարինել է պետականությանը: Օտար իշխանությունները հայոց եկեղեցու պետին դարեր շարունակ ճանաչել են իբրև ազգի ղեկավար և նրա հետ են գործ ունեցել: Հայ եկեղեցին հովանավորել է հայ գիրը, գրականությունը,

---

[1] **«Կայծ»**, *N 28, 16 հունիսի 1906թ.:*

* *Հայ հոգևոր դասի աստիճանակարգն է՝ սարկավագ, աբեղա-քահանա, վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, եպիսկոպոսապետ (կաթողիկոս):*

[2] **«Արարատ»**, *N 4, ապրիլ, 1907, էջ 327:*

---

[1] **«Արարատ»**, *N 4, ապրիլ, 1907, էջ 324:*

[2] **Միքայել Վարանդյան**, *Հայրենիքի գաղափարը, Ժընև, 1904, էջ 28,29:*

[3] **Ստեփան Շահումյան**, *եվ.Ժ, հատ. երկրորդ, էջ 412:*

մշակույթը: Այն կարևոր դերակատարություն է ունեցել հայ գաղթօջախներում հանդես գալով որպես ազգային խնդիրների շուրջ հայերին համախմբող ուժերից մեկը, եղել է ազգային ավանդույթների պահապան: Եկեղեցին տվել է խոշոր դեմքեր, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում մեծ ծառայություններ են մատուցել ազգին, թողել բարի հիշողություն՝ Խրիմյան, Իզմիրլյան, Սուրենյան՝ ... Հենց 1905-1906թթ. թուրք-հայկական ընդհարումների դաժան ամիսներին իրենց փայլուն դրսևորեցին մի շարք եկեղեցականներ, որոնք անմնացորդ նվիրվել էին ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման գործին: Թվենք նրանցից մի քանիսին՝ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան Սյունիքում, Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան՝ Նախիջևանում, Կորյուն վարդապետ Սահակյան՝ Ելիզավետպոլի նահանգում և ուրիշներ:

Բայց խոսքն անհատների մասին չէր, այլ կրոնի՝ որպես հասարակական գիտակցության ձևի, և եկեղեցու՝ որպես հաստատության, որը միավորում է կաթողիկեով չինությունները և հոգևորականներին:

Հայ եկեղեցին հզոր ուժ էր ոչ միայն ազգի վրա իր գաղափարական ազդեցությամբ, այլև տնտեսական մեծ հնարավորություններով, վարչական ապարատով ու կրոնավորների բազմաքանակ դասով: Կղերականների թիվը 1906-ին 6000 էր[1], որոնցից 2000-ը ռուսահայեր էին: Միայն Էջմիածնի միաբանների թիվը մոտենում էր 100-ի:

Ինչպես հայտնի է, ազատական «Մշակ» և պահպանողական «Մեղու» պարբերականների միջև տեղի ունեցած երկար պայքարի ընթացքում քննարկված գլխավոր թեմաներից մեկը եղել է եկեղեցու բարենորոգության հարցը:

Եթե նկատի ունենանք, որ մարդու հոգեկան կերտվածքի հետ դարեր շարունակ սերտ առնչությունների մեջ են եղել կրոնն ու եկեղեցին, ապա հասկանալի կդառնա, թե 19-րդ դարում լուսավորական շարժման զարգացմանը զուգընթաց հայկական կյանքում ինչու այնքան սուր բնույթ էին ստացել եկեղեցու շուրջ առաջացած վեճերը և ընդհարումները: Հայոց պատմության մեջ առաջին անգամ եկեղեցին դարձավ լայնատարած քննադատությունների թիրախ. եվրոպական և ռուսական առաջավոր մտքի ազդեցության տակ գտնվող հայ մտավորականներն անողոքաբար հարվածում էին հայ կղերի սնոտիապաշտությունը, տգիտությունն ու փառամոլությունը, պահանջում խոր բարենորոգման ենթարկել եկեղեցին, նրա ծեսերն ու աղոթքները, նույնիսկ կրոնավորների զգեստավորումը և դրանք համապատասխանեցնել ժամանակի ոգուն, հաղթահարել ծայրահեղ անհանդուրժողականությունը քրիստոնեական ուրիշ եկեղեցիների հանդեպ և այլն:

Ազգային միության և համամարդկային առաջադիմության բարձր ըմբռնումների տեսակետից դիտարկելով ազգի ներսում մղվող դավանաբանական պայքարը՝ Գրիգոր Արծրունու «Մշակի» և նրանից առաջ Ստեփանոս Նազարյանցի «Հյուսիսափայլի» համար անհերքելի համոզմունք էր դարձել, որ ազգության գաղափարը վեր է ամեն հարանվանական (լուսավորչական, բողոքական, կաթոլիկ) տարբերություններից, որ կարելի է լավ հայ լինել՝ առանց անպատճառ հայ լուսավորչական եկեղեցուն պատկանելու:

Եկեղեցու հանդեպ ի՞նչ վերաբերմունք ունեին 20-րդ դար թևակոխած հայ հասարակության մեջ գործող քաղաքական կուսակցություններն ու հոսանքները: Վերաբերմունքը խիստ տարբեր էր:

Հայ պահպանողականները, հատկապես «Նոր-Դարի» շուրջ համախմբված գործիչները, ազգային եկեղեցին շարունակում էին համարել ժողովրդի գոյատևման հիմնական կռվաններից մեկը և հայության հասարակական կյանքը չէին պատկերացնում առանց նրա ղեկավար դերի:

Լիբերալները (ազատականներ), մասնավորապես մշակականները, անողոքաբար քննադատում էին եկեղեցին և կղերի արատները:

«Մշակը» գրում էր. «Եկեղեցին իբրև մի պահպանողական հիմնարկություն, մանավանդ իր արտոնյալ դասակարգով, որ երկանիկ անհոգությամբ և հանդուգն մեծամտությամբ ... ծանր մտածողության խնդիրներ է հարուցել և հարուցում է»[1]:

Թերթը, այնուհետև, ցույց էր տալիս, որ ժողովրդի շահերը շատ հեռու են կրոնի սպասարկուների շահերից: «Մենք միշտ սովոր ենք լսել, թե հայ եկեղեցին ժողովրդական է, որ նա ազատամիտ հիմնարկություն է: Սրանք մաշված ֆրազներ են, արդյունք՝ մեր եկեղեցու պատմական կեանքի կատարեալ անծանօթութեան»[2]: Հոդվածում շեշտված է, որ «կեղծ բարեպաշտության», խստության, անհանդուրժողականության դրսևորումներով եկեղեցին միշտ բռնացել է «մարդկային կամքի և ազատ ու արդար իրավունքների վրա»[3]:

Ճիշտ է, հաստատում էր թերթը, եղել են լավ, սրտացավ հոգևորականներ, որոնք լույսի մի-մի բացառիկ ճրագներ են վառել, բայց իր ամբողջության մեջ հոգևոր հիերարխիան հասարակության առջև կանգնում է որպես իշխող: Կրոնավորները սովոր չեն տեղի տալ որևէ քննադատության, քանի որ գիտակցում են իրենց ուժը, որի հետ հասարակությունը ստիպված է հաշվի նստել[4]:

Խնդիրը հրատապ նշանակություն էր ստանում հատկապես Կովկասում թուրք-հայկական ընդհարումների առնչությամբ: «Մշակն» ընդգծում էր, որ

---

* Տասնամյակներ անց Էջմիածինը գլխավորեց կաթողիկոս Վազգեն Առաջինը, խմաստուն մի մարդ, որ արժանացել էր ողջ հայ ժողովրդի սիրուն և երախտագիտությանը:

1 **«Ասպարեզ»** (Ֆրեզնո), N 120, 25 նոյեմբերի 1910թ.:

1 **«Մշակ»**, N 69, 30 մարտի 1906թ:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում: Սույն միտքը արտահայտում էր Միք. Վարանդյանը՝ վկայակոչելով Պրուդոնի խոսքերը, թե կրոնն ու եկեղեցին «բռնաբարում են հավիտենական ճշմարտությունը», այսինքն՝ մարդկային բացարձակ իրավունքները» (տե՛ս Միք. Վարանդեան, Հոսանքներ, հրատ. Հ.Ց.Դ., Ժընև, 1910, էջ 222):

4 **«Մշակ»**, N 69, 30 մարտի 1906թ:

1600 տարի շարունակ հայ հոգևոր հայրերի նպատակներից մեկը եղել է՝ ժողովրդին պահել խոնարհ վիճակում, թույլ չտալ նրա ըմբոստացումը հայ հասարակության հարուստ, արտոնյալ խավերի դեմ, նրան դարձնել «տիրացու ազգ»: Թերթը վճռականորեն մերժում էր հայ եկեղեցու այդ ընթացքը, գրելով. «Թիկունքներս դաղվեց սերնդեսերունդ, է՛լ բավական է. մի քիչ էլ ըմբոստանանք, մի քիչ էլ ազատության զինվոր լինենք, չա՞տ ենք տիրացու մնացել»[1]:

Անցյալի փորձից ելնելով՝ «Մշակը» հույս չուներ, թե հայ հոգևորականությունը երբևիցե զիջումների կգնա: «... Մեզ այլևս ոստիկանական կարգեր հարկավոր չեն, - գրում էր Թերթը, - հոգևոր խնամակալությունը չա՞տ երկար է մեզ անչափահաս նկատել ու պահել՝ որ հայ ժողովուրդն իր գործերը կարգադրելու արդար և ազատ իրավունքներին գիտակից չը լինի: Այո՛, մենք այժմ չափահաս ենք, մենք ուզում ենք սահման դնել կամայականությունների [առջև], մենք ուզում ենք մեր գործերի տերը և հրամայողը լինել»[2]:

Առաջնորդվելով Գրիգոր Արծրունու պաշտպանած ու քարոզած բարոյական սկզբունքներով, ազատականները անխնա քողազերծում էին հոգևորականության խոտոր բարքերը:

Հայ պահպանողականները, հատկապես «Նոր-Դար»-ականները, «Մշակին» քննադատում էին նրա հիմնադիր և երկարամյա խմբագիր Գրիգոր Արծրունու ուղեգծից շեղվելու համար՝ գտնելով, որ Թերթն ըստ էության քարոզում է եկեղեցու վերացում: Խմբագրությունը «Մշակի» հակառակորդներին պատասխանում էր, որ Գ. Արծրունին չի ձգտել նպաստել եկեղեցու ջնջմանը, բայց պահանջում էր արմատապես բարեփոխել այն, հարմարեցնել ժամանակի պահանջներին, դնել լիակատար դեմոկրատական հիմունքների վրա:

1890թ. հունվարի 20-ին Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանին հղած նամակում Գր. Արծրունին գրել է.

«Ձերդ սրբազնությանը հայտնի է, որ ես 17 տարվա ընթացքում միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ մեր եկեղեցին պետք է վերանորոգվի և կարոտ է վերանորոգության: Եվ եթե ես միշտ հավատարիմ եմ մնացել այդ իմ գաղափարին, ես այդ արել եմ սիրելով եկեղեցին և ոչ թե թշնամական ոգուց դրդված լինելով այդ հաստատության դեմ, ինչպես ուզեցին խավարամիտները բացատրել իմ ընթացքը: Ով որ ճանաչում է մարդկային պատմությունը, գիտե, որ գիտակցաբար իրանց հայրենիքը և իրանց ազգային հարստությունները սիրող ազգերը (որոնց թվում ամենափայլուն օրինակն են անգլիացիք), նրանք երբեք չեն խուսափել նույն իրանց դարևոր հաստատությունների անընդհատ վերանորոգման գործից: Միայն վերանորոգելով և միշտ վերանորոգելով ազգային դարևոր հաստատությունները, կարելի է պահպանել նրանց և թույլ չտալ, որ նրանք հետզհետե քայքայվեն: Այդ է պատճառը, որ ինձ

[1] «Մշակ», N 69, 30 մարտի 1906թ:
[2] Նույն տեղում:

համարում էին անհաշտ թշնամի մի հաստատության, որի օգտի համար ես միշտ քարոզել եմ շարժում և ոչ թե անշարժություն: Այո՛, ես անհաշտ եմ անշարժության և մեռելության հետ...»[1]:

Այլ խոսքով, ինչպես Գր. Արծրունու ժամանակ, այնպես էլ նրանից հետո «Մշակը» և մշակականները պայքարում էին կրթված ու դեմոկրատական եկեղեցի ունենալու համար: Ոչ միայն մշակականները, այլև ընդհանրապես հայ լիբերալ հոսանքը չէր ժխտում, որ հայոց եկեղեցին դեռ կարող է դեր ունենալ ազգային կյանքում, եթե ենթարկվի արմատական վերակառուցման:

Հայոց եկեղեցու նկատմամբ ավելի արմատական վերաբերմունք էին դրսևորում հայ **ազգային-հեղափոխական** կուսակցությունները՝ հնչակն ու դաշնակցությունը:

Այդ երկու կուսակցություններն իրենց ծրագրերում և պաշտոնական մյուս փաստաթղթերում նախընթաց ավելի քան մեկ ու կես տասնամյակում վճռականորեն սահմանազատվում էին կրոնից ու եկեղեցուց, հատկապես խիստ քննադատության էին ենթարկում գաղջ իրականության հետ խոնարհ համակերպության, չարի դեմ չըմբոստանալու, ապտակին ապտակով չպատասխանելու քրիստոնեական քարոզները, որոնք տրամագծորեն հակառակ էին պայքարի իրենց որդեգրած սկզբունքներին: Իրենց ծրագրերով նրանք վճռականապես պահանջում էին եկեղեցին անջատել պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց:

Բայց 1903թ. հունիսի 12-ի ցարական օրենքից հետո այդ երկու կուսակցությունների վերաբերմունքը դեպի հայոց եկեղեցին զգալիորեն փոխվեց: Կառավարության կողմից հայ եկեղեցու ունեցվածքի հափշտակումը նրանք դիտեցին ոչ միայն որպես եկեղեցու նկատմամբ պարզ ոտնձգություն, նրա ազգային սրբությունների ոտնահարում, այլև իբրև թշնամական վերաբերմունք դեպի հայ ժողովուրդը, դեպի նրա մշակույթի դարավոր ավանդույթները: Այդ երկու կուսակցությունները եղան հունիսի 12-ի կողոպտիչ հրամանագրի դեմ հայ ժողովրդի լայն զանգվածներին պայքարի հանող և այդ պայքարը ղեկավարող հիմնական ուժերը:

1903թ. սկսած՝ հնչակի և դաշնակցության կողմից հայ եկեղեցու պաշտպանությունը բնավ թելադրված չէր նրանց աշխարհայացքային պահանջներով ու համոզմունքներով, այլ ուղղված էր այն բանին, որ որքան հնարավոր է շատ հավատացյալներ համախմբվեն ցարիզմի դեմ պայքարի՝ իրենց դրոշների ներքո:

Դաշնակցության և հնչակի վերաբերմունքը հայոց եկեղեցու հանդեպ ժամանակաշրջանի հայկական կյանքի պարադոքսներից մեկն էր. լիբերալները, պահպանողականներից շատերը, նույնիսկ հոգևորականներից ոմանք մերկացնող քննադատություններով հանդես էին գալիս միջնադարյան խավարամոլության բերդի՝ եկեղեցու դեմ, իսկ հայ հեղափոխական և իրենց սոցիա-

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (Թերթի կտրոն):

լիստական համարող կուսակցությունները տվյալ պահին պաշտպան էին կանգնել նրան՝ իբրև ազգային ինքնության խորհրդանիշի: Չնայած դրան, ժողովրդի առօրյա կյանքում եկեղեցու դերի հարցում այդ կուսակցությունները նույնպես միանշանակ հանդես էին գալիս նրա իրավունքների խիստ սահմանափակման պահանջով:

Ելնելով հայ եկեղեցու նկատմամբ իրենց կուսակցության ընդհանուր քաղաքականությունից՝ դաշնակցական տեսաբանները կոնկրետացնում էին իրենց մտքերը՝ ելնելով հասարակական կյանքի զանազան պահանջներից: Եղիշե Թոփչյանը գտնում էր, որ «եկեղեցու և սրբերի օգնությամբ անկարելի է ազգ պահպանել: ... Մեր նպատակը չի կարող լինել հայի «աստվածավախությունն» ու կրոնական ոգին զարգացնել»[1]: «Մենք պահանջում ենք, - ասում էր Միքայել Վարանդյանը, - որ կրոնը իսպառ վերացվի մեր դպրոցական և այլ ասպարեզներից, որ նա զբաղվի միայն եկեղեցական-դավանական հոգսերով և որ եկեղեցին դառնա միայն հավատացյալների համար մի հիմնարկություն»[2]: Ահա Վահան Փափազյանի կարծիքը. «Մեսը և կղերը մի թյուրիմացություն, մի կեղծիք է դարձել: ... Պահանջվում է մեր բոլոր գործերի անջատում կղերից և եկեղեցուց: ... Կրոնի դասավանդումը աղավաղված պատմությունների, ուսուցումների և աղոթքների մի կույտ է»[3]:

Դաշնակցական բոլոր գաղափարախոսների ու գործիչների տեսակետը նույնն էր՝ հայ հոգևորականների գործունեությունը պետք է սահմանափակվի միայն երկու դերով՝ քարոզել եկեղեցու պատերից ներս և իրականացնել ծիսակատարություններ:

Սոցիալ-դեմոկրատները (բոլշևիկներ, մենշևիկներ, «սպեցիֆիկներ») և սոցիալիստ-հեղափոխականները գտնում էին, որ ինչպես ամեն մի կրոն, քրիստոնեությունը նույնպես հասարակական գիտակցության ձև է: Ինչպես ամեն մի կրոն, այն ևս պատմական երևույթ է՝ առաջացած հասարակության զարգացման որոշակի հատվածում և պիտի վերանա որևէ ժամանակ: Աստծու գոյությունը ապացուցելու համար կրոնի սպասավորները որևէ խելամիտ փաստարկ չունեն, բայց անդադրում քարոզում են ու պահանջում՝ «հավատացե՛ք»: Սոցիալիստները նշում էին, որ անցած մեկ ու կես հազարամյակում համարյա ոչինչ չի փոխվել հայ եկեղեցու կյանքում, եկեղեցականների քարոզների բովանդակության մեջ: Հարց է առաջանում. հայ հոգևորականը հայ մարդու ուղեղը քանի՞ հարյուր տարի ևս պետք է զբաղեցնի ուրիշի պրիմիտիվ հեքիաթներով ու առասպելներով: Քանի՞ հարյուր տարի ևս հայ մարդը պիտի սերտի, պատմի ու վերապատմի մի այլ էթնոսի՝ հրեա ժողովրդի, երկուհազարամյա իրական թե անիրական պատմություններն ամփոփած «Աստվածաշնչի»

[1] «Զանգ» (Թիֆլիս), N 19, 3 սեպտեմբերի 1906թ.:
[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (Թերթի կտրոն):
[3] «Զանգ», N 17, 1 սեպտեմբերի 1906թ.:

դոգմաները, իր ջերմեռանդ աղոթքներում ամեն օր հիշատակի Իսրայելը, Բեթղեհեմը, Սինայը, Հորդանանը, Սիոնը... Այդ դոգմաներից էր ծնունդ առել նաև հրեա ժողովրդի սուրբ գիրքը՝ «Թորան»:

Սոցիալ-դեմոկրատները կտրականապես հանդես էին գալիս եկեղեցին հասարակությունից չեզոքացնելու օգտին: Նրանք ոչ միայն պահանջում էին եկեղեցին անջատել պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց, այլև առավելագույնս կրճատել հոգևորական դասի իրավունքները՝ կրոնն ու եկեղեցին իսպառ վերացնելու հեռանկարով:

Նկատելով, որ հայ լիբերալները և ազգային-հեղափոխական կուսակցությունները պահանջում են արմատական բարեփոխումներ կատարել եկեղեցու ոչ միայն արտաքին անկապտելի հատկանիշների, այլև լայն առումով նրա կազմվածքի և ողջ գործունեության (տնտեսական, կրթական և այլն) մեջ, սոցիալ-դեմոկրատները հարց էին տալիս. բայց կարո՞ղ է արդյոք այդ եկեղեցին հրաժարվել ժամանակաշրջանի ոգուն ու պահանջներին չհամապատասխանող օրենքներից ու ավանդույթներից, որոնք անթիվ հանգույցներով խճճված են ներկայի հետ և անհամար կանոնների ու սովորույթների շղթաներով կապկրպում են ժամանակակիցների միտքն ու մտածողությունը:

Եվ եթե պահի թելադրանքն այն է, որ նոր, թարմ հոսանք մտնի ռուսահայ ժողովրդի լճացած կյանքում, եթե սա կամենում է կրոնական համայնքի ամոթալի դրությունից վերածվել պատվավոր ազգի, եթե նրա համար թանկ է ոչ միայն ուղղահավատ լուսավորչականների, այլև ամբողջ հայության շահերը, ապա պետք է կարողանար դուրս պրծնել եկեղեցու՝ մարդկանց մտքերը շղթայած կապանքներից:

Թեև անցյալի շղթան կուռ է և ամուր, բայց այն, անշուշտ, կջարդվի, եթե ազգը հանդես բերի անհրաժեշտ ընդհանրական կամք,- այս էր սոցիալ-դեմոկրատների համոզմունքը:

Իշխանությունները ոչ միայն շահագրգռված չէին ազգային կյանքում էջմիածնի զաղափարական ազդեցության սահմանափակումով, այլև ամեն ինչ անում էին նրան հեղափոխության «վարակից» հեռու պահելու համար: Ամեն մի հնի, այդ թվում հայ եկեղեցու, նորացման մեջ ցարական չինովնիկները տեսնում էին հեղափոխականություն, իսկ վերջինս խորթ էր նաև հայ կղերին: Այստեղից էլ այն ընդհանուր շահագրգռությունը, որ ունեին իշխանությունները և եկեղեցին:

Հեղափոխությունը սկսելուց ի վեր, հանձինս հայ եկեղեցու ցարիզմը տեսավ իր դաշնակցին և, ինչպես արդեն ասվել է, կոնկրետ քայլեր արեց հրաժարվելու 1903 թվից ի վեր էջմիածնի նկատմամբ որդեգրած գոլիցինյան քաղաքականությունից:

Իր հերթին հայոց եկեղեցին թեև 1903թ. հունիսի 12-ի օրենքով ցարիզմից ուժգին հարված էր ստացել՝ կառավարության իրավասությանը հանձնելով իր կալվածքներն ու գույքը, բայց շարունակում էր հանդես գալ որպես

գահի հետևողական պաշտպան և իշխանության տապալմանն ուղղված ամեն մի հեղափոխական գործողություն համարում էր աստծուն անհաճո բան, նշավակում և անիծում էր այն:

Դա պատահական չէր. հայ շահագործող դասակարգերի շահերի հետևողական պաշտպան եկեղեցին չէր կարող պաշտպան չլինել ցարական իշխանություններին, որոնք իրենց հերթին պաշտպանության տակ էին պահում հայ բուրժուազիային՝ նպաստելով վերջինիս կապիտալի բազմապատկմանը:

Թե՛ օտար և թե՛ սեփական տիրողների կողքին միշտ կանգնած մնալու հայ եկեղեցու անխախտ սկզբունքը մշակվել էր դարերի ընթացքում:

19-րդ դարում ռուսահայերի հասարակական զարգացմանը նվիրած իր հայտնի աշխատության մեջ ս.-դ. բանվորական հայ կազմակերպության տեսաբաններից Դավիթ Անանունը գրել է.

«Հայոց եկեղեցին քիչ չէ տուել արժանավոր հովիվներ, որոնք լավ թե վատ, մեր պատմական անցյալում ըստ չափու կարողության աշխատել են հայության առաջ սևերես չմնալ իրենց բացառիկ դերի մեջ: Սակայն դրանք եղել են անհատներ, իսկ եկեղեցին, որպես կազմակերպություն, միշտ էլ հարմարվել է տիրող կարգերին և հաճախ այդ կարգերի մեջ է փնտրել իր ուժը: Գաղտնիք չէ, որ հայ կաթոլիկներին ու բողոքականներին նա սաստում էր օսմանյան զենքով. գաղտնիք չէ, որ նա ամենևին չէր մտատանջվում, թե իր հոտի հատվածները կորցնում են ազգային լեզուն: Բավ էր, որ նա հոտ ունենա. այդ հոտի ինքնուրույնությունը, ապահովությունը երկրորդական խնդիրներ էին: Ավելին: Այդ հոտի ազգային գոյության խնդիրներով նա զբաղվեց այն ժամանակ, երբ օտար եկեղեցիները սկսեցին որսալ և խորթացնել նրա անդամներին: Այստեղ արդեն խախտվում էր նրա նյութական ուժի պատվանդանը, և նա կամա-ակամա պիտի դիմեր ինքնապաշտպանության...»[1]:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայ հասարակության ուշադրությունից չէր վրիպել կրթության հարցը: Նա ուզում էր իմանալ, թե հետայսու ո՞ւմ տնօրինության տակ պետք է լինի ազգային դպրոցը:

Ռուսական հեղափոխությունը հայ դպրոցի խնդիրը հրապարակ բերեց նոր ուժով՝ այն ենթարկելով բազմակողմանի քննության:

Ողջ հոգևորական դասը և աշխարհիկ պահպանողականները մնում էին իրենց տեսակետին, որ դպրոցը, ինչպես եղել է, ապագայում նույնպես պետք է պատկանի հայոց եկեղեցուն: Իհարկե, նրանք դեմ չէին որոշ բարեփոխումներ, մասնավորապես դեմ չէին, որ կրթությունը մոտեցվի կյանքին՝ որպես օրվա պահանջ, բայց այնքանով միայն, որ չխաթարվեն հայ եկեղեցու՝ դարերով սրբագործված օրենքներն ու կանոնները: Այդ ոգով տպագրվում էին բազմաթիվ հոդվածներ, կոչեր էին արվում չկտրել եկեղեցի-դպրոց կապը: «Արարատ» ամսագիրը թարգմանաբար լույս էր ընծայում այդ պահանջին համահունչ օտար հեղինակների բազմանուն բարձրարակ գործեր: Օրինակ՝ ամսագրի մի շարք համարներում տպագրվել էր Լ. Ն. Տոլստոյի՝ հետաքրքրություն ներկայացնող հոդվածաշարը[1]:

Դպրոցական հարցում առավել արմատական էին ազատականները՝ «Մշակի» գլխավորությամբ: Թերթը գրում էր, որ որևէ արդյունք չպիտի սպասել այն դպրոցներից, որոնք «գլխովին հանձնված են հոգևոր դասի տնօրինությանը ու քմահաճույքին, մի դասի, որը քարացման ու անշարժության կլասիկ տիպար է ներկայացնում»[2]: Մի ուրիշ առիթով «Մշակը» ճիշտ էր համարում, որ եթե «հոգևոր իշխանությունը համառի իր ցանկության ու անհեռատեսության մեջ», այդ դեպքում նրան պետք է խլսար զրկել «դպրոցների վրա որևէ իրավասություն ունենալու հնարավորությունից և գրավել դրանք՝ հանուն ժողովրդի»[3]:

Ազատականները հատկապես մեծ տեղ էին հատկացնում ուսուցման մեթոդների կատարելագործման հարցին: Դա պատահական չէր, քանզի եկեղեցին արգելք էր հանդիսանում ժամանակաշրջանի մանկավարժական առաջավոր մտքի ներթափանցմանը դպրոցներից ներս, ուր շարունակում էին գերիշխել ուսուցման սխոլաստիկ մեթոդները[4]:

Դպրոցական հարցում դաշնակցության մամուլի օրգանները նույնքան արմատական էին, որքան և «Մշակը»: Դպրոցական բազմաթիվ հարցերից դաշնակցականները նախապատվությունը տալիս էին ուսուցման մեթոդների կատարելագործմանը, ուսուցումը կյանքին մոտեցնելուն:

Արտահայտելով իր կուսակցության մտահոգությունները՝ Սիմոն Զավարյանը նշում էր, որ բոլոր աստիճանների հայկական դպրոցները, վերացական ուսում տալով, չեն ելնում կյանքի կոնկրետ պահանջներից: «Մեր երկիրը լեռնոտ է և աղքատ, – ասում էր նա: – Մեր կիսասոված ազգաբնակչության մեծ մասը [իր զավակներին] կրթության տալիս՝ գլխավորապես մտածում է հացի մասին, սպասում է, որպեսզի իր ընտանիքի ապավենը (այսինքն՝ ուսում առած իր զավակը: – Հ.Ս.) կարելիին չափ կարճ ժամանակամիջոցում օգնե իրեն, կրողանա մի կտոր հաց աշխատել»[5]:

---

[1] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հատ. առաջին, Բաքու, 1916, էջ 81-82:

[1] Տե՛ս «Արարատ», 1905թ. N1 (էջ 82-88), N 3 (էջ 279-289), N 4 (էջ 362-373), N 5 (էջ 460-472), N 6 (էջ 572-581), N 7-8 (էջ 692-707):

[2] «Մշակ», N 79, 15 ապրիլի 1906թ.:

[3] Նույն տեղում, N 77, 13 ապրիլի 1906թ.:

[4] Նույն տեղում, N 69, 30 մարտի 1906թ.:

[5] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, հրատ. Հ.Ց.Դաշնակցութեան, Բեյրութ, 1983, էջ 156:

Դաշնակցությանը մեծապես զբաղեցնում էր նաև հայկական դպրոցական համակարգում սոցիալական բարեփոխումներ մտցնելու հարցը: Իսկ դա նշանակում էր այնպիսի պայմանների ստեղծում, որպեսզի ուսում ստանալու ձգտում ունեցող ամեն ոք հնարավորություն ունենար, իր ուժերը ներածին չափով (մտավոր, նյութական), ընդգրկվել ուսուցման համակարգի որևէ օղակում:

Ռուսաստանում, որը կրթության տեսակետից Եվրոպայում բռնում էր վերջին տեղը, դպրոց էին հաճախում 100 բնակչից 3-ը: Կովկասում այդ թիվն իջնում էր 1-ի: Իհարկե, այս ցածր տոկոսը վերագրվում էր գլխավորապես մահմեդականներին, բայց հայերի մոտ էլ վիճակը փայլուն չէր, և 100 անձի վրա դպրոց հաճախողների թիվը չէր անցնում 2-ից[1]:

Դաշնակցականները ուզում էին գալիքում ունենալ ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցման համակարգ: Իսկ այժմ գոնե պետք է ստեղծվեր նվազագույնը, այն է՝ գրագիտական նախակրթարաններ հաստատել մանր գյուղերում (50 տնից պակաս), տարրական դպրոցներ՝ բոլոր 100-200 տուն ունեցող գյուղերում, պրոգիմնազիայի 6-ամյա դասընթացներ ունեցող ուսումնարաններ 300-500 տուն ունեցող բոլոր ավաններում և միջնակարգ հաստատություններ բոլոր այն քաղաքներում, ուր կար 5-10 000 հայ բնակչություն[2]:

Բարձրագույն կրթությունը կապված էր մեծ դժվարությունների հետ: Ռուսահայաստանում և ամբողջ Կովկասում չկար որևէ բարձրագույն հաստատություն, ուստի հայ երիտասարդները մեկնում էին Ռուսաստան կամ Եվրոպա, ընդունվում տեղի համալսարանները: Ուսումը լրացրած և վերադարձած մասնագետները սպասված օգուտը չէին բերում իրենց ժողովրդին, որովհետև նրանց ստացած գիտելիքները մեծ հաշվով չէին համապատասխանում հայության կարիքներին, հետևապես չէին նպաստում ժողովրդի, հատկապես հայ գյուղացիների հոգսերի թեթևացմանը:

Անդրադառնալով այդ իրողությանը՝ Ս. Զավարյանը նշում էր. «Դժբախտաբար կրթական ասպարեզում մենք ընթանում ենք արիստոկրատական ուղիով: Մենք ունենք բավականին թվով համալսարանականներ, մեր հաստատություններն ու անհատ բարեգործները թոշակներ են տալիս, առատ կտակներ են անում, և այդ բոլորը բարձրագույն կրթություն տալու համար: Բայց ո՞վ չգիտե մեզանից, որ բարձրագույն կրթություն ստանալ, 15-20 տարի դպրոց հաճախել կարող է միայն քիչ թե շատ ապահովը, քաղաքացի վաճառականի, գյուղացի ունևորի տղան: Ու՞մ համար պարզ չէ, որ թե՛ բարձրագույն կրթության նպաստողները, թե՛ այդ կրթությունից օգտվողները ծառայում են գլխավորապես ունևոր, արտոնյալ դասակարգի շահերին, բաց են թողնում մեր աղքատ ու կեղեքված գյուղացիությանը, հեռու են մնում իրենց

[1] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, հրատ. Հ.Ց.Դաշնակցութեան, Բեյրութ, 1983, էջ 154:
[2] Նույն տեղում:

քրտինքով ապրող մասսաներից, որոնք կազմում են մեր ժողովրդի հիմքն ու ապագան»[1]:

Ինչ վերաբերում է սոցիալ-դեմոկրատներին, ապա նրանք անիմաստ էին համարում դպրոցը բարենորոգելուն ուղղված ամեն ջանք, անգամ ամեն բազմամյա խոնջանք՝ գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերի պայմաններում:

Սոցիալ-դեմոկրատական հայ կազմակերպության «Կեանք» թերթը գրում էր, որ պետք է մի կողմ շպրտել «այն բոլոր կրոնական գիտելիքները և ուսմունքները», որոնք խաթարում են մատաղ սերնդի գիտակցությունը, «միանգամայն արմատախիլ անել դաստիարակության այն ձևն ու եղանակը, որ մինչև այժմ տիրապետել է դպրոցներում»: Իսկ դա հնարավոր է միայն ատելի միապետության ոչնչացման և հասարակական կյանքի արմատական հեղաբեկման միջոցով[2]:

Ս.-դ. բոլշևիկները, կրթական հարցին անդրադառնալիս, այն անմիջապես առնչում էին աշխատավոր դասակարգերի տնտեսական հնարավորությունների հետ: Շեշտելով, որ պրոլետարիատի հաղթանակի դեպքում լուսավորության, դպրոցական գործում վճռականապես վերջ կտրվի ամեն տեսակ առանձնաշնորհումներին, Սուրեն Սպանդարյանը գրում էր. «Բանվոր դասակարգը ձգտում է այն նպատակին, որ դպրոցների տիպը լինի մեկ, որ կրթության գործը դառնա իսկական **ազգային**, հասկանալով այդ՝ ոչ ազգայնական, այլ ընդհանուր ժողովրդական, առանց դասակարգային բաժանման, **առանց փողից կախումի** (ընդգծումը մերն է: – Հ.Ս.), այլ **պարտադիր** և **անվարձ**: Ստորին, միջին և բարձր դպրոցները միմյանց հետ պետք է անմիջապես կապված լինեն այնպես, ինչպես մի սանդուղքի աստիճանները: Ինքնըստինքյան հասկանալի է, որ պարտադիր է միմիայն ստորին դպրոցը, ուր թե՛ խեղճի և թե՛ հարուստի զավակները մի նստարանի վրա պիտի սովորեն, իսկ հետևյալ աստիճանները կանցնեն նրանք, որոնք ձգտում և հակում ունեն դեպի բարձր ուսումը»[3]:

Ելնելով խղճի ու համոզմունքի ազատության սոցիալ-դեմոկրատիայի պահանջից՝ Ս. Սպանդարյանը չեշտում էր, որ «ուսումնարանը պիտի լինի անպայման աշխարհական», ինչ վերաբերում է կրոնի ուսուցմանը, ապա այն «բոլորովին պետք է հեռացվի կրթության ծրագրից»[4]:

Մինչև էջմիածնի իշխանությունից դպրոցները կազմակերպչորեն դուրս բերելը հայ ուսուցչության մեծ մասը, որը խիստ ընկալունակ էր ամեն առաջադիմականի նկատմամբ, և որի միջավայրում արդեն լայն տեղ էին գրավել ռուսական հեղափոխության գաղափարները, պահանջում էր, առաջին

[1] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, էջ 155:
[2] «Կեանք» (Թիֆլիս), N 13, 10 հունիսի 1906թ.:
[3] Սուրեն Սպանդարյան, Ընտիր երկեր, էջ 83:
[4] Նույն տեղում, էջ 87:

հերթին, անհապաղ կազմել դպրոցական նոր ծրագրեր և նոր դասագրքեր, կամ արմատական փոփոխությունների ենթարկել գոյություն ունեցողները՝ դրանցից հանելով կղերականության պարտադրանքով դպրոցներում մեծ ծավալ ստացած կրոնական առարկաների դասավանդումը:

Մամուլի էջերում ծավալված բուռն բանավեճերի ընթացքում բազմաթիվ առաջարկներ էին արվում հատկապես դպրոցներում պատմության և գրականության դասավանդման դրվածքը բարելավելու համար: Առաջ էր քաշվում տվյալ առարկաների գծով նոր ծրագրերի կազմման և նոր դասագրքերի ստեղծման պահանջը:

Այլևս անհետաձգելի էր հայոց ողջ պատմության ճշմարտացի լուսաբանումը: Եկեղեցական պատմագիրներից ոմանց թողած երկերը, նրանց մի շարք հաստատումներ այլևս չէին բավարարում պատմական գիտությանը ներկայացվող պահանջներին՝ թերի, կանխակալ, աչառու լինելու պատճառով: Այդ պատմագիրները, և եկեղեցին ամբողջությամբ վերցրած, հայ ժողովրդի պատմության նախաքրիստոնեական ողջ ժամանակաշրջանը, որ ընդգրկում է հազարամյակներ, արհամարհանքով համարել և համարում էին կռապաշտական-հեթանոսական, ուր, իբր, համատարած թագավորել են տգիտությունն ու հոգու խավարը: Դարերի ընթացքում հետևողականորեն բանն այնպես է ներկայացվել, թե այդ խավարը ցրվել է հայոց աշխարհի վրա քրիստոնեության լույսը ճառագելուց հետո միայն: Ավելին, բանավեճերի մասնակիցները նշում էին, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ընդունելուց ի վեր, ամբողջ 1600 տարի, հայ հավատացյալների մոտ հրահրվել է ատելություն «հեթանոսականի» նկատմամբ: Նոր կրոնի ընդունմանը հաջորդել է հայ ժողովրդի նախաքրիստոնեական փառավոր անցյալի մշակութային անթիվ-անհամար արժեքների ոչնչացումը: Ո՞վ է հաշվել, թե հայի հանճարով ու տքնությամբ ստեղծված որքան անգին կոթողներ՝ տաճարներ և պաշտամունքային ուրիշ կառույցներ, մշակույթի այլազան օջախներ են ավերվել:

Միաժամանակ մամուլում շարունակվող բանավեճերի մասնակիցները չեշտում էին, որ իրականում նախաքրիստոնեական դարերի «հեթանոս» հայ ժողովուրդը ունեցել է փառավոր պատմություն, ստեղծել է Հին աշխարհի բարձր քաղաքակրթություններից մեկը: Հրեաստանը, հայ պետականությունը իրենց հզորության գագաթնակետին են հասել «հեթանոսական» դարերում: Չէ՞ որ Տիգրան 2-րդը հենց այդ դարերից մեկում է ստեղծել հայոց վիթխարի կայսրությունը, որը տարածվում էր մինչև Հրեաստան և Լիբանան, մինչև Կովկասյան լեռները, որին հարկ էր վճարում Պարսկաստանը:

Մամուլն ընդգծում էր, որ հայոց նախաքրիստոնեական դարերի «հեթանոս» հայության փառավոր պատմությունը, գրականությունը, մշակույթը նոր ժամանակներում բացառիկ եռանդով ուսումնասիրել և անկողմնակալ լուսաբանել են Մխիթարյան միաբանության գիտնական-հայրերը: Ուստի նպատակահարմար էր համարվում պատմության դպրոցական դասագրքերում

լայնորեն օգտագործել նրանց պատմագիտական հետազոտությունների արդյունքները:

Գոյություն ունեցող ուսումնական ծրագրերը նախատեսված էին միայն լուսավորչական եկեղեցու դպրոցների համար, իսկ հայ կաթոլիկներն ու հայ բողոքականներն ունեին իրենց առանձին դպրոցները, որոնք գոյատևում էին կաթոլիկ և բողոքական հայ համայնքների դրամներով: Այդ դպրոցների ծրագրերը շատ կողմերով մեծապես տարբերվում էին լուսավորչական եկեղեցուն ենթակա դպրոցների ուսումնական ծրագրերից:

Այլ խոսքով, ռուսահայոց դպրոցներում, անկախ դավանանքային պատկանելությունից, ուսումնական գործընթացի կազմակերպման միասնականացումը դարձել էր օրախնդիր:

Կրթական գործի կազմակերպիչները լի էին վճռականությամբ՝ ազատվել ուսուցման վերացական, սխոլաստիկ մեթոդներից, դպրոցներին հաղորդել ավելի գործնական բովանդակություն, որպեսզի դրանք համապատասխանեն ազգաբնակչության ճնշող մեծամասնության շահերին ու ցանկություններին: Ելնելով դրանից՝ նրանք պահանջում էին ունենալ ուսումնական այնպիսի ծրագրեր, որոնց կարևոր բաղադրիչները լինեին գործնական առարկաները: Այդպիսի ծրագրերով թե՛ տարրական դպրոցներն ավարտած 12-13 տարեկան պատանիները և թե՛ միջնակարգ ուսումը լրացրած 17-18 տարեկան երիտասարդները պետք է պատրաստ լինեին կյանքում կիրառելու ստացած գիտելիքները: Օրինակ՝ գյուղական դպրոցներն ավարտածներն ընդհանուր տեսական գիտելիքների հետ պետք է տիրապետեին որևէ նեղ մասնագիտության, ինչպիսիք են, ասենք, մեղվաբուծությունը, շերեմապահությունը, մրգի ծառերի տնկումը, խաղողի մշակությունը և բուժումը, գինու-կոնյակի պատրաստումը, բամբակի մշակությունը, կարագի պատրաստումը, բարձրորակ պանրի արտադրությունը և այլն:

1905թ. սկզբներին Թիֆլիսում տեղի էր ունեցել հայ ուսուցիչների մի համաժողով, որը քննության էր առել դպրոցական հարցերը: Համաժողովի ավարտին ընտրվել էր հանձնախումբ, որը պետք է մշակեր հայկական դպրոցների նոր կանոնադրություն և նոր ծրագիր՝ հաջորդ, ավելի մեծ, դպրոցական համաժողովի հաստատմանը ներկայացնելու համար:

Հանձնախումբը ժամանակին ու բարեխղճորեն կատարեց իր վրա դրված պարտականությունը և մշակած նոր կանոնադրությունն ու նոր ծրագիրն ուղարկեց Էջմիածին, որպեսզի կաթողիկոսը դրանք ներկայացնի 1906թ. գարնանն այնտեղ տեղի ունենալիք դպրոցական հերթական համաժողովի հաստատմանը:

Բայց նշանակված ժամկետին դպրոցական համաժողովն Էջմիածնում չկայացավ այն պատճառով, որ հասարակության մեջ համաժողովի կազմակերպման ու հրավիրման եղանակի դեմ լվեցին բողոքի հիմնավոր և ուժգին ձայներ: Դժգոհության պատճառը Էջմիածնի կողմից նախատեսված համաժողովի

կազմը և իրավասությունն էր: Համաժողովի մասնակիցները լինելու էին միայն դպրոցների ուսուցիչներ, այլ ոչ թե ուսուցչական կոլեկտիվների կամ հասարակության կողմից ընտրված անձինք, հետևապես, բնականաբար, ունենալու էին խորհրդակցական ձայն: Էջմիածինն ամեն ինչ անում էր, որպեսզի համագումարի պատգամավորների թվում մեծամասնություն կազմեն դպրոցական այն գործիչները, որոնք դեմ էին դպրոցական հին ծրագրերը նորերով փոխարինելուն:

Ծրագրված դպրոցական համաժողովի դեմ բարձրացած դժգոհությունն ու բացասական վերաբերմունքը հասարակության մեջ գնալով ծավալվեց ու սաստկացավ, որի հետևանքով ինքը՝ Էջմիածինը, ստիպված եղավ հետ առնել համաժողով հրավիրելու կարգադրությունը: Այլ կերպ վարվել այլևս հնարավոր չէր, քանի որ բողոքների հոսանքն այնքան հորդացավ, որ դպրոցական համաժողովին ոչ ոք մտադիր չէր գնալ, բացի, թերևս, թեմական առաջնորդներից:

Հասարակությունը, նաև ուսուցչությունը որոշակի պահանջ դրեցին ապագա ուսումնական կանոնադրությունը և ծրագրերը քննել ժողովրդի կողմից ընտրված և վճռական իրավասություններով օժտված մի կանոնավոր պատգամավորական ժողովում, և միայն այդպիսի ժողովի հավանությունը ստանալուց հետո դրանք համարել վավերական ու պարտադիր բոլոր դպրոցների համար:

ՀԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Եթե իր գոյության ընթացքում տարբեր դարերում հայոց եկեղեցին ստանձնել էր ազգի առաջնորդի դեր, ապա 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նույն առաքելությամբ հանդես գալու Էջմիածնի ձգտումը հայ հասարակության լայն շրջաններում ընկալվում էր իբրև նախատինք ազգային արժանապատվությանը:

Հանդես գալով հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում ղեկավար դիրքերը պահպանելու հոգևորականության ձգտումների դեմ Մկրտիչ Փորթուգալյանը գրում էր.

«Մենք՝ հայերս ենք միայն, որ կուզենք և կը սպասենք, որ ամեն բանի մեջ տերտէրը մեզ առաջնորդէ, պատրիարքը թաքրիր* գրելով Հայաստանի բարենորոգումները գործադրել տայ և կամ կաթողիկոսը ամենաողորմած ցարին դիմում ընելով Հայաստանին ինքնավարութիւն տրուի:

... Անոնք թող անեն, ինչ որ կրնան. բայց գլխաւոր գործը ժողովրդին ձեռքն է և ժողովրդին ուժովը պիտի լինի: Ժողովուրդն է ազգային մեծ իշխանութիւնը. նա ինչ որ ուզէ և ինչպէս որ ուզէ, այնպես կը լինի, բաւական է, որ գիտնայ իր ուզելիքը, իրեն օգտակարը»[1]:

Հայ եկեղեցին բարենորոգման ենթարկելու նպատակով սկսված շարժման գլխավոր նպատակներից մեկը **վարչական բարեփոխումներն** էին:

Տիրող օրենքների վրա իր դիրքը հիմնած հոգևոր դասը դարեր շարունակ թույլ չէր տալիս որևէ զիջում: Նա հույս ուներ ռուսական հեղափոխության ալիքներից դուրս պրծնել՝ անփոփոխ պահելով հինը՝ կաթողիկոսի միահեծան իշխանությունը, Արակչեևի ժամանակներից հիմնած սինոդը՝ իր արխայիկ ֆունկցիաներով ու կազմով, թեմական առաջնորդների նշանակովի լինելով:

Որքան էլ կղերը ջանքեր էր գործադրում սկսված էվոլյուցիան պարփակել Էջմիածնի պատերից ներս, բայց այդ բանը չէր հաջողվում: Օրեցօր արագանալով՝ այդ էվոլյուցիան ընդառաջ էր գնում ժողովրդի դեմոկրատական պահանջներին:

Հայ ազատական միտքը շուրջ երկու տասնամյակ պահանջում էր, որ կաթողիկոսից սկսած մինչև վերջին տիրացուն լինեն ոչ թե եկեղեցու, այլ ժողովրդի սպասավորներ, ոչ թե վերջինիս տերեր, այլ նրան ծառայողներ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր վերանայել ու դեմոկրատացնել հայ եկեղեցու «հիմնական օրենքները»:

Հասարակությունից եկող առաջարկներն ամենից առաջ վերաբերում էին **կաթողիկոսի իրավասություններին**:

Մկրտիչ Փորթուգալյանը ժամանակավրեպ էր համարում հայ բարձր հոգևորականներից շատերի այն պնդումը, թե հայոց կաթողիկոսն այսօր էլ ունի քաղաքական իրավունքներ, հետևապես իրավասու է միջամտելու ազգային բոլոր գործերին:

Այդպիսիք «մոռանում էին», որ ամբողջ միջնադարում պետությունները տևական պայքար են մղել եկեղեցական իշխանության դեմ աշխատելով սահմանափակել նրա միջամտությունները ազգային-պետական գործերին՝ նրան թողնելով զուտ հոգևոր գործերը: Տարբեր դարերում այդ երևույթն արտահայտվել է նաև Հայաստանում, ուր քաղաքական իշխանությունը ձգտել է սահմանափակել կաթողիկոսի իրավունքները, թուլացնել նրա ազդեցությունը[2]:

Նույն միտքն այսպես էր արտահայտում «Մշակը». «Կաթողիկոսը չի կարող հանդիսանալ մի ինչ-որ դիկտատոր, մի ինչ-որ փաշա կամ խան, ինչպես մի քանի կաթողիկոսներ աշխատել են այդպիսին լինել»[3]: Հայոց կաթողիկոսը պետք է լինի լոկ ղեկավար, լոկ նախագահ այն հաստատության, որ կոչվում է կաթողիկոսություն: Կաթողիկոսն ազգային-եկեղեցական-վարչական գործերի ղեկավարությունը պետք է կատարի ոչ ինքնակամ, միահեծան, այլ

* Խնդրագիր:

[1] «Արմենիա», N 1 (34), 1 հունվարի 1898թ.:
[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (թերթի կտրոն):
[3] «Մշակ», N 53, 8 մարտի 1908թ.:

համաձայն հայ եկեղեցու ոգուն, ավանդույթներին և սովորություններին, պետք է եկեղեցին կառավարի խորհրդարանի, մի տեսակ ծերակույտի (որի աղոտ ստվերն է Էջմիածնի սինոդը) աջակցությամբ: Այդ խորհրդարանը կամ ծերակույտը պետք է ընտրված լինի ազգից: Միայն զուտ կրոնական, դավանաբանական հարցերում կաթողիկոսը կարող է միահեծան կառավարել եկեղեցին և ինքնուրույնաբար տալ իր վճիռները[1]:

Կաթողիկոսի իրավունքները սահմանափակելու կողմնակիցները համոզված էին, որ եթե հայ ժողովուրդը երբևիցե կարողանա ինքնուրույն տնօրինել իր ճակատագիրը, եթե նրան վիճակվի անկախ պետություն ստեղծել, այն ժամանակ, անկասկած, թույլ չի տա, որ կաթողիկոսն ունենա որևէ քաղաքական իրավունք, իսկ պետական-հասարակական, դպրոցական-կրթական գործերին հոգևորականության միջամտության որևէ փորձ կկանխվի անմիջապես: Բայց դա հեռանկարում: Հայությունը չէր կարող սպասել այդ անորոշ հեռանկարին: Նա կոնկրետ արդյունքների էր սպասում հենց այժմ դրանցից տվյալ ժամանակաշրջանում առավել կարևոր համարելով՝ ա) կաթողիկոսի իրավասությունների տարածման շրջանակների (աշխարհագրական առումով) որոշումը, որը ենթադրում էր նրան իրավունք տալ միջամտելու միայն ռուսահայ եկեղեցու գործերին: Տաճկահայերի եկեղեցական գործերի պարագայում նա չպիտի կարողանար կարգադրություններ անել տեղական եկեղեցական հաստատությունների կարծիքին հակառակ: Նույնը և պարսկահայոց պարագայում (Ատրպատականի թեմի համար, օրինակ, պարտադիր էին համարվում կաթողիկոսի այն կարգադրությունները միայն, որոնք ընդունելի էին դիտվում թեմական պատգամավորական ժողովի կողմից), բ) կաթողիկոսի իշխանության իրավասության չափի որոշումը ռուսահայոց մեջ, որը ենթադրում էր դրա սահմանափակումը (բայց ոչ ստորադասումը) ռուսահայերի պատգամավորական կենտրոնական ժողովի իրավասությամբ: Առանց այդ ժողովի հավանության՝ նրա ոչ մի կարգադրություն չպետք է վավերական ու գործադրելի համարել:

Մեծ կարևորություն էր տրվում կաթողիկոսի և սինոդի փոխհարաբերությունների հարցին:

Սինոդը ռուսահայերի ամբողջ եկեղեցական համայնքի եկեղեցական գործերը վարող կենտրոնական խորհուրդն էր:

Սինոդի գաղափարը շատ հին էր և բխում էր առաքելական կանոններից: Սյունհոդոս գոյություն է ունեցել հին ժամանակներում, որը, քաղաքական տարուբերող հանգամանքների պատճառով, դադարել էր գոյություն ունենալուց:

19-րդ դարի սկզբին, 1806թ., Դանիել կաթողիկոսի առաջարկությամբ, Էջմիածնի միաբանությունը եպիսկոպոսներից ընտրել էր մի խորհուրդ, որին

[1] Տե՛ս «Մշակ», N 53, 8 մարտի 1908թ.:

տրվել էր սյունհոդոս մոռացված անունը: Այդ խորհրդի գործակցությամբ էին Էջմիածնի գործերը տնօրինում Դանիելը և նրա հետնորդները:

Երբ Էջմիածինն ընկավ ռուսաց տիրապետության տակ, անհրաժեշտություն առաջացավ կանոնակարգելու սյունհոդոսի ֆունկցիաները: 1829թ. Պասկևիչի ջանքերով հատուկ մասնաժողով կազմվեց, որը և 1830թ. հունվարին սկսեց հայոց եկեղեցու համար կանոնների մշակումը: Այս կանոնները, Էջմիածնում և Պետերբուրգում փոփոխություններ կրելուց հետո, ներկայացվեց Նիկոլայ I ցարին և 1836թ. մարտի 11-ին կայսերական հրովարտակով հաստատվեց "Положение"անունով:

"Положение"-ի զորությամբ սյունհոդոսը փոխարինվեց սինոդ անունով և ստացավ ռուսահայոց եկեղեցական վարչական գործերի վերին տնօրինողի ու ամենայն հայոց կաթողիկոսին գործակից լինելու դերը:

Սակայն հետագա տասնամյակներին սինոդի իրավունքները կտրուկ մեծացան, և այն ամենայն հայոց կաթողիկոսին խորհուրդ տվող մարմնից դարձավ նրան հակադիր մի հաստատություն: Այդ բանին նպաստում էին "Положение"-ի հոդվածները, որոնք զենք էին ծառայում սինոդի պրոկուրորների ձեռքին:

Երբ գոլիցինյան ռեակցիայի տարիներին ռուսաց քաղաքականությունը հայերի նկատմամբ զգալի չափով փոխվեց դեպի վատը, կառավարությունն աշխատեց հետզհետե սահմանափակել կաթողիկոսի հայրապետական իրավունքները, նվազեցնել Վեհի դերը, միաժամանակ է՛լ ավելի բարձրացնել սինոդի նշանակությունը: Ձուլենալով իրավունքների որոշված սահմաններ՝ սինոդը հաճախ դուրս էր գալիս իր իրավասությունների շրջանակներից և մտնում ոչ միայն թեմականների, այլև կաթողիկոսի իրավունքների մեջ:

Եվ ահա ռուսական հեղափոխության օրերին հայ հասարակությունից կարծիքներ էին հայտնվում, թե պետք է վերացնել գոյություն ունեցող սինոդը և վերականգնել նախկին սյունհոդոսը, որն իր մեջ կամփոփեր թե՛ այժմյան սինոդի և թե՛ հայրապետական դիվանի պարտականությունները և նորից կդառնար կաթողիկոսի իսկական խորհրդատու մարմին: Նպատակահարմար էր համարվում, որ այդ մարմինը բաղկացած լինի՝ 12, 16 կամ ավելի հոգևորական և աշխարհական անձերից, որոնք որոշ ժամանակ (ասենք 4 կամ 6 տարի) պաշտոնավարելուց հետո քառորդ կամ կիսով չափ կփոխվեին, և սյունհոդոսի կազմը կհամալրվեր նոր անդամներով:

Ըստ որում, կարծիք էր հայտնվում, որ կաթողիկոսն իրավունք չունի սյունհոդոսի անդամներ նշանակել՝ առանց եկեղեցական համայնքի ներկայացուցչի, այսինքն՝ կենտրոնական պատգամավորական ժողովի համաձայնության:

Եթե առաջարկում էին կաթողիկոսի իրավունքները սահմանափակել կենտրոնական ժողովի իրավասությամբ, ապա սյունհոդոսը պետք է ուղղակի ստորադասվեր կենտրոնական ժողովին, նրանից կախված լիներ, նրանից ստանար հրամաններ:

Սինոդը կմնար թե կփոխարինվեր սյունհոդոսով, միևնույն է, այդ մարմնի և կաթողիկոսի դիրքերը չէին կարող հավասարվել: Լինելով ռուսահայոց սինոդի նախագահը՝ կաթողիկոսը միաժամանակ ամենայն հայոց հայրապետն էր, հետևապես վեր էր սինոդից: Բայց ոչ միայն սինոդի, այլև կաթողիկոսի գործողությունները պետք է խստիվ կանոններով սահմանափակվեին ռուսահայ կենտրոնական ժողովի կողմից: Սա օրվա պահանջն էր:

Ավելին, մարդիկ բարձրացնում էին նույնիսկ էջմիածնի կաթողիկոսի վրայից «Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսը վերցնելու հարցը, փաստարկելով, թե իրականում նա միայն լուսավորչական հայերի, այլ ոչ թե բոլոր հայերի կաթողիկոսն է: Հայ կաթոլիկները և հայ բողոքականներն ունեին իրենց գերագույն պետերը, որոնք առնչություն չունեին էջմիածնի հետ, չխոսելով արդեն բազմահազար հայ աթեիստների մասին, որոնք ընդհանրապես մերժում էին կրոնն ու եկեղեցին:

Հասարակությանը ոչ պակաս հուզում էր նաև եկեղեցու **թեմական-վարչական** խնդիրը: «Թեմական իշխանությունները շատ հեռու չեն եղել բյուրոկրատ-խանական սովորություններից ու ձևերից»[1],-գրում էր «Արարատը»: Թեմի առաջնորդները հաճախ անպատիժ խախտում էին եկեղեցական կանոնները, իրենց միանգամայն անկախ էին զգում ժողովրդից, քանի որ ոչ թե ընտրվում էին նրա կողմից, այլ նշանակվում էին կաթողիկոսի կողմից՝ հաշվետու լինելով միայն նրան: Թեմականը սովորաբար հաշվի չէր նստում թեմի հոգևոր վարչության՝ կոնսիստորիայի* հետ, նրա համար մեկ էր, թե ով է այս կամ այն հարցի վերաբերյալ կարծիք հայտնում՝ կոնսիստորիայի հեղինակավոր անդա՞մը, թե՞ կոլեժսկի ռեգիստրատորը** : Թեմականը փաստորեն գործում էր ինքնակամ:

Իսկ եթե հաշվի առնենք, որ Խրիմյան կաթողիկոսը տարիներ շարունակ հիվանդ էր և այդ պատճառով նրան համարյա չէր հետաքրքրում, թե ինչով են զբաղված առաջնորդները, ապա պարզ կդառնա, թե որքան անվերահսկելի էին վերջիններիս մի մասի օրինազանց գործողությունները:

Հասարակությունը պահանջում էր փակել «սրբազաններից» շատերի կաշառակերության և զեղծումների ճանապարհը, մարդիկ հարց էին բարձրացնում, որ թեմական առաջնորդներին նշանակի ոչ թե կաթողիկոսը, այլ ընտրվեն ժողովրդի կողմից՝ ուղիղ, գաղտնի, ընդհանուր և հավասար ընտրություններով:

Անաշխատ եկամուտների ճանապարհը փակելու առաջարկներ էին արվում հոգևոր ողջ դասի նկատմամբ: Նույնիսկ կրոնական առանձին գործիչներ

[1] **«Արարատ»**, N 7-8, հուլիս-օգոստոս, 1905, էջ 589:

* Կոնսիստորիա- թեմի հոգևոր վարչություն՝ ըստ ռուսական կառավարության կողմից մշակված հայ եկեղեցու կանոնադրության (“Положение”): Հայ հոգևոր կրոնական այդ հաստատությունը ենթակա էր նախ և առաջ շրջանի թեմական առաջնորդի իրավասությանը:

** Կոլեժսկի ռեգիստրատոր - կոնսիստորիայում պաշտոնյա, որը ցարական ժամանակների քաղաքացիական պաշտոնների աստիճանացույցում գրավում էր ամենացածր տեղը:

(օրինակ՝ Բաթումից Մեսրոպ ավագ քահանա Մելյանը) մամուլի էջերում հարց էին բարձրացնում կտրուկ սահմանափակել հոգևորականների դրամասիրությունը: Նա ասում էր, որ եկեղեցականը, հատկապես կրոնի վերին պաշտոնյաները, պարտավոր են ժողովրդի համար օրինակ լինել իրենց համեստ կենցաղով, ժուժկալությամբ, վարք ու բարքով, բայց, ցավոք, նրանց գերակշիռ մասը շատ հեռու է մարդկային այդ դրական չափանիշերից:

Դոնի Նոր Նախիջևանում տպագրվող ազատական ուղղության «Նոր կեանք» շաբաթաթերթը ցավով գրում էր. «Պատրիարքների, առաջնորդների, եպիսկոպոսների, վարդապետների, ամիրաների, իշխանների, տիրացուների և քահանաների միմյանցից աթոռ ու իշխանություն խլելու, վանքերն ու եկեղեցիները կողոպտելու, ժողովուրդը կեղեքելու, կաշառներ տալ և ստանալու [համար] կրոնական, դավանական հալածանքների այնպիսի ալեկոծ կյանք են ստեղծել, այնպիսի ոճիրներ են գործել, որ մարդ զարմանում է, թե ի՞նչ հրաշքով մնացել են դեռևս ազգային կուլտուրայի հետքեր և եկեղեցի»[1]:

Շատերը գտնում էին, որ կրոնի սպասավորների համար պետք է հաստատուն հաստիքներ կազմել և ռոճիկ տալ, միաժամանակ նրանց խստիվ արգելել ունենալու այլ եկամուտներ, այսինքն՝ թույլ չտալ, որ նրանք կողմնակի գործերից վարձ ստանան, նվերներ ընդունեն արարողությունների համար (եկեղեցու օծում, քահանայի ձեռնադրում և այլն): Այլ խոսքով, հոգևորականը պետք է վարձատրվեր ժողովրդից, այլ ոչ թե անհատներից:

Քանի որ չնախատեսված կողմնակի եկամուտների ստացումը և ձրիակերությունը ներհակ են բարոյականության սկզբունքներին, ուստի առաջարկվում էր, որ ժողովուրդն իր կողմից ընտրած ներկայացուցչական կազմով վերահսկողություն սահմանի եկեղեցական պաշտոնյաների վրա, նրանց գոնե ինչ-որ չափով հեռու պահի անբարո գայթակղություններից: Ժողովուրդը չպետք է թույլ տա, որ հոգևորականն ունենա ապրուստի այնպիսի աղբյուրներ ու եղանակներ, որոնք նպաստում են այն բանին, որ նա ապրի համայնքից անկախ: Դա նշանակում էր, որ եկեղեցու ամեն աստիճանի պաշտոնյաները մնացած բոլոր քրիստոնյա եղբայրների հետ պետք է լինեն միանգամայն հավասար վիճակի մեջ:

Մամուլում հանդես եկող շատ գործիչներ մի ուրիշ առաջարկ էին անում. թոչակ նշանակել կաթողիկոսին, էջմիածնի միաբանության անդամներին, բոլոր եկեղեցականներին, նրանց թույլ տալ հանգիստ ու անխռով թագավորելու վանքերի ու եկեղեցիների մեջ, դրանց պատերից ներս, որպեսզի աղոթեն միայն այն հայերի համար, որոնք կարոտ են առասպելների:

Բայց արդյո՞ք իրագործելի էին այդ ցանկությունները: Դրանում կասկածում էին նույնիսկ նրանք, ովքեր հանդես էին գալիս վերևում նշված առաջարկներով: Սրանք համոզված չէին, թե եկեղեցական դասը կարող է

[1] **«Նոր կեանք»**, N 11,10 սեպտեմբերի 1906թ.:

հեշտությամբ հրաժարվել իր առանձնաշնորհներից[1]:

Պատահական չէ, գրում էր «Մշակը», որ բարոյական բարձր սկզբունքներով ապրող ազնիվ մարդիկ, որոնք մտնում են հոգևորականության շարքերը, չեն դիմանում եկեղեցում հաստատված բարքերին և այդ իսկ պատճառով ենթարկվում են նրա հալածանքներին: Այդպիսիները, տանջվելով, ամբողջ կյանքում անիծում են պատանեկության օրերում գործած սխալը՝ ընտանիքի հարազատ գրկից կղերականության գիրկն ընկնելը[2]:

Կարևորվում էր **ծխական-վարչական փոփոխությունների** անհրաժեշտությունը: Առաջարկվում էր քահանայի ընտրությունը կատարել ծխական ընդհանուր ժողովում, իսկ թեմական առաջնորդներին և նույնիսկ կաթողիկոսին արգելել քահանա նշանակել՝ առանց ծխի համայնքի համաձայնության: Ոմանք գտնում էին, որ պետք է պակասեցնել քահանաների թիվը և դրա փոխարեն ավելացնել թեմերի թիվը, այն հաշվով, որ քահանաների ծխականները քաղաքներում պակաս չլինեն 400-ից, իսկ գյուղերում 300-ից: Դա, նրանց կարծիքով, հնարավորություն կտար եկեղեցու ծառայողներին մոտեցնել համայնքներին: Կարևոր էր համարվում քահանաների կրթական մակարդակի հարցը: Առաջարկներ էին արվում, որ քահանան ունենա առնվազն միջնակարգ դպրոցի դասընթացն ավարտած լինելու վկայական կամ այդ չափով գիտելիքներ:

Քննարկումներից դուրս չէր մնում **ծխական հոգաբարձության** գործունեության բարելավման հարցը: Ցուրաքանչյուր եկեղեցի ուներ իր ծխական հոգաբարձությունը, որն ընտրվում էր ծխական ընդհանուր ժողովի կողմից: Հոգաբարձությունը լիազորապես կառավարում էր ծխական շրջանի եկեղեցական բոլոր հաստատությունները, տնօրինում տնտեսական խնդիրները՝ լինելով պատասխանատու ծխական ժողովրդի առջև: Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ ծխական հոգաբարձությունը, իբրև ընդհանուր ժողովի կողմից կարգված գործադիր իշխանություն, դրվեր ծխական երեսփոխանական խորհրդի մշտական հսկողության և վերահայեցողության ներքո: Դա կնպաստեր նրան, որ ծխական հոգաբարձությունն իր պարտականությունները կատարեր զգաստ ու պարտաճանաչությամբ:

Վարչական բարեփոխումների խնդիրները քննարկելիս՝ շոշափվում էին նաև **հոգևորականների ընտանեկան հարաբերությունների**, մասնավորապես բարձրաստիճան հոգևորականների խստակրոնության ու ամուրիության և քահանաների ամուսնալուծության ու կրկնամուսնության հարցերը, որոնք լայն արձագանք էին ստացել հատկապես ազատական մամուլի էջերում:

Քրիստոնեության առաջին դարերում մեծ նշանակություն էր տրվում հոգևորականների խստակրոնությանը և ամուրիությանը: Հետագայում

[1] **«Մշակ»**, N 179, 19 օգոստոսի 1906թ.:
[2] Նույն տեղում:

արևելյան եկեղեցիներում, այդ թվում հայոց եկեղեցում, հոգևորականների առջև վերացան ամուսնանալու արգելքները: Բայց ամուրի լինելու ձգտումը ավելի ուշ գնալով դարձավ սովորություն[1]: Հայոց եկեղեցին դա համարեց իր անխախտ կանոններից մեկը:

Հասարակությունը պահանջում էր այլևս չհետևել հոգևորականների կուսակրոնության մասին հայոց եկեղեցում ընդունված կանոնին, ընդունել նոր կանոն, որի համաձայն բոլոր հոգևորականները ոչ միայն իրավունք, այլև պարտք պիտի ունենան ամուսնանալու: Թերթերը գրում էին, որ եկեղեցականները, որոնք գործնական օգուտ չեն բերում ազգին, գոնե ամուսնանալով՝ երեխաներ կտան նրան: Շեշտվում էր, որ կուսակրոնության մասին կանոնը, միևնույն է՝ կյանքում չի գործում, քանզի այն միանգամայն արհեստածին է, հակառակ՝ մարդու բնությանը, որ հոգևորականներից մատների վրա կարելի է հաշվել նրանց, ովքեր հետևում են դրան, իսկ բացարձակ մեծամասնությունը աչքից հեռու անում է այն, ինչ թելադրում է բնական պահանջմունքը:

Կուսակրոնության չատագովների հիմնական պատճառաբանությունը հետևյալն էր. քանի որ Քրիստոսն ամուսնացած չէր, ուստի Նրա աշակերտներն ու հետևորդները նույնպես չպետք է ամուսնանան:

Այս պատճառաբանությունը սրամիտ կերպով հերքվում էր մամուլում և բանավոր ելույթներում: Հարց էր տրվում, թե Քրիստոսի ո՞ր մեկ ապրելակերպը կարելի է համեմատել այսօրվա «կուսակրոն» հայ հոգևորականի ապրելակերպին: Քրիստոսը խոսում էր միայն եբրայերեն, իսկ հայ բարձր եկեղեցականներից շատերը այնպես են խորացել օտար լեզուների մեջ, որ նույնիսկ հայերեն «ր» տառը արտասանում են եվրոպացու նման: Ավետարանում ասված է, թե Քրիստոսը հագնում էր կաշվից տրեխ՝ կոպիտ թելերով կապելով սրունքներին: Իսկ մերո՞նք: Սրանք հագնում են "Glasse bot" կոշիկներ և "Мерджаноф" կրկնակոշիկներ: Քրիստոսն ապրում էր առանձին և միայն քարոզներով էր հարաբերության մեջ մտնում երկսեռ ժողովրդի հետ, իսկ մերոնք շատ լավ գիտեն ընտանեկան կյանքի համը, գերագույն հաճույք են զգում նրա տաք մթնոլորտից: Քրիստոսն ուսերին առնում էր պարզ վերարկու և գլխին դնում հարդից հյուսված ծածկոց, իսկ մերոնք կրում են խաս թավիշ: Քրիստոսի սերունդը ծայրահեղորեն համեստ էր, իսկ մերոնք ապրում են լիության մեջ: Այլ խոսքով, հայ կուսակրոն հոգևորականը ըմբոշխնում է աշխարհիկ բոլոր վայելքները:

Եթե կուսակրոնը այսօր չեղված է Քրիստոսի այդ բոլոր պատվիրաններից, եթե նա մի կողմ է դրել նրա ապրելակերպի օրինակը, մի՞թե միայն ամուսնությունն է, որ կարող է պախարակելի լինել, մանավանդ որ հոգևորականների մեծամասնության համար կուսակրոնությունը պարզապես ծածկոց է:

[1] Տե՛ս **«Արարատ»**, N 7-8, հուլիս-օգոստոս, 1905, էջ 651:

Նույնքան անբնական էին և համարյա անհաղթահարելի՝ ցածրաստիճան հոգևորականների առջև կանգնած արգելքները:

Քահանան իրավունք ուներ ամուսնանալու, բայց միայն՝ մեկ անգամ: Երկրորդ անգամ նրա ամուսնության հարցը լիովին ենթակա էր Էջմիածնի սինոդի իրավասությանը, որն ամեն տարի հրաման էր իջեցնում կոնսիստորիաներին՝ մանրամասն տեղեկագիր ներկայացնել իրենց թեմերում եղած կուսակրոն, ամուսնացած ու ամուրի հոգևորականների մասին[1]: Սինոդը, այդպիսով, աչալուրջ հետևում էր, որպեսզի, աստված չանի, օրինական կնոջից զրկված քահանան, եթե նա նույնիսկ ֆիզիկական ուժերի ծաղկման շրջանում է, լի ավյունով ու կյանքով, չփորձի նորից ամուսնանալ օրինական ճանապարհով, առավել ևս՝ մտերմական կապ հաստատի որևէ կնոջ հետ: Ընդհանուր կանոնի խախտման դեպքում քահանան սինոդի կողմից ենթարկվում էր խիստ պատիժների՝ ընդհուպ մինչև կարգալույծ լինելը:

Ամուսնալուծությունների և կրկնակի ամուսնությունների մասին սինոդի ընդունած որոշումները պարբերաբար տպագրվում էին Էջմիածնի պաշտոնական օրգան «Արարատում»: Ահա դրանցից մեկը.

«Նոյեմբերի 26-ին (1904թ. - Հ.Ս.) սինոդը լսեց Ղրխբուլաղի ծխատեր Հովհաննես քահանա Տեր-Օհանյանցի ապօրինի կնապահության գործը նրա ամուսին Զմռութ Ցավրյանի մահվանից հետո և որոշեց դադարեցնել նրան (այսինքն՝ դադարեցնել նրա քահանայությունը: - Հ.Ս.) անորոշ ժամանակով՝ ապօրինի կնապահության համար, մինչև որ կապաշխարի ու կը հեռացնի տնից յուր հոմանուն, և այս մասին հրաման արձակեց Երևանի կոնսիստորիայի անունով»[2]:

Կրկնամուսնության ձգտող ամուրի քահանաներին նույն պատիժներն էին սպասվում հայոց եկեղեցու թուրքահայ թեմերում: Այստեղ ամբաստանյալների գործերը պատրաստվելուց հետո ուղարկվում էին Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության կրոնական ժողով՝ քննության: Վերջինս իր վճիռը ներկայացնում էր պատրիարքին, որը և հերթական կոնդակով սահմանում էր «մեղադրյալների» պատժի չափը: Բերենք բազում օրինակներից մեկը.

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանյանի N500 կարգալուծության կոնդակում ասված էր, որ Բաղեշի վիճակի Տատիկ գավառակի Ղուլթիկ գյուղի Ղազար Տեր-Ղազարյան և Պաս գյուղի Հովհաննես Տեր-Հովհաննիսյան քահանաները այրի մնացած լինելով՝ հանդգնել են վերըստին ամուսնություն կնքել՝ փոխադարձաբար իրար վրա կատարելով պսակի արարողություն:

Կոնդակում կարդում ենք, որ «գաղտագողի զիրար պսակած» քահանաները կատարել են եկեղեցու կանոններին հակառակ սրբապղծություն,

[1] Տե՛ս «Արարատ», N 2, փետրվար, 1905, էջ 105:
[2] Նույն տեղում, N 1, հունվար, 1905, էջ 3:

հետևաբար՝ համարվում են կարգալուծված և իսպառ զրկվում են «քահանայական կոչումէն ու պաշտօնէն և քահանայական աստիճանի իրավունքներեն ու պատիվներեն»: Այս որոշումը, այնուհետև նշված էր կոնդակում, «կծանուցանենք բոլոր մեր եկեղեցւոյն առաջնորդաց և փոխանորդաց, վարդապետաց և քահանայից, ժողովոց և խորհրդոց, և առ հասարակ ամենայն եկեղեցականաց և աշխարհականաց, որ այսուհետև ոչ ի սահմանս պատրիարքութեանս մերոյ և ոչ արտաքոյ Նորին յայլ երկիրս և ի գաւառս, վերոյիշեալ Ղազար Տ. Ղազարեանը և Յովհաննէս Տ. Յովհաննէսեանը իբր քահանայ չճանչնան և իբր քահանայ չընդունին, և աղոթեն առ Աստուած, որ ս. եկեղեցւոյ բոլոր պաշտոնեաները իր շնորհաց մէջ պահէ, և օրհնէ և պայծառացնէ ս. եկեղեցին»[1]:

Հասարակությունը վաղուց էր բարձրացրել կրկնամուսնության հարցը՝ պահանջելով այն լուծել այրիացած քահանաների օգտին[2]: Նման խնդրանքով, օրինակ, կաթողիկոսը նամակ էր ստացել Բաքվից՝ 1000 աշխարհականների ստորագրությամբ[3], որը, սակայն, մնացել էր անպատասխան:

Երբեմն, որպես բացառություն, վեհապետը կամ սինոդը ընդառաջ էին գնում աղիողորմ խնդրանքներին: «Նոր կեանք» (Նոր Նախիջևան) թերթը հաղորդում էր.

«Օգոստոսի 26-ին մի քանի այրի քահանաներ խնդիրքով դիմեցին Նորին Վեհափառութեան, որ թույլ տրուի իրենց կրկին ամուսնանալու, իսկ 27-ին, այդ հարցի առիթով, նույն քահանաները ներկայացան և մի առ մի նկարագրեցին Վեհին իրենց դառն և անտանելի վիճակը:

Ինչպես լսում ենք, կաթողիկոսը կարեկցելով՝ զիջել է նրանց խնդիրքին և թույլ է տուել կրկին ամուսնանալու»[4]:

Նման «լայնասիրտ» որոշումները շատ չէին: Ավելին, առանձին դեպքերում բարձրաստիճան կղերը չէր սահմանափակվում քահանաներին սպառնագին սաստելով:

Իր հերթական կոնդակներից մեկում կաթողիկոսը պատվիրել էր՝ այրի քահանաների կրկնամուսնությունները չթույլատրելու և «անբարոյական դեպքերից խուսափելու համար» նրանց պատսպարել վանքերում: Երուսաղեմից Հարություն պատրիարքը իր նամակով ողջունում էր այդ կոնդակը[5]:

Կղերը շարունակում էր կառչած մնալ ավելի քան մեկուկես հազարամյակ առաջ ընդունված կարգ ու կանոնին: Դա հատկապես անզիջում դրսևորումներ ուներ թուրքահայ թեմերում: Երբ արևելահայ առանձին բարձրաստիճան եկեղեցականներ Կ. Պոլսի պատրիարքությանը խորհուրդ էին տալիս որոշ

[1] «Արարատ», N 5, մայիս, 1907, էջ 434 - 435:
[2] Այդ մասին մանրամասն տե՛ս Մկրտիչ կաթողիկոսի կոնդակների և նամակների մայր մատյան (1906-1907թթ.), ՊԿՊԱ, ֆ. 57, ց.2, գ. 98, թ.թ.1-125:
[3] Մատենադարան, մատյան 34, թղթ. 11, վավ. 219, թ. 1:
[4] «Նոր կեանք», N 11, 10 սեպտեմբերի 1906թ.:
[5] Մատենադարան, մատյան 34, թղթ. 13, վավ. 394, թ.1:

մեղմություն մտցնել խնդրի մեջ, ստացվում էր այսպիսի պատասխան. քահանաների կրկնամուսնության արգելքը բխում է առաքելական օրենքից, որի համաձայն սարկավագները պիտի լինեն «միոյ կնոջ այր»: Պատրիարք Օրմանյանը ավելացնում էր, որ երկրորդ ամուսնության մեջ մտնել ցանկացող քահանաները կարող են թողնել քահանայությունը և պսակվել իբրև աշխարհական՝ դարձյալ առաքյալի՝ «ոչ ունիցին ժոյժ ամուսնացին» խոսքերի հիման վրա, որը նշանակում է, թե երբեք չի թույլատրվի քահանաների կրկնամուսնությունը[1]:

Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը՝ եզակի բարձրաստիճան եկեղեցականներից մեկը, որը վճռականորեն հանդես էր գալիս հայոց եկեղեցու դեմոկրատացման պահանջով, հարցեր էր տալիս. «Ո՞վ է ճշմարիտ քրիստոնեան և աւանդապահ քահանան՝ նա՞, որ երկրորդ ամուսնութեան մեջ է և ողջախոհ, թե՞ նա, որ այրի է և գայթակղութեան քար: Ո՞վ է շիտակ մարդը և աւետարանի աշակերտ, նա՞, որ երկրորդ ամուսնութեամբ ապրում է խիղճը հանգիստ, կատարում է ճշտութեամբ իւր վրայ դրած սրբազան պարտքը, թե նա՞, որ չի պսակում երկրորդ անգամ՝ համարելով եկեղեցական օրենքին հակառակ, և ծածուկ ու աշկարա խայտառակութեան տիպար հանդիսանում»[2]:

Եթե ի մի բերենք քննվող ժամանակաշրջանում հայոց եկեղեցու վարչական-ընտրական բարենորոգումների ուղղությամբ հասարակության կողմից առաջադրված պահանջները, ապա դրանք կարելի է ամփոփել հետևյալ կետերի մեջ. 1. Վարչական գործերում կաթողիկոսի իրավունքները սահմանափակել ժողովրդի ներկայացուցչությամբ, որպեսզի նա մնա լոկ իբրև հայ եկեղեցու պատվավոր նախագահ, իբրև կրոնապետ, 2. Ազգային-եկեղեցական գործերի կառավարումը հանձնել քառանդամ (ուղիղ, գաղտնի, ընդհանուր, հավասար) սկզբունքով ընտրված ժողովրդական ներկայացուցչության ձեռքը, 3. Վերջ դնել վեհարանի և նշանակովի թեմական առաջնորդների անվերահսկելի, քմահաճ կամայականություններին, 4. Կրոնի սպասավորներին թողնել զուտ կրոնական-դավանաբանական հարցերը և ծիսական խնդիրները, 5. Ազգային-եկեղեցական գործերում կղերի քմահաճույքը փոխարինել սահմանադրական ընտրովի «կենտրոնական խորհրդով», 6. Կարգավորել հոգևորականների ընտանեկան հարաբերությունների հարցերը:

Չնայած հոգևորականության մեծ մասի բացահայտ կամ լուռ դիմադրությանը, հայ լիբերալ շերտերը երազում էին նորոգել քայքայվող շենքը, որի կործանման համար այնքան շատ ջանք ու եռանդ էին թափել մարդկության լուսավոր ուղեղները:

Հարկ է նշել, որ կրոնի հարցերի քննարկումը կատարվում էր հայ պահպանողական, լիբերալ և ազգային-հեղափոխական կազմակերպությունների ու

[1] «Արարատ», N 8, օգոստոս-նոյեմբեր, 1906, էջ 646-647:
[2] Նույն տեղում, էջ 647:

հոսանքների շրջանում: Ինչ վերաբերում է հայ սոցիալ-դեմոկրատներին, ապա նրանք գտնում էին, որ ինչպես մյուս ազգերը, հայերը նույնպես չպետք է խառնվեն քահանայի, եպիսկոպոսի, պատրիարքի կամ այլ բարձրաստիճան եկեղեցական պաշտոնյայի ընտրության կամ նշանակման նեղ հաշիվների մեջ: Ժողովուրդը չպետք է զբաղվի այդ անթիվ ու աննպատակ ընտրություններով: Անցյալում հայերը շատ զբաղվեցին դրանով, շատ կյանք մաշեցին, շատ եռանդ վատնեցին և, բացի վնասից, ոչ մի շահ չստացան:

Եկեղեցական պաշտոնյաների ընտրության կարթով այլևս դժվար էր աշխատավոր հայ մարդուն կապել եկեղեցու հետ, նրան ստիպել կառչելու քահանայի ու եպիսկոպոսի փեշերից: Հեղափոխականները գտնում էին, որ դրանով թող զբաղվեն նրանք, ովքեր առանձին ցանկություն ու ժամանակ ունեն, բայց մի ամբողջ ազգ չի կարող ժամավաճառ լինել: «Ժողովուրդը հրաժարվում է այդ «չնորհներից», - ասում էին նրանք:

Լինելով գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերի պաշտպան, կարգեր, որոնց դեմ ըմբոստացել էր ժողովուրդը, հայ եկեղեցին, այդ ժողովրդից լիովին չմեկուսանալու համար, ինքն էլ փորձեց ակամա նրա հետ ոտք գցել: Այդ ձգտումը հատկապես դրսևորվեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո, երբ Էջմիածինը նույնպես ցանկացավ ցույց տալ, թե ինքն էլ է համակրում Ռուսաստանի առաջադիմական-ժողովրդական շարժումները: Մյուս կողմից, հայ ամենաազդեցիկ քաղաքական ուժը՝ դաշնակցությունը, պահը հարմար էր գտնում ամբողջ ուժով բողոքելու "Положение"-ի այն դրույթների դեմ, որոնք արգելք էին հանդիսանում հայ եկեղեցուց ներս իրականացնելու ժամանակաշրջանին համապատասխան բարեփոխումներ:

Կաթողիկոսը մեկը մյուսի հետևից չտապեց մի շարք կոնդակներ տալ: Հեղափոխության ազդեցության տակ Էջմիածնի տիրույթում ծնունդ առան վերանորոգչական որոշ տրամադրություններ, որոնք, լինելով հասարակական պահանջմունքների թելադրանք, կղերի կամքից անկախ՝ օբյեկտիվորեն ուղղվեցին հայ հասարակական կյանքի վրա կրոնի և եկեղեցու ազդեցության թուլացմանը:

Եթե կովկասահայ հասարակությունը վաղուց համառորեն բարձրացնում էր ազգային կյանքում եկեղեցու դերի, նրա իրավասությունների սահմանափակման հարցը, ապա ռուսական հեղափոխությունն արագացրեց այդ հարցի քննարկումը տարբեր մակարդակներում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

1906թ. մայիսի 10-ին ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հայ եկեղեցու պատմության մեջ առաջին անգամ աշխարհաբար հրատարակեց

կոնդակ (N 549)[1], դրանով իսկ ցույց տալով, թե հայ հոգևորականությունն ընդունում է, որ եկեղեցական պաշտոնական թղթերն ու գրությունները կարող են լինել նաև այն լեզվով, որ մատչելի ու հասկանալի է ժողովրդին: Կոնդակում ասված էր.

«Ռուսիայի սահմաններում ապրող մեր սիրելի և հարազատ զավակներին Հայաստանեաց սուրբ Լուսավորչի Նվիրական Աթոռից հայրապետական օրհնությամբ հայտնում ենք:

Հայրապետական գահ բարձրանալու առաջին իսկ օրերից՝ Մենք փափագում էինք վերականգնել Հայաստանեաց եկեղեցու դարերի ընթացքում սրբությամբ պահպանված իրավունքը նրա պաշտոնեաների վերաբերմամբ, սակայն ժամանակի ձախորդ հանգամանքները արգելք հանդիսացան Մեր այդ մտադրության իրականացմանը, և Մեր իղձը ամբողջ 13 տարի մնաց անկատար: Այժմ, որպես Հայրապետ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցվո և ամենամեծ պատասխանատու նրա ցանկալի բարգավաճման և ծաղկեալ վիճակի թէ՛ Մեզ ընտրող հայ ազգի և թէ՛ Աստուծոյ առաջ, հասած ենք համարում ժամանակը և հասուն Մեր ժողովրդեան, ուստի Մեր այս Հայրապետական Կոնդակով վերականգնելով Հայաստանեաց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործուած իրավունքը՝ Քեզ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտոնեաների ընտրութեան իրավունքը, որից հետոյ ընտրեալները կը հրավիրուին իրենց պաշտոնին պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով: Ի նկատի ունենալով հայ ազգաբնակութեան վերաբերեալ վիճակագրական ճշգրիտ տեղեկութեանց թերությունը, առ այժմ մինչև նրանց վերստուգումը և հայ ժողովրդից ընտրեալ պատգամավորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, կարգադրում ենք ընտրությունները կատարել կաթողիկոսական ընտրութեան եղանակով ընդհանուր և անմիջական ձայնտվութեամբ»[2]:

Այսպիսով, իր N 549 կոնդակով կաթողիկոսն ազդարարում էր, որ վերահաստատում է հոգևոր պաշտոնատար անձանց ընտրությունների վերաբերյալ հայ եկեղեցու և ժողովրդի վաղեմի այն իրավունքները, որոնք խախտվել էին հետագա դարերում:

Անշուշտ, N 549 կոնդակը տալով՝ կաթողիկոսն ընդառաջում էր Հ.Յ. դաշնակցության ցանկությանը և դրանով իսկ կրկին երախտագիտության տուրք մատուցում այն կուսակցությանը, որը գլխավոր դերն էր խաղացել ցարի

[1] Կաթողիկոսի 1906թ. մայիսի 10-ի կոնդակի տեքստը տե՛ս «Ալիք», N 15,16 մայիսի 1906թ.: Վահան Փափազյանը վկայում է, որ կաթողիկոսի խնդրանքով ու Հ.Յ.Դ. արևելյան բյուրոյի հանձնարարությամբ մայիսի 10-ի կոնդակը Թիֆլիսում գրել են Սիմոն Զավարյանը, Սիրական Տիգրանյանը, Տիգրան Հովհաննիսյանը և, իրենց հետ վերցնելով, մեկնել են Էջմիածին (տե՛ս **Վ. Փափազեան**, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 148):

[2] **«Մշակ»**, N 103, 16 մայիսի 1906թ.:

կողմից բռնագրավված հայ եկեղեցու կալվածքները վերադարձնելու գործում:

1905թ. գարնանը Թիֆլիսում գումարված հայկական համագումարը նպատակահարմար էր գտել առաջիկայում գումարել մի նոր, ավելի բազմամարդ ժողով: Համագումարում ընտրված բյուրոն որոշել էր հայկական երկրորդ համագումարը հրավիրել դարձյալ Թիֆլիսում և այնտեղ դնել մի մեծ համազգային ժողով գումարելու առաջարկը: Որոշվել էր նույնիսկ համագումարի օրը, և հրավիրագրերն արդեն պատրաստ էին ուղարկելու, երբ Հ.Յ. դաշնակցությունը, սկսված Թուրք-հայկական ընդհարումների պատճառով բոպեն աննպաստ նկատելով, առաջարկեց հետաձգել միջոցառումը: Բյուրոն ընդունեց այդ առաջարկը, դրան համաձայնություն տվեց նաև կաթողիկոսը:

Դաշնակցությունը գտնում էր, որ տվյալ պահին ավելի նպատակահարմար է հրավիրել ոչ թե հայկական երկրորդ համագումար, այլ հայոց եկեղեցական-պատգամավորական ժողով:

Ազգային եկեղեցական ժողով գումարելու գաղափարը նոր չէր, հարցը վաղուց էր դրված հրապարակի վրա: Եթե թերթելու լինենք հայկական մամուլի նախորդ տարիների համարները, կտեսնենք, որ այդ հարցը մինչ այդ արծարծված է եղել, բայց կաթողիկոսը ոչ մի ձգտում և տրամադրություն չէր ցուցաբերել իրագործելու այն:

1906թ. հունիսի 7-ին Խրիմյան կաթողիկոսը հրատարակեց նոր կոնդակ[1], որտեղ, ի հետևումն մայիսի 10-ի N 549 կոնդակի, ռուսահայոց եկեղեցական համայնքին հրավեր էր կարդում գումարել ժողովրդից ընտրված կենտրոնական պատգամավորական ժողով՝ ռուսահայոց եկեղեցական գործերը կարգադրելու և տնօրինելու համար, իսկ թեմական առաջնորդներին հրահանգ էր տալիս ու պատվիրում այն կատարել ժամանակին ու անխափան:

Կոնդակն ազդարարում էր, որ հայ եկեղեցու մեջ վերջին դարում հաստատվել են կրոնական սկզբունքների տեսակետից անհիմն ու անկանոն վարչական կարգեր, կղերականացվել է եկեղեցու կառավարումը, ուստի անհրաժեշտություն է առաջացել հեղաշրջել այդ ռեժիմը և այն փոխարինել ժողովրդական-եկեղեցական նոր կարգերով:

Կոնդակով հայտնվում էր, որ առաջիկա օգոստոսի 15-ին գումարվելու է Ռուսիայի սահմաններում ապրող հայ ժողովրդի ընտրյալ պատգամավորների կենտրոնական ժողով: Պատգամավորներ ընտրելու համար կաթողիկոսը վերջին ժամկետ էր նշանակում հուլիսի 15-ը: Ժողովատեղի մասին պիտի հայտարարվեր ժողովի բացումից երկու շաբաթ առաջ: Կոնդակում ասված էր, որ պատգամավորների ընտրությունը կատարվելու է երկընտրական սիստեմով. նախ, ծխականների մասնակցությամբ հրավիրելու էին ժողովներ, որոնցում ընտրվելու էին պատվիրակներ, իսկ սրանք, իրենց հերթին, ընտրելու էին

[1] Կաթողիկոսի 1906թ. հունիսի 7-ի կոնդակի տեքստը տե՛ս **«Ալիք»**, N 38, 11 հունիսի 1906թ.:

կենտրոնական ժողովի 60 պատգամավոր: Կենտրոնական ժողովը, իբրև ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և տնօրեն, կարող էր քննության ենթարկել և տալ որոշումներ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերյալ: Կաթողիկոսը կենտրոնական ժողովի առաջիկա նստաշրջանի առջև, իբրև անհետաձգելի կարևոր խնդիրներ, դնում էր դպրոցական, տնտեսական գործերը և թեմական վարչական խնդիրները կարգավորելու հարցերը: Հրահանգը գործելու էր մինչև կենտրոնական ժողովի կողմից հաստատուն կանոնադրության մշակումը և վավերացումը[1]:

Կաթողիկոսի հունիսի 7-ի կոնդակը միանգամայն տարբեր գնահատականների արժանացավ հայ հասարակական-քաղաքական ոլորտներում:

Ժողովի հրավիրումն առաջինը ողջունեց դաշնակցությունը, քանի որ հրավիրվում էր հենց իր ցանկությամբ ու պահանջով:

Մամուլի պահպանողական օրգանների մեծ մասը նույնպես կոնդակը համարեց ազգի և մանավանդ եկեղեցու կյանքում խոշոր երևույթ: Ավելին, պահպանողականները գտնում էին, որ կենտրոնական ժողովը նույնիսկ կարող է «հայկական պառլամենտի» դեր խաղալ:

Կաթողիկոսի քայլը ողջունեց «Մուրճը»՝ 1906թ. N 7-ում: Բայց, դրանով հանդերձ, հանդեսի խմբագրությունը քննադատում էր ընտրությունների անցկացման կարգը, որն առաջադրել էր կաթողիկոսը: Խմբագրությունը գտնում էր, որ նա, միևնույն է, ստիպված պիտի լինի ժողովրդին տալ ուղղակի ընտրության իրավունք, որի մասին կոնդակը «մոռացել» է: Նախատեսված «շեղակի» ընտրություններով ժողովրդի և կենտրոնական ժողովի միջև կանգնում էին միջանկյալ «լիազորներ», որոնց կամքը հայտարարվում էր ժողովրդի կամք: Իրականում դա ժողովրդական կամքի անմիջական ու անկախ արտահայտության ոտնահարում էր, որովհետև այդ դեպքում ժողովի պատգամավորները պատասխանատու էին դառնում ոչ թե ժողովրդի, այլ լիազորների առջև:

Պահպանողական մամուլն առաջ էր քաշում մի ուրիշ հարց ևս, այն է՝ ընտրական պրոցեդուրան հանել նախնական տնայնագործ ձևերից և դնել ժողովրդավարական երկրներում մանրամասն մշակված, ավելի կատարյալ, նրբաբազնին ձևի մեջ:

Տարբեր դասակարգերի և քաղաքական ուղղությունների շատ ներկայացուցիչներ ընդհանրապես դեմ էին այնպիսի «խառնակ ժամանակներում», ինչպիսին ընթացող ռուսական հեղափոխությունն էր, ձեռք զարկել «համագումարի» («ազգային ժողովի») հրավիրմանը:

Ազատականներն առաջարկում էին առժամանակ հետաձգել կենտրոնական ժողովի հրավիրումը, պատճառաբանելով, որ այն, ինչպես հարկն է, չի նախապատրաստված, պարզություն չի մտցված պատգամավորների ընտրությունների հետ կապված մի շարք հարցերում, մասնավորապես չի մշակված այն-

[1] «Մշակ», N 126, 11 հունիսի 1906թ.:

պիսի սիստեմ, որը բացառեր անօրինական գործողություններն ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ընթացքում, նվազագույնի հասցներ ընտրությունների արդյունքների կեղծումը: Նրանք պահանջ էին ներկայացնում ժողով չհրավիրել այնքան ժամանակ, քանի դեռ հայ հասարակական հոսանքների բոլոր ուղղությունների ներկայացուցիչներից չի ստեղծվել մի հանձնաժողով, որը նախապես ուսումնասիրեր դպրոցական և կալվածային անհետաձգելի հարցերը, որից հետո դրանք ներկայացներ ժողովի հանգամանալից քննությանը:

Անկուսակցական Կոնստանտին Խատիսյանը հուլիսի 29-ին Բաքվից կաթողիկոսին գրում էր. «Համագումարի համար ընտրություններ կայացնելու և նրանում գործելու համար՝ հարկավոր է խաղաղ դրություն: Հարկավոր է հանդարտությամբ պատրաստվել ընտրություն կայացնելու, համապատասխան մարդիկ ի նկատի ունենալու – հարկավոր է վերջապես ամբողջովին նվիրվել հարցերի մշակմանը, որոնք դրված են համագումարի առաջ: ... Ոչ ոք կարող չէ երաշխավորել, որ համագումարում ընդհանուր քաղաքական բնավորություն ունեցող հարցեր չեն զարթնի և իշխող կառավարության [մասին] անհաճո մտքեր չեն արտահայտվի: ... Բայց եթե արտաքուստ խիստ միջոցներ չլինեն անգամ, – այնուամենայնիվ **ներկա պայմաններում** համագումարը կարող է մեծ պառակտում առաջ բերել հենց իր ազգի մեջ: Եվ այս շատ և շատ կմնասի հայ ժողովրդի քաղաքակրթության գործին»[1]:

Ինչ վերաբերում է սոցիալիստներին, ապա նրանք ընդհանրապես անլուրջ ու մնասակար էին համարում կենտրոնական ժողովի հրավիրումը, գտնելով, որ այն անընդունակ կլինի որևէ հարց վճռելու, և որ հայ քաղքենիության ու հետամնաց խավերի մեջ առաջ կբերի կեղծ պատրանքներ, թե ռուսական իշխանությունները հայերին շնորհել են ազատ, դեմոկրատական ընտրությունների միջոցով սեփական ազգային «պառլամենտ» ունենալու իրավունք:

Բոլշևիկների կարծիքով, այդ ժողովի գումարումով Հ.Յ. դաշնակցությունը խնդիր էր դնում իր ձեռքում կենտրոնացնել հայկական եկեղեցական, ինչպես նաև կուլտուր-կրթական բոլոր հիմնարկների ղեկավարումը:

Քանի որ հունիսի 7-ի կոնդակում նշված չէին կենտրոնական ժողովի ընտրությունների անցկացման կարգը և նրա իրավասության սահմանները, ուստի հունիսի 30-ին կաթողիկոսը հրատարակեց լրացուցիչ կոնդակ[2], որով պարզվում էին ընտրությունների մի քանի մութ կետերը: Այդ լրացուցիչ կոնդակում ազդարարված էր նաև, որ կանայք նույնպես օգտվում են ընտրողական իրավունքից:

[1] «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Է՝ Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետությունը (1903-1907թթ.), «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 2000, էջ 498-499:

[2] Կաթողիկոսի 1906թ. հունիսի 30-ի կոնդակի լրիվ տեքստը տե՛ս «Ալիք», N 55, 4 հուլիսի 1906թ.:

Կաթողիկոսական վերը նշած երեք կոնդակներն ամենևին ժողովրդին պետք չէին: Դրանք տվյալ պահին կոչված էին պահելու եկեղեցու և հոգևորականության խարխլված դիրքերը: Կոնդակները լոկ միջոց էին հայությանն ավելի ամուր կապելու եկեղեցուն, որից սկսել էր երես թեքել ժողովուրդը:

Այդ պարզ ճշմարտությունն անկարող եղավ ըմբռնելու հայ կղերի բարձրաստիճան ներկայացուցիչների մի մասը, որը բուռն դիմադրություն ցույց տվեց կաթողիկոսի կոնդակներին և հատկապես հունիսի 7-ի կոնդակին:

Հայ եկեղեցու 14 բարձրաստիճան հոգևորականներ (Էջմիածնի միաբաններ) կաթողիկոսին ուղարկեցին մի դիմում-«բողոքագիր», որի տակ ստորագրել էին Սուքիաս, Գևորգ, Արիստակես արքեպիսկոպոսները, Հովհաննես, Ղևոնդ, Նահապետ եպիսկոպոսները, Եսայի, Համազասպ, Գրիգորիս, Եղիա, Անտոն, Գեղամ, Կարապետ և Սահակ վարդապետները[1]: Նրանցից ոմանք հայտնի էին իրենց աներեր պահպանողականությամբ, մյուսները՝ իրենց արատավոր անցյալով:

Միաբաններն առաջարկում էին անորոշ ժամանակով հետաձգել կենտրոնական ժողովի գումարումն այն պատճառաբանությամբ, թե վտանգ կա, որ այնտեղ կարող է որոշում ընդունվել՝ հայ հոգևորականությանը զրկել իր դարավոր արտոնություններից, արգելել, որ նա շարունակի տիրել և աղոթել, աղոթել և տիրել: Նրանք գտնում էին, որ ժողովն իր կոչման բարձրության վրա կարող է լինել միայն այն դեպքում, եթե այնտեղ հատուկ տեղ և դիրք ունենան հոգևորականության ներկայացուցիչները[2]: Այլապես, գրում էին նրանք, կենտրոնական ժողովը նման չի լինի հին ազգային եկեղեցական ժողովներին: Դա կլինի մի նորամուծություն, որի նկատմամբ վեհափառը չի ունենա իրավունքներ, այն դեպքում, երբ նա իր օծման օրը երդվել է հավատարիմ մնալ հայ եկեղեցու ավանդական սրբագործված կանոններին ու սովորություններին: Այլ խոսքով, նրանց տեսակետով, կաթողիկոսը կատարում է սրբապղծություն:

Զցանկանալով կամ չկարողանալով հասկանալ, որ յուրաքանչյուր ընտրողի պաշտոնյա ստորադիր է իրեն ընտրող մարմնին՝ բողոքող միաբանները զարհուրանքով պնդում էին, թե հունիսի 7-ի կոնդակը կենտրոնական ժողովին ստորադիր է դարձնում և՛ կաթողիկոսին, և՛ սինոդին՝ սահմանափակելով վեհապետի հայրապետական իրավասությունը:

Միաբանները, բռնկված կրոնամոլ-իշխանամոլ պատվախնդրությամբ, կոնդակի առթիվ ողբում էին «հոգևորականության ամբողջ դասի իրավազրկությունը», եկեղեցական համայնքին ենթարկվելն իրենց համար համարում էին «ստորացուցիչ ստրկություն», «պատվի և արժանապատվության զգացմանը հակառակ բան»:

[1] «Ալիք», N 45, 21 հունիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 46, 22 հունիսի 1906թ.:

Իր հերթին 14 միաբանների տեսակետը կիսող Մատթեոս վարդապետը, ձայնը միացնելով նրանց բողոքին, գանգատվում էր, որ հունիսի 7-ի կոնդակում հոգևորականության մասին ընդհանրապես ոչ մի խոսք չկա, ուստի նրանք «այլևս Քրիստոսին ծառայելու ոչ մի հնարավորություն չեն ունենալու»:

Ծայրահեղ հետադեմ միաբանների վարքագիծը զայրույթով դատապարտեցին հայկական մամուլի համարյա բոլոր օրգանները: «Ալիքը» գրում էր.

«Ո՛չ հայրապետական կոնդակի հրամանը, ո՛չ էլ ժողովրդի լարված պահանջը չեն կարողանում, ըստ երևույթին, սանձահարել այդ «խիզախ» անհատների դիմադրական համարձակությունը: Նրանք հանդգնում են բողոքել ժողովրդի նվիրական իրավունքների դեմ, չեն վախենում իրենց կաստայական շահերը ժողովրդի շահերից բարձր հայտարարել»[1]:

«Ալիքի» հետ լիովին համերաշխվում էր «Դրոշակը», որը, ուղղորդելով իր միտքը միաբանների վարմունքին, շեշտում էր.

«Իրավունք ունեինք սպասելու, որ հայկական մեծ տագնապի այս սև օրերին հայոց կղերը, ինչքան էլ պակասավոր, այդօրինակ հանդուգն ցույց չաներ ժողովրդի դեմ, որ մեր բոլոր տանջանքների և ցավերի միակ կրողն է ներկա օրերին: Սակայն կղերն անուղղելի է և անզգա: Եվ մնում է, որ առաջիկա կենտրոնական ժողովին նա արժանի պատիժ ստանա և միանգամ ընդմիշտ ճանաչի իր համեստ դերն ու տեղը»[2]:

Կաթողիկոսի կոնդակների դեմ բողոքում էին ոչ միայն կղերի բարձրաստիճան ներկայացուցիչները, այլև սրանց դրդմամբ՝ հոգևորականության ստորին դասից ոմանք:

Կաթողիկոսին բողոքի թուղթ ուղարկեց, օրինակ, Թիֆլիսի հայ քահանաների մի խումբ: Դրանում քահանաները շեշտում էին, թե նախկիններում ազգային-եկեղեցական բոլոր ժողովները տեղի էին ունենում հոգևորականների նախաձեռնությամբ, նրանք էին պատգամավորները, իսկ աշխարհական անձինք մասնակցում էին դիտորդի վիճակով: Այլ խոսքով, քահանաները գտնում էին, որ առաջիկա կենտրոնական ժողովն իրավունք չունի միջամուխ լինելու «ընդհանուր ազգային եկեղեցական ժողովների դարավոր իրավանց մեջ», այսինքն՝ դպրոցական, տնտեսական, վարչական խնդիրների մեջ[3]: «Ալիքը» նկատում էր.

«Կղերականության սև մրուրը և կաշկանդիչ ազդեցությունը նորից տարածել մեր դպրոցական, վարչական, տնտեսական ու եկեղեցական բոլոր գործերի վրա, – այդպես է այդ բանակի իղձն ու ձգտումը: Բայց ժողովուրդը, տերտերնե՛ր, բոլորովին այլ կերպ է մտածում: Տերտերնե՛ր, նա ձեզ ասում է,

[1] «Ալիք», N 54, 2 հուլիսի 1906թ.:
[2] «Դրոշակ», N 7(173), հուլիս, 1906, էջ 112:
[3] «Ալիք», N 82, 6 օգոստոսի 1906թ.:

որ կենտրոնական ժողովը պետք է լինի ժողովրդի իսկական ներկայացուցիչների ժողով և ոչ տերտերների ու վարդապետների, որոնք անհատներ են, այլ ոչ թե ազգ: Նա ասում է նաև, որ այդպիսի ժողովը տեր է դպրոցական, տնտեսական և վարչական գործերի, իսկ ձեր բաժինը միայն եկեղեցին է, նրա ծիսակատարությունը»[1]:

Էջմիածնի 14 միաբանների բողոքն առիթ դարձավ, որպեսզի հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչներից շատերը գիտաքննական վերլուծություններով լուսաբաշխեն միաբանության խաթարուն պատկերը:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երիտասարդ դասախոս Սիրական Տիգրանյանն ասում էր, թե բողոքողները կարծում են, որ եթե հոգևորականը փոխանակ ժողովրդի գլխին իշխան լինելու, համայնքի գործակատարը դառնա, ապա իր գոյությանը վերջ կդրվի: Խոսքը ոչ թե հոգևորականության գոյությանը վերջ տալու, այլ նրան ժողովրդին ծառայեցնելու մասին է: «Թող մեր հոգևորականներն աչքի առաջ ունենան, որ եթե մինչև այժմ հայերս Ռուսաստանում ստիպված էինք մեր ազգային-ժողովրդական գործերն ու շահերը եկեղեցու հովանու և քողի տակ պահել ու պաշտպանել, ապա մոտ ապագայում հակառակն է լինելու՝ մեր եկեղեցին և մանավանդ հոգևորականությունը իրենց գոյությունը պահպանել պիտի կարողանան միմիայն ազգային և ժողովրդական անունի ու ձևի հովանու տակ: ... Այո՛, ... բազմաթիվ անպիտան հոգևորականների գոյությանը պետք է վերջ տալ, որոնցով հիրավի լիքն է մեր հոգևորական դասի ապականված կազմը»[2]:

Հայ «բարձրաստիճան հոգևորականությանը» Տիգրանյանը համեմատում էր Բուլիգինների, Դուրնովների, Ստոլիպինների հետ: Եթե այդ հոգևորականները վարակված չլինեին ինքնակալ բյուրոկրատիզմի բռնակալական ախտով, ապա երբեք չէին կարծի, թե ժողովրդի կամքին ենթարկվելը նշանակում է մատնվել անգործության:

Արդյո՞ք, ինչպես 14 միաբաններն էին պնդում, հունիսի 7-ի կոնդակով կաթողիկոսը նորամուծություններով փոխում էր հայոց եկեղեցական ավանդական կանոնները, արդյո՞ք նա «նոր կարգ» էր մտցնում հայոց եկեղեցու մեջ և դրանով իսկ կատարում սրբապղծություն:

Բազմաթիվ հեղինակներ մամուլի էջերում ցույց էին տալիս, որ միաբանների փաստարկները զուրկ են հիմքից, և իրականում կաթողիկոսը հրապարակ չի բերել ոչ մի «նոր կարգ»:

«Մշակի» հեղինակներից մեկը նշում էր, որ բողոքող հոգևորականները սխալ են կատարում, կարծելով, թե հայ եկեղեցու բազմադարյան պատմական անցյալը մի միօրինակ, նույնանման բան է եղել, և միամիտ տգիտությամբ գլխի չեն ընկնում, որ Լուսավորչի ժամանակ մի կանոն է եղել, Սահակ-

[1] **«Այլք»**, N 82, 6 օգոստոսի 1906թ.:
[2] **«Մշակ»**, N 167, 4 օգոստոսի 1906թ.:

Մեսրոպի ժամանակ՝ ուրիշ, Հովհաննես Օձնեցու օրոք՝ մի ուրիշ, Ներսես Շնորհալու ժամանակ՝ դարձյալ ուրիշ, վերջին դարում՝ ուրիշ: Հայոց եկեղեցին թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ ենթակա է եղել ամենազանազան ազդեցությունների, և նրա կարգերն ու կանոններն անցյալում հարափոփոխ վիճակ են ունեցել: «Արդ, եթե մի բոպե ուզենանք համակերպվել և ամենայն հարազատությամբ անփոփոխ պահել մեր նախնավանդ, հին կարգերը,ապա, քանի որ այդ հինը մեկ չէ, այլ բազմաթիվ, բազմատեսակ, դրանցից ո՞րը պետք է պահենք և ո՞րը մերժենք, և այսպես միաժամանակ թե՛ ավանդապահ և թե՛ ավանդամերժ լինելով՝ ի՞նչ սկզբունքով պետք է ղեկավարվենք հիշյալ հին կարգերի մեջ ընտրություն անելիս: Ահա թե ինչու մեր «կանոնագիրքը», որ մեր դարավոր անցյալի ընթացքում եղած կանոնադրությունների պատմական հավաքածուն է, լի է հակասություններով, միմյանց հակառակող կարգերով»[1]:

Ամբողջ մեկուկես հազարամյակ հայոց եկեղեցու բոլոր պաշտոնյաներն, ըստ ավանդական կարգի ու սովորության, ընտրվում էին հայ համայնքներից՝ ժողովրդի կողմից՝ ամենայն հայոց կաթողիկոսից սկսած մինչև եկեղեցու ամենաստորին պաշտոնյան: Այդ եղանակով էին նրանք եկեղեցական պաշտոնի հրավիրվում ինչպես հայկական անկախ պետականությունների ժամանակ, այնպես էլ պարսիկների, արաբների, օսմանցիների տիրապետության օրոք: Այդ կարգը պահպանվեց նաև Արարատյան աշխարհը ռուսների կողմից գրավելու օրից սկսած՝ մինչև 1836թ. "Положение"-ի հաստատումը:

Պետք է նկատել, որ Նիկոլայ I կայսրն իր բարձրագույն հրովարտակով պատվիրել էր հայոց եկեղեցու գործերի կառավարման համար պատրաստվող նախագծի մեջ նշել, որ եկեղեցին պետք է «հիմնված լինի սեփական վաղեմի կարգադրությունների վրա»: Բայց Էջմիածնի հոգևորականությունը չէր հետևել, որպեսզի բարձրագույն հրովարտակի տրամադրությունները իրականանան, և չէր բողոքել հետագա տասնամյակներին կառավարական շրջաններից բխած սահմանափակումների դեմ: Դրա հետևանքն այն էր եղել, որ "Положение"-ով խախտվել էին եկեղեցու նախնական իրավունքներն ու ավանդական սովորությունները, և ռուսաց կղերական եկեղեցական կարգերի ու պետական քաղաքականության տակ 19-րդ դարի կեսերից սկսվել էր հայոց եկեղեցու կղերականացման պրոցեսը:

"Положение"-ին հակառակ, թուրքահայերը շարունակում էին ընտրել, բացի եկեղեցական մյուս պաշտոնյաներից,նաև թեմական առաջնորդներին և նրանց փոխանորդներին: Այնտեղ համայնքն էր ընտրում նաև եպիսկոպոսանալուն արժանի վարդապետներին ու իր կողմից տված վավերագրերով նրանց ուղարկում էր Էջմիածին՝ կաթողիկոսի ձեռնադրության: Այդ ամենը կատարվում էր 1861թ. ազգային սահմանադրության հիման վրա, որն իր դեմոկրատական սկզբունքներով մի ամբողջ գլուխ բարձր էր "Положение"-ից:

[1] **«Մշակ»**, N 154, 20 հուլիսի 1906թ.:

«Եթե մեր նախնիք իրենց անփութության և անտարբերության հետևանքով խոշոր սխալ են գործել՝ հիմնավորապես խախտելով մի այնպիսի սկզբունք, որպիսին ժողովրդական ընտրական սկզբունքն է, - գրում էր «Մշակը», - ապա ուրեմն մեզ՝ մեր նախորդների գիտակից ու աչալուրջ հաջորդներիս, քաղաքացիական ու ազգային վեհ պարտականությունն է՝ ջանք գործադնել վերականգնելու այդ խախտված սկզբունքի լրիվ գործադրությունը, այն է՝ ժողովրդին թույլ տալ ընտրելու իր պաշտոնյաներին՝ լինեն նրանք թեմական առաջնորդներ, փոխանորդներ թե քահանաներ»[1]:

Հոգևոր բյուրոկրատներին, որոնք իրենց իրավական և քաղաքական կրթությունը ստացել էին ռուսաց ինքնակալ դպրոցում, դուր չէր գալիս, որ կաթողիկոսը եկեղեցում կարող է միապետ չլինել: Հայտնի է, որ բացարձակ միահեծան կարգերը հարկավոր ու նպաստավոր էին ոչ այնքան իրեն՝ ինքնակալ միապետին, որքան նրան շրջապատող և այդ ինքնակալությունը շահագործող չքախմբին: Ուստի միաբանները շատ էին ուզում, որ կաթողիկոսն անսահման իրավունքներ ունենար հայոց եկեղեցու գործերում, որպեսզի իրենք էլ այդ անվերահսկելի իշխանության հովանու տակ, ռուսաց բյուրոկրատիայի նման, ազատ ու համարձակ տեսնեին իրենց անձնական գործերը:

Մարդիկ հարց էին տալիս, թե ինչն է պատճառը, որ կաթողիկոս Խրիմյանը, որը նախկինում ոչ մի փոփոխության մասին անգամ չէր մտածում, այժմ հանդես է գալիս իբրև ջատագով ընտրական իրավունքի և անգամ պատրաստ է առաջնորդական աթոռներ բաշխել աշխարհականներին: Պատճառը հայ հոգևորականության ու եկեղեցու համար՝ հեղափոխության ազդեցության մեծ վտանգն էր:

Իզուր էին 14 միաբանները դժգոհում իրենց եկեղեցու պետից, որը նրանցից շատ լավ գիտեր, որ ռուսական հեղափոխությունը գալիս է տապալելու բոլոր ինքնակալությունները, այդ թվում նաև՝ եկեղեցուց ներս, որ դպրոց, վանական կալվածք, գյուղ, այգի, ագարակ ու հողեր շուտով հոգևորականների համար դառնալու են անցյալի քաղցր հիշատակներ:

Ահա թե ինչու կաթողիկոսի կոնդակները համարելով «հանճարեղ հնարք»՝ «Մշակը» գրում էր, որ միաբանները պետք է երախտապարտ լինեն Խրիմյանին, որը «մատի մի կախարդական շարժումով» այդ ամենը պահեց իրենց համար և կ'պահի՝ ինչպիսի վհիռներ էլ ընդունի առաջիկա կենտրոնական եկեղեցական ժողովը: «Ապերախտնե՛ր, գնացեք ծունկ չոքեցեք և համբուրեցեք հանճարեղ ծերունու փեշերը, որ փրկեց ձեզ գոնե մոտ ապագայում ավերակների վրա թագավորելու և գուցե նաև, ո՞վ գիտե, քաղցի ժամին թաթը լիզելու դառը դրությունից»[2],- հորդորում էր «Մշակը»:

[1] «Մշակ», N 154, 20 հուլիսի 1906թ.:
[2] Նույն տեղում, N 178, 18 օգոստոսի 1906թ.:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կաթողիկոսի կոնդակները ցնծություն էին առաջացրել հայ հասարակության մեջ, որը գլխապատառ գնում էր դեպի կենտրոնական ժողովի ընտրություններ:

Ռուսաստանի ամբողջ հայությունը բաժանված էր 60 ընտրողական շրջանների: Պատգամավորների ընտրությունը պիտի կատարվեր հետևյալ ձևով. մինչև 1000 հոգի ժողովուրդ ունեցող ամեն եկեղեցի պիտի ընտրեր մեկ պատվիրակ, իսկ 1000-ից ավելի ժողովուրդ ունեցողը՝ դարձյալ 1000-ի հաշվով, ասենք՝ 2000 հոգին պիտի ընտրեր երկու պատվիրակ: Ընտրված պատվիրակները մինչև հուլիսի 15-ը պիտի կազմեին ընտրողական շրջանի պատվիրակների ժողովը, որն էլ պիտի ընտրեր շրջանի պատգամավոր՝ կենտրոնական ժողովի համար:

Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին 21 տարեկանից բարձր բոլոր հայերը՝ առանց սեռի խտրության:

Խրիմյան Հայրիկի կոնդակում նախատեսված կանոնների համաձայն, ընտրությունները տեղի էին ունենում նշանակված ժամկետներին:

Ընտրությունների ընթացքը ցույց էր տալիս, որ ընդհանրապես հայերի մեջ ընտրական գործը գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում: Պետք չէ մոռանալ, իհարկե, որ ռուսահայ ժողովուրդն առաջին անգամ էր ընտրություններով գնում ներկայացուցչական ժողովի: Դա էր պատճառներից հիմնականը, որ ընտրությունների ժամանակ ծագում էին այնպիսի հարցեր, որոնք պետք է որոշված և վճռված լինեին նախապես: Մյուս կողմից, ինքը՝ հասարակությունը, դեռ պարզ գաղափար չուներ, թե ընտրությունների ժամանակ ինչն է թույլատրելի և ինչը՝ ոչ: Այդ էր պատճառը, որ ամենուր տեղ գտան մեծ թերություններ ու բացթողումներ:

1. Ընտրությունները նշանակված էին շատ անհարմար ժամանակ, երբ գյուղացիության ստվար մասը զբաղված էր դաշտային աշխատանքով, իսկ քաղաքների ծխականներից շատերը գտնվում էին ամառանոցներում, 2. Ոչ մի տեղ նախապես չէին պատրաստել առաջին անգամ ընտրող 21 տարեկան ծխականների լիակատար ցուցակներ, 3. Հայ ժողովրդի կեսը՝ կանայք, որ ընտրական իրավունք էին ստացել, շատ քիչ բացառություններով, չէին մասնակցում ընտրություններին, 4. Ընտրությունները կատարվում էին ծխականների անանուն թվի մասնակցությամբ: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող հայերի թիվը Թիֆլիսում անցնում էր 30 հազարից, բայց մասնակցեց ընդամենը 600 հոգի[1]: Նույնիսկ դեպքեր էին լինում, երբ հարյուրավոր ծուխ

[1] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 323:

ունեցող համայնքից պատգամավորների թեկնածուների ընտրությանը մասնակցում էր ընդամենը 10-15 հոգի, և դա օրինական էր համարվում, 5. Ոչ մի տեղ ընտրողներին չէին պարզում առաջիկա կենտրոնական ժողովի ծրագրերը, 6. Շատ տեղերում ընտրությունների ժամանակ գործադրվում էին ճնշումներ ու բռնություններ: Մի խոսքով՝ ընտրությունները ազատ ու արդար չէին:

Դաշնակցության մամուլից բացի, հայկական մամուլի բոլոր օրգանները խստորեն քննադատում էին ընտրությունների ընթացքը և արդյունքները: Թե՛ պահպանողականները և թե՛ լիբերալները, որոնք ընտրություններին մեծ նշանակություն էին տալիս, հիասթափված էին մասսայական խախտումներից և դրանց հիմնական մեղավորը համարում էին դաշնակցությանը:

Սոցիալիստներն ավելի արմատական էին: Հատկապես պարբերաբար մերկացումներով հանդես էին գալիս հայ բոլշևիկները, նրանց ականավոր ղեկավարներ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը: Ընտրությունների օրերին Շահումյանը գրում էր.

«Խե՜ղճ հայ հասարակություն, խե՜ղճ հայ կուսակցություններ: Կարելի՞ էր երևակայել, որ մի այսպիսի ժամանակ, հեղափոխական այս մեծ օրերում, որ ապրում է Ռուսաստանը, նրա սահմաններում բնակվող մի «կուլտուրական» ժողովուրդ կարող է այն աստիճան հասարակական-քաղաքական տհասություն, գաղափարական խեղճություն ու սնանկություն ներկայացնել, որքան այդ ցույց են տալիս ներկա ընտրությունները»[1]:

Դաշնակցական մամուլի առանձին օրգաններ, հատկապես «Ալիքը», կաթողիկոսի երեք կոնդակները համարել էին «իսկական ռեֆորմներ»: Այդ առթիվ Սուրեն Սպանդարյանը գրում էր. «Ռեֆորմները կայծակի արագությամբ հետևում են միմյանց... բարեփոխումների տենդը երևի մեր սիրոլաստիկայի ամրոցում սաստիկ է, էպիդեմիական է դարձել, և բախտավոր հայությունը չվարած, զմայլված նայում է կաթողիկոսի ռեզիդենցիայի կողմը: Այս օրերս էլ՝ հայ կինը ստացավ իրավունք՝ տերտերներ, տիրացուներ և շատ ուրիշ «ազգօգուտ» բաներ ընտրելու ... »[2]:

Անդրադառնալով պատգամավորների ընտրության և կայանալիք ժողովի նպատակների հարցին՝ Սպանդարյանը հեգնանքով նշում էր. «Այո, թո՛ղ ամբողջ երկիրը տանջվի, երկունքի մեջ լինի, թո՛ղ մնացած ազգաբնակչությունը մահացու կռիվ մղի հին ռեժիմի դեմ, թո՛ղ ուրիշ ազգերի բանվորությունը, գյուղացիությունը պատերազմի, եռանդուն կերպով մասնակցի ընդհանուր ազատագրական շարժման, - մենք՝ հայերս, տերտերներ, առաջնորդներ կընտրենք, ազգային ժողովներ կհավաքենք և այնտեղ կճառենք հայոց ազգի փրկության մասին ... »[3]:

[1] **Ստեփան Շահումյան**, ԵԼԺ, հատ. առաջին, էջ 302:
[2] **Ս. Սպանդարյան**, Երկեր, հատ. առաջին, Հայպետհրատ, Երևան, 1959թ., էջ 89:
[3] Նույն տեղում, էջ 89-90:

Եթե ընտրական գործի համար մշակված լինեին հաստատ կանոններ, և հասարակությանը պարզ լիներ ընտրական ագիտացիայի այս կամ այն եղանակի էությունը, այն ժամանակ ընտրությունները, նույնիսկ հասարակության մեջ միմյանց դեմ անխնա պայքար մղող բազմաթիվ համախմբումների առկայության պայմաններում, կանցնեին խաղաղ, առանց մեծ խախտումների, որոնք, սակայն, տեղի ունեցան մասսայաբար:

Երիտասարդ դաշնակցական գործիչներից մեկը՝ Արտաշես Չիլինգարյանը, պատասխանելով նրանց, ովքեր դաշնակցությանը մեղադրում էին զանգվածային խախտումներ կատարելու մեջ, նշում էր.

«Մեզ ասում են, որ հայ յեղափոխական դաշնակցությունը բռնություններ է գործ դրել ընտրությունների ժամանակ ... Եթե եղել են այդպիսի բռնություններ, մի՞թե դրանք հետևանք չեն մեր ժողովրդի տգիտության և վայրենի սովորությունների ... Մի՞թե արդարացի է հայ ժողովրդի բոլոր պակասությունները փաթաթել Հ.Յ. դաշնակցութեան վզին»[1]:

Այսպես թե այնպես, ռուսահայոց կողմից կենտրոնական ժողովի պատգամավոր ընտրվեց 60 հոգի: Ընտրվածների թվում էր ամենքին ծանոթ հանրային դեմքերի մեծ մասը՝ Սիմոն Զավարյան, Ավետիս Ահարոնյան, Հովհաննես Քաջազունի, Լեո, Համբարձում Առաքելյան, Եղիշե Թոփչյան, Սամսոն Հարությունյան, բժ. Համո Օհանջանյան, Հակոբ Մանանդյան, Միքայել Վարանդյան, բժ. Լևոն Աթաբեկյան, Հովհաննես Ցուսուֆյան, Թադեոս Խզմալյան, Խորեն վրդ. Մուրադբեկյան (ապագա կաթողիկոս), Ներսես վրդ. Մելիք-Թանգյան, Գևորգ սարկավագ Զորեքչյան (ապագա կաթողիկոս), Սիրական Տիգրանյան, Հովհաննես Սաղաթելյան (Պետական դումայի ապագա անդամ), Տիգրան Ռաշմաճյան, Տիգրան Հովհաննիսյան, Ալեքսանդր Քալանթար, Տաճատ վրդ. Մելքոնյան, Իսահակ վրդ. Տեր-Միքայելյան, Սիմոն Շիյան, Հովնան Դավթյան, Մատթեոս Տեր-Գրիգորյան, Հովհաննես Թումանյան*, Արամ Տեր-Գրիգորյան[2]: Մնացած պատգամավորները՝ քաղաքական դաշտում առաջին քայլերն անող երիտասարդներ, ռուսական հեղափոխության ազդեցությամբ մտքափոխ շարքային եկեղեցականներ, երկու-երեք ուսանող և գյուղական մի քանի ուսուցիչներ, անծանոթ էին հասարակայնությանը:

Ընտրված 60 պատգամավորներից 54-ը դաշնակցականներ էին կամ դաշնակցության համակիրներ: Մնացած 6 հոգուց 5-ը պահպանողականներ կամ մշակականներ էին. մեկը՝ Արամ Տեր-Գրիգորյանը՝ սոցիալ-դեմոկրատ:

Կենտրոնական ժողովի պատգամավորներն ընտրված էին ռուսահայ բոլոր թեմերից: Թուրքահայությունը մասնակցություն չուներ, քանի որ քննարկվելիք խնդիրները հիմնականում առնչվելու էին արևելահայության հոգսերին,

[1] *Մատենադարան*, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (թերթի կտրոն):
* Չշփոթել բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ:
[2] **ՀՀ ՊԿՊԱ**, կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց.1, գ. 378, թ.3:

մասնավորապես՝ Էջմիածնի ներքին բարեկարգությանը:

Ռուսահայ հասարակության մեծ մասը թերահավատ էր պատգամավորների միսիայի նկատմամբ, համոզված չէր, թե Էջմիածնում հրավիրվելիք կենտրոնական ժողովն ի վիճակի կլինի ազգի համար շատ թե քիչ կարևորություն ունեցող որևէ հարց լուծել:

Դիմելով պատգամավորներին՝ «Մշակը» գրում էր. «...Դուք գնացիք սխալ ճանապարհով: Կյանքի արմատական փոփոխությունների ժամին, երբ հայի դառն կյանքի համար մի դեղ ու դարման գտնելու համար պետք էր շուտ տալ ամեն ինչ՝ դուք բռնեցիք միջնադարյան կրոնամոլի ուխտագնացության ուղին և վազեցիք Էջմիածին»[1]:

Ոչ ոք չգիտեր, թե հայության մի մասի թերի կրոնադավանական ներկայացուցչությունը՝ Էջմիածնի կենտրոնական ժողովը, ինչ պետք է անի: Բայց մի բան պարզ էր. ծխական ընտրությունների միջոցով և լուսավորչական եկեղեցու պետի հրավերով հավաքվելով Էջմիածնում, այսինքն՝ մտնելով կղերի պատմական հեղինակության և անցած հիշատակների լաբիրինթոսը՝ նրանք անկարող պետք է լինեին միանգամայն և ընդմիշտ հրաժարվելու այդ անցյալից, կղերից խլելու ժողովրդական դպրոցն ու ժողովրդական ստացվածքները և դրանք հանձնելու իսկական տիրոջը՝ ազգի ընդհանրությանը: Նրանք պետք է ստիպված լինեին ամեն ինչ թողնել նույն դրության մեջ, ինչպես կար առաջ, և բավականանային միայն մանր-մունր, ապագայի համար բոլորովին նշանակություն չունեցող, կարկատան-բարենորոգումներով:

Իսկ կենտրոնական ժողովի հետ մեծ հույսեր կապող Հ.Ց. դաշնակցության արևելյան բյուրոն նախօրյակին հրատարակեց մի շրջաբերական, որն ըստ էության նակազ էր ժողովի գնացող դաշնակցական պատգամավորներին: Շրջաբերականում ասված էր.

«Մեր ղեկավար սկզբունքներն այդ գործում պիտի լինեն. 1. Կատարյալ ժողովրդապետություն՝ հասարակական բնույթ ունեցող բոլոր գործերում, 2. Քառանդամ ընտրական սիստեմ բոլոր գործերում, 3. Ուսումնարանների և կալվածքների կառավարվելը բոլորովին զատել հոգևորականությունից, 4. Հոգևորականներին թողնել միայն դավանանքային և ծիսական մասը, 5. Խղճի կատարյալ ազատություն»[2]:

Թեև համագումարի բացման օրը նշանակված էր Մկրտիչ Խրիմյանի՝ մայիսի 10-ի N 549 կոնդակով, բայց ժողովը գումարելու մասին կաթողիկոսը իշխանություններին նամակով հայտնել էր միայն ժողովից ընդամենը երկու շաբաթ առաջ՝ օգոստոսի 3-ին: Նրանում փոխարքային տեղեկացվում էր, որ ժողովը տեղի է ունենալու Էջմիածնում խորհրդակցելու և կարգավորելու համար մի քանի անհետաձգելի հարցեր, որոնք վերաբերում են դպրոցներին,

[1] «Մշակ», N 179, 19 օգոստոսի 1906թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (թերթի կտրոն):

եկեղեցական կալվածքներին և թեմական ժողովներին, հարցեր, որոնք նախատեսված են հայոց եկեղեցական կալվածքների կառավարման եղանակի մասին 1905թ. օգոստոսի 1-ին հրատարակված ժամանակավոր կանոններով[1]:

Իհարկե, միամիտ պետք է լինել կարծելու, թե իշխանություններն առաջին անգամ հենց այդ նամակով են տեղեկացել հրավիրվելիք ժողովի մասին, թե Էջմիածինն առանց փոխարքայի թույլտվության էր ձեռնարկել վերոհիշյալ կոնդակների հրատարակումը և պատգամավորների ընտրությունները, որոնք տեղի էին ունենում ամբողջ Կովկասում, երկու ամիսների ընթացքում: Իշխանություններին այդ ժամանակ ուղղակի անհրաժեշտ էր հայ հասարակության մեջ կեղծ տպավորություն ստեղծել Էջմիածնի ինքնավարության և ինքնուրույնության մասին:

Այդ է վկայում նաև փոխարքայի գրասենյակից օգոստոսի 11-ին տրված հաղորդագրությունը, որի տեքստում կան հետևյալ տողերը.

«Ժամանակի սղության պատճառով հնարավորություն չունենալով պարզելու համագումարի իսկական բնույթը և նկատի առնելով, որ ժողովը հայոց եկեղեցու պետի կողմից հրավիրվում է եկեղեցական հարցեր քննելու համար՝ կովկասյան բարձր իշխանությունը ներքին գործերի մինիստրության համաձայնությամբ պատշաճ համարեց արգելք չդնել համագումարի կայանալուն»[2]:

Ահա թե ինչպիսի՜ «դեմոկրատական» երկրում էր «ազատորեն» գործում հայոց եկեղեցին, որի գերագույն պետը, նույնիսկ «առանց» կառավարության գիտության, իրեն իրավունք էր վերապահել հրավիրելու «համազգային» համագումար:

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թեև վեհափառ կաթողիկոսի 1906թ. հունիսի 7-ի կոնդակի համաձայն՝ կենտրոնական ժողովի պաշտոնական բացումը նշանակված էր օգոստոսի 15-ին, բայց այդ օրը տեղի չունեցավ՝ քվորում չլինելու պատճառով: Նախօրյակին պատգամավորներից առաջինը Էջմիածին էր հասել հայտնի հրապարակագիր, «Մշակի» մնայուն թղթակից Ա-Դ0-ն: Նշանակված օրը ժամանել էր պատգամավորների կեսից էլ պակաս, իսկ մեծ մասը ուշացել էր զանազան պատճառներով և, ամենից առաջ, ճանապարհներին ծագած անհարմարությունների ու բարդությունների հետևանքով:

Ժամանողներին Էջմիածնի երկաթուղային կայարանում դիմավորում էին վանքի ծառայողներից 1-2 հոգի միայն: Դա պատահական չէր, քանի որ միաբանությունը վերապահ ու անտարբեր դիրք էր բռնել ժողովի նկատմամբ:

[1] «Երկիր», N 30, 4 նոյեմբերի 1906թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2142] (թերթի կտրոն):

Իսկ ահա, պատգամավորներից մեկը՝ Միքայել Վարանդյանը, այդ պահը նկարագրել է այնպես, կարծես Էջմիածին էին շտապում հարյուրավոր ազգընտիրներ՝ լուծելու ժողովրդի համար ճակատագրական հարցեր: Լսենք նրան.

«1906թ. օգոստոս 15-ն էր, հայոց պատմութեան հազվագյուտ, երջանիկ օրերեն մեկը: Արարատեան դաշտը, երկաթուղիի գծի երկայնքով, կը պարզեր ուշագրավ տեսարան մը: Ռուսահայաստանի և Կովկասի բոլոր ծայրերեն ժողովրդընտիր պատգամավորները խուռներամ կը փութային դեպի Էջմիածին, և շրջակա գյուղերեն բազմությունը քահանաներով կը դիմավորեր զանոնք կայարաններուն մեջ, բարի գալուստ մաղթելով: ...Ինդ ու ծիծաղ պատգամավորներու շարքերուն մեջ, տենդ, աճապարանք և վարդագեղ, անխռով լավատեսություն: ...Ամեն ինչ կը ժպտեր մեր շուրջը: Կը թվեր թե ալևոր Մասիսն անգամ կը վաներ իր ճակատեն դարավոր սուգի մռայլը, կը խայտար այդ անսովոր տեսարանի հանդեպ և կողջուներ հայ ժողովուրդի ընտրեալները...»[1]:

Հաջորդ օրը, օգոստոսի 16-ին, Էջմիածին հասավ ևս մի քանի պատգամավոր, և ժողովի քվորումը լրացավ:

Թեև պատգամավորների կազմում ինչ-ինչ պատճառներով չկային մի շարք հայտնի գործիչներ, բայց նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, Ռոստոմը, գեթ մի քանի օրով եկել էին Էջմիածին և մոտիկից հետևում էին ժողովի աշխատանքներին, «իրենց խորհուրդներով օգնում պատգամավորներին»[2]:

Ժողովի նիստերն անցկացնելու համար կաթողիկոսը պատգամավորներին տրամադրել էր վանքի ճեմարանի հիվանդանոցի մի սենյակ, ուր մի քանի շարքի վրա շարված էին աթոռներ, իսկ ամեն մի աթոռի առաջ սեղանի փոխարեն դրված էր մի կոպիտ, «հին ու ճռճռան» տաբուրետ[3]: Այս էր «հայկական պառլամենտի» ամբողջ կահավորանքը:

Օգոստոսի 16-ի երեկոյան ժամը 7-ին այդ անհրապույր սենյակում հավաքվեցին պատգամավորները: Պայմանավորվածության համաձայն՝ նույն ժամին ժողովն իր աշխատանքները պիտի սկսեր կաթողիկոսի բացման խոսքով և օրհնությամբ: Պատգամավորները սպասում էին հայոց Հայրապետին, բայց նա չէր գալիս: Մայր առան տհաճ խոսակցություններ:

Երիտասարդ պատգամավորները, հատկապես նրանք, որոնք գտնվում էին հեղափոխական գաղափարների ազդեցության տակ, անհամբերությամբ պահանջում էին ժողովը բացել անմիջապես՝ չսպասելով կաթողիկոսին, բայց մեծերը նրանց «խելք էին սովորեցնում»՝ պնդելով, թե ժողովը հրավիրել է Վեհը, և նա էլ պետք է բացի: Վիճաբանություններին միջամտեց Տաճատ

[1] **Միքայել Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 150-152: Նկատենք, որ Միք. Վարանդյանի պատմագիտական որոշ գրվածքներ չափից ավելի հագեցված են գեղարվեստական չքեղ նկարագրություններով, որի հետևանքով դժվարանում է անցյալի երևույթների և պատմական դեմքերի ճշգրիտ , գիտական ընկալումը:

[2] Մատենադարան, **Արշակ Ալպոյաճյանի** արխիվ, թղթ. 43, վավ. 65[43] (թերթի կտրոն):

[3] **Լեո**, Անցյալից, էջ 194:

վարդապետը, որը հայտնեց, թե կաթողիկոսը չի կարող վեհարանից դուրս գալ քամու և փոշու պատճառով: Նա փոխանցեց Վեհի խոսքերը, որ եթե պատգամավորներն անպայման ցանկանում են իրեն լսել, պետք է դարձյալ հետաձգեն ժողովի բացումը: Պատգամավորները բացահայտորեն դժգոհեցին, բայց ոչինչ անել չէին կարող. տհաճ զգացումներով նրանք ցրվեցին և մտան վանքի հյուրանոցի սենյակները՝ գիշերելու:

Հաջորդ օրվա՝ օգոստոսի 17-ի առավոտյան ժամը 9-ին պատգամավորները կրկին հավաքվեցին հիվանդանոցի՝ ժողովին հատկացված սենյակում և սպասում էին կաթողիկոսին, որը, սակայն, լուր ուղարկեց, թե պատգամավորներից խնդրում է իրեն չչարչարել և ժողովն սկսել առանց իր բացման խոսքի: Պատգամավորներն արդեն պատրաստվում էին սկսել ժողովը, երբ կաթողիկոսը վեհարանից լուր ուղարկեց, թե, վտանգելով իր առողջությունը, որոշել է գալ և խոսք ասել:

Ժամը 10-ին սկսվեց ժողովի առաջին նիստը: Ընտրված 60 պատգամավորներից ներկա էր 46-ը, որոնցից դաշնակցականներ՝ 36-ը[1]:

Վերջապես եկավ կաթողիկոսը: Ժողովականները ուրախ կանգնելով, մեծ պատկառանքով ընդունեցին 86-ամյա հայոց հոգևոր առաջնորդին, որն ինչ-որ աղոթք մրմնջալով՝ բազմեց հենց նոր բերված գահի վրա: Միք. Վարանդյանը գրել է. «Ձառ չըսավ Խրիմեան: Հազիվ միայն կրցավ քառորդ ժամ մնալ բազկաթոռին մեջ և տնքալով, հևալով քանի մը խոսք ըսել»[2]: Հազիվ լսելի ձայնով նա ասաց.

«Հայ ազգը հիվանդություններ շատ ունի: Էջմիածինն էլ հիվանդություններ շատ ունի: Բայց հայ ազգն այնքան կենսունակ է, որ կարող է բժշկել այդ հիվանդությունները, և ահա ձեզ ուղարկել է որպես բժիշկներ: Օրհնեալ լինեք: Գործեցեք: Բայց կպատվիրեմ գործել՝ որչափ կարելի է, գործեցեք՝ որքան ներկա ժամանակը թույլատրում է: Գործեցեք խոհեմությամբ, բայց ոչ հանդուգն: Եթե փող կուզեք, փող չունեմ տալու ձեզ. տալիս եմ օրհնությունը: Օրհնեալ լինի և ռուսաց տերությունը. հազար օրհնեալ մանավանդ մեր բարեսիրտ փոխարքան, որ ազատություն տվեց ձեզ ժողովվել այստեղ և մտածել ազգի ցավերի մասին: Շատ խոսել և մնալ չեմ կարող: Օրհնեալ լինեք, գործեցեք խոհեմությամբ»[3]:

Թեև ժողովը տեղի էր ունենում իշխանությունների գիտությամբ ու թույլտվությամբ, բայց, ինչպես կաթողիկոսի այս կցկտուր խոսքերից է երևում, նրա հիմնական մտահոգությունն այն էր, որ պատգամավորները լինեն խոհեմ, չունենան հանդուգն ելույթներ, գործեն միայն իշխանությունների ընձեռած հնարավորությունների սահմաններում:

[1] **«Մշակ»**, N 180, 20 օգոստոսի 1906թ.:

[2] **Միքայել Վարանդեան**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 152:

[3] **«Մշակ»**, N 180, 20 օգոստոսի 1906թ.:

Խրիմյանը հենց սկզբից մտավախություն ուներ, թե ժողովը կարող է ընթանալ ոչ նախատեսված հունով: Ուստի առաջին իսկ օրից այնտեղ, գրեթե միշտ, ներկա էին լինում Բագրատ, Մատթեոս, Հովսեփ եպիսկոպոսները և Կորյուն վարդապետը: Նրանք ամեն նիստից հետո լսածի մասին հաղորդում էին կաթողիկոսին և սինոդի ռուս պրոկուրորին, նրանց տեղեկացնում ժողովում արտասանած «կարմիր ճառերի» մասին[1]:

Ռուս պրոկուրորի պահանջով կաթողիկոսը և նրան շրջապատող կղերը նախապես հոգ էին տարել, որպեսզի աննկատ անցնի ժողովի ընթացքը: Պատահական չէ, որ Էջմիածնի պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրում խոսք չկար դրա նախապատրաստման, պատգամավորների ընտրության, ժողովի աշխատանքների և փակման հանգամանքների մասին:

Վեհափառի օրհնությունից հետո ժողովը հակիրճ ճառով բացեց ավագագույն պատգամավոր, դաշնակցության նշանավոր գործիչներից Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նա շեշտեց, որ հայ ժողովուրդը ներկայումս հասել է ինքնագիտակցության և լի է վճռականությամբ տեր լինելու իր մշակույթին, իր տնտեսությանը և ընդհանրապես ազգային բոլոր գործերին: Վերջում ճառախոսը պատգամավորների կողմից կաթողիկոսին շնորհակալություն հայտնեց օրհնության համար, և Վեհը հեռացավ:

Ա. Սահակյանի բացման խոսքից հետո ժողովը ձեռնարկեց իր նախագահի ընտրությանը: Պատգամավորները ժողովի նախագահի համար առաջարկեցին 6 հոգու: Առաջադրված թեկնածուների շուրջ ելույթներից հետո գաղտնի քվեարկությամբ, 36 թեր և 7 դեմ արդյունքով, նախագահ ընտրվեց Սիմոն Զավարյանը:

Ժողովի նորընտիր նախագահը հանդես եկավ հակիրճ ելույթով: «Ես խորին կերպով զգացված եմ և հայտնում եմ իմ անկեղծ շնորհակալությունը, որ ժողովը պատվեց ինձ, ընտրելով իր նախագահ: Այն մեծ պատիվը, որին արժանացրիք դուք, ես չեմ վերագրում իմ անձնավորության: Ես ոչ վարժ եմ նախագահության, որպեսզի կարողանամ պատշաճ կերպով կառավարել մի այսպիսի ժողով, ոչ էլ այնքան ծանոթ եմ մեր ազգային և մանավանդ եկեղեցական վարչական գործերին, որպեսզի կարողանամ ժողովին մատուցանել մի առանձին ծառայություն: Սույն պատիվը, որին դուք արժանացրիք ինձ, ես վերագրում եմ մեր ժողովրդի այն բազմաթիվ անդամներին, որոնց հետ միասին ես ծառայել եմ պահպանելու մեր ժողովրդի բռնաբարված իրավունքները»[2]:

Ս. Զավարյանը շեշտում է, որ ժողովի աշխատանքները պետք է ընթանան ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան. «Ես հարգել եմ և հիմա էլ հարգանքով եմ վերաբերվում դեպի ամեն տեսակ անկեղծ համոզմունք:

[1] Տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 449,450:
[2] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, էջ 153:

Ինձ թվում է, որ խորին համոզմունքի ձևով հայտնված բոլոր մտքերում կա ճշմարտության մի մաս, որ առողջ մտքերը սխալ են համարվում գլխավորապես այն պատճառով, որ հայտնվում են կամ ժամանակից շատ ուշ, կամ շատ առաջ»[1]: Ելնելով դրանից, ասում է նա, «ես կղեկավարվեմ նույն տեսակետով, կվերաբերվեմ ամենայն լրջությամբ դեպի բոլորի ասածները, ամենայն հարգանքով դեպի բոլոր պատգամավորների անձնավորությունները. նույն վերաբերմունքը, հուսամ, ցույց կտա և ձեզանից ամեն մեկը, նամանավանդ, որ մեր պատգամավորներից ամեն մինը ներկայացնում է 20 000 հայ ազգաբնակչություն, և պատգամավորների պատիվը ձուլված է այստեղ իր ընտրողների պատվի հետ»[2]:

Ս. Զավարյանը հանգամանորեն կանգ է առնում դպրոցական հարցի վրա, նշում վարժարաններում աշակերտների թվի ավելացման հույժ կարևորությունը, առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել սովորողների սոցիալական կազմի վրա, ուսման մեջ ավելի շատ ընդգրկել հասարակության խոնարհ խավերից սերված երեխաների:

Այս առնչությամբ Զավարյանն անդրադառնում է կրթության կազմակերպման գործում հայ եկեղեցու ունեցած դերին:

Ժողովին նախորդած ամիսներին պատասխանելով էջմիածնին քննադատողներին՝ եկեղեցու պաշտպանները հաճախ էին գրում (հատկապես կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատում»), թե հայ առաքելական եկեղեցին մյուս (հատկապես կաթոլիկ) եկեղեցիներից տարբերվել է այն բանով, որ դարեր շարունակ հովանավորել է կրթությանը և գիտությանը, որ իր հակառակորդների նկատմամբ նա միշտ եղել է համբերատար ու ներող, որ նրան խորթ է եղել կաթոլիկ կղերի ինկվիզիցիան և այլն:

Ի պատասխան այս տեսակետի՝ եկեղեցու քննադատները նշում էին, որ հայոց եկեղեցին իր հակառակորդների նկատմամբ նույնքան անհանդուրժող է եղել, ինչպես մյուս եկեղեցիները, երբ ենթարկվել է ամենափոքր իսկ քննադատության: Իբրև իրենց ասածի հաստատում, նրանք վկայակոչում էին միջնադարում թոնդրակյան և պավլիկյան հակաեկեղեցական, հակաֆեոդալական շարժումների դաժան ճնշումը, նրանց մասնակիցների անլուր հալածանքները:

Ս. Զավարյանն իր ելույթում նշում է, որ, անշուշտ, հայ եկեղեցին դարերի ընթացքում հովանավորել է հայ գիրը, դպրոցը, գիտությունը, բայց դա չի նշանակում, թե այդ կեցվածքը բխել է նրա բուն էությունից: «Եթե հայ եկեղեցին չի հավասարվել ... հալածանքների մեջ կաթոլիկ եկեղեցուն, - ասում է նա, - դրա պատճառը ոչ այնքան նրա ազատամիտ կազմն է, ինչքան նրա թուլությունը: Շեշտելով այս ամենը՝ ես հարկ եմ համարում այնուամենայնիվ հայտնել մեր գերապատիվ հայրերին, կղերականության պաշտպաններին, որ

[1] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, էջ 153:
[2] Նույն տեղում:

ազատ մտածողները չեն հետևի կղերի օրինակին և չեն հալածի հավատացյալներին»[1]:

Այնուհետև ժողովն անցնում է առաջին և երկրորդ փոխնախագահների ընտրությանը: Քվեարկության արդյունքում 37 ձայնով ընդդեմ 9-ի, առաջին փոխնախագահի տեղը զբաղեցնում է Ավետիք Սահակյանը: Երկրորդ փոխնախագահ է ընտրվում ժողովի փոքրամասնության ներկայացուցիչ Սամսոն Հարությունյանը՝ ստանալով 32 ձայն: Քարտուղարներ են ընտրվում Ս. Շխյանը, սարկավագ Զուբարյանը և Արսեն վարդապետ Ղլտճյանը[2]:

Դրանով կենտրոնական ժողովի առաջին նիստն ավարտվում է:

Նույն օրը՝ օգոստոսի 17-ի երեկոյան, տեղի է ունենում ժողովի երկրորդ նիստը: Նախագահ Ս. Զավարյանը պատգամավորներին առաջարկում է ձևավորել ժողովի պարապմունքների օրակարգը: Հենց առաջին հարցի քննությունն առաջ բերեց հուզալից և կրքոտ վիճաբանություններ, որոնք զբաղեցրին ամբողջ երեք նիստ:

Օրակարգի առթիվ առաջինը ելույթ ունեցավ Ավետիս Ահարոնյանը: Նա նկատում էր, որ պատմական հանգամանքների բերումով հայ ժողովուրդն իր հոգևոր, մշակութային կյանքը հանձնել է հոգևորական դասի տնօրինությանը, որն այդ կյանքին ուղղություն է տվել այնպես, ինչպես թելադրել են եկեղեցու շահերը: Քանի որ այդ դրությունը շարունակվում է նաև այսօր, ասում էր նա, ուստի ուզած թե չուզած ժողովն իր աշխատանքների հիմքում պետք է դնի կաթողիկոսի 1906թ. մայիսի 10-ի, հունիսի 7-ի և հունիսի 30-ի երեք կոնդակները:

Այնուհետև, անդրադառնալով ժողովի իրավասության և զբաղմունքների հարցին, Ահարոնյանը շեշտում է երկու կարևոր հանգամանք. 1. Պատգամավորների ընտրությունները կատարվել են մեծ թերություններով, որի հետևանքով Էջմիածնի ժողովի կազմը ճիշտ չի արտահայտում ռուսահայոց հասարակական տրամադրությունները, 2. Ժողովում ներկայացված չեն ռուսահայության բոլոր հատվածները: Այս հանգամանքները ցույց են տալիս, որ ժողովը իրավասու չէ ընդունելու որոշումներ, այլ կարող է միայն մշակել որոշ հարցեր, հատկապես՝ դպրոցական և վարչական, և դրանք, իբրև նյութ, նախապատրաստել ներկայացնելու ապագայում հրավիրվելիք իրո՛ք ժողովրդական, իրո՛ք հեղինակավոր ժողովին:

Ապա, անդրադառնալով կենտրոնական ժողովի կողմից քննարկվելիք հիմնական հարցերից մեկին՝ տնտեսականին, Ահարոնյանը նշում է, որ իր կարծիքով ներկայումս հնարավոր չէ միանգամից ձեռնարկել ազգային կալվածքները և դպրոցները Էջմիածնից վերցնելու և աշխարհիկ հաստատություններին

[1] «Սիմոն Զավարեան», հատ. Ա, էջ 158:

[2] Նշված քարտուղարների կազմած արձանագրությունները տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց. 1, գ. 378, թ.թ. 1-125:

հանձնելու գործը: «Կալվածքները դեռ պետք է մնան իբրև սեփականություն եկեղեցիների ու վանքերի, որոնց կը վերապահվի սեփականության տիրողի (jus nudum) իրավունքը, իսկ կառավարելը և մուտքերի գործադրությունը (ծախսելը) պետք է անցնի ժողովրդին»: Դպրոցները նույնպես «կհամարվեն եկեղեցական, բայց ղեկավարությունը պետք է անցնի ժողովրդի ձեռքը»:

Հանդես գալով՝ Եղիշե Թոփչյանը պաշտպանում է Ա. Ահարոնյանի ելույթի բոլոր դրույթները:

Ա. Ահարոնյանի և Ե. Թոփչյանի ելույթները առաջ բերեցին բուռն արձագանքներ: Պատգամավորներից շատերը նշում էին, որ ընտրություններն, իրոք, անցել են մեծ խախտումներով, նույնիսկ կատարվել են բազմաթիվ բռնարարքներ և դրանց բուն հեղինակը դաշնակցությունն է, որն իր թեկնածուների մեծ մասի հաղթանակն ապահովել է ընտրությունների արդարության և ազատության սկզբունքները ոտնահարելով: Այդ է պատճառը, ասում էին նրանք, որ պատգամավորների խոշոր մասը այդ նույն կուսակցության անդամներ են, հետևապես ժողովը չի կարող համարվել ներկայացուցչական ողջ ռուսահայոց համար: Կենտրոնական ժողովը միայն դաշնակցության կամքի արտահայտությունն է, ուստի այն իրավասու չէ լուծելու համայն ռուսահայությանը վերաբերող որևէ հարց:

Դաշնակցական պատգամավորների մի մասը անհիրավացիորեն փորձում էր ժխտել ընդդիմադիրների բոլոր փաստարկները: Ս.Խաչատրյանը, օրինակ, զգացական փքուն ճառ է ասում, որն ավարտում է այս խոսքերով. «Ովքե՞ր ենք մենք (դաշնակցական պատգամավորները: - Հ.Ս.), որ ժողովվել ենք այստեղ: Մեզ ասում են, թե մենք դաշնակցականներ ենք, և ներկա ժողովը դաշնակցական ժողով է: Սխալ է միանգամայն: Դաշնակցական կազմակերպությունը այստեղ ներկա չէ: Այստեղ ներկա է հայ դաշնակցական ժողովուրդը, որ իր ընտրվածների միջոցով եկել է հետ վերցնելու իր վաղեմի իրավունքները»[1]:

Պատասխանելով Ս. Խաչատրյանին՝ Սամսոն Հարությունյանն իր ելույթում շեշտում է, որ ժողովը չունի պահանջվող բարոյական հեղինակություն ժողովրդի աչքում, և նա արհեստածին է: Միաժամանակ նշում է, որ դաշնակցականներն իրենց հեղափոխական են կոչում, բայց հանդես են գալիս որպես ծայրահեղ պահպանողականներ: Ինչպե՞ս կարելի է հեղափոխականությունը համատեղել եկեղեցու, որպես միջնադարյան հետամնացության, պաշտպանության հետ: Ս. Հարությունյանը փարիսեցիություն էր համարում այն անձանց վարքը, «որոնք իրենց հայտարարում են **հեղափոխականներ**, բայց գալիս են հեղափոխություն կատարելու Էջմիածնի վանքի մեջ՝ վեղարավորների և փարաջավորների հովանու ներքո ...»[2]: Նա կտրականապես մերժում էր Ահարոնյանի (հետևապես՝ նաև դաշնակցության) տեսակետը, թե կալվածքները

[1] ՀՀ ՊԿՊԱ, կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց. 1, գ. 378, թ.29:

[2] «Մշակ», N 183, 24 օգոստոսի 1906թ.:

և դպրոցները պետք է մնան վանքերի և եկեղեցիների սեփականություն: Թեև դաշնակցական պատվիրակը հնարավոր է համարում այդ սեփականությունից ստացած եկամուտները դնել աշխարհիկ հիմնարկների տրամադրության տակ, ասում է Ս. Հարությունյանը, բայց դա անտրամաբանական է և անհնարին:

Ոչ դաշնակցական պատգամավորներն իրենց ելույթներում նշում էին նաև այն հանգամանքը, որ եթե կաթողիկոսի հունիսի 7-ի կոնդակի համաձայն ընտրությունները նույնիսկ անցած լինեին առանց ճնշումների և անօրինականությունների, ապա, միևնույն է, ժողովը չէր կարող օրինական լինել՝ մի շարք ուրիշ պատճառներով ևս: Այդ պատճառների թվում նրանք հատկապես նշում էին կաթոլիկ և բողոքական հայ համայնքների օտարացած լինելը էջմիածնի կողմից:

Կաթողիկոսի հունիսի 7-ի կոնդակի համաձայն, կենտրոնական ժողովի ընտրությունը կատարվել էր միայն լուսավորչական հայերի շրջանում. ոչ մի պատգամավոր չէր ընտրվել կաթոլիկ և բողոքական հայերից, որոնց թիվը Ռուսաստանում անցնում էր 100 000-ից: Այս պայմաններում այդպիսի ժողովը չէր կարող լուծել ազգին վերաբերող կարևոր հարցեր:

Կալվածքները հետ ստանալուց հետո էջմիածնի առջև հրամայաբար կանգնել էր հրատապ հարցերից մեկը՝ արդյո՞ք այդ կալվածքները պատկանում են միայն լուսավորչական եկեղեցուն, թե՞ նաև՝ կաթոլիկ ու բողոքական հայերին: Զէ՞ որ այդ ունեցվածքը գերազանցապես ստեղծվել էր նվիրատվությունների միջոցով, իսկ նվիրատուները, որպես կանոն, նկատի էին ունենում, որ որևէ բան նվիրելով էջմիածնին, դրանով իսկ նվիրում են ազգին, որի մաս են կազմում նաև կաթոլիկ և բողոքական հայերը:

Բեսարաբիայի հայերի կողմից ընտրված պատգամավոր Գևորգ սարկավագ Զորեքչյանն ասում էր՝ մարդկային պարզ տրամաբանությունը թելադրում է, որ այդ բոլոր կալվածքները հայերինն են: Դա ոչ միայն բողոքող արդարության ձայնն է, այլև ժամանակի գործնական անհրաժեշտության պահանջը:

Այս առնչությամբ Գ. Զորեքչյանն անդրադառնում է նաև դպրոցական խնդրին: Նա շեշտում է, որ ժողովի ամենագլխավոր հարցը լինելու է ազգային-ժողովրդական դպրոցներում ուսուցման կազմակերպման հարցը: Դրանց բախտը վճռելու համար էջմիածնում հրավիրել «կենտրոնական» ժողով և այնտեղ չներկայացնել ազգի մի ամբողջ հատված՝ անընդունելի է: Պարզ է, որ այդ իրողությունն իր մեջ պարունակում է և՛ ապօրինություն, և՛ մեծամտություն, և՛ ազգային-ժողովրդական շահերի սխալ ըմբռնում ու կրոնական նեղ ու գծուծ հաշիվներ:

Այդ հանգամանքը կրկին պերճախոս ցույց էր տալիս, որ հայ եկեղեցու կղերը, իսկապես, ռուս բյուրոկրատիայի հարազատ երկվորյակն է: Ըստ էության, այդ կղերը հաստատում էր, թե Ռուսաստանում իսկական հայերը մենք ենք՝ լուսավորչականներս, իսկ կաթոլիկները կամ բողոքականները կես հայ են: Այս «իսկական հայերը» շատ հեռու չէին «իսկական ռուս մարդկանցից»:

Հայ ժողովրդի շահերը պահանջում էին կրոնական առանձին-առանձին համայնքների դպրոցների փոխարեն ունենալ միասնական ազգային-ժողովրդական դպրոցներ, որոնք հավասարապես պատկանեին բոլոր ռուսահայերին: Միայն լուսավորչական հայերից կազմված կենտրոնական ժողովն իրավունք չուներ ու չէր կարող ծրագրել ազգային-ժողովրդական դպրոցի այնպիսի ապագա կառուցվածք, որ համապատասխաներ բոլոր հայերի պահանջներին՝ լինեին նրանք լուսավորչական, կաթոլիկ, բողոքական թե ոչ մի դավանության չպատկանող աթեիստներ:

Իսկ աթեիստների թիվը գնալով բազմապատկվում էր: Նրանք չէին պատկանում ոչ մի ծխի, իրենց տանը չէին ընդունում քահանա, չէին խոստովանում և հաղորդվում, բայց զտարյուն հայ էին և իրենց երեխաներին, անշուշտ, կուզարկեին հայ ազգային-ժողովրդական դպրոցներ, եթե այդպիսիք գոյություն ունենային: Պարզ էր նաև, որ աթեիստ հայն իր երեխային չէր ուղարկի դավանական եկեղեցական-ծխական դպրոց, ուր լուսավորչական քահանան, կաթոլիկ վարդապետը կամ բողոքական պաստորը փոքրիկ մանուկների գլուխը պիտի լցներ ամեն տեսակ առասպելներով ու հեքիաթներով:

Ընդհանուր ազգային-ժողովրդական դպրոց ունենալու դեպքում, անկասկած, կաթոլիկ և բողոքական ռուսահայ առաջադեմ տարրերը ուրախությամբ երեխաներին կրթության կուղարկեին այդ դպրոցները: Իսկ դա կնշանակեր միավորում բոլոր երեք կրոնական դավանանքներին հետևող հայերին: Ազգային-ժողովրդական դպրոցն այն կապը կդառնար, որն ընդհանուր շահերով կշաղկապեր նույն ազգի դարերով բաժանված անդամներին:

Այլապես ի՞նչ ազգային միասնության մասին կարող էր խոսք լինել, եթե հայորդիք մանկական վաղ օրերից մեկտեղ չէին լինելու, մեկտեղ չէին սովորելու իրենց մայրենի լեզուն, իրենց ժողովրդի պատմությունը:

Պատգամավորներից ոմանք, ինչպես օրինակ, Ա. Բալայանը, գտնում էին. քանի որ հունիսի 7-ի կոնդակում չի որոշված, թե որ եկեղեցական գործերն են վերաբերում միայն ռուսահայերին, ուստի դժվար է միանշանակ ասել՝ կենտրոնական ժողովը սահմանադի՞ր է (օրենսդիր), թե՞ խորհրդակցական[1]:

Այդ հարցին պատգամավորները տալիս են տարբեր պատասխաններ[2]: Նորեն վարդապետ Մուրադբեկյանը պնդում էր, թե «վեհափառի կոնդակի համաձայն մենք սահմանադիր ենք: [Ուստի] պետք է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք կիրականանան կյանքում»[3]:

Լ. Աթաբեկյանը, Հ. Քաջազունին, Ա. Զիլինգարյանը, Հ. Օհանջանյանը իրենց ելույթներում նշում էին, որ ժողովը հետևանք է ոչ թե կաթողիկոսական ցանկության կամ կոնդակի, այլ միայն ընդհանուր համառուսական հեղափո-

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց. 1, գ. 378, թ. 56:
[2] Նույն տեղում, թ. 16:
[3] Նույն տեղում, թ.թ. 11,12:

խական շարժման: « ... Ընդհանուր հեղափոխության ալիքներից մեկն է, որ այսօր մեզ բերել է այստեղ, - ասում է Համո Օհանջանյանը: - Վաղը մի նոր ալիք մեզ գուցե տանի համառուսական սահմանադիր ժողով կամ կովկասյան սահմանադիր ժողով: Կովով ձեռք բերած ժողովրդի իրավունքով է, որ մենք եկել ենք այստեղ»[1]:

Ախալքալաքից ընտրված երիտասարդ սոցիալիստ Արամ Տեր-Գրիգորյանը, քննադատելով հունիսի 7-ի կոնդակը, ասում է. «Ի՞նչ է այդ կոնդակը: Դա լայնատարած Ռուսաստանը խեղդող բռնակալության լծի տակ ստեղծված մի ակտ է: Այո, որքան էլ մեզ օրորենք հաճելի երազներով, որքան էլ կոնդակը փառաբանենք ճառերով, իրականությունն այն է, որ մենք ապրում ենք Ռուսաստանում, ուր ենթակա ենք այնտեղ իշխող բոլոր օրենքներին՝ հնարված միապետական բյուրոկրատիայի կաշկանդիչ ձեռքերով»: Նա համոզված չեշտում է, որ ժողովը չի կարող սկզբունքորեն լուծել ոչ մի հարց: «Չէ՞ որ մենք այստեղ հավաքված ենք ո՛չ թե որպես մի ազատ ժողովրդի պատգամավորներ ..., այլ որպես ներկայացուցիչներ ստրուկ, կուռ շղթաներով կաշկանդված մի ժողովրդի, որի կյանքի ամեն մի մասնիկը հեծում ու տնքում է բռնակալական թաթի ճիրաններում: ... Այս պատգամավորական ժողովը շատ փոքր երևույթ է մեր հասարակական կյանքում և ոչինչ չի տալու մեզ: ... Եթե բան է, հանկարծ փորձենք շատ թե քիչ հիմնավոր բարեփոխություն մտցնել մեր կյանքի այս կամ այն ասպարեզում, քիչ թե շատ աչքի ընկնող շահեր պաշտպանել մեր աշխատավորների օգտին, ապա բռնակալ կառավարությունն անմիջապես մեր քթին կխփի և կասի. «Կոչկակա՛ր, չափդ իմացիր»... Նման պայմաններում մենք արդյո՞ք կարող ենք քանդել ու վերացնել հոգևոր-եկեղեցական բյուրոկրատիան, ...որը ռուսաստանյան հսկայական բյուրոկրատիայի մի մասնիկն է: Ո՛չ, չենք կարող: Հոգևոր բյուրոկրատիան կտապալվի միայն այն ժամանակ, երբ կտապալվի ժողովրդի վրա միահեծան իշխող պետական բյուրոկրատիան»[2]:

Արամ Տեր-Գրիգորյանի ելույթի տրամադրություններին միանում են դաշնակցական Մ. Տեր-Մկրտչյանը, Իսահակ վարդապետը (Արեշի գավառից), Բեսարաբիայից ընտրված սոցիալ-դեմոկրատ Հ. Թումանյանը, Համբարձում Առաքելյանը (պատգամավոր Նուխիից), Հակոբ Մանանդյանը (պատգամավոր Ախալքալաքից), Մնդչյանը և ուրիշներ[3]:

Հ. Թումանյանը նկատում էր, որ բռնակալական ռեժիմի պայմաններում ժողովի քննությանը ենթակա երեք հիմնական՝ տնտեսական (եկեղեցական-վանքապատկան հողերի), վարչական (սինոդի, կոնսիստորիաների, վարչական կազմի փոփոխության) և դպրոցական (ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի և կանոնադրության ստեղծման, ուսուցչական կադրերի պատրաստման)

[1] ՀՀ ՊԿՊԱ, *կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց. 1, գ. 378, թ.թ. 5-6:*
[2] **«Մշակ»**, *N 183, 24 օգոստոսի 1906թ.:*
[3] ՀՀ ՊԿՊԱ, *կաթողիկոսական դիվան, ֆ. 57, ց. 1, գ. 378, թ.թ. 14,15:*

հարցերի լուծումը կախված չէր պատգամավորների բարի ցանկություններից: Արյունալի բյուրոկրատիան գրչի մի հարվածով կոչնչացներ մի ողորմելի ժողովի որոշումները: «Ներկա կենտրոնական ժողովի գումարումը, - շեշտում է նա, - մի անհեթեթ և վերին աստիճանի հետադիմական քայլ է ... Փոթորկից առաջ չարագուշակ լռության մեջ ենք ապրում: Վաղը, մյուս օրը բռնկվելու է ընդհանուր հեղափոխությունը, ուստի մենք պետք է պատրաստվենք, կազմակերպենք հայ հեղափոխական մասսաներին»[1]:

Ելույթները գնալով ավելի ու ավելի բորբոքուն էին դառնում, ստանում «հեղափոխական» գույն: Խրիմյանը դժգոհ էր փոթորկալից ճառերից, որոնք ուղղված էին ոչ միայն հայ եկեղեցու, այլև ռուս բյուրոկրատիայի դեմ: Քանիցս կաթողիկոսը վեհարան էր հրավիրել ժողովի նախագահ Սիմոն Զավարյանին և նախազգուշացրել ծայրահեղություններից, հորդորել լինել չափավոր, քննադատություններն ու առաջարկներն ուղղել թերությունների աստիճանական վերացմանը[2]:

Օգոստոսի 19-ին ժողովին ներկա պատգամավորների թիվը հասավ 50-ի: Առավոտյան նիստը կարճ տևեց. ելույթներ ունեցան Խզմալյանը, Վ. Փափազյանը, Հովհ. Քաջազնունին, Հակոբ Մանանդյանը:

Նույն օրվա երեկոյան նիստում ելույթներ են ունենում դաշնակցականներ Մանուկյանը, Հ. Օհանջանյանը, Հ. Ցուսուֆյանը, Ա. Թադևոսյանը, Հ. Դավթյանը, Միք. Հովհաննիսյանը, սարկավագ Զուբարը, Մուրադբեկյան վարդապետը, Ս. Քարտաշյանը, Ղլտճյան վարդապետը, Ս. Խաչատրյանը, Ե. Թոփչյանը և Ա. Սահակյանը: Ընդդիմության կողմից հանդես են գալիս Մխչյանը, Ա. Տեր-Գրիգորյանը, սարկավագ Զորեքչյանը, Հ. Առաքելյանը, Ս. Հարությունյանը և Հ. Թումանյանը:

Նիստն անցնում է մեծ լարվածության ու տաք վիճաբանությունների մթնոլորտում: Հատկապես կրքոտ ելույթ է ունենում Համբարձում Առաքելյանը՝ առաջ բերելով դաշնակցական պատգամավորների մեծ մասի բուռն զայրույթը: Պատգամավորը ժողովին առաջարկում է որոշում ընդունել և արձանագրել, որ Խրիմյան կաթողիկոսի 13-ամյա գործունեությունը հայության հոգևոր առաջնորդի պաշտոնում եղել է ազգի համար աղետաբեր:

Վերջում հանդես է գալիս Սիմոն Զավարյանը և անդրադառնում նաև Հ. Առաքելյանի ելույթին: Նա ասում է, որ իր բարոյական պարտքն է համարում, թե՛ իբրև ժողովի նախագահ և թե՛ անձնապես, բողոքել Առաքելյանի ելույթի դեմ և հատկապես այն մասի դեմ, որ վերաբերում է Խրիմյան կաթողիկոսին: «Դա սխալ է, դա անհիմն մեղադրանք է», - շեշտում է նա:

Եվ այստեղ տեղի է ունենում անսպասելին. հակադաշնակցական Համբարձում Առաքելյանին տեղից տված ռեպլիկով պաշտպանում է դաշնակցական

[1] **«Մշակ»**, *N 184, 25 օգոստոսի 1906թ.:*
[2] *Տե՛ս* **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 450:*

Ավետիս Ահարոնյանը, ասելով. «Ո՛չ, ճիշտ է: Պատգամավոր Առաքելյանի ասածը ճշմարտություն է»[1]:

Զավարյանը շարունակում է. «Խրիմյանի ողջ կյանքն իր ժողովրդին նվիրված լինելու օրինակ է, իսկ նրան հակաժողովրդական որակելը՝ սրբապղծություն»[2]:

Ժողովի նախագահի այդ խոսքերի դեմ տեղից բողոքում են Լևոն Աթաբեկյանը և Միք. Վարանդյանը:

Մտքերի փոխանակությունից հետո ժողովի իրավունքների և իրավասության վերաբերյալ բանաձևերի նախագծեր են ներկայացնում Համո Օհանջանյանը՝ դաշնակցության բլոկի, Սամսոն Հարությունյանը՝ փոքրամասնության, Արամ Տեր-Գրիգորյանը՝ իր, որպես սոցիալիստ-հեղափոխականի, կողմից:

Բանաձևերը դրվում են քվեարկության: Փոքրամասնության ներկայացրած բանաձևի նախագիծը ստանում է 4 ձայն, Ա. Տեր-Գրիգորյանի նախագիծը որոշվում է մտցնել արձանագրության մեջ, իսկ Հ. Օհանջանյանի նախագիծը ստանում է 45 ձայն ընդդեմ 3-ի և 4-ի ձեռնպահությամբ: Ժողովի իրավասության մասին ընդունված բանաձևը հետևյալն էր.

«Ի նկատի ունենալով, որ՝

1) Ցուրաքանչյուր ժողովրդի անհերքելի իրավունքն է տեր ու տնօրեն լինել իր բոլոր գործերի, որ՝

2) Հայ ժողովուրդը երկար ժամանակ պայքարել և արյունոտ կռիվ է մղել իր այդ իրավունքի համար, որ՝

3) Ռուսահայ ժողովրդի ճակատագիրը սերտ կապված է ամբողջ Ռուսաստանի ազատագրական շարժման հետ, որի ելևէջները մեզանում էլ նոր զարկ տվին ժողովրդի ինքնաճանաչության և ներքին ու արտաքին ճնշումները վերացնելու գիտակցության, որ՝

4) Կաթողիկոսական վերջին կոնդակները, կարգադրությունները և ներկա պատգամավորական ժողովը իր ամբողջությամբ արդյունք են վերոհիշյալ գործոնների և ժողովրդի հասունացած կարծիքների ու հրամայողական պահանջների, ժողովը գտնում է, որ, ինքը, իբրև այդ պայմաններում առաջ եկած օրինավոր ընտրյալ ժողովրդական ներկայացուցչություն, պարտավոր է բավարարություն տալ իրեն ընտրող ժողովրդի պահանջներին, իբրև լիազոր տեր և տնօրեն՝ լուծելով հայ եկեղեցու հետ մինչև այժմ կապված բոլոր վարչական, դպրոցական, տնտեսական, կալվածական և այլ հասարակական բնույթ ունեցող խնդիրներ: Միևնույն ժամանակ ժողովն իրեն իրավունք է վերապահում իր կարծիքը արտահայտելու ամբողջ Ռուսաստանի և առանձնապես մեր արյունոտ Կովկասը ալեկոծող հրատապ հարցերի վերաբերյալ»[3]:

---

[1] «Մշակ», N 185, 26 օգոստոսի 1906թ.:
[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 43, վավ. 65[2143] (թերթի կտրոն):
[3] «Մշակ», N 187, 29 օգոստոսի 1906թ.:

Փոքրամասնության անունից ընդունված բանաձևի դեմ Հ. Առաքելյանը հանդես է գալիս հայտարարությամբ և պահանջում այն մտցնել ժողովի արձանագրության մեջ: Փոքրամասնությունը կրկին պնդում է, որ՝ 1. Ժողովը համազգային չէ, քանի որ այնտեղ չկան Թուրքիայի, Պարսկաստանի, Ամերիկայի և այլ երկրների հայերի ներկայացուցիչները, 2. Այն նաև ռուսահայերի ազգային ժողով չէ, որովհետև նրանում բացակայում են ազգի կաթոլիկ և ավետարանական հայերի ներկայացուցիչները, 3. Ժողովը չի կարող կոչվել սահմանադիր, քանի որ այն իրավասություն չունի օրենքներ ընդունելու և զորություն չունի դրանք գործադրելու, 4. Պատգամավորներն ընտրվել են աննորմալ պայմաններում: Ուստի ժողովը չի կարող համարվել ժողովրդի մեծամասնության իսկական պահանջների ու կարիքների արտահայտիչ ու թարգման:

Ժողովի հաջորդ նիստը բացվում է օգոստոսի 21-ի առավոտյան: Նիստի չէին եկել փոքրամասնություն կազմող 6 պատգամավորները՝ Հ. Առաքելյանը, Ս. Հարությունյանը, Իսահակ վարդապետը, Հ. Թումանյանը, Գևորգ սարկավագ Ջորեքչյանը և Ա. Տեր-Գրիգորյանը:

Նախագահը տեղեկացնում է, որ նախորդ օրը հայտարարություն տալուց հետո նրանք հրաժարվում են այսուհետ մասնակցել ժողովի աշխատանքներին: Մինչ այդ հրաժարական էր տվել նաև Գանձակի գավառից պատգամավոր ընտրված Լևոն Սարգայանը և նրա փոխարեն ընտրվել էր «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը:

Ապա նախագահը հայտնում է, որ ժողովը պետք է բաժանվի սեկցիաների՝ դպրոցական, վարչական-ընտրական և տնտեսական-կալվածական: Սակայն նախքան սեկցիաների ստեղծումը որոշվում է մշակել այն սկզբունքները, որոնցով սեկցիաները պետք է ղեկավարվեն՝ իբրև ուղեցույց:

Սեկցիաների ղեկավար սկզբունքների քննությամբ պատգամավորները զբաղվեցին ամբողջ 5 օր՝ դրան նվիրելով 8 նիստ:

Քանի որ փոքրամասնությունը հրաժարվել էր ժողովին հետագա մասնակցությունից, ուստի այնտեղ այլևս չկար ընդդիմություն: Այդ իսկ պատճառով նիստերը սկսեցին ընթանալ միապաղաղ, անհետաքրքիր: Ժողովը դարձել էր կուսակցական-դաշնակցական: Բնականաբար, պատգամավորները բաժանվեցին երկու մասի՝ հին ու նոր կուսակցականների:

Նոր դաշնակցականների մեջ քիչ չէին նրանք, որոնք գտնում էին, թե դաշնակցությունը պետք է հրաժարվի ազգային գաղափարներից և վերածվի սոցիալիստ-հեղափոխականների (էս-էռ) նման մի կուսակցության: Նորերն իրենց ելույթներում վճռականորեն առաջ էին քաշում այն տեսակետը, որ անհրաժեշտ է արմատապես քանդել ու ոչնչացնել եկեղեցին, քանի որ նրա սպասավորները պալար են ժողովրդի մարմնի վրա: Նրանք առաջարկում էին խզել եկեղեցու հետ որևէ հարաբերություն, նրանից խլել վանքապատկան-եկեղեցական բոլոր հողերն ու կալվածքները և դրանք ազգայնացնել, որից հետո,

որպես սեփականություն, անխտիր բաժանել այդ հողերի վրա ապրող գյուղացիներին՝ լինեն նրանք հայ, թուրք, ռուս թե այլ ազգի պատկանող մարդիկ: Ավելին, գտնում էին, որ արտասահմանյան հայության մեջ գտնվող ազգային-եկեղեցական-վանքապատկան կալվածքները և հողերը նույնպես, ինչպես օրինակ՝ Երուսաղեմի, Սիսի, Եգիպտոսի և այլն, արդարության տեսակետից պետք է խլվեն վանքերի և եկեղեցիների ձեռքից և ազգայնացվեն հօգուտ այն հայ, թուրք, արաբ, քուրդ գյուղացիների, որոնք ներկայումս օգտվում են այդ հողերից:

Նոր կամ երիտասարդ դաշնակցական պատվիրակներն իրենց ելույթներում պահանջում էին նաև՝ կրոնագիտությունը վտարել դպրոցից և այն փոխարինել բարոյախոսության դասավանդմամբ. վերացնել բոլոր տուրքերը և սահմանել եկամտային պրոգրեսիվ տուրք. այն տեղերի հայոց-ծխական կամ համայնական դպրոցներում, ուր ժողովուրդը հայախոս չէ, այլ վրացախոս կամ թուրքախոս, ավանդել վրացերեն կամ թուրքերեն:

Մի խոսքով, նոր դաշնակցականներն արտահայտում էին ամենաարմատական մտքեր, իսկ եկեղեցական հողերի բաժանման հարցում անընդունելի ձախլիկ առաջարկներ էին անում: Դրանց թվում հատկապես աչքի էր ընկնում Ս. Քարտաշյանը: «Ծայրահեղ արմատականներ» էին նաև պատգամավոր հոգևորականներ Արսեն վարդապետ Ղլտճյանը և Տաճատ վարդապետը, որոնք անողոքաբար հարձակումներ էին գործում հոգևորականության և կրոնի ու եկեղեցու նվիրապետության վրա:

Նորերի քարոզած մտքերը կտրականապես մերժում էին հին դաշնակցականները՝ Ս. Զավարյանը, Ա. Սահակյանը, Միք. Հովհաննիսյանը, Ավ. Ահարոնյանը, Ս. Խաչատրյանը, Հ. Սաղաթելյանը և ուրիշներ: Նրանք նշում էին, որ անհնարին է գրչի մի հարվածով տապալել այն ուժը, որի դերն անուրանալի է հայ ժողովրդի հոգևոր-մտավոր-բարոյական կյանքում, և որ հակառակ տեսակետի իրականացումը կարող է սոսկալի պառակտում առաջ բերել ազգի մեջ, նորերի ուշադրությունը հրավիրում էին այն բանի վրա, որ օրենքներ, արմատական օրենքներ գրելը դժվարին բան չէ, բայց այդ օրենքները կյանքի մեջ մտցնելու և գործադրելու համար դեռևս չկան հնարավորություններ: Գոյություն ունեն ռուսական պետության օրենքները, և մինչև որ դրանք չփոխվեն, անհնարին է որևէ փոփոխություն մտցնել հասարակական կյանքում ընդհանրապես և եկեղեցու մեջ մասնավորապես: Կան ազգային անկապտելի իրավունքներ և շահեր, որոնք ոտնակոխ անելն անթույլատրելի է:

Իր ելույթում Հովհ. Քաջազնունին նշում է.

«Եկեղեցու հետ կապված աշխարհիկ գործերը մենք բաժանում ենք եկեղեցուց և դրանց տնօրինությունը վերցնում հոգևորականությունից: Դա մեր հենակետն է: Այդ անելով հանդերձ, մենք չենք եկել այստեղ եկեղեցին քանդելու կամ հոգևորականությունը կազմալուծելու, այլ միայն եկեղեցուց վերցնելու այն ֆունկցիաները, որոնք աշխարհիկ բնավորություն ունեն: Ժամանակը

հասել է, որ այդպիսի գործերը բաժանվեն եկեղեցուց և հանձնվեն ժողովրդին, և այդ քայլն անելով՝ մենք համոզված ենք, որ գործում ենք ի նպաստ ժողովրդի: Եկեղեցին կ'մնա այսուհետև մի հաստատություն, որ կոչված է բավարարություն տալու հավատացյալներին, բայց նա այլևս ժողովուրդ չպետք է ներկայացնի, ժողովրդի անունից չպետք է խոսի»[1]:

Օգոստոսի 22-ի և 23-ի նիստերի ընթացքում բուռն վիճաբանությունները շարունակվեցին ազգային կյանքում եկեղեցու դերի հարցի շուրջ: Հատկապես տպավորիչ էին «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարի ելույթները, որը, եկեղեցին ներկայացնելով որպես ժողովրդի միտքն ու հոգին կաշկանդող ուժ՝ միաժամանակ դաշնակցական պատգամավորներին քննադատում էր եկեղեցու թիկունքում կանգնած լինելու համար:

Դպրոցական, վարչական և կալվածական սեկցիաների աշխատանքների համար իբրև ղեկավարող սկզբունքներ օգոստոսի 24-ի և 25-ի նիստերում առաջարկվեցին բանաձևեր:

Նախքան բանաձևերի քննարկումը պատգամավոր Ա. Քալանթարը հիշեցնում է, որ ժողովն ի զորու չէ քննելու այն բանաձևը, որ վերաբերում է կալվածական հարցերին, քանի որ պատգամավորների ընտրության ժամանակ այդ հարցը չէր առաջադրվել ժողովրդին: «Մեզ ընտրող ժողովուրդը, - ասում էր նա, -ամենևին չի ենթադրել, որ մենք այստեղ պետք է քննենք կալվածքների ընծայաբերության, ինքնավարության, դիֆերենցիալ ռենտայի և ուրիշ այլ տեսակ խնդիրներ: Ինձ համար կարևոր չէ, թե ինչ կարծիք ունեն մեր մասին կառավարությունը և ուրիշ ատյաններ, բայց ինձ համար կարևոր է և պարտավորական մեզ ընտրած ժողովրդի կամքը: Արդ, զգալով իմ պատասխանատվությունը ընտրող ժողովրդի առաջ, ես հրաժարվում եմ ժողովին մասնակցելուց»[2]:

Հիրավի, հետ ստանալով կալվածքները, էջմիածինը, ժողովրդավարական երևալու պատրանք ստեղծելու համար, հայտարարել էր, թե մտադիր է դրանք լուսավորչական եկեղեցու տնօրինությունից հանել և տալ ծխերին: Բայց դա չէր կարող հարցի լուծում լինել, քանի որ ծուխը, ինչպես եղել էր, շարունակելու էր մնալ կղերի ազդեցության տակ: Ինչ խոսք, դա աչքակապություն էր: Ազգի շահերը պահանջում էին կալվածքները եկեղեցուց վերցնել և տալ ժողովրդին: Հենց դա է, որ չէր ուզում էջմիածինը:

Չնայած Ալ. Քալանթարի և ուրիշ պատգամավորների բողոքներին, ժողովն, այնուամենայնիվ, ընդունեց մի շարք բանաձևեր՝ սեկցիաների վերը նշված գործունեության սկզբունքների մասին:

Դպրոցական սեկցիայի գործունեության սկզբունքների մասին ընդունվեց հետևյալ բանաձևը.

---

[1] «Մշակ», N 187, 29 օգոստոսի 1906թ.:

[2] Նույն տեղում, N 190, 2 սեպտեմբերի 1906թ.:

«1. Ընդունել պարտադիր և ձրի կրթության սկզբունքը երկսեռ դպրոցներով, 2. Ունենալ երկրի արդյունագործությունն ու տեխնիկան բարձրացնող մասնագիտական-գործնական դասընթացներով դպրոցներ՝ յուրաքանչյուր շրջանի տնտեսական և սոցիալական պահանջների համեմատ, 3. Համապատասխան շրջաններում բացել կիրակնօրյա և գրագիտության շարժական դպրոցներ, 4. Բոլոր դպրոցներում և բոլոր առարկաների ծրագրերում մտցնել զուտ գիտական ուղղություն և աշխարհիկ ոգի, 5. Կրոնի դասերի թիվը պետք է չափավորվի, իսկ դասավանդումը չպետք է պարտադիր լինի այն երեխաների համար, որոնց ծնողները դեմ են կրոնին, 6. Բոլոր դպրոցներում դասավանդումը հայերեն է, իսկ օտարախոս համայնքներում դասավանդումը հարմարեցնել տեղական պայմաններին և մանկավարժական պահանջներին, 7. Բոլոր դպրոցներում աշակերտների ընդունելությունը կատարվում է առանց ազգի և դավանանքի խտրության, 8. Մինչնակարգ դպրոցներում ավանդվում են վրաց և թուրքաց գրականություն և պատմություն, 9. Մինչնակարգ դպրոցներում, իբրև ոչ պարտադիր առարկա, ավանդվում են վրաց և թուրքաց լեզուներ՝ եթե դա թույլ է տալիս տվյալ դպրոցի բյուջեն:

Որոշումներ ընդունվեցին նաև տնտեսական-կալվածական, վարչական-ընտրական սեկցիաների աշխատանքների վերաբերյալ՝ ընդամենը 6 բանաձև, որոնք բոլորը վերաբերում էին ժողովի կողմից դեռ ընտրվելիք սեկցիաների աշխատանքի սկզբունքներին և ոչ ավելի:

Կենտրոնական ժողովի ընդհանուր (պլենար) նիստերը վերջացան օգոստոսի 25-ին: Համագումարը բաժանվեց երեք սեկցիայի, որոնք, ինչպես ասվեց, պետք է մշակեին կանոնադրություններ (կանոնակարգեր) և ծրագրեր դպրոցական, տնտեսական-կալվածական ու վարչական-ընտրողական հարցերի վերաբերյալ: Այդ կանոնադրություններն ու ծրագրերը, սեկցիաներում կազմելուց հետո, պետք է ենթարկվեին ժողովի քննությանն ու վերջնական հաստատմանը:

Բայց անմիջապես առաջացավ այն հարցը, թե այդ փաստաթղթերը դրանից հետո պե՞տք է ենթարկվեն կաթողիկոսի վավերացմանը, թե՞ ոչ: Այդ մասին կարծիքները խիստ տարբեր էին, որովհետև այն հարցը, թե ժողովուրդն ինչ հարաբերություններ պետք է ունենա կաթողիկոսի և հոգևորականության հետ, մնացել էր բաց ու առկախ: «Ծայրահեղականները» պնդում էին, որ կաթողիկոսի վավերացումը պետք չէ, իսկ «չափավորները» գտնում էին, որ ընդունված որոշումները պետք է իրագործել կաթողիկոսի և հոգևորականության միջոցով, ուստի ազգի հոգևոր պետի կողմից դրանց վավերացումն անհրաժեշտ է: Մինչ վիճաբանությունները շարունակվում էին կազմվելիք կանոնադրությունների ու ծրագրերի վավերացման շուրջ, ավելի սթափ պատգամավորների համար արդեն պարզ էր, որ եթե ժողովը նույնիսկ կարողանա որևէ օրենք ընդունել կամ կանոնադրություն ստեղծել, ապա, միևնույն է, դրանք չեն ճանաչվելու ժողովրդի կողմից և մնալու են իբրև մեռած տառ:

Օգոստոսի 30-ի առավոտյան, երբ պատգամավորները սեկցիաների բաժանված դեռ նոր էին սկսել նիստը, վանքում լուր տարածվեց, թե Թիֆլիսից հրահանգ է ստացվել կենտրոնական ժողովը փակելու մասին: Սկզբում ոչ ոք չէր հավատում լսածին, բայց շուտով ամեն ինչ պարզվեց:

Մինչ աշխատանքը դադարեցրած և բակ իջած պատգամավորները բորբոքված վիճաբանում էին ստացած տհաճ տեղեկության հավաստիության շուրջ, սինոդի պրոկուրորը կաթողիկոսի, իսկ գավառապետը ժողովի նախագահի մոտ միաժամանակ գալով հայտնեցին, որ ժողովը պետք է դադարեցնի իր աշխատանքները, իսկ պատգամավորները պարտավոր են ցրվել և 24 ժամվա ընթացքում հեռանալ Էջմիածնից[1]:

Ոստիկանական այդ բռնությունը իր ներքին գործերը տնօրինելու մասին ռուսահայությանը Կովկասի փոխարքայի կողմից տված խոստման ոտնահարում էր: Ցարական կառավարությունը փչրում էր խոսքի ու ժողովների ազատության մասին հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ազդարարած իրավունքների ամենավերջին մնացորդները: Հեղափոխության հնարավոր նոր բռնկումների երկյուղը հանգիստ չէր տալիս միապետության սատրապներին: Նրանք չէին հանդուրժում նույնիսկ մի այնպիսի անուժ, անօգնական ու անվնաս միջոցառում, ինչպիսին Էջմիածնի կենտրոնական պատգամավորական ժողովն էր:

Դաշնակցության «Երկիր» թերթը հանրությանը տեղեկացնում էր, որ Էջմիածնի կղերը իշխանություններին հաղորդել է, թե պատգամավորների մեծ մասը պատկանում է ծայրահեղ կուսակցություններին, այդ իսկ պատճառով համագումարում հարցերը քննարկվում են հեղափոխական ոգով, այսինքն՝ հակապետական ուղղվածությամբ, որն իր ցայտուն արտահայտությունն է գտնում մեծամասնության առաջադրած պահանջներում: «Ելնելով դրանից, - նշում էր թերթը, - կովկասյան գլխավոր վարչությունը օգոստոսի 23-ին Երևանյան ժամանակավոր գեներալ-նահանգապետին (Ցացկևիչին: - Հ.Ս.) տված հեռագրով կարգադրել է փակել համագումարը»[2]:

«Կովկասի առավոտ» թերթը, անդրադառնալով կենտրոնական ժողովի փակման գործում Էջմիածնի կղերի խաղացած դերին, գրում էր.

«Գոռ զայրույթ պոռթկաց ժողովրդի կրծքից՝ Էջմիածնի միաբանության և սինոդի դեմ՝ կենտրոնական ժողովի վերաբերմամբ նրանց կատարած ոտնձգությունների պատճառով, բայց այդ արդար բողոքը բավական չէ ստիպելու հայ կղերին, որ սա վերջ դնի իր շահատակություններին»[3]:

Նախքան պատգամավորների ցրվելը, Էջմիածնի գավառապետ Լիմերմանը մի թուղթ ուղարկեց վանք, որի մեջ մեկիկ-մեկիկ դրված էին մեծախոս և աղմկաշատ հիմնադիր ժողովի պատգամավորների անուններն ու ազգանունները,

[1] «Մշակ», N 192, 5 սեպտեմբերի 1906թ.:
[2] «Երկիր», N 30, 4 նոյեմբերի 1906թ.:
[3] «Կովկասի Առավոտ», N 16, 9 հոկտեմբերի 1907թ.:

պահանջելով, որ նրանք ստորագրեն այն[1]: Թուղթը, որ բերել էր գավառի ոստիկանության ներկայացուցիչը, հետևյալ բովանդակությունն ուներ.

«Մենք, ներքո ստորագրողներս, տալիս ենք այս ստորագրությունը Էջմիածնի գավառապետին, որ Էջմիածնի կենտրոնական ժողովի փակման մասին Կովկասի փոխարքայի կարգադրությունը մեզ հայտարարված է, և մենք պարտավոր ենք 24 ժամվա ընթացքում, վարչական կարգով ուղարկելուց խուսափելու համար, Էջմիածնից հեռանալ մեր բնակավայրերը և այստեղից գնալուց հետո, օրինական պատասխանատվությունից խույս տալու համար, չսարքել այլևս որևէ խորհրդաժողով»[2]:

Պատգամավորները հերթով ստորագրեցին, բայց ավելացրին հետևյալ բացատրությունը. «Այս ստորագրությունը տալով՝ բողոքում ենք այդ կարգադրության դեմ, որը խախտում է յուրաքանչյուր քաղաքացու անհողդողդ իրավունքները, խոսքի և ժողովի ազատությունը, ինչպես և բռնաբարում է յուրաքանչյուր ժողովրդի իրավունքները, որը միակ կարգադրիչն է իր ազգային-կուլտուրական գործերի»[3]:

Թեև պատգամավորները ստորագրեցին նշված բողոքը, բայց նրանց մեծ մասը ներքնապես ուրախ էր կատարվածի համար: Նրանցից շատերը հենց մի այդպիսի բանի էին սպասում, որ «պատվավոր» հեռանան, քանզի չգիտեին իրենց հետագա անելիքները, բայց հասկացել էին, որ, միևնույն է, բան չի դուրս գալու իրենց բռնած գործից:

«Այսպես անփառունակ վերջացավ բարենորոգչական մեր փորձը»[4],- գրել է Վահան Փափազյանը: Իր հերթին դաշնակցական գործիչներից մյուսը՝ Արտաշես Հովսեփյանը (Մալխաս) ավելի պատկերավոր նշել է. « ... Էջմիածնայ ազգային մեծ ժողովը պարզապես ճառաբանութեան մրցահանդես մ'էր, եթե նոյնիսկ ամբողջ գեղեցիկ ճառերը հազիւ թե ընկոյզի կեղեւ մը լեցնեին»[5]:

Ամբողջ երկու շաբաթ ջուր ծեծելուց և փքուն ելույթներից հետո պատգամավորները հեռացան Էջմիածնից՝ իրենց հետևում թողնելով վանքին հասցրած ահագին վնասը, ազգի խառնակ վիճակի խորացումը, միաբանության մեջ երկպառակություն ձգելը: «Եվ մեր դաշնակցական պատգամաւորները, - դարձյալ նշել է Մալխասը, - որ այնքան հերոսաբար կուրծք կուտային դարեւոր անցեալի մը, եւ կ'ուզէին զայն սոցիալիստօրէն նոր ճամբայով մը քալեցնել, կարծես գիւղական գոմէշի կառք մը լինէր ան, գաւառապետի հրամանը ստանալով սուս ու փուս, խուրճինները շալակած, հեռացան դէպի իրենց տեղերը, աւելորդ անգամ մ'ալ դէմ յանդիման գալով այն ճշմարտութեան թէ՝ մեծաշառաչ ֆրազներէ աւելի արժէքաւոր է կենդանի թէկուզ համեստ գործը»[1]:

Ժողովի ցրումը դաշնակցականներին առիթ ընծայեց ասելու, թե իրենք կարևոր բան էին ստեղծում, բայց ռուս բյուրոկրատիան խանգարեց: Լիբերալները գտնում էին, որ կառավարությունն իր կոպիտ միջամտությամբ չթողեց, որպեսզի ժողովը մեռնի իր բնական մահով: Սոցիալ-դեմոկրատներն առավել քան բավարարված էին, քանի որ ժողովին նախորդած ամիսներին բազմիցս գրել ու ազդարարել էին, թե այն անխուսափելիորեն տխուր վախճան է ունենալու:

Ժողովի աշխատանքների դադարեցման հիմնական մեղավորներից մեկը դաշնակցական որոշ գործիչներ համարում էին Թուրքահայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին, որն, իբր, Կ. Պոլսի դեսպան Զինովևի միջոցով Կովկասի փոխարքային խնդրել է փակել ժողովը, պատճառաբանելով, թե այն անօրինական է:

Մերժելով իր նկատմամբ հարուցած մեղադրանքը՝ Մ. Օրմանյանը հասարակությանը տեղեկացնում էր, որ, իրավ, ինքը նամակով դիմել է ռուսաց դեսպանին, և վերջինս դրա թարգմանությունն ուղարկել է փոխարքային, բայց նրանում որևէ խոսք չի եղել ժողովը փակելու անհրաժեշտության մասին: Հետագայում նույնպես անդրադառնալով այդ մեղադրանքի շարժառիթներին՝ նա գրել է.

«Ես ըսեր եմ (նամակով: - Հ.Ս.), թե Խրիմեան կաթողիկոս պաշտոնական ոչ մեկ տեղեկություն ուղարկած է մեզ՝ Էջմիածնի ժողովին մասին, չէ պահանջած ուղարկել ներկայացուցիչներ, որ այդ ժողովին վճիռները չեն կրնար պարտադիր ըլլալ Թուրքիայի հայոց եկեղեցվո և ժողովրդի համար, քանի որ մենք չունինք ոչ մեկ ներկայացուցիչ: Ապա ըսեր եմ, որ, ինչպես կը տեղեկանամ Թիֆլիսի հայ լրագիրներեն և Էջմիածնի ծերունի եպիսկոպոսներեն ստացած նամակներես, ժողովը չի կրնար համարվիլ եկեղեցական, քանի որ անոր անդամոց մեջ չկայ ոչ մեկ եկեղեցական ներկայացուցիչ: Ըսեր եմ և այն, հիմնվելով դարձյալ վերոհիշյալ նամակներու և լրագիրներու վրայ, որ ժողովին մեծամասնությունը բաղկացած է դաշնակցականներե, որոնք ծայրահեղ ծրագիրներ ունին: Եվ միթե այս մատնությունն է, քանի որ Թիֆլիսի բոլոր լրագիրները հաղորդեցին: Վերջապես, իմ խոսքերս ինչպե՞ս կրնային պատճառ ըլլալ ժողովին փակման, քանի որ դեսպան Զինովևի գրությունը հասած է փոխարքային սեպտեմբեր 6-ին, երբ օգոստոս 28-ին արդեն ժողովը փակուած և ցրուած էր»[2]:

Դաշնակցական գործիչների մի այլ խումբ գտնում էր, որ Էջմիածնի կենտրոնական ժողովի փակման հեղինակներն այն անձինք են, որոնք բողոքելով հեռացել են ժողովից: Այդ տեսակետը Բոստոնի «Հայրենիք» թերթում

---

[1] Լեո, Անցյալից, էջ 199:
[2] «Դրոշակ», N 9(175), սեպտեմբեր, 1906, էջ 133:
[3] Նույն տեղում:
[4] Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. առաջին, էջ 450:
[5] Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 445:

[1] Մալխաս, Ապրումներ, հատ. Ա, էջ 445:
[2] «Մշակ», N 205, 21 սեպտեմբերի 1911թ.:

առաջինն արտահայտել էր Վռամյանը: Բայց քանի որ հոդվածագիրը այդ ամբաստանության օգտին որևէ փաստ չուներ, ուստի, հանդես գալով Կ. Պոլսի ազգային ժողովում, հայտարարել էր, թե Էջմիածնի ժողովի փակման պատճառը «Մշակ» թերթի խմբագրության անդամ Համբարձում Առաքելյանն է:

Իրականում, ինչպես հետագայում անհերքելի կերպով ապացուցվել էր, Էջմիածնի սինոդը և միաբանությունն էին դիմել փոխարքային և աղերսել փակել ժողովը և ցրել ժողովականներին[1]:

1906թ. Էջմիածնի կենտրոնական ժողովից հետո էլ երկար տարիներ, մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը, հայկական դպրոցները ռուսահայոց մեջ կղերի ազդեցության ներքո էին, վանքերի ու եկեղեցիների կալվածքները առաջվա պես մնացին նրանց սեփականությունը, հոգևորականության վերահսկողության տակ մնացին նաև թեմական-վարչական ընտրությունները, ազգային մշակույթի շատ ոլորտներ: Հետագայում ԽՍՀՄ-ում, այդ թվում Խորհրդային Հայաստանում, չիրականացվեց կրոնը հասարակական կյանքից լիովին դուրս մղելու՝ դարասկզբի սոցիալ-դեմոկրատների պահանջը, բայց խիստ սահմանափակվեցին եկեղեցու իրավունքներն ու հավակնությունները: Եկեղեցին անջատվեց պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց: Վերջինիս դերը սահմանափակվեց ազգային ավանդույթների պահպանմանը մասնակից լինելով, իսկ կաթողիկե չինությունները արժևորվեցին որպես ճարտարապետական մտքի և չինարարական արվեստի փայլուն դրսևորումներ:

[1] ՀՀ ԳԿՊԱ, Մկրտիչ կաթողիկոսի կոնդակների և նամակների մայր մատյան (1906-1907թթ.), ֆ. 57, ց.2, գ. 98, թ. 62:

ՀԱՎԵԼՎԱԾ

I

ՆԻԿՈԼԱՅ II-Ի 1905թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ԲԱՐՁՐԱԳՈՂՆ ՀՐԱՄԱՆԸ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերականգնելով Կովկասում Մեր փոխարքայությունը, Մենք Կովկասի կառավարության համար Մեր վստահությամբ ընտրված անձի վրայ պարտաւորություն դրինք վերականգնել այդ բարելից երկրում խանգարուած հասարակական կեանքի խաղաղությունը: Ներկայումս Փոխարքան՝ իրեն հաւատացած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, Մեզ ներկայացրած է իւր կարծիքը փոփոխելու հայ ազգաբնակութեան վերաբերեալ մի քանի կարգադրութիւններ, որոնք արգելք էին լինում նրա կանոնաւոր և խաղաղ զարգացման: Օգտակար գտնելով հաստատել Մեր Փոխարքայի առաջարկութիւնը, Մենք շնորհում ենք Հայ-Լուսաւորչական հոգևորականութեան ժողովրդի լուսաւորութեան համար անհրաժեշտ գործունէութեան ընդարձակ միջոցներ: Ընդ սմին հրամայելով ստորև յիշատակած ձևով վերադարձնել հայոց եկեղեցական հիմնարկութեանց պատկանող գրաւուած կալուածները (գոյքը), Մենք թոյլատրում ենք Մեր Փոխարքային նորա տեսչութեան յանձնուած երկրի սահմաններում հէնց այժմեանից ժամանակաւորապէս գործադրել այդ մինչև օրէնսդրական եղանակաւ կը քննուին կազմուած կանոնները, որոնք պէտք է ապահովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական գոյքի կառավարութեան գործում. իսկ այսուհետև ծագող թիւրիմացութեանց առաջն առնելու համար, որոնք կարող են առաջանալ գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից, Փոխարքան պարտաւոր է մշակել իշխանութեան և Հայոց եկեղեցւոյ հաստատութիւնների յարաբերութեանց սահմանները: Ըստ այմ հրամայում ենք.

1) Վերացնելով 1903 թուի յունիսի 12-ի օրէնքը, դարձնել Հայ-Լուսաւորչական եկեղեցու կառավարութեան և իրաւասութեան այն բոլոր անշարժ կալուածներն ու դրամագլուխները, որոնք պատկանում էին Հայ-Լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր կրթական հիմնարկութիւններին այն եկամուտների հետ, որ ստացուել են պետական կառավարութեան ժամանակաշրջանում, բառնալով կալուածներն ընդունելու և կառավարելու ժամանակ տեղի ունեցած ծախսերը: Կալուածների և եկամուտների եկեղեցական հիմնարկութեանց յանձնելը կատարել Մեր Փոխարքայի, Ներքին գործոց Նախարարի և երկրագործութեան ու հողատիրութեան կանոնաւորութեան գլխաւոր կառավարչի համաձայնութեամբ:

2) Հայ հոգևորականութեան խնդիրների և միջնորդութիւնների վերջնական լուծումը այդ կալուածներն ու եկամուտներն դարձնելու մասին՝ յանձնել Մեր Կովկասեան Փոխարքային:

3) Մինչև հայոց եկեղեցական ծխական դպրոցների նոր կանոնադրութիւն մշակելը, յանձնարարել Կովկասեան Փոխարքային՝ թոյլատրել Կովկասի փոխարքայութեան սահմաններում բանալ եկեղեցիներին և վանքերին կից եկեղեցական ծխական դպրոցներ 1874 թուի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոնների համաձայն:

4) Յանձնարարել Փոխարքային՝ ա) առանց յետաձգելու որոշեալ կարգով ներկայացնել այլ հաստատութեանց հետ բանակցելուց անկախ՝ նոր կանոնադրութիւն հայոց եկեղեցական դպրոցների և այն կալուածներն ու գոյքը վերադարձնելու մասին, որոնք՝ համաձայն 1898 թուի մարտի 26-ի և 1903 թուի յունիսի 12-ի մինիստրների կոմիտէի Բարձրագոյն հաստատուած կանոններով յանձնուած էին լուսավորութեան նախարարութեան. բ) մշակել գանձարանի աջակցութեամբ Հայ-Լուսաւորչական եկեղեցիներին պատկանող բնակեցրած տեղերի մասին օրէնքներ և առաջարկել այդ եզրակացութիւնները Մեզ օրինական կարգով ի հաստատութիւն: Վերոյիշեալներն ի կատար ածելու համար յանձնում ենք Սենատին տնօրինել ինչ որ պէտքն է:

Իսկականի վրայ ստորագրուած է
ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
ձեռամբ **ՆԻԿՈԼԱՑ:**

Պետերհոֆ, 1 օգոստոսի, 1905 թիւ:

II

ՆԻԿՈԼԱՑ II-Ի 1905Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ողորմութեամբն Աստուծոյ ՄԵՆՔ,ՆԻԿՈԼԱՑ Բ, ԻՆՔՆԱԿԱԼ ամենայն Ռուսաց, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիոյ և այլն և այլն, յայտնում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, որ մայրաքաղաքում և Մեր կայսրութեան շատ

վայրերում տեղի ունեցող խռովութիւններն ու յուզմունքները մեծ, ծանր վշտով համակում են Մեր սիրտը: Ռուսաց Պետութեան բարիքը անբաժանելի է ժողովրդեան բարիքից և ժողովրդեան տրտմութիւնը Նորա տրտմութիւնն է: Այժմեան յուզմունքը կարող է խստացնել ժողովրդի տրամադրութիւնը և վտանգ սպառնալ Մեր Տէրութեան ամբողջութեանն ու միութեանը: Արքայական սպասաւորութեան մեծ ուխտը հրամայում է Մեզ ձգտել բոլոր ուժով, որքան կարելի է շուտ, վերջ դնելու Պետութեան համար այսչափ վտանգաւոր խռովութեան:

Հրամայելով պատշաճաւոր իշխանութեանց միջոցներ ձեռք առնել վերացնելու անկարգութեան, խռովութեան և բռնութեան անմիջական արտայայտութիւնները՝ պաշտպանելու համար խաղաղ մարդկանց, որոնք ձգտում են հանգիստ կատարելու իրենց վերայ եղած պարտքը: Մենք Պետական կեանքը խաղաղացնելու համար Մեր նախասահմանած ընդհանուր միջոցները գործադրելու նպատակով անհրաժեշտ համարեցինք միացնել Բարձրագոյն Կառավարութեան գործունէութիւնը: Կառավարութեան վերայ պարտք ենք դնում՝ ի կատար ածել մեր անյողդողդ կամքը. Ա. Շնորհել ազգաբնակութեանը քաղաքացիական ազատութեան անսասան հիմունքներ՝ անձի իսկական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովների և ընկերակցութիւնների ազատութեան սկզբունքներով. Բ. Զգաստարեցնելով Պետական Դումայի համար նշանակուած ընտրութիւնները՝ այժմ իսկ հրաւիրել Դումային մասնակցելու ըստ չափու հնարաւորութեան, Դումայի գումարման համար մնացած կարճ ժամանակին համեմատ, ազգաբնակութեան այն դասակարգերը, որոնք բոլորովին զրկուած են ընտրական իրաւունքից, թողնելով, որ նոր հաստատուած օրէնսդրական կարգը զարգացնէ ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքը. Դ. Սահմանել որպէս անխախտ կանոն, որ ո՛չ մի օրէնք զօրութիւն չունենայ առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդի ընտրեալները ապահով հնարաւորութիւն ունենան իրապէս մասնակցելու Մեր կարգած իշխանութեանց գործառնութիւնների օրինաւորութեան հսկողութեանը:

Հրաւիրում ենք Ռուսաստանի բոլոր հաւատարիմ զաւակներին միտ բերել իրենց պարտքը հայրենիքի վերաբերութեամբ, օգնել վախճան դնելու այս չլսուած խռովութեանը և Մեզ հետ միասին բոլոր ոյժերը լարել հայրենի երկրում անդորրութիւն ու խաղաղութիւն վերականգնելու համար:

Տուած է Պետերհոֆում, հոկտեմբեր 17, 1905 թ., յ. Ծ. Ք.
և Մեր Թագաւորութեան մեծասաներորդ տարում:

Բնագիրը ստորագրուած է
ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
իսկական ձեռամբ **«ՆԻԿՈԼԱՑ»:**

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա-ԴՕ տես Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Աբամելիք ---------- 504
Աբաս ---------- 482
Աբաս Զալ-օղլի ---------- 210
Աբաջյան Տիգրան ---------- 172, 174
Աբդալ ---------- 617
Աբդուլ Համիդ II ---------- 29, 47, 51, 131, 136, 171, 260, 278, 279, 306, 353, 555, 558, 559, 561, 563, 565, 567-570, 577-579, 582-590, 592, 594, 595, 644, 714, 718, 720, 728
Աբեշ (Աբիշ) ---------- 192
Աբեղյան Արտաշես ---------- 598
Աբեղյան Մանուկ ---------- 598
Աբրահամյան Հակոբ ---------- 661
Աբրահամյան Հարություն (Զոլո) - 633, 634
Աբրամով Արամ ---------- 250
Աբրո տես Գյուլխանդանյան Աբրահամ
Ագասանյան Մինաս ---------- 264
Ագրիպասյան ---------- 169
Ադամյան Կարապետ ---------- 195
Ադամյան Հարություն ---------- 322
Ադամյաններ ---------- 368
Ադամով ---------- 507
Ադամով Ալեքսանդր ---------- 82
Ադելխանով ---------- 36
Ադիլցոզալ բեկ ---------- 366
Ազարովսկի ---------- 642
Ազգապետյան Քերովբե ---------- 93
Ազիզով Պետրոս տես Սարգսյան Խորեն
Ազնավուրյան Արամայիս ---------- 164
Ազո ---------- 615
Աթաբեկյան Լևոն ------ 259, 765, 775, 778
Աթանասյան Ա. ---------- 677
Ալադին ---------- 721
Ալավերդյան Աղաջան ---------- 95
Ալավերդյան Նվարդ ---------- 95
Ալես ---------- 613
Ալեքսանդր I ---------- 328
Ալեքսանդր II ---------- 35, 271
Ալեքսանդր III ---------- 282
Ալեքսանդր Մեծ իշխան ---------- 31
Ալեքսանդրա Ֆյոդորովնա ---------- 31, 668
Ալեքսանյան Գևորգ ---------- 661
Ալեքսանյաններ ---------- 234
Ալեքսեև ---------- 31
Ալի ---------- 193
Ալի-Բալա ---------- 486
Ալիխանով-Ավարսկի -- 212, 213, 215-217, 227, 265, 506, 541, 641
Ալիև Մուսեիբ բեկ ---------- 451, 452
Ալիև Սաֆար ---------- 418
Ալոյան Գալուստ (Դարվիշ) -------- 159, 608
Ալշաֆար-օղլի մոլլա ---------- 209
Ալչուուլ ---------- 249
Ալֆտան ---------- 646, 671, 711
Ախալցխացի Մկո ---------- 66, 67, 73, 167
Ախո ---------- 634
Ախվերդի-օղլի Աբդուլ Ռահման -------- 675
Ակիմով Ալի աղա ---------- 674
Ակնունի Է. տես Մալումյան Խաչատուր
Ահարոնյան Ավետիս -- 102, 234, 320, 422, 578, 624, 697, 765, 772, 773, 778, 780
Ահարոնյան Գեղեոն ---------- 159
Ահարոնյան Վարդգես ---------- 64, 65
Ահարոնյաններ ---------- 372
Ահմեդբեկով ---------- 675
Աղամալյան Մկրտիչ (Մուկուչ, Սարհատ)-64, 66-68, 90, 96, 266, 322, 323
Աղամալյան Ս. ---------- 372
Աղայան Ղազարոս ---------- 180, 598
Աղանյան Գյուտ քահանա ---------- 402
Աղավնի ---------- 187
Աղաև Ահմեդ (Ահմադբեկ) ------- 110, 111, 115, 187, 342, 347, 381, 523, 651, 675, 680-682, 684, 699
Աղբյուր Սերոբ տես Վարդանյան Սերոբ
Աճառյան Հրաչյա ---------- 598
Ամիլախվարի Ի. Գ. ---------- 102, 133-137, 139, 259, 261, 262, 418
Ամիրխանյան Հովսեփ ---------- 180
Ամիրջանով Շիրալի բեկ ---------- 156
Ամիրյան Արսեն ---------- 90
Ամիրյան Թադևոս (Գիժ Թաթոս) --- 64, 90, 96, 163, 330, 439, 440, 442, 479
Ամուրյան Ա. ---------- 41
Ամֆիտեատրով Ալեքսանդր --115, 278-280
Այոլա ---------- 187
Այվազյան Հարություն ---------- 725
Այվազով Նազար Քյալ ------- 196, 197, 213
Անանյանցներ ---------- 368, 372
Անանուն Դավիթ ---- 52, 93, 95, 343, 344, 515-517, 523, 524, 527, 679, 736
Անդրանիկ տես Օզանյան Անդրանիկ
Անդրեաս ---------- 363
Անդրեև ---------- 251, 252, 266, 335
Անենակի ---------- 33
Անիկին ---------- 721
Աննա ---------- 96
Անտոն մետրոպոլիտ ---------- 184
Անտոն վարդապետ ---------- 758
Անտոնին եպիսկոպոս ---------- 24

Աշարով Փոլադ բեկ ---------- 675
Աշոտ եպիսկոպոս ---------- 706, 712
Աշրաֆ բեկ ---------- 644
Աշուրբեկով ---------- 46, 54
Աշուրով Հաջի Ասլան ---------- 59, 115, 187, 347, 420
Ապրո ---------- 615
Առաքելյան ---------- 415
Առաքելյան Խաչիկ (Կոլոտ) - 600-603, 605
Առաքելյան Համբարձում --- 102, 180, 324, 410, 674, 765, 776-779, 786
Առաքելով (Առաքելյան) --------- 446, 447
Առյուծ Ավագ ---------- 64, 68, 96, 172, 174, 229, 230-234, 315-318
Առնոլդ ---------- 455, 456, 458
Առուշանյան ---------- 187
Առուստամյան Եգոր (Գրիգոր, Մենակ) - 600-603, 605
Ասադ աղա ---------- 190, 191
Ասադ Հաջի Աբիլ Կասըմ-օղլի ---- 209, 210
Ասադուլաև ---------- 382
Ասատրյան Հայկ ---------- 60
Ասլան ---------- 174, 312
Ասլանով ---------- 81
Ասպո ---------- 615
Աստվածատրյան Արշալույս ------ 163, 228, 230, 231, 521, 522, 600, 612, 625
Ասրիբեկյան Մելքոն ---------- 21
Ավագյաններ ---------- 466
Ավալյանի Ս. Լ. --------- 294, 361, 362, 518
Ավանեսով Ռաուլ ---------- 192
Ավետիսյան Վ. Ա. ---------- 94, 279
Ավո մշեցի ---------- 172, 174
Ավո պատմաբան ---------- 633, 634
Ավոյան Կարապետ (Մորուք Կարո) ---- 633, 634
Ավրանա Արամ ---------- 634
Արազ ---------- 132, 133
Արակչեև ---------- 743
Արամ ---------- 562, 581, 582
Արամ Փաշա տես Հովհաննիսյան Սարգիս
Արամայիս ---------- 82
Արամյան ---------- 508, 509
Արամյաններ ---------- 517
Արամյանց ---------- 418, 518
Արասխանյան Ավետիք ---------- 102, 180
Արարատսկի Վալերի ---- 60, 132, 133, 139
Արեչյան Ռուբինա ---------- 562, 564, 568, 570, 581, 582, 584
Արզումանյան ---------- 415
Արզումանով եղբայրներ ---------- 224
Արծվիկ ---------- 252
Արծրունի Գրիգոր ---------- 699, 731-733
Արծրունի Վահան ---------- 102
Արղությյան Հովսեփ ---------- 180, 280, 421, 543, 615
Արմեն Գարո տես Փաստրմաճյան Գարեգին
Արմենակ ---------- 613
Արմշատցի Պետրոս ---------- 615
Արշակ ---------- 662
Արշակունիներ ---------- 5
Արսեն վարդապետ ---------- 617
Արտաշեսյաններ ---------- 5
Արտո ---------- 662
Աֆանասև Ս. Ս. ---------- 293
Աֆրիկյաններ ---------- 517

Բաբախանյան Կարապետ ---------- 54
Բաբախանով Միսակ ---------- 192
Բաբաջանով ---------- 81
Բաբաքեխվյան Նիկոլայ (Կոլա) -- 330, 331
Բաբաև ---------- 53, 54
Բաբերդցի Սեպուհ տես Ներսիսյան Արշակ
Բաբայան Արշակ ---------- 102
Բագրատ եպիսկոպոս ---------- 770
Բագրատունի (Եղիկյան) Աշոտ --------- 560, 562, 567, 581
Բագրատունիներ ---------- 5
Բադրիձե ---------- 352
Բալա-Աղա Մեշադի-Մահմեդ-Ռզա-օղլի - 54
Բալախանում ---------- 464, 465
Բալայան Ա. ---------- 775
Բալայան Համբարձում (Համբի) ---------- 96
Բալուև ---------- 161, 255
Բահադրյան ---------- 710
Բահաթրյան ---------- 725, 726
Բահաթուր բեկ ---------- 366
Բաղդասարյան ---------- 479
Բաղդասարյաններ ---------- 372
Բաղդասարով Բագրատ ---------- 192
Բաչգառնեցի Մարտիրոս ---------- 645, 646
Բարաթով ---------- 518
Բարանովսկի ---------- 371
Բարյատինսկի Ալեքսանդր Իվանովիչ - 269, 270
Բդեյան Միսակ ---------- 636
Բդեյան Սարգիս ---------- 636
Բաումգարտ ---------- 294
Բեգլարյաններ ---------- 368
Բեյսվսկի ---------- 115
Բեկզադյան Ալեքսանդր (Սաշա) --------- 82, 83, 597
Բեկզադյան Արամ ---------- 83
Բեկզադյան Գուրգեն ---------- 83
Բեկզադյան Ելենա ---------- 82, 83
Բեկզադյան Հարություն ---------- 82

Բեկզադյան Հովսեփ ---------- 82, 83
Բեկզադյան Մարիամ ---------- 82, 83
Բեկզադյան Պետրոս ---------- 83
Բեկզադյան Ռուբեն ---------- 82
Բեկզադյան Տիգրան ---------- 82, 83
Բեկզադյաններ ---------- 82
Բեյրուտով Ա. Ի. ---------- 280, 293
Բենիկ վարդապետ ---------- 599
Բենկենդորֆ ---------- 294
Բերդակցի Օսկան (Օսկո) -------- 172, 173, 313, 467, 468
Բիկով սևհարյուրակային -------- 134, 137
Բիկով գնդապետ ---------- 251, 266
Բիչ ---------- 51
Բյուրիլին ---------- 665
Բոբրիկով ---------- 266
Բոգդան ---------- 468, 470
Բոգդանովիչ ---------- 401
Բոգոլյուբսկի ---------- 249, 250, 335
Բորիսով ---------- 256
Բորոդին ---------- 60, 103
Բրուտյան Աբրահամ ---------- 624
Բուդաղյան ---------- 415
Բուդբերգ ---------- 299
Բուլիգին ---------- 178, 290, 299
Բուլղարացի Պետո ---------- 172
Բուրկացկի ---------- 265

Գալե ---------- 633, 634
Գալոյան Գալուստ ---------- 97
Գալստյան Համբարձում ---------- 363
Գակկելի ---------- 290
Գամառ-Քաթիպա ---------- 170
Գանեցկի ---------- 60
Գապո ---------- 96, 181
Գապոն Գեորգի քահանա ---- 26, 27, 32, 33
Գավաշի Հաջի Մուրատ ---------- 615
Գարեգին արքեպիսկոպոս -------- 102, 504
Գափյաններ ---------- 368
Գաֆավյան Արշակ (Քեռի, Էրզրումցի) -172, 174, 314, 466-468, 470, 471
Գեղամ վարդապետ ---------- 758
Գեղամյան(ց) Եղիշե Ա. Ք. ----- 45, 46, 274
Գեորգ ---------- 615
Գեորդան ---------- 250
Գերով Ս. ---------- 574, 575
Գիժիցկի ---------- 187
Գիրս ---------- 294
Գյանջեցյան ---------- 73, 187, 261
Գյուլխանդանյան Աբրահամ -15, 20, 47, 49, 52, 58, 63, 64, 66, 68, 69, 72, 76, 80, 81, 84, 86, 92-96, 105, 106, 108, 110, 115, 117, 128, 137-139, 164, 257, 258, 262, 297, 312, 342, 343, 347, 372, 422, 597, 602, 656, 658, 700-702
Գյուլնչան ---------- 363
Գյումիշխանեցի Ավետիս ---------- 172
Գնթունի ---------- 397
Գոգոբերիձե ---------- 196
Գոլիցին Գրիգորի Սերգեևիչ ---- 41, 44, 45, 97, 193, 247-249, 255, 260, 261, 266, 267, 273-281, 284, 287, 307, 354, 519, 523, 526, 527, 654, 692
Գոլոչյան Վարդան ---------- 169
Գոլոշչապով ---------- 643, 671, 686, 712
Գոմսա Իսո (Կորյուն) -------- 172, 174, 466, 471, 631-633, 635, 636
Գոչ Անտոն ---------- 571
Գորդապլիաձե ---------- 226
Գորեմիկին Իվան Լոգինովիչ ---------- 720
Գորկի Մաքսիմ ---------- 28, 33, 420, 421
Գորչակով ---------- 446, 447
Գրաբ ---------- 509
Գրիգոր Նախիջևանցի ---------- 193
Գրիգոր զինագործ ---------- 613
Գրիգոր ---------- 662
Գրիգոր Լուսավորիչ ---------- 760
Գրիգորիս վարդապետ ---------- 758
Գրիգորյան Մանուչար ---------- 363
Գրիգորյան Մկրտիչ ---------- 415
Գրիգորյան Սահակ ---------- 93
Գրինգմուտ ---------- 129, 350
Գուլամիր ---------- 615
Գուլաքազյան Կարապետ ---------- 169
Գուլիշամբարով Ստ. ---------- 515
Գուվովսկի Ա. Ի. ---------- 28, 31
Գուչկով Ա. Ի. ---------- 408
Գուսան տես Խաչատրյան Ավետիք
Գուրգեն ---------- 615
Գուրգենբեկյաններ ---------- 504
Գուրգենյան ---------- 674
Գևորգ արքեպիսկոպոս ---------- 758
Գևորգ Զաուշ տես Ղազարյան Գևորգ
Գևորգյան ---------- 504
Գևորգյան Կ. ---------- 644
Գևորգյան Սամսոն ---------- 92

Դալի-Ալի ---------- 440, 553, 698, 700, 708
Դալի-Աստան ---------- 708
Դանիել կաթողիկոս ---------- 715, 744
Դանտոն ---------- 538
Դանուղյանց Խաչատուր ---------- 194
Դաշնակցական Խեչո ------ 15, 16, 64, 163, 174, 186, 263, 312
Դաստակյան ---------- 261
Դավթյան Աննա ---------- 363
Դավթյան Եփրեմ ---------- 597
Դավթյան Խաչատուր ---------- 363
Դավթյան Հովնան (Հոնան) ------- 498, 560, 562, 564, 597, 697, 765, 777
Դարբինյան Ռուբեն տես Զիլինգարյան Արտաշես
Դարչինյան ---------- 198
Դեմուրյան Ստեփան ---------- 598
Դերոյան Տիգրան ---------- 505
Դիլդարովներ ---------- 382
Դիլոն Էմիլ ---------- 72
Դիմինսկի (Դեմինսկի) ---------- 51, 60, 72, 90, 103, 255
Դյուսա Ալեքսանդր ---------- 630
Դոլգուրով ---------- 185
Դոլուխանյան (Դոլուխանով) Բոգդան -- 93, 96, 115, 187, 261, 262, 333
Դոնդուկով-Կորսակով Ալեքսանդր Միխայլովիչ ------- 272, 273, 278, 279, 526
Դրո, Դերո տես Կանայան Դրաստամատ
Դրոզդով Վասիլի ---------- 251
Դրուժինին ---------- 156
Դուբասով ---------- 538
Դումբաձե ---------- 232
Դուրնովո ---------- 640, 647, 720
Դևյան Արտաշես ---------- 559
Դևոյան Տիգրան ---------- 644

Եդիգարով, Եդիգարովներ --- 496, 498, 553
Եդիգարով Հուսեին բեկ ---------- 674
Եդիգարով Նադիր բեկ ---------- 121
Եզյան Կարապետ ---------- 521
Ելիզավետա Անդրեևնա ---------- 282
Եղիա վարդապետ ---------- 758
Եղիազարյան Խոսրով ---------- 644
Եղիազարյան Սմբատ ---------- 644
Եղիկյան Գրիգոր ---------- 477
Եղիշե պատմիչ ---------- 572
Եղիշե վարդապետ ---------- 553
Ենգոյան Միսաք ---------- 47
Ենիկոլոպյան ---------- 509
Եսայի վարդապետ ---------- 758
Եվանգուլյան Գ. ---------- 521
Երամյան Համբարձում ---------- 619
Երզնկյան Արամայիս -- 485, 487, 488, 494
Երիվանսկի Աղա խան ---------- 674
Երմոլաև ---------- 665, 666

Զալյանց Սիմոն ---------- 264
Զախարբեկյան ---------- 504
Զայցև ---------- 237
Զավարյան Սիմոն ---------- 52, 560, 561, 576, 577, 697, 699-702, 737-739, 754, 765, 770-772, 777, 778, 780
Զարաֆյան Միքայել ---------- 226
Զարդարյան Ռուբեն ---------- 170, 171
Զարեհ ---------- 562, 566, 581, 582
Զարիֆյան Հովհաննես ---------- 538
Զաքար ---------- 557
Զաքարյան Թադևոս ---------- 115
Զեյնալով Բախտիար բեկ ---------- 675
Զեյնալով Զաֆար ---------- 113
Զիաթխանով ---------- 682, 684, 686, 687, 675, 725-727
Զինովև ---------- 785
Զոլա Էմիլ ---------- 630
Զուլդազարով Ալլահեար բեկ ----- 449, 450
Զուև Ցակով Աֆանասևիչ --------- 92, 115

Էդելսոն ---------- 265
Էմիլ ---------- 562, 581, 584
Էմինով ---------- 674
Էնգել ---------- 196, 294
Էսաձե Ս. ---------- 271, 349
Էրնի Ադոլֆ ---------- 706

Թադե ---------- 465
Թադևոս քահանա (Աշրաֆ աղա) ------ 207
Թադևոսյան Ա. ---------- 777
Թադևոսյան Լևոն (Պապաչա) - 66, 262, 611
Թադևոսյան Հովսեփ ---------- 612
Թադևոսյան Ստեփան (Սամսոն) -- 611, 615
Թադևոսյան Տիգրան ---------- 649
Թաթոսյան ---------- 92
Թաթոսյաններ ---------- 92
Թալիշխանով Բախշի բեկ ---------- 115, 347
Թաղիանոսյան Ալեքսանդր ---------- 674
Թաղիանոսյան Ստեփան - 96, 115, 187, 261
Թաղիև ---------- 47, 648
Թամամչև ---------- 36
Թամիրյաններ ---------- 368
Թայիրյան Արտեմ ---------- 187
Թավքերիձե ---------- 51, 87, 88, 103
Թարազդարյան Լևոն ---------- 94
Թեյմուրազյան ---------- 504
Թումամա վարդապետ ---------- 704
Թորգոմ ---------- 613
Թոփալարի բեկ ---------- 373
Թոփալյան Հովսեփ ---------- 590
Թոփչիբաշև Մարդան Ալի -------- 111, 115, 187, 342, 347, 381
Թոփչիբաշև ---------- 674, 681
Թոփչյան Եղիշե --102, 120, 180, 421, 496, 498, 702, 734, 765, 773, 777
Թրքեչչի Հաջի Նաջաֆ Կուլի ----- 206, 207
Թուլաև ---------- 504

Թումանյան ---------- 418, 725
Թումանյան Հովհաննես (բան.) -- 180, 510, 511, 531, 765
Թումանյան Հովհաննես -765, 776, 777, 779
Թումյան(ց) Թուման (Թորգոմ) --------- 251, 559, 560, 564, 581, 582, 597, 598, 600-602, 605, 606, 613
Թևոսյան Խաչանես ---------- 94

Ժամհարյան Խաչակ -------- 320-322, 324
Ժամհարյան Մարգար (Մռավ) ------ 15, 16, 252, 321, 370-372, 597
Ժարիկով ---------- 187
Ժոլս Կ. ---------- 222
Ժորդանիա Նոյ -------- 496, 497, 499, 544
Ժորես ---------- 562, 590
Ժորես Ժան ---------- 30

Իբրահիմով ---------- 37
Իգնատև ---------- 538
Իզմիրլյան ---------- 521, 730
Իկոննիկով ---------- 550
Իսամ Ջուսա ---------- 220
Իշխանյան Բախշի ---------- 187
Իշխանյան Եղիշե ---------- 646
Իշխանյան Ջավադ ---------- 674
Իոանիսյան Ս. Ն. ---------- 293
Իսադորաշվիլի ---------- 232
Իսախանյան ---------- 187
Իսահակ վարդապետ ---------- 776, 779
Իսահակյան Արշակ ---------- 175, 597
Իսահակյան Ավետիք -- 167, 421, 423, 601
Իսահակյան Ս. ---------- 65
Իվանենկո Վ. Ի. ---------- 526
Իվանով Աբել ---------- 197
Իվանով-Մելիքսեթով Լազար ---------- 255
Իրեցկի ---------- 51, 112

Լազարյան Աբամելիք ---------- 713
Լազարյան Միքայել --------- 674, 681, 682
Լազարյաններ (Լազարև) ---------- 66, 280
Լազյան Գաբրիել ---------- 274-276
Լալազարյաններ ---------- 465
Լալաև Բալաբեկ ---------- 91
Լալաև Կարապետ ---------- 91
Լալաևներ ---------- 92
Լամզդորֆ ---------- 294
Լանդաու ---------- 34
Լացաու ---------- 294, 358
Լեբեդև ---------- 60
Լեբեդև Վլադիմիր ---------- 253
Լեզգրիռով Վ. ---------- 525
Լենին Ն. (Վ. Ուլյանով) տես Լենին Վ. Ի.

Լենին Վ. Ի. -------- 35, 40, 43-45, 51, 137, 384, 385, 388, 389, 537, 542
Լեո (Բաբախանյան Առաքել) ----- 271, 276, 372, 373, 572, 583, 604, 768, 784, 576, 597-599, 765
Լիբկնեխտ Կարլ ---------- 31
Լիմերման ---------- 294, 783
Լինդեն Վ. Ի. ---------- 520
Լինևիչ ---------- 17
Լիսիցյան Ստեփան ---------- 180
Լյապով ---------- 581
Լյուբեցյան Լ. ---------- 621
Լոբանով-Ռոստովսկի ---------- 41, 278
Լոբանովներ ---------- 278
Լոլաձե ---------- 265
Լորթո ---------- 312
Լորիս ---------- 580
Լորիս-Մելիքովներ ---------- 66, 280
Լունիակին ---------- 370
Լունկևիչ Վ. տես Արարատսկի Վալերի
Լուպակով ---------- 330, 331
Լևին Էլյա ---------- 60
Լևիցկի, գնդապետ ---------- 686
Լևոն I ---------- 562, 566
Լևոն II ---------- 562, 566
Լևոն ---------- 458

Խաժակ Գարեգին - 421, 496, 498, 561, 697
Խալաթյան եղբայրներ ---------- 195
Խալլու ---------- 450
Խամիցկի (Խոմիցկի) ------ 51, 60, 103, 104
Խան ---------- 605
Խանազատ (Խան-Ազատ) Ռուբեն -- 32, 33, 273, 274, 282, 577
Խանասորի Վարդան տես Մեհրաբյան Սարգիս
Խանդամիրյաններ ---------- 368
Խանլար ---------- 469, 470
Խաչմանյան ---------- 402
Խաչատրյան ---------- 90
Խաչատրյան Սմբատ (Բորիս) ----- 159, 567, 773, 777, 780
Խաչատրյաններ ---------- 368
Խաչատուրով Գրիգոր ---------- 410
Խաչատուրով Խաչատուր ---------- 250
Խաս-Մամեդով (Խասամամեդով) --------- 433, 675, 681
Խատիսյան Ալեքսանդր (Խատիսով Ա. Ի.) - 102, 180, 293, 295, 296, 358, 380, 435, 436, 440, 488, 489, 491, 493, 507, 518, 521, 652, 654, 674, 676, 681, 683, 686
Խատիսյան Կոնստանտին (Խատիսով Կ. Ի.) - 61, 62, 77, 96, 115, 187, 261, 288, 293, 295, 674, 681, 682, 757
Խարազյան ---------- 504
Խեչո ---------- 615
Խեանցի Սարգիս (Թարփաթոզ) --------- 633
Խզմայլյան Թադեոս ---------- 765, 777
Խլաթցի Գալո ---------- 172-174, 313, 468
Խոջաբեկյան Վ. Ե. ---------- 41, 156, 515
Խոջահանակի Քեաբբալա Հուսեին բեկ - 472
Խոջաև ---------- 681
Խոջոյան Իս. ---------- 674
Խոսխոռունի Մեսրոպ քահանա --------- 415
Խոսրով ---------- 382
Խորեն ---------- 382
Խորենի Վահան ---------- 469
Խպսուզի Իսմայիլ բեկ ---------- 190
Խրխայի Շերիֆ ---------- 568
Խրիմյան Մկրտիչ Կաթողիկոս ------- 83, 88, 100-102, 122, 124-126, 215, 218, 221, 273, 284, 285, 299-304, 307, 365, 430, 434, 442, 496, 575, 604, 667, 672, 713, 730, 746, 751, 753-758, 762, 763, 766, 768-770, 777, 778, 785
Խուբլարյաններ ---------- 372
Խուդավերդյան Ներսես արքեպիսկոպոս-299
Խուցուաի Հուսեին Ալի բեկ ---------- 190

Մատուրյան ---------- 509
Մատուրյան Ալ. (Ռուբենի) -------- 349, 598
Մերեթելի Ակակի ---------- 523, 528
Մովսիսյան Սարգիս (Փաղիշահ) -- 163, 326, 327, 457-459, 461, 615
Մուրինով ---------- 508

Կալաբեկով Բահաթը բեկ ---------- 453
Կայեն ---------- 139, 472
Կայծակ ---------- 248
Կայծակ Առաքել տես Աբաշյան Տիգրան
Կանայան Դրաստամատ (Դրո) ------ 64, 65, 173, 250, 256, 257, 262, 263, 266, 312-318, 466-471, 644, 646
Կանայան Մարտիրոս ---------- 466
Կանայաններ ---------- 466
Կանչելի դատախազ ---------- 47
Կանչելի անարխիստ ---------- 488
Կանտ Իմանուիլ ---------- 513
Կասյան Սարգիս ---------- 597
Կասպարով Վլադիսլավ ---------- 597
Կարա-Մուրզա ---------- 674
Կարաբեկով ---------- 681
Կարաբեկով Բեռուզ աղա ---------- 450
Կարաբեկով Կարաբեյ ---------- 187
Կարապետ վարդապետ ---------- 193, 209, 213, 214, 758
Կարապետյան Խոսրով ---------- 667
Կարապետյան Հ. Ն. ---------- 324, 596
Կարապետով Գալուստ ---------- 192
Կարճկանի Վարդան ---------- 615
Կարմիր Սուլթան տես Աբդուլ Համիդ II
Կարո ---------- 562, 566
Կաուցկի Կարլ ---------- 31
Կաուֆման ---------- 185
Կենգերլինսկի ---------- 196
Կեչյան Մանուկ ---------- 590
Կեչյան Գողոս ---------- 590
Կիզիրին Գալուստ ---------- 465
Կիպիանի ---------- 521
Կիրեև ---------- 274
Կիրիչենկո ---------- 336
Կլիմովիչ Լ. Ի. ---------- 350
Կյոքչաև ---------- 435, 440
Կնունյանց Բոգդան ---------- 282, 597
Կնունյանցներ ---------- 601
Կոգդիանի ---------- 435
Կոգնովեցկի ---------- 436
Կոլմակով Վասիլի ---------- 665
Կոյաև ---------- 35
Կոկոչկին ---------- 185
Կոկովցև ---------- 31, 34, 280
Կոմարով ---------- 129
Կոմս տես Փափազյան Վահան
Կոչարլինսկի Շահմար բեկ ---------- 362
Կոսոյան Հայկակ ---------- 618
Կովալով ---------- 235, 549
Կովալևսկի Մաքսիմ ---------- 689
Կոտոյան Հակոբ (Կոտոյի Հաջի) - 172, 174, 314, 315, 317
Կորգանով ---------- 507
Կորյուն վարդապետ --------- 102, 430, 431, 435, 436, 720
Կոփեցի Կնյազ ---------- 172, 173, 467
Կոփեցի Մուշեղ ---------- 172, 174
Կոտ ---------- 257, 258
Կրասիլնիկյան ---------- 380
Կրիմ-Գիրեյ Սուլթան --------- 284, 301, 675
Կրպո ---------- 634
Կուդրևիչ ---------- 436
Կուզենբախ ---------- 509
Կուզմին ---------- 78
Կուզմինսկի Ա. Մ. --- 93, 137-139, 141-152
Կուզնեցով Միխայիլ ---------- 249
Կուլամ ---------- 104
Կուլիբեկով Միրզա Քյազիմ ---------- 196
Կուվիկովա Անտոնինա ---------- 197
Կուվունյան Սարգիս ---------- 169
Կուրչինսկի Ա. ---------- 122

Կուրոկի ---------- 17
Կուրց ---------- 481
Կուրոպատկին ---------- 17, 277

Հախումյանց Բաբա ---------- 372
Հակոբ քահանա ---------- 670
Հակոբյան Հակոբ ---------- 538
Հակոբով ---------- 382
Համազասպ վարդապետ ---------- 758
Համազասպյան Անանիա -49, 72, 85, 88, 100
Համբարձումյան Կոստի ---------- 597, 607
Համբո ---------- 441
Հայկոս ---------- 531
Հայր Աբրահամ տես Սահակյան Ավետիք
Հայրիյան Մանուշակ ---------- 363
Հաջի Ահմեդ ---------- 636
Հաջի Բեկ ---------- 471
Հաջի Գևո ---------- 174
Հաջի Միրզա Աբդուլ Քերիմ աղա ------ 220
Հաջի Նազիր ---------- 636
Հաջի Ջալիլ ---------- 675
Հաջի Ցերո ---------- 556
Հաջիբեկով Աբասկուլի բեկ ---------- 674
Հաջիբեկով Իսմայիլ բեկ ---------- 444, 445
Հաջինսկի Հասան Մահմեդ -- 115, 187, 347
Հաջիև սպա ---------- 665
Հաջիև ---------- 675, 681, 682
Հաջիև Գ. ---------- 675, 676
Հաջիև Իսրաֆիլ ---------- 115, 187, 347
Հասան ---------- 557
Հասանբեկով Թեմուր բեկ --------- 432, 441
Հարութ մշեցի ---------- 172
Հարութ ---------- 557
Հարություն ---------- 608
Հարություն պատրիարք ---------- 751
Հարությունով Լևոն ---------- 264
Հարությունյան Նիկողայոս ---------- 54
Հարությունյան Սամսոն (Հարությունով Ս.) 115, 180, 293, 295, 296, 491, 493, 674, 677, 682, 684, 765, 772-774, 777-779
Հարությունյան Սարիբեկ ---------- 674
Հարությունյանց Սմբատ ---------- 327
Հարությունյաններ ---------- 504
Հաքտհաուզեն Ավգուստ ---------- 525
Հեյբաթյան Իշխան ---------- 371
Հեսեն ---------- 690
Հերցեյնշտեյն ---------- 185
Հեքիմով ---------- 417
Հմայակ ---------- 186
Հյուգո Վիկտոր ---------- 630
Հյուսեին բեկ ---------- 557
Հյուսնի բեկ ---------- 664
Հովհաննես ---------- 469
Հովհաննես եպիսկոպոս ---------- 758
Հովհաննես Օձնեցի ---------- 761
Հովհաննիսյան Աշոտ ---------- 597, 598
Հովհաննիսյան Արշակ ---------- 226
Հովհաննիսյան Մկրտիչ (Մկո) ---------- 382
Հովհաննիսյան Նշան ---------- 590
Հովհաննիսյան Սարգիս (Օգանեսով Սերգեյ) - 598, 599, 600, 602-604, 606-615, 619, 621, 622, 624-628
Հովհաննիսյան Տիգրան -102, 180, 754, 765
Հովնանյան Սահակ (Աշուղ) ---------- 159
Հովսեփ եպիսկոպոս ---------- 770
Հովսեփյան Արտաշես (Մալխաս) - 460, 461, 473, 610, 613, 784, 785
Հովսեփյան(ց) Գարեգին վարդապետ -- 599, 728
Հրայր ---------- 627, 628, 631
Հունանյան ---------- 261
Հուսիկ եպիսկոպոս ---------- 102, 434
Հուսիկ վարդապետ ---------- 102

Ղազարյան Գևորգ (Գևորգ Ջաուշ) - 629, 631
Ղալաբեկով Ջհանգիր խան ---------- 675
Ղահրամանյան ---------- 187
Ղահրամանյան հաչատուր ---------- 382
Ղամբարով Գ. Ս. ---------- 293
Ղաչաղ Ասլան ---------- 96, 163
Ղասաբ Արամ ---------- 172, 174
Ղասրմ բեկ ---------- 636
Ղարաբեկով ---------- 675
Ղարիբյան Հովհաննես ---------- 590
Ղլտճյան Արսեն վարդապետ - 772, 777, 780
Ղորղանյան ---------- 446-448
Ղուլիխան Ջաֆար ---------- 184
Ղուլիև Իսմայիլ ---------- 675
Ղուլյան Լևոն ---------- 674
Ղուկասյան Գրիգոր ---------- 252
Ղուկասյան (Ղուկասով) Արշակ ----- 62, 63
Ղուկասյաններ ---------- 368
Ղուկասով ---------- 674
Ղևոնդ եպիսկոպոս ---------- 758

Ճավճավաձե Իլյա ---------- 523
Ճիհինաձե ---------- 160

Մադաթյաններ (Մադաթով) -------- 66, 280
Մաթևոս ---------- 321, 322
Մաթևոսյան ---------- 509
Մաթևոսյան Սամվել ---------- 382
Մալամա Ցակով Դմիտրիևիչ ---- 87, 88, 97, 154, 199, 212, 284, 286, 434, 437, 440, 441, 460, 671, 672, 675, 681, 685, 687
Մալումյան հաչատուր ------ 188, 273, 275, 277, 290, 343, 574, 703, 705
Մախարաձե Ֆիլիպ ---------- 93, 392-394
Մածուն հեչո տես Միրզաբեկյան Գրիգոր
Մակարով Ա. ---------- 514
Մակլյակով Վ. Ա. ---------- 409
Մակուց Մեսրոպ ---------- 617
Մամեդ Թաղի մոլլա ---------- 209
Մամեդբեկով ---------- 55, 75, 89, 103, 176, 255, 256, 261
Մայի-Սալթանե ---------- 219
Մանանդյան Հակոբ ---------- 765, 776, 777
Մանասյան Սարգիս ---------- 597
Մանդինյան Սեդրակ ---------- 598
Մանթաշյան Ալեքսանդր (Մանթաշով) - 379-381, 415, 416, 508, 509, 517-519
Մանոլ ---------- 566
Մանուիլով ---------- 185
Մանուկ ---------- 634
Մանուկյան ---------- 777
Մանուկյան Հմայակ ---------- 626
Մանուկյան Մհեր (Փայլակ) ---------- 248
Մաշադի Ալի մոլլա Ահմեդ-օղլի --------- 210
Մաշադի Մամեդ Բայրամով ---------- 210
Մաշադի Մամեդ Հաջի Քերիմ-օղլի ----- 209
Մաշադի Մուրադ-օղլի Ամրաստան ----- 362
Մաա Նիկոլայ ---------- 523
Մասումով ---------- 113
Մատակյան ---------- 170
Մատթեոս եպիսկոպոս ---------- 770
Մատթեոս վարդապետ ---------- 759
Մատինյան ---------- 521
Մատինյան Միքայել ---------- 93
Մարգարյան Մարտիրոս (Սաֆո) - 559, 560, 562, 579, 580-582
Մարիա Ֆյոդորովնա ---------- 31
Մարկոսյան Հ. ---------- 692
Մարտիկյան Սերգո ---------- 21, 71
Մարտինով ---------- 487, 488
Մարտիրոսյանց Գալուստ ---------- 155
Մարքս Կարլ ---------- 529, 537
Մաքսուդով ---------- 356
Մաևակի Վ. ---------- 52
Մելիկով ---------- 135
Մելիք ---------- 661
Մելիք-Ադամյան Սոկրատ --- 102, 180, 491
Մելիք-Ազարյան Ալեքսանդր - 102, 180, 674
Մելիք-Ալահվերդյանց Ներսես ---- 430, 436
Մելիք-Աղամալյան Հովհ. ---------- 193, 674
Մելիք-Աղամալյան Մկրտիչ ---------- 86
Մելիք-Ասլանով Սաղդը բեկ ---------- 362
Մելիք-Բեգլարյան Հովսեփ ----------- 674, 681
Մելիք-Բեգլարյան-Օհանյան Մարգարիտ -96
Մելիք-Թանգյան Արշակ բեկ ---------- 361
Մելիք-Թանգյան Ներսես վարդապետ -- 365, 466, 730, 752, 765
Մելիք-Թանգյան Ջաֆար բեկ ---------- 361
Մելիք-Մուսյան Ռուբեն ---------- 159
Մելիք-Շահնազարյան Աղաբեկ --------- 322
Մելիք-Փարսադանյան Դավիթ --------- 471
Մելիք-Փարսադանյան Ստեփան -- 598, 604
Մելիքյան Խաչակ ----- 64, 66, 71, 73, 414
Մելիքյան Լորիս ---------- 580
Մելիքով Դավիթ ---------- 122
Մելիքով ---------- 290
Մելյան Մեսրոպ ավագ քահանա -------- 747
Մելքոնյան Տաճատ վարդապետ -------- 765
Մելքոնումներ ---------- 250
Մելքոնով Գասպար ---------- 250
Մելքոնով Մարկոս ---------- 250
Մելքումյան Արշակ ---------- 372
Մելքումյան Ջաքո ---------- 382
Մելքումյան Համբարձում (Մելիք) ------ 465
Մեխոի բեկ ---------- 195
Մեխոի Քեաբրալայ ---------- 472
Մեծ Հովսեփ ---------- 615
Մեծբոյան Ելենա ---------- 225
Մեհրաբյան Սարգիս (Վարդան) -- 162-164, 367, 368, 465, 597, 607, 656, 657, 703
Մեհրաբյան Վախտանգ ---------- 674, 687
Մեյրամով Գեորգի ---------- 264
Մեսրոպ բեկ ---------- 458
Մեսրոպ վարդապետ --------- 213, 214, 216
Մեսրոպ Մաշտոց ---------- 760
Միլյուկով Պ. Ն. ---------- 409, 690
Միլոմներ ---------- 517
Միխայիլ Նիկոլաևիչ տես Ռոմանով Մ. Ն.
Միխայլովսկի Ն. Կ. ---------- 279
Մինախորյան Վահան - 66-68, 96, 249, 403
Մինասյան Լ. ---------- 607
Միշել ---------- 562, 566
Միսաք ---------- 172
Միրզաբեկյան Գրիգոր ---------- 374, 375
Միրզաբեկյան(ց) ---------- 46, 415, 417
Միրզոյան (Միրզոև) ---------- 256, 380, 383, 508, 509
Միրզոյան Ա. ---------- 550
Միրզոև ---------- 674
Միրզա Սադրխ Ռահիմ խան ---------- 190
Միցկևիչ ---------- 273
Մկայել ---------- 114
Մկայել (Միշա) ---------- 673
Մկայել խան ---------- 372
Մկայելյան-Արղության Ալեքսանդր -- 102
Մկայելյան Քր. (Էդուարդ, Էլլեն) -320-322, 558-562, 565-568, 570-579, 581, 590

Միքելաձե ---------- 255, 256
Մխիթար ---------- 464
Մխիթար վարդապետ -------- 102, 308, 434
Մխիթարյան միաբանություն ---------- 740
Մկրտ ---------- 634
Մկրտիչ մալիշկացի ---------- 233
Մկրտիչ ---------- 562
Մկրտիչ քահանա ---------- 552
Մհեր ---------- 234
Մյասնիկյան Ալեքսանդր Ֆ. ------- 514, 515
Մնացականյան Լ. ---------- 674
Մշեցի Եղո ---------- 635
Մոկացի Գրիգոր ---------- 68, 96
Մոկացի Խեչո ---------- 172, 173, 468
Մոկացի Հարություն ---------- 615
Մոնտին Պյոտր (Պետրոս) ---------- 93, 540
Մոսո մանազկերտցի ---------- 607, 608
Մոսո մկրտմցի ---------- 634
Մովլա-զադե զազի ---------- 674
Մովսիսյան Հովհաննես ---------- 450
Մորոզով ---------- 514
Մորոզով Սավա ---------- 238
Մորոզով Տ. Ս. ---------- 514
Մուզզաֆֆեր էդ Դին -------- 124-126, 218
Մուխտարով -------- 47, 115, 380, 415-417
Մուխրանսկի ---------- 518
Մուշեղ ---------- 504
Մուշեղյան Լ. ---------- 674
Մուսաբեկ ---------- 636
Մուսայելյան ---------- 666
Մուրադբեկյան Խորեն ------- 765, 775, 777
Մուրադյան Եղիշե վարդապետ --------- 674
Մուրադով եղբայրներ (Աղա-Մուրադով)-507
Մուրավով ---------- 31
Մուրավյով Նիկոլայ Նիկոլաևիչ -------- 268
Մուրատ սուլթան ---------- 586, 596
Մուրոմցև ---------- 185

Ցակովլև ---------- 160, 162, 198, 199, 240
Ցակուլով ---------- 103, 104
Ցապոն տես Պարոնյան Հովհաննես
Ցապոնացի Սաքո տես Սարգիսյանյան Համբարձում
Ցավորսկի ---------- 361
Ցավրյան Զմռութ ---------- 750
Ցարո ---------- 615
Ցացկևիչ ---------- 392, 548, 645, 783
Ցուզբաչյանց ---------- 661
Ցումատյան Մանուկ ---------- 590
Ցուսուֆ ---------- 607
Ցուսուֆ աղա ---------- 635
Ցուսուֆյան Հովհաննես ---------- 765, 777

Նազարեթ ---------- 587
Նազարեթյան Վահան ---------- 249
Նազարյան Տիգրան ---------- 668
Նազարյանց Ստեփանոս ---------- 731
Նազարով ---------- 417
Նազի ---------- 698, 708
Նազիմ փաշա ---------- 29
Նալբանդյան Գևորգ վրդ. (Ընծայր)-610, 611
Նալբանդյան Միքայել ---------- 341
Նախիջևանսկի Ջաֆար Ղուլի (Կուլի) --190, 193, 194, 196, 197, 210
Նախիջևանսկի Ռահիմ խան ------ 194, 197, 198, 213
Նախիջևանսկիներ ---------- 212
Նակաշիձե -- 47, 48, 51, 58-60, 63, 72, 73, 85, 87, 88, 98, 100, 103, 104, 110, 133-137, 139, 142, 255-266, 290, 294, 331, 335, 358, 366, 429, 692
Նահապետ եպիսկոպոս ---------- 758
Նահապետյան Առաքել ---------- 590
Նահապետյան Գաբրիել վարդապետ --- 674
Նաղիև Մուսա ---------- 382, 415
Նայդենով ---------- 236
Նաչչանսկի ---------- 335
Նապոլեոն Լուի Բոնապարտ -214, 216, 217
Նաջարով Նիկոլայ ---------- 57, 78
Նաջաֆկուլի ---------- 712
Նաջաֆկուլի Հաջի Բայրամ-օղլի -------- 210
Նասիբյան Գրիգոր ---------- 93
Նավոմ ---------- 363
Նարինյան Սիմոն (Մնար) ---------- 598
Նելիդով ---------- 278
Նեմեզիդա (Նեմեսիս) -- 152, 258, 261, 265
Նեմիրովիչ-Դանչենկո Ն. Ա. ------- 200, 207
Ներոն ---------- 430
Ներսես Շնորհալի ---------- 761
Ներսիսյան Արշակ ---------- 172
Նիկոլ ---------- 608
Նիկոլ Դուման տես Տեր-Հովհաննիսյան Նիկոլ(այ)
Նիկոլայ I ---------- 147, 745, 761
Նիկոլայ II -------- 13-15, 17, 18, 22, 25-28, 31-34, 39, 42, 44, 62, 97, 106, 117, 128, 131, 132, 137, 139, 140, 147, 150, 152, 178, 179, 181, 247, 261, 266, 267, 274, 276-278, 281-286, 289, 297, 299-303, 305, 306, 309, 354, 370, 400, 401, 405, 412, 413, 477, 478, 640, 641, 650, 668, 714, 717-720, 723, 728, 787-789
Նիկոլայ Նիկոլաևիչ Մեծ իշխան -------- 534
Նիկոլաձե Նիկո(լայ) ---------- 523
Նյուֆթալի բեկ ---------- 361, 362

Նոբել ---------- 382
Նոլդե ---------- 294, 301
Նինո ---------- 450
Նովիկով Ալեքսանդր ---------- 51, 60, 104, 112, 109, 187
Նորդբերգ ---------- 294
Նորեկ ---------- 416
Նվարդ ---------- 466
Նուբար Պողոս փաշա ---------- 713
Նուրի բեկ ---------- 675
Նևրոցկի ---------- 92
Նևրուզ Օննիկ ---- 321, 322, 602, 605, 614

Շագիդանյան, Շագիդանյանց -- 74, 96, 415
Շաղինյան Գևորգ ---------- 509
Շախին Ի. ---------- 392
Շախմալիև ---------- 674, 681
Շախսուվարով Ջաբրայիլ ---------- 363
Շահ-Պարոնով ---------- 507, 508
Շահաբաս աղա ---------- 190
Շահբազ Վարդան տես Տոնիկյան Մինաս
Շահթախտինսկի ------- 103, 255, 256, 342
Շահթախտինսկի Մահմեդ աղա -- 110, 346, 651, 652, 654, 674
Շահկուլի Միրզա ---------- 674
Շահնազարյան Գերասիմ ---------- 710
Շահսուվար բեկ ---------- 464
Շահրիկյան Հարություն -323, 421, 423, 532
Շահուզյան Ստեփան --------- 729, 763, 764
Շամախեցի Իվան տես Քոչարյան Հովհաննես
Շամիլ ---------- 270
Շամիր դաշնակցական ---------- 96
Շամիր չուշեցի ---------- 362
Շամիր Թուրք հրոսակ ---------- 371
Շամքորսկի ---------- 708
Շանգելդյան Միքայել ---------- 598
Շանթ ---------- 248
Շանչյան Պետրոս ---------- 598
Շելկովնիկով ---------- 280
Շելկովնիկյան Սարգիս ---------- 159
Շեկ-Հովսեփյան ---------- 96
Շեկո ---------- 335
Շեյխ Քյարիմ Ասազ աղա ---------- 190
Շենիկցի Ղազար ---------- 633, 634
Շերեմետև Սերգեյ Ալեքսեևիչ ---------- 273
Շերիֆ բեկ ---------- 253
Շեֆ տես Տեր-Սահակյան Տիգրան
Շիբաև ---------- 382
Շիլլեր ---------- 40, 46
Շիկո ---------- 253
Շինգարյով Ա. Ի. ---------- 409
Շիրազի ---------- 127

Շիրինկին Ե. ---------- 284, 675
Շիրինյան Արշակ ---------- 465, 466, 471
Շիպան Սիմոն ---------- 765, 772
Շոպեն Ի. ---------- 147
Շմերլինգ ---------- 249, 294, 335
Շմիդտ Գ.Գ. ---------- 406
Շչեպկին ---------- 185
Շեյուրմեր ---------- 294
Շեորաուբե ---------- 294
Շումակևիչ ---------- 253, 335

Ոսկանով ---------- 504
Որսորդ ---------- 606

Ջաթո ---------- 634
Ջալխուչյան Գրիգոր -------- 272, 275, 288
Ջախմաչիևներ ---------- 382
Ջարուխյան Մարտիրոս - 64, 66, 67, 96, 266
Ջերնի ---------- 226
Ջերնյավսկի ---------- 507
Ջերքեզով ---------- 478, 491, 493, 521
Ջիլինգարյան Արշակ ---------- 159, 599
Ջիլինգարյան Արտաշես ----- 323, 329, 330, 579, 765, 775
Ջիլինգարյաններ ---------- 517
Ջուպանյան Արշակ ---------- 304, 410, 595
Ջորեքչյան Գևորգ ------ 765, 774, 777, 779
Ջուխուտ Արսեն --- 163, 243, 315, 466, 471
Ջրելաև ---------- 435, 440, 493
Ջուբար(յան) սարկավագ ---------- 772, 777

Պալավանդով ---------- 675
Պալտոյան Բրո ---------- 590
Պակևիչ ---------- 745
Պավլով ---------- 195, 335
Պատալով Ս. ---------- 280
Պարոնյան մեծահարուստ ---------- 261
Պարոնյան Միքայել (Միշա) ---------- 646
Պարոնյան Հովհաննես ---------- 465, 471
Պեյցով ---------- 156
Պետերսոն Ն. ---------- 492, 682, 683, 687
Պետո ---------- 471
Պետրոս ---------- 662
Պետրոսյան զինավաճառ ---------- 73
Պետրոսյան վաճառական ---------- 415
Պետրոսյան Թադե ---------- 64, 598
Պետրոսյան Սարգիս ---------- 382, 450
Պետրովա ---------- 588
Պետրունկևիչ ---------- 721
Պզտիկ Ցապոն ---------- 73
Պիղատոս ---------- 673
Պիոն ---------- 571
Պիտոև ---------- 74

Պլեհ Վյաչեսլավ ---------- 18, 31, 34, 97, 259, 266, 277, 294, 604
Պոբեդոնոսցև --------- 31, 32, 34, 280, 283, 290, 401, 402, 720
Պոգոժև Վ. Գ. ---------- 42, 299
Պոզո Տիգրան ---------- 615
Պողոսյան Հ. Մ. ---------- 248
Պողոսյան (Միքայելյան) Նիկոլ (Իշխան) -322, 598, 600-603, 605-607, 612, 614-619, 621, 625-630
Պողոսով ---------- 195
Պոնոմարյով Կ. ---------- 690
Պոռյան Պերճ ---------- 598
Պրեսանսե ---------- 30
Պրեսոնովներ ---------- 479
Պրոտոպապա Անդրե ---------- 591
Պրուդոն ---------- 731

Ջալալյան Սեդրակ ---------- 644
Ջահիլ ---------- 562
Ջամալյան տես Խաչիկյան Արշակ
Ջանիբեկյան Հայկ ---------- 159
Ջանչյան Գ. ---------- 279
Ջանփոլադյան ---------- 322
Ջանփոլադյան Հմայակ ------ 64, 66-68, 96, 251, 266
Ջավախով ---------- 335
Ջափարիձե Այոշա ---------- 106
Ջեզայիր աղա Ցուսուֆ ---------- 636
Ջիվանչիրովի Հուսեին բեկ ---------- 371
Ջունկովսկի ---------- 492, 506

Ռաշիդ ---------- 163, 174, 466, 471
Ռաշմաճյան Տիգրան ---------- 765
Ռամիշվիլի Իսիդոր ---------- 487-489, 491, 494, 496, 497, 499, 544
Ռաևսկի ---------- 51
Ռգաև ---------- 415
Ռենենկամպֆ ---------- 294
Ռեշատ էֆենդի ---------- 586
Ռիզա Ահմեդ ---------- 589
Ռիլսկի ---------- 547
Ռիպս Սոֆի ---------- 562
Ռոդիոնով Պ. ---------- 389
Ռոդիչև ---------- 721
Ռոժանկո Մ. Վ. ---------- 408
Ռոմանով Կոնստանտին ---------- 31
Ռոմանով Միխայիլ Նիկոլաևիչ -------- 271, 272, 526
Ռոմանովներ ---------- 26, 269, 302, 303
Ռոմեի փաշա ---------- 583
Ռոստոմ ----- 479, 505, 560, 566, 579-581, 587, 590, 591, 697, 768
Ռոստոմյան Դավիթ ---------- 71
Ռոստոմյան Լևոն ---------- 187
Ռոստոմյան Ռոզա ---------- 187
Ռուտաչև ---------- 75
Ռուդիչև Ֆ. Ի. ---------- 409
Ռուզվելտ ---------- 310
Ռուեր Ս. ---------- 580, 581

Սազանդարյան Տիգրան ---------- 705
Սաթունյան եպիսկոպոս ---------- 496
Սալիմխանով ---------- 58, 87
Սալտիկով ---------- 547
Սախարով ---------- 252, 253, 335
Սահակ Պարթև ---------- 760
Սահակ վարդապետ ---------- 758
Սահակյան Ավետիք ---- 64, 102, 180, 421, 496, 498, 697, 770, 772, 777, 780
Սահակյան Կոյուն վարդապետ -------- 730
Սահակյան Պետրոս ---------- 264
Սահակով ---------- 55
Սաղաթելյան ---------- 414
Սաղաթելյան Ի. Ցա. -------- 293, 765, 780
Սամվել ---------- 253
Սայադ ---------- 662
Սապլիվենկո ---------- 60, 103, 104
Սառա ---------- 363
Սասունի Կարո ---------- 635-637, 645
Սասունցի Մուշեղ ---------- 635
Սարաֆով Բորիս ---------- 574
Սարբազ խնչո ---------- 234, 315
Սարգիս խնձորեանցի ---------- 662
Սարգիս Պարսկաստանից --- 562, 566, 570
Սարգիսյանյան Համբարձում -252, 253, 266
Սարգայան ---------- 481
Սարգայան Եփրեմ ---------- 629
Սարգայան Լևոն - 102, 143, 180, 293, 405, 452, 456, 479, 598, 674, 681, 779
Սարգայան Խորեն ---------- 253, 266
Սարկավագ ---------- 229, 231, 232
Սարուխանյան Առաքել ---------- 674
Սաֆրազբեկյան Զիլփուղար բեկ -------- 361
Սաֆրազբեկյան Խականդար բեկ -------- 361
Սեբաստացի Մուրադ ---------- 172, 174, 466, 596, 697
Սեգալ ---------- 518
Սեդրակյան Արիստակես ---------- 732, 758
Սեմերջյան Պետրոս ---------- 592
Սեմյոնով ---------- 547
Սեյդո (Սեյտո) Պողոս ---------- 172, 174
Սեյլանյաններ ---------- 517
Սեռուն ---------- 708
Սեպուհ ---------- 174, 596, 632
Սերգեյ Մեծ Իշխան ---------- 281
Սերգեյ Ալեքսանդրովիչ ------- 35, 259, 281
Սերգի եպիսկոպոս ---------- 32
Սերգո ---------- 335
Սերոբ Փաշա տես Վարդանյան Սերոբ
Սիմանթո (Ատոմ Ցարճանյան) - 265, 575, 592, 634
Սիդաև ---------- 352
Սիլիկյան ---------- 674
Սիլիկով ---------- 706
Սիլվեստր ---------- 499
Սիլվիո-Ռիչչի ---------- 562
Սիմոնյան ---------- 198
Սիմոնյան Սիմոն ---------- 71, 73, 74
Սիպագին ---------- 538
Սմբատ ---------- 662
Սյոմին Օրեստ ---------- 56, 91
Մխիչյան ---------- 776, 777
Սոլովյով ---------- 87, 88
Սոկոլովսկի Գեորգի ---------- 160
Սողոմոնյաններ ---------- 372
Սորփեցի Գուրգեն ---------- 172, 174
Սպանդարյան Սպանդար ---------- 402
Սպանդարյան Սուրեն ---------- 739, 764
Սպանլեր ---------- 294
Սպենդիարյան Հովհաննես ------- 102, 180, 293, 674
Սվետլով ---------- 412
Սվյատոպոլկ-Միրսկի ---------- 18, 33, 34, 281, 290, 720
Ստալին ---------- 477
Ստարոսելսկի Վ. Ա. ---------- 347
Ստեպանով Գ. Ն. ---------- 293
Ստեփանյան Կարապետ ----- 102, 180, 674
Ստեփանյան Հովակ ---------- 93, 167
Ստեփանյան Ստեփան (Պետրոսյան Հ.) -322, 463-465, 597
Ստեփանյան Տիգրան ---------- 479
Ստեփանյանց Մ. ---------- 203
Ստեֆանովիչ ---------- 274, 290
Ստոլիպին ---------- 720
Ստրուվե ---------- 294
Ստուրուա Ռաֆեն ---------- 499, 500
Սրաֆիլբեկով ---------- 431
Սրվանձտյան Համազասպ --- 174, 374-376, 421-423, 435, 436
Սուբհանգուլիև ղազի ---------- 674
Սուլթան տես Աբդուլ Համիդ II
Սուլթանով ---------- 75, 255
Սուլթանով Էյնալի բեկ ---------- 674
Սուլթանով Ջամալ բեկ ---------- 675
Սուլթանով Սուլթան բեկ ---------- 675
Սունդուկյան ---------- 187
Սուջյան Արտաշես ---------- 617
Սուվորին ---------- 129, 350, 521, 523, 654
Սուրենյան ---------- 730
Սուքիաս արքեպիսկոպոս ---------- 758
Սև Աչոտ ---------- 321, 322
Սևտիկընա Պաշիկ ---------- 615
Սևրի ---------- 30
Սևքարեցի Սաքո տես Ծովանյան Սարգիս

Վ. Գ. ---------- 525
Վագներ ---------- 294
Վագուրին Ա. ---------- 238
Վազգեն Առաջին ---------- 730
Վալ ---------- 294
Վալադյան Վալադ ---------- 460, 461, 618
Վալիահդին ---------- 125
Վայդենբաում ---------- 670
Վանա Իշխան տես Պողոսյան Նիկոլ
Վանդերլոն Ադոլֆ ---------- 294
Վանդերվելդ ---------- 588
Վանի Արամ նույն Մանուկյան Արամ տես Հովհաննիսյան Սարգիս
Վանո բեկ ---------- 458
Վայյան Աստվածատուր ----- 115, 187, 261
Վասիլև-Ցուժին Մ. ---------- 107
Վարանդյան (Հովհաննիսյան) Միքայել - 52, 54, 62, 245, 252, 255, 258, 259, 320, 367, 368, 373, 457, 461, 483, 484, 490, 493, 496, 503, 560-562, 573, 575, 588, 597, 697, 729, 731, 768, 769, 729, 734, 765, 768, 777, 778, 780
Վարդ-Պատրիկյան ---------- 509, 561
Վարդազարյան Փ. ---------- 510
Վարդան ---------- 615
Վարդան տես Մեհրաբյան Սարգիս
Վարդան վարդապետ (Վկա) ---------- 631
Վարդանյան Գրիգոր ---------- 21, 187, 662
Վարդանյան Հովհաննես ---------- 382
Վարդանյան Սերգեյ ---------- 187
Վարդանյան Սերոբ ----- 230, 315-317, 615
Վարդո տես Վարդ-Պատրիկյան
Վարժապետ ---------- 172, 174
Վեզիրով Աբբաս ---------- 366
Վեզիրով Մեհմեդ բեկ ---------- 332
Վելիչկո ----- 129, 274, 350, 356, 521, 523
Վեսելազորով ---------- 493
Վերմիշյան Ի. ---------- 652
Վերմիշյան (Վերմիշև) Քրիստափոր ---- 97, 112, 154, 392-394, 482, 521, 652
Վէքիլով ---------- 675, 681
Վիվերն ---------- 665, 669, 712, 725
Վիրաբով Մամիկոն ---------- 250
Վլասոե Սերգեյ Ցուկևիչ - 97, 290, 294, 299, 310, 400, 403, 405, 640, 719, 720

Գլեբ Վյաչեսլավ ---------- 18, 31, 34, 97, 259, 266, 277, 294, 604
Գորեգոնոսցև --------- 31, 32, 34, 280, 283, 290, 401, 402, 720
Գոգոժև Վ. Գ. ---------- 42, 299
Գոզո Տիգրան ---------- 615
Գողոսյան Հ. Մ. ---------- 248
Գողոսյան (Մկրտչյան) Նիկոլ (Իշխան) -322, 598, 600-603, 605-607, 612, 614-619, 621, 625-630
Գողոսով ---------- 195
Գոնոմարյով Կ. ---------- 690
Գոռյան Գերճ ---------- 598
Գրեսանսե ---------- 30
Գրեստոնովներ ---------- 479
Գրոտոպապա Անդրե ---------- 591
Գրուդոն ---------- 731

Դալալյան Սեդրակ ---------- 644
Դահիլ ---------- 562
Դամալյան տես Խաչիկյան Արշակ
Դանիբեկյան Հայկ ---------- 159
Դանչյան Գ. ---------- 279
Դանփոլադյան ---------- 322
Դանփոլադյան Հմայակ ------ 64, 66-68, 96, 251, 266
Դավախով ---------- 335
Դափարիձե Այոշա ---------- 106
Դեզայիր աղա Ցուսուֆ ---------- 636
Դիվանչիրսկի Հուսեին բեկ ---------- 371
Դունկովսկի ---------- 492, 506

Ռաշիդ ---------- 163, 174, 466, 471
Ռաշմաճյան Տիգրան ---------- 765
Ռամիշվիլի Իսիդոր ---------- 487-489, 491, 494, 496, 497, 499, 544
Ռաևսկի ---------- 51
Ռգաև ---------- 415
Ռենենկամպֆ ---------- 294
Ռեշատ էֆենդի ---------- 586
Ռիզա Ահմեդ ---------- 589
Ռիլսկի ---------- 547
Ռիպս Սոֆի ---------- 562
Ռոդիոնով Գ. ---------- 389
Ռոդիչև ---------- 721
Ռոժանկո Մ. Վ. ---------- 408
Ռոմանով Կոնստանտին ---------- 31
Ռոմանով Միխայիլ Նիկոլաևիչ -------- 271, 272, 526
Ռոմանովներ ---------- 26, 269, 302, 303
Ռոմեի փաշա ---------- 583
Ռոստոմ ----- 479, 505, 560, 566, 579-581, 587, 590, 591, 697, 768
Ռոստոմյան Դավիթ ---------- 71
Ռոստոմյան Լևոն ---------- 187
Ռոստոմյան Ռոզա ---------- 187
Ռուտաչև ---------- 75
Ռուդիչև Ֆ. Ի. ---------- 409
Ռուզվելտ ---------- 310
Ռուեր Ս. ---------- 580, 581

Սազանդարյան Տիգրան ---------- 705
Սաթունյան եպիսկոպոս ---------- 496
Սալիմխանով ---------- 58, 87
Սալտիկով ---------- 547
Սախարով ---------- 252, 253, 335
Սահակ Պարթև ---------- 760
Սահակ վարդապետ ---------- 758
Սահակյան Ավետիք ---- 64, 102, 180, 421, 496, 498, 697, 770, 772, 777, 780
Սահակյան Կորյուն վարդապետ -------- 730
Սահակյան Պետրոս ---------- 264
Սահակով ---------- 55
Սաղաթելյան ---------- 414
Սաղաթելյան Ի. Ցա. -------- 293, 765, 780
Սամվել ---------- 253
Սայադ ---------- 662
Սապլիվենկո ---------- 60, 103, 104
Սառա ---------- 363
Սասունի Կարո ---------- 635-637, 645
Սասունցի Մուշեղ ---------- 635
Սարաֆով Բորիս ---------- 574
Սարբազ խնչո ---------- 234, 315
Սարգիս խնձորեսկցի ---------- 662
Սարգիս Պարսկաստանից --- 562, 566, 570
Սարգիսյանյան Համբարձում -252, 253, 266
Սարգսյան ---------- 481
Սարգսյան Եփրեմ ---------- 629
Սարգսյան Լևոն - 102, 143, 180, 293, 405, 452, 456, 479, 598, 674, 681, 779
Սարգսյան Խորեն ---------- 253, 266
Սարկավագ ---------- 229, 231, 232
Սարուխանյան Առաքել ---------- 674
Սաֆրազբեկյան Զիլփուղար բեկ -------- 361
Սաֆրազբեկյան Խականդար բեկ -------- 361
Սեբաստացի Մուրադ ---------- 172, 174, 466, 596, 697
Սեգալ ---------- 518
Սեդրակյան Արիստակես ---------- 732, 758
Սեմերջյան Պետրոս ---------- 592
Սեմյոնով ---------- 547
Սեյդո (Սեյտո) Պողոս ---------- 172, 174
Սեյլանյաններ ---------- 517
Սեռուն ---------- 708
Սեպուհ ---------- 174, 596, 632
Սերգեյ Մեծ Իշխան ---------- 281
Սերգեյ Ալեքսանդրովիչ ------- 35, 259, 281
Սերգի եպիսկոպոս ---------- 32
Սերգո ---------- 335
Սերոբ Փաշա տես Վարդանյան Սերոբ
Սիմանթո (Ատոմ Ցարճանյան) - 265, 575, 592, 634
Սիդաև ---------- 352
Սիլիկյան ---------- 674
Սիլիկով ---------- 706
Սիլվեստր ---------- 499
Սիլվիո-Ռիչչի ---------- 562
Սիմոնյան ---------- 198
Սիմոնյան Սիմոն ---------- 71, 73, 74
Սիպագին ---------- 538
Սմբատ ---------- 662
Սյոմին Օրեստ ---------- 56, 91
Մխիչյան ---------- 776, 777
Սոլովյով ---------- 87, 88
Սոկոլովսկի Գեորգի ---------- 160
Սողոմոնյաններ ---------- 372
Սորփեցի Գուրգեն ---------- 172, 174
Սպանդարյան Սպանդար ---------- 402
Սպանդարյան Սուրեն ---------- 739, 764
Սպանլեր ---------- 294
Սպենդիարյան Հովհաննես ------- 102, 180, 293, 674
Սվետլով ---------- 412
Սվյատոպոլկ-Միրսկի ---------- 18, 33, 34, 281, 290, 720
Ստալին ---------- 477
Ստարոսելսկի Վ. Ա. ---------- 347
Ստեպանով Գ. Ն. ---------- 293
Ստեփանյան Կարապետ ----- 102, 180, 674
Ստեփանյան Հովակ ---------- 93, 167
Ստեփանյան Ստեփան (Պետրոսյան Հ.) -322, 463-465, 597
Ստեփանյան Տիգրան ---------- 479
Ստեփանյանց Մ. ---------- 203
Ստեֆանովիչ ---------- 274, 290
Ստոլիպին ---------- 720
Ստրուվե ---------- 294
Ստուրուա Ռաֆեն ---------- 499, 500
Սրաֆիլբեկով ---------- 431
Սրվանձտյան Համազասպ --- 174, 374-376, 421-423, 435, 436
Սուբհանգուլիև ղազի ---------- 674
Սուլթան տես Աբդուլ Համիդ II
Սուլթանով ---------- 75, 255
Սուլթանով Էյնալի բեկ ---------- 674
Սուլթանով Ջամալ բեկ ---------- 675
Սուլթանով Սուլթան բեկ ---------- 675
Սունդուկյան ---------- 187
Սուջյան Արտաշես ---------- 617
Սուվորին ---------- 129, 350, 521, 523, 654
Սուրենյան ---------- 730
Սուքիաս արքեպիսկոպոս ---------- 758
Սև Աշոտ ---------- 321, 322
Սևտիկընա Պաշիկ ---------- 615
Սևրի ---------- 30
Սեքարեցի Սաքո տես Ծովանյան Սարգիս

Վ. Գ. ---------- 525
Վագներ ---------- 294
Վագուրին Ա. ---------- 238
Վազգեն Առաջին ---------- 730
Վալ ---------- 294
Վալադյան Վալադ ---------- 460, 461, 618
Վալիահդին ---------- 125
Վայդենբաում ---------- 670
Վանա Իշխան տես Պողոսյան Նիկոլ
Վանդերլոն Ադոլֆ ---------- 294
Վանդերվելդ ---------- 588
Վանի Արամ նույն Մանուկյան Արամ տես Հովհաննիսյան Սարգիս
Վանո բեկ ---------- 458
Վայլան Աստվածատուր ----- 115, 187, 261
Վասիլև-Ցուժին Մ. ---------- 107
Վարանդյան (Հովհաննիսյան) Միքայել - 52, 54, 62, 245, 252, 255, 258, 259, 320, 367, 368, 373, 457, 461, 483, 484, 490, 493, 496, 503, 560-562, 573, 575, 588, 597, 697, 729, 731, 768, 769, 729, 734, 765, 768, 777, 778, 780
Վարդ-Պատրիկյան ---------- 509, 561
Վարդազարյան Փ. ---------- 510
Վարդան ---------- 615
Վարդան տես Մեհրաբյան Սարգիս
Վարդան վարդապետ (Վկա) ---------- 631
Վարդանյան Գրիգոր ---------- 21, 187, 662
Վարդանյան Հովհաննես ---------- 382
Վարդանյան Սերգեյ ---------- 187
Վարդանյան Սերոբ ----- 230, 315-317, 615
Վարդո տես Վարդ-Պատրիկյան
Վարժապետ ---------- 172, 174
Վեզիրով Աբբաս ---------- 366
Վեզիրով Մեհմեդ բեկ ---------- 332
Վելիչկո ----- 129, 274, 350, 356, 521, 523
Վեսելազորով ---------- 493
Վերմիշյան Ի. ---------- 652
Վերմիշյան (Վերմիշև) Քրիստափոր ---- 97, 112, 154, 392-394, 482, 521, 652
Վեքիլով ---------- 675, 681
Վիվերն ---------- 665, 669, 712, 725
Վիրաբով Մամիկոն ---------- 250
Վիտե Սերգեյ Յուլևիչ - 97, 290, 294, 299, 310, 400, 403, 405, 640, 719, 720

Վլադիմիր մետրոպոլիտ ---------- 401
Վլադիմիր Ալեքսանդրովիչ Մեծ իշխան - 31, 34, 290, 299
Վոլկով Իվան ---------- 60
Վորոբյով ---------- 160
Վորոնցով-Դաշկով Իլլարիոն Իվանովիչ - 214 -217, 266, 281-288, 290, 292, 294-297, 299, 303, 307, 310, 333, 354, 380, 382, 430, 434, 456, 487, 488, 490, 491, 501, 506, 532, 534, 535, 541, 545, 604, 671, 675, 687
Վորոնցովա-Դաշկովա ---------- 668
Վորոնցով Միխայիլ Սեմյոնովիչ -------- 268, 270, 282
Վորովսկի Վ. ---------- 389
Վռամ ---------- 562, 564
Վռամյան ---------- 786
Վրացյան Սիմոն ---------- 95

Տաճայշվիլի ---------- 294, 358, 366, 376, 429-431, 433, 434, 436, 437
Տաճառ վարդապետ ---------- 768, 780
Տարանովսկի -193, 194, 196, 199, 212, 213
Տեր-Աբրամով Գաբր ---------- 192
Տեր-Աբրամով Գրիգոր ---------- 192
Տեր-Ավագյան Գրիգոր քահանա (Բիձա)-234
Տեր-Ավագյան Միսակ ---------- 210
Տեր-Ավակով ---------- 507
Տեր-Ավետիքյան Ա. ---------- 674, 681
Տեր-Ավետիքյան Ստ. ---------- 576
Տեր-Գաբրիելյան Սահակ ---------- 597
Տեր-Գրիգորյան Արամ -------- 765, 776-779
Տեր-Գրիգորյան Մատթեոս ---------- 765
Տեր-Դանիելյան Միսակ (Արամայիս) ---- 52, 159, 163, 374-376, 395-397, 511, 642, 665
Տեր-Կարապետյան Գ. (Մշո Գեղամ, Տատրակ) ---------- 631
Տեր-Ղազարյան Ղազար ---------- 750, 751
Տեր-Ղազարյան Նարիման ---------- 187
Տեր-Ղուկասով ---------- 280
Տեր-Հակոբյան ---------- 504
Տեր-Հովհաննիսյան Հովհաննես -- 750, 751
Տեր-Հովհաննիսյան Ն. (Նիկոլ Դուման) - 63, 64-71, 96, 100, 161-168, 172-174, 245, 254, 255, 262, 263, 265, 312-315, 317, 340, 385, 465-468, 597, 644-646, 656, 659, 703
Տեր-Հովհաննիսյաններ ---------- 382
Տեր-Ղուկասով ---------- 644
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես (Ա.-Դ.Օ) - 19, 41, 52, 93, 157, 159, 189, 191, 201, 205, 225, 227, 235, 239, 242, 245, 358, 362, 363, 365, 368, 369, 413, 444, 450, 451, 453, 454, 459, 462, 504, 509, 682, 694, 695, 767
Տեր-Մինասյան Ռուբեն ---------- 69, 70, 358, 359, 603, 607, 614, 615, 622, 627-630, 632-634, 636, 637
Տեր-Միրաքյան ---------- 293
Տեր-Միքայելյան Խաչատուր վարդապետ - 765
Տեր-Միքայելյան Հայկ --- 96, 115, 187, 410
Տեր-Միքայելյան Ներսես վարդապետ -- 674
Տեր-Մկրտչյան Գասպար --- 71, 73, 96, 466
Տեր-Մկրտչյան Դավիթ ---------- 466
Տեր-Մկրտչյան Մ. ---------- 776
Տեր-Մովսիսյան Մեսրոպ վարդապետ -- 299, 730
Տեր-Պետրոսյան Գ. ---------- 674, 725
Տեր-Պետրոսյան Սիմոն (Կամո) ---------- 324
Տեր-Սահակյան Խոսրով ---------- 644
Տեր-Սահակյան Տիգրան ----- 256, 607, 628
Տեր-Սահակով ---------- 250, 254, 335
Տեր-Սարգսյան Նիկողայոս ---------- 589
Տեր-Ստեփանոսյանց Սիմոն քահանա -- 203
Տեր-Օհանյանց Հովհաննես քահանա -- 750
Տերտերյան Արսեն (Արշակունի) -------- 598
Տիգրան ---------- 634
Տիգրան Մեծ ---------- 5, 740
Տիգրանյան Սիրական -------- 754, 760, 765
Տիգրանյան Ս. Ֆ. ---------- 293
Տիզենհաուզեն -------- 167, 216, 236, 294, 332, 333
Տիմոֆեև ---------- 506
Տյուֆալչև ---------- 581
Տոլմաչով ---------- 420
Տոլստոյ Լ. Ն. ---------- 279, 737
Տոնիկյան Մինաս ---------- 615, 621-623
Տոնո Մակար ---------- 633, 634
Տոռոյան Փառանձեմ ---------- 95
Տրաուբենբերգ Ռաուլ ------- 294, 481, 492
Տրդատյան Տրդատ ---------- 187
Տրեպով ---------- 29, 33, 238, 720
Տրոցկի Լև ---------- 28
Տուրբախ ---------- 479, 503

Ռաֆֆի ---------- 170, 623, 624
Ռոբանովիչ ---------- 580, 581

Ցենֆեր ---------- 78
Ցիմբալով ---------- 462
Ցխա --------- 294, 487, 489, 491, 492, 501

Ուլուբաբյան Բագրատ ------- 371, 598, 604
Ուվարով ---------- 161, 255
Ուստուրկաուրի ---------- 156

Փալչյանց Արշակ քահանա ---------- 156
Փառանձեմ ---------- 601
Փատրմանյան Գարեգին --- 174, 402, 407, 408, 421, 423, 460, 479, 493, 495, 497-499, 504, 540, 541, 543, 544, 656, 697
Փարամազ (Սարգսյան Մատթեոս) ------ 248
Փարսադանյան Ա. ---------- 65
Փափազյան Վահան --- 172, 322, 602, 607, 611, 612, 614, 615, 618, 619, 621, 622, 625, 627, 628, 630, 632, 637, 644, 697, 734, 754, 770, 777, 784
Փիթոյան (Փիթոև) ---------- 104, 380
Փիլոյան ---------- 379
Փոլադով Խոսրով բեկ ---------- 369
Փորթուգալյան Մկրտիչ -------- 14, 30, 136, 324, 403, 405, 595, 663, 742, 743
Փոքրիկ Ղազար ---------- 96
Փոքրիկ Սերգեյ (Աղասի) ---------- 96

Քալանթար Ալեքսանդր Ա. ------- 102, 180, 293, 410, 502, 674, 679, 680, 682, 683, 765, 779, 781
Քալանթարյան ---------- 509
Քալանթարյան Լևոն ---------- 330
Քալանթարուներ ---------- 417
Քալիչ ---------- 583
Քաղազնունի Հովհաննես ---- 69, 115, 187, 421, 765, 775, 777, 780
Քաջբերունի ---------- 449, 450
Քարթլոս ---------- 531
Քարտաշյան Ս. ---------- 777, 780
Քեալբալահ Ցաղուբ-օղլի ---------- 113, 114
Քենտիրյան Վռամշապուհ (Էդուարդ) -573, 574, 579, 590
Քերիմ աղա ---------- 635
Քեփինյաններ ---------- 504
Քիյան Պիեռ ---------- 95, 320, 571, 576
Քիրս ---------- 562, 564, 581, 582
Քոչարյան Բ. ---------- 65
Քոչարյան Հովհաննես ---------- 96

Քրխտոս ---------- 749, 759
Քուչմանյան Պատվական ---------- 599
Քուրդ Արսեն ---------- 96, 163
Քուրդ Խեչո ---------- 316, 468, 469

Օգանեզովներ ---------- 517
Օղաբաշյան (Բարսեղյան) Գրիգոր, Նիկոլ, Սարգիս, Վանա Սարգիս ---- 321, 322, 463, 597, 613, 621, 624
Օգանյան Անդրանիկ -------- 171, 172, 314, 315, 317, 583, 596, 620, 621, 627, 628, 631, 632
Օլդենբուրգ ---------- 281
Օկու ---------- 17
Օհան ---------- 242
Օհանջանյան Համո --- 421, 423, 496, 497, 543, 697, 765, 775-778
Օհանջանյան Սարգիս ---------- 159, 608
Օպոչինին ---------- 509
Օստրոգորսկի ---------- 493
Օրլով ---------- 187
Օրմանյան Մաղաքիա արքեպիսկոպոս -249, 595, 750, 752, 785
Օրոյան Մանուկ ---------- 590

Ֆաղեև ---------- 378, 380, 381, 418, 419
Ֆաթուլլա Հաջի Բայրամ Ալի-օղլի -191-193
Ֆայիկ Օմար ---------- 385
Ֆայն Սամուել ---------- 567
Ֆարհատ տես Օհանջանյան Սարգիս
Ֆեհմի փաշա ---------- 583, 586
Ֆեխտ ---------- 665
Ֆլեյշեր ---------- 437, 440, 441
Ֆորեր Ֆրիդրիխ (Ֆրից) --------- 446, 447
Ֆրանցյան Երվանդ ---------- 578
Ֆրանս Անատոլ ---------- 30, 132
Ֆրեդերիկա ---------- 294
Ֆրեզե ---------- 273, 294
Ֆրեյլիխ ---------- 665, 666
Ֆրենկել ---------- 294

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբաղա ---------- 602
Աբրակունիս ---------- 201, 211
Ագարակ ---------- 242, 243
Ագուլիս ---------- 515
Ագուլիս գետակ ---------- 201
Ադրբեջան ---------- 111, 358, 359, 696
Ադրիանուպոլիս վիլայեթ ---------- 585
Ազադակ ---------- 225
Ազոխ ---------- 666, 667, 706
Ալաբաշը ---------- 438
Աթենք ---------- 563-566
Ալազոզ-Մազրա ---------- 201, 205
Ալահի ---------- 201, 212
Ալաշկերտ ---------- 169, 644
Ալաքլու ---------- 225
Ալեքսանդրապոլ (Գյումրի) - 157, 159, 167, 242, 245, 254, 255, 293, 304, 307, 313, 318, 355, 437, 465, 515, 553, 599, 602, 661, 674
Ալեքսանդրիա ---------- 222
Ալիբեկլու ---------- 459
Ալիղուլի ---------- 363-365, 661
Ալիճան ---------- 635
Ալիշան տես Երնջակ
Ալմալու ---------- 201, 211, 231, 233
Ալպուրի մեյդան ---------- 476, 482, 485
Ալվառինջ ---------- 172
Ալիլու ---------- 450
Ախալցխա ---------- 249, 304, 473, 693
Ախալքալաք ---------- 359, 437, 473, 603, 675, 692, 776
Ախլաթ ---------- 470, 558
Ախու ---------- 244
Ախտա ---------- 233, 644
Ակաուլտ ---------- 508
Ակն ---------- 29
Աղաբեկանց ձոր ---------- 369
Աղդամ ------ 367, 372-375, 396, 458, 550, 642, 643, 695, 710, 711
Աղեկ ---------- 706
Աղթամար -- 170, 617, 618, 622, 629, 632
Աղխաչ ---------- 201, 211
Աղոթարան լեռ ---------- 205
Աղջաբաղի ---------- 643
Աղջաղա ---------- 448
Աղստաֆա ---------- 445, 455, 458
Աղվանք ---------- 630
Աղուդի ------ 361, 462, 464, 465, 551-553
Աղթիլտա ---------- 459
Ամբարի ---------- 191
ԱՄՆ -------- 175, 304, 310, 319, 594, 663, 713-715, 779
Այար ---------- 225, 233
Այգեստան (Բաղմանլար) ---- 422, 427, 441
Այլաբաղ ---------- 191-193, 201, 205
Այնազուր ---------- 225
Այսրկովկաս տես Անդրկովկաս
Անգեղակոթ ---------- 467, 552, 553
Անգլիա ---------- 34, 127, 294, 648
Անգրսակ ---------- 242
Անդրկովկաս ---- 14, 19-22, 36, 39-42, 44, 52, 61, 83, 93, 94, 97, 98, 116, 118, 121, 128, 131, 134, 137, 143, 146, 148, 154-156, 162, 163, 177-179, 181, 182, 185, 186, 208, 238, 249, 251, 268, 269, 275, 277, 294, 295, 297, 298, 304, 309, 312, 318, 321, 325, 327-331, 333, 335-340, 346, 347, 353-355, 357, 358, 388, 394, 395, 406, 407, 423, 438, 442, 445, 474, 487, 491, 492, 506, 512-517, 519, 520, 525, 526, 529, 532-534, 543, 558, 595, 596, 600, 641, 647, 651, 654, 655, 657, 658, 660, 673, 675, 678, 692, 693-696, 703, 704, 714, 717
Անդրֆեդերացիա ---------- 82
Անենֆելդ ---------- 444, 445, 706
Աշտարակ ---------- 242-244, 308, 315
Աշուղ Ջիվանի սրճարան ---------- 486
Աչաշուր ---------- 455
Ապահունիք ---------- 631
Ապառաժ --- 162, 322, 422, 463, 669, 700
Ապարան ---------- 243, 663
Ապչերոն ---------- 54, 472
Առաջաձոր ---------- 367, 453
Առաջավոր Ասիա ---------- 5, 345
Առաղ ---------- 634
Առինջ ---------- 201, 205
Առվարինջ (Արվառինճ) ----- 556, 634, 635
Ասիա ---------- 210, 345
Ասկերան -174, 373-376, 395, 436, 642, 643
Ասորեստան ---------- 5
Աստրախան -- 70, 304, 308, 344, 647, 713
Ավարայր ---------- 609, 613
Ավդալ ---------- 395, 396
Ավդալար ---------- 705
Ավզաղբյուր ---------- 630
Ավստրիա ---------- 581, 583, 648
Ավտուր ---------- 706
Ատլանտյան օվկիանոս ---------- 184
Ատրպատական --------- 44, 123, 169, 188, 218-224, 238, 239, 607, 609, 610, 612, 613, 664, 744
Արաբիա ---------- 586
Արաբլու ---------- 611
Արագած (Ալագյազ) --------- 242, 359, 644
Արազին ---------- 201, 211, 704
Արաշ ---------- 706
Արարատ (Մասիս) ----- 339, 535, 611, 768
Արարատ. աշխարհ, Ա. երկիր, Ա. դաշտ -156, 162, 196, 205, 224, 340, 344, 351-353, 462, 621, 630, 644, 703, 761, 768
Արաքս -156, 189, 197, 200, 201, 205, 224, 240, 352, 353, 373, 471, 472, 609
Արգավանդ ---------- 557
Արգավանք ---------- 634
Արդաբիլ ---------- 127
Արեշ ---------- 357, 454, 553, 675, 693, 706, 713, 714, 776
Արթոնաշուր ---------- 448
Արխանգելսկ ---------- 554
Արմավիր ---------- 323, 324
Արտազ ---------- 609
Արտաձ ---------- 609
Արփա ---------- 225
Արփաչայ ---------- 225, 227
Արևելյան Այսրկովկաս տես Արևելյան Անդրկովկաս
Արևելյան Անդրկովկաս ------- 70, 339, 523
Արևելք ---------- 289
Արևելյան կայսրություն տես Թուրքիա
Արևելյան Հայաստան ---- 6, 170, 342, 587, 596, 630, 652, 738, 768
Արևիք ---------- 462, 471, 472
Արևմտյան Եվրոպա ---------- 571, 596
Արևմտյան Կովկաս ---------- 282
Արևմտյան Հայաստան -- 8, 20, 21, 71, 93, 132, 148, 169, 171, 295, 322, 342, 352, 371, 374, 463, 504, 554, 556, 558, 560, 587, 599, 603, 615, 621, 628, 630, 632, 637, 639, 661, 694
Արևմուտք ---------- 596

Բաղամլու ---------- 201, 206-208, 347, 654
Բաղաչիա ---------- 201
Բաղաքենդ (Բաղա) ---- 449, 450, 452, 654
Բազարչայ ---------- 462, 705
Բաթում ---------- 36, 41, 255, 304, 473, 516, 517, 533, 541, 545, 562, 648, 659, 661, 674, 695, 747
Բալախանի ------- 23, 62, 63, 74, 112, 143, 379-381, 383, 412, 416, 420
Բալիջի ---------- 508
Բալկաններ ---------- 560, 561, 585
Բահարլու ---------- 551
Բաղանիս ---------- 458
Բաղանիս-Այրում ---------- 459
Բաղեշ ---------- 616, 750
Բաղմանլար տես Այգեստան
Բաղվանլար ---------- 643
Բաղունց ձորեր ---------- 368
Բայազետ ---------- 353
Բայանդուր ---------- 364, 365
Բայիլով ---------- 415, 417, 418
Բանանց ---------- 326, 448
Բանազուր ---------- 462
Բաշ-Գառնի ---------- 645
Բաշկալա ---------- 611
Բաշկեչետ ---------- 508
Բաշնորաշեն ---------- 225, 352
Բաչքենդ ---------- 225
Բաչքենդ (Շամշադին) ---------- 445
Բասեն ---------- 169, 605, 613
Բարանա ---------- 458
Բարգյուշատ ---------- 471
Բարաթուր ---------- 448
Բարսում ---------- 252, 444
Բաքու ------- 15, 16, 19-24, 29, 36-38, 41, 43-49, 51, 53-57, 60-66, 68-74, 81-83, 86, 87, 90, 92-98, 100-113, 115-158, 162-164, 168, 175-177, 185-192, 199, 202, 207, 213, 216, 218, 219, 227, 228, 236, 239, 247, 252, 254-257, 259-263, 273, 275, 288, 289, 292-295, 302, 318, 321, 322, 325, 326, 330, 333, 335-342, 345-348, 351, 353, 356-358, 365, 366, 368, 371, 372, 374, 377-385, 387-390, 392, 398, 399, 407, 408, 410-414, 416, 418-420, 428, 434, 439, 445, 454, 455, 458, 465, 472, 474, 490, 517, 533, 540, 545, 547, 548, 553, 559, 562, 573, 599, 601, 602, 604, 607, 608, 611, 619, 621, 641, 646, 648, 650, 652-656, 659, 660, 662, 669, 672, 674, 676, 679, 690, 693, 695, 700, 706, 714, 726, 751, 757
Բեզուկլու ---------- 240
Բեթղեհեմ ---------- 735
Բելգիա ---------- 588, 590
Բելգիկա տես Բելգիա
Բելխ ---------- 471
Բեյուք-Վեդի ---------- 240
Բեռլին ---------- 7, 29, 136, 278, 562, 564

Բեսարաբիա - 268, 299, 308, 713, 774, 776
Բերդ ---------- 56
Բերդաքաղաք ---------- 86
Բզնով ---------- 232
Բզոմնա ---------- 46
Բիթլիս ---------- 558
Բիբի-Հեյբաթ (Բեյբաթ, Բիբեյբաթ) -23, 58, 59, 74, 77, 100, 108, 379-381, 383, 415-418, 420, 540
Բիլկեա ---------- 46
Բիստ ---------- 201, 212
Բյուզանդիոն ---------- 5
Բյուրակն ---------- 631
Բնունիա ---------- 470
Բոսլեպ ---------- 508
Բոստոն ---------- 785
Բորիսովկա ---------- 462
Բորչալու --- 473, 476, 478, 494, 495, 497, 503, 505, 508, 509, 511, 528, 675, 692, 695, 701
Բջնի ---------- 308
Բռնակոթ ---------- 360, 464, 467-470
Բրիտանիա (Մեծ Բրիտանիա) ---------- 127
Բրյուսել ---------- 130, 131
Բուզլուխ ---------- 449
Բուլգան ---------- 201, 202
Բուլղարիա -- 170, 279, 565, 567, 570, 583
Բուխարա ---------- 282

Գանձակ (Ելիզավետպոլ) -------- 41, 44, 48, 115, 131, 156, 162-164, 173, 224, 245, 247, 293, 294, 251, 252, 322, 326, 335, 339, 342, 357-359, 366, 367, 370, 376, 390, 397, 422, 426-446, 449, 453, 454, 459, 462, 465, 472, 473, 473, 476, 478, 503, 507, 515, 533, 544, 545, 553, 576, 599, 604, 643, 646, 652, 656, 658-660, 665, 671, 674, 675, 678, 679, 682, 685, 690, 692, 693, 698, 700, 705-711, 713, 714, 779
Գանձակ գետ ---------- 427, 448
Գառնի (Ազատ) գետ ---------- 240
Գեավաշ ---------- 616
Գեմրլու ---------- 233
Գենվազ ---------- 471, 472
Գեոկչա ---------- 155, 693
Գեոյ մեչիդ (Կապույտ մզկիթ) ---------- 159
Գեռաբեկ --------- 326, 451-453, 706, 695
Գեռաթաղ ---------- 551
Գեռաշեն ---------- 449
Գեռապ ---------- 612
Գերգեր ---------- 707
Գերենզուր ---------- 551, 705
Գերմանիա ---------31, 321, 371, 537, 648
Գժաձոր ---------- 201, 205, 313
Գիլան ---------- 612, 613
Գիլան գետ ---------- 200, 201, 212
Գիլաֆլու ---------- 395-397
Գիշի ---------- 666
Գյազ ---------- 201, 212
Գյավուր-Ղալա ---------- 368
Գյարմչաթաղ ---------- 232
Գյոմուր ---------- 201, 205, 206, 208, 313
Գյունեյ-Ճարտար---------- 666, 667
Գնդեվազ ---------- 225, 233
Գողթան (Գողթն) - 189, 201, 212, 621, 646
Գոմաձոր ---------- 605
Գոմել ---------- 39, 186
Գոչովկա ---------- 538
Գորի ---------- 418, 473, 541, 693
Գորիս -------- 95, 206, 253, 266, 361-364, 368, 370, 398, 410, 462, 464-466, 471, 550, 551, 553, 646, 658, 661, 671, 688, 705, 707, 712
Գվինեա ---------- 513
Գրգուռ ---------- 608, 632
Գրինգմուտ ---------- 129
Գուգարք ---------- 630
Գուլամբի ---------- 444
Գուրիա ---------- 36, 293
ս.Գևորգ եկեղեցի ---------- 191, 427
Գևորգյան ճեմարան ---------- 760

Դալի-Բաբա ---------- 605
Դալլար ---------- 444, 445
Դահրազ ---------- 706
Դաղստան -- 270, 282, 348, 353, 357, 473, 533, 693, 654
Դամազիրմազ ---------- 240
Դանիա ---------- 31
Դաշարխ ---------- 225
Դավալու ---------- 609
Դարաբաս --------- 71, 466, 471, 551, 552
Դարալագյազ --------- 174, 225, 227-234, 313-315, 359, 466, 467, 549
Դարդարան ---------- 449
Դեր ---------- 201, 212
Դերբենտ ---------- 695
Դիասար ---------- 201, 212
Դիզուվար ---------- 201, 204, 211
Դիզակ ---------- 373, 462
Դիլիջան ---------- 359, 455, 458, 460
Դմանիս ---------- 508
Դոզիլար ---------- 449
Դոլանլար ---------- 397

Դոնբաս ---------- 538
Դոնի Նոր Նախիջևան -------- 225, 226, 747
Դոնի Ռոստով ---------- 400, 538, 651, 652
Դվեղ ---------- 458
Դուշեթ ---------- 418, 473
Դուրան ---------- 629, 631, 632
Դուրան-Բարձրավանդակ -- 170, 557, 558, 628-632, 635-639

Եգիպտոս --- 151, 222, 304, 346, 559, 562, 713, 780
Ելզը --------- 346, 568-570, 579, 582-584, 587-589, 592, 594
Ելենենդորֆ ---------- 446
Ելիզավետպոլ գավ. ---- 326, 357, 427, 449
Ելիին (Էրզամին) ---------- 225, 233
Եկատերինենֆելդ ---------- 508
Եկատերինոսլավ ---------- 400
Եղվարդ ---------- 308, 663
Եռաբլուր Հարթավայր ---------- 361
Եվլախ ------ 322, 366, 367, 445, 550, 642, 710-712
Եվրոպա --- 7, 32, 107, 130-133, 136, 182, 256, 304, 320, 322, 324, 403, 407, 512, 555, 563, 581, 590, 738
Երեք Խորանի Թաղ ---------- 191
Երևիր ------- 234, 558, 560, 561, 568, 595, 596, 600, 601, 603, 605-613, 615, 617, 620-622, 626-629, 637-639
Երնջակ (Ալիջան) ---------- 200, 201, 211
Երուսաղեմ ---------- 751, 780
Երևան - 41, 44, 47, 48, 52, 131, 147, 156, 157, 159-169, 172-174, 186, 188, 192, 193, 198, 201, 202, 212-216, 219-221, 224, 225, 227-229, 234-242, 245, 247, 254, 255, 257, 262, 264, 273, 277, 293, 294, 296, 304, 308, 310, 312, 313, 315, 317, 318, 332, 333, 340, 342, 344, 350, 351-353, 357, 358, 365, 398, 422, 445, 454, 458, 462, 465, 466, 472, 473, 507, 508, 515, 533, 545, 548, 549, 553, 599, 602, 604, 608, 621, 641, 644, 645, 650, 652, 656, 659, 672, 674, 678, 679, 690, 692-696, 713, 750
Երևանյան Հրապարակ ------ 324, 473, 540

Զաբրաթ ---------- 100, 381, 412
Զաբուղ գետ ---------- 462
Զազալուի տափարակ ---------- 448
Զամբուղ ---------- 471
Զանգեզուր ---- 93, 94, 174, 189, 206, 224, 294, 313, 322, 342, 357-363, 365, 398, 410, 411, 462-466, 471, 472, 550, 551, 553, 604, 630, 645, 646, 659-663, 671, 675, 679, 688, 692, 703, 705, 707, 714
Զանգելան ---------- 471, 472
Զանջարլու ---------- 353
Զառ ---------- 240
Զարդանիա ---------- 606, 613
Զեգամ ---------- 445, 449
Զեյթուն ---------- 9
Զեյվա ---------- 363-365
Զլատոուստ ---------- 328
Զմյուռնիա ---------- 592
Զնաբերդ ---------- 201, 211
Զուբալովի քարվանսարա --------- 506, 597

Էդիլու ---------- 462
Էդինբուրգ ---------- 127
Էջմիածին (Վաղարշապատ) --- 47, 83, 100, 103, 124-126, 157, 166, 215, 218, 219, 221, 239, 242-245, 249, 250, 273-275, 294, 296, 299-301, 303, 304, 307, 308, 315, 400, 422, 434, 442, 599, 604, 618, 621, 648, 728-730, 735, 739, 741-747, 750, 753, 754, 758, 760, 761, 766-774, 781, 783-786
Էրզրում ---------- 29, 168, 352, 602, 606
Էրմենի բազար ---------- 454, 706
Էրմենիքենդ (Հայոց գյուղ) ---------- 70, 86
Էրքիզ ---------- 449

Թադեի (Թադեոս Առաքյալի) վանք- 609-613
Թազագյուղ (Թազա) ---------- 468-471
Թազաքենդ ---------- 225, 507
Թազաքենդ (Նախիջևան) ---------- 200-202
Թազաքենդ Թաղ ---------- 191, 214
Թաթար-Բազարչուկ ---------- 570
Թաթլի ---------- 455
Թալիշ ---------- 453
Թաղ ---------- 620, 623
Թաղամարդ ---------- 667
Թաղլար ---------- 666, 667
Թառաթումբ ---------- 233
Թավրիզ ---------- 124, 218-221, 226, 607, 609, 612, 613, 661
Թաքիա ---------- 242, 244
Թելավի ---------- 473, 516
Թելեթ ---------- 508
Թեհրան -123, 125-127, 220, 505, 612, 613
Թեոդոսիա ---------- 655
Թեղերապետ ---------- 250
Թեղրաբակ ---------- 240
Թերեք ---------- 473
Թթու ջուր աղբյուր ---------- 206

Թիոնեթի ---------- 473
Թիֆլիս - 36, 48, 56, 73, 87, 88, 93, 95-97, 102, 103, 111-113, 116, 119, 121, 122, 124, 126, 134, 135, 154-156, 161-163, 174, 179, 180, 185, 188, 193, 194, 196, 199, 212, 215-217, 219, 238, 247, 248, 254, 255, 262, 263, 270, 271, 273, 275, 284-286, 289, 290, 292-294, 296-303, 305-308, 319, 321, 329, 330, 351, 354, 357, 368, 370, 379, 391-394, 402, 404, 405, 407, 408, 421, 426, 430, 431, 434-440, 442, 443, 445, 454-456, 458-460, 472-484, 486-489, 491-496, 498-508, 510, 511, 515-517, 519-521, 524, 525, 527, 528, 532, 533, 535, 539-541, 543-545, 547, 549, 550, 553, 562, 599, 604, 607, 608, 610, 621, 641, 643, 648, 649, 652, 656, 657, 659, 660, 668, 670-672, 674, 675, 678, 690, 693-695, 697, 703, 705-707, 712-714, 717, 741, 754, 755, 759, 763, 783, 785
Թմբուլ ---------- 192, 200, 202-204
Թոուզ ---------- 455
Թոփ Կափու ---------- 568
Թոփալ-Հասանլու ---------- 427, 433
Թոփխանա տես Մեծ մեյդան
Թուլիխա ---------- 240
Թուրքահայաստան, Թուրքաց Հայաստան տես Արևմտյան Հայաստան
Թուրքեստան ---------- 277, 282
Թուրքի մեյդան -- 370, 476, 485, 493, 494
Թուրքմենստան ---------- 90
Թուրքիա - 7, 45, 119, 123, 127, 148, 171, 174, 199, 217, 239, 245, 280, 294, 325, 338, 344, 347, 350-352, 354, 356, 403, 460, 512, 534, 560, 573, 577, 584, 587, 588, 592, 594, 602, 606, 610, 611, 637, 648, 663, 695, 779, 785

Ժնև ---- 33, 181, 320, 338, 420, 561, 562, 571, 579-581, 584, 589
Ժլատ ---------- 323, 328

Իգդիր - 249, 250, 262, 352, 466, 650, 725
Իզմիր ------- 558, 559, 563, 567, 568, 570, 591, 592, 594
Իթղոան ---------- 201, 214, 231-234, 314
Իլանչալան ---------- 242-244
Իմարաթ ---------- 453
Իմերեթ ---------- 102, 308
Իջևան ---------- 327, 455, 458
Իսրայել ---------- 735
Իվանովո-Վոզնեսենսկ ---------- 188
Իտալիա ---------- 648
Իրիմիա ---------- 551
Իրկուտսկ ---------- 97

Լալի ---------- 459
Լաչին ---------- 705
Լառվիա ---------- 181
Լեհաստան ------ 23, 25, 40, 131, 183, 185, 284, 388, 410, 640, 789
Լեհվազ ---------- 472
Լենքորան ---------- 155
Լեռնային Դարալագյազ ---------- 224
Լեռնային (Հյուսիսային) Նախիջևան -- 174, 205, 234, 313, 314, 318, 466
Լեռնային Ղարաբաղ -- 163, 174, 243, 253, 308, 359, 707
Լեռնապար -------- 600, 615-619, 621, 625, 627-629, 638, 639
Լեռնաստան ---------- 327
Լիբանան ---------- 740
Լիսագոր ---------- 707
Լիվադիա ---------- 31
Լծեն ---------- 551
Լյասյան ---------- 17
Լոռ ---------- 29, 185
Լոնդոն ---------- 29, 127, 136, 585
Լոռի --- 162, 359, 459, 509, 510, 533, 686
Լոր ---------- 551
Լուզանսկ ---------- 538
Լուխ ---------- 232

Խալիլու (Խիլալու) ---------- 200, 204
Խալխալ ---------- 201, 204, 205
Խանաբադ ---------- 374
Խանասոր ---------- 9, 162, 164, 169, 234
Խանի աղջկա աղբյուր ---------- 372
Խանի մեչիդ ---------- 159
Խանի քարվանսարա ---------- 191
Խանլղը բաղ (Խաների այգեստան) ----- 158
Խանլուխալար ---------- 225-227
Խանքենդ ---------- 643
Խաչակապ ---------- 448
Խաչեն ---------- 367, 373-376, 707
Խաչեն գետ ---------- 707
Խաչիկ ---------- 225
Խարբերդ ---------- 29
Խարկով ---------- 399, 406, 538
Խարս ---------- 629, 634
Խարփուղ ---------- 504
Խիզան ---------- 616, 623
Խնածախ ---------- 705, 706
Խնձորեսկ ----- 94, 361, 362, 410, 661, 662
Խնձորուտ ---------- 616
Խնուշինակ ---------- 666
Խնուս ---------- 631, 635
Խոզնավար -------- 363-365, 410, 550, 705
Խոկ ---------- 201
Խոյ ---------- 609, 610, 619
Խոյլար ---------- 448
Խոջալու ---------- 375
Խոջահան ---------- 472
Խորասան ---------- 126, 613
Խորհրդային Հայաստան ---------- 82
Խորվիրապի վանք ---------- 245
ԽՍՀՄ ---------- 82
Խրամորթ ---------- 374, 643

Կազան ---------- 19, 344, 348, 647
Կազանսկի տաճար ---------- 24
Կազարմա Թաղ ---------- 368
Կազբեկ ---------- 339, 535
Կալկաթա ---------- 222
Կաղզվան ---------- 304, 661, 692
Կասպից ծով ---------- 70, 271, 612
Կարաբիրին ---------- 643
Կարայազ ---------- 507, 508
Կարաչուգ ---------- 201, 202
Կարաքենդ ---------- 706
Կարբի ---------- 242, 243
Կարթագեն ---------- 547
Կարին ---------- 170
Կարկառ ---------- 616, 623
Կարկառ գետ ---------- 374, 611
Կարճկան ---------- 616
Կարճևան ---------- 201, 212
Կարճևան գետակ ---------- 201
Կարմիր Վանք ---------- 201, 205
Կարյագինո ---------- 357, 671
Կարս (Ղարս) ---------- 41, 121, 156, 169, 242, 246, 249, 251, 304, 344, 353, 355, 473, 515, 533, 600-608, 613, 619, 652, 661, 672, 674, 692
Կելիեկյուզան ---------- 556
Կենտրոնական Հայաստան ---------- 602
Կեորեն դաշտ ---------- 616
Կեցան ---------- 616
Կզնութ ---------- 201, 211
Կիանեթ ---------- 508
Կիլիկիա ---------- 558, 561
Կիլովոդսկ ---------- 303
Կիրանց ---------- 448
Կիրշմալի ---------- 643
Կիև ---------- 97, 399, 406
Կծուսկի ժայռեր ---------- 632
Կճողուտ ---------- 453
Կյուլտան ---------- 352
Կնիշիկ ---------- 225
Կնյաժնոյ ամառանոց ---------- 571
Կոդա ---------- 508
Կոթի ---------- 455, 458
Կոթուր ---------- 242, 609, 611
Կողբ ---------- 422, 455
Կոնգուրո-Ալանգյազի լեռնաշղթա ----- 200, 201, 212
Կոնդ Թաղ ---------- 157, 159
Կոչ ---------- 243
Կոշոր ---------- 248
Կոսալի ---------- 507
Կոստանդնուպոլիս (Կ.Պոլիս, Ստամբուլ) - 8, 9, 29, 123, 170, 249, 328, 345, 346, 351, 352, 356, 357, 403, 405, 410, 473, 558-560, 562-567, 570, 579-582, 584-588, 592, 595, 630, 713, 750, 751, 785
Կովկաս - 15, 19, 21-23, 25, 35, 36, 40-43, 45, 46, 50, 54, 55, 87, 88, 97, 102, 103, 107, 111, 119, 120, 127, 129, 131, 132, 135, 136, 140, 146-148, 151, 154, 168-175, 179, 182, 183, 186, 189, 190, 207, 212, 216, 218, 219, 222-224, 226, 247-250, 252-256, 259, 260, 266-277, 279-289, 291-295, 297-300, 312, 318, 320-322, 332, 333, 342, 344-351, 353-354, 356, 359, 371, 376, 385, 386, 388, 391, 394, 402, 406, 411, 420-426, 429, 434, 438, 439, 455, 456, 460, 473, 474, 477, 478, 495, 496, 501, 502, 506, 511, 513, 517-520, 526-529, 532, 534, 535, 539, 542, 545-547, 554, 561, 575, 595, 599, 606, 611-613, 620, 621, 623, 625, 627, 632, 635, 637, 641, 648, 651, 652, 654, 662, 663, 667, 668, 670-672, 677, 678, 688, 690, 695, 697, 702, 714, 715, 724-726, 731, 738, 767, 768, 778, 783-785, 787, 788
Կովկասյան լեռներ ---------- 35, 270, 740
Կոմնոյ ---------- 35
Կոտայք ---------- 312, 645
Կորեա ---------- 310
Կորսո ---------- 513
Կոռոտ Մազրա ---------- 314
Կռվածաղիկ ---------- 631
Կվիրիլի ---------- 648
Կտուց ---------- 622
Կրզեն ---------- 459
Կրոնշտադտ ---------- 406

Կուլի բեկ-դիզա ---------- 200, 202
Կուսիա ---------- 508
Կուսապատ ---------- 453
Կուր (Քուռ) - 373, 357, 427, 454, 473, 479
Կուրսկ ---------- 406

Հազարո ---------- 398
Հաղբատ ---------- 550
Հալա ---------- 616
Հախում ---------- 455
Հաղորտի ---------- 667
Համադան ---------- 224
Համամլու ---------- 242
Համզալու ---------- 361
Համիդիե մզկիթ ---------- 569, 582
Հայ-Սողանլուխ ---------- 508
Հայաստան ----- 5, 6, 8, 10, 11, 36, 82, 97, 106, 131, 148, 170, 264, 278, 356, 359, 389, 469, 513, 557, 575, 595, 603, 608, 621, 652, 696, 740, 742, 743, 754, 786
Հայաստանի Հանրապետություն --- 83, 111
Հայդար փաշա թաղ ---------- 587
Հանդ ---------- 471
Հանդամեջ ---------- 201, 212
Հաջալի ---------- 459
Հաջի-Բերիմբեկլու ---------- 679
Հաջիլ ---------- 550
Հաջիվար ---------- 200, 202
Հաջիքենդ ամառանոց ---------- 252
Հասանքենդ ---------- 225
Հավարիկ ---------- 454, 706
Հավլաբար -- 473, 475, 476, 479, 503, 505
Հարար ---------- 364, 365
Հեռավոր Արևելք - 14, 21, 22, 24, 25, 184, 310, 345, 347, 401
Հերհեր ---------- 225, 233
Հին աշխարհ ---------- 5
Հին գերեզմանոց (Հին Հանգստարան) - 368, 369, 372
Հին Զեգամ ---------- 445
Հին Նախիջևան -- 188, 190, 191, 249, 254, 255, 473, 525
Հյուսիսային Արցախ ---------- 707
Հյուսիսային Աֆրիկա ---------- 346
Հյուսիսային Կովկաս -- 116, 321, 323, 324, 328-331, 647, 651, 654, 655, 660
Հյուսիսային Պարսկաստան - 123, 462, 472
Հնդկաստան ------ 127, 222, 304, 346, 713
Հնդկական օվկիանոս ---------- 184
ս. Հովհաննես եկեղեցի ---------- 428, 430
Հոփոի շրջան ---------- 631
Հորադիզ ---------- 201, 211
Հորդանան ---------- 735

Հորս ---------- 549
Հռոմ ---------- 5, 479
Հրազդան գետ ---------- 159
Հրազդանի ձոր ---------- 398
Հրեաստան ---------- 740
Հունաստան -------- 83, 564, 565, 584, 588
Հունգարիա ---------- 82

Զամձոր ---------- 462
Զորագյուղ թաղ ---------- 157, 159

Ղաթարի հանքեր ---------- 266
Ղազախ -243, 326, 327, 357, 358, 455, 456, 458-461, 473, 510, 659, 674, 675, 692
Ղազախ գյուղ ---------- 451, 452
Ղազանչեցոց եկեղեցի ---------- 369
Ղազանչի ---------- 201, 211
Ղազար գյուղ ---------- 550
Ղալա թաղ ---------- 220
Ղալաչա ---------- 455, 458
Ղալաչի ---------- 242
Ղահաբ ---------- 201
Ղամարլու ---------- 240
Ղամլուղ ---------- 368
Ղայբալի ձոր ---------- 368
Ղայբալիչեն ---------- 643
Ղարաբաբա ---------- 201, 205
Ղարաբաղ (Արցախ) -- 321, 339, 353, 358, 359, 365-367, 373, 375-377, 395, 422, 427, 450, 462, 463, 465, 597, 598, 600, 601, 604, 621, 624, 642, 643, 646, 661, 665, 666, 668, 669, 679, 700, 703, 706, 707, 710, 712, 713
Ղարադաղ ---------- 462, 471
Ղարադաղլու ---------- 448
Ղարախանբեկլու ---------- 200, 202
Ղարախաչա ---------- 509
Ղարաղշաղ (Ղալադարաս) - 398, 550, 707
Ղարաչայ ---------- 448
Ղարաֆիրուլաղ ---------- 240
Ղարաքիլիսա ---------- 307, 508
Ղարբանդ ---------- 711
Ղարնի-Յարըղ ---------- 242
Ղափան ----- 253, 266, 462, 466, 471, 472
Ղզդրմա աղբյուր ---------- 191
Ղզլաղաջ ---------- 636
Ղոթուր ---------- 242, 243
Ղոյթուր ---------- 225
Ղոչա-Դիզա ---------- 201, 202
Ղոշղոթան ---------- 458
Ղրիմ ---------- 31, 340, 647, 655
Ղրխբուլաղ ---------- 312, 750
Ղուբայի հրապարակ ---------- 56, 90, 91

Ղուբի Մեյդան մինարեթներ ---------- 86
Ղուլթիկ ---------- 750
Ղունիբ ---------- 270
Ղուշղարա տես Արթոնաֆուր
Ղուշչիլար (Ղուշչի բելակ) ---------- 225

Ճապոնիա ---------- 13, 14, 17, 107, 184, 310, 311, 345
Ճոճովանք ---------- 458

Մաղաթյան կղզի ---------- 481
Մազանլու ---------- 374, 459
Մազրա ---------- 204, 360
Մազրդի ---------- 706
Մազրդա ---------- 454
Մալիշկա ---------- 225, 233, 549
Մակեդոնիա ---------- 585
Մակու ---------- 191, 350-352, 609
Մամա-Դավիթ բուսաբանական այգի -- 482
Մամաթավա (Նեմեյթաբադ) ---------- 706
Մամարզա-դիզա ---------- 200-202, 204
Մամորզադիզ ---------- 352
Մամրտանք ---------- 616
Մանաշեթ ---------- 449
Մանգյուս ---------- 240
Մանչուրիա ---------- 17, 184, 310, 311
Մաշտաղա ---------- 46
Մառնիկա ---------- 633
Մաստարա ---------- 308
Մարաղա ---------- 453
Մարաշ ---------- 324
Մարավի ---------- 609
Մարդաքեան ---------- 46
Մարզարանի հրապարակ ---------- 569, 582
Մարիամյան դպրոց ---------- 373
Մարսել ---------- 14, 30, 136, 324
Մարտիրոս ---------- 225, 230, 232, 233
Մեծ մեյդան շուկա (Թուխանա) -- 369, 370
Մեծ քաղաք տես Թիֆլիս
Մեծագույն Տարոն ---------- 558
Մեղրի ---------- 462, 471
Մեյդան ---------- 499, 504
Մենավոր տես Թադեի վանք
Մեշհեդ ---------- 126
Մեվրիշեն ---------- 706
Մետեխի բանտ ---------- 254, 407, 498, 540
Մերձավոր արևելք ---------- 345
Մերձբալթիկա ---------- 406, 640
Միզրիկ ---------- 448
Մինարեթ ---------- 613
Մինքենդ ---- 362-365, 395, 449, 465, 552, 654, 706
Միջերկրական ծով ---------- 356

Միրաշալու ---------- 395-397
Մոլլա-Ջալու ---------- 427, 433, 435
Մոկս ---------- 616, 623
Մոսես ---------- 455
Մոսկվա -------- 34, 35, 129, 135, 235, 236, 238, 320, 321, 399, 400, 409, 506, 537, 538, 543, 545, 548, 640, 653, 668, 713
Մորոլ ---------- 444
Մռավ ---------- 448
Մսրվան ---------- 201, 212
Մրգաստան ------- 159, 162, 228, 254, 644
Մուժամբար ---------- 221
Մուկդեն ---------- 17, 24, 25, 184
Մուղան ---------- 695
Մուղանլու ---------- 679
Մուղնի ---------- 242, 243, 308
Մուշ, Մշո աշխարհ, Մշո դաշտ --- 172, 322, 374, 556-558, 632, 634
Մուրադբեկլու ---------- 643
Մուրուզ ---------- 448

Ցալու ---------- 17
Ցամխանա ---------- 194, 200, 203, 204
Ցայլի ---------- 410, 465
Ցարբմջա ---------- 200, 204
Ցարմա ---------- 370

Նազարաբադ ---------- 201, 204, 211
Նազարլի ---------- 507
Նազրվան ---------- 242-244
Նալբանդ ---------- 328
Նախալովկա ---------- 540
Նախիջևան - 115, 157, 174, 189-202, 208, 210, 212-219, 224, 227, 228, 230, 231, 235, 239, 241, 245, 249, 254, 255, 294, 308, 312, 313, 322, 340, 342, 344, 347, 350-354, 356, 362, 422, 462, 506, 548, 553, 608, 609, 621, 630, 674, 703, 704, 730
Նախիջևան գետ -------- 200-202, 204, 205
Նախիջևանիկ ---------- 643
Նավթլուղ ---------- 494, 535
Նեհրամ ---------- 201
Նեմեթաբադ ---------- 454
Նեմրութ ---------- 632
Նեղեֆ ---------- 123
Ներսիսյան դպրոց ---------- 463
Ներքին Ագուլիս ---------- 201, 212
Ներքին Ազա ---------- 201, 212
Ներքին դռներ ---------- 369
Ներքին կարմիր աղբյուր ---------- 455
Ներքին հայոց ձոր ---------- 616
Ներքին Քարհատ ---------- 448
Նիժեգորոդակ ---------- 434

Նիցցա ---------- 320
Նյու Հեմփշիր ---------- 310
Նյու Յորք ---------- 175
Նովոշերկասկ ---------- 250
Նովոռոսիյսկ ---------- 268
Նոր Բայազետ ---- 157, 224, 228, 239, 242, 245, 319, 437, 658
Նոր Նախիջևան -- 130, 397, 641, 713, 751
Նոր Ջուղա ---------- 612
Նորաշեն ---------- 201, 211, 449, 706
Նորս ---------- 201, 205, 313, 314
Նորս-Գյումուր ---------- 313
Նորս-Մազրա ---------- 201, 205
Նուզվեր ---------- 444
Նուխի ------- 115, 155, 156, 357, 443, 472, 553, 674, 675, 693, 776
Նևա ---------- 30, 31

Նախե ---------- 17
Նահապետյաց ձոր ---------- 201
Նահ ---------- 505, 613
Նահ-Աբբասի մզկիթ ---------- 431
Նահար ---------- 157
Նահբուզ ---------- 201
Նահստան տես Պարսկաստան
Նաղաթ ---------- 360
Նամ - 607, 614, 615, 617, 619, 620, 626-629
Նամախի - 46, 56, 72, 88, 93, 94, 100, 155, 304, 308, 434, 525, 675, 693, 713
Նամախինկա ----- 58, 71, 73, 86, 89-91, 98
Նամախու-ճամփա ---------- 88
Նամբ ---------- 551
Նամխոր գետ ---------- 444
Նամշադին --- 326, 327, 454-456, 458, 459
Նատախ (Տիդան), Նատախի լեռներ --- 607, 614-616, 623
Նարուր ------ 174, 215, 224-228, 352, 422
Նարուր-Դարալագյազ ------ 157, 189, 217, 224, 225, 227, 239, 245, 294
Նաքի ---------- 464, 551, 553
Նելլի ---------- 643
Նելլու ---------- 374
Նեխեր ---------- 667
Նեյթան բազար թաղ -------- 473, 478, 482
Նենթաղ ---------- 157
Նեքի ---------- 339
Նիբահի նավթահանք ---------- 417
Նիդան ---------- 616
Նիլլի ---------- 582
Նինաթաղ ---------- 551
Նինուհայր ---------- 462, 466
Նիվալան ---------- 46
Նիվանի ձոր ---------- 471

Նիրակ, Նիրակի դաշտ ------- 164, 352, 462
Նիմամուտ -------- 200, 202, 204, 205, 210
Ննձոր ---------- 616
Նոչ ---------- 643
Նորբուլաղ ---------- 240
Նվեյցարիա ---------- 648
Նուլավեր ---------- 674
Նուչի - 48, 82, 93, 94, 131, 162, 163, 174, 252, 253, 276, 277, 293, 321, 322, 324, 342, 357, 365-368, 370-378, 387, 392, 395, 398, 422, 430, 431, 435, 449, 453, 462, 463, 465, 515, 550, 553, 596, 597, 599-602, 604, 607, 621, 642, 643, 656, 658, 659, 668, 671, 674, 675, 686, 692, 705-707, 710-712, 725
Նուռութ ---------- 201, 212
Նուռութ գետ ---------- 200, 201, 212

Ոզմ ---------- 616
Ոսկանապատ ------ 16, 105, 162, 241, 255, 448, 559, 607
Ոսկեբաղ ---------- 458
Ոսկեհանք --------- 563, 567, 568, 591, 592
Ովասիս ---------- 631
Որոտ ---------- 551, 553
Որոտան գետ ---------- 551

Զաթմա ---------- 232
Զայլիլար ---------- 449
Զայլու ---------- 427, 433, 435
Զանախչի ---------- 706
Զանախչի գետ ---------- 240
Զարդախլու -------- 449, 451-453, 643, 706
Զգուռի Խարս ---------- 557
Զեմբերեքենդ ---------- 56, 66, 88
Զերնիգով ---------- 406
Զինաստան ---------- 513
Զինգլ ---------- 602
Զիվա ---------- 233
Զիվանդարա ---------- 353
Զոբանքյարա ---------- 242
Զոհուր Գյադուկ ձորակ ---------- 169
Զովդար ---------- 448
Զրաղանի պալատ ---------- 586

Պաղեստին ---------- 594
Պաս ---------- 750
Պարապետի հրապարակ ---- 15, 53, 58, 65, 70, 71, 116, 256-258, 371, 413
Պարսկահայք նահ. ---------- 609, 611
Պարսկական Ատրպատական ---------- 612
Պարսկաստան ---- 5, 11, 20, 123-127, 156, 189, 191, 193, 196, 217-219, 222-224, 224, 226, 234, 239, 240, 246, 248, 304, 338, 348, 350-352, 356, 357, 384, 430, 471, 504, 505, 512, 562, 608, 610-613, 615, 643, 663, 664, 695, 713, 740, 779
Պետերբուրգ ----- 17, 24-26, 28-31, 33, 34, 41, 44, 54, 93, 96, 103, 107, 110, 119, 129, 131, 133, 135, 137-140, 160, 182, 184, 188, 192, 198, 236, 237, 238, 240, 248, 249, 253, 260-262,266,267-269, 275, 276, 279-281, 284-286, 288, 289, 292, 299, 300, 302, 303, 357, 370, 398-401, 406, 442, 506, 513, 519, 535, 538, 547, 553, 594, 604, 640, 647, 654, 668, 690, 713, 724, 745
Պետերհոֆ ---------- 31, 402, 788, 789
Պիեռա ---------- 584
Պիրեյ ---------- 564, 565
Պիպա ---------- 459
Պլովդիվ ---------- 565
Պյատիգորսկ ---------- 64, 257, 328
Պողոս-Քիլիսա ---------- 455
Պորտ-Արտուր ---- 13, 17, 24, 25, 310, 345
Պորտսմուտ ---------- 310, 311, 345, 353
Պրուսիա ---------- 31
Պուլանրիս ---------- 631

Ջահրի ---------- 464
Ջահրի (Ջահուկ) ------ 201, 204, 208, 210, 211, 231, 354
Ջահրի (Ջահուկ) գետ ---------- 200, 201, 208, 211, 214
Ջավախք ---------- 162, 533
Ջարխեզ (Շարխայ) ---------- 455
Ջաֆարլի ---------- 459
Ջեբրայիլ --------- 364, 397, 462, 643, 693
Ջիլիմլու ---------- 550
Ջիվանշիր --------- 224, 357, 457, 693, 707
Ջրաբերդ ---------- 251, 600, 603
Ջրհոր գյուղ ---------- 632
Ջրվեժ ---------- 240
Ջուլ ---------- 227, 228, 233
Ջուլֆա ---------- 189, 219, 221, 294, 554
Ջուլֆի ---------- 201, 211
Ջուսա մեչիդ ---------- 156
Ջևաթի ---------- 679

Ռամիս (Բամիս) ---------- 201, 212
Ռատևան ---------- 508
Ռեչտ ---------- 127
Ռիզա ---------- 185, 400
Ռինդ ---------- 225, 234, 549
Ռոմանի ---------- 74, 379, 380
Ռոստով ---------- 130, 288, 321, 490
Ռումինիա ---------- 562, 588
Ռուսական կայսրություն տես Ռուսաստան, Ռուսահայաստան, Ռուսական Հայաստան, Ռուսաց Հայաստան տես Արևելյան Հայաստան
Ռուսաստան --- 6, 7, 11, 13, 14, 17-22, 24, 26, 30-35, 40, 49, 54, 69, 70, 97, 102-105, 107, 110, 111, 116, 118, 119, 123, 127-130, 132, 133, 135, 137, 140, 146, 148, 179, 180, 182-186, 199, 207, 217, 224, 254, 256, 267-272, 277-280, 283, 288, 289, 291, 293, 295, 297, 304, 309, 310-312, 319, 320, 324, 327, 328, 331, 339, 341, 344, 345, 347, 349, 351-353, 356, 357, 376, 385, 387, 388, 393, 399-409, 420, 423, 426, 429, 430, 477, 506, 512, 513, 528, 529, 532-534, 536-538, 542, 543, 554, 557, 584, 588, 589, 594, 596, 600, 610, 611, 617, 641, 647, 648, 650-655, 660, 662, 692, 694, 695, 718, 720-722, 724, 725, 738, 753-755, 760, 763, 764, 774, 776, 778, 789

Սաբունչի ----- 74, 100, 143, 379, 380, 412
Սաբուրթալա ---------- 535
Սագարակի հարթություն ---------- 224
Սալմաստ ---------- 169, 170, 234, 609, 611-613, 615, 619
Սալնո ձոր ---------- 558
Սալվարդ սար ---------- 201
Սախալին ---------- 184, 310
Սահակյանի շրջ. ---------- 631
Սաղմոսավանք ---------- 242-244
Սամաթխա ---------- 473
Սամտրեդի ---------- 500
Սասուն --------- 9, 41, 169-172, 247, 251, 342, 351, 352, 374, 555-559, 583, 596, 600, 605-608, 613, 627, 629, 631-634, 637, 639
Սարատով ---------- 399, 400, 720
Սարդարապատ ---------- 422
Սարբաուն ---------- 449
Սարիղամիշ ---------- 661
Սարով ---------- 448
Սաքսոնիա ---------- 31
Սեբաստիա ---------- 558, 562
Սեմալ ---------- 556
Սեյիդլու ---------- 374, 643
Սեա ---------- 201, 211, 233
Սիբիր ------- 107, 194, 256, 266, 276, 277, 344, 640, 647

Սիմֆերոպոլ ---------- 111
Սինայ ---------- 735
Սիոն ---------- 735
Սիս ---------- 780
Սիսիան - 71, 174, 205, 313, 314, 360, 361, 462, 464-471, 551, 552, 646, 705
Սիփան սար ---------- 608
Սլավյանկա ---------- 452
Սկոբելևկա ---------- 667
Սղերդ ---------- 616
Սղնախ ---------- 473
Սյունիք ---------- 252, 253, 419, 465, 467, 661, 662, 730
Սոգություն ---------- 453, 643
Սոլդատսկի բազար թաղ ---------- 473, 540
Սոլոլակ ----- 407, 473, 478, 481, 483, 495
Սոլուխ ---------- 636
Սոխակյանի շրջան ---------- 631
Սողանլախ ---------- 494
Սոս ---------- 667, 670
Սորմովո ---------- 538
Սոֆիա ------ 322, 559, 561, 562, 565-567, 571, 574, 577, 579-581, 584, 585
Սպարկետ ---------- 616
Սպիտակ դահլիճ ---------- 687
Սպիտակ քաղաք ---------- 23
Սվեաբորգ ---------- 406
Ստոկհոլմ ---------- 540
Սուլթանբեկ ------ 201, 211, 231, 232, 315
Սուլթանբեկի անտառ ---------- 707
Սուխոյ ֆոնտան ---------- 645
Սուվալկ ---------- 388
Սուվորովյան հրապարակ ---------- 27
Սուրբ Լուսավորչի Աթոռ տես Էջմիածին
Սուրմալու -- 157, 239, 240, 242, 249, 250, 422, 644, 674
Սև ծով ---------- 271, 694
Սև քաղաք շրջան ----- 23, 58, 62, 383, 418
Սևանա լիճ, Սևան ---------- 359, 458, 460
Սևաստոպոլ ---------- 406
Սևքար ---------- 455, 457, 459, 461

Վահագնյանի շրջ. ---------- 631
Վահրակերտ ---------- 201, 212
Վաղարշապատ ---------- 244, 661
Վաղուդի ---------- 361, 462, 464, 551-553
Վայոց ձոր ---------- 228, 231, 234
Վան ---- 29, 169, 170, 172, 352, 463, 558, 602, 607-609, 611-615, 618-620, 622-630, 632, 638
Վանա լիճ, Վ.ծով ---------- 600, 616, 630
Վանանդ գետակ ---------- 201
Վանք ---------- 453
Վաշլովան ---------- 508
Վառնա ---------- 561, 565-567
Վասպուրական -9, 170, 322, 463, 558, 595, 600, 602, 607, 612-615, 616, 619-621, 623-625, 627-630, 638, 639
Վարազաբուն ---------- 643
Վարանդա --- 373-376, 395, 601, 665-671, 703, 712-714, 725
Վարմազյար ---------- 225
Վարշավա ---------- 29, 185, 188, 406
Վաֆանգրու ---------- 17
Վեղի գետ ---------- 240
Վերա թաղամաս ---------- 478
Վերին Ագուլիս ---------- 201, 212
Վերին Ազա ---------- 201, 212
Վերին գյուղ ---------- 556
Վերին դռներ ---------- 368
Վերին Կովկաս տես Հյուսիսային Կովկաս
Վերին հայոց ձոր ---------- 616
Վերին Շեն ---------- 361
Վերին Զայլու ---------- 453
Վերին Ուզուն-Օբա ---------- 200, 204
Վիեննա ---------- 136, 581, 584, 615
Վիլնո ---------- 554
Վիոոչ լեռ ---------- 571, 573, 579
Վլադիկավկազ ---------- 116, 273, 328-330
Վլադիվոստոկ ---------- 184, 406, 554
Վոլկովիչյան ճյուղ ---------- 388
Վրաստան ----- 36, 82, 102, 104, 122, 179, 182, 264, 265, 293, 308, 339, 359, 474, 477, 512, 515, 516, 518, 519, 523, 525, 528-531, 534, 535, 539, 541, 543, 641, 652, 693, 696, 703, 726
Վրեժ ---------- 607, 612
Վրեժստան տես Ատրպատական

Տաթև ---------- 206, 365, 465, 466
Տալվոր ---------- 556
Տաճկաստան տես Թուրքիա
Տաճկահայաստան տես Արևմտյան Հայաստան
Տամբլու ---------- 663
Տանակերտ ---------- 201, 212
Տաչքենդ ---------- 406
Տարոն ---------- 170, 314, 556, 557, 558, 602, 622, 630-637, 639
Տատիկ ---------- 750
Տափիկ ---------- 556
Տեղ ---------- 364, 410, 550, 705, 706
Տղմուտ ---------- 609
Տոլմա-Բախչա պալատ ---------- 568
Տող ---------- 666, 706
Տոմ ---------- 636
Տվեր ---------- 409
Տուլա ---------- 328, 399
Տումի ---------- 667
Տուրուբերան ---------- 558

Ցարսկոյե Սելո ---------- 31, 32, 594
Ցածի մեյդան ---------- 369
Ցախի մեյդան թաղ ---------- 158
Ցախուտ ---------- 327
Ցղնա ---------- 201, 212
Ցղնա գետակ ---------- 201
Ցուսիմայի նեղուց ---------- 184

Ուզուն-Օբա տես Վերին Ուզուն-Օբա
Ուզունթալա ---------- 455, 458
Ուլիանորաշեն ---------- 225, 226
Ուլուխանլու ---------- 240
Ուվրաինա ---------- 25, 640
Ումուտդու ---------- 453, 454
Ուշի ---------- 242-244
Ուրմիա ---------- 196, 609, 613
Ուրմիո լիճ ---------- 611
Ուրֆա ---------- 168
Ուսիլիա-Ցիխե ---------- 523

Փաթրինջ ---------- 242
Փամբակ ---------- 459
Փաշալու ---------- 225, 227, 230, 233
Փառակա ---------- 201, 212
Փառաց տաճար ---------- 473
Փարաքար ---------- 244
Փարբի ---------- 242, 243
Փարիզ ------- 29, 30, 32, 95, 83, 130-132, 136, 181, 183, 199, 270, 282, 304, 320, 571, 580, 581, 589
Փարոս ---------- 611
Փարչի ---------- 225
Փեթար ---------- 635
Փեսան դաշտ ---------- 616
Փիբ ---------- 448, 709
Փիլիպե (Ֆիլիպե) ------ 565, 570, 571, 589
Փիրջամալ ---------- 643
Փոթի ---------- 36
Փոյլի կայարան ---------- 446
Փոռ ---------- 225, 232
Փորաղաչտ ---------- 201, 212
Փոքր Ասիա ---------- 61, 279
Փոքր Հայք ---------- 630

Քաղաքիկ ---------- 201, 212
Քամու ջրաղացի թաղ ---------- 368
Քանաքեռ ---------- 167, 244, 645
Քանդակ ---------- 706
Քասախ ---------- 242
Քարազլուխ ---------- 233
Քարահատ կիրճ ---------- 369
Քարահունջ ---------- 93, 95
Քարհատ ---------- 448
Քափազ սար ---------- 448
Քեամալ ---------- 240
Քեանդխուրդ ---------- 706
Քեչիչքենդ ---------- 225, 232, 233
Քեչտազ ---------- 225
Քեչիկքենդ ---------- 242, 243
Քերմանշահ ---------- 224
Քիչինյով ------- 29, 39, 56, 119, 131, 186
Քիլլի ---------- 382
Քյանդակ ---------- 454
Քյարիմ բեկ-դիզա ---------- 200, 202
Քյուզաֆի ---------- 240
Քյուլթափա ---------- 200, 202
Քյուլլուլա ---------- 240
Քյուլուզի ---------- 201
Քյուչուկ-չայ ---------- 448, 449
Քյուչուկ-Վեղի ---------- 245
Քյուրդալու ---------- 242
Քյուրդքար (Քուրդիստան) -- 462, 465, 471
Քռանի ---------- 601
Քութայիսի ---------- 36, 473, 506, 516, 517, 533, 648

Օդեսա ---------- 97, 185, 400, 490
Օզուրգեթ ---------- 541
Օլթի ---------- 251, 352, 606
Օխչի ---------- 471
Օխչի ձոր ---------- 462
Օհանավանք ---------- 242, 243
Օղբի ---------- 201, 211
Օղլան-դալա լեռ ---------- 225-227
Օշական ---------- 308
Օրդուբադ ---------- 189, 201, 212
Օրդուբադ գետակ ---------- 201
Օրենբուրգ ---------- 710
Օրթաճալա ---------- 480, 494
Օրթքենդ ---------- 225
Օրիոլ ---------- 328
Օսմանյան կայսրություն տես Թուրքիա
Օտտոմանյան (Օսմանյան) Բանկ ------ 587

Ֆինլանդիա ---- 23, 25, 131, 183, 410, 789
Ֆիր-Բուլաղ ---------- 550
Ֆոֆռաքար ---------- 632
Ֆրանկֆուրտ ---------- 136
Ֆրանսիա ---------- 14, 30, 131, 136, 320, 386, 405, 648
Ֆրեզնո ---------- 341

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ---------- 5-12

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Ռուսական առաջին հեղափոխության հասունացումը և սկիզբը ---------- 13-38

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Թուրք-հայկական ընդհարումների հրահրումը և Անդրկովկասի հայության հիմնական զանգվածների չեղումը Ռուսական մեծ հեղափոխությունից ---------- 39-153

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Փետրվարյան կոտորածների տարածումը Ռուսական հեղափոխության աստիճանական վերելքի պայմաններում ---------- 154-309

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
Թուրք-հայկական ընդհարումների սաստկացումը 1905թ. ամռանը ---------- 310-390

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Թուրք-հայկական ընդհարումները հակացարական զինված ապստամբության նախապատրաստման և իրականացման ժամանակաշրջանում ---------- 391-554

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
Լայնածավալ ոճիրներ Թուքական դժոխքում: Հայկական դիմադրության նոր դրսևորումները ---------- 555-639

ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ
Նոր եղելություններ կովկասահայոց կյանքում ---------- 640-786

ՀԱՎԵԼՎԱԾ ---------- 787-789

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ---------- 790-803

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ---------- 804-815

Գրքի առաջին հատորի տպագրությունը
հովանավորել են լոսանջելեսաբնակ

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԸ
և
ԱՐՄԵՆ ԲԱԿԱԼՅԱՆԸ,

ինչպես նաև «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը:

◇

Գիրքը տպագրվել է ԳԱԱ տպարանում: